ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ

2025

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ, ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

ԵՐԵՎԱՆ 2026

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ 1. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 11

1. Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության կարգավիճակը 11

2. Մարդու իրավունքների պաշտպանի մանդատը 18

3. Համագործակցությունը միջազգային կառույցների հետ 38

ԲԱԺԻՆ 2. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ 52

ԳԼՈՒԽ 1. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ 54

1. Մարդու իրավունքների պաշտպանը՝ որպես զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության անկախ մեխանիզմ 54

2. Հանրային իշխանության, քաղաքացիական հասարակության և միջազգային կառույցների համագործակցությունը զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության հարցերում 60

ԳԼՈՒԽ 2. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ 65

1. Զինվորական հաշվառման և զորակոչի կազմակերպման գործընթացը 65

2. Բժշկական փորձաքննության և պիտանիության հարցի որոշման օրենսդրական երաշխիքները և գործնական խնդիրները 70

3. Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում ստանալու իրավունքը 77

4. Քաղաքացիների իրավունքների պաշտպանությունն այլընտրանքային ծառայության կազմակերպման և իրականացման գործընթացում 81

ԳԼՈՒԽ 3. ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՊԱՏՇԱՃ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ԱՆՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ 91

1. Առողջության պահպանումը զինվորական ծառայության ընթացքում 91

2. Զինծառայողների հոգեկան առողջության պահպանման իրավունքը 97

3. Զինծառայողների արժանապատվության իրավունքի ապահովումը՝ պատշաճ կենսապայմանների, հիգիենայի չափանիշների և բժշկական աջակցության համատեքստում 101

4. Զինվորական ծառայության ավարտից հետո բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքը 108

ԳԼՈՒԽ 4. ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ 110

1. Մարդու իրավունքների պաշտպանը՝ որպես կարգապահական վարույթի մասնակիցների բողոքներ քննող անկախ մեխանիզմ 110

2. Իրավունքի գերակայության վրա հիմնված կարգապահությունը՝ որպես զինված ուժերում մարդու իրավունքների երաշխիք 115

ԳԼՈՒԽ 5. ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ԿՅԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ՎԱՏ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ԲՈԼՈՐ ՁԵՎԵՐԻ ԱՐԳԵԼՔԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ 123

1. Զինված ուժերում մահվան և ինքնավնասման դեպքերը և դրանց վերաբերյալ հանրային հաղորդակցությունը 123

2. Զինված ուժերում վատ վերաբերմունքի բոլոր ձևերի արգելքը 129

ԳԼՈՒԽ 6. ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՑՆԵԼՈՒ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՐՁԱԿՎԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....133

1. Զինված ուժերում մահվան և ինքնավնասման դեպքերը և դրանց վերաբերյալ հանրային հաղորդակցությունը.....133

2. Զինծառայողների իրավունքների պաշտպանությունը ծառայությունից արձակվելու գործընթացում.....139

3. Զինվորական արհմիություններ կամ ընկերակցություններ կազմելու և դրանց անդամակցելու իրավունքը.....142

ԳԼՈՒԽ 7. ԿԱՆԱՅՔ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ.....144

1. Զինված ուժերի գործունեությանը կանանց ներգրավվածության և առաջխաղացման խնդիրները.....144

2. Զինված ուժերում կանանց իրավունքների օրենսդրական երաշխիքները.....151

ԳԼՈՒԽ 8. ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....155

1. Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների բնակարանային ապահովումը.....155

2. Զինվորական կենսաթոշակի իրավունքի ապահովման հետ կապված խնդիրներ.....161

3. Զինծառայողների իրավունքների ապահովումը մարտական գործողությունների մասնակցության համատեքստում.....162

4. Զինվորական հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովումը ... 163

ԳԼՈՒԽ 9. ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՎԱՔՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՎԱՐՏԻՑ ՀԵՏՈ.....166

1. Վարժական հավաքների կազմակերպման գործընթացում օրենսդրական և գործնական խնդիրները.....166

2. Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների հետ կապված խնդիրները ռազմական գործողությունների ավարտից հետո.....170

ԲԱԺԻՆ 3. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ՔՐԵԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ.....174

ԳԼՈՒԽ 1. ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ.....176

1. Անմեղության կանխավարկածի պահպանումը և ենթադրյալ հանցանք կատարած անձի կամ քրեական վարույթի վերաբերյալ հանրությանը տեղեկություններ տրամադրելու անհրաժեշտությունը.....176

2. Հանցագործությունների վերաբերյալ ֆիզիկական անձանց հաղորդումները ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով չընդունելու և չքննարկելու՝ հաղորդումն ընդունող մարմնի հայեցողական պրակտիկան.....179

3. Քրեական վարույթին ներգրավված անձանց պաշտպանությունը.....182

4. Մեղադրյալի հակընդդեմ հարցման իրավունքի ապահովման գործնական խնդիրներ 184

5. Խուզարկություն քննչական գործողությանն առնչվող գործնական խնդիրներ.....186

6. Քրեական վարույթի ընթացքում սեփականության իրավունքի սահմանափակմանն առնչվող խնդիրներ.....189

7. Կալանքը որպես խափանման միջոց ընտրելու պրակտիկան 195

8. Այլընտրանքային խափանման միջոցների կիրառման ընթացքում ծագած խնդիրներ 201

9. Քրեական վարույթի նյութերին ծանոթանալու ժամկետներին ու կարգին, ինչպես նաև անձի՝ իր մասնակցությամբ կատարված ապացուցողական և վարութային այլ գործողության արձանագրությանը ծանոթանալուն, դրանց պատճեններն ու տեսաձայնագրությունները ստանալուն առնչվող գործնական խնդիրներ 206

10. Քրեական վարույթներով քննության ողջամիտ ժամկետների պահպանմանն առնչվող խնդիրներ 208

11. Քրեական արդարադատության ոլորտում միջազգային համագործակցության շրջանակում իրականացվող գործընթացների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս հանցանք կատարած անձանց ձերբակալմանն ու կալանավորմանն առնչվող գործնական խնդիրներ 212

12.Քրեական վարույթի շրջանակում անձանց պատշաճ ծանուցմանն առնչվող գործնական խնդիրներ.....214

ԳԼՈՒԽ 2. ԱՆՁՆԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԾԱԳՈՂ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ..... 218

ԳԼՈՒԽ 3. ԱԶԱՏ ՏԵՂԱՇԱՐԺՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒԹԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ 225

1. Մեղադրյալի ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակման ոչ իրավաչափ պրակտիկան..... 225

2. Քրեական վարույթով վկայի և տուժողի, ինչպես նաև վարույթի մասնակից չհանդիսացող անձանց նկատմամբ ՀՀ պետական սահմանը հատելու արգելք սահմանելու ոչ իրավաչափ պրակտիկան.....228

3. ՀՀ տարածքում գտնվող անձանց նկատմամբ այլ երկրների իրավապահ մարմինների կողմից հետախուզում հայտարարված լինելու պարագայում նրանց նկատմամբ կիրառված սահմանափակումները պահպանելու հետ կապված խնդիրներ 229

ԳԼՈՒԽ 4. ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԵՎ ԱՅԴ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ ՓԱՍՏԱԲԱՆԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ 232

ԳԼՈՒԽ 5. ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ԱՅԼ ԽՆԴԻՐՆԵՐ 240

1. ՀՀ ներքին գործերի նախարարության համակարգում գործող մարմիններին առնչվող խնդիրներ 240

2. Ներխուժումը կանխելիս կամ վերացնելիս ՀՀ ՆԳՆ ոստիկանության լիազորությունների իրացման ընթացքում վեր հանված գործնական խնդիրներ 248

ԳԼՈՒԽ 6. ՊԱՏԻԺԸ ԿՐԵԼՈՒՑ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԱԶԱՏԵԼՈՒՆ ԱՌՆՉՎՈՂ ԽՆԴԻՐՆԵՐ 253

ԲԱԺԻՆ 4. ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄՆ ՈՒ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ.....261

ԳԼՈՒԽ 1. ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԽԹԱՆՈՒՄԸ 265

1. Իրավահավասարության և խտրականության բացառմանն առնչվող խնդիրները ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության համատեքստում 270

2. Ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների խթանմանն առնչվող խնդիրներ 273
3. Վաղ ամուսնությունները ազգային փոքրամասնությունների համայնքներում..... 286
ԳԼՈՒԽ 2. ԼԳԲՏՔ+ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ..... 290
1. ԼԳԲՏՔ+ անձանց իրավունքների պաշտպանության վիճակը ՀՀ-ում 291
2. Օրենսդրական խնդիրներ..... 293
3. Պետական մարմինների՝ ԼԳԲՏՔ+ անձանց իրավունքների պաշտպանությանը միտված աշխատանքը և քաղաքացիական հասարակության արձագանքը կատարված աշխատանքներին 295
ԳԼՈՒԽ 3. ՍԵՌԱԿԱՆ ՈՏՆՁԳՈՒԹՅՈՒՆԻՑ ՈՒ ԲՌՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԴՐԱՆՑ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ 298
ԳԼՈՒԽ 4. ՊՏՂԻ ՍԵՌԻ ԽՏՐԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԵՌՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՀՂԻՈՒԹՅԱՆ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԸՆԴՀԱՏՈՒՄՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ 302
ԳԼՈՒԽ 5. ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԴՈՒ ԻՄՈՒՆԱՅԻՆ ԱՆԲԱՎԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԻՐՈՒՍ/ՁԵՌՔԲԵՐՈՎԻ ԻՄՈՒՆԱՅԻՆ ԱՆԲԱՎԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԽՏԱՆԻՇ (ՄԻԱՎ/ՁԻԱՀ) ՈՒՆԵՆԱԼՈՒ ՀԻՄՔՈՎ 305
ԲԱԺԻՆ 5. ԿԱՆԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ 308
1. Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության հետ կապված խնդիրներ 313
2. Քաղաքական ու հասարակական կյանքին կանանց մասնակցությունը երաշխավորելու հետ կապված խնդիրներ..... 318
3. Առողջության պահպանման իրավունքի սահմանափակման հետ կապված խնդիրներ 325
ԲԱԺԻՆ 6. ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ..... 326
ԳԼՈՒԽ 1. ԱՆԿԱԽ ԱՊՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՆԵՐԱՌՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ 331
1. Ապաինստիտուցիոնալացման ապահովման, հաշմանդամություն ունեցող անձի անկախ կյանքի հմտությունների զարգացմանն ուղղված, համայնքահեն ծառայությունների տրամադրման հետ կապված խնդիրներ 332
2. Անձին հաշմանդամություն ունեցող անձ ճանաչելու գործընթացի, գնահատման արդյունքում յուրաքանչյուր անձի կարիքից բխող հասցեական ծառայությունների և աջակցող միջոցների տրամադրման հետ կապված խնդիրներ:..... 337
3. Հաշմանդամություն ունեցող անձանց՝ իրենց վերաբերելի հարցերում անձամբ որոշումներ կայացնելու իրավունքն ապահովելու հետ կապված խնդիրներ..... 342
ԳԼՈՒԽ 2. ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆ 345
1. Ֆիզիկական միջավայրի մատչելիության ապահովման հետ կապված համակարգային խնդիրներ 346
2. Տեղեկատվության և հաղորդակցության, ներառյալ տեղեկատվական ու հաղորդակցության տեխնոլոգիաների և համակարգերի մատչելիության ապահովման հետ կապված համակարգային խնդիրներ 354
ԳԼՈՒԽ 3. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ..... 361
1. Մատչելիության ապահովման և խելամիտ հարմարեցումների տրամադրման հետ կապված խնդիրներ..... 362

2. Կրթության որակի և արդյունավետության ապահովման հետ կապված խնդիրներ...364
3. Հաշմանդամություն ունեցող երեխաների կրթությունը առանձին միջավայրում կազմակերպելը...366
ԳԼՈՒԽ 4. ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ...368
ԳԼՈՒԽ 5. ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ...372
ԳԼՈՒԽ 6. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԻՆ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ...376
ԲԱԺԻՆ 7. ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ...383
ԳԼՈՒԽ 1. ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ...390
1. Երեխաների իրավունքների պաշտպանության համակարգը...390
2. Երեխայի իրավունքների պաշտպանության համալիր ծրագիրը...392
ԳԼՈՒԽ 2. ԵՐԵԽԱՅԻ՝ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԱՊՐԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈՒ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԽՆԱՄՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ...394
1. Երեխայի խնամքը կենսաբանական ընտանիքում կազմակերպելու հետ կապված խնդիրներ...395
2. Որդեգրման հետ կապված խնդիրներ...396
3. Խնամակալության կամ հոգաբարձության հետ կապված խնդիրներ...397
4. Խնամատար ընտանիքում երեխայի խնամքի կազմակերպման հետ կապված խնդիրներ...399
5. Հաստատություններում երեխայի խնամքի և պաշտպանության կազմակերպման հետ կապված խնդիրներ...400
6. Հետխնամքի ապահովման հետ կապված խնդիրներ...402
7. Մանկալքության կանխարգելման հետ կապված խնդիրներ...405
ԳԼՈՒԽ 3. ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ ՇՓՎԵԼՈՒ ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ...407
1. Հարկադիր կատարումն ապահովող ծառայության գործողությունների իրավաչափությունը երեխայի իրավունքների ապահովման տեսանկյունից...407
2. Երեխայի հետ շփման իրավունքի ապահովումը երեխային օտարերկրյա պետություն անօրինական տեղափոխելու դեպքում...408
3. ՀՀ-ի տարածքում երեխայի բնակության վայրի փոփոխության դեպքում երեխայի հայտնաբերման և երեխայի հետ շփման իրավունքի ապահովման կառուցակարգերի հետ կապված խնդիրներ...409
4. Երեխայի հետ շփվելու իրավունքի ապահովումը անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական որոշման կիրառման դեպքերում...410
ԳԼՈՒԽ 4. ԵՐԵԽԱՅԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ...412
1. Նախադպրոցական ուսումնական հաստատությունների հասանելիության հետ կապված խնդիրներ...412
2. Նախադպրոցական ուսումնական հաստատությունների ընդունելությունը կազմակերպելիս առաջնահերթություն ունեցող երեխաների շրջանակի հետ կապված խնդիրներ...414
3. Նախադպրոցական ուսումնական հաստատությունից սանի ազատմանը վերաբերելի կարգավորումների հետ կապված խնդիրներ...415

ԳԼՈՒԽ 5. ԵՐԵԽԱՅԻ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ 417

1. Հանրակրթական ուսումնական հաստատությունների հասանելիության հետ կապված խնդիրներ 417

2. Հանրակրթական ուսումնական հաստատությունների ներքին կարգապահական կանոնների, սովորողի վարքագծի կանոնների և դրանց հասանելիության հետ կապված խնդիրներ 419

3.Երեխաների՝ պարտադիր կրթությունից դուրս մնալու հետ կապված խնդիրներ 420

4.Երեխայի՝ հանրակրթության մեջ միանգամից 2-րդ դասարան ընդգրկվելու հետ կապված խնդիրներ 422

ԳԼՈՒԽ 6. ԵՐԵԽԱՅԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ, ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ ԵՎ ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄ 425

1. Երեխաների նկատմամբ բռնության բացահայտման, կանխարգելման և արձագանքման հարցում համապարփակ մոտեցումներ ապահովող ռազմավարության բացակայության և թերի օրենսդրական կարգավորումների հետ կապված խնդիրներ . 427

2. Երեխաների նկատմամբ բռնության դեպքերի բացահայտման, կանխարգելման և արձագանքման հարցում մասնագիտական պատրաստվածության հետ կապված խնդիրներ 428

3. Իրավագիտակցության և իրազեկվածության մակարդակի բարձրացման, կարծրատիպերի վերացման հետ կապված խնդիրներ 430

4. Երեխաների նկատմամբ բռնության վերաբերյալ ճշգրիտ վիճակագրական միասնական տվյալների բացակայության հետ կապված խնդիրներ 431

ԳԼՈՒԽ 7. ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ 433

ԳԼՈՒԽ 8. ԵՐԵԽԱՅԻ ԿԱՐԾԻՔ ԱՐՏԱՀԱՅՏԵԼՈՒ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ 436

ԳԼՈՒԽ 9. ԵՐԵԽԱՅԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ 438

1. «ԴատաԼեքս» համակարգում երեխայի անձնական տվյալների մշակման և հրապարակման հետ կապված խնդիրներ 439

2. Զանգվածային լրատվության միջոցներով, տեղեկատվական հաղորդակցման ցանցերում երեխաների անձնական տվյալների մշակման և հրապարակման հետ կապված խնդիրներ 439

ԳԼՈՒԽ 10. ՄԱՆԿԱԿԱՆ ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆ 442

ԳԼՈՒԽ 11. ՄՈՒՐԱՑԿԱՆՈՒԹՅԱՄԲ ԵՎ ԹԱՓԱՌԱՇՐՋԻԿՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ 444

ԳԼՈՒԽ 12. ԵՐԵԽԱՅԻ՝ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԻՑ ՊԱՇՏՊԱՆՎԱԾ ԼԻՆԵԼՈՒ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ 447

ԲԱԺԻՆ 8. ՄՏՔԻ, ԽՂՃԻ ԵՎ ԿՐՈՆԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ 450

ԲԱԺԻՆ 9. ԿԱՐԾԻՔԻ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ 455

ԳԼՈՒԽ 1. ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ԲԱՑԱՌՄԱՆ ՈՒ ԿԱՐԾԻՔԻ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՆՐԱՅԻՆ ՏԻՐՈՒՅԹՈՒՄ 459

ԳԼՈՒԽ 2. ԼՐԱԳՐՈՂԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՆԽՈՉԸՆԴՈՏ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ՝ ՈՐՊԵՍ ԿԱՐԾԻՔԻ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐ 464

ԳԼՈՒԽ 3. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԻՐԱՌ ՊՐԱԿՏԻԿԱՅՈՒՄ ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐ.....468

ԲԱԺԻՆ 10. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ.....470

1. Անձնական տվյալների պաշտպանության ոլորտում անկախ ու արդյունավետ վերահսկողական մեխանիզմի բացակայության հետ կապված խնդիր 471

2. Զանգվածային լրատվության միջոցներով, տեղեկատվական հաղորդակցման ցանցերում անձնական տվյալների մշակման և հրապարակման հետ կապված խնդիրներ. 472

3. «ԴատաԼեքս» էլեկտրոնային կառավարման և տեղեկությունների տրամադրման հանրային տեղեկատվական համակարգում անձնական տվյալների մշակման և հրապարակման հետ կապված խնդիրներ 473

ԲԱԺԻՆ 11 ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ.....475

ԲԱԺԻՆ 12.ՀԱՎԱՔՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ 478

1. Հավաքի մասնակիցներին ազատությունից զրկելու հիմքերի և պատճառների չներկայացման հետ կապված խնդիրներ.....479

2. Ազատությունից զրկված անձի ընտրած անձին տեղյակ պահելու իրավունքն անհապաղ չապահովելու հետ կապված խնդիրներ 481

3. Լրագրողների մասնագիտական օրինական գործունեությունն իրականացնելիս վերջիններիս անվտանգության երաշխավորման հետ կապված խնդիրներ.....482

4. Ազատությունից զրկված անձանց նկատմամբ ոչ համաչափ ուժի գործադրման և վատ վերաբերմունքի, ոստիկանության ծառայողների գործողությունների իրավաչափության պատշաճ գնահատման, այդ առումով քննությունների իրականացման հետ կապված խնդիրներ 483

ԲԱԺԻՆ 13. ՊԱՏՇԱՃ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ.....489

1. Կատարողական վարույթի իրականացման ընթացքում առաջացած տարատեսակ խնդիրներ 489

2. Փաստացի կատարման հիմքով կարճված կատարողական վարույթի վերսկսման օրենսդրական հիմքերի բացակայության խնդիր 492

3. Անբողոքարկելի չդարձած վարչական ակտերը հարկադիր կատարման ներկայացնելու հետ կապված գործնական խնդիր.....495

4. Ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման, ինչպես նաև քանդման (ապամոնտաժման) գործընթացների իրականացման հետ կապված խնդիրներ 499

5. Կառուցված շինության ավարտական ակտի (շահագործման թույլտվության) ձևակերպման գործընթացում առաջացած խոչընդոտներ.....503

6. Թափառող շների հարձակումների կանխարգելման խնդիր 505

ԲԱԺԻՆ 14. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ 510

ԳԼՈՒԽ 1. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ.....512

1. Բարձրագույն ուսումնական հաստատություններում կրթության իրավունքի երաշխավորման հետ կապված խնդիրներ.....514

2. Ուսումնական հաստատություններում կրթության իրավունքի երաշխավորման նպատակով պատշաճ պայմանների ապահովման հետ կապված խնդիրներ.....517

ԳԼՈՒԽ 2. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ.....520

1. Անվտանգ, առողջ ու արժանապատիվ աշխատանքային պայմանների երաշխավորման հետ կապված խնդիրներ 521
2. Պատշաճ վերահսկողական կառուցակարգերի ներդրման հետ կապված խնդիրներ 524
3. Գործադուլի իրավունքի սահմանափակումների հետ կապված խնդիրներ 525
4. Աշխատանքային իրավունքների պաշտպանության ու խթանման հարցում արհեստակցական միությունների դերի բարձրացման հետ կապված խնդիրները 527
5. Աշխատանքից ազատվելիս աշխատողների հետ վերջնահաշվարկ չկատարելու կամ ոչ ամբողջովին կատարելու հետ կապված խնդիրներ 529
ԳԼՈՒԽ 3. ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ 533
1. Պետության կողմից բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու հետևանքով սեփականության իրավունքը սահմանափակելու խնդիր 535
2. Երևան քաղաքի գլխավոր հատակագիծը հաստատվելուց հետո առաջացած խնդիրներ 541
3. Հողամասերը սխալ չափագրելու և կադաստրային քարտեզում ամրագրելու պատճառով առաջացած հողամասերի համադրումները վերացնելու և որպես հետևանք՝ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումները մերժելու խնդիրներ 543
4. Աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժից հետո տեղադրված (կառուցված) ոչ հիմնական շինությունների ազատման (հեռացման) և դրանցում բնակվող ընտանիքների բնակապահովման խնդիրներ 548
5. Տրանսպորտային միջոցի հափշտակման պարագայում գույքահարկի վճարման պահանջ առաջադրելու խնդիր 550
6. 1988-1992 թվականներին Ադրբեջանից Հայաստան բռնագաղթած անձանց բնակարանային ապահովման խնդիր 553
ԳԼՈՒԽ 4. ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ 558
1. Բժշկական օգնության և սպասարկման հասանելիության խնդիր 561
2. Բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատչելիության խնդիր 569
3.Շուրջօրյա խնամքի կենտրոններում (տուն-ինտերնատներում) ինքնասպանությունների կանխարգելման համալիր կառուցակարգերի բացակայության խնդիր 576
4. Աղմուկի թույլատրելի մակարդակի գերազանցման հետ կապված խնդիր 577
5. Պալիատիվ բժշկական օգնության տրամադրման հետ կապված խնդիրներ 583
ԳԼՈՒԽ 5. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ 587
1. Կենսաթոշակի իրավունքի իրացման հետ կապված գործնական և օրենսդրական խնդիրներ 587
2. Սոցիալական աջակցության իրավունքների ապահովումը 613
ԳԼՈՒԽ 6. ՀԱՆՐԱՅԻՆ ՈՒՂԵՎՈՐԱՏԱՐ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՐԱԿԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐ 636
1. Միջմարզային և միջհամայնքային հանրային ուղևորատար տրանսպորտի հետ կապված խնդիրներ 636
2. Երևան քաղաքի հանրային ուղևորատար տրանսպորտի գերծանրաբեռնվածության, սպասարկման որակի, ուղեվարձի թանկացման և այլ խնդիրներ 643
ԲԱԺԻՆ 15. ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐ 648

ԲԱԺԻՆ 16. ՏԱՐԵՑՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ 665
ԲԱԺԻՆ 17. ՄԱՔՈՒՐ, ԱՌՈՂՋ ԵՎ ԿԱՅՈՒՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ ԱՊՐԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ 675
ԲԱԺԻՆ 18. ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ .. 681
ԳԼՈՒԽ 1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ 686
1. Գործարարության ոլորտում կանանց իրավունքների պաշտպանության և խթանման հետ կապված խնդիրներ 686
2. ՀՀ ռեզիդենտ անձանց համար Հայաստանի Հանրապետությունից դուրս գտնվող աղբյուրներից աշխատանքային կամ աշխատանքների կատարման և (կամ) ծառայությունների մատուցման քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակում ստացվող եկամուտների հարկման հետ կապված օրենսդրական խնդիր 695
3. Մաքսակետերում գոյացող հերթերի և Պետական եկամուտների կոմիտեի հեռախոսազանգերի կենտրոնի մշտական հիմունքներով չգործելու խնդիրներ 696
4. Վճարային քարտերով անկանխիկ վճարումներ ընդունելու հնարավորություն չապահովելու համար սահմանված տուգանքների անհամաչափության և անհատական մոտեցման բացակայության խնդիր 698
5. Ֆիզիկական անձանց կողմից ավտոմեքենայի օտարման գործարքներից առաջացած եկամտային հարկերի չկատարված պարտավորությունների մասին վերջիններիս ժամանակին չծանուցելու և հարկային վարչարարության գործընթացը ողջամիտ ժամկետում չիրականացնելու խնդիրներ 700
6. Ֆիզիկական անձանց կողմից ապրանքներն առանց մաքսատուրքի ՀՀ ներմուծելու հաճախականության որոշման հստակ չափորոշիչների բացակայության խնդիր 703
7. Ստուգումներ իրականացնող պետական մարմինների ծառայողների գործունեության թափանցիկության ապահովման խնդիր 706
8. Մաքսային կանոնների խախտումների վերաբերյալ գործի քննությունը հեռահաղորդակցության միջոցներով իրականացնելու օրենքով նախատեսված հնարավորությունը գործնականում չապահովելու խնդիր 707
9. Հարկային պարտավորությունների առաջադրման վերաբերյալ վարչական ակտը դատական կարգով անվավեր ճանաչված լինելու պայմաններում՝ այդ նույն հարկային պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով կրկնակի վարչարարության իրականացման և նոր վարչական ակտի ընդունման խնդիր 709
ԳԼՈՒԽ 2. ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ 713
1. Մատակարարված ծառայությունների համար չվճարելու դեպքում բաժանորդին ջրի նվազագույն քանակով չապահովելը 713
2. Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման համակարգերի կառուցումը ներդրումային ծրագրերում ներառելը 715
3. Խմելու ջրի մատակարարման խափանումներ 720
4. Առևտրային հաշվառքի սարքի խախտման դեպքում առանց փաստական հանգամանքների բացահայտման վերահաշվարկած գումարը բաժանորդին ներկայացնելու խնդիր 725
5. Ոռոգման ջրի մատակարարման խափանումներ 728
6. Անձանց կողմից տնօրինվող հողատարածքներում տեղակայված և մաշված վիճակում գտնվող էլեկտրահաղորդման գծերի հենասյուների տեղափոխման խնդիր 732

7. Սպառողներին մատակարարվող էլեկտրական էներգիայի հաճախակի ընդհատումների և էլեկտրաէներգիայի որակի անբավարարության խնդիրներ 734
8. Բնակելի շենքում ներկառուցված էլեկտրական ենթակայանի շահագործման հետևանքով բնակիչների հիմնարար իրավունքների խախտման վտանգի խնդիր 739
9. Գազամատակարարման դադարեցման (սահմանափակման) և վերականգնման հետ կապված օրենսդրական և գործնական խնդիրներ 743
ԲԱԺԻՆ 19. ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ ԱՊՕՐԻՆԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԶՐԿՎԱԾ ՀԱՅԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ..... 748
ԲԱԺԻՆ 20. ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՊԱՍՏԱՆ ՀԱՅՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ 753
1. Ոլորտին վերաբերելի վիճակագրական տվյալներ 755
2. Ոլորտում գոյություն ունեցող համակարգային խնդիրները 755
3. Ապաստանի խնդրանքի ընդունման և այն լիազոր մարմնին փոխանցելու կարգը..... 760
ԲԱԺԻՆ 21. ՄԱՐԴԿԱՆՑ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ..... 764
1. Թրաֆիքինգի և շահագործման զոհերի վիճակագրություն 765
2. Ոլորտում արձանագրված խնդիրներ 767
ԲԱԺԻՆ 22. ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 770

ԲԱԺԻՆ 1. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

1. Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության կարգավիճակը

Մարդու իրավունքների պաշտպանն անկախ պաշտոնատար անձ է, որը հետևում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց, իսկ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքով սահմանված դեպքերում՝ նաև կազմակերպությունների կողմից մարդու իրավունքների և ազատությունների պահպանմանը, նպաստում է խախտված իրավունքների և ազատությունների վերականգնմանը, իրավունքներին ու ազատություններին առնչվող նորմատիվ իրավական ակտերի կատարելագործմանը:

Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունը՝ Միավորված Ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների ազգային ինստիտուտների գլոբալ դաշինքի (GANHRI) հավատարմագրման հարցերով ենթահանձնաժողովի գնահատմամբ ունի վստահելիության և անկախության A դասի բարձրագույն կարգավիճակ:

Նման կարգավիճակ շնորհվում է այն օմբուդսմաններին և ազգային հաստատություններին, որոնք համապատասխանում են ՄԻՊ գործունեության համար սահմանված սկզբունքներին, անկախ են, վստահելի և դրսևորում են մարդու իրավունքներին առնչվող խնդիրներն արդյունավետորեն ուսումնասիրելու և լուծելու կարողություն, գործում են Փարիզյան և միջազգային սկզբունքներին համապատասխան:

Սահմանադրությամբ, «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքով, ինչպես նաև մի շարք միջազգային փաստաթղթերով Մարդու իրավունքների պաշտպանն օժտված է գործունեության հետևյալ երաշխիքներով:

ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆ

ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅՈՒՆ

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ ԽՈՉԸՆԴՈՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐ ԵՎ ԱՅԼՆ

Միջազգային չափանիշների համաձայն՝ գործունեության նման երաշխիքները կարևոր նախապայման են ապահովելու յուրաքանչյուրի իրավունքը՝ լիարժեքորեն,

անաչառ և արդյունավետ կերպով ստանալու աջակցություն մարդու իրավունքների ազգային և օմբուդսմանական հաստատություններից:

Այսպես, Օմբուդսմանական ինստիտուտի պաշտպանության և խթանման սկզբունքների (Վենետիկյան սկզբունքներ) համաձայն՝ օմբուդսմանը չի կարող որևէ իշխանության կողմից որևէ հրահանգ ստանալ կամ հետևել դրան: Պետությունը պետք է աջակցի և պաշտպանի Օմբուդսմանի ինստիտուտին և զերծ մնա ցանկացած գործողությունից, որը կխաթարի վերջինիս անկախությունը: Պետությունները պետք է զերծ մնան Օմբուդսանի նկատմամբ ճնշումներից և նրա համար ապահովեն արդյունավետ պաշտպանություն[1]:

Միավորված Ազգերի Կազմակերպության Գլխավոր ասամբլեայի 2024 թվականի նոյեմբերի 29-ի թիվ A/79/458/Add.2 բանաձևի շրջանակներում նշվում է, որ Օմբուդսմանի հաստատության ինքնուրույնության և գործադիր կամ դատական իշխանություններից, դրանց մարմիններից կամ քաղաքական կուսակցություններից լիակատար անկախության կարևորության ընդգծումը նպատակ ունի ապահովելու, որ այդ հաստատությունները կարողանան իրենց իրավասության շրջանակում քննության առնել բոլոր հարցերը՝ առանց իրենց ընթացակարգային կարողությունների կամ արդյունավետության նկատմամբ իրական կամ ընկալվող որևէ սպառնալիքի, ինչպես նաև առանց որևէ ձևով պատասխան գործողությունների, ճնշման կամ հետապնդման վախի՝ լինի դա առցանց կամ ոչ առցանց միջավայրում, որոնք կարող են վտանգել այդ հաստատությունների բնականոն գործունեությունը կամ դրանց պաշտոնատար անձանց ֆիզիկական անվտանգությունն ու պաշտպանվածությունը[2]:

ՀՀ Սահմանադրության 191-րդ հոդվածի համաձայն՝ Մարդու իրավունքների պաշտպանն անկախ պաշտոնատար անձ է:

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի (այսուհետ՝ նաև Սահմանադրական օրենք) 5-րդ հոդվածի համաձայն՝ Պաշտպանն իր լիազորություններն իրականացնելիս անկախ է, առաջնորդվում է միայն Սահմանադրությամբ, սույն օրենքով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

Սահմանադրական օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Պաշտպանն իր լիազորությունների ժամկետում և դրանից հետո չի կարող հետապնդվել և պատասխանատվության ենթարկվել Պաշտպանի՝ իր կարգավիճակից բխող գործունեության շրջանակներում, այդ թվում՝ Ազգային ժողովում հայտնած կարծիքի համար:

Սահմանադրական օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Պաշտպանն իր լիազորությունների իրականացման ժամանակահատվածում և դրանից հետո չի կարող բացատրություն տալ կամ հարցաքննվել պաշտոնավարման ընթացքում իրեն հասցեագրված դիմումների կամ բողոքների, դրանց ուսումնասիրության կամ քննարկման ընթացքում ձեռք բերված փաստաթղթերի էության կամ իր կայացրած որոշումների կապակցությամբ:

---

[1] Տե՛ս Վենետիկի հանձնաժողովի CDL-AD(2019)005 փաստաթուղթը, որը ընդունվել է Վենետիկում, 15–16 մարտի 2019 թվականին, հասանելի է հետևյալ հղումով՝ https://ombudsman.md/wp-content/uploads/2019/09/Principiile-de-la-Venetia.pdf?utm_source, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

[2] Տե՛ս Միավորված Ազգերի Կազմակերպության Գլխավոր ասամբլեայի՝ 2024 թվականի նոյեմբերի 29-ի A/79/458/Add.2 բանաձևը, հասանելի է հետևյալ հղումով՝ https://documents.un.org/doc/undoc/gen/n24/372/24/pdf/n2437224.pdf?utm_source, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

Սահմանադրական օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Պաշտպանի՝ իր լիազորությունների իրականացման հետ կապված նամակագրությունը, հեռախոսային խոսակցությունները, փոստային, հեռագրական հաղորդումները և հաղորդակցության այլ ձևերը ենթակա են վերահսկման միայն դատարանի որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի միջնորդությամբ, եթե դա կապված է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության կատարումը կանխելու կամ բացահայտելու անհրաժեշտության հետ:

Սահմանադրական օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Պաշտպանին ուղղված բողոքները և այլ փաստաթղթերը, ինչպես նաև Պաշտպանի հարցումները կամ նրա կողմից ուղարկվող այլ փաստաթղթեր ենթակա չեն ստուգման կամ գրաքննության:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 57-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ որպես վկա չի կարող հարցաքննվել կամ առարկաներ, փաստաթղթեր կամ այլ նյութեր ներկայացնել՝ մարդու իրավունքների պաշտպանը՝ իր պարտականությունները կատարելու կապակցությամբ իրեն հայտնի դարձած հանգամանքների մասին:

Սահմանադրական օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ Պաշտպանին դիմելը կամ Պաշտպանի միջամտությունը չի կարող հանգեցնել բողոք ներկայացրած անձի համար որևէ անբարենպաստ հետևանքի կամ անհավասար վերաբերմունքի կամ սպառնալիքի: Ցանկացած այդպիսի վերաբերմունք առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:

Սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ բողոքի կամ սեփական նախաձեռնությամբ քննարկման կապակցությամբ Պաշտպանի կայացրած որոշումները բողոքարկման ենթակա չեն:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ Մարդու իրավունքների պաշտպանի անկախությունը ենթադրում է, որ որևէ պետական մարմին չի կարող բացատրություններ պահանջել Պաշտպանից իրեն հասցեագրված դիմումների կամ բողոքների ուսումնասիրության ընթացքում ձեռնարկած միջոցառումների առնչությամբ, չի կարող ստուգել ու գրաքննության ենթարկել այլ մարմինների հետ Պաշտպանի գրագրությունը, չի կարող վերանայել Մարդու իրավունքների պաշտպանի կայացրած որոշումները:

Անկախության նաև վերը նշված բաղադրիչի օրենսդրական և գործնական կիրառելիության գնահատմամբ է Միավորված Ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների ազգային ինստիտուտների գլոբալ դաշինքի (GANHRI) հավատարմագրման հարցերով ենթահանձնաժողովը (այսուհետ՝ նաև Հավատարմագրման ենթահանձնաժողով) Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի հաստատությանը 2024 թվականին շնորհել վստահելիության և անկախության A դասի բարձրագույն կարգավիճակ[3]:

Մինչդեռ՝ Մարդու իրավունքների պաշտպանն իր գործունեության երաշխավորման տեսանկյունից 2025 թվականին արձանագրել է հետևյալ խնդիրները.

Պաշտպանի հաստատության շենքային պայմանների բարելավման հետ կապված խնդիրներ

[3] Տեղեկատվությունը հասանելի է https://ganhri.org/wp-content/uploads/2025/01/SCA-Report-2nd-Session-2024-dec_EN.pdf հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

2024 թվականի նոյեմբերի 15-ին Կառավարությունն ընդունել է «Անշարժ գույք հետ վերցնելու և ամրացնելու մասին» որոշում, որով նախատեսվում է Երևանի Մոսկովյան փողոց թիվ 5 հասցեում գտնվող անշարժ գույքն ամրացնել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմին: Մինչդեռ՝ 2025 թվականի ընթացքում նշված շենքի պայմանները Պաշտպանի աշխատակազմի գործունեության համար անհրաժեշտ և բավարար մակարդակի հասցնելու և շենքը փաստացի Պաշտպանի հաստատության կողմից շահագործելու հնարավորություններ չեն ապահովվել:

Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության պատշաճ շենքային պայմանների ապահովման հարցն առանցքային է համարել նաև Միավորված Ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների ազգային ինստիտուտների գլոբալ դաշինքի (GANHRI) հավատարմագրման հարցերով ենթահանձնաժողովը:

Պաշտպանի հաստատությանն անհրաժեշտ մարդկային և ֆինանսական ռեսուրսների տրամադրման հետ կապված խնդիրներ

Ֆինանսական անկախության առումով շարունակում են արդիական մնալ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի աշխատակիցների աշխատավարձերի պատշաճ և բավարար մակարդակի ապահովման հետ կապված խնդիրները: Հաշվի առնելով Պաշտպանի գործունեության առանձնահատկությունները, այդ թվում՝ մարդու իրավունքների պաշտպանության համակարգի բազմաշերտությունն ու բազմակողմանիությունը՝ պետության՝ մարդու իրավունքների պաշտպանության հարցերի կարևորման վերաբերմունքի դրսևորման տեսանկյունից՝ կարևոր է Պաշտպանի աշխատակազմում և իրավապահ մի շարք մարմինների ներկայացուցիչների աշխատավարձերի չափի մեծ խզվածքի վերացմանն ուղղված կառուցակարգերի մշակումը:

Պաշտպանի աշխատակազմի վարձատրությանն առնչվող խնդրին ու այն հասցեավորելու կարևորությանն անդրադարձել է նաև Միավորված Ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների ազգային ինստիտուտների գլոբալ դաշինքի (GANHRI) հավատարմագրման հարցերով ենթահանձնաժողովը՝ Հայաստանի Հանրապետությանն ու Մարդու իրավունքների պաշտպանին ուղղված հանձնարարականների շրջանակներում:

Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության մանդատի և կարգավիճակի վերաբերյալ հանրային իշխանության առանձին ներկայացուցիչների, քաղաքական, հանրային գործիչների, զանգվածային լրատվության միջոցների, մասնագիտական համայնքների առանձին ներկայացուցիչների իրազեկվածության հետ կապված խնդիրներ

Չնայած հանրային իշխանության ներկայացուցիչների, հանրային գործիչների, զանգվածային լրատվության միջոցների, մասնագիտական համայնքների ներկայացուցիչների հետ Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության կառուցողական համագործակցությանը, ՄԻՊ առաջարկությունները կատարելու՝ հանրային իշխանության մարմինների հանձնառությանը՝ շարունակում է լուրջ խնդիր մնալ տարբեր դերակատարների շրջանում Մարդու իրավունքների պաշտպանի մանդատի, լիազորությունների շրջանակի, անկախության երաշխիքների առնչությամբ խեղաթյուրված

և միջազգային չափանիշներին չհամապատասխանող ընկալումների առկայությունը: Նման ընկալումների խորացմանն են նպաստում մարդու իրավունքներին առնչվող տարատեսակ հարցերի և ՄԻՊ լիազորությունների վերաբերյալ քաղաքական դերակատարների, մասնագիտական համայնքի առանձին ներկայացուցիչների կողմից լայնորեն տարածվող և միջազգային չափանիշներին ու ներպետական օրենսդրությանը հակասող ձևակերպումները, որոնք հետագայում տարածվում են նաև զանգվածային լրատվության միջոցներով:

Ամբողջ աշխարհում լուրջ մարտահրավեր է պետական մարմինների և հանրության կողմից մարդու իրավունքների պաշտպանության ազգային հաստատությունների կարգավիճակի, լիազորությունների, նշված մարմինների անկախության վերաբերյալ ոչ բավարար իրազեկվածությունը և այդ համատեքստում առկա թյուր պատկերացումները: Հենց դա է պատճառը, որ միջազգային տարբեր կառույցներ պարբերաբար անդրադառնում են նշված խնդրին: Օրինակ՝ Մարդու իրավունքների ազգային հաստատությունների եվրոպական ցանցն իր զեկույցներում պարբերաբար որպես խնդիր է արձանագրել բազմաթիվ երկրներում պետական մարմինների կողմից Մարդու իրավունքների ազգային հաստատության մանդատի մասին ոչ բավարար իրազեկվածությունը՝ ընդգծելով, որ դա բացասաբար է անդրադառնում ՄԻՊ հաստատությունների գործունեության արդյունավետության վրա: Ավելին, վերջինս պետություններին կոչ է արել նպաստել պետական մարմինների, շահառուների և հանրության շրջանում մարդու իրավունքների ազգային հաստատությունների դերի և գործառույթների վերաբերյալ իրազեկվածությանը: Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն իր հերթին անդամ պետություններին ուղղված իր՝ արդյունավետ, բազմակարծիք և անկախ մարդու իրավունքների ազգային հաստատությունների զարգացմանն ու ամրապնդմանն ուղղված CM/Rec(2021)1 հանձնարարականում արձանագրել է, որ անդամ պետությունները պետք է նպաստեն իրավասու պետական մարմինների իրազեկվածությանը ՄԻՊ հաստատությունների մանդատի, անկախության և դերի մասին, այդ թվում՝ վերապատրաստման և իրազեկվածության բարձրացման միջոցառումների միջոցով[4]:

Միևնույն ժամանակ, Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության կողմից պարբերաբար իրականացվում են ինչպես մարդու իրավունքների տարատեսակ հարցերի, այնպես էլ ՄԻՊ մանդատի, լիազորությունների և անկախության երաշխիքների առնչությամբ հանրային իրազեկման միջոցառումներ:

2025 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի լիազորությունների և անկախության առնչությամբ իրազեկվածության պակասին ու դրա բացասական հետևանքներին առնչվող հիմնական նախադեպը վերաբերել է անկախության սկզբունքի հիման վրա գործող մարմիններից մեկի իրավակիրառ պրակտիկային, որի շրջանակներում վերջինս, չպահպանելով օրենսդրությամբ և միջազգային չափանիշներով սահմանված Մարդու իրավունքների պաշտպանի անկախության երաշխիքները, ՄԻՊ կողմից գործերի քննության առնչությամբ արել է այնպիսի եզրահանգումներ, որոնք հակասում են Սահմանադրությանը, «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական

[4] Փաստաթղթերը հասանելի են https://rm.coe.int/0900001680a1f4da?utm_source=chatgpt.com, https://ennhri.org/wp-content/uploads/2022/04/ENNHRI-EU-Rule-of-law-Report-2022.pdf?utm_source=chatgpt.com, https://rule-of-law.ennhri.org/?country%5B0%5D=2&year%5B0%5D=2024&, https://rule-of-law.ennhri.org/?country%5B0%5D=2&year%5B0%5D=2022& և այլ հղումներով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

օրենքին և ոլորտում գործող միջազգային չափանիշներին: Ավելին, իր իրավակիրառ պրակտիկայի շրջանակներում այս մարմինը փաստացի ստուգել և գրաքննության է ենթարկել Մարդու իրավունքների պաշտպանի գրագրությունը, փորձել է ՄԻՊ կողմից ստացված դիմումի առնչությամբ բացատրություններ ստանալ Մարդու իրավունքների պաշտպանից: Ընդ որում՝ նշված մարմնի ներկայացուցիչները որևէ վերապատրաստում չեն անցել Մարդու իրավունքների պաշտպանի սահմանադրական կարգավիճակի, Մարդու իրավունքների պաշտպանի անկախության, ՄԻՊ հաստատության կողմից դիմումների քննության մեթոդաբանության և այլ համանման հարցերի առնչությամբ:

Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի նկատմամբ քաղաքական գործիչների կողմից սպառնալիքների և հարձակումների առնչությամբ Մարդու իրավունքների ազգային հաստատությունների եվրոպական ցանցի (ENNHRI) 2024 թվականի հրապարակային հայտարարության շրջանակներում ընդգծվել է, որ Փարիզյան սկզբունքների հիմնարար պահանջն այն է, որ մարդու իրավունքների ազգային հաստատությունը պետք է կարողանա գործունեություն իրականացնել՝ առանց քաղաքական միջամտության: Փարիզյան սկզբունքները պահանջում են, որպեսզի մարդու իրավունքների պաշտպանության ազգային հաստատություններն իրավասու լինեն կարծիք ներկայացնելու մարդու իրավունքների խախտման ցանկացած իրավիճակի վերաբերյալ, որն իրենք են որոշում հասցեավորել: Այս համատեքստում Հավատարմագրման ենթահանձնաժողովն ընդգծել է, որ կենսական նշանակություն ունի մարդու իրավունքների ազգային հաստատությունների կարողությունների հզորացման համար երաշխիքների ապահովումը՝ նպատակաուղղված մարդու իրավունքներին վերաբերելի քննադատական վերլուծություն և մեկնաբանություններ կատարելուն, հաստատության ղեկավարության անկախությունը երաշխավորելուն և մարդու իրավունքների պաշտպանության ազգային հաստատությունների նկատմամբ հանրային վստահության խթանմանը: Սա ենթադրում է՝ մարդու իրավունքների պաշտպանության ազգային հաստատության աշխատակազմի և որոշումներ կայացնող մարմնի պաշտպանվածությունը պատասխանատվությունից այն գործողությունների համար, որոնք նրանք կատարել են իրենց պաշտոնեական լիազորությունների շրջանակներում:

Ավելին, Հավատարմագրման ենթահանձնաժողովն ընդգծել է, որ մարդու իրավունքների պաշտպանության ազգային հաստատությունները պետք է իրավասու լինեն դիտարկելու և որոշելու ինստիտուտի ռազմավարական առաջնահերթությունները և գործունեությունը՝ հիմքում ունենալով բացառապես երկրում մարդու իրավունքների՝ իր կողմից որոշված առաջնահերթությունները՝ զերծ լինելով որևէ քաղաքական միջամտությունից:

ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան շեշտել է նաև, որ մարդու իրավունքների պաշտպանը և նրա աշխատակազմը չպետք է ենթարկվեն որևէ ճնշումների կամ ահաբեկման, ներառյալ՝ քաղաքական ճնշումները, ֆիզիկական ահաբեկումը կամ ոտնձգությունը՝ իրենց մանդատի շրջանակում իրականացվող գործողությունների հետևանքով, այդ թվում՝ անհատական գործերի կամ համակարգային խախտումների մասին հաղորդումներ ներկայացնելիս:

ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան նաև կոչ է արել պետություններին անհապաղ և հանգամանալից քննության առարկա դարձնել մարդու իրավունքների ազգային հաստատությունների անդամների կամ աշխատակիցների, ինչպես նաև նրանց հետ համագործակցող կամ համագործակցելու ցանկություն ունեցող անձանց նկատմամբ ենթադրյալ ճնշումների կամ ահաբեկումների դեպքերը, և պատասխանատվության ենթարկել մեղավորներին:

Եվրոպայի խորհրդի շրջանակում Նախարարների Կոմիտեի վերջին 2021/1 հանձնարարականը նաև կոչ է անում ապահովել և ընդլայնել ՄԻՊ հաստատությունների համար անվտանգ և բարենպաստ միջավայր: Այն ընդգծում է, որ պետությունները պետք է ձեռնարկեն բոլոր անհրաժեշտ միջոցները՝ ՄԻՊ հաստատությունները սպառնալիքներից, ճնշումներից և ահաբեկման ցանկացած այլ ձևերից պաշտպանելու և աջակցելու համար: Այն նաև շեշտում է, որ մարդու իրավունքների պաշտպանության ազգային հաստատությունների, նրանց անդամների և աշխատակազմի, ինչպես նաև նրանց հետ համագործակցող կամ համագործակցելու ցանկություն ունեցող անձանց նկատմամբ ենթադրյալ ճնշումների կամ ահաբեկումների ցանկացած դեպք պետք է դառնա անհապաղ և բազմակողմանի քննության առարկա, և մեղավորները պետք է ենթարկվեն պատասխանատվության:

Ավելին, համաձայն Եվրոպայի խորհրդի Վենետիկյան սկզբունքների՝ պետությունները պետք է ձեռնպահ մնան ցանկացած գործողությունից, որն ուղղված է կամ հանգեցնում է օմբուդսմանի ինստիտուտի նկատմամբ ճնշում գործադրելուն կամ վերջինիս արդյունավետ գործունեության առումով որևէ խոչընդոտ ստեղծելուն, և պետք է արդյունավետորեն պաշտպանեն հաստատությունը ցանկացած նմանատիպ սպառնալիքից:

Վերը շարադրվածը նկատի ունենալով նաև՝ Մարդու իրավունքների ազգային հաստատությունների եվրոպական ցանցը (ENNHRI) մտահոգություն է հայտնել առ այն, որ Հայաստանի Մարդու իրավունքների պաշտպանի դեմ սպառնալիքներն ու հարձակումները հակասում են ազգային, տարածաշրջանային և միջազգային չափանիշներին: Հիմք ընդունելով իրավունքի գերակայության, ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության գործում ՄԻՊ հաստատությունների կարևոր դերի լայն ճանաչումը՝ Հայաստանի Մարդու իրավունքների պաշտպանը և իր աշխատակազմը չպետք է ենթարկվեն ահաբեկման, հետապնդման կամ ոտնձգության որևէ ձևի: Այնուամենայնիվ, երբ նման դեպքեր են տեղի ունենում, դրանք պետք է անհապաղ և արդյունավետ կերպով հասցեավորվեն[5]:

Մի շարք դեպքերում նշված հանգամանքները վկայում են մարդու իրավունքների ազգային հաստատությունների մանդատի, գործիքակազմերի և լիազորությունների առնչությամբ ոչ բավարար գիտելիքների առկայության մասին, հանգեցնում են ՄԻՊ գործունեությանը միջամտության փորձերի և ունեն շուտափույթ հաղթահարման անհրաժեշտություն:

Հաշվի առնելով վերոգրյալն՝ անհրաժեշտ է.

✓ անհետաձգելի և գործուն միջոցներ ձեռնարկել բարելավելու Պաշտպանի հաստատության շենքային պայմանները,

✓ անհետաձգելի և գործուն միջոցներ ձեռնարկել երաշխավորելու Պաշտպանի հաստատությանն անհրաժեշտ մարդկային և ֆինանսական ռեսուրսների տրամադրումը.

✓ միջոցներ ձեռնարկել բարձրացնելու Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության մանդատի և կարգավիճակի վերաբերյալ իրազեկվածությունը և բացառել ՄԻՊ հաստատության գործունեությանը միջամտության փորձերը:

[5] Տեղեկատվությունը հասանելի է https://ennhri.org/wp-content/uploads/2024/06/ENNHRI-statement-of-support-to-Armenian-NHRI.pdf,https://rule-of-law.ennhri.org/export?country%5B0%5D=5&year%5B0%5D=2025 հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

2. Մարդու իրավունքների պաշտպանի մանդատը

Մարդու իրավունքների պաշտպանը հետևում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ նաև կազմակերպությունների կողմից մարդու իրավունքների և ազատությունների պահպանմանը, նպաստում է խախտված իրավունքների և ազատությունների վերականգնմանը, խթանում է մարդու իրավունքներն ու ազատությունները:

➢ ***Մարդու իրավունքների պաշտպանը մարդու իրավունքների և ազատությունների պահպանմանը հետևելու և խախտված իրավունքների ու ազատությունների վերականգնմանը նպաստելու մանդատն, ի թիվս այլնի, իրականացնում է այցերի, մշտադիտարկումների միջոցով, դիմումների և բողոքների ուսումնասիրությամբ ու քննարկմամբ:***

Այսպես, 2025 թվականի ընթացքում ստացվել է 12403 գրավոր և բանավոր դիմում ու բողոք: Հարկ է նկատել, որ վիճակագրության վարման մեթոդաբանության փոփոխության արդյունքում դիմումների ու բողոքների թվի մեջ ներառվել են միայն այն հեռախոսազանգերը, որոնցով տրվել է բովանդակային խորհրդատվություն: Մինչդեռ՝ նախկին մեթոդաբանության համատեքստում դիմում-բողոքների ընդհանուր թիվը կկազմեր 22655:

Հատկանշական է, որ վերջին տարիներին էականորեն աճել է Պաշտպանին ներկայացվող դիմումների ու բողոքների թիվը: Դրանց համեմատական գծապատկերը ցույց է տալիս, որ օրինակ՝ 2024 թվականին՝ 19781, իսկ 2025 թվականին ստացված դիմումների ու բողոքների թիվն ավելացել է շուրջ 2900-ով՝ կազմելով 22655:

Թեժ գծին ստացված հեռախոսազանգերի դեպքում ևս թվի աճ է գրանցվել: Այսպես՝ 2022 թվականին թեժ գիծ հեռախոսազանգերի թիվը կազմել է 9851, 2023 թվականին՝ 9988, 2024 թվականին՝ 12979, 2025 թվականին՝ 14501 հեռախոսազանգ:

2025 թվականին իրականացվել է 333 այց: Ընդ որում, պետք է արձանագրել, որ 2024 թվականի համեմատությամբ այցերի թիվն ավելացել է 71-ով:















Ստորև ներկայացված են 2024-2025 թվականների գրավոր և բանավոր դիմումների ու բողոքների վերաբերյալ վիճակագրություն՝ ըստ դիմումներում ու բողոքներում ներառված անձանց քանակի.


2024-2025 թվականների դիմումների և բողոքների վիճակագրությունն ըստ վարչատարածքային միավորների
Տավուշի մարզ
118
191
Արագածոտնի մարզ
203
145
Վայոց ձորի մարզ
58
114
Արարատի մարզ
514
429
Լոռու մարզ
517
639
Գեղարքունիքի մարզ
609
640
Շիրակի մարզ
649
489
Արմավիրի մարզ
943
633
Կոտայքի մարզ
961
823
Սյունիքի մարզ
1002
333
Երևան
5785
5922
Հասցե չպարունակող բողոքներ
1044
1276
0
1000
2000
3000
4000
5000
6000
7000
2025
2024

2024-2025 թվականների դիմումների և բողոքների վիճակագրությունն ըստ մարմինների և կազմակերպությունների
Մարզպետարաններ
57
166
Դատախազություն
221
105
Համայնքապետարաններ
267
301
Արդ. նախ. կենտրոնական և այլ ստորաբաժանումներ
333
108
Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն
341
328
Դատական իշխանության մարմիններ
382
240
Հանրային ծառայութ. ոլորտում գործ. կազմակերպ.
408
454
Առողջապահության նախարարություն
503
456
Պաշտպանության նախարարություն
696
683
Քրեակատարողական ծառայություն
734
481
Քննչական կոմիտե
804
536
ԿԳՄՍՆ
910
189
Երևանի քաղաքապետարան
919
357
ԱՍՀՆ
1317
1256
Ներքին գործերի նախարարություն
1685
1887
Այլ մարմիններ և կազմակերպություններ
2826
4087
0
500
1000
1500
2000
2500
3000
3500
4000
4500
2025
2024

Պաշտպանին վերապահված է «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ» ՄԱԿ-ի՝ 1984 թվականի կոնվենցիայի 2002 թվականի դեկտեմբերի 18-ին ընդունած կամընտիր արձանագրությամբ սահմանված կանխարգելման ազգային մեխանիզմի կարգավիճակը:

Պաշտպանն իրականացնում է նաև «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի՝ 1989 թվականի նոյեմբերի 20-ին ընդունված կոնվենցիայի ու «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի՝ 2006 թվականի դեկտեմբերի 13-ին ընդունված կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկում, ինչպես նաև երեխաների ու հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների խախտումների կանխարգելում և պաշտպանություն:

2025 թվականին իրականացվել է 3 տասնյակ մշտադիտարկման այց՝ մատչելիությունը գնահատելու նպատակով: Դրանց մի մասն իրականացվել է հաշմանդամություն ունեցող անձանց ներգրավմամբ:

2025 թվականին իրականացվել են 5 տասնյակ մշտադիտարկման չհայտարարված այցեր այն հաստատություններ, որտեղ գտնվում են հաշմանդամություն ունեցող անձինք, այդ թվում՝ հոգեբուժական հաստատություններ:

Ավելի քան 1000 երեխա մասնակցել է Մարդու իրավունքների պաշտպանի հայտարարած իրազեկման արշավի շրջանակում կազմակերպված հանդիպումներին, ինչպես Երևանում, այնպես էլ ՀՀ մարզերում:

2025 թվականին ստացվել են երեխայի իրավունքներին վերաբերող 1211 դիմումներ ու բողոքներ, որից 158-ը վերաբերել են երեխայի նկատմամբ բռնության դեպքերին:

2025 թվականին ստացվել են հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներին վերաբերող 654 դիմումներ ու բողոքներ:

Հոգեկան առողջության հետ կապված խնդիրներ ունեցող անձանց իրավունքների վերաբերյալ ստացվել են 332 դիմումներ ու բողոքներ:

2025 թվականին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմ իրականացրել է 59 այց: 2025 թվականին ազատությունից զրկման վայրերում գտնվող անձանց իրավունքների վերաբերյալ ստացվել են 2105 դիմումներ ու բողոքներ:

Պաշտպանն ազդարարների պաշտպանության ոլորտում իրականացնում է մշտադիտարկում և տվյալների հավաքում, ինչպես նաև հետևում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց, կազմակերպությունների կողմից ազդարարների իրավունքների և ազատությունների պահպանմանը, նպաստում է ազդարարների իրավունքների և ազատությունների վերականգնմանը: Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների վիճակագրական տվյալների հիման վրա ազդարարման հետ կապված հաշվետվությունը և վիճակագրությունը ամփոփված և հրապարակված են սույն տարեկան հաղորդման համապատասխան բաժնում:

➢ ***Յուրաքանչյուր տարվա առաջին եռամսյակի ընթացքում Պաշտպանն Ազգային ժողով է ներկայացնում տարեկան հաղորդում՝ նախորդ տարվա իր գործունեության, ինչպես նաև մարդու իրավունքների և ազատությունների***

պաշտպանության վիճակի մասին, որում յուրաքանչյուր ոլորտի առնչությամբ բարձրացվում են հարցեր, որոնք խնդրահարույց են և արժանի են ուշադրության տվյալ ոլորտում մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության տեսանկյունից:

Ստորև ներկայացված է 2024 թվականի տարեկան հաղորդման շրջանակներում բարձրացված հարցերի առնչությամբ կատարողական ցուցանիշների վերաբերյալ վիճակագրությունը.



➢ ***2025 թվականի ընթացում Մարդու իրավունքների պաշտպանը հրապարակել է նաև հետևյալ 5 արտահերթ զեկույցները.***

«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների կիրառության վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանի այլընտրանքային զեկույց

«Երեխայի նկատմամբ բռնության դեպքերի բացահայտման, կանխարգելման և արձագանքման հետ կապված խնդիրները Հայաստանի Հանրապետությունում» արտահերթ զեկույց

«Անձնական տվյալների պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետությունում առկա համակարգային խնդիրների վերաբերյալ» արտահերթ զեկույց

«Կանանց տնտեսական իրավունքների իրացման երաշխիքներն ու խոչընդոտները Հայաստանում» արտահերթ զեկույց

«Ուսումնական հաստատությունների կառուցման, վերակառուցման և հիմնանորոգման գործընթացում հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության սկզբունքների ապահովման հետ կապված առանձին խնդիրները Հայաստանի Հանրապետությունում» արտահերթ զեկույց

Զեկույցների մշակման գործընթացն իրականացվել է երեխաների, հաշմանդամություն ունեցող անձանց, նրանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ակտիվ ներգրավմամբ ու համագործակցությամբ:

➢ ***Մարդու իրավունքների պաշտպանն ունի իրավունքների ու ազատությունների խթանման գործառույթ, որը բխում է Մարդու իրավունքների ազգային հաստատությունների կարգավիճակին և գործունեությանը վերաբերող սկզբունքներից:***

2025 թվականին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովն ընդունել է ««Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ սահմանադրական օրենքի նախագիծը: Օրենսդրական նախաձեռնությամբ հանդես է եկել ՀՀ ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնակատար, ԱԺ պատգամավոր Ռուստամ Բաքոյանը: Նախագծային կարգավորումներն ուղղված են «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքի կիրարկման ընթացքում առաջացած գործնական խնդիրների լուծմանը, ինչպես նաև Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների ազգային ինստիտուտների գլոբալ դաշինքի (GANHRI) հավատարմագրման հարցերով ենթահանձնաժողովի՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հաստատության հետ կապված փոփոխությունների անհրաժեշտությանը վերաբերող՝ դեռևս տարիներ առաջ ներկայացված հանձնարարականների կատարմանը:

Փոփոխություններն ու լրացումները նախատեսվել են մի քանի առանցքային ուղղություններով, որոնցից են՝

✓ Պաշտպանն իրավասու է խթանել մարդու իրավունքների միջազգային չափանիշներին Հայաստանի Հանրապետության օրենսդրության և դրա կիրառման համապատասխանեցումը, այդ թվում՝ իրականացնել մարդու իրավունքների միջազգային չափանիշներին Հայաստանի Հանրապետության օրենսդրության և դրա կիրառման համապատասխանության ուսումնասիրություն և մշտադիտարկում, խթանել մարդու իրավունքների և ազատությունների ապահովմանն ուղղված միջազգային պայմանագրերի՝ Հայաստանի Հանրապետության կողմից վավերացումն (միանալը) ու Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորություններին ներպետական օրենսդրության և դրա կիրառման համապատասխանեցումը,

✓ Սահմանադրական օրենքում ամրագրվել է Մարդու իրավունքների պաշտպանի լիազորությունը՝ Սահմանադրական դատարան իրավական դիրքորոշում (amicus brief) ներկայացնելու՝ Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին համապատասխանության հարցերով: Սա պաշտոնապես ամրագրում է մի գործառույթ, որը Պաշտպանը տարիներ շարունակ իրականացնում էր Սահմանադրական դատարանի հետ համագործակցության շրջանակներում,

✓ Ամրագրվել է Պաշտպանի լիազորությունը՝ մարդու իրավունքների և ազատությունների վերաբերյալ հարցերով իրականացրած հետազոտությունների հիման վրա հանդես գալու արտահերթ հրապարակային զեկույցներով կամ հաղորդումներով և այլն:

Ընդունված օրենքի նախագիծը համալիր լուծումներ է տալիս Պաշտպանի ինստիտուտի գործառնական և մանդատային խնդիրներին՝ նպաստելով երկրում մարդու իրավունքների պաշտպանության ու խթանման վիճակի բարելավմանն ու այդ նպատակով հաստատության արդյունավետության ամրապնդմանը:

➢ ***Մարդու իրավունքների խթանման կարևոր երաշխիք է Պաշտպանի լիազորությունը՝ դիմելու Սահմանադրական դատարան օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության նախագահի հրամանագրերի և կարգադրությունների, Կառավարության և վարչապետի որոշումների, ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի՝ Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին համապատասխանության հարցերով:***

Մարդու իրավունքների պաշտպանի 2 դիմումի հիման վրա Սահմանադրական դատարանը 2025 թվականին հակասահմանադրական է ճանաչել դիմումներով վիճարկվող կարգավորումները: Այսպես, Պաշտպանի դիմումի հիման վրա Սահմանադրական դատարանը հակասահմանադրական է ճանաչել.

✓ երկու ականջի կայուն լրիվ խլություն կամ խուլհամրություն ու երկու աչքերի (բինօկուլյար) կուրություն ունեցող անձանց համար դատավորի պաշտոնում նշանակվելու բացարձակ արգելքը սահմանող իրավական կարգավորումները[6].

✓ տարիքով պայմանավորված՝ վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու իրավունքի օրենսդրական արգելքը[7]:

➢ ***Պաշտպանը, 2025 թվականին շարունակել է նպաստել մարդու իրավունքներին ու ազատություններին առնչվող նորմատիվ իրավական ակտերի կատարելագործմանը:***

Այսպես, 2025 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ ներկայացված 356 իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ ներկայացվել է 209 նկատառում:

Նորմատիվ իրավական ակտերի կատարելագործման նպատակով Պաշտպանը 2025 թվականին մասնակցել է ՀՀ կառավարության նիստերին, Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները՝ նախարարական կոմիտեի նիստերին: Պաշտպանը և աշխատակազմի ներկայացուցիչները, ինստիտուցիոնալ անկախության պահպանմամբ և Պաշտպանի համաձայնությամբ, ներգրավված են մարդու իրավունքների պաշտպանության և խթանման հարցերին վերաբերելի առանձին հանձնաժողովներում, խորհուրդներում և միջգերատեսչական աշխատանքային խմբերում:

Մարդու իրավունքների պաշտպանը 2025 թվականին հանդես է եկել նաև մի շարք իրավական ակտերի կատարելագործման առաջարկություններով:

Այսպես, օրինակ, Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանի նախաձեռնությամբ և Ազգային ժողովի մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի հետ համագործակցությամբ մարտի 21-ին անցկացվել են խորհրդարանական լսումներ «Հանրային աղմուկը՝ որպես համակեցության կանոնների պահպանման խոչընդոտ, գործող իրավական կարգավորումներ. Օրենսդրական լուծումներ» թեմայով[8]:

---

[6] Տե՛ս Սահմանադրական դատարանի 2025 թվականի սեպտեմբերի 16-ի ՍԴՈ-1796 որոշումը (https://concourt.am/decision/decisions/68cd5259cee90_SDV-1796.pdf), 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

[7] Տե՛ս Սահմանադրական դատարանի 2025 թվականի ապրիլի 1-ի ՍԴՈ-1775 որոշումը (https://concourt.am/decision/decisions/67ef8d563c463_SDV-1775.pdf), 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

[8] Տեղեկատվությունը հասանելի է https://www.ombuds.am/am/site/ViewNews/3318 հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

Պաշտպանը սեպտեմբերի 22-ին Ազգային ժողովում մասնակցել է խորհրդարանական լսումների՝ «Երեխայի իրավունքների պաշտպանության բնագավառում շրջանառվող օրենսդրական նախագծերի էությունը: Երեխաների իրավունքների պաշտպանության պետական վերաբերելի քաղաքականությունը» թեմայով[9] և այլն:

➢ ***Պաշտպանի նախաձեռնությամբ 2025 թվականին իրականացվել են վերապատրաստումներ, մարդու իրավունքների վերաբերյալ կրթական ծրագրեր, միջոցառումներ ու իրազեկման արշավներ:***

2025 թվականին անցկացվել է Մարդու իրավունքների Ձմեռային դպրոցը, որը կազմակերպվել է ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի նախաձեռնությամբ՝ Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակի հետ համագործակցությամբ: Մրցութային կարգով ընտրված՝ ծրագրին մասնակցող ՀՀ տարբեր բուհերի իրավագիտության ֆակուլտետներում սովորող 25 ուսանող ընդգրկվել է մի շարք հանդիպումներում և դասընթացներում[10]:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի և Կոնրադ Ադենաուեր հիմնադրամի համագործակցությամբ հոկտեմբերի 4-ին և 5-ին Ծաղկաձորում կազմակերպվել է երկօրյա քննարկում՝ «Ատելության խոսքի վերաբերյալ իրազեկվածության բարձրացում» թեմայով: Միջոցառման նպատակն էր քննարկել ատելության խոսքի տարածման խնդիրները, մասնավորապես՝ սոցիալական մեդիայի և սոցցանցերի միջոցով տարածվող ատելության դրսևորումները, դրանց պատճառները, պայքարի միջազգային չափանիշները, ինչպես նաև անդրադառնալ առավել հաճախ թիրախավորվող խմբերին: Մասնակցել են Ազգային ժողովի պատգամավորներ, ԱԺ, դատական իշխանության, դատախազության, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի, ինչպես նաև ՄԻՊ աշխատակազմի ներկայացուցիչներ[11]:

Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանի նախաձեռնությամբ 2025 թվականի ապրիլի 28-ին տեղի է ունեցել աշխատաժողով, որի նպատակն էր ամրապնդել պետական հաստատությունների և լրատվամիջոցների միջև հաղորդակցությունը՝ հանրային տիրույթում ատելության խոսքի դեմ պայքարի համատեքստում, ստեղծել կառուցողական երկխոսության հարթակ՝ վեր հանելու ոլորտում առկա խնդիրները, խթանելու պետական մարմինների և լրատվամիջոցների համագործակցությունը՝

---

[9] Տեղեկատվությունը հասանելի է https://www.ombuds.am/am/site/ViewNews/3517, https://www.youtube.com/watch?v=bZ1LfxyUEYU հղումներով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

[10] Տեղեկատվությունը հասանելի է https://www.ombuds.am/am/site/ViewNews/3275, https://www.ombuds.am/am/site/ViewNews/3279, https://www.ombuds.am/am/site/ViewNews/3284, https://www.ombuds.am/am/site/ViewNews/3287, https://www.ombuds.am/am/site/ViewNews/3288, https://www.ombuds.am/am/site/ViewNews/3290 և https://www.ombuds.am/am/site/ViewNews/3383 հղումներով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

[11] Տեղեկատվությունը հասանելի է https://www.ombuds.am/am/site/ViewNews/3530 հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

միջազգային լավագույն փորձի կիրառմամբ նվազեցնելու հանրային միջավայրում ատելության խոսքի դրսևորումները[12]:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանի նախաձեռնությամբ հունվարի 21-ին տեղի է ունեցել աշխատաժողով Պաշտպանի տարեկան հաղորդման շրջանակում արձանագրված խնդիրների և ներկայացված առաջարկությունների վերաբերյալ: Բացման խոսքով են հանդես եկել Պաշտպան Անահիտ Մանասյանը, Երևանում ԵԽ գրասենյակի ղեկավար Մաքսիմ Լոնգանգեն, ՀՀ արդարադատության նախարար Սրբուհի Գալյանը և ՄԻԵԴ վճիռների կատարման վարչության բաժնի ղեկավար Պավլո Պուշկարը (առցանց): Աշխատաժողովին մասնակցել են ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահ Լիլիթ Թադևոսյանը, ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալ Արսեն Այվազյանը, Հայաստանում ՄԱԿ-ի մշտական համակարգող Ֆրանսուազ Ժակոբը, ինչպես նաև պետական մարմինների, դեսպանությունների, միջազգային կազմակերպությունների այլ ներկայացուցիչներ[13]:

Մարզում երիտասարդների ձայնը լսելի դարձնելու նպատակով Մարտունի խոշորացված համայնքի երիտասարդների ներգրավմամբ Պաշտպան Անահիտ Մանասյանի նախաձեռնությամբ կազմակերպվել է միջոցառում՝ Մարտունու տարածաշրջանային և բժշկական պետական քոլեջների ուսանողների և այլ դպրոցների սաների հետ: Անդրադարձ է կատարվել մարդու իրավունքների հետ կապված մի շարք կարևոր թեմաների: Անցկացվել են նաև պանելային քննարկումներ, որոնք վարել են քոլեջների ուսանողները՝ հարցեր ուղղելով Մարդու իրավունքների պաշտպանին, ՀՀ ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի պարտականությունները կատարող, Խորհրդարանում Հայաստանի եզդիական համայնքի ներկայացուցիչ, պատգամավոր Ռուստամ Բաքոյանին, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչներին և Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր երեխաների իրավունքների պաշտպանության հարցերով հասարակական խորհրդին կից գործող աշխատանքային խմբի անդամներին[14]:

Դեկտեմբերի 10-ին՝ Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային օրվա առթիվ կազմակերպվել է «Էթիկական չափորոշիչները իրավահավասարության և հակախտրականության երաշխավորման ոլորտում» խորագրով բարձր մակարդակի միջազգային համաժողովը: Միջոցառմանը ողջույնի խոսքով են հանդես եկել Հայաստանի Հանրապետության Նախագահ Վահագն Խաչատուրյանը, ՀՀ Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանը, Հայաստանում ԵՄ պատվիրակության

[12] Տեղեկատվությունը հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3374 հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

[13] Տեղեկատվությունը հասանելի է https://www.ombuds.am/am/site/ViewNews/3245 հղումով. 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

[14] Տեղեկատվությունը հասանելի է https://www.ombuds.am/am/site/ViewNews/3342 հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

ղեկավար, դեսպան Վասիլիս Մարագոսը և ՀՀ-ում Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի մշտական ներկայացուցիչ Նաթիա Նացվլիշվիլին: Համաժողովին բացման խոսքով է հանդես եկել ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանը: Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը համաժողովը կազմակերպել է Եվրոպական Միության կողմից ֆինանսավորվող «Մարդու իրավունքների պաշտպանության խթանում և ազգային հաստատությունների հզորացում» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի, ՄԱԿ մանկական հիմնադրամի և Միավորված ազգերի կազմակերպության բնակչության հիմնադրամի հետ համատեղ:

Մարդու իրավունքների միջազգային օրվան նվիրված բարձր մակարդակի միջազգային համաժողովին մասնակցելու նպատակով Հայաստան ժամանած մարդու իրավունքների ոլորտի փորձագետներ՝ Մոլդովայի օմբուդսմանի տեղակալ Վալենտին Ռոսկան, Սերբիայի Հանրապետության նախկին Ազգային օմբուդսման, մարդու իրավունքների փորձագետ Սաշա Յանկովիչը, ինչպես նաև Մալթայի համալսարանի պրոֆեսոր Էն Մարի Թեյքը, Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանի և ՀՀ-ում ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի մշտական ներկայացուցիչ Նաթիա Նացվլիշվիլի ուղեկցությամբ դեկտեմբերի 11-ին այցելել են Երևանի պետական համալսարան, հանդիպել ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի հետ[15]:

Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանն ապրիլի 19-ին Լոռու մարզի երիտասարդների համար վարպետաց դաս է անցկացրել: «Հայաստանի մանուկներ» հիմնադրամի (ՔՈԱՖ) Դեբետ գյուղում տեղակայված ՍՄԱՐԹ կենտրոնում տեղի ունեցած միջոցառման նպատակն էր բարձրացնել մասնակիցների իրազեկվածությունն իրենց իրավունքների առնչությամբ և երիտասարդների համար ստեղծել որոշումների կայացման գործընթացում ներգրավվելու հնարավորություններ[16]:

Դեկտեմբերի 23-ին Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանի նախաձեռնությամբ կազմակերպվել է վերապատրաստման դասընթաց՝ նվիրված մարդկանց թրաֆիքինգի կամ աշխատանքային շահագործման՝ ներառյալ երեխաների թրաֆիքինգի կամ շահագործման հիմնախնդիրներին: Դասընթացին մասնակցել են զանգվածային լրատվության միջոցների, Հանրային պաշտպանի գրասենյակի, ինչպես նաև Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչներ:

Մարդու իրավունքների պաշտպանի և Հայաստանում Նիդերլանդների Թագավորության դեսպանության համագործակցությամբ հոկտեմբերի 7-ին Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի մշակույթի տանը տեղի է ունեցել «Սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների կանխարգելում. իրազեկում և հասարակական գիտակցության ձևավորում» թեմայով միջոցառում:

[15] Տեղեկատվությունը հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3625 հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

[16] Տեղեկատվությունը հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3364 հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

Ներկա են եղել Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի, քաղաքացիական հասարակության, ինչպես նաև ուսումնական հաստատությունների ներկայացուցիչներ՝ Գավառի պետական համալսարանի, քոլեջների դասախոսներ և ուսանողներ, դպրոցների տնօրեններ, ուսուցիչներ և ավագ դպրոցի աշակերտներ, ինչպես նաև թեմայով հետաքրքրված այլ անձինք: Բացման խոսքով հանդես են եկել Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանը և Հայաստանում Նիդերլանդների Թագավորության դեսպան Մարիկե Մոնրոյ-Վինթերը: Ֆիլմի դիտումից հետո տեղի է ունեցել թեմատիկ պանելային քննարկում, որին մասնակցել են Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանը, Նիդերլանդների Թագավորության դեսպան Մարիկե Մոնրոյ-Վինթերը, Ազգային ժողովի պատգամավոր Լիլիթ Ստեփանյանը և «Բաց սահմաններ» խաղաղության, ժողովրդավարության և զարգացման ինստիտուտ ՀԿ նախագահ Էլեոնորա Բեգոյանը[17]:

Պաշտպանի նախաձեռնությամբ 2025 թվականին հանրային իշխանության ներկայացուցիչների, հանրային գործիչների, զանգվածային լրատվության միջոցների, հասարակական կազմակերպությունների, մասնագիտական համայնքների ներկայացուցիչների ներգրավմամբ անցկացվել են բազմաթիվ այլ վերապատրաստումներ, մարդու իրավունքների վերաբերյալ կրթական ծրագրեր, միջոցառումներ ու իրազեկման արշավներ, որոնք հասանելի են Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնական կայքէջում:

➢ ***Պաշտպանը 2025 թվականին իրականացրել է մի շարք այցեր Հայաստանի Հանրապետության մարզեր ու բնակավայրեր, հանդիպումներ ու քննարկումներ է կազմակերպել պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ու քաղաքացիների հետ:***

Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանն ապրիլի 9-ին աշխատանքային այց է իրականացրել Կոտայքի մարզի Արզնի համայնք, որը մեծամասամբ բնակեցված է ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներով: Կարևորելով Հայաստանում ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունն ու խթանումը՝ Անահիտ Մանասյանի կողմից Արզնիի Սերգեյ Սարխոշևի անվան միջնակարգ դպրոցում ոլորտային թեմաների շուրջ անցկացվել է վարպետաց դաս: Վերջինիս մասնակցել են ուսուցիչներ, աշակերտներ, այդ թվում՝ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ՝ ասորական, եզդիական և ռուսական համայնքներից, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ: Այնուհետև Պաշտպան Անահիտ Մանասյանը հանդիպում է ունեցել Արզնի համայնքի ղեկավար Ֆելիքս Միրզոևի հետ: Քննարկվել են համայնքի բնակիչների իրավունքներին, այդ թվում՝ ազգային փոքրամասնությունների իրավունքներին վերաբերելի հարցեր: Մշակույթի տանն Անահիտ Մանասյանի նախաձեռնությամբ հանդիպում է կազմակերպվել նաև համայնքի բնակիչների հետ[18]:

[17] Տեղեկատվությունը հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3534 հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

[18] Տեղեկատվությունը հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3349 հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանը մայիսի 12-ին աշխատանքային այց է իրականացրել քաղաք Գյումրի, հանդիպել է Շիրակի մարզպետ Դավիթ Առուշանյանի հետ, քննարկվել են մարզում առկա մարդու իրավունքներին վերաբերելի խնդիրները, ինչպես նաև սոցիալ-տնտեսական հիմնահարցերը: Անահիտ Մանասյանը Գյումրիում հանդիպել է Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջի ուսանողների հետ: Երիտասարդներին ներկայացվել են Մարդու իրավունքների պաշտպանի լիազորություններն ու գործունեության հիմնական ուղղությունները: Հանդիպման շրջանակում Անահիտ Մանասյանը պատասխանել է ուսանողների հարցերին, անդրադարձել մարդու իրավունքների պաշտպանության հիմնական կառուցակարգերին: Ընդգծվել է հանդուրժողականության, իրավահավասարության, արդարության և մարդու՝ որպես սահմանադրորեն ճանաչված բարձրագույն արժեքի կարևորությունը: Ուսանողները հնարավորություն են ունեցել բարձրաձայնելու իրենց հուզող հարցերը և քննարկելու իրավունքների պաշտպանությանն առնչվող մի շարք հարցեր: Մասնավորապես, քննարկվել են խոսքի ազատության, մտքի և կրոնի ազատության, մասնավոր կյանքի անձեռնմխելիության, անձնական տվյալների պաշտպանության հետ կապված մի շարք հարցեր[19]:

Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանը, աշխատակազմի ներկայացուցիչների ուղեկցությամբ, մայիսի 16-ին աշխատանքային այց է իրականացրել Տավուշի մարզ: Նպատակն էր տեղում գնահատել մարդու իրավունքների պաշտպանության վիճակը և ծանոթանալ առկա հիմնահարցերին: Այցի շրջանակում Պաշտպանն այցելել է Բերդ խոշորացված համայնք, որտեղ հանդիպումներ է ունեցել համայնքի ղեկավար Աստղիկ Հակոբյանի, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների, խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի անդամների, ինչպես նաև քաղաքացիների հետ: Պաշտպանն այցելել է նաև Բերդի զինվորական հոսպիտալ: Այցի շրջանակում Պաշտպանն այցելել է նաև Հայ Օգնության Ֆոնդի Բերդի մասնաճյուղ, ծանոթացել կազմակերպության կողմից իրականացվող սոցիալական աջակցման ծրագրերին, զրուցել աշխատակիցների հետ՝ ընդգծելով նման նախաձեռնությունների դերը համայնքի սոցիալական կայունության ապահովման գործում: Անահիտ Մանասյանը հանդիպում է ունեցել նաև համայնքի մյուս հասարակական կազմակերպությունների և պետական մարմինների ներկայացուցիչների հետ: Քննարկվել են սահմանամերձ բնակավայրերում մարդու իրավունքների պաշտպանությանն առնչվող սոցիալ-տնտեսական մի շարք խնդիրներ, հարկային արտոնություններից և ուսման վարձի զեղչերից օգտվելու հնարավորությունները, բռնի տեղահանված անձանց սոցիալական աջակցության և երաշխիքների հարցերը, ինչպես նաև երեխաների իրավունքների պաշտպանությանը և ընտանիքում ապրելու իրավունքին առնչվող մի շարք հարցեր: Հանդիպումներ են տեղի ունեցել նաև համայնքի շուրջ երեք տասնյակ բնակիչների հետ, ովքեր ներկայացրել են իրենց հուզող հարցերը՝ կապված տարբեր պետական մարմինների

[19] Տեղեկատվությունը հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3387 հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

դիմելիս առաջացած խնդիրների, պատշաճ բուժօգնության ապահովման, բռնի տեղահանված անձանց սոցիալական աջակցությունների տրամադրման հետ, որոշ քաղաքացիների հետ տեղի են ունեցել նաև առանձնազրույցներ[20]:

Մայիսի 19-ին Պաշտպանն ու Հայաստանում ՄԱԿ-ի մշտական համակարգող Ֆրանսուազ Ժակոբն այցելել են ՄԻՊ աշխատակազմի Սյունիքի մարզային ստորաբաժանում: Կապանում հանդիպում է տեղի ունեցել Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանի հետ: Վերջինս ներկայացրել է մարզում մարդու իրավունքների ոլորտում առկա խնդիրները, ինչպես նաև սոցիալ-տնտեսական հիմնահարցերը: Քննարկվել են մարզի սահմանամերձ բնակավայրերի բնակիչների, բռնի տեղահանված, հաշմանդամություն ունեցող անձանց, կանանց իրավունքներին, մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում միջազգային դերակատարների հետ համագործակցությանը վերաբերելի հարցեր: Այց է իրականացվել նաև ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի Կապանի գրասենյակ: Պաշտպանին ներկայացվել են կառույցի գործունեության նպատակն ու աշխատանքի ուղղությունները: Այնուհետև Պաշտպանն ու Հայաստանում ՄԱԿ-ի մշտական համակարգողն այցեր են իրականացրել սահմանամերձ Շիկահող, Սրաշեն և Ծավ բնակավայրեր: Տեղի են ունեցել հանդիպումներ համայնքների ղեկավարների և բնակիչների հետ: Տեղում իրականացվել է իրավունքներին վերաբերելի խնդիրների հավաքագրում: Վերոնշյալ բնակավայրերի բնակիչները ներկայացրել են խմելու և ոռոգման ջրի հասանելիության, զբաղվածության ապահովման, անվտանգության, սեփականության իրավունքի, գյուղատնտեսությամբ և անասնապահությամբ զբաղվելու դժվարություններին, ինչպես նաև բնակիչների սոցիալ-կենցաղային պայմանների լավարկմանը միտված այլ հարցեր[21]:

Այնուհետև Անահիտ Մանասյանն ու Ֆրանսուազ Ժակոբն այցելել են Մեղրի համայնք: Համայնքի ղեկավար Խաչատուր Անդրեասյանի հետ հանդիպմանը քննարկվել են համայնքում մարդու իրավունքների հետ կապված խնդիրները, ինչպես նաև սոցիալ-տնտեսական հիմնահարցերը: Համայնքի ղեկավարը նշել է, որ բնակավայրերում առկա են խմելու և ոռոգման ջրի հասանելիության, բժշկական օգնության և սպասարկման հետ կապված և լուծման կարիք ունեցող այլ խնդիրներ: Քննարկվել են մարզի սահմանամերձ բնակավայրերի բնակիչների իրավունքներին, մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում միջազգային դերակատարների հետ համագործակցությանը վերաբերելի հարցեր: Պաշտպանն ու Հայաստանում ՄԱԿ-ի մշտական համակարգողն այցելել են նաև Ալվանք և Շվանիձոր բնակավայրեր: Բնակավայրերի դպրոցներում հանդիպումներ են տեղի ունեցել ուսուցչական անձնակազմերի և աշակերտների հետ: Պաշտպանը ծանոթացել է ուսումնական հաստատությունների շենքային պայմաններին, ուսումնական գործընթացին, աշխատանքային պայմաններին: Վարչական ղեկավարների և բնակիչների հետ քննարկվել են մարդու իրավունքներին վերաբերելի՝ առաջնահերթ լուծում պահանջող խնդիրները, մասնավորապես՝ ջրի հասանելիության, բժշկական օգնության և

[20] Տեղեկատվությունը հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3392 հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

[21] Տեղեկատվությունը հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3394 հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

սպասարկման, կրթության իրավունքի, զբաղվածության և այլ հարցերին առնչվող: Մեղրիում հանդիպում է տեղի ունեցել նաև «Վիններթ Հայաստան» կանանց ռեսուրս կենտրոնի ներկայացուցիչների և շահառուների հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են կանանց իրավունքների պաշտպանությանն ու խթանմանը, հաշմանդամություն ունեցող երեխաների, նրանց խնամող ծնողների իրավունքներին, բժշկական ծառայությունների հասանելիության երաշխավորմանն առնչվող և այլ հարցեր[22]:

Հունիսի 27-ին Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանն այցելել է Արմավիրի մարզի եզդիական բնակչություն ունեցող Ֆերիկ համայնք: Այցն իրականացվել է Ազգային ժողովի պատգամավոր, ԱԺ-ում եզդիական համայնքի ներկայացուցիչ, Մարդու

իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնակատար Ռուստամ Բաքոյանի հետ համատեղ: Մասնակցել են նաև Ազգային ժողովի, Արմավիրի մարզպետարանի, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմերի, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Անահիտ Մանասյանը շրջայց է կատարել Ֆերիկի Ռզալիե Ռաշիդի Օզմանյանի անվան միջնակարգ դպրոցում, տեղում ծանոթացել շենքային պայմաններին, զրուցել ուսուցչական կազմի և աշակերտների հետ՝ կարևորելով բարձրաձայնված խնդիրների լուծումը[23]:

Հոկտեմբերի 21-ին Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանը՝ աշխատակազմի ներկայացուցիչների ուղեկցությամբ աշխատանքային այց է իրականացրել Շիրակի մարզ: Այցի շրջանակում իրականացվել է այց ՆԳՆ ոստիկանության ՀՈԳՎ Մուշի բաժնի ձերբակալվածների պահման վայր՝ հոկտեմբերի 20-ին Գյումրիում ձերբակալված անձանց տեսակցելու նպատակով: Ուսումնասիրվել են նրանց բերման ենթարկելու հիմքերը և իրավունքների ապահովման վիճակը: Ազատությունից զրկված անձանց հետ կայացել են առանձնազրույցներ: Աշխատանքային այցի ընթացքում Անահիտ Մանասյանը հանդիպում է ունեցել Շիրակի մարզպետի հետ: Քննարկել են մարզում մարդու իրավունքների պաշտպանությանն առնչվող խնդիրները: Այցի շրջանակներում Պաշտպանն այցելել է Ամասիա և Աշոցք համայնքներ: Ամասիայում տեղի է ունեցել հանդիպում համայնքի ղեկավար Ջեմմա Հարությունյանի հետ: Զրուցակիցները քննարկել են համայնքային մակարդակում առկա խնդիրները և դրանց հնարավոր լուծումները: Ամասիայում Պաշտպանն այցելել է մանկապարտեզ, մարզամշակութային կենտրոն և գրադարան՝ տեղում ծանոթանալով դրանց գործունեությանը և պայմաններին: Անահիտ Մանասյանը հանդիպումներ է ունեցել Ամասիա և Աշոցք համայնքների բնակիչների, այդ թվում՝ բռնի տեղահանված անձանց հետ: Քննարկումների ընթացքում բարձրացվել են համայնքային և սոցիալական տարբեր խնդիրներ՝ կրթության, զբաղվածության, հանրային տրանսպորտի, ճանապարհաշինության, ինչպես նաև պետական և համայնքային ծառայությունների մատչելիության հետ կապված[24]:

---

[22] Տեղեկատվությունը հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3396 հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

[23] Տեղեկատվությունը հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3438 հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

[24] Տեղեկատվությունը հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3554 հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանն այցելել է Հայաստանում ասորական ամենախոշոր՝ Արարատի մարզի Վերին Դվին համայնք: Այցի մեկնարկին տեղի է ունեցել հանդիպում համայնքի ղեկավար Լյուդմիլա Պետրովայի հետ: Վերջինս ներկայացրել է Հայաստանում բնակվող ասորիների իրավունքներին, ազգային փոքրամասնությունների ինքնության պահպանմանը վերաբերելի առանձին հարցեր: Հատուկ անդրադարձ է կատարվել համայնքի բնակիչների իրավունքներին վերաբերելի հարցերին[25]:

Պաշտպանն ու աշխատակազմը 2025 թվականին իրականացրել են մի շարք այլ այցեր Հայաստանի Հանրապետության տարբեր մարզեր ու բնակավայրեր, հանդիպումներ ու քննարկումներ են կազմակերպել պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ու քաղաքացիների հետ, որոնք հասանելի են Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնական կայքէջում:

➢ ***Պաշտպանի ու քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ համագործակցությունը դրսևորվել է ոչ միայն վերը նշված միջոցառումների, վերապատրաստման դասընթացների, հանդիպումների, իրազեկման արշավների շրջանակներում վերջիններիս ակտիվ ներգրավմամբ, մարզային այցերի շրջանակում քննարկումների կազմակերպմամբ, այլև Պաշտպանին առընթեր խորհրդատվական խորհուրդների համատեքստում ակտիվ գործունեությամբ:***

2025 թվականի դրությամբ Պաշտպանին առընթեր գործել է 6 խորհրդատվական խորհուրդ, որոնք ընդհանուր առմամբ անցկացրել են 12 նիստ.



[25] Տեղեկատվությունը հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3634 հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

Այսպես, օրինակ, Մարդու իրավունքների պաշտպանի նախաձեռնությամբ և ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ 2025 թվականի հունիսի 1-2-ը անցկացվել է Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր երեխաների իրավունքների պաշտպանության հարցերով հասարակական խորհրդի հերթական նիստը: Միջոցառումը բացառիկ հնարավորություն էր երեխաների համար՝ ուղղել իրենց հարցերը տարբեր ոլորտների պատասխանատուներին և որոշում կայացնողներին: Նիստի երկրորդ օրը բացման խոսքով հանդես են եկել Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանը, Հայաստանում ՅՈՒՆԻՍԵՖ-ի ներկայացուցիչ Քրիսթինե Վայգանդը և կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը: Նիստի ընթացքում հատուկ ուշադրություն է դարձվել երեխաների մասնակցությանը: Նրանք ոչ միայն ներկա են եղել, այլև հնարավորություն են ունեցել անձամբ բարձրաձայնելու իրենց հուզող հարցերն ու խնդիրները: Երեխաներն ուղղել են հարցեր հրավիրված պաշտոնյաներին կոնկրետ ոլորտների առնչությամբ: Պանելային քննարկումներում Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանը, Ազգային ժողովի առողջապահության մշտական հանձնաժողովի նախագահ Արսեն Թորոսյանը, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը, ինչպես նաև Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ Արամ Մեյմարյանը քննարկել են շրջակա միջավայրի ազդեցությունը երեխաների իրավունքների իրացման վրա: Առցանց տիրույթում երեխայի անվտանգությանն ու սոցիալական ցանցերի ազդեցությանը երեխաների հոգեկան առողջության վրա անդրադարձել են Անահիտ Մանասյանը, Քրիսթինե Վայգանդը, Ազգային ժողովի աշխատանքի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Հերիքնազ Տիգրանյանը և Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի խորհրդական Մարթա Սանդոյանը: Նրանք կարևորել են համակարգային մոտեցման և ոլորտային համագործակցության անհրաժեշտությունը՝ երեխաների իրավունքների պաշտպանության հիմնախնդիրներն արդյունավետ լուծելու համար: Երեխաներն իրենք են վարել պանելային քննարկումները և հարցեր ուղղել հրավիրված պաշտոնյաներին, ինչը նիստի առանցքային ձեռքբերումներից էր: Այս գործընթացը նպաստում է ոչ միայն երեխաների ներգրավվածության խորացմանը, այլև նրանց առաջարկների և դիտարկումների ընդգրկմանը պետական քաղաքականությունների և ծրագրերի մշակման գործընթացում[26]:

Մարդու իրավունքների պաշտպանի նախաձեռնությամբ և Ռաուլ Վալենբերգի մարդու իրավունքների և մարդասիրական իրավունքի ինստիտուտի աջակցությամբ դեկտեմբերի 1-ին տեղի է ունեցել «Մատչելիություն: Ոչինչ մեր մասին՝ առանց մեզ» թեմայով համաժողովը, որը նվիրված էր Հաշմանդամություն ունեցող անձանց միջազգային օրվան: Միջոցառմանը մասնակցել են Ազգային ժողովի պատգամավորներ, գործադիր իշխանության, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչներ, ոլորտային փորձագետներ, ինչպես նաև թեմայով հետաքրքրված անձինք: Բացման խոսքով հանդես են եկել ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ

[26] Տեղեկատվությունը հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3413 հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

Մանասյանը և Ռաուլ Վալենբերգի մարդու իրավունքների և մարդասիրական իրավունքի ինստիտուտի Երևանյան գրասենյակի տնօրեն Լաուրա Միլնը:

Միջոցառման շրջանակում ներկայացվել է Մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույցը «Նոր կառուցվող, վերակառուցվող, հիմնանորոգվող շենքերի և շինությունների շենքային պայմանների՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության ապահովման հետ կապված խնդիրները» վերտառությամբ: Համաժողովի շրջանակում անցկացվել են նաև պանելային քննարկումներ:

Առաջին պանելային քննարկման ընթացքում անդրադարձ է կատարվել մատչելիության ապահովման հետ կապված խնդիրներին: Քննարկմանը մասնակցել են Ազգային ժողովի պատգամավոր Զարուհի Բաթոյանը, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Տաթևիկ Ստեփանյանը, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը և Քաղաքաշինության կոմիտեի նախագահի առաջին տեղակալ Դավիթ Գրիգորյանը: Պանելային քննարկումը մոդերացրել է Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանը:

Երկրորդ պանելային քննարկման ընթացքում քննարկվել են Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկման աշխատանքներին հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցության կատարելագործված մեխանիզմները: Քննարկմանը մասնակցել են ՄԻՊ աշխատակազմի Կոնվենցիոն մանդատների ապահովման վարչության հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության բաժնի պետ Աքսանա Ղահրամանյանը, «ԱԳԱԹ» հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանության կենտրոն հասարակական կազմակերպության նախագահ Կարինե Գրիգորյանը, «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» հասարակական կազմակերպության նախագահ Անուշ Ասլանյանը, «Լիարժեք կյանք» հասարակական կազմակերպության նախագահ Սուրեն Մաղաքյանը և «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների օրակարգ» իրավապաշտպան հասարակական կազմակերպության նախագահ Մուշեղ Հովսեփյանը: Պանելային քննարկումը մոդերացրել է ՄԻՊ աշխատակազմի Կոնվենցիոն մանդատների ապահովման վարչության պետի պարտականությունները կատարող Լիլիթ Աղաջանյանը:

Համաժողովի ավարտին մասնակիցներն ընդգծել են համագործակցության ամրապնդման և մատչելիության ապահովման ուղղությամբ հետագա քայլերի մշակման պատրաստակամությունը[27]:

Դեկտեմբերի 23-ին տեղի է ունեցել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին առընթեր Խոշտանգումների կանխարգելման խորհրդատվական խորհրդի հերթական ընդլայնված նիստը: Հանդիպմանը մասնակցել են իրավասու պետական մարմինների և ՄԻՊ առընթեր Խոշտանգումների կանխարգելման խորհրդատվական խորհրդի անդամ քաղաքացիական

[27] Տեղեկատվությունը հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3611 հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

հասարակության ներկայացուցիչներ: ՄԻՊ առընթեր Խոշտանգումների կանխարգելման խորհրդատվական խորհրդի ընդլայնված նիստը կազմակերպվել է Եվրոպական Միության կողմից ֆինանսավորվող «Մարդու իրավունքների պաշտպանության խթանում և ազգային հաստատությունների հզորացում» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի և Միավորված ազգերի կազմակերպության բնակչության հիմնադրամի հետ համատեղ[28]:

Հունիսի 25-ին տեղի է ունեցել Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների պաշտպանության և խթանման հարցերով հասարակական խորհրդի հերթական նիստը: Նիստի նպատակն էր ամրապնդել ազգային փոքրամասնությունների իրավունքներով զբաղվող հասարակական կազմակերպությունների և պետական մարմինների միջև համագործակցությունն ու երկխոսությունը՝ ուղղված ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների պաշտպանությանը և խտրականության կանխարգելմանը: Քննարկվել են ոլորտում առկա հիմնախնդիրները, ինչպես նաև առաջարկներ՝ ուղղված դրանց համակարգային լուծմանը և իրավունքների կայուն պաշտպանությանը:

Նիստին մասնակցել են ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանը, ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Ռուստամ Բաքոյանը և Իրինա Գասպարյանը, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը:

Նիստի ընթացքում, ի թիվս այլնի, քննարկվել են մի շարք հարցեր՝ լեզվի իրավունքի պահպանման կարևորությունը՝ խտրականության դեմ պայքարի համատեքստում, կրթության, մշակութային կյանքին մասնակցության և այլ ոլորտներում հավասար հնարավորությունների ապահովումը՝ որպես խտրականության կանխարգելման և սոցիալական համերաշխության ամրապնդման գործիքներ, անդրադարձ է կատարվել նաև Ազգային փոքրամասնությունների մասին օրենքի նախագծին:

Հատուկ ուշադրություն է դարձվել նախադպրոցական հաստատություններում ազգային փոքրամասնություններին պատկանող երեխաների ընդգրկվածությանը, դպրոցներում մայրենի լեզվի դասավանդմանը, համապատասխան դասագրքերի առկայությանը, ինչպես նաև կրթությունից դուրս մնացած երեխաների իրավունքներին: Հասարակական խորհրդի անդամները ներկայացրել են իրենց համայնքներում առկա խնդիրները, առաջարկներ, որոնք կարող են լուծում ստանալ պետական մարմինների և քաղաքացիական հասարակության համատեղ ջանքերով: Նիստը կազմակերպվել էր ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի և Եվրոպայի խորհրդի «Հավասարության խթանումը և խտրականության բացառումը Հայաստանում» ծրագրի համագործակցությամբ[29]:

[28] Տեղեկատվությունը հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3640 հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

[29] Տեղեկատվությունը հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3431 հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

Դեկտեմբերի 26-ին տեղի է ունեցել Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր Զինծառայողների իրավունքների պաշտպանության հարցերով փորձագիտական խորհրդի ընթացիկ տարվա ամփոփիչ նիստը: Ողջունելով փորձագիտական խորհրդի անդամներին՝ Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանը կարևորել է նրանց մասնագիտական ներգրավվածությունն ու ներդրումը զինծառայողների իրավունքների պաշտպանության ոլորտում առկա խնդիրների համակողմանի վերլուծության, դրանց բարձրաձայնման, լուծման հնարավոր ուղղությունների մշակման և համապատասխան աշխատանքային առաջնահերթությունների սահմանման գործընթացում:

Պաշտպանը շեշտել է քաղաքացիական հասարակության, իրավապաշտպանների, ոլորտային անկախ մասնագետների հետ ինստիտուցիոնալ ու շարունակական համագործակցության կարևորությունը, այդ թվում՝ փորձագիտական խորհրդի ձևաչափի շրջանակում: Անահիտ Մանասյանն ամփոփ կերպով ներկայացրել է տարվա ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի իրականացրած մեծածավալ աշխատանքները: Ներկայացված հարցերի շուրջ ծավալվել է ակտիվ և բովանդակային քննարկում, որի ընթացքում ընդգծվել է մի շարք խնդիրների համակարգային և համապարփակ լուծման անհրաժեշտությունը: Ամփոփելով նիստի աշխատանքները՝ Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանը նշել է, որ բարձրացված հարցերի խորքային և առարկայական քննարկումն ապահովելու նպատակով առաջիկայում Պաշտպանի աշխատակազմի կողմից կնախաձեռնվի ընդլայնված քննարկում՝ ոլորտում որոշում կայացնող իրավասու պետական մարմինների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների մասնակցությամբ[30]:

Պաշտպանին առընթեր գործող խորհրդատվական խորհուրդների մյուս նիստերի վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը հասանելի է Պաշտպանի պաշտոնական կայքէջում:

➢ ***Հայաստանի Հանրապետության 5 մարզերում գործում են նաև Մարդու իրավունքների պաշտպանի մարզային ստորաբաժանումները:***



[30] Տեղեկատվությունը հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3646 հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

Մարզային ստորաբաժանումները, նույնպես, ակտիվորեն իրականացնում են միջոցառումներ ու իրազեկման արշավներ ՀՀ մարզերում:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանումը հյուրընկալել է «ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Լավ քաղաքացի» հարթակի մասնակիցներին[31]:

Նոյեմբերի 20-ին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի Սյունիքի մարզային ստորաբաժանումը հյուրընկալել է Կապանի թիվ 9 ավագ դպրոցի 10-րդ դասարանի հումանիտար հոսքի աշակերտներին: Այցի նպատակն էր «Մասնագիտական կողմնորոշում» առարկայի շրջանակում ծանոթանալ Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության գործունեությանը[32]:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի Շիրակի մարզային ստորաբաժանման ղեկավար Լուսինե Նահապետյանն ապրիլի 22-ին հյուրընկալվել է «Գյումրու թիվ 1 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ում[33]:

Բոլոր հանդիպումների ընթացքում ներկայացվել են Մարդու իրավունքների պաշտպանի գործառույթները, կառույցի պատմությունը, ինչպես նաև Պաշտպանին դիմելու կարգը: Մասնակիցները բարձրացրել են մի շարք հարցեր:

Մարզային ստորաբաժանումների կողմից իրականացված այլ միջոցառումների ու իրազեկման արշավների վերաբերյալ տեղեկատվությունը մանրամասն հասանելի է Պաշտպանի պաշտոնական կայքում:

➢ ***Մարդու իրավունքների պաշտպանը նաև խիստ կարևորում է ՄԻՊ աշխատակազմի ներկայացուցիչների կարողությունների ու հմտությունների շարունակական կատարելագործումը: Այդ նպատակով 2025 թվականին կազմակերպվել են մի շարք վերապատրաստումներ, աշխատակազմի ներկայացուցիչները մասնակցել մի շարք դասընթացների:***

Այսպես, օրինակ, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում հունիսի 11–12-ն անցկացվել է «Ընտանեկան բռնությունը երեխաների և անչափահասների նկատմամբ» թեմայով կարողությունների զարգացման սեմինար: Դասընթացը կազմակերպվել է Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի և Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամի (IRZ) հետ համագործակցության շրջանակում: Սեմինարի նպատակն էր ընդլայնել և խորացնել Պաշտպանի աշխատակազմի մասնագիտական կարողություններն ու հմտությունները ընտանեկան բռնության կանխարգելման, երեխաների ու անչափահասների պաշտպանության ուղղությամբ: Մասնակիցներին ներկայացվել են միջազգային չափանիշները, օրենսդրական և պրակտիկ գործիքակազմերն ընտանեկան բռնության

[31] Տեղեկատվությունը հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3489 հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

[32] Տեղեկատվությունը հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3594 հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

[33] Տեղեկատվությունը հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3368 հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

դեպքերին արձագանքման, ռիսկերի գնահատման և կանխարգելիչ միջոցառումների իրականացման վերաբերյալ[34]:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի և Եվրոպայի խորհրդի համագործակցությամբ հոկտեմբերի 31-ից նոյեմբերի 1-ը Ծաղկաձորում կազմակերպվել է երկօրյա դասընթաց-քննարկում: Դասընթացի նպատակն էր ամրապնդել Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կարողություններն ու գործնական հմտությունները՝ կապված Եվրոպական սոցիալական խարտիայի չափանիշների կիրառման, ինչպես նաև տեղահանված անձանց և փախստականների սոցիալական իրավունքների խախտումների և պաշտպանության վերաբերյալ տվյալների հավաքագրման, փաստաթղթավորման և մշակման գործընթացների հետ: Դասընթացը կազմակերպվել է ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի և Եվրոպայի խորհրդի համագործակցությամբ՝ Եվրոպայի խորհրդի «Մարդու սոցիալական իրավունքների ամրապնդումը Հայաստանում» ծրագրի շրջանակում[35]:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների համար սեպտեմբերի 24-25-ն անցկացվել է վերապատրաստման դասընթաց՝ «Հաղորդակցման հմտությունների զարգացում» թեմայով: Երկօրյա դասընթացի նպատակն էր զարգացնել և ամրապնդել աշխատակազմի մասնագիտական և հաղորդակցման հմտությունները տարբեր իրավիճակներում: Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կարողությունների զարգացմանն ուղղված վերապատրաստման դասընթացը կազմակերպվել է ԵՄ կողմից ֆինանսավորվող և ՄԱԶԾ-ի, ՅՈՒՆԻՍԵՖ-ի և ՄԱԲՀ-ի կողմից իրականացվող «Մարդու իրավունքների պաշտպանության խթանում և ազգային հաստատությունների հզորացում» ծրագրի շրջանակներում[36]:

Այլ վերապատրաստումների ու դասընթացների մասին մանրամասն տեղեկատվությունը հասանելի է Պաշտպանի պաշտոնական կայքէջում:

3. Համագործակցությունը միջազգային կառույցների հետ

Մարդու իրավունքների պաշտպանը (այսուհետ՝ Պաշտպան) 2025 թվականի ընթացքում ունեցել է ավելի քան 100 հանդիպում Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարների, մասնավորապես՝ ԱՄՆ-ի, Ֆրանսիայի Հանրապետության, Շվեյցարիայի Համադաշնության, Իրաքի Հանրապետության, Հունաստանի Հանրապետության, Գերմանիայի Դաշնային Հանրապետության, Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության, Սերբիայի Հանրապետության, Լատվիայի Հանրապետության դեսպանների և այլ պաշտոնատար անձանց հետ: Պաշտպանը նաև հյուրընկալել է Սլովակիայի Հանրապետության իրավունքների հանրային պաշտպանի գլխավորած պատվիրակությանը և հանդիպումներ է ունեցել Եվրոպայի խորհրդի տարբեր ստորաբաժանումների բարձրաստիճան ներկայացուցիչների, այդ թվում՝ Մարդու իրավունքների և իրավունքի գերակայության, ժողովրդավարության և մարդկային արժանապատվության, արդարադատության և մարդու իրավունքների ոլորտում

[34] Տեղեկատվությունը հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3419 հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

[35] Տեղեկատվությունը հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3569 հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

[36] Տեղեկատվությունը հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3528 հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

համագործակցության ծրագրերի ղեկավարների, ԵԽ Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի հարցերով փորձագետների խմբի (GRETA) անդամների հետ: Պաշտպանը հանդիպումներ է ունեցել նաև Կոնրադ Ադենաուեր հիմնադրամի տարածաշրջանային ծրագրերի ղեկավարների, Նիդերլանդների հելսինկյան կոմիտեի, Ռաուլ Վալլենբերգի անվան մարդու իրավունքների և մարդասիրական իրավունքի ինստիտուտի, Կարմիր խաչի միջազգային կոմիտեի, Բժիշկներ առանց սահմանների, Առողջապահության համաշխարհային կազմակերպության, ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեի, Մարդու իրավունքների դանիական հաստատության, Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամի, ինչպես նաև մի շարք այլ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:

Հանդիպումների ընթացքում մասնավորապես ներկայացվել են Պաշտպանի գործունեության ուղղությունները՝ ընդգծելով կանանց, երեխաների, ազգային փոքրամասնությունների, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության, զինված ուժերում, քրեական վարույթի շրջանակում անձանց իրավունքների պաշտպանության, քաղաքացիական և սոցիալ-տնտեսական իրավունքների պաշտպանության, ատելության խոսքի, անհանդուրժողականության մթնոլորտի, խտրականության դեմ պայքարի շրջանակներում և մի շարք այլ ոլորտներում իրականացվող աշխատանքները: Քննարկվել են նաև բռնի տեղահանված անձանց իրավունքների պաշտպանությանն առնչվող, ինչպես նաև գտնվելու վայրն անհայտ զինծառայողների և քաղաքացիական անձանց ու նրանց ընտանիքների իրավունքների ապահովման վիճակին առնչվող հարցեր և խնդիրներ:

Պաշտպանի հաստատությունը 2025 թվականին շարունակել է իր անդամակցությունը մի շարք միջազգային օմբուդսմանական կազմակերպություններին՝ մասնավորապես Օմբուդսմանի միջազգային ինստիտուտին (The International Ombudsman Institute, IOI), Եվրոպական օմբուդսմանի ինստիտուտին (The European Ombudsman Institute, EOI), Մարդու իրավունքների պաշտպանության և զարգացման ազգային ինստիտուտների միջազգային կոորդինացիոն կոմիտեին (The International Coordinating Committee for National Human Rights Institutions), Երեխաների հարցերով օմբուդսմանների եվրոպական ցանցին (The European Network of Ombudspersons for Children (ENOC)), Մարդու իրավունքների ազգային ինստիտուտների եվրոպական ցանցին (European Network of National Human Rights Institutions, (ENNHRI)), Ասիական Օմբուդսմանների Ասոցիացիային (Asian Ombudsman Association (AOA), Մարդու իրավունքների ազգային ինստիտուտների գլոբալ դաշինքին (Global Alliance of National Human Rights Institutions (GANHRI)), Ֆրանկոֆոն օմբուդսմանների և հաշտարարների ասոցիացիային (l'Association des Ombudsmans et Médiateurs de la Francophonie) և Միջերկրածովային օմբուդսմանների ասոցիացիային (The Association of Mediterranean Ombudsman, AOM): Վերջինիս ասոցացիայի ընդհանուր ժողովի կողմից Պաշտպանը 2025 թվականի հոկտեմբերի 16-ին ընտրվել է կառավարման խորհրդի անդամ: 2025 թվականին Պաշտպանի ներկայացուցիչները շարունակել են իրենց անդամակցությունը Եվրոպայի խորհրդի Ղեկավար կոմիտեներին՝ Երեխայի իրավունքների հարցերով ղեկավար կոմիտեում (CDENF) և Կանանց և տղամարդկանց իրավահավասարության հարցերով ղեկավար կոմիտեում (CDEG): Անդամակցությունը շարունակվել է նաև ԱՊՀ մարդու իրավունքների հանձնաժողովին և ԱՊՀ անդամ երկրների երեխաների իրավունքների հանձնակատարների հանձնաժողովին: Պաշտպանի հաստատությունը ներկայացված է նաև Մարդու իրավունքների ազգային ինստիտուտների եվրոպական ցանցի ապաստանի և միգրացիայի հարցերով, բիզնեսի և մարդու իրավունքների հարցերով,

համագործակցության հարցերով, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով, տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների և իրավական հարցերով աշխատանքային խմբերում: Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչը Երեխաների հարցերով օմբուդսմանների եվրոպական ցանցի գործունեության շրջանակներում հանդիսանում է Երիտասարդ խորհրդատուների եվրոպական ցանցի (ENYA) համակարգող:

2025 թվականի ընթացքում Պաշտպանը մի շարք աշխատանքային այցեր է իրականացրել Հայաստանից դուրս՝ մասնակցելով միջազգային տարբեր միջոցառումների, համաժողովների և հանդիպումների, որոնց շրջանակներում ներկայացրել է Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության հիմնական ուղղությունները և առաջնահերթությունները, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանության և խթանման համակարգերի զարգացմանն առնչվող իր մոտեցումները: Մասնավորապես՝

ա) Փետրվարի 17-18-ը Պաշտպանը Բրյուսելում մասնակցել է Մարդու իրավունքների ազգային հաստատությունների եվրոպական ցանցի (ENNHRI) Կառավարման խորհրդի գործող անդամների վերջին հանդիպմանը և Կառավարման խորհրդի նիստին: Հանդիպումների ընթացքում քննարկվել են ցանցի ընթացիկ և առաջիկա աշխատանքները, ձեռքբերումները, Կառավարման խորհրդի նոր ռազմավարական ծրագրի մշակմանն առնչվող հարցերը, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանության ոլորտին վերաբերելի մի շարք այլ հարցեր: Պաշտպանը վերահաստատել է իր հանձնառությունը Մարդու իրավունքների ազգային հաստատությունների եվրոպական ցանցի շրջանակներում շարունակելու իր ակտիվ ներգրավվածությունը՝ ուղղված մարդու իրավունքների պաշտպանությանը:

բ) Մարտի 10-14-ը Ստրասբուրգում Պաշտպանը, որպես Հայաստանը ներկայացնող անդամ, մասնակցել է Եվրոպայի խորհրդի Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման կոմիտեի (ԽԿԿ/CPT) 116-րդ լիագումար նիստին: Նիստի շրջանակում հաստատվել է 2026 թվականի պարբերական այցերի ծրագիրը, ինչպես նաև ընդունվել են 2024 և 2025 թվականներին մի շարք երկրներ կատարված այցերի վերաբերյալ զեկույցները: Աշխատանքային այցի շրջանակներում, մարտի 11-ին, Պաշտպանը հանդիպում է ունեցել Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատար Մայքլ Օ՛Ֆլահերթիի հետ: Քննարկվել են մարդու իրավունքների պաշտպանության ոլորտին առնչվող մի շարք հարցեր, այդ թվում՝ խտրականության, ատելության խոսքի, անհանդուրժողականության մթնոլորտի հաղթահարման, ինչպես նաև ազատությունից զրկման վայրերում իրավունքների պաշտպանության ուղղությամբ իրականացվող աշխատանքները: Պաշտպանը հատուկ անդրադարձ է կատարել Ադրբեջանում կամայականորեն պահվող էթնիկ հայերի նկատմամբ իրականացվող գործընթացների՝ մարդու իրավունքների տեսանկյունից խնդրահարույց լինելու հանգամանքին, ինչպես նաև ընդգծել է քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ ՄԻՊ հաստատության համագործակցության կարևորությունը:

գ) Մարտի 24-ին Ժնև կատարած աշխատանքային այցի շրջանակներում Պաշտպանն այցելել է Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակ, որտեղ հանդիպում է ունեցել ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակի Գլոբալ գործողությունների բաժանմունքի Ամերիկայի, Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի բաժնի ղեկավարի պաշտոնակատարի հետ: Քննարկվել են մարդու իրավունքների պաշտպանության ոլորտին առնչվող մի շարք հարցեր, որի արդյունքում կողմերը վերահաստատել են կայուն

համագործակցությունը շարունակելու պատրաստակամությունը: Այցի շրջանակներում մարտի 25-ին Պաշտպանը հանդիպում է ունեցել Human Rights Watch կազմակերպության ՄԱԿ-ի հարցերով փոխտնօրենի հետ: Քննարկվել են մարդու իրավունքների պաշտպանության ոլորտին առնչվող մի շարք հարցեր, այդ թվում՝ Ադրբեջանում

կամայականորեն պահվող էթնիկ հայերի նկատմամբ իրականացվող գործընթացների խնդրահարույց լինելը և նրանց անհապաղ ազատ արձակման կարևորությունը, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում համագործակցության ընդլայնման հնարավորությունները: Նույն օրը Պաշտպանը Ժնևում մասնակցել է Միավորված ազգերի կազմակերպության Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոմիտեի նախանիստին: Պաշտպանը ներկայացրել է Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներին վերաբերելի խնդիրներն ու դրանց լուծմանն ուղղված առաջարկությունները, որոնք ներառված են նաև «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների կիրառության վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանի այլընտրանքային զեկույցում[37]:

դ) Մարտի 27-28-ը Ստրասբուրգում Պաշտպանը մասնակցել է օմբուդսմանական հաստատությունների և մարդու իրավունքների ազգային հաստատությունների մասնակցությամբ կազմակերպված բարձր մակարդակի համաժողովին: Մարտի 27-ին Պաշտպանը հանդես է եկել որպես բանախոս՝ ներկայացնելով օմբուդսմանական հաստատությունների և մարդու իրավունքների ազգային հաստատությունների ներդրումը Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի դրույթների կատարման գործում և ՄԻԵԴ վճիռների կատարման հետ կապված փորձը: Այցի

շրջանակներում՝ Պաշտպանը հանդիպում է ունեցել Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղար Ալեն Բերսեի հետ: Զրուցակիցները քննարկել են մարդու իրավունքների պաշտպանության ոլորտին առնչվող մի շարք հարցեր: Անահիտ Մանասյանը խոսել է Հայաստանում մարդու իրավունքներին առնչվող խնդիրների, ինչպես նաև ՄԻՊ հաստատության մարտահրավերների մասին:

ե) Ապրիլի 14-ին Ժնևում Պաշտպանը մասնակցել է ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոմիտեի հետ հանդիպմանը: Պաշտպանը ներկայացրել է Հայաստանի Հանրապետության կողմից Խոշտանգումների դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի կատարման վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանի այլընտրանքային զեկույցը, անդրադարձել խոշտանգումների և վատ վերաբերմունքի կանխարգելման ուղղությամբ իրականացվող աշխատանքներին, ոլորտում առկա խնդիրներին և մարտահրավերներին:

զ) Մայիսի 22-ին Պաշտպանն առցանց ձևաչափով մասնակցել է «Հաշվետվողականությունը գործողության մեջ. հաստատությունների արձագանքները օմբուդսմանի և համընդհանուր պարբերական դիտարկման (UPR) առաջարկներին»

[37] Տեղեկատվությունը հասանելի է https://www.ombuds.am/am/site/ViewNews/3324 հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ դրությամբ:

խորագրով միջազգային համաժողովին՝ ընդգծելով ՄԻՊ հաստատության հանձնառությունը՝ մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում միջազգային համագործակցության ամրապնդմանը:

է) Հունիսի 4-13-ը Պաշտպանը, որպես ԽԿԿ/CPT պատվիրակության անդամ, աշխատանքային այց է իրականացրել Շոտլանդիա (Միացյալ Թագավորություն): Այցի ընթացքում ուսումնասիրվել են ազատությունից զրկված անձանց պահման պայմանները քրեակատարողական հիմնարկներում և անչափահասների խնամքը փակ հաստատություններում, ինչպես նաև իրականացվել են շրջայցեր մի շարք ոստիկանական բաժանմունքներում՝ ձերբակալված անձանց իրավունքների ապահովման գնահատման նպատակով:

ը) Սեպտեմբերի 24-26-ը Բրյուսելում Պաշտպանը մասնակցել է Մարդու իրավունքների ազգային հաստատությունների եվրոպական ցանցի (ENNHRI) 2025 թվականի Առաջնորդության ֆորումին, որի ընթացքում քննարկվել են մարդու իրավունքների ազգային հաստատությունների հավատարմագրման, իրավունքի գերակայության, ազգային հաստատությունների անվտանգ գործունեության ապահովման և այլ կարևոր հարցեր:

թ) Հոկտեմբերի 15-16-ը Մալթայի Հանրապետությունում Պաշտպանը մասնակցել է «Պաշտպանելով լավ կառավարումը դժվար ժամանակներում. Օմբուդսմանի դերը» թեմայով բարձր մակարդակի համաժողովին՝ հանդես գալով որպես բանախոս պանելային քննարկման շրջանակում, ինչպես նաև մասնակցել է Միջերկրածովյան օմբուդսմանների ասոցիացիայի ընդհանուր ժողովին, որի ընթացքում ընտրվել է Ասոցիացիայի կառավարման խորհրդի անդամ:

ժ) Նոյեմբերի 2-6-ը Ստրասբուրգում Պաշտպանը մասնակցել է Եվրոպայի խորհրդի ԽԿԿ/CPT 118-րդ լիագումար նիստին, որի ընթացքում հաստատվել է 2026 թվականի պարբերական այցերի ծրագիրը և ընդունվել են մի շարք երկրների վերաբերյալ զեկույցներ: Այցի շրջանակում Պաշտպանը հանդիպում է ունեցել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախագահ Մատիաս Գիյոմարի հետ՝ քննարկելով ՄԻԵԴ վճիռների կատարման և մարդու իրավունքների պաշտպանության արդյունավետության բարձրացման հարցերը: Հանդիպմանը ներկա են եղել նաև ՄԻԵԴ դատավոր Վահե Գրիգորյանը և Դատարանի քարտուղարի տեղակալ Աբել Կամպոսը:

ՄԻՊ աշխատակազմի ներկայացուցիչները նույնպես ակտիվորեն մասնակցել են միջազգային համաժողովներին և եվրոպական գործընկերների հետ փորձի փոխանակման ծրագրերին:

ա) Հունվարի 20-24-ը Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները փորձի փոխանակման այցով գտնվել են Հաագայում: Այցը կազմակերպվել է Եվրոպայի խորհրդի «Մարդու իրավունքների խթանումը Հայաստանի զինված ուժերում» ծրագրի շրջանակներում: Այցի նպատակն է եղել ապահովել զինված ուժերում մարդու իրավունքների խախտումների կանխարգելման, իրավախախտումների քննության, զինծառայողների իրավունքների պաշտպանության ներքին և արտաքին մեխանիզմների, զինված ուժերում կանանց իրավունքների պաշտպանության, նրանց նկատմամբ խտրականության և ոտնձգությունների դեմ պայքարի, ինչպես նաև

զինվորական ծառայության մեջ կանանց ներգրավվածության խթանման հարցերում միջազգային լավագույն փորձի փոխանակումը: Այցի ընթացքում պատվիրակության անդամները հանդիպումներ են ունեցել Նիդերլանդների պաշտպանության նախարարության, Ազգային օմբուդսմանի հաստատության, Կառավարության գործակալի գրասենյակի, Ռազմական դատարանի, Զինվորական դատախազության, Ռազմական ոստիկանության, Ռազմական օմբուդսմանի հաստատության և Միջազգային քրեական դատարանի ներկայացուցիչների հետ:

բ) Փետրվարի 22-ին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի գլխավոր քարտուղարը մասնակցել է ՀՀ–ԵՄ մարդու իրավունքների շուրջ երկխոսության հերթական՝ 14-րդ նիստին: Նիստի ընթացքում, ի թիվս մարդու իրավունքներին առնչվող մի շարք հարցերի, ԵՄ գործընկերների ուշադրությանն է հրավիրվել խտրականության դեմ պայքարի համապարփակ օրենսդրության ընդունման կարևորությունը, ինչպես նաև Մարդու իրավունքների պաշտպանի՝ իրավահավասարության մարմնի կարգավիճակում արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ մարդկային, ֆինանսական և տեխնիկական ռեսուրսների ապահովման անհրաժեշտությունը:

գ) Մարտի 11-12-ը Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի գլխավոր քարտուղարը մասնակցել է GANHRI-ի ամենամյա նիստի շրջանակներում կազմակերպված Գլխավոր վեհաժողովին, որի ընթացքում Պաշտպանի անունից ստացել է Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի հաստատությանը 2024 թվականին շնորհված վստահելիության և անկախության A դասի կարգավիճակը հավաստող վկայականը: Գլխավոր քարտուղարը մասնակցել է նաև կանանց և աղջիկների իրավունքներին ու գենդերային հավասարության խթանմանը նվիրված միջազգային համաժողովին: Քննարկումների ընթացքում մասնակիցները փորձի փոխանակում են իրականացրել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման ոլորտում առկա մարտահրավերների, հավատարմագրման գործընթացում մարդու իրավունքների ազգային հաստատությունների դերակատարության, ինչպես նաև գենդերազգայուն մոտեցումների ներդրման վերաբերյալ:

դ) Հունիսի 9-13-ը Մարդու իրավունքների պաշտպանի խորհրդականը Վարշավայում մասնակցել է «Մարդու իրավունքների պաշտպանների պաշտպանություն. Մարդու իրավունքների ազգային հաստատությունների դերը» խորագրով դասընթացին: Դասընթացի նպատակն էր խորացնել մասնակիցների գիտելիքներն ու կարողությունները մարդու իրավունքների պաշտպանների անվտանգության, պաշտպանության միջազգային չափանիշների և այդ ոլորտում ազգային հաստատությունների դերակատարության վերաբերյալ:

ե) Հուլիսի 8-10-ը ՄԻՊ ներկայացուցիչը Քիշնևում մասնակցել է «Զինված ուժերում մարդու իրավունքները. մարտահրավերներ և հնարավորություններ» խորագրով տարածաշրջանային համաժողովին: Համաժողովի ընթացքում քննարկվել են զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում առկա խնդիրները, անվտանգության և հաշվետվողականության բարձրացման մեխանիզմները, ինչպես նաև քաղաքացիական վերահսկողության ամրապնդման հնարավորությունները:

զ) Դեկտեմբերի 8-12-ը Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի քրեական արդարադատության ոլորտում և զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության դեպարտամենտի ղեկավարը Ժնևում մասնակցել է «Անվտանգության ոլորտի կառավարման և վերահսկողության խթանումը Հայաստանում» թեմայով ճանաչողական այցին: Այցի ընթացքում քննարկվել են անվտանգության ոլորտում մարդու իրավունքների պաշտպանության միջազգային չափանիշները, կառավարման և

վերահսկողության արդյունավետ մեխանիզմները, ինչպես նաև ոլորտային բարեփոխումների իրականացման փորձը:

է) Հոկտեմբերի 22-ին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի քաղաքացիական, սոցիալ-տնտեսական և մշակութային իրավունքների պաշտպանության, ինչպես նաև քրեական արդարադատության ոլորտում և զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության դեպարտամենտների ղեկավարները Մոսկվայում մասնակցել են Օմբուդսմանների եվրասիական դաշինքի տասներորդ համաժողովին: Քննարկումների ընթացքում անդրադարձ է կատարվել դաշինքի անդամ երկրներում դժվարամատչելի, հեռավոր և գյուղական բնակավայրերում բնակվող անձանց իրավունքների պաշտպանության հարցերին, ներկայացվել է նաև Հայաստանի սահմանամերձ բնակավայրերում ապրող անձանց իրավունքների պաշտպանության վիճակը:

2025 թվականին աշխատանքային այցերի հետ մեկտեղ Մարդու իրավունքների պաշտպանն ընդունել է նաև մի շարք բարձրաստիճան միջազգային դերակատարների և օտարերկրյա պատվիրակությունների ներկայացուցիչների, մասնավորապես՝ Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների և իրավունքի գերակայության գլխավոր տնօրինության Թրանսվերսալ մարտահրավերների և բազմակողմ ծրագրերի իրականացման վարչության ղեկավար Տիգրան Կարապետյանին, «Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամի «Քաղաքական երկխոսություն Հարավային Կովկաս» տարածաշրջանային ծրագրի ղեկավարներ Շտեֆան Մալերիուսին և Յակոբ Վյոլենշտայնին, Եվրոպայի խորհրդի Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի հարցերով փորձագետների խմբի (GRETA) անդամներին, Եվրոպայի խորհրդի Արդարադատության և մարդու իրավունքների ոլորտում համագործակցության ծրագրերի բաժնի պետի տեղակալ Լիլիթ Դանեղյան-Բոսլերին, Նիդերլանդների հելսինկյան կոմիտեի գործադիր տնօրեն Յուրի Բուհրեր Թավանիերի գլխավորած պատվիրակությանը, Ռաուլ Վալլենբերգի անվան մարդու իրավունքների և մարդասիրական իրավունքի ինստիտուտի հայաստանյան գրասենյակի տնօրեն Լաուրա Միլնին, Բժիշկներ առանց սահմանների միջազգային մարդասիրական կազմակերպության ներկայացուցիչներին, Սերբիայի Հանրապետության գենդերային հավասարության, կանանց նկատմամբ բռնության կանխարգելման, կանանց տնտեսական և քաղաքական հզորացման հարցերով պետնախարար Տատյանա Մացուրային, Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների և իրավունքի գերակայության հարցերով գլխավոր տնօրինության գլխավոր տնօրեն Քլեր Օվեյին, ԱՄՆ պետքարտուղարության Ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի հարցերով փոխպետքարտուղարի տեղակալ Ջեյքոբ ՄաքԳիին, Եվրոպայի խորհրդի ժողովրդավարության և մարդկային արժանապատվության գլխավոր տնօրինության խտրականության դեմ պայքարի վարչության խտրականության դեմ համագործակցության բաժնի ղեկավար Անգելա Լոնգոյին, ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեի փոխնախագահ Ֆիլիպ Ջաֆֆեին, Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամի (IRZ) Հայաստանի և Ղազախստանի հետ ծրագրերի բաժնի ղեկավար Տատյանա Բովկունին, ԵԱՀԿ ԽՎ փոխնախագահ, ԵԱՀԿ ԽՎ Հարավային Կովկասի հարցերով հատուկ ներկայացուցիչ Լուիս Գրասայի գլխավորած պատվիրակությանը, Սլովակիայի Հանրապետության իրավունքների հանրային պաշտպան Ռոբերտ Դոբրովոդսկու գլխավորած պատվիրակությանը, Մարդու

իրավունքների դանիական հաստատության ներկայացուցիչներին, ինչպես նաև միջազգային հեղինակավոր լրատվամիջոցների ներկայացուցիչներին:

Օտարերկրյա գործընկերների հետ համագործակցության շրջանակներում իրականացվել են համատեղ այցելություններ Հայաստանի Հանրապետության մարզեր՝ մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում առկա խնդիրների ուսումնասիրման և համագործակցության ամրապնդման նպատակով:

ա) Մայիսի 19-ին Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանն ու Հայաստանում ՄԱԿ-ի մշտական համակարգող Ֆրանսուազ Ժակոբը համատեղ այց են իրականացրել Սյունիքի մարզ: Այցի շրջանակներում նրանք այցելել են ՄԻՊ աշխատակազմի Սյունիքի մարզային ստորաբաժանում, որտեղ քննարկման արդյունքում ներկայացվել է քաղաքացիների առավել հաճախ բարձրացվող խնդիրների շրջանակը:

Այնուհետև Կապանում տեղի է ունեցել հանդիպում Սյունիքի մարզպետի հետ, որի ընթացքում քննարկվել են մարզում մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում առկա խնդիրները, սոցիալ-տնտեսական հիմնահարցերը, սահմանամերձ բնակավայրերի բնակիչների, բռնի տեղահանված, հաշմանդամություն ունեցող անձանց և կանանց իրավունքներին վերաբերելի հարցերը:

Այցի ընթացքում իրականացվել է նաև այց ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի Կապանի գրասենյակ և ներկայացվել են կառույցի գործունեության հիմնական ուղղությունները:

բ) Մայիսի 20-ին շարունակվել է Մարդու իրավունքների պաշտպանի և Հայաստանում ՄԱԿ-ի մշտական համակարգողի համատեղ այցը Սյունիքի մարզ:

Այցի շրջանակներում նրանք այցելել են Մեղրի համայնք, որտեղ համայնքի ղեկավարի հետ հանդիպման ընթացքում քննարկվել են մարդու իրավունքների պաշտպանությանն առնչվող խնդիրները, սոցիալ-տնտեսական հիմնահարցերը, մասնավորապես՝ խմելու և ոռոգման ջրի հասանելիության, բժշկական օգնության և սպասարկման ապահովման հետ կապված հարցերը, ինչպես նաև սահմանամերձ բնակավայրերի բնակիչների իրավունքներին վերաբերելի խնդիրները:

2025 թվականին Պաշտպանը շարունակել է իր ակտիվ համագործակցությունը միջազգային և տարածաշրջանային կառույցների հետ՝ նպաստելով մարդու իրավունքների պաշտպանության և խթանման գործընթացներին: Համագործակցության շրջանակում Պաշտպանի աշխատակազմը գրավոր տեղեկատվություններ (inputs) է տրամադրել ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակին (OHCHR), Մարդու իրավունքների ազգային ինստիտուտների եվրոպական ցանցին (ENNHRI) և այլ միջազգային կառույցներին մի շարք թեմատիկ զեկույցների և գործընթացների վերաբերյալ, այդ թվում՝

- ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի 56/20 բանաձևի շրջանակում՝ կայուն ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի արձագանքի վերաբերյալ զեկույցի պատրաստման նպատակով,
- Կրոնի կամ համոզմունքի հիմքով անձանց նկատմամբ անհանդուրժողականության դեմ պայքարի վերաբերյալ կոչի շրջանակում,
- Կրթության իրավունքի և սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության (SOGI) հիմքով բռնության և խտրականության կանխարգելման վերաբերյալ զեկույցի պատրաստման նպատակով,

- ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 80-րդ նստաշրջանի համար նախատեսված՝ ազգային մարդու իրավունքների հաստատությունների վերաբերյալ Գլխավոր քարտուղարի զեկույցի պատրաստման շրջանակում,
- Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի կամընտրական արձանագրության վերաբերյալ բաց միջկառավարական աշխատանքային խմբի գործունեության շրջանակում՝ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի 56/5 բանաձևի հիման վրա,
- Մարդու իրավունքների խթանման և պաշտպանության ինտեգրված մոտեցումների, ինչպես նաև Կայուն զարգացման օրակարգ 2030-ի գլոբալ մակարդակում իրագործման լավագույն փորձի, մարտահրավերների և արդյունքների վերաբերյալ զեկույցի պատրաստման նպատակով:

Միաժամանակ, կարևոր է նշել, որ **2025 թվականին հրապարակվել է Մարդու իրավունքների ազգային հաստատությունների եվրոպական ցանցի (ENNHRI)՝ Եվրոպայում իրավունքի գերակայության վիճակի վերաբերյալ զեկույցը**[38], որն ուրվագծում է իրավունքի գերակայության ներկայիս միտումներն ու առկա մարտահրավերները՝ ինչպես եվրոպական, այնպես էլ ազգային մակարդակներում: Զեկույցում ներկայացվում են նաև իրավունքի գերակայության երաշխավորմանն ուղղված գործնական առաջարկություններ՝ անդամ պետություններում առկա խնդիրների համատեքստում:

Զեկույցը հատուկ անդրադարձ է կատարում իրավունքի գերակայության և մարդու իրավունքների ընդհանուր միջավայրի վրա ազդող շարունակական մարտահրավերներին, որոնց բախվում են եվրոպական ցանցի անդամ ազգային հաստատությունները: Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության վերաբերյալ զեկույցը շեշտադրում է Պաշտպանի և աշխատակազմի իրականացրած աշխատանքները կանանց, մարդու իրավունքների պաշտպանների պաշտպանության, մեդիայի ազատության և բազմակարծության ապահովման, լրագրողների անվտանգության, հավաքների ազատության, անհամաչափ ուժի կիրառման կանխարգելման, ատելության խոսքի բացառման և մի շարք այլ ոլորտներում: Բացի վերոնշյալից արձանագրվում են նաև այն մարտահրավերները, որոնց բախվել են Պաշտպանն ու աշխատակազմը՝ նշված ուղղություններում իրականացված գործունեության ընթացքում:

2025 թվականին Պաշտպանը շարունակել է համագործակցությունը միջազգային կազմակերպությունների հետ տարբեր ծրագրերի շրջանակներում, այդ թվում՝ Եվրոպայի խորհրդի (ԵԽ), Եվրոպական միության (ԵՄ), Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի (ՄԱԶԾ), Միավորված ազգերի միջազգային մանկական ճգնաժամային հիմնադրամի (ՅՈՒՆԻՍԵՖ), Միավորված ազգերի կազմակերպության Բնակչության հիմնադրամի (ՄԱԿԲՀ), Եվրոպայում Անվտանգության և Համագործակցության Կազմակերպության (ԵԱՀԿ), ինչպես նաև մի շարք այլ միջազգային գործընկերների հետ:

Եվրոպայի խորհրդի հետ համագործակցության շրջանակներում ծրագրեր: Օրինակ՝

[38] Տե՛ս «Մարդու իրավունքների ազգային հաստատությունների եվրոպական ցանցի (ENNHRI)՝ Եվրոպայում իրավունքի գերակայության վիճակի վերաբերյալ զեկույցը», հասանելի է https://rule-of-law.ennhri.org/export?country%5B0%5D=5&year%5B0%5D=2025 հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

ա) **«Հայաստանում տեղահանված բնակչության համար մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքների ամրապնդում»[39] ծրագրի** շրջանակներում հունվարի 22-ին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի համար կազմակերպվել է վերապատրաստման դասընթաց, որի նպատակն էր զարգացնել աշխատակազմի կարողությունները Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարման գործընթացում հատուկ դիրքորոշումների (Rule 9 submissions) ներկայացման շրջանակներում: Դասընթացի ընթացքում անդրադարձ է կատարվել միջազգային չափանիշներին, կիրառվող գործիքակազմին և արդյունավետ փաստարկման մեթոդաբանությանը:

Ծրագրի շրջանակներում մայիսի 12-ին կազմակերպվել է «Դաշտային առաքելություն ճգնաժամային իրավիճակներում» գործառնական ուղեցույցի վերաբերյալ աշխատաժողով: Աշխատաժողովի նպատակն էր ամրապնդել Պաշտպանի աշխատակազմի արձագանքման մեխանիզմները ճգնաժամային իրավիճակներում մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից, ինչպես նաև սահմանել գործողությունների տիպական ընթացակարգեր:

Ծրագրի շրջանակներում հոկտեմբերի 6-ին կազմակերպվել է քննարկում՝ «Քրեակատարողական առողջապահության բարելավում՝ տեղեկատվության արդյունավետ փոխանակման և համակարգման միջոցով» խորագրով: Քննարկման ընթացքում շեշտադրվել է միջգերատեսչական համագործակցության կարևորությունը, ինչպես նաև ոլորտում առկա համակարգային խնդիրների հաղթահարման հնարավոր ուղիները:

«Հայաստանում տեղահանված բնակչության համար մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքների ամրապնդում» ծրագրի շրջանակներում:

բ) Եվրոպայի խորհրդի հետ համագործակցության շրջանակներում իրականացվող **«Մարդու իրավունքների պաշտպանությունը կենսաբժշկության մեջ III»[40] ծ**րագրի շրջանակներում մարտի 20-ին Պաշտպանը բացման խոսքով հանդես է եկել ծրագրի Համակարգային խորհրդի առաջին նիստում, որի ընթացքում ներկայացվել է ՀԵԼՓ ծրագրի «Հոգեկան առողջություն և մարդու իրավունքներ» դասընթացի հայերեն տարբերակը: Պաշտպանը կարևորել է կենսաբժշկության ոլորտում մարդու իրավունքների հարցերի պատշաճ ընկալման և հանրային իրազեկվածության բարձրացման անհրաժեշտությունը:

գ) Պաշտպանի աշխատակազմը հանդիսանում է գործընկեր Եվրոպայի խորհրդի՝ Հայաստանի համար իրականացվող գործողությունների 2023-2026թթ. ծրագրի շրջանակներում իրականացվող **«Մարդու իրավունքների խթանումը Հայաստանի զինված ուժերում»[41]** ծրագրի շահառու, որի շրջանակներում ապրիլի 10–11-ը Ծաղկաձորում անցկացվել է երկօրյա քննարկում՝ նվիրված զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության հարցերին: Պաշտպանը հանդես է եկել բացման խոսքով՝ ընդգծելով զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության կարևորությունը և ոլորտում միջազգային չափանիշների կիրառման անհրաժեշտությունը:

---

[39] Տե՛ս «Ընթացիկ ծրագրեր», https://www.coe.int/hy/web/yerevan/strengthening-human-right-safeguards-for-the-displaced-population-in-armenia հասանելի է հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

[40] Տե՛ս «**Մարդու իրավունքների պաշտպանությունը կենսաբժշկության մեջ III»,** հասանելի է https://www.coe.int/hy/web/yerevan/protection-of-human-rights-in-biomedicine-iii հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

[41] Տե՛ս «Մարդու իրավունքների խթանումը Հայաստանի զինված ուժերում», հասանելի է https://www.coe.int/hy/web/yerevan/fostering-human-rights-in-the-armed-forces-in-armenia հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

դ) ԵՄ կողմից ֆինանսավորվող և ՄԱԶԾ-ի, ՅՈՒՆԻՍԵՖ-ի և ՄԱԲՀ-ի կողմից իրականացվող **«Մարդու իրավունքների պաշտպանության խթանում և ազգային հաստատությունների հզորացում»** ծրագրի շրջանակներում փետրվարի 19-ին մեկնարկել է Մարդու իրավունքների Ձմեռային դպրոցը, որի նպատակն էր բարձրացնել իրավագիտության ֆակուլտետներում սովորող ուսանողների իրազեկվածությունը մարդու իրավունքների պաշտպանության ազգային համակարգի, Պաշտպանի լիազորությունների

և գործունեության վերաբերյալ[42]: Մարդու իրավունքների ձմեռային դպրոցի շրջանակներում մրցութային կարգով ընտրված ՀՀ տարբեր բուհերի իրավագիտության ֆակուլտետների ուսանողների համար կազմակերպվել են կրթական և ճանաչողական այցեր ու հանդիպումներ պետական մարմիններում: Մասնակիցները այցելել են ՀՀ Սահմանադրական դատարան, Ազգային ժողով և Գլխավոր դատախազություն, հանդիպել համապատասխան մարմինների ղեկավարների հետ, ծանոթացել դրանց գործունեությանը և մասնակցել մասնագիտական հարցուպատասխան քննարկումների: Ծրագրի ավարտական միջոցառման ընթացքում ներկայացվել են մարդու իրավունքների ազգային և միջազգային պաշտպանության մեխանիզմներին վերաբերող թեմաներ, ամփոփվել են արդյունքները և ուսանողներին հանձնվել հավաստագրեր: Ծրագիրն իրականացվել է ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի նախաձեռնությամբ՝ ՄԱԿ-ի զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակի հետ համագործակցությամբ և ԵՄ ֆինանսավորմամբ:

«Մարդու իրավունքների պաշտպանության խթանում և ազգային հաստատությունների հզորացում» ծրագրի շրջանակներում ապրիլի 29-ին կազմակերպվել է սեռական բռնության վաղ կանխարգելմանն ու արդյունավետ արձագանքմանը նվիրված միջոցառում, որի ընթացքում քննարկվել են կանխարգելման մեխանիզմները և խոցելի խմբերի պաշտպանության հարցերը: Միջոցառումը նախաձեռնել են ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի հայաստանյան գրասենյակը և «Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն» հասարակական կազմակերպությունը՝ «Մարդու իրավունքների պաշտպանության խթանում և ազգային հաստատությունների հզորացում» ծրագրի շրջանակներում: Ծրագիրը համաֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից և իրականացվում է ՄԱԶԾ-ի, ՅՈՒՆԻՍԵՖ-ի և ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի կողմից:

Ծրագրի շրջանակներում հուլիսի 25–26-ին Ծաղկաձորում անցկացվել է վերապատրաստման դասընթաց քրեակատարողական հիմնարկների և «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի ղեկավար կազմերի համար՝ ուղղված խոշտանգումների և վատ վերաբերմունքի կանխարգելման մեխանիզմների ամրապնդմանը: Դասընթացի նպատակն էր նպաստել ոլորտային աշխատողների մասնագիտական կարողությունների ամրապնդմանը և փոխգործակցության խթանմանը՝ ի նպաստ խոշտանգումների և վատ վերաբերմունքի կանխարգելման գործընթացների արդյունավետ համակարգի ձևավորման:

Ծրագրի շրջանակներում սեպտեմբերի 24-25-ը կազմակերպվել է վերապատրաստման դասընթաց՝ «Հաղորդակցման հմտությունների զարգացում» թեմայով՝ նպատակ ունենալով բարձրացնել Պաշտպանի աշխատակազմի արդյունավետ

[42] Տեղեկատվությունը հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3279 հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

հաղորդակցման կարողությունները, զարգացնել և ամրապնդել նրանց մասնագիտական և հաղորդակցման հմտությունները տարբեր իրավիճակներում:

Նոյեմբերի 25-ին Պաշտպանը մասնակցել է «Ընդդեմ գենդերային բռնության ակտիվության 16-օրյակի» մեկնարկին նվիրված միջոցառմանը, որի ընթացքում քննարկվել են գենդերային բռնության կանխարգելմանն ուղղված պետական քաղաքականությունները, իրավական մեխանիզմների արդյունավետությունը, ինչպես նաև հասարակության իրազեկվածության բարձրացման կարևորությունը: Միջոցառման նպատակն էր ընդգծել գենդերային բռնության դեմ պայքարի առաջնահերթությունը, խթանել միջգերատեսչական համագործակցությունը և ամրապնդել մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում համատեղ աշխատանքները:

Ծրագրի շրջանակներում դեկտեմբերի 10-ին մեկնարկել է մարդու իրավունքների պաշտպանության միջազգային օրվան նվիրված բարձր մակարդակի միջազգային համաժողովը, որի ընթացքում անդրադարձ է կատարվել մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում առկա մարտահրավերներին, միջազգային լավագույն փորձին, ինչպես նաև ազգային և միջազգային կառույցների համագործակցության հնարավորություններին: Համաժողովի նպատակն էր նպաստել փորձի փոխանակմանը, քննարկել մարդու իրավունքների պաշտպանության արդյունավետ գործիքները և ձևավորել նոր համագործակցային հարթակներ:

Մարդու իրավունքների միջազգային օրվան նվիրված բարձր մակարդակի միջազգային համաժողովին մասնակցելու նպատակով Հայաստան ժամանած մարդու իրավունքների ոլորտի փորձագետներ՝ Մոլդովայի օմբուդսմանի տեղակալ Վալենտին Ռոսկան, Սերբիայի Հանրապետության նախկին Ազգային օմբուդսման, մարդու իրավունքների փորձագետ Սաշա Յանկովիչը, ինչպես նաև Մալթայի համալսարանի պրոֆեսոր Էն Մարի Թեյքը, Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանի և ՀՀ-ում ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի մշտական ներկայացուցիչ Նաթիա Նացվլիշվիլի ուղեկցությամբ դեկտեմբերի 11-ին այցելել են Երևանի պետական համալսարան և հանդիպել ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի հետ: Այցի նպատակն էր խթանել գիտակրթական միջավայրում մարդու իրավունքների վերաբերյալ քննարկումները և բարձրացնել ուսանողների իրազեկվածությունը:

Այցը կազմակերպվել է ՄԻՊ նախաձեռնությամբ՝ Եվրոպական Միության կողմից ֆինանսավորվող «Մարդու իրավունքների պաշտպանության խթանում և ազգային հաստատությունների հզորացում» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի և Միավորված ազգերի կազմակերպության բնակչության հիմնադրամի հետ համատեղ:

Ծրագրի շրջանակներում դեկտեմբերի 19–20-ին Ծաղկաձորում անցկացվել է «Խոշտանգումների և անմարդկային վերաբերմունքի կանխարգելումը» խորագրով երկօրյա վերապատրաստման դասընթաց, որի ընթացքում քննարկվել են խոշտանգումների կանխարգելման միջազգային չափանիշները, մոնիթորինգի մեխանիզմները, ինչպես նաև նման դեպքերի բացահայտման և կանխարգելման ուղղությամբ գործնական մոտեցումները: Դասընթացի նպատակն էր զարգացնել մասնակիցների մասնագիտական կարողությունները, խորացնել գիտելիքները և նպաստել

խոշտանգումների և անմարդկային վերաբերմունքի կանխարգելման արդյունավետ համակարգի ձևավորմանը:

Մարդու իրավունքների պաշտպանի նախաձեռնությամբ և ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ հունիսի 1-2-ը անցկացվել է Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր երեխաների իրավունքների պաշտպանության հարցերով հասարակական խորհրդի հերթական նիստը: Միջոցառումը բացառիկ հնարավորություն էր երեխաների համար՝ ուղղելու իրենց հարցերը տարբեր ոլորտների պատասխանատուներին և որոշում կայացնողներին:

ե) **Հ**ունիսի 26-ին Պաշտպանը՝ որպես Կանխարգելման ազգային մեխանիզմ, կազմակերպել է Խոշտանգումների զոհերի աջակցության օրվան նվիրված քննարկում՝ պետական մարմինների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների մասնակցությամբ: Աշխատաժողովի ընթացքում ներկայացվել են Կանխարգելման ազգային մեխանիզմի մանդատը և գործառույթները, Խոշտանգման հասկացությունը ներպետական իրավական համակարգում և միջազգային փաստաթղթերում, Խոշտանգումների կանխարգելման ոլորտի միջազգային փաստաթղթերը, ԽԿԿ (Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտե) չափանիշները, ոլորտի ՄԻԵԴ վճիռները, ոչ հոժարակամ բուժումը, հատուկ միջոցների և ֆիզիկական ուժի, զսպման և հարկադրանքի այլ միջոցների կիրառումը, ազատությունից զրկման վայրեր ընդունվելիս անձանց առաջնային բժշկական զննությունը՝ որպես վատ վերաբերմունքի կանխարգելման կարևոր բաղադրիչ և այլն: Վերապատրաստման դասընթացը կազմակերպվել է **ՄԱԶԾ աջակցությամբ՝ Նորվեգիայի արտաքին գործերի նախարարության կողմից ֆինանսավորվող «Դիմակայնություն բոլորի համար»** ծրագրի շրջանակում[43]:

զ) **«Կանայք քաղաքականության, հանրային կառավարման և քաղաքացիական հասարակության մեջ»** ծրագրի շրջանակներում, որն իրականացում է ՄԱԶԾ Հայաստանի կողմից՝ ՕքսԵՋԵն հիմնադրամի և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հետ համատեղ, մարտի 19-ին կազմակերպվել է աշխատանքային հանդիպում՝ «Գենդերային հավասարության պարգևադրոշմը հանրային ինստիտուտների համատեքստում» թեմայով, որի ընթացքում ամփոփվել են գենդերային հավասարության պարգևադրոշմի ներդրման գործընթացի շրջանակներում համատեղ իրականացված աշխատանքները, ռազմավարական ուղղությունները, ինչպես նաև նախանշվել է առաջիկայում իրականացվելիք գործողությունների պլանը:

Ապրիլի 16-ին Մարդու իրավունքների պաշտպանը ողջույնի խոսքով հանդես է եկել ծրագրի փակման արարողությանը:

է) 2025 թվականին Ռաուլ Վալլենբերգի մարդու իրավունքների և մարդասիրական իրավունքի ինստիտուտի հետ համագործակցությունը կրել է շարունակակն բնույթ:

Նոյեմբերի 21-ին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կոնվենցիոն մանդատների ապահովման վարչության ներկայացուցիչները Ծաղկաձորում մասնակցել են Մարդու իրավունքների պաշտպանի կողմից և Ռաուլ Վալենբերգի մարդու իրավունքների եվ մարդասիրական իրավունքի ինստիտուտի աջակցությամբ կազմակերպված «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի ներպետական կիրարկումը և վերահսկումը» խորագրով աշխատաժողովին: Աշխատաժողովի նպատակն էր քարտեզագրել Մարդու իրավունքների պաշտպանի

[43] Տեղեկատվությունը հասանելի է https://www.ombuds.am/am/site/ViewNews/3037 հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

գործառույթները՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի շրջանակում (CRPD մանդատ), և ամրապնդել Պաշտպանի դերը հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մշտադիտարկման, պաշտպանության և խթանման գործընթացում:

Մարդու իրավունքների պաշտպանի նախաձեռնությամբ և Ռաուլ Վալենբերգի մարդու իրավունքների և մարդասիրական իրավունքի ինստիտուտի աջակցությամբ դեկտեմբերի 1-ին տեղի է ունեցել «Մատչելիություն. Ոչինչ մեր մասին՝ առանց մեզ» թեմայով համաժողովը, որը նվիրված էր Հաշմանդամություն ունեցող անձանց միջազգային օրվան: Միջոցառման շրջանակում ներկայացվել է Մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույցը «Նոր կառուցվող, վերակառուցվող, հիմնանորոգվող շենքերի և շինությունների շենքային պայմանների՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության ապահովման հետ կապված խնդիրները» վերտառությամբ: Համաժողովի շրջանակում անցկացվել են նաև պանելային քննարկումներ:

Դեկտեմբերի 23-ին Պաշտպանի նախաձեռնությամբ կազմակերպվել է վերապատրաստման դասընթաց՝ նվիրված մարդկանց թրաֆիքինգի և աշխատանքային շահագործման՝ ներառյալ երեխաների թրաֆիքինգի հիմնախնդիրներին:

Դասընթացի ընթացքում մասնակիցները հնարավորություն են ունեցել դասընթացավարներին ուղղել իրենց հետաքրքրող հարցերը, ներկայացնել դիտարկումներ և մասնակցել ակտիվ ու բովանդակային քննարկումներին:

ԲԱԺԻՆ 2. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 14-րդ հոդվածը հռչակում է. «Հայաստանի Հանրապետության զինված ուժերն ապահովում են Հայաստանի Հանրապետության պաշտպանությունը, անվտանգությունը, տարածքային ամբողջականությունը և սահմանների անձեռնմխելիությունը»:

Սահմանադրական այս դրույթը փոխլրացվում է նաև մեկ այլ պահանջով՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերը (…) քաղաքացիական վերահսկողության ներքո են:

Իրավունքի գերակայության և ժողովրդավարական վերահսկման մեխանիզմների անհրաժեշտությունն ըստ էության ընդգծված է ոչ միայն սահմանադրական, այլ նաև օրենսդրական մակարդակում: Պատահական չէ, որ Հայաստանի Հանրապետության պաշտպանությունը ենթակա է կազմակերպման և իրականացման, ի թիվս այլնի, օրինականության, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հարգման, զինված ուժերի գործունեության նկատմամբ ժողովրդավարական և քաղաքացիական վերահսկողության սկզբունքների հիման վրա[44]:

Զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների իրավունքների պաշտպանության ոլորտում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմն իրականացրել է արդյունավետ համագործակցություն ինչպես ՀՀ պաշտպանության նախարարության և Ազգային անվտանգության ծառայության, այնպես էլ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ: Պարբերաբար կազմակերպվել են նաև համատեղ քննարկումներ, այդ թվում՝ Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր Զինծառայողների իրավունքների պաշտպանության հարցերով փորձագիտական խորհրդի նիստի շրջանակում: Այս առումով, կարևոր նշանակություն ունի Պաշտպանության նախարարության հանձնառությունն առավել ուժեղացնելու ուշադրությունը ՀՀ զինված ուժերում մարդու իրավունքների վիճակի նկատմամբ, ինչպես նաև համագործակցությունը Պաշտպանի աշխատակազմի հետ: Այս սկզբունքներն են, որ կնպաստեն ընդհանուր նպատակի, այն է՝ զինծառայողների իրավունքների պաշտպանության մեխանիզմների առավել ամրապնդմանը:

Կարևոր է ևս մեկ անգամ վերահաստատել, որ ժողովրդավարական ցանկացած երկիր իր անվտանգությունն ապահովելու հիմնարար գործոններից պետք է համարի մարդու իրավունքների և ազատությունների հուսալի պաշտպանությունը՝ մշտապես կատարելագործելով պաշտպանական ներպետական մեխանիզմները:

Զինված ուժերում մարդու իրավունքների ապահովման համատեքստում Պաշտպանը մշտապես կարևորել է այն սկզբունքը, որ անվտանգությունը չի կարող հակադրվել մարդու իրավունքներին: Ընդհակառակը՝ դրանք համարժեք երևույթներ և միմյանց փոխլրացնող արժեքներ են, որոնք կարող են և պետք է զարգանան զուգահեռ՝ մշտապես գտնվելով պետության պատշաճ հոգածության ներքո: Նման փոխկապվածությունը նպաստում է ինչպես անվտանգության, այնպես էլ մարդու իրավունքների առավել արդյունավետ պաշտպանությանը, ինչը հաստատվում է նաև Սահմանադրության, ներպետական օրենսդրության և միջազգային իրավական չափանիշների պահանջներով:

Տարեկան հաղորդման սույն բաժնում ներկայացված են զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանությանն առնչվող հարցերը և ոլորտում առկա խնդիրները,

---

[44] Տե՛ս «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածը (ՀՀՊՏ 2017.12.06/73(1348), ՀՕ-196-Ն):

ներառյալ՝ գործնական և օրենսդրական բնույթի, ինչպես նաև զինապարտության տարբեր փուլերում մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության հետ կապված տարաբնույթ հարցեր: Վեր հանված խնդիրները ներկայացվել են երեք հիմնական հարթություններում՝ նախքան զինվորական ծառայությունը, զինվորական ծառայության ընթացքում և ծառայությունից հետո: Միաժամանակ, իրականացված վերլուծությունները չեն սահմանափակվել միայն զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության հարցերով, այլ ընդգրկել են ավելի լայն շրջանակ՝ անդրադառնալով նաև ոլորտում առկա համակարգային խնդիրներին:

Սույն բաժնում հիմնական խնդիրների ներկայացումն իրականացվել է բացառապես մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից՝ միաժամանակ նկատի ունենալով պետական գաղտնիքին առնչվող իրավակարգավորումները և հաշվի առնելով սույն հաղորդման հրապարակային բնույթը: Նախորդ տարիներին ձևավորված սկզբունքներին համահունչ՝ հաշվետու տարում ևս իրականացվել են ուսումնասիրություններ, որոնց արդյունքում խնդիրները վեր են հանվել Պաշտպանին հասցեագրված գրավոր և բանավոր բողոքների ու ահազանգերի, զինվորական հաստատություններ կատարված մշտադիտարկման այցերի, ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցներում և հասարակական կազմակերպությունների կողմից զինված ուժերում իրավունքների պաշտպանությանն առնչվող հրապարակումների հիման վրա:

2025 թվականի ընթացքում Պաշտպանը բազմաթիվ այցեր է իրականացրել զինվորական հաստատություններ, որոնք ընդգրկել են ինչպես Երևանում, այնպես էլ մարզերում տեղակայված համապատասխան հաստատությունները:

Նկատի ունենալով անվտանգության ոլորտի կարևորությունը և դրանում առկա խնդիրներին պատշաճ ու հրատապ արձագանքելու անհրաժեշտությունը՝ Պաշտպանը չի սահմանափակվել հիմնական խնդիրների մատնանշմամբ, այլ ներկայացրել է նաև լուծմանն ուղղված կոնկրետ առաջարկներ:

ԳԼՈՒԽ 1. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

1. Մարդու իրավունքների պաշտպանը՝ որպես զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության անկախ մեխանիզմ

Ժողովրդավարական հասարակությունում զինված ուժերի նկատմամբ արդյունավետ քաղաքացիական վերահսկողությունը դիտարկվում է որպես մարդու իրավունքների պաշտպանության և իրավունքի գերակայության ապահովման կարևոր երաշխիք: Միջազգային չափանիշների համաձայն՝ զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանությունը պետք է ապահովվի ոչ միայն ներքին վերահսկողական մեխանիզմների, այլև անկախ ինստիտուտների գործունեության միջոցով:

Այս համատեքստում Պաշտպանի գործունեության առաջնահերթություններից է զինված ուժերում մարդու իրավունքների պահպանմանը հետևելը: Որպես զինված ուժերի նկատմամբ արտաքին վերահսկողություն իրականացնող սահմանադրական հաստատություն՝ Պաշտպանի նպատակներից է ապահովել զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանությունը և խթանումը:

Զինված ուժերի անձնակազմի համար կարևոր նշանակություն ունի այն հանգամանքը, որ ծառայության ընթացքում իրենց խախտված իրավունքների պաշտպանության նպատակով նրանք ունենան անկախ մարմիններին դիմելու հնարավորություն: Ավելին՝ յուրաքանչյուր զինծառայող ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք: Ընդ որում՝ այդ մարմինը կարող է դատական չլինել, սակայն պետությունն, ըստ էության, պետք է ապահովի այն նույն երաշխիքները, որով օժտված են դատական մարմինները՝ իրավական պաշտպանության միջոցների արդյունավետությունն ապահովելու համար[45]: Չնայած զինված ուժերում գանգատարկման ներպետական ընթացակարգերի առկայությանը՝ զինվորական աստիճանակարգության վերահսկողությունից դուրս գործող անկախ ինստիտուտների, այդ թվում՝ օմբուդսմանի ինստիտուտի կարևոր նպատակը զինված ուժերում մարդու իրավունքների հնարավոր խախտումների վերաբերյալ դիմումների քննությունն է, ինչպես նաև զինվորական քաղաքականության բացերի և համակարգային խնդիրների վերհանումը:

[45] Տե՛ս ԶՈՒ անդամների իրավունքների մասին ԵԽ Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)4 հանձնարարականի Բացատրական հուշագիր, բաժին «ԻԲ»:

Այս առումով, օմբուդսմանի դերը կարևորվում է մի քանի առումներով՝

Արդյունքում, օմբուդսմանը դրական ներգործություն է ունենում զինծառայողների կյանքի որակի, նրանց մարտական ոգու և զորքերի մարտական համախմբվածության վրա[46]: Վերը նշված նպատակների իրագործման համար Պաշտպանն ունի մասնագիտացված և անհրաժեշտ կարողություններ՝ հետևելու զինված ուժերում իրավասու մարմինների և պաշտոնատար անձանց կողմից մարդու իրավունքների ապահովմանը:

Միաժամանակ, նկատի ունենալով ոլորտի կարևորությունն ու զգայունությունը և մարդու իրավունքներին վերաբերելի հարցերին պատշաճ արձագանքելու մեխանիզմների կատարելագործումը՝ Պաշտպանը հատուկ կարևորում է աշխատակազմի

կարողությունների անընդհատ զարգացումը ու ժամանակակից չափանիշներին համապատասխան՝ նոր մոտեցումների ձևավորումը[47]:

2025 թվականի ընթացքում աշխատակազմի կարողությունների զարգացման համար կազմակերպվել են մի շարք վերապատրաստման դասընթացներ, լավագույն փորձի փոխանակման նպատակով այցեր տարբեր երկրներ[48] և այլն:

---

[46] Տե՛ս ԵԱՀԿ ԺՀՄԻԳ Ձեռնարկ «ԶՈւ անձնակազմի մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին», 2008 թվական, էջ 321, հասանելի է https://odihr.osce.org/sites/default/files/f/documents/6/7/88572.pdf հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

[47] Աշխատակազմի կարողությունների զարգացման նպատակով 2025 թվականի ընթացքում ևս անցկացվել են մի շարք վերապատրաստման դասընթացներ, ինչպես նաև լավագույն փորձի փոխանակման նպատակով այցեր տարբեր երկրներ:

[48] Տեղեկատվությունը հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3248, https://ombuds.am/am/site/ViewNews/3119, https://ombuds.am/am/site/ViewNews/3032, https://ombuds.am/am/site/ViewNews/3103, https://ombuds.am/am/site/ViewNews/3264 հղումներով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

Պաշտպանը զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանությունն իրականացնում է 3 գլխավոր ուղղություններով՝

Այս ամենով հանդերձ՝ Պաշտպանի ուշադրության կենտրոնում են ոչ միայն զինապարտների, այլ նաև նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության հետ կապված հարցերն ու ոլորտին առնչվող համակարգային խնդիրները:

Վերոնշյալ աշխատանքների պատշաճ իրականացման նպատակով Պաշտպանի աշխատակազմում գործում է Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության բաժինը, որը մասնագիտական ստորաբաժանում է և գործում է Քրեական արդարադատության ոլորտում և զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության դեպարտամենտի կազմում: Բաժինը զբաղվում է քաղաքացիների զինապարտությանն առնչվող իրավունքների պաշտպանությամբ բոլոր փուլերում (զինվորական հաշվառում և զորակոչ, զինվորական ծառայության բուն ընթացք, պահեստազոր): Միաժամանակ, բաժինը զբաղվում է զինծառայողների ընտանիքների,

ինչպես նաև կոնֆլիկտային և հետկոնֆլիկտային իրավիճակներում զինված ուժերի անդամների իրավունքների պաշտպանության հետ կապված հարցերով:

Այսպես, 2025 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմի՝ զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության բաժին ստացվել է շուրջ 900՝ գրավոր և բանավոր բողոք, Պաշտպանի նախաձեռնությամբ սկսված քննարկման ընթացակարգեր, թեժ գծին ստացված հեռախոսազանգեր, աշխատակազմում քաղաքացիներին տրամադրված խորհրդատվություններ:



Ընդ որում՝



Ստացված բողոքներից շուրջ 400-ը գրավոր բողոքներն են, որի 68%-ը Պաշտպանի աշխատակազմում քննարկման արդյունքում ստացել է դրական լուծում:

Միաժամանակ, զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության ոլորտում բարձրացվող խնդիրների համակարգային վերլուծությունն ու դրանց լուծման ուղիների մշակումը իրականացվում են նաև Պաշտպանին առընթեր գործող Զինծառայողների իրավունքների պաշտպանության հարցերով փորձագիտական խորհրդի շրջանակում: Խորհրդի գործունեությունը միտված է զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության հետ կապված խնդիրների մասնագիտական վերլուծությանը, ինչպես նաև համապատասխան առաջարկությունների մշակմանը՝ քաղաքացիական հասարակության, պետական մարմինների և անկախ փորձագիտական համայնքի ներգրավմամբ:

2024 թվականին ձևավորված փորձագիտական նոր խորհրդի կազմում ընդգրկվել են ոլորտում գործունեություն ծավալող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև հոգեբանության, սոցիոլոգիայի և իրավունքի ոլորտների անկախ մասնագետներ և փաստաբաններ: Խորհրդի գործունեությունը հնարավորություն է ստեղծում կազմակերպելու մասնագիտական քննարկումներ և փորձագիտական վերլուծություններ՝ ուղղված անվտանգային ոլորտում մարդու իրավունքներին առնչվող խնդիրների բացահայտմանը և դրանց լուծման ուղիների մշակմանը: 2025 թվականի դեկտեմբերի 26-ին տեղի ունեցած փորձագիտական խորհրդի նիստում քննարկվել են զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանությանն առնչվող մի շարք առանցքային խնդիրներ: Մասնավորապես, անդրադարձ է կատարվել զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության ոլորտում արձանագրված խնդիրներին, խաղաղ պայմաններում զինծառայողների մահվան և

ինքնավնասման դեպքերին, զորքերում կարգապահության ամրապնդման հարցերին, ինչպես նաև զորակոչի ընթացքում բարձրացվող խնդիրներին:

Քննարկումների ընթացքում ներկայացվել են նաև Պաշտպանի աշխատակազմի կողմից իրականացված մշտադիտարկումների արդյունքները, զինվորական հաստատություններ կատարված այցելությունների շրջանակում արձանագրված խնդիրները, ինչպես նաև զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության ոլորտում ստացված դիմումների ուսումնասիրության արդյունքում ձևավորված հիմնական միտումները[49]:

Միաժամանակ, 2025 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմում շարունակվել են աշխատանքները 2020 թվականից և դրանից հետո տեղի ունեցած ռազմական գործողությունների հետևանքները կրած անձանց իրավունքների պաշտպանությանն առնչվող խնդիրների ուսումնասիրության և դրանց լուծման ուղիների մշակման ուղղությամբ:

Բացի այդ, 2025 թվականի ընթացքում Պաշտպանի կարծիքին են ներկայացվել մի շարք օրենսդրական նախագծեր՝ այդ թվում՝ պատգամավոր Հայկ Սարգսյանի կողմից 2025 թվականի մայիսի 22-ին օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» և «ՀՀ քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերը, որոնցով առաջարկվում էր 18 կամ 24 միլիոն դրամ վճարելով՝ զինվորական ծառայություն անցնել համապատասխանաբար 4 կամ 1 ամիս ժամկետով:

Նախագծերի կապակցությամբ Պաշտպանը մտահոգիչ է համարել առաջարկվող կարգավորումները՝ նշելով, որ դրանք կարող են առաջացնել սոցիալական շերտավորում՝ անձանց գույքային դրությամբ պայմանավորված, և այդպիսով վտանգել խտրականության արգելքի սկզբունքի պահպանումը: Մասնավորապես, առաջարկվող կարգավորմամբ նույն իրավական կարգավիճակում գտնվող անձանց նկատմամբ կարող է կիրառվել տարբերակված մոտեցում՝ պայմանավորված բացառապես նրանց գույքային հնարավորություններով, ինչը կարող է հանգեցնել սահմանադրական պարտականության անհավասար բաշխման:

Պաշտպանը նաև ուշադրություն է հրավիրել այն հանգամանքի վրա, որ նման կարգավորումները կարող են ռիսկեր առաջացնել զինված ուժերում կարգապահության ապահովման տեսանկյունից, քանի որ գումարի դիմաց ծառայության ժամկետի կրճատումը կարող է առաջացնել անհավասարության ընկալում զինծառայողների շրջանում և բացասաբար անդրադառնալ զինվորական ծառայության կազմակերպման վրա:

Արդյունքում՝ նախագիծը չի ընդունվել, այդ թվում նաև՝ իրավասու և շահագրգիռ մարմիններին Պաշտպանի ներկայացրած կարծիքի հաշվառմամբ:

Այս կապակցությամբ Պաշտպանը կարևորել է հարցի քննարկումը սահմանադրական սկզբունքների և Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների հաշվառմամբ:

2025 թվականի ընթացքում Պաշտպանի կարծիքին են ներկայացվել նաև «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» և «Ռազմական ոստիկանության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու

[49] Տեղեկատվությունը հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3646 հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

մասին» օրենքների նախագծերը: Նախագծային կարգավորումներով նախատեսվում էր Ռազմական ոստիկանությանը վերապահել լրացուցիչ լիազորություններ՝ զինապարտ քաղաքացիներին զինվորական հաշվառման վերցնելու, զորակոչի և պահեստազորային պատրաստության միջոցառումներին ներգրավելու գործընթացում աջակցություն ցուցաբերելու նպատակով:

Նախագծերի կապակցությամբ Պաշտպանը նշել է, որ առաջարկվող կարգավորումները կարող են հանգեցնել Ռազմական ոստիկանության լիազորությունների շրջանակի ընդլայնման՝ դուրս գալով զինված ուժերի համակարգի սահմաններից և տարածվելով նաև քաղաքացիական անձանց նկատմամբ, ինչը կարող է առաջացնել իրավական որոշակիության և լիազորությունների տարանջատման հետ կապված խնդիրներ: Այս համատեքստում Պաշտպանը առաջարկել է վերանայել նախագծային կարգավորումները՝ հաշվի առնելով իրավական պետության, համաչափության և իրավական որոշակիության սկզբունքները:

Այսպիսով, 2025 թվականի ընթացքում Պաշտպանի կողմից արված արձանագրումները փաստում են, որ զինված ուժերում առկա խնդիրները բազմազան են և կրում են նաև համակարգային բնույթ: Պաշտպանը հետևողականորեն շարունակելու է զինված ուժերում մարդու իրավունքների երաշխավորմանն ու պաշտպանությանն ուղղված իր գործունեությունը, որի շրջանակներում, իրավասու պետական մարմինների և միջազգային գործընկեր կազմակերպությունների հետ սերտ համագործակցությամբ, կիրականացվեն գործնական քայլեր՝ նպաստելով զինծառայողների իրավունքների պաշտպանության մեխանիզմների շարունակական կատարելագործմանը:

2. Հանրային իշխանության, քաղաքացիական հասարակության և միջազգային կառույցների համագործակցությունը զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության հարցերում

Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի կարևոր գործառույթներից է նպաստել պետական մարմինների և քաղաքացիական հասարակության միջև արդյունավետ երկխոսության ապահովմանը: Այս դերակատարությունը առանձնահատուկ նշանակություն է ստանում նաև զինված ուժերին և ընդհանրապես անվտանգային ոլորտին առնչվող հարցերում, որտեղ մարդու իրավունքների պաշտպանության խնդիրների բացահայտումն ու դրանց լուծման ուղիների մշակումը պահանջում են ինչպես պետական մարմինների, այնպես էլ քաղաքացիական հասարակության ակտիվ ներգրավվածություն[50]: Այս առումով, 2025 թվականի ընթացքում ակտիվորեն շարունակվել է համագործակցությունը պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների, զանգվածային լրատվամիջոցների, զինված ուժերում մարդու իրավունքների հարցերով զբաղվող այլ կառույցների հետ:

Մասնավորապես, Պաշտպանը զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության հարցերում ակտիվ համագործակցել է Ազգային ժողովի, Պաշտպանության նախարարության, Ազգային անվտանգության ծառայության, Գլխավոր դատախազության, Քննչական կոմիտեի և մի շարք այլ մարմինների հետ:

[50] ԵԱՀԿ հստակ դիրքորոշմամբ՝ մարդու իրավունքների պաշտպանության ազգային հաստատությունները գործում են որպես կամուրջ քաղաքացիական հասարակության և պետության միջև՝ կապելով պետությունների պարտականությունները քաղաքացիների իրավունքների հետ: Հասանելի է https://www.osce.org/odihr/national-human-rights-institutions հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

Դրական պետք է գնահատել Ազգային անվտանգության ծառայության հետ ձևավորված համագործակցությունը, որի շրջանակում 2025 թվականի ընթացքում Սահմանապահ զորքերում պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցնող զինծառայողների դիմումների արդյունքում արձանագրված մի շարք խնդիրներ Պաշտպանի աջակցությամբ և ԱԱԾ-ի հետ համագործակցությամբ ստացել են լուծում:

Պետական մարմինների հետ ձևավորված համագործակցության դրական օրինակներից է նաև Պաշտպանության նախարարության և դրա առանձին ստորաբաժանումների հետ իրականացվող արդյունավետ աշխատանքը, որը նպաստում է զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության և խթանման մակարդակի բարձրացմանը:

Այդ համատեքստում կարևորվում է նաև ՊՆ մարդու իրավունքների և բարեվարքության կազմակերպման կենտրոնի, իրավաբանական վարչության, ռազմական ոստիկանության, ռազմաբժշկական ապահովման վարչության, զինծառայողների սոցիալական պաշտպանության վարչության և մի շարք այլ ստորաբաժանումների, ինչպես նաև զորամիավորումների ու զորամասերի պատրաստակամությունը Պաշտպանի աշխատակազմի հետ գործուն համագործակցության առումով: Զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում պետք է ողջունելի համարել ՊՆ մարդու իրավունքների և բարեվարքության կազմակերպման կենտրոնի գործունեությունը, որի աշխատանքը նպաստում է զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների զարգացմանը:

2025 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմի կողմից զինվորական հաստատություններ իրականացված այցելությունները կրել են առավել ինտենսիվ բնույթ: Հաշվետու տարվա ընթացքում իրականացվել են 22 այց զորամասեր, զինվորական հոսպիտալներ, մարտական դիրքեր, ռազմական ոստիկանության բաժիններ և այլ զինվորական հաստատություններ: Այցերն ընդգրկել են Երևանի, Գեղարքունիքի, Սյունիքի և Վայոց ձորի մարզերում տեղակայված զորամասերն ու զինվորական հաստատությունները:

Այցերի ընթացքում ուսումնասիրվել են զինծառայողների բուժօգնության կազմակերպման, զորքերում կարգապահության ապահովման, բարոյահոգեբանական վիճակի, սննդի կազմակերպման և այլ կարևոր հարցեր: Պաշտպանի ներկայացուցիչների կողմից իրականացվել են առանձնազրույցներ տարբեր կազմերի զինծառայողների հետ, որոնց ընթացքում քննարկվել են զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքներին առնչվող տարբեր խնդիրներ, այդ թվում՝ սոցիալական ապահովության, կրթական հնարավորությունների, ատեստավորման գործընթացի, բնակարանային

ապահովության, առողջության պահպանման, ինչպես նաև սոցիալ-կենցաղային պայմանների հետ կապված հարցեր:

Միաժամանակ, անհրաժեշտ է արձանագրել, որ իրականացված այցերի ընթացքում Պաշտպանության նախարարության և Զինված ուժերի ներկայացուցիչների կողմից ցուցաբերվել է համագործակցության բարձր մակարդակ, ինչը նպաստել է բարձրացված հարցերի քննարկմանն ու դրանց լուծման ուղղությամբ հետագա քայլերի իրականացմանը:

Դրական արդյունքներ է տվել նաև այլ իրավասու պետական մարմինների հետ ձևավորված համագործակցությունը: Մասնավորապես, Պաշտպանի գրությունների և ներկայացված առաջարկությունների հիման վրա ՀՀ քննչական կոմիտեի և Գլխավոր դատախազության կողմից իրականացվել են մի շարք միջոցառումներ՝ ուղղված զինված ուժերում կարգապահության ամրապնդմանը, խաղաղ պայմաններում մահվան դեպքերի կանխարգելմանը, ինչպես նաև մահվան և ինքնավնասման դեպքերի առնչությամբ համապատասխան վարույթների նախաձեռնմանն ու քննության իրականացմանը:

2025 թվականի ընթացքում շարունակվել է ակտիվ համագործակցությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովների հետ: Ոլորտային մի շարք հարցերի շուրջ քննարկումներ են կազմակերպվել Ազգային ժողովի պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի հետ: Պաշտպանը առանձնահատուկ կարևորում է Ազգային ժողովի և դրա համապատասխան հանձնաժողովների հետ համագործակցությունը՝ դրանք դիտարկելով որպես զինված ուժերի նկատմամբ արտաքին վերահսկողություն իրականացնող կարևոր ինստիտուցիոնալ գործընկերներ:

Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների արդյունավետ պաշտպանության տեսանկյունից էական նշանակություն ունի նաև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների և փաստաբանների հետ ձևավորված համագործակցությունը: Վերջիններիս հետ փոխգործակցությունը, մասնավորապես զինծառայողների իրավունքների պաշտպանությանն առնչվող կոնկրետ գործերի շրջանակում, կրում է շարունակական բնույթ և նպաստում է բարձրացված խնդիրների ավելի արդյունավետ արձագանքմանը:

Պաշտպանը կարևորում է պաշտպանության և անվտանգության ոլորտում մարդու իրավունքների պաշտպանության և խթանման ուղղությամբ բոլոր դերակատարների հետ ակտիվ փոխգործակցությունը՝ նշելով, որ ոլորտում առկա ժամանակակից մարտահրավերների հաղթահարումը պահանջում է համակարգված, հետևողական և համագործակցային աշխատանք:

Պաշտպանի հաստատության համար առանձնակի կարևորություն ունի զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում միջազգային մասնագիտացված կառույցների հետ համագործակցությունը: Այդպիսի համագործակցության լավագույն օրինակներից են Անվտանգության ոլորտի կառավարման Ժնևյան կենտրոնի (DCAF) կողմից Հայաստանի զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանությանն ու խթանմանը միտված թիրախային ծրագրերը:

2025 թվականին իրականացված ծրագրերի շրջանակում ԵԽ-ի, Անվտանգության ոլորտի կառավարման Ժնևյան կենտրոնի (DCAF), Գործընկերություն հանուն խաղաղության կոնսորցիումի (PfPC), Վրաստանում ՆԱՏՕ-ի կապի գրասենյակի, ՄԱԿ կանայք կառույցի, պետական իրավասու մարմինների և Պաշտպանի աշխատակազմի ակտիվ համագործակցությամբ արձանագրվել են կոնկրետ արդյունքներ: Մասնավորապես՝ իրականացված ծրագրերի շրջանակներում կազմակերպվել են մի շարք **հանդիպումներ, կլոր սեղան քննարկումներ, աշխատաժողովներ,** որոնք ուղղված են եղել ոլորտում մարդու իրավունքներին վերաբերելի խնդիրների վերհանմանը և լուծման մեխանիզմների մշակմանը:

Հաշվետու տարվա ընթացքում միջազգային կառույցների կողմից իրականացված ծրագրերի շրջանակներում **իրականացվել են ճանաչողական և փորձի փոխանակմանն ուղղված այցեր** Նիդերլանդների Թագավորություն (ԵԽ), Մոլդովայի Հանրապետություն (Անվտանգության ոլորտի կառավարման Ժնևյան կենտրոն), Շվեյցարիայի Համադաշնություն (Անվտանգության ոլորտի կառավարման Ժնևյան կենտրոն և Գործընկերություն հանուն խաղաղության կոնսորցիում):

Այցերի ընթացքում իրականացվել են հանդիպումներ համապատասխան պետական մարմինների, մարդու իրավունքների ազգային հաստատությունների, ինչպես նաև անվտանգության և պաշտպանության ոլորտում գործունեություն իրականացնող կառույցների ներկայացուցիչների հետ: Քննարկումները վերաբերել են զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության ապահովման մեխանիզմներին, իրավախախտումների կանխարգելման և արդյունավետ քննության կառուցակարգերին, զինծառայողների իրավունքների պաշտպանության ներքին և արտաքին վերահսկողական մեխանիզմներին, ինչպես նաև զինված ուժերում գենդերային հավասարության և խտրականության բացառման քաղաքականություններին:

Փորձի փոխանակման այցերի շրջանակում ներկայացվել է նաև Հայաստանի Մարդու իրավունքների պաշտպանի մանդատը և գործունեության փորձը զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում: Այցերը նպաստել են միջազգային լավագույն փորձի ուսումնասիրմանը և այն մեխանիզմների բացահայտմանը, որոնք կարող են կիրառելի լինել Հայաստանի պաշտպանության և անվտանգության համակարգում մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքների ամրապնդման տեսանկյունից:

2025 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության հետ համագործակցությամբ Երևանում անցկացվել է բարձր մակարդակի միջազգային համաժողով՝ «Արդյունավետ պաշտպանություն և անվտանգություն. կանանց նշանակալի մասնակցության առաջխաղացում Հայաստանի զինված ուժերում և զինված ուժերից դուրս» խորագրով: Համաժողովը կազմակերպվել է ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի, ՆԱՏՕ-ի կապի գրասենյակի և «ՄԱԿ Կանայք» (UN Women) կառույցի հետ

համագործակցությամբ և միտված է եղել պաշտպանության և անվտանգության ոլորտում կանանց նշանակալի մասնակցության խթանման ուղիների քննարկմանը:

Համաժողովի ընթացքում քննարկվել են զինված ուժերում գենդերային հավասարության ապահովման, կանանց ներգրավվածության ընդլայնման, ոլորտում առկա կարծրատիպերի հաղթահարման, ինչպես նաև «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» օրակարգի իրականացմանն առնչվող հարցեր: Քննարկումներին մասնակցել են միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, դիվանագիտական առաքելությունների ղեկավարներ, տարբեր երկրների պետական մարմինների, զինված ուժերի, քաղաքացիական հասարակության և ակադեմիական շրջանակների ներկայացուցիչներ: Համաժողովը կարևոր հարթակ է հանդիսացել պաշտպանության և անվտանգության ոլորտում կանանց ներգրավվածության խթանման, փորձի փոխանակման և միջազգային համագործակցության զարգացման տեսանկյունից:

Այսպիսով, հաշվետու տարվա ընթացքում Պաշտպանը պաշտպանության և անվտանգության ոլորտին առնչվող մի շարք հարցերի շուրջ քննարկումներ է ունեցել նաև միջազգային այլ գործընկերների հետ: Տարբեր ձևաչափերով համագործակցությունը հնարավորություն է տվել անդրադառնալ ոլորտում առկա խնդիրներին, ներկայացնել Պաշտպանի կողմից արձանագրված դիտարկումները, ինչպես նաև քննարկել միջազգային փորձն ու հնարավոր համագործակցության ուղղությունները: Պաշտպանը կարևորում է միջազգային գործընկերների հետ ձևավորված համագործակցությունը՝ այն դիտարկելով որպես մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում փորձի փոխանակման և արդյունավետ լուծումների մշակման կարևոր հարթակ:

Զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում Պաշտպանի աշխատանքները կրում են շարունակական բնույթ և նպատակ ունեն միջազգային կառուցակարգերի հավելյալ հնարավորություններն օգտագործելով՝ նպաստել զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության կառուցակարգերի զարգացմանը:

ԳԼՈՒԽ 2. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

1. Զինվորական հաշվառման և զորակոչի կազմակերպման գործընթացը

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի անդամ պետություններին ուղղված CM/Rec(2010)4 հանձնարարականի 2-րդ կետի համաձայն՝ զինված ուժերի անդամները, անկախ իրենց կարգավիճակից, պետք է օգտվեն «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայով (այսուհետ՝ Կոնվենցիա), Եվրոպական սոցիալական խարտիայով և Եվրոպական սոցիալական խարտիայով (վերանայված) (այսուհետ՝ Խարտիա), ինչպես նաև մարդու իրավունքների վերաբերյալ այլ համապատասխան գործիքներով երաշխավորված իրավունքներից՝ այնքանով, որքանով պետությունները կաշկանդված (պարտավորված) են դրանցով: Այս հիմնարար սկզբունքի լիարժեք կենսագործման նպատակով՝ Պաշտպանն իրականացնում է քաղաքացիների զինապարտությանն առնչվող իրավունքների պաշտպանություն գործընթացի բոլոր փուլերում՝ զինվորական հաշվառումից և զորակոչից մինչև բուն ծառայություն ու պահեստազոր: Այս աշխատանքների շրջանակում Պաշտպանի հատուկ ուշադրության կենտրոնում են զինվորական հաշվառման և հայտարարված զորակոչերի ընթացքում անձանց իրավական երաշխիքների ապահովմանն առնչվող հարցերը:

2025 թվականին հայտարարված զորակոչերի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանն իրականացրել է մի քանի ուղղություններով աշխատանքներ: Բացի անհատական բողոքների պատշաճ ընթացքն ապահովելուց և յուրաքանչյուր քաղաքացու բարձրացրած հարցին անհատական մոտեցում ցուցաբերելուց, Պաշտպանն անձամբ այցելել է ՊՆ կենտրոնական հավաքակայան և այլ զինվորական հաստատություններ: Պաշտպանի ներկայացուցիչներն այցեր են իրականացրել զինկոմիսարիատներ, առանձնազրույցներ ունեցել զորակոչիկների հետ, նրանց մտահոգող հարցերը քննարկել ԿԲՀ բժիշկ-փորձագետների հետ, ուսումնասիրել զորակոչի գործընթացին վերաբերող առաջարկություններն ու դիտարկումները: Զուգահեռաբար, զորակոչերի ընթացքում մարդու իրավունքներին վերաբերելի հարցերի շուրջ Պաշտպանի աշխատակազմը պետական մարմինների, հասարակական կազմակերպությունների ու լրատվամիջոցների գործընկերների հետ ներգրավվել է մի շարք հանդիպումների և քննարկումների: 2025 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմ ստացված 900 բողոքներից շուրջ 91-ը ստացվել է ձմեռային զորակոչի ընթացքում, 123-ը՝ ամառային զորակոչի ընթացքում:



Ընդ որում, ստացված բողոքների շուրջ 86% վերաբերել են առողջական վիճակի հետազոտություններին և փորձաքննությունների եզրակացություններին, 6%-ը կրթության, գիտության, սպորտի բնագավառներում նշանակալի նվաճումներ ունենալու հիմքով զորակոչից տարկետում ստանալուն, 3%-ը՝ այլընտրանքային ծառայություն անցնելուն և այլ խնդիրների:



Զորակոչի գործընթացի արդյունավետության և իրավունքների պահպանման գնահատման նպատակով Պաշտպանը իրականացրել է նաև տեղում դիտարկումներ՝ այցելելով ՊՆ կենտրոնական հավաքակայան և հետևելով զորակոչի ընթացքին: Այցի շրջանակում գնահատվել են ինչպես կազմակերպչական, այնպես էլ կենցաղային պայմանները, ծառայության նախապատրաստման գործընթացը և կիրառվող մեխանիզմները, ինչի արդյունքում, ի թիվս այլնի, արձանագրվել են դրական զարգացումներ, մասնավորապես՝ կապված կենցաղային պայմանների, սննդի կազմակերպման և գիտելիքների ստուգման ավտոմատացված համակարգերի ներդրման հետ: Այդուհանդերձ, ոլորտի բազմակողմանի մոնիթորինգը թույլ է տալիս փաստել, որ շարունակում են արդիական մնալ խնդիրներ, որոնց լուծումը պահանջում է ինչպես պրակտիկայի վերանայում, այնպես էլ օրենսդրական փոփոխություններ:

Պաշտպանի հանձնարարությամբ այցեր են իրականացվել նաև զինկոմիսարիատներ, այդ թվում՝ Գորիսի տարածքային ստորաբաժանում:

Աշխատակազմի ներկայացուցիչները քննարկումներ են ունեցել իրավասու պաշտոնատար անձանց հետ, ծանոթացել են զորակոչի ընթացքում արձանագրվող խնդիրներին: Այցերի ընթացքում հատուկ ուշադրություն է դարձվել ծանուցման ընթացակարգերի, բժշկական հանձնաժողովների աշխատանքի, եզրակացությունների պատճառաբանվածության և քաղաքացիների հետ հաղորդակցության որակի հետ կապված խնդիրներին:



Արդյունքում, 2025 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրված բողոքների և իրականացված մշտադիտարկումների ընթացքում արձանագրվել են հետևյալ խումբ խնդիրները.

Հաշվետու ժամանակահատվածում ևս Պաշտպանի աշխատակազմում արձանագրվել են զինվորական հաշվառման և զորակոչի կազմակերպման գործընթացում զինկոմիսարիատ ներկայանալու (պարտադիր զինվորական ծառայության, վարժական հավաքների և այլն) նպատակով քաղաքացիներին ոչ պատշաճ ծանուցելու հետ կապված խնդիրներ: Օրինակ՝ 2025 թվականի ամառային զորակոչի շրջանակներում, անձը բողոք է ներկայացրել Պաշտպանին՝ սահմանված կարգով ծանուցված չլինելու վերաբերյալ: Մասնավորապես, ըստ քաղաքացու՝ կանչվել է հեռախոսազանգով, չի ներկայացել, որից հետո Ոստիկանության ծառայողն է այցելել իր բնակության վայր ու պահանջել ներկայանալ զինկոմիսարիատ: Արձանագրված խնդիրների հիման վրա՝ Պաշտպանն իրավասու գերատեսչություններին առաջարկել էր մշակել քաղաքացիների պատշաճ ծանուցման հստակ ընթացակարգ: Արդյունքում՝ 2025 թվականի ապրիլի 1-ից ներդրվել է փուլային նոր մեխանիզմ, որն առաջնահերթություն է տալիս թվային տիրույթին: Ըստ այդմ՝ քաղաքացին նախ ստանում է էլեկտրոնային ծանուցում azdarar.am հարթակի «անհատական ծանուցումներ» բաժնում, որտեղ անհրաժեշտ է նույնականանալ «Ես եմ» թվային հարթակի միջոցով և ստուգել ծանուցման առկայությունը: Թվային տարբերակով 5 օրվա ընթացքում ծանուցմանը չծանոթանալու պարագայում, ծանուցումը քաղաքացու հաշվառման հասցեին է ուղարկվում թղթային տարբերակով՝ «Հայփոստ» ազգային օպերատորի միջոցով: Եթե առձեռն հանձնումն իրականացնել չի հաջողվում, ծանուցումը հրապարակվում է azdarar.am կայքում՝ «պետական լիազոր մարմնի կողմից ծանուցումներ» բաժնում և 10-րդ օրվանից համարվում է պատշաճ իրականացված:

2025 թվականի ընթացքում «Ռազմական ոստիկանության մասին» ՀՀ օրենքում իրականացված փոփոխությունների արդյունքում Ռազմական ոստիկանությանը վերապահվել են նոր լիազորություններ, որոնց համաձայն՝ Ռազմական ոստիկանությունը զինապարտ քաղաքացիներին զինվորական հաշվառման վերցնելու, պարտադիր զինվորական ծառայության կամ զորահավաքային զինվորական ծառայության զորակոչելու կամ պահեստազորային պատրաստության միջոցառումներին ներգրավելու գործընթացում իրավունք ունի՝

1. իրականացնել քաղաքացիներին զինվորական կոմիսարիատ ներկայանալու ծանուցագրերի հանձնումը.

2. հայտնաբերել, պարտավորեցնել և համապատասխան զինվորական կոմիսարիատ ներկայացնել զինվորական կոմիսարիատ կամ առողջական վիճակի հետազոտում կամ բժշկական փորձաքննություն իրականացնող մարմին չներկայացած զորակոչիկներին, ստանալ տեղեկություններ պարտադիր զինվորական կամ զորահավաքային զորակոչից կամ պահեստազորային պատրաստության միջոցառումներից խուսափող անձանց վերաբերյալ և օրենքով սահմանված կարգով կատարել համապատասխան գործողություններ:

Նախագծի կապակցությամբ Պաշտպանը կարծիք է ներկայացրել, որ նախատեսվող կարգավորումները խնդրահարույց են, քանի որ «Ռազմական ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ կառույցի գործառութային շրջանակը սահմանափակվում է բացառապես **ՀՀ զինված ուժերով**, մինչդեռ նոր լիազորություններով Ռազմական ոստիկանության խնդիրները տարածվում են այն անձանց վրա, ովքեր դեռևս զինծառայողի կարգավիճակ չունեն, ինչը հակասում է միջազգային պրակտիկային (Գերմանիա, Ֆրանսիա, Հունաստան) և քաղաքացիական ու ռազմական իրավապահ մարմինների գործառույթների տարանջատման սկզբունքին: Պաշտպանն ընդգծել է, որ քանի դեռ հայտարարված զորակոչը չի ավարտվել և անձը պաշտոնապես չի խուսափել զորակոչից, նրա նկատմամբ հարկադրանքի մեխանիզմների գործադրումը չի բխում համաչափության սկզբունքից, իսկ Ռազմական ոստիկանությանը քաղաքացուն հայտնաբերելու և պարտավորեցնելով զինկոմիսարիատ ներկայացնելու իրավունք վերապահելը պարունակում է զինվորական կոմիսարիատները **«ազատությունից զրկման վայրերի»** վերածելու ռիսկեր: Բացի այդ, «օրենքով սահմանված կարգով համապատասխան գործողություններ կատարելու» ձևակերպումը չի համապատասխանում **իրավական որոշակիության** սահմանադրական սկզբունքին, քանի որ հստակ չէ, թե կոնկրետ ինչ գործողությունների մասին է խոսքը, ինչը կարող է հանգեցնել լիազորությունների կամայական մեկնաբանման. ուստի անհրաժեշտ է վերանայել նախագծային կարգավորումները՝ ապահովելու համար հանրային իշխանության գործողությունների կանխատեսելիությունն ու մարդու իրավունքների արդյունավետ երաշխավորումը:

Քաղաքացիներից ստացվող գրավոր ու բանավոր բողոքների և ՄԻՊ թեժ գծին ստացվող ահազանգերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մարդիկ հաճախ իրազեկված չեն զինվորական հաշվառման և զորակոչի գործընթացում իրենց իրավունքների ու պարտականությունների մասին: Դրան զուգահեռ՝ նկատվում են իրավասու պետական մարմինների կողմից քաղաքացիների հետ պատշաճ հաղորդակցության խնդիրներ: ՄԻՊ թեժ գծին հաճախ են ստացվել ահազանգեր այն մասին, որ քաղաքացիները, զինկոմիսարիատ այցելելով, ստացել են անհասկանալի պատասխաններ, իրենց հարցերին պատշաճ պարզաբանումներ չեն տրվել կամ հարցերի կապակցությամբ ստացել են մերժումներ՝ առանց համապատասխան հիմնավորումների:

Պաշտպանը կարևորում է պետական իրավասու մարմինների կողմից քաղաքացիների հետ պատշաճ հաղորդակցության վարումը, ինչն իր հերթին կնպաստի զորակոչի գործընթացում ներգրավված անձանց իրավունքների երաշխավորմանը: Այս համատեքստում հարկ է անդրադառնալ Պաշտպանի նախորդ տարեկան հաղորդմամբ բարձրացված խնդրի լուծմանը, որը վերաբերում էր զորակոչիկներին զինված ուժեր ներգրավվելու ծրագրերի մասին իրազեկելուն (օրինակ՝ «Պատիվ ունեմ», «Պաշտպան հայրենյաց», ՊՆ N 8-Ն հրամանով սահմանված ծրագրեր և այլն): Ըստ Պաշտպանության նախարարությունից ստացված տեղեկատվության՝ 2025 թվականի ընթացքում ՀՀ ՊՆ հանրապետական զինվորական կոմիսարիատը և տարածքային զինվորական

կոմիսարիատները զորակոչերի նախապատրաստական փուլում զորակոչիկների և նրանց ծնողների շրջանում իրականացրել են ՀՀ զինված ուժերի համալրման առաջարկվող ծրագրերի և Պաշտպանության նախարարի 2018 թվականի հունիսի 25-ի N 8-Ն հրամանով սահմանված մրցույթների լուսաբանման աշխատանքներ, իսկ զորակոչի ենթակա բոլոր զորակոչիկները գրավոր իրազեկվել են վերը նշված ծրագրերով և մրցույթներով զինվորական ծառայության զորակոչվելու պայմաններին: Յուրաքանչյուր զորակոչի ավարտից հետո արձակվել է ՀՀ պաշտպանության նախարարի «Պաշտպան հայրենյաց» ծրագրի շահառու զինծառայողներով առաջնահերթության կարգով համալրման ենթակա զորամասերի ցանկը հաստատելու և հերթական հոսքի մեկնարկի կազմակերպչական աշխատանքներն իրականացնելու մասին համապատասխան հրամանը, որի համաձայն՝ ՀՀ զինված ուժերի ստորաբաժանումների հրամանատարությունը և ՊՆ ԿՔԳՎ-ը պարտադիր ժամկետային զինծառայողների շրջանում իրականացրել են բացատրական և քարոզչական աշխատանքներ՝ ծրագրի շրջանակներում ներգրավվելու նպատակով:

Պաշտպանի աշխատակազմ ստացվող բողոքները փաստում են, որ էապես նվազել է բժշկական փաստաթղթերը քաղաքացիներին հասանելի դարձնելու հետ կապված տարիներ շարունակ բարձրացվող խնդիրը: Թեև հարցը դեռևս ամբողջությամբ կարգավորված չէ, սակայն օրենսդրական փոփոխությունները, այդ թվում՝ տվյալների մուտքագրումը «Արմեդ» համակարգ, գործնականում դյուրացրել են քաղաքացիների հասանելիությունն իրենց առողջական վիճակին վերաբերող փաստաթղթերին: Միևնույն ժամանակ, արձանագրվել են դեպքեր, երբ համակարգի խափանման պատճառով քաղաքացիները չեն կարողացել ծանոթանալ անհրաժեշտ տեղեկատվությանը: Նմանատիպ իրավիճակներում, ինչպես նաև ցանկացած այլ պարագայում, պետք է նկատի ունենալ, որ իրավասու մարմինները (այդ թվում՝ զինկոմիսարիատներն ու բժշկական հաստատությունները) պարտավոր են քաղաքացու պահանջով տրամադրել նրա առողջական վիճակին վերաբերող փաստաթղթերը: Դա առանցքային նշանակություն ունի թե՛ անձի՝ իր առողջության վերաբերյալ տեղեկացված լինելու, և թե՛ բժշկական եզրակացությունների բողոքարկման իրավունքի լիարժեք իրացման տեսանկյունից:

Կոնկրետ բողոքներից բացի, Պաշտպանը վեր է հանել զորակոչի գործընթացին առնչվող այլ կարևոր խնդիրներ ևս, որոնք լուծման անհրաժեշտություն ունեն (օրինակ՝ մեկ օրվա ընթացքում Կենտրոնական բժշկական հանձնաժողովի փորձաքննությանը ներկայացվողների առավելագույն քանակի, զորակոչիկի նախընտրած մասնագետին որպես խորհրդատու ներգրավելու հնարավորության, հետազոտություններն ու փորձաքննություններն այլ անձանց տեսալսողական տիրույթում իրականացնելու և դրա՝ բժշկական գաղտնիքի տեսանկյունից խնդրահարույց լինելու հարցերը):

2025 թվականի ընթացքում իրականացված ուսումնասիրությունները և ստացված բողոքների վերլուծությունը վկայում են, որ զինվորական հաշվառման և զորակոչի կազմակերպման գործընթացում շարունակում են պահպանվել համակարգային խնդիրներ՝ կապված պատշաճ ծանուցման, բժշկական փորձաքննությունների կազմակերպման, որոշումների հիմնավորվածության և քաղաքացիների հետ պատշաճ հաղորդակցության հետ: Թեև որոշ ուղղություններով արձանագրվել է դրական տեղաշարժ, մասնավորապես՝ բժշկական փաստաթղթերի հասանելիության բարելավման տեսանկյունից, այնուամենայնիվ, գործող պրակտիկան դեռևս ամբողջությամբ չի ապահովում գործընթացի իրավունքահեն իրականացումը, ինչը պահանջում է հետևողական բարելավումներ:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ առաջարկվում է՝

- ✓ ***զորակոչի կազմակերպման գործընթացում բացառել քաղաքացիներին օրենքով սահմանված կարգի խախտմամբ ծանուցելու պրակտիկան,***
- ✓ ***իրավասու մարմինների կողմից զորակոչի գործընթացում ներգրավված քաղաքացիների հետ վարել մշտական պատշաճ հաղորդակցություն՝ երաշխավորելով նրանց իրավունքները և բարձրացվող խնդիրներին լինել առավել արձագանքող,***
- ✓ ***երաշխավորել բժշկական փաստաթղթեր ստանալու քաղաքացիների իրավունքի պատշաճ իրացումը, ինչը պետք է ապահովվի ինչպես բժշկական հաստատությունների, այնպես էլ զինկոմիսարիատների կողմից:***

2. Բժշկական փորձաքննության և պիտանիության հարցի որոշման օրենսդրական երաշխիքները և գործնական խնդիրները

Հաշվետու տարվա ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության առանցքային առաջնահերթություններից է շարունակել մնալ զորակոչի գործընթացում քաղաքացիների իրավունքների պաշտպանությունը: Այս համատեքստում Պաշտպանի գործունեությունն ուղղվել է առողջության պահպանման իրավունքի պատշաճ իրացմանը՝ դիտարկելով այն որպես զինվորական ծառայության ընթացքում անձի կյանքի և առողջության անխաթար պաշտպանության անհրաժեշտ նախապայման:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը «Չեմբերն ընդդեմ Ռուսաստանի» (Chember v. Russia) գործով կայացրած վճռում արձանագրել է. *«Այնուամենայնիվ, պետության պարտականությունն է երաշխավորել, որ անձը զինվորական ծառայությունն անցնի իր մարդկային արժանապատվության նկատմամբ հարգանքին համապատասխանող պայմաններում, որ զինվորական պատրաստության ընթացակարգերն ու մեթոդները նրան չենթարկեն այնպիսի փառապանքի կամ չարչարանքի, որի ինտենսիվությունը գերազանցում է զինվորական կարգապահությանը բնորոշ դժվարությունների անխուսափելի մակարդակը, և որ, հաշվի առնելով այդ ծառայության գործնական պահանջները, նրա առողջությունն ու բարեկեցությունը պատշաճ կերպով ապահովված լինեն, ի թիվս այլոց, անհրաժեշտ բժշկական օգնության տրամադրմամբ»*[51]*:*

Պաշտպանի աշխատակազմում իրականացված ուսումնասիրությունների արդյունքում զորակոչիկի պիտանիության գնահատման գործընթացի հետ կապված արձանագրվել են հետևյալ հիմնական խնդիրները՝

[51] Տե՛ս, «Չեմբերն ընդդեմ Ռուսաստանի» (Chember v. Russia) գործով ՄԻԵԴ 2008 թվականի դեկտեմբերի 1-ի վճիռը, կետ 50:

01 Օրենսդրությամբ սահմանված չէ մեկ օրվա ընթացքում Կենտրոնական բժշկական հանձնաժողովի փորձաքննությանը ներկայացվողների առավելագույն քանակ:

02 Գործող կարգավորումները զինապարտ քաղաքացու համար չեն նախատեսում իր նախընտրած մասնագետին՝ որպես խորհրդատու, փորձաքննությանը ներգրավելու հնարավորություն:

03 Զորակոչային և ռազմաբժշկական հանձնաժողովները (ԶԲՀ, ԿԲՀ, ԿՊՌԲՀ) զորակոչիկների առողջական խնդիրները հետազոտում կամ փորձաքննում են բոլորի ներկայությամբ, այսինքն՝ այլ զորակոչիկների կամ այլ անձանց ներկայությամբ, ինչը բժշկական գաղտնիքի տեսանկյունից խնդրահարույց է:

04 Գործող կարգավորումներով զորակոչից խուսափելու համար քրեական հետապնդման մեջ գտնվող անձանց՝ քրեական վարույթի շրջանակներում իրականացված դատաբժշկական փորձաքննության արդյունքները (եզրակացությունները) զորակոչիկների փորձաքննությունն իրականացնելիս (օրինակ, ԿԲՀ-ի կողմից) հաշվի չեն առնվում, և զորակոչիկների փորձաքննություններն իրականացվում են ընդհանուր հիմունքներով:

05 Փորձը ցույց է տալիս, որ զորակոչերի ընթացքում երբեմն հաշվի չեն առնվում առաջնային փորձաքննությունից էականորեն տարբերվող և զորակոչիկների սեփական միջոցներով իրականացված հետազոտությունների արդյունքները:

06 Շարունակվում են արձանագրվել դեպքեր, երբ զորակոչիկները լրացուցիչ հետազոտության են ուղեգրվում այն բժշկական հաստատություն, որի հետ կապված բողոք են ներկայացրել:

07 Մեկ այլ խնդիր է այն, որ զինկոմիսարիատի ուղեգրով զորակոչիկն անցնում է կոնկրետ հետազոտություն, զորակոչիկի մոտ հետազոտությամբ հաստատվում է հիվանդության առկայությունը, արդյունքում, Կենտրոնական բժշկական հանձնաժողովը հետազոտության հիման վրա կարող է կայացնել պիտանիության վերաբերյալ կոնկրետ եզրակացություն: Մինչդեռ, շարունակվում են արձանագրվել դեպքեր, երբ Կենտրոնական բժշկական հանձնաժողովը զորակոչիկին ուղեգրում է նույն հիվանդության կապակցությամբ կրկնակի կամ եռակի հետազոտությունների:

Այսպես.

1) Օրենսդրությամբ կանոնակարգված չէ Կենտրոնական բժշկական հանձնաժողովի օրական փորձաքննությունների առավելագույն թույլատրելի քանակը. Փորձաքննությունների մեծաքանակ հոսքը վտանգում է դրանց որակը և առաջացնում զորակոչիկների առողջական վիճակի վատթարացման ռիսկեր: 2025թ. արձանագրված ահազանգերը փաստում են, որ տևական հերթերը բարդություններ են ստեղծում թե՛ զորակոչիկների, թե՛ բժիշկների համար: Խնդրի լուծման նպատակով անհրաժեշտ է ներդնել հստակ կառուցակարգեր, որոնք կկանոնակարգեն օրական հոսքերը և կբացառեն հերթերից բխող բացասական հետևանքները:

2) Փորձաքննությանը զորակոչիկի նախընտրած մասնագետի ներգրավման հնարավորության բացակայություն. Գործող կարգավորումներով քաղաքացին չի կարող փորձաքննությանը ներգրավել իր վստահելի բժշկին՝ որպես խորհրդատու: Այս հնարավորության ընձեռումը կբարձրացնի զորակոչիկի իրազեկվածությունն ու վստահությունը հանձնաժողովի որոշումների օբյեկտիվության նկատմամբ՝ թույլ տալով ավելի արդյունավետ բարձրացնել փորձաքննության հետ կապված խնդրահարույց հարցերն ու մտահոգությունները:

3) Դատաբժշկական փորձաքննության արդյունքների անտեսում. Գործող կարգավորումներով քրեական վարույթի շրջանակում կատարված դատաբժշկական փորձաքննության եզրակացությունը զորակոչի գործընթացում հաշվի չի առնվում: Սա հանգեցնում է պետական միջոցների կրկնակի ծախսի և զորակոչիկի առողջությանը հասցվող վնասի (օրինակ՝ կրկնակի ռենտգեն հետազոտությունների պատճառով): Գործնականում արձանագրվել են դեպքեր, երբ դատաբժշկական փորձաքննությունը հերքել է ԿԲՀ-ի եզրակացությունը՝ հաստատելով անձի զինծառայության հետ անհամատեղելի առողջական խնդիրները:

Սույն տարեկան հաղորդման նախապատրաստման շրջանակներում Մարդու իրավունքների պաշտպանը պաշտոնական հարցմամբ դիմել է ՀՀ քննչական կոմիտե՝ պարզելու, թե 2025թ. զինվորական ծառայությունից խուսափելու փաստերով

նախաձեռնված քրեական վարույթներում քանի՞ անձ է դատաբժշկական փորձաքննությամբ ճանաչվել ծառայության համար ոչ պիտանի կամ ժամանակավորապես ոչ պիտանի: Ըստ Քննչական կոմիտեի տվյալների՝ 2025 թվականի ընթացքում պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայությունից խուսափելու հանցակազմի հատկանիշներով նախաձեռնված քրեական վարույթների շրջանակներում իրականացված դատաբժշկական-ռազմաբժշկական փորձաքննությունների եզրակացությամբ 135 մեղադրյալ զինվորական ծառայության համար ճանաչվել է ոչ պիտանի՝ հաշվառվելով պահեստազոր, 10 մեղադրյալ՝ որպես բուժման կարիք ունեցող, իսկ 134 մեղադրյալ՝ ժամանակավորապես ոչ պիտանի:

Վերոնշյալ տվյալները մտահոգիչ են այն առումով, որ քրեական վարույթների շրջանակում իրականացված դատաբժշկական-ռազմաբժշկական փորձաքննությունների արդյունքում մեծ թվով մեղադրյալներ ճանաչվել են զինվորական ծառայության համար ոչ պիտանի կամ ժամանակավորապես ոչ պիտանի: Այս հանգամանքը, ինչպես նաև Պաշտպանի աշխատակազմ ստացված բողոքների արդյունքում իրականացված արձանագրումները վկայում են, որ զորակոչի շրջանակում, այդ թվում՝ Կենտրոնական բժշկական հանձնաժողովի կողմից իրականացվող հետազոտություններն ու քրեական վարույթներով նշանակված փորձաքննությունները և դրանց արդյունքում կազմված եզրակացություններն առանձին դեպքերում չեն համապատասխանում միմյանց և ունեն էական տարբերություններ:

4) Սեփական նախաձեռնությամբ կատարված հետազոտությունների անտեսում. Զորակոչի գործընթացում նկատվում են դեպքեր, երբ զորակոչիկների սեփական նախաձեռնությամբ կատարված հետազոտությունների արդյունքները էականորեն տարբերվում են նախնական հետազոտության տվյալներից: Նման իրավիճակներում ԿԲՀ-ն հաճախ հիմք է ընդունում հիվանդության առավել մեղմ աստիճան արձանագրած եզրակացությունը, ինչը ցույց է տալիս տարբերվող բժշկական տվյալների համադրման և օբյեկտիվ գնահատման հստակ կառուցակարգերի անհրաժեշտությունը:

2025 թվականի ընթացքում Կենտրոնական բժշկական հանձնաժողովի կայացրած թվով 154 եզրակացություն բողոքարկվել է ՀՀ պաշտպանության նախարարին, որոնցից թվով 65 դիմումների վերաբերյալ նշանակվել է լրացուցիչ քննություն, արդյունքում՝ թվով 19 եզրակացություն փոխվել է:



5) Բողոքարկված ախտորոշմամբ նույն հաստատությունում կրկնակի հետազոտվելու խնդիրը. Դեռևս արձանագրվում են դեպքեր, երբ զորակոչիկներն ուղեգրվում են կրկնակի հետազոտության այն նույն բժշկական հաստատություններ, որոնց տրված ախտորոշումները բողոքարկվել են: Նման իրավիճակներում առկա է կանխակալ մոտեցման ռիսկ, քանի որ հաստատությունը կարող է կաշկանդված լինել իր նախկին եզրակացությամբ, ինչն իր հերթին նվազեցնում է զորակոչիկի վստահությունը հետազոտության օբյեկտիվության նկատմամբ:

6) Նույնաբնույթ կրկնակի հետազոտությունների իրականացում. Արձանագրվում են դեպքեր, երբ զինկոմիսարիատի ուղեգրով հաստատված ախտորոշման առկայությամբ հանդերձ՝ ԿԲՀ-ն զորակոչիկին ուղեգրում է նույն հիվանդության գծով կրկնակի կամ եռակի հետազոտությունների: Սա հանգեցնում է պետական միջոցների հավելյալ ծախսի և քաղաքացու համար անհարկի բժշկական ծանրաբեռնվածության:

Բարձրաձայնված ոլորտային խնդիրների հիման վրա Պաշտպանը ներկայացնում է նաև դրանց լուծմանն ուղղված կոնկրետ առաջարկներ:

Զինվորական ծառայության ընթացքում քաղաքացիների առողջությունը վտանգի չենթարկելը պետության պարտականությունն է, ինչի նպատակով պետք է շարունակաբար կատարելագործվեն օրենսդրական կառուցակարգերը, այդ թվում՝ բժշկական փորձաքննությամբ քաղաքացիների առողջական վիճակի ստուգման չափանիշները:

Այս առումով առանցքային է զինվորական ծառայության պիտանիության աստիճանը որոշող հիվանդությունների ցանկի շարունակական կատարելագործումը:

2024 թվականի նոյեմբերին Պաշտպանի կարծիքին են ներկայացվել ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 404-Ն (հիվանդությունների ցանկ) և թիվ 405-Ն (հետազոտման ու փորձաքննության կարգ) որոշումներում փոփոխություններ և լրացումներ նախատեսող նախագծերը[52]:

Սույն տարեկան հաղորդման շրջանակում Պաշտպանն անհրաժեշտ է համարում առանձնահատուկ անդրադառնալ հիշյալ նախագծերին և դրանց վերաբերյալ ներկայացված դիտարկումներին: Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ առաջարկվող փոփոխություններն ու լրացումներն առանցքային ազդեցություն են ունեցել 2024 թվականի ձմեռային զորակոչի ընթացքում քաղաքացիների պիտանիության որոշման գործընթացի և արդյունքների վրա:

Հատկանշական է, որ հիշյալ փոփոխություններն ու լրացումները կատարվել են հենց 2024 թվականի ձմեռային զորակոչի ընթացքում՝ 2024 թվականի դեկտեմբերի 19-ին:Նախագծերի հիմքում դրվել է փորձաքննական չափանիշների վերանայման և որոշակի առողջական խնդիրներ ունեցող քաղաքացիներին բուժման նպատակով տրվող տարկետումների սահմանափակման տրամաբանությունը: Ըստ նախագծերի հիմնավորման՝ նոր կարգավորումները նպատակաուղղված են բուժման հիմքով տրվող տարկետումների քանակի նվազեցմանը՝ նախատեսելով անհրաժեշտ բուժօգնության իրականացումը զինծառայողի կարգավիճակով: Նշված փոփոխությունների արդյունքում բազմաթիվ զորակոչիկներ, որոնք նախկինում նույն առողջական խնդիրների պատճառով ճանաչվել էին ոչ պիտանի, նոր չափանիշներով որակվել են պիտանի կամ սահմանափակումով պիտանի՝ ենթակա լինելով զորակոչման: Այս գործընթացի և դրա իրավական հետևանքների վերաբերյալ Պաշտպանի աշխատակազմում ստացվել են բազմաթիվ բողոքներ:

[52] Նախագծին և դրա վերաբերյալ Պաշտպանի դիրքորոշումներին կարելի է մանրամասն ծանոթանալ https://www.e-gov.am/sessions/archive/2024/12/19/ հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

Մարդու իրավունքների պաշտպանի նկատառումները ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 404-Ն և 405-Ն որոշումների նախագծերի վերաբերյալ[53].

Բուժման նպատակով տրվող տարկետումը պետք է երաշխավորի զինված ուժերում բացառապես առողջ կամ ծառայությանը պիտանի անձանց ներգրավումը՝ բացառելով առողջական խնդիրների և ծառայության անհամատեղելիությունը: Միաժամանակ, նման կարգավորումները պահանջում են զինված ուժերի բժշկական ենթակառուցվածքների հնարավորությունների լիարժեք գնահատում՝ անձի՝ Սահմանադրության 85-րդ հոդվածով երաշխավորված առողջության պահպանման իրավունքը չխաթարելու համար:

Մոնոնուկլեոզի սուր փուլում չգտնվող, սակայն հիվանդացած զորակոչիկների անհապաղ զորակոչը խնդրահարույց է թե՛ տվյալ անձի, թե՛ մյուս զինծառայողների առողջության պահպանման տեսանկյունից՝ հաշվի առնելով հիվանդության վարակիչ բնույթը: Առանց հիվանդության ընթացքի և տևականության նախնական դիտարկման պիտանիության որոշում կայացնելը մեծացնում է ծառայության ընթացքում սուր փուլի դրսևորման և ծառայողական պարտականությունների պատշաճ կատարման անհնարինության ռիսկը:

Նախատեսվող կարգավորմամբ չափավոր գինեկոմաստիա ունեցող զորակոչիկները, անկախ հորմոնալ խանգարումների առկայությունից, ճանաչվելու են սահմանափակումով պիտանի և ենթակա են զորակոչման: Սակայն Պաշտպանի դիրքորոշմամբ՝ նախագծում հիմնավորված չէ այս փոփոխության իրավաչափ նպատակը և գնահատված չեն հորմոնալ խանգարումների հնարավոր բացասական ազդեցությունները զինվորական ծառայության պատշաճ իրականացման վրա:

Նախագծով առաջարկվող կարգավորումը, ըստ որի՝ բացասական դինամիկայի բացակայության դեպքում տարկետում ստացած անձինք ճանաչվում են պիտանի, խնդրահարույց է հատկապես բարդ հիվանդությունների (սիրտ-անոթային, իմունային և այլն) պարագայում: Պաշտպանի գնահատմամբ՝ անհասկանալի է այն իրավաչափ նպատակը, որով զորակոչվում է անձը, ում առողջական վիճակը բուժման արդյունքում չի բարելավվել կամ դրական դինամիկա չի արձանագրվել: Բացի այդ, հիմնավորված չէ, թե արդյո՞ք զինված ուժերում առկա են ծառայության այնպիսի հարմարեցված պայմաններ, որոնք կբացառեն նման խնդիրներով զինծառայողների առողջական վիճակի հետագա վատթարացումն ու անկանխատեսելի հետևանքները:

Նախագծով առաջարկվում է վերացնել որոշակի առողջական խնդիրներ (օրինակ՝ լիմֆեդեմա, զարկերակների ֆունկցիոնալ հիվանդություններ) ունեցող անձանց առաջնագծում, մարտական հերթապահության և խոնավ ու ցուրտ պայմաններում ծառայելու սահմանափակումները: Պաշտպանի դիրքորոշմամբ՝ նախագծի հիմնավորումներում բացահայտված չէ այս փոփոխության նպատակը, և պարզ չէ, թե արդյո՞ք գնահատվել են նշված առողջական խնդիրներն ունեցող զինծառայողներին նման ծանր պայմաններում ներգրավելու հետ կապված ռիսկերը:

[53] Առավել մանրամասն տե՛ս 2024 թվականին Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների պաշտպանության վիճակի մասին հաղորդումը, էջեր 101-102, հասանելի է https://www.ombuds.am/images/files/4d1335361f1f7e9fbcc1cfc10679701e.pdf հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

Հարկ է ընդգծել, որ Պաշտպանին հասցեագրվող բողոքների զգալի մասն առնչվում է զինծառայողների առողջական խնդիրներին, ինչպես նաև պատշաճ բժշկական հետազոտություններին և բուժման կազմակերպմանը: Ուսումնասիրությունները փաստում են, որ ռազմաբժշկական համակարգը գործում է խիստ ծանրաբեռնվածության պայմաններում, ինչը հանգեցնում է բժշկական արձագանքման ձգձգումների: Դրանք հիմնականում պայմանավորված են բժշկական անձնակազմի կամ սարքավորումների անբավարարությամբ, ինչի հետևանքով առողջական խնդիրներ ունեցող զինծառայողը շարունակում է ծառայությունը՝ առանց անհրաժեշտ բժշկական միջամտության: Նշված իրավական կարգավորումները հանգեցնելու են Զինված ուժերում առողջական խնդիրներ ունեցող անձանց թվաքանակի աճի, ինչն իր հերթին առաջացնելու է լրացուցիչ խնդիրներ զորամասերում ծառայության կազմակերպման և կարգապահության պատշաճ մակարդակի ապահովման հարցերում: Սա նաև մեծացնելու է ռազմաբժշկական համակարգի ծանրաբեռնվածությունը՝ ուղղակիորեն ազդելով բժշկական օգնության որակի և զինծառայողների առողջության պահպանման իրավունքի իրացման վրա: Բացի այդ, նման մոտեցումը պետության համար կհանգեցնի հավելյալ ֆինանսական և կազմակերպչական ծախսերի:

Ի պատասխան բարձրացված մտահոգությունների՝ Պաշտպանության նախարարությունը տեղեկացրել էր, որ ներկայում իրականացվում են բժշկական սպասարկման և փորձաքննությունների գործընթացի ամբողջական թվայնացման աշխատանքներ, ինչը նախատեսվում է, որ դրական ազդեցություն կունենա զինվորական ծառայության պատշաճ կազմակերպման վրա:

2025 թվականին ևս փոփոխություններ և լրացումներ են կատարվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 404-Ն որոշման մեջ, որոնց համաձայն՝ հիվանդությունների ցանկը համալրվել է նախկինում չներառված ախտաբանական վիճակներով (մասնավորապես՝ գլխուղեղի և ողնուղեղի վենոզ անգեոմաներով), ինչպես նաև հստակեցվել են այն հիվանդությունները, որոնք կլինիկական դրսևորումներ չունենալու, գործառույթների խանգարման չհանգեցնելու կամ բուժում չպահանջելու դեպքում (օրինակ՝ վահանաձև գեղձի թերֆունկցիայի բարենպաստ դեպքեր, արյան համակարգի ժառանգական բարենպաստ հիվանդություններ՝ ալֆա/բետա թալեսիմիաներ, սրտի զարգացման փոքր անոմալիաներ, ողերի մարմինների հեմանգիոմաներ կամ կիստաներ, ստոծանու ճողվածքների վիրահատությունից հրաժարում) այլևս հիմք չեն հանդիսանա անպիտանության համար՝ նպատակ ունենալով կրճատել բուժման նպատակով տրվող տարկետումների քանակը և բացառել պետական միջոցների անհարկի վատնումը[54]:

Զորակոչիկների և զինծառայողների առողջական վիճակի գնահատման, բժշկական հետազոտությունների ու փորձաքննությունների հետ կապված հարցերը Պաշտպանի աշխատակազմում դիտարկվել են նաև միջազգային իրավական չափորոշիչների համատեքստում:

Այսպես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (ՄԻԵԴ), անդրադառնալով զորակոչիկների առողջության և պիտանիության չափանիշներին, «Կայանկինն ընդդեմ Ռուսաստանի» գործով արտահայտել է հետևյալ դիրքորոշումը. *«թեև պետությունն է որոշում զորակոչիկների առողջության և պիտանիության չափանիշները, այնուամենայնիվ զորակոչիկները պետք է ֆիզիկապես և հոգեպես պատրաստ լինեն զինվորական ծառայության առանձնահատկություններով պայմանավորված*

[54] Տեղեկատվությունը հասանելի է https://www.e-draft.am/projects/8704 հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

փոփոխությունների մարտահրավերներին: Նրանք պետք է պատրաստ լինեն նաև զինված ուժերի անդամներին բնորոշ պարտականության ու պատասխանատվության բարձրացմանը: Զինվորական ծառայության պահանջները նկատի ունենալով՝ պետությունները պետք է միջոցներ ձեռնարկեն ներդնելու զորակոչիկի փաստացի առողջական վիճակը բժշկական փորձաքննությամբ ստուգելու չափանիշներ, որպեսզի նրանց առողջությունը զինվորական ծառայության ընթացքում վտանգի չենթարկվի»[55]:

Չեմբերն ընդդեմ Ռուսաստանի գործով դատարանն արձանագրել է, որ պետությունը պարտավոր է ապահովել, որպեսզի անձը զինվորական ծառայությունն անցնի այնպիսի պայմաններում, որոնք համատեղելի են նրա մարդկային արժանապատվությունը հարգելու հետ, իսկ զինվորական վարժանքների ընթացակարգը և մեթոդները չպատճառեն նրան ֆիզիկական տառապանք կամ չանցնեն զինվորական կարգուկանոնի հետ կապված անխուսափելի դժվարությունների չափն ու սահմանը, և որ նման ծառայության պրակտիկ պահանջների հետ մեկտեղ զինծառայողի առողջությունը և ինքնազգացողությունը համարժեքորեն պաշտպանված լինեն: Պետության առաջնային պարտականությունն է անձին զինվորական ծառայության զորակոչելու դեպքում նվազագույնի հասցնել նրա առողջությանը սպառնացող ռիսկը, որը կարող է առաջանալ ոչ միայն զինվորական գործողությունների և օպերացիաների բնույթից, այլ նաև մարդկային գործոնի պատճառով[56]:

Մեկ այլ գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է, որ պետությունը պետք է գործնական միջոցներ ձեռնարկի զորակոչիկների արդյունավետ պաշտպանությունն ապահովելու ուղղությամբ՝ նվազագույնի հասցնելով նրանց առողջությանը սպառնացող ռիսկը՝ ի թիվս այլնի տրամադրելով նաև պահանջվող բժշկական օգնություն[57]: Բժշկական հանձնաժողովներն իրենց գործունեությունը պետք է կազմակերպեն այնպես, որպեսզի պարտադիր զինվորական ծառայության համար առողջական խնդիրների պատճառով ոչ պիտանի անձինք չզորակոչվեն զինվորական ծառայության[58]:

Հաշվի առնելով արձանագրված խնդիրները՝ առաջարկվում է՝

- ✓ ***մշակել կառուցակարգեր՝ օրական փորձաքննվողների առավելագույն թվաքանակը սահմանելու համար,***
- ✓ ***կառավարության թիվ 405-Ն որոշմամբ հնարավորություն ընձեռել զորակոչիկին՝ հանձնաժողովի նիստերին ներգրավելու իր նախընտրած բժիշկ-խորհրդատուին,***
- ✓ ***փորձաքննություններն ու հետազոտություններն իրականացնել այլ անձանց տեսալսողական տիրույթից դուրս՝ ապահովելով անձնական տվյալների գաղտնիությունը,***
- ✓ ***դիտարկել քրեական վարույթներով իրականացված դատաբժշկական փորձաքննությունների արդյունքները զորակոչի գործընթացում հիմք ընդունելու հնարավորությունը,***

---

[55] Տե՛ս Կայանկինն ընդդեմ Ռուսաստանի (Kayankin v. Russia) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2010 թվականի փետրվարի 11-ի վճիռը, գանգատ թիվ 24427/02, կետ 87:

[56] Տե՛ս Չեմբերն ընդդեմ Ռուսաստանի (CHEMBER v. RUSSIA) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2008 թվականի հուլիսի 3-ի վճիռը, գանգատ թիվ 7188/03, 50-րդ և 52-րդ կետեր:

[57] Տե՛ս Քիլինջը և այլք ընդդեմ Թուրքիայի (Kilinç and thers v. Turkey) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2005 թվականի հունիսի 7-ի վճիռը, գանգատ թիվ 40145/98, կետեր 41-42:

[58] Տե՛ս Կայանկինն ընդդեմ Ռուսաստանի (Kayankin v. Russia) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2010 թվականի փետրվարի 11-ի վճիռը, գանգատ թիվ 24427/02, կետ 87:

✓ ***լրացուցիչ հետազոտություն նշանակել այն դեպքերում, երբ զորակոչիկի սեփական միջոցներով արված ախտորոշումները էականորեն տարբերվում է նախնական տվյալներից,***

✓ ***բողոքարկման դեպքում զորակոչիկին ուղեգրել այլընտրանքային բժշկական հաստատություն՝ բացառելով կրկնակի հետազոտությունը նույն հիմնարկում,***

✓ ***բավարար տվյալների առկայության դեպքում կայացնել վերջնական եզրակացություն՝ զերծ մնալով զորակոչիկին նույնաբովանդակ և անընդհատ կրկնվող հետազոտությունների ուղեգրելուց:***

3. Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում ստանալու իրավունքը

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքը նախատեսում է ընտանեկան պայմաններից ելնելով տարկետում ստանալու իրավունք:
2025 թվականի ընթացքում Պաշտպանը քաղաքացիներից շարունակել է ստանալ բողոքներ՝ ընտանեկան պայմաններից ելնելով զորակոչից տարկետում տրամադրելու վերաբերյալ: Բողոքների ուսումնասիրությունը փաստում է, որ Պաշտպանի կողմից բարձրացված մի շարք խնդիրներ, այդ թվում՝ օրենսդրական կարգավորում պահանջող, դեռևս մնում են չլուծված: Այսպես, նախկինում գործող «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի համաձայն (հոդվածն ուժը կորցրել է 2017 թվականի նոյեմբերի 15-ին)՝ ընտանեկան դրության բերումով տարկետում էր տրամադրվում այն զորակոչիկին, ով ուներ 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող կին: Մինչդեռ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» գործող օրենքով տարկետման նշված հիմքը չի նախատեսվել:

Այս կապակցությամբ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ընտանեկան պայմաններից ելնելով տարկետումն ուղղված է առաջին հերթին ոչ թե զորակոչիկի, այլ խնամքի կարիք ունեցող ընտանիքի անդամների իրավունքների ապահովմանը: Ուստի, տվյալ պարագայում տարկետման տրամադրումը կարող է հետապնդել ֆունկցիոնալության խորը կամ ծանր աստիճանի սահմանափակումով (հաշմանդամություն ունեցող) կնոջն առանց խնամքի չթողնելու իրավաչափ նպատակ:

Պաշտպանի նշված առաջարկի վերաբերյալ Պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ առարկություններ չունի օրենսդրական համապատասխան փոփոխություններ կատարելու հարցում, որոնք նպատակ ունեն ընտանեկան պայմաններից ելնելով տարկետում տրամադրել այն զորակոչիկներին, որոնց կինն ունի ֆունկցիոնալության խորը կամ ծանր աստիճանի սահմանափակում (հաշմանդամություն):
Տարկետման իրավունքի իրացման ոլորտում Պաշտպանի կողմից նախկինում բարձրացված խնդիրներից մեկը դեռևս մնում է արդիական: Մասնավորապես՝ առաջարկվել էր 6-ամսյա տարկետում տրամադրել այն զորակոչիկներին, որոնց ընտանիքի անդամը մահացել է հենց զորակոչի ընթացքում: Չնայած այս հարցի կարգավորման նպատակով ներկայացվել էր օրենսդրական լրացումների նախագիծ[59] (պատգամավորական նախաձեռնության շրջանակում), այնուամենայնիվ, նախագիծն այդպես էլ չի ընդունվել:

Ընտանիքի անդամի մահվան հիմքով տարկետման տրամադրումն օրենսդրորեն ամրագրելը կարևոր է նախևառաջ հոգեբանական տեսանկյունից: Հարազատի կորուստն

[59] Տեղեկատվությունը հասանելի է http://www.parliament.am/draft_docs7/P-461_teghekanq.pdf հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

անձին դնում է ծանր հոգեկան ապրումների և ճնշվածության մեջ, ինչը կարող է լրջորեն խաթարել քաղաքացիական կյանքից զինվորական միջավայրին անցնելու գործընթացը: Նման հոգեվիճակում զորակոչվելը խնդիրներ է հարուցում ոչ միայն նոր պայմաններին հարմարվելու, այլև զինվորական ծառայության մեջ լիարժեք ներգրավվելու հարցում:
Այս առաջարկի վերաբերյալ Պաշտպանության նախարարությունը պարզաբանել է, որ զորակոչի նախապատրաստական փուլում բոլոր քաղաքացիներն անցնում են պարտադիր բժշկական փորձաքննություն, իսկ զինկոմիսարիատներն իրականացնում են նրանց ընտանեկան պայմանների ուսումնասիրություն: Ըստ այդմ՝ ընտանիքի անդամի մահվան հետևանքով առաջացած հոգեկան ճնշվածության կամ այլ խնդիրների դեպքում, զորակոչիկները կարող են ստանալ կարճաժամկետ տարկետում հենց առողջական վիճակի հիմքով՝ համապատասխան հետազոտությունների արդյունքում: Բացի այդ, նշվել է, որ անհրաժեշտության դեպքում նման զորակոչիկների տարկետման հարցը կարող է դիտարկվել նաև «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ մասի շրջանակներում:

Պաշտպանության նախարարության դիրքորոշման առնչությամբ հարկ է նշել, որ ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 404-Ն որոշմամբ հստակ սահմանված են այն առողջական խնդիրները, որոնց առկայության պարագայում անձը կարող է չզորակոչվել (ստանալ տարկետում): Սակայն այդ որոշումը ոչ բոլոր դեպքերում է թույլ տալիս տարկետում տրամադրել հոգեկան կամ վարքային խանգարումների ու հոգեբանական առանձնահատկությունների հիմքով. դա բացառապես կախված է զորակոչիկի առողջական վիճակի ծանրությունից: Ընտանիքի անդամի մահվան պարագայում չենք կարող միանշանակ պնդել, թե անձը ձեռք է բերել այնպիսի հոգեկան խնդիրներ, որոնք կբավարարեն նշված որոշման պահանջներին: Ավելին՝ մեծ է հավանականությունը, որ ԿԲՀ-ն նման զորակոչիկին կճանաչի պիտանի կամ սահմանափակումով պիտանի ծառայության համար: Հետևաբար, անհրաժեշտ է սահմանել հստակ օրենսդրական հիմք, որը թույլ կտա զորակոչի ընթացքում հարազատի կորուստ ունեցած քաղաքացուն տարկետում տրամադրել:

Սույն տարեկան հաղորդման կազմման աշխատանքների շրջանակում Պաշտպանը հարցադրում է ուղարկել Պաշտպանության նախարարություն այն մասին, թե «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված և Պաշտպանության նախարարի հրամանով զորակոչից ընտանեկան պայմաններից ելնելով տարկետում ստանալու նպատակով քանի՞ դիմում է ստացվել, տարկետում տրամադրելու նպատակով ի՞նչ չափանիշներ են հաշվի առնվել, քանի՞ զորակոչիկի է նշված հիմքով տրամադրվել տարկետում:

Նշվածի կապակցությամբ Պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ 2025 թվականի ընթացքում «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հիմքերով տարկետում ստանալու վերաբերյալ ստացվել է 28 դիմում, որոնց բոլորին ՀՀ պաշտպանության նախարարի համապատասխան հրամաններով պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տրվել է տարկետում: Տարկետումների տրամադրման համար հաշվի են առնվել զորակոչիկների ընտանեկան պայմանները:

Հաջորդ խնդրահարույց հարցը վերաբերում է այն զինապարտների տարկետման իրավունքին, որոնք մի շարք հիվանդությունների պատճառով ճանաչվել են զինվորական ծառայության համար սահմանափակումով պիտանի:

ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 405-Ն որոշման 57-րդ կետի համաձայն՝ այն զորակոչիկները, որոնք հայտարարված զորակոչի ընթացքում

հետազոտությունների արդյունքում ճանաչվում են սահմանափակումով պիտանի զինվորական ծառայությանը սահմանափակումներ նախատեսող հինգ և ավելի հոդվածներով, ճանաչվում են բուժման կարիք ունեցող, և նրանց տրվում է տարկետում մեկ անգամ մինչև մեկ տարի ժամկետով՝ բուժման և/կամ դիտարկման նպատակով: Տարկետման ավարտից հետո առողջական նույն վիճակի պահպանման պարագայում, զորակոչիկները ճանաչվում են պիտանի զինվորական ծառայությանը սահմանափակումով՝ ծառայության հեշտացված օրվա կարգացուցակով:

Ստացվում է, որ գործող կարգավորումների հետևանքով բժշկական հանձնաժողովները **զորակոչիկների առողջական խնդիրները դիտարկում են առանձին-առանձին՝ առանց գնահատելու հիվանդությունների համակցված ազդեցությունը:** Արդյունքում, զորակոչիկները ճանաչվում են զինվորական ծառայության համար սահմանափակումով պիտանի: Այսպես, եթե զորակոչիկն ունի ծառայության համար սահմանափակում նախատեսող 5 և ավելի հիվանդություն (այսուհետ՝ «քանակական փունջ»), ապա ստանում է տարկետում: Այսինքն՝ գործող կարգը հիմնվում է հիվանդությունների քանակական նվազագույն պահանջի վրա՝ անտեսելով դրանց համատեղ ազդեցությունը մարդու առողջության վրա: Մինչդեռ, խիստ կարևոր է նաև հիվանդությունների «որակական փնջի» ներդրումը: Գործնականում առկա դեպքերը ցույց են տալիս, որ նույնիսկ 5-ից պակաս հիվանդությունների համակցությունը կարող է առավել վտանգավոր լինել առողջության համար: Հետևաբար, «քանակական փնջի» հետ միասին անհրաժեշտ է սահմանել «որակական փունջ», ինչպես նաև ներդնել զորակոչիկի առողջական վիճակի համակարգված գնահատման կառուցակարգ:

Այս հարցը տարիներ շարունակ բարձրաձայնվել է Պաշտպանի կողմից ինչպես տարեկան հաղորդումներում, այնպես էլ ԶՈՒ իրավասու ստորաբաժանումների հետ քննարկումների ընթացքում: Հասկանալի է, որ առաջարկի իրացումը ենթադրում է որոշակի բարդություններ և առողջական վիճակի գնահատման որակական չափանիշների ու հատուկ մեխանիզմների սահմանման անհրաժեշտություն: Սակայն, հաշվի առնելով, որ խնդիրը վերաբերում է զորակոչիկների պատշաճ փորձաքննությանը և զինծառայողների առողջության պահպանման առումով պետության պոզիտիվ պարտականությանը՝ իրավասու գերատեսչությունները պարտավոր են սահմանել գնահատման այնպիսի մեխանիզմներ, որոնք թույլ կտան պարզել՝ արդյո՞ք առողջական խնդիրների որակական համակցությունը թույլ է տալիս պատշաճ իրականացնել զինվորական ծառայությունը՝ առանց առողջական վիճակի վատթարացման ռիսկի:

Թեև պետությունն է սահմանում առողջական վիճակի և պիտանիության չափանիշները, սակայն զորակոչիկները պետք է ֆիզիկապես և հոգեպես պատրաստ լինեն զինվորական ծառայության առանձնահատկություններով պայմանավորված դժվարություններին: Առանցքային է ի սկզբանե զորակոչել առողջ քաղաքացիների, իսկ առողջական որոշակի խնդիրների դեպքում՝ երաշխավորել, որ դրանք համատեղելի լինեն ծառայության հետ և զինծառայողի համար չդառնան անհամաչափ ծանր բեռ:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ առաջարկվում է՝

- ✓ ***«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում նախատեսել կարգավորում, ըստ որի՝ ֆունկցիոնալության խորը և ծանր աստիճանի սահմանափակումով հաշմանդամություն ունեցող կին ունենալու դեպքում զորակոչիկներին (համատեղ բնակության պարագայում) տրամադրվում է տարկետում,***

- ✓ *օրենսդրորեն սահմանել, որ հայտարարված զորակոչի ընթացքում ընտանիքի անդամի (հայր, մայր, եղբայր, քույր, պապ, տատ) մահվան դեպքում զորակոչի ենթակա քաղաքացուն տրամադրվում է տարկետում՝ մինչև հաջորդ զորակոչ,*
- ✓ *առողջական վիճակի գնահատման գործող «քանակական փնջի» հետ մեկտեղ ներդնել «հիվանդությունների որակական փունջ» և սահմանել զորակոչիկի կամ զինծառայողի առողջական վիճակի համակարգված գնահատման հստակ կառուցակարգ:*

4. Քաղաքացիների իրավունքների պաշտպանությունն այլընտրանքային ծառայության կազմակերպման և իրականացման գործընթացում

Եվրոպայի խորհրդի (ԵԽ) շրջանակներում դավանանքի կամ համոզմունքների հիմքով զինվորական ծառայությունից հրաժարվելու և այն այլընտրանքային տարբերակով փոխարինելու իրավունքը դիտարկվում է որպես մարդու հիմնարար ազատությունների անբաժանելի մաս: Ներկայում ԵԽ անդամ գրեթե բոլոր պետություններում գործում են այլընտրանքային ծառայության կայացած համակարգեր, որոնք համապատասխանում են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին: Հայաստանի Հանրապետությունը, ստանձնած միջազգային պարտավորություններին համահունչ, դեռևս 2003 թվականին օրենսդրորեն նախատեսեց այլընտրանքային ծառայության հնարավորությունը: Այնուամենայնիվ, ոլորտի իրական բարեփոխումը և միջազգային չափանիշներին լիարժեք համապատասխանեցումը տեղի ունեցավ 2013 թվականի արդյունավետ օրենսդրական փոփոխությունների շնորհիվ[60]:

Այլընտրանքային ծառայության իրավունքի իրացման սահմանադրական հիմքն ամրագրված է ՀՀ Սահմանադրության 41-րդ հոդվածի 3-րդ մասով, համաձայն որի՝ յուրաքանչյուր քաղաքացի, որի կրոնական դավանանքին կամ համոզմունքներին հակասում է զինվորական ծառայությունը, ունի օրենքով սահմանված կարգով այն այլընտրանքային ծառայությամբ փոխարինելու իրավունք: «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված է պարտադիր զինվորական ծառայությանը փոխարինող երկու հիմնական տեսակ, որոնք բացառում են զենքի հետ առնչությունը.

ա) այլընտրանքային զինվորական ծառայություն (30 ամիս). Իրականացվում է ՀՀ զինված ուժերում և նախատեսված է այն քաղաքացիների համար, որոնց համոզմունքներին հակասում է բացառապես զենք կրելը, պահելը կամ օգտագործելը: Այս դեպքում ծառայությունը չի զուգորդվում մարտական հերթապահությամբ:

բ) այլընտրանքային աշխատանքային ծառայություն (36 ամիս). Իրականացվում է ՀՀ զինված ուժերից դուրս՝ քաղաքացիական հիմնարկներում: Այս տեսակն ընտրելու իրավունք ունեն այն քաղաքացիները, որոնց համոզմունքներին սկզբունքորեն հակասում է որևէ տեսակի զինվորական ծառայություն անցնելը[61]:

2025 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմը շարունակել է այլընտրանքային ծառայության իրականացման գործընթացի հետևողական մշտադիտարկումը: Հաշվետու ժամանակահատվածում Պաշտպանին հասցեագրվել են գրավոր բողոքներ, իսկ Պաշտպանի «թեժ գիծ» հեռախոսահամարին ստացվել են զանգեր՝ ուղղված ոլորտի վերաբերյալ մասնագիտական խորհրդատվություն ստանալուն: Բացի անհատական դիմում-բողոքներից, ոլորտում առկա խնդրահարույց հարցերի վերաբերյալ

---

[60] Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային չափանիշների զարգացման համատեքստում առանցքային նշանակություն է ունեցել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի «Բայաթյանն ընդդեմ Հայաստանի» գործով կայացված որոշումը: Այս նախադեպով Դատարանն առաջին անգամ ամրագրեց, որ համոզմունքների հիմքով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքը հանդիսանում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 9-րդ հոդվածով երաշխավորված մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքի բաղկացուցիչ մաս: Վճիռը հիմնարար ազդեցություն ունեցավ Կոնվենցիայի անդամ պետությունների իրավակիրառ պրակտիկայի վրա՝ սահմանելով անհատական համոզմունքների նկատմամբ հարգանքի և պետական պարտավորությունների համադրման նոր իրավական չափորոշիչներ:

[61] «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքը հասանելի է https://www.arlis.am/documentview.aspx?docid=190398 հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

իրենց մտահոգություններն են հայտնել նաև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները: Ստացված բողոքների և բարձրացված մտահոգությունների համադրված վերլուծությունը թույլ է տալիս հիմնական խնդիրները դասակարգել հետևյալ առանցքային ուղղություններով.



1) Ոլորտային օրենսդրության կիրառման տարբերակված և հայեցողական պրակտիկան. Ստացված պնդումների համաձայն՝ առկա է մտահոգություն, որ ներպետական օրենսդրությունը կիրառվում է ոչ միատեսակ մոտեցմամբ և իրավական չափանիշների հաճախակի հայեցողական մեկնաբանմամբ: Մասնավորապես, եթե որոշ կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչների համար այլընտրանքային աշխատանքային ծառայության անցնելու հնարավորությունն ապահովվում է առանց էական խոչընդոտների, ապա այլ դավանանք կամ համոզմունքներ ունեցող քաղաքացիների համար ծառայության նշված տեսակը գործնականում մնում է անհասանելի: Նման խտրական մոտեցումը հակասում է ԵԽ Նախարարների կոմիտեի R (87) 8 հանձնարարականով սահմանված սկզբունքներին, որոնք պահանջում են անաչառություն և հավասար պայմանների ապահովում բոլոր դիմողների համար՝ անկախ նրանց դավանած հավատքի կամ համոզմունքների բնույթից[62]:

2) Այլընտրանքային ծառայության հարցերով հանրապետական հանձնաժողովի կազմի և գործունեության ընթացակարգերի խնդրահարույց լինելը. ըստ պնդումների՝ խնդրահարույց են հանձնաժողովի կազմավորման սկզբունքները, դիմումների քննարկման կարգը և տրվող եզրակացությունների հիմնավորվածությունը[63]:

3) Այլընտրանքային աշխատանքային ծառայության իրականացման ընթացքում ծագող խոչընդոտները. սկսած աշխատանքի բնույթից և առողջության պահպանման

[62] Տեղեկատվությունը հասանելի է https://www.refworld.org/legal/resolution/coeministers/1987/en/88968 հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

[63] «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ Հանրապետական հանձնաժողովը մշտապես գործող մարմին է և կազմված է տարածքային կառավարման, արդարադատության, առողջապահության, աշխատանքի և սոցիալական հարցերի, կրթության և գիտության, ոստիկանության ու պաշտպանության բնագավառներում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինների, ինչպես նաև վարչապետի աշխատակազմի՝ ազգային փոքրամասնությունների և կրոնի ոլորտները համակարգող ստորաբաժանման մեկական ներկայացուցիչներից:

իրավունքից, մինչև առողջական վիճակով պայմանավորված ծառայությունից վաղաժամկետ արձակման գործընթացը:

4) Ծառայողների սոցիալական երաշխիքների անհավասարությունը. այլընտրանքային ծառայությունը չի նախատեսում զինվորական ծառայությանը համահունչ իրավունքներ և արտոնություններ (այլընտրանքային աշխատանքային ծառայողների սոցիալական ապահովությունն իրականացվում է «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով, ինչը սահմանում է էապես ավելի պակաս արտոնություններ, քան զինծառայողների համար նախատեսված կարգավորումները):

5) Առողջական վիճակի փորձաքննության կարգավորումների անհամապատասխանությունը. ի տարբերություն մի շարք երկրների, որտեղ այլընտրանքային և զինվորական ծառայողների պիտանիության պահանջները նույնական են, ՀՀ-ում առկա է տարբերակված մոտեցում: Մասնավորապես, եթե մինչ ծառայության անցնելը բոլոր քաղաքացիները փորձաքննվում են միևնույն կարգով (ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 404-ն և 405- Ն որոշումներ), ապա ծառայության ընթացքում այլընտրանքային աշխատանքային ծառայողների պիտանիությունը նույն չափանիշներով չի վերանայվում: Նրանց համար նախատեսված չէ փորձաքննության այլ ընթացակարգ, քան բժշկասոցիալական փորձաքննությունն ու անձի ֆունկցիոնալության որոշումը:

6) Բժշկական օգնության և սպասարկման անվճար հիմունքների բացակայությունը. այլընտրանքային ծառայության ընթացքում առողջական խնդիրներ ձեռք բերելու դեպքում քաղաքացիները հետազոտությունն ու բուժումն իրականացնում են սեփական միջոցներով: Նրանք չեն օգտվում պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության իրավունքից, թեև իրականացնում են իրենց քաղաքացիական պարտականությունը:

Ինչպես վերոնշյալ, այնպես էլ այլընտրանքային ծառայությանն առնչվող այլ հարցեր, այդ թվում՝ ՀՀ օրենսդրության համապատասխանությունը միջազգային իրավական չափորոշիչներին, մշտապես գտնվել են Պաշտպանի ուշադրության կենտրոնում: Ոլորտային խնդիրներն ու դրանց լուծման ուղիները Պաշտպանը պարբերաբար քննարկման առարկա է դարձրել տարբեր ձևաչափերով՝ պետական իրավասու մարմինների, հասարակական կազմակերպությունների և միջազգային գործընկերների ներգրավմամբ:

Ոլորտային խնդիրների հասցեագրման նպատակով՝ 2024 թվականի դեկտեմբերի 20-ին Պաշտպանի նախաձեռնությամբ և ԵԽ երևանյան գրասենյակի հետ համագործակցությամբ անցկացվել է «Այլընտրանքային ծառայությունը Հայաստանում. մարտահրավերներ և լուծումներ» թեմայով քննարկում: Միջոցառումը ծառայել է որպես հարթակ՝ պետական և հասարակական հատվածի ու միջազգային գործընկերների հետ համատեղ վերհանելու իրավակիրառ պրակտիկայի բացերը, քննարկելու դավանանքի հիմքով զինծառայությունից հրաժարվողների իրավունքներն ու միջազգային չափորոշիչներին համապատասխան լուծումներ առաջարկելու համար:

Պաշտպան Անահիտ Մանասյանն ընդգծել է, որ թեև ՄԻԵԴ վճիռները դրական ազդեցություն են ունեցել ոլորտի վրա, այնուամենայնիվ, Հայաստանում այլընտրանքային ծառայության համակարգը դեռևս ամբողջությամբ չի համապատասխանում միջազգային չափանիշներին: Ըստ Պաշտպանի՝ ոլորտային խնդիրները հաճախ դուրս են մնում հանրային ուշադրությունից և պատշաճ չեն ընկալվում որպես մարդու իրավունքների կարևոր բաղադրիչ:

Պաշտպանի աշխատակազմում համակողմանի ուսումնասիրվել են ինչպես ներպետական և միջազգային իրավական չափորոշիչները, այնպես էլ այլընտրանքային աշխատանքային ծառայության ոլորտում մի շարք պետությունների առաջավոր փորձն ու իրավակարգավորումները:

«Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքի «Պարտադիր զինվորական ծառայությունն այլընտրանքային ծառայությամբ փոխարինելու մասին դիմումը» վերտառությամբ 7-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ տարածքային զինվորական կոմիսարիատը դիմումը գրանցելու պահից 30-օրյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան զորակոչի ավարտին նախորդող 25-րդ օրը, պարզում է օրենքով սահմանված կարգով դիմումատուին պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու կամ պարտադիր զինվորական ծառայությունից տարկետում տալու հիմքերի առկայությունը և դրանց բացակայության դեպքում ներկայացված դիմումը և դիմումատուի անձնական գործն ուղարկում է հանրապետական հանձնաժողով: Ըստ նույն հոդվածի 7-րդ մասի՝ դիմումատուին պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու կամ պարտադիր զինվորական ծառայությունից տարկետում տալու հիմքերի առկայության դեպքում դիմումը հանրապետական հանձնաժողով չի ներկայացվում, և այն տարածքային զինվորական կոմիսարիատում գրանցվելու պահից 30 օրվա ընթացքում վերադարձվում է դիմումատուին, որից հետո հայտարարված զորակոչի ժամանակ օրենքով սահմանված կարգով ձևակերպվում է քաղաքացու՝ պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու կամ պարտադիր զինվորական ծառայությունից տարկետում ստանալու իրավունքը:

Այսինքն, ստացվում է, որ այլընտրանքային ծառայություն անցնելու դիմում ներկայացրած քաղաքացին, եթե ունի, օրինակ, այնպիսի առողջական խնդիրներ, որոնք անհամատեղելի են զինվորական ծառայության համար, ապա օրենքով սահմանված կարգով ստանում է տարկետում կամ ազատվում է զինվորական ծառայությունից: Եվ տվյալ դեպքում չի դիտարկվում այլընտրանքային ծառայություն անցնել/չանցնելու հարցը: Զորակոչի գործընթացում (և տվյալ իրավահարաբերությունների մեջ մտնող յուրաքանչյուր քաղաքացու հետ, անկախ նրանից՝ անձը դիմել է այլընտրանքային ծառայություն անցնելու համար, թե՝ ոչ) քաղաքացիների փորձաքննությունն իրականացվում է ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 404-Ն (հիվանդությունների ցանկ) և 405-Ն (փորձաքննության կարգ) որոշումներով սահմանված կարգով:

Ի տարբերություն զինծառայողների, ովքեր առողջական խնդիրների պատճառով կարող են վաղաժամկետ արձակվել զինված ուժերից (ընդ որում առանց հաշմանդամություն ունեցող անձ ճանաչվելու), այլընտրանքային աշխատանքային ծառայողների համար գործում է այլ իրավակարգավորում: «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ այլընտրանքային աշխատանքային ծառայողները ծառայությունից պահեստ արձակվում և պահեստազորում

հաշվառվում են նույն օրենքով սահմանված այլընտրանքային աշխատանքային ծառայության ժամկետը լրանալու կամ ժամկետից շուտ՝ օրենքով սահմանված կարգով հաշմանդամություն ունեցող անձ ճանաչվելու դեպքերում:

Այսպիսով, արձանագրվում է իրավական անհավասարություն, քանի որ այլընտրանքային աշխատանքային ծառայողները, ի տարբերություն զինծառայողների, զրկված են առողջական վիճակի հիմքով ծառայությունից վաղաժամկետ արձակվելու հնարավորությունից, եթե նույնիսկ նրանց հիվանդությունները, համաձայն ՀՀ կառավարության թիվ 404-Ն և 405-Ն որոշումների, հանգեցնում են ծառայության համար ոչ պիտանիության: Փաստացի, զինվորական ծառայության պարագայում պիտանիության աստիճանի փոփոխությունը բավարար հիմք է զորացրման համար, մինչդեռ այլընտրանքային ծառայողների դեպքում օրենսդիրը վաղաժամկետ արձակումը պայմանավորում է բացառապես հաշմանդամության կարգի սահմանմամբ՝ ստեղծելով իրավական խոչընդոտներ առողջության պահպանման իրավունքի իրացման ճանապարհին:

Մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից նման տարբերակված մոտեցումը խնդրահարույց է: Տրամաբանական հարց է առաջանում. եթե նախքան ծառայության ներգրավվելը բոլոր քաղաքացիները, այդ թվում՝ այլընտրանքային աշխատանքային ծառայություն անցնելու համար դիմած, փորձաքննվում են միասնական չափորոշիչներով և առողջական խնդիրների դեպքում ծառայության չեն ներգրավվում, ապա ի՞նչ իրավական հիմնավորմամբ է բուն ծառայության ընթացքում սահմանափակվում նույն այդ չափորոշիչներով փորձաքննվելու և ոչ պիտանիության դեպքում ծառայությունից վաղաժամկետ արձակվելու նրանց իրավունքը:

Վերոշարադրյալի հիման վրա անհրաժեշտ է այլընտրանքային աշխատանքային ծառայողների համար ապահովել զինծառայողներին համահունչ իրավական երաշխիքներ. մասնավորապես՝ ծառայության ընթացքում առողջական վիճակի վատթարացման դեպքում նրանք պետք է ունենան փորձաքննության և, ոչ պիտանի ճանաչվելու պարագայում, վաղաժամկետ արձակման իրավունք՝ անկախ ֆունկցիոնալության սահմանափակման աստիճանի առկայությունից:

Միևնույն ժամանակ, Պաշտպանի գնահատմամբ՝ պետությունը պետք է կատարելագործի գործող իրավական դաշտը՝ մշակելով այլընտրանքային աշխատանքային ծառայություն անցնող քաղաքացիների փորձաքննության հստակ և արդյունավետ կառուցակարգեր: Ծառայությունից վաղաժամկետ արձակման համար բացառապես հաշմանդամության (ֆունկցիոնալության որևէ աստիճանի սահմանափակման) ճանաչման պարտադիր պահանջը, անկախ հիվանդության բնույթից, խնդրահարույց է և հակասում է ինչպես ներպետական իրավակարգավորումների տրամաբանությանը, այնպես էլ միջազգային իրավական չափորոշիչներին: Նման մոտեցումը պատշաճ չի ապահովում պետության ստանձնած միջազգային պարտավորությունների, մասնավորապես՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 9-րդ հոդվածի պահանջների լիարժեք իրացումը:

Պաշտպանի աշխատակազմում ստացվել է բողոք այլընտրանքային աշխատանքային ծառայողի կնոջից, որը վերաբերել է ծառայության և հիմնական աշխատանքի ժամերի համատեղման իրավական ու գործնական խոչընդոտներին: Դիմումատուի պնդմամբ՝ ամուսինը, բացի սահմանված այլընտրանքային ծառայությունից, ունի նաև հիմնական աշխատանք, սակայն ծառայության կազմակերպման գործընթացում առկա կարգավորումները և աշխատանքային գրաֆիկների անհամապատասխանությունը հանգեցնում են իրավունքների իրացման դժվարությունների: Խնդիրը հատկապես սուր է

այն դեպքերում, երբ այլընտրանքային ծառայության իրականացման վայրում սահմանված աշխատաժամանակը չի թույլատրում ծառայողին լիարժեքորեն իրականացնել իր այլ եկամտաբեր գործունեությունը՝ ստեղծելով սոցիալական և տնտեսական լրացուցիչ բեռ ընտանիքի համար: Այս դեպքը վեր է հանում «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքի և Աշխատանքային օրենսգրքի կարգավորումների ներդաշնակեցման անհրաժեշտությունը՝ ապահովելու համար ծառայողի՝ լրացուցիչ աշխատանքով զբաղվելու իրավունքի գործնական կիրառելիությունը:

Պաշտպանին հասցեագրված մեկ այլ դիմումով քաղաքացին բարձրաձայնել է այլընտրանքային աշխատանքային ծառայության վայրի և իրականացվող աշխատանքի բնույթի՝ իր առողջական վիճակի հետ անհամատեղելիության հարցը: Դիմումատուի պնդմամբ՝ չնայած դատաբժշկական փորձաքննությամբ արձանագրված առողջական խնդիրներին (ողնաշարի ճողվածք, սրտի առիթմիա, հարթաթաթություն և նևրոզ), իրեն հանձնարարվել է կատարել ֆիզիկական ծանր լարվածություն ենթադրող բանվորի աշխատանք, որը հանգեցնում է ֆիզիկական սուր ցավերի և առողջական վիճակի վատթարացման: Ըստ քաղաքացու՝ իրավասու մարմինների կողմից որոշում է կայացվել ծառայությունը կենդանաբանական այգում շարունակելու վերաբերյալ՝ ի հեճուկս այն հանգամանքի, որ նշված ախտանիշներն արձանագրված են եղել հենց դատաբժշկական փորձաքննության եզրակացության մեջ, ինչն անհնարին է դարձնում աշխատանքային պարտականությունների բարեխիղճ կատարումը:

Բարձրացված հարցի կապակցությամբ Պաշտպանը գրություններ է հասցեագրել իրավասու պետական մարմիններին՝ խնդրելով սեղմ ժամկետում մանրամասն ուսումնասիրության և քննարկման առարկա դարձնել ներկայացված հարցը և առաջարկվելով դիտարկել ոլորտային օրենսդրության մեջ անհրաժեշտ փոփոխություններ և լրացումներ կատարելու հնարավորությունը, ինչպես նաև անհապաղ միջոցներ ձեռնարկել քաղաքացու՝ այլընտրանքային աշխատանքային ծառայության համար հետագա պիտանիությունը որոշելու նպատակով կրկնակի փորձաքննության ենթարկելու ուղղությամբ:

Հաշվի առնելով ինչպես վերոգրյալ առանձնահատուկ դեպքերը, այնպես էլ ստացված բողոքների համակարգային բնույթը՝ Պաշտպանն անհրաժեշտ է համարում իրավասու պետական մարմինների ուշադրությունը հրավիրել այլընտրանքային ծառայության կազմակերպմանն առնչվող միջազգային չափորոշիչների և դատական նախադեպերի վրա: Դրանց հետևողական կիրառումն առանցքային է ծառայողների իրավունքների պատշաճ պաշտպանության և ոլորտում առկա խնդիրների համապարփակ լուծման տեսանկյունից:

Այսպես, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի թիվ 1993/84 բանաձևով հստակ սահմանվել է սկզբունքային այն դրույթը, համաձայն որի՝ այլընտրանքային ծառայությունը պետք է ծառայի բացառապես հանրային շահերին և զերծ լինի որևէ պատժիչ տարրից[64]: Շարունակելով այս միջազգային-իրավական մոտեցումը՝ խորհուրդն իր թիվ 1998/77 բանաձևում շեշտադրել է պետությունների պարտավորությունը՝ թույլ չտալու որևէ խտրականություն կրոնական կամ այլ համոզմունքների հիմքով զինվորական ծառայությունից հրաժարվող անձանց նկատմամբ[65]: Սա վերաբերում է ինչպես ծառայության ժամկետներին ու պայմաններին, այնպես էլ տնտեսական, սոցիալական,

[64] Տեղեկատվությունը հասանելի է https://www.ohchr.org/sites/default/files/E-CN_4-RES-1993-84.pdf հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

[65] Տեղեկատվությունը հասանելի է https://www.refworld.org/legal/resolution/unchr/1998/en/8561 հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

մշակութային կամ քաղաքացիական իրավունքների անարգել իրացմանը: Ըստ ԵԱՀԿ վարքականոնների 28-րդ կետի՝ մասնակից պետություններն իրենց օրենքներում և այլ առնչվող փաստաթղթերում պարտավորվում են արտացոլել զինված ուժերի անձնակազմի մարդու իրավունքները և պարտականությունները: Նրանք պարտավորվում են ուսումնասիրել զինվորական ծառայությունից արվող բացառությունների կամ զինվորական ծառայության այլընտրանքային եղանակների խնդիրը»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն Ադյանը և այլք ընդդեմ Հայաստանի վճռով նշել է. «…*Կոնվենցիայի կողմ հանդիսացող պետություններն ունեն իրենց այլընտրանքային ծառայության համակարգի կազմակերպման և իրականացման հայեցողական լիազորությունների որոշակի շրջանակ: Դատարանը համարում է, որ Կոնվենցիայի 9-րդ հոդվածով երաշխավորված՝ համոզմունքի հիմնավորմամբ զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքը երևակայական բնույթ կկրեր, եթե պետությանը հնարավորություն տրվեր այլընտրանքային ծառայության իր համակարգը կազմակերպելու և իրականացնելու այնպիսի եղանակով, որով օրենքով կամ գործնականում չէր առաջարկվի զինվորական ծառայությանն այնպիսի այլընտրանք, որն իրականում կկրեր քաղաքացիական բնույթ և* ***չէր ունենա արժանապատվությունը նվաստացնող կամ պատժիչ բնույթ»***[66]**:** Մեկ այլ գործով Եվրոպական դատարանը նշել է, որ բազմակարծությունը, հանդուրժողականությունը և լայնախոհությունը «ժողովրդավարական հասարակության» չափանիշներն են: ***… փոքրամասնություն կազմող կրոնական խմբերի նկատմամբ պետության կողմից հարգանքի դրսևորումը՝ վերջիններիս կողմից իրենց խղճին համապատասխան ձևով հասարակությանը ծառայելու հնարավորության տրամադրման միջոցով կստեղծի առավել միասնական և կայուն բազմակարծություն, խթան կհանդիսանա կրոնական ներդաշնակության և հասարակության հանդուրժողականության համար, որն ավելի գերադասելի է, քան, ինչպես Կառավարությունն է պնդում, անարդար անհավասարություններ ստեղծելը կամ խտրականություն ցուցաբերելը»***[67]**:**

Դյագիլևն ընդդեմ Ռուսաստանի գործով Եվրոպական դատարանի դիրքորոշմամբ՝ պետությունները հիմնականում ունեն նեգատիվ պարտավորություն՝ զերծ մնալու Կոնվենցիայի 9-րդ հոդվածով երաշխավորված իրավունքներին որևէ միջամտությունից… Նման միջամտությունը հակասում է Կոնվենցիայի 9-րդ հոդվածին, եթե այն ***«նախատեսված չէ օրենքով», չի հետապնդում 2-րդ կետում նշված օրինական նպատակներից մեկը կամ մի քանիսը և «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում»***[68]**:**

Համադրելով տարբեր պետությունների առաջավոր փորձը, միջազգային իրավական հիմնարար չափորոշիչները և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում արտահայտված դիրքորոշումները՝ Պաշտպանն արձանագրում է, որ ներպետական օրենսդրական գործող կարգավորումները դեռևս լիարժեքորեն չեն համապատասխանում միջազգային իրավունքի արդի պահանջներին: Այս համատեքստում առկա իրավակարգավորումները մնում են խնդրահարույց անձի իրավունքների համապարփակ պաշտպանության և իրավական որոշակիության

---

[66] Տե՛ս Ադյանը և այլք ընդդեմ Հայաստանի (ADYAN AND OTHERS v. ARMENIA) գործով, 2017 թվականի հոկտեմբերի 12-ի վճիռը, գանգատ թիվ 75604/11, կետ 67:

[67] Տե՛ս Բայաթյանն ընդդեմ Հայաստանի (CASE OF BAYATYAN v. ARMENIA) գործով 2011 թվականի հուլիսի 7-ի վճիռը, գանգատ թիվ 23459/03, կետ 126:

[68] Տե՛ս Դյագիլևն ընդդեմ Ռուսաստանի (CASE OF DYAGILEV v. RUSSIA) գործով 2020 թվականի սեպտեմբերի 7-ի վճիռը, գանգատ թիվ 49972/16, կետ 60:

ապահովման տեսանկյունից՝ առաջացնելով համակարգային բարեփոխումների անհրաժեշտություն:

Սույն տարեկան հաղորդման կազմման աշխատանքների շրջանակում Պաշտպանը հարցադրումներ է կատարել իրավասու պետական մարմիններին այն մասին, թե «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո առ այսօր քանի՞ քաղաքացի է անցել այլընտրանքային աշխատանքային ծառայության, նրանցից քանի՞սն են դավանանքի հիմքով և քանի՞սը համոզմունքների հիմքով անցել այլընտրանքային աշխատանքային ծառայության, քանի՞ դիմումներ են ստացվել այլընտրանքային ծառայություն անցնելու վերաբերյալ և ի՞նչ ընթացք են ստացել: Արդյո՞ք արձանագրվել են այլընտրանքային ծառայություն անցնելու վերաբերյալ քաղաքացու դիմումը մերժելու դեպքեր, եթե այո՝ ի՞նչ պատճառաբանությամբ:

Հարցերի կապակցությամբ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը տեղեկացրել է, որ 2013 թվականից մինչև 2025 թվականի հուլիս ամիսը այլընտրանքային աշխատանքային ծառայության են նշանակվել 588 քաղաքացի: Ծառայության ընթացքում այլընտրանքային աշխատանքային ծառայություն իրականացնող 1 ծառայողի կողմից ստացվել է բողոք ծառայության վայրի փոփոխության հետ կապված: ՀՀ արդարադատության նախարարի համապատասխան հրամանի համաձայն՝ ծառայողը փոխադրվել է ծառայության այլ վայր: Այլընտրանքային աշխատանքային ծառայողի կողմից առողջական վիճակի պատճառով ծառայության վայրը փոփոխելու վերաբերյալ դիմում չի ներկայացվել: Այլընտրանքային աշխատանքային 1 ծառայող ճանաչվել է հաշմանդամություն ունեցող անձ և վաղաժամկետ արձակվել է ծառայությունից:



Արդարադատության նախարարությունը տեղեկացրել է, որ 2018-2024 թվականների ընթացքում Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից Արդարադատության նախարարություն է ներկայացվել ընդհանուր 238 դիմում և դրանց վերաբերյալ համապատասխան եզրակացություններ, որոնց ուսումնասիրության արդյունքում Արդարադատության նախարարի հրամանների հիման վրա այլընտրանքային աշխատանքային ծառայության ուղարկելու վերաբերյալ 251 դիմում բավարարվել է, իսկ 16-ը՝ մերժվել: Այլընտրանքային աշխատանքային ծառայության վերաբերյալ Արդարադատության նախարարությունը 2025 թվականին ստացել է մեկ դիմում, որով քաղաքացին խնդրել է ուժը կորցրած ճանաչել Արդարադատության նախարարի այն հրամանը, որով վերջինիս նկատմամբ նախկինում նշանակվել է այլընտրանքային

աշխատանքային ծառայություն (ընդ որում, նշված հրամանը նախկինում՝ մինչև նախարարություն դիմում ներկայացնելը, դիմողի կողմից վիճարկված է եղել նաև դատական կարգով և օրինական ուժի մեջ մտած դատական ակտով դիմողի հայցը մերժվել է):

Պաշտպանության նախարարության տեղեկացմամբ՝ 2025 թվականի ընթացքում պարտադիր զինվորական ծառայությունն այլընտրանքային աշխատանքային ծառայությամբ փոխարինելու վերաբերյալ դիմում է ներկայացրել 31 քաղաքացի, որոնցից 27-ի վերաբերյալ Այլընտրանքային ծառայության հարցերով հանրապետական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն: Մերժվել է 4 դիմում:



Ամփոփելով վերոշարադրյալը՝ Պաշտպանն ընդգծում է, որ այլընտրանքային ծառայության կազմակերպման ոլորտում մարդու իրավունքների երաշխավորման հարցերը շարունակելու են մնալ իր անմիջական և հատուկ ուշադրության տիրույթում: Արձանագրված խնդրահարույց դրույթներն ու գործնական բարդությունները հետևողականորեն հասցեագրվելու են իրավասու պետական մարմիններին՝ նպատակ հետապնդելով մշակել արդյունավետ լուծումների կառուցակարգեր և ապահովել ՀՀ օրենսդրության ու իրավակիրառ պրակտիկայի լիակատար համապատասխանությունը միջազգային իրավական չափանիշներին:

Հաշվի առնելով արձանագրված խնդիրները՝ առաջարկվում է՝

- ✓ ***մշակել և ներդնել այլընտրանքային աշխատանքային ծառայության վայրի նշանակման և աշխատանքային գործառույթների սահմանման այնպիսի մեխանիզմներ, որոնք կերաշխավորեն ծառայողի առողջական վիճակի ու բժշկական հակացուցումների պարտադիր համադրումը փաստացի աշխատանքային պայմանների հետ՝ բացառելով անձի առողջությանը վնասող կամ ֆիզիկական սուր ցավ պատճառող աշխատանքների իրականացումը,***
- ✓ ***սահմանել ծառայության ընթացքում առողջական վիճակի վատթարացման դեպքում անձին կրկնակի փորձաքննության ենթարկելու և ծառայության համար ոչ***

պիտանի ճանաչվելու պարագայում՝ այլընտրանքային ծառայությունից ազատվելու հստակ ու թափանցիկ ընթացակարգեր,

- ***ապահովել օրենսդրական և գործնական հնարավորություն բոլոր այն քաղաքացիների համար, ում համոզմունքներին կամ դավանանքին հակասում է զինվորական ծառայությունը, անցնելու այլընտրանքային ծառայություն՝ հիմք ընդունելով միջազգային չափանիշները:***

ԳԼՈՒԽ 3. ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՊԱՏՇԱՃ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ԱՆՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

1. Առողջության պահպանումը զինվորական ծառայության ընթացքում

Հաշվետու տարվա ընթացքում զինծառայողների առողջության պահպանման իրավունքի ապահովման հարցերը շարունակել են պահպանել իրենց առաջնահերթությունը Պաշտպանի գործունեության շրջանակում: Բողոքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առողջական վիճակի գնահատման, ախտորոշման ճշգրտության, բուժման կազմակերպման և մասնագիտացված բժշկական օգնության հասանելիության հետ կապված հարցերը շարունակում են մնալ առավել հաճախ բարձրացվող խնդիրներից:

2025 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմ ստացված շուրջ 900 բողոքներից 144-ը վերաբերել են զինծառայողների առողջության պահպանման իրավունքին:



Պաշտպանը յուրաքանչյուր նման ահազանգի շրջանակներում նախաձեռնել է քննարկման ընթացակարգեր, որոնց արդյունքում բարձրացված հարցերի զգալի մասը ստացել է դրական լուծում Պաշտպանության նախարարության հետ կառուցողական համագործակցության շնորհիվ: Գերատեսչության հետ օպերատիվ փոխգործակցությունը թույլ է տվել արագ արձագանքել մտահոգություններին՝ ապահովելով լրացուցիչ հետազոտություններ կամ բուժման մեթոդների վերանայում, ինչը վկայում է միջգերատեսչական երկխոսության արդյունավետության մասին:

Ստացված դիմումների վերլուծությունը վկայում է, որ առկա են ոլորտային բնույթի խնդիրներ, որոնք հնարավոր է խմբավորել մի քանի հիմնական ուղղություններով.

01 Առողջական խնդիրների կապակցությամբ պատշաճ բուժօգնության չտրամադրում.

02 Առողջական վիճակին հակացուցված ծառայության պայմանների չպահպանում.

03 Պլանային վիրահատությունների չիրականացում կամ դրանց ձգձգում.

04 Հոսպիտալների և բուժկետերի շենքային պայմանների, կադրային ու գործիքային հագեցվածության ապահովման անհրաժեշտություն.

05 Հոսպիտալում բուժում ստանալու նպատակով 120 օրից ավելի չպահելու և զորամաս ուղարկելու հետ կապված խնդիրներ:

Անհրաժեշտ է նշել, որ զինծառայողների բժշկական հետազոտությունների կազմակերպման և պատշաճ բուժօգնության տրամադրման վերաբերյալ բարձրացված մի շարք հարցեր Պաշտպանության նախարարության հետ արդյունավետ համագործակցության արդյունքում ստացել են օպերատիվ լուծում: Միաժամանակ, ոլորտում արձանագրված համակարգային բնույթի խնդիրների հաղթահարման ուղղությամբ աշխատանքները կրում են շարունակական բնույթ: 2025 թվականի ընթացքում Պաշտպանի գործունեության առաջնահերթություններից են եղել զորամասեր և զինվորական հոսպիտալներ կատարված պարբերական այցելությունները[69]: Մշտադիտարկումների ընթացքում առանձնահատուկ ուշադրություն է դարձվել զինծառայողների ծառայության պայմաններին և դրանց համատեղելիությանը զինծառայողների առողջության պահպանման իրավունքին: Այցերի շրջանակում առանձնազրույցներ են տեղի ունեցել ինչպես ժամկետային և պայմանագրային զինծառայողների, այնպես էլ սպայական կազմի ներկայացուցիչների հետ: Այցերի ընթացքում դիտարկման առանցքային առարկա են դարձել զորամասերի բուժկետերը, դրանց շենքային պայմանները, հաստիքային համալրվածությունը, դեղորայքի առկայությունը և այլն: 2025 թվականի ընթացքում Պաշտպանն այցելել է Կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալ, ուսումնասիրել հոսպիտալի շենքային պայմանները, բժշկական սարքավորումներով հագեցվածության մակարդակը, անձնակազմի համալրվածության հարցերը և այլն: Միաժամանակ, տեսակցել է տարբեր բաժանմունքներում բուժում ստացող պարտադիր ժամկետային և պայմանագրային զինծառայողներին, ծանոթացել տրամադրվող բուժսպասարկման որակին:

Պաշտպանի հանձնարարությամբ աշխատակազմի ներկայացուցիչները առանձին այց են իրականացրել Զանգեզուրի կայազորային հոսպիտալ: Այցի շրջանակներում

[69] Տեղեկատվությունը հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3496 հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

հանգամանալից ուսումնասիրվել են զինծառայողների բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման հարցերը: Տարբեր բաժանմունքներում բուժում ստացող զինծառայողների հետ տեղի ունեցած առանձնազրույցները հնարավորություն են տվել վերհանել նրանց առողջական վիճակի, բուժման գործընթացի և ծառայողական առօրյայի վերաբերյալ առկա մտահոգությունները, որոնք այնուհետև քննարկվել են հոսպիտալի ղեկավար կազմի և բուժանձնակազմի հետ: Այցի արդյունքում արձանագրվել են հոսպիտալի հաստիքային համալրվածության և գործիքային հագեցվածության հետ կապված հրատապ լուծում պահանջող խնդիրներ:

Կարևորելով ռազմաբժշկական համակարգի առանցքային դերը ՀՀ զինված ուժերի անձնակազմի առողջության պահպանման, ամրապնդման, ամբուլատոր, ստացիոնար և վերականգնողական բուժօգնության կազմակերպման հարցերում՝ Պաշտպանը հատուկ ընդգծում է, որ ոլորտին անհրաժեշտ է առանձնահատուկ մոտեցում ցուցաբերել, զարգացնել ու կատարելագործել առկա կառուցակարգերը՝ սկսած հոսպիտալների, բուժկետերի շենքային պայմաններից, մինչև գործիքային ու կադրային համալրվածության ապահովում:

Զինծառայողների առողջության պահպանման իրավունքին առնչվող բոլոր վերհանված հարցերը Պաշտպանի կողմից պարբերաբար և տարբեր ձևաչափերով ներկայացվում են իրավասու գերատեսչություններին՝ համապատասխան լուծումներ գտնելու նպատակով:

Կարևորելով հոսպիտալների կադրային և գործիքային համալրվածության հիմնախնդիրը՝ Պաշտպանը սույն տարեկան հաղորդման նախապատրաստման շրջանակներում համապատասխան հարցադրումներ է հասցեագրել ՀՀ ՊՆ և ՀՀ ԱԱԾ այն մասին, թե 2025 թվականի ընթացքում զինվորական հոսպիտալների շենքային պայմանների բարելավման, նոր ենթակառուցվածքների կառուցման, ինչպես նաև արդիական բժշկական սարքավորումներով վերազինման ուղղությամբ ինչ միջոցներ են ձեռնարկվել և ինչպիսի միջոցառումներ են պլանավորվում: Պաշտպանի գնահատմամբ՝ հարցի հրատապությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 404-Ն որոշմամբ հաստատված հիվանդությունների ցանկում կատարված փոփոխություններն (այդ թվում՝ չափանիշների խստացումը) անխուսափելիորեն հանգեցնելու են հոսպիտալների ծանրաբեռնվածության ավելացմանը, ինչն էլ իր հերթին պահանջում է բժշկական հաստատությունների սպասարկման կարողությունների և տեխնիկական հագեցվածության ընդլայնում:



Ազգային անվտանգության ծառայության տեղեկացմամբ՝ 2025 թվականի ընթացքում ՀՀ ԱԱԾ ռազմաբժշկական հաստատությունը համալրվել է գործիքային, լաբորատոր սարքավորումներով և բժշկական գույքով, համալրվել է բուժանձնակազմը: Աշխատանքներ են իրականացվում ռենտգեն հետազոտության սարքավորման ձեռք բերման ուղղությամբ, իսկ ռենտգեն

կաբինետի վերանորոգման և ևս երեք համալրվող բժիշկ-մասնագետների աշխատանքային սենյակների վերանորոգման աշխատանքները գտնվում են ավարտական փուլում: ՀՀ ԱԱԾ ռազմաբժշկական հաստատության շենքային պայմանները բարելավելու, որակյալ բժշկական անձնակազմով և սարքավորումներով համալրելու ուղղությամբ աշխատանքները կրում են շարունակական բնույթ: Նշվել է, որ ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքերի բժշկական ստորաբաժանումը ևս հագեցած է անձնակազմի բժշկական սպասարկումը պատշաճ կազմակերպելու համար անհրաժեշտ դեղորայքով և նյութական միջոցներով: Առկա է առաջին անհրաժեշտության դեղորայքի և վիրակապական միջոցների անհրաժեշտ քանակ, իսկ զորամասերում առկա դեղորայքի քանակը մշտապես համալրվում է: Ավելին, ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքերի զորամասերում կառուցվում են նոր բուժկետեր:

Հարցի կապակցությամբ Պաշտպանության նախարարությունը տեղեկացրել է, որ 2023 թվականի հոկտեմբերի 31-ին տեղի ունեցած խորհրդակցության արդյունքում՝ ՊՆ ռազմաբժշկական ապահովման վարչության 2024 թվականի ծախսային ծրագրից հանվել է «Հոսպիտալների և բուժկետերի բժշկական սարքավորումներով համալրում» միջոցառումը, բացի այդ 2025 թվականի ծախսային ծրագրում նվազեցվել է նաև «Դեղորայքի տրամադրում զորամասային և հոսպիտալային օղակներում բուժօգնություն ստացողներին» միջոցառման ֆինանսավորումը, ուստի՝ անհրաժեշտ միջոցներով համալրում հնարավոր կլինի իրականացնել համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:

Պաշտպանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ զինծառայողների առողջության պահպանման իրավունքի առաջնային երաշխավորը պետությունն է: Հետևաբար, պետությունը պարտավոր է ներդնել արդյունավետ կառուցակարգեր և ձեռնարկել անհրաժեշտ բոլոր միջոցները՝ կանխելու զինվորական ծառայության ընթացքում անձի առողջական վիճակի վատթարացումը, իսկ առողջական խնդիրների ի հայտ գալու դեպքում՝ ապահովելու որակյալ բժշկական օգնության հասանելիությունը: Այս համատեքստում ռազմաբժշկական ոլորտը պահանջում է առանձնահատուկ մոտեցում, ինչը ենթադրում է բուժկետերի և հոսպիտալների շենքային պայմանների, գործիքային, կադրային ու դեղորայքային հագեցվածության շարունակական բարելավում և արդիականացում: Պաշտպանը հատուկ կարևորում է ՊՆ ռազմաբժշկական ապահովման վարչության առանցքային դերը ՀՀ զինված ուժերի անձնակազմի առողջության պահպանման, ամբուլատոր, ստացիոնար և վերականգնողական բուժօգնության կազմակերպման գործում: Բարձր գնահատելով նշված ստորաբաժանման պատրաստակամությունն ու օպերատիվությունը՝ Պաշտպանն արձանագրում է, որ վարչության և Պաշտպանության նախարարության այլ կառուցվածքային ստորաբաժանումների հետ ձևավորված արդյունավետ փոխհամագործակցության շնորհիվ հնարավոր է դառնում սեղմ ժամկետներում լուծումներ տալ զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների կողմից բարձրացվող բազմաթիվ հարցերի: Միևնույն ժամանակ, Պաշտպանն ընդգծում է ՊՆ ռազմաբժշկական ապահովման վարչության և ենթակա օղակների՝ բուժկետերի ու հոսպիտալների կարողությունների հետևողական զարգացման անհրաժեշտությունը:

Ոլորտային հաջորդ խնդիրն առնչվում է զինծառայողների առողջական վիճակին հակացուցված ծառայության պայմանների ոչ պատշաճ ապահովմանը: Նշված հարցի վերաբերյալ Պաշտպանը ստացել է ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր բողոքներ, իսկ խնդրի առկայությունն արձանագրվել է նաև տարբեր զորամասեր կատարած այցերի ընթացքում: Մասնավորապես, զորամասերից մեկում տեղի ունեցած առանձնազրույցների

ժամանակ զինծառայողները բարձրաձայնել են, որ չնայած զինվորական ծառայության համար «սահմանափակումով պիտանի» ճանաչված լինելու հանգամանքին՝ իրենք փաստացի չեն ազատվել առողջական վիճակի հետ անհամատեղելի ֆիզիկական վարժություններից և ծանրաբեռնվածությունից: Վերհանված խնդիրները տեղում քննարկվել են զորամասի հրամանատարության հետ. Պաշտպանը շեշտադրել է բժշկական հոդվածներով նախատեսված սահմանափակումների պահանջներին խստորեն հետևելու և բուժման կարիք ունեցող զինծառայողների համար համապատասխան բժշկական օգնություն ապահովելու կարևորությունը:

Խնդրո առարկա հարցի վերաբերյալ Պաշտպանը հարցումներ է հասցեագրել Պաշտպանության նախարարություն և Ազգային անվտանգության ծառայություն՝ այն դեպքերի կապակցությամբ, երբ սահմանված սահմանափակումների անտեսումը հանգեցրել է զինծառայողների առողջական վիճակի վատթարացման:

Մասնավորապես, հարցադրում է արվել նմանօրինակ դեպքերի հնարավոր արձանագրման և դրանց հետևանքների վերացման կամ կանխարգելման ուղղությամբ ձեռնարկված միջոցների վերաբերյալ:

Ազգային անվտանգության ծառայության տեղեկացմամբ՝ ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքերում զինծառայողների նկատմամբ կիրառված սահմանափակումները ծառայության ընթացքում չպահպանելու վերաբերյալ դեպքեր չեն արձանագրվել: Ավելին, պարբերաբար թարմացվում է առողջական վիճակից ելնելով տարբեր սահմանափակումներ ունեցող զինծառայողների շրջանակը և դրանք տրամադրվում են համապատասխան ստորաբաժանումների ղեկավարներին:

Պաշտպանության նախարարության տեղեկացմամբ՝ ծառայության ընթացքում սահմանափակումները չպահպանելու վերաբերյալ ստացվել են եզակի դիմում-բողոքներ, զինծառայողների լրացուցիչ բժշկական հետազոտության արդյունքներով առողջական վիճակի վատթարացում չի արձանագրվել, սահմանափակումները պահպանելու վերաբերյալ տրվել են հանձնարարականներ զորամասի հրամանատարին:

Պաշտպանը հատուկ ընդգծում է՝ **առողջական վիճակին հակացուցված ծառայության պայմանները պահպանելու իրավունքը բոլոր դեպքերում և անխտիր բոլոր զորամասերում պետք է լինի երաշխավորված: Պետության անմիջական պարտականությունն է բացառել ծառայողական միջավայրով պայմանավորված ցանկացած գործոն, որը կարող է ռիսկի տակ դնել զինծառայողի առողջությունը կամ հանգեցնել դրա վատթարացմանը:**

Զինծառայողների առողջության պահպանման իրավունքի լիարժեք իրացման տեսանկյունից առանցքային է պլանային վիրահատությունների պատշաճ կազմակերպումն ու իրականացումը՝ առանց ձգձգումների: Մինչդեռ, Պաշտպանին հասցեագրված մի շարք բողոքներ վկայում են այն մասին, որ չնայած վիրահատության անհրաժեշտության վերաբերյալ բժշկական ցուցումների առկայությանը՝ դրանց իրականացումը պարբերաբար հետաձգվում է (հիմնականում՝ քթի միջնապատի վիրահատությունների դեպքում): Ավելին, արձանագրվել են դեպքեր, երբ ծառայության ընթացքում նշանակված պլանային վիրահատությունը այդպես էլ չի կատարվել, և զինծառայողը ստիպված է եղել դիմել Պաշտպանի աջակցությանը զորացրվելուց հետո: Միայն Պաշտպանի աշխատակազմում բողոքի քննարկման և Պաշտպանության նախարարության հետ ձևավորված համագործակցության արդյունքում է հնարավոր եղել կարգավորել խնդիրը և ապահովել անձի բժշկական օգնություն ստանալու իրավունքը:

Հարցի կապակցությամբ ԱԱԾ-ն տեղեկացրել է, որ ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքեր պարտադիր ժամկետային զինվորական ծառայության են զորակոչվել 46 զինծառայող՝

պլանային վիրահատություն իրականացնելու ցուցմամբ, որոնք զինվորական ծառայության ընթացքում ստացել են համապատասխան բժշկական օգնություն (վիրահատվել են): ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքերի բժշկական ստորաբաժանման կողմից իրականացվել է պարտադիր ժամկետային զինվորական ծառայության զորակոչված և պլանային վիրահատությունների կարիք ունեցող զինծառայողների հաշվառում: Պլանային վիրահատությունների ժամանակացույցը մշակվել է ՀՀ ՊՆ համապատասխան ռազմաբժշկական հաստատությունների հետ համատեղ և պարբերաբար թարմացվում է: ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքերի զորամասերում վարվում են համապատասխան մատյաններ, որտեղ հաշվառվում են պլանային վիրահատության կարիք ունեցող զինծառայողները, նշվում են նրանց հերթական բժշկական ստուգումների ժամկետները, որոնց համաձայն էլ իրականացվել (իրականացվում) է հետազոտություններն ու բուժման գործընթացը:

Պաշտպանության նախարարության տեղեկացմամբ՝ պլանային վիրահատությունների ձգձգվելու վերաբերյալ ստացվել են եզակի բողոքներ: Խնդիրն առկա է հիմնականում քթի միջնապատի դեֆորմացիայի հետ կապված զինծառայողների վիրահատության առնչությամբ, ովքեր մինչև ԶՈՒ զորակոչվելն ունեցել են այդ առողջական խնդիրները և մինչև զորակոչվելը չեն վիրահատվել, չնայած տարածքային զինկոմիսարիատների կողմից իրականացվող բացատրական աշխատանքներին: Այն զինծառայողները, ովքեր չեն վիրահատվել նախազորակոչային ժամանակահատվածում և կցանկանան վիրահատվել ծառայության ընթացքում, վիրահատության հարցը քննարկվում է արտաքին շնչառական ֆունկցիայի խանգարման աստիճանը ռազմաբժշկական հաստատություններում գնահատելուց հետո, իսկ զինվորական ծառայության ընթացքում ձեռք բերած հիվանդության պարագայում պլանային վիրահատությունների ձգձգումներ հիմնականում չեն լինում: Զինվորական ծառայության ընթացքում վիրահատական ցուցում ունեցող 39 նախկին զինծառայող (22-ը՝ քթի միջնապատի դեֆորմացիայի կապակցությամբ) ծառայությունից արձակվելուց հետո վիրահատվել են ռազմաբժշկական հաստատություններում, 4 նախկին զինծառայող հրաժարվել է առաջարկվող վիրահատական բուժումից: Զորամասերի բժշկական ծառայությունների կողմից առանձնացվում և հաշվառվում են պլանային վիրահատությունների կարիք ունեցողները, ովքեր ներկայացվում են կայազորային հոսպիտալներ, որտեղ իրականացվում է մասնագիտական զննում: Զննման արդյունքներից և հոսպիտալային ծանրաբեռնվածությունից ելնելով գրառում է կատարվում բժշկական գրքույկում՝ պլանային վիրահատություն իրականացնելու անհրաժեշտության և հնարավոր ժամկետների մասին:

2025 թվականի ընթացքում մյուս առավել հաճախ հանդիպող խնդիրը վերաբերում է զինծառայողի բուժման առավելագույն ժամկետը՝ 120 օրը, լրանալուց հետո նրան հոսպիտալից զորամաս վերադարձնելու պրակտիկային: Խնդրին Պաշտպանը մանրամասն անդրադարձ է կատարել դեռևս նախորդ տարեկան հաղորդման շրջանակներում, սակայն այն շարունակում է մնալ արդիական: ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 405-Ն որոշման 95-րդ կետի համաձայն՝ «... ընդհանուր առմամբ, հիվանդության պատճառով բուժման և հիվանդության պատճառով վերականգնողական արձակուրդում անընդմեջ գտնվելու ժամանակահատվածը չի կարող գերազանցել 120 օրը՝ զորամասից ուղեգրվելու օրվանից հաշված: Բացառիկ դեպքերում, զինծառայողի բուժման ու շարք վերադարձման նպատակով, ԿՌԲՓԿ հիմնավորմամբ և Պաշտպանության նախարարի որոշմամբ բուժման ժամկետը կարող է երկարացվել ևս մինչև 30 օր»: Այդուհանդերձ, իրավակարգավորումներում դեռևս հստակեցված չէ, թե ինչպես պետք է կազմակերպվի զինծառայողի հետագա բուժումը, եթե նշված ժամկետը

սպառվել է, սակայն բուժման գործընթացն ավարտված չէ: Պաշտպանին հասցեագրված բողոքները փաստում են, որ սահմանված առավելագույն ժամկետը լրանալուն պես զինծառայողներն ուղարկվում են մշտական տեղակայման զորամասեր՝ նույնիսկ այն պարագայում, երբ դեռևս ունեն ամբողջական վերականգնման կամ ստացիոնար բուժման կարիք: Պաշտպանի դիտարկմամբ՝ զինծառայողների բժշկական օգնության հարցում չի կարող ցուցաբերվել մեխանիկական մոտեցում. անխտիր բոլոր դեպքերում անհրաժեշտ է դրսևորել անհատական մոտեցում և պատշաճ բուժսպասարկումն իրականացնել լրիվ ծավալով՝ մինչև անձի լիարժեք ապաքինումը կամ համապատասխան կարգավիճակի որոշումը:

Հիմք ընդունելով վերհանված խնդիրները՝ Պաշտպանն անհրաժեշտ է համարում՝

- ✓ ***առողջական վիճակի վերաբերյալ ներկայացված բոլոր գանգատների հիման վրա ապահովել զինծառայողների անհապաղ և պատշաճ բժշկական հետազոտությունն ու բուժման գործընթացը,***
- ✓ ***մշակել պլանային վիրահատությունների հստակ ժամանակացույց և կարիք ունեցող զինծառայողների հաշվառման միասնական կարգ՝ բացառելով անհարկի ձգձգումները և ապահովելով վիրահատական միջամտությունների իրականացումը սեղմ ժամկետներում,***
- ✓ ***գործուն միջոցներ ձեռնարկել, որպեսզի զինվորական ծառայության ընթացքում զինծառայողի համար նշանակված բժշկական օգնությունը փաստացի իրականացվի լրիվ ծավալով,***
- ✓ ***վերանայել ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 405-Ն որոշման 95-րդ կետի պարտադիր պահանջը՝ բուժման առավելագույն ժամկետի (120 օր) վերաբերյալ, որպեսզի բուժական գործընթացը չընդհատվի զուտ ժամկետի լրանալու պատճառով,***
- ✓ ***խստորեն ապահովել զինծառայողների առողջական վիճակին հակացուցված սահմանափակումների պահպանումը և զինծառայողների նշանակումը բացառապես իրենց առողջական վիճակին համապատասխանող ծառայության վայրեր,***
- ✓ ***շարունակական քայլեր ձեռնարկել ռազմաբժշկական ոլորտի զարգացման ուղղությամբ՝ բարելավելով բուժկետերի և հոսպիտալների շենքային պայմանները, ինչպես նաև ապահովելով դրանց արդիական գործիքային, կադրային ու դեղորայքային հագեցվածությունը:***

2. Զինծառայողների հոգեկան առողջության պահպանման իրավունքը

Զինծառայողների հոգեկան առողջության պահպանման իրավունքն անձի անձնական անձեռնմխելիության և առողջության պահպանման անբաժանելի մասն է: Այս իրավունքի իրացման իրավական հիմքերը սահմանված են ՀՀ Սահմանադրության 85-րդ հոդվածով և «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, որոնք պետությանը պարտավորեցնում են ապահովել զինծառայողների առողջական վիճակի պատշաճ հսկողություն և համապատասխան բժշկական օգնություն: Միջազգային իրավակարգավորումների համաձայն՝ **հոգեկան առողջության պաշտպանությունը բխում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածով երաշխավորված անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքից:** Բացի այդ, Եվրոպայի խորհրդի CM/Rec(2010)4 հանձնարարականի 72-րդ կետն

ամրագրում է, որ զինվորական ծառայության ընթացքում վնասվածք ստացած զինծառայողներին պետք է ցուցաբերվի պատշաճ բժշկական օգնություն և հնարավորության դեպքում վճարվի փոխհատուցում: Միջազգային այս ստանդարտը պարտավորեցնում է պետություններին ստեղծել փոխհատուցումների և նպաստների այնպիսի համակարգ, որը կծածկի ծառայության հետևանքով առաջացած թե՛ ֆիզիկական, թե՛ հոգեկան առողջության խնդիրները: Սա նշանակում է, որ պետության պատասխանատվությունը չի սահմանափակվում միայն բժշկական միջամտությամբ, այլ ենթադրում է նաև անձի կրած վնասի լիարժեք վերականգնում և սոցիալական երաշխիքների տրամադրում:

Զինված ուժերում զինծառայողների հոգեկան առողջության պատշաճ պահպանումը և հոգեբուժական օգնության հասանելիությունը հանդիսանում են Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության առաջնահերթ ուղղություններից: Այս իրավունքի լիարժեք իրացումը ոչ միայն պետության պարտավորությունն է զինծառայողի առողջության պահպանման հարցում, այլև հիմնարար նախապայման է զինվորական ծառայության անվտանգության, զորքերի մարտունակության և անձնակազմի արժանապատվության երաշխավորման համար: Այս համատեքստում հարկ է նշել, որ, ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 404-Ն և 405-Ն որոշումներում 2024 թվականի դեկտեմբերի 19-ին կատարված փոփոխությունների հիմքում դրվել էր փորձաքննական չափանիշների վերանայման և զինծառայողի կարգավիճակով բուժօգնություն ստանալու նպատակով տարկետումների սահմանափակման տրամաբանությունը, սակայն Պաշտպանը խնդրահարույց է գնահատել նշված կարգավորումները: Նոր կարգավորումների արդյունքում բազմաթիվ զորակոչիկներ, որոնք նախկինում նույն առողջական խնդիրների պատճառով ճանաչվում էին ոչ պիտանի, նոր չափանիշներով որակվում են պիտանի կամ սահմանափակումով պիտանի զինվորական ծառայության համար՝ ենթակա լինելով զորակոչման: Այս գործընթացի իրավական հետևանքների և առողջության պահպանման իրավունքի վերաբերյալ Պաշտպանի աշխատակազմում ստացված բազմաթիվ բողոքները փաստում են նշված փոփոխությունների խնդրահարույց լինելը և դրանց բացասական ազդեցությունը զորակոչի արդյունքների վրա:

Հատկանշական է, որ տարբեր զորամասեր իրականացված այցերի ընթացքում սպայական անձնակազմի հետ ունեցած զրույցները ևս վեր են հանել նույնաբնույթ մտահոգություններ: Մասնավորապես, նշվել է, որ նպատակահարմար չէ ՀՀ կառավարության թիվ 404-Ն որոշման 1-ից 7-րդ հոդվածներով փորձաքննված քաղաքացիների զորակոչը, քանի որ նշված առողջական խնդիրներով զինծառայողների ներգրավումը զինվորական ծառայության մեջ բարդություններ է առաջացնում ինչպես ծառայության պատշաճ կազմակերպման, այնպես էլ վերջիններիս առողջական վիճակի հետագա վատթարացման կանխարգելման տեսանկյունից:

Նշվածի կապակցությամբ տարեկան հաղորդման շրջանակներում Պաշտպանի հարցումներին ի պատասխան՝ ՀՀ քննչական կոմիտեն հայտնել է, որ զինվորական հաստատություններում 2025 թվականի ընթացքում արձանագրված ենթադրյալ հանցավոր արարքներից 12-ը կատարվել են ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 404-Ն որոշման 1-7-րդ հոդվածներով նախատեսված՝ առողջական խնդիրներով զորակոչված զինծառայողների կողմից կամ նրանց մասնակցությամբ, ընդ որում 1-ը՝ 1-ին հոդվածով, 1-ը՝ 2-րդ հոդվածով, 10-ը՝ 7-րդ հոդվածով:





Պաշտպանի աշխատակազմի վերջին տարիների ընթացքում իրականացված մշտադիտարկումները, ստացվող բողոքները և ահազանգերը ցույց են տալիս, որ հոգեբուժական օգնության և սպասարկման ոլորտում առկա են մի շարք համակարգային խնդիրներ, որոնք հիմնականում պահպանել են նախորդ տարիներին արձանագրված ընդհանուր միտումները: Չնայած իրավասու մարմինների կողմից տեղեկացվում է այդ ուղղությամբ իրականացվող որոշ քայլերի մասին, ոլորտում առկա համակարգային խնդիրները ունեն շարունակական բնույթ և մնում են լուծման կարիք ունեցող: Պաշտպանի կողմից իրականացված մշտադիտարկման այցերի, ինչպես նաև զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների հետ տեղի ունեցած առանձնազրույցների արդյունքում արձանագրված համակարգային խնդիրներից են ներքոշարադրյալ խնդիրները:

01 Հոգեբանների հաստիքների թերի համալրվածություն և դրանց ոչ բավարար տարածքային բաշխվածություն.

02 Մասնագիտական կարողությունների, մեթոդական պատրաստվածության և շարունակական վերապատրաստումների մակարդակի անհամաչափություն.

03 Ռիսկային վարքագծով կամ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող զինծառայողների հետ անհատական աշխատանքների ոչ պատշաճ, անկանոն կամ ոչ կանոնակարգված իրականացում.

04 Հետսթրեսային, նևրոտիկ և ադապտացիոն խնդիրների վաղ հայտնաբերման, գնահատման և վերահսկման համար բավարար, միասնական և կանխարգելիչ մեխանիզմների բացակայություն.

05 Հոգեբուժական օգնություն տրամադրող ռազմաբժշկական հաստատության՝ մասնավորապես ՊՆ Երևանի կայազորային հոսպիտալի հոգեբուժական բաժանմունքի, շենքային և նյութատեխնիկական պայմանների անհամապատասխանությունը սահմանված նվազագույն ստանդարտներին:

Տարիներ շարունակ Պաշտպանը հետևողականորեն բարձրաձայնել է ոլորտում առկա համակարգային խնդիրների և օրենսդրական ու գործնական բացերի մասին: Այդուհանդերձ, 2025 թվականի ընթացքում իրականացված դիտարկումները փաստում են, որ արձանագրված մտահոգությունները հիմնականում պահպանվել են, իսկ իրավիճակի բարելավմանն ուղղված քայլերը դեռևս չեն ապահովել տեսանելի արդյունքներ:

Պաշտպանը հերթական անգամ հրավիրում է իրավասու մարմինների ուշադրությունը ՊՆ Երևանի կայազորային հոսպիտալի հոգեբուժական բաժանմունքի ոչ բարվոք շենքային պայմաններին: Անհրաժեշտ է հնարավորինս սեղմ ժամկետներում դիտարկել բաժանմունքի վերանորոգման կամ նոր մասնաշենքի կառուցման հարցը: Շենքային անբավարար պայմաններով է պայմանավորված նաև զինծառայողների զբոսանքի կազմակերպման անհնարինությունը: Բացօթյա տարածքի բացակայության պատճառով զինծառայողները որպես զբոսանքի վայր օգտագործում են շենքի ներսում առանձնացված փոքր ծխարանը, ինչի հետևանքով լինում են օրեր, երբ բուժում ստացող անձինք ընդհանրապես դուրս չեն գալիս բաժանմունքից: Դրա հետ մեկտեղ, հոգեբուժական բաժանմունքում առկա են մի շարք այլ խնդիրներ: Մասնավորապես՝ ստացիոնար բուժման ընդունման գործընթացում ոչ միշտ է հաշվի առնվում զինծառայողների ցանկությունը. թեև վերջիններս ստորագրում են բուժում ստանալու համաձայնության մասին դիմումը և հոսպիտալի անձնակազմի տեղեկացմամբ՝ զինծառայողին հարկադիր բուժման ենթարկելու նպատակով դատարան դիմելու դեպքեր չեն արձանագրվել: Խնդրահարույց է նաև զինծառայողների՝ սեփական միջոցների հաշվին նախընտրած բժշկի կողմից զննության ենթարկվելու իրավունքի իրացումը, որի հնարավորությունը ներկայում փաստացի բացակայում է: Զինծառայողների հոգեբուժական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքին առնչվող այլ խնդիրներին Պաշտպանը մանրամասն անդրադարձել է նախորդ տարեկան հաղորդմամբ, որոնք շարունակում են մնալ արդիական:

Պաշտպանության նախարարութան 2024 թվականին տրամադրած պարզաբանումները և 2025 թվականին Պաշտպանի աշխատակազմում իրականացված արձանագրումները փաստում են, որ Երևանի կայազորային հոսպիտալի հոգեբուժական բաժանմունքի կապիտալ վերանորոգում կամ այլընտրանքային շինության տրամադրում չի նախատեսվում: Որպես խնդրի հեռանկարային լուծում՝ ՊՆ-ը մատնանշել է հոգեկան առողջության ծանր խնդիրներ և փսիխոտիկ վիճակներ ունեցող զինծառայողների բուժումը քաղաքացիական հատվածին պատվիրակելու մտադրությունը, մասնավորապես՝ «Նուբարաշեն» հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոնում, վերջինիս վերակառուցման ավարտից հետո: Միաժամանակ, նախատեսվում է նևրոտիկ, հետսթրեսային և այլ ֆունկցիոնալ խանգարումներ ունեցող զինծառայողների բուժումն ապագայում իրականացնել հոգեվերականգնողական ծառայության միջոցով:

Պաշտպանին հասցեագրված դիմումներից մեկով Երևանի կայազորային հոսպիտալի հոգեբուժական բաժանմունքում բուժում ստացող զինծառայողը հայտնել է, որ, չնայած իր դիմումներին՝ հոսպիտալում չի ապահովվել հոգեբանական աջակցություն ստանալու իրավունքը: Պաշտպանի աշխատակազմում իրականացված ուսումնասիրությունների և Պաշտպանության նախարարության հետ համագործակցության արդյունքում խնդիրը ստացել է լուծում: Միաժամանակ, պարզվել է, որ անցկացվող զորակոչերի շրջանակներում հոսպիտալի հոգեբանի միակ հաստիքը զբաղեցնող մասնագետը գործող պրակտիկայի համաձայն՝ գործուղվում է ՊՆ կենտրոնական հավաքակայան: Նշվածով պայմանավորված՝ զորակոչերի շրջանակներում

չի ապահովվում հոսպիտալում զինծառայողների հոգեբանական աջակցություն ստանալու իրավունքը:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ **Պաշտպանը անհրաժեշտ է համարում ապահովել այնպիսի կազմակերպչական լուծումներ, որոնք կերաշխավորեն զինծառայողների հոգեբանական աջակցության ծառայությունների անընդհատ և հասանելի տրամադրումը, այդ թվում՝ բացառելով այնպիսի գործնական իրավիճակների առաջացումը, երբ բժշկական հաստատությունում համապատասխան մասնագետի բացակայության պատճառով զինծառայողները զրկվում են անհրաժեշտ մասնագիտական աջակցության հնարավորությունից:**

Պաշտպանը կարևորում է ոլորտում իրականացվող ռազմավարական պլանավորումները, սակայն միաժամանակ անհրաժեշտ է համարում ուշադրություն հրավիրել առկա խնդիրների ժամանակին լուծման կարևորության վրա: Քանի դեռ ՊՆ Երևանի կայազորային հոսպիտալի հոգեբուժական բաժանմունքը շարունակում է մնալ զինծառայողների ստացիոնար հոգեբուժական բուժօգնության կազմակերպման հիմնական գործող հաստատությունը, դրա շենքային և կենցաղային պայմանների բարելավումը պետք է դիտարկվի որպես առաջնահերթություն: Զինծառայողների առողջության պահպանման իրավունքի լիարժեք ապահովման նպատակով կարևոր է, որ գործող ենթակառուցվածքներում բուժօգնության կազմակերպման պայմանները մշտապես համապատասխանեն անհրաժեշտ չափանիշներին:

Հիմք ընդունելով վերհանված խնդիրները՝ Պաշտպանն անհրաժեշտ է համարում՝

- ✓ **բարելավել Երևանի կայազորային հոսպիտալի հոգեբուժական բաժանմունքի շենքային պայմանները հնարավորինս սեղմ ժամկետում՝ այդ թվում դիտարկելով նոր շենքային պայմանների ապահովման հնարավորությունը,**
- ✓ **երաշխավորել հոգեբուժական բաժանմունքում գտնվող զինծառայողների՝ ամենօրյա առնվազն մեկ ժամ տևողությամբ զբոսանքի իրավունքի լիարժեք իրացումը,**
- ✓ **ձեռնարկել անհրաժեշտ կազմակերպչական միջոցներ՝ Երևանի կայազորային հոսպիտալի հոգեբուժական բաժանմունքում բուժում ստացող զինծառայողների հոգեբանական աջակցություն ստանալու իրավունքի արդյունավետ իրացումը երաշխավորելու նպատակով, այդ թվում՝ ապահովելով համապատասխան մասնագետի շարունակական ներկայությունը կամ այլ գործնական մեխանիզմներ, որոնք կբացառեն զորակոչի գործընթացով պայմանավորված մասնագետի բացակայության պատճառով նշված իրավունքի իրացման սահմանափակումը:**

3. Զինծառայողների արժանապատվության իրավունքի ապահովումը՝ պատշաճ կենսապայմանների, հիգիենայի չափանիշների և բժշկական աջակցության համատեքստում

Զինծառայողների արժանապատվության իրավունքի երաշխավորումը պատշաճ կենսապայմանների, հիգիենայի ապահովման և բժշկական աջակցության համատեքստում հանդիսանում է պետության անմիջական պարտավորությունը՝ հիմնված այն հայեցակարգային դրույթի վրա, որ զինծառայողը «համազգեստով քաղաքացի է» և օգտվում է մարդու հիմնարար իրավունքների ողջ ծավալից: Այս իրավունքն իր ամրագրումն է գտել ինչպես միջազգային իրավական փաստաթղթերում, մասնավորապես՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածում և ԵԽ Նախարարների

կոմիտեի CM/Rec(2010)4 հանձնարարականում, այնպես էլ ներպետական օրենսդրությամբ՝ ՀՀ Սահմանադրության 23-րդ և 85-րդ հոդվածներով ու «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով: Ըստ այդմ, զինվորական ծառայության առանձնահատկություններով պայմանավորված սահմանափակումները չեն կարող արդարացնել արժանապատվությունը նվաստացնող կենցաղային պայմանները կամ առողջության պահպանման իրավունքի անտեսումը, քանի որ պատշաճ կենսապահովումն ու որակյալ բժշկական սպասարկումն անմիջականորեն շաղկապված են զինված ուժերի մարտունակության և անձնակազմի բարոյահոգեբանական վիճակի հետ:

Իրավական տեսանկյունից վերոնշյալ բոլոր հանգամանքները պետության համար դիտվում են ոչ թե որպես սովորական կազմակերպչական բացեր, այլ որպես Կոնվենցիայի 2-րդ և 3-րդ հոդվածներով, ինչպես նաև Սահմանադրությամբ ամրագրված կյանքի և առողջության պահպանման իրավունքների համատեքստում առկա դրական պարտավորությունների մասը: Ծառայողական միջավայրի որակը հանդիսանում է այն նախապայմանը, որի վրա հիմնվում են զինծառայողի անվտանգության, առողջության և արժանապատիվ վերաբերմունքի բոլոր երաշխիքները: Ավելին, Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec (2010)4 հանձնարարականի բացատրական հուշագրի «ԺԵ» կետի համաձայն՝ համապատասխան ստանդարտի բնակարանի իրավունքը պաշտպանվում է Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի 11-րդ հոդվածով և Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի 31-րդ հոդվածի 1-ին մասով: Այդ հոդվածները կիրառելի են զինված ուժերին հատկացվող բնակելի տարածության նկատմամբ:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի
թիվ CM/Rec (2010)4
հանձնարարականի բացատրական հուշագիր

«ԺԵ» Անկախ զինծառայողի կոչումից՝ նա իրավունք ունի օգտվելու այնպիսի կացարանից, որը ունի բավարար լուսավորություն և օդափոխություն (ներառյալ բավարար ջեռուցում), մաքուր է, լավ վիճակում է, բավարար չափով կահավորված է և ունի բավարար բնակելի տարածք՝ դրանում ապրող անձանց թվին համապատասխան:

Այն դեպքում, երբ միջավայրը չի ապահովում նվազագույն անվտանգ և առողջարար պայմաններ, պետությունը առերևույթ չի կատարում ծառայության պատշաճ պայմաններ ապահովելու պարտավորությունները:

Բացատրական հուշագրով ներկայացվում են նաև կենցաղային այլ պայմանների ապահովման պահանջներ, մասնավորապես զուգարանները պետք է լինեն քնելու տարածքներից առանձնացված, միաժամանակ, բոլոր տարածքները պետք է պարբերաբար մաքրվեն: Զորանոցային տիպի կացարաններում կանանց և տղամարդկանց հատվածները պետք է լինեն առանձնացված:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի
թիվ CM/Rec (2010)4
հանձնարարականի բացատրական հուշագիր

«ԺԵ» Զինծառայողի անձնական տարածքը, նույնիսկ ընդհանուր կացարաններում պետք է դիտարկել որպես նրանց մասնավոր տարածք:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի
թիվ CM/Rec (2010)4
հանձնարարականի բացատրական հուշագիր

«ԺԵ» Զինծառայողի անձնական տարածքը, նույնիսկ ընդհանուր կացարաններում պետք է դիտարկել որպես նրանց մասնավոր տարածք:

Այս համատեքստում պետության պարտավորությունները ներառում են՝

Կենսաապահովման նվազագույն ստանդարտների երաշխավորում՝ համապատասխան սննդի, ջրի, ջեռուցման, հիգիենայի ապահովում,
ռիսկերի գնահատում և մշտադիտարկում,
շենքային պայմանների պարբերական ստուգում,
վտանգավոր տարածքների անհապաղ չեզոքացում,
ժամանակին վերանորոգումներ կամ նոր շենքի կառուցում,
հարմարավետ և արժանապատիվ կեցության ապահովում՝ հատկապես երկարատև տեղակայումների պարագայում

2025 թվականի ընթացքում զինվորական հաստատություններ, այդ թվում՝ զորամասեր, հոսպիտալներ և մարտական դիրքեր կատարած այցերի շրջանակներում Պաշտպանը և իր ներկայացուցիչները մանրամասն ուսումնասիրել են զինծառայողների կենցաղային և բժշկական ապահովման իրական վիճակը: Այս այցերը հնարավորություն են տվել տեղում գույքագրել այն խնդիրները, որոնք հաճախ դուրս են մնում պաշտոնական հաշվետվությունների շրջանակից, սակայն էական ազդեցություն ունեն զինծառայողի ամենօրյա բարեկեցության վրա: Տեղում իրականացված դիտարկումները փաստում են, որ չնայած իրականացվող շինարարական և արդիականացման աշխատանքներին, որոշ ստորաբաժանումներում դեռևս առկա են ենթակառուցվածքային զգալի թերություններ:

Զինծառայողների համար արժանապատիվ, ապահով և առողջարար կացարանային պայմանների ապահովումը Պաշտպանի մշտադիտարկումների առաջնահերթ ուղղություններից է: Պաշտպանի և նրա ներկայացուցիչների կողմից իրականացվող պարբերական այցերը, զինծառայողների հետ անցկացվող առանձնազրույցները, տեղում իրականացվող դիտարկումները, ինչպես նաև ստացվող դիմում-բողոքները մշտապես մնում են այն կարևոր մեխանիզմը, որի միջոցով գնահատվում է՝ արդյո՞ք ծառայողական միջավայրը համապատասխանում է մարդու իրավունքների պաշտպանության նվազագույն չափանիշներին: Այս մշտադիտարկումները վկայում են, որ զինվորական ենթակառուցվածքների և կեցության պայմանների մի շարք գործնական և համակարգային խնդիրներ շարունակում են մնալ մտահոգիչ: Արձանագրված հիմնական խնդիրները վերաբերում են հետևյալին.

2025 թվականի ընթացքում իրականացված մշտադիտարկումների արդյունքում արձանագրվել են բազմաթիվ խնդիրներ, որոնք, ի թիվս այլնի, վերաբերել են զինծառայողների կենցաղային և կացարանային, սանիտարահիգիենիկ, սոցիալ-կենցաղային և մատչելիության պատշաճ պայմանների ապահովմանը: Ստորև ներկայացված են վերհանված խնդիրները՝ տոկոսային հարաբերակցությամբ.



Հաշվետու ժամանակահատվածում իրականացված մոնիթորինգային այցերից մեկի ընթացքում ՀՀ ՊՆ N զորամասում արձանագրվել են ջրամատակարարման հետ կապված խնդիրներ: Ուսումնասիրությունը փաստել է, որ զորամասը չունի առանձնացված ջրագիծ և միացված է քաղաքային ընդհանուր ցանցին, ինչի հետևանքով տարածքում իրականացվում են պարբերական ջրանջատումներ՝ խաթարելով զորամասի բնականոն գործունեությունն ու զինծառայողների պատշաճ հիգիենիկ պայմանների ապահովումը: Նշված խնդիրը հաստատվել է նաև Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի «թեժ գծին» ստացված ահազանգով, որով բարձրաձայնվել է ջրամատակարարման հետ կապված խնդիրների և դրանցից բխող կենցաղային դժվարությունների մասին: Խնդրի կապակցությամբ համապատասխան գրություններ են հասցեագրվել իրավասու մարմիններին՝ սեփական ջրագծի կառուցման կամ այլընտրանքային լուծումների միջոցով հարցին վերջնական լուծում տալու նպատակով:

Այցերի ընթացքում առանձնահատուկ ուշադրություն է դարձվել սննդի կազմակերպման որակին և սանիտարահիգիենիկ պայմաններին: Որպես դրական արձանագրում՝ պետք է փաստել, որ զորամասերում սննդի կազմակերպման որակը էականորեն բարելավվել է: Տեղում իրականացված դիտարկումները և զինծառայողների հետ առանձնազրույցները վկայում են, որ սննդակարգը բազմազան է, մատուցվող սնունդը՝ որակյալ, իսկ չափաբաժինները համապատասխանում են սահմանված նորմերին: Այդուհանդերձ, Պաշտպանն արձանագրում է, որ սննդի որակին զուգահեռ՝ անհրաժեշտ է հետևողական լինել սանիտարահիգիենիկ նորմերի անշեղ պահպանման հարցում:

2025 թվականի ընթացքում Պաշտպանի և աշխատակազմի ներկայացուցիչների կողմից իրականացված այցերի արդյունքները փաստում են, որ կացարանային պայմանների բարելավումը, ջեռուցման հուսալի համակարգերի առկայությունը և սանիտարահիգիենիկ հանգույցների պատշաճ վիճակը ուղղակիորեն նպաստում են զինված ուժերում բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի ձևավորմանը: Պաշտպանն արձանագրում է, որ հատկապես առաջնագծի հենակետերում և մշտական տեղակայման վայրերում կենցաղային հարմարությունների արդիականացումը պետք է կրի շարունակական բնույթ, քանի որ զինծառայողի համար ստեղծված արժանապատիվ միջավայրը պետության հոգածության առաջնային դրսևորումն է: Այդուհանդերձ,

իրականացված այցերի ընթացքում արձանագրվել է, որ որոշ զորամասերում դեռևս առկա են ենթակառուցվածքային խնդիրներ, որոնք անմիջականորեն ազդում են ծառայության որակի վրա: Մասնավորապես, մտահոգիչ է շինությունների խոնավությունը և կոմունալ-կենցաղային սպասարկման ընդհանուր մաշվածությունը, որոնց հասցեագրումը պահանջում է հետևողական քայլեր և պետական վերահսկողություն: Առանձնահատուկ ուշադրության է արժանի զորամասային բուժկետերի վիճակը. դիտարկումները ցույց են տվել, որ դրանց մի մասը գտնվում է վատթար պայմաններում և ունի հիմնանորոգման հրատապ կարիք: Շենքային անբավարար պայմանները, հարդարման շերտերի քայքայումն ու սանիտարական հանգույցների ոչ պատշաճ վիճակը խոչընդոտում են բժշկական օգնության պատշաճ կազմակերպմանը և կարող են բացասաբար անդրադառնալ բուժվող զինծառայողների ապաքինման ընթացքի վրա: Պաշտպանն ընդգծում է, որ բուժկետերի արդիականացումն ու վերանորոգումը պետք է դիտարկվեն որպես առաջնահերթություն, քանի որ առողջապահական սպասարկումն իրականացնող օղակը չի կարող գործել սահմանված հիգիենիկ և կառուցվածքային նորմերի խախտմամբ:

Պաշտպանը կարևորում է զինծառայողների արժանապատվության իրավունքի ապահովումը՝ կենսապահովման պատշաճ պայմանների և հասանելի ու որակյալ բժշկական աջակցության համակցված ապահովման միջոցով: Չնայած իրավասու մարմինների կողմից զորամասերում կենսապայմանների շարունակական բարելավման ուղղությամբ իրականացվող աշխատանքներին՝ առանձին զորամասերում բուժկետերի ենթակառուցվածքային վիճակի բարելավումը շարունակում է պահանջել հետևողական ուշադրություն:

Այս համատեքստում կարևոր է ապահովել բուժկետերի շենքային և նյութատեխնիկական պայմանների համապատասխանությունը սահմանված չափանիշներին՝ զինծառայողների առողջության պահպանման իրավունքի արդյունավետ իրացման նպատակով:

Վերոգրյալի հաշվառմամբ և արձանագրված խնդիրների համակարգային լուծման նպատակով՝ Մարդու իրավունքների պաշտպանն անհրաժեշտ է համարում՝

- ***ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ զորամասերի բուժկետերի ենթակառուցվածքային և նյութատեխնիկական պայմանների համապատասխանությունը սահմանված չափանիշներին ապահովելու ուղղությամբ՝ նպատակ ունենալով երաշխավորել զինծառայողների առողջության պահպանման իրավունքի արդյունավետ իրացումը և անհրաժեշտ բժշկական օգնության ու սպասարկման հասանելիությունը,***
- ***մշակել և իրականացնել թիրախային ծրագիր՝ զորամասերում ինքնուրույն ջրամատակարարման համակարգերի (ինքնավար ջրագծերի կամ պահուստային ջրամբարների) ներդրման ուղղությամբ, որպեսզի բացառվի քաղաքային ցանցում տեղի ունեցող ջրանջատումների բացասական ազդեցությունը զինծառայողների կենցաղի և սանիտարահիգիենիկ պայմանների վրա,***
- ***իրականացնել գույքագրված խնդրահարույց, հատկապես բարձր խոնավություն ունեցող և անբավարար տեխնիկական վիճակում գտնվող կացարանների փուլային հիմնանորոգում՝ նպատակ ունենալով ապահովել շինությունների համապատասխանությունը Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով և ներպետական օրենսդրությամբ սահմանված արժանապատիվ կենսապայմանների չափանիշներին,***
- ***զորանոցային և դաշտային պայմաններում ապահովել կին զինծառայողների համար առանձնացված սանիտարական հանգույցների և անձնական հիգիենայի***

պատշաճ պայմանների ստեղծումը, ինչպես նաև սահմանել խիստ վերահսկողություն դրանց պարբերական ախտահանման ու սպասարկման նորմերի նկատմամբ,

- ***ձեռնարկել հրատապ միջոցներ զորամասերի բուժկետերի շենքային պայմանների և նյութատեխնիկական հագեցվածության բարելավման ուղղությամբ, որպեսզի երաշխավորվի զինծառայողների առողջության պահպանման իրավունքի արդյունավետ իրացումը և բժշկական օգնության հասանելիությունը պատշաճ հիգիենիկ միջավայրում:***

4. Զինվորական ծառայության ավարտից հետո բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքը

Զինվորական ծառայությունը կապված է առողջության և կյանքի համար բարձր ռիսկայնության հետ, ինչն էլ պետության համար առաջացնում է անվերապահ պարտավորություն՝ ապահովելու զինծառայողների սոցիալական և առողջապահական պաշտպանվածությունը ոչ միայն ծառայության ընթացքում, այլև դրա ավարտից հետո: Պետության կողմից մատուցվող բժշկական օգնության շարունակականությունը զինվորական ծառայությունից արձակված անձանց համար պարզապես սոցիալական երաշխիք չէ, այլ երախտագիտության և արդարության դրսևորում: «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքն ամրագրում է պետության հստակ հանձնառությունը երկարամյա ծառայության կամ հաշմանդամության կենսաթոշակ ստացող նախկին զինծառայողների առողջապահական իրավունքների նկատմամբ: Օրենսդրական այս երաշխիքը տարածվում է նաև ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքի անդամների վրա՝ նրանց համար սահմանելով բժշկական օգնության և սպասարկման իրավունքի իրացման առանձնահատկություններ:

Մարդու իրավունքների պաշտպանի կողմից իրականացված ուսումնասիրությունները և Պաշտպանին հասցեագրված բողոքները փաստում են, որ ծառայության հետևանքով առողջական խնդիրներ ձեռք բերած անձինք ոչ միշտ են կարողանում գործնականում օգտվել պետության կողմից երաշխավորված անվճար բուժսպասարկման իրավունքից:

Մասնավորապես՝

01 Գործնականում անվճար բժշկական օգնություն ստանալու իրավունքից չեն օգտվում այն քաղաքացիները, ովքեր, ունենալով ծառայության ընթացքում ձեռք բերված հիվանդություն, զորացրվել են ժամկետը լրանալու կապակցությամբ, քանի որ վերջիններիս հիվանդությունը չի հանգեցրել զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչվելուն: Արդյունքում՝ այս անձինք փաստացի դուրս են մնում անվճար բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքից՝ զրկվելով պետական հոգածությունից ծառայության հետևանքով առաջացած առողջական խնդիրների լուծման հարցում:

02 Այն քաղաքացիները, ովքեր պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ընթացքում ունեցել են բժշկական օգնության ցուցում, սակայն այն չեն ստացել ծառայության ժամանակահատվածում, զրկված են անվճար բժշկական սպասարկման իրավունքից:

03 Զինվորական ծառայության ընթացքում ստացած վնասվածքի կամ հիվանդության պատճառով զորացրված այն անձինք, ովքեր չեն ճանաչվել հաշմանդամություն ունեցող, պահպանում են հիվանդանոցային բժշկական օգնության իրավունքը բացառապես անձի ֆունկցիոնալության գնահատման (կամ բժշկասոցիալական փորձաքննության) արդյունքում կազմված վերականգնողական անհատական ծրագրի շրջանակներում և դրա գործողության ժամկետում:

04 Պայմանագրային այն զինծառայողները, ովքեր պահեստազոր են արձակվել կադրերի տրամադրության տակ գտնվելու ժամկետը լրանալու հիմքով, զրկված են անվճար բժշկական օգնության իրավունքից: Սա վերաբերում է նաև այն դեպքերին, երբ առողջական խնդիրը ձեռք է բերվել ծառայության ընթացքում, սակայն արձակման հիմքը չի եղել հիվանդությունը կամ երկարամյա ծառայությունը:

Հիմք ընդունելով վերհանված խնդիրները՝ Պաշտպանն անհրաժեշտ է համարում՝

- ✓ ***ներդնել գործուն կառուցակարգեր, որոնք թույլ կտան պարտադիր ժամկետային զինծառայողներին զորացրվելուց հետո ստանալ անվճար բժշկական օգնություն, եթե ծառայության ընթացքում նրանց մոտ ախտորոշվել է բժշկական միջամտություն պահանջող հիվանդություն,***
- ✓ ***օրենսդրական փոփոխությամբ ամրագրել, որ ծառայության հետ կապված վնասվածքի, խեղման կամ հիվանդության պատճառով զորացրված անձինք օգտվում են անվճար հիվանդանոցային սպասարկման իրավունքից՝ անկախ հաշմանդամության կարգավիճակի առկայությունից,***
- ✓ ***օրենսդրորեն երաշխավորել նախկին պայմանագրային զինծառայողների անվճար բժշկական օգնություն ստանալու իրավունքը (ծառայության ընթացքում ձեռք բերված խնդիրների մասով)՝ անկախ պահեստազոր արձակվելու հիմքից կամ պատճառից:***

ԳԼՈՒԽ 4. ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ

1. Մարդու իրավունքների պաշտպանը՝ որպես կարգապահական վարույթի մասնակիցների բողոքներ քննող անկախ մեխանիզմ

Միջազգային իրավական փաստաթղթերում և դրանց կիրառման պրակտիկայում զինված ուժերում կարգապահությունը դիտարկվում է ոչ միայն որպես ծառայողական կարգուկանոնի և արդյունավետ ենթակայության ապահովման միջոց, այլև որպես մարդու իրավունքների պաշտպանության համակարգի կարևոր բաղադրիչ: Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայում (մասնավորապես՝ Kalashnikov v. Russia, 2002 թ., Peers v. Greece, 2001թ. գործով) ընդգծվել է, որ զինվորական ծառայության հատուկ բնույթը և կարգապահական հարաբերությունների առկայությունը չեն ազատում պետությանը զինծառայողների իրավունքների պաշտպանության նկատմամբ իր դրական պարտավորություններից, այդ թվում՝ կարգապահական միջոցների կիրառման ընթացքում:

Միևնույն ժամանակ, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդվածից բխում է պետությունների պարտավորությունը ապահովելու պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքի իրացումը, ինչը ենթադրում է զինծառայողների համար կարգապահական վարույթների շրջանակում իրենց իրավունքների հնարավոր խախտումները բողոքարկելու գործնականում արդյունավետ և հասանելի իրավական միջոցների առկայություն:

ՀՀ զինված ուժերում կարգապահության ապահովման հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագրքով և վերաբերելի այլ իրավական փաստաթղթերով: Նշված իրավական կարգավորումները կարգապահությունը դիտարկում են որպես զինվորական ծառայության անբաժանելի տարր՝ միաժամանակ սահմանելով կարգապահական պատասխանատվության կիրառման իրավաչափ հիմքերն ու ընթացակարգերը:

Ինչպես արդեն նշել ենք, 2025 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմ ստացվել է զինծառայողների և նրանց ընտանիքների պաշտպանությանը վերաբերելի ավելի քան 900 բողոք:

📈 Ստացված 900 բողոքի 7%-ը (≈ 63 բողոք) վերաբերում է՝

⚖️ վատ վերաբերմունքի և բռնության դեպքերի արգելքին, ինչպես նաև՝ կարգապահության ապահովման գործընթացի հետ կապված խնդիրներին:



Պաշտպանի աշխատակազմում իրականացված ուսումնասիրությունների արդյունքում արձանագրվել են 2025 թվականին արձանագրված առավել հաճախ հանդիպող կարգապահական խախտումները.

Ըստ Պաշտպանության նախարարությունից ստացված տեղեկությունների՝ 2025 թվականի ընթացքում առավել հաճախ կիրառված կարգապահական տույժերն են՝

ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ

ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ

ԽԻՍՏ ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Զինված ուժերում կարգապահության ապահովման և դրա՝ իրավունքի գերակայության վրա հիմնված կիրառման հարցերը 2025 թվականի ընթացքում ևս Մարդու իրավունքների պաշտպանի կողմից շարունակել են գնահատվել որպես զինծառայողների իրավունքների պաշտպանության և զինվորական ծառայության օրինականության ապահովման առանցքային ուղղություններից մեկը: Պաշտպանը հետևողականորեն արձանագրել է, որ կարգապահության կայուն և արդյունավետ ապահովումը, և այդ գործընթացում կիրառվող ցանկացած միջամտություն պետք է համահունչ լինի իրավունքի գերակայության սկզբունքներին և չհանգեցնի զինծառայողների արժանապատվության նվաստացման կամ իրավունքների կամայական սահմանափակման:

2025 թվականի ընթացքում իրականացված ուսումնասիրությունները, այդ թվում՝ ստացված բողոքների վերլուծությունը, զորամասերում իրականացված մշտադիտարկումների ընթացքում արձանագրված խնդիրները ցույց են տալիս, որ զինված ուժերում կարգապահության ապահովման ոլորտում մի շարք խնդիրներ, որոնք արձանագրվել էին նաև 2024 թվականի տարեկան հաղորդմամբ, չնայած ձեռնարկված միջոցառումներին, շարունակել են պահպանել իրենց արդիականությունը:

Մասնավորապես, ի թիվս այլնի, արձանագրվել են կարգապահական պատասխանատվության կիրառման գործընթացում անհատական պատասխանատվության սկզբունքի ոչ լիարժեք ապահովման դեպքեր, ինչպես նաև կարգապահական տույժերի բողոքարկման մեխանիզմների գործնական անարդյունավետություն, ինչը վկայում է խնդիրների համակարգային բնույթի և շարունակական բարելավման անհրաժեշտության մասին:

Այս համատեքստում Պաշտպանն իր մանդատի շրջանակներում գործում է որպես զինված ուժերում կարգապահական վարույթների ընթացքում մարդու իրավունքների պաշտպանության անկախ վերահսկողական մեխանիզմ: Այս գործընթացը գնահատվում է ոչ միայն Պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրության արդյունքներով և զորամասերում ու ռազմական հաստատություններում իրականացված մշտադիտարկումներով, այլև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, զանգվածային լրատվամիջոցների հրապարակումների և գործընկեր կառույցների հետ մասնագիտական փոխգործակցության շրջանակում հավաքագրված տեղեկություններով:

Հաշվետու տարում Պաշտպանի և աշխատակազմի ներկայացուցիչների կողմից, ի թիվս այլնի, իրականացվել են նաև մշտադիտարկման այցեր տարբեր զինվորական հաստատություններ, այդ թվում՝ զորամասեր, զինվորական հոսպիտալներ, կենտրոնական հավաքակայան, ռազմական ոստիկանության բաժիններ և այլն.

2025 թվականի ընթացքում իրականացվել է՝

22

մշտադիտարկման այց

այդ թվում՝

☐ զինկոմիսարիատներ	☐ զորամասեր
☐ Ռազմական ոստիկանության բաժիններ	☐ կարգապահական վաշտեր
☐ զինվորական հոսպիտալներ	☐ այլ հաստատություններ

Մշտադիտարկման այցերի ընթացքում կարգապահության ապահովումը դիտարկվել է որպես զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության կարևոր բաղադրիչ

2025 թվականի ընթացքում Պաշտպանի մասնակցությամբ, ինչպես նաև նրա հանձնարարությամբ իրականացված մշտադիտարկման և արագ արձագանքման շրջանակներում այցեր են իրականացվել կենտրոնական հավաքակայան, զինվորական հոսպիտալներ, Գեղարքունիքի, Վայոց Ձորի, Սյունիքի մարզերում տեղակայված զինվորական հաստատություններ, այդ թվում՝ Ռազմական ոստիկանության բաժիններ: Զորամասերի և այլ ռազմական հաստատությունների ղեկավար կազմը այցերի ընթացքում Պաշտպանին և աշխատակազմի ներկայացուցիչներին, ի թիվս այլ խնդիրների, ներկայացրել է նաև կարգապահության ապահովման հետ կապված գործնական խնդիրները, ծառայության ընթացքում առավել հաճախ հանդիպող կարգապահական տույժերի տեսակները, դրանց կիրառման պրակտիկան, ինչպես նաև կարգապահական խախտումների կանխարգելման ուղղությամբ իրականացվող աշխատանքները:

Միաժամանակ քննարկվել են զինվորական հանցագործությունների առնչությամբ ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված պատժի խստացման արդյունավետության, դրա կանխարգելիչ նշանակության և գործնական ազդեցության վերաբերյալ հարցեր:

Արձանագրված խնդիրները և դրանց լուծման եղանակները պարբերաբար ներկայացվում են իրավասու պետական մարմիններին: Կարևոր է արձանագրել, որ զինված ուժերում կարգապահության ամրապնդման ուղղությամբ Պաշտպանի բազմաթիվ առաջարկներ իրացվել են, մի շարք կարևոր հարցերի շուրջ քննարկումները շարունակվում են:

2025 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմում իրականացված ուսումնասիրություններով արձանագրված ոլորտային խնդիրները.

Զինծառայողների իրավունքների պաշտպանության ոլորտում առկա խնդիրների համակողմանի վերլուծության նպատակով՝ 2025 թվականի ընթացքում Պաշտպանի գործունեությունն ուղեկցվել է նաև քաղաքացիական հասարակության և ոլորտային մասնագետների հետ ակտիվ համագործակցությամբ, ինչն իր ամփոփումն է գտել 2025 դեկտեմբերի 26-ին կայացած Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր զինծառայողների իրավունքների պաշտպանության հարցերով փորձագիտական խորհրդի նիստում: Հարկ է նշել, որ բռնության ու խաղաղ պայմաններում մահացության դեպքերից շատերը ևս իրենց հիմքում ունեն նաև կարգապահական խախտումների հետ կապված հարցեր:

Զինված ուժերում խոշտանգման, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ցանկացած դրսևորում անթույլատրելի է և պետք է արժանանա պետության կողմից զրոյական հանդուրժողականության: Կարգապահության ապահովումը պետք է իրականացվի բացառապես իրավունքի գերակայության սկզբունքների պահպանմամբ՝ բացառելով կոլեկտիվ պատասխանատվության, կամայական միջամտությունների և անհամաչափ կարգապահական տույժերի կիրառումը: Պաշտպանը կարևորում է, որ կարգապահության ապահովման արդյունավետ համակարգը ներառի հասանելի, անկախ և գործնականում արդյունավետ բողոքարկման և վերահսկողական մեխանիզմներ, որոնց գործարկումը հանդիսանում է զինված ուժերում կարգապահության ամրապնդման և զինծառայողների իրավունքների արդյունավետ պաշտպանության անհրաժեշտ նախապայման:

Զինված ուժերում կարգապահության ապահովման, այդ գործընթացում անհատական պատասխանատվության սկզբունքի լիարժեք ապահովման, ինչպես նաև կարգապահական տույժերի բողոքարկման մեխանիզմների գործնական

արդյունավետության հարցերը շարունակաբար գտնվելու են Պաշտպանի մշտադիտարկման և առաջնահերթ ուշադրության կենտրոնում:

2. Իրավունքի գերակայության վրա հիմնված կարգապահությունը՝ որպես զինված ուժերում մարդու իրավունքների երաշխիք

Բանակում կարգապահության անընդհատ ամրապնդման և իրավախախտումների կանխարգելման համար անհրաժեշտ պայման է զինծառայողի մոտ իրավունքի նկատմամբ հարգանքի, իրավունքի գերակայության արժևորման, նշված արժեքներով հավասարապես պաշտպանված լինելու, միևնույն ժամանակ այլ անձանց իրավունքների նկատմամբ անվերապահ հարգանք դրսևորելու հատկանիշների ձևավորումը, ինչը հանդիսանում է զինված ուժերում իրավունքի վրա հիմնված կայուն կարգապահության ձևավորման առանցքային գրավականներից մեկը: Նշված մոտեցումը հավասարապես վերաբերում է զինծառայողների բոլոր խմբերին՝ անկախ նրանց զինվորական աստիճանից կամ զբաղեցրած պաշտոնից:

2025 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրված բողոքները, հասարակական կազմակերպությունների և լրատվամիջոցների հրապարակումները, զորամասեր մշտադիտարկման այցերը կրկին ցույց են տվել, որ ԶՈՒ-ում կարգապահության ամրապնդման անհրաժեշտությունը շարունակում է մնալ առաջնային լուծում պահանջող հարց:

Պաշտպանին հասցեագրված զինվորական կարգապահությանը վերաբերող բազմաթիվ բողոքներով (այդ թվում՝ մահացության և ինքնավնասման դեպքերի, բռնություն գործադրելու և այլն) պաշտոնական պարզաբանումներ են պահանջվել իրավասու պետական մարմիններից՝ Պաշտպանության նախարարությունից, Դատախազությունից, Քննչական կոմիտեից: Զինված ուժերում կարգապահական խախտումները, որոնք կարող են հանգեցնել նաև բռնության ու մահացության դեպքերի, անթույլատրելի են և խիստ մտահոգիչ: Այս հարցին Պաշտպանը նաև հրապարակային է անդրադարձել՝ նշելով, որ չափազանց կարևոր է իրավասու պետական մարմինների կողմից նման գործերով արդյունավետ քննության իրականացումը, ինչպես նաև համանման դեպքերի կանխարգելմանն ուղղված անհետաձգելի միջոցառումների ձեռնարկումն ու այդ նպատակով ամբողջական և պատշաճ կառուցակարգերի գործարկումը:

ՀՀ քննչական կոմիտեի տեղեկացմամբ՝ 2025 թվականի ընթացքում նախաձեռնված 176 վարույթով արձանագրվել է, որ ենթադրյալ հանցավոր արարքին նախորդել է զինծառայողի ոչ իրավաչափ վարքագիծը, այդ թվում՝ կարգապահական խախտումը:

Չնայած իրավասու մարմինների կողմից իրականացված աշխատանքներին՝ ոլորտում շարունակում են տեսանելի լինել բազմաթիվ խնդիրներ: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ կարգապահությանը վնասող կամ կարգապահական խախտումների նախադրյալներ ստեղծող գործոնները, ի թիվս այլնի, հետևյալն են.

Զինծառայողների իրավագիտակցության և իրավական իրազեկվածության ոչ բավարար մակարդակ. 2025 թվականին Պաշտպանի աշխատակազմում իրականացված ուսումնասիրությունների համաձայն՝ զինծառայողների *իրավագիտակցության և իրավական իրազեկվածության ոչ բավարար մակարդակը շարունակում է մնալ համակարգային խնդիր:* Այդ մասին են վկայում նաև տարբեր զինվորական հաստատություններ այցերի ժամանակ զինծառայողների հետ զրույցները: Մասնավորապես՝ զինծառայողների զգալի մասը լիարժեք տեղեկացված չէ կարգապահական տույժերի կիրառման գրավոր կարգի, դրանց հետ ծանոթանալու և բողոքարկման մեխանիզմների, բողոքարկելու իրավունքի մասին:

Պաշտպանի գնահատմամբ՝ նշված հանգամանքը հանդիսանում է կարգապահական համակարգի արդյունավետության լուրջ խոչընդոտ: Արդյունքում՝ կարգապահական վարույթներում սահմանված ընթացակարգային երաշխիքները, այդ թվում՝ բողոքարկման իրավունքը, չեն իրացվում իրենց բովանդակային իմաստով, ավելին՝ Պաշտպանի արձանագրումները ցույց են տալիս՝ տույժերի բողոքարկման պրակտիկան գործնականում ձևավորված չէ և արդյունավետ չի գործում[70]*:*

[70] Առավել մանրամասն տե՛ս 2024 թվականին Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների պաշտպանության վիճակի մասին հաղորդումը, էջեր 465-466, հասանելի է https://www.ombuds.am/images/files/4d1335361f1f7e9fbcc1cfc10679701e.pdf հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

Ըստ Պաշտպանության նախարարության՝ 2025 թվականի ընթացքում ՀՀ զինված ուժերում դեպքերի և պատահարների նվազեցմանն ուղղված միջոցառումների շրջանակում ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության կողմից իրականացվել են ընդհանուր և անհատական օպերատիվ պրոֆիլակտիկ կանխարգելիչ միջոցառումներ, մասնավորապես՝ նշված միջոցառումները ուղղված են եղել հանցագործություններ կամ իրավախախտումներ կատարելու հակում ունեցող, քրեական ենթամշակույթի բարքերին հարող զինծառայողներին հայտնաբերելուն, նրանց նկատմամբ անհատական բնույթի աշխատանքներ իրականացնելուն և վերջիններիս մշտապես օպերատիվ տեսադաշտում պահելուն, զորամասերում զինծառայողների շրջանում արգելված իրեր և առարկաներ հայտնաբերելուն:

Զինված ուժերում հոգեբանի և սպա-իրավաբանի կադրային թերի համալրվածություն. 2024 թվականին արձանագրված կադրային թերի համալրվածության խնդիրը պահպանվել է նաև 2025 թվականին: Մշտադիտարկումների ընթացքում արձանագրվել են դեպքեր, երբ հոգեբանի և/կամ հրամանատարի սոցիալ-իրավական աշխատանքների գծով օգնականի (սպա-իրավաբանի) հաստիքները թափուր են կամ առհասարակ չեն նախատեսվել:

Պաշտպանի գնահատմամբ՝ նշված ինստիտուտների ոչ լիարժեք գործարկումը էապես սահմանափակում է զինծառայողների իրավունքների պաշտպանության, իրավական իրազեկման, կանխարգելիչ աշխատանքների և հոգեկան առողջության պահպանման հնարավորությունները: Նշված խնդրի խորքային վերլուծությունը ներկայացված է 2024 թվականի տարեկան հաղորդման շրջանակում[71]*:*

Պաշտպանության նախարարության տեղեկացմամբ՝ 2025 թվականի ընթացքում ՀՀ զինված ուժերի մի շարք զորամասեր համալրվել են հոգեբանի չորս հաստիքներով: Համապատասխան զորամասերում 2025թ. հոգեբանների նշանակումից հետո արձանագրվել է մահվան ելքով դեպքերի շուրջ 66% նվազում: Միաժամանակ շուրջ 40%-ով նվազել են նաև ինքնավնասումներն ու ինքնախեղման դեպքերը: 2025թ. ընթացքում ՀՀ ԶՈՒ հատուկ նշանակության ուժերի հրամանատարական կազմում և ենթակա զորամասերում ևս ներդրվել են հոգեբանի հաստիքներ և ներկայումս համապատասխան աշխատանքներ են տարվում այդ հաստիքները համալրելու ուղղությամբ: 2025 թվականի ընթացքում ՀՀ զինված ուժերի ՊՆ N զորամասերում համալրվել է զորամասի հրամանատարի օգնական սոցիալ-իրավական աշխատանքների գծով սպայի թվով 20 հաստիք:

Զինկոմիսարիատներին դպրոցների կողմից տրամադրվող բնութագրերի տիպային բնույթի և միջգերատեսչական արդյունավետ համագործակցության խնդիր. Պաշտպանի և աշխատակազմի ներկայացուցիչների կողմից իրականացված ուսումնասիրությունների ընթացքում արձանագրվել է, որ զորակոչիկների վերաբերյալ կրթական հաստատությունների կողմից տրամադրվող բնութագրերը շարունակում են կրել ձևական և տիպային բնույթ: Զինկոմիսարիատներում իրականացված

[71] Առավել մանրամասն տե՛ս 2024 թվականին Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների պաշտպանության վիճակի մասին հաղորդումը, էջեր 466-468, հասանելի է https://www.ombuds.am/images/files/4d1335361f1f7e9fbcc1cfc10679701e.pdf հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ներկայացվող տեղեկատվությունը չի ապահովում անձի վարքագծի և հոգեբանական վիճակի ամբողջական գնահատում: Արդյունքում՝ զորամասերին փոխանցվող տեղեկատվությունը չի նպաստում հնարավոր հակահրավական վարքագիծը կանխելու նպատակով զինծառայողների հետ (մասնավորապես, քրեական ենթամշակույթ կրող, ինքնավնասման հակում ունեցող և այլն) անհատական աշխատանքների արդյունավետ իրականացմանը:

Պաշտպանն ընդգծում է, որ նման պրակտիկան խոչընդոտում է ռիսկերի վաղ բացահայտմանը և զորամասերում թիրախային կանխարգելիչ աշխատանքի արդյունավետ իրականացմանը և իրավախախտումների կանխարգելման տեսանկյունից անհրաժեշտ է ապահովել վարքագծային ռիսկերի ժամանակին նույնականացում և բոլոր վերաբերելի դերակատարների (այդ թվում՝ կրթության, պաշտպանության ոլորտում իրավասու գերատեսչությունների, ոստիկանության և այլն) միջև միջգերատեսչական համագործակցության գործուն մեխանիզմներ:

Միաժամանակ, կարգապահության և իրավունքահեն վարքագծի խթանման տեսանկյունից կարևոր է խրախուսանքի միջոցների հետևողական կիրառումը զինված ուժերում: 2024 թվականի ընթացքում մի շարք զորամասերում արձանագրվել է խրախուսանքի կիրառման դրական ազդեցությունը զինվորական կոլեկտիվում համախմբվածության և կարգապահության մակարդակի բարձրացման վրա: Նման մոտեցման արդյունավետությունը արձանագրվել է նաև 2025 թվականի ընթացքում:

Ընդհանուր առմամբ, հաշվետու տարվա ընթացքում գրեթե բոլոր զորամասեր, ինչպես նաև ՌՈ բաժիններ իրականացված այցերի ընթացքում դրանց ղեկավար կազմի հավաստմամբ, ինչպես նաև Պաշտպանի աշխատակազմ ստացված բողոքների վերլուծությամբ արձանագրվել է, որ 2025 թվականի ընթացքում արձանագրված կարգապահական խախտումների մի մասը կատարվել է Կառավարության 2018թ. ապրիլի 12-ի թիվ 404-Ն որոշման 1-ից 7-րդ հոդվածների և, հատկապես, 7-րդ հոդվածի «գ» կետի (վերաբերում են հոգեկան առողջության և մտավոր հետամնացության հետ կապված խնդիրներին) համաձայն՝ սահմանափակումով պիտանի ճանաչված զինծառայողների կողմից: Նշված որոշմամբ, մինչև 2024 թվականին կատարված համապատասխան փոփոխությունները, նույն առողջական խնդիրներն ունեցող անձինք ճանաչվում էին ոչ պիտանի զինվորական ծառայության համար: Պաշտպանի գնահատմամբ՝ գործող իրավակարգավորումները, մասնավորապես՝ ՀՀ կառավարության 2018թ. ապրիլի 12-ի թիվ 404-Ն որոշումը, այս առումով վերանայման կարիք ունի, նկատի ունենալով՝ որոշման մեջ կատարված փոփոխությունների ու լրացումների ունեցած ազդեցությունը ԶՈՒ-ում կարգապահության պատշաճ երաշխավորման և մարդու իրավունքների պաշտպանության համատեքստում:

Սույն տարեկան հաղորդման նախապատրաստման շրջանակներում Մարդու իրավունքների պաշտպանը հարցադրումներ է կատարել ՀՀ քննչական կոմիտե՝ խնդրելով տրամադրել տեղեկատվություն այն մասին, թե զինվորական հաստատություններում 2025թ. ընթացքում արձանագրված ենթադրյալ հանցավոր արարքներից քանիսն են կատարվել ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 404-Ն որոշման 1-7-րդ հոդվածներով նախատեսված առողջական խնդիրներով զորակոչված զինծառայողների կողմից կամ նրանց մասնակցությամբ:

ՀՀ քննչական կոմիտեի տեղեկացմամբ՝ զինվորական հաստատություններում 2025 թվականի ընթացքում արձանագրված ենթադրյալ հանցավոր արարքներից 12-ը կատարվել են ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 404-Ն որոշման 1-7-րդ հոդվածներով նախատեսված՝ առողջական խնդիրներով զորակոչված զինծառայողների

կողմից կամ նրանց մասնակցությամբ, ընդ որում 1-ը՝ 1-ին հոդվածով, 1-ը՝ 2-րդ հոդվածով, 10-ը՝ 7-րդ հոդվածով:



Մեկ այլ դեպքում՝ Պաշտպանի աշխատակազմ է ստացվել տեղեկություն կարգապահական խախտում կատարած զինծառայողին բացահայտելու նպատակով մի շարք զինծառայողների նկատմամբ Ռազմական ոստիկանության ծառայողների կողմից ֆիզիկական բռնության, վատ վերաբերմունքի դրսևորման ենթադրյալ դեպքի վերաբերյալ: Պաշտպանի հանձնարարությամբ ՄԻՊ ներկայացուցիչներն իրականացրել են այց զինվորական հաստատություն, առանձնազրույցներ են ունեցել մի շարք զինծառայողների հետ: Այցի արդյունքներն ամփոփվել են, պարզաբանումներ են պահանջվել իրավասու պետական մարմնից: Բացի այդ, նշված դեպքի հանգամանքները քրեական վարույթի շրջանակում քննության առարկա դարձնելու և անձանց արարքներին անհրաժեշտ քրեաիրավական գնահատական տալու նպատակով գրություն է ուղարկվել Դատախազություն: ՀՀ քրեական օրենսգրքի 450-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով նախաձեռնվել է քրեական վարույթ և կատարվում է նախաքննություն:

Նշվածի կապակցությամբ Պաշտպանը արձանագրում է, որ կարգապահական խախտումների բացահայտման և պատասխանատվության ենթարկելու գործընթացը չի կարող իրականացվել իրավունքի գերակայության սկզբունքների խախտմամբ և որևէ

դեպքում չի կարող ներառել ֆիզիկական կամ հոգեբանական բռնության, հարկադրանքի կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կիրառություն: Նման գործելակերպը հակասում է կարգապահական վարույթների իրավական բնույթին և դրանց նպատակներին, խոշտանգումների, վատ վերաբերմունքի և բռնի գործողությունների բացառմանը, խաթարում է իրավունքի գերակայության և օրինականության սկզբունքների գործնական իրացումը, և փաստացի վերացնում է կարգապահության ապահովման և իրավական պատասխանատվության միջև սահմանագիծը՝ կարգապահության ապահովման գործընթացը վերածելով ապօրինի հարկադրանքի և կամայական միջամտությունների կիրառման մեխանիզմի:

Կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ մարդու իրավունքների պաշտպանության համակարգի վրա բացասաբար են անդրադառնում նաև մինչև զինված ուժեր ներգրավելն անձի մոտ արմատացած և տարածում գտած վարքագծի դրսևորումները:

Պաշտպանի դիտարկմամբ՝ իրավախախտումների կանխարգելման տեսանկյունից կարևոր է անձի վարքի ռիսկերի գնահատումն ու բացահայտված խնդիրների հիման վրա անհատական աշխատանքների պլանավորումն ու իրականացումը: Ընդ որում՝ այս հարցում բացառիկ դերակատարություն ունի **միջգերատեսչական պատշաճ համագործակցությունը բոլոր վերաբերելի դերակատարների միջև՝ կրթության, պաշտպանության ոլորտում իրավասու գերատեսչությունների, ոստիկանության և այլն:**

Զինվորական կարգապահության և կանոնադրական կարգի ամրապնդման գործում սկզբունքային է նաև իրավախախտումներից տուժած անձանց պաշտպանությունը: Ճիշտ է, իրավախախտումներից տուժած անձանց նկատմամբ, ըստ անհրաժեշտության, կիրառվում են օրենքով սահմանված պաշտպանության միջոցներ, կամ տուժած զինծառայողները տեղափոխվում են ծառայության այլ վայր, սակայն նրանց հետ անհրաժեշտ է ամենօրյա ռեժիմով անցկացնել հոգեբանական աջակցման աշխատանքներ և պահել հատուկ ուշադրության ու հոգածության ներքո:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Մարդու իրավունքների պաշտպանը արձանագրում է, որ զինված ուժերում կարգապահության ապահովման ոլորտում արձանագրված խնդիրները 2025 թվականի ընթացքում չեն կրում առանձին կամ պատահական բնույթ, այլ շարունակում են արտահայտվել որպես համակարգային բացեր կարգապահական վարույթների իրավական և ինստիտուցիոնալ կառուցակարգերում: Արդյունքում՝ զինված ուժերում իրավունքի վրա հիմնված կայուն կարգապահության ապահովումը շարունակում է մնալ առաջնային նշանակություն ունեցող, սակայն ամբողջապես չլուծված խնդիր:

Բանակում ամուր և արդյունավետ կարգապահության ձևավորումը անմիջականորեն պայմանավորված է զինծառայողների ծառայության նկատմամբ գիտակցված, պատասխանատու և արհեստավարժ մոտեցմամբ, որն իր հերթին անխուսափելիորեն ենթադրում է մարդու իրավունքների ապահովում, ներառյալ՝ մարդու արժանապատվության նկատմամբ հարգանքի ձևավորումն ու պահպանումը: Նշված մոտեցումը հավասարապես վերաբերում է զինծառայողների բոլոր խմբերին՝ անկախ զբաղեցրած պաշտոնից կամ զինվորական աստիճանից:

Պաշտպանի գնահատմամբ՝ վերոգրյալը վկայում է, որ զինված ուժերում իրավունքի վրա հիմնված կարգապահության ձևավորումը դեռևս պահանջում է համակարգային

մոտեցում, հետևողական աշխատանք և իրավունքի գերակայության սկզբունքի գործնական ընկալում՝ որպես զինվորական ծառայության անբաժանելի բաղադրիչ:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ առաջարկվում է՝

- ✓ ***մշակել վարքագծային ռիսկերի վաղ նույնականացման և արձագանքման միասնական մեխանիզմ՝ զորակոչից մինչև ծառայության ավարտը,***
- ✓ ***վերանայել և կատարելագործել զինվորական պատրաստության ծրագրերը՝ ուղղված զինծառայողների իրավագիտակցության բարձրացմանը, մասնավորապես՝ ընդգրկելով մարդու իրավունքների, զինծառայության ընթացքում իրավունքների և պարտականությունների, կարգապահական պատասխանատվության հիմքերի, ինչպես նաև բողոքարկման և պաշտպանության իրավական մեխանիզմների վերաբերյալ համակարգված և կիրառական ուսուցում,***
- ✓ ***ներդնել զինծառայողների համար պարտադիր իրավական ուսուցում, որը կկենտրոնանա կարգապահական վարույթի, ընթացակարգային երաշխիքների և բողոքարկման իրավունքների վրա՝ ապահովելով գիտելիքների ընկալման և գործնական կիրառման պարբերական գնահատում,***
- ✓ ***շարունակ կատարելագործել և զարգացնել զինծառայողների շրջանում իրավագիտակցության բարձրացմանը միտված կառուցակարգերը (այդ թվում՝ ձեռնարկների, ուղեցույցների, տեղեկատվական թերթիկների տրամադրման, ինչպես նաև պարբերական դասընթացների միջոցով),***
- ✓ ***ստեղծել կամ ուժեղացնել անկախ և մատչելի բողոքարկման մեխանիզմներ՝ երաշխավորելով զինծառայողների կողմից կարգապահական տույժերի արդյունավետ բողոքարկման իրավունքի իրացումը՝ ապահովելով դրանց իրական, արդյունավետ և անկախ գործարկումը,***
- ✓ ***զորամասերում իրականացնել համապատասխան աշխատանքներ ոչ իրավաչափ վարքագծի, բռնության կանխարգելման ուղղությամբ, կատարելագործել նշված ոլորտում իրավասու մարմինների և նրանց ներկայացուցիչների հմտություններն ու միմյանց հետ փոխգործակցությունը,***
- ✓ ***ապահովել հոգեբանների և սպա-իրավաբանների հաստիքների ամբողջական համալրվածություն և բարձրացնել դրանց գործառութային արդյունավետությունը՝ ներառյալ աշխատավարձային և սոցիալական երաշխիքների վերանայման, նրանց կարողությունները զարգացնելու նպատակով պարբերաբար վերապատրաստման դասընթացներ իրականացնելու միջոցով,***
- ✓ ***բոլոր զորամասերն ամենօրյա ռեժիմով ուշադրություն դարձնել զինծառայողների հոգեբանական վիճակին՝ զուգահեռաբար միջոցներ ձեռնարկելով զորամասերի հոգեբանական օգնության կետերը մասնագիտական գույքով կահավորելու ուղղությամբ,***
- ✓ ***մշակել առավել արդյունավետ կառուցակարգեր զորակոչիկների վերաբերյալ օբյեկտիվ ու ամբողջական տեղեկությունների (բնավորություն, վարքագիծ, հակվածություն, սոցիալական և հոգեբանական մի շարք գործոնների, գիտելիքների աստիճան և այլն) հավաքագրման, դրանք զինկոմիսարիատներին տրամադրելու և հետագայում զորամասեր փոխանցելու ուղղությամբ,***
- ✓ ***թիրախային խմբերի (քրեական ենթամշակույթ կրող, ինքնավնասման հակում ունեցող և այլն) հնարավոր հակահրավական վարքագիծը կանխելու նպատակով նրանց հետ իրականացնել համապատասխան աշխատանքներ՝ ներգրավելով անհրաժեշտ մասնագետներ (օրինակ, հոգեբան, իրավաբան և այլն),***

- ✓ *բացառել համապատասխան իրավակարգավորումներով չնախատեսված պատասխանատվության միջոցներ կիրառելու դեպքերը,*
- ✓ *երաշխավորել զինծառայողների նկատմամբ խրախուսանքի կիրառման գործուն և արդյունավետ քաղաքականության իրականացումը,*
- ✓ *վերանայել ՀՀ կառավարության 2018թ. ապրիլի 12-ի թիվ 404-Ն որոշումը՝ գնահատելով դրա ազդեցությունը, այդ թվում՝ զինված ուժերում կարգապահության իրավաչափ ապահովման և մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից:*

ԳԼՈՒԽ 5. ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ԿՅԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ՎԱՏ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ԲՈԼՈՐ ՁԵՎԵՐԻ ԱՐԳԵԼՔԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

1. Զինված ուժերում մահվան և ինքնավնասման դեպքերը և դրանց վերաբերյալ հանրային հաղորդակցությունը

2025 թվականի ընթացքում զինված ուժերում զինծառայողների կյանքի իրավունքի երաշխավորումը և խաղաղ պայմաններում մահվան ու ինքնավնասման դեպքերի կանխարգելումը շարունակել են մնալ Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության առաջնահերթ ուղղություններից: Խաղաղ պայմաններում յուրաքանչյուր նման դեպք պահանջում է ոչ միայն արդյունավետ քննության արդյունքում կոնկրետ հանգամանքների բացահայտում, այլև համակարգային գնահատում՝ պարզելու համար, թե արդյո՞ք գործել են կյանքի իրավունքի պաշտպանության բավարար կառուցակարգեր և արդյունավետ կանխարգելիչ մեխանիզմներ:

ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1978-Լ որոշմամբ հաստատված Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությամբ և դրանից բխող 2020–2022 և 2023–2025 թվականների գործողությունների ծրագրերով զինված ուժերում կյանքի իրավունքի արդյունավետ պաշտպանության և խոշտանգումների ու վատ վերաբերմունքի բոլոր ձևերի արգելքի ապահովումը սահմանվել են որպես ռազմավարական նպատակներ: Այդ նպատակների իրագործման շրջանակում նախատեսվել են միջոցառումներ՝ ուղղված հանդուրժողականության և փոխադարձ հարգանքի մթնոլորտի ամրապնդմանը, անանուն հաղորդման մեխանիզմների ներդրմանը, ինչպես նաև հրամանատարական կազմի և ռազմական ոստիկանության ներկայացուցիչների մասնագիտական վերապատրաստմանը: Ռազմավարական փաստաթղթերով զինված ուժերում կյանքի իրավունքի պաշտպանության և վատ վերաբերմունքի արգելքի ամրագրումը կարևոր, սակայն բավարար պայման չէ, եթե դրանք չեն ուղեկցվում չափելի արդյունքներով, դեպքերի թվի կայուն նվազմամբ և կանխարգելման գործուն մեխանիզմների իրական կայացմամբ:

Ուստի, անհրաժեշտ է ապահովել գործողությունների իրական ազդեցության պարբերական գնահատում, պատասխանատու մարմինների հստակ դերաբաշխում և փոխգործակցության արդյունավետության բարձրացում՝ կյանքի իրավունքի պաշտպանության ինստիտուցիոնալ կառուցկարգերի ամրապնդման նպատակով:

Հաշվետու տարվա ընթացքում զինված ուժերում կյանքի իրավունքի պաշտպանության և ինքնավնասումների կանխարգելման հետ կապված հարցերի կարևորությունը և դրանց լուծմանը միտված արդյունավետ մեխանիզմներ մշակելու անհրաժեշտությունը ընդգծելու նպատակով Պաշտպանն իրականացրել է մի շարք աշխատանքներ.

ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ԿՅԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Պաշտպանի իրականացրած գործողությունները (2025)

1) Այցեր զորամասեր, հոսպիտալներ և զինվորական այլ հաստատություններ.

2025 թվականի ընթացքում Պաշտպանը և Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները իրականացրել են այցեր Պաշտպանության նախարարության ենթակայության զորամասեր, հոսպիտալներ, ՌՈ բաժիններ և այլ ստորաբաժանումներ: Պարտադիր ժամկետային և պայմանագրային զինծառայողների հետ հանդիպումների ընթացքում քննարկվել են ծառայողական

հարաբերություններում փոխադարձ հարգանքի և արժանապատվության ապահովման, բռնության և վատ վերաբերմունքի բացառման, ինչպես նաև իրավունքի գերակայության վրա հիմնված կարգապահության պահպանման հարցերը: Նույն հարցերի շուրջ քննարկումներ են անցկացվել նաև զորամասերի հոգեբանների և սպա-իրավաբանների հետ:

2) Խնդիրներին լուծումներ գտնելուն միտված ուսումնասիրություններ, առաջարկների ներկայացում պետական մարմիններին և նրանցից պարզաբանումների պահանջ.

Պաշտպանը զինված ուժերում կյանքի իրավունքի պաշտպանությանը և, ընդհանրապես, կարգապահության ամրապնդմանը միտված առաջարկներ է ներկայացրել իրավասու գերատեսչություններ, այդ թվում՝ Պաշտպանության նախարարություն, Գլխավոր դատախազություն, Քննչական կոմիտե, Առողջապահության նախարարություն, Ազգային անվտանգության ծառայություն և այլն: Պետական մարմիններից մշտապես պահանջվել է ներկայացնել պարզաբանումներ առ այն, թե ինչ գործուն քայլեր են ձեռնարկում զինված ուժերում իրավունքի գերակայությամբ երաշխավորված կարգապահություն ապահովելու, խաղաղ պայմաններում զինծառայողների կյանքի իրավունքը պաշտպանելու, նրանց նկատմամբ վատ վերաբերմունքը բացառելու, ինքնավնասումների դեպքերը կանխարգելելու ուղղությամբ:

Դա վերաբերում է ինչպես համակարգային խնդիրներին, այնպես էլ անհատական բողոքների քննարկման շրջանակում արձանագրված կոնկրետ դեպքերին:

Պաշտպանի աշխատակազմում ուսումնասիրություններ են կատարվել նաև ԶՈՒ-ում կյանքի իրավունքի ապահովման միջազգային չափանիշների վերաբերյալ: Այս առումով կարևոր է ընդգծել, որ **պետությունը պարտավոր է ձեռնարկել զինծառայողների կյանքի իրավունքի պաշտպանությանն ուղղված անհրաժեշտ և բավարար քայլեր, իսկ զինծառայողների մահվան պարագայում իրականացնել դրանց հանգեցրած հանգամանքները պարզելու նպատակով արդյունավետ քննություն (effective investigation)**[72]**:**

3) Հարցի հանրայնացում, հրապարակային ուղերձներ.

4) Պաշտպանին առընթեր փորձագիտական խորհրդի նիստեր.

[72] Միջազգային իրավաբանության ներքո քննությունն արդյունավետ համարելու համար անհրաժեշտ է, որ այն բավարարի հետևյալ չորս միաժամանակյա պահանջները՝ 1) անկախություն (independence), 2) պատշաճություն (adequacy), 3) անհապաղ և ողջամիտ ժամկետ (promptness and reasonable expedition) և 4) հանրային վերահսկողություն, ներառյալ՝ տուժողի իրավահաջորդի ներգրավվածություն (public scrutiny and the participation of the next-of-kin):

2025 թվականի ընթացքում հրապարակային ելույթների շրջանակում Պաշտպանը նշել է, որ **զինված ուժերում մահվան դեպքերի կանխարգելման ուղղությամբ ձեռնարկվող միջոցները դեռևս լիարժեք չեն համապատասխանում անհրաժեշտ չափանիշներին:** Անդրադառնալով պատասխանատվության անխուսափելիության խնդրին՝ Պաշտպանն ընդգծել է, որ բռնության, վատ վերաբերմունքի կամ անձին ինքնասպանության հասցնելու դեպքերում պատասխանատվության կիրառման տեսանելի և հետևողական պրակտիկա չի արձանագրվում:

Պաշտպանը նաև փաստել է, որ խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերով գործերի քննությունը ոչ բոլոր դեպքերում է համապատասխանում միջազգային չափանիշներին: Մասնավորապես **շեշտադրվել է քննության անհապաղության պահանջը՝ նշելով, որ մի շարք գործերով երկարատև քննությունը խաթարում է արդյունավետության և պատասխանատվության սկզբունքները:**

Պաշտպանը միաժամանակ առաջնային է համարել բանակում մահվան և ինքնավնասման դեպքերը կանխարգելելու միասնական հայեցակարգի (ծրագիր, քայլերի հերթականություն և այլն) մշակման և իրացման անհրաժեշտությունը[73]:

Պաշտպանին առընթեր զինծառայողների իրավունքների պաշտպանության հարցերով փորձագիտական խորհրդի նիստում Պաշտպանը, հատուկ անդրադարձ կատարելով զինված ուժերում խաղաղ պայմաններում մահվան դեպքերին և վատ վերաբերմունքի դրսևորումներին, ընդգծել է դրանց համակարգային և համապարփակ լուծման անհրաժեշտությունը: Այս համատեքստում կարևորվել է զորակոչիկների հետազոտությունների և փորձաքննությունների պատշաճ իրականացումը, զինված ուժերում հոգեբանի և սպա-իրավաբանի ինստիտուտի շարունակական կատարելագործման անհրաժեշտությունը, զինծառայողների հոգեկան առողջության պահպանման, զորքերում կարգապահության և կանոնադրային հարաբերությունների ապահովումը, կարգապահական և քրեական պատասխանատվության ենթարկելու հիմնահարցերը և այլն:

5) Հանդիպումներ, քննարկումներ, աշխատաժողովներ միջազգային և պետական մարմինների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ

Իրավունքի գերակայության ապահովման և զինված ուժերում կյանքի իրավունքի պաշտպանության հարցերի շուրջ հաշվետու տարում կազմակերպվել և անցկացվել են մասնագիտական քննարկումներ ու աշխատաժողովներ՝ պետական մարմինների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, միջազգային գործընկերների և ոլորտային փորձագետների մասնակցությամբ: Օրինակ, ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ Անվտանգության ոլորտի կառավարման Ժնևյան կենտրոնի (DCAF) աջակցությամբ կազմակերպված «Մարդու իրավունքների խթանումը Հայաստանի զինված ուժերում» խորագրով քննարկմանը անդրադարձ է կատարվել զինված ուժերում թափանցիկության և հաշվետվողականության բարձրացման, անկախ վերահսկողական հաստատությունների հզորացման և այլ հարցերի[74]:

[73] Տեղեկատվությունը հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3050, https://lratvakan.am/details/64936/am հղումներով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

[74] Տեղեկատվությունը հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3351 հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

ՀՀ-ում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների, ինչպես նաև միջազգային այլ դերակատարների հետ տեղի ունեցած հանդիպումներին ու քննարկումներին ի թիվս այլնի, քննարկվել են նաև զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանությանը վերաբերելի հարցեր[75]:

Իրավասու պետական մարմինների տրամադրած տվյալների հիման վրա ուսումնասիրվել է զինված ուժերում խաղաղ պայմաններում զինծառայողների կյանքի իրավունքի պաշտպանության վիճակը:

Բացի վերոնշյալից Պաշտպանը խնդրին անդրադարձել է նաև աշխատակազմ ստացված բողոքների շրջանակներում: Այսպես, 2025 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրված շուրջ 900 բողոքից երկուսը վերաբերել են ոչ մարտական պայմաններում զինծառայողների մահվան դեպքերին:



Մասնավորապես, ոչ մարտական պայմաններում զինծառայողի մահվան դեպքի հանգամանքները բացահայտելու պահանջով բողոք են ներկայացրել զինծառայողների ընտանիքի անդամները: Բողոքների շրջանակներում Պաշտպանը պարզաբանումների պահանջով գրություններ է հասցեագրել իրավասու մարմիններ՝ ընդգծելով դեպքերի հանգամանքների արդյունավետ, օբյեկտիվ և պատշաճ քննության ապահովման անհրաժեշտությունը:

Սույն հաղորդման կազմման շրջանակներում Պաշտպանի հարցմանն ի պատասխան՝ Ազգային անվտանգության ծառայությունից տեղեկատվություն է ստացվել այն մասին, որ 2025 թվականի ընթացքում Սահմանապահ զորքերում գրանցվել է ոչ մարտական պայմաններում զինծառայողի մահվան 2 դեպք ինքնասպանության հասցնելու պատճառով: Նշված ժամանակահատվածում գրանցվել է պարտադիր ժամկետային զինծառայողների կողմից ինքնավնասման 5 դեպք:

Նույն ժամանակահատվածում, ըստ Պաշտպանության նախարարությունից ստացված տվյալների, ոչ մարտական պայմաններում ՀՀ ՊՆ-ում գրանցվել է

[75] Տեղեկատվությունը հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3576, https://ombuds.am/am/site/ViewNews/3577, https://www.ombuds.am/am/site/ViewNews/3277 հղումներով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

զինծառայողների մահվան 30 դեպք, որից 6 զինծառայող մահացել է ծառայության հետ կապված հանգամանքներում, իսկ 24-ը՝ ծառայության հետ չկապված հանգամանքներում:



Փաստացի, 2025 թվականին ՀՀ ԶՈՒ-ում ոչ մարտական պայմաններում գրանցվել է մահվան 32 դեպք, որոնցից 8-ը արձանագրվել են ծառայության հետ կապված հանգամանքներում, իսկ 24-ը՝ ծառայության հետ չկապված հանգամանքներում:

Ինչ վերաբերում է ինքնավնասումների դեպքերին, ապա, ըստ ԱԱԾ-ից ստացված տեղեկատվության՝ Սահմանապահ զորքերում գրանցվել է ինքնավնասման 5 դեպք: Պաշտպանության նախարարության տրամադրած տեղեկության համաձայն՝ հաշվետու տարվա ընթացքում արձանագրվել է ինքնասպանության փորձի 4 և ինքնավնասման 71 դեպք:





Ամփոփելով վերջին տարիներին խաղաղ պայմաններում զինծառայողների մահացության և ինքնավնասումների դեպքերի վերաբերյալ իրավասու պետական մարմինների ներկայացրած տվյալները՝ արձանագրում ենք հետևյալ վիճակագրությունը.





Միաժամանակ, Պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ 2025 թվականի ընթացքում զինված ուժերում շարունակվել են անցկացվել «Զինված ուժերում հոգեկան առողջության խթանման և ինքնասպանությունների կանխարգելման» ուղղությամբ վերապատրաստման պարապմունքներ, որին մասնակցել են ՀՀ զինված ուժերի զորամասերի հոգեբաններն ու միջազգային դասընթացավարները: Վերապատրաստումներն անցկացվել են «Ինքնասպանության ռիսկի գնահատման, կանխարգելման և կառավարման ուսուցման ծրագիր-ձեռնարկով»:

Այսպիսով, Պաշտպանը կարևորում է իրավասու պետական մարմինների կողմից զինծառայողների մահացության և ինքնավնասման դեպքերի պատճառների վերհանման և դրանց վերացման, ինչպես նաև խնդրի հաղթահարման ուղղությամբ կատարված քայլերը: Սակայն, միևնույն ժամանակ, ինչպես ցույց է տալիս զինված ուժերում մահվան, ինքնավնասումների վերաբերյալ թվային վիճակագրությունը, կարգապահության հետ կապված տարատեսակ խնդիրները՝ ձեռնարկված միջոցառումները ամբողջությամբ չեն ապահովել համակարգային փոփոխություն և շարունակում են արձանագրվել նման դեպքեր:

Պաշտպանը վերահաստատում է իր դիրքորոշումն առ այն, որ հարցի լուծման համար անհրաժեշտ է ցուցաբերել համակարգային մոտեցում՝ այդ առումով կարևորելով բանակում մահվան և ինքնավնասման դեպքերը կանխարգելելու միասնական հայեցակարգի (ծրագիր, քայլերի հերթականություն և այլն) մշակման և իրացման անհրաժեշտությունը: Դրա հետ մեկտեղ կարևոր է, որ զինված ուժերում մահվան և ինքնավնասման յուրաքանչյուր դեպքով իրականացվի պատշաճ քննություն՝ միջազգային չափանիշներին համապատասխան: Բացի այդ, նման դեպքերին առնչվող վարույթների ընթացքի վերաբերյալ իրավասու մարմինները հանրությանը պետք է տրամադրեն պատշաճ տեղեկատվություն: Թափանցիկության ապահովումը կարևոր նախապայման է զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության արդյունավետության և հանրային վստահության պահպանման, ինչպես նաև քաղաքացիական վերահսկողության իրականացման տեսանկյունից:

Հետևաբար, անհրաժեշտ է՝

- ✓ ***մշակել և հետևողականորեն իրացնել խաղաղ պայմաններում մահվան և ինքնավնասման դեպքերը կանխարգելելու միասնական հայեցակարգ,***
- ✓ ***անհրաժեշտ և բավարար քայլեր ձեռնարկել ԶՈՒ-ում մահվան և ինքնավնասման դեպքերը կանխարգելելու, դրանց հանգեցրած հանգամանքները պարզելու նպատակով արդյունավետ քննություն իրականացնելու ուղղությամբ:***

2. Զինված ուժերում վատ վերաբերմունքի բոլոր ձևերի արգելքը

Պաշտպանության և անվտանգության համակարգում առաջացող խնդիրների (այդ թվում՝ զորքերում կարգապահության, բռնության դեպքերի կանխարգելման, կարգապահական մեկուսարանների պահման պայմանների և այլնի հետ կապված) լուծման հիմնահարցերը գտնվում են Մարդու իրավունքների պաշտպանի վերահսկողության անմիջական տիրույթում: Խնդիրների լուծմանն ուղղված աշխատանքներն իրականացվում են մարդու իրավունքների ազգային հաստատության գործիքակազմի կիրառմամբ և մասնագիտական ստորաբաժանման ներգրավմամբ: Նշվածով պայմանավորված՝ բանակում բռնության հարցերն առանձին ձևաչափով ներկայացված են հենց Պաշտպանի տարեկան հաղորդումներով: Զինված ուժերում բռնության հետ կապված հարցերը վեր են հանվում Պաշտպանին հասցեագրված գրավոր ու բանավոր բողոքների, թեժ գծին ստացված ահազանգերի, հասարակական կազմակերպությունների, փաստաբանների կողմից ներկայացված ահազանգերի, զանգվածային լրատվության միջոցների հրապարակումների կամ զինվորական հաստատություններ իրականացված այցերի արդյունքներով:

2025 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմում ստացված շուրջ 900 բողոքից 63-ը վերաբերում է զինծառայողների նկատմամբ ենթադրյալ բռնության և վատ վերաբերմունքի այլ դրսևորումներին:



Ստացված բողոքների կապակցությամբ Պաշտպանի աշխատակազմում անմիջապես նախաձեռնվել են քննարկման ընթացակարգեր, կոնկրետ հարցադրումներով պարզաբանումներ են պահանջվել իրավասու պետական մարմիններից: Միևնույն ժամանակ, մշտական կապ է պահպանվել զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների հետ:

Մասնավորապես, 2025 թվականին Պաշտպանի աշխատակազմ ներկայացված բողոքներից մեկով ստացվել է տեղեկություն ռազմական ոստիկանության ծառայողների կողմից զինծառայողների նկատմամբ խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք դրսևորելու ենթադրյալ դեպքի վերաբերյալ: Պաշտպանի հանձնարարությամբ Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչներն անմիջապես այց են իրականացրել համապատասխան զինվորական հաստատություններ, առանձնազրույցներ են տեղի ունեցել մի շարք զինծառայողների հետ: Այցի արդյունքներն ամփոփվել են, և իրավասու պետական մարմիններից պահանջվել են համապատասխան պարզաբանումներ: Միաժամանակ, դեպքի հանգամանքները քրեական վարույթի շրջանակում քննության առարկա դարձնելու և առնչվող անձանց գործողություններին իրավական գնահատական տալու նպատակով գրություն է հասցեագրվել Դատախազություն: Արդյունքում, ՀՀ քրեական օրենսգրքի 450-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով նախաձեռնվել է քրեական վարույթ, իրականացվում է նախաքննություն:

Բողոքներ են ստացվել նաև ստորադասի (ենթակայի) նկատմամբ բռնություն գործադրելու կամ բռնություն գործադրելու սպառնալիքի վերաբերյալ, որոնց կապակցությամբ ևս Պաշտպանի աշխատակազմում իրականացվել է քննարկման ընթացակարգ:

Մարդու իրավունքների պաշտպանը մտահոգիչ է համարում բանակում խոշտանգումների, բռնի գործողությունների և վատ վերաբերմունքի դեպքերը: Չնայած՝ իրավասու մարմինների կողմից խնդիրների հաղթահարման ուղղությամբ ձեռնարկվում են համապատասխան քայլեր, սակայն ինչպես ցույց են տալիս մի շարք զորամասերում մարդու իրավունքներին առնչվող խնդրահարույց իրավիճակները, որոնք հաճախ արդյունք են կարգապահության հետ կապված տարաբնույթ խնդիրների, Պաշտպանին հասցեագրվող բողոքները, և այդ ամենի հաշվառմամբ՝ Պաշտպանի աշխատակազմի ուսումնասիրությունները՝ կատարված աշխատանքները դեռևս բավարար չեն զինված ուժերում կյանքի իրավունքի և վատ վերաբերմունքի բոլոր ձևերի արգելքի ապահովմանն ուղղված կառուցակարգերի լիարժեք կայացվածության տեսանկյունից:

Պաշտպանն անհրաժեշտ է համարում իրավասու պետական մարմինների կողմից զինված ուժերում կյանքի իրավունքի և վատ վերաբերմունքի բոլոր ձևերի կանխարգելմանն ուղղված անհետաձգելի միջոցառումների ձեռնարկումն ու այդ նպատակով ամբողջական և պատշաճ կառուցակարգերի գործարկումը:

Պաշտպանն ընդգծում է, որ, ի տարբերություն մարդու շատ այլ իրավունքների՝ Խոշտանգումների և այլ տեսակի դաժան վերաբերմունքի արգելքը չի ենթադրում սահմանափակման որևէ հնարավորություն: Այս արգելքից չի թույլատրվում շեղվել նույնիսկ արտակարգ իրավիճակներում՝ պատերազմների կամ դրանց անմիջական վտանգի ժամանակ: Պետությունը պոզիտիվ պարտականություն ունի կանխելու զինված ուժերում բռնության և վատ վերաբերմունքի ցանկացած դրսևորում, իսկ դրանց առկայության դեպքում՝ իրականացնելու գործերի արդյունավետ քննություն: Սույն տարեկան հաղորդման կազմման աշխատանքների շրջանակում Պաշտպանը հարցադրումներ է ուղարկել իրավասու պետական մարմիններին առ այն, թե ինչ միջոցներ են ձեռնարկվել զինծառայողների նկատմամբ վատ վերաբերմունքի պատճառները պարզելու և կանխելու նպատակով ուղղությամբ:

EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

Չեմբերն ընդդեմ Ռուսաստանի

Պետությունը պարտավոր է ապահովել, որպեսզի անձը զինվորական ծառայությունն անցնի մարդկային արժանապատվությանը համատեղելի պայմաններում: Վարժանքների մեթոդները չպետք է պատճառեն ֆիզիկական տառապանք կամ գերազանցեն զինվորական կարգապահության անխուսափելի սահմանները:

Պետությունը պարտավոր է ապահովել զինծառայողի առողջության և ինքնազգացողության պաշտպանությունը և զորակոչի պահից նվազագույնի հասցնել առողջությանը սպառնացող ռիսկերը, ներառյալ մարդկային գործոնից բխող վտանգները:

Քննչական կոմիտեի տրամադրած տեղեկությունների համաձայն՝ արձանագրված իրավախախտումների պատճառները վերհանելու նպատակով քննարկվել են իրավասու մարմինների կողմից ներկայացված միջնորդագրերի պատասխանները, զորամասերում քննիչների կողմից պարտադիր ժամկետային զինծառայողների հետ իրականացվել են կանխարգելիչ զրույցներ և դասախոսություններ: Ըստ Պաշտպանության նախարարության՝ զինված ուժերում արձանագրված բռնարարքների դեպքերով անցկացվում են ծառայողական քննություններ, իսկ առերևույթ հանցագործության հատկանիշներ պարունակող դեպքերով նախաձեռնվում է քրեական վարույթ:

Պաշտպանության նախարարության տեղեկացմամբ՝ ՀՈՒ ԳՇ բարոյահոգեբանական ապահովման վարչության տվյալներով հաշվետու ժամանակահատվածում արձանագրվել է ժամկետային պարտադիր զինծառայողների նկատմամբ բռնության 24 դեպք, որոնց առնչությամբ նույնպես նախաձեռնվել են քրեական վարույթներ:

Այսպիսով, զինված ուժերում ենթադրյալ բռնության և վատ վերաբերմունքի վերաբերյալ Պաշտպանին հասցեագրված բողոքների առկայությունը և Պաշտպանի աշխատակազմում իրականացված ուսումնասիրությունները վկայում են, որ իրավասու

մարմինների կողմից ձեռնարկվող միջոցառումները, թեև շարունակական բնույթ են կրում, դեռևս բավարար չեն խնդիրը լիարժեք հաղթահարված համարելու համար:

Հետևաբար, անհրաժեշտ է՝

- ✓ ***զինծառայողներին բռնությունից, վատ վերաբերմունքի ցանկացած դրսևորումից պաշտպանելու նպատակով մշակել և իրացնել առավել արդյունավետ կանխարգելիչ կառուցակարգեր՝ բոլոր զորամասերում շարունակ զարգացնելով հոգեբանի, սպա-իրավաբանի ինստիտուտը,***
- ✓ ***ՀՈՒ-ում բռնության, վատ վերաբերմունքի վերաբերյալ ցանկացած տեղեկություն դարձնել օբյեկտիվ, լրիվ և բազմակողմանի քննության առարկա,***
- ✓ ***բարձրացնել զինծառայողների իրազեկվածությունը բռնության, վատ վերաբերմունքի, ինչպես նաև դրանց կանխարգելման կառուցակարգերի առնչությամբ,***
- ✓ ***շարունակաբար զարգացնել հրամանատարական կազմի և ռազմական ոստիկանության ծառայողների վերապատրաստումները՝ մարդու իրավունքների, խոշտանգումների և վատ վերաբերմունքի բացարձակ արգելքի վերաբերյալ,***
- ✓ ***ապահովել զինված ուժերում մահվան դեպքերի և դրանց առնչությամբ իրականացվող քննությունների վերաբերյալ հանրությանը տրամադրվող տեղեկատվության առավել համակարգված, ամբողջական և արժանահավատ ներկայացում՝ թափանցիկության և հանրային վստահության բարձրացման նպատակով:***

ԳԼՈՒԽ 6. ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՑՆԵԼՈՒ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՐՁԱԿՎԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. Զինված ուժերում մահվան և ինքնավնասման դեպքերը և դրանց վերաբերյալ հանրային հաղորդակցությունը

Պայմանագրային զինվորական ծառայությունը հանդիսանում է հանրային ծառայության տեսակ, իսկ հանրային ծառայության անցնելու իրավունքը ժողովրդավարական և իրավական պետությունում հանդիսանում է քաղաքացու հիմնարար իրավունք, որը բխում է հանրային գործերի կառավարմանը մասնակցելու իրավունքի բովանդակությունից և ենթակա է արդյունավետ իրավական պաշտպանության: Այն ենթադրում է պետական ծառայության մուտքի հավասար, մրցակցային և խտրականությունից զերծ հնարավորություն:

Միջազգային իրավական մակարդակում տվյալ իրավունքը ամրագրված է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 21-րդ հոդվածի 2-րդ մասում, ըստ որի յուրաքանչյուր անձ ունի իր երկրում պետական ծառայության անցնելու հավասար հնարավորություն: Իրավաբանորեն պարտադիր կարգավորումը նախատեսված է Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 25-րդ հոդվածով, որը յուրաքանչյուր քաղաքացու երաշխավորում է առանց խտրականության և անհիմն սահմանափակումների պետական ծառայության անցնելու իրավունք՝ հավասար հիմունքներով:

ՀՀ ներպետական իրավական համակարգում պայմանագրային զինվորական ծառայությունը հանդիսանում է հատուկ կարգավիճակով հանրային ծառայության տեսակ, որի իրավական հիմքերը սահմանված են ՀՀ Սահմանադրությամբ, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև համապատասխան ենթաօրենսդրական ակտերով:

ՀՀ Սահմանադրության 49-րդ հոդվածը երաշխավորում է քաղաքացիների հանրային ծառայության անցնելու իրավունքը, իսկ 57-րդ հոդվածի 1-ին մասը՝ աշխատանքի ընտրության ազատությունը: Նշված դրույթների համակցված մեկնաբանությունից բխում է, որ պայմանագրային զինվորական ծառայության անցնելու, այն շարունակելու կամ դադարեցնելու հարցերը չեն կարող դիտարկվել բացառապես վարչական հայեցողության տիրույթում, այլ պետք է ենթարկվեն իրավական որոշակիության, հավասարության, համաչափության և հիմնավորվածության սկզբունքներին: Այս առումով կարևոր է ՀՀ պաշտպանության նախարարի 2018 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 1550-Ն հրամանը, որով հաստատվել է «Հայաստանի Հանրապետության զինված ուժերում պայմանագրային զինվորական ծառայության ընդունելու կարգը»:

Հայաստանի Հանրապետությունում զինված ուժերի պայմանագրային կազմով համալրումը պետական ռազմավարական առաջնահերթություններից է, ինչը ամրագրված է ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրում, որն ուղղված է, ի թիվս այլնի, պայմանագրային զինվորական ծառայության ընդլայնմանը, դրա ինստիտուցիոնալ ամրապնդմանը և պրոֆեսիոնալ զինվորական ծառայության համակարգի զարգացմանը:

Պայմանագրային զինվորական ծառայության ներգրավման գործընթացի կատարելագործումը, ծառայության գրավչության բարձրացումը և այդ տիրույթում անձանց

հիմնարար իրավունքների պաշտպանության հարցերը 2025 թվականի ընթացքում շարունակել են գտնվել Պաշտպանի ուշադրության կենտրոնում:

Պայմանագրային զինվորական ծառայության ներգրավելու, ծառայությունն ավելի գրավիչ դարձնելու, այդ գործընթացում անձանց իրավունքների ապահովման հարցերին Պաշտպանը պարբերաբար անդրադարձ է կատարել տարբեր ձևաչափերով, ներառյալ՝ գործընկերների հետ տարբեր քննարկումների, զինվորական հաստատություններ այցերի, իրավասու մարմիններին ուղղված պաշտոնական գրությունների ու առաջարկությունների ներկայացման միջոցով: Այս հարցերում պարբերաբար ուսումնասիրվում է նաև միջազգային լավագույն փորձը:

Հաշվետու տարվա ընթացքում Պաշտպանի աշխատակազմ զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության վերաբերյալ ստացված 900 բողոքից 30-ը ներկայացվել է պայմանագրային զինծառայողների կողմից:



2025 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրված բողոքների վերլուծությունը ցույց է տալիս, որ պայմանագրային զինվորական ծառայության անցնելու և ծառայողական հարաբերությունների ձևավորման գործընթացում շարունակում են պահպանվել մի շարք համակարգային խնդիրներ.



Պայմանագրային զինվորական ծառայության անցնելու ծրագրերի և պայմանների վերաբերյալ իրազեկվածության պակաս.

Պաշտպանի աշխատակազմում իրականացված ուսումնասիրությունների, ինչպես նաև տարբեր ռազմական հաստատություններ իրականացված այցերի ընթացքում զինծառայողների հետ հանդիպումների արդյունքում արձանագրվել է, որ քաղաքացիները բավարար տեղեկացված չեն պայմանագրային զինվորական ծառայության տարբեր ծրագրերի, դրանց շրջանակներում ապահովվող սոցիալական երաշխիքների, ծառայության պայմանների և դիմելու ընթացակարգերի վերաբերյալ: Տեղեկատվության բացակայությունը կամ թերի իրազեկումը խաթարում է տեղեկացված ընտրության հնարավորությունը և նվազեցնում իրավունքի արդյունավետ իրացումը:

Նշվածի կապակցությամբ Պաշտպանն ընդգծում է, որ պետությունը պարտավոր է ապահովել թափանցիկ և մատչելի տեղեկատվություն՝ հրապարակային և հասկանալի ձևով. տեղեկացվածության ապահովումը հանրային ծառայության հասանելիության իրավունքի բաղկացուցիչ տարր է:

Կազմակերպչական-հաստիքային փոփոխությունների հետևանքով առաջացող խնդիրներ. 2025 թվականի ընթացքում պահեստազորի սպայական կազմի ներկայացուցիչների բողոքների զգալի մասը վերաբերել է կազմակերպչական-հաստիքային փոփոխությունների հետևանքով առաջացած խնդիրներին. կազմակերպչական-հաստիքային փոփոխությունների և կառուցվածքային վերաձևումների արդյունքում մի շարք ծառայողներ արձակվել են ծառայությունից՝ չհամաձայնելով ընդունված որոշումների իրավաչափության և հիմնավորվածության հետ: Արձանագրվել են դեպքեր, երբ *արձակման որոշումները չեն պարունակել բավարար հիմնավորում, չի իրականացվել ծառայողի մասնագիտական հատկանիշների և ծառայողական ցուցանիշների պատշաճ գնահատում, ինչպես նաև չեն դիտարկվել այլընտրանքային հաստիքի առաջարկման հնարավորությունները:* Թեև պետական մարմինն ունի իր կառուցվածքն ու հաստիքացուցակը վերանայելու իրավասություն, այդ իրավասության իրականացումը չի կարող լինել բացարձակ և չպետք է հանգեցնի ծառայողների սահմանադրական իրավունքների՝ մասնավորապես հանրային ծառայության անցնելու և աշխատանքի ազատ ընտրության իրավունքի անհամաչափ սահմանափակման:

Պաշտպանի դիրքորոշմամբ՝ կազմակերպչական-հաստիքային փոփոխությունների հիմքով ծառայությունից արձակման վերաբերյալ որոշումները պետք է ընդունվեն բացառապես օրենքով սահմանված հստակ ընթացակարգերի պահպանմամբ և պարունակեն լիարժեք, անհատականացված ու փաստարկված հիմնավորում:

Միաժամանակ, յուրաքանչյուր դեպքում պարտադիր է գնահատել ծառայողի մասնագիտական կարողությունները, ծառայողական ցուցանիշները և այլընտրանքային հաստիքի առաջարկման հնարավորությունը: Պաշտպանը անհրաժեշտ է համարում նման գործընթացներում արդյունավետ և գործնականում հասանելի բողոքարկման մեխանիզմների առկայությունը:

Պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու վերաբերյալ դիմումների քննության ժամկետների խախտում. Պաշտպանի աշխատակազմում բողոքներ են ստացվել պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցնող անձանցից՝ պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու դիմում ներկայացնելու ժամկետների խախտման մասին: Նման բողոքները, օրինակ՝ վերաբերել են «Պատիվ ունեմ» ծրագրի շահառու դառնալուն: Ըստ ներկայացված տեղեկատվության՝ տևական ժամանակ իրավասու մարմինը չի արձագանքել ժամկետային զինծառայողների բողոքներին՝ չի տրամադրվել նաև ներկայացված բողոքի ընթացքի մասին տեղեկատվություն:

Այս համատեքստում, չնայած աշխատակազմում ստացված բողոքները եղել են ոչ մեծ քանակի, այնուամենայնիվ, ***Պաշտպանը կարևորում է, որ դիմումների քննությունն իրականացվի ողջամիտ ժամկետներում՝ վարչական վարույթի արդյունավետության սկզբունքի պահպանմամբ: Պետական մարմինները պարտավոր են ապահովել ինչպես ներկայացված դիմումների վերաբերյալ պատասխանների սահմանված ժամկետներում տրամադրումը, այնպես էլ դրանց ընթացքի մասին դիմողին տեղեկատվության հաղորդումը:***

Կադրերի համալրման խնդիր. Մեկ այլ համակարգային խնդիր վերաբերում է հաստիքների համալրմանը, ինչն արձանագրվել է զինվորական տարբեր հաստատություններ այցերի ընթացքում զինծառայողների հետ զրույցների արդյունքում: Խնդիրը պայմանավորվել է աշխատավարձերի մակարդակի, սոցիալական երաշխիքների և ծառայության սոցիալ-տնտեսական գրավչության ոչ բավարար լինելու հանգամանքով: Նշված գործոններն անմիջական ազդեցություն են ունենում պայմանագրային զինվորական ծառայության նկատմամբ հետաքրքրության նվազման և հաստիքների թերհամալրման վրա:

Հատկապես մտահոգիչ է պայմանագրային զինծառայողների հաստիքների համալրման խնդիրը Սյունիքի մարզում, որտեղ պաշտպանության ոլորտում ծառայությունը, որպես աշխատանքային գործունեություն, մրցունակ չէ մասնավոր հատվածի առաջարկների համեմատ: Արդյունքում՝ ձևավորվում է իրավիճակ, երբ պետությունը, հանդես գալով որպես գործատու, չի ապահովում բավարար մրցակցային պայմաններ սահմանամերձ գոտում կադրային կայունություն երաշխավորելու համար:

Պաշտպանի դիրքորոշմամբ՝ զինված ուժերում կադրային քաղաքականությունը պետք է կառուցվի ոչ միայն կարգապահական և ֆորմալ գնահատման մեխանիզմների վրա, այլ նաև սոցիալական ապահովության և մրցունակության սկզբունքների համակցմամբ: Ատեստավորման և հաստիքների համալրման գործընթացներում պետությունը պարտավոր է առաջնորդվել իրավաչափության, համաչափության և հավասար հնարավորությունների սկզբունքներով՝ միաժամանակ ապահովելով

ծառայության սոցիալական գրավչության բարձրացումը, հատկապես սահմանամերձ շրջաններում:

2025 թվականի Պաշտպանի և աշխատակազմի ներկայացուցիչների կողմից տարբեր զինվորական հաստատություններ, այդ թվում՝ Սյունիքի, Գեղարքունիքի, Վայոց Ձորի մարզերում տեղակայված, այցերի ընթացքում սպայակազմի բարձրացրած խնդիրների մի մասը վերաբերել է բնակարանային, սոցիալ-տնտեսական երաշխիքների, առողջության պահպանման իրավունքի հարցերին: Բարձրաձայնված խնդիրների զգալի մասը վերաբերել է զինվորականների ատեստավորման գործընթացին: Դիմումների և տեղում անցկացված ուսումնասիրությունների արդյունքներով արձանագրվել է, որ տարիքով և մասնագիտական զգալի փորձ ունեցող սպաների մի մասը չի հաղթահարում ատեստավորման փուլը, մինչդեռ համեմատաբար երիտասարդ զինծառայողները հաջողությամբ անցնում են այն: Նման պրակտիկան առաջացնում է մասնագիտական փորձի և ծառայողական ավանդի արժևորման հարց, ինչպես նաև կարող է ստեղծել հավասարության սկզբունքի խախտման և ծառայողական պարտականությունների բաշխման և կատարման, ինչպես նաև կարգապահության ապահովման հետ կապված մտահոգություններ:

Պաշտպանի դիրքորոշմամբ՝ ատեստավորման գործընթացում պետք է ներդրվեն նաև ծառայողական փորձն ու հմտությունները գնահատող մեխանիզմներ, հակառակ պարագայում կարող է խաթարվել ինչպես զինվորական ծառայության կայունությունը, այնպես էլ զինված ուժերում փորձառու կադրերի պահպանման ռազմավարական նպատակադրումը:

Սույն տարեկան հաղորդման կազմման աշխատանքների շրջանակում Պաշտպանության նախարարությունից ստացված տեղեկությունների համաձայն՝ ատեստավորման գործընթացը շարունակվում է համաձայն ՀՀ պաշտպանության նախարարի կողմից հաստատված պլան-ժամանակացույցի (զինծառայողների 73%-ը ատեստավորվել են): Ատեստավորման ընթացքում բողոքարկումները հիմնականում լինում են ատեստավորման արդյունքների (գնահատականների) հետ կապված, որը սահմանված կարգով, համապատասխան ստորաբաժանման կողմից ուսումնասիրվում է և զինծառայողի բողոքը հիմնավոր արդյունքներով ընթացքավորվում կամ մերժվում է: Ինչ վերաբերում է ատեստավորում չանցնելու պատճառով զինծառայողների զորացրմանը, ապա նմանատիպ դեպքեր չեն արձանագրվել:

Հարցի կապակցությամբ Ազգային անվտանգության ծառայությունը հայտնել է, որ 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ատեստավորվել է ՀՀ ԱԱԾ զինծառայողների 54%-ը: Ատեստավորման հարցազրույցի փուլի արդյունքների վերաբերյալ ՀՀ ԱԱԾ զինծառայողներից ստացվել է վերադասության կարգով ներկայացված 5 բողոք, որոնք քննարկվել են ՀՀ ԱԱԾ տնօրենի կողմից: ՀՀ ԱԱԾ-ում իրականացվող ատեստավորման գործընթացն ունի իր առանձնահատկությունները: Ատեստավորման ընթացքում հաշվի են առնվում ատեստավորվող զինծառայողի զբաղեցրած պաշտոնը, առողջական վիճակը և տարիքը:



Պայմանագրային զինվորական ծառայության անցնելու գործընթացում քաղաքացիների իրավունքների երաշխավորումը մշտապես գտնվում է Պաշտպանի անմիջական ուշադրության կենտրոնում:

Ոլորտում արձանագրված մարտահրավերները փաստում են, որ առկա խնդիրների հասցեագրումը պահանջում է ոչ թե իրավիճակային, այլ համակարգային լուծումների ներդրում, ինչը թույլ կտա ապահովել զինծառայողների իրավունքների պաշտպանության պատշաճ մակարդակ և ծառայության կազմակերպման արդյունավետություն:

Հիմք ընդունելով վերհանված խնդիրները՝ Պաշտպանն անհրաժեշտ է համարում՝

- ✓ ***կատարելագործել զինված ուժեր համալրվող անձանց իրավունքների երաշխավորման և հավասար մրցակցային հնարավորությունների ապահովման կառուցակարգերը՝ բացառելով զինվորական ծառայության ընդունման գործընթացում անհիմն մերժումների կամ կամայական մոտեցումների որևէ դրսևորում,***
- ✓ ***բարձրացնել պայմանագրային զինվորական ծառայությանն ուղղված ծրագրերի և դրանց դիմելու ընթացակարգերի վերաբերյալ հանրության իրազեկվածության մակարդակը: Թիրախային իրազեկման արշավների միջոցով պարբերաբար ներկայացնել զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների համար սահմանված սոցիալական արտոնությունները, իրավունքներն ու երաշխիքները,***
- ✓ ***վերանայել ատեստավորման չափորոշիչները՝ ապահովելով այդ գործընթացում ծառայողական փորձի, մասնագիտական վաստակի և գործնական կարողությունների համարժեք գնահատում,***
- ✓ ***ապահովել կազմակերպչական-հաստիքային փոփոխությունների ընթացքում գործող իրավական երաշխիքների պարտադիր և լիարժեք կիրառումը՝ ուժեղացնելով ներքին իրավական վերահսկողությունը և սահմանելով, որ ծառայությունից արձակման յուրաքանչյուր որոշում լինի անհատականացված, պատշաճ կերպով փաստաթղթավորված և իրավաչափորեն հիմնավորված,***
- ✓ ***ամրապնդել պայմանագրային զինվորական ծառայության չընդունելու վերաբերյալ որոշումների պատճառաբանվածության պահանջը՝ պարտադիր դարձնելով դրանցում իրավական և փաստական հիմքերի լիարժեք, հստակ և***

անհատականացված արտացոլումը՝ արդյունավետ բողոքարկման իրավունքի ապահովման նպատակով,

✓ մշակել և ներդնել սահմանամերձ մարզերում ծառայություն իրականացնող պայմանագրային զինծառայողների համար լրացուցիչ սոցիալական և ֆինանսական արտոնությունների համակարգ՝ նպատակ ունենալով ապահովել ծառայության մրցունակությունը, կադրային կայունությունը և ծառայողների սոցիալական պաշտպանության պատշաճ մակարդակը:

2. Զինծառայողների իրավունքների պաշտպանությունը ծառայությունից արձակվելու գործընթացում

Պայմանագրային զինվորական ծառայությունից արձակման գործընթացը հանդիսանում է ծառայողական իրավահարաբերությունների դադարեցման իրավական փուլ, որն անմիջական ազդեցություն ունի զինծառայողի իրավական կարգավիճակի և սոցիալական երաշխիքների վրա: Օրենսդրությամբ սահմանված հստակ ընթացակարգերը կոչված են ապահովելու, որ ծառայությունից արձակումը իրականացվի սահմանված ժամկետներում, իրավաչափ հիմքերով և առանց զինծառայողի իրավունքների անհամաչափ սահմանափակման:

Այս համատեքստում 2025 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրված բողոքների վերլուծությունը ցույց է տալիս, որ պայմանագրային զինվորական ծառայությունից արձակման գործընթացում շարունակում են արձանագրվել ժամկետների խախտումներ և ընթացակարգային թերություններ՝ չնայած օրենքով սահմանված հստակ կարգավորումների առկայությանը:

Իրավական կարգավորումների համատեքստում անհրաժեշտ է ընդգծել, որ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով պայմանագրային զինծառայողին վերապահված է մինչև պայմանագրի ժամկետի լրանալը ծառայությունից արձակվելու սուբյեկտիվ իրավունքը՝ համապատասխան զեկուցագիր ներկայացնելու հիմքով (պայմանով, որ առկա չէ պարտադիր զինվորական ծառայության չծառայած ժամկետ): Միաժամանակ, Օրենքի 55-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված է հստակ և պարտադիր ընթացակարգային պահանջ, համաձայն որի՝ **իրավասու հրամանատարը (պետը) արձակման հիմքերի առաջացման պահից պարտավոր է առավելագույնը մեկամսյա ժամկետում կայացնել համապատասխան վարչական ակտը:** Նշված կարգավորումները կրում են ոչ թե հայեցողական, այլ իմպերատիվ բնույթ և ուղղված են իրավական որոշակիության, կանխատեսելիության և զինծառայողի իրավական կարգավիճակի հստակեցման ապահովմանը:

Հարկ է արձանագրել, որ թեև անհատական բողոքների քննարկման շրջանակում Պաշտպանի միջամտությամբ և Պաշտպանության նախարարության հետ փոխգործակցության արդյունքում բարձրացված հարցերը ստացել են լուծում: Այդուհանդերձ, օրենսդրական հստակ կարգավորումների առկայության պայմաններում նմանատիպ դեպքերի կրկնությունը խնդրահարույց է, և անհրաժեշտ է գտնել խնդիրների համակարգային լուծումներ:

Պաշտպանը կարևորում է նաև պայմանագրային զինծառայողների ծառայությունից հրաժարվելու կամ արձակվելու հիմնապատճառների խորքային և համակարգված ուսումնասիրությունը: Ծառայությունից դուրս գալու պատճառների վերլուծությունը պետք է դիտարկվի որպես կադրային քաղաքականության արդյունավետության գնահատման

կարևոր գործիք, քանի որ միայն պատճառահետևանքային կապերի բացահայտմամբ և թիրախային միջոցառումների իրականացմամբ հնարավոր կլինի բարձրացնել ծառայության գրավչությունը և կանխել փորձառու կադրերի արտահոսքը զինված ուժերից:

Նշվածի կապակցությամբ Պաշտպանը հարցադրում է կատարել Պաշտպանության նախարարություն այն մասին, թե ի՞նչ միջոցներ են ձեռնարկվել պայմանագրային զինծառայողների ծառայությունից արձակման պատճառները պարզելու ուղղությամբ, արդյո՞ք իրականացվել կամ նախատեսվում է իրականացնել խնդրի վերաբերյալ հետազոտություն և վերլուծություն և արդյո՞ք ծառայության գրավչությունը բարձրացնելուն միտված ներդրվել են լրացուցիչ կառուցակարգեր: Ի պատասխան՝ Պաշտպանության նախարարությունից ստացվել են տեղեկություններ առ այն, որ զինծառայողներին ՀՀ ԶՈՒ պահեստազոր արձակման պատճառները պարզելու նպատակով՝ կառուցվածքային ստորաբաժանումների (զորամասերի) հրամանատարների կողմից իրականացվել է անհրաժեշտ ուսումնասիրություն և վերլուծություն: Արձակման զեկուցագիր ներկայացնող պայմանագրային զինծառայողների հետ հրամանատարները տարել են աշխատանքներ զորացրման պատճառները պարզելու համար: Հնարավորությունների սահմաններում ղեկավար կազմի կողմից լուծումներ են տրվել արձակման պատճառ հանդիսացող խնդիրներին:

Զինծառայողների իրավունքների պաշտպանության ոլորտում առանձնակի ուշադրության են արժանի Պաշտպանի աշխատակազմում արձանագրված մի շարք խնդիրներ, որոնք ներկայացվում են ստորև.



Այս կապակցությամբ հարկ է նշել, որ թեպետ ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել և 26.07.2024թ. ուժի մեջ է մտել ՀՕ-310-Ն օրենքը, որի պահանջներից ելնելով՝ ՀՀ պաշտպանության նախարարի №983-Լ հրամանով սահմանվել է չօգտագործված արձակուրդային օրերի հաշվարկի կատարման հերթականությունը՝ հիմք ընդունելով դիմողի պահեստազոր արձակման տարին ու դիմումի ներկայացման ժամանակը, ինչպես նաև բյուջետային հատկացումների պայմանները, այդուամենայնիվ, 2025 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրված բազմաթիվ բողոքները վկայում են, որ նշված խնդիրները շարունակում են կրել համակարգային բնույթ, հասանելիք գումարների ստացումը հաճախ իրականացվում է էական ուշացումներով:

Օրինակ՝ Պաշտպանի աշխատակազմ ներկայացրած բողոքներից մեկով, չնայած ՀՀ ՊՆ համագործակցության արդյունքում սահմանվել է պայմանագրային զինվորական

ծառայության ընթացքում չօգտագործված արձակուրդի օրացուցային օրերի քանակը, որպես հանգստյան օրերին ծառայության ներգրավման ժամանակահատված և անձին տրամադրվել է համապատասխան գումարը, սակայն մի շարք այլ համանման բողոքներով խնդիրը լուծում չի ստացել, կամ լուծվել է Դատարան դիմելու արդյունքում:

Նշվածի կապակցությամբ Պաշտպանության նախարարության տրամադրած տեղեկության համաձայն՝ նախկին զինծառայողների կողմից չօգտագործված բոլոր արձակուրդների դիմաց դրամական փոխհատուցում ստանալու համար հաշվետու տարում դիմել են 1175 զինծառայող (49 բողոք): Ավելի քան 110 պահեստազոր արձակված նախկին զինծառայողների վերաբերյալ արձակվել են համապատասխան փոխհատուցման հրամաններ՝ հաշվի առնելով դիմումների ներկայացման ժամանակը, ծառայությունից արձակվելու տարեթիվը և բյուջետային հատկացումները, մյուսների մասով վարչարարությունը շարունակվում է:



Պաշտպանն ընդգծում է, որ պետությունը պարտավոր է ապահովել իրավական կարգավորումների լիարժեք և միատեսակ կիրարկում՝ երաշխավորելով արձակման գործընթացի կանխատեսելիությունը, սոցիալական վճարումների ժամանակին իրականացումը և բողոքարկման արդյունավետ մեխանիզմների գործնական հասանելիությունը:

Միաժամանակ, Պաշտպանը վերահաստատում է, որ պայմանագրային զինվորական ծառայությունից արձակման և սոցիալական երաշխիքների իրացման գործընթացներում արձանագրված խնդիրների հասցեագրումը շարունակում է մնալ իր անմիջական ուշադրության կենտրոնում:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Պաշտպանն անհրաժեշտ է համարում.

- ✓ ***ապահովել զինվորական ծառայությունից արձակվելու վերաբերյալ ներկայացված դիմումների քննարկման համար «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով նախատեսված մեկամսյա ժամկետի պարտադիր պահպանումը՝ սահմանելով դրա խախտման դեպքում իրավական հետևանքներ և ներքին վերահսկողական մեխանիզմներ,***
- ✓ ***իրականացնել համապարփակ հետազոտություն և վերլուծություն՝ պայմանագրային ծառայությունից հրաժարվելու պատճառները պարզելու համար, և***

դրանց արդյունքների հիման վրա ներդնել ծառայության գրավչությունը բարձրացնող լրացուցիչ (այդ թվում՝ սոցիալական երաշխիքների) մեխանիզմներ,

- ✓ ***գործնական միջոցներ ձեռնարկել՝ ծառայությունից արձակվող զինծառայողներին չօգտագործված արձակուրդների դիմաց դրամական հատուցումն առանց ուշացումների փրամադրելու ուղղությամբ:***

3. Զինվորական արհմիություններ կամ ընկերակցություններ կազմելու և դրանց անդամակցելու իրավունքը

Զինվորական ծառայության առանձնահատկությունները կարող են պայմանավորել որոշակի սահմանափակումներ, սակայն այդ սահմանափակումները պետք է համապատասխանեն իրավաչափության, անհրաժեշտության և համաչափության սահմանադրական չափանիշներին:

Միավորման ազատությունը հանդիսանում է մարդու հիմնարար իրավունքներից մեկը և ներառում է արհեստակցական կազմակերպություններ ստեղծելու և դրանց անդամակցելու իրավունքը՝ սոցիալական և տնտեսական շահերի պաշտպանության նպատակով: Այդ իրավունքը ամրագրված է միջազգային իրավական մի շարք առանցքային փաստաթղթերում, այդ թվում՝ ՄԱԿ-ի և Եվրոպայի խորհրդի շրջանակներում ընդունված պարտադիր ուժ ունեցող ակտերում:

Զինվորական ծառայության առանձնահատկությունները կարող են արդարացնել որոշակի սահմանափակումներ, սակայն միջազգային իրավունքի և համեմատական եվրոպական փորձի համաձայն՝ այդ սահմանափակումները չեն կարող կրել բացարձակ բնույթ և չպետք է հանգեցնեն իրավունքի բովանդակային ձևախեղմանը: «Համազգեստով քաղաքացի» հայեցակարգը ենթադրում է, որ զինծառայողը շարունակում է մնալ իրավունքի սուբյեկտ՝ իր սոցիալական և աշխատանքային շահերի պաշտպանության օրինական ակնկալիքով:

Այս համատեքստում հատկանշական է, որ Պաշտպանի դիմումի հիման վրա Սահմանադրական դատարանը 2023 թվականի ապրիլի 11-ին հակասահմանադրական է ճանաչել ՀՈ, Ոստիկանության, Ազգային անվտանգության, Դատախազության մարմինների ծառայողների, ինչպես նաև դատավորների և Սահմանադրական դատարանի դատավորների համար սահմանված՝ արհեստակցական կազմակերպության մասնակից լինելու բացարձակ արգելքը[76]:

Պաշտպանը ևս մեկ անգամ ընդգծում է, որ այլոց հետ միավորվելու ազատությունը հիմնարար իրավունք է, որն անվերապահորեն ճանաչված է մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային կարևորագույն փաստաթղթերով[77]: Խնդրի կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանը հետևողականորեն հանդես է եկել զինծառայողների միավորման ազատության իրավունքի լիարժեք իրացման օգտին՝ առաջարկելով վերանայել արհեստակցական կազմակերպություններ ստեղծելու կամ դրանց անդամակցելու գործող օրենսդրական արգելքները:

---

[76] Տե՛ս Սահմանադրական դատարանի 2023 թվականի ապրիլի 11-ի ՍԴՈ-1683 որոշումը:

[77] Օրինակ, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի միավորումներ կազմելու իրավունք: Եվրոպական կոնվենցիայի 11-րդ հոդվածի 1- ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի այլոց հետ միավորվելու ազատության իրավունք՝ ներառյալ իր շահերի պաշտպանության համար արհմիություններ ստեղծելու և դրանց անդամակցելու իրավունքը:

Պաշտպանը հետևողականորեն հանդես է եկել զինծառայողների միավորման ազատության իրավունքի գործնական իրացման անհրաժեշտության դիտանկյունից՝ ընդգծելով, որ կոլեկտիվ ներկայացուցչական մարմինների բացակայությունը սահմանափակում է զինծառայողների սոցիալական խնդիրների ինստիտուցիոնալ հասցեագրումը: Զինված ուժերում ծառայողական հարաբերությունները բնութագրվում են հիերարխիկ կառուցվածքով և ենթակայության խիստ համակարգով, ինչի պայմաններում անհատական բողոքարկման մեխանիզմները հաճախ չեն ապահովում խնդիրների վաղ փուլում լուծումը:

Պաշտպանը, վերահաստատելով իր սկզբունքային դիրքորոշումը միավորվելու ազատության՝ որպես կարևոր հիմնարար իրավունքի վերաբերյալ, ողջունում է 2025 թվականի դեկտեմբերի 17-ին «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունները[78]:

Հատկանշական է, որ Պաշտպանի կողմից բարձրացված մտահոգությունների և ներկայացված առաջարկությունների հաշվառմամբ՝ ներդրվել են այնպիսի իրավակարգավորումներ, որոնցով վերացվել է զինծառայողների համար արհեստակցական կազմակերպության մասնակից լինելու բացարձակ արգելքը: Այս օրենսդրական փոփոխությունը ոչ միայն ապահովում է զինծառայողների միավորվելու իրավունքի իրացման համապատասխանեցումը ՀՀ Սահմանադրությանը և միջազգային իրավական չափանիշներին, այլև հանդիսանում է Պաշտպանի և պետական իրավասու մարմինների կառուցողական համագործակցության կարևոր արդյունք՝ ուղղված զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքների ամրապնդմանը:

[78] Տեղեկատվությունը հասանելի է https://www.arlis.am/hy/acts/218372 հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

ԳԼՈՒԽ 7. ԿԱՆԱՅՔ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ

1. Զինված ուժերի գործունեությանը կանանց ներգրավվածության և առաջխաղացման խնդիրները

Զինված ուժերում կանանց և տղամարդկանց համար հավասար հնարավորությունների հասանելիության ապահովումը հատկապես կարևոր է այն պայմաններում, երբ ձևավորված և խոր արմատներ ունեցող հանրային կարծրատիպային ընկալման համաձայն՝ բանակը միայն տղամարդկանց միջավայր է, իսկ զինվորական ծառայությունը տղամարդկանց ծառայություն է ենթադրում:

Կարևոր է նշել, որ միջազգային իրավական փաստաթղթերի հետ միասին՝ ներպետական օրենսդրությունը, առավել ևս՝ ՀՀ Սահմանադրությունը հստակ ամրագրում են կանանց ու տղամարդկանց իրավահավասարության սկզբունքը: Ընդ որում, Սահմանադրությունը հատկապես ընդգծում է, որ, ի թիվս այլնի, պետության քաղաքականության հիմնական նպատակներից է «կանանց և տղամարդկանց միջև փաստացի հավասարության խթանումը» (հոդված 86):

Անհնար է թերագնահատել կանանց դերը և կարևորությունը զինված ուժերի զարգացման և բնականոն գործունեության գործում: Զինված ուժերում կանանց մասնակցությունը կարևոր ազդեցություն կարող է ունենալ հակամարտությունների կարգավորմանն ու լուծմանը նրանց մասնակցության տեսանկյունից:

Այսպես, ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 2000 թվականի թիվ 1325 «Կանայք, խաղաղություն, անվտանգություն» (այսուհետ՝ ԿԽԱ) բանաձևը կարևորում է կանանց դերը հակամարտությունների կանխարգելման և կարգավորման, ինչպես նաև խաղաղաշինության գործում: Այն պետություններին կոչ է անում ապահովել կանանց առավել գործուն մասնակցությունը հակամարտությունների կանխարգելման, կարգավորման և հանգուցալուծման ազգային, տարածաշրջանային և միջազգային ինստիտուտների և մեխանիզմների շրջանակներում որոշումների ընդունմանը բոլոր մակարդակներում: Բանաձևը հաստատում է, որ որոշումների կայացման գործընթացում կանանց մասնակցության բացակայությունը և նրանց նկատմամբ թիրախավորված բռնության տարածվածությունը երկարաձգում են հակամարտությունները, ապակայունացնում ամբողջական տարածաշրջաններ և խոչընդոտում հակամարտությունների խաղաղ կարգավորմանը:

Այս համատեքստում կարևոր է պետության կողմից ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի թիվ 1325 բանաձևի դրույթների իրականացման երեք՝ 2020-2022թ., 2023-2025թթ. և 2025-2027թթ. գործողությունների ազգային ծրագրերի իրականացման հանձնառությունը և հետևողականությունը[79]: ԿԽԱ գործողությունների երրորդ ազգային ծրագիրը կազմվել է նախորդ երկու ծրագրերի արդյունքների հաշվառմամբ՝ համապատասխան ՀՀ կառավարության կողմից ընդունված ռազմավարություններին, ՀՀ կողմից վավերացված միջազգային պայմանագրերին: Ծրագրի արդյունավետ իրականացումը ենթադրում է նաև կանանց ծառայության անցնելու, ծառայությունից արձակման և ծառայողական կարգավիճակի հետ կապված գործընթացների իրավական հստակության և կանխատեսելիության ապահովում՝ բացառելով իրավունքների անհամաչափ սահմանափակման կամ ընթացակարգային ձգձգումների ռիսկերը:

[79] Տե՛ս ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի թիվ 1978-Լ որոշումը:

Հարկ է նշել, որ 2025 թվականի նոյեմբերի 27-ին ՆԱՏՕ-ի կապի գրասենյակի, Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության և

«ՄԱԿ Կանայք» (UN Women) կառույցի համագործակցությամբ Երևանում անցկացվել է «Արդյունավետ պաշտպանություն և անվտանգություն. կանանց նշանակալի մասնակցության առաջխաղացում Հայաստանի զինված ուժերում և դուրս» խորագրով: Միջոցառման ընթացքում քննարկվել են ՄԱԿ Անվտանգության խորհրդի 1325 բանաձևի իրականացման, կանանց կարիերային առաջխաղացման, գենդերային հավասարության և պաշտպանական ոլորտում ներառական քաղաքականությունների ձևավորման հարցերը:

Համաժողովի ընթացքում Պաշտպանը ընդգծել է, որ կանանց լիարժեք ներգրավվածությունը պաշտպանական համակարգերում ոչ միայն իրավահավասարության սկզբունքի իրացումն է, այլև ազգային անվտանգության և համակարգային կայունության ամրապնդման կարևոր բաղադրիչ:

ԵԽԽՎ-ի՝ «Կանայք զինված ուժերում. հավասարության խթանում, գենդերային հիմքով բռնության վերացում» 2016 թվականի թիվ 2120 բանաձևի 2-րդ և 3-րդ կետերի համաձայն՝
Ավելի մեծ թվով կանանց անձնակազմում ներգրավելն ու պահելը դարձել է զինված ուժերի կարևորագույն խնդիրներից մեկը: Սակայն, չնայած այն փաստին, որ վերջին տասնամյակների ընթացքում Եվրոպայի բանակներն աստիճանաբար ավելի դրական են վերաբերվում զինված ուժերը կանանցով համալրելու հարցին՝ կանայք զինված ուժերում և հատկապես՝ հրամանատարական բարձր կոչումներ ունեցող անձանց շարքերում, դեռևս շարունակում են փոքրամասնություն կազմել: *Զինված ուժերին միացող կանայք հայտնվում են տղամարդկանց կողմից և հենց նրանց համար մշակված միջավայրում: Նրանք ենթարկվում են տարատեսակ խտրականությունների, բախվում են կոշտ աշխատանքային ռեժիմով աշխատելու և կարծր մտածելակերպի խնդիրներին, որոնք դեռևս արմատացած են զինված ուժերին բնորոշ «տղամարդկային» մոտեցումներում:*

Պետք է արձանագրել, որ Հայաստանում ոլորտային օրենսդրությունը սեռով պայմանավորված չեզոք է, ինչն էլ հստակ երաշխիքների բացակայության պայմաններում հաճախ ստեղծում է մի իրավիճակ, երբ սեռային առանձնահատկությունները հաշվի չեն առնվում: Բացի այդ, թեպետ Հայաստանում կանայք իրենց կրթությամբ չեն զիջում տղամարդկանց, սակայն դեռևս առկա է զինվորական ծառայության պաշտոններում կանանց ցածր ներգրավվածության խնդիր: Չնայած միջազգային ու ներպետական իրավական չափորոշիչներին՝ ՀՀ ԶՈՒ-ում փաստացի շարունակվում է նկատվել կանանց նկատմամբ ուղղահայաց (կարիերայի աստիճանների ոչ հավասար մատչելիություն) և հորիզոնական (ըստ մասնագիտությունների և ոլորտների) խտրականություն, որն ավելի ակնհայտ է դառնում զինվորական ծառայության անցնելիս (այդ թվում՝ զինվորական

մասնագիտություն ընտրելիս), աշխատանքը երեխայի ծննդյան պարագայում պահպանելիս, զինվորական ծառայությունում առաջխաղացում ունենալիս, բարձր զինվորական պաշտոններում նշանակվելիս և այլն[80]:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումը.
Սեռով պայմանավորված տարբերակված վերաբերմունքը՝ խտրականությունը, չի կարելի հիմնավորել երկրի ավանդույթներով, հասարակության մեջ ընդունված կարծիքներով կամ գերիշխող վարքագծերով[81]:

2025թ. ընթացքում կին զինծառայողների իրավունքների պաշտպանությանը վերաբերելի հարցերը շարունակել են գտնվել Պաշտպանի ուշադրության կենտրոնում: Հաշվետու տարվա ընթացքում Պաշտպանի աշխատակազմ ստացված 900 բողոքներից 6 տոկոսն է վերաբերել կին զինծառայողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը:



2025 թվականին Պաշտպանի աշխատակազմում իրականացված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հաշվետու տարում ևս կին զինծառայողները շարունակել են խոչընդոտների հանդիպել հիմնականում առաջխաղացում ունենալու հարցերում:

Պաշտպանության նախարարությունից ստացված տեղեկությունների համաձայն՝ 2025թ. զինված ուժերում կին զինծառայողների թիվը նախորդ տարվա համեմատ չի ավելացել.

[80] Կանանց աշխատանքային իրավունքների խնդիրներին առավել մանրամասն կարելի է ծանոթանալ սույն հաղորդման համապատասխան բաժնում:

[81] Տե՛ս Կոնստանտին Մարկինն ընդդեմ Ռուսաստանի (KONSTANTIN MARKIN v RUSSIA) գործով ՄԻԵԴ 2012 թվականի մարտի 12-ի վճիռը, կետ 127:



Ընդ որում՝ Երևանում կին զինծառայողները կազմում են 46.1 %, իսկ մարզերում՝ 53.9%:



2025 թվականի ընթացքում ևս Կանայք առավել մեծ թիվ են կազմում շարքային և ենթասպայական կազմերի պաշտոններում, մինչդեռ սպայական կազմում կին զինծառայողների հարաբերակցությունը շարունակում է բավական ցածր մնալ:

Կին զինծառայողները բախվում են խոչընդոտների նաև սպայական կոչում ստանալիս: Ստորև ներկայացված է կին զինծառայողների բաշխվածությունը՝ ըստ խմբերի:



Ըստ ՀՀ ազգային անվտանգության ծառայությունից ստացված տեղեկատվության՝ 2025 թվականին սահմանապահ զորքերի անձնակազմի շուրջ 16%-ը կին զինծառայողներ են, Ծառայության կողմից ձեռնարկվում են գործուն միջոցներ համակարգում կին զինծառայողների քանակն ավելացնելու ուղղությամբ:

Զինված ուժերի անդամների իրավունքների մասին ԵԽ Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)4 հանձնարարականի բացատրական հուշագրի «ԺԹ» կետի համաձայն՝
Կին զինծառայողները տղամարդ զինծառայողների նման պետք է պաշտոնեական առաջխաղացման հարցերում ունենան հավասար հնարավորություններ և ՀՈւ-ում աշխատելիս արժանանան հավասար վերաբերմունքի: Սեռի հիմքով նրանք չպետք է դուրս թողնվեն մասնագիտությունից, բացառությամբ այն դեպքերի, երբ հատուկ տեսակի մասնագիտական գործունեության բնույթով կամ համատեքստով պայմանավորված, սեռը հանդիսանում է իրական վճռորոշ հանգամանք:

Զինված ուժերում հավասար հնարավորությունների ապահովումը նշանակում է, որ կանանց նկատմամբ պետության վերաբերմունքը (սկսած ծառայության ընդունումից, առաջխաղացումից, խրախուսումից, մինչև ծառայությունից արձակում) պետք է հիմնված լինի բացառապես նրանց մասնագիտական ունակությունների, ծառայության կամ ուսման ընթացքում դրսևորած վարքագծի վրա: Միևնույն ժամանակ, կանանց համար պետք է ապահովվեն ծառայության համար պատշաճ պայմաններ:

2025 թվականի ընթացքում բազմաթիվ զորամասեր այցերի, կին զինծառայողների հետ առանձնազրույցների, ինչպես նաև Պաշտպանի աշխատակազմ ստացված գրավոր ու բանավոր բողոքների ուսումնասիրությունները թույլ են տալիս արձանագրելու, որ կին զինծառայողները ծառայության վայրերում բախվում են մի շարք խնդիրների: Դրանք հիմնականում վերաբերում են օրենքով սահմանված աշխատաժամանակի չպահպանմանը, զինվորական համազգեստի, կոշիկների, այլ պարագաների (օրինակ, զրահաբաճկոն)՝ կանանց համար հարմարեցված չլինելուն, զինվորական ծառայության և ընտանեկան կյանքի համատեղելիությանը, որոշ զորամասերի, մարտական դիրքերի կենցաղային պայմաններին (առանձնացված զուգարան, բաղնիք և այլն),

հրամանատարության կողմից թիրախավորվելուն և խտրական վերաբերմունքի արժանանալուն և այլն: Կին զինծառայողներից ստացված բոլոր բողոքները Պաշտպանի աշխատակազմում հատուկ ուսումնասիրության առարկա են դարձվել, դրանցում բարձրացված հարցերով գրություններ են հասցեագրվել իրավասու պետական մարմիններ՝ զուգահեռաբար Պաշտպանի աշխատակազմը մշտական կապ է պահել բողոք ներկայացրած անձանց հետ՝ հետագա հնարավոր խնդիրներին արագ արձագանքելու նպատակով:

Պաշտպանության նախարարության տեղեկացմամբ՝ 2025 թվականի ընթացքում կին զինծառայողների նկատմամբ արձանագրվել է կանոնագրքային կանոնների խախտման 2 դեպք, որոնց կարգավորման, ինչպես նաև համաբնույթ դեպքերի կանխման, նախականխման ուղղությամբ Պաշտպանության նախարարության կողմից ձեռնարկվել են օրենքով նախատեսված անհրաժեշտ միջոցառումներ:

Դրականորեն պետք է արձանագրել զորամասերում կանանց խորհուրդների գործունեությունը, որն էական նշանակություն ունի զինված ուժերում կանանց ներգրավվածության և կին զինծառայողների իրավունքների պաշտպանության հարցում: Խորհուրդների ձևավորումը հնարավորություն է տալիս կին զինծառայողներին բարձրաձայնել ծառայության ընթացքում առաջացող խնդիրները և գտնել դրանց լուծման ուղիներ:

Կին զինծառայողների իրավունքների պաշտպանության և պատշաճ պայմաններում ծառայություն իրականացնելու տեսանկյունից Պաշտպանը դրական է գնահատում շենքային նոր ստեղծված պայմանները:

Կին զինծառայողների հետ առանձին հանդիպումներ են եղել նաև Գեղարքունիքի, Սյունիքի, Վայոց Ձորի, Տավուշի մարզերում տեղակայված զորամասեր այցերի ընթացքում: Առանձնազրույցների ընթացքում կին զինծառայողները ներկայացրել են իրենց մտահոգող հիմնական խնդիրները և զուգահեռաբար առաջարկներ ներկայացրել ծառայության պայմանների լավարկման, ծառայության գրավչության բարձրացման, զինվորական ծառայության ընթացքում նոր մասնագիտություն սովորելու և հետագայում ծառայությունից արձակվելուց հետո քաղաքացիական կյանքում հեշտ ինտեգրվելու և այլնի վերաբերյալ[82]:

Այս համատեքստում Պաշտպանը կարևոր է համարում հատուկ ընդգծել կին զինծառայողների մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքի պատշաճ երաշխավորումը: Սա ունի ինչպես ներպետական[83], այնպես էլ միջազգային իրավական չափորոշիչներով պաշտպանվող հենք: Ճիշտ է, զինվորական ծառայությունը սահմանափակում է անձանց որոշ իրավունքներ, այնուամենայնիվ պետությունը պետք է ապահովի զինծառայողների՝ անձնական կյանքով ապրելու համար անհրաժեշտ պայմանները (օրինակ, հեռախոսային կապ ամուսնու/կնոջ հետ, նամակագրություն և այլն): Դրա հետ մեկտեղ, հեռախոսի օգտագործումը կարող է սահմանափակվել (եթե ունի իրավաչափ նպատակ, ողջամիտ բացատրություն), օրինակ, մարտական հերթապահության ժամանակ[84]:

---

[82] Տեղեկատվությունը հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3121 հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

[83] Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, հոդված 31:

[84] Տե՛ս «Կանայք ԶՈՒ-ում. եղիր իրազեկված: Հայաստանի կին զինծառայողների իրավունքների և ազատությունների մասին» ԵԽ ձեռնարկը, էջ 15:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի
թիվ CM/Rec (2010)4
հանձնարարականի բացատրական հուշագիր

«ԺԵ» Զինծառայողի անձնական տարածքը, նույնիսկ ընդհանուր կացարաններում պետք է դիտարկել որպես նրանց մասնավոր տարածք:

Անձնական կյանքի նկատմամբ հարգանքը և արժանապատիվ զինծառայությունը ներառում են նաև պատշաճ կացարանի իրավունքը: Կին զինծառայողները պետք է բնակվեն այնպիսի կացարաններում և պայմաններում, որ կարողանան բավարարել իրենց նվազագույն կարիքները: Ընդ որում, կին զինծառայողների համար կահավորվում են առանձին հանրակացարաններ (ննջարաններ), պարապմունքներին նախապատրաստվելու, խորհրդակցությունների և ժամանցի սենյակներ, ցնցուղարան և զուգարաններ, ինչպես նաև կենցաղսպասարկման և լվացվելու առանձին սենյակներ: Նույնիսկ զորանոցում զինծառայողին հատկացված տարածքը նրա անձնական և մասնավոր միջավայրն է: Կին զինծառայողների ննջարաններում մահճակալները դասավորվում են մեկ հարկաշարքով:

Կին զինծառայողների իրավունքների պաշտպանության համատեքստում Պաշտպանի կողմից կանանց գումարտակ իրականացված այցի շրջանակում ուսումնասիրվել են ծառայության կազմակերպման առանձնահատկությունները և սոցիալ-կենցաղային պայմանները, արձանագրվել են շենքային պայմանների էական բարելավումներ (ամբողջությամբ նոր վերանորոգված մասնաշենք): Միաժամանակ ընդգծվել է, որ ծառայության արժանապատիվ իրականացման ապահովումը պետք է լինի շարունակական գործընթաց՝ ներառելով ոչ միայն նյութական պայմանների բարելավում, այլև աշխատանքային միջավայրի, հավասար հնարավորությունների և իրավունքների արդյունավետ պաշտպանության երաշխիքների ամրապնդում:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ պետք է արձանագրել, որ ՀՀ զինված ուժերում կանանց ներգրավվածության ընդլայնումը և առաջխաղացման հնարավորությունների ապահովումը շարունակում է մնալ ոչ միայն իրավահավասարության սկզբունքի իրացման հարց, այլև պաշտպանական համակարգի արդյունավետության և կայունության կարևոր բաղադրիչ: Թեև ոլորտային օրենսդրությունը ձևականորեն գենդերային չեզոք է, արձանագրված խնդիրները ցույց են տալիս, որ կին զինծառայողները շարունակում են բախվել ինչպես կառուցակարգային, այնպես էլ գործնական խոչընդոտների՝ ծառայության անցնելու, ծառայությունը շարունակելու և հատկապես՝ կարիերային առաջխաղացման փուլերում:

Ուստի, հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև նշված հարցի վերաբերյալ ներպետական և միջազգային չափորոշիչները, անհրաժեշտ է՝

✓ կատարել ուսումնասիրություններ (այդ թվում՝ հարցումների միջոցով)՝ ՀՀ ԶՈՒ-ում ընդգրկված իգական սեռի ներկայացուցիչների՝ ծառայության անցնելու, այն շարունակելու կամ դադարեցնելու պատճառները պարզելու նպատակով,

✓ հանրային իրազեկումներով ընդգծել կնոջ դերն ու կարևորությունը ԶՈՒ-ում (ներառյալ՝ զանգվածային լրատվության միջոցներով)՝ կնոջ դերի և ԶՈՒ առնչությամբ կարծրատիպային մտածողությունը փոխելու նպատակով,

✓ ԶՈՒ-ում կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը խթանելու նպատակով կանանց համար հասանելի դարձնել ՀՀ ԶՈՒ բոլոր պաշտոնները՝ երաշխավորելով ինչպես կանանց բավարար մասնագիտական պատրաստվածությունը, այնպես էլ վերջիններիս ծառայության համար անհրաժեշտ պայմանների առկայությունը,

✓ միջոցներ ձեռնարկել կին զինծառայողներին այն դերերում ներգրավելու ուղղությամբ, որոնցից նրանք նախկինում դուրս են թողնվել, դիտարկել այդ մասնագիտությունների համալրման ժամանակ կիրառված ֆիզիկական չափանիշները և փորձնական ծրագրերի նպատակահարմարությունը՝ կանանց համալրումն այդ մասնագիտություններում խթանելու նպատակով,

✓ աջակցել զորամասերի կին զինծառայողների խորհուրդների գործունեությանն ու կարողությունների զարգացմանը,

✓ կին զինծառայողներին խտրականությունից, վատ վերաբերմունքից, թիրախավորումներից զերծ պահելու նպատակով զինվորական հաստատություններում իրականացնել իրազեկման, կրթական ու կանխարգելիչ աշխատանքներ:

2. Զինված ուժերում կանանց իրավունքների օրենսդրական երաշխիքները

Կանանց իրավունքների պաշտպանությունը զինված ուժերում երաշխավորելու ամենակարևոր քայլերից մեկը զինվորական օրենսդրությամբ համապատասխան երաշխիքների ամրագրումն է: Կանանց զինվորական ծառայության խրախուսման տեսանկյունից Պաշտպանը կարևոր է համարում նաև օրենսդրության վերանայումը՝ անձնական կամ ընտանեկան հանգամանքների հաշվառմամբ:

Ընդհանուր առմամբ, ոլորտային օրենսդրությունը գենդերային առումով չեզոք է (gender-neutral), և հաճախ խնդիրներ առաջանում են հենց գենդերային առանձնահատկությունները հաշվի չառնելու պատճառով, ինչը կին զինծառայողների համար ստեղծում է անհավասար պայմաններ: Այս առումով Պաշտպանը կարևորում է, որ օրենսդրությամբ լրացուցիչ երաշխիքներ նախատեսվեն զինվորական ծառայություն անցնող կանանց համար:

Իհարկե, դրականորեն պետք է ընդգծել իրավասու պետական մարմինների կատարած աշխատանքը կին զինծառայողների իրավունքների ապահովման ուղղությամբ, սակայն առկա են օրենսդրական խոչընդոտներ, որոնք զինված ուժերում հաճախ հանգեցնում են կանանց իրավունքների՝ ոչ ամբողջությամբ իրացմանը:

Մասնավորապես՝ համատեղ ծառայության բավարար օրենսդրական երաշխիքներ առկա չեն *զինծառայող և քաղաքացիական ծառայող, ինչպես նաև տարբեր համակարգերում ծառայող ամուսինների համար:* Միևնույն ժամանակ, առկա չեն օրենսդրական երաշխիքներ *պայմանագրային զինծառայողին ծառայության նոր վայր*

տեղափոխելու դեպքում նույն զորամասում քաղաքացիական հասփիք զբաղեցնող նրա ամուսնուն նրա հետ ծառայության նոր վայր տեղափոխելու, ինչպես նաև տարբեր համակարգերում ծառայող ամուսիններից մեկին ծառայության նոր վայր տեղափոխելու դեպքում մյուս ամուսնուն հնարավորին մոտ զորամասում ծառայության տեղափոխելու վերաբերյալ (վերջիններիս ցանկությամբ):

Զինված ուժերի անդամների իրավունքների մասին ԵԽ Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)4 հանձնարարականի բացատրական հուշագրի «Է» կետի համաձայն՝
Զինծառայողների բարոյահոգեբանական վիճակի համար կարևոր է, որպեսզի նրանք հնարավորության սահմաններում կարողանան կապ պահպանել իրենց մտերիմների, այդ թվում՝ հարազատների և զուգընկերոջ հետ: Անդամ պետությունները պետք է համապատասխան պայմաններ ստեղծեն, որպեսզի զինծառայողներն օգտվեն այս հատուկ իրավունքից:

«Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիան (հոդված 11) և «Կանայք զինված ուժերում. հավասարության խթանում, գենդերային հիմքով բռնության վերացում» ԵԽԽՎ-ի 2016 թվականի թիվ 2120 բանաձևը (կետեր 6.1.3, 6.1.6 և 6.1.7) պետություններին պարտավորեցնում են ստեղծել այնպիսի պայմաններ, որ կանանց անձնական ու ընտանեկան կյանքի հանգամանքները չխոչընդոտեն ծառայության մեջ առաջխաղացմանը, հնարավորինս փորձեն ստեղծել այնպիսի սոցիալական ծառայություններ (օրինակ՝ երեխաների խնամքով զբաղվող հաստատություններ), որոնք հնարավորություն կտան ընտանեկան իրավունքների իրականացումը համատեղել զինծառայության հետ:

Պաշտպանը կարևորում է այս ուղղությամբ պետության կողմից համապատասխան միջոցառումների իրականացումը:

Աշխատանքային իրավունքների իրացման տեսանկյունից առկա է խնդիր մեկ այլ իրավակարգավորման շրջանակներում:

ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 1269-Ն որոշման հավելվածի 6-րդ կետի համաձայն՝ զինվորական հաշվառման վերցվում են նաև 18 տարին լրացած և զինվորական մասնագիտություն ստացած կամ կամավոր հիմունքներով պարտադիր զինվորական կամ պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու համար դիմած, ինչպես նաև *զինվորական հաշվառման ենթակա մասնագիտություններ ունեցող իգական սեռի քաղաքացիները:*

Մինչդեռ, կանայք **բավարար չափով իրազեկված չեն զինվորական հաշվառման ենթակա մասնագիտությունների մասին,** ինչը կարող է խոչընդոտ հանդիսանալ զինվորական հաշվառման նպատակով կանանց դիմելու և հետագայում զինվորական ծառայություն անցնելու համար:

ՀՀ զինված ուժերում հղի կին ծառայողների համար հատուկ հանդերձանք նախատեսված չէ: Մինչդեռ, հղի կանանց համազգեստի հարմարավետության անհրաժեշտության տեսանկյունից, հաշվի առնելով նաև այլ երկրների փորձը (օրինակ՝ Միացյալ Թագավորության), Պաշտպանը կարևորում է նրանց համար հատուկ համազգեստ նախատեսելու անհրաժեշտությունը: Այս առումով հարկ է նկատի ունենալ, որ պետությունն ունի պարտականություն՝ ապահովելու, որ ռազմական հանդերձանքը, համազգեստները լինեն կանանց հարմարեցված և անհարմարություն չպատճառեն: Բացի

այդ, կանանց ֆիզիոլոգիական առանձնահատկություններին հարմարեցված չեն նաև կոշիկները, զրահաբաճկոնները:

Քննարկվող թեմայի շրջանակներում **Պաշտպանը կարևոր է համարում անդրադառնալ կանանց կամավոր հիմունքներով պարտադիր զինվորական ծառայություն անցնելու հարցին:** Նշված հարցը քննարկման առարկա է դարձել նաև կանանց գումարտակ Պաշտպանի այցի ընթացքում, որտեղ կին զինծառայողները դրական են արտահայտվել նշված հիմունքներով ծառայության կազմակերպման մասին՝ միաժամանակ կարևորելով ներգրավվածության խթանմանը միտված աշխատանքների իրականացումը:

Անհրաժեշտ է նշել, որ կանանց կամավոր հիմունքներով պարտադիր զինվորական ծառայություն անցնելու վերաբերյալ մի շարք մտահոգություններ են հայտնել նաև տարբեր գործընկերներ, այդ թվում՝ հասարակական կազմակերպություններ[85]:

Պաշտպանը ևս ունի մտահոգություններ կանանց զինվորական ծառայության ներգրավելու բնագավառում մարդու իրավունքներին վերաբերելի հարցերի առնչությամբ[86]: Թեև այս համակարգն աշխարհում նոր չէ և տարբեր երկրներում արդյունավետորեն գործում է (օրինակ, Նորվեգիա, Շվեդիա և այլն), սակայն իգական սեռի քաղաքացիներին ԶՈՒ ներգրավելիս անհրաժեշտ է հաշվի առնել բազմաթիվ հանգամանքներ՝ սկսած վերաբերելի օրենսդրությունից մինչև զորամասային պայմաններ: Հարկ է նկատի ունենալ, որ պետությունը միջազգային մի շարք փաստաթղթերով ստանձնել է կոնկրետ պարտավորություններ, այդ թվում՝ կանանց զինվորական ծառայության մասով, որոնք վերաբերում են ԶՈՒ անդամների հավաքագրման և կարիերայի կառավարման, գենդերային հավասարության համար առավել բարենպաստ միջավայրի ստեղծման, գենդերային բռնության դեմ պայքարի հետ կապված և այլ հարցերի[87]: Դրանք ենթադրում են կանանց զինվորական ծառայության նախապատրաստման նպատակով լուրջ և համակարգային քայլերի իրականացում:

Ուստի, հաշվի առնելով վերոգրյալը և նկատի ունենալով միջազգային իրավական չափորոշիչները՝ առաջարկվում է՝

✓ **«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում սահմանել, որ զինծառայողին ծառայության նոր վայր տեղափոխելու դեպքում նրա հետ ծառայության նոր վայր է տեղափոխվում նաև նույն զորամասում քաղաքացիական հաստիք զբաղեցնող նրա ամուսինը (այդ թվում՝ փաստական ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող անձը)՝ ըստ վերջիններիս ցանկության: Նախատեսել նաև տարբեր համակարգերում ծառայող ամուսինների, ըստ վերջիններիս ցանկության, միմյանց հնարավորին մոտ զորամասերում բնակվելու հնարավորությունը,**

---

[85] Տեղեկատվությունը հասանելի է https://hcav.am/womeninarmy-05-05-2023/ հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

[86] Գործող օրենքում առկա են խնդրահարույց կարգավորումներ, օրինակ, կամավոր հիմունքներով պարտադիր զինվորական ծառայություն անցնող իգական սեռի զինծառայողները ընտանեկան պայմաններից ելնելով չեն կարող արձակվել ԶՈՒ-ից:

[87] Առավել մանրամասն, տե՛ս, «Կանայք ԶՈՒ-ում. հավասարության խթանում, գենդերային հիմքով բռնության վերացում» 2016 թվականի թիվ 2120 ԵԽԽՎ բանաձևը, ԵԱՀԿ ԺՀՄԻԳ 2008 թվականին տպագրված «ԶՈՒ անձնակազմի մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին» ձեռնարկը:

- ✓ **ապահովել այն մասնագիտությունների վերաբերյալ իրազեկումը, որոնք ունեցող իգական սեռի ներկայացուցիչները կարող են դիմել զինվորական հաշվառման համար,**
- ✓ **զինվորական օրենսդրությամբ խրախուսական նորմեր նախատեսել մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդից օգտվելու հնարավորություն ունեցող, սակայն ծառայելու նպատակով այդ արձակուրդից իրենց ցանկությամբ չօգտված կին զինծառայողների համար, որպեսզի նրանք ունենան բավարար հնարավորություններ ծառայությունը երեխայի խնամքի հետ համատեղելու համար,**
- ✓ **ստեղծել այնպիսի պայմաններ, որ կանանց անձնական ու ընտանեկան կյանքի հանգամանքները չխոչընդոտեն ծառայության մեջ առաջխաղացմանը (օրինակ՝ երեխաների խնամքով զբաղվող հաստատություններ),**
- ✓ **հղի կին ծառայողների համար նախատեսել հատուկ հանդերձանք,**
- ✓ **իգական սեռի քաղաքացիների պարտադիր զինվորական ծառայության նոր մոդելի համատեքստում միջազգային փորձի ու չափորոշիչների հաշվառմամբ՝ կատարել անհրաժեշտ իրավական, նյութատեխնիկական ու կենցաղային հարմարեցումներ, փոփոխություններ, ներդնել համապատասխան կրթական ծրագրեր՝ ապահովելու համար ՀՈՒ-ում կանանց արժանապատիվ ծառայության համար անհրաժեշտ պայմանները:**

ԳԼՈՒԽ 8. ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների բնակարանային ապահովումը

2025 թվականին Պաշտպանը շարունակել է ստանալ զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների բնակարանային ապահովման հետ կապված մեծ թվով բողոքներ: Չնայած ոլորտային խնդիրների որոշակի լուծումներին ու դրական զարգացումներին՝ բնակարանային ապահովմանը վերաբերելի բազմաթիվ հարցեր շարունակում են մնալ չլուծված: Այդ մասին են վկայում նաև Պաշտպանին հասցեագրված գրավոր ու բանավոր բողոքները: Դրանք հիմնականում վերաբերել են՝ *1) ծառայողական բնակարանով չապահովելու դեպքում ամսական դրամական հատուցման ոչ բավարար լինելուն, 2) Երևան քաղաքում բնակարանային հաշվառման մեջ գտնվող անձանց բնակարանի գնման վկայագրերով տրամադրվող գումարի չափի ոչ բավարար լինելուն, 3) բնակարանային ապահովության շահառու հաշվառված զինծառայողների (այդ թվում՝ պահեստազորում հաշվառված նախկին զինծառայողների) բնակարանային ապահովության գործընթացի ձգձգմանը, 4) հիփոթեքային վարկավորման հետ կապված խնդիրներին, 5) ծառայողական բնակարանները կոմունալ ենթակառուցվածքներով ապահովելուն, 6) այլ զորքերի և ծառայությունների (օրինակ՝ Քրեակատարողական, ԱԱԾ) բնակարանային ապահովման խնդիրներին և այլն:*

2025 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ստացված շուրջ 900 բողոքներից 38-ն վերաբերել են սոցիալական երաշխիքների ապահովման խնդիրներին: Սոցիալական երաշխիքների ապահովմանն առնչվող **38 դիմումներից 9-ը վերաբերել են** ոչ աշխատանքային (հանգստյան և տոնական) օրերին ծառայության դիմաց չվարձատրվելուն, **8-ը՝** բնակարանային պայմանների բարելավմանը, **6-ը՝** երկարամյա զինվորական ծառայության կենսաթոշակի նշանակմանը, իսկ մնացած **15-ը՝** ոլորտին առնչվող այլ հարցերի:



Այսպես, հաշվետու ժամանակահատվածում զինծառայողների կողմից կրկին **բարձրացվել է ծառայողական բնակարանով չապահովելու դեպքում ամսական դրամական հատուցման գումարների չափը բարձրացնելու հարցը:** Ըստ զինծառայողների՝ ամսական դրամական հատուցման գումարը չի բավականացնում վարձակալությամբ բնակարան ձեռք բերելու համար, քանի որ շուկայական գների բարձրացման համատեքստում բնակարանների վարձավճարները շարունակ բարձրանում են: Արդյունքում, զինծառայողներն իրենք են ստիպված լինում սեփական միջոցներից

(ստացած աշխատավարձից) գումար ավելացնել և վարձավճարն ամբողջությամբ վճարել: Զորամասեր այցերի ընթացքում կրկին արձանագրվել է այս հարցի արդիականությունը և լուծման ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտությունը:

Հարցի կապակցությամբ Պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ ՀՀ կառավարության 20.07.2023թ. N 1219-Ն որոշմամբ սահմանված՝ ծառայության վայրում ծառայողական բնակարանով չապահովված զինծառայողին տրամադրվող դրամական հատուցման չափերը որոշակի պարբերականությամբ փոփոխվում են, սակայն դրանց հիմքում միշտ չէ, որ կարող է դրվել տնտեսության մեջ ձևավորվող գնագոյացման դինամիկան: Ամսական դրամական հատուցման գումարի չափերի վերանայման հարց ներկա դրությամբ չի քննարկվում:

2025 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանը հրապարակային հայտարարությամբ է հանդես եկել «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն նախատեսող օրենսդրական նախաձեռնության կապակցությամբ, որով առաջարկվում էր զինծառայողների բնակարանային ապահովության կարիք ունենալու չափանիշում գործող 30 կիլոմետր հեռավորությունը փոխարինել 60 կիլոմետրով: Պաշտպանը նշել է, որ նման կարգավորումը կարող է սահմանափակել զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների բնակարանային ապահովության ծրագրերից օգտվելու հնարավորությունները, ինչպես նաև առաջացնել իրավական որոշակիության հետ կապված խնդիրներ՝ հատկապես նախագծի նկատմամբ հետադարձ ուժի կիրառման պայմաններում: Այս կապակցությամբ Պաշտպանն առաջարկել է վերանայել նախագծով առաջարկվող կարգավորումները՝ բացառելով դրանց նկատմամբ հետադարձ ուժի կիրառումը և ապահովելով զինծառայողների արդեն ձևավորված իրավական սպասումների և սոցիալական երաշխիքների պատշաճ պաշտպանությունը: Սակայն, օրենսդրական այդ նախագիծը չի ընդունվել:

Հաջորդ խնդիրը վերաբերում է **Երևան քաղաքում բնակարանային հաշվառման մեջ գտնվող անձանց բնակարանի գնման վկայագրերով տրամադրվող գումարի չափի ոչ բավարար լինելուն:** Այս խնդիրը Պաշտպանը տարիներ շարունակ բարձրաձայնում է՝ իրավասու մարմիններին առաջարկելով վերջնական լուծում գտնել և կարգավորել հարցը: Պետք է նշել, որ ներկայում ևս Երևան քաղաքում բնակարանային հաշվառման մեջ գտնվող անձանց բնակարանի գնման վկայագրով անհատույց պետական ֆինանսական աջակցություն տրամադրվում է շուկայական միջինացված արժեքի 50 տոկոսի չափով, այլ ոչ թե 100 տոկոսի: Մարդիկ նշում են, որ ստիպված են լինում մյուս 50 տոկոսը իրենք ավելացնեն կամ դիմեն դատարան և դատական կարգով վերականգնեն իրենց իրավունքները:

Պաշտպանը վերահաստատում է իր դիրքորոշումն առ այն, որ անհրաժեշտ է ապահովել նախկին զինծառայողների՝ բնակության համար նվազագույն պայմանները բավարարող բնակարան ձեռք բերելու իրական հնարավորությունը՝ առանց աջակցություն ստացողի միջոցների հաշվին գնի տարբերությունը լրացնելու անհրաժեշտության:

Տարեկան հաղորդման նախապատրաստման շրջանակում ՀՀ պաշտպանության նախարարությունից ստացված տեղեկատվության համաձայն՝ ներկայում նշված խնդիրը գտնվում է քննարկման փուլում:

Հաջորդ համակարգային խնդիրն այն է, որ զինծառայողները (նաև նախկին զինծառայողները) դժգոհություններ են ներկայացնում առ այն, որ **երկար տարիներ հաշվառված են բնակարանային ապահովության շահառուների հերթացուցակում,**

սակայն բնակարանով չեն ապահովվել: Արձանագրվել են նաև դեպքեր, երբ նախկին զինծառայողները 15 տարուց ավելի շարունակում են հաշվառված մնալ հերթացուցակում:

Պաշտպանն ի գիտություն է ընդունում գործող իրավակարգավորումները (այդ թվում՝ ՀՀ կառավարության 2007 թվականի մարտի 7-ի թիվ 384-Ն, 2018 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 1419-Ն, 2021 թվականի նոյեմբերի 25-ի թիվ 1930-Ն որոշումները), սակայն զինծառայողների (նաև նախկին զինծառայողների) բնակարանային ապահովության խնդրին պետք է հնարավորինս արագ և վերջնական լուծում տալ:

Բացի այդ, 2025 թվականի ընթացքում Պաշտպանի կողմից կայացվել է մարդու իրավունքների խախտման առկայության մասին որոշում՝ նախկին զինծառայողի ընտանիքի բնակարանային ապահովության հարցով: Մասնավորապես՝ նախկին զինծառայողի ընտանիքի անդամները Պաշտպանին հասցեագրած բողոքով հայտնել են, որ Երևան քաղաքի վարչական շրջաններից մեկի ղեկավարի 2005 թվականի որոշմամբ հայրը և ընտանիքի անդամները վերցվել են բնակարանային պայմանների բարելավման հաշվառման, և համապատասխան տվյալներն ուղարկվել են ՀՀ պաշտպանության նախարարություն: Հայրը՝ 2019 թվականին մահացել է, սակայն մինչ նրա մահը բնակարանային պայմանների բարելավման հարցը չի լուծվել: Բնակարանային ապահովման հարցով դիմել են ՀՀ պաշտպանության նախարարություն և ստացել պատասխան այն մասին, որ բնակարանային պայմանների բարելավման հարցը երբևէ չի քննարկվել: Բողոք ներկայացրած անձինք դժգոհություն են ներկայացրել առ այն, որ հոր հետ եղել են նույն կարգավիճակում գտնվող անձինք (այդ թվում՝ նույն ժամանակահատվածում կամ ավելի ուշ հաշվառված), որոնց բնակարանային ապահովումն իրականացվել է, իսկ իրենց ընտանիքինը՝ ոչ: Հետևաբար, Պաշտպանության նախարարության կողմից իրականացվել է ոչ պատշաճ վարչարարություն, ինչի պատճառով ընտանիքը շարունակում է վնաս կրել:

Բողոքի ուսումնասիրությամբ արձանագրվել է, որ 2005 թվականից բնակարանային պայմանների բարելավման հաշվառման մեջ գտնվող զինվորական հաշմանդամություն ունեցող անձի բնակարանային գործը տարիներ շարունակ չի քննարկվել: Կայացված որոշմամբ Պաշտպանն արձանագրել է, որ տվյալ իրավիճակում խախտվել են պատշաճ վարչարարության իրավունքի, լեգիտիմ ակնկալիքների նկատմամբ հարգանքի ու իրավական որոշակիության սկզբունքները: Պաշտպանը ՀՀ պաշտպանության նախարարությանն առաջարկել է միջոցներ ձեռնարկել որոշմամբ արձանագրված խախտումները վերացնելու ուղղությամբ:

Ըստ Պաշտպանության նախարարության տվյալների՝ ՊՆ կենտրոնական բնակարանային հանձնաժողովի կողմից կայացված դրական եզրակացությունների հիման վրա և ՀՀ պաշտպանության նախարարի հրամաններով, ինչպես նաև ՀՀ վարչական դատարանի դատական ակտերի համաձայն՝ ՀՀ ՊՆ համակարգի բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող 71 զինծառայողների տրամադրվել է անհատույց պետական ֆինանսական աջակցություն՝ բնակարանի գնման վկայագրերի միջոցով (ԲԳՎ): Հաշվետու ժամանակահատվածում 55 զինծառայողներ բնակարանի գնման վկայագրով ձեռք են բերել բնակարան կամ բնակելի տուն: ՀՀ ՊՆ համակարգի՝ ֆունկցիոնալության խորը, ծանր և միջին աստիճանի սահմանափակումով հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող նախկին զինծառայողներ և զոհված (մահացած) զինծառայողների 32 ընտանիքների տրամադրվել է բնակարանի գնման վկայագիր: Բնակարան են ձեռք բերել 33 ընտանիք (3 ընտանիք 2024թ.-ի տրված բնակարանի գնման վկայագրով):



Հիփոթեքային վարկավորման հետ կապված խնդիրները: Հիփոթեքային վարկավորումը շարունակում է մնալ զինծառայողներին և նրանց ընտանիքներին բնակարաններով ապահովելու առանցքային մեխանիզմներից մեկը: Այնուամենայնիվ, գործնականում այս համակարգը ուղեկցվում է մի շարք խնդիրներով, որոնք զգալիորեն դժվարացնում են բոլոր կազմերի զինծառայողների հասանելիությունը հիփոթեքային վարկավորման ծրագրին: Գործող կարգավորումների համաձայն՝ հիփոթեքային վարկավորման պետական նպատակային ծրագրերը հասանելի են բացառապես սպայական և ավագ ենթասպայական կազմերի պայմանագրային զինծառայողներին: Մինչդեռ, շարքային և կրտսեր ենթասպայական կազմերի պայմանագրային զինծառայողները ներկայում զրկված են տվյալ ծրագրից օգտվելու հնարավորությունից: Այս կապակցությամբ անհրաժեշտ է նշել, որ զինված ուժերում ատեստավորման գործընթացը և ատեստավորումը հաղթահարած զինծառայողների աշխատավարձերի բարձրացումը կարող են հանդիսանալ կարևոր գործոն, որպեսզի իրավասու մարմինները քննարկման առարկա դարձնեն գործող իրավակարգավորումներում փոփոխություններ կատարելու և շարքային ու կրտսեր ենթասպայական կազմերի պայմանագրային զինծառայողներին ևս հիփոթեքային վարկավորման ծրագրում ներառելու հարցը:

Հիփոթեքային վարկավորման ծրագրերի հետ կապված մեկ այլ խնդիր էր այն, որ այդ ծրագրերից չէին կարողանում օգտվել Ազգային անվտանգության ծառայության, Քրեակատարողական ծառայության և Ոստիկանության ծառայողները: Պաշտպանն առաջարկել էր նշված համակարգերի զինծառայողներին ևս հնարավորություն տալ

օգտվելու օրենքով սահմանված արտոնությունից: Այս առումով Պաշտպանը դրական է գնահատում այն, որ ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 22-ի թիվ 1091-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ են կատարվել՝ նախատեսելով, որ հիփոթեքային վարկավորման ծրագրերից կարող են օգտվել նաև Ազգային անվտանգության մարմինների և Պետական պահպանության մարմնի ծառայողները: Մինչդեռ, Ոստիկանության և Քրեակատարողական համակարգի ծառայողների համար խնդիրը մնում է չլուծված:

Զինծառայողների շրջանում հիփոթեքային վարկավորման ծրագիրը դրական է գնահատվում[88]: Դրա հետ մեկտեղ, առկա են որոշ մտահոգություններ այն առումով, որ տևական ժամանակ ծառայող սպաները, ովքեր երկարամյա ծառայության կենսաթոշակի անցնելու մտադրություն ունեն, ծրագրից օգտվելու խնդիրների առաջ են կանգնում: Նրանց համար ֆինանսական տեսանկյունից շահավետ չէ այդ ծրագրից օգտվելը: Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների՝ զորամասեր իրականացրած այցերի ընթացքում սպաները հայտնել են, որ հիփոթեքային վարկավորման ծրագիրն ունի կատարելագործման անհրաժեշտություն, քանի որ շահառուների համար նախատեսված տեղերը սահմանափակ են, իսկ այն կարող է շահավետ լինել միայն ԶՈւ նոր ներգրավվող սպաների համար: Ուստի, զինծառայողների կարծիքով, այս ծրագրի հետ մեկտեղ անհրաժեշտ է մշակել այլ կառուցակարգեր, որպեսզի երկար տարիներ (օրինակ, 20 և ավելի) ծառայած սպաները կարողանան բնակարան ձեռք բերել: Այս առումով, զինծառայողների բնակարանային ապահովության ուղղությամբ կարևոր քայլ է այն, որ նախատեսվել է կարգավորում, ըստ որի՝ ռազմաուսումնական հաստատությունում ուսումնառություն անցնելու համար օրենքով սահմանված ժամկետով պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու պայմանագիր կնքած, ռազմաուսումնական հաստատությունն ավարտած և ՊՆ-ի համակարգում կամ Ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերում սպայական պաշտոնի նշանակված զինծառայողին անհատույց օգտագործման իրավունքով հատկացվում է բնակարան[89]: Բնականաբար, սա պետության կողմից մշակված կարևոր ու արդյունավետ քայլ է, որը երկարաժամկետ առումով կարող է ապահովել դրական արդյունք:

Ծառայողական բնակարանները կոմունալ ենթակառուցվածքներով ապահովելու խնդիր: Այս հարցին Պաշտպանն անդրադարձ է կատարել նաև նախորդ տարեկան հաղորդմամբ՝ կարևորելով զինծառայողների և նրանց ընտանիքների համար արժանապատիվ բնակարանային պայմանների ապահովումը: Նշված խնդիրը Զինված ուժերում դեռևս առկա է: Ծառայողական բնակարաններում կոմունալ ենթակառուցվածքների բացակայությունը զինծառայողների և նրանց ընտանիքների համար ստեղծում է կենցաղային լուրջ դժվարություններ՝ ազդելով նրանց կենսապայմանների վրա: Այս հարցը պահանջում է համակարգային լուծում՝ ուղղված տրամադրվող բնակարանների որակի բարելավմանը և անհրաժեշտ բոլոր կոմունալ հարմարություններով ապահովելուն:

Արժանապատիվ բնակարանային պայմանների իրավունքը դիտարկելով միջազգային իրավական չափորոշիչների լույսի ներքո՝ կարող ենք փաստել, որ անկախ

---

[88] Ըստ ՊՆ-ի՝ 2025 թվականի ծրագրում ընդգրկված 500 զինծառայողից 291-ը օգտվել են մատչելի և արտոնյալ պայմաններով երկարաժամկետ հիփոթեքային վարկավորման պետական նպատակային ծրագրից: 2025 թվականին բողոքներ չեն ստացվել:

[89] Ավելի մանրամասն տե՛ս «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 65-րդ հոդվածի 2-րդ մասի 2.1 կետը, ինչպես նաև ՀՀ կառավարության 2022 թվականի հոկտեմբերի 27-ի թիվ 1665-Ն որոշումը:

զինծառայողի կոչումից՝ նա իրավունք ունի օգտվելու այնպիսի կացարանից, որն ունի բավարար լուսավորություն և օդափոխություն (ներառյալ՝ բավարար ջեռուցում), մաքուր է, լավ վիճակում է, բավարար չափով կահավորված է և ունի բավարար բնակելի տարածք՝ դրանում ապրող անձանց թվին համապատասխան: Հիգիենայի և առողջության հարցերը նույնպես կարևոր են բնակարանային պայմանների տեսանկյունից: Զորանոցային տիպի կացարաններում կանանց և տղամարդկանց հատվածները պետք է լինեն առանձնացված[90]:

Այս ստանդարտների պահպանումը զինծառայողների իրավունքների ապահովման անբաժանելի մասն են և պահանջում են մշտական ուշադրություն ու հոգածություն իրավասու մարմինների կողմից:

ՊՆ համակարգի զինծառայողներից բացի, բնակարանային ապահովության իրավունքը հավասարապես վերաբերում է նաև ԱԱԾ, ՊՊԾ, Քրեակատարողական ծառայության, Ոստիկանության համակարգի զինծառայողներին, ինչպես նաև բնակարանային հաշվառման վերցված նախկին ծառայողներին:

Նշված ոլորտներում բնակարանային ապահովման հետ կապված հարցերին Պաշտպանը մանրամասն անդրադարձ է կատարել նախորդ տարեկան հաղորդումներում՝ համապատասխան իրավակարգավորումների վկայակոչմամբ հստակ արձանագրելով, որ բնակարանային պայմանների բարելավման իրավունքն ամրագրված է օրենքով, առկա են նաև բարելավումն իրականացնելու իրավական մեխանիզմները, սակայն այդ իրավունքը տևական ժամանակ չի իրացվում: Պաշտպանը խնդրի լուծման առաջարկներ է ներկայացրել իրավասու պետական մարմիններին:

Զինծառայողների բնակարանային ապահովության իրավունքին վերաբերելի բազմաթիվ այլ հարցերի, այդ թվում՝ բնակարանային գործերի «համապատասխանեցման» արդյունքում հերթացուցակից դուրս մնալուն, նախկին զինծառայողներին բնակելի տարածությունից հանելուն, զինվորական ծառայությունից արձակվելուց հետո վարձակալության գումարի փոխհատուցմանը և այլն, Պաշտպանը ևս անդրադարձ է կատարել և համապատասխան առաջարկություններ է ներկայացրել նախորդ տարեկան հաղորդումների շրջանակներում[91]:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ առաջարկվում է՝

- ✓ ***միջոցներ ձեռնարկել երկար տարիներ բնակարանային հաշվառման մեջ գտնվող զինծառայողների (նախկին զինծառայողների) բնակարանային ապահովության հարցին վերջնական լուծում տալու ուղղությամբ, այդ թվում՝ լրացուցիչ ֆինանսական միջոցների ներգրավմամբ,***
- ✓ ***զինծառայողների (նախկին զինծառայողների) բնակարանային ապահովության հարցերի քննարկման ընթացքում՝ ապահովել պատշաճ***

---

[90] Տե՛ս ՀՈւ անդամների իրավունքների մասին ԵԽ Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)4 հանձնարարականի բացատրական հուշագրի «ԺԵ» կետը, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի 11-րդ հոդվածը, Վերանայված Եվրոպական սոցիալական խարտիայի 31-րդ հոդվածի 1-ին մասը:

[91] Տես, 2023 թվականին Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների պաշտպանության վիճակի մասին հաղորդումը, էջեր 485-491, հասանելի է https://www.ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2024 թվականին Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների պաշտպանության վիճակի մասին հաղորդումը, էջեր 154-160, հասանելի է https://www.ombuds.am/images/files/4d1335361f1f7e9fbcc1cfc10679701e.pdf հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

վարչարարության իրավունքի, լեգիտիմ ակնկալիքների նկատմամբ հարգանքի ու իրավական որոշակիության սկզբունքների պահպանումը՝ բացառելով անձանց իրավունքների խախտման հանգեցնող դեպքերը,

✓ քննարկել զինծառայողներին ծառայողական բնակարանով չապահովելու դեպքում ամսական դրամական հատուցման գումարների չափը բարձրացնելու հարցը՝ նկատի ունենալով, որ նշված գումարի չափը վերանայելու անհրաժեշտություն կա՝ շուկայական գների բարձրացման համատեքստում,

✓ Երևան քաղաքում բնակարանային հաշվառման մեջ գտնվող շահառուներին բնակարանի գնման վկայագրով անհատույց պետական ֆինանսական աջակցություն տրամադրել շուկայական միջինացված արժեքի 100 տոկոսի չափով,

✓ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում կատարել փոփոխություն և երկարաժամկետ հիփոթեքային վարկավորման պետական նպատակային ծրագրերից օգտվելու հնարավորություն նախատեսել նաև կրտսեր ենթասպայական և շարքային կազմերի պայմանագրային զինծառայողների համար,

✓ շարունակական աշխատանքներ իրականացնել ՊՆ-ի հաշվեկշռում առկա բնակարանները բարեկարգելու, նոր շենքեր կառուցելու և դրանք կոմունալ ենթակառուցվածքներով ապահովելու ուղղությամբ,

✓ միջոցներ ձեռնարկել ծառայության ընթացքում բնակարանային հաշվառման վերցված մյուս համակարգերի զինծառայողների բնակարանային ապահովման ուղղությամբ:

2. Զինվորական կենսաթոշակի իրավունքի ապահովման հետ կապված խնդիրներ

Պաշտպանը 2025 թվականի ընթացքում շարունակել է ստանալ կենսաթոշակի իրավունքի իրացման հետ կապված բողոքներ: Բողոքները հիմնականում վերաբերել են *զինվորական կենսաթոշակի նշանակման գործընթացի ձգձգումներին, զինվորական կենսաթոշակի չափը սխալ հաշվարկելուն, երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկելիս զինվորական ծառայություն չհամարվող աշխատանքային ստաժը հաշվի չառնելուն և այլն:*

Անհրաժեշտ է արձանագրել, որ նախորդ տարիների համեմատ՝ 2025 թվականի ընթացքում զինվորական կենսաթոշակների հետ կապված բողոքների թիվը Պաշտպանի աշխատակազմում էականորեն նվազել է, ինչը վկայում է նաև իրավասու մարմինների կողմից ոլորտում կատարած աշխատանքների մասին: Անհատական բողոքների քննարկման շրջանակում կենսաթոշակային իրավունքին վերաբերելի բազմաթիվ հարցեր իրավասու մարմինների հետ համագործակցությամբ ստացել են լուծումներ:

Դրա հետ մեկտեղ, շարունակում է չլուծված մնալ համակարգային մի խնդիր, որը վերաբերում է **զինվորական կենսաթոշակ նշանակելիս աշխատանքային ստաժը չհաշվարկելուն:** Պաշտպանը բարձրացված հարցի խորքային բնույթը ներկայացնելու համար կարևոր է համարում անդրադառնալ հետևյալ հանգամանքներին.

ա) տարիներ շարունակ Պաշտպանը նախկին զինծառայողներից ստանում է նույն խնդրի վերաբերյալ բողոքներ (խնդիրը վերաբերելի է բոլոր այն համակարգերին, որտեղ քաղաքացիներն անցել են ծառայություն՝ Պաշտպանության նախարարություն, Քրեակատարողական ծառայություն, Ոստիկանություն և այլն),

բ) քննարկվող հարցին Պաշտպանն անդրադարձ է կատարել տարեկան հաղորդումներում՝ հայտնելով իր մտահոգությունները[92],

գ) Պաշտպանի աշխատակազմում կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի գործող կարգավորումները հնարավորություն չեն տալիս երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակ նշանակելիս հաշվարկել նաև աշխատանքային ստաժը:

Ներկա իրավակարգավորումների պարագայում հավասարաչափ կենսաթոշակ են ստանում ինչպես միայն երկարամյա զինվորական ծառայություն անցած անձինք, այնպես էլ նույն ժամկետով երկարամյա զինվորական ծառայություն անցած անձինք, ովքեր, բացի զինվորական ծառայությունը, կատարել են նաև զինվորական ծառայություն չհամարվող այլ աշխատանք: Հետևաբար, անհրաժեշտ է հաշվի առնել, որ հավասար պայմաններում զինվորական ծառայություն անցած անձանց չի կարող հավասար չափի կենսաթոշակ նշանակվել, եթե նրանցից մեկը կատարել է նաև զինվորական ծառայություն չհամարվող այլ աշխատանք:

Պաշտպանը վերահաստատում է իր դիրքորոշումն առ այն, որ անհրաժեշտ է մշակել կառուցակարգեր, որոնց շնորհիվ հնարավոր կլինի երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկելիս հաշվի առնել նաև անձանց՝ զինվորական ծառայության ժամանակահատված չհամարվող աշխատանքային ստաժը:

Վերոնշյալ հարցի լուծման նպատակով Պաշտպանը համապատասխան առաջարկություններով գրություններ է հասցեագրել իրավասու գերատեսչություններ, տեղի են ունեցել մի շարք քննարկումներ: Այնուամենայնիվ, պետք է արձանագրել, որ դեռևս հարցին վերջնական լուծում չի տրվել:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ անհրաժեշտ է հնարավորին սեղմ ժամկետում մշակել կառուցակարգեր, որոնց շնորհիվ հնարավոր կլինի երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկելիս հաշվի առնել նաև անձանց՝ զինվորական ծառայության ժամանակահատված չհամարվող աշխատանքային ստաժը:

3. Զինծառայողների իրավունքների ապահովումը մարտական գործողությունների մասնակցության համատեքստում

Մարտական գործողություններին մասնակցությունը կապված է հատուկ ռիսկերով և զինծառայողների վրա դրվող զգալի ծանրաբեռնվածությամբ, ինչը պետությունից պահանջում է ապահովել նրանց իրավունքների արդյունավետ պաշտպանությունը ոչ միայն ծառայության ընթացքում, այլև մարտական առաջադրանքների ավարտից հետո՝ երաշխավորելով համապատասխան սոցիալական և իրավական աջակցություն: Այս համատեքստում կարևոր նշանակություն ունեն պատշաճ բուժօգնության և վերականգնման ապահովումը, սոցիալական և կենսաթոշակային երաշխիքները, ինչպես նաև վիրավորում ստացած, գերեվարված և զոհված զինծառայողների ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանությունը: Միաժամանակ կարևոր է ոչ միայն համապատասխան իրավական նորմերի առկայությունը, այլև դրանց արդյունավետ

[92] Տես, օրինակ, Պաշտպանի 2019, 2023, 2024 թվականների տարեկան հաղորդումները (հասանելի է հետևյալ հղումով՝ https://ombuds.am/am/site/SpecialReports, 20.03.2026թ. դրությամբ):

կիրառումը, այդ թվում՝ մարտական գործողություններին մասնակցած անձանց համապատասխան կարգավիճակի տրամադրումը:

Պաշտպանը շարունակում է արձանագրել, որ մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ ստանալու հարցում նախկին զինծառայողները բախվում են խնդիրների: Գործող օրենսդրությամբ մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ հնարավոր է տրամադրել բացառապես 1989-1994 թվականների ընթացքում և ոչ պակաս, քան 3 ամիս ընդհանուր տևողությամբ մարտական գործողություններին մասնակցածներին[93]: Քանի որ 3 ամսից ոչ պակաս մասնակցության կանոնն ընդհանուր է, ստացվում է, որ 1989-1994 թվականներից հետո տեղի ունեցած մարտական գործողություններին մասնակցած զինծառայողներին չի կարող տրամադրվել մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ:

Խնդրի խորքային լուծման, սոցիալական արդարության ապահովման, մարտական գործողություններին մասնակցած զինծառայողների իրավունքների երաշխավորման տեսանկյունից անհրաժեշտ է գտնել արագ ու կոնկրետ լուծումներ, քանի որ մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ տրամադրելն ինքնանպատակ չէ, այն ունի որոշակի սոցիալական ուղղվածություն, այդ թվում՝ տարբեր սոցիալական իրավունքներից ու արտոնություններից օգտվելու համար, ներառյալ՝ անվճար բժշկական օգնություն, բնակարանային ապահովություն, դրամական աջակցություն, զինվորական կենսաթոշակի իրավունք և այլն:

Մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակի տրամադրման հետ կապված այլ հարցերի, օրինակ, մարտական ուղի, ստացած վնասվածքի պատճառական կապի մասին փաստաթղթեր կրկին ներկայացնելու պահանջի և այլ փոխկապակցված խնդիրներին Պաշտպանն անդրադարձել է նախորդ տարեկան հաղորդմամբ՝ ներկայացնելով հարցերի կարգավորման մեխանիզմներ[94]:

Վերը նշվածի հաշվառմամբ՝ անհրաժեշտ է 1994 թվականից հետո տեղի ունեցած մարտական գործողություններին մասնակցած զինծառայողներին համապատասխան կարգավիճակ տրամադրելու նպատակով մշակել ու ներդնել կոնկրետ կառուցակարգեր ու չափորոշիչներ՝ երաշխավորելով որոշակի արտոնություններից և սոցիալական միջոցառումներից օգտվելու հնարավորությունը՝ գոյություն ունեցող միջազգային չափանիշներին համապատասխան:

4. Զինվորական հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովումը

Զինվորական հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ պետության պաշտպանությունն ու հոգածությունը պետք է լինեն շարունակական՝ ուղեկցվելով

---

[93] Մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ տրամադրելու կարգը սահմանվել է ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 21-ի թիվ 1664-Ն որոշմամբ:

[94] Տես, 2023 թվականին Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների պաշտպանության վիճակի մասին հաղորդումը, էջեր 493-495 հասանելի է https://www.ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2024 թվականին Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների պաշտպանության վիճակի մասին հաղորդումը, էջեր 161-163, հասանելի է https://www.ombuds.am/images/files/4d1335361f1f7e9fbcc1cfc10679701e.pdf հղումով, 20.03.2026թ. դրությամբ:

աջակցության մեխանիզմների մշտական կատարելագործմամբ և արժանապատիվ կյանքի պայմանների ապահովմամբ: Այդ նպատակով կարևոր է ապահովել նրանց համար հասանելի և արդյունավետ բժշկական ու վերականգնողական ծառայություններ, սոցիալական և տնտեսական աջակցության բավարար միջոցառումներ, ինչպես նաև հասարակական կյանքում լիարժեք մասնակցության հնարավորություններ: Միաժամանակ անհրաժեշտ է պարբերաբար գնահատել գործող կարգավորումների և ծրագրերի արդյունավետությունը՝ դրանք համապատասխանեցնելով զինվորական հաշմանդամություն ունեցող անձանց իրական կարիքներին:

Զինվորական հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների անխոչընդոտ իրացումը Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի աշխատանքի կարևոր ուղղություններից է: Դա նաև ընդգծվում է Պաշտպանի՝ որպես «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկում իրականացնող հաստատության կարգավիճակով:

Զինվորական հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներին վերաբերելի հարցերի, այդ թվում՝ Պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրությունները, ցույց են տալիս, որ ոլորտում առկա մի շարք խնդիրներ, որոնց Պաշտպանն անդրադարձել է նաև նախորդ տարեկան հաղորդմամբ՝ պահպանվել են: Արձանագրված հիմնական խնդիրները վերաբերել են՝ 1) բնակարանային պայմանների բարելավման հերթացուցակում հաշվառված՝ հաշմանդամություն ունեցող նախկին զինծառայողներին բնակարան չտրամադրելուն, 2) զորամասային պայմանները հաշմանդամություն ունեցող անձանց հարմարեցված չլինելուն, 3) զինվորական ծառայության հետ հաշմանդամության պատճառական կապը չհաստատելուն, 4) ԽՍՀՄ զինված ուժերի կազմում զինվորական ծառայության ընթացքում 3-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձանց պարգևավճար տրամադրելուն և տարբերակված մոտեցումը բացառելուն և այլն: Դրա հետ մեկտեղ, քննարկվող ժամանակահատվածում Պաշտպանին բողոքներ են հասցեագրվել հաշմանդամության զինվորական կենսաթոշակի և սոցիալական աջակցության տրամադրման, հաշմանդամություն ունեցող անձի խնամակալը լինելու հիմքով վարժական հավաքի չներգրավվելու, ֆունկցիոնալության գնահատման արդյունքում հաշմանդամություն ունեցող անձ չճանաչելու և այլ հարցերի վերաբերյալ: Բարձրացված հարցերի կապակցությամբ քաղաքացիներին ներկայացվել են իրենց իրավունքների և ազատությունների պաշտպանության հնարավորությունները, խնդիրների լուծման առաջարկներով գրություններ են հասցեագրվել իրավասու պետական մարմիններ: Արդյունքում, զինվորական հաշմանդամություն ունեցող անձանց բազմաթիվ հարցեր ստացել են լուծումներ, օրինակ, վարժական հավաքի չներգրավվելու, պատճառական կապ տրամադրելու վերաբերյալ և այլն, մի շարք համակարգային հարցերի քննարկումներ իրավասու մարմինների հետ շարունակվում են:

Հաշվի առնելով հարցերի բազմազանությունը և Պաշտպանին դիմած անձանց կարիքները, կարևոր է ապահովել շարունակական մոնիթորինգ և կարիքների հետևողական գնահատում, որպեսզի առկա մեխանիզմները արդյունավետորեն արձագանքեն նրանց իրավունքների իրականացման պահանջներին: Պաշտպանը դրական է գնահատում ոլորտային հարցերում պետական մարմինների հետ արդյունավետ երկխոսությունը՝ զինվորական հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությունն ամրապնդելու նպատակով: Միաժամանակ, Պաշտպանը կարևորում է օրենսդրական և գործնական մեխանիզմների շարունակաբար կատարելագործումը՝ ապահովելու նրանց արժանապատիվ կյանքի և լիարժեք սոցիալական ինտեգրման հնարավորությունները:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ անհրաժեշտ է՝

✓ հաշմանդամություն ունեցող զինծառայողների համար ծառայության բոլոր վայրերում ապահովել մատչելի ֆիզիկական միջավայր, այդ թվում՝ վերջիններիս կարիքներին հարմարեցնել սանհանգույցը, ունենալ թեքահարթակներ և այլն,

✓ միջոցներ ձեռնարկել ֆունկցիոնալության խորը կամ ծանր աստիճանի սահմանափակումով հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող նախկին զինծառայողների բնակարանային ապահովության հարցին հնարավորին սեղմ ժամկետում լուծում տալու ուղղությամբ՝ նկատի ունենալով, որ մարդիկ տարիներ շարունակ հերթագրված են և սպասում են հարցի վերջնական կարգավորմանը,

✓ ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 4-ի թիվ 141-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու միջոցով պարգևավճար սահմանել նաև ԽՍՀՄ զինված ուժերի կազմում զինվորական ծառայության ընթացքում ֆունկցիոնալության միջին աստիճանի սահմանափակումով հաշմանդամություն (3-րդ խմբի հաշմանդամություն) ունեցող անձանց համար:

ԳԼՈՒԽ 9. ԶԻՆՇԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՎԱՔՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՎԱՐՏԻՑ ՀԵՏՈ

1. Վարժական հավաքների կազմակերպման գործընթացում օրենսդրական և գործնական խնդիրները

Վարժական հավաքների կազմակերպման գործընթացում քաղաքացիների իրավունքների ապահովման հարցերը 2025 թվականի ընթացքում շարունակել են գտնվել Պաշտպանի ուշադրության կենտրոնում: Պաշտպանի աշխատակազմ տարբեր եղանակներով, այդ թվում՝ գրավոր բողոքների կամ թեժ գծին ահազանգերի միջոցով ստացվել են բազմաթիվ բողոքներ, որոնք առնչվում են վարժական հավաքների ներգրավելու գործընթացում քաղաքացիների իրավունքների պատշաճ ապահովմանը:
2025 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմ ստացված շուրջ 900 բողոքներից 119-ը վերաբերում է վարժական հավաքների ընթացքում մարդու իրավունքների վիճակին վերաբերող խնդիրներին:



Ընդ որում՝ ստացված բողոքներից 47-ը վերաբերում են առողջական վիճակով պայմանավորված հետազոտություններին և փորձաքննություններին, 34-ը՝ ընտանեկան հանգամանքով պայմանավորված վարժական հավաքներին չներգրավելու հետ կապված հարցերին, 10-ը՝ վարժական հավաքներին այլ փուլում ներգրավելու հետ կապված հարցին՝ աշխատանքի կամ ուսման հանգամանքով պայմանավորված, 28-ը՝ այլ հարցերի:



Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ոլորտում նախկինում արձանագրված մի շարք խնդիրներ, որոնք ներկայացվել են Պաշտպանի նախորդ տարեկան հաղորդումներում, կա՛մ մասամբ են լուծվել, կա՛մ դեռևս լուծում չեն ստացել և շարունակել են արձանագրվել նաև հաշվետու տարվա ընթացքում:

Այսպես, **Պաշտպանին հասցեագրված բողոքների վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել հիմնականում հետևյալ խումբ խնդիրները.**

01 Վարժական հավաքների վերաբերյալ ծանուցումների պատշաճ և ժամանակին տրամադրման հետ կապված խնդիրներ.

02 Վարժական հավաքներին ներգրավվելուց առաջ քաղաքացիների լիարժեք բժշկական հետազոտության և փորձաքննության կազմակերպման հետ կապված խնդիրներ.

03 Ընտանեկան հանգամանքներով պայմանավորված՝ վարժական հավաքներից ազատման կամ դրանց հետաձգման վերաբերյալ խնդիրներ:

2025 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմ շարունակել են ստացվել դիմումներ վարժական հավաքների ծանուցումների հետ կապված հարցերով՝ չնայած այն հանգամանքին, որ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունների արդյունքում կարգավորվել են ծանուցումների հետ կապված մի շարք հարցեր՝ հաշվի առնելով նաև Պաշտպանի կողմից ներկայացված դիտարկումներն ու առաջարկությունները[95]: Մասնավորապես, օրենքով սահմանվել է ծանուցման հստակ հերթականություն:

Այնուամենայնիվ, հաշվետու տարվա ընթացքում Պաշտպանի թեժ գծի հեռախոսահամարին ստացվել են ահազանգեր, որոնք վերաբերել են վարժական հավաքների ներգրավվելու վերաբերյալ գրավոր ծանուցման չապահովմանը և քաղաքացիներին բացառապես հեռախոսային կապի միջոցով տեղեկացնելու դեպքերին: Նշվածի կապակցությամբ Պաշտպանը անհրաժեշտ է համարում ծանուցման կարգի կիրառման գործընթացում օրենքով սահմանված ընթացակարգերի հետևողական և լիարժեք պահպանումը: Այս ամենի հետ մեկտեղ, շարունակում է չլուծված մնալ զինկոմիսարիատների՝ տեխնիկական հագեցվածությամբ ապահովման խնդիրը: Հետևաբար՝ Պաշտպանի այն մտահոգությունը, որ համացանցին հասանելիության խնդրի պատճառով զինկոմիսարիատների կողմից հնարավոր չի լինելու ապահովել օրենքի պահանջները՝ հստակ տեսանելի են դառնում զորակոչերի (վարժական հավաքների) ընթացքում:

[95] Նախագծի վերաբերյալ Պաշտպանի կարծիքն առավել մանրամասն, տե՛ս հետևյալ հղումով՝ https://www.e-gov.am/ajax/gfn_mul.php?file_id=3156051&inst=854104, 20.03.2026թ. դրությամբ:

Հարկ է նշել, որ չնայած վարժական հավաքներին ներգրավելու ծանուցման կարգի վերաբերյալ օրենսդրական փոփոխություններին՝ Պաշտպանի գնահատմամբ՝ գործնականում կարող են խնդիրներ առաջանալ էլեկտրոնային փոստի միջոցով կամ հրապարակային ծանուցման եղանակով քաղաքացիներին վարժական հավաքին կանչելու հետ կապված այն դեպքերում, երբ, օրինակ, քաղաքացին գտնվում է արտերկրում: Նման պարագայում ստացվում է, որ անձը կարող է համարվել օրենքով նախատեսված կարգով ծանուցված, սակայն օբյեկտիվորեն չկարողանա ներկայանալ վարժական հավաքին՝ երկրում չլինելու պատճառով:

Նման պարագայում, հարց է առաջանում, թե այդ իրավիճակում քաղաքացու՝ ՀՀ մուտք գործելու դեպքում արդյո՞ք նրա նկատմամբ նախաձեռնվելու է քրեական վարույթ, արդյո՞ք վերջինս ենթարկվելու է պատասխանատվության, թե՞ ոչ: Ավելին, եթե այլ վարույթների դեպքում (քաղաքացիական, վարչական) պատշաճ ծանուցված անձի չներկայանալու դեպքում որոշակի իրավական հետևանքներ են առաջանալու նրանց քաղաքացիական իրավունքների տեսանկյունից, ապա այս պարագայում խոսքը գնում է պետության կողմից կիրառվող ամենախիստ՝ քրեաիրավական պատասխանատվության, ընդհուպ մինչև ազատությունից զրկելու հետ կապված պատժի մասին: Նշված հանգամանքը մարդու իրավունքների պաշտպանության պատշաճ ապահովման տեսանկյունից էլ ավելի է կարևորում անձի՝ իրապես, պատշաճ ծանուցված լինելու երաշխավորումը:

Պաշտպանի աշխատակազմ ստացված բողոքներով արձանագրված խնդիրների մեկ այլ խումբ վերաբերում է **վարժական հավաքի ներգրավելուց առաջ պատշաճ բժշկական հետազոտություն ու փորձաքննություն անցկացնելուն:**

Քաղաքացիները հաճախ բարձրացնում են զինկոմիսարիատների կողմից իրենց առողջական խնդիրները պատշաճ չհետազոտելու հարցեր: Մասնավորապես, դիմումներում անձինք նշում են, որ առկա գանգատների և որոշ դեպքերում նաև դրանք հիմնավորող բժշկական փաստաթղթերի առկայության պայմաններում՝ զինկոմիսարիատների կողմից միշտ չէ, որ ապահովվում է անհրաժեշտ բժշկական հետազոտությունների իրականացումը կամ համապատասխան ուղեգրերի տրամադրումը: Ըստ քաղաքացիների՝ ուղեգրերը տրամադրվում են միայն երկարատև քաշքշուկներից հետո: Թեև անհատական բողոքների և ահազանգերի հիման վրա ձեռնարկված միջոցառումների, ինչպես նաև զինկոմիսարիատների հետ համագործակցության արդյունքում առանձին դեպքերում խնդիրը ստացել է լուծում, այնուամենայնիվ օրենքով նախատեսված պարտադիր բժշկական հետազոտությունների չիրականացումը կամ ոչ լիարժեք իրականացումը շարունակում է մնալ խնդրահարույց՝ քաղաքացիների առողջության պահպանման իրավունքի ապահովման տեսանկյունից:

Հաշվետու տարվա ընթացքում Պաշտպանի աշխատակազմ շարունակել են ստացվել բողոքներ ընտանեկան դրությամբ պայմանավորված քաղաքացիներին վարժական հավաքի չզորակոչելու կամ զորակոչը հետաձգելու վերաբերյալ: Նշված խնդրին Պաշտպանն անդրադարձել է նաև նախորդ տարեկան հաղորդմամբ՝ ընդգծելով, որ առանձին դեպքերում, ընտանեկան դրությամբ պայմանավորված վարժական հավաքի չներգրավելու առավել ճկուն մեխանիզմներ մշակելու անհրաժեշտություն կա:

Որպես ասվածի հիմնավորում՝ կարևոր է նշել մի քանի օրինակ: Այսպես, մի շարք դեպքերում քաղաքացիները խնդրել են վարժական հավաքի իրենց զորակոչը հետաձգել (զորակոչել, օրինակ, ամռանը կամ ձմռանը)՝ աշխատանքային պարտականությունները կատարելու հետ կապված հանգամանքներով պայմանավորված: Մեկ այլ դեպքի շրջանակներում քաղաքացին տեղեկացրել է, որ սովորում է համալսարանում և վարժական

հավաքի ներգրավվելու պատճառով չի կարողանա յուրացնել ստացած գիտելիքները և հանձնել քննությունները: Բողոքներից մեկով էլ քաղաքացին նշել է, որ կինը աշխատում է, ունեն երեք երեխա, ինքն է խնամում երեխաներին, չունեն այլ խնամող և վարժական հավաքի ներգրավվելու դեպքում երեխաները կմնան առանց խնամքի:

Վերը նշվածից բացի, վարժական հավաքների ընթացքում քաղաքացիները Պաշտպանին դիմում են նաև իրենց իրավունքների մասին պարզաբանումներ ստանալու հարցերով: Օրինակ, վարժական հավաքի ներգրավելու գործընթացում արձանագրված առողջական խնդրի կապակցությամբ անվճար բժշկական օգնություն ստանալու, վարժական հավաքի ընթացքում սննդով ու համազգեստով ապահովելու, առաջնագծում մարտական հերթապահության ընդգրկելու համար պայմանագրի (համաձայնագրի) կնքման անհրաժեշտության, զորակոչվելու դեպքում վարկային կամ այլ պարտավորությունների կատարման, ինչպես նաև աշխատատեղն ու աշխատավարձը պահպանելու և այլնի վերաբերյալ:

Այս համատեքստում Պաշտպանը կարևորում է քաղաքացիների պատշաճ իրազեկման ապահովումը՝ վարժական հավաքների կազմակերպման գործընթացում նրանց իրավունքների, երաշխիքների և կիրառվող սոցիալական ու իրավական արտոնությունների վերաբերյալ ժամանակին ու ամբողջական տեղեկատվության տրամադրման միջոցով: Պաշտպանի գնահատմամբ՝ պատշաճ հաղորդակցությունը կարևոր նախապայման է հնարավոր իրավախախտումների կանխման տեսանկյունից:

Պաշտպանը անհրաժեշտ է համարում նշել, որ վերը նշվածից բացի կարող են առաջանալ նաև այլ իրավիճակներ, երբ անձին վարժական հավաքներին ներգրավելը կարող է լինել խնդրահարույց: Այս առումով կարևոր է ապահովել այնպիսի կարգավորումների և գործնական մեխանիզմների առկայություն, որոնք հնարավորություն կտան գնահատել յուրաքանչյուր կոնկրետ դեպքի հանգամանքները, այդ թվում՝ ավելի բարդ ընտանեկան իրավիճակները, և յուրաքանչյուր կոնկրետ դեպքով ցուցաբերել անհատական մոտեցում:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ առաջարկվում է՝

- ***բացառել քաղաքացիներին պահեստազորային պատրաստության շրջանակներում իրականացվող միջոցառումներին (վարժական հավաք, զորավարժություններ և այլն) օրենքով սահմանված կարգի խախտմամբ ծանուցելու պրակտիկան՝ միաժամանակ միջոցներ ձեռնարկելով զինկոմիսարիատների տեխնիկական հագեցվածությունն ապահովելու ուղղությամբ,***
- ***վարժական հավաքի ներգրավելուց առաջ բոլոր դեպքերում իրականացնել բժշկական հետազոտություններ և փորձաքննություններ՝ երաշխավորելով ինչպես օրենքի պահանջի կատարումը, այնպես էլ քաղաքացիների իրավունքների պատշաճ իրացումը,***
- ***կատարելագործել գործող կառուցակարգերը և վարժական հավաքների ներգրավելիս յուրաքանչյուր դեպքում ցուցաբերել անհատական մոտեցում՝ ուշադրություն դարձնելով անձի առողջական, ընտանեկան կամ այլ օբյեկտիվ հանգամանքներին, և իրավաչափ խոչընդոտ հանդիսացող խնդիրների վերացումից հետո միայն քննարկել քաղաքացուն վարժական հավաքի ներգրավելու հնարավորության հարցը,***
- ***ապահովել քաղաքացիների պատշաճ իրազեկումը վարժական հավաքների կազմակերպման գործընթացում նրանց իրավունքների, երաշխիքների և սոցիալական ու իրավական արտոնությունների վերաբերյալ, այդ թվում՝ հասանելի տեղեկատվական նյութերի և պարզաբանումների տրամադրման միջոցով:***

2. Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների հետ կապված խնդիրները ռազմական գործողությունների ավարտից հետո

Ռազմական գործողությունների ավարտից հետո զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության հարցերը 2025 թվականի ընթացքում շարունակել են մնալ Պաշտպանի գործունեության կարևոր ուղղություններից մեկը: Հաշվետու տարվա ընթացքում Պաշտպանը շարունակել է աշխատանքներ իրականացնել այս համատեքստում մարդու իրավունքների պաշտպանությանն առնչվող խնդիրների բացահայտման, դրանց ուսումնասիրության և իրավասու պետական մարմիններին համապատասխան լուծումներ առաջարկելու ուղղությամբ:

Պաշտպանի ամենօրյա ուշադրության ներքո են գտնվել մարտական գործողությունների ազդեցությունը կրած զինծառայողների ու նրանց ընտանիքների անդամների իրավունքների հետ կապված հարցերը:

2025 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմ ստացված բողոքները ցույց են տալիս, որ նախկինում արձանագրված մի շարք խնդիրներ, այդ թվում՝ համակարգային բնույթ ունեցող, շարունակում են մնալ արդիական: Այսպես, Պաշտպանը շարունակում է բողոքներ ստանալ **գտնվելու վայրն անհայտ կամ գերության մեջ գտնվող զինծառայողների ճակատագրերի վերաբերյալ տեղեկություններ ստանալու, մարտական գործողությունների մասնակիցներին, վիրավորում ստացածներին, գտնվելու վայրն անհայտ և զոհված զինծառայողների ընտանիքների անդամներին հոգեբանական աջակցություն տրամադրելու, հիվանդությունների, վնասվածքների, խեղումների՝ զինվորական ծառայության հետ պատճառական կապի վերաբերյալ եզրակացություն ներկայացնելու, զինգրքույկում մարտերին մասնակցության վերաբերյալ գրառում կատարելու, գտնվելու վայրն անհայտ զինծառայողների ծնողներին քրեական վարույթի շրջանակում տուժող ճանաչելու և այլ հարցերի վերաբերյալ:**

Վերոնշյալ խնդիրների կապակցությամբ Պաշտպանին հասցեագրված բողոքների շրջանակում մշտապես ակտիվ քննարկումներ են տեղի ունեցել պետական իրավասու մարմինների հետ, բազմաթիվ խնդիրներ Պաշտպանի աջակցությամբ արագ լուծումներ են ստացել, իսկ համակարգային բնույթ ունեցող հարցերին լուծումներ տալու նպատակով գրություններ և առաջարկություններ են ներկայացվել իրավասու գերատեսչություններ (Պաշտպանության նախարարություն, Գլխավոր դատախազություն, Քննչական կոմիտե և այլն):

2020 թվականի 44-օրյա մարտական գործողություններից տևական ժամանակ է անցել, սակայն բազմաթիվ զինծառայողների ճակատագրեր շարունակում են մնալ անհայտ: Ըստ Քննչական կոմիտեից ստացված տեղեկատվության՝ 44-օրյա մարտական գործողությունների, դրան հաջորդող տարիների, ինչպես նաև 2023 թվականի սեպտեմբերի 19-20-ին տեղի ունեցած դեպքերի վերաբերյալ քննվող քրեական վարույթներով 182 զինծառայողի և 24 քաղաքացիական անձի գտնվելու վայրն անհայտ է: Նշված դեպքերով նախաձեռնված քրեական վարույթները գտնվում են նախաքննության փուլում:

2025 թվականի ընթացքում գտնվելու վայրն անհայտ զինծառայողների ընտանիքների անդամներից գրավոր ու բանավոր եղանակներով ստացվել են բազմաթիվ բողոքներ, Պաշտպանը պարբերաբար ընդունել է զինծառայողների հարազատներին,

տեղում լսել նրանց մտահոգող խնդիրները: Օրինակ, ծնողների մի մասը տարբեր պատճառներով համաձայն չէ ԴՆԹ փորձաքննությունների արդյունքների հետ, մյուս մասը մտահոգություն է ներկայացրել քրեական վարույթների ընթացքի հետ կապված, ծնողների մեկ այլ խումբ բարձրացրել է սոցիալական, հոգեբանական աջակցության և այլ բնույթի խնդիրներ: Բոլոր հարցերին Պաշտպանի աշխատակազմում ցուցաբերվել է անհատական մոտեցում:

Պաշտպանը անհրաժեշտ է համարում ընդգծել, որ 2022 թվականի հոկտեմբերին ստեղծված՝ Գերիների, պատանդների և անհայտ կորած (գտնվելու վայրն անհայտ) անձանց հարցերով զբաղվող միջգերատեսչական հանձնաժողովը այս առումով կարող է ունենալ կարևոր դերակատարություն[96]: Միևնույն ժամանակ, Պաշտպանը հատուկ կարևորում է բոլոր իրավասու պետական մարմինների կողմից գերության մեջ գտնվող, գտնվելու վայրն անհայտ, զոհված զինծառայողների հարազատների հետ պատշաճ հաղորդակցության վարումը, նրանց բարձրացրած խնդիրներին արձագանքող լինելը:

Գտնվելու վայրն անհայտ զինծառայողների և քաղաքացիական անձանց, վերջիններիս ընտանիքի անդամների իրավունքների պաշտպանության, ինչպես նաև՝ Ադրբեջանում կամայականորեն պահվող էթնիկ հայերի նկատմամբ իրականացվող գործընթացների՝ մարդու իրավունքների տեսանկյունից խնդրահարույց լինելու և անձանց անհապաղ ազատ արձակման կարևորության հանգամանքի հետ կապված հարցերը Պաշտպանն անընդհատ ներկայացնում է նաև միջազգային տարբեր դերակատարներին[97]:

Ավելին, Մարդու իրավունքների պաշտպանի նախաձեռնությամբ 2025 թվականի օգոստոսի 30-ին՝ Բռնի անհետացումների զոհերի միջազգային օրվա կապակցությամբ, կազմակերպվել է հանդիպում-քննարկում Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների և միջազգային կազմակերպությունների կին ներկայացուցիչների և բռնի անհետացումների զոհերի և գտնվելու վայրն անհայտ անձանց մայրերի ու կանանց հետ: Քննարկվել են ոլորտում առկա մի շարք առաջնահերթ և զգայուն խնդիրներ՝ կապված անհայտ կորած անձանց ճակատագրերի պարզման, իրավական պաշտպանության գործող մեխանիզմները կատարելագործելու, միջազգային առանցքային դերակատարների գործիքակազմերը կիրառելու հետ և այլն: Պաշտպանն ընդգծել է, որ անձանց ճակատագրերի մասին տեղեկություններ ստանալու իրավունքը պետք է լինի երաշխավորված, բոլոր գործընկերները այդ ուղղությամբ պետք է առավելագույն ջանքեր գործադրեն[98]:

Գտնվելու վայրն անհայտ զինծառայողների ծնողների իրավունքների պաշտպանության և պատշաճ իրացման հարցերում առանցքային կարևորություն ունի

---

[96] Տեղեկատվությունը հասանելի է հետևյալ https://www.sns.am/hy/news/view/1068, https://www.sns.am/hy/news/view/1086 հղումներով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

[97] Տեղեկատվությունը հասանելի են հետևյալ https://www.ombuds.am/am/site/ViewNews/3597, https://www.ombuds.am/am/site/ViewNews/3329 հղումներով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

[98] Տեղեկատվությունը հասանելի է հետևյալ https://ombuds.am/am/site/ViewNews/3504 հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

Պաշտպանի ներկայացրած իրավական դիրքորոշումը[99], որով Պաշտպանը միջազգային իրավական չափորոշիչների և ներպետական օրենսդրության պահանջների հաշվառմամբ՝ հատուկ ընդգծել է, որ անհայտ կորած զինծառայողների ծնողները պետք է հնարավորություն ունենան իրենց զավակների վերաբերյալ քննվող քրեական վարույթներով ներգրավվելու որպես տուժող: Պաշտպանի դիրքորոշումը համապատասխան գրություններով ուղարկվել է Դատախազություն և Քննչական կոմիտե: Կարևոր է արձանագրել, որ նշված դիրքորոշումից հետո իրավասու մարմինները գտնվելու վայրն անհայտ զինծառայողների ծնողներին քրեական վարույթներով ներգրավել են որպես տուժող:

Մանրամասն չանդրադառնալով վերոնշյալ խնդիրներից յուրաքանչյուրին (Պաշտպանը դրանց մանրամասն անդրադարձել է 2023 տարեկան հաղորդմամբ)[100]՝ Պաշտպանը կարևոր է համարում ևս մեկ անգամ ընդգծել միջազգային իրավունքում ձևավորված այն մոտեցումը, համաձայն որի՝ պետությունը և նրա զինված ուժերը կրում են շարունակական պարտավորություն իրենց ծառայողների նկատմամբ՝ ինչպես ծառայության ընթացքում, այնպես էլ դրանից հետո: Այս պարտավորությունը ներառում է զինծառայողների և վետերանների իրավունքների պաշտպանության, սոցիալական ապահովության և անհրաժեշտ աջակցության երաշխավորումը՝ հաշվի առնելով զինվորական ծառայության առանձնահատուկ ռիսկերն ու դրա հնարավոր հետևանքները անձի կյանքի և առողջության համար: Շատ վետերաններ հաճախ ծառայության հետևանքներից տառապում են անգամ ծառայությունը թողնելուց հետո, օրինակ՝ հետտրավմատիկ սթրեսային խանգարումից, ֆիզիկական առողջության հետ կապված խնդիրներից և անդամալուծությունից: Այս համատեքստում պետությունները պարտավոր են ապահովել վետերանների իրավունքների պատշաճ պաշտպանությունը և անհրաժեշտ սոցիալական, բժշկական ու վերականգնողական աջակցությունը՝ հաշվի առնելով ծառայության ընթացքում կրած վնասների և ռիսկերի առանձնահատկությունը[101]:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ առաջարկվում է՝

- ✓ ***գտնվելու վայրն անհայտ զինծառայողների հարազատների (ծնողների) հետ իրավասու մարմինների կողմից մշտապես վարել պատշաճ հաղորդակցություն, միջազգային չափորոշիչներին համապատասխան՝ երաշխավորել նրանց իրավունքները և դրանց վերաբերելի հարցերին լինել առավել արձագանքող,***
- ✓ ***մարտական գործողությունների մասնակիցներին, վիրավորում ստացածներին, գտնվելու վայրն անհայտ և զոհված զինծառայողների ընտանիքների անդամներին ու վետերաններին մշտապես պահել պետության հոգածության ներքո, այդ թվում՝ հոգեբանական աջակցության, քաղաքացիական կյանքին ինտեգրման, սոցիալական ներառման, նրանց ֆիզիկական և հոգեկան առողջության***

---

[99] Պաշտպանի իրավական դիրքորոշումն ամբողջությամբ հասանելի է հետևյալ https://ombuds.am/images/files/00921e1bd79ec76336266b5f9c9f2c95.pdf հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

[100] Առավել մանրամասն տես, օրինակ, 2023 թվականի թվականին Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների պաշտպանության վիճակի մասին հաղորդումը, էջեր 501-510, հասանելի է հետևյալ https://ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

[101] Տես, ԵԱՀԿ ձեռնարկ՝ ԶՈ անձնակազմի մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին, 2008 թվական, էջ 261: Հասանելի է https://www.osce.org/files/f/documents/6/7/88572.pdf հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

վերականգնմանն ու պահպանմանն ուղղված համապատասխան ծրագրեր իրականացնելու միջոցով:

ԲԱԺԻՆ 3. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ՔՐԵԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Իրավապահ մարմինների գործունեությունն անփոխարինելի, բացառիկ և անգնահատելի դեր ունի պետության անվտանգության, հասարակական կարգի պահպանության, իրավախախտումների և հանցավորության դեմ պայքարի, ինչպես նաև անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության հարցում: Նշվածով հանդերձ՝ իրավապահ մարմինների գործունեության ընթացքում հատկապես կարևորվում է մարդու իրավունքների պատշաճ երաշխավորումը, քանի որ սույն ոլորտում առավել մեծ է անձի իրավունքների անհամաչափ սահմանափակման, միջամտության և խախտումների վտանգն ու հավանականությունը:

Հենց այդ է պատճառը, որ իրավապահ մարմինների գործունեությունը մշտապես գտնվում է Մարդու իրավունքների պաշտպանի անմիջական ուշադրության ներքո և Պաշտպանը բազմիցս է արձանագրել, որ քրեական արդարադատության համակարգի բոլոր պատասխանատու սուբյեկտները պարտավոր են գործել առավելագույն պատասխանատվությամբ՝ օրինականության և համաչափության սկզբունքների խստագույն պահպանմամբ:

Պետության առաջնահերթ պարտականություններից է մարդու իրավունքների պաշտպանության արդյունավետ կառուցակարգերի շարունակական կատարելագործումը և դրանց լիարժեք կիրառման ապահովումը քրեական արդարադատության ամբողջ շղթայում: Այդ համատեքստում մարդու իրավունքների երաշխավորումը քրեական արդարադատության և իրավապահ մարմինների գործունեության ոլորտում 2025 թվականին ևս մնացել է Պաշտպանի՝ որպես մարդու իրավունքների ազգային հաստատության, գործունեության առանցքային ուղղություններից մեկը:

2025 թվականի ընթացքում Պաշտպանի անմիջական ուշադրության կենտրոնում են գտնվել ինչպես անհատական բողոքներով բարձրացված խնդիրները, այնպես էլ մշտադիտարկման արդյունքում վեր հանված համակարգային հարցերը, ինչպես նաև հանրային հետաքրքրություն ներկայացնող քրեական վարույթների քննությանը վերաբերող զարգացումները: Մի շարք դեպքերում Պաշտպանը հանդես է եկել հրապարակային հայտարարություններով՝ արձագանքելով մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից կարևոր իրադարձություններին, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ սկսել է քննարկման ընթացակարգեր՝ նպատակ ունենալով կանխել հնարավոր իրավախախտումները և նպաստել իրավաչափ պրակտիկայի ձևավորմանը:

Հանրային հետաքրքրություն ներկայացնող քրեական վարույթների շրջանակում Պաշտպանը շարունակաբար ընդգծել է իրավասու մարմինների կողմից հանրության պատշաճ և պարբերական իրազեկման անհրաժեշտությունը՝ ապահովելու համար գործունեության թափանցիկությունն ու հաշվետվողականությունը՝ միաժամանակ երաշխավորելով մեղադրվող անձանց անմեղության կանխավարկածի և արդար դատաքննության հիմնարար սկզբունքների պահպանումը:

Պաշտպանին հասցեագրված բողոքների և ահազանգերի վերլուծությունը, ինչպես նաև իրավասու մարմիններ իրականացված պարբերական այցերը վկայում են, որ քրեական արդարադատության ոլորտում մարդու իրավունքների երաշխավորմանը վերաբերող մի շարք խնդիրներ շարունակում են կրել համակարգային բնույթ: Առանձին դեպքերում արձանագրվել է ոչ իրավաչափ գործելակերպ, ինչը պահանջում է հետևողական միջամտություն և շտկման միջոցներ: Պաշտպանը 2025 թվականին ևս ներկայացրել է ոլորտում առկա հիմնախնդիրների հաղթահարմանն ուղղված

առաջարկներ՝ հիմնված միջազգային իրավական չափանիշների, դատական պրակտիկայի և մարդու իրավունքների պաշտպանության լավագույն փորձի վրա: Միաժամանակ արձանագրվել է, որ որոշ ուղղություններով առկա է դրական առաջընթաց, սակայն մի շարք համակարգային խնդիրներ շարունակում են պահպանել իրենց արդիականությունը:

Հարկ է հատուկ ընդգծել, որ իրավասու մարմինների հետ ձևավորված համագործակցությունը 2025 թվականին ևս կրել է կառուցողական և արդյունավետ բնույթ: Պաշտպանի աշխատակազմի և համապատասխան պետական մարմինների միջև տարբեր ձևաչափերով իրականացված համագործակցության արդյունքում հնարավոր է եղել օպերատիվ արձագանքել բողոքներով և ահազանգերով բարձրացված հարցերին և մի շարք դեպքերում ապահովել դրանց դրական լուծումը՝ օրենսդրությամբ սահմանված լիազորությունների շրջանակում:

Քրեական արդարադատության ոլորտում մարդու իրավունքների պաշտպանության ապահովման համատեքստում Պաշտպանը կարևորում է նաև անձի՝ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի արդյունավետ երաշխավորումը: Պաշտպանը ընդգծում է, որ յուրաքանչյուր անձ պետք է ունենա իրավաբանական օգնություն ստանալու իրական և արդյունավետ հնարավորություն՝ քրեական վարույթի բոլոր փուլերում, քանի որ այն հանդիսանում է արդար դատաքննության իրավունքի և պաշտպանության իրավունքի իրացման հիմնարար երաշխիքներից մեկը: Այդ տեսանկյունից առանձնահատուկ նշանակություն ունի նաև իրավասու մարմինների կողմից փաստաբանների գործունեության համար անհրաժեշտ պայմանների ապահովումը, ինչպես նաև անձանց՝ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի լիարժեք իրացմանը նպաստող գործնական մեխանիզմների արդյունավետ կիրառումը:

ԳԼՈՒԽ 1. ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

1. Անմեղության կանխավարկածի պահպանումը և ենթադրյալ հանցանք կատարած անձի կամ քրեական վարույթի վերաբերյալ հանրությանը տեղեկություններ տրամադրելու անհրաժեշտությունը

Անմեղության կանխավարկածի սկզբունքի պահպանման խնդիրները մշտապես գտնվել են Պաշտպանի անմիջական ուշադրության կենտրոնում: Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների պաշտպանության վիճակի մասին նախորդ տարիների հաղորդումներում[102] հարցին կատարվել է անդրադարձ տարբեր տեսանկյուններից, այդ թվում՝ մանրամասն վերլուծվել են անմեղության կանխավարկածի էությունը, դրա պահպանման կարևորությունը, ներպետական և միջազգային վերաբերելի իրավակարգավորումները, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումները:

Թեև նախորդ տարիներին նշված խնդիրների կապակցությամբ որոշակի առումով գրանցվել էր դրական դինամիկա, սակայն խնդիրը դեռևս չի կորցրել իր արդիականությունը: Պաշտպանը կարևորում է պետական մարմինների ձեռնարկած միջոցները այս ուղղությամբ, այդ թվում՝ քննչական մարմիններում առանձին հրամանների մշակումը, իրավապահ մարմինների հայտարարություններում ձայնային և տեքստային ծանուցման ձևով անմեղության կանխավարկածի մասին մեջբերումների առկայությունն և դեպքերի մեծ մասում անձանց նույնականացման տվյալները չներկայացնելն ու արտաքին և ձայնային տվյալները թաքցնելը:

2025 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում անմեղության կանխավարկածի սկզբունքի պահպանման հետ կապված խնդիրների վերաբերյալ ստացվել են քիչ թվով բողոքներ: Այնուամենայնիվ, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից սոցիալական մեդիայի և զանգվածային լրատվության միջոցների մշտադիտարկման արդյունքում արձանագրվել են վերջին շրջանում հանրային հնչեղություն ունեցող մի շարք քրեական վարույթներով օրինական ուժի մեջ մտած դատական ակտի բացակայության պայմաններում անձանց մեղավորության՝ որպես հաստատված փաստի վերաբերյալ հասարակական ընկալումներ ձևավորելու միտումներ, որոնք ուղղակիորեն հակասում են անմեղության կանխավարկածի սկզբունքին: Պաշտպանը նշված խնդրի կապակցությամբ հանդես է եկել նաև հրապարակային հայտարարությամբ[103]:

Այսպիսի դրսևորումները, հատկապես խնդրահարույց են, երբ նման ձևաչափով հանրային հաղորդակցություն են վարում իրավապահ մարմիններն ու նրանց ներկայացուցիչները: Հարկ է ընդգծել, որ իրավապահ մարմիններն ունեն ոչ թե պարզապես անձանց մեղավորությունը հիմնավորելու, այլ գործով անկախ, օբյեկտիվ,

---

[102] Տե՛ս 2023 թվականին Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների պաշտպանության վիճակի մասին հաղորդումը, էջեր 253-258 հասանելի է https://www.ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2024 թվականին Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների պաշտպանության վիճակի մասին հաղորդումը, էջեր 176-179 հասանելի է https://www.ombuds.am/images/files/4d1335361f1f7e9fbcc1cfc10679701e.pdf հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

[103] Հասանելի է հետևյալ հղումով՝ https://ombuds.am/am/site/ViewNews/3452, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

անկողմնակալ քննություն իրականացնելու պարտականություն: Ավելին, պետական մարմինները և պաշտոնատար անձինք պետք է ապահովեն իրենց գործունեության հանրային հաշվետվողականությունն ու թափանցիկությունը՝ ներկայացնելով տեղեկություններ հանցավորության ընդհանուր վիճակի կամ կոնկրետ քրեական վարույթների վերաբերյալ: Հանրային հաղորդակցությունը պետք է նաև երաշխավորի գործի քննության անաչառության վերաբերյալ պատշաճ հանրային ընկալումների ձևավորումը՝ հարգելով մարդու հիմնական իրավունքներն ու ազատությունները և իրավունքի գերակայության հիմքում ընկած արժեքները:

Պաշտպանն արձանագրում է, որ քրեադատավարական ցանկացած ընթացակարգի ժամանակ անմեղության կանխավարկածի չպահպանումը կարող է խաթարել արդարադատության ողջ գործընթացը, ձևավորել անձի մեղավորության՝ որպես հաստատված փաստի մասին հասարակական ընկալում, խոչընդոտել փաստաբանների և լրագրողների աշխատանքը, ազդեցություն ունենալ իրավապահ համակարգի և դատական իշխանության մարմինների նկատմամբ վերաբերմունքի վրա: Ուստի, ընթացիկ քրեական վարույթների շրջանակում, դրա քննության ցանկացած փուլում անձի վերաբերյալ հայտարարություններ անելիս պետական մարմինները և դրանց ներկայացուցիչները պետք է բացառեն, մինչև իրավասու դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտի առկայությունը, անձի մեղավորությունը որպես հաստատված փաստ ներկայացնելու դրսևորումները:

Այս առումով կարևոր է կրկին ընդգծել, որ պետությունը կրում է անմեղության կանխավարկածի սկզբունքի անշեղ իրացումն ու իրավասու մարմինների՝ իրավունքի գերակայության սկզբունքին համահունչ գործունեությունն ապահովելու և այս տեսանկյունից խնդրահարույց իրավիճակներ թույլ չտալու պատասխանատվություն: Անգամ եթե պետությունը չի նպաստել անձի մեղավորության առնչությամբ կանխակալ ընկալումների ձևավորմանը, այդպիսի իրավիճակի պարագայում պարտավոր է գործադրել առավելագույն ջանքեր՝ իրավիճակը հաղթահարելու ուղղությամբ:

Խնդրի արդիականության մասին է վկայում նաև այն փաստը, որ ըստ «ԴատաԼեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա տվյալների՝ 2025 թվականի ընթացքում ևս տարբեր անձանց կողմից դատարան են ներկայացվել հայցադիմումներ՝ անմեղության կանխավարկածի ենթադրյալ խախտում պարունակող հրապարակումների և արտահայտությունների կապակցությամբ:

Պաշտպանն ընդգծում է, որ պայմանավորված պետական մարմինների և պաշտոնատար անձանց իրավասության շրջանակով կամ կարգավիճակով՝ անմեղության կանխավարկածի սկզբունքի պահպանման պահանջը կարող է ունենալ տարբերակված բովանդակություն: Այնուամենայնիվ, ինչպես Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի, այնպես էլ Սահմանադրական դատարանի արտահայտած դիրքորոշումների համաձայն՝ յուրաքանչյուր դեպքում պետական մարմնի հայտարարությունները պետք է լինեն բավարար չափով մշակված՝ բացառելով հանցանքի կամ անձի մեղավորության առնչությամբ տեղեկատվության այնպիսի ներկայացում, որը կընկալվի որպես անձի մեղավորության մասին արդեն իսկ հաստատված փաստ կամ հնարավոր կդարձնի մեղադրվող անձի նույնականացումը:

Ընդ որում, նշվածը վերաբերելի է ինչպես պաշտոնական հայտարարություններին, այնպես էլ կոնկրետ պաշտոնատար անձանց կողմից լրատվամիջոցների հետ շփումներում կամ հանրային այլ հարթակներում տեղ գտած ձևակերպումներին, քանի որ դրանք ևս հասանելի են դառնում հանրության ավելի լայն շրջանակներին և կարող են ձևավորել անձի մեղավորության վերաբերյալ կանխակալ մոտեցում:

Այս համատեքստում հարկ է նկատի ունենալ, որ հասարակության իրազեկվածության և հավաստի տեղեկություններ ստանալու իրավունքի ապահովման տեսանկյունից զանգվածային լրատվության միջոցներն ու լրագրողները ունեն կարևորագույն առաքելություն՝ մասնագիտական աշխատանքով ապահովել երկրում ընթացող գործընթացների վերաբերյալ հանրությանը տեղեկատվության փոխանցումը, ինչի արդյունքում են նաև ձևավորվում քաղաքացիական վերահսկողության մեխանիզմները:

Նշվածի հաշվառմամբ՝ խիստ կարևոր է, որպեսզի լրագրողի մասնագիտական գործունեությունն իրականացվի իրավունքի գերակայության սկզբունքների և արժեքների, այդ թվում՝ անմեղության կանխավարկածի սկզբունքի հիման վրա: Զանգվածային լրատվության միջոցները ևս պետք է խիստ զգայուն լինեն մարդու մեղավորության վերաբերյալ գնահատականներ հնչեցնելիս՝ բացառելով մինչև իրավասու դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտի առկայությունը նրա մեղավորության վերաբերյալ որևէ կանխակալ հանրային վերաբերմունք ձևավորելը: Դա պատասխանատու լրագրության կարևորագույն բաղադրիչներից է: Այս դիրքորոշումը տեղ է գտել ինչպես Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումներում, այնպես էլ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի Խորհրդարանական վեհաժողովի բանաձևերում և հանձնարարականներում:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Մարդու իրավունքների պաշտպանը մտահոգիչ է համարում անմեղության կանխավարկածի սկզբունքի չպահպանման ցանկացած միտում, որը կարող է խաթարել արդարադատության ողջ գործընթացը: Պաշտպանն ընդգծում է, որ այս սկզբունքը պետք է անշեղորեն պահպանվի ցանկացած քրեական վարույթի ընթացքում՝ անկախ նրանից, թե ինչ հանրային հնչեղություն ունի տվյալ քրեական վարույթը, ինչ հանցավոր արարքի մասին է խոսքը, ինչ վարքագիծ ունի ենթադրյալ հանցանք կատարած անձը և այլն:

Պաշտպանը կրկին արձանագրում է, որ կատարված առերևույթ հանցագործության և անձի մեղավորության առնչությամբ ձևակերպումները չպետք է ձևավորեն կանխակալ ընկալում արարքի կատարումը անձի կողմից որպես հաստատված փաստ ներկայացնելու տեսանկյունից՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի բացակայության պայմաններում:

Անմեղության կանխավարկածի սկզբունքի երաշխավորման հարցը շարունակում է լինել Մարդու իրավունքների պաշտպանի ուշադրության կենտրոնում և Պաշտպանը հետագայում ևս հետևողական է լինելու իրավասու մարմինների կողմից համապատասխան չափանիշների պահպանման հարցում:

2. Հանցագործությունների վերաբերյալ ֆիզիկական անձանց հաղորդումները ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով չընդունելու և չքննարկելու՝ հաղորդումն ընդունող մարմնի հայեցողական պրակտիկան

Մարդու իրավունքների պաշտպանը մշտապես անդրադարձել է քաղաքացիների կողմից ներկայացված հանցագործությունների մասին հաղորդումների ընդունման և քննարկման պատշաճ ընթացակարգը երաշխավորելու անհրաժեշտության հարցին: Այն ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերով ամրագրված՝ արդարադատության մատչելիությունն ապահովելու պետության պարտավորության կարևոր բաղադրիչներից է, ինչպես նաև քրեական արդարադատության գործընթացի սկզբնական և ամենակարևոր փուլերից մեկը:

Նախորդ տարիների Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների պաշտպանության վիճակի մասին հաղորդումներում մանրամասն անդրադարձ է կատարվել հանցագործությունների մասին հաղորդումների ընդունման և քննարկման վերաբերյալ օրենսդրական կարգավորումներին ու չափանիշներին, ինչպես նաև իրավակիրառ պրակտիկայի խնդիրներին[104]:

Ինչպես նախորդ տարիներին, 2025 թվականի ընթացքում ևս Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ստացվել են բողոքներ ուահազանգներ նշված հարցերի վերաբերյալ, ինչը վկայում է, որ խնդիրները դեռևս արդիական են:

Այսպես, շարունակվել են արձանագրվել դեպքեր, երբ ՀՀ ՆԳՆ ոստիկանության տարածքային ստորաբաժանում ներկայացված հանցագործության մասին հաղորդման կապակցությամբ քաղաքացիները տևական ժամանակ չեն ստացել որևէ պատասխան՝ Ոստիկանությունից կամ համապատասխան քննչական մարմնից: Արձանագրվել են նաև դեպքեր, երբ հաղորդումները դիտարկվել են որպես ահազանգ/դիմում և նրանց պատասխան է ներկայացվել Ոստիկանության կողմից ուղարկված գրությամբ: Առանձին դեպքերում ստուգման արդյունքների վերաբերյալ տեղեկությունը ևս համապատասխան կարգով քաղաքացուն տրամադրված չի եղել, որի հետևանքով անձը, ըստ էության, զրկվել է այն բողոքարկելու հնարավորությունից:

Այս առումով հարկ է կրկին ընդգծել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը հաղորդումն ընդունող մարմնին չի վերապահում հաղորդմամբ նկարագրված հանգամանքները ստուգելու կամ քննարկելու լիազորություն, դրանք պետք է սահմանված կարգով գրանցվեն և ընդունվեն՝ քննչական մարմինների քննարկմանը փոխանցելու նպատակով:

2025 թվականի ընթացքում նաև ստացվել են ահազանգեր առ այն, որ հանցագործության մասին հաղորդման կապակցությամբ կազմված վարութային ակտում չեն պահպանվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի պահանջները: Մասնավորապես, անձի կողմից ներկայացված հանցագործության մասին հաղորդման կապակցությամբ կազմվել է քրեական վարույթ չնախաձեռնելու մասին արձանագրություն՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված

---

[104] Տե՛ս 2023 թվականին Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների պաշտպանության վիճակի մասին հաղորդումը, էջ 258-263 հասանելի է https://www.ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2024 թվականին Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների պաշտպանության վիճակի մասին հաղորդումը, էջեր 179-183 հասանելի է https://www.ombuds.am/images/files/4d1335361f1f7e9fbcc1cfc10679701e.pdf հղումով, 20.03.2026թ. դրությամբ:

հիմքով, սակայն հաղորդում ներկայացրած անձին պատշաճ չեն պարզաբանվել այդ հիմքերը, այդ թվում՝ մասնավոր մեղադրանքով վարույթ նախաձեռնելու և դատարան քրեական հայց ներկայացնելու կարգը: Առանձին դեպքերում, հաղորդում ներկայացրած անձանց հասցեագրվել է քրեական վարույթ չնախաձեռնելու մասին տեղեկությամբ գրություն, որում չեն պարզաբանվել ենթադրյալ հանցագործության մասին հաղորդումն արձանագրելուց կամ քրեական վարույթ նախաձեռնելուց հրաժարվելու, կամ քրեական վարույթի հանրային մասնակիցների այլ գործողությունները բողոքարկելու ընթացակարգերը:

Հատկանշական է, որ քննարկվող խնդրի վերաբերյալ ստացված որոշ ահազանգներով բարձրացված հարցեր լուծվում են իրավապահ մարմինների հետ քննարկումների արդյունքում: Նշվածը փաստում է բարձրացված խնդիրների լուծման ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու՝ պետական իրավասու մարմինների հանձնառության մասին:

Նշված խնդիրների կապակցությամբ Ներքին գործերի նախարարությունից ստացված տեղեկատվության համաձայն՝ հանցագործության դեպքերը գրանցելու սահմանված կարգի խախտումների վերաբերյալ ստացված հաղորդումների (բողոքների) կապակցությամբ 2025 թվականի ընթացքում ՀՀ ՆԳՆ ներքին անվտանգության և հակակոռուպցիոն վարչությունում իրականացվել է 16 ծառայողական քննություն, այդ թվում՝ հանցագործության դեպքը գրանցելու ուղղությամբ միջոցներ չձեռնարկելու 3 դեպքով, որոնց արդյունքներով ոստիկանության 2 ծառայողի նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ, իսկ 1-ի արդյունքները թողնվել են անհետևանք: Մնացած 13 դեպքերի արդյունքներով ոստիկանության 7 ծառայողի նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ, ոստիկանության 3 ծառայողներ ենթակա են եղել կարգապահական տույժի, սակայն ազատվել են կարգապահական պատասխանատվությունից՝ «ՀՀ ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով, իսկ 3-ի արդյունքները թողնվել են անհետևանք:

Գլխավոր դատախազությունից ստացված տեղեկատվության համաձայն՝ 2025 թվականի ընթացքում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ դատախազական հսկողության կամ ստացված բողոքների քննարկման շրջանակներում արձանագրվել է 2 դեպք՝ հանցագործության մասին հաղորդումները ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով չընդունելու և համապատասխան վարութային ակտ չկազմելու վերաբերյալ: Բողոքների քննարկման արդյունքում դրանք մերժվել են:

Միևնույն ժամանակ, հարկ է արձանագրել, որ վերջին տարիներին Պաշտպանի աշխատակազմ ստացված նման բողոքների և ահազանգների թիվը զգալիորեն նվազել է, ինչը փաստում է, որ քննարկվող ոլորտում առկա է որոշակի դրական դինամիկա:

Այնուամենայնիվ, Մարդու իրավունքների պաշտպանը վերահաստատում է իր դիրքորոշումն առ այն, որ անձանց կողմից ներկայացված հանցագործության մասին հաղորդումները Հայաստանի Հանրապետության ոստիկանության կամ համապատասխան իրավասություն ունեցող պետական այլ մարմնի իրավասու ծառայողների կողմից պետք է ցանկացած պարագայում պատշաճ կարգով ընդունվեն և գրանցվեն՝ չանդրադառնալով ներկայացված տեղեկության արժանահավատության և հավաստիության գնահատմանը կամ չիրականացնելով դրանց ստուգում: Յուրաքանչյուր հաղորդում պետք է սահմանված կարգով հասցեագրվի վարույթն իրականացնող համապատասխան մարմին և քննարկվի քննիչի կողմից: Միևնույն ժամանակ,

համապատասխան վարութային ակտի, դրա հիմքերի, բողոքարկման կարգի և ժամկետների վերաբերյալ անձը պետք է պատշաճ ծանուցվի օրենսդրությամբ նախատեսված ժամկետում: Բացի այդ, հարկավոր է Ոստիկանություն կամ քննչական մարմին դիմող անձանց տարբեր եղանակներով իրազեկել Քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված չափանիշների, ինչպես նաև իրավունքների պաշտպանության օրենքով սահմանված եղանակների մասին:

Հաշվի առնելով խնդրի կարևորությունն ու արդիականությունը, ինչպես նաև բարձր գնահատելով իրավասու մարմինների կողմից ձեռնարկված միջոցները և ոլորտում արձանագրված առաջընթացը՝ Պաշտպանն արձանագրում է, որ անհրաժեշտ է շարունակաբար կատարելագործել քննարկվող ոլորտում իրավապահ մարմինների ծառայողների գիտելիքներն ու հմտությունները, ապահովել հանցագործությունների վերաբերյալ քաղաքացիների հաղորդումների ընդունման և քննարկման՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի և ՀՀ կառավարության 2017 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 1495-Ն որոշման պահանջների անշեղ կատարումը, ինչպես նաև անձին հաղորդումներին ներկայացվող չափանիշների և իր իրավունքների պաշտպանության այլ եղանակների վերաբերյալ տարբեր եղանակներով պատշաճ տեղեկացումը:

3. Քրեական վարույթին ներգրավված անձանց պաշտպանությունը

Մարդու իրավունքների պաշտպանն իր նախորդ տարիների հաղորդումներում[105] մանրամասն անդրադարձել է քրեական վարույթին մասնակցող անձանց իրավունքների պաշտպանության երաշխիքներին, մանրամասն վերլուծվել են հատուկ պաշտպանության միջոցների էությունը և դերը, ներպետական ու միջազգային իրավակարգավորումները, ներկայացվել են նաև ոլորտի բարելավման առաջարկներ:

Քրեական վարույթի բոլոր մասնակիցների անվտանգության երաշխավորումը ինչպես անձի ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության, այնպես էլ վարույթի քննության արդյունավետության կարևոր պայմաններից է: Պաշտպանը կրկին ընդգծում է, որ քրեական վարույթի մասնավոր մասնակիցների համար անվտանգության երաշխիքներ նախատեսելն ու դրանց արդյունավետ կիրառումն ապահովելը քրեական դաշտավարության ցանկացած փուլում պետության պարտականությունն է[106]:

Տարեկան հաղորդման կազմման ընթացքում ՀՀ քննչական կոմիտեից ստացված տեղեկատվության համաձայն՝ 2025 թվականի ընթացքում 54 քրեական վարույթով 86 անձի նկատմամբ կիրառվել է հատուկ պաշտպանության միջոց: Մասնավորապես 20 անձի նկատմամբ կիրառվել է պաշտպանվող անձի նկատմամբ հսկողություն, 3 անձի նկատմամբ կիրառվել է պաշտպանվող անձին մոտենալու կամ նրա հետ շփվելու սահմանափակումը, 32 անձանց նկատմամբ կիրառվել է պաշտպանվող անձի, նրա բնակարանի կամ գույքի նկատմամբ հսկողություն, 7 անձանց նկատմամբ կիրառվել է պաշտպանվող անձի աշխատանքի, ծառայության կամ ուսման վայրի փոխումը, 18 անձի նկատմամբ կիրառվել է պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող տվյալների գաղտնիացումը, 1 անձի նկատմամբ կիրառվել է պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող տվյալների գաղտնիացումը և դատարանում պաշտպանվող անձի հարցաքննությունը հատուկ կարգով:

Միևնույն ժամանակ, Դատախազությունից ստացված տեղեկատվության համաձայն՝ հաշվետու ժամանակահատվածում ստացվել է անձի կողմից համապատասխան դիմում ներկայացնելու պարագայում հատուկ պաշտպանության միջոց չկիրառելու դեմ 1 բողոք, որը չի բավարարվել: Նաև չեն ստացվել բողոքներ այն մասին, որ հատուկ պաշտպանության միջոց կիրառված լինելու հետևանքով անձը զրկված լինի առօրյա կարիքները հոգալու, այդ թվում՝ աշխատելու, բնակարանի վարձի գումարը վճարելու հնարավորությունից:

Իրավասու մարմիններից ստացված տեղեկատվության ուսումնասիրությամբ պարզվել է նաև, որ վերը թվարկված հատուկ պաշտպանության միջոցները 2025 թվականի ընթացքում կիրառվել են ՀՀ քրեական օրենսգրքի տարբեր հոդվածների

---

[105] Տե՛ս 2023 թվականին Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների պաշտպանության վիճակի մասին հաղորդումը, էջեր 265-270, հասանելի է https://www.ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2024 թվականին Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների պաշտպանության վիճակի մասին հաղորդումը, էջեր 183-186 հասանելի է https://www.ombuds.am/images/files/4d1335361f1f7e9fbcc1cfc10679701e.pdf հղումով, 20.03.2026թ. դրությամբ:

[106] Նման դիրքորոշումը արտացոլված է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպքային պրակտիկայում, տե՛ս օրինակ՝ Օսմանն ընդդեմ Միացյալ Թագավորության (Osman v. United Kingdom) գործով 1998 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ 23452/94 վճիռ, Ռ. Ռ.-ն և այլք ընդդեմ Հունգարիայի (R.R. and Others v. Hungary) գործով 2021 թվականի հուլիսի 5-ի թիվ 23452/9436037/17 վճիռ, Ա-ն և Բ-ն ընդդեմ Ռումինիայի (A and B v. Romania) գործով 2020 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 48442/16 և 48831/16 վճիռ և այլն:

հատկանիշներով նախաձեռնված քրեական վարույթներով (այդ թվում՝ տարբեր ծանրության աստիճանի հանցագործությունների դեպքերով): Նշվածը դրական է գնահատվում այն տեսանկյունից, որ գործնականում օգտագործվում են օրենսդրությամբ նախատեսված գրեթե բոլոր հատուկ պաշտպանության միջոցները և մեկից ավել միջոց կիրառելու հնարավորությունը՝ տարատեսակ հանցանքների առիթներով քննվող քրեական վարույթներով:

Այնուամենայնիվ, Պաշտպանի աշխատակազմում ստացված բողոքների և ահազանգերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ հաճախ քաղաքացիները տեղեկացված չեն լինում իրենց անվտանգության երաշխավորման համար քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված այս ինստիտուտի առկայության և դրա կիրառման հնարավորության վերաբերյալ: Բողոք ներկայացրած անձինք նշում են նաև, որ վարույթն իրականացնող մարմնին հայտնել են իրենց կամ հարազատների կյանքին կամ առողջությանը հնարավոր վտանգի առկայության մասին, սակայն վարույթի հանրային մասնակիցների կողմից չեն ձեռնարկվել համապատասխան միջոցներ այդ ուղղությամբ: Հարկ է հատուկ ընդգծել, որ բարձրացված խնդիրների մի մասը բողոքների քննարկման ընթացքում ստացել են լուծում:

Նշվածի հաշվառմամբ՝ Պաշտպանը վերահաստատում է իր դիրքորոշումն առ այն, որ վարույթն իրականացնող մարմինը յուրաքանչյուր դեպքում, երբ ողջամտորեն առկա է վտանգ վարույթի մասնակցի կամ նրա ընտանիքի անդամի կյանքին, առողջությանը կամ իրավաչափ շահերին, անկախ անձի կողմից գրավոր դիմում ներկայացված լինելու հանգամանքից, պետք է քննարկման առարկա դարձնի հատուկ պաշտպանության միջոցի կիրառման հարցը, կայացնի համապատասխան որոշում և դրա կատարումն անհապաղ հանձնարարի իրավասու պետական մարմնին:

Այս համատեքստում հարկ է նշել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 74-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հատուկ պաշտպանության միջոցների կիրառման կարգն ու պայմանները սահմանում է Կառավարությունը: «Քրեական վարույթին ներգրավված և քրեական դատավարության մասնակից չհանդիսացող և այլ օրենքներով պաշտպանության ենթակա անձանց նկատմամբ ոստիկանության կողմից հատուկ պաշտպանության միջոցների կիրառման կարգը և պայմանները սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2022 թվականի ապրիլի 22-ի թիվ 560-Ն որոշման 4-րդ կետի համաձայն՝ պաշտպանության միջոցների կիրառումը երաշխավորվում է պետության կողմից: Պաշտպանության համար անհրաժեշտ ֆինանսավորումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության՝ յուրաքանչյուր տարվա պետական բյուջեով ոստիկանությանն այդ նպատակով հատկացվող միջոցների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրների հաշվին: Նույն որոշման 7-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 74-րդ հոդվածի 1-ին մասի 3-6-րդ կետերով նախատեսված պաշտպանության միջոցների կիրառումը քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշման հիման վրա իրականացնում է ոստիկանությունը՝ իրավասու ստորաբաժանումների միջոցով:

Քննարկվող հարցի կապակցությամբ Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով անձը հայտնել է, որ քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից իր նկատմամբ կիրառվել է հատուկ պաշտպանության միջոց, ինչի արդյունքում ինքն ու ընտանիքի անդամները լքել են իրենց մշտական բնակության վայրը: Արդյունքում ընտանիքը գտնվում է սոցիալապես անապահով վիճակում, մասնավորապես՝ մշտական բնակության վայրը լքելու հետևանքով զրկված են աշխատելու և ընտանիքի ամենօրյա կարիքները հոգալու, այդ թվում՝ սնունդ գնելու, բնակության նոր վայրի վարձը վճարելու,

ինչպես նաև կրթության իրավունքն իրացնելու հնարավորությունից: Նաև նշել է, որ դիմել է վարույթն իրականացնող մարմնին՝ ընտանիքի հետ մշտական բնակության վայր վերադառնալու խնդրանքով, սակայն վարույթն իրականացնող մարմինը թույլ չի տվել վերադառնալ՝ չնշելով, թե ինչ ժամկետով է կիրառվել հատուկ պաշտպանության միջոցը:

Հարկ է ընդգծել, որ դեռևս 2023 թվականին Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների պաշտպանության վիճակի մասին հաղորդմամբ անդրադարձ է կատարվել նաև ՀՀ կառավարության վերոնշյալ որոշման իրավակարգավորումներին: Մասնավորապես, նշվել է, որ առանձին պաշտպանության միջոցների վերաբերյալ անհրաժեշտ է նախատեսել առավել մանրամասն կարգավորումներ, այդ թվում՝ միջգերատեսչական համագործակցության տեսանկյունից, օրինակ՝ պաշտպանվող անձի աշխատանքի, ծառայության կամ ուսման վայրի փոփոխման դեպքում: Բացի դրանից, օրենսդրական կարգավորումներում հատուկ պաշտպանության միջոցի կիրառման անհրաժեշտության և դրանցից մեկի կամ մի քանիսի ընտրության չափանիշներ նախատեսված չեն, և դրա պիտանելիության գնահատումը թողնված է վարույթն իրականացնող մարմնի հայեցողությանը: Նշվածն իր հերթին կարող է հանգեցնել վարույթն իրականացնող մարմինների կողմից օրենսդրությամբ նախատեսված գործիքակազմի ոչ լիարժեք գործարկմանը:

Վերը նշված կարգավորումների համատեքստում Պաշտպանն արձանագրում է, որ այն բոլոր դեպքերում, երբ անձի նկատմամբ կիրառված է հատուկ պաշտպանության միջոց, անկախ անձի գրավոր դիմումի հիման վրա, թե վարույթն իրականացնող մարմնի նախաձեռնությամբ, դրանց պատշաճ կատարումը պետք է իրականացվի պետական բյուջեով ոստիկանությանն այդ նպատակով հատկացվող միջոցների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրների հաշվին: Ժամանակին համապատասխան միջոցի կիրառման մասին որոշում կայացնելուց բացի խիստ կարևոր է նաև ապահովել դրա այնպիսի իրականացումը, որը ոչ միայն կապահովի անձի անվտանգությունը, այլև անձի համար չստեղծի անհամաչափ պարտավորություններ, այդ թվում՝ ֆինանսական:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Պաշտպանն արձանագրում է, որ անհրաժեշտ է ապահովել հատուկ պաշտպանության միջոցների կիրառման քրեադատավարական ինստիտուտի գործարկման արդյունավետ կառուցակարգի առկայությունը, սահմանել դրանց կիրարկման արդյունավետ և լայն պրակտիկայի ձևավորման երաշխիքներ, ինչպես նաև երաշխավորել ոլորտի ներպետական իրավակարգավորումների շարունակական բարելավումը՝ մարդակենտրոնության սկզբունքի և միջազգային չափանիշների համապատասխան:

4. Մեղադրյալի հակընդդեմ հարցման իրավունքի ապահովման գործնական խնդիրներ

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության և մարդու իրավունքների պաշտպանության վիճակի մասին նախկին տարեկան հաղորդումներում Պաշտպանը բազմիցս է անդրադարձել մարդու հակընդդեմ հարցման հիմնարար իրավունքի էությանը և դրա արդյունավետ կիրառման կարևորությանը: Այն ամրագրված է ինչպես ՀՀ Սահմանադրությամբ, այնպես էլ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով ու Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրով՝ որպես արդար դատաքննության իրավունքի կարևոր բաղադրիչ: Պաշտպանը նաև արձանագրել է, որ

նշված իրավունքի անհամաչափ սահմանափակումը կարող է հանգեցնել ողջ դատավարության արդարացիության խախտմանը:

Կարևոր ենք համարում ընդգծել, որ վերջին տարիներին մեղադրյալի հակընդդեմ հարցման իրավունքի ապահովման տեսանկյունից արձանագրվել է դրական միտում, սակայն Պաշտպանի աշխատակազմում 2025 թվականի ընթացքում ստացված բողոքները վկայում են, որ խնդիրը դեռևս շարունակում է պահպանվել:

Քննարկվող հարցի վերաբերյալ Դատախազությունից ստացված տեղեկությունների համաձայն՝ 2025 թվականի ընթացքում ստացվել մեղադրյալի հակընդդեմ հարցման իրավունքի իրացման չապահովման մասին 1 բողոք, որը բավարարվել է:

Պաշտպանի աշխատակազմում ստացված բողոքները հիմնականում վերաբերում են համապատասխան հիմքերի առկայության կամ առերեսում իրականացնելու վերաբերյալ միջնորդություններ ներկայացված լինելու պայմաններում առերեսում չիրականացնելու կամ դրա իրականացումը տևական ժամանակով անհիմն հետաձգելու, կատարման ընթացքում առերեսվողի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու, մեղադրյալի նկատմամբ կիրառված խիստ խափանման միջոցը առերեսում իրականացնելու անհրաժեշտությամբ պայմանավորված երկարաձգելու հանգամանքներին: Ընդ որում՝ նման բողոքներ ներկայացվել են ինչպես մեղադրյալների և պաշտպանների, այնպես էլ տուժողների և նրանց ներկայացուցիչների կողմից:

Մասնավորապես, բողոքներից մեկով փաստաբանը պնդել է, որ միջնորդություն է ներկայացրել վարույթն իրականացնող մարմնին՝ խնդրելով իր պաշտպանյալի անձնական ազատության տևական սահմանափակման հաշվառմամբ՝ ապահովել պատշաճ ջանասիրություն և իրականացնել պաշտպանյալի առերես հարցաքննություն, ինչի արդյունքում իր պաշտպանյալի նկատմամբ կիրառված խափանման միջոցը կարող է փոփոխվել, սակայն միջնորդությունը մերժվել է անհիմն լինելու պատճառաբանությամբ: Նշվածի վերաբերյալ Դատախազությունից պարզաբանում է ներկայացվել այն մասին, որ քրեական վարույթով իրականացվում է նախաքննություն և անհրաժեշտության դեպքում վարույթն իրականացնող մարմնի կողմից կկատարվեն համապատասխան վարութային գործողություններ, այդ թվում՝ առերեսումներ՝ նշված իրավունքի իրացումն ապահովելու համար:

Պաշտպանը հարկ է համարում ընդգծել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի կարգավորումների համատեքստում՝ քրեական վարույթի ընթացքում իր լիազորություններն իրականացնելիս վարույթի հանրային մասնակիցը գործում է ինքնուրույն՝ հիմնվելով օրենքի, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև իրավասու անձի հանձնարարությունների վրա: Բացի այդ, նույն օրենսգրքով սահմանվում է, որ քննիչն ինքնուրույն ուղղություն է տալիս նախաքննությանը, ընդունում անհրաժեշտ որոշումներ, կատարում քննչական և վարութային այլ գործողություններ:

Այդուհանդերձ, հարկ է ընդգծել, որ նույն օրենսգրքում ամրագրված է նաև վարույթի քննության ողջամիտ ժամկետի սկզբունքը: Մասնավորապես՝ նախաքննությունը և դատաքննությունը պետք է ավարտվեն ողջամիտ ժամկետում: Քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է իր իրավասության սահմաններում դրսևորել պատշաճ ջանասիրություն վարույթը ողջամիտ ժամկետում ավարտելու համար: Նշվածն առավել կարևորություն ունի, երբ մեղադրյալի նկատմամբ կիրառված է ամենախիստ խափանման միջոցը՝ կալանքը, քանի որ Պաշտպանի ուսումնասիրություններն ու ստացվող մի շարք բողոքներ վկայում են այն մասին, որ կիրառված խիստ խափանման միջոցի ժամկետի, այդ թվում՝ պայմանների (տեսակցությունների, հաղորդակցության սահմանափակում և այլն) երկարաձգումը շատ հաճախ պայմանավորվում է նախատեսված

քննչական գործողությունների, մասնավորապես՝ առերեսման կատարման անհրաժեշտությամբ:

Պետք է նշել, որ յուրաքանչյուր դեպքում խափանման միջոց կալանքի կամ դրա պայմանների կիրառման, դրանց ժամկետների երկարաձգման, ինչպես նաև նախաքննական մարմնի դրսևորած պատշաճ ջանասիրության (due diligence) հարցերը ենթակա են քննարկման դատարանի կողմից, իսկ Պաշտպանը լիազորություն չունի պարզաբանումներ պահանջել դատարանից կամ դատավորներից: Այդուհանդերձ, Պաշտպանն արձանագրում է, որ յուրաքանչյուր դեպքում, երբ անձի նկատմամբ կիրառված խիստ խափանման միջոցը կամ դրա պայմանները պայմանավորված են այս կամ այն ապացուցողական կամ վարութային այլ գործողության կատարմամբ, որի կատարմանը մեղադրյալը ենթադրաբար կարող է խոչընդոտել՝ վարույթն իրականացնող մարմինները պետք է այդպիսի գործողությունները կատարեն առաջնահերթ և անհապաղ՝ նկատի ունենալով, որ մեղադրյալի հակընդդեմ հարցման իրավունքն իրացնելու հնարավորություն գործող քրեական դատավարության օրենսգիրքն ընձեռում է և՛ մինչդատական վարույթում, և դատական քննության փուլում:

Հարկ է ընդգծել, որ մեղադրյալի հակընդդեմ հարցման իրավունքի իրացմանը վերաբերող բողոքներից յուրաքանչյուրով Պաշտպանի իրավասության շրջանակում ձեռնարկվում են հնարավոր և անհրաժեշտ միջոցները, ինչի արդյունքում կոնկրետ դեպքերում խնդիրը մեծամասամբ ստանում է լուծում:

Դրական գնահատելով ինչպես ձևավորված պրակտիկայի միտումները, այնպես էլ իրավասու մարմինների հանձնառությունը՝ ուղղված խնդիրների կառուցողական քննարկմանն ու լուծմանը, Պաշտպանը կարևոր է համարում ևս մեկ անգամ ընդգծել, որ անհրաժեշտ է ձևավորել մեղադրյալի հակընդդեմ հարցման իրավունքի իրացման և առերեսման պատշաճ իրականացման միասնական ու արդյունավետ պրակտիկա՝ անհարկի հայեցողությամբ չհետաձգելով դրանց կատարումը, երաշխավորելով վարութային գործողությունների իրականացումը ողջամիտ ժամկետում և ապահովելով կողմերի իրավունքների հավասարակշռությունը՝ քրեադատավարական օրենսդրությանը և միջազգային չափանիշներին համապատասխան:

5. Խուզարկություն քննչական գործողությանն առնչվող գործնական խնդիրներ

Մարդու իրավունքների պաշտպանն իր նախորդ տարեկան հաղորդումներում մշտապես անդրադարձ է կատարել խուզարկություն քննչական գործողությանն առնչվող խնդիրներին, վեր հանել գործնականում ծագող խնդիրները և ներկայացրել առաջարկություններ պրակտիկայի կատարելագործման ուղղությամբ: Նկատի ունենալով խնդիրների շարունակականությունը՝ 2024 թվականի տարեկան հաղորդմամբ Պաշտպանն արձանագրել է, որ անհրաժեշտ է գործուն միջոցներ ձեռնարկել խուզարկություն քննչական գործողությունն իրականացնելիս խստագույնս երաշխավորելու անձի իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի պատշաճ իրացումը՝ բացառելով դրա հետաձգումը՝ պայմանավորված գործողության սկսված լինելով կամ այլ տեխնիկական խնդիրներով: Պաշտպանն արձանագրել է խուզարկությունը բացառապես դատարանի որոշմամբ սահմանված ծավալի շրջանակում իրականացնելու կարևորությունը: Միևնույն ժամանակ, Պաշտպանն ընդգծել է, որ անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել վարութային գործողության ավարտից հետո սեփականության իրավունքի անհիմն սահմանափակման այն դեպքերը բացառելու ուղղությամբ, երբ հակակշիռ իրավական շահը չունի բացառիկ նշանակություն:

2025 թվականի ընթացքում ևս Պաշտպանի աշխատակազմում շարունակվել են ստացվել բանավոր և գրավոր բողոքներ խուզարկություն քննչական գործողության կատարման ընթացքում ծագող խնդիրների վերաբերյալ:

Այսպես, Պաշտպանի աշխատակազմ ստացված բազմաթիվ բողոքներ և ահազանգեր վերաբերել են խուզարկության արդյունքում վերցված իրերը տևական ժամանակ չվերադարձնելու խնդրին: Ընդ որում, ըստ ստացվող բողոքների, որոշ դեպքերում նախաքննական մարմինների կողմից չեն պատճառաբանվում վերցված իրերի՝ վարույթի համար նշանակություն ունենալու հանգամանքը, որպիսի պայմանը սահմանված է խուզարկության ընդհանուր պայմանները սահմանող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածով:

Խնդիրն առավել ցայտուն է դառնում այն դեպքերում, երբ խուզարկությունից հետո վերցվում և սեղմ ժամկետներում չեն վերադարձվում կենսական նշանակություն ունեցող իրեր, այդ թվում՝ բնակարանի, ավտոմեքենայի բանալիներ, ոչ միայն վարույթով անցնող անձի, այլև նրա ընտանիքի անդամներին պատկանող բջջային հեռախոսներ, համակարգիչներ, որպիսի առարկաները որոշ դեպքերում անձանց համար հանդիսանում են եկամտի աղբյուր, ունեն կենսական նշանակություն և նույնաբնույթ այլ իրեր: Ընդ որում, որոշ դեպքերում վարույթն իրականացնող մարմնի կողմից վերցված իրերը, մասնավորապես՝ բջջային հեռախոսները, համակարգիչները և այլ էլեկտրոնային սարքերը կամ կրիչները սեղմ ժամկետում չվերադարձվելը պատճառաբանվում է դրանցում թվային խուզարկություն կատարելու անհրաժեշտությամբ: Խնդիրն ավելի է արտահայտվում այն դեպքում, երբ վերցված էլեկտրոնային սարքերում թվային խուզարկություն կատարելու նպատակով քննիչի կողմից դատարան ներկայացված միջնորդությունը դատարանի որոշմամբ մերժվում է, իսկ նշված դատական ակտը բողոքարկվում է վերադաս դատական ատյան, ինչի հետևանքով վերցված իրերն ավելի երկար են պահվում վարույթն իրականացնող մարմնում:

Վերոգրյալից բացի, Պաշտպանի աշխատակազմում ստացվել են նաև բողոքներ այն մասին, որ խուզարկությունից անմիջապես հետո նախաքննական մարմինը կապարակնքում է խուզարկված վայրը (կամ նախապես կապարակնքում է այն՝ հետագայում խուզարկություն իրականացնելու նպատակով): Նշվածի հետևանքով, բազմաթիվ են դեպքերը, երբ Պաշտպանին դիմող անձինք բարձրաձայնում են նշված տարածքներում գործունեության տևական ժամանակ սահմանափակման հետ կապված խնդիրներ:

Մասնավորապես, բողոքներից մեկով փաստաբանը հայտնել է, որ քրեական վարույթի շրջանակում խուզարկությունից և տեսանկարահանող սարքը վերցնելուց հետո կապարակնքվել են վստահորդին պատկանող ընկերության գործունեության իրականացման վայրի շինության մուտքի դռները: Ըստ դիմողի՝ վարույթն իրականացնող մարմինը հրաժարվել է որևէ պատճառաբանություն ներկայացնել նշվածի պատճառների վերաբերյալ՝ պարզապես սպառնալով, որ տարածքը շահագործելու դեպքում կենթարկվեն քրեական պատասխանատվության՝ արդարադատության իրականացմանը կամ գործի քննությանը միջամտելու համար:

Վերոնշյալի կապակցությամբ Գլխավոր դատախազությունից ստացվել է պարզաբանում այն մասին, որ նախաքննության ընթացքում անհրաժեշտ քննչական և վարութային գործողությունները կատարելուց հետո ընկերության գործունեության վայր հանդիսացող շինության մուտքի դռների կապարակնիքները հեռացվել են: Միևնույն ժամանակ, պարզաբանում է ստացվել այն մասին, որ վարույթն իրականացնող մարմնից գրությամբ հայտնվել է նշված հասցեում գործունեություն չիրականացնելու վերաբերյալ

հետևողականություն ցուցաբերելու անհրաժեշտության մասին, ինչով պայմանավորված էլ շինության դռները կապարակնքվել են:

Հարկ է նշել, որ ստացվող բոլոր բողոքներն ու ահազանգները սահմանված կարգով ուսումնասիրվում են և բազմաթիվ դեպքերում անհատական բողոքով բարձրացված հարցերը պետական իրավասու մարմինների հետ հաղորդակցության արդյունքում ստանում են լուծում:

Այդուհանդերձ, Պաշտպանը խնդրահարույց է համարում անթույլատրելի պրակտիկայի շարունակականությունը, երբ վարույթն իրականացնող մարմինների կողմից խուզարկության իրականացումից և վարույթի համար նշանակություն ունեցող իրեր վերցնելուց, կամ խուզարկված տարածքը կապարակնքվելուց հետո անձի սեփականության իրավունքը տևական ժամանակ սահմանափակվում է՝ առանց այդ սահմանափակման անհրաժեշտության ու բացառիկ իրավական շահի առկայության պատշաճ հիմնավորման: Ուստի, Պաշտպանն առանցքային է համարում, որպեսզի իրավասու մարմինները խուզարկությունից հետո բավարար ջանասիրություն դրսևորեն վերցված իրերի հետ անհրաժեշտ քննչական և վարութային այլ գործողությունները անհապաղ կամ հնարավոր սեղմ ժամկետում կատարելու ուղղությամբ, ինչից հետո, անհրաժեշտությունը վերանալու պարագայում, հիշյալ իրերը վերադարձվեն օրինական տիրապետողներին:

Պաշտպանը կրկին ընդգծում է, որ անձի սեփականության իրավունքն ամրագրված է և պաշտպանվում է ինչպես Սահմանադրությամբ, այնպես էլ ՄԻԵԿ-ով: Կարևորելով հանրային և մասնավոր շահերի հավասարակշռման սահմանադրական չափանիշը՝ Պաշտպանն արձանագրում է, որ գույքի տիրապետման, տնօրինման և օգտագործման՝ սեփականատիրոջ իրավազորությունների սահմանափակման համար անհրաժեշտ է, որ հակակշիռ իրավական շահն ունենա բացառիկ նշանակություն: Նշվածն արձանագրվել է նաև ՀՀ վճռաբեկ դատարանի մի շարք նախադեպային որոշումներով:

Վերոգրյալից բացի, Պաշտպանի աշխատակազմում շարունակվել են ստացվել ահազանգեր փաստաբաններից առ այն, որ իրենց վստահորդների խնդրանքով ներկայացել են խուզարկության կատարման վայր, սակայն վարույթն իրականացնող մարմինը փաստաբաններին թույլ չի տվել մասնակցել արդեն իսկ սկսված խուզարկությանը՝ երբեմն որոշակի փաստաթղթեր ներկայացնելու անհրաժեշտության պատճառաբանությամբ:

Պաշտպանն արձանագրում է, որ այն բոլոր դեպքերում, երբ առկա է վստահորդի կամքի որևէ դրսևորում առ այն, որ փաստաբանը ստանձնի իր պաշտպանությունը կամ մասնակցի իրականացվող քննչական գործողությանը, կլինի այն բանավոր թե գրավոր, խնդրահարույց է հրավիրված փաստաբանին թույլ չտալը մասնակցելու թեկուզև սկսված քննչական գործողությանը՝ պայմանավորելով այն որոշակի տեխնիկական խնդիրներով: Նշվածը կարող է հանգեցնել անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և Եվրոպական կոնվենցիայով նախատեսված իրավաբանական օգնության իրավունքի ձևականացման: Ուստի, Պաշտպանը ևս մեկ անգամ ընդգծում է, որ քրեական վարույթի շրջանակում, մասնավորապես՝ մարդու անձնական կյանքին էականորեն միջամտող քննչական գործողության ընթացքում անհրաժեշտ է խստագույնս երաշխավորել անձի իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի պատշաճ իրացումը՝ բացառելով դրա հետաձգումը՝ պայմանավորված ձևական, կազմակերպչական կամ տեխնիկական խնդիրներով:

Այսպիսով, հաշվի առնելով խուզարկություն քննչական գործողության ընթացքում առաջացող գործնական խնդիրների շարունակական դրսևորումները նաև 2025 թվականի

ընթացքում, Պաշտպանը արձանագրում է, որ անհրաժեշտ է ձեռնարկել հետևողական և արդյունավետ միջոցներ՝ ուղղված մասնավորապես հետևյալին՝

- **խուզարկության ավարտից հետո կանխել սեփականության իրավունքի անհամաչափ կամ անհիմն սահմանափակման դեպքերը, մասնավորապես այն իրավիճակներում, երբ սահմանափակման հակակշիռ հանրային կամ իրավական շահը չունի բացառիկ և բավարար հիմնավորում,**
- **խուզարկություն քննչական գործողության իրականացման ընթացքում իրական և արդյունավետ եղանակով ապահովել անձի իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը, բացառելով դրա սահմանափակումը կամ հետաձգումը՝ պայմանավորված ձևական, կազմակերպչական կամ տեխնիկական խնդիրներով:**

6. Քրեական վարույթի ընթացքում սեփականության իրավունքի սահմանափակմանն առնչվող խնդիրներ

Սեփականության իրավունքի պաշտպանությունն ապահովվում է ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային իրավական նորմերով: Միաժամանակ, քրեական արդարադատության իրականացման ընթացքում այս իրավունքի սահմանափակումը հաճախ դառնում է անխուսափելի՝ հանրային շահերի պաշտպանության, հանցագործությունների բացահայտման և քննության արդյունավետության ապահովման նպատակով: Նշված ընթացակարգում հանրային և մասնավոր շահերի հավասարակշռության պահպանումը կազմում է քրեական վարույթի խնդրահարույց ասպեկտներից մեկը:

Քրեական վարույթների շրջանակում սեփականության իրավունքի սահմանափակման հիմնական ձևերից են գույքն իրեղեն ապացույց ճանաչելը և օրինական տիրապետողին չվերադարձնելը, առգրավումը և գույքի արգելադրումը: Պետք է նշել, որ գործնականում այս ինստիտուտների կիրառման հետ կապված առաջանում են բազմաթիվ խնդիրներ, որոնք խաթարում են անձանց իրավունքների պատշաճ պաշտպանությունը:

Սեփականության իրավունքի սահմանափակմանը, սեփականության իրավունքի և հանրային շահի ողջամիտ հավասարակշռության ապահովմանը, ինչպես նաև միջամտության համաչափությանն առնչվող խնդիրները մշտապես գտնվել են Մարդու իրավունքների պաշտպանի ուշադրության կենտրոնում: Դրանց մանրամասն անդրադարձ է կատարվել Պաշտպանի նախորդ տարիների տարեկան հաղորդումներում, որոնց շրջանակում վեր են հանվել գործնականում ծագող խնդիրները և ներկայացվել են առաջարկություններ պրակտիկայի կատարելագործման ուղղությամբ:

2024 թվականի տարեկան հաղորդմամբ քննարկված խնդիրների հաշվառմամբ՝ Պաշտպանը արձանագրել է, որ անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել բացառելու գույքի արգելադրման քողարկված նպատակով վարույթն իրականացնող մարմնի կողմից գույքն իրեղեն ապացույց ճանաչելու, վարույթի շրջանակում օրենքով չնախատեսված եղանակով անձի սեփականության իրավունքի սահմանափակման դեպքերը՝ զերծ մնալով անձի սեփականության իրավունքին՝ միջազգային և ներպետական չափանիշներին չհամապատասխանող ոչ իրավաչափ միջամտությունից: Բացի այդ, իրավասու մարմիններին կոչ է արվել ցուցաբերել բավարար ջանասիրություն և բարեխղճություն՝ անձի սեփականություն հանդիսացող գույքի հետ կապված քննչական և վարութային այլ գործողությունները հնարավորինս սեղմ ժամկետում իրականացնելու և գույքը, այդ թվում՝ վերցված իրերն ու առարկաները, պատշաճ ապացուցմանը չվնասելու պարագայում սեփականատիրոջը վերադարձնելու ուղղությամբ: Միևնույն ժամանակ, առաջարկվել է

քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված՝ իրեղեն ապացույցները վարույթի նյութերի հետ պահելու ընդհանուր կանոնից բացառության առկայության դեպքում՝ քննարկման առարկա դարձնել այն սեփականատիրոջ կամ օրինական տիրապետողի պահպանմանը թողնելու հարցը՝ հակառակ պարագայում ներկայացնելով պատշաճ և միջազգային չափանիշներին համապատասխանող հիմնավորումներ:

Չնայած վերոգրյալին՝ 2025 թվականի ընթացքում ևս Պաշտպանի աշխատակազմում շարունակվել են ստացվել նույնաբնույթ բողոքներ, ինչը վկայում է, որ քրեական վարույթի ընթացքում սեփականության իրավունքի ոչ իրավաչափ սահմանափակման խնդիրները շարունակում են լինել արդիական:

Մասնավորապես, ստացվել են մի շարք բողոքներ և ահազանգներ, այդ թվում՝ փաստաբանների կողմից, առ այն, որ Երևան քաղաքի տարբեր փողոցներից քաղաքացիներին պատկանող տրանսպորտային միջոցները հատուկ պահպանվող տարածք են տեղափոխել՝ առանց որևէ իրավական հիմնավորման, ինչպես նաև ավտոմեքենաների՝ Ոստիկանության հատուկ տարածքում լինելը հիմնավորող որևէ փաստաթղթի ներկայացման: Խնդրի կապակցությամբ Պաշտպանը հանդես է եկել հրապարակային հայտարարությամբ՝ միևնույն ժամանակ անհրաժեշտ պարզաբանումներ պահանջելով պետական իրավասու մարմիններից[107]:

Այս կապակցությամբ պարզաբանումներ են ստացվել այն մասին, որ գրությամբ նշված տրանսպորտային միջոցները պահպանվող հատուկ տարածք են տեղափոխվել ենթադրյալ հակահիրավական արարքներին նշված ավտոմեքենաների առնչությունը պարզելու ուղղությամբ ստուգողական գործողություններ իրականացնելու նպատակով, որոնցից որոշները չեն վերադարձվել՝ քրեական վարույթով անցնելու պատճառով: Միևնույն ժամանակ, տրանսպորտային միջոցների կապակցությամբ անհրաժեշտ վարութային գործողություններ իրականացվելուց հետո գրություն է հասցեագրվել ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայություն՝ ավտոմեքենաները սեփականատերերին վերադարձնելու պահանջով:

Նշված դեպքում, Պաշտպանը խնդրահարույց է համարում այն, որ տրանսպորտային միջոցների օրինական տիրապետողներին չեն ներկայացվել բավարար հիմքեր՝ ավտոմեքենաներից շատերն ավելի քան մեկ ամիս հատուկ տարածքում պահելու վերաբերյալ:

Պաշտպանը բազմիցս է ընդգծել, որ խիստ մտահոգիչ և անընդունելի է տևական ժամանակ՝ նույնիսկ ամիսներ շարունակ անձանց սեփականության իրավունքի անհամաչափ սահմանափակումը՝ անհրաժեշտ վարութային գործողություններ կատարելու պատճառաբանությամբ: Հարկ է կրկին ընդգծել, որ պետք է լինի ողջամիտ հավասարակշռություն պետության կողմից սեփականության իրավունքով անձին պատկանող գույքի նկատմամբ կիրառվող սահմանափակումների և այդ միջոցների կիրառման արդյունքում ակնկալվող նպատակների միջև: Այս պահանջը Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում արտահայտվում է «արդարացի հավասարակշռություն» ձևակերպմամբ, որը պետք է առկա լինի հասարակության ընդհանուր շահի պահանջների և անհատի հիմնարար իրավունքների պաշտպանության միջև:

2025 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմում բողոքներ են ստացվել նաև անձանցից կենսական անհրաժեշտության իրեր, այդ թվում՝ անձնագրեր, բջջային հեռախոսներ, համակարգիչներ առգրավելու, դրանց հետ տևական ժամանակ անհրաժեշտ վարութային գործողություններ չկատարելու և դրանք օրինական

[107] Հասանելի է հետևյալ հղումով՝ https://ombuds.am/am/site/ViewNews/3428, 20.03.2026թ. դրությամբ:

տիրապետողներին չվերադարձնելու վերաբերյալ: Բացի այդ, բողոքներ են ստացվել ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձանց կողմից՝ քրեական վարույթի շրջանակում իրականացվող վարութային գործողություններով պայմանավորված իրավաբանական անձանց գործունեության սահմանափակման, այդ թվում՝ տարածքների կապարակնքման, գործունեության փաստացի դադարեցման և սեփականության իրավունքի միջամտության առնչությամբ: Այս կապակցությամբ Պաշտպանը նաև հանդես է եկել հրապարակային հայտարարությամբ[108]:

Քննարկվող ոլորտում ստացվող բողոքների բավականին մեծ թիվ վերաբերում է քրեական վարույթի շրջանակում խուզարկությունից անմիջապես հետո խուզարկված վայրը նախաքննական մարմնի կողմից կապարակնքելու և երկար ժամանակ կապարակնքված պահելու կամ հետագայում խուզարկություն իրականացնելու նպատակով տարածքը նախապես կապարակնքելու դեպքերին, խուզարկությամբ այնպիսի իրեր (համակարգիչներ, էլեկտրոնային կրիչներ, սարքավորումներ և այլն) առգրավելու և տևական ժամանակ չվերադարձնելու իրավիճակներին, երբ այդ իրերը էական նշանակություն ունեն ձեռնարկատիրական գործունեությունն անխոչընդոտ իրականացնելու համար: Նշվածի հետևանքով մի շարք դեպքերում անձինք տևական ժամանակ զրկված են լինում ձեռնարկատիրական գործունեությունը (այդ թվում՝ կոնկրետ տարածքներում) շարունակելու հնարավորությունից: Հարկ է նշել, որ մի շարք դեպքերում անհատական բողոքներով բարձրացված հարցերը Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության կողմից իրավասու մարմինների հետ հաղորդակցության արդյունքում ստանում են լուծում:

Այնուամենայնիվ, Պաշտպանը կարևորում է հարցի առնչությամբ համակարգային լուծումներ գտնելու անհրաժեշտությունը և խնդրահարույց է համարում այն պրակտիկայի շարունակականությունը, երբ վարույթն իրականացնող մարմինների կողմից խուզարկության իրականացումից և վարույթի համար նշանակություն ունեցող իրեր վերցնելուց, կամ խուզարկված տարածքը կապարակնքվելուց հետո անձի սեփականության, տնտեսական, ներառյալ՝ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու սահմանադրական իրավունքները տևական ժամանակ սահմանափակվում են՝ առանց այդ սահմանափակման անհրաժեշտությունն ու բացառիկ իրավական շահի առկայությունը պատշաճ հիմնավորելու:

Վերոգրյալից բացի, ստացված բողոքներից մեկով տեղեկություն է ներկայացվել առ այն, որ սեփականության իրավունքով անհատ ձեռնարկատիրոջը պատկանող տրանսպորտային միջոցներն առգրավվել են և ճանաչվել իրեղեն ապացույց, սակայն հետագա փուլում տևական ժամանակ դրանց հետ կապված չեն իրականացվել անհրաժեշտ վարութային գործողություններ: Միաժամանակ, տրանսպորտային միջոցների օգտագործման անհնարինությունը հանգեցրել է ձեռնարկատիրական գործունեության խաթարմանը և ամենօրյա նյութական վնասների առաջացմանը, իսկ տրանսպորտային միջոցների ոչ պատշաճ պահպանման հետևանքով դրանք կրում են էական վնասներ: Տրանսպորտային միջոցները վերադարձնելու վերաբերյալ ներկայացված միջնորդությունը վարույթն իրականացնող մարմնի կողմից մերժվել է այն հիմնավորմամբ, որ տվյալ տրանսպորտային միջոցները ճանաչվել են իրեղեն ապացույց և տեղափոխվել հատուկ պահպանվող տարածք, իսկ նախաքննության ընթացքում դեռևս անհրաժեշտ է հավաքել, ստուգել և գնահատել լրացուցիչ ապացույցներ:

[108] Հասանելի է հետևյալ հղումով՝ https://ombuds.am/am/site/ViewNews/3669, 20.03.2026թ. դրությամբ:

Այս առումով Պաշտպանը կրկին հարկ է համարում արձանագրել, որ գույքն իրեղեն ապացույց ճանաչելու և գույքի արգելադրման հիմքերը նախատեսված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով: Ըստ այդմ՝ գույքի արգելադրման ինստիտուտը կոչված է սեփականության կամ այլ գույքային իրավունքների սահմանափակման միջոցով ապահովելու քաղաքացիական հայցը, գույքի հնարավոր բռնագրավումը, դատական ծախսերը, մինչդեռ, գույքն իրեղեն ապացույց ճանաչելով՝ իրացվում են քրեադատավարական այլ նպատակներ: Մասնավորապես, իրեղեն ապացույց է ճանաչվում ցանկացած առարկա, որը կարող է վարույթի համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքները պարզելու միջոց լինել, այդ թվում՝ գույքը, որն իր վրա կրում է հանցագործության հետքեր կամ ինքնին կարող է ծառայել ապացուցման գործընթացում որոշակի հանգամանքներ պարզելու համար:

Այդուհանդերձ, նույնիսկ գույքն իրեղեն ապացույց ճանաչելու պայմաններում ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը նախատեսում է մի շարք դեպքերում իրեղեն ապացույց ճանաչված իրն օրինական տիրապետողի պահպանմանը վերադարձնելու հնարավորություն, եթե դա չի կարող վնասել պատշաճ ապացուցմանը: Մինչդեռ, ըստ ստացված բողոքների, նշված հնարավորությունը, երբեմն, նույնիսկ քննարկման առարկա չի դարձվում:

Վերոգրյալի կապակցությամբ ՀՀ վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ իրեղեն ապացույց ճանաչված առարկայի մեծածավալության դեպքում այն համապատասխան անձանց պատասխանատու պահպանմանը հանձնելու հայեցողական լիազորությունն իրականացնելիս վարույթն իրականացնող մարմինը պետք է ելնի պատշաճ ապացուցման ընդհանուր շահի և անհատի՝ իր գույքից անարգել օգտվելու իրավունքի պաշտպանության պահանջների միջև արդարացի հավասարակշռություն ապահովելու անհրաժեշտությունից: Յուրաքանչյուր դեպքում պետք է հաշվի առնվի սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքից օգտվելու սահմանափակմամբ անձի վրա չափազանց ծանր բեռ դնելու ռիսկը և, հետևաբար, պետք է ապահովվեն համապատասխան դատավարական երաշխիքներ՝ համոզվելու համար, որ անձի սեփականության իրավունքի վրա առկա ազդեցությունը կամայական կամ ոչ կանխատեսելի չէ: Իրեղեն ապացույց ճանաչված մեծածավալ գույքի դեպքում, եթե ողջամտորեն բացառվում է դրա առանձնահատկությունները, հատկանիշները, պարունակող հետքերն էապես փոփոխելու հնարավորությունը, վարույթն իրականացնող մարմինը պետք է քննարկման առարկա դարձնի այդ գույքը սեփականատիրոջ կամ օրինական տիրապետողի պահպանմանը թողնելու հարցը: Վերջին պահանջից բխում է նաև սեփականատիրոջ պատասխանատու պահպանմանը վերոհիշյալ գույքը չթողնելու պարագայում պատշաճ հիմնավորում ներկայացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականությունը, որպիսի դեպքում միայն կապահովվի սեփականության իրավունքի սահմանափակման համաչափությունն անձի կողմից վիճարկելու, ինչպես նաև իրավասու մարմնի կողմից այն գնահատելու հնարավորությունը[109]:

Կարևոր ենք համարում նշել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը մշակել է համապարփակ մեթոդաբանություն սեփականության իրավունքին միջամտության օրինականության գնահատման համար: Դատարանը հաստատել է, որ սեփականությունից օգտվելու իրավունքին ցանկացած միջամտություն պետք է լինի օրենքով նախատեսված, հետապնդի օրինական նպատակ և համաչափ լինի այդ նպատակին: Օրինական նպատակի չափանիշը պահանջում է, որ միջամտությունը ծառայի

[109] Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2018 թվականի մարտի 20-ի թիվ ԵԿԴ/0255/11/15 որոշումը:

հասարակական շահերից բխող իրավաչափ նպատակի իրականացմանը[110]: Քրեական արդարադատության շրջանակում այդպիսի նպատակներ են հանդիսանում հանցագործությունների կանխարգելումը, քննությունը և պատասխանատվությունը, տուժողների իրավունքների պաշտպանությունը, հանցավոր ճանապարհով ձեռք բերված եկամուտների բռնագանձումը:

Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ անհրաժեշտ է, որ ապահովվի արդար հավասարակշռություն հասարակության ընդհանուր շահի պահանջների և անհատի հիմնարար իրավունքների պաշտպանության միջև: Անհրաժեշտ հավասարակշռությունը չի ապահովվի, եթե անհատը կրի անհատական և չափազանց ծանր բեռ: Համաչափության գնահատումը ներառում է մի քանի փուլ: Նախ, պետք է որոշվի միջամտության ողջամտությունը՝ արդյոք այն օբյեկտիվորեն անհրաժեշտ է օրինական նպատակին հասնելու համար: Երկրորդ, պետք է գնահատվի միջոցի համապատասխանությունը՝ արդյոք նշված միջոցով հնարավոր է հասնել ցանկալի արդյունքին: Երրորդ, պետք է հաստատվի միջոցի անհրաժեշտությունը՝ արդյոք գոյություն ունեն այլ, նվազ միջոցներ, որոնց կիրառումը հավասարապես արդյունավետ կլինեն: Վերջապես, պետք է կատարվի նեղ իմաստով համաչափության գնահատում՝ հավասարակշռելով միջամտությունից ակնկալվող օգուտը և անհատի կրած բեռը[111]:

Սեփականության իրավունքի սահմանափակման կապակցությամբ կայուն նախադեպային իրավունք է ձևավորել նաև ՀՀ վճռաբեկ դատարանը, արտահայտելով իրավական դիրքորոշումներ առ այն, որ. «(…) գույքի տիրապետման, տնօրինման և օգտագործման՝ սեփականատիրոջ իրավազորությունները մեծ կարևորության իրավական արժեքներ են, որոնք ունեն սահմանադրական բնույթ: Դրանց սահմանափակման համար անհրաժեշտ է, որ հակակշիռ իրավական շահը ունենա բացառիկ նշանակություն(…)[112], (…)անձի սեփականության իրավունքը դիտարկելով պետության՝ սեփականության իրավունքի պաշտպանության ոլորտում պոզիտիվ պարտականությունների համատեքստում՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ սեփականության իրավունքը ենթադրում է ոչ միայն յուրաքանչյուր անձի իրավունքը պահանջելու, որպեսզի այլոք չխախտեն իր սեփականության իրավունքը, այլ նաև պետության պարտականությունը՝ սեփականության իրավունքը պաշտպանելու ցանկացած անօրինական ոտնձգություններից(…)[113]: (…) Համաչափության սկզբունքը պետք է ապահովվի ոչ միայն անձի իրավունքի նկատմամբ սահմանափակում կիրառելիս, այլ նաև դրա աստիճանը որոշելիս: Վերջինս արտահայտվում է իր գույքն անարգել տնօրինելու, տիրապետելու և օգտագործելու իրավազորություններից որևէ մեկը կամ բոլորը սահմանափակելու հարցի որոշմամբ (…)[114], (…) անձի սեփականության իրավունքի համաչափ սահմանափակման տեսանկյունից կարևոր օրենսդրական պահանջ է նաև գույքի վրա կալանք դնելու մասին որոշման մեջ արգելադրման ենթակա գույքի և դրա արժեքի հստակեցումը, ինչն իր հերթին պետք է հիմնավորված լինի այդ հարկադրանքի միջոցի կիրառմամբ հետապնդվող նպատակներով, լինի որոշակի և հստակ՝ ապահովելով հասարակության ընդհանուր շահի

---

[110] Տե՛ս, Sukhanov and Ilchenko v. Ukraine գործով Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի 2014 թվականի հունիսի 26-ի վճիռը, կետ 53, Olsson v. Sweden գործով Եվրոպական դատարանի 1988 թվականի մարտիր 24-ի վճիռը, կետ 67, և այլն:

[111] Տե՛ս, James and Others v. the United Kingdom,), 21 February 1986, Application no. 8793/79, § 50, and ««East/West Alliance Limited» проти України» (East/West Alliance Limited v. Ukraine), 23 January 2014, Application no. 19336/04, § 168.

[112] Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2010 թվականի օգոստոսի 27-ի թիվ ԵՇԴ/0001/11/10 որոշումը:

[113] Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2012 թվականի հունիսի 8-ի թիվ ԵԿԴ/0326/01/09 որոշումը:

[114] Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2016 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ ԵԿԴ/0255/11/15 որոշումը:

և անհատի սեփականության (կամ այլ գույքային) իրավունքի պաշտպանության միջև արդարացի հավասարակշռությունը (…)[115]»:

Վերոնշյալ փաստական հանգամանքների և նախադեպային որոշումների համադրումը վկայում է, որ քրեական վարույթի ընթացքում սեփականության իրավունքի սահմանափակման պրակտիկայում դեռևս շարունակում են առկա լինել համակարգային խնդիրներ, որոնք առնչվում են ինչպես միջամտության օրինականությանը, այնպես էլ դրա համաչափությանը և պահանջում են իրավական կարգավորումների հստակեցում, իրավապահ մարմինների պրակտիկայի վերանայում և արդյունավետ վերահսկողական մեխանիզմների ներդրում: Մասնավորապես, ներկայացված դեպքերում առկա է սեփականության իրավունքի փաստացի սահմանափակում՝ առանց օրենքով նախատեսված ընթացակարգային երաշխիքների պատշաճ պահպանման, այդ թվում՝ համապատասխան որոշումների կայացման, անձին դրանց տրամադրման և սահմանափակման հիմնավորումների հստակ ձևակերպման:

Հատկանշական է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով վարույթի ընթացքում անձի գույքի արգելադրման համար սահմանված են բարձր, այդ թվում՝ դատական երաշխիքներ: Յուրաքանչյուր դեպքում իրավասու մարմիններն անձի սեփականության իրավունքը սահմանափակելիս պարտավոր են առաջնորդվել միջազգային չափանիշներով, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ՀՀ սահմանադրական դատարանի, ինչպես նաև Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումներով՝ առաջնորդվելով պատշաճ ապացուցման ընդհանուր շահի և անհատի՝ իր գույքից անարգել օգտվելու իրավունքի պաշտպանության պահանջների միջև արդարացի հավասարակշռություն ապահովելու անհրաժեշտությամբ:

Պաշտպանը կարևորում է քրեական վարույթներով լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննության իրականացումը, միևնույն ժամանակ առանցքային է համարում, որպեսզի վարույթի մասնավոր մասնակիցների իրավունքների սահմանափակման յուրաքանչյուր դեպք համապատասխանի իրավաչափության չափանիշներին և բացառվեն քննության ընթացքում վերը նշված սահմանադրական իրավունքների անհամաչափ սահմանափակումների դեպքերը:

Վերոգրյալի համատեքստում Պաշտպանը կրկին արձանագրում է, որ յուրաքանչյուր դեպքում սեփականության իրավունքով անձին պատկանող գույքն առգրավելուց, իրեղեն ապացույց ճանաչելուց կամ այլ կերպ սեփականության իրավունքը սահմանափակելուց հետո անհրաժեշտ է, որպեսզի վարույթն իրականացնող մարմնի կողմից դրա հետագա տնօրինման հարցը պարբերաբար պատշաճ քննարկման առարկա դարձվի՝ հաշվի առնելով վերաբերելի չափանիշներով սահմանված մի շարք հանգամանքներ, այդ թվում՝ գույքը տիրապետողի անձը, ընտանեկան և ֆինանսական դրությունը, ինչպես նաև ընդհանուր շահի և անհատի՝ իր գույքից անարգել օգտվելու իրավունքի պաշտպանության պահանջների միջև արդարացի հավասարակշռությունը և այլն: Հարկ է նշել, որ անձի սեփականության իրավունքի սահմանափակումը քրեական վարույթի որոշակի փուլում կարող է լինել օրինական և հետապնդել իրավաչափ նպատակ, սակայն վարույթի մասնակցի սեփականության իրավունքի սահմանափակման տևողությունը ևս պետք է համաչափ լինի հետապնդվող նպատակին:

[115] Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2019 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ ԵԿԴ/0587/11/18 որոշումը:

Նկատի ունենալով, որ անձի սեփականության իրավունքի սահմանափակման վերաբերյալ նախորդ տարեկան հաղորդումներով արձանագրված խնդիրները շարունակում են արդիական լինել՝ Պաշտպանն արձանագրում է, որ անհրաժեշտ է՝

- ***ապահովել քրեական վարույթի ընթացքում սեփականության իրավունքի սահմանափակման միջոցները օրենսդրությամբ նախատեսված նպատակային նշանակությանը համապատասխան կիրառելը՝ միևնույն ժամանակ, յուրաքանչյուր դեպքում պարտադիր իրականացնելով սեփականության իրավունքին միջամտության համաչափության անհատական գնահատում,***
- ***իրեղեն ապացույց ճանաչված կամ առգրավված գույքի հետ կապված անհրաժեշտ վարութային գործողությունները իրավապահ մարմինների կողմից կատարել ողջամիտ ժամկետներում՝ կանխելու համար սեփականության իրավունքի անհարկի և անհամաչափ սահմանափակումները,***
- ***ապահովել առգրավված և իրեղեն ապացույց ճանաչված գույքի պահպանման այնպիսի պայմաններ, որոնք կբացառեն դրա վնասումը կամ արժեքի էական նվազումը, ինչպես նաև սահմանել արդյունավետ վերահսկողության մեխանիզմներ այդ պայմանների պահպանման նկատմամբ:***

7. Կալանքը որպես խափանման միջոց ընտրելու պրակտիկան

Քրեական արդարադատության համակարգում ամենախիստ խափանման միջոցի՝ կալանքի կիրառումը շարունակում է մնալ ոլորտի առավել զգայուն և խնդրահարույց հարցերից մեկը, քանի որ այն ենթադրում է անձի հիմնարար իրավունքների և ազատությունների ինտենսիվ սահմանափակում:

Ինչպես նախորդ տարիներին, 2025 թվականի ընթացքում ևս Պաշտպանի աշխատակազմում ստացվել են բազմաթիվ բողոքներ՝ կալանքի հիմնավորվածության, իրավաչափության, անհրաժեշտության և համաչափության, ինչպես նաև բավարար հիմքերի բացակայության պայմաններում դրա կիրառման և պարբերաբար երկարաձգման վերաբերյալ: Բարձրացվել են նաև հարցեր՝ կապված տևական ժամանակ ազատազրկված անձի մասնակցությամբ վարութային գործողությունների չկատարման կամ ներկայացված միջնորդությունների մերժման պայմաններում կալանքի շարունակականության, ինչպես նաև հատկապես դատական քննության փուլում գտնվող քրեական գործերի քննությունը ողջամիտ ժամկետներում չիրականացնելու, դատական նիստերի պարբերական հետաձգումների վերաբերյալ, որոնք հանգեցրել են կալանքի ժամկետի շարունակական երկարաձգման:

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքով ամրագրված՝ դատական վարույթին միջամտելու արգելքով պայմանավորած՝ Պաշտպանը չի քննարկում կոնկրետ գործով դատարանի կողմից կալանքը որպես խափանման միջոց կիրառելու որոշման վերաբերյալ անհատական բողոքները: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով, որ կալանքն անձի անձնական ազատության իրավունքի նկատմամբ առավել խիստ միջամտություն է, ինչպես նաև դրա կիրառման դինամիկան և առկա համակարգային խնդիրների շարունակական արդիականությունը՝ նշված հարցերը շարունակում են մնալ Պաշտպանի առաջնահերթ ուշադրության կենտրոնում:

Նշվածի հաշվառմամբ՝ յուրաքանչյուր տարի կալանքի կիրառման պրակտիկայի ամփոփման նպատակով Պաշտպանի աշխատակազմում պատասխանատու մարմիններից ստացվում և վերլուծվում են տվյալ խափանման միջոցի կիրառման վիճակագրական տվյալները:

Հարկ է ընդգծել, որ ոլորտի դինամիկայի վերլուծության մասով իրավասու տարբեր մարմինների կողմից ստացված վիճակագրական տվյալների մեջ առկա է անհամապատասխանություն, քանի որ այն վարվում է տարբեր համակարգերով և չափանիշներով[116]:

Այսպես, ըստ ՀՀ բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ՝ Դատական դեպարտամենտից ստացված տեղեկատվության՝ 2025 թվականի ընթացքում ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության և ՀՀ հակակոռուպցիոն դատարաններ են ներկայացվել կալանքը որպես խափանման միջոց կիրառելու մասին **3882 միջնորդություն**, որոնցից **2260-ը բավարարվել են**: Նույն ժամանակահատվածում դատարաններ են ներկայացվել տնային կալանքը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ **78 միջնորդություններ**, որոնցից **բավարարվել են 33-ը**: Վարչական հսկողությունը որպես խափանման միջոց կիրառելու մասին ներկայացվել են թվով **65 միջնորդություններ**, որոնցից **բավարարվել են 28-ը**:

Միևնույն ժամանակ, ըստ Դատախազությունից ստացված տվյալների՝ 2025 թվականի ընթացքում դատարան է ներկայացվել մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու մասին **3306 միջնորդություն**, որոնցից **բավարարվել է 2283-ը**, **մասնակի է բավարարվել 676-ը, մերժվել՝ 347-ը**: Նույն ժամանակահատվածում դատարաններ են ներկայացվել տնային կալանքը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ **138 միջնորդություններ**, որոնցից **բավարարվել են 106-ը, իսկ 501 դեպքով** դատարանի կողմից կալանքի կամ կալանքի ժամկետը երկարաձգելու միջնորդությունը մասնակի բավարարելու արդյունքում կիրառվել է տնային կալանք տեսակի խափանման միջոց: Վարչական հսկողությունը որպես խափանման միջոց կիրառելու մասին ներկայացվել են **թվով 47 միջնորդություններ**, որոնցից **բավարարվել են 37-ը**, իսկ **241 դեպքով դատարանի** կողմից կալանքի կամ կալանքի ժամկետը երկարաձգելու միջնորդությունը մասնակի բավարարելու արդյունքում կիրառվել է վարչական հսկողություն տեսակի խափանման միջոց:

Կրկին հաշվի առնելով Դատական դեպարտամենտի և Դատախազության կողմից վերը ներկայացված վիճակագրական տվյալների որոշակի անհամապատասխանությունը և նկատի ունենալով, որ նախորդ տարեկան հաղորդումներում հիմք են ընդունվել ՀՀ դատախազության կողմից ներկայացված թվային տվյալները՝ ստորև ներկայացվող վիճակագրության համեմատական վերլուծությունն իրականացվել է ՀՀ դատախազությունից ստացված տեղեկատվության հիման վրա:

[116] Նշվածի կապակցությամբ 2025 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմում իրավասու մարմինների ներկայացուցիչների հետ իրականացվել է քննարկում՝ վիճակագրության վարման միասնական ձևաչափ մշակելու վերաբերյալ:



Միևնույն ժամանակ, պատկերն ամբողջական դարձնելու համար հարկ է նշել նաև նախորդ տարիներին նախաձեռնված քրեական վարույթների քանակը, որոնց շրջանակում ներկայացվել են վերը նշված թվով միջնորդությունները: Օրինակ՝ ըստ տարբեր տարիներին Դատախազությունից ստացված տեղեկատվության՝ 2023 թվականին, ընդհանուր առմամբ, նախաձեռնվել են թվով 51760, 2024 թվականին՝ 58895, իսկ 2025 թվականին՝ թվով 58554 քրեական վարույթներ: Կալանքի կիրառման դինամիկան և քրեական վարույթների շրջանակում կալանքի կիրառման քանակական համեմատությունը ներկայացված է համապատասխան ինֆոգրաֆիկայում:



Հարկ է նկատել, որ կալանքի կիրառման դինամիկան նախորդ տարվա համեմատ չունի զգալի աճ, որպիսին առկա է եղել 2021 թվականից սկսած: Այդուհանդերձ, կալանքի լայնատարած կիրառման պրակտիկան կրկին շարունակում է մտահոգիչ մնալ այն տեսանկյունից, որ օրենսդրությամբ նախատեսված են այլընտրանքային խափանման միջոցների ինչպես առանձին, այնպես էլ համակցված կիրառման լայն հնարավորություններ, ինչն առավել նախընտրելի է նաև օրենսդրի տեսանկյունից:

Տարեկան հաղորդման նախապատրաստման շրջանակում Արդարադատության նախարարությունից ստացված տվյալների համաձայն՝ 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահվում է **2854 ազատազրկված անձ, որից 1424-ը կալանավորված անձինք են, այսինքն՝ ազատությունից զրկված անձանց 49.89%-ը**: Այս ցուցանիշը կարելի է համարել դրական միտում այն համատեքստում, որ, օրինակ՝ 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահվելիս է եղել **2686 ազատազրկված անձ, որից 1401-ը (52.15%) եղել են կալանավորված անձինք**, իսկ 2023 թվականին **կալանավորված անձինք կազմել են քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց 53.29%-ը**:

Այդուհանդերձ, վերը նշված ցուցանիշն էականորեն բարձր է այլ պետությունների հետ համեմատությամբ: Մասնավորապես, Համաշխարհային բանտային ամփոփագրում առկա տվյալների համաձայն՝ օրինակ՝ Վրաստանի Հանրապետությունում 2025 թվականի նոյեմբերի 30-ի դրությամբ քրեակատարողական հիմնարկներում ընդհանուր պահվող անձանցից **միայն 23.2%-ն են կալանավորված անձինք**, իսկ Թուրքիայի Հանրապետությունում 2026 թվականի հունվարի 2-ի դրությամբ՝ **15,9%-ը**[117]:

[117] Հասանելի է https://www.prisonstudies.org/country/georgia, https://www.prisonstudies.org/country/turkey հղումներով, 20.03.2026թ. դրությամբ:

5.450.000-ից ավել բնակչություն ունեցող Սլովակիայի Հանրապետությունում 2025 թվականի նոյեմբերի դրությամբ ազատությունից զրկված անձանց թիվը կազմել է 8063, որոնցից ընդամենը **14.1%-ն են եղել կալանավորված անձինք**, իսկ եվրոպական այնպիսի երկրներում, ինչպիսիք են Ֆրանսիան և Իտալիան, համապատասխանաբար՝ **31.5% և 24.1%**[118]**:**

Մարդու իրավունքների պաշտպանի նախորդ տարեկան հաղորդումներում մանրամասն վերլուծվել են կալանքի կիրառման վերաբերյալ ներպետական իրավակարգավորումները, միջազգային չափանիշներն ու սկզբունքները և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի արտահայտած դիրքորոշումները[119]:

Պաշտպանը բազմիցս է հայտնել իր մտահոգությունն այլընտրանքային խափանման միջոցների համեմատությամբ կալանքի կիրառման նման լայն տարածում ունենալու կապակցությամբ և վերստին արձանագրում է, որ քրեական դատավարության բոլոր փուլերում անհրաժեշտ է համակարգային քայլեր ձեռնարկել գործող օրենսդրական կառուցակարգերի շրջանակում երաշխավորելու կալանքի՝ որպես բացառիկ միջոցի կիրառման, դրա շարունակականության պրակտիկան միջազգային և ներպետական չափանիշներին համահունչ դարձնելու և կալանքի տակ գտնվող անձանց մասնակցությամբ քրեական վարույթներն առաջնահերթ քննելու ուղղությամբ պատշաճ ջանասիրություն դրսևորելու նպատակով:

Հարկ է ընդգծել, որ միջազգային իրավական փաստաթղթերում, բանաձևերում և նվազագույն ստանդարտ կանոններում, ինչպես նաև ներպետական օրենսդրությամբ միանշանակ ամրագրված է, որ ազատությունից զրկումը պետք է լինի բացառիկ և ծայրահեղ միջոց: Մեկ անգամ ևս ընդգծենք, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կայուն նախադեպային դիրքորոշումների համաձայն՝ կալանքը կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ հիմնավորված կերպով բացառվել են բոլոր այլընտրանքային միջոցները, և առկա են հստակ ու բավարար հիմքեր՝ փախուստի վտանգ, քննությանը խոչընդոտելու ռիսկ, նոր իրավախախտման հավանականություն, հանրային անկարգությունների վտանգ կամ կալանավորին պաշտպանելու անհրաժեշտություն: Ընդ որում, ռիսկի առկայության մասին հետևությունները չպետք է լինեն ընդհանուր կամ վերացական, այլ պետք է հիմնվեն կոնկրետ փաստերի համակցված գնահատման վրա: Նմանատիպ մոտեցում է արտահայտել նաև ՀՀ Սահմանադրական դատարանը իր 2019 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ ՍԴՈ-1480 որոշմամբ՝ ընդգծելով, որ կալանքը որպես ultima ratio պարտադիր պետք է ունենա այլընտրանք, և վարույթն իրականացնող մարմինը յուրաքանչյուր դեպքում պարտավոր է հիմնավորված կերպով բացառել առավել մեղմ խափանման միջոցների կիրառման հնարավորությունը:

Միջազգային իրավական չափանիշներով և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով ամրագրված կարևոր սկզբունք է կալանքի վերաբերյալ որոշումների պարբերական վերանայման անհրաժեշտությունը՝ ինչպես մինչդատական, այնպես էլ դատական փուլերում: Կալանքի շարունակականության հարցը քննարկելիս դատարանները պարտավոր են գնահատել ոչ միայն քրեական հետապնդումը

---

[118]Հասանելի է https://www.prisonstudies.org/country/slovakia, https://www.prisonstudies.org/country/france, https://www.prisonstudies.org/country/italy հղումներով, 20.03.2026թ. դրությամբ:

[119] Տե՛ս 2023 թվականին Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների պաշտպանության վիճակի մասին հաղորդումը, էջեր 287-300, հասանելի է https://www.ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2024 թվականին Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների պաշտպանության վիճակի մասին հաղորդումը, էջեր 200-208, հասանելի է https://ombuds.am/images/files/4d1335361f1f7e9fbcc1cfc10679701e.pdf հղումով, 20.03.2026թ. դրությամբ:

շարունակելու անհրաժեշտությունը, այլև վարույթն իրականացնող մարմնի «պատշաճ ջանասիրությունը» (due diligence): Այս պահանջը ամրագրված է ինչպես Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, այնպես էլ ՀՀ Վճռաբեկ դատարանի նախադեպային դիրքորոշումներում: Բացի այդ, կալանքի կիրառման կամ երկարաձգման միջնորդությունների և կալանավորված մեղադրյալի պարագայում քրեական գործերով քննության առաջնահերթությունը նախատեսվել է նաև Բարձրագույն դատական խորհրդի համապատասխան որոշմամբ և կանոնակարգերով:

Միևնույն ժամանակ, հարկ է ընդգծել, որ ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2025 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմ ներկայացվել են բողոքներ և ահազանգեր տևական ժամանակ կալանքի տակ գտնվելու և անհիմն կալանքը երկարաձգվելու վերաբերյալ՝ հատկապես դատական քննության փուլում, որտեղ առավել երկար վերանայման ժամկետներ են սահմանված և բացակայում է կալանքի կիրառման առավելագույն հստակ ժամկետը (բացառությամբ ընդհանուր սահմանափակման՝ պատժի առավելագույն ժամկետով):

Այս առումով Պաշտպանը հարկ է համարում ընդգծել, որ վարույթն իրականացնող մարմինների, այդ թվում՝ դատարանների պարտականությունն է ապահովել կալանքի տակ գտնվող անձանց վերաբերյալ գործերի պատշաճ քննությունը առաջնահերթ և ողջամիտ ժամկետներում: Վերը նշված բոլոր չափանիշների պահպանումը, հատկապես կարևոր է այն գիտակցմամբ, որ նշված խափանման միջոցի կիրառումը նախատեսում է ոչ միայն ազատության սահմանափակում, այլև հանգեցնում մի շարք այլ իրավունքների իրացման սահմանափակումների:

Մասնավորապես, Պաշտպանի աշխատակազմում ստացված ահազանգերից մեկով հարց է բարձրացվել կալանավորված անձի կողմից քաղաքացիաիրավական հարաբերությունների կարգավորման համար լիազորագրի տրամադրման, կրթության իրավունքի իրացման և կալանքի կրման հետևանքով առաջացած մի շարք այլ խնդիրների վերաբերյալ: Այսպես, օրինակ՝ բողոքներից մեկով անձը նշել է, որ որդին հանդիսանում է այլ պետության համալսարանի ուսանող: Նշել է, որ թեև որդու նկատմամբ կիրառված խափանման միջոցը երկու անգամ երկարաձգվել է, այդ ընթացքում նա հարցաքննվել է միայն երկու անգամ և նրա մասնակցությամբ վարութային այլ գործողություններ չեն իրականացվել: Նշել է, որ տևական ժամանակ քննվող վարույթի, ինչպես նաև կիրառված կալանքի հետևանքով որդին տևական և անորոշ ժամանակով զրկվել է կրթության իրավունքը լիարժեք և ժամանակին իրացնելու՝ դասընթացներին մասնակցելու և քննությունները հանձնելու հնարավորությունից: Ըստ պնդման՝ որդու նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու և երկարաձգելու միջնորդությունները ներկայացնելիս քննչական մարմինը չի դրսևորել անհատական մոտեցում և չի պահպանել կալանքը որպես վերջին հնարավոր միջոց կիրառելու սկզբունքը:

Նշվածի համատեքստում՝ հարկ է կրկին ընդգծել, որ գործող օրենսդրությամբ և միջազգային փաստաթղթերով նախատեսված կարգավորումների հիմքում դրված է այն գաղափարը, որ անգամ մի քանի այլ բնույթի սահմանափակումների կիրառումը՝ մեղադրյալի պատշաճ վարքագիծը ապահովելու նպատակով, առավել նախընտրելի է, քան վերջինիս ազատության սահմանափակումն ամենախիստ եղանակով: Մասնավորապես, անհրաժեշտ է փորձել երաշխավորել մեղադրյալի պատշաճ վարքագիծը նվազ խստության խափանման միջոցի կամ համակցված խափանման միջոցների կիրառմամբ՝ նվազեցնելու համար վերջինիս այլ իրավունքների անհիմն սահմանափակման հնարավորությունը:

Այս առումով հատկանշական է, որ ՀՀ արդարադատության նախարարությունից Մարդու իրավունքների պաշտպանի կարծիքին է ներկայացվել «Հայաստանի

Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ, որով առաջարկվում է քրեական դատավարության օրենսգրքում կատարել լրացում և սահմանել իրավակարգավորում այն մասին, որ դատարանի կողմից տնային կալանք կիրառելիս՝ նամակագրությունից, հեռախոսային խոսակցություններ, հաղորդակցության այլ ձևերից (այդ թվում՝ փոստային առաքանուց) օգտվելու սահմանափակումները կարող են չտարածվել կրթության շարունակականությունն ապահովելու համար կրթական ծրագրերով հեռավար (դիստանցիոն) կրթությունը շարունակելու դեպքերի նկատմամբ:

Պաշտպանը ողջունելի է համարում առաջարկվող փոփոխությունները և կարևորում դրանց շուտափույթ կյանքի կոչելը, սակայն արձանագրում է, որ իրավակիրառ պրակտիկան ևս պետք է զարգանա նշվածին համահունչ և իրավասու մարմինները, մեղադրյալի նկատմամբ խափանման միջոց կամ այլ սահմանափակումներ կիրառելիս պետք է առաջնորդվեն նվազագույնի սկզբունքով՝ հանրային և մասնավոր շահերի, այդ թվում՝ կրթության իրավունքի հավասարակշռմամբ:

Վերոգրյալի հաշվառմամբ և նկատի ունենալով այլընտրանքային խափանման միջոցների համեմատությամբ կալանք խափանման միջոցի կիրառման տարիներ շարունակ պահպանվող բացասական դինամիկան՝ Պաշտպանն արձանագրում է, որ կալանքի լայնածավալ կիրառման պրակտիկան շարունակում է մտահոգիչ լինել:

Մարդու իրավունքների պաշտպանը արձանագրում է, որ խափանման միջոցի կիրառման հարցը քննարկելիս կարևոր է յուրաքանչյուր դեպքում դրսևորել անհատական մոտեցում, առաջնորդվել նվազագույնի սկզբունքով և պահպանել կալանքի՝ որպես բացառիկ միջոց կիրառելու սկզբունքը՝ հաշվի առնելով դրա հետևանքով անձի այլ իրավունքների անհամաչափ սահմանափակման վտանգը: Պաշտպանը վերահաստատում է իր դիրքորոշումն առ այն, որ անհրաժեշտ է իրականացնել արդյունավետ համակարգային քայլեր՝ կալանքի կիրառման և շարունակականության պրակտիկան միջազգային և ներպետական կառուցակարգերին և չափանիշներին լիարժեք համապատասխանեցնելու, հիմնավոր և բավարար հիմքերի բացակայության պայմաններում կալանքի կիրառման դեպքերը բացառելու, կալանքի տակ գտնվող անձանց մասնակցությամբ քրեական վարույթներն առաջնահերթ քննելու ուղղությամբ պատշաճ ջանասիրություն դրսևորելու նպատակով:

8. Այլընտրանքային խափանման միջոցների կիրառման ընթացքում ծագած խնդիրներ

Այլընտրանքային խափանման միջոցների համակարգը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով զգալիորեն ընդլայնվել է: Մասնավորապես, գործող օրենսգրքով այլընտրանքային խափանման միջոցներն են տնային կալանքը, վարչական հսկողությունը, գրավը, պաշտոնավարման կասեցումը, բացակայելու արգելքը, երաշխավորությունը, դաստիարակչական հսկողությունը և զինվորական հսկողությունը:

Թեև գործող քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված խափանման միջոցներից որոշները սահմանված են եղել նաև նախորդ օրենսգրքով, այդուհանդերձ, նախատեսված չի եղել դրանց համակարգային տարանջատումը երկու տեսակի՝ կալանքի և կալանքին այլընտրանք հանդիսացող խափանման միջոցների: Այս փոփոխությունը նպատակ է ունեցել նվազեցնել քրեական արդարադատության համակարգում ամենախիստ խափանման միջոցի՝ կալանքի կիրառումը, քրեական վարույթն իրականացնող մարմիններին հնարավորություն ընձեռելով առաջնորդվել նվազագույնի

սկզբունքով և օրենսդրությամբ նախատեսված այլընտրանքային խափանման միջոցների ողջ համակարգը կիրառել առանձին կամ համակցված[120]:

Միևնույն ժամանակ, կարևոր է կրկին ընդգծել, որ ցանկացած խափանման միջոցի կիրառում ենթադրում է անձի իրավունքների որոշակի սահմանափակում, ուստի այն պետք է լինի համաչափ և միտված լինի բացառապես օրենքով նախատեսված նպատակների իրականացմանը, և ոչ թե պարզապես առաջացնի անձի իրավունքների հավելյալ սահմանափակում: Օրենսդրությամբ, միջազգային իրավակարգավորումներին համահունչ, խափանման միջոցներ կիրառելու, այդ թվում՝ դրանց տեսակներն ընտրելու, հետագայում դրանք փոխելու մեխանիզմի հիմքում դրված է դրա պիտանելիության սկզբունքը, և ցանկացած պարագայում, խափանման միջոցի կիրառման օբյեկտիվ անհրաժեշտությունը վերանալու դեպքում խափանման միջոցը ևս պետք է վերացվի:

Տարեկան հաղորդման նախապատրաստման շրջանակում Քննչական կոմիտեից ստացված տեղեկության համաձայն՝ 2025 թվականի ընթացքում քննիչի կողմից (դատախազի համաձայնությամբ) 204 դեպքում այլընտրանքային խափանման միջոցները վերացվել են միայն քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքով: Գլխավոր դատախազությունից ստացված տվյալների համաձայն՝ նույն ժամանակահատվածում դատախազը սեփական նախաձեռնությամբ որոշում է կայացրել 11 անձի նկատմամբ կիրառված տնային կալանքը և 9 անձի նկատմամբ կիրառված վարչական հսկողությունը վերացնելու մասին: Որոշումները կայացնելիս հաշվի են առավել քրեական հետապնդման մարմնի հետ մեղադրյալների համագործակցության, խոստովանական ցուցմունքներ տալու, պատճառված վնասը մասամբ կամ ամբողջությամբ վերականգնելու և այլ հանգամանքներ, որոնք էականորեն նվազեցրել են ապացուցման գործընթացին ապօրինի միջամտելու հավանականությունը, քրեական հետապնդումը բացառող հանգամանքների առկայությունը կամ քրեական հետապնդումները դադարեցվելու փաստը:

2025 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմ ստացվել են մի շարք բողոքներ և ահազանգեր՝ կապված այլընտրանքային խափանման միջոցներ կիրառման հետ:

Այսպես, ստացվել են մի շարք բողոքներ այն մասին, որ անձի նկատմամբ որպես խափանման միջոց տնային կալանքը կիրառված լինելու պայմաններում դատարանը բավարարել է անձի միջնորդությունը և թույլ տվել նրան որոշակի օրերի հաճախել բժշկական, այդ թվում՝ ատամնաբուժական հաստատություններ, դրա կատարումը հանձնարարելով և՛ ՀՀ ՆԳՆ ոստիկանությանը, և՛ ՀՀ ԱՆ Պրոբացիայի ծառայությանը, սակայն նշված մարմինները չեն ապահովել անձի ուղեկցումը բժշկական հաստատություններ:

Նշված բողոքների և ահազանգերի կապակցությամբ հաղորդակցություն է իրականացվել պետական իրավասու մարմինների հետ: Ըստ ստացված պարզաբանումների՝ Ոստիկանության և Պրոբացիայի ծառայության կողմից տվյալ անձանց ուղեկցումները չեն ապահովվել՝ նշված ծառայությունների գործառույթներում տնային կալանքի տակ գտնվող մեղադրյալներին բժշկական կենտրոն ուղեկցելու գործառույթ չլինելու պատճառաբանությամբ: Իրականացված լրացուցիչ գրագրության արդյունքում տեղեկություն է ստացվել այն մասին, որ հաշվի առնելով հարցի կարևորությունը՝ անհրաժեշտության դեպքերում տնային կալանքի տակ գտնվող անձանց ուղեկցումը բժշկական հաստատություններ իրականացվել է Պրոբացիայի ծառայության կողմից:

[120] Տնային կալանք և վարչական հսկողություն խափանման միջոցների կիրառման հաճախականությունը՝ կալանքի համեմատ, վերլուծվել են նախորդ պարագրաֆում:

Այս առումով գնահատելի է պետական իրավասու մարմինների հանձնառությունը՝ ի հայտ եկող խնդիրների լուծման կապակցությամբ հրատապ միջոցներ ձեռնարկելու ուղղությամբ, սակայն Պաշտպանն արձանագրում է, որ անհրաժեշտ է տնային կալանքի կիրառման կապակցությամբ իրավասու մարմինների գործառույթներն ամրագրել օրենսդրական մակարդակում՝ հստակ դերաբաշխմամբ, ինչը տեսականորեն կբացառի անձի իրավունքների ապահովման խոչընդոտներն իրավական անորոշության պատճառով:

Վերոգրյալից բացի, ստացված բողոքներից մեկով փաստաբանը հայտնել է, որ վստահորդի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել տնային կալանքը: Ըստ պնդման՝ վստահորդն ունի առողջական խնդիրներ, գտնվում է բժշկի մշտական հսկողության ներքո, ստանում է համապատասխան դեղորայք, և պարբերաբար անհրաժեշտություն է առաջանում հետազոտվել բժշկական կենտրոնում: Նշել է, որ հերթական հետազոտություն իրականացնելու համար միջնորդություն է ներկայացրել վարույթն իրականացնող քննիչին՝ խնդրելով թույլատրել մեղադրյալին համապատասխան անձանց ուղեկցությամբ տեղափոխել բժշկական կենտրոն՝ դիագնոստիկ հետազոտություններ իրականացնելու համար, և ներկայացրել է անհրաժեշտ բժշկական փաստաթղթերը, սակայն միջնորդությունը մերժվել է:

Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաղորդման նախապատրաստական շրջանում պետական մարմիններից ստացված տվյալները նույնպես վկայում են այն մասին, որ այլընտրանքային խափանման միջոցների կիրառման պրակտիկան առաջ է բերում մի շարք խնդրահարույց իրավիճակներ:

Քննչական կոմիտեից ստացված տվյալների համաձայն՝ 2025 թվականի ընթացքում այլընտրանքային խափանման միջոցի կիրառման ընթացքում անձի այլ հիմնարար իրավունքների իրացմանն առնչվող խնդիրների վերաբերյալ ստացվել են 16 դիմում-միջնորդություններ, որոնցից 11-ը համապատասխան բուժօգնություն ստանալու, 3-ը՝ ուսումնական հաստատություն հաճախելու թույլտվություն ստանալու, 2-ը՝ անձի աշխատանքային գործունեությամբ պայմանավորված, բոլոր միջնորդությունները բավարարվել են:

Միևնույն ժամանակ, Գլխավոր դատախազությունից նույն հարցի վերաբերյալ ստացված տվյալների համաձայն՝ 2025 թվականի ընթացքում ստացվել է 16 բողոք, որոնք հիմնականում վերաբերել են համապատասխան բուժօգնություն ստանալու իրավունքին՝ դրանցից 10-ը մերժվել է, 6-ը՝ բավարարվել:

Հարկ է ընդգծել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը արձանագրել է, որ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածով սահմանված խոշտանգումների և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արգելքի վերաբերյալ համապատասխան ընդհանուր սկզբունքները, մասնավորապես՝ ազատությունից զրկված անձանց բժշկական օգնություն ցուցաբերելու պետության պարտավորությունը, վերաբերելի է նաև տնային կալանքի կրման ընթացքին: Այս առումով Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է, որ տնային կալանքի ընթացքում անձին համապատասխան բժշկական օգնությունից զրկող միջոցառումները կարող են հանգեցնել անձի իրավունքների խախտման[121]:

Միևնույն ժամանակ, Եվրոպական դատարանն արձանագրել է, որ պետությունը պարտավոր է ապահովել, որպեսզի անձը պահվի այնպիսի պայմաններում, որոնք համապատասխան են մարդկային արժանապատվության նկատմամբ հարգանքի

[121] Տե՛ս օրինակ, Նարբուտասն ընդդեմ Լիտվայի (case of Narbutas v. Lithuania) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2024 թվականի մարտի 19-ի վճիռը գանգատ թիվ 14139/21, կետեր 170-171:

սկզբունքին, ինչպես նաև, որպեսզի խափանման միջոցի կատարման եղանակն ու ձևը նրան չենթարկեն այնպիսի տառապանքի կամ զրկանքների, որոնց ինտենսիվությունը գերազանցում է ազատությունից զրկմանը ներհատուկ, անխուսափելի տառապանքի մակարդակը: Միաժամանակ, հաշվի առնելով ազատազրկման գործնական պահանջները, պետությունը պարտավոր է պատշաճ կերպով ապահովել տվյալ անձի առողջությունն ու բարեկեցությունը՝ ի թիվս այլ միջոցների, նրան տրամադրելով անհրաժեշտ բժշկական օգնություն[122]:

Նշվածը վկայում է, որ պետությունը պարտավոր է երաշխավորել բավարար պայմաններ իր վերահսկողության ներքո գտնվող անձանց անհրաժեշտ բժշկական օգնություն ստանալու, կրթությունը շարունակելու և ցանկացած այլ այնպիսի գործողություն իրականացնելու, որը վերաբերելի է անձի հիմնարար իրավունքներին և, ըստ էության, չի կարող հանդիսանալ խոչընդոտ քրեական վարույթի պատշաճ քննության համար:

Այս առումով հարկ է կրկին ընդգծել, որ շրջանառության է դրվել «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ, որով առաջարկվում է քրեական դատավարության օրենսգրքում կատարել լրացում և սահմանել իրավակարգավորում այն մասին, որ դատարանի կողմից տնային կալանք կիրառելիս՝ նամակագրությունից, հեռախոսային խոսակցություններ, հաղորդակցության այլ ձևերից (այդ թվում՝ փոստային առաքանուց) օգտվելու սահմանափակումները կարող են չտարածվել կրթության շարունակականությունն ապահովելու համար կրթական ծրագրերով հեռավար (դիստանցիոն) կրթությունը շարունակելու դեպքերի նկատմամբ: Նշվածը դրական առաջընթաց է քննարկվող հարցի համատեքստում և Պաշտպանը կարևորում է օրենսդրական փոփոխությունները շուտափույթ կյանքի կոչելը:

Պաշտպանի աշխատակազմում ստացվել են նաև բողոքներ առ այն, որ դատարանի որոշմամբ անձի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել տնային կալանքը, իսկ դրա հաշվարկի սկիզբ է սահմանվել համապատասխան էլեկտրոնային հսկողության միջոցներ ձեռնարկելու պահը, սակայն Պրոբացիայի ծառայության կողմից էլեկտրոնային հսկողության միջոցները կիրառվել են տևական ժամանակ անց: Ընդ որում, ըստ որոշ բողոքների, վարույթն իրականացնող մարմնի և Ոստիկանության ծառայողները մեղադրյալներին հորդորել են հետագա բացասական հետևանքներից խուսափելու համար, չնայած դեռևս էլեկտրոնային հսկողության միջոցներ կիրառված չլինելուն, այդ ընթացքում չբացակայել տանից՝ խափանման միջոցի փաստացի կիրառման բացակայության պայմաններում սահմանափակելով անձի ազատ տեղաշարժի իրավունքը:

Նույնաբնույթ բողոքներից մեկով փաստաբանը հայտնել է, որ դատարանի կողմից տնային կալանք կիրառելու մասին որոշում կայացվելուց հետո անձը ողջամտորեն ենթադրել է, որ այդ պահից սկսած չպետք է դուրս գա տանից և ենթարկվել է դատական ակտով սահմանված պահանջներին, մինչդեռ հետագայում պարզվել է, որ նշված ժամանակահատվածը չի հաշվվել տնային կալանքի ժամկետի մեջ, իսկ ժամկետը սկսել է հոսել մոտ 26 օր անց՝ Պրոբացիայի ծառայության կողմից էլեկտրոնային հսկողության միջոցներ կիրառելուց հետո միայն:

Հարկ է ընդգծել, որ «Պրոբացիայի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ այլընտրանքային խափանման միջոց կիրառելու մասին իրավասու մարմնի

[122] Տե՛ս օրինակ, Կուդլան ընդդեմ Լեհաստանի (case of Kudła v. Poland) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2000 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը գանգատ թիվ 30210/96, կետ 94:

որոշումն ստանալուց հետո պրոբացիայի ծառայողն անհապաղ, բայց ոչ ուշ, քան երեք աշխատանքային օրվա ընթացքում պարզում է պրոբացիայի շահառուի գտնվելու վայրը, նրա հետ կապ է հաստատում, նրան պատշաճ ծանուցում է տարածքային մարմին ներկայանալու վերաբերյալ, իսկ տնային կալանք այլընտրանքային խափանման միջոցի դեպքում այցելում է պրոբացիայի շահառուի բնակության վայր, կազմում պրոբացիայի շահառուի անձնական գործ, վերահսկողության պլան, լրացնում հաշվառման քարտ: Վերահսկողության սկիզբը հաշվվում է պրոբացիայի շահառուին հաշվառման վերցնելու պահից:

Նշված կարգավորումն ինքնանպատակ չէ և նման սեղմ՝ երեք աշխատանքային օրվա ժամկետը նախատեսված է խափանման միջոցի պատշաճ ապահովման, այդ թվում՝ քրեական վարույթի ընթացքում մեղադրյալի կողմից իր վրա դրված պարտականությունների պատշաճ կատարումն ապահովելու նպատակով: Հակառակ պարագայում, երբ դատական ակտով ընտրված խափանման միջոցի փաստացի կիրառումն իրականացվում է օրենսդրությամբ սահմանված ժամկետից տևական ժամանակ անց, այն կարող է ոչ միայն առաջացնել ոչ իրավաչափ սահմանափակումներ մեղադրյալի համար, այլև փաստացի չծառայել խափանման միջոցի կիրառման օրենսդրական նպատակին: Այս առումով պետք է ընդգծել, որ թեև առկա է անձի նկատմամբ սահմանափակման կիրառման իրավական հիմք և համապատասխան որոշում, սակայն դրա կիրառման ժամկետների էական շեղումն անձի համար առաջացնում է անորոշություն՝ իր նկատմամբ կիրառված խափանման միջոցի տևողության առումով:

Տարեկան հաղորդման նախապատրաստական աշխատանքների ընթացքում Արդարադատության նախարարությունից ստացված տեղեկության համաձայն՝ հաշվետու ժամանակահատվածում եղել են բացառիկ դեպքեր, երբ այլընտրանքային խափանման միջոց կիրառելու մասին դատարանի որոշումն ստանալուց հետո դրա կատարումը չի ապահովվել «Պրոբացիայի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված 3 աշխատանքային օրվա ընթացքում՝ տեխնիկական կամ ծրագրային խնդիրների պատճառով:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր նախադեպային պրակտիկայում սահմանել է, որ անձի նկատմամբ սահմանափակումներ կիրառելիս դրա «օրենքին համապատասխան կիրառումը» ոչ միայն պահանջում է, որ քննարկվող միջոցը որոշակի հիմք ունենա ներպետական օրենսդրության մեջ, այլև վերաբերում է վիճարկվող օրենքի որակին՝ պահանջելով, որ այն հասանելի լինի շահագրգիռ անձանց և կանխատեսելի լինի դրա հետևանքների առումով[123]: Բացի դրանից, Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը մի քանի գործերով արձանագրել է նաև, որ անձի իրավունքները կարող են խախտվել նաև այն դեպքում, երբ ազատությունից փաստացի զրկումը պայմանավորված է պետական մարմինների գործողություններով, ընթացակարգերով և փոխգործակցությամբ կամ դրանց թերի լինելով[124]:

Վերոգրյալից բացի, Պաշտպանի աշխատակազմում ստացվել են նաև մի շարք բողոքներ առ այն, որ մեղադրյալի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը

---

[123] Տե՛ս օրինակ, Դե Տոմազոն ընդդեմ Իտալիայի (case of De Tommaso v. Italy) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2017 թվականի փետրվարի 23-ի վճիռը գանգատ թիվ 43395/09, կետ 106, Դե Տոմազոն ընդդեմ Իտալիայի (case of De Tommaso v. Italy) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2000 թվականի հուլիսի 31-ի վճիռը գանգատ թիվ 34578/97, կետ 63:

[124] Տե՛ս օրինակ, Ասսանիդզեն ընդդեմ Վրաստանի (case of Assanidze v. Georgia) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2004 թվականի ապրիլի 8-ի վճիռը գանգատ թիվ 71503/01, կետեր 171–174, Կրեանան ընդդեմ Ռումինիայի (case of Creangă v. Romania) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2012 թվականի փետրվարի 23-ի վճիռը գանգատ թիվ 29226/03, կետեր 87, 93:

դադարեցված, իսկ կիրառված խափանման միջոցները, այդ թվում՝ այլընտրանքային խափանման միջոց բացակայելու արգելքը վերացված լինելու պայմաններում իրավասու մարմինների կողմից միջոցներ չեն ձեռնարկվել նրա՝ ՀՀ-ից ելքի իրավունքի սահմանափակումը ՍԷԿՏ համակարգից վերացնելու ուղղությամբ, ինչի հետևանքով ևս խախտվում է անձի ազատ տեղաշարժի իրավունքը: Նշված խնդիրներին մանրամասն անդրադարձ է կատարվել սույն բաժնի 3-րդ գլխում:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ նկատի ունենալով այլընտրանքային խափանման միջոցների կիրառման ընթացքում գործնականում առաջացող խնդիրները՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ անհրաժեշտ է ձեռնարկել համակարգային միջոցներ՝ երաշխավորելու, որ յուրաքանչյուր խափանման միջոցի կիրառում լինի համաչափ և միտված լինի բացառապես օրենքով նախատեսված նպատակների իրականացմանը՝ ապահովելով այնպիսի պայմաններ, որոնք կբացառեն պետության վերահսկողության ներքո գտնվող անձանց սահմանադրական այլ իրավունքների անհամաչափ սահմանափակում: Տնային կալանքի տակ գտնվող անձանց այլ իրավունքների ապահովման կապակցությամբ իրավասու մարմինների գործառույթներն անհրաժեշտ է ամրագրել օրենսդրական մակարդակում՝ հստակ դերաբաշխմամբ, ինչը տեսականորեն կբացառի անձի իրավունքների ապահովման խոչընդոտներն իրավական անորոշության պատճառով:

Միևնույն ժամանակ, Պաշտպանն արձանագրում է, որ յուրաքանչյուր դեպքում խափանման միջոցների կիրառումը կամ վերացումը ապահովող պետական մարմինների կողմից համապատասխան ընթացակարգը պետք է իրականացվի օրենքով սահմանված կարգով և ժամկետներում՝ լինելով հստակ և կանխատեսելի քրեական վարույթի մասնակիցների համար:

9. Քրեական վարույթի նյութերին ծանոթանալու ժամկետներին ու կարգին, ինչպես նաև անձի՝ իր մասնակցությամբ կատարված ապացուցողական և վարութային այլ գործողության արձանագրությանը ծանոթանալուն, դրանց պատճեններն ու տեսաձայնագրությունները ստանալուն առնչվող գործնական խնդիրներ

Քրեական վարույթի նյութերին ծանոթանալու իրավունքը քրեական արդարադատության համակարգում արդար դատաքննության իրավունքի առանցքային բաղադրիչներից մեկն է և ուղղակիորեն առնչվում է արդյունավետ պաշտպանության իրականացման, կողմերի հավասարության և մրցակցային վարույթի սկզբունքների ապահովման հետ:

Մարդու իրավունքների պաշտպանի նախորդ տարեկան հաղորդումներում մանրամասն անդրադարձ է կատարվել քրեական վարույթի նյութերին ծանոթանալու ժամկետներին և կարգին առնչվող գործնական խնդիրներին: Հաղորդումներով մանրամասն ներկայացվել են ոլորտին առնչվող օրենսդրական կարգավորումները, ինչպես նաև միջազգային չափանիշներն ու նախադեպային իրավունքը:

2024 թվականի տարեկան հաղորդմամբ Պաշտպանը, հաշվի առնելով գործող օրենսդրությունը, Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը և միջազգային չափանիշները, արձանագրել է, որ վարույթն իրականացնող մարմինները պարտավոր են յուրաքանչյուր կոնկրետ գործի առանձնահատկություններից, ծավալից և բարդությունից ելնելով՝ տրամադրել բավարար ժամանակ՝ նյութերին ծանոթանալու և միջնորդություններ ներկայացնելու համար: Միևնույն ժամանակ ընդգծվել է, որ անթույլատրելի է առանց պատշաճ և բավարար հիմնավորման սահմանափակել վարույթի մասնակիցների

հասանելիությունը այն փաստաթղթերին, որոնք էական նշանակություն ունեն պաշտպանության կամ այլ դատավարական իրավունքների իրականացման համար, այդ թվում՝ այն դեպքերում, երբ վարույթի մասնակիցը չի տիրապետում հայերենին և անհրաժեշտ է ապահովել պատշաճ թարգմանություն:

Այդուհանդերձ, 2025 թվականի ընթացքում ևս Պաշտպանի աշխատակազմում, թեև ոչ մեծ քանակությամբ, ստացվել են բողոքներ՝ կապված քրեական վարույթի նյութերին ծանոթանալու ժամկետների և կարգի, վարույթի ընթացքում անձի մասնակցությամբ կատարված ապացուցողական և այլ վարութային գործողության պատճենները ստանալու հետ:

Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով փաստաբանը հայտնել է, որ վստահորդի կողմից դիմում է հասցեագրվել վարույթն իրականացնող մարմին, որով ի թիվս այլնի, հայտնել է, որ նախաքննության ավարտ հայտնելու պարագայում ցանկանում է վարույթն իրականացնող մարմին ներկայանալ և վարույթի նյութերին ծանոթանալ պաշտպանի հետ: Ըստ փաստաբանի՝ վարույթն իրականացնող քննիչը, տեղեկացված լինելով փաստաբանի՝ արձակուրդում գտնվելու և Հայաստանի Հանրապետությունից բացակայելու մասին, վերջինիս արձակուրդի ժամանակահատվածում ծանուցագրով տեղեկացրել է նախաքննության ավարտ հայտնելու մասին և վարույթի նյութերին ծանոթանալու նպատակով պաշտպանական կողմին հրավիրել է վարույթն իրականացնող մարմին:

Բողոքի քննարկման շրջանակում վարույթն իրականացնող մարմնից ստացվել է պարզաբանում այն մասին, որ վարութային գործողության ընթացքում փաստաբանը բանավոր տեղեկացվել է մոտակա օրերին վարույթն իրականացնող մարմնի՝ նախաքննության ավարտ հայտնելու մտադրության մասին, իսկ ավելի ուշ՝ փաստաբանը վարույթն իրականացնող մարմնի կողմից գրավոր իրազեկվել է նախաքննության ավարտի և քրեական վարույթի նյութերին ծանոթանալու ժամկետի մասին: Հատկանշական է, որ բողոքի քննարկման արդյունքում քրեական վարույթի նյութերը փաստաբանին տրամադրվել են էլեկտրոնային եղանակով:

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված մեկ այլ բողոքով քաղաքացին հայտնել է, որ իր կողմից ներկայացված հանցագործության մասին հաղորդման կապակցությամբ նախաձեռնվել է քրեական վարույթ: Նշել է, որ միջնորդություն է ներկայացրել որպես վկա իր մասնակցությամբ իրականացված հարցաքննությունների արձանագրությունների պատճենները և տեսաձայնագրություններն իրեն տրամադրելու մասին, որը վարույթն իրականացնող քննիչի որոշմամբ մերժվել է այն հիմնավորմամբ, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով հարցաքննության արձանագրության և տեսաձայնագրության տրամադրման կարգ սահմանված չէ: Բողոքի քննարկման շրջանակում ՀՀ դատախազության հետ հաղորդակցման արդյունքում պարզաբանում է ներկայացվել այն մասին, որ միջնորդություն ներկայացրած անձի բողոքը բավարարվել է և վարույթն իրականացնող մարմնին հանձնարարվել է ապահովել վկայի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 58-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով նախատեսված իրավունքի իրացման համար անհրաժեշտ պայմաններ:

Տարեկան հաղորդման նախապատրաստման ընթացքում քննարկվող հարցի վերաբերյալ Դատախազությունից տեղեկություններ են ստացվել այն մասին, հաշվետու ժամանակահատվածում քրեական վարույթի նյութերին ծանոթանալու համար բավարար ժամանակ չտրամադրելու վերաբերյալ ստացվել է 1 բողոք, որը բավարարվել է:

Այսպիսով, քննարկվող խնդրի կապակցությամբ 2025 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմում ստացված ոչ մեծ քանակությամբ բողոքների և

ահազանգերի հաշվառմամբ՝ Պաշտպանն արձանագրում է, որ սույն ոլորտում առկա է որոշակի դրական դինամիկա՝ գնահատելով նաև գործնականում առաջացող խնդիրների լուծմանն ուղղված պետական իրավասու մարմինների պատրաստակամությունն ու ձևավորված արդյունավետ համագործակցությունը:

Միևնույն ժամանակ, Պաշտպանն ընդգծում է, որ քրեական վարույթ իրականացնող մարմինները պետք է դրսևորեն պատշաճ հետևողականություն Եվրոպական դատարանի չափանիշների և ներպետական օրենսդրության խստագույնս պահպանմամբ վարույթի մասնավոր մասնակիցներին քրեական վարույթի նյութերին ծանոթանալու և միջնորդություններ ներկայացնելու համար բավարար ժամանակ և հնարավորություն տրամադրելու ուղղությամբ՝ բացառելով վարույթին ներգրավված անձանց հասանելի փաստաթղթերն ու տեսաձայնագրությունները չտրամադրելու դեպքերը:

10. Քրեական վարույթներով քննության ողջամիտ ժամկետների պահպանմանն առնչվող խնդիրներ

Քրեական վարույթներով ողջամիտ ժամկետում քննության իրականացումն ունի ինչպես սահմանադրական, այնպես էլ միջազգային իրավական հիմքեր: Սույն հարցին առնչվող միջազգային և ներպետական իրավական կարգավորումները, ինչպես նաև առկա գործնական խնդիրները Մարդու իրավունքների պաշտպանի կողմից բազմիցս վերլուծվել և մանրամասնորեն ներկայացվել են նախորդ տարիների տարեկան հաղորդումներում:

Հաշվի առնելով 2024 թվականի տարեկան հաղորդմամբ արձանագրված խնդիրները՝ Պաշտպանը դրական է գնահատել իրավասու մարմինների կողմից կոնկրետ դեպքերով առաջացած խնդիրների լուծմանն ուղղված պատրաստակամությունը: Միևնույն ժամանակ արձանագրվել է, որ վարույթի ողջամիտ ժամկետում քննության իրականացմանն առնչվող՝ տարիների ընթացքում բարձրացված համակարգային խնդիրները շարունակել են արդիական մնալ նաև 2024 թվականի ընթացքում: Պաշտպանն առանցքային է համարել, որպեսզի իրավասու մարմինների կողմից շարունակաբար ձեռնարկվեն համարժեք և արդյունավետ միջոցներ՝ քրեական վարույթներով ողջամիտ ժամկետում քննությունն ապահովելու, այդ գործընթացին խոչընդոտող հանգամանքները բացահայտելու և դրանց վերացմանն ուղղված լուծումներ մշակելու ուղղությամբ:

2024 թվականի տարեկան հաղորդմամբ Պաշտպանը նաև մտահոգություն է հայտնել դատական նիստերի հետաձգման դեպքերի կապակցությամբ, որոնք, նաև, պայմանավորված են եղել ՀՀ ՆԳՆ ոստիկանության համապատասխան ուղեկցող ստորաբաժանումների ծանրաբեռնվածությամբ՝ ընդգծելով, որ պետությունը պարտավոր է ձեռնարկել արդյունավետ և համարժեք միջոցներ՝ քրեակատարողական հիմնարկներում պահվող ազատությունից զրկված անձանց ուղեկցումը դատարաններ անխափան ապահովելու նպատակով:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին 2025 թվականի տարեկան հաղորդման նախապատրաստման ընթացքում Ներքին գործերի նախարարությունից ստացվել է տեղեկություն, որ ՀՀ ՆԳՆ ոստիկանության ուղեկցող ստորաբաժանումների հաստիքային միավորների ոչ բավարար համալրվածության հետևանքով մինչև 2025 թվականի մարտ ամիսը հնարավոր չի եղել պատշաճ կազմակերպել և ամբողջությամբ

ապահովել քրեական վարույթն իրականացնող մարմիններից ստացվող հայտերի կատարումը: ՀՀ ՆԳՆ կողմից ձեռնարկված թիրախային միջամտությունների արդյունքում հարցը կարգավորվել է և 2025 թվականի մարտ ամսից սկսված ապահովվում է քրեական վարույթն իրականացնող մարմիններից ստացվող հայտերի գրեթե՝ 98%-ի կատարումը, ինչը շուրջ 27,5%-ով ավելի է 2026 թվականի հունվար-փետրվար ամիսների և 26%-ով նախորդ տարվա ցուցանիշից:

2025 թվականի ընթացքում ՀՀ ՆԳՆ ոստիկանության ուղեկցող ստորաբաժանումների գերծանրաբեռնվածության պատճառով մեղադրյալների պատշաճ ուղեկցումներ չկազմակերպելու առնչությամբ՝ մինչև հարցի կարգավորումը՝ 2025 թվականի մարտ ամիսը, Ներքին գործերի նախարարությունում ստացվել է 43 դիմում-բողոք՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմից՝ 5-ը, դատարաններից՝ 24-ը, մեղադրյալներից՝ 6-ը, մեղադրյալների պաշտպաններից՝ 5-ը, մեղադրյալների հարազատներից՝ 3-ը:

Ըստ ՆԳՆ-ից ստացված տեղեկատվության՝ 2024 թվականին Ոստիկանության համակարգում գործող ուղեկցող ստորաբաժանումները համալրվել են 22 նոր՝ «Ռենո մաստեր» մակնիշի հատուկ տրանսպորտային միջոցներով, իսկ 2025 թվականին ձեռք է բերվել ևս 12 նոր՝ «Ռենո մաստեր» մակնիշի հատուկ տրանսպորտային միջոցներ: Ներկայումս ՀՀ ՆԳՆ ոստիկանության ՀՈԳ վարչության ուղեկցող ստորաբաժանումների կողմից շահագործվում են 34 նոր՝ «Ռենո մաստեր» մակնիշի հատուկ տրանսպորտային միջոցները: Միևնույն ժամանակ, ուղեկցող ստորաբաժանումների հաստիքների 35.3%-ը թափուր է: Խնդրի լուծման նպատակով 2025 թվականի մարտ ամսից սկսված՝ ՀՀ ՆԳՆ ոստիկանության գվարդիայի ծառայողները 15-օրյա հաճախականությամբ գործուղվում են ՀՀ ՆԳՆ ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության հերթապահ ծառայության վարչության Երևան քաղաքի ուղեկցող աշխատանքների իրականացման բաժին:

Պաշտպանը բարձր է գնահատում ազատությունից զրկված անձանց դատարան ուղեկցումն ապահովելու ուղղությամբ ձեռնարկված միջոցները՝ ընդգծելով դրանց գործնական արդյունավետությունը: Սույն հարցի վերաբերյալ Պաշտպանին հասցեագրված բողոքների քանակի վերլուծությունը ևս փաստում է, որ իրականացված միջոցառումների արդյունքում արձանագրվել է նկատելի դրական դինամիկա:

Այդուհանդերձ, 2025 թվականին Պաշտպանի աշխատակազմում շարունակել են ստացվել վարույթների քննության ժամկետներին առնչվող բողոքներ, որոնց մեծ մասը վերաբերում է այն դեպքերին, երբ վարույթի շրջանակում որևէ անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցված չէ, և, բողոք ներկայացրած անձանց գնահատմամբ, վարույթն իրականացնող մարմինը, չունենալով հստակ ժամկետային սահմանափակումներ, չի դրսևորում բավարար ջանասիրություն քննությունն արդյունավետ իրականացնելու ուղղությամբ:

Օրինակ, Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով փաստաբանը, ի թիվս այլնի, հայտնել է, որ ողջամիտ ժամկետում վարույթի քննությանն աջակցելու նպատակով իր վստահորդին որպես վկա հարցաքննելու խնդրանքով միջնորդություն է ներկայացվել վարույթն իրականացնող քննիչին, որը բավարարվել է, սակայն գործողության իրականացման օրվա և ժամի վերաբերյալ տեղեկություն չի տրամադրվել, իսկ վստահորդին չի ուղարկվել համապատասխան ծանուցում, ինչի հետևանքով խախտվում է վարույթի քննության ողջամիտ ժամկետի սկզբունքը:

Վերոնշյալի կապակցությամբ գրավոր հաղորդակցություն է իրականացվել

Դատախազության հետ: Արդյունքում ստացվել է պարզաբանում այն մասին, որ հսկող դատախազի կողմից քննիչին որոշակի հանգամանքներ պարզելու ուղղությամբ տրվել է հանձնարարություն: Ավելի ուշ, տեղեկություն է ստացվել նաև առ այն, որ հսկող դատախազի հանձնարարության պահանջները մնացել են անկատար և վարույթն իրականացնող մարմնի անգործությունը վերացնելու նպատակով հսկող դատախազի կողմից միջնորդություն է ներկայացվել ՀՀ քննչական կոմիտե՝ վարույթն իրականացնող քննիչի և անմիջական ղեկավարի նկատմամբ ծառայողական քննություն իրականացնելու վերաբերյալ: Նաև նշվել է, որ վարույթի մեծածավալությունը հաշվի առնելով՝ ողջամիտ ժամկետում լրիվ, օբյեկտիվ և համակողմանի քննությունն ապահովելու նպատակով ստեղծվել է քննչական խումբ:

Միևնույն ժամանակ, ողջամիտ ժամկետում գործերի քննության վերաբերյալ ստացված մի շարք բողոքներ վերաբերել են քրեական վարույթի շրջանակում նշանակված փորձաքննությունների տևական ժամանակ իրականացմանը:

Մասնավորապես, բողոքներից մեկով Պաշտպանին է դիմել ավտոճանապարհատրանսպորտային պատահարի արդյունքում տուժած անձի ներկայացուցիչը և հայտնել, որ դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում որոշում է կայացվել դատաավտոտեխնիկական և տեսաձայնային համալիր փորձաքննություն նշանակելու մասին, որի եզրակացությունը դեռևս չի ստացվել: Նշել է, որ տուժած անձի բուժումը կազմակերպելու նպատակով չունեն բավարար ֆինանսական միջոցներ, իսկ ապահովագրական ընկերության կողմից փոխհատուցումը, ինչպես նաև պետական պատվերի շրջանակում տրամադրվող աջակցությունը կարող է տրամադրվել միայն քրեական վարույթով վերջնական որոշում կայացվելու պայմաններում, մինչդեռ քրեական վարույթի ընթացքը, փորձաքննության եզրակացությունը ստացված չլինելու պատճառաբանությամբ, ձգձգվում է:

Բողոքի քննարկման շրջանակում ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ից ստացվել է տեղեկություն այն մասին, որ համալիր փորձաքննությունն իրականացնող փորձագետների կողմից հետազոտվել են պատահարին մասնակից տրանսպորտային միջոցները, սակայն «Փորձաքննությունների ծառայություններ» ֆինանսական ծրագրի շրջանակներում 2025 թվականի համար հատկացված գումարի սպառված լինելու հետևանքով հնարավոր կլինի սեղմ ժամկետում ավարտել փորձաքննությունը լրացուցիչ ֆինանսավորման հարցի լուծման դեպքում: Նշվել է, որ 2025 թվականի սեպտեմբերի 30-ին փորձաքննությունների ծառայությունների մատուցման պայմանագրով նախատեսված գումարը ամբողջությամբ սպառվել է և ՊՈԱԿ-ի կողմից ՀՀ գլխավոր դատախազությանը հայտնվել է, որ պետության կարիքների համար ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրով նախատեսված գումարը, որը 2024 թվականի համեմատ կրճատվել էր 30 տոկոսի չափով, 2025 թվականի սեպտեմբերի 30-ի դրությամբ ամբողջությամբ սպառվել է, ինչն անհնարին է դարձնում նշանակված և կատարման ընթացքում գտնվող 4000-ից ավելի հետազոտելի օբյեկտների փորձաքննությունների ավարտման և եզրակացությունների տրամադրման գործընթացը: Առաջնորդվելով խնդրի շուտափույթ լուծման կարևորությունից՝ ՊՈԱԿ-ը գործընթացի օժանդակության նպատակով դիմել է նաև Հայաստանի Հանրապետության կառավարությանը և խնդրի լուծումը գտնվում է ՀՀ ֆինանսների նախարարության և այլ իրավասու գերատեսչությունների ուշադրության կենտրոնում:

Ավելի ուշ, բողոքի քննարկման շրջանակում, բողոք ներկայացրած անձը Պաշտպանի աշխատակազմ լրացուցիչ տեղեկություն է հայտնել այն մասին, որ քրեական վարույթի շրջանակում նշանակված փորձաքննության եզրակացությունը ստացվել է:

2025 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմում շարունակվել են ստացվել բողոքներ նաև դատական քննության փուլում գտնվող գործերի ձգձգումների, մասնավորապես՝ դատական նիստերի պարբերաբար հետաձգման և ուշ նշանակվելու վերաբերյալ: Կոնկրետ դատական վարույթին և դատավորի լիազորությունների իրականացմանը չմիջամտելու օրենսդրական պահանջից ելնելով՝ կոնկրետ գործերով ողջամիտ ժամկետում դատական քննության իրավունքի ենթադրյալ խախտման հարցերը Պաշտպանի կողմից քննության առարկա չեն դառնում: Այդուհանդերձ, երկրում մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակը ներկայացնելու համատեքստում կարևոր է նաև քրեական վարույթի քննության ողջամիտ ժամկետների պահպանման խնդրի ուսումնասիրությունը՝ միջազգային իրավական չափանիշների և օրենսդրական կանոնակարգումների դիտանկյունից: Այն մանրամասն վերլուծվել և ներկայացվել է դեռևս 2023 թվականի՝ Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդման շրջանակում[125]:

Այսպիսով, քրեական վարույթներով քննության ողջամիտ ժամկետների պահպանման խնդիրը, չնայած վերջին տարիներին ձեռնարկված որոշ թիրախային և արդյունավետ միջոցներին, շարունակում է պահպանել իր արդիականությունը: Իրավասու մարմինների կողմից ազատազրկված անձանց դատարան ուղեկցման կազմակերպման ուղղությամբ իրականացված քայլերը, ինչպես նաև համապատասխան նյութատեխնիկական և կազմակերպական կարողությունների ընդլայնումը, նպաստել են կոնկրետ խնդիրների մեղմացմանը և բողոքների թվի նվազմանը, ինչը վկայում է արձանագրված դրական դինամիկայի մասին:

Միևնույն ժամանակ, Պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նախաքննության փուլում, հատկապես քրեական հետապնդման բացակայության պայմաններում, ինչպես նաև փորձաքննությունների կազմակերպման և իրականացման ընթացքում առկա կազմակերպչական ու ֆինանսական խնդիրները շարունակում են բացասաբար ազդել քննության ողջամիտ ժամկետների ապահովման վրա՝ վտանգելով անձանց համապատասխան իրավունքի լիարժեք իրացումը:

Պաշտպանը խնդրահարույց է համարում քրեական վարույթի քննությունը ողջամիտ ժամկետում չիրականացնելը՝ պայմանավորված փորձաքննության կատարման անհնարինությամբ, այն էլ՝ ֆինանսական խնդիրների պատճառով, և կարևորում է, որպեսզի պետության կողմից, միջազգային և ներպետական չափանիշների հաշվառմամբ, շարունակաբար ձեռնարկվեն համակարգված միջոցներ՝ քրեական վարույթներով արդյունավետ քննության կազմակերպման, փորձաքննությունների անխափան իրականացման և վարույթն իրականացնող մարմինների պատասխանատվության բարձրացման ուղղությամբ:

[125] Տե՛ս Պաշտպանի 2023 թվականին Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների պաշտպանության վիճակի մասին հաղորդումը, էջեր 307-310, հասանելի է https://www.ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 20.03.2026թ. դրությամբ:

11. Քրեական արդարադատության ոլորտում միջազգային համագործակցության շրջանակում իրականացվող գործընթացների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս հանցանք կատարած անձանց ձերբակալմանն ու կալանավորմանն առնչվող գործնական խնդիրներ

Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների միջև կարևոր համագործակցային ուղղություններից են դատապարտյալների փոխանցումն ու հանցանք կատարած անձանց հանձնումը, որոնք իրականացվում են մի շարք բազմակողմ և երկկողմ միջազգային պայմանագրերի հիման վրա: Քրեական արդարադատության ոլորտում միջազգային-իրավական համագործակցության շրջանակում իրականացվող գործընթացները, ինչպես նաև դրանց ընթացքում անձանց իրավունքների ապահովումը, գտնվում են ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի մշտական ուշադրության ներքո:

Մարդու իրավունքների պաշտպանն իր նախորդ տարիների տարեկան հաղորդումներում, անդրադարձել է «Դատապարտյալների փոխանցման մասին» 1983 թվականի կոնվենցիայի նպատակներին, դրանից բխող պարտավորությունների իրագործման գործնական խնդիրներին, ինչպես նաև դատապարտյալների փոխանցման գործընթացին վերաբերող բողոքներին:

2024 թվականի տարեկան հաղորդմամբ Պաշտպանն արձանագրել է, որ «Քրեական վարույթներով իրավական օգնության մասին» ՀՀ օրենքի ընդունումը դրական և կարևոր քայլ է ոլորտում արդյունավետ պրակտիկայի ձևավորման տեսանկյունից: Միևնույն ժամանակ վերահաստատվել է այն դիրքորոշումը, ըստ որի՝ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում դատապարտյալի փոխանցման հարցը քննարկելիս առաջնահերթ պետք է հաշվի առնվեն նրա սոցիալական կապերը տվյալ պետությունում, ինչը էական նշանակություն ունի վերասոցիալականացման և կրկնահանցագործության ռիսկի նվազեցման համար, իսկ փոխանցումը մերժելու դեպքում անհրաժեշտ է ներկայացնել բավարար հիմնավորումներ:

Հարկ է նշել, որ 2025 թվականի ընթացքում ևս, Պաշտպանի աշխատակազմում շարունակվել է օտարերկրյա պետություններում դատապարտված անձանց կողմից պատժի չկրած մասը Հայաստանի Հանրապետությունում կրելու հարցի վերաբերյալ նախկինում ներկայացված բողոքների ուսումնասիրությունը, ինչպես նաև ստացվել են նոր բողոքներ՝ այլ պետություններում ազատազրկման դատապարտված ՀՀ քաղաքացիների փոխանցման գործընթացին առնչվող խնդիրների վերաբերյալ: Նշված դիմումների շրջանակում գրագրություն է իրականացվել թե՛ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինների, թե՛ օտարերկրյա գործընկեր կառույցների հետ:

2025 թվականի տարեկան հաղորդման նախապատրաստական աշխատանքների ընթացքում պրակտիկայի ամփոփման նպատակով Արդարադատության նախարարությունից Պաշտպանի աշխատակազմ տեղեկություն է ներկայացվել այն մասին, որ 2025 թվականին օտարերկրյա պետությունում դատապարտված 68 ՀՀ քաղաքացի դիմել է Արդարադատության նախարարություն՝ պատժի մնացած մասը Հայաստանի Հանրապետությունում կրելու նպատակով, որոնցից բավարարվել է 11-ը:

2024 թվականի տարեկան հաղորդմամբ Պաշտպանը նաև արձանագրել է, որ թեև Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս հանցանք կատարած անձանց ձերբակալման, կալանավորման և դատապարտյալների փոխանցման գործընթացներում նկատվում է էական դրական առաջընթաց, առանձին իրավունքների ապահովմանն առնչվող կարգավորումներ դեռևս կարիք ունեն առավել մանրամասն կարգավորման: Այդ համատեքստում ընդգծվել է «Քրեական վարույթներով իրավական օգնության մասին» ՀՀ

օրենքի 41-րդ հոդվածում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը՝ անձի արտաքին աշխարհի հետ կապի, այդ թվում՝ հաղորդակցության իրավունքի պաշտպանության երաշխիքների ուժեղացման նպատակով[126]:

Հարկ է նշել, որ 2025 թվականի ընթացքում ևս Պաշտպանի աշխատակազմում ստացվել են բողոքներ՝ կապված քննարկվող հարցի հետ: Ստացված բողոքներն ու ահազանգերը կրկին հիմնականում վերաբերել են օտարերկրյա պետության կողմից հետախուզվելու հիմքով ձերբակալված կամ կալանավորված անձանց փաստաբանի ներգրավման կամ մերձավոր ազգականների հետ տեսակցության ապահովմանը: Նշված իրավունքների ապահովման կարևորության հաշվառմամբ՝ փաստաբանի ներգրավման և վստահորդի հետ անխոչընդոտ տեսակցությունն ապահովելու վերաբերյալ բողոքները բանավոր և գրավոր ընթացակարգով քննարկվել են հանձնման վերաբերյալ հարցումը քննարկող իրավասու մարմնի ներկայացուցիչների հետ և մեծամասամբ ստացել են դրական լուծում:

Առանցքային համարելով պետական իրավասու մարմինների հետ կայուն համագործակցությունը՝ Պաշտպանն արձանագրում է, որ առկա է օրենսդրական կարգավորումների լավարկման անհրաժեշտություն: Մասնավորապես, «Քրեական վարույթներով իրավական օգնության մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ մասի կարգավորումների համաձայն՝ արգելանքի վերցված հայտնաբերված անձի տեսակցության հարցը լուծում է հանձնման մասին հարցումը քննարկող՝ նույն օրենքի 32-րդ հոդվածով սահմանված իրավասու մարմինը: Արգելանքի վերցված ապաստան հայցողները նախապես տեղեկացվում են իրենց ծագման երկրների ներկայացուցիչների այցելությունների մասին, որոնք թույլատրվում են միայն ապաստան հայցողի համաձայնության դեպքում:

Հատկանշական է, որ սույն կարգավորումը չի պարունակում բավարար հստակություն՝ տեսակցության թույլտվության ծավալի և տևողության վերաբերյալ: Մասնավորապես, օրենքով սահմանված չէ, թե տեսակցության թույլտվությունը յուրաքանչյուր դեպքում տրամադրվում է մեկանգամյա՞, թե՞ տարածվում է անազատության մեջ պահվելու ողջ ժամանակահատվածի վրա, ինչպես նաև հստակեցված չէ այն անձանց շրջանակը, որոնց նկատմամբ կարող է կիրառվել թույլտվություն կամ սահմանափակում:

Պաշտպանը կրկին արձանագրում է, որ կալանավորված անձի իրավունքների համապարփակ երաշխավորման տեսանկյունից անհրաժեշտ է օրենսդրական կարգավորումները սահմանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածի տրամաբանությանը համահունչ: Մասնավորապես, որպեսզի կալանքի հարցը քննարկելիս հանձնման մասին հարցումը քննող իրավասու մարմինը, անհրաժեշտ փաստաթղթերին զուգահեռ, դատարան ներկայացնի նաև հայտնաբերված անձի՝ այլ անձանց հետ հաղորդակցվելու իրավունքը սահմանափակելու վերաբերյալ պատշաճ հիմնավորված միջնորդություն: Նման ընթացակարգի առկայության պայմաններում անձի արտաքին աշխարհի հետ կապի, այդ թվում՝ հաղորդակցության իրավունքի երաշխավորման համար կսահմանվեն առավել բարձր երաշխիքներ, իսկ որոշակի սահմանափակումներ հնարավոր կլինի կիրառել բացառապես այն դեպքում, երբ դրա անհրաժեշտությունը հիմնավորվում է

[126] Տե՛ս 2024 թվականին Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների պաշտպանության վիճակի մասին հաղորդումը, էջեր 218-223, հասանելի է https://ombuds.am/images/files/4d1335361f1f7e9fbcc1cfc10679701e.pdf հղումով, 20.03.2026թ. դրությամբ:

բավարար փաստական հանգամանքներով և հաստատվում է դատարանի պատճառաբանված որոշմամբ՝ հստակ սահմանելով ժամկետը և անձանց շրջանակը:

12. Քրեական վարույթի շրջանակում անձանց պատշաճ ծանուցմանն առնչվող գործնական խնդիրներ

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված՝ վարույթն իրականացնող մարմնի՝ վարութային գործողության կամ դատական նիստի մասին պատշաճ ծանուցելու պարտականությանը, ծանուցման եղանակներին և կարգին Պաշտպանն անդրադարձ է կատարել նախորդ տարեկան հաղորդումների շրջանակում: Դրա շրջանակում վերլուծվել են վերաբերելի օրենսդրական կարգավորումները և անդրադարձ է կատարվել գործնականում դրանց չպահպանման դեպքերին և հետևանքներին:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ արձանագրվել է, որ անհրաժեշտ է շարունակել պրակտիկայի կատարելագործումը՝ հետևողականորեն ապահովելով անձանց ծանուցումը բացառապես Քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և գործնականում բացառել դեպքերը, երբ անձը հարկադրաբար ներկայացվում է վարույթն իրականացնող մարմին առանց օրենքով սահմանված կարգով նախապես պատշաճ ծանուցված լինելու: Օրենսդրական պահանջների պահպանման պայմաններում միայն կարող է ապահովվել անձանց պատշաճ և ժամանակին ծանուցումը ինչպես վարույթն իրականացնող մարմնի և նախաձեռնված վարույթի, այնպես էլ իրենց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ:

2025 թվականի տարեկան հաղորդման նախապատրաստական աշխատանքների շրջանակում ՀՀ քննչական կոմիտե հասցեագրված հարցմանն ի պատասխան՝ տեղեկություն է ստացվել այն մասին, որ 2025 թվականի ընթացքում անձին հարցաքննության հրավիրելու դատավարական կարգի խախտման, մասնավորապես՝ թղթային կամ էլեկտրոնային ծանուցագրերի ձևը չպահպանելու կամ ծանուցագրում անձի դատավարական կարգավիճակը չմատնանշելու կամ սխալ մատնանշելու վերաբերյալ ստացվել են 10 բողոքներ, որոնց կապակցությամբ իրականացվել են 3 նախնական ուսումնասիրություններ: Նշված 3 նախնական ուսումնասիրություններից 2-ը դադարեցվել են վարույթն իրականացնող քննիչների արարքում կարգապահական խախտման և կարգապահական վարույթ հարուցելու հիմքերի բացակայության պատճառաբանությամբ, իսկ 1-ը՝ գտնվում է ուսումնասիրության փուլում:

Միևնույն ժամանակ, 2025 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում տվյալ հարցի առնչությամբ շարունակել են ստացվել բողոքներ և ահազանգեր: Մասնավորապես, բողոքները վերաբերել են առանց պատշաճ ծանուցման անձանց, այդ թվում՝ որպես վկա, վարույթն իրականացնող մարմին ներկայացնելու պրակտիկային: Նշվածի հետևանքով Պաշտպանին են դիմել վարույթն իրականացնող մարմին ներկայացված անձի մերձավոր ազգականները, փաստաբանները՝ հայտնելով, որ տեղեկություն չունեն անձի գտնվելու վայրի, կարգավիճակի և վարույթն իրականացնող մարմին ներկայացնելու պատճառների վերաբերյալ:

Նմանատիպ ահազանգերի կապակցությամբ անմիջապես ձեռնարկվում են միջոցներ՝ անձի գտնվելու վայրն ու հիմքերը պարզելու և նշված տեղեկությունն իրավասու անձանց փոխանցելու ուղղությամբ: Հաշվետու ժամանակահատվածում ևս արձանագրվել են դեպքեր, այդ թվում՝ իրականացված այցերի ընթացքում, երբ Պաշտպանի միջամտության արդյունքում իր վստահորդի գտնվելու վայրը պարզելուց հետո փաստաբանը ներկայանում է քննչական բաժին, սակայն նրա մուտքը չի ապահովվում՝

պատճառաբանությամբ, որ տվյալ անձը քննչական մարմնում հարցաքննվում է վկայի կարգավիճակով, և հրաժարվել է փաստաբանի ներկայությամբ հարցաքննվելու իր իրավունքից:

Որոշ դեպքերում վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացվում է նույնաբնույթ պարզաբանում առ այն, որ անձի հետ դեռևս ապացուցողական կամ վարութային այլ որևէ գործողություն չի իրականացվում, կամ նա հարցաքննվում է վկայի դատավարական կարգավիճակով, նախքան բուն հարցաքննությունը նրան պարզաբանվել է փաստաբանի ներկայությամբ հարցաքննվելու իր իրավունքը, սակայն վերջինը հրաժարվել է: Մինչդեռ, տվյալ անձի մերձավոր ազգականները կամ փաստաբանն իրենց մտահոգությունն են հայտնում առ այն, որ անձի նկատմամբ կարող է փաստացի քրեական հետապնդում իրականացվել, քանի որ նա տևական ժամանակ գտնվում է վարույթն իրականացնող մարմնում, զրկված է առանց թույլտվության այնտեղից հեռանալու հնարավորությունից և խնդրում են Պաշտպանի աջակցությունը, որպեսզի ապահովվի փաստաբանի մուտքը քննչական մարմին, և նրա ներկայությամբ անձը հրաժարվի փաստաբանի մասնակցությամբ հարցաքննվելուց:

Հարկ է կրկին ընդգծել քննարկվող հարցի վերաբերյալ 2024 թվականի տարեկան հաղորդմամբ ներկայացված արձանագրումները. այսպես, ծանուցագրին և դրա բովանդակությանը վերաբերող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 150-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսվում է, որ տուժողին կամ վկային հասցեագրված ծանուցագրում նշվում է, որ վարութային գործողությանն առանց փաստաբանի ներկայանալու դեպքում փաստաբան պահանջելու հիմքով այդ վարութային գործողությունը ենթակա չէ հետաձգման:

Բացի այդ, նույն օրենսգրքի՝ վկայի հարցաքննության կարգին վերաբերող 218-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ եթե վկան հարցաքննության է ներկայացել փաստաբանի հետ, ապա փաստաբանն իրավունք ունի մասնակցելու հարցաքննությանը և քննիչի ներկայությամբ կարճատև խորհրդատվություն տալու վկային նրա կարգավիճակին վերաբերող հարցերով: Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ եթե փաստաբանի հետ հարցաքննությանը ներկայանալու իրավունքի մասին պատշաճ ծանուցված վկան հարցաքննությանը ներկայացել է առանց փաստաբանի, ապա քննիչը պարտավոր չէ փաստաբան հրավիրելու հիմքով հետաձգել հարցաքննությունը, բացառությամբ այն դեպքի, երբ վկան գտնում է, որ փաստացի կասկածվում է հանցագործության մեջ:

2025 թվականի ընթացքում հաճախ են արձանագրվել դեպքեր, երբ անձը վարույթն իրականացնող մարմնում «հայտնվում» է վկայի դատավարական կարգավիճակով՝ առանց պատշաճ ծանուցման: Օրինակ՝ վարույթն իրականացնող մարմինը խուզարկություն է իրականացնում որևէ անձի բնակության, գործունեության կամ գտնվելու այլ վայրում, այնուհետև, խուզարկության ավարտից անմիջապես հետո, նրան «հրավիրում» են ներկայանալ վարույթն իրականացնող մարմին: Բնականաբար, դեպքերի գերակշիռ մասում անձինք կատարում են տվյալ պահին վարույթն իրականացնող մարմին ներկայանալու իրավապահ մարմնի ներկայացուցչի պահանջը (որքան էլ դա հետագայում ձևակերպվի որպես խնդրանք կամ հրավեր), քանի որ մանրամասն չեն տիրապետում իրենց իրավունքներին, այդ թվում՝ տեղեկացված չեն, որ վարույթն իրականացնող մարմին ներկայանալ «հրավիրելու» ընթացակարգ առկա չէ, և կարող են վարույթն իրականացնող մարմին ներկայանալու համար պահանջել օրենքով սահմանված կարգով իրենց հանձնել ծանուցագիր:

Ընդ որում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 151-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Ծանուցագիրը հանձնվում է վարութային գործողության կամ դատական նիստի օրվանից ոչ ուշ, քան երկու օր առաջ: Եթե վարութային գործողությունը կամ դատական նիստը ծրագրված չէ, կամ դատալսումները չեն կարող հետաձգվել, ապա ծանուցագիրը կարող է հանձնվել ներկայանալու նախորդ օրը կամ ներկայանալուց անմիջապես առաջ՝ դրանում նշելով ծանուցագիրն ուշ հանձնելու պատճառը:»:

Բացի այդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 150-րդ հոդվածը սահմանում է, որ ծանուցագրում պետք է նշվեն հրավիրող մարմնի կամ պաշտոնատար անձի տվյալները, հրավիրվող անձի անունը, ազգանունը, հասցեն և կարգավիճակը, ծանուցվողի վերաբերելի տվյալները, եթե հրավիրվողը ծանուցվում է այլ անձի կամ հաստատության միջոցով, ներկայանալու տեղը և ժամանակը (տարին, ամիսը, օրը, ժամը), վարույթի նախաձեռնման հիմքում դրված փաստը և դրա իրավական գնահատականը, կատարման ենթակա վարութային գործողությունը, ծանուցումն ստացող անձի պարտականությունն այն հանձնելու հրավիրվող անձին և անհարգելի պատճառով չներկայանալու իրավական հետևանքները: Տվյալ կարգավիճակով առաջին անգամ հրավիրվող անձին հասցեագրված ծանուցագրին կցվում է հրավիրվողի կարգավիճակից բխող իրավունքների և պարտականությունների ցանկը: Տուժողին կամ վկային հասցեագրված ծանուցագրում նշվում է, որ վարութային գործողությանն առանց փաստաբանի ներկայանալու դեպքում փաստաբան պահանջելու հիմքով այդ վարութային գործողությունը ենթակա չէ հետաձգման:

Վերոնշյալ ընթացակարգերը չպահպանելու հետևանքով Պաշտպանի աշխատակազմում ստացված բողոքներից մեկով փաստաբանը հայտնել է, որ Արագածոտնի թեմի առաջնորդին և ևս 6 հոգևորականների բնակարաններում խուզարկություն իրականացվելուց հետո վերջիններս արգելանքի են վերցվել, իսկ նրանց գտնվելու վայրի վերաբերյալ տեղեկություններ առկա չեն: Նշել են, որ դիմել են վարույթն իրականացնող մարմին՝ արգելանքի վերցված անձանց շահերի պաշտպանությունը ստանձնելու նպատակով, սակայն իրենց մուտքը չի ապահովվել:

Ահազանգի կապակցությամբ Պաշտպանի ներկայացուցիչներն այց են իրականացրել տվյալ վարույթն իրականացնող մարմին և պարզել, որ խուզարկություններն իրականացվելուց հետո անձինք «հրավիրվել» են վարույթն իրականացնող մարմին: Առանձնազրույցի ընթացքում տեղեկություն է ստացվել այն մասին, որ քննչական մարմին տեղափոխված անձանց չեն պարզաբանվել իրենց կարգավիճակի և դրանից բխող իրենց իրավունքների և պարտականությունների, մասնավորապես՝ վարույթն իրականացնող մարմին փաստաբանի հետ ներկայանալու իրավունքը: Քննչական մարմին տեղափոխված անձանց մի մասը, կարգավիճակի և դրանից բխող իրենց իրավունքների ու պարտականությունների մասին պատշաճ ծանուցվելուց հետո, ցանկություն են հայտնել քննչական գործողություններին մասնակցել իրենց նախընտրած փաստաբանի հետ:

Այցի ընթացքում հայտնի դարձած տեղեկությունների կապակցությամբ Քննչական կոմիտեից պարզաբանումներ են ստացվել այն մասին, որ խուզարկություններն ավարտելուց հետո վկայի դատավարական կարգավիճակով անձինք հարցաքննության նպատակով հրավիրվել են քննչական մարմին, որտեղ նրանց պարզաբանվել են իրենց կարգավիճակից բխող իրավունքներն ու պարտականությունները, այդ թվում՝ փաստաբանի մասնակցությամբ հարցաքննվելու իրավունքը, սակայն մի մասը չեն ցանկացել օգտվել այդ իրավունքից, իսկ

փաստաբանի մասնակցությամբ հարցաքննվելու ցանկություն հայտնած անձանց հարցաքննությունն ընդհատվել է:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Պաշտպանը վերահաստատում է նախկինում արտահայտած դիրքորոշումն առ այն, որ միայն պատշաճ ծանուցման վերաբերյալ օրենսդրական կարգավորումների խստիվ պահպանմամբ գործելու դեպքում կարող են անշեղորեն ապահովվել վարույթի մասնավոր մասնակիցների իրավունքները, այդ թվում՝ անձինք հնարավորություն կունենան իրենց հարցաքննությունից առաջ քննարկել ստեղծված իրավիճակը փաստաբանի հետ, և անհրաժեշտության դեպքում վարույթն իրականացնող մարմին ներկայանալ փաստաբանի ուղեկցությամբ:

Հետևաբար, վերը թվարկված խնդիրների հաշվառմամբ՝ անհրաժեշտ է գործուն միջոցներ ձեռնարկել պրակտիկայի կատարելագործման ուղղությամբ՝ հետևողականորեն ապահովելով անձանց պատշաճ ծանուցումը բացառապես Քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և բացառելով առանց պատշաճ ծանուցման վարույթն իրականացնող մարմին հրավիրելու, ներկայացնելու կամ այլ համանման դեպքերը:

ԳԼՈՒԽ 2. ԱՆՁՆԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԾԱԳՈՂ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Անձի անձնական ազատության իրավունքի միջազգային և ներպետական իրավակարգավորումներին, ինչպես նաև այս իրավունքի երաշխավորմանն առնչվող համակարգային խնդիրներին Մարդու իրավունքների պաշտպանը անդրադարձ է կատարել նախորդ տարեկան հաղորդումներում: Մասնավորապես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և ներպետական դատական ատյանների կողմից արտահայտված դիրքորոշումների հաշվառմամբ՝ համապարփակ վերլուծվել են անձնական ազատության սահմանափակման վերաբերյալ օրենսդրական կարգավորումները և անդրադարձ է կատարվել գործնականում առաջացող խնդիրներին:

2024 թվականի տարեկան հաղորդմամբ Պաշտպանը, նկատի ունենալով, որ ամենամյա հաղորդումների շրջանակում քննարկված խնդիրներն արդիական են եղել և մնացել են չլուծված, վերահաստատել է դիրքորոշումն այն մասին, որ անթույլատրելի է ազատությունից զրկված անձին նվազագույն իրավունքները չպարզաբանելու և դրանք չապահովելու անթույլատրելի պրակտիկայի շարունակականությունը և կարևորել, որպեսզի ցանկացած դեպքում անձին ազատությունից զրկելիս իրավասու մարմիններն առաջնորդվեն ներպետական օրենսդրության, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և ՀՀ ներպետական դատական ատյանների համապատասխան իրավական դիրքորոշումներով: Բացի այդ, արձանագրվել է, որ անհրաժեշտ է բացառել անհամաչափ ուժի կիրառման և անձանց իրավունքները ոչ իրավաչափ սահմանափակելու դեպքերը, հատկապես այն դեպքում, երբ անձն արդեն իսկ գտնվում է Ոստիկանության հսկողության ներքո, և առկա չեն ուժի կիրառման՝ օրենքով սահմանված այլ հիմքեր: Անհամաչափ ֆիզիկական ուժի կիրառման յուրաքանչյուր դեպք պետք է անհապաղ ստանա պատշաճ իրավական գնահատական՝ նման դեպքերի շարունակականությունը բացառելու նպատակով:

2025 թվականի տարեկան հաղորդման նախապատրաստական փուլում իրականացված հարցմանն ի պատասխան՝ Ներքին գործերի նախարարությունից ստացվել է տեղեկություն այն մասին, որ 2025 թվականի նոյեմբերի 1-ին գործարկվել է ոստիկանության վերջին՝ չորրորդ հենասյունային ուղղությունը, ոստիկանության գվարդիան, որը հանդիսանում է հասարակական կարգի պահպանության մասնագիտացված ծառայություն և պատասխանատու է հատկապես հավաքների սպասարկման համար՝ երաշխավորելով խաղաղ հավաքներ իրականացնելու քաղաքացիների իրավունքի արդյունավետ իրացումը: Ոստիկանության գվարդիան համալրված է ամբողջովին նոր, ժամանակակից տեխնիկայով, ունի արդիականացված կինոլոգիական կարողություններ: «Ոստիկանության գվարդիայի» մասին օրենքով վերահիմաստավորվել են գվարդիայի ծառայողների կողմից հարկադրանքի, ուժային միջոցների գործադրման իրավաչափության և համաչափության պայմանները՝ դրանք համապատասխանեցնելով միջազգայնորեն ընդունված չափանիշներին: ՀՀ ներքին գործերի նախարարի հրամանով հաստատվել է ոստիկանության ծառայողների կողմից ուժային միջոցների գործադրման ստանդարտացված գործելակարգը: Ընդ որում, նշված գործելակարգը պարտադիր է ոչ միայն գվարդիայի, այլև ոստիկանության բոլոր ծառայողների համար: Եվրոպայի Խորհրդի կողմից իրականացվող ծրագրի շրջանակներում, Ոստիկանության գվարդիայի ծառայողների հատուկ պատրաստության և պարբերական վերապատրաստման համար մշակվել են հատուկ դասընթացներ, որի

շրջանակներում՝ ընդհանուր վերապատրաստվել է 2.445 ծառայող: «Մարդու հիմնարար իրավունքները և ոստիկանության գվարդիայի կողմից դրանց իրավաչափ սահմանափակման հիմքերը» առարկայի շրջանակներում ուսումնասիրվել են կարծիքի արտահայտման ազատության երաշխավորման, ատելության խոսքի բացառման, խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունքի ապահովման, խոշտանգման արգելքի և վատ վերաբերմունքի մասին թեմաները:

Ներքին գործերի նախարարությունից տեղեկություն է ստացվել նաև այն մասին, որ 2025 թվականի ընթացքում ՀՀ ՆԳՆ Կրթահամալիրում կազմակերպվել և իրականացվել են վերապատրաստման դասընթացներ ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության ղեկավար պաշտոններում նշանակվող 19 ծառայողների համար: Մասնավորապես՝ Մարդու և քաղաքացու անձնական, քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներն ու ազատությունները» և «Մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակումը ոստիկանության ծառայողների կողմից իրենց գործառույթներն իրականացնելիս» թեմաների շրջանակներում ուսումնասիրվել են խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունքի ապահովման, խոշտանգման արգելքի և վատ վերաբերմունքի մասին ուսումնական նյութեր:

Նույն հարցմանն ի պատասխան՝ տեղեկություն է ստացվել առ այն, որ 2025 թվականին անցկացված հավաքների ընթացքում ոստիկանության ծառայողների գործողությունների իրավաչափությունը, այդ թվում՝ ոչ համաչափ ֆիզիկական ուժի գործադրման հանգամանքները պարզելու նպատակով ՆԳՆ ներքին անվտանգության և հակակոռուպցիոն վարչությունում իրականացվել է 2 կարգապահական վարույթ, որոնք թողնվել են անհետևանք, ոստիկանության ծառայողների գործողություններում կարգապահական բնույթի խախտման հատկանիշներ չհայտնաբերվելու հիմքով: Հավաքների ընթացքում ոստիկանության գործողությունների, այդ թվում՝ հատուկ միջոցների գործադրման իրավաչափությունը մշտապես գտնվում է ՆԳՆ և ոստիկանության ղեկավարության ուշադրության կենտրոնում: Շարունակական աշխատանքներ են տարվում՝ ուղղված ոստիկանության ծառայողների գիտելիքների և հմտությունների կատարելագործմանը: Վերջիններս պարբերաբար հրահանգավորվում են, որպեսզի հավաքների ընթացքում ոստիկանության կողմից գործադրված միջոցները լինեն համաչափ, բխեն ստեղծված իրավիճակից և անհրաժեշտ լինեն տվյալ իրադրությունում հասարակական կարգի ու անվտանգության ապահովման՝ օրենքով սահմանված ոստիկանության պարտականությունները կատարելու համար: ՆԳՆ ներքին անվտանգության և հակակոռուպցիոն վարչությունն իր հերթին՝ իր կանոնադրական նպատակների համաձայն և իր իրավասության սահմաններում, մշտապես հսկողություն է իրականացնում նշված գործընթացի պատշաճ ապահովման ուղղությամբ:

Հաշվետու ժամանակահատվածին նախորդող տարում հարուցված կարգապահական վարույթների վերաբերյալ հարցին ի պատասխան՝ տեղեկություն է ստացվել, որ 2024 թվականին անցկացված հավաքների ընթացքում ոստիկանության ծառայողների գործողությունների իրավաչափությունը, այդ թվում՝ ոչ համաչափ ֆիզիկական ուժի գործադրման հանգամանքները պարզելու նպատակով ՆԳՆ ներքին անվտանգության և հակակոռուպցիոն վարչությունում հարուցվել է 33 կարգապահական վարույթ, որոնցից 8-ի ընթացքը կասեցվել է՝ մինչև նույն փաստերի կապակցությամբ նախաձեռնված քրեական վարույթներով եզրափակիչ դատավարական ակտերի օրինական ուժի մեջ մտնելը, 25-ը թողնվել է անհետևանք, որոնցից 22-ի արդյունքներով ոստիկանության ծառայողների գործողություններում կարգապահական բնույթի

խախտման հատկանիշներ չեն հայտնաբերվել, իսկ 3 հիմնավորված դեպքերով կարգապահական խախտում թույլ տված ոստիկանության 3 ծառայող ազատվել է կարգապահական պատասխանատվությունից՝ «ՀՀ ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով: Իրականացված ծառայողական քննությունների արդյունքներով կազմված եզրակացությունների պատճենները, հիմնավորված դեպքերով, ուղարկվել են համապատասխան ստորաբաժանումների պետերին՝ ենթակա ստորաբաժանումներում քննարկելու, հավաքների ու հանրային այլ միջոցառումների ընթացքում իրավաչափ վարքագիծ դրսևորելու ուղղությամբ համապատասխան հանձնարարականներ տալու համար:

Ներքին գործերի նախարարությունից ստացված տվյալների համաձայն՝ 2025 թվականի ընթացքում ՀՀ-ում անցկացված հավաքների ընթացքում ոստիկանության բաժիններ է տարվել ընդհանուր **755 անձ**, որից 2-ը՝ անչափահաս, 40-ը՝ զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ: ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 182-րդ հոդվածով նախատեսված՝ հասարակական կարգի պահպանության և հասարակական անվտանգության ապահովման պարտականությունները կատարելու ընթացքում զինծառայողի կամ ոստիկանության ծառայողի օրինական պահանջը չկատարելու հիմքով վարչական ձերբակալման է ենթարկվել **471 անձ**, որից 1-ը անչափահաս, 5-ը՝ զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ: Անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով բաժին բերված անձանց նկատմամբ նախաձեռնվել է 152 քրեական վարույթ:

2025 թվականին անցկացված հավաքների ընթացքում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182-րդ հոդվածով նախատեսված իրավախախտում կատարելու համար վարչական դատարան է ներկայացվել **5 անձի** վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հայցադիմում, որոնցով առկա չէ վերջնական դատական ակտ:

Հարկ է ընդգծել, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182-րդ հոդվածի համաձայն՝ հասարակական կարգի պահպանության, հասարակական անվտանգության ապահովման, օբյեկտների պահպանության պարտականությունները կատարելու ընթացքում ոստիկանության ծառայողի օրինական պահանջը չկատարելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով: Նույն օրենսգրքի 223-րդ հոդվածի կարգավորումների համաձայն՝ նույն օրենսգրքի 182-րդ հոդվածով նախատեսված դեպքերում անձի պատասխանատվության հարցը ենթակա է քննության Վարչական դատարանի կողմից՝ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու իրավասություն ունեցող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների (պաշտոնատար անձանց) հայցադիմումով:

Վերոգրյալ իրավակարգավորումների համատեքստում դիտարկելով Ներքին գործերի նախարարությունից ստացված վիճակագրական տվյալներն առ այն, որ հաշվետու ժամանակահատվածում ՀՀ-ում անցկացված հավաքների ընթացքում ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 182-րդ հոդվածով նախատեսված՝ հասարակական կարգի պահպանության և հասարակական անվտանգության ապահովման պարտականությունները կատարելու ընթացքում զինծառայողի կամ ոստիկանության ծառայողի օրինական պահանջը չկատարելու հիմքով վարչական ձերբակալման է ենթարկվել 471 անձ, սակայն միայն 5 դեպքով է իրավախախտման համար պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ

հայցադիմում ներկայացվել դատարան՝ Պաշտպանը խնդրահարույց է համարում մնացած մեծաթիվ դեպքերում անձանց ազատության սահմանափակումը: Նշվածը կարող է վկայել, որ դեպքերի մեծ մասում անձանց ազատությունից զրկելն ու վարչական ձերբակալման ենթարկելը եղել է ինքնանպատակ, և այն կատարվել է ոչ թե վերը նշված հոդվածով ենթադրյալ իրավախախտում կատարած անձանց պատասխանատվության ենթարկելու տրամաբանությամբ, այլ որոշակի ժամանակով անձին պարզապես ազատությունից զրկելու կամ որոշակի վայրից հեռացնելու համար: Այս առումով Պաշտպանը հարկ է համարում արձանագրել, որ առկա է նշված հոդվածի չարաշահման վտանգավոր միտում, իսկ նշված մոտեցումը չի բխում վարչական իրավախախտումների նախականխման, կանխման և խափանման գաղափարից:

2024 թվականի տարեկան հաղորդման առաջարկների կատարմանն ուղղված քայլերի առնչությամբ՝ Ներքին գործերի նախարարությունից ստացվել է տեղեկություն առ այն, որ 2025 թվականին տեղի ունեցած հավաքների շրջանակներում ոստիկանության բաժիններ տարված անձանց նվազագույն իրավունքների ապահովման նպատակով արտաքին ծառայության մեջ ներգրավված ծառայողները հրահանգավորվել են այն մասին, որ օրինական պահանջի ներկայացումը պետք է լինի հստակ ձևակերպված, որպեսզի անձի համար, ում ներկայացվել է պահանջը, պարզ և հասկանալի լինի, թե իր գործողություններով այլ անձանց հատկապես ո՞ր իրավունքներն են սահմանափակվում կամ խախտվում, կամ ո՞ր կառույցների բնականոն աշխատանքն է խաթարվում և այլն: «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի պահանջներին համապատասխան, ՀՀ Կառավարության 2007 թվականի հունիսի 14-ի թիվ 818-Ն որոշմամբ և ՀՀ ՆԳՆ ոստիկանության պետի 2007 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ 3-Ն հրամանով սահմանված կարգով՝ հավաքների ընթացքում ազատությունից զրկված անձանց ներկայացվել են մարդու իրավունքների ու ազատությունների սահմանափակումից բխող՝ ծանուցման ենթակա իրավունքները և պարտականությունները: Հավաքների ընթացքում ոստիկանության ծառայողներն անձի գործողությունը և (կամ) անգործությունը որպես օրինական պահանջին չենթարկվելու հանգամանքը գնահատելիս առաջնորդվում են «Հավաքների ազատության մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, այն է՝ հավաքի ղեկավարի բացակայության կամ հավաքի ղեկավարի կողմից ոստիկանության պահանջը չկատարելու դեպքերում ոստիկանության ներկայացուցիչը ոչ պակաս, քան երկու անգամ բարձրախոսով մասնակիցներից պահանջում է դադարեցնել հավաքը՝ սահմանելով ողջամիտ ժամկետ: Միաժամանակ, ոստիկանության ներկայացուցիչը հավաքի մասնակիցներին նախազգուշացնում է սահմանված ժամկետում հավաքը կամովին չդադարեցնելու դեպքում հավաքը ցրելու, ներառյալ՝ «Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հատուկ միջոցներ կիրառելու իր լիազորության մասին:

Ինչ վերաբերում է ոստիկանության ծառայողի օրինական պահանջին չենթարկվելու հանգամանքը գնահատելու չափորոշիչներին և փաստական տվյալների հաշվառմանը, ապա օրինական պահանջ ներկայացնելիս հիմնական շեշտադրումը կատարվում է պահանջի հստակությանը և դա հավաքի մասնակիցներին հասանելի լինելու հանգամանքին, ինչպես նաև օրինական պահանջը կատարելու համար ողջամիտ ժամկետի տրամադրմանը:

Այդուհանդերձ, 2025 թվականի ընթացքում ևս, ստացված բողոքներով, ահազանգերով, Ոստիկանության բաժիններ իրականացված այցերի ընթացքում, ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցների մշտադիտարկման արդյունքում, շարունակվել են արձանագրվել նույնաբնույթ խնդիրներ: Դրանք, հատկապես, վերաբերել

են ազատությունից զրկված անձանց նվազագույն իրավունքները չապահովելուն, մասնավորապես՝ ազատությունից զրկվելու պատճառների մասին չիրազեկելուն, իր ընտրած անձին իր գտնվելու վայրի մասին տեղեկացնելու հնարավորություն չտրամադրելուն, իրավաբանական օգնություն ստանալու հնարավորություն չընձեռելուն և այլն:

Մասնավորապես, տարբեր ժամանակահատվածներում ստացված մի շարք նույնաբնույթ ահազանգերով Պաշտպանին դիմած անձինք հայտնել են, որ իրենց մերձավոր ազգականը ձերբակալվել է ՀՀ ՆԳՆ ոստիկանության ծառայողների կողմից, դրանից հետո տևական ժամանակ է անցել, սակայն նրա գտնվելու վայրի, կարգավիճակի, ինչպես նաև պատճառների վերաբերյալ որևէ տեղեկություն առկա չէ: Նույն խնդրով Պաշտպանին բազմիցս դիմել են նաև փաստաբաններ, որոնք ցանկություն են հայտնել ազատությունից զրկված անձի մերձավոր ազգականների հրավերով ստանձնել նրա իրավունքների պաշտպանությունը, սակայն որևէ տեղեկություն չունեն տվյալ անձի գտնվելու վայրի վերաբերյալ:

Ստացված ահազանգերից յուրաքանչյուրի պարագայում Պաշտպանի ներկայացուցիչների կողմից միջոցներ են ձեռնարկվում, այդ թվում՝ բանավոր ընթացակարգով, հնարավոր սեղմ ժամկետում ազատությունից զրկված անձի գտնվելու վայրը և կարգավիճակը պարզելու, և նշված տեղեկությունը տիրապետելու իրավունք ունեցող անձին փոխանցելու ուղղությամբ:

Հարկ է ընդգծել, որ ազատությունից զրկվելու պատճառների, այդ մասին իր ընտրած անձին անհապաղ տեղեկացնելու, իրավաբանական օգնություն ստանալու իրավունքներն ունեն սահմանադրական նշանակություն: Դրանք հավասարապես տարածվում են ազատությունից զրկման բոլոր դեպքերի վրա, այդ թվում՝ վարչական ձերբակալման, հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածով, մեղադրյալին դատարան ներկայացնելու նպատակով ձերբակալելու և այլն:

Այս համատեքստում կարևոր է նաև նշել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան պարտավորեցնում է պետական մարմիններին իրենց լիազորությունների շրջանակներում ձեռնարկել ողջամիտ քայլեր՝ կանխելու այն քրեական հանցագործությունները, որոնց մասին նրանք տեղյակ էին կամ պետք է տեղյակ լինեին: Սակայն, այն թույլ չի տալիս պետությանը պաշտպանել անհատներին անձի հանցավոր գործողություններից այնպիսի միջոցներով, որոնք խախտում են այդ անձի Կոնվենցիոն իրավունքները, մասնավորապես՝ ազատության իրավունքը, որը երաշխավորված է 5-րդ հոդվածի 1-ին կետով[127]: Ձերբակալման կոնկրետ տեսակի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումները համապարփակ կերպով վերլուծվել են Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումների շրջանակում[128]:

Հաշվետու ժամանակահատվածում ստացված որոշ խնդիրներ էլ վերաբերել են ձերբակալման քրեադատավարական ինստիտուտի ոչ նպատակային կիրառմանը: Մասնավորապես, փաստաբանի կողմից ստացվել է բողոք այն մասին, որ անձը

---

[127] Տե՛ս, Jendrowiak v. Germany գործով Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի 2011 թվականի ապրիլի 14-ի վճիռը, կետեր՝ 37-38:

[128] Տե՛ս Մարդու իրավունքների պաշտպանի 2023 թվականի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջեր՝ 317-318, 2024 թվականի տարեկան հաղորդումը, էջ՝ 230:

ձերբակալվել է հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածով, ապա վարույթն իրականացնող մարմնի կողմից կայացվել է նրան ազատ արձակելու մասին որոշում՝ անազատության մեջ պահելու անհրաժեշտությունը վերանալու հիմքով: Դրանից կարճ ժամանակ անց, առանց որևէ նոր կամ էական հանգամանքի ի հայտ գալու, վարույթն իրականացնող նույն մարմնի կողմից կայացվել է ազատության մեջ գտնվող մեղադրյալին դատարան ներկայացնելու համար ձերբակալելու մասին որոշում, և անձը կրկին ձերբակալվել է՝ ձերբակալվածներին պահելու վայրի վարչական շենքի դիմաց:

Կարևոր է արձանագրել, որ նման պրակտիկան կարող է հանգեցնել ձերբակալման առավելագույն ժամկետների շրջանցման և անձի ազատության կամայական սահմանափակման: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայի համաձայն՝ ազատությունից զրկման օրինականությունը չի սահմանափակվում միայն ներպետական օրենսդրության պահանջներին համապատասխանությամբ. այն պետք է համահունչ լինի իրավունքի գերակայության, իրավական որոշակիության, համաչափության և կամայականությունից պաշտպանության հիմնարար սկզբունքներին: Կոնվենցիայի 5-րդ հոդվածի իմաստով՝ ազատությունից զրկումը կարող է համարվել կամայական նույնիսկ այն դեպքում, երբ ձևականորեն համապատասխանում է ազգային իրավունքի պահանջներին, սակայն այն չի ծառայում թույլատրելի նպատակին կամ գերազանցում է անհրաժեշտության և համաչափության սահմանները[129]:

ՄԻԵԴ նախադեպային իրավունքը և ներպետական դատական պրակտիկան հստակ ընդգծում են, որ ազատությունից զրկման օրինականությունը պետք է գնահատվի ոչ միայն ձևական համապատասխանության, այլև իրավաչափ նպատակի, անհրաժեշտության և համաչափության չափանիշներով: Հետևաբար, դատարան ներկայացնելու նպատակով ձերբակալման կիրառումը կարող է համարվել իրավաչափ միայն այն դեպքում, երբ այն բխում է իրական և հիմնավորված դատավարական անհրաժեշտությունից, պահպանվում են օրենքով սահմանված ժամկետները և բացառվում է ինստիտուտի չարաշահման որևէ դրսևորում:

Պաշտպանը դրական է գնահատում 2024 թվականի տարեկան հաղորդմամբ ներկայացված առաջարկությունների կատարմանն ուղղված իրավասու մարմինների կողմից ձեռնարկված քայլերը: Պաշտպանի աշխատակազմում ստացված բողոքների, ահազանգերի, ինչպես նաև Ոստիկանության բաժիններ իրականացված այցերի արդյունքների ուսումնասիրությունը վկայում է, որ անձի նվազագույն իրավունքների ապահովման ոլորտում նկատվում է որոշակի դրական դինամիկա՝ նշվածը դիտարկելով որպես համակարգային բարեփոխումների ուղղությամբ իրականացվող քայլերի արդյունավետության դրսևորում:

Այդուհանդերձ, հարկ է կրկին ընդգծել, որ Եվրոպական դատարանի նախադեպային որոշումներով և ներպետական օրենսդրությամբ սահմանված չափանիշներն ինքնանպատակ չեն, դրանք ոչ թե սոսկ ձևական ընթացակարգի մաս են, այլ հիմնարար երաշխիքներ, որոնք ապահովում են անձի իրավական պաշտպանվածությունը և կանխարգելում իրավապահ մարմինների կողմից կամայականության որևէ դրսևորում:

Ուստի, Պաշտպանը կարևորում է, որպեսզի պետական իրավասու մարմիններն ապահովեն ձերբակալման ընթացքում անձի իրավունքների բովանդակային, ոչ

[129] Տե՛ս, Creangă v. Romania գործով Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի 2012 թվականի փետրվարի 23-ի վճիռը, կետ 84; A. and Others v. the United Kingdom գործով Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի 2009 թվականի փետրվարի 19-ի վճիռը, կետ 164:

ձևական իրացման հնարավորությունը: Այս համատեքստում Պաշտպանը շեշտադրում է, որ նվազագույն իրավունքների լիարժեք ապահովմանն ուղղված միջոցառումները պետք է շարունակական և հետևողական բնույթ կրեն:

ԳԼՈՒԽ 3. ԱԶԱՏ ՏԵՂԱՇԱՐԺՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

1. Մեղադրյալի ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակման ոչ իրավաչափ պրակտիկան

Մարդու իրավունքների պաշտպանի նախորդ տարիների տարեկան հաղորդումներում մշտապես անդրադարձ է կատարվել անձի ազատ տեղաշարժվելու իրավունքի ոչ իրավաչափ սահմանափակման վերաբերյալ խնդիրներին: 2024 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդմամբ Պաշտպանը կարևորել է, որպեսզի օրենսդրական կարգավորումների կատարելագործման արդյունքում հնարավորինս սեղմ ժամկետներում քրեական վարույթն իրականացնող բոլոր մարմիններում ներդրվեն կառուցակարգեր, որոնց միջոցով իրական ժամանակում հնարավորություն կտրվի ՀՀ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական (ՍԷԿՏ) համակարգում մուտքագրել ՀՀ-ից անձի ելքի սահմանափակում ենթադրող խափանման միջոց կիրառելու և այն վերացնելու վերաբերյալ տեղեկությունները՝ բացառելով անձանց ազատ տեղաշարժվելու իրավունքի ոչ իրավաչափ սահմանափակման դեպքերը:

Չնայած վերոգրյալին՝ քննարկվող հարցի վերաբերյալ Պաշտպանի աշխատակազմում 2025 թվականի ընթացքում շարունակվել են ստացվել բողոքներ և ահազանգեր: Մասնավորապես, ստացվող բողոքները կրկին վերաբերել են նրան, որ մեղադրյալի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցված, իսկ կիրառված խափանման միջոցները, այդ թվում՝ բացակայելու արգելքը վերացված լինելու պայմաններում իրավասու մարմինների կողմից միջոցներ չեն ձեռնարկվել նրա՝ ՀՀ-ից ելքի իրավունքի սահմանափակումը ՍԷԿՏ համակարգից վերացնելու ուղղությամբ, ինչի հետևանքով անձանց թույլ չի տրվում հատել ՀՀ պետական սահմանը: Նշված խնդիրն առաջացել է նաև որոշ խումբ անձանց մոտ, ովքեր արդեն իսկ կրել են դատարանի վճռով սահմանված պատիժը, սակայն նրանց նկատմամբ կիրառված ՀՀ-ից ելքի սահմանափակումը ՍԷԿՏ համակարգից չի վերացվել: Ստացված որոշ բողոքներ էլ վերաբերել են առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում քննվող գործի շրջանակում դատարանի կիրառած հայցի ապահովման միջոցը (անչափահասի՝ ՀՀ-ից ելքի վերաբերյալ) վերացված լինելու պայմաններում ՍԷԿՏ համակարգում սահմանափակումները վերացված չլինելուն:

2025 թվականի ընթացքում ստացված բողոքների և ահազանգերի վերլուծությունը թույլ է տալիս արձանագրել, որ նախաքննական մարմինների պարագայում քննարկվող խնդրի վերաբերյալ առկա է զգալի դրական միտում, քանի որ ստացված բողոքները հիմնականում վերաբերել են դատարանների կողմից կիրառված ելքի սահմանափակումները վերացվելուց հետո իրավասու մարմիններին այդ մասին սեղմ ժամկետում չտեղեկացնելուն:

Այս առումով Պաշտպանը կարևորում է ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 2015 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 91-Լ հանձնարարականի (ինկորպորացիա առ 08.11.2023թ. N 258-L) 1-ին մասի 2-րդ կետի կարգավորումները, համաձայն որոնց՝ Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ստորաբաժանումների մինչդատական վարույթ իրականացնող ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց հանձնարարվել է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության

օրենսգրքի 115-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով սահմանված «Բացակայելու արգելքը» խափանման միջոց կիրառելիս՝ մեղադրյալի Հայաստանի Հանրապետությունից բացակայելն արգելելու մասին որոշում կայացնելուց հետո անհապաղ, բայց ոչ ուշ, քան մեկ ժամվա ընթացքում Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի N 884-Ն որոշման համաձայն՝ համապատասխան տվյալները «Mulberry» էլեկտրոնային համակարգով ուղարկել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչություն՝ Հայաստանի Հանրապետության սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգ մուտքագրելու համար (փոփ. 08.11.2023. N 258-Լ):

Նշվածը հավելյալ երաշխիք է անձի ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակման ոչ իրավաչափ դեպքերը բացառելու համար:

Հարկ է արձանագրել, որ բողոքների կապակցությամբ իրականացված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ որոշ դեպքերում դատարանների կողմից ևս ձեռնարկված են լինում անհրաժեշտ միջոցներ իրավասու մարմիններին անձի նկատմամբ կիրառված սահմանափակումները վերացնելու մասին տեղեկացնելու ուղղությամբ, սակայն համապատասխան գրությունը փոստային կամ սուրհանդակային ծառայության միջոցով ուղարկված լինելու հետևանքով առաջանում է ժամանակային խզում, ընդհուպ՝ մինչև մի քանի օր:

Նշված խնդրի առնչությամբ Պաշտպանը վերահաստատում է իր դիրքորոշումն առ այն, որ անհրաժեշտ է օրենսդրական կարգավորումների կատարելագործման արդյունքում հնարավորինս սեղմ ժամկետներում քրեական վարույթ իրականացնող բոլոր մարմիններում, այդ թվում՝ դատարաններում, ներդնել կառուցակարգեր, որոնց միջոցով իրական ժամանակում քրեական վարույթն իրականացնող մարմինները հնարավորություն կունենան ՀՀ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական (ՍԷԿՏ) համակարգում մուտքագրել ՀՀ-ից անձի ելքի սահմանափակում ենթադրող խափանման միջոց կիրառելու և այն վերացնելու վերաբերյալ տեղեկությունները:

Վերոգրյալից բացի, հաշվետու ժամանակահատվածում Պաշտպանի աշխատակազմում ստացված բողոքներից մեկով անձը հայտնել է, որ նախաքննության ընթացքում իր նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել բացակայելու արգելքը: Նշել է, որ կիրառված խափանման միջոցը բողոքարկվել է դատական կարգով, ինչի արդյունքում Վերաքննիչ դատարանը բավարարել է կիրառված բացակայելու արգելք խափանման միջոցը վերացնելու պահանջը և վարույթի հանրային մասնակցին պարտավորեցրել է կայացնել մեղադրյալի իրավունքների խախտումը վերացնելուն ուղղված վարութային ակտ: Նշված որոշումն օրինական ուժի մեջ մտնելուց հետո վարույթն իրականացնող մարմնին միջնորդել է կատարել դատական ակտի պահանջները և վերացնել խափանման միջոցը, սակայն դատական ակտի պահանջները չեն կատարվել՝ որոշումը վարույթն իրականացնող մարմնում ստացված չլինելու պատճառաբանությամբ: Մինչդեռ, Պաշտպանին դիմած անձի գնահատմամբ՝ նշվածը կրել է բացառապես իր ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակումն ավելի քան քսան օր շարունակելու միտում, քանի որ իրավասու մարմինները տեղեկացված են եղել դատական ակտի պահանջների մասին:

Այս կապակցությամբ Պաշտպանը վերահաստատում է նախկինում արտահայտված դիրքորոշումն առ այն, որ անհրաժեշտ է գործնականում բոլոր դեպքերում խափանման միջոցը փոխելու կամ վերացնելու մասին որոշում կայացվելիս (հատկապես բացակայելու արգելք խափանման միջոցի դեպքում) պատշաճ

ջանասիրություն ցուցաբերել այդ որոշման կատարումը սեղմ ժամկետում ապահովելու, այդ թվում՝ որոշումը դրանում առկա պահանջների կիրառումն ապահովող մարմնին կամ պաշտոնատար անձին անհապաղ հանձնելու ուղղությամբ՝ բացառելով անձանց ազատ տեղաշարժվելու իրավունքի ոչ իրավաչափ սահմանափակման դեպքերը: Հակառակ պարագայում ստեղծվում է մի իրավիճակ, երբ համապատասխան որոշման առկայության պայմաններում դրա կատարումը արհեստականորեն ձգձգվում է, ինչը կարող է ողջամտորեն հանգեցնել կարծիքի, որ տվյալ որոշման պահանջները սեղմ ժամկետում չկատարելը կրում է սուբյեկտիվ բնույթ:

Պաշտպանի աշխատակազմում ստացված բողոքներից և ահազանգերից յուրաքանչյուրը սեղմ ժամկետում քննարկվում է իրավասու մարմինների հետ: Այս կապակցությամբ, Պաշտպանը դրական է համարում պետական իրավասու մարմինների հանձնառությունը՝ բարձրացված խնդիրների լուծման կապակցությամբ քայլեր ձեռնարկելու ուղղությամբ և արձանագրում, որ ձևավորված արդյունավետ համագործակցության արդյունքում բարձրացված խնդիրները կարգավորվում են հնարավոր սեղմ ժամկետներում:

Այս համատեքստում Պաշտպանը ողջունելի է համարում նաև «Պետական սահմանի մասին» օրենքում լրացում կատարելու մասին 2025 թվականի հոկտեմբերի 2-ի թիվ ՀՕ-314-Ն օրենքի ընդունումը: Նշված օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ «Պետական սահմանի մասին» 2001 թվականի նոյեմբերի 20-ի ՀՕ-265 օրենքը լրացվել է 10.1-ին հոդվածով, որի 7-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգին հասանելիություն ունեցող պետական մարմինների ու կազմակերպությունների ցանկը, համակարգին հասանելիություն ունեցող պետական մարմինների ու կազմակերպությունների կողմից համակարգում մուտքագրվող տվյալների շրջանակը և մուտքագրման կարգը, անվտանգության ապահովման պահանջները, համակարգից օգտվելու կարգը և համակարգի շահագործման կանոնները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Միևնույն ժամանակ, «Պետական սահմանի մասին» օրենքում լրացում կատարելու մասին 2025 թվականի հոկտեմբերի 2-ի թիվ ՀՕ-314-Ն օրենքի անցումային դրույթը սահմանող 2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն օրենքի 1-ին հոդվածով լրացվող 10.1-ին հոդվածի 7-րդ մասով նախատեսված Կառավարության որոշումն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում:

Վերը նշված օրենքի ընդունումը ևս մեկ քայլ է ոլորտում առկա խնդիրները բացառելու ուղղությամբ, ուստի Պաշտպանը կարևորում է, որ ի կատարումն վերը նշված օրենքի պահանջի՝ Կառավարության կողմից ընդունվելիք որոշմամբ սահմանվեն այն բոլոր պետական մարմինները (այդ թվում՝ դատարանները), որոնք այս կամ այն կերպ բախվում են սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական (ՍԷԿՏ) համակարգում առկա տվյալների փոփոխման անհրաժեշտությանը:

2025 թվականի տարեկան հաղորդման նախապատրաստման աշխատանքների շրջանակում Դատախազությունից պարզաբանում է ներկայացվել առ այն, որ 2025 թվականի ընթացքում ստացված բողոքների քննարկման շրջանակներում արձանագրվել է 7 դեպք, երբ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական (ՍԷԿՏ) համակարգի կիրառմամբ անձի ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակումը վերացված չի եղել վերջինիս նկատմամբ ավարտված քրեական վարույթի պայմաններում, որը դատախազական ներգործության արդյունքում վերացվել է:

Հաշվի առնելով վերոգրյալը և նախորդ տարեկան հաղորդումներում Պաշտպանի արտահայտած դիրքորոշումներն ու առաջարկները, խնդրի վերաբերյալ աշխատակազմում ստացված բողոքների ոչ մեծ քանակը, ինչպես նաև իրավասու պետական մարմիններից ստացված տվյալները՝ Պաշտպանն արձանագրում է, որ մեղադրյալի ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակման ոչ իրավաչափ պրակտիկայի վերացման ուղղությամբ շարունակաբար ձեռնարկվում են քայլեր, և այդ առումով առկա է դրական դինամիկա:

Այդուհանդերձ, դեռևս խնդրահարույց է պետական որոշ մարմինների կողմից ՍԷԿՏ համակարգ մուտքագրվող համապատասխան տեղեկատվությունն իրավասու մարմնին առաքման միջոցով փոխանցելը, ինչն ինքնին երկարացնում է, երբեմն, հրատապություն ունեցող գործընթացի տևողությունը՝ հանգեցնելով իրավունքների տեսանկյունից խնդրահարույց իրավիճակների:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Պաշտպանը, բարձր գնահատելով պետական իրավասու մարմինների արդյունավետ համագործակցությունը, ինչպես նաև ոլորտում առկա խնդիրների լուծման ուղղությամբ պարբերական քայլեր ձեռնարկելը, կարևորում է, որպեսզի իրավական կարգավորումների կատարելագործման արդյունքում հնարավորինս սեղմ ժամկետներում քրեական վարույթ իրականացնող բոլոր մարմիններում ներդրվեն կառուցակարգեր, որոնց միջոցով իրական ժամանակում քրեական վարույթն իրականացնող մարմինները հնարավորություն կունենան ՀՀ ՍԷԿՏ համակարգում մուտքագրել ՀՀ-ից անձի ելքի սահմանափակում ենթադրող խափանման միջոց կիրառելու և այն վերացնելու վերաբերյալ տեղեկությունները՝ բացառելով անձանց ազատ տեղաշարժվելու իրավունքի ոչ իրավաչափ սահմանափակման դեպքերը:

2. Քրեական վարույթով վկայի և տուժողի, ինչպես նաև վարույթի մասնակից չհանդիսացող անձանց նկատմամբ ՀՀ պետական սահմանը հատելու արգելք սահմանելու ոչ իրավաչափ պրակտիկան

Քրեական վարույթով տուժողի և վկայի, ինչպես նաև վարույթի մասնակից չհանդիսացող այլ անձի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունից ելքը սահմանափակելու ոչ իրավաչափ պրակտիկային առնչվող խնդիրները մշտապես գտնվել են ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ուշադրության կենտրոնում: Մասնավորապես, Պաշտպանը մշտապես ընդգծել է, որ անգամ եթե անձի՝ Հայաստանի Հանրապետությունից ելքի սահմանափակումը վարույթի մասնակցի (մասնավոր կամ օժանդակող) պարտականությունների ապահովման իրավաչափ նպատակ է հետապնդում, դրա կիրառման համար օրենսդրությամբ պետք է սահմանված լինեն քրեադատավարական հիմքեր:

Պաշտպանն ընդգծել է, որ գործնականում պետք է բացառել քրեական վարույթի մասնակից չհանդիսացող անձանց ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակման՝ օրենքով չնախատեսված և խնդրին առնչվող չափանիշներին հակասող ցանկացած դեպք (այդ թվում՝ անձնագիրը վերցնելու, ՍԷԿՏ համակարգում հանրապետությունից դուրս գալու արգելքի մասին տվյալ մուտքագրելու կամ այլ եղանակով):

Տարեկան հաղորդման նախապատրաստման ընթացքում քննարկվող հարցի վերաբերյալ Դատախազությունից տեղեկություն է ստացվել այն մասին, որ որպես վկա և տուժող հանդես եկող կամ դատավարական կարգավիճակ չունեցող անձանց նկատմամբ

ՍԷԿՏ համակարգի կիրառմամբ հանրապետությունից դուրս գալու իրավունքի սահմանափակման վերաբերյալ 2025 թվականի ընթացքում դեպքեր չեն արձանագրվել:

Այդուհանդերձ, հաշվետու ժամանակահատվածում Պաշտպանի աշխատակազմում ստացվել են քիչ թվով բողոքներ՝ կապված քննարկվող խնդրի հետ: Մասնավորապես, ստացված բողոքներից մեկով օտարերկրացի անձը հայտնել է, որ ՀՀ սահմանը հատելու պահին ձերբակալվել և տեղափոխել է ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության տարածքային ստորաբաժանում, ապա քննչական բաժին, որտեղ հարցաքննվել է վկայի կարգավիճակով: Նաև նշել է, որ իրենից առգրավվել են իր և երեխայի՝ այլ պետության անձնագրերը և չեն վերադարձվում՝ առանց որևէ իրավական հիմնավորման, ինչի հետևանքով զրկված է ՀՀ պետական սահմանը հատելու և իր քաղաքացիության երկիր վերադառնալու հնարավորությունից:

Բողոքի քննարկման շրջանակում ՀՀ քննչական կոմիտեի հետ վարված գրագրության արդյունքում բողոք ներկայացրած անձի և նրա անչափահաս երեխայի անձնագրերը վերադարձվել են:

Պաշտպանի աշխատակազմում քննարկվող հարցի վերաբերյալ ստացված ոչ մեծ քանակությամբ բողոքները վկայում են պրակտիկայի բարելավման մասին, սակայն անհրաժեշտ է շարունակաբար և հետևողականորեն միջոցներ ձեռնարկել քրեական վարույթի շրջանակում վկայի, տուժողի կամ վարույթի մասնակից չհանդիսացող անձի ազատ տեղաշարժվելու իրավունքի ոչ իրավաչափ սահմանափակման դեպքերն ամբողջությամբ բացառելու ուղղությամբ՝ երաշխավորելով նման յուրաքանչյուր դեպքով մեղավոր անձանց պատասխանատվության ենթարկելու արդյունավետ ընթացակարգ:

3. ՀՀ տարածքում գտնվող անձանց նկատմամբ այլ երկրների իրավապահ մարմինների կողմից հետախուզում հայտարարված լինելու պարագայում նրանց նկատմամբ կիրառված սահմանափակումները պահպանելու հետ կապված խնդիրներ

Անձի նկատմամբ այլ երկրների իրավապահ մարմինների կողմից հայտարարված հետախուզման հիմքով ՀՀ տարածքում նրա ազատ տեղաշարժվելու իրավունքի իրացման սահմանափակմանն առնչվող հարցերը մշտապես գտնվել են Մարդու իրավունքների պաշտպանի ուշադրության ներքո, և դրանց մանրամասն անդրադարձ է կատարվել Պաշտպանի նախորդ տարիների տարեկան հաղորդումներում:

Խնդիրը կայանում է հետևյալում. գործնականում առաջանում են իրավիճակներ, երբ Հայաստանում հայտնաբերվում է այլ պետության կողմից հետախուզվող անձ, սակայն հետախուզում հայտարարած երկիրը ողջամիտ ժամկետում հանձնման վերաբերյալ միջնորդություն չի ներկայացնում ՀՀ իրավասու մարմնին, կամ միջնորդությունը մերժվում է, սակայն տվյալ անձի նկատմամբ այլ պետության կողմից հայտարարված հետախուզումն ինքնին չի դադարեցվում: Նշվածով պայմանավորված՝ հետախուզվող անձը զրկվում է ՀՀ պետական սահմանը հատելու հնարավորությունից, քանի որ հետախուզումը դադարեցված չլինելու պատճառով նրա նկատմամբ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական (ՍԷԿՏ) համակարգում կիրառված են լինում սահմանափակումներ:

Վերոգրյալի առիթով, 2024 թվականի տարեկան հաղորդմամբ Պաշտպանը դիրքորոշում է հայտնել առ այն, որ անհրաժեշտ է մանրամասն իրավական կարգավորման ենթարկել այլ պետության կողմից անձի նկատմամբ հայտարարված հետախուզման պարագայում նրա ազատ տեղաշարժվելու իրավունքի ոչ իրավաչափ

սահմանափակումների բացառումը և խնդրի հաղթահարմանն ուղղված կառուցակարգերը:

Այդուհանդերձ, 2025 թվականի ընթացքում ևս Պաշտպանի աշխատակազմում ստացվել են խնդրին առնչվող մի շարք բողոքներ:

Մասնավորապես, բողոքներով անձինք և նրանց փաստաբանները տեղեկություն են ներկայացրել այն մասին, որ տարբեր պետություններում քննվող քրեական վարույթների շրջանակում իրենց նկատմամբ հայտարարված հետախուզման պատճառով սահմանափակումներ են կիրառվել նաև ՀՀ ՍԷԿՏ համակարգում: Արդյունքում, թեև որոշ հանգամանքներից ելնելով իրենց հանձնումը չի իրականացվում, սակայն ՍԷԿՏ համակարգում կիրառված սահմանափակումները չեն վերացվում, ինչի հետևանքով, իրենց կամքին հակառակ, շարունակում են մնալ ՀՀ տարածքում՝ զրկված լինելով այլ երկիր մեկնելու հնարավորությունից: Արդյունքում առաջանում են նաև այլ խնդիրներ, այդ թվում՝ կապված բնակության վայրի, գումար վաստակելու, բժշկական օգնության և այլ նվազագույն կենսապահովման միջոցների ապահովման հետ:

Հատկանշական է, որ 2024 թվականի նոյեմբերի 15-ին ընդունվեց «Քրեական վարույթներով իրավական օգնության մասին» ՀՀ օրենքը (այսուհետ՝ նաև Օրենք), որով մանրամասն կարգավորվում են Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով նախատեսված, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի բացակայության դեպքում՝ քրեական վարույթներով իրավական օգնության իրականացման կարգն ու պայմանները և ոլորտի վերաբերյալ իրավահարաբերությունները: Նշված օրենքի 36-րդ հոդվածի կարգավորումների համաձայն՝ եթե հանձնման մասին հարցումը չի պարունակում բոլոր անհրաժեշտ տվյալները կամ հանձնման վերաբերյալ որոշում կայացնելու համար անհրաժեշտ են լրացուցիչ տեղեկություններ, ապա հանձնման մասին հարցումը ստացած՝ նույն օրենքի 32-րդ հոդվածով սահմանված իրավասու մարմինը կարող է պահանջել լրացուցիչ տվյալներ և անհրաժեշտության դեպքում այդ տվյալները ստանալու համար սահմանել ժամկետ: Սահմանված ժամկետում լրացուցիչ տեղեկություններ չստանալու դեպքում նույն օրենքի 32-րդ հոդվածով սահմանված իրավասու մարմինը կարող է ազատ արձակել հանձնման ենթակա անձին՝ վերացնելով սահմանահատման արգելքը:

Միևնույն ժամանակ, պետք է արձանագրել, որ նշված օրենքում սահմանահատման արգելքը վերացնելու պահանջ նախատեսված չէ, օրինակ, այն դեպքում, երբ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրի հիման վրա անձի հանձնման վերաբերյալ օտարերկրյա պետության իրավասու մարմնի հարցումը մերժվում է:

Հարկ է նշել, որ հաշվետու ժամանակահատվածում շարունակաբար ստացվել են նույնաբովանդակ բողոքներ քննարկվող խնդրի կապակցությամբ: Ստացվող յուրաքանչյուր բողոքի քննարկման շրջանակում հաղորդակցություն է իրականացվում պետական իրավասու մարմինների, այդ թվում՝ Ներքին գործերի նախարարության ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչության ներկայացուցիչների հետ, ինչի արդյունքում համապատասխան ընթացակարգի արդյունքում ժամանակավորապես դադարեցվում է այլ երկրների կողմից հետախուզվող քաղաքացու սահմանային տեղաշարժի նկատմամբ առկա հսկողությունը և նա հնարավորություն է ստանում հատել ՀՀ պետական սահմանը: Այդուհանդերձ, տվյալ անձի նկատմամբ հայտարարված հետախուզումն ինքնին չի դադարում և շարունակում է գործել մյուս պետությունների տարածքում, և օտարերկրյա որևէ (երրորդ) պետությունում, որի

քաղաքացին չի հանդիսանում տվյալ անձը, հայտնաբերվելու դեպքում՝ հնարավոր է քննարկվի այդ պետության կողմից նրան հետախուզումը նախաձեռնած պետությանը հանձնելու հարցը:

Հատկանշական է, որ պետական իրավասու մարմինների հետ կայուն համագործակցության արդյունքում քննարկվող խնդրի վերաբերյալ բազմաթիվ բողոքներով բարձրացված հարցեր ստանում են լուծում: Վերոգրյալի հաշվառմամբ՝ ***Պաշտպանը կրկին դրական է գնահատում ոլորտում առկա խնդիրների լուծմանն ուղղված պետական իրավասու մարմինների պատրաստակամությունն ու կատարվող աշխատանքները, միևնույն ժամանակ, կրկին վերահաստատում է 2024 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդմամբ արտահայտված դիրքորոշումն այն մասին, որ անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել օրենսդրական մակարդակում խնդիրն առավել մանրամասն կարգավորման ենթարկելու, ըստ այդմ՝ այլ պետության կողմից անձի նկատմամբ հայտարարված հետախուզման պարագայում նրա ազատ տեղաշարժվելու իրավունքի ոչ իրավաչափ սահմանափակումները բացառելու ուղղությամբ:***

ԳԼՈՒԽ 4. ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԵՎ ԱՅԴ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ ՓԱՍՏԱԲԱՆԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

Մարդու իրավունքների պաշտպանը մշտապես ընդգծել է անձի իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի պատշաճ իրացման նշանակությունը իրավական և ժողովրդավար պետությունում՝ որպես մարդու իրավունքների պաշտպանության համակարգի կարևորագույն բաղադրիչներից մեկը: Իրավական օգնություն ստանալու, այդ թվում՝ մեղադրանքից կամ հնարավոր ապօրինի հետապնդումից պաշտպանվելու իրավունքը հանդիսանում է արդար դատաքննության կարևոր բաղադրիչներից մեկը: Ուստի, առավել քան կարևոր է հասարակության և պետական մարմինների, հատկապես, իրավապահ համակարգի ներկայացուցիչների կողմից անձի իրավաբանական օգնության իրավունքի պատշաճ ընկալումը, ինչպես նաև դրա անշեղորեն պահպանումը:

Վերոգրյալ հարցերին Պաշտպանը բազմիցս անդրադարձել է ինչպես հրապարակային հայտարարությունների շրջանակներում, այնպես էլ զանգվածային լրատվության միջոցների հետ հաղորդակցության ընթացքում:

Քննարկվող հարցի համատեքստում կարևոր է փաստաբանության դերն ու նշանակությունը, փաստաբանների գործունեության երաշխիքները, ոլորտում պետության համապատասխան պարտավորությունները, ինչպես նաև համապատասխան ներպետական և միջազգային իրավակարգավորումները, գործունեության չափանիշները և երաշխիքները, որոնց մանրամասն անդրադարձ է կատարվել նախորդ տարեկան հաղորդումներում[130]:

Վերոգրյալով հանդերձ՝ անձի իրավաբանական օգնություն ստանալու իրավունքն իրացնելու հետ կապված խնդիրները չեն կորցնում իրենց արդիականությունը: Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2025 թվականին ստացվել են բողոքներ և ահազանգեր անձին իրավաբանական օգնություն տրամադրելու նպատակով վարույթն իրականացնող մարմին փաստաբանի մուտքը չապահովելու վերաբերյալ:

Մասնավորապես, 2025 թվականի ընթացքում շարունակել են արձանագրվել դեպքեր, երբ փաստաբանին են դիմել անձը կամ նրա հարազատները՝ նրա շահերի պաշտպանությունը ստանձնելու նպատակով, փաստաբանը ներկայացել է վարույթն իրականացնող մարմին կամ վարութային գործողության, օրինակ՝ խուզարկության իրականացման վայր և ներկայացրել համապատասխան փաստաթղթերը, սակայն իր մուտքը չի ապահովվել: Դեպքերից որոշներում էլ, թեև վարույթն իրականացնող մարմինը չի հրաժարվել ապահովել փաստաբանի մուտքը, սակայն այն ձգձգվել է տևական ժամանակ, ընդհուպ՝ մինչև մի քանի ժամ, ինչի հետևանքով վարութային գործողությանը մասնակցությունն առարկայազուրկ է դարձել և փաստացի անձը տվյալ պահին զրկված է եղել իրավաբանական օգնություն ստանալու իր իրավունքից:

Բացի այդ, քննարկվող ժամանակահատվածում արձանագրվել են դեպքեր, երբ անձին իրավաբանական օգնություն տրամադրելու նպատակով ներկայացած փաստաբանի մուտքը վարույթն իրականացնող մարմին չի ապահովվել, չնայած մինչ այդ նա ներկա է գտնվել նույն վստահորդի բնակարանում իրականացվող խուզարկությանը:

---

[130] Տե՛ս 2023 թվականին Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների պաշտպանության վիճակի մասին հաղորդումը, էջ 334-349, հասանելի է https://www.ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2024 թվականին Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների պաշտպանության վիճակի մասին հաղորդումը, էջեր 249-262, հասանելի է https://www.ombuds.am/images/files/4d1335361f1f7e9fbcc1cfc10679701e.pdf հղումով, 20.03.2026թ. դրությամբ:

Որոշ դեպքերում փաստաբանի մուտքը չթույլատրելու վերաբերյալ ներկայացվել է պատճառաբանություն առ այն, որ ազատությունից զրկված անձը հրաժարվել է պաշտպանից կամ անձի մասնակցությամբ արդեն իրականացվում է վարութային գործողություն և պաշտպանի ներգրավման հարցը կարող է քննարկվել բացառապես գործողության ավարտից հետո: Արձանագրվել են նաև դեպքեր, երբ մինչ անձի նախընտրելի փաստաբանի ներկայանալը վարութային գործողությունն իրականացնելու համար ներգրավվել է հանրային պաշտպան:

Մի շարք բողոքներ և ահազանգեր էլ ստացվել են այն մասին, որ անձը ձերբակալվել կամ հրավիրվել է իրավապահ մարմին, սակայն ընտանիքի անդամներին կամ փաստաբանին տեղեկություն չի տրամադրվել նրա գտնվելու վայրի կամ վարույթն իրականացնող մարմնի և քննիչի վերաբերյալ, որպիսի պայմաններում փաստաբանը զրկված է եղել իր վստահորդի իրավունքների պաշտպանության նպատակով համապատասխան ստորաբաժանում ներկայանալու հնարավորությունից:

2025 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմում ստացված քիչ թվով ահազանգեր վերաբերել են կալանավորված անձին կամ դատապարտյալին իրավաբանական օգնություն տրամադրելու նպատակով քրեակատարողական հիմնարկ ներկայացած փաստաբանի մուտքը չապահովելուն: Մասնավորապես, ստացված ահազանգերից մեկով փաստաբանը հայտնել է, որ ներկայացել է քրեակատարողական հիմնարկ, ներկայացրել փաստաբանի արտոնագիրն ու քրեական վարույթն իրականացնող քննիչի համապատասխան որոշումը, որով հավաստվում է իր՝ մեղադրյալի պաշտպան հանդիսանալու հանգամանքը, սակայն քրեակատարողական հիմնարկի ծառայողները չեն ապահովել իր մուտքը քրեակատարողական հիմնարկ և տեսակցությունը պաշտպանյալի հետ՝ որոշման վրա համապատասխան կնիքի բացակայության հիմքով, թեև նման օրենսդրական պահանջ առկա չէ: Մեկ այլ բողոքով տեղեկություն է ստացվել այն մասին, որ փաստաբանի մուտքը քրեակատարողական հիմնարկ կրկին չի թույլատրվել, թեև մինչ այդ քրեակատարողական հիմնարկում փաստաբանը մասնակցել է նույն անձի հարցաքննությանը:

Հատկանշական է, որ վերը թվարկված դեպքերից յուրաքանչյուրի պարագայում Պաշտպանի աշխատակազմի կողմից իրականացվել և իրականացվում է անհապաղ միջամտություն: Ընդ որում՝ դեպքերի մեծամասնության պարագայում խնդիրը ստանում է լուծում իրավասու մարմնի հետ քննարկման կամ արագ արձագանքման այցի շրջանակներում: Ըստ անհրաժեշտության՝ իրականացվում է նաև համապատասխան գրագրություն: Այս կապակցությամբ Պաշտպանը կարևորում է իրավասու մարմինների հետ ձևավորված պատշաճ համագործակցությունը, սակայն արձանագրում է, որ նշված ոլորտում իրավակիրառ պրակտիկան ունի համակարգային կատարելագործման անհրաժեշտություն: Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ պետական իրավասու մարմինների հետ հաղորդակցության արդյունքում պարզ է դարձել, որ առանձին դեպքերում փաստաբանի մուտքը համապատասխան հաստատություն սեղմ ժամկետում չի ապահովվել, քանի որ փաստաբանի կողմից չեն ներկայացվել անհրաժեշտ փաստաթղթերը, և դրանք ներկայացվելուց հետո է միայն ապահովվել փաստաբանի մուտքն ու տեսակցությունը վստահորդի հետ:

Տարեկան հաղորդման նախապատրաստական աշխատանքների շրջանակում Ներքին գործերի նախարարությունից ստացվել են տեղեկություններ առ այն, որ 2025 թվականի ընթացքում ՀՀ ՆԳՆ ներքին անվտանգության և հակակոռուպցիոն վարչությունում ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումներ բերված կամ ձերբակալված անձանց շահերը ներկայացնող փաստաբաններին իրենց վստահորդների

հետ հանդիպում թույլ չտալու վերաբերյալ իրականացվել է մեկ ծառայողական քննություն, որի արդյունքները թողնվել են անհետևանք՝ կարգապահական խախտման հատկանիշների բացակայության հիմքով:

Քննչական կոմիտեից նույն խնդրի հետ կապված ստացվել են տեղեկություններ առ այն, որ 2025 թվականի ընթացքում վարույթն իրականացնող մարմին ներկայացված կամ ձերբակալված անձանց փաստաբանի մատչելիության իրավունքի, ինչպես նաև քրեական վարույթն իրականացնող մարմին փաստաբանի մուտքը չթույլատրելու հետ կապված ստացվել է 8 բողոք, որոնց կապակցությամբ իրականացվել է 1 նախնական ուսումնասիրություն, որը դադարեցվել է վարույթն իրականացնող քննիչի արարքում կարգապահական խախտման և կարգապահական վարույթ հարուցելու հիմքերի բացակայության պատճառաբանությամբ: 2025 թվականի ընթացքում փաստաբանի ներգրավումը վարույթն իրականացնող մարմնի կողմից տևական ժամանակ չապահովելու վերաբերյալ ստացվել է 2 բողոք, որոնց կապակցությամբ իրականացված նախնական ուսումնասիրությունները դադարեցվել են՝ վարույթն իրականացնող քննիչի արարքում կարգապահական խախտման և կարգապահական վարույթ հարուցելու հիմքերի բացակայության պատճառաբանությամբ:

Կալանավորված անձին կամ դատապարտյալին իրավաբանական օգնություն տրամադրելու նպատակով քրեակատարողական հիմնարկ ներկայացած փաստաբանի մուտքը չթույլատրելու վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարությունից ստացված տեղեկությունների համաձայն՝ ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում անազատության մեջ պահվող բոլոր անձինք ապահովված են և անխոչընդոտ իրացնում են իրենց փաստաբանների հետ կապ հաստատելու կամ տեսակցելու իրավունքը, այդ թվում նաև ոչ աշխատանքային օրերին և/կամ ժամերին, քրեակատարողական օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերի պահպանմամբ՝ տեղադրված հեռախոսային սարքերի միջոցով, իսկ տեսակցության դեպքում՝ փաստաբանի կողմից հիմնարկ ներկայանալու եղանակով: Միևնույն ժամանակ, առողջապահական մարմինների բուժական հաստատություններում առկա են շարժական հեռախոսակապի միջոցներ, որոնց միջոցով բուժում ստացող ազատազրկված անձինք կապ են հաստատում փաստաբանների և այլ իրավապաշտպան կառույցների հետ:

Միևնույն ժամանակ, ըստ Արդարադատության նախարարությունից ստացված պարզաբանման՝ հաշվետու ժամանակահատվածում քրեակատարողական հիմնարկներ փաստաբանների մուտքն արգելելու և ազատությունից զրկված անձանց՝ իրավաբանական օգնության իրավունքի ենթադրյալ խախտումների վերաբերյալ Քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի ներքին անվտանգության բաժնում ստացվել է երկու բողոք, որոնց կապակցությամբ իրականացված ծառայողական քննությունների արդյունքում քրեակատարողական ծառայողների գործողություններում կարգապահական կամ այլ խախտումներ չեն հայտնաբերվել:

Չնայած ստացված պարզաբանումներին և հաշվի առնելով Պաշտպանի աշխատակազմում պարբերաբար ստացվող բողոքները՝ Մարդու իրավունքների պաշտպանը կրկին ընդգծում է, որ փաստաբանի մուտքն ու վստահորդին տեսակցելն ուղղված են անձի իրավունքների լիարժեք իրացման երաշխավորմանը: Նշվածի հաշվառմամբ՝ խիստ մտահոգիչ է վստահորդների իրավունքների պաշտպանությունը ստանձնելու նպատակով ներկայացած փաստաբանների մուտքի կամ ներգրավման առումով խնդիրներ ստեղծելու պրակտիկան: Նման գործելաոճը վտանգում է իրավապահ մարմնի հետ առնչվող, առավել ևս հետաքննության կամ վարույթն իրականացնող մարմնի վարչական շենքում գտնվող՝ հատկապես քրեական հետապնդման ենթարկվող անձանց

իրավաբանական օգնություն ստանալու, ինչպես նաև դրա հետ փոխկապակցված այլ իրավունքների պատշաճ իրացումը: Նշվածի մասին Պաշտպանը տարվա ընթացքում հանդես է եկել նաև հրապարակային հայտարարություններով[131]:

Պաշտպանը հարկ է համարում կրկին արձանագրել, որ անկախ այն հանգամանքից՝ ազատությունից զրկված անձը գտնվում է հետաքննության կամ նախաքննության մարմնում, ազատությունից զրկման վայրում կամ իրավապահ մարմինների հսկողության ներքո այլ վայրում, ինչպես նաև անկախ նրա մասնակցությամբ ապացուցողական կամ վարութային այլ գործողություններ սկսված լինելուց՝ նա պետք է ունենա իրավաբանական օգնություն ստանալու իրավունք և, ըստ այդմ, փաստաբանի հասանելիության հնարավորություն: Ուստի պետական իրավասու մարմինները պարտավոր են ապահովել փաստաբանի անխոչընդոտ մուտքն ազատությունից զրկված անձի գտնվելու վայր՝ առանց անհիմն ձգձգումների և տեխնիկական կամ ընթացակարգային բարդությունների:

Այս կապակցությամբ Պաշտպանը, հաշվի առնելով քննարկվող խնդիրների կապակցությամբ իրավասու մարմիններից ստացված պարզաբանումները, կարևորում է, որպեսզի պետական իրավասու մարմինները քննարկվող խնդրի վերաբերյալ ստացված բողոքների կապակցությամբ անհրաժեշտ, բավարար և պատշաճ քայլեր ձեռնարկեն իրականացվող նախնական ուսումնասիրությունները, ծառայողական քննությունները կամ ներքին այլ գործընթացներն արդյունավետ կերպով իրականացնելու և նմանատիպ դեպքերը հետագայում բացառելու ուղղությամբ:

Նախորդ տարիներին ազատությունից զրկված անձի իրավաբանական օգնության իրավունքի իրացման հետ կապված բարձրացված խնդիրներից մեկը վերաբերել է դատարանի խցում փաստաբանի կողմից պաշտպանյալին տեսակցելու հնարավորություն չընձեռելու հարցին: Կարևոր է նշել, որ այս առնչությամբ Բարձրագույն դատական խորհրդի կողմից դեռ նախորդ տարի ձեռնարկվել էին առանձին միջոցներ դատարանի խցերում պահվող անձանց մի շարք իրավունքների իրացումը չապահովելու համակարգային խնդիրների լուծման ուղղությամբ: Այս առնչությամբ 2025 թվականի տարեկան հաղորդման նախապատրաստման աշխատանքների ընթացքում ստացվել է տեղեկություն առ այն, որ ձերբակալված անձանց փաստաբանի հետ տեսակցության իրավունքի ապահովման նպատակով 2025 թվականին դատարանների շինարարական աշխատանքների ընթացքում արդեն իսկ երեք դատարանների փակ գոտիներում նախատեսվել են համապատասխան տարածքներ:

Պաշտպանը գնահատում է տարիներ շարունակ առկա՝ դատարանի խցերում պահվող անձանց մի շարք իրավունքների իրացումը չապահովելու համակարգային խնդիրների լուծման ուղղությամբ ձեռնարկվող միջոցները և փաստում, որ նշված խնդրի կապակցությամբ ոլորտում առկա է դրական դինամիկա:

Պաշտպանն իր անմիջական ուշադրության կենտրոնում է պահում փաստաբանների նկատմամբ իրականացվող յուրաքանչյուր քրեական հետապնդման դեպք և իր իրավասությունների շրջանակում իրականացնում համապատասխան գործողություններ: Այս համատեքստում, Պաշտպանի հանձնարարությամբ աշխատակազմի ներկայացուցիչներն ազատությունից զրկման վայրերում տեսակցել են քրեական հետապնդման ենթարկվող փաստաբանների, առանձնազրույցներ ունեցել նրանց հետ, ինչի արդյունքում բարձրացված խնդիրները հասցեավորվել են իրավասու

[131]Հասանելի են հետևյալ հղումներով՝ https://ombuds.am/am/site/ViewNews/3448, https://ombuds.am/am/site/ViewNews/3543, 20.03.2026թ. դրությամբ:

մարմիններին: Առանձին դեպքերում Պաշտպանը հանդես է եկել նաև հրապարակային հայտարարություններով[132]:

Դրանցից մեկով Պաշտպանն ընդգծել է, որ «Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում զանգվածային լրատվության միջոցների և սոցիալական մեդիայի մշտադիտարկման արդյունքում տեղեկություն է ստացվել առ այն, որ ձերբակալվել է փաստաբան՝ «Ֆեյսբուք» սոցիալական ցանցի իր օգտահաշվում հրապարակային խոսքի համար:

Ավելի ուշ պարզվել է, որ փաստաբանի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում ՀՀ քրեական օրենսգրքի 490 հոդվածի 2-րդ մասով և վերջինիս նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանքը՝ 2 ամիս ժամկետով:

Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանը բազմիցս է բարձրաձայնել մասնագիտական տարբեր համայնքների, այդ թվում՝ փաստաբանական համայնքի ներկայացուցիչների կողմից ոչ իրավաչափ հրապարակային խոսքի օգտագործման լայն ծավալների մասին՝ ընդգծելով, որ մասնագիտական համայնքների համար պետք է ոչ թե պարզապես սահմանվեն էթիկայի ու վարքագծի կանոններ, այլ դրանք պետք է հետևողականորեն կիրառվեն: Այդ առումով Հայաստանի Հանրապետությունում առկա են լրջագույն խնդիրներ, քանի որ լայն ծավալով տարածվող՝ էթիկայի ու վարքագծի կանոններին և մարդու իրավունքների ժամանակակից չափանիշներին հակասող խոսքի համար գրեթե չեն կիրառվում համայնքների ներսում գործող կարգապահական պատասխանատվության նախատեսված կառուցակարգերը:

Միևնույն ժամանակ, Մարդու իրավունքների պաշտպանն անթույլատրելի է համարում այն տրամաբանությունը, որ ցանկացած նման խոսք կարող է հանգեցնել քրեական պատասխանատվության: Միջազգային չափանիշների համաձայն՝ ոչ իրավաչափ խոսքի միայն ամենածանր տեսակների և ծանրակշիռ հիմնավորումների առկայության պայմաններում կարող է վրա հասնել քրեական պատասխանատվություն, առավել ևս՝ անձի նկատմամբ կիրառվել ազատությունից զրկելու ձևով խափանման միջոց կամ պատիժ:

Ուստի Պաշտպանն անթույլատրելի է համարում խոսքի համար անձանց նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումները այն պայմաններում, երբ հանրությանը չի ներկայացվում պատշաճ տեղեկատվություն այն մասին, թե ինչու է կոնկրետ դեպքում խոսքը հատել նման ծանր հանրային վտանգավորության շեմն ու ինչու անձին պետք է զրկել ազատությունից: Դա հատկապես խնդրահարույց է այն պայմաններում, երբ անձն ազատությունից զրկվում է ուժի կիրառմամբ:

Չանդրադառնալով կոնկրետ գործով/գործերով կալանքի կիրառման իրավաչափության հարցին՝ Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանը բազմիցս է ընդգծել կալանքը որպես խափանման միջոց կիրառելու պրակտիկայի համակարգային խնդիրները:

Այս համատեքստում Պաշտպանը վերահաստատում է իր դիրքորոշումն առ այն, որ կալանքը որպես խափանման միջոց ընտրելիս անհրաժեշտ է խստորեն պահպանել դրա կիրառման իրավաչափությանը վերաբերելի չափանիշները՝ հաշվի առնելով և այն, որ կալանքը կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ այլընտրանքային խափանման միջոցների կիրառումն անբավարար է մեղադրյալի փախուստը, նրա կողմից հանցանք

[132]Հասանելի են հետևյալ հղումներով՝ https://ombuds.am/am/site/ViewNews/3546, https://ombuds.am/am/site/ViewNews/3557, 20.03.2026թ. դրությամբ:

կատարելը կամ մեղադրյալի վրա դրված պարտականությունների կատարումն ապահովելու համար:

Կալանքի ինստիտուտի չարաշահումը, իր հերթին, կարող է լրջորեն վնասել քրեական արդարադատության ամբողջ շղթայի նկատմամբ վստահությունը և առաջացնել այլ համակարգային խնդիրներ»:

Մարդու իրավունքների պաշտպանը մշտապես կարևորել է նաև փաստաբանների կողմից մասնագիտական գործունեության անկախության և փաստաբանական էթիկայի սկզբունքները, ինչպես նաև փաստաբանի վարքագծի կանոնները պահպանելու անհրաժեշտությունը, ինչն ամրագրված է ինչպես միջազգային փաստաթղթերում, այնպես էլ ներպետական օրենսդրությամբ: Հատկապես իրավահավասարության և հակախտրականության ոլորտում Մարդու իրավունքների պաշտպանի կողմից իրականացվող իրավունքների խթանման մանդատի տեսանկյունից Պաշտպանն արձանագրել է ատելության խոսքի և խտրական խոսույթի տարածման մտահոգիչ դինամիկա: Ընդ որում՝ նման խոսքի օգտագործում արձանագրվել է նաև փաստաբանական համայնքում, ինչն անթույլատրելի է և պահանջում է համակարգային արձագանք:

Պաշտպանը վերահաստատում է, որ փաստաբաններին ներկայացնող մարմինները պետք է առաջատար դեր ունենան էթիկայի նորմերի խախտումների, խտրական և ատելության խոսքի դեմ պայքարում՝ ոչ թե սահմանափակվելով ընթացակարգերի ֆորմալ կիրառմամբ, այլ համայնքում ձևավորելով հստակ և աներկբա մոտեցում, որ նման վարքագիծն անընդունելի է: Միևնույն ժամանակ, բարձր գնահատանքի է արժանի այն բազմաթիվ փաստաբանների աշխատանքը, որոնք իրենց բարեվարք և պրոֆեսիոնալ գործունեությամբ նպաստում են Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանությանը և այդ ոլորտում առողջ հանրային ընկալումների ձևավորմանը:

Միևնույն ժամանակ, 2025 թվականին տեղի ունեցած իրադարձությունների, այդ թվում՝ փաստաբանների նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումների հաշվառմամբ, Պաշտպանն ընդգծում է, որ փաստաբանական համայնքի ներկայացուցիչների կողմից էթիկայի ու մասնագիտական վարքագծի կանոններին հակասող հրապարակային խոսքի գնահատումը պետք է առաջին հերթին քննարկվի մասնագիտական համայնքի ներսում գործող էթիկական և կարգապահական կառուցակարգերի արդյունավետ ու հետևողական կիրառմամբ: Մարդու իրավունքների պաշտպանն անթույլատրելի է համարում այն տրամաբանությունը, որ ցանկացած նման խոսք կարող է հանգեցնել քրեական պատասխանատվության: Միջազգային չափանիշների համաձայն՝ ոչ իրավաչափ խոսքի միայն ամենածանր տեսակների և ծանրակշիռ հիմնավորումների առկայության պայմաններում կարող է վրա հասնել քրեական պատասխանատվություն, առավել ևս՝ անձի նկատմամբ կիրառվել ազատությունից զրկելու ձևով խափանման միջոց կամ պատիժ: Ուստի, Պաշտպանն անթույլատրելի է համարում խոսքի համար անձանց նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումներն այն պայմաններում, երբ հանրությանը չի ներկայացվում պատշաճ տեղեկատվություն այն մասին, թե ինչու է կոնկրետ դեպքում խոսքը հատել նման ծանր հանրային վտանգավորության շեմն ու ինչու անձին պետք է զրկել ազատությունից:

Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկման ներքո են գտնվել նաև պետության կողմից անվճար հիմունքներով իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի իրացման հետ կապված հարցերը: Դրանք Պաշտպանին են հասցեագրվել ոչ միայն անհատական բողոքների միջոցով, այլ նաև քաղաքացիական հասարակության հետ հաղորդակցության և իրականացվող մշտադիտարկումների ընթացքում:

Մասնավորապես, 2025 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմ են ստացվել մի շարք բողոքներ (այդ թվում՝ տարվա ընթացքում իրականացված բոլոր մշտադիտարկման այցերի ընթացքում)՝ հանրային պաշտպանների գործունեության առնչությամբ:

Հանրային պաշտպանների կողմից անվճար հիմունքներով իրավաբանական օգնության տրամադրման հետ կապված տարաբնույթ հարցեր պարբերաբար բարձրաձայնում են նաև հասարակական կազմակերպությունները, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներին առնչվող հարցերով զբաղվող

Հանրային պաշտպաններին առնչվող բողոքները հիմնականում վերաբերում են հետևյալ հարցերին.

1) Ըստ ազատությունից զրկված անձանցից ստացված տեղեկատվության՝ հանրային պաշտպանները պատշաճ կերպով չեն իրականացնում իրենց իրավունքների և շահերի պաշտպանությունը, հաճախ են բացակայում դատական նիստերից և իրենց իրավունքների պաշտպանությունը պատշաճ չեն իրականացնում, չեն պատասխանում հեռախոսազանգերին և չեն այցելում իրենց քրեական վարույթին առնչվող հարցերը քննարկելու նպատակով, բավարար միջոցներ չեն ձեռնարկում իրենց իրավունքների պաշտպանությունն ապահովելու և անմեղությունն ապացուցելու ուղղությամբ, քրեական վարույթի շրջանակում աջակցում են իրավապահ մարմիններին,

2) հանրային պաշտպանի գրասենյակի կողմից մատուցվող ծառայությունների ընթացքում հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ ոչ զգայուն վերաբերմունք դրսևորելուն,

3) հոգեկան առողջության հետ կապված խնդիրներ ունեցող անձի իրավունքների պաշտպանություն իրականացնելիս բավարար պրոֆեսիոնալ ու զգայուն մոտեցում չցուցաբերելուն,

4) հանրային պաշտպանի կողմից պաշտպանյալի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելուն և այլն:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ անվճար հիմունքներով իրավաբանական օգնության իրավունքի պատշաճ իրացման առնչությամբ առկա են տարատեսակ խնդիրներ, և պետությունը՝ շահագրգիռ բոլոր դերակատարների ներգրավմամբ, պետք է կատարելագործի նշված ոլորտում իր պարտավորությունների իրացման կառուցակարգերը:

Ընդգծելով պետության պարտականությունը՝ երաշխավորելու իրավունքի պաշտպանության համար անհրաժեշտ և բավարար միջոցների առկայությունը, այդ թվում՝ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի արդյունավետ իրացմանն ուղղված կառուցակարգերի ձևավորումն ու պատշաճ կիրառումը, Պաշտպանն արձանագրում է, որ յուրաքանչյուր դեպքում պետք է լիարժեքորեն պահպանվեն ներպետական և միջազգային չափանիշները, բացառվեն փաստաբանի մուտքի կամ վստահորդի հետ տեսակցելու, նրան իրավաբանական օգնություն տրամադրելու ցանկացած անհիմն սահմանափակման դրսևորումները: Նման բոլոր դեպքերը պետք է արժանանան համարժեք արձագանքի՝ ենթադրյալ խախտում թույլ տված անձանց պատասխանատվության ենթարկելու, ինչպես նաև նմանատիպ դեպքերը հետագայում բացառելու տեսանկյունից:

Միևնույն ժամանակ, կարևորելով պետության կողմից երաշխավորված անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի իրացման հետ կապված հարցերը, ինչպես նաև Պաշտպանի աշխատակազմ ստացվող բողոքների մեծածավալությունը՝ Մարդու իրավունքների պաշտպանն ընդգծում է, որ անհրաժեշտ է իրականացնել

ոլորտային բարեփոխումներ, որոնք կհանգեցնեն անվճար հիմունքներով իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի ոլորտում դրական փոփոխությունների:

ԳԼՈՒԽ 5. ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ԱՅԼ ԽՆԴԻՐՆԵՐ

1. ՀՀ ներքին գործերի նախարարության համակարգում գործող մարմիններին առնչվող խնդիրներ

1.1. ՀՀ ներքին գործերի նախարարության Միգրացիայի և քաղաքացիության ծառայության գործունեության ոլորտին առնչվող խնդիրներ

Պաշտպանը մշտապես կարևորել է ՀՀ ներքին գործերի նախարարության Միգրացիայի և քաղաքացիության ծառայության գործունեությունը՝ ուղղված իրավական պետության մեջ սոցիալական և իրավական հարաբերություններին մասնակցող անձանց իրավունքների պատշաճ իրացմանը: Այս ոլորտն ընդգրկում է կարևորագույն գործառույթներ՝ ուղղված միգրացիոն գործընթացների կառավարմանը, քաղաքացիության ձեռքբերմանը, դադարեցմանը, ՀՀ քաղաքացիների, օտարերկրացիների, փախստականների և քաղաքացիություն չունեցող անձանց նույնականացմանը, հաշվառմանը, փաստաթղթավորմանը և այլն: Նաև այս է պատճառը, որ սույն ոլորտին առնչվող հարցերը մշտապես գտնվել և շարունակում են գտնվել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ուշադրության կենտրոնում:

Օրինակ, 2024 թվականի Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների պաշտպանության վիճակի մասին հաղորդմամբ, անդրադառնալով ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության գործունեության ոլորտին առնչվող հարցերին, Պաշտպանը ողջունելի է համարել ՀՀ ներքին գործերի նախարարության՝ անձնագրային ծառայություններում հերթերի բեռնաթափման նպատակով հերթագրման հիբրիդային կարգ ներդնելու ուղղությամբ իրականացված փոփոխությունները: Միևնույն ժամանակ, Պաշտպանն անհրաժեշտ է համարել Միգրացիայի և քաղաքացիության ծառայության կողմից մատուցվող ծառայությունների, դրանցից օգտվելու կարգի վերաբերյալ քաղաքացիների շրջանում իրազեկման աշխատանքների իրականացումը, ինչպես նաև մատուցվող ծառայությունների շարունակական բարելավմանն ուղղված միջոցների գործադրումը:

2025 թվականի տարեկան հաղորդման նախապատրաստման աշխատանքների շրջանակում Ներքին գործերի նախարարությունից տեղեկություն է ստացվել այն մասին, որ էլեկտրոնային եղանակով հերթագրման գործընթացը գործում է ՀՀ ամբողջ տարածքում: Ներքին գործերի նախարարությունում ստացվել են որոշ բողոքներ այն մասին, որ էլեկտրոնային եղանակով հերթագրված անձինք հերթագրման ժամին ներկայացել են համապատասխան ստորաբաժանում և ստիպված են եղել կրկին սպասել: Ստացվել են որոշ բողոքներ, որոնք վերաբերել են հերթագրումների չեղարկմանը, սակայն հետագա ուսումնասիրությունները ցույց են տվել, որ չեղարկումներն իրականացված են եղել հերթագրված անձանց կողմից: Հերթագրման չեղարկմանը վերաբերող նման մի դեպք բողոքարկվել է դատական կարգով և գտնվում է ընթացիկ փուլում:

Ներքին գործերի նախարարությունից նաև տեղեկություն է ստացվել այն մասին, որ 2025 թվականի ընթացքում ՄԱԿ Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի կողմից ՀՀ պետական սահմանի (ՀՀ-Վրաստան) երեք անցակետերում տեղադրվել են պաստառներ, որտեղ թվարկված են միգրացիայի հարցերով լիազոր մարմնի և մի շարք կազմակերպությունների՝ այդ թվում նաև՝

Պաշտպանի գրասենյակի կոնտակտային տվյալները՝ տվյալ կառույցներ դիմելու հնարավորության վերաբերյալ իրազեկմամբ (7 լեզուներով):

Պաշտպանն արձանագրում է, որ հաշվետու ժամանակահատվածում Միգրացիայի և քաղաքացիության ծառայության գործունեության առնչությամբ ստացված համեմատաբար քիչ թվով բողոքները վկայում են նախորդ տարիներին ոլորտում առկա խնդիրների կապակցությամբ ձևավորվող դրական միտումների մասին: Այնուամենայնիվ, Պաշտպանի աշխատակազմում ստացվել են սակավաթիվ բողոքներ՝ կապված էլեկտրոնային հերթագրման գործընթացի վերաբերյալ:

Մասնավորապես, բողոքներից մեկով Պաշտպանին դիմած անձը հայտնել է, որ էլեկտրոնային հերթագրման համակարգում կուտակված հերթերի պատճառով ստիպված է եղել քաղաքացիություն ստանալու նպատակով հերթագրվել այլ երկրում ՀՀ դեսպանատանը:

Մեկ այլ բողոքով անձը հայտնել է, որ ներկայացել է Միգրացիայի և քաղաքացիության ծառայության տարածքային բաժին՝ քաղաքացիություն ստանալու վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերի վերաբերյալ տեղեկություն ստանալու նպատակով, սակայն իրեն որևէ պարզաբանում չի ներկայացվել, իսկ տարածքային բաժնի աշխատակիցները հորդորել են հերթագրվել էլեկտրոնային եղանակով: Ըստ պնդման՝ տեղեկացրել է բջջային հեռախոս և էլեկտրոնային եղանակով հերթագրման այլ հնարավորություն չունենալու մասին, սակայն նշված հանգամանքը հաշվի չի առնվել: Նշվածի կապակցությամբ ձեռնարկված միջոցների, Միգրացիայի և քաղաքացիության ծառայության հետ կայուն և արդյունավետ համագործակցության արդյունքում բարձրացված հարցը ստացել է լուծում:

Վերոնշյալի համատեքստում Պաշտպանը կարևորում է թվայնացման գործընթացը հանրային ծառայության ոլորտում, որը թեև նպաստում է վարչարարության թափանցիկությանն ու արդյունավետությանը, սակայն դրա իրականացումը պետք է ուղեկցվի սոցիալական ներառականության ապահովմամբ: Հատկապես անհրաժեշտ է հաշվի առնել թվային հմտություններ կամ տեխնիկական միջոցներ չունեցող անձանց կարիքները՝ ապահովելով այլընտրանքային մեխանիզմների առկայություն:

Ներքին գործերի նախարարությունից ստացվել են նաև վիճակագրական տվյալներ այն մասին, որ 2025 թվականին ՀՀ քաղաքացիություն ստանալու դիմում է ներկայացրել 32.891 անձ, իսկ ՀՀ քաղաքացիությունը դադարեցնելու համար դիմել է 4.960 անձ: Ինչպես նաև տեղեկություն է ներկայացվել այն մասին, որ «Քաղաքացիության գործերի կառավարման էլեկտրոնային տեղեկատվական համակարգի նկարագիրը և աշխատակարգը, համակարգին հասանելիություն ունեցող մարմինների ցանկը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, դրանք ներկայացնելու, քննարկելու, այդ թվում՝ համակարգի միջոցով էլեկտրոնային հայտ ներկայացնելու, դիմումն անձամբ ներկայացնելու համար հերթագրվելու, իրավասու մարմիններ (այդ թվում՝ ինքնաշխատ եղանակով պետական մարմինների տիրապետման ներքո գտնվող էլեկտրոնային տեղեկատվական համակարգեր) հարցումներ կատարելու, համապատասխան տեղեկություններ և եզրակացություններ, համակարգի միջոցով ծանուցումներ ստանալու կարգը և ժամկետները, ինչպես նաև ազգությամբ հայ լինելը հաստատող մկրտության մասին փաստաթուղթ տրամադրող եկեղեցական կառույցների ցանկը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացող անձի երդման արարողակարգը, քաղաքացիության հարցերով միջգերատեսչական հանձնաժողովի կազմավորման և

գործունեության կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը նախապատրաստվում է ներկայացնել Նախարարական կոմիտեի նիստին:

Հարկ է ընդգծել, որ դեռևս արդիական են մնում Հայաստանի տարբեր մարզերի բնակավայրերում տարածքային անձնագրային ստորաբաժանումների փակվելու հետևանքով առաջացող խնդիրները: Մասնավորապես, Հայաստանի բոլոր մարզեր իրականացվող այցերի ընթացքում նշված հարցի կապակցությամբ բնակիչները դժգոհություններ են ներկայացնում Պաշտպանին՝ ընդգծելով բնակավայրերում տարածքային անձնագրային ստորաբաժանումների առկայության կարևորությունը: Ըստ բնակիչների՝ ներկայում գործող շրջիկ սպասարկման գրասենյակների գործունեությամբ առկա խնդիրներն ամբողջությամբ չեն լուծվում, քանի որ դրանց միջոցով ոչ բոլոր ծառայություններն են մատուցվում: Նշել են, որ շրջիկ սպասարկման գրասենյակը ծառայություն մատուցում է ամսական մեկ անգամ: Հաճախ, անհրաժեշտությունից ելնելով, բնակիչները ստիպված են լինում չսպասել և այցելել համապատասխան բաժին՝ կատարելով հավելյալ ծախսեր: Ավելին, եկամտահարկի տարեկան հաշվարկ-հայտարարագիր ներկայացնելու համար նույնականացման քարտ տրամադրելու համար բնակիչները ստիպված են լինում առնվազն երկու անգամ այցելել համապատասխան բաժին: Այս ամենն այն պայմաններում, երբ գրեթե բոլոր մարզային բնակավայրերում առկա են հանրային տրանսպորտի հետ կապված լուրջ խնդիրներ:

Խնդիրը պետական իրավասու մարմիններին հասցեավորելուց հետո Միգրացիայի և քաղաքացիության ծառայությունից տեղեկություն է ստացվել այն մասին, որ դեռևս 2023 թվականին ՀՀ ներքին գործերի նախարարության կազմում Միգրացիայի և քաղաքացիության ծառայության ձևավորմամբ սկիզբ էր դրվել մի շարք բարեփոխումների, այդ թվում՝ նախատեսվել էր տարածքային անձնագրային ծառայությունների օպտիմալացումը, որի արդյունքում թվով 16 անձնագրային ծառայություններ օպտիմալացվել են՝ համապատասխանաբար միանալով առավել մոտ գտնվող անձնագրային ծառայություններին: Նշված գործընթացն իրականացնելիս հաշվի էր առնվել տարածքային անձնագրային ծառայությունների համալրվածությունը, տարեկան կատարվող գործարքների թիվը, աշխարհագրական դիրքը և նախատեսվող Պետություն-մասնավոր գործընկերության ծրագրի մեկնարկը: Օպտիմալացման աշխատանքներին զուգահեռ, միջգերատեսչական քննարկումների արդյունքում հանվել է բանկեր և դպրոցներ ՀԾՀ տեղեկանք ներկայացնելու պահանջը, հանվել է նաև անձնագրում օտարերկրյա պետություններում վավերականության մասին նշումը, որոնք նվազեցրել են անձնագրային ծառայություններ այցելելու կարիքը: Դիտարկելով միջազգային փորձը և հաշվի առնելով մատուցվող ծառայությունների բնույթը՝ անձնագրային ծառայություններ այցելելու կարիքն առաջանում է միայն անձնագրի դիմում ներկայացնելու և հաշվառման փոփոխություն կատարելու համար, քանի որ ծառայությունների գերակշիռ մասը թվայնացման փուլում են:

Մինչև 2026 թվականի առաջին կիսամյակի ավարտը՝ պետություն-մասնավոր գործընկերության ստեղծումը, որպես միջանկյալ լուծում նախատեսվել է շրջիկ գրասենյակի միջոցով ծառայությունների մատուցումը, որի միջոցով մատուցվում են ինչպես ՆԳՆ ՄՔԾ, այդպես էլ ՀՔԲ որոշակի ծառայություններ, Լեռնային Ղարաբաղից տեղահանված անձանց ՀՀ քաղաքացիություն ստանալու դիմումների ընդունում, ինչպես նաև քաղաքացիություն ստանալուց հետո առաջին անգամ անձնագրավորման գործընթացներ: Նաև նշվել է, որ շրջիկ գրասենյակի միջոցով հանրային ծառայությունների մատուցումը կրելու է շարունակական բնույթ, և քննարկվում են շրջիկ գրասենյակներում

նույնականացման քարտի սարքը ներդնելու հնարավորությունը ևս, իսկ պահանջարկով պայմանավորված՝ հնարավոր կլինեն մատուցել նաև այլ ծառայություններ:

Վերոնշյալի լույսի ներքո, դրական գնահատելով Միգրացիայի և քաղաքացիության ծառայության գործունեության ոլորտում իրականացվող թվայնացման և վարչարարական բարեփոխումների գործընթացը, որն ընդհանուր առմամբ, ունի դրական զարգացումների միտում, Պաշտպանը կարևորում է համակարգային բարեփոխումների շարունակականությունը, այդ թվում՝ շրջիկ գրասենյակների կողմից տրամադրվող ծառայությունների տեսակների ընդլայնումը՝ ապահովելով տրամադրվող ծառայությունների մատչելիությունն ու արդյունավետությունը կամ խնդրի լուծման այլընտրանքային տարբերակների քննարկումը:

1.2. ՀՀ ՆԳՆ ոստիկանության գործունեությանը վերաբերելի խնդիրներ

2025 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմում շարունակել են ստացվել բողոքներ ՀՀ ՆԳՆ ոստիկանության ծառայողների գործողությունների ոչ իրավաչափ գործողությունների, այդ թվում՝ պատշաճ վարչարարություն չիրականացնելու վերաբերյալ:

Այսպես, չնայած 2024 թվականի տարեկան հաղորդմամբ Պաշտպանն արձանագրել էր, որ անհրաժեշտ է բացառել առանց վարչական իրավախախտման առկայությունն ապացուցելու և անձի լսված լինելու իրավունքի իրացումն ապահովելու անձին վարչական պատասխանատվության ենթարկելու անթույլատրելի պրակտիկան, այնուամենայնիվ, 2025 թվականի ընթացքում Պաշտպանին շարունակել են հասցեագրվել բողոքներ վարչական պատասխանատվության ենթարկելիս օրենսդրության պահանջները չպահպանելու վերաբերյալ:

Օրինակ՝ ստացված բողոքներից մեկով անձը հայտնել է, որ ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայությունից ստացել է որոշում, համաձայն որի՝ Ոստիկանության կողմից կայացված որոշման հիման վրա իր նկատմամբ հարուցվել է կատարողական վարույթ: Նշել է, որ Ոստիկանությունից չի ուղարկվել իր վերաբերյալ կայացված որոշումը, ուստի զրկված է եղել այն բողոքարկելու հնարավորությունից: Դրանից հետո անձը դիմել է Ոստիկանության բաժին և ստացել որոշումը, որի համաձայն՝ «Ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման հետևանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման և կանխարգելման մասին» օրենքի 6-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջները խախտելու համար իր նկատմամբ նշանակվել է տուգանք՝ 50 000 ՀՀ դրամի չափով: Մինչդեռ, ինքը որևէ իրավախախտում չի կատարել, իսկ վարչական մարմինը որևէ ապացույց չի ներկայացրել հակառակի վերաբերյալ: Ավելին, վարչական ակտը ձևակերպված չի եղել հստակ, պարզ չի եղել, թե որ օրը կատարված իրավախախտման մասին է խոսքը, նշված չի եղել հանգամանքների շարադրանքը, մասնավորապես, թե ինչ իրավախախտում կատարելու համար է ենթարկվել վարչական պատասխանատվության, իսկ հիշյալ օրենքի 6-րդ հոդվածի 7-րդ մաս առկա չէ: Դրանից բացի, հղում կատարելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 283-րդ հոդվածին՝ բողոք ներկայացրած անձը պնդել է, որ կայացված որոշումն իրեն չի հանձնվել, մասնավորապես՝ որոշումն իրեն առձեռն չի տրամադրվել, իսկ որոշման մեջ առկա չէ նշում այն ստանալուց հրաժարվելու մասին:

Բողոքի քննարկման շրջանակում ՀՀ ներքին գործերի նախարարության հետ գրագրության արդյունքում՝ անձին վարչական պատասխանատվության ենթարկելու

մասին որոշումը բեկանվել է և վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը կարճվել է:

Պաշտպանը ևս մեկ անգամ ընդգծում է, որ վարչարարություն իրականացնելիս անհրաժեշտ է պահպանել վարչական ակտը կազմելու՝ օրենսդրությամբ սահմանված պահանջները, ինչպես նաև որոշման պատճենը հանձնելու կարգը:

Անհրաժեշտ է նաև նկատի ունենալ անձի կողմից վարչական իրավախախտում կատարելու հանգամանքն ապացուցելու անհրաժեշտությունը, որի պարտականությունը, անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում, կրում է վարչական մարմինը: Այսինքն՝ անձին վարչական պատասխանատվության ենթարկելիս անհրաժեշտ է ներկայացնել բավարար ապացույցներ, որոնք հաստատում են անձի կողմից վարչական իրավախախտում կատարելու հանգամանքը, տվյալ դեպքում՝ օրենքով արգելված վայրում ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների օգտագործումը:

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների մի մասով բարձրացվել են չարգելված վայրում ծխելու համար պատասխանատվության ենթարկելու, իրավունքները չպարզաբանելու, վարչական ակտին ներկայացվող պահանջները չպահպանելու, առանց իրավախախտում կատարած լինելու հանգամանքն ապացուցելու վարչական պատասխանատվության ենթարկելու, լսված լինելու իրավունքի իրացումը չապահովելու, ծխախոտային արտադրատեսակի օգտագործման արգելքի և սահմանափակման մասին տեղեկատվություն պարունակող ցուցանակներ առկա չլինելու վերաբերյալ հարցեր:

Դեպքերի մեծամասնության պարագայում իրականացված միջամտության արդյունքում վարչական ակտերը բեկանվել են:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Պաշտպանն արձանագրում է, որ անհրաժեշտ է խստորեն պահպանել ծխախոտ ծխելու համար անձին պատասխանատվության ենթարկելու համար սահմանված օրենսդրության պահանջները: Մասնավորապես, անձին վարչական պատասխանատվության ենթարկել միայն «Ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման հետևանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման և կանխարգելման մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ ծխախոտային արտադրատեսակի կամ ծխախոտային արտադրատեսակի փոխարինիչների օգտագործման կամ օգտագործման սահմանափակման արգելքը խախտելու դեպքում, ներկայացնել բավարար ապացույցներ վարչական իրավախախտման առկայության վերաբերյալ, պահպանել վարչական ակտին ներկայացվող պահանջները և այն անձին հանձնելու սահմանված կարգը: Նշվածի արդյունքում անձը ստիպված չի լինի բողոքարկել ակնհայտ ոչ իրավաչափ վարչական ակտը, ինչը կթոթափի նաև վերադաս վարչական մարմնի ծանրաբեռնվածությունն ու կխնայի բավականաչափ ռեսուրս:

Վերոգրյալից բացի, 2025 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմում շարունակել են ստացվել բազմաթիվ բողոքներ Պարեկային ծառայության աշխատակիցների գործունեության վերաբերյալ:

Մասնավորապես, բողոքներ են ներկայացվել առանց համապատասխան հիմքերի տրանսպորտային միջոցները կանգնեցնելու, փաստացի խուզարկելու, առանց պատշաճ իրավական հիմքերը ներկայացնելու տրանսպորտային միջոցները հատուկ տարածք տեղափոխելու և արգելանքի տակ դնելու, ենթադրյալ իրավախախտման համար վարչական տուգանքը վճարած լինելուց և իրավախախտումը վերացնելուց հետո տևական ժամանակ անհիմն օրինական տիրապետողին չվերադարձնելու հարցերի վերաբերյալ:

Օրինակ՝ Պաշտպանին ներկայացված բողոքներից մեկով անձը նշել է, որ չնայած ճանապարհային երթևեկության որևէ կանոն չխախտելուն, ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայողների կողմից կանգնեցվել է ավտոմեքենան: Ըստ պնդման՝ ծառայողները ստուգել են բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, ապա զննել ավտոմեքենան և պարզել, որ ավտոմեքենայում առկա չէ կրակմարիչ: Այնուհետև ինքը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 123-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգավորումների համատեքստում պատրաստակամություն է հայտնել տեղում վերացնել խախտումը և ազատվել վարչական պատասխանատվությունից, սակայն Պարեկային ծառայողներն ավտոմեքենան տեղափոխել են հատուկ տարածք: Դրանից հետո արդեն հատուկ տարածքում կազմվել է վարչական ակտ, որով սահմանված տուգանքը վճարել է, սակայն տևական ժամանակ տրանսպորտային միջոցը չի վերադարձվել իրեն:

Հատկանշական է, որ ինչպես վերը նկարագրված, այնպես էլ նույնաբնույթ մի շարք բողոքների դեպքում բարձրացված հարցերը, ելնելով դրանց հրատապությունից, բանավոր կերպով քննարկվել են Պարեկային ծառայության ներկայացուցիչների հետ և շատ դեպքերում բանավոր քննարկումների արդյունքում հարցը ստացել է լուծում, իսկ հատուկ տարածքում պահվող ավտոմեքենան նույն պահին վերադարձվել է օրինական տիրապետողին:

Հարկ է ընդգծել, որ դեռևս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին 2024 թվականի տարեկան հաղորդման շրջանակում արձանագրված խնդիրների հաշվառմամբ՝ Պաշտպանն արձանագրել է, որ անհրաժեշտ է բացառել տրանսպորտային միջոցները համապատասխան իրավական հիմքերի բացակայությամբ կամ առանց դրանք ներկայացնելու հատուկ տարածք բերման ենթարկելու և արգելանքի տակ դնելու, տևական ժամանակ անհիմն կամ ծրագրային, տեխնիկական խնդիրների պատճառաբանությամբ օրինական տիրապետողին չվերադարձնելու պրակտիկան՝ խստորեն պահպանելով տրանսպորտային միջոցները հատուկ տարածք տեղափոխելու և արգելանքի տակ դնելու համար օրենքով նախատեսված պահանջները: Պաշտպանն արձանագրել է նաև, որ բոլոր այն դեպքերում, երբ արդեն իսկ հատուկ տարածք տեղափոխված տրանսպորտային միջոցի վարորդը վերացնում է արգելանքի տակ դնելու պատճառները, ապա Ոստիկանության ծառայողը պարտավոր է անմիջապես վերացնել անձի սեփականության իրավունքի սահմանափակումը՝ տրանսպորտային միջոցը վերադարձնելով օրինական տիրապետողին[133]*:*

2025 թվականի տարեկան հաղորդման նախապատրաստման շրջանակներում Ոստիկանության պարեկային ծառայության աշխատակիցների գործունեության վերաբերյալ ստացված բողոքների կապակցությամբ ՀՀ ներքին գործերի նախարարությունից պարզաբանում է ստացվել այն մասին, որ 2025 թվականի ընթացքում ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայություն է ստացվել 231 քաղաքացու դիմում-բողոք պարեկային ծառայողների գործողությունների վերաբերյալ, որոնք պարեկային ծառայության իրավասու ստորաբաժանման կողմից քննարկվել են և ձեռնարկվել համապատասխան միջոցներ: Կարգապահական խախտման հատկանիշներ

[133] Առավել մանրամասն տե՛ս, 2024 թվականին Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների պաշտպանության վիճակի մասին հաղորդումը, էջեր 263-270 հասանելի է https://www.ombuds.am/images/files/4d1335361f1f7e9fbcc1cfc10679701e.pdf հղումով, 20.03.2026թ. դրությամբ:

հայտնաբերելու դեպքում ՀՀ ՆԳՆ իրավասու ստորաբաժանում են ներկայացվել համապատասխան զեկուցագրեր:

Ստացված տեղեկատվության համաձայն՝ ՀՀ ՆԳՆ ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոն պարեկային ծառայողների գործառույթների վերաբերյալ ստացվել է 1084 ահազանգ, որոնց տրվել են համապատասխան լուծումներ հետագայում նմանատիպ դեպքերը բացառելու համար: Անհատական տեսախցիկների տեսաձայնագրությունների ուսումնասիրության, հանկարծակի ստուգումների, ստացված դիմում-բողոքների քննարկման արդյունքում պարեկային ծառայողների և նրանց անմիջական ղեկավարների հետ իրականացվել են առանձնազրույցներ, ցուցաբերվել է մեթոդական օգնություն:

Տեղեկություն է ներկայացվել նաև այն մասին, որ 2025 թվականի ընթացքում ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայողների գործունեության վերաբերյալ ստացված դիմումների կապակցությամբ ներքին անվտանգության և հակակոռուպցիոն վարչությունում իրականացվել է ընդհանուր 46 ծառայողական քննություն և 18 ուսումնասիրություն: Դրանցից 10-ը կասեցվել է, 2-ը գտնվում է ընթացքի մեջ, 24-ը թողնվել է անհետևանք, 14 դեպքով պարեկային ծառայության 21 ծառայող ազատվել է կարգապահական պատասխանատվությունից՝ «ՀՀ ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով, իսկ 17-ի արդյունքներով պարեկային ծառայողների նկատմամբ կիրառվել է 21 կարգապահական տույժ, այդ թվում՝ 15 «Նկատողություն», 5 «Խիստ նկատողություն», 1 «Ոստիկանությունում ծառայությունից ազատում»: Նշված դեպքերով արձանագրված խախտումներն են՝

1) իր լիազորություններն իրականացնելիս օրենքը խախտելը,
2) գործառույթները կարգավորող օրենքներով նախատեսված պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը,
3) ոստիկանության կարգապահական կանոնագրքով սահմանված կանոնները խախտելը,
4) կարգապահական կոպիտ խախտում կատարելը:

Ներկայացված պարզաբանմամբ նաև նշվել է, որ ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության մոնիթորինգի և քրեաբանական վերլուծության վարչության մոնիթորինգի բաժնի կողմից շուրջ 1950 ծառայողների շրջանում ներդրվել և իրականացվում է շարունակական կրթության ապահովման «In-service» վերապատրաստման ծրագիրը (ոստիկանության ծառայողի օրինական պահանջը չկատարելը և դրա իրավական հետևանքները, մարդու իրավունքների ու ազատությունների սահմանափակումից բխող անձի իրավունքների ծանուցումը և ապահովումը, պաշտոնատար անձի կողմից իր իշխանական կամ ծառայողական լիազորությունները անցնելը, ծառայողների էթիկա և բարեվարքություն թեմաներով): Իրականացվել է նաև նույն բաժնի 16 ծառայողների վերապատրաստում: Պարեկային ծառայողների մասնագիտական գիտելիքները և հմտությունները կատարելագործելու նպատակով 2025 թվականի հունիս-հոկտեմբեր ամիսներին ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի հետ համատեղ վերապատրաստման դասընթացներ են կազմակերպվել 1740 պարեկային ծառայողի համար: 2025 թվականի ընթացքում ՀՀ ՆԳՆ կրթահամալիրում վերապատրաստման՝ հատուկ միջոց և հրազեն կրելու ու գործադրելու իրավասության համար դրանց կիրառման հմտություններին տիրապետելու հատուկ պատրաստության դասընթացների է մասնակցել ՀՀ ՆԳՆ ոստիկանության 2212 պարեկային ծառայող:

Պաշտպանը, կարևորելով և դրական գնահատելով Պարեկային ծառայության աշխատակիցների շրջանում պարբերաբար իրականացվող վերապատրաստման

դասընթացները, այդուհանդերձ՝ խիստ մտահոգիչ է համարում անձանց սեփականության իրավունքը տևական ժամանակ սահմանափակելու պրակտիկայի շարունակականությունը և հարկ է համարում վերստին ընդգծել նախկինում արտահայտած դիրքորոշումն առ այն, որ անհրաժեշտ է խստիվ պահպանել օրենսդրության պահանջները՝ բացառելով առանց օրենքով նախատեսված հիմքերի անձանց պատկանող տրանսպորտային միջոցները հատուկ տարածք տեղափոխելու և տևական ժամանակ պահելու անթույլատրելի պրակտիկան:

Պարեկային ծառայողների գործունեության հետ կապված Պաշտպանի աշխատակազմ ստացվել են նաև բողոքներ՝ առանց իրավախախտում կատարելու վերաբերյալ ապացույց ներկայացնելու վարչական ակտ կայացնելու հարցերի առնչությամբ:

Օրինակ, որոշ բողոքներով անձինք հայտնել են, որ իրենց նկատմամբ կայացվել է անհիմն որոշում տրանսպորտային միջոցն անվտանգության գոտիով չամրակապված վարելու համար՝ հիմքում դնելով միայն Պարեկային ծառայողի տեսողական դիտարկումը, ինչն իրավախախտման առկայությունը հավաստող ապացույց չի հանդիսանում: Նշել են, որ վարչական ակտերը վերադասության կարգով բողոքարկելու արդյունքում բողոքները մերժվել են՝ պատճառաբանությամբ, որ ամրագոտիով ամրակապված չլինելու փաստը եղել է Պարեկային ծառայողների տեսադաշտում, ակնհայտ և պարզ տեսանելի, ինչի համար էլ կազմվել է համապատասխան արձանագրություն և կայացվել որոշում:

Նշվածի կապակցությամբ ՀՀ ՆԳՆ ոստիկանությունից պարզաբանում է ստացվել այն մասին, որ օրենսդիրը, ոստիկանության ծառայողին տալով լիազորություն իրավախախտումը հայտնաբերելու, արձանագրություն կազմելու, որոշում կայացնելու, որպես պարտադիր պայման չի նշում իրավախախտման փաստարկման համար տեխնիկական սարքի կիրառումը: Հավելել են, որ տրանսպորտային միջոցը անվտանգության գոտիով չամրակապված վիճակում վարելու համար իրավախախտումները կատարելու հանգամանքները հաստատված համարելու համար Պարեկային ծառայողների կողմից տրված պարզաբանումները եղել են բավարար, իսկ տեխնիկական սարքերով իրավախախտումները հաստատող տեսանյութեր առկա չեն:

Այս առնչությամբ, հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է՝

ա) անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում.

բ) վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում:

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենքով սահմանվել է ճանապարհային երթևեկությունը կարգավորող ոստիկանության ծառայողի տրանսպորտային միջոցը կանգնեցնելու պարտավորությունն այն դեպքերում, երբ ակնհայտ կամ տեխնիկական միջոցների օգտագործմամբ երևում է, որ վարորդը խախտել է ճանապարհային երթևեկության կանոնների պահանջները: Նշված դեպքում ոստիկանության ծառայողը պարտավոր է անհապաղ մոտենալ վարորդին, ներկայանալ, հայտնել կանգնեցնելու պատճառը և օրենքով սահմանված կարգով արձանագրել խախտումը: Միևնույն ժամանակ՝ ՀՀ կառավարության թիվ 1769-Ն որոշմամբ սահմանված «Ճանապարհապարեկային ծառայության իրականացման» կարգի համաձայն՝ պարեկային ավտոմոբիլները պետք է կահավորված լինեն իրավախախտումների հայտնաբերման և ամրագրման տեխնիկական միջոցներով (արագաչափ, ալկոմետր,

տեսախցիկ և այլն), ընդ որում, ճանապարհապարեկային ծառայության իրականացման հսկողական տեսախցիկը պետք է միացվի ծառայության դուրս գալու պահից և չանջատվի մինչև ծառայության ավարտից հետո շարային ստորաբաժանում վերադառնալը, իսկ շարքից դուրս գալու դեպքում պետք է անհապաղ տեղեկացվեն շարային ստորաբաժանման հերթապահը կամ հրամանատարը և հրամանատարի ցուցումով վերադառնան շարային ստորաբաժանում՝ տեխնիկական թերությունները վերացնելու համար:

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ պարեկային ավտոմոբիլները իրավախախտումների հայտնաբերման և ամրագրման տեխնիկական միջոցներով (արագաչափ, ալկոմետր, տեսախցիկ և այլն) կահավորելու պահանջն ինքնանպատակ չէ, և երբ ակնհայտ կամ տեխնիկական միջոցների օգտագործմամբ երևում է, որ վարորդը խախտել է ճանապարհային երթևեկության կանոնների պահանջները, ճանապարհային երթևեկությունը կարգավորող ոստիկանության ծառայողը՝ տրանսպորտային միջոցը կանգնեցնելու պարտականությունից զատ պետք է համապատասխան միջոցներ ձեռնարկի վարչական իրավախախտման փաստը իրավախախտումների հայտնաբերման և ամրագրման տեխնիկական միջոցներով արձանագրելու համար:

Նման պայմաններում ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ միայն վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը, որը ենթադրյալ իրավախախտում կատարած անձը ստորագրել է՝ առանց որևէ առարկության վկայակոչման, վարչական իրավախախտման փաստը հաստատված համարելու համար բավարար հիմք չէ[134]:

Վերը վկայակոչվածի հաշվառմամբ՝ Պաշտպանն արձանագրում է, որ անհրաժեշտ է յուրաքանչյուր դեպքում կանգնեցնել անձի վարած տրանսպորտային միջոցը միայն համապատասխան հիմքերի առկայության պարագայում՝ հստակ հիմնավորելով անձի կողմից վարչական իրավախախտում կատարելու հանգամանքը: Առանց հիմքի տրանսպորտային միջոցը կանգնեցնելու կամ միայն Պարեկային ծառայողի տեսողական դիտարկումը հիմք ընդունելով՝ անձին վարչական պատասխանատվության ենթարկելը կարող է հանգեցնել կամայական վարքագծի դրսևորման:

2. Ներխուժումը կանխելիս կամ վերացնելիս ՀՀ ՆԳՆ ոստիկանության լիազորությունների իրացման ընթացքում վեր հանված գործնական խնդիրներ

2024 թվականի տարեկան հաղորդմամբ նույն թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմում ստացված բողոքների ու ահազանգերի վերլուծությամբ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրել է, որ ՀՀ ներքին գործերի նախարարության կողմից ձեռնարկված միջոցներն ապահովել են ներխուժումը կանխելուն կամ վերացնելուն ուղղված գործողություններում դրական և արդյունավետ պրակտիկա ձևավորելու միտում, իսկ ներխուժումը կանխելիս կամ վերացնելիս ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության լիազորությունների կատարման ընթացքում նախկինում արձանագրված գործնական խնդիրները չունեն նույն արդիականությունը: Պաշտպանը նշել է, որ ներխուժումը կանխելիս կամ վերացնելիս ՀՀ ՆԳՆ ոստիկանության լիազորությունների իրացման ընթացքում ծագող հարցերը շարունակում են լինել Մարդու իրավունքների պաշտպանի ուշադրության կենտրոնում և Պաշտպանը հետագայում ևս հետևողական է

[134] Տե՛ս, Արծրուն Խաչատրյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության թիվ ՎԴ/6527/05/18 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 19.11.2021 թվականի որոշումը:

լինելու իրավասու մարմնի կողմից համապատասխան չափանիշների պահպանման հարցում:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին 2025 թվականի տարեկան հաղորդման նախապատրաստական աշխատանքների ընթացքում Ներքին գործերի նախարարությունից ստացվել է տեղեկություն, որ «Ներխուժումը կանխելու կամ վերացնելու նպատակով անշարժ գույքի օրինական տիրապետողի կողմից ոստիկանությանը լիազորելու կարգն ու պայմանները սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2007 թվականի մայիսի 10-ի թիվ 797-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) ՀՀ ՆԳՆ ոստիկանությանը վերապահված գործառույթներն իրականացնելու շրջանակներում 2025 թվականի ընթացքում ՀՀ ներքին գործերի նախարարության իրավաբանական վարչությունում ստացվել է 214 դիմում (բողոք), որոնցից 193-ով հարուցվել է վարչական բողոքարկման վարույթ, իսկ 21 դիմում (բողոք) ներկայացվել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 72-րդ հոդվածի պահանջների խախտմամբ: Ներկայացված բողոքներից 8-ը վերաբերել են շարժական գույքի ներխուժման վերացմանը, իսկ 206-ը՝ անշարժ գույքի հասցեից ֆիզիկական անձի (անձանց) ներխուժման վերացմանը:

Ըստ ստացված վիճակագրական տվյալների՝ վարույթ ընդունված 193 բողոքներից 162-ը մերժվել են՝ ոստիկանության վարչարարության իրավաչափ լինելու հիմնավորմամբ, իսկ 23-ը՝ բավարարվել, «Ողջամիտ ժամկետ տրամադրելու վերաբերյալ» բանավոր վարչական ակտի՝ որոշման պահանջների խախտմամբ ընդունված լինելու պատճառաբանությամբ: 8 դիմումներով վարչական վարույթը կարճվել է՝ հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի «դ)» կետի դրույթները (դատարանի վարույթում գտնվում է միևնույն անձանց միջև, միևնույն առարկայի վերաբերյալ և միևնույն հիմքերով գործ):

Ստացված տեղեկությունների համաձայն՝ 2025 թվականի ընթացքում ՀՀ ՆԳՆ ներքին անվտանգության և հակակոռուպցիոն վարչությունում քննարկվել է 1 դիմում-բողոք՝ ոստիկանության ծառայողի կողմից ներխուժումը վերացնելու վերաբերյալ արձանագրությունը թերի կազմելու վերաբերյալ, ինչով պայմանավորված բողոքարկման արդյունքում, ոստիկանության ծառայողի գործողությունները ճանաչվել են ոչ իրավաչափ, որի առթիվ կատարված ծառայողական քննության արդյունքով ոստիկանության 1 ծառայող ենթակա է եղել կարգապահական տույժի, սակայն ազատվել է կարգապահական պատասխանատվությունից՝ «ՀՀ ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով:

2025 թվականի ընթացքում ևս Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ստացվել են քննարկվող հարցի վերաբերյալ բողոքներ և ահազանգեր: Մասնավորապես, Պաշտպանին դիմած անձինք մի շարք դեպքերում հայտնել են, որ անշարժ գույքի սեփականության իրավունքի դատական կարգով վիճարկման պայմաններում Ոստիկանության ծառայողների կողմից կայացվել են բանավոր վարչական ակտեր՝ ներխուժումը վերացնելու վերաբերյալ՝ տրամադրելով ողջամիտ ժամկետ գույքը լքելու համար: Նշված դեպքերում քաղաքացիներին պարզաբանվել են ՀՀ կառավարության 2007 թվականի մայիսի 10-ի թիվ 797-Ն որոշման կարգավորումները, այդ թվում՝ ներխուժումը կանխելու կամ վերացնելու նպատակով անշարժ գույքի օրինական տիրապետողի կողմից ոստիկանությանը լիազորելու կարգն ու պայմանները, ներխուժումը վերացնելուն ուղղված գործողություններ չիրականացնելու հիմքերը, Ոստիկանության ծառայողների գործողությունները ինչպես վերադասության, այնպես էլ դատական կարգով

բողոքարկելու կարգը՝ միևնույն ժամանակ նշելով, որ սեփականության իրավունքի վիճարկումը ինքնին չի կասեցնում ներխուժումը վերացնելու գործողությունները, եթե դրա վերաբերյալ չի կայացվել հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ որոշում, որում անդրադարձ է կատարվում Ոստիկանության ծառայողների գործողություններին:

Ստացված բողոքներից մեկով փաստաբանը հայտնել է, որ իր վստահորդին Ոստիկանության ծառայողների կողմից անշարժ գույքի տարածքն ինքնակամ լքելու նպատակով տրամադրվել է ողջամիտ ժամկետ, որի կապակցությամբ վերադասության կարգով ներկայացված բողոքը մերժվել է, սակայն նախապես ներկայացված ժամկետում ներխուժումը վերացնելուն ուղղված գործողություններ չեն իրականացվել: Փաստաբանը հայտնել է, որ ավելի ուշ Ոստիկանության ծառայողները մուտք են գործել վստահորդի բնակության վայր, հայտարարել, որ տարածքում անհրաժեշտ է իրականացնել շինարարական աշխատանքներ և տրամադրել 20 րոպե ժամանակ՝ տարածքը լքելու համար՝ հայտնելով, որ ներկայացված օրինական պահանջը չկատարելու դեպքում նա կենթարկվի վարչական ձերբակալման:

Վերոգրյալի կապակցությամբ Ներքին գործերի նախարարությունից ստացվել է պարզաբանում այն մասին, որ գույքի սեփականատիրոջ կողմից ներկայացվել է ներխուժումը վերացնելու մասին դիմում, որի շրջանակներում ոստիկանության ծառայողն այցելել է անշարժ գույքի հասցե՝ այնտեղ ֆիզիկական անձանց գտնվելու օրինական հիմքերը պարզելու նպատակով: Պարզվել է, որ անշարժ գույքի տարածքում գտնվող անձը բնակվում է առանց օրինական հիմքերի, ուստի նրան տրվել է 20 օր ժամկետ՝ տարածքն ինքնակամ ազատելու համար: ՀՀ ներքին գործերի նախարարության իրավաբանական վարչությունում վերոգրյալի կապակցությամբ ստացվել են բողոքներ, որոնց շրջանակներում հարուցվել են վարչական բողոքարկման վարույթներ, ստուգվել է «Ողջամիտ ժամկետ տրամադրելու մասին» բանավոր վարչական ակտի իրավաչափությունը և կայացվել է բողոքը մերժելու մասին որոշում:

Ըստ ստացված պարզաբանման՝ Ոստիկանության ծառայողը սահմանված կարգով այցելել է անշարժ գույքի հասցե, սակայն ներխուժման փաստ չի հայտնաբերվել և ներխուժման վարույթն ավարտվել է: Դրանից հետո, անշարժ գույքի սեփականատիրոջ դիմումի հիման վրա Ոստիկանության ծառայողները ևս երկու անգամ այցելել են անշարժ գույքի հասցե, սակայն նշված հասցեում կրկին ոչ ոք չի հայտնաբերվել: Ավելի ուշ Ոստիկանության բաժին ահազանգել է գույքի սեփականատերը և հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանը տրամադրել է շինարարության թույլտվություն, խնդրել է Ոստիկանությանն իրականացնել հասարակական կարգի պահպանություն, քանի որ ինչ-որ անձինք խոչընդոտում են իրենց օրինական գործողություններին: Ստացված ահազանգի կապակցությամբ Ոստիկանության ծառայողները մեկնել են անշարժ գույքի հասցե և, համոզվելով, որ առկա է շինարարության թույլտվությունը հավաստող փաստաթուղթ, դրա շրջանակներում իրականացրել են հասարակական կարգի պահպանություն: Ըստ պարզաբանման՝ ՀՀ կառավարության 2007 թվականի մայիսի 10-ի թիվ 797-Ն որոշման իմաստով ներխուժման վերացմանն ուղղված գործողություններ չեն կատարվել:

Պաշտպանի գնահատմամբ՝ նկարագրված դեպքում ոստիկանության ծառայողների գործողությունները, թեև ներկայացվել են որպես հասարակական կարգի պահպանություն, իրենց բովանդակությամբ և իրավական հետևանքներով դուրս են այդ գործառույթի դասական շրջանակից և համապատասխանում են ներխուժման վերացմանն ուղղված գործողությունների բնույթին: Տվյալ դեպքում, ըստ էության, Ոստիկանության ծառայողների կողմից ոչ միայն ապահովվել է շինարարական աշխատանքների ընթացքում

հնարավոր բախումների կանխումը, այլ նաև ներկայացվել է տարածքը լքելու պարտադիր պահանջ՝ վարչական պատասխանատվության սպառնալիքով, ինչն ըստ էության ուղղված է եղել տարածքի փաստացի ազատմանը:

Պաշտպանի դիրքորոշմամբ՝ եթե ոստիկանության միջամտությունը հանգեցնում է տարածքում գտնվող անձի հեռացմանը կամ նրա նկատմամբ հարկադրանքի միջոցների կիրառմամբ տարածքի ազատմանը, ապա այդ գործողությունները պետք է գնահատվեն որպես ներխուժման վերացմանն ուղղված միջոցառումներ և իրականացվեն բացառապես համապատասխան վարչական ընթացակարգի շրջանակներում՝ ապահովելով օրենսդրությամբ սահմանված երաշխիքների ամբողջ ծավալը: Հակառակ մոտեցումը կարող է հանգեցնել հատուկ ընթացակարգի շրջանցման, իրավական որոշակիության սկզբունքի խաթարման և անձանց իրավունքների պաշտպանության երաշխիքների թուլացման ռիսկի:

Պաշտպանին հասցեագրված մեկ այլ բողոքով փաստաբանը հայտնել է, որ դատարանում քաղաքացիական գործով առկա է տարածքի սեփականության իրավունքի վերաբերյալ վեճ, դրա շրջանակում Դատարանի կողմից հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշում է կայացվել, սակայն Ոստիկանության ծառայողները կազմել են արձանագրություն՝ պահանջելով վստահորդից տրամադրված ողջամիտ ժամկետում ազատել տարածքը: Փաստաբանը նշել է, որ հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ ևս մեկ միջնորդություն է ներկայացվել դատարան՝ խնդրելով նախկինում կիրառված հայցի ապահովման միջոցներն անհապաղ ձևափոխել կամ փոխարինել կամ անհրաժեշտության դեպքում՝ կիրառել հայցի ապահովման նոր միջոց, սակայն Պաշտպանին դիմելու օրվա դրությամբ որևէ որոշում չի կայացվել: Բողոքի քննարկման շրջանակում Ներքին գործերի նախարարության հետ հաղորդակցության ընթացքում տեղեկություն է ստացվել, որ վարչական բողոքարկման վարույթի արդյունքում կայացվել է բողոքը բավարարելու մասին որոշում:

Հաշվետու ժամանակահատվածում Պաշտպանի աշխատակազմում ստացված ահազանգերից մեկով էլ քաղաքացին հայտնել է, որ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքը ճանաչելու պահանջով հայցադիմում է ներկայացրել դատարան, որն ընդունվել է վարույթ: Միևնույն ժամանակ, նշել է, որ իր ներկայացուցչի կողմից հայցադիմում է ներկայացվել դատարան՝ Ներքին գործերի նախարարության ոստիկանությանը անշարժ գույքի տարածքից հարկադրաբար դուրս բերմանն ուղղված գործողություններ կատարելուց ձեռնպահ մնալուն պարտավորեցնելու պահանջով, սակայն հայցը մերժվել է: Այնուհետև, չնայած որոշումը բողոքարկվել է Վերաքննիչ դատարան, սակայն Ոստիկանության ծառայողներն իրեն տեղեկացրել են, որ Վարչական դատարանի դատական ակտը ստացել է օրինական ուժ և տրամադրվել է ժամկետ բնակարանն ազատելու համար:

Ներկայացված հանգամանքները, ելնելով հարցի հրատապությունից, բանավոր կարգով քննարկվել են Ոստիկանության ներկայացուցչի հետ: Արդյունքում տվյալ օրը վտարմանն ուղղված գործողություններ չեն իրականացվել՝ բարձրացված հարցն ավելի մանրամասնորեն ուսումնասիրելու համար: Ավելի ուշ, Ոստիկանության ներկայացուցչի կողմից լրացուցիչ տեղեկություն է ստացվել, որ ներխուժմանն ուղղված գործողությունները տարաժամկետվել են:

Պաշտպանը գնահատում է ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության հետ ձևավորված արդյունավետ համագործակցությունը և բարձրացված խնդիրները քննարկելու պատրաստակամությունը՝ արձանագրելով, որ

կայուն համագործակցության արդյունքում բարձրացված հարցերը շատ հաճախ լուծում են ստանում նույնիսկ բանավոր հաղորդակցության շրջանակում:

Միևնույն ժամանակ, Պաշտպանն արձանագրում է, որ սեփականության իրավունքի վերաբերյալ դատարաններում ընթացող վեճերի, հայցի ապահովման միջոցի կիրառման և դատական ակտերի օրինական ուժի մեջ մտած լինելու գնահատման հարցերում անհրաժեշտ է դրսևորել առավել հստակ և միասնական մոտեցում՝ բացառելու համար անձանց իրավունքների անհամաչափ սահմանափակման հնարավորությունը: Իրավական որոշակիության, կանխատեսելիության և համաչափության սկզբունքների լիարժեք իրագործումը պահանջում է, որ Ոստիկանության յուրաքանչյուր միջամտություն, որը կարող է հանգեցնել անձի բնակության կամ տիրապետման փաստացի դադարեցման, իրականացվի օրենսդրությամբ նախատեսված հստակ ընթացակարգի պահպանմամբ, պատշաճ ձևակերպմամբ և արդյունավետ բողոքարկման հնարավորությամբ:

ԳԼՈՒԽ 6. ՊԱՏԻԺԸ ԿՐԵԼՈՒՑ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԱԶԱՏԵԼՈՒՆ ԱՌՆՉՎՈՂ ԽՆԴԻՐՆԵՐ

ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումները սահմանում են, որ պատժի նպատակներն են սոցիալական արդարության վերականգնումը, պատժի ենթարկված անձի վերասոցիալականացումը և հանցագործությունների կանխումը: Սա նշանակում է, որ եթե դատապարտյալը պատժի կրման ընթացքում արդեն իսկ վերասոցիալականացվել է մինչև նշանակված ժամկետի ավարտը, ապա պատժի հետագա կրումը կարող է կորցնել իր իմաստն ու նպատակահարմարությունը:

Այդ իսկ պատճառով, մարդասիրության սկզբունքի տրամաբանության համատեքստում, օրենսդրությունը դատարանին վերապահում է իրավասություն՝ պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու այն անձանց, որոնց նկատմամբ պատժի մնացած մասը կրելը այլևս չի ծառայում պատժի բուն նպատակների իրականացմանը: Այս ինստիտուտը միաժամանակ կատարում է երկու կարևոր գործառույթ. այն, մի կողմից, հանդես է գալիս որպես խրախուսանք դատապարտյալի համար, իսկ մյուս կողմից խթանում է պատժի կրման ընթացքում օրինապահ և պատասխանատու վարքագծի ձևավորումը:

Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու ինստիտուտը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 85-րդ հոդվածով, որի կարգավորումների համաձայն՝ կարգապահական գումարտակում պահելու կամ ազատազրկման ձևով պատիժ կրող դատապարտյալը դատարանի կողմից պայմանական վաղաժամկետ կարող է ազատվել պատժից, եթե դատապարտյալը կրել է պատժի՝ նույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված համապատասխան նվազագույն ժամկետը, և դատարանը դատապարտյալի պատշաճ վարքագիծը և նրա կողմից նոր հանցանք կատարելու հավանականությունը գնահատող հանգամանքների վերաբերյալ իրավասու մարմինների ներկայացրած զեկույցների ուսումնասիրման հիման վրա համոզվում է, որ դատապարտյալի վերասոցիալականացումը հնարավոր է առանց պատժի մնացած մասը կրելու, քանի որ պատժի կրման ընթացքում նա դրսևորել է պատշաճ վարքագիծ և նրա կողմից նոր հանցանք կատարելու հավանականությունը ցածր է:

Դատապարտյալի պատշաճ վարքագիծը, ինչպես նաև նրա կողմից նոր հանցանք կատարելու հավանականությունը գնահատելիս հաշվի են առնվում նույն հոդվածով նախատեսված մի շարք հանգամանքներ:

Գործնականում այս ինստիտուտի կիրառման ընթացքում ի հայտ են գալիս տարաբնույթ խնդիրներ, որոնք կապված են և՛ վերաբերելի օրենսդրական կարգավորումների անկատարության, և՛ գործնականում դրանց կիրառման հետ:

Այս առումով հարկ է ընդգծել, որ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանն ու աշխատակազմի ներկայացուցիչները պարբերաբար այցեր են իրականացնում ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներ, որոնց ընթացքում հանդիպումներ և առանձնազրույցներ են տեղի ունենում որոշակի ժամկետով, ինչպես նաև ցմահ ազատազրկման դատապարտված անձանց հետ: Հանդիպումների ընթացքում ազատազրկման դատապարտված անձանց կողմից բարձրացվում են մի շարք հարցեր, այդ թվում՝ կապված պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատվելու ընթացակարգում առկա խնդիրների, տուժողի կամ իրավահաջորդների հետ հաշտարարության ընթացակարգերի բացակայության, քրեակատարողական հիմնարկներում աշխատելու հնարավորության բացակայության, մերձավոր ազգական չհանդիսացող այլ անձի հետ երկարատև տեսակցություն ունենալու արգելքի, պատժի

կրման ընթացքում դրսևորած դրական վարքագծի արդյունքում չխրախուսվելու հետ և այլն:

Մասնավորապես, դատապարտյալների պնդմամբ՝ իրենց պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը քննարկելիս թե՛ Պրոբացիայի ծառայությունը, և թե՛ հետագայում դատարանը, որոշիչ են համարում տուժողների կամ նրանց իրավահաջորդների դիրքորոշումը և կատարած հանցանքի բնույթը՝ ինչով պայմանավորված՝ մերժվում են պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատվելու վերաբերյալ իրենց դիմումները: Ցմահ դատապարտյալների պնդմամբ՝ նշվածը խտրական դրսևորում է իրենց հանդեպ, քանի որ որոշակի ժամկետով ազատազրկման դատապարտված անձանց պարագայում տուժողի դիրքորոշումը պատժի ժամկետը լրանալուց հետո դառնում է առարկայազուրկ, մինչդեռ իրենց դեպքում այդպիսի ժամկետ առկա չէ և տուժողի դիրքորոշումը կարող է երբեք չփոխվել: Միևնույն ժամանակ, առկա չէ տուժողի կամ իրավահաջորդների հետ հաշտարարության որևէ ընթացակարգ, որի միջոցով հնարավորություն կունենան հաշտվել նրանց հետ: Բացի այդ, դատապարտյալները նշում են, որ իրենց կողմից կատարված հանցանքների բնույթը ևս չի կարող երբևէ փոփոխվել, ուստի իրավաչափ չէ այն մշտապես որոշիչ հանգամանք համարելը պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատվելու հարցը քննարկելիս:

Առանձնազրույցների ընթացքում դատապարտյալները նշել են նաև, որ տուժողին պատճառված վնասը փոխհատուցած չլինելու հարցը քննարկելիս ո՛չ Պրոբացիայի ծառայության, և ո՛չ էլ դատարանի կողմից հաշվի չեն առնվում, որ դատապարտյալը քրեակատարողական հիմնարկի կողմից չի ապահովվում աշխատանքի հնարավորությունով, կամ որոշակի հանգամանքների բերումով, օրինակ՝ տարիքը, առողջական վիճակը և այլն, չի կարող աշխատել:

Ցմահ դատապարտյալներն իրենց մտահոգությունն են հայտնել նաև այն մասին, որ իրենց պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը քննարկելիս հաշվի են առնվում և որոշիչ են համարվում այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են 20 տարի առաջ ստացած տույժը, երբևէ չփոփոխվող հանցանքի բնույթը, տուժողի/իրավահաջորդի դիրքորոշումը և, ըստ այդմ, իրենց համար կանխատեսելի չէ, թե ի՞նչ պայմաններում կարող է փոխվել անվտանգային գոտու տեսակը կամ բավարարվել պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ դիմումը: Ընդ որում՝ անվտանգային գոտու տեսակը փոխելու վերաբերյալ դիմումը մերժելը չի հիմնավորվում, ընդամենը նշվում է, որ անհրաժեշտ է շարունակել վերասոցիալականացման աշխատանքները, որպիսի պայմաններում կանխատեսելի չէ, թե ինչպիսի հետագա վարքագծի պայմաններում կարող է անձի անվտանգային գոտու տեսակը կամ պայմանները փոխվել:

Բացի այդ, ցմահ դատապարտյալներն իրենց մտահոգությունն են հայտնել առ այն, որ առկա են դեպքեր, երբ պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատվելու ընթացակարգի շրջանակում դատապարտյալի վերաբերյալ Քրեակատարողական և Պրոբացիայի ծառայության կողմից կազմվում են դրական զեկույցներ, սակայն դատարանը մերժում է վաղաժամկետ ազատվելու վերաբերյալ դիմումը, մինչդեռ նույն դատարանը բավարարում է մեկ այլ դատապարտյալի դիմումն այն դեպքում, երբ վերջինի վերաբերյալ կազմված երկու զեկույցներն էլ բացասական են:

Ըստ հավելման՝ լինում են դեպքեր, երբ պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատվելու ընթացակարգի շրջանակում դատապարտյալի վերաբերյալ Քրեակատարողական և Պրոբացիայի ծառայության կողմից կազմվում են դրական զեկույցներ, սակայն նույն դատարանում նույն անձի անվտանգային գոտու տեսակի

փոփոխության հարցը քննարկելիս Քրեակատարողական ծառայությունը հայտնում է բացասական դիրքորոշում:

Բացի այդ, ցմահ դատապարտյալները նշել են, որ գործող օրենսդրությամբ դատապարտյալներին երկարատև տեսակցություններ տրամադրվում են միայն մերձավոր ազգականների կամ այն անձանց հետ, ում հետ դատապարտյալն ունի համատեղ երեխա: Այս համատեքստում արձանագրել են, որ ցմահ դատապարտյալներից շատերը երկարատև ազատազրկման ընթացքում կորցնում են իրենց մերձավոր ազգականներին, ուստի իրավաչափ կլինի, եթե ցմահ ազատազրկման դատապարտված դատապարտյալներին հնարավորություն ընձեռվի երկարատև տեսակցություն ունենալ նաև այլ անձանց հետ (եղբորորդի, կնոջ ծնողներ և այլք): Նշվածը, ըստ ցմահ դատապարտյալների, վերասոցիալականացման ևս մեկ հնարավորություն է և հետագայում կարող է հաշվի առնվել պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվելու հարցի քննարկման շրջանակում:

Ցմահ դատապարտյալները հայտնել են, որ չնայած օրենսդրությամբ նախատեսված՝ կարճատև և երկարատև մեկնումների հնարավորությանը՝ իրենց երբևէ չի տրամադրվում մեկնում, որպիսի պայմաններում ևս հնարավորություն կունենային ապացուցել իրենց վերասոցիալականացված լինելը: Դատապարտյալներից ոմանք նշել են, որ պատժի կրման ընթացքում իրենց նկատմամբ չի կիրառվում խրախուսանքի միջոց, չնայած այն հանգամանքին, որ աշխատում են և հնարավորինս շատ մասնակցում կազմակերպված միջոցառումներին:

Հարկ է ընդգծել, որ բարձրացված բոլոր խնդիրների կապակցությամբ Պաշտպանի իրավասության շրջանակում ձեռնարկվել և շարունակում են ձեռնարկվել անհրաժեշտ միջոցներ, այդ թվում՝ տարբեր ձևաչափերով մշտական հաղորդակցություն է իրականացվում պետական իրավասու մարմինների հետ:

Ազատությունից զրկված անձանց բարձրացրած հարցերի կապակցությամբ ՀՀ արդարադատության նախարարությունից ստացվել են մի շարք պարզաբանումներ: Մասնավորապես, տուժողի կամ իրավահաջորդների հետ հաշտարարության ընթացակարգերի բացակայության վերաբերյալ բարձրացված հարցի կապակցությամբ Արդարադատության նախարարությունից պարզաբանում է ստացվել այն մասին, որ նախատեսվում է «Պրոբացիայի մասին» նոր օրենքի նախագծով վերանայել Պրոբացիայի ծառայության կողմից իրականացվող հաշտարարության բովանդակությունը:

Պաշտպանի դիտարկմամբ անձի ազատությունն ամբողջությամբ սահմանափակված լինելու պայմաններում դատապարտյալների համար գործնականում գրեթե անհնար է շփման եզրեր գտնել հանցանքից տուժած անձանց հետ զղջումն արտահայտելու, հաշտվելու, պատճառված վնասների առկայության դեպքում փոխհատուցման շուրջ բանակցություններ վարելու նպատակով: Այս առումով առանցքային է, որպեսզի պետությունը, ի դեմս իրավասու մարմինների, «միջնորդ» հանդիսանա հանցանք կատարած և հանցանքից տուժած անձանց համար, իրականացնի հաշտարարություն պատժի նպատակներն ի կատար ածելու և սոցիալական արդարության վերականգնման համար:

Պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու՝ Պրոբացիայի ծառայության կազմած զեկույցների վերաբերյալ, Արդարադատության նախարարությունից պարզաբանում է ներկայացվել առ այն, որ դատապարտյալների պատժից պայմանական վաղաժամկետ ազատման վերաբերյալ զեկույցների տրամադրման գործընթացում տուժողների կամ տուժողների իրավահաջորդների դիրքորոշման ազդեցությունը զեկույցի ընդհանուր գնահատականի վրա կախված է տվյալ դատապարտյալի կողմից կատարված

հանցագործության բնույթից և հանրային վտանգավորության աստիճանից, որը հատկապես կարևորում է կյանքի և առողջության դեմ ուղղված առանձնապես ծանր հանցագործությունների դեպքում (Վճռաբեկ դատարանի 2024 թվականի մայիսի 3-ի թիվ ԵԴ/0041/12/22 որոշում): Միաժամանակ, Պրոբացիայի ծառայությունը պատժից պայմանական վաղաժամկետ ազատման զեկույցների տրամադրման ընթացքում երբևէ տուժողների կամ նրանց իրավահաջորդների դիրքորոշումը ելակետային չի համարում: Ավելին, մի շարք դեպքերում տուժողի կամ տուժողի իրավահաջորդի բացասական դիրքորոշման պարագայում ծառայությունը տրամադրում է դրական զեկույցներ՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ դատապարտյալը պատժի կրման ընթացքում սպառել է բոլոր հնարավոր այլընտրանքային միջոցները տուժողների կամ նրանց իրավահաջորդների հետ հաշտության հասնելու համար:

Ըստ պարզաբանման՝ պատժից պայմանական վաղաժամկետ ազատման զեկույցներ կազմելիս դատապարտյալի կողմից տուժողին պատճառված վնասի փոխհատուցած լինելու հարցի կարևորության հետ միաժամանակ նույնչափ կարևորվում է դատապարտյալի ֆինանսական հնարավորությունները, քրեակատարողական հիմնարկում աշխատանքով ապահովված լինելու հանգամանքը, տարիքը, առողջական վիճակը և մի շարք այլ հանգամանքներ: Սույնի հաշվառմամբ՝ Պրոբացիայի ծառայության կողմից տրամադրվել է բազմաթիվ զեկույցներ, որոնցում նշվել է, որ դատապարտյալները ներկայացրել են քաղաքացիական հայցը վճարելու վերաբերյալ պարտավորագրեր՝ միջնորդելով դատարանին վերահսկողության ընթացքում դատավճռով սահմանված քաղաքացիական հայցը փոխհատուցելու պարտականություն սահմանելու վերաբերյալ:

Այս առումով հատկանշական է, որ ՀՀ արդարադատության նախարարության կողմից Պաշտպանի կարծիքին են ներկայացվել «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծեր:

Այսպես. ներկա կարգավորումների պայմաններում ազատազրկման ձևով պատիժ կրող դատապարտյալը դատարանի կողմից կարող է պայմանական վաղաժամկետ ազատվել պատժից այն դեպքում, երբ նա կրել է օրենքով սահմանված համապատասխան նվազագույն ժամկետը, և դատարանը հանգում է այն համոզման, որ դատապարտյալի վերասոցիալականացումը հնարավոր է առանց պատժի մնացած մասը կրելու: Վերջինը, մասնավորապես, գնահատվում է այն հանգամանքների հիման վրա, թե արդյո՞ք պատժի կրման ընթացքում դատապարտյալը դրսևորել է պատշաճ վարքագիծ, և արդյո՞ք նրա կողմից նոր հանցանք կատարելու հավանականությունը ցածր է: Ընդ որում՝ որպես նոր հանցանք կատարելու հավանականությունը գնահատելու հանգամանք, ի թիվս այլնի, նախատեսված է նաև այն, թե արդյո՞ք դատապարտյալը հատուցել կամ այլ կերպ հարթել է հանցագործությամբ պատճառված վնասը, կամ ստանձնել է վնասը հատուցելու կամ այլ կերպ հարթելու վերաբերյալ գրավոր պարտավորություն:

Նման պայմաններում, երբ վնասի հատուցման պահանջը դիտարկվում է որպես պայմանական վաղաժամկետ ազատ արձակման կարևոր նախապայման, այն գործնականում հանգեցնում է մի շարք լուրջ խնդիրների: Այս պարագայում նվազ կարևոր նշանակության են դառնում դատապարտյալի դրսևորած վարքագիծը, վերասոցիալականացման գործընթացում արձանագրված առաջընթացը և այլն: Այլ կերպ, ստեղծվում է մի իրավիճակ, երբ պատժից պայմանական վաղաժամկետ ազատումը հնարավոր չի լինում ոչ թե անձի վերասոցիալականացմամբ պայմանավորված, այլ նրա գույքային հնարավորություններով, ինչի հետևանքով ազատությունից զրկված անձը

փաստացի կրում է բացասական հետևանքներ օբյեկտիվորեն իրենից անկախ հանգամանքների պատճառով՝ նկատի ունենալով նաև այն, որ քրեակատարողական հիմնարկներում աշխատանքի հնարավորությունը բավականին սահմանափակ է:

Նախագծերով նախատեսվում է ՀՀ քրեական օրենսգրքի 85-րդ հոդվածը լրացնել կարգավորումներով, որոնց համաձայն՝ դատապարտյալի ոչ պատշաճ վարքագծի գնահատման հիմքում չի կարող դրվել միայն տուժողին պատճառված իրական վնասը հատուցած կամ այլ կերպ հարթած չլինելու հանգամանքը: Այդ դեպքում դատարանը կայացնում է պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու մասին որոշում՝ դատապարտյալի վրա դնելով տուժողին պատճառված իրական վնասը հատուցելու կամ այլ կերպ հարթելու պարտականություն:

Որպես նշված փոփոխության հիմնավորում է ներկայացվել այն, որ գործող կարգավորումների պայմաններում կարող է վտանգվել պայմանական վաղաժամկետ ազատ արձակման ինստիտուտի բուն նպատակն ու նշանակությունը, որը կոչված է խրախուսելու պատշաճ վարքագիծը, վերասոցիալականացման գործընթացում ակտիվ մասնակցությունը և հասարակություն վերադարձի պատրաստակամությունը: Երբ վնասի չհատուցումը պայմանավորված է ոչ թե դատապարտյալի անբարեխղճությամբ, այլ օբյեկտիվ սահմանափակումներով, այդ հանգամանքը չպետք է գործի ի վնաս նրա իրավունքների և չպետք է հանգեցնի պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատման մերժման:

Պաշտպանը դրական է համարում Արդարադատության նախարարության հանձնառությունը՝ ուղղված ոլորտում առկա խնդիրների հաղթահարմանը: Այս առումով Պաշտպանը կարևորում է հիշյալ նախագծերի կյանքի կոչումը՝ արձանագրելով, որ դրանք իրապես ուղղված են ազատությունից զրկված անձանց վրա դրված անհամաչափ բեռը թեթևացնելուն՝ միևնույն ժամանակ հավասարակշռելով տուժողի իրավունքների պաշտպանությունն ու լրացուցիչ երաշխիք հանդիսանալով վերջինին պատճառված վնասի փոխհատուցման համար:

Պայմանական վաղաժամկետ ազատման հարցի քննարկման համար ներկայացվող համապատասխան զեկույցի հիմքում ընկած գնահատման առանձնահատկությունների, նույն անձի վերաբերյալ տարբեր հարցերի քննարկման դեպքում տարբեր եզրակացություններ կայացնելու դիտարկման վերաբերյալ պարզաբանում է ներկայացվել այն մասին, որ պայմանական վաղաժամկետ ազատման հարցի քննարկման շրջանակներում ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության (այսուհետ՝ Քրեակատարողական ծառայություն) կողմից դատարան ներկայացվող զեկույցի գնահատման չափանիշները, գնահատման սանդղակը սահմանվում են համապատասխան իրավակարգավորումներով (Քրեական և քրեակատարողական օրենսգրքերի համապատասխան հոդվածներ, Արդարադատության նախարարի 2018 թվականի հուլիսի 12-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական և պրոբացիայի ծառայությունների կողմից պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ զեկույցների կազմման կարգը և պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով ներկայացվող փաստաթղթերի օրինակելի ձևերը հաստատելու մասին» թիվ 336-Լ հրաման):

Պայմանական վաղաժամկետ ազատման ներկայացնելու դեպքում դատապարտյալի վարքը գնահատվում է սահմանված չափորոշիչների քանակական գնահատման արդյունքում, ինչը հաճախ սահմանափակ է և հնարավորություն չի

ընձեռնում իրականացնել առավել բովանդակային, որակական վերլուծություն, գնահատել վարքի դինամիկ փոփոխությունները:

Մինչդեռ, քրեակատարողական հիմնարկներում պատիժ կրող դատապարտյալի պատժի կրման անվտանգային գոտու և պայմանների փոփոխության դեպքում՝ դատապարտյալի վարքի գնահատումն իրականացվում է՝ ելնելով հարցին վերաբերելի այլ իրավակարգավորումներից (Քրեակատարողական օրենսգրքի համապատասխան հոդվածներ, Արդարադատության նախարարի 2024 թվականի հուլիսի 2-ի «Վերասոցիալականացման գնահատման հանձնաժողովի ձևավորման, գործունեության կարգը, անհատական կազմերը, վերասոցիալականացման աշխատանքների գնահատման մեթոդները և չափանիշները հաստատելու մասին» թիվ 380-Ն հրաման):

Հաշվի առնելով այն հանգամանքները, որ անվտանգային գոտու փոփոխության հարցի քննարկման դեպքում, ի տարբերություն պայմանական վաղաժամկետ ազատման ներկայացնելու հարցի քննարկման, դատապարտյալի վարքի գնահատումն իրականացվում է հանձնաժողովային որոշման կարգով, գնահատման ենթակա չափորոշիչները սահմանափակված չեն քանակական գնահատմամբ, ուստի Հանձնաժողովն իրականացնում է դատապարտյալի վարքի գնահատում կոնկրետ համատեքստում, ելնում է տվյալ հարցի քննարկման տրամաբանությունից, որակական վերլուծության ենթարկում ինչպես դատապարտյալի վարքի դինամիկան, այնպես էլ տվյալ անվտանգային գոտուց բխող առանձնահատկությունները և դրանց հետ դատապարտյալի վարքի համատեղելիությունը:

Այսպիսով, վերոգրյալ հարցերի քննարկման բովանդակային և համապատասխան իրավակարգավորումներով սահմանված ընթացակարգային առանձնահատկություններով պայմանավորված՝ դատապարտյալի վարքի գնահատման արդյունքները տարբեր համատեքստում կարող են տարբերվել:

Այս առումով Պաշտպանն արձանագրում է, որ գործող օրենսդրական կարգավորումների պայմաններում կարող են ստեղծվել այնպիսի խնդրահարույց իրավիճակներ, երբ պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատվելու ընթացակարգի շրջանակում դատապարտյալի վերաբերյալ Քրեակատարողական և Պրոբացիայի ծառայության կողմից կազմվեն դրական զեկույցներ[135], այսինքն՝ նշված ծառայությունները գտնեն, որ դատապարտյալը վերասոցիալականացվել է և հնարավոր է նրան պայմանական վաղաժամկետ ազատել պատժի կրումից, մինչդեռ, քրեակատարողական հիմնարկում նույն անձի անվտանգային գոտու տեսակի փոփոխության հարցը քննարկելիս Քրեակատարողական ծառայության աշխատակիցներից կազմված Վերասոցիալականացման գնահատման հանձնաժողովը[136] տրամադրի բացասական կարծիք, այսինքն՝ հանգի եզրակացության, որ դատապարտյալի պատժի կրման պայմանները դեռևս ենթակա չեն մեղմացման:

Հատկանշական է, որ գործող օրենսդրական կարգավորումներն ունեն լավարկման անհրաժեշտություն: Այս առումով Արդարադատության նախարարությունից

[135] Արդարադատության նախարարի 2018 թվականի հուլիսի 12-ի թիվ 336-Լ հրամանով սահմանված կարգի համաձայն՝ դատապարտյալի՝ որոշակի պայմանների բավարարման դեպքում դրական զեկույցների կազմումը կրում է զուտ մեխանիկական բնույթ:

[136] Հանձնաժողովը գործունեության կարգը սահմանված է Արդարադատության նախարարի 2024 թվականի հուլիսի 2-ի թիվ 380-Ն հրամանով, և ի տարբերություն պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատվելու ընթացակարգի շրջանակում կազմվող զեկույցների՝ նշված հանձնաժողովը սահմանափակված չէ զուտ մեխանիկական բնույթի աշխատանքով և դատապարտյալի դատապարտյալի վարքի գնահատումն իրականացնում է որակական վերլուծության արդյունքում:

պարզաբանումներ են ստացվել այն մասին, որ իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրության ու կատարելագործման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ զեկույցների կազմման ու չափորոշիչների գնահատման աշխատանքների կազմակերպման կապակցությամբ մշտապես իրականացվում են բազմակողմանի ուսումնասիրություններ ու անհրաժեշտ վերլուծություններ՝ հնարավոր բացթողումներն արձանագրելու, դրանք վերացնելու և չափորոշիչների գնահատումը հնարավորինս լիարժեք ու առավել արդյունավետ դարձնելու նպատակով: Վերոգրյալով պայմանավորված՝ մշակվում է պատժից պայմանական վաղաժամկետ ազատման նոր ընթացակարգի և գնահատման չափորոշիչների և սանդղակի նախագիծ, որը հնարավորություն կտա հնարավորինս անհատական և ճկուն գնահատում իրականացնել՝ հաշվի առնելով դատապարտյալի վարքի առանձնահատկությունները, դինամիկան և նրա կողմից դրսևորած վարքի գնահատումը վերասոցիալականացման համատեքստում:

Անդրադառնալով հիմնականում ցմահ դատապարտյալների կողմից բարձրացված՝ մերձավոր ազգական չհանդիսացող այլ անձանց հետ երկարատև տեսակցության հնարավորությանը՝ Արդարադատության նախարարությունից պարզաբանում է ստացվել այն մասին, որ գործող իրավակարգավորումն իրապես խնդրային են դարձնում ազատությունից զրկված անձանց առավել լայն ընտանեկան և ազգակցական կապի պահպանման հարցը, ուստի Քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու նախագծի հետագա ընթացքից հետո, կդիտարկվի ՀՀ կառավարության 2023 թվականի ապրիլի 13-ի «ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 543-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու նախագիծը, որում անդրադարձ կկատարվի նաև վերոնշյալ հարցին:

Միաժամանակ, հայտնվել է, որ Արդարադատության նախարարությունը գործուն քայլեր է ձեռնարկում ազատությունից զրկված անձանց դրական վարքի ամրապնդման միջոցները, այդ թվում՝ խրախուսանքի կիրառումն ակտիվացնելու ուղղությամբ:

2025 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների պաշտպանության վիճակի մասին հաղորդման նախապատրաստման շրջանակում ազատությունից զրկված անձանց առավել լայն ընտանեկան և ազգակցական կապի պահպանման նպատակով տեսակցությանը վերաբերող օրենսդրական կարգավորումների փոփոխությունների կապակցությամբ ՀՀ արդարադատության նախարարությունից ստացվել են տեղեկություններ այն մասին, որ ՀՀ քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ նախատեսող համապատասխան նախագիծը, պայմանավորված դրանով առաջարկվող կարգավորումների ծավալով և բնույթով, դեռևս գտնվում է մշակման փուլում:

Բացի այդ, տուժողի կամ իրավահաջորդների հետ հաշտարարության ընթացակարգերի բացակայության կապակցությամբ տեղեկություններ են ստացվել այն մասին, որ նոր կանոնակարգումներ են նախատեսվում ոչ միայն տուժողի կամ իրավահաջորդների հետ հաշտարարության ընթացակարգերի մասով, այլև մշակվում է ամբողջությամբ նոր «Պրոբացիայի մասին» օրենքի նախագիծ, ինչը բավականին բարդ և ժամանակատար գործընթաց է: Այդ նպատակով ձևավորվել է աշխատանքային խումբ, որում ընդգրկվել են մասնագետներ Արդարադատության նախարարությունից, ԱՆ պրոբացիայի ծառայությունից, գիտական և հասարակական կազմակերպություններից: Նախագիծը աշխատանքային խմբի կողմից մշակվել, և ներկայում լրամշակվում է ԱՆ պրոբացիայի ծառայության կողմից, առաջիկայում նախատեսվում է ներկայացնել Արդարադատության նախարարություն՝ հետագա ընթացքն ապահովելու նպատակով:

Պատժից պայմանական վաղաժամկետ ազատման նոր ընթացակարգի կապակցությամբ Արդարադատության նախարարությունից տեղեկություն է հայտնվել առ այն, որ պատժից պայմանական վաղաժամկետ ազատման վերաբերյալ զեկույցների բարելավման նպատակով 2025 թվականի ընթացքում Եվրոպայի խորհրդի կողմից իրականացված կարիքների գնահատման հիման վրա մշակվել և Արդարադատության նախարարությանն է ներկայացվել պատժից պայմանական վաղաժամկետ ազատման զեկույցների վերաբերյալ միջազգային լավագույն փորձի ուսումնասիրությամբ զեկույց: Պրոբացիայի ծառայության աշխատակիցների հետ համագործակցությամբ մշակվել և ներկայացվել է պատժից պայմանական վաղաժամկետ ազատման զեկույցի նոր ձևաչափը՝ հիմնված միջազգային լավագույն փորձի վրա: Նախատեսվում է մինչև 2026 թվականի առաջին եռամսյակի ավարտը մեկնարկել զեկույցի նոր ձևաչափի պիլոտավորման գործընթացը: Միևնույն ժամանակ, մշակվել է նաև Քրեակատարողական ծառայության կողմից տրամադրվող պատժից պայմանական վաղաժամկետ ազատման զեկույցի նոր ձևաչափը և գնահատման նոր չափորոշիչները:

Ստացված տեղեկատվության համաձայն՝ նշված նախագծերը հնարավորություն կտան առավել անհատական մոտեցմամբ գնահատել պատժից պայմանական վաղաժամկետ ազատվող անձի՝ կրկնահանցագործություն կատարելու ռիսկը և հասարակության մեջ վերաինտեգրվելու մարտահրավերները և հնարավորությունները: Նախագծերը հաստատման կներկայացվեն Ազգային ժողովի կողմից ինստիտուտին առնչվող՝ «Քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Քրեակատարողական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթի ընդունումից հետո: Միաժամանակ նշվել է, որ ստացված կարծիքների հիման վրա վերջինս լրամշակվել է և առաջիկայում ներկայացվելու է Վարչապետի աշխատակազմ: Ավելին՝ հիշյալ գործընթացի պատշաճ իրականացումն ապահովելու նպատակով Արդարադատության նախարարի 2026 թվականի փետրվարի 16-ի թիվ 66-Լ հրամանով հաստատվել են Արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում դատապարտյալի վերասոցիալականացման անհատական ծրագրի ձևաթուղթը, որը նույն հրամանի համաձայն՝ գտնվում է փորձարկման փուլում:

Բացի այդ, ըստ ներկայացված տեղեկատվության՝ 2025 թվականի ընթացքում ՀՀ քրեակատարողական հիմնարկներում պահվող որոշակի ժամկետով կամ ցմահ ազատազրկված անձանցից պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվելու վերաբերյալ ստացվել է 869 դիմում: Պատժի հետագա կրումից պայմանական վաղաժամկետ ազատվել է 170 անձ, որոնցից մեկը՝ ցմահ ազատազրկման դատապարտված:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պաշտպանը դրական է համարում Արդարադատության նախարարության հետ կայուն համագործակցությունն ու դրա արդյունքում ոլորտի լավարկմանն ուղղված գործընթացները: Նշվածը պետք է հետևողականորեն կրի շարունակական բնույթ՝ նկատի ունենալով պետության դերն ու ստանձնած պոզիտիվ պարտավորություններն իր հոգածության ներքո գտնվող ազատությունից զրկված անձանց վերասոցիալականացման հարցում:

Քննարկվող խնդիրները, այդ թվում՝ իրականացվող օրենսդրական փոփոխությունների արդյունքում անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանությանն առնչվող հարցերը շարունակելու են գտնվել Պաշտպանի անմիջական ուշադրության և մշտադիտարկման ներքո:

ԲԱԺԻՆ 4. ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄՆ ՈՒ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ

2025 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության առանցքային ուղղություններից է եղել իրավահավասարության ապահովումն և խտրականության կանխարգելումը:

Իրավահավասարության ապահովմանն ուղղված արդյունավետ օրենսդրական կառուցակարգերի բացակայության խնդիրը 2025 թվականի ընթացքում ևս շարունակել է մնալ արդիական: Խտրականության դեմ պայքարի շրջանակներում գործուն կառուցակարգերի նախատեսման, այդ թվում՝ միասնական կարգավորման ընդունման անհրաժեշտությունը Մարդու իրավունքների պաշտպանի կողմից տարիներ շարունակ բարձրացվել է ինչպես հրապարակային, այնպես էլ ոչ հրապարակային հարթակներում:

2025 թվականի ընթացքում ևս Մարդու իրավունքների պաշտպանը շարունակաբար բարձրացրել է «Խտրականության կանխարգելման և խտրականությունից պաշտպանության մասին» օրենքի և հարակից օրենսդրական նախագծերի փաթեթի ընդունման հարցը՝ կարևորելով ոչ միայն օրենսդրական փոփոխությունների շուտափույթ իրականացումն ու դրանց իրացման մեխանիզմների ներդրումը, այլև հասարակության բոլոր շերտերում կարծրատիպերի հաղթահարմանն ուղղված կրթական և իրազեկման աշխատանքների իրականացումը:

Իրավահավասարության ապահովման ու խտրականության կանխարգելման շրջանակներում արձանագրված խնդիրները, այդ համատեքստում Պաշտպանի կողմից իրականացվող աշխատանքները, ինչպես նաև իրավահավասարության ապահովման ու խտրականության կանխարգելման և պատշաճ հանրային ընկալումների ձևավորման անհրաժեշտությունը Պաշտպանի կողմից ընդգծվել է օտարերկրյա պատվիրակությունների[137], դեսպանությունների ներկայացուցիչների[138], ուսանողների և աշակերտների[139] հետ հանդիպումների, մարզային այցերի[140], աշխատանքային այցերի[141], համաժողովների[142] և այլ միջոցառումների շրջանակում[143]: Առանձին դեպքերում Մարդու

---

[137] Տե՛ս, օրինակ, հետևյալ հղումներով՝ https://www.ombuds.am/am/site/ViewNews/3538, https://www.ombuds.am/am/site/ViewNews/3406, https://www.ombuds.am/am/site/ViewNews/3359 հասանելի են 2026 թվականի հունվարի 31-ի դրությամբ:

[138] Տե՛ս հետևյալ հղումներով՝ https://www.ombuds.am/am/site/ViewNews/3373, https://www.ombuds.am/am/site/ViewNews/3405, հասանելի են 2026 թվականի հունվարի 31-ի դրությամբ:

[139] Տե՛ս հետևյալ հղումներով՝ https://www.ombuds.am/am/site/ViewNews/3585, https://www.ombuds.am/am/site/ViewNews/3433, https://www.ombuds.am/am/site/ViewNews/3409, https://www.ombuds.am/am/site/ViewNews/3600, https://www.ombuds.am/am/site/ViewNews/3540, https://www.ombuds.am/am/site/ViewNews/3532 հասանելի են 2026 թվականի հունվարի 31-ի դրությամբ:

[140] Տե՛ս հետևյալ հղումներով՝ https://www.ombuds.am/am/site/ViewNews/3585, https://www.ombuds.am/am/site/ViewNews/3438, https://www.ombuds.am/am/site/ViewNews/3387, https://www.ombuds.am/am/site/ViewNews/3508, https://www.ombuds.am/am/site/ViewNews/3396 հասանելի են 2026 թվականի հունվարի 31-ի դրությամբ:

[141] Տե՛ս, օրինակ, հետևյալ հղումով՝ https://www.ombuds.am/am/site/ViewNews/3442 հասանելի է 2026 թվականի հունվարի 31-ի դրությամբ:

[142] Տե՛ս, օրինակ, հետևյալ հղումով՝ https://www.ombuds.am/am/site/ViewNews/3621 հասանելի է 2026 թվականի հունվարի 31-ի դրությամբ:

[143] Տե՛ս, օրինակ, հետևյալ հղումներով՝ https://www.ombuds.am/am/site/ViewNews/3570, https://www.ombuds.am/am/site/ViewNews/3534 հասանելի են 2026 թվականի հունվարի 31-ի դրությամբ:

իրավունքների պաշտպանը հանդես է եկել նաև հրապարակային հայտարարություններով[144]:

Այսպես, օրինակ, Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային օրվա առթիվ Եվրոպական Միության կողմից ֆինանսավորվող «Մարդու իրավունքների պաշտպանության խթանում և ազգային հաստատությունների հզորացում» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի, ՄԱԿ մանկական հիմնադրամի և Միավորված ազգերի կազմակերպության բնակչության հիմնադրամի հետ համատեղ կազմակերպվել է «Էթիկական չափորոշիչները իրավահավասարության և հակախտրականության երաշխավորման ոլորտում» խորագրով բարձր մակարդակի միջազգային համաժողով:

Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային օրվա առթիվ անցկացվող «Էթիկական չափորոշիչները իրավահավասարության և հակախտրականության երաշխավորման ոլորտում» խորագրով բարձր մակարդակի միջազգային համաժողովի



ընթացքում տեղի են ունեցել պանելային քննարկումներ՝ «Պետական մարմինների, մասնագիտական համայնքների ու ՀԼՄ-ների համագործակցությունը իրավահավասարության խթանման և խտրականության դեմ պայքարում» և «Մարդու իրավունքների կրթությունը՝ որպես էթիկական ստանդարտների ամրապնդման, ինչպես նաև խտրականության, կարծրատիպերի և անհանդուրժողականության հաղթահարման կարևոր գրավական» թեմաներով:[145]:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի և Եվրոպայի խորհրդի համագործակցությամբ, օրինակ, տեղի է ունեցել միջազգային համաժողով «Բիզնես և մարդու իրավունքներ. Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն» խորագրով: Միջոցառումը կազմակերպվել էր «Մարդու իրավունքներ և շրջակա միջավայրի համար պատասխանատու բիզնես պրակտիկա» ծրագրի շրջանակում: Ի թիվս այլնի քննարկվել են նաև աշխատանքային միջավայրում իրավահավասարությանն ու հակախտրականությանը վերաբերելի հարցեր՝ անդրադառնալով խոցելի խմբերի, մասնավորապես՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար պատշաճ աշխատանքային միջավայրի բացակայության խնդիրներին:

Պաշտպանն ընդգծել է, որ ոլորտում առկա հարցերը պետք է շարունակեն մնալ թե՛ պետական կառույցների, և թե՛ մասնավոր հատվածի ուշադրության կենտրոնում՝

[144] Տե՛ս, օրինակ, հետևյալ հղումով՝ https://www.ombuds.am/am/site/ViewNews/3461 հասանելի է 2026 թվականի հունվարի 31-ի դրությամբ:

[145] Տե՛ս, օրինակ, հետևյալ հղումներով՝ https://www.ombuds.am/am/site/ViewNews/3623, https://www.ombuds.am/am/site/ViewNews/3622, https://www.ombuds.am/am/site/ViewNews/3621 հասանելի են 2026 թվականի հունվարի 31-ի դրությամբ:

ապահովելով իրավունքի գերակայությունը, սոցիալական պատասխանատվությունը և իրավահավասարությունը[146]:

Պաշտպանի նախաձեռնությամբ 2025 թվականին հանրային իշխանության ներկայացուցիչների, հանրային գործիչների, զանգվածային լրատվության միջոցների, հասարակական կազմակերպությունների, մասնագիտական համայնքների ներկայացուցիչների ներգրավմամբ իրավահավասարության ապահովման ու խտրականության կանխարգելման ոլորտում անցկացվել են բազմաթիվ այլ վերապատրաստումներ, կրթական ծրագրեր, միջոցառումներ ու իրազեկման արշավներ, որոնք հասանելի են Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնական կայքէջում ու ներկայացված են սույն տարեկան հաղորդման, այդ թվում սույն բաժնի համապատասխան գլուխներում:

2025 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը նաև քննարկել ու ուսումնասիրել է իրավահավասարության ապահովման և խտրականության կանխարգելմանն առնչությամբ ստացված դիմումներն ու բողոքները, որոնց վերաբերյալ որոշ վիճակագրական տվյալներ ներկայացված են ստորև:

Այսպես, օրինակ, 2025 թվականին Պաշտպանին հասցեագրվել են 42 գրավոր և բանավոր դիմումներ ու բողոքներ, որոնցով ներկայացվել են աշխատանքի բնագավառում խտրականության առնչությամբ հարցեր: Դրանցից 7-ը վերաբերել են հաշմանդամություն ունեցող անձանց: 42 դիմումներից ու բողոքներից 22-ում ներկայացվել են կնոջ նկատմամբ խտրականության առնչությամբ հարցեր (23-ից 47 տարեկան), իսկ 20-ի դեպքում՝ տղամարդու նկատմամբ (տղամարդկանցից միայն երկուսի տարիքն է հայտնի՝ 44 և 47, իսկ մյուսների տարիքի վերաբերյալ տվյալներ նշված չեն): 42 դիմումներից և բողոքներից 2-ում ներկայացվել են ազգությամբ պայմանավորված խտրականության առնչությամբ հարցեր:



[146] Տե՛ս հետևյալ հղումով՝ https://www.ombuds.am/am/site/ViewNews/3423 հասանելի է 2026 թվականի հունվարի 31-ի դրությամբ:

2025 թվականին ԼԳԲՏՔ+ անձանց իրավունքների առնչությամբ Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացվել են 23 գրավոր և բանավոր դիմումներ ու բողոքներ:



2025 թվականին ստացված բողոքներից մեկով բարձրացվել է պտղի սեռով պայմանավորված արհեստական ընդհատման հետ կապված հարց:

Դիմումների ու բողոքների ուսումնասիրության ու քննության, հանդիպումների ու այցերի արդյունքում իրավահավասարության ապահովման ու խտրականության կանխարգելման ոլորտում արձանագրված խնդիրներին անդրադարձ է կատարվում սույն տարեկան հաղորդման համապատասխան գլուխներում:

ԳԼՈՒԽ 1. ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԽԹԱՆՈՒՄԸ

2025 թվականին ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների պաշտպանությունն ու խթանումը հանդիսացել է Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության կարևոր ուղղություններից մեկը: Այդ շրջանակում իրականացվել են մի շարք միջոցառումներ և գործողություններ՝ ուղղված իրավունքների պաշտպանության վիճակի գնահատմանը և խնդիրների բացահայտմանը:

Հաշվետու տարվա ընթացքում ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց կողմից Պաշտպանի աշխատակազմին ներկայացվել է 12 գրավոր և բանավոր դիմում-բողոք:

Դիմում-բողոքները հիմնականում առնչվել են քաղաքացիաիրավական, սոցիալ-տնտեսական և քրեաիրավական ոլորտներին և, որպես կանոն, չեն վերաբերել ազգային պատկանելության հիմքով իրավունքների խախտումներին կամ խտրականության դրսևորումներին:

Միևնույն ժամանակ, Պաշտպանի աշխատակազմն ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների պաշտպանության ընդհանուր վիճակը գնահատել է տարբեր հաստատություններ իրականացվող մշտադիտարկման այցերի, մարզային բնակավայրեր իրականացվող այցերի, տարատեսակ ուսումնասիրությունների, զանգվածային լրատվության միջոցների, սոցիալական մեդիայի և այլ հանրային տեղեկատվական հարթակների մշտադիտարկման միջոցով:

Անհրաժեշտ է արձանագրել, որ տարին առանձնացել է թե՛ Հայաստանի Հանրապետության, թե՛ աշխարհի տարբեր երկրների համար բնորոշ բևեռացման բարձր մակարդակով, ինչը զգալի ազդեցություն է ունեցել մարդու իրավունքների պաշտպանության ամբողջ համակարգի արդյունավետության վրա: Հանրային խոսույթն աչքի է ընկել խտրական, անհանդուրժող, հասարակական տարբեր խմբերի, ներառյալ՝ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց թիրախավորող, պիտակավորող և ատելություն սերմանող ձևակերպումներով: Այս համատեքստում մարդու իրավունքների պաշտպանության համակարգը գործել է էական մարտահրավերների, ատելության ընդհանուր միջավայրի պայմաններում:

Պաշտպանը բազմիցս է արտահայտել մտահոգություն առ այն, որ մի շարք դեպքերում կոնկրետ էթնիկ կամ ազգային պատկանելությունը թիրախավորվում է, պիտակավորվում և խտրական ձևակերպումներով օգտագործվում որպես վիրավորանք քաղաքական դերակատարների, հանրային գործիչների, մասնագիտական, ակադեմիական և այլ համանման համայնքների ներկայացուցիչների կողմից: Նման վարքագիծը չի կարող ունենալ որևէ արդարացում և պետք է արժանանա իրավաչափ հակազդեցության:

Պաշտպանը բազմիցս է ընդգծել ազգային փոքրամասնությունների նկատմամբ խտրական դրսևորումների բացառման կարևորությունը և այդ համատեքստում հանրային իշխանության մարմինների ու քաղաքացիական հասարակության համագործակցության անհրաժեշտությունը:

Այս առումով 2025 թվականի ընթացքում ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների պաշտպանության և խթանման համատեքստում Պաշտպանն ակտիվ համագործակցել է պետական մարմինների, միջազգային

գործընկերների, հասարակական կազմակերպությունների, զանգվածային լրատվության միջոցների և այլ կարևոր դերակատարների հետ: Պաշտպանը և իր ներկայացուցիչներն ակտիվ ներգրավվել են նաև ազգային փոքրամասնությունների իրավունքներին վերաբերելի շահագրգիռ բազմաթիվ քննարկումների: Մասնավորապես, «Մեկտեղելով ջանքերը հանուն հավասարության» խորագրով միջոցառման շրջանակում Պաշտպանը մասնակցել է պանելային քննարկման՝ «Խտրականությունը Հայաստանում. օրենսդրական բարեփոխումների նախադրյալները» թեմայով: Քննարկման ընթացքում անդրադարձ է կատարվել ազգային փոքրամասնությունների համայնքներում կանանց իրավունքների հետ կապված հարցերին: Մասնավորապես, ընդգծվել են, ազգային փոքրամասնությունների համայնքներում վաղ ամուսնությունների պայմաններում պարտադիր կրթությունից դուրս մնալու և առողջության պահպանման իրավունքի հետ կապված բազմաթիվ խնդիրներ: Ավելին, արձանագրվել է, որ պետությունը պետք է ակտիվ դերակատարություն ունենա և կարողանա ոչ միայն դեպքերի առկայության պարագայում հասցեավորել, այլ՝ կանխարգելել նշված խնդիրները[147]:

Պաշտպանը բացման խոսքով է հանդես եկել «Կրոնական և ազգային ինքնության հիմքով հանդուրժողականության և խաղաղ համակեցության» թեմայով լավագույն լրագրողական նյութի 8-րդ մրցանակաբաշխությանը, որտեղ ևս մեկ անգամ հատուկ ընդգծել է ազգային փոքրամասնությունների իրավունքների արդյունավետ պաշտպանության և խթանման ուղղությամբ անհրաժեշտ քայլեր իրականացնելու հրամայականը:

Պաշտպանը աշխատանքային այց է իրականացրել Կոտայքի մարզի Արզնի համայնք, որը մեծամասամբ բնակեցված է ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներով՝ ասորական, եզդիական և ռուսական համայնքներից:

Պաշտպանի կողմից Արզնիի «Սերգեյ Սարխոշևի անվան» միջնակարգ դպրոցում ոլորտային թեմաների շուրջ անցկացվել է վարպետաց դաս: Արզնի համայնքի ղեկավարի հետ քննարկվել են համայնքի բնակիչների իրավունքներին, այդ թվում՝ ազգային փոքրամասնությունների իրավունքներին վերաբերելի հարցեր[148]:

2025 թվականի հունիսի 25-ին տեղի է ունեցել Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների պաշտպանության և խթանման հարցերով հասարակական խորհրդի հերթական նիստը: Նիստի նպատակն էր ամրապնդել ազգային փոքրամասնությունների իրավունքներով զբաղվող հասարակական կազմակերպությունների և պետական մարմինների միջև

[147] Տե՛ս հետևյալ հղումով՝ https://ombuds.am/am/site/ViewNews/3295, հասանելի է 2026 թվականի մարտի 10-ի դրությամբ:
[148] Տե՛ս հետևյալ հղումով՝ https://ombuds.am/am/site/ViewNews/3349, հասանելի է 2026 թվականի մարտի 10-ի դրությամբ:

համագործակցությունն ու երկխոսությունը: Քննարկվել են ոլորտում առկա հիմնախնդիրները, ինչպես նաև ներկայացվել են առաջարկներ՝ ուղղված դրանց համակարգային լուծմանը և իրավունքների կայուն պաշտպանությանը: Խորհրդի նիստում, ի թիվս այլնի, քննարկվել են լեզվի իրավունքի պահպանման, խտրականության դեմ պայքարի, կրթության, մշակութային կյանքին մասնակցության և այլ ոլորտներում հավասար հնարավորությունների ապահովմանն առնչվող մի շարք հարցեր, ինչպես նաև անդրադարձ է կատարվել «Ազգային փոքրամասնությունների մասին» օրենքի նախագծին:

Հատուկ ուշադրություն է դարձվել նախադպրոցական հաստատություններում ազգային փոքրամասնություններին պատկանող երեխաների ընդգրկվածությանը, դպրոցներում մայրենի լեզվի դասավանդման ապահովմանը, համապատասխան դասագրքերի առկայությանը, ինչպես նաև կրթությունից դուրս մնացած երեխաների իրավունքների պաշտպանությանը վերաբերող հարցերին: Խորհրդի անդամները ներկայացրել են իրենց համայնքներում առկա խնդիրները, հանդես են եկել առաջարկներով, որոնք կարող են պետական մարմինների և քաղաքացիական հասարակության համատեղ ջանքերով լուծում ստանալ[149]:

Պաշտպանն այցելել է Արմավիրի մարզի եզդիական բնակչություն ունեցող Ֆերիկ համայնք: Այցն իրականացվել է Ազգային ժողովի պատգամավոր, ԱԺ-ում եզդիական համայնքի ներկայացուցիչ, Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնակատար Ռուստամ Բաքոյանի հետ համատեղ: Մասնակցել են նաև Ազգային ժողովի, Արմավիրի մարզպետարանի, Պաշտպանի աշխատակազմի, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Պաշտպանը շրջայց է կատարել «Ֆերիկի Ռզալիե Ռաշիդի Օզմանյանի» անվան միջնակարգ դպրոցում, տեղում ծանոթացել շենքային պայմաններին, զրուցել ուսուցչական կազմի և աշակերտների հետ: Այցի շրջանակում քննարկման առանցքում են եղել ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին հուզող մի շարք հարցեր՝ ներառյալ կրթության իրավունքի իրացման, տրանսպորտի հասանելիության, ազգային և էթնիկ ինքնության պահպանման, լեզվի, կրոնի, ավանդույթների և մշակույթի պահպանման խնդիրները և այլն:

Պաշտպանը հատուկ շեշտել է, որ պետությունն ունի պոզիտիվ պարտավորություն՝ երաշխավորելու և խթանելու ազգային փոքրամասնությունների ինքնության պահպանման և զարգացման հնարավորությունները: Միևնույն ժամանակ, կարևորվել է համայնքների ակտիվ մասնակցությունը այդ գործընթացներում[150]:

[149] Տե՛ս հետևյալ հղումով՝ https://ombuds.am/am/site/ViewNews/3431, հասանելի է 2026 թվականի մարտի 10-ի դրությամբ:

[150] Տե՛ս հետևյալ հղումով՝ https://ombuds.am/am/site/ViewNews/3438, հասանելի է 2026 թվականի մարտի 10-ի դրությամբ:

Պաշտպանը Դիլիջանում մասնակցել է «Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների կրթության իրավունքի իրացման խնդիրները» թեմայով

կազմակերպված քննարկմանը: Միջոցառումը կազմակերպել է ՀՀ ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովը՝ ՄԱԿ-ի զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) հայաստանյան գրասենյակի աջակցությամբ: Միջոցառման շրջանակում առանձին անդրադարձ է կատարվել ոլորտը կարգավորող իրավական ակտերին ու դրանց նախագծերին, մասնագիտական կադրերի պատրաստման գործում առկա դժվարություններին, ինչպես նաև ազգային փոքրամասնությունների համար նախատեսված ուսումնական գրականության և մասնագիտական նյութերի սակավությանը[151]:

Պաշտպանը այցելել է նաև Ակնալճի եզդիական սրբատեղի և մասնակցել է սրբատեղիի՝ Զիարատի օրվան նվիրված միջոցառմանը[152]:

Պաշտպանն այցելել է նաև Հայաստանում ասորական ամենախոշոր՝ Արարատի մարզի Վերին Դվին համայնք: Այցի մեկնարկին տեղի է ունեցել հանդիպում համայնքի ղեկավար հետ: Վերջինս ներկայացրել է Հայաստանում բնակվող ասորիների իրավունքներին, ազգային փոքրամասնությունների ինքնության պահպանմանը վերաբերելի առանձին հարցեր: Հատուկ անդրադարձ է կատարվել համայնքի բնակիչների իրավունքներին վերաբերելի հարցերին:

Այնուհետև, Պաշտպանն այցելել է Վերին Դվինի միջնակարգ դպրոց (նոր շենքի կառուցմամբ պայմանավորված՝ դասապրոցեսը կազմակերպվում է Դվինի «Լեոնիդ Ազգալդյանի անվան» միջնակարգ դպրոցում): Տնօրենի և ուսուցչական անձնակազմի հետ տեղի են ունեցել իրավունքներին առնչվող առանձին հարցերի վերաբերյալ քննարկումներ:

Քննարկվող թեմայի շրջանակում կարևոր է նշել նաև այն, որ 2025 թվականին ՀՀ Սահմանադրական դատարանի տեղեկագրում հրապարակվել է «Ազգային փոքրամասնությունների

[151] Տե՛ս հետևյալ հղումով՝ https://ombuds.am/am/site/ViewNews/3466, հասանելի է 2026 թվականի մարտի 10-ի դրությամբ:

[152] Տե՛ս հետևյալ հղումով՝ https://ombuds.am/am/site/ViewNews/3524, հասանելի է 2026 թվականի մարտի 10-ի դրությամբ:

իրավունքները Հայաստանում. հիմնախնդիրներ և լուծումներ» վերտառությամբ գիտական հոդվածը, որը հեղինակել են Մարդու իրավունքների պաշտպանը և Մարդու իրավունքների պաշտպանի օգնականը: Նշված աշխատանքի շրջանակում մանրամասն անդրադարձ է կատարվել ազգային փոքրամասնությունների իրավունքներին վերաբերելի առանցքային հարցերի, որոնց ուսումնասիրության և համապարփակ վերլուծության արդյունքում ներկայացվել են առաջարկություններ՝ ուղղված խնդիրների համակողմանի լուծմանը և ոլորտի կատարելագործմանը[153]:

Մարդու իրավունքների պաշտպանն ազգային փոքրամասնությունների իրավունքների հետ կապված հարցերը շարունակելու է պահել իր անմիջական ուշադրության ու հոգածության ներքո:

[153] Տե՛ս հետևյալ հղումով՝ https://ombuds.am/am/site/ViewNews/3570, 2026 թվականի մարտի 10-ի դրությամբ:

1. Իրավահավասարության և խտրականության բացառմանն առնչվող խնդիրները ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության համատեքստում

Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության համատեքստում իրավահավասարությանն ու խտրականության բացառմանն առնչվող՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին 2024 թվականի տարեկան հաղորդմամբ արձանագրվել և ամփոփվել են ոլորտին վերաբերելի՝ օրենքի առջև հավասարության և օրենքով հավասար պաշտպանության երաշխավորման, նշված ոլորտում համապարփակ օրենսդրության ընդունման ու պատշաճ կիրառման կարևորության, հանրային իրազեկվածության բարձրացման վերաբերյալ խնդիրները, որոնք շարունակում են արդիական մնալ[154]:

Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Շրջանակային կոնվենցիա) 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմերը պարտավորվում են ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց համար երաշխավորել օրենքի առջև հավասարություն և օրենքով հավասար պաշտպանություն: Այդ առումով արգելվում է ազգային փոքրամասնության պատկանելության վրա հիմնված ցանկացած խտրականություն:

Նույն կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կողմերը պարտավորվում են ձեռնարկել համապատասխան միջոցներ այն անձանց պաշտպանելու համար, ովքեր կարող են իրենց էթնիկական, մշակութային, լեզվական կամ կրոնական պատկանելության պատճառով դառնալ սպառնալիքների, խտրականության, թշնամական կամ բռնի գործողությունների զոհ:

Խտրականության բացառումը և առհասարակ իրավահավասարությունը հանդիսանում են մարդու իրավունքների պաշտպանության հիմնական և համընդհանուր սկզբունք[155] և միջազգային իրավունքի հիմնարար բաղադրիչ, որը առաջացնում է անմիջական և ընդհանրական, համալիր (cross-cutting) պարտավորություններ[156]:

Անհրաժեշտ է ընդգծել, որ «Ազգային փոքրամասնությունների իրավունքները Հայաստանում. հիմնախնդիրներ և լուծումներ» վերտառությամբ գիտական հոդվածի շրջանակում անդրադարձ է կատարվել՝ ազգային փոքրամասնությունների իրավունքների երաշխավորման և խտրականության բացառման համատեքստում իրավահավասարությանն առնչվող համապարփակ օրենսդրության անհրաժեշտությանը, որոնց ուսումնասիրության և համապարփակ վերլուծության արդյունքում ներկայացվել են

---

[154] Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին 2023 թվականի տարեկան հաղորդումը, 290-293 էջեր, հասանելի է https://www.ombuds.am/images/files/4d1335361f1f7e9fbcc1cfc10679701e.pdf հղումով, 2026 թվականի մարտի 10-ի դրությամբ:

[155] Տե՛ս CCPR General Comment No. 18: Non-discrimination, UN Human rights committee, November 10, 1989, https://www.refworld.org/legal/general/hrc/1989/en/6268 հղումով, 2026 թվականի մարտի 10-ի դրությամբ:

[156] Տե՛ս General comment no. 20, Non-discrimination in economic, social and cultural rights (art. 2, para. 2, of the International Covenant on Economic, Social and Cultural Rights), UN. Committee on Economic, Social and Cultural Rights, 2009, https://digitallibrary.un.org/record/659980?v=pdf հղումով, 2026 թվականի մարտի 10-ի դրությամբ:

առաջարկություններ՝ ուղղված խնդիրների համակողմանի լուծմանը և ոլորտի կատարելագործմանը[157]:

Պաշտպանը Շրջանակային կոնվենցիայի, ինչպես նաև ներպետական իրավական կարգավորումների համակարգային վերլուծության արդյունքում, բազմիցս արձանագրել է, որ ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության ոլորտում պետությունն, ի թիվս այլնի, ունի պոզիտիվ պարտավորություն՝ երաշխավորել օրենքի առջև հավասարություն և օրենքով հավասար պաշտպանություն, բացառել ազգային փոքրամասնության պատկանելության վրա հիմնված ցանկացած խտրականություն, ինչպես նաև ձեռնարկել պատշաճ միջոցներ վերջիններիս էթնիկական, մշակութային, լեզվական կամ կրոնական պատկանելության տարբերությամբ պայմանավորված՝ խտրական դրսևորումները արգելելու ուղղությամբ:

Անհրաժեշտ է նշել, որ հաշվետու տարվա ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների պաշտպանության և խթանման հարցերով հասարակական խորհրդի (այսուհետ՝ նաև Խորհուրդ) հերթական նիստի շրջանակում քննարկվել և ընդգծվել է «Ազգային փոքրամասնությունների մասին» օրենքի ընդունման կարևորությունը:

Արձանագրված խնդիրների վերաբերյալ պարզաբանումներ են պահանջվել իրավասու պետական մարմիններից, ի պատասխան՝ Արդարադատության նախարարությունից հայտնել են, որ «Ազգային փոքրամասնությունների մասին» օրենքի նախագծի ընթացքը ներկայում ապահովվում է պատգամավորական նախաձեռնության շրջանակներում: Արդարադատության նախարարությունը իր հերթին ներկայացրել է նախագծի լրամշակման վերաբերյալ համապատասխան առաջարկներ, իսկ «Խտրականության կանխարգելման և խտրականությունից պաշտպանության մասին» օրենքի նախագիծը ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ:

Պաշտպանն արձանագրում է, որ վերոնշյալ խնդիրների հաղթահարման կարևոր գրավականներից մեկը ոլորտի համապարփակ օրենսդրության ընդունումն ու պատշաճ գործարկումն է: Պետք է ընդգծել, որ թեև պետությունը ձեռնարկում է միջոցներ համապարփակ օրենսդրություն ընդունելու ուղղությամբ, սակայն օրենսդրությունը դեռևս ընդունված չէ, և պետության ձեռնարկած քայլերը դեռ բավարար արդյունավետություն չեն ապահովում:

Վերոնշյալ մոտեցումները համահունչ են Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի և Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի մի շարք հանձնարարականներին և բանաձևերին, որոնք շեշտադրում են ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությանն ուղղված համապարփակ օրենսդրության ընդունման, խտրականության բացառման անհրաժեշտությունը[158]:

Պաշտպանն ընդծում է, որ ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությանն ու խթանմանը միտված քաղաքականության և համապարփակ օրենսդրության մշակումն ու ընդունումն անհրաժեշտ է վերջիններիս ինքնության

---

[157] Գիտական հոդվածը հրապարակվել է ՀՀ Սահմանադրական դատարանի տեղեկագրում, հեղինակել են Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանը և Մարդու իրավունքների պաշտպանի օգնականը, հասանելի է հետևյալ հղումով՝ https://ombuds.am/am/site/ViewNews/3570, 2026 թվականի մարտի 10-ի դրությամբ:

[158] Տե՛ս Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի PACE Resolution 1713 (2010) հանձնարարականը, հասանելի է հետևյալ հղումով՝ https://pace.coe.int/en/files/17407/html?utm_source 2026 թվականի հունվարի 22-ի դրությամբ, Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի Resolution 1713 (2010) հանձնարարականը, հասանելի է հետևյալ հղումով՝ https://pace.coe.int/en/files/17824/html?utm_source 2026 թվականի մարտի 10-ի դրությամբ:

պահպանման, նրանց համար հավասար հնարավորությունների ապահովման, նրանց նկատմամբ խտրականության բացառման, ինչպես նաև հասարակական, քաղաքական, սոցիալ-տնտեսական կյանքում ներառականության ապահովման տեսանկյունից: Այդ հանգամանքը ենթադրում է պետության կողմից նշված ոլորտում ակտիվ և խթանող քաղաքականության իրականացում՝ առաջ եկող խնդիրներին արձագանքելու պարզ քաղաքականության փոխարեն:

Այսպիսով, Պաշտպանն արձանագրում է իրավահավասարության և խտրականության բացառմանն առնչվող օրենսդրության շուտափույթ ընդունման կարևորությունը:

Իրավահավասարության և խտրականության բացառման տեսանկյունից չափազանց կարևոր են նաև հանրության իրավագիտակցության մակարդակի բարձրացմանը, ներառյալ՝ կարծրատիպային մոտեցումների վերացմանն ուղղված համակարգային միջոցառումների, այդ թվում՝ հանրային իրազեկման աշխատանքների իրականացումը:

Այս առումով Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը տեղեկացրել է, որ կրթության բնագավառի աշխատողների, մասնավորապես՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակի դասընթացի մենթորների և դասընթացը վարող խմբակավարների համար կազմակերպվել են վերապատրաստումներ խտրականության արգելքի, խտրական վերաբերմունքի բացառմանը, խոցելի խմբերի և անձանց նկատմամբ զգայունություն ձեռք բերելու թեմաներով: Վերապատրաստվել են 73 մենթոր և շուրջ 2500 ուսուցիչ և հոգեբան: Մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտում՝ բոլոր պետական կրթական չափորոշիչներում ներառվել են «Իրավունքի հիմունքներ» առարկան, «Քաղաքագիտության և տեխնոլոգիայի հիմունքներ», «Հաղորդակցություն», «Անվտանգություն և առաջին օգնություն», «Ձեռներեցություն» մոդուլները, որոնց ուսուցանման շրջանակում անդրադարձ է կատարվում թե՛ գենդերային խտրականության ձևավորման կանխարգելմանը, թե՛ մարդու իրավունքներին, թե՛ ժողովրդավարությանը, և թե՛ գենդերային հավասարությանն առնչվող խնդիրներին: ՀՀ գրեթե բոլոր բարձրագույն կրթական հաստատություններում իրականացված վերապատրաստումներում անդրադարձ է կատարվել խտրականության արգելքի, գենդերային հավասարության և մի շարք այլ թեմաների:

Կարևորելով նշված նախաձեռնությունները՝ Պաշտպանն արձանագրում է դրանց շարունակականության ապահովման անհրաժեշտությունը՝ հանրության իրազեկվածությունը նշված հարցերի առնչությամբ բարձրացնելու նպատակով:

Միևնույն ժամանակ, Պաշտպանն ընդգծում է, որ վերոնշյալ աշխատանքները արդյունավետ կազմակերպելու նպատակով անհրաժեշտ է համագործակցել ազգային փոքրամասնությունների հարցերով զբաղվող կառույցների, հասարակական կազմակերպությունների և համայնքների ներկայացուցիչների հետ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***իրականացնել հանրային իրազեկվածության բարձրացմանը, ներառյալ՝ կարծրատիպային մոտեցումների վերացմանն ու խտրականության բացառմանն ուղղված շարունակական և համակարգային միջոցառումներ,***
- ✓ ***իրականացնել իրավահավասարության և խտրականության բացառմանն ուղղված, ինչպես նաև ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությանն ու խթանմանը վերաբերելի օրենսդրության շուտափույթ***

ընդունմանն ուղղված աշխատանքներ՝ միջազգային չափորոշիչների պահպանմամբ և շահագրգիռ կողմերի պարտադիր ներգրավմամբ:

2. Ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների խթանմանն առնչվող խնդիրներ

Պաշտպանը 2025 թվականի ընթացքում շարունակել է իր ակտիվ գործունեությունը ազգային փոքրամասնությունների իրավունքների խթանման բնագավառում:

Պաշտպանն ընդգծում է, որ ազգային փոքրամասնությունների իրավունքների երաշխավորման գործող համակարգը հիմնականում ուղղված է **իրավունքների պաշտպանության** մեխանիզմների ապահովմանը, մինչդեռ ոչ պակաս կարևոր է նաև ազգային փոքրամասնությունների իրավունքների **խթանմանն** ուղղված քաղաքականության մշակումը և արդյունավետ իրականացումը: Այդ քաղաքականությունը ենթադրում է համապատասխան մեթոդաբանության և կառուցակարգերի ձևավորում և կիրառում, որոնք նպատակ ունեն ապահովելու ազգային փոքրամասնությունների ինքնության պահպանման և զարգացման հիմնական տարրերը՝ լեզուն, կրոնը, մշակույթը և ավանդույթները, ինչպես նաև նրանց լիարժեք և արդյունավետ մասնակցությունը հասարակական կյանքին:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին 2024 թվականի տարեկան հաղորդմամբ[159] անդրադարձ է կատարվել նաև ՄԱԿ Մարդու իրավունքների ազգային հաստատությունների գլոբալ դաշինքի հավատարմագրման ենթահանձնաժողովի ընդհանուր դիտարկումներին[160], որոնցով ի թիվս այլնի նշվել է, որ խթանումը ընդգրկում է այն գործառույթները, որոնց նպատակն է ստեղծել այնպիսի հասարակություն, որտեղ մարդու իրավունքները լայն շրջանակներում հասկացված են և հարգված: Նման գործառույթները կարող են ներառել կրթությունը, վերապատրաստումը, խորհրդատվությունը, հանրային իրազեկումն ու շահերի պաշտպանությունը[161]:

2.1. Ազգային փոքրամասնությունների լեզվի պահպանման իրավունքին առնչվող խնդիրներ

Ազգային փոքրամասնությունների իրավունքների խթանման համատեքստում Պաշտպանն ընդգծել է լեզվի պահպանման իրավունքի ուրույն դերակատարումը:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին 2024 թվականի տարեկան հաղորդմամբ արձանագրվել են ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց

---

[159] Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին 2024 թվականի տարեկան հաղորդումը, 295 էջ, հասանելի է https://www.ombuds.am/images/files/4d1335361f1f7e9fbcc1cfc10679701e.pdf հղումով, 2026 թվականի մարտի 10-ի դրությամբ:

[160] Տե՛ս հետևյալ հղումով՝ https://www.ohchr.org/sites/default/files/Documents/Countries/NHRI/GANHRI/EN_General Observations_Revisions_adopted_21.02.2018_vf.pdf, հասանելի է 2026 թվականի մարտի 10-ի դրությամբ:

[161] Տե՛ս հետևյալ հղումով՝ https://www.ohchr.org/sites/default/files/Documents/Countries/NHRI/GANHRI/EN_GeneralObservations_Revisions_adopted_21.02.2018_vf.pdf հասանելի է 2026 թվականի մարտի 10-ի դրությամբ:

լեզվի պահպանման իրավունքին առնչվող առանձին խնդիրներ, որոնք, մեծամասամբ, շարունակում են արդիական մնալ[162]: Նշված խնդիրները վերաբերել են ազգային փոքրամասնությունների լեզուներ (լեզուներով) դասավանդող մասնագետների սակավությանը, նշված մասնագետներին կրթելու համար նախատեսված բարձրագույն ուսումնական հաստատությունների կամ համապատասխան կառուցվածքային միավորների, ուսուցիչների վերապատրաստումների բացակայությանը և այլն:

Արձանագրված խնդիրների, ինչպես նաև վերջիններիս լուծման առնչությամբ ներկայացված առաջարկությունների իրացման նպատակով պարզաբանումներ են պահանջվել Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունից (այսուհետ՝ նաև Նախարարություն):

Նախարարության կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն՝ ՀՀ փոքրամասնությունների լեզուների (ասորերեն, եզդիերեն, հունարեն, ռուսերեն և քրդերեն) մասնագետների պատրաստման ծրագրերի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման միջոցով (հեռավար) փոքրամասնությունների լեզուների ուսուցման հնարավորությունների ուղղությամբ քննարկումներ են անցկացվել բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ:

Նշվել է, որ հաշվի առնելով Հայաստանում ազգային փոքրամասնությունների վերաբերյալ ուսումնասիրությունների կարևորությունը՝ Նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն առաջարկել է, որպես կայուն ենթակառուցվածք, ստեղծել փոքրամասնությունների լեզուների անհրաժեշտ թվով որակավորված մասնագետների պատրաստման միասնական համակարգ:

Հավելել են, որ այդ նպատակով Երևանի պետական համալսարանի Հումանիտար հետազոտությունների ինստիտուտի շրջանակներում 2026 թվականի հունվարից սկսելու է գործել Ազգային փոքրամասնությունների հարցերով զբաղվող լաբորատորիա: Նոր բացվող լաբորատորիայում կիրականացվեն ազգային փոքրամասնությունների լեզուների ուսուցմանն ու որակավորված մասնագետների պատրաստմանն ուղղված աշխատանքներ (որակավորման շնորհմամբ, ինչպես նաև կարճաժամկետ, տեղացի կամ հրավիրյալ մասնագետների միջոցով և այլն, առկա և հեռավար ձևաչափերով), ինչպես նաև ՀՀ ազգային փոքրամասնությունների վերաբերյալ ուսումնասիրություններ և հետազոտություններ: Աշխատանքները կիրականացվեն փուլային եղանակով: Նախնական փուլում նախատեսվում է կատարել կարիքների, մասնավորապես փոքրամասնությունների լեզուների որակավորված մասնագետների, ապա նաև փոքրամասնությունների լեզուների ուսուցման գործընթացի կազմակերպում՝ դիտարկելով տարբեր ձևաչափեր՝ լրացուցիչ կրթության (առկա և հեռավար), նշված լեզուների՝ որպես 2-րդ օտար լեզվի ուսուցման և այլն, ըստ անհրաժեշտության հրավիրելով համապատասխան մասնագետների թիմ (այդ թվում՝ մասնագետներ ազգային փոքրամասնությունների համայնքներից): Վերոնշյալ աշխատանքները կազմակերպելիս նախատեսվում է համագործակցել ազգային փոքրամասնությունների հարցերով զբաղվող կառույցների, հասարակական կազմակերպությունների և համայնքների հետ:

Պատասխան գրությամբ նշվել է նաև, որ Ազգային փոքրամասնություններին վերաբերող հարցերը պարբերաբար քննարկվել են Վարչապետի 2019 թվականի մայիսի

[162] Տե՛ս, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին 2024 թվականի տարեկան հաղորդումը, 295-300 էջեր, հասանելի է https://www.ombuds.am/images/files/4d1335361f1f7e9fbcc1cfc10679701e.pdf հղումով, 2026 թվականի մարտի 10-ի դրությամբ:

3-ի թիվ 486-Լ որոշմամբ ստեղծված ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերով խորհրդի նիստերի ընթացքում:

Շրջանակային կոնվենցիայի 12-րդ և 14-րդ հոդվածների համաձայն՝ կողմերը անհրաժեշտության դեպքում կրթության և գիտական ուսումնասիրությունների բնագավառում պետք է միջոցներ ձեռնարկեն իրենց ազգային փոքրամասնությունների և բնակչության մեծամասնության մշակույթի, պատմության, լեզվի և կրոնի վերաբերյալ գիտելիքներն ամրապնդելու համար: Այս ենթատեքստում Կողմերը, մասնավորապես, պետք է համարժեք հնարավորություններ տրամադրեն ուսուցիչների պատրաստման, դպրոցական դասագրքերով ապահովման համար և դյուրացնեն շփումները տարբեր համայնքների ուսանողների և ուսուցիչների միջև: Կողմերը պարտավորվում են ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար բոլոր մակարդակներով ապահովել կրթության մատչելիության հավասար հնարավորություններ: Կողմերը պարտավորվում են ճանաչել ազգային փոքրամասնությանը պատկանող յուրաքանչյուր անձի իրավունքը՝ սովորել իր փոքրամասնության լեզուն: Ավանդաբար կամ զգալի քանակությամբ ազգային փոքրամասնությունների պատկանող անձանցով բնակեցված տարածքներում բավարար կարիքի դեպքում Կողմերը հնարավորությունների սահմաններում և իրենց կրթական համակարգերի շրջանակներում պետք է ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար երաշխավորեն իրենց լեզուն ուսումնասիրելու կամ այդ լեզվով կրթություն ստանալու համարժեք հնարավորություններ:

Նկատի ունենալով նշված ոլորտում պետության ստանձնած պարտավորությունը՝ Պաշտպանը ողջունում է Նախարարության կողմից խնդրի հաղթահարման ուղղությամբ գործադրված ջանքերը:

Միևնույն ժամանակ, Պաշտպանը ընդգծում է իրավասու մարմնի կողմից ազգային փոքրամասնությունների լեզուներ դասավանդող համապատասխան մասնագետների ապահովման կարևորությունը, ինչպես նաև նրանց աշխատանքի շարունակականությունն ապահովելու համար լրացուցիչ քայլերի մշակումն ու իրացումը: Ավելին, հաշվի առնելով, որ մասնագետների սակավության կամ բացակայության խնդիրը կրում է համակարգային բնույթ՝ անհրաժեշտ է ձեռնարկել և իրականացնել ոլորտի կադրային ապահովմանն ուղղված հստակ և համապարփակ կառուցակարգեր՝ բացառելով դրվագային կամ ժամանակավոր բնույթ կրող լուծումները:

Պաշտպանը ընդգծում է, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ազգային փոքրամասնությունների առանձին համայնքներ դեմ են խմբակների ձևաչափով դասընթացների վարմանը, քանի որ խմբակներին մասնակցությունը կրում է ոչ պարտադիր, կամային բնույթ, վերոնշյալ կառուցակարգերի արդյունավետ ապահովման համար անհրաժեշտ է մշակել լրացուցիչ միջոցառումներ և կառուցակարգեր՝ ուղղված ազգային փոքրամասնությունների լեզուների ուսուցմանն ու որակավորված մասնագետների պատրաստմանը, որոնք համակարգային կարգավորում կնախատեսեն առկա խնդիրների արդյունավետ լուծման ուղղությամբ:

Ազգային փոքրամասնությունների լեզուներ (լեզուներով) դասավանդող ուսուցիչների վերապատրաստումների առնչությամբ Նախարարությունից հայտնել են, որ 2025 թվականի ընթացքում հերթական վերապատրաստումն է անցել ազգային փոքրամասնությունների լեզուներ դասավանդող 4 ուսուցիչ: Հաշվետու ժամանակահատվածում ազգային փոքրամասնությունների լեզուներ դասավանդող 11 ուսուցիչ դիմել է կամավոր ատեստավորմանը մասնակցելու համար՝ 7-ը հաղթահարել են անցողիկ շեմը:

Այս առումով հարկ է ընդգծել, որ պետությունը պետք է առաջնորդվի ազգային փոքրամասնությունների լեզուներ (լեզուներով) դասավանդող ուսուցիչների վերապատրաստման խթանող կառուցակարգեր նախատեսելու մեթոդաբանությամբ, ինչպես օրինակ՝ վերոնշյալ մասնագետների վերապատրաստման հատուկ ծրագրեր մշակելով և իրացնելով:

Ազգային փոքրամասնությունների լեզվի պահպանման իրավունքի տեսանկյունից կարևոր դերակատարություն ունեն նաև ազգային փոքրամասնությունների լեզուներով հեռուստառադիոհաղորդումները:

Այս առումով հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, մասնավորապես՝ «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով ամրագրված են կարգավորումներ, համաձայն որոնց՝ հանրային հեռարձակողները պարտավոր են՝ մշակել և իրականացնել ծրագրային քաղաքականություն՝ սպառողներին մատուցել հաղորդումներ, որոնցում ներկայացվում են Հայաստանի Հանրապետության տարբեր տարածաշրջանների, ազգային փոքրամասնությունների, հասարակության տարբեր շերտերի ու սոցիալական խմբերի շահերը, Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների կյանքի և մշակույթի մասին հաղորդումներ հեռարձակելու նպատակով ոչ գիշերային ժամերին ազգային փոքրամասնությունների համար շաբաթական նվազագույնը 30 րոպե Հանրային տեսալսողական հեռարձակողների և 2 ժամ Հանրային լսողական հեռարձակողի եթերով տրամադրել եթերային ժամանակ:

Իր հերթին, Փորձագետների կոմիտեն Հայաստանի կողմից Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի կիրառման վերաբերյալ 2021 թվականի հոկտեմբերի 1-ի զեկույցում[163] առաջարկել է՝

1. ապահովել հանրային հեռուստատեսությամբ ասորերեն լեզվով կանոնավոր և բավականաչափ երկարաժամկետ հեռարձակումը,
2. ապահովել հունարենով հանրային հեռուստատեսային ծրագրի կանոնավոր և բավականաչափ երկարաժամկետ հեռարձակումը,
3. ապահովել հանրային հեռուստատեսությամբ քրդերեն լեզվով կանոնավոր և բավականաչափ երկարաժամկետ հեռարձակումը,
4. ապահովել հանրային հեռուստատեսությամբ եզդիերեն լեզվով կանոնավոր և բավականաչափ երկարաժամկետ հեռարձակումը:

Հիշատակման արժանի է այն հանգամանքը, որ Հայաստանի հանրային ռադիոյի կողմից յուրաքանչյուր օր հաղորդումներ են ներկայացվում եզդիերեն, քրդերեն, ասորեն և հունարեն լեզուներով՝ հետևյալ տևողություններով՝ ԱՄ 69.7 հաճախականությամբ՝ եզդիերեն 60 րոպե, քրդերեն՝ 30 րոպե, ասորեն՝ 15 րոպե, հունարեն՝ 15 րոպե, ԱՄ 1395 հաճախականությամբ՝ եզդիերեն 15 րոպե, քրդերեն 30 րոպե: Հաղորդումները հեռարձակվում են ինչպես ՀՀ տարածքում, այնպես էլ Հայաստանից դուրս և միտված են էթնիկ բազմազանության և ազգային փոքրամասնությունների մշակույթի տեղեկացվածության բարձրացմանը՝ ապահովելով վերոնշյալ ազգային փոքրամասնությունների՝ սեփական լեզվով տեղեկացվածությունը Հայաստանում կատարվող իրադարձությունների մասին:

Բացի յուրաքանչյուր լեզվով տրվող ամենօրյա լրատվությունից, հանրային ռադիոյի եթերում հնչող փոքրամասնությունների հաղորդումներում մաս է հատկացվում նաև յուրաքանչյուրի մշակույթի, ավանդույթների, պատմության, կրոնի, լեզվի մասին տեղեկատվության ներառմանը: Հանրային ռադիոյում յուրաքանչյուր ազգային

[163] Տե՛ս հետևյալ՝ https://rm.coe.int/min-lang-2021-17-evalria5-armenia-en/1680a44d26 հղումով, 2026 թվականի մարտի 10-ի դրությամբ:

փոքրամասնություն ունի նաև իր լեզվով հրապարակվող պաշտոնական կայքէջ, որտեղ հրապարակվում է հայերենից թարգմանված օրվա լրատվությունը, ներկայացվում են ռեպորտաժներ, տեսանյութեր, հարցազրույցներ ազգային փոքրամասնությունները ներկայացնող ականավոր գործիչների հետ[164]:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ Հայաստանի Հանրապետությունում իրականացվում են քայլեր ազգային փոքրամասնությունների լեզուներով հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման ապահովման տեսանկյունից: Միևնույն ժամանակ, կարևոր առաջընթաց կարող է լինել նշված հաղորդումների համար առավել երկար ժամանակահատված նախատեսելը և հաղորդումների քանակն ավելացնելը: Վերջինս կարող է նպաստել լեզվի պահպանմանն ու տարածմանը, միջմշակութային հաղորդակցության խթանմանը, ազգային ինքնության ամրապնդմանը և այլն:

Անհրաժեշտ է նշել, որ «Ազգային փոքրամասնությունների իրավունքները Հայաստանում. հիմնախնդիրներ և լուծումներ» վերտառությամբ գիտական հոդվածի շրջանակում անդրադարձ է կատարվել՝ Հայաստանի Հանրապետությունում ազգային փոքրամասնությունների լեզվի պահպանմանն ու կրթության իրավունքին առնչվող խնդիրներին, վերջիններիս իրավունքների խթանման համատեքստում, որոնց ուսումնասիրության և համապարփակ վերլուծության արդյունքում ներկայացվել են առաջարկություններ՝ ուղղված խնդիրների համակողմանի լուծմանը և ոլորտի կատարելագործմանը[165]:

Ազգային փոքրամասնությունների լեզվի պահպանման իրավունքի առնչությամբ գոյություն ունեն մի շարք միջազգային իրավական կարգավորումներ և չափորոշիչներ, որոնք մանրամասն ներկայացված են ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին 2023 և 2024 թվականների տարեկան հաղորդումների շրջանակներում[166]:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

✓ ձեռնարկել և իրականացնել համընդգրկուն և շարունակական բնույթ կրող միջոցառումներ ոլորտում համապատասխան մասնագետների սակավության խնդիրը լուծելու ուղղությամբ, մասնավորապես՝ շուտափույթ քայլեր իրականացնել բարձրագույն ուսումնական հաստատություններում համապատասխան մասնագետների կրթությունն ապահովելու նպատակով,

✓ առաջնորդվել ազգային փոքրամասնությունների լեզուներ (լեզուներով) դասավանդող ուսուցիչների վերապատրաստման խթանող կառուցակարգեր նախատեսելու մեթոդաբանությամբ, մասնավորապես՝ մշակել և իրացնել նշված

---

[164] Տե՛ս հետևյալ https://rm.coe.int/6th-sr-armenia-am/1680b19fb4 հղումով, 2026 թվականի մարտի 10-ի դրությամբ:

[165] Գիտական հոդվածը հրապարակվել է ՀՀ Սահմանադրական դատարանի տեղեկագրում, հեղինակել են Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանը և Մարդու իրավունքների պաշտպանի օգնականը, հասանելի է հետևյալ հղումով՝ https://ombuds.am/am/site/ViewNews/3570, 2026 թվականի մարտի 10-ի դրությամբ:

[166] Առավել մանրամասն տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին 2023 թվականի և 2024 թվականի տարեկան հաղորդումներում, համապատասխանաբար 748-753, 295-300 էջեր, հասանելի է https://ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf, https://www.ombuds.am/images/files/4d1335361f1f7e9fbcc1cfc10679701e.pdf հղումներով, 2026 թվականի մարտի 10-ի դրությամբ:

մասնագետների վերապատրաստման հատուկ ծրագրեր՝ վերջիններիս կրթական մակարդակի և կարողությունների բարձրացման նպատակով,

✓ անհրաժեշտ է ձեռնարկել և իրացնել ոլորտի կադրային ապահովման և ազգային փոքրամասնությունների լեզուներ (այդ լեզուներով) դասավանդող ուսուցիչների աշխատանքի շարունակականությանն ուղղված հստակ և համապարփակ կառուցակարգեր՝ բացառելով դրվագային կամ ժամանակավոր բնույթ կրող լուծումները,

✓ ձեռնարկել համակարգային քայլեր՝ հանրային հեռուստատեսային ծրագրերում ազգային փոքրամասնությունների լեզուներով առավել շատ, կանոնավոր և բավականաչափ երկարաժամկետ հեռարձակումն ապահովելու համար:

2.2.Ազգային փոքրամասնությունների մշակույթի պահպանմանն առնչվող խնդիրներ

Ազգային փոքրամասնությունների իրավունքների խթանման, վերջիններիս ինքնության պահպանման հարցում իր առանձնահատուկ տեղն ունի ազգային փոքրամասնությունների մշակույթը:

Շրջանակային կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմերը պարտավորվում են նպաստել ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար այնպիսի պայմանների ստեղծմանը, որոնք նրանց անհրաժեշտ են իրենց մշակույթը պահպանելու և զարգացնելու, ինչպես նաև ինքնության հիմնական տարրերը՝ կրոնը, լեզուն, ավանդույթները և մշակութային ժառանգությունը պահպանելու համար:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին 2024 թվականի տարեկան հաղորդմամբ ներկայացվել են առանձին խնդիրներ[167] ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց մշակույթի պահպանման բնագավառում: Արձանագրված խնդիրները պահպանել են իրենց արդիականությունը նաև 2025 թվականի ընթացքում: Խնդիրները վերաբերում են ազգային փոքրամասնությունների մշակութային իրավունքների պաշտպանությանն ու խթանմանն առնչվող հայեցակարգային և ռազմավարական լուծումների բացակայությանը, ազգային փոքրամասնությունների մշակույթի, ավանդույթների վերաբերյալ հանրային իրազեկման միջոցառումներ կազմակերպելուն ու իրականացնելուն առնչվող և այլ հարցերի:

Միևնույն ժամանակ, «Ազգային փոքրամասնությունների իրավունքները Հայաստանում. հիմնախնդիրներ և լուծումներ» վերտառությամբ գիտական հոդվածի շրջանակում անդրադարձ է կատարվել՝ ազգային փոքրամասնությունների վերաբերյալ տեղեկատվության ներառմանը ուսումնական նյութերում՝ որպես տեղեկացված, հանդուրժող և համերաշխ հասարակության ձևավորման կարևորագույն նախապայման, ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց մշակութային ինքնության պահպանմանը՝ իրավունքների խթանման համատեքստում, որոնց ուսումնասիրության և

[167] Տե՛ս, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին 2024 թվականի տարեկան հաղորդումը, 300-305 էջեր, հասանելի է https://www.ombuds.am/images/files/4d1335361f1f7e9fbcc1cfc10679701e.pdf հղումով, 2026 թվականի մարտի 10-ի դրությամբ:

համապարփակ վերլուծության արդյունքում ներկայացվել են առաջարկություններ՝ ուղղված խնդիրների համակողմանի լուծմանը և ոլորտի կատարելագործմանը[168]:

Ազգային փոքրամասնությունների մշակութային իրավունքների պատշաճ երաշխավորման տեսանկյունից էական նշանակություն ունի դրանց իրացման համար անհրաժեշտ և բավարար պայմանների ապահովումը:

Տարեկան հաղորդմամբ ամփոփված խնդիրների, վերջիններիս լուծմանն ուղղված առաջարկների կատարման առնչությամբ գրություն է հասցեագրվել իրավասու պետական մարմիններին:

Ի պատասխան՝ Նախարարությունը տեղեկացրել է, որ ազգային փոքրամասնություններին պատկանող տպագիր մամուլ ստեղծելու և օգտագործումը խթանելու ուղղությամբ 2025 թվականին ծրագրի շրջանակում դրամաշնորհ է ստացել ազգային փոքրամասնության 9 պարբերական, այդ թվում՝ «Ռյա-Թազա» թերթի խմբագրություն» ՍՊ ընկերության կողմից հրատարակվող «Ռյա-Թազա» ամսաթերթը, «Ուկրաինա» Հայաստանի ուկրաինացիների ֆեդերացիա» հասարակական կազմակերպության կողմից հրատարակվող «Դնիպրո-Սլավուտիչ» ամսաթերթը, Եզդիների ազգային կոմիտեի կողմից հրատարակվող «Լալըշ» ամսաթերթը, «Երևանի բելառուսների համայնք «Բելառուս» հասարակական կազմակերպության կողմից հրատարակվող «Բելառուս» ամսաթերթը, «Հայաստանի ասորական կազմակերպությունների «Խայադթա» ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից հրատարակվող «Ասիրիսկիե նովոստի» ամսաթերթը, «Եզդիների ձայն» խմբագրություն» ՍՊ ընկերության կողմից հրատարակվող «Էզդիխանա» ամսաթերթը, «Հայաստանի քրդական ազգային խորհուրդ» հասարակական կազմակերպության կողմից հրատարակվող «Զագրոս» ամսաթերթը, «Երևան քաղաքի «Իլիոս» հույների համայնք» հասարակական կազմակերպության կողմից հրատարակվող «Իլիոս» ամսաթերթը, «Հայաստանի հրեական համայնք» հասարակական կազմակերպության կողմից հրատարակվող «Դավթի Վահան» ամսաթերթը:

Վերոգրյալի հաշվառմամբ, անհրաժեշտ է նախևառաջ ձեռնամուխ լինել հայեցակարգային լուծումների մշակմանն ու իրացմանը, մասնավորապես՝ մշակել ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության և խթանման վերաբերյալ հայեցակարգ, ռազմավարություն և դրանից բխող գործողությունների ծրագիր՝ նախատեսելով կոնկրետ և թիրախային գործողություններ՝ ուղղված մշակույթի, ավանդույթների վերաբերյալ հանրային իրազեկման միջոցառումների կազմակերպմանն ու իրականացմանը և այլ խնդիրների լուծմանը:

Հայաստանում իրականացվում են առանձին մշակութային միջոցառումներ ազգային փոքրամասնությունների մշակութային իրավունքների պաշտպանության և խթանման համատեքստում: Օրինակ՝ մի քանի տարի շարունակ կազմակերպվում է «Տանիքը՝ Հայաստան» խորագրով համերգը՝ ազգային փոքրամասնությունների մասնակցությամբ: Վերջինիս նպատակն է ազգային փոքրամասնությունների ազգային երգի, պարի, ուտեստների, ավանդական սպորտաձևերի և այլնի ներկայացումը: Կազմակերպվում և անցկացվում են նաև ազգային փոքրամասնությունների երաժշտական փառատոններ, համերգներ և ցուցահանդեսներ:

---

[168] Գիտական հոդվածը հրապարակվել է ՀՀ Սահմանադրական դատարանի տեղեկագրում, հեղինակել են Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանը և Մարդու իրավունքների պաշտպանի օգնականը, հասանելի է հետևյալ հղումով՝ https://ombuds.am/am/site/ViewNews/3570, 2026 թվականի մարտի 10-ի դրությամբ:

Հայաստանի Հանրապետությունում ազգային փոքրամասնությունների մշակույթի պահպանման և զարգացման տեսանկյունից հիշատակման արժանի է, օրինակ, Հայաստանի Հանրային հեռուստաընկերության եթերում հեռարձակվող «Էթնոգույներ» հաղորդումը: Վերջինս ներկայացնում է Հայաստանում ազգային փոքրամասնություն հանդիսացող ժողովուրդների մշակութային առանձնահատկությունները, ազգային սովորույթները, կրոնը, լեզուն, խոհանոցը, միջազգային բարիդրացիական կապերը և այլն՝ ըստ այդմ նպաստելով մշակութային ժառանգության պահպանմանը, միջմշակութային երկխոսության և փոխըմբռնման զարգացմանը, կարծրատիպերի հաղթահարմանը և այլն:

Պաշտպանը ողջունում է ազգային փոքրամասնությունների մշակույթի պահպանման բնագավառում պետության կողմից ձեռնարկված և իրականացված քայլերը:

Միևնույն ժամանակ, Պաշտպանը կարևորում է ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց համար այնպիսի պայմանների ստեղծումը, որոնք հնարավորություն կտան պահպանել և զարգացնել իրենց մշակույթը, ինչպես նաև ապահովել ինքնության հիմնական տարրերի՝ կրոնի, լեզվի, ավանդույթների և մշակութային ժառանգության պահպանությունը:

Ավելին, Պաշտպանը հատուկ ուշադրություն է դարձնում նախադպրոցական հաստատություններում, դպրոցներում մայրենի լեզվի դասավանդման ապահովմանը, համապատասխան դասագրքերի առկայությանը, ինչպես նաև ազգային փոքրամասնությունների համար նախատեսված ուսումնական գրականության և մասնագիտական նյութերի սակավությանը վերաբերող հարցերին:

Պաշտպանը հատուկ ընդգծում է նախադպրոցական և ուսումնական հաստատություններում ազգային փոքրամասնությունների մայրենի լեզվով կրթության ապահովման և անհրաժեշտ գրականության առկայության կարևորությունը:

Շրջանակային կոնվենցիայի 12-րդ հոդվածի համաձայն՝ Կողմերը անհրաժեշտության դեպքում կրթության և գիտական ուսումնասիրությունների բնագավառում պետք է միջոցներ ձեռնարկեն իրենց ազգային փոքրամասնությունների և բնակչության մեծամասնության մշակույթի, պատմության, լեզվի և կրոնի վերաբերյալ գիտելիքներն ամրապնդելու համար: Այս ենթատեքստում Կողմերը, մասնավորապես, պետք է համարժեք հնարավորություններ տրամադրեն ուսուցիչների պատրաստման, դպրոցական դասագրքերով ապահովման համար և դյուրացնեն շփումները տարբեր համայնքների ուսանողների և ուսուցիչների միջև:

Վերը շարադրված իրավական կարգավորումներից բխում է, որ պետությունը պարտավորվում է ճանաչել ազգային փոքրամասնությանը պատկանող յուրաքանչյուր անձի իրավունքը՝ սովորել իր փոքրամասնության լեզուն, բոլոր մակարդակներում ապահովել կրթության մատչելիության հավասար հնարավորություններ, դպրոցական դասագրքերով ապահովման համար և դյուրացնել շփումները տարբեր համայնքների ուսանողների և ուսուցիչների միջև:

Ավելին, Պաշտպանն արձանագրում է, որ Հայաստանում ապրող ազգային փոքրամասնությունների, ինչպես նաև վերջիններիս իրավունքների վերաբերյալ շատ քիչ տեղեկություն է առկա դպրոցական դասագրքերում և այլ ուսումնական նյութերում: Երբեմն երկրի բնակչության մեծամասնությունը չունի բավարար գիտելիքներ և տեղեկատվություն ազգային փոքրամասնությունների, նրանց իրավունքների, ինքնության տարրերի՝ լեզվի, կրոնի, մշակույթի և ավանդույթների վերաբերյալ:

Ուստի, արձանագրված խնդիրները հաշվի առնելով՝ անհրաժեշտ է ձեռնամուխ լինել հայեցակարգային և ռազմավարական լուծումների մշակմանը և իրագործմանը, մասնավորապես՝ մշակել ազգային փոքրամասնությունների իրավունքների

պաշտպանության և խթանման հայեցակարգ, ռազմավարություն և դրանից բխող գործողությունների ծրագիր, որով պետք է նախատեսվեն կոնկրետ և թիրախային քայլեր՝ ուղղված ոլորտի կադրային ապահովման խնդիրների լուծմանը: Վերջինս պետք է ուղղված լինի ինչպես՝ բարձրագույն կրթության ապահովմանը, համապատասխան կառուցվածքային միավորների ձևավորմանը բարձրագույն ուսումնական հաստատություններում, ոլորտի մասնագետների կրթությանն ու վերապատրաստմանը: Միաժամանակ, հայեցակարգային և ռազմավարական փաստաթղթերում պետք է նախատեսվեն ազգային փոքրամասնությունների իրավունքների, ներառյալ մշակութային իրավունքների պաշտպանության և խթանմանն ուղղված համակարգված և նպատակային միջոցառումներ՝ դրանց հետևողական մշակման և իրականացման ապահովմամբ:

Միևնույն ժամանակ, Պաշտպանը բազմիցս ընդգծել է, որ վերոնշյալ աշխատանքները արդյունավետ կազմակերպելու նպատակով անհրաժեշտ է համագործակցել ազգային փոքրամասնությունների հարցերով զբաղվող կառույցների, հասարակական կազմակերպությունների և համայնքների ներկայացուցիչների հետ:

Զուգահեռաբար, Նախարարության կայքում, սոցիալական ցանցի էջում իրականացվում է ազգային փոքրամասնությունների մշակույթների, ավանդույթների վերաբերյալ միջոցառումների լուսաբանում: Միաժամանակ, հանրային իրազեկվածության նպատակով լուսաբանվում է նաև ազգային փոքրամասնություններին առնչվող այլ հարցերի վերաբերյալ տեղեկատվությունը:

Ավելին, Նախարարության կայքում հրապարակվել է տեղեկատվություն այն մասին, որ փետրվարի 21-ը Մայրենի լեզվի միջազգային օրն է: Օրվան ընդառաջ՝ մշակութային կրթության ուսումնական տարվա շրջանակում Նախարարության նախաձեռնությամբ Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետությունում բնակվող ազգային փոքրամասնությունների մշակույթին ու լեզվին նվիրված էքսպո, որի ընթացքում ցուցադրվել են դպրոցականների նախագծային աշխատանքները:

Գնահատելով հանրության տեղեկացվածության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացումը՝ Պաշտպանն ընդգծում է, որ դրանք պետք է իրականացվեն հստակ մեթոդաբանությամբ, կրեն համապարփակ և շարունակական բնույթ, լինեն թիրախային՝ առաջադրված նպատակին ծառայելու համար:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***մշակել ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության և խթանման հայեցակարգ, ռազմավարություն և դրանից բխող գործողությունների ծրագիր՝ հստակ անդրադառնալով նաև վերջիններիս մշակութային իրավունքների պաշտպանությանն ու խթանմանն առնչվող հարցերին,***
- ✓ ***ապահովել ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց մասնակցությունը մշակութային իրավունքների պահպանման և խթանման ոլորտում քաղաքականության մշակման և իրականացման աշխատանքներին,***
- ✓ ***պատշաճ և բավարար քայլեր ձեռնարկել դպրոցական դասագրքերում և այլ ուսումնական նյութերում ազգային փոքրամասնությունների վերաբերյալ առավել ամբողջական տեղեկատվություն ներառելու ուղղությամբ,***
- ✓ ***ապահովել ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց մայրենի լեզվի և մշակույթի պահպանությունը՝ համապատասխան դասագրքերով և ուսումնական գրականությամբ,***

✓ համակարգային ձևով նախաձեռնել և իրականացնել միջմշակութային միջոցառումներ (հատկապես՝ մարզային բնակավայրերում)՝ ամրապնդելով հանդուրժողական և միջմշակութային երկխոսության մթնոլորտը երկրի բնակչության մեծամասնության և ազգային փոքրամասնության համայնքների միջև,

✓ ազգային փոքրամասնությունների մշակույթների, ավանդույթների վերաբերյալ հանրության տեղեկացվածության մակարդակը բարձրացնելու նպատակով կազմակերպվող հանրային իրազեկման միջոցառումներն իրականացնել առավել հաճախ և համակարգային եղանակով:

2.3. Ազգային փոքրամասնությունների իրավունքների խթանմանն առնչվող այլ խնդիրներ.

Պաշտպանը ազգային փոքրամասնությունների իրավունքների երաշխավորման պատշաճ համակարգ ունենալու տեսանկյունից կարևորում է ոչ միայն իրավունքների պաշտպանությունը, այլև խթանումը: Վերջինս ենթադրում է հատուկ մեթոդաբանության և կառուցակարգերի մշակում և իրացում՝ ուղղված ազգային փոքրամասնությունների ինքնության պահպանման տարրերի պահպանմանն ու զարգացմանը, ինչպես նաև հասարակական կյանքում արդյունավետ մասնակցության ապահովմանը:

Ըստ Մարդու իրավունքների ազգային հաստատությունների գլոբալ դաշինքի հավատարմագրման ենթահանձնաժողովի ընդհանուր դիտարկումների՝ խթանումը ընդգրկում է այն գործառույթները, որոնց նպատակն է ստեղծել այնպիսի հասարակություն, որտեղ մարդու իրավունքները լայն շրջանակներում հասկացված են և հարգված: Նման գործառույթները կարող են ներառել կրթությունը, վերապատրաստումը, խորհրդատվությունը, հանրային իրազեկումն ու շահերի պաշտպանությունը:

Ազգային փոքրամասնությունների իրավունքների արդյունավետ պաշտպանության և խթանման տեսանկյունից կարևոր է ոչ միայն կրթության ոլորտում պատշաճ և բավարար պայմանների ապահովումը, այլև սոցիալ-տնտեսական ու ենթակառուցվածքային ոլորտներում վերջիններիս համար հավասար և մատչելի հնարավորությունների ստեղծումը:

Մարդու իրավունքների պաշտպանի՝ Արմավիրի մարզի եզդիական բնակչություն ունեցող Ֆերիկ համայնք կատարած այցի[169] ընթացքում արձանագրվել են՝ «Ֆերիկի Ռզալիե Ռաշիդի Օզմանյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում (այսուհետ՝ Դպրոց) մարզադահլիճի և միջոցառումների կազմակերպման համար նախատեսված դահլիճի բացակայության, դպրոցի սանհանգույցի՝ նախատեսված ստանդարտներին չհամապատասխանելու, մեկ եզդիերենի ուսուցչի առկայության, աշակերտների դպրոց չհաճախելու, միջհամայնքային տրանսպորտի ոչ կանոնավոր գործարկման, միջհամայնքային ճանապարհների բարեկարգման անհրաժեշտության, անասնապահությամբ զբաղվելու պայմաններում արոտավայրերի սակավության խնդիրներ:

Արձանագրված խնդիրների առնչությամբ գրություն է հասցեագրվել իրավասու պետական մարմին՝ վերջիններիս պատշաճ լուծումն ապահովելու նպատակով:

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը բարձրացված հարցերը քննարկել է Արմավիրի մարզպետի աշխատակազմի հետ:

---

[169] Տե՛ս հետևյալ հղումով՝ https://www.ombuds.am/am/site/ViewNews/3438, հասանելի է 2026 թվականի մարտի 10-ի դրությամբ:

Արմավիրի մարզպետի աշխատակազմի պատասխան գրությամբ նշվել է, որ պարտուսից դուրս մնալու ռիսկային աշակերտները մարզպետի աշխատակազմի, դպրոցի, համայնքի և ոստիկանության բացատրական աշխատանքներից հետո սկսել են հաճախել դպրոց:

Հայտնել են նաև, որ դպրոցն ունի շուրջօրյա ջրամատակարարում և անխափան սանհանգույց՝ առանձին ջրահեռացման համակարգով, հավելել են, որ դպրոցը նաև գազաֆիկացվել է: 2022 թվականի նոյեմբեր–դեկտեմբեր ամիսներին կառուցվել է ճաշարան, 2023 թվականի հունվարի 23-ից դպրոցում իրականացվում է տաք սնունդ ծրագիրը, հավելել են, որ 2023-2024 թվականներին կատարվել են դպրոցի վերանորոգման բազմաթիվ աշխատանքներ:

Նախակրթարանի սանհանգույցը նախատեսված ստանդարտներին չհամապատասխանելու հարցի վերաբերյալ հայտնել են, որ Ֆերիկի համայնքապետարանից ստացվել է տեղեկատվություն, համաձայն որի՝ համայնքի բյուջեի միջոցներով ընթացքի մեջ են նախակրթարանի սանհանգույցի փոխարինման աշխատանքները:

Համայնքի մշակույթի տան հիմնանորոգման հարցի վերաբերյալ հայտնել են, որ ի կատարումն Հայաստանի Հանրապետության Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի հանձնարարականների պահանջի՝ համայնքների խոշորացմանը չմասնակցած, ինչպես նաև փոքր համայնքներում մեծածավալ ծրագրերի իրականացման նպատակով առաջարկվել է ապահովել Ֆերիկ համայնքի ներհամայնքային ճանապարհի և մշակույթի տան վերանորոգման ծրագրերի նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքները: Սակայն, Ֆերիկի համայնքապետարանից ստացվել է տեղեկատվություն, համաձայն որի՝ մշակույթի տունը կառուցվել է 1969 թվականի, շինությունը երկարատև ժամանակ չի շահագործվում և գտնվում է անմխիթար վիճակում և նպատակահարմար չէ հիմնանորոգման համար, ավելին, կառույցը ենթակա է ամբողջական ապամոնտաժման:

Պատասխան գրությամբ նշվել է նաև, որ առաջիկայում Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն կներկայացվի առաջարկություն՝ մշակույթի տան նոր շենքի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթեր ձեռք բերելու համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համապատասխան գումարի հատկացման կամ առկայության դեպքում տիպային մշակույթի տան նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթի տրամադրման վերաբերյալ:

Համայնքում միջհամայնքային տրանսպորտի ոչ կանոնավոր գործարկվելու վերաբերյալ հայտնել են, որ Արմավիրի մարզի միասնական երթուղային ցանցը սպասարկող օպերատորի ընտրության մրցույթը կայացել է, իսկ Արմավիրի տարածաշրջանը սպասարկելու համար մրցույթին հայտ ներկայացրած կազմակերպությունները չեն բավարարել Կառավարության որոշմամբ հաստատված կարգի պահանջները, որի հետևանքով մրցույթում հաղթող չի ճանաչվել:

Նշվել է, որ մրցույթի արդյունքները ներկայումս վիճարկվում են դատական կարգով և դատական գործընթացի ավարտից հետո միայն հնարավոր կլինի անդրադառնալ մարզում միասնական երթուղային ցանցի ներդրմանը:

Միջհամայնքային ճանապարհների բարեկարգման անհրաժեշտության վերաբերյալ հայտնել են, որ Արմավիրի մարզպետի աշխատակազմին հատկացվել է գումար ընդհանուր օգտագործման մարզային (տեղական) նշանակության ավտոմոբիլային ճանապարհի ասֆալտբետոնե ծածկի և մայթերի հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման նպատակով: Ծրագրի

շինարարության իրականացման աշխատանքները հետաձգվում են Խոյ համայնքի Հայթաղ բնակավայրով անցնող, հիմնանորոգվող ճանապարհահատվածի խմելու ջրի ցանցի հետ կապված խնդիրների պատճառով:

Ֆերիկ համայնքում անասնապահությամբ զբաղվելու համար արոտավայրերի սակավության վերաբերյալ բնակիչների կողմից դժգոհություն հայտնելու վերաբերյալ Ֆերիկի համայնքապետարանից ստացվել է տեղեկատվություն այն մասին, որ համաձայն համայնքի հողային հաշվեկշռի՝ համայնքում առկա է 240.5 հա արոտ, որից 176.8 հա–ն քաղաքացու սեփականությունն է, իսկ 27.7 հա–ն՝ համայնքային:

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունից հայտնել են, որ Դպրոցում մարզադահլիճ և հանդիսությունների դահլիճ կառուցելու հարցը կներկայացվի փոխվարչապետի ղեկավարությամբ ձևավորված միջգերատեսչական հանձնաժողով՝ քննարկման:

Դպրոցում ներկա պահին առկա 12 դասաժամով եզդիերեն առարկայի ուսուցչի թափուր տեղը չհամալրելու վերաբերյալ տեղեկացրել են, որ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից նախաձեռնվում են բարձրագույն կրթություն չունեցող ուսուցիչների աջակցության մի շարք ծրագրեր՝ ուղղված վերջիններիս մասնագիտական կարողությունների զարգացմանը և որակավորման բարձրացմանը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Պաշտպանը ողջունում է պետության կողմից նշված ոլորտներում իրականացրած քայլերը՝ ուղղված դպրոցի վերանորոգման, ազգային փոքրամասնությունների լեզվի պահպանման, ճանապարհների հիմնանորոգման աշխատանքների իրականացմանը: Վերջիններիս նախաձեռնումն ու իրականացումը կարող են նպաստել ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությանը, նրանց ինքնության պահպանմանը:

Միաժամանակ, Պաշտպանը կարևորում է համապատասխան բնակավայրերում առկա մյուս խնդիրների շուտափույթ լուծմանն ուղղված աշխատանքների իրականացումը: Այդ աշխատանքները պետք է իրականացվեն համակարգային եղանակով՝ հիմք ընդունելով բնակիչների իրական կարիքները և նրանց կողմից բարձրաձայնված խնդիրները:

Պաշտպանն աշխատակազմի ներկայացուցիչների ուղեկցությամբ այցելել է նաև Արարատի մարզ, Վերին Դվին համայնք[170]:

Այցի ընթացքում արձանագրվել են նույնաբովանդակ խնդիրներ՝ միջհամայնքային տրանսպորտի կանոնավոր փոխադրման կազմակերպման, միջհամայնքային ճանապարհների բարեկարգման, ազգային փոքրամասնությունների լեզվի պահպանման իրավունքին առնչվող, ազգային փոքրամասնությունների լեզուներ (լեզուներով) դասավանդող մասնագետների սակավության, նշված մասնագետներին կրթելու համար նախատեսված բարձրագույն ուսումնական հաստատությունների վերաբերյալ:

Արձանագրված խնդիրների առնչությամբ գրություններ են հասցեագրվել իրավասու պետական մարմիններին՝ վերջիններիս պատշաճ լուծման նպատակով:

Ի պատասխան՝ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունից հայտնել են, որ ՀՀ փոքրամասնությունների լեզվի պահպանման իրավունքին առնչվող խնդիրները գտնվում են Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ուշադրության կենտրոնում:

Հավելել են, որ ՀՀ փոքրամասնությունների լեզուների (ասորերեն, եզդիերեն, հունարեն, ռուսերեն և քրդերեն) մասնագետների պատրաստման ծրագրերի, ինչպես նաև

[170] Տե՛ս հետևյալ հղումով՝ https://www.ombuds.am/am/site/ViewNews/3634, հասանելի է 2026 թվականի մարտի 10-ի դրությամբ:

տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման միջոցով (հեռավար) փոքրամասնությունների լեզուների ուսուցման հնարավորությունների ուղղությամբ քննարկումներ են անցկացվել բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ:

Ըստ ստացված տեղեկատվության՝ հաշվի առնելով Հայաստանում ազգային փոքրամասնությունների վերաբերյալ ուսումնասիրությունների կարևորությունը՝ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն առաջարկել է, որպես կայուն ենթակառուցվածք, ստեղծել փոքրամասնությունների լեզուների անհրաժեշտ թվով որակավորված մասնագետների պատրաստման միասնական համակարգ:

Նշվել է նաև, որ այդ նպատակով Երևանի պետական համալսարանի Հումանիտար հետազոտությունների ինստիտուտի շրջանակներում 2026 թվականի հունվարից սկսելու է գործել Ազգային փոքրամասնությունների հարցերով զբաղվող լաբորատորիա: Նոր բացվող լաբորատորիայում կիրականացվեն ազգային փոքրամասնությունների լեզուների ուսուցմանն ու որակավորված մասնագետների պատրաստմանն ուղղված աշխատանքներ, ինչպես նաև ՀՀ ազգային փոքրամասնությունների վերաբերյալ ուսումնասիրություններ և հետազոտություններ: Աշխատանքները կիրականացվեն փուլային եղանակով:

Միևնույն ժամանակ, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից հայտնել են, որ Արարատի մարզի միասնական երթուղային ցանցը սպասարկող օպերատորի ընտրության մրցույթը կայացել է, սակայն ընկերությունը հայտ-պարտավորությամբ նախատեսված ավտոտրանսպորտային միջոցները մրցութային հանձնաժողովի գնահատմանը ներկայացնելու պայմանագրային պարտավորությունները չկատարելու պատճառով Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի հրամանի համաձայն՝ զրկվել է Արարատի մարզի միասնական երթուղային ցանցը սպասարկելու իրավունքից:

Ավելին, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը հայտարարել է Արարատի մարզի միասնական երթուղային ցանցը սպասարկող օպերատորի ընտրության նոր մրցույթ:

Պաշտպանը ողջունելի է համարում վերոնշյալ գործողությունների իրականացումը՝ ընդգծելով համապատասխան բնակավայրերում առկա մյուս խնդիրների շուտափույթ լուծմանն ուղղված շարունակական աշխատանքների իրականացման կարևորությունը:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին 2024 թվականի տարեկան հաղորդմամբ ներկայացվել են ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների պաշտպանության և խթանման, այդ թվում՝ լեզվի պահպանման համատեքստում կարևոր նշանակություն ունեցող ավանդական տեղական անվանումների, փողոցների անվանումների, ինչպես նաև բնակչության համար նախատեսված տեղագրական այլ նշումների, փոքրամասնության լեզվով ցուցանակների տեղադրման խնդիրները[171]: Արձանագրված խնդիրները պահպանել են իրենց արդիականությունը նաև 2025 թվականի ընթացքում:

Շրջանակային կոնվենցիայի 11-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ազգային փոքրամասնության պատկանող անձանց զգալի թվաքանակով ավանդաբար բնակեցված

[171] Տե՛ս, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին 2024 թվականի տարեկան հաղորդումը, 305-307 էջեր, հասանելի է https://www.ombuds.am/images/files/4d1335361f1f7e9fbcc1cfc10679701e.pdf հղումով, 2026 թվականի մարտի 10-ի դրությամբ:

տարածքներում Կողմերը իրենց իրավական համակարգերի, անհրաժեշտության դեպքում՝ ներառյալ նաև այլ պետությունների հետ կնքված համաձայնագրերի շրջանակներում, ինչպես նաև հաշվի առնելով կոնկրետ պայմանները, պետք է ապահովեն ավանդական տեղական անվանումների, փողոցների անվանումների, ինչպես նաև բնակչության համար նախատեսված տեղագրական այլ նշումների, փոքրամասնության լեզվով ցուցանակների տեղադրումը, երբ այդպիսի նշումների բավարար կարիք կա:

ՀՀ առանձին բնակավայրերում, օրինակ՝ Լոռու մարզի Ֆիոլետովո, Լերմոնտովո, Պրիվոլնոյե համայնքներում, բնակավայրերի անվանումների ցուցանակները տեղադրված են և՛ հայերեն, և՛ ռուսերեն լեզուներով: Կոտայքի մարզի Զովունի, Նոր Գեղի, Արզնի, Քանաքեռավան բնակավայրերի մուտքերի մոտ ազգային փոքրամասնությունների լեզուներով տեղադրվել են տեղագրական ցուցանակներ[172]:

Պաշտպանը ողջունում է նշված համայնքներում ազգային փոքրամասնությունների լեզուներով ցուցանակների տեղադրումը՝ միաժամանակ կարևորելով նաև այլ համայնքներում քննարկվող ցուցանակների տեղադրումը՝ ոլորտում առկա միջազգային չափանիշներին համապատասխան:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ***մշակել և իրացնել անհրաժեշտ և բավարար կառուցակարգեր ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց կրթության և սոցիալ-տնտեսական իրավունքների համար պատշաճ պայմանների ապահովման ուղղությամբ,***
- ***հետևողական լինել ազգային փոքրամասնություններով բնակեցված համայնքներում դպրոցական ենթակառուցվածքների (մարզադահլիճ, մշակութային տարածք և այլն) նվազագույն պարտադիր չափանիշները պահպանելու հարցերում,***
- ***մշակել ազգային փոքրամասնություններով բնակեցված համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման թիրախային ծրագիր՝ ներառյալ տրանսպորտի կանոնավոր կազմակերպման, ճանապարհների բարեկարգման և համայնքային ենթակառուցվածքների զարգացման միջոցառումներ,***
- ***ապահովել ազգային փոքրամասնության պատկանող անձանց զգալի թվաքանակով ավանդաբար բնակեցված տարածքներում ազգային փոքրամասնությունների լեզուներով ցուցանակների տեղադրումը՝ ոլորտում առկա միջազգային չափանիշների պարտադիր հաշվառմամբ:***

3. Վաղ ամուսնությունները ազգային փոքրամասնությունների համայնքներում.

Հայաստանում վաղ և հարկադիր ամուսնությունների խնդիրը շարունակում է մնալ մտահոգիչ: Թեև այն կարող է հանդիպել հանրապետության ամբողջ տարածքում, սակայն հատկապես տարածված և մտահոգիչ է ազգային փոքրամասնությունների որոշ համայնքներում, մասնավորապես՝ եզդիական համայնքում:

Հարկ է ընդգծել, որ մանկական կամ վաղ ամուսնություն է համարվում ցանկացած ամուսնություն, երբ կողմերից առնվազն մեկի 18 տարին չի լրացել: Հարկադիր ամուսնությունը սահմանվում է որպես երկու անձանց միություն, որոնցից առնվազն մեկը չի տվել իր լիարժեք և ազատ համաձայնությունը ամուսնությանը[173]: Հարկ է նկատի

[172] Տե՛ս հետևյալ հղումով՝ https://rm.coe.int/5th-sr-armenia-am/16809ec233, հասանելի է 2026 թվականի մարտի 10-ի դրությամբ:

[173] Տե՛ս հետևյալ հղումով՝ https://rm.coe.int/media-guideline-arm-final/1680a15261, հասանելի է 2026 թվականի մարտի 10-ի դրությամբ:

ունենալ, որ հարկադիր ամուսնությունը խախտում է մարդու հիմնարար իրավունքները և չի կարող դիտարկվել որպես իրավաչափ երևույթ:

Վաղ ամուսնությունների հիմքում կարող են ընկած լինել մի շարք պատճառներ՝ կարծրատիպային մոտեցումները, խնդրի լատենտայնությունը, սոցիալական դժվարությունները և այլն: Ազգային փոքրամասնությունների որոշ համայնքներում վաղ ամուսնությունները պայմանավորվում են նաև ազգային ավանդույթներով: Վաղ ամուսնությունները խնդրահարույց են նաև դրանցից բխող բացասական հետևանքների առումով, մասնավորապես՝ պարտադիր հանրակրթությունից դուրս մնալու, ինչպես նաև մի շարք իրավունքների, այդ թվում՝ առողջապահական և սոցիալական իրավունքների, պաշտպանության տեսանկյունից:

Վաղ ամուսնությունների խնդրին անդրադարձել է Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը՝ «Բռնի ամուսնությունների և երեխաների ամուսնությունների մասին» 2005 թվականի բանաձևում[174]՝ նշելով, որ վրդովմունք է առաջացնում այն փաստը, որ կան իշխանություններ, որոնք գաղթական համայնքների մշակույթի և ավանդույթների նկատմամբ հարգանքի քողի լույսի ներքո հանդուրժողականություն են ցուցաբերում բռնի ամուսնությունների և երեխաների ամուսնությունների նկատմամբ՝ չնայած նրան, որ վերջիններս խախտում են յուրաքանչյուր զոհի հիմնարար իրավունքները:

Վեհաժողովն ընդգծել է ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի բանաձևի կարևորությունը, որով որոշ սովորույթները, ամուսնությանն ու ընտանիքին վերաբերող հնացած օրենքները և պրակտիկան անհամատեղելի են դիտարկվել ՄԱԿ-ի կանոնադրությունում ու Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում ամրագրված սկզբունքներին:

Հաշվետու տարվա ընթացքում Եվրոպայի խորհրդի կողմից հրապարակվել է տեղեկատվական թերթիկ ազգային փոքրամասնություններին պատկանող կանանց և աղջիկների առջև ծառացած մարտահրավերների վերաբերյալ:

Հրապարակումը հիմնված է «Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին» Շրջանակային կոնվենցիայի Խորհրդատվական կոմիտեի եզրակացությունների վրա: Կոմիտեն իր գործունեության ընթացքում հետևողականորեն կիրառել է գենդերային հիմնական հոսքերի ներառման մոտեցումը և Կոնվենցիայի մասնակից պետություններին ուղղված կարծիքներում ներկայացրել է մի շարք հանձնարարականներ՝ ուղղված ազգային փոքրամասնություններին պատկանող կանանց և աղջիկների նկատմամբ դրսևորվող բազմակի խտրականության կանխարգելմանն ու հաղթահարմանը[175]:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին 2024 թվականի տարեկան հաղորդման շրջանակներում ամփոփվել և ներկայացվել են վաղ ամուսնությունների և դրանց բացասական հետևանքների կանխարգելմանն առնչվող խնդիրները, որոնք շարունակում են արդիական մնալ: Դրանք հիմնականում վերաբերում են պարտադիր հանրակրթությունից դուրս մնալուն, մի շարք իրավունքների, այդ թվում՝ առողջապահական և սոցիալական իրավունքների պաշտպանությանն առնչվող հարցերին, ոլորտին վերաբերելի հանրային իրազեկման աշխատանքների իրականացմանը և այլն:

---

[174] Տե՛ս հետևյալ հղումով՝ https://www.refworld.org/legal/resolution/coepace/2005/en/34235, հասանելի է 2026 թվականի մարտի 10-ի դրությամբ:

[175] Տե՛ս հետևյալ հղումով՝ https://rm.coe.int/prems-128125-gbr-2568-leaflet-factsheet-fcnm-3-volets-web-16x24/488028e20a, հասանելի է 2026 թվականի մարտի 10-ի դրությամբ:

Նշված խնդիրների, ինչպես նաև վերջիններիս լուծմանն ուղղված առաջարկների կատարման առնչությամբ պարզաբանումներ են պահանջվել իրավասու պետական մարմիններից:

Պարտադիր հանրակրթությունից դուրս մնալու առնչությամբ Նախարարությունը տեղեկացրել է, որ 2025 թվականի դեկտեմբեր ամսվա դրությամբ Հայաստանի Հանրապետությունում պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների թիվը կազմում է 10441: Կրթությունից դուրս մնալու ռիսկում գտնվող երեխաների թվի մասին տեղեկատվությունը, ինչպես նաև՝ կրթությունից դուրս մնացած երեխաների՝ ըստ տարիքի, սեռի, ազգային պատկանելիության զատորոշված տվյալների վերլուծությունը ներկայումս մշակման փուլում են:

Պաշտպանը կարևորում է իրավասու մարմինների կողմից ձեռնարկված քայլերը՝ միաժամանակ արձանագրելով, որ կրթության իրավունքի իրացման և վաղ ամուսնությունների կանխարգելման հարցում էական նշանակություն ունեն նաև պարտադիր կրթությունից դուրս մնալու դեպքերի բացահայտման նպատակով իրականացվող աշխատանքները՝ նկատի ունենալով և այն, որ քննարկվող ամուսնությունները չեն կատարվում պետական գրանցման միջոցով, և շատ հաճախ խնդիրը կրում է լատենտային բնույթ: Միաժամանակ, Պաշտպանը այս գործընթացում արձանագրել է նաև մի շարք այլ համակարգային խնդիրներ, որոնց առավել մանրամասն անդրադարձ է կատարվել տարեկան հաղորդման «Երեխաների իրավունքներ» բաժնում:

Ինչպես նշվեց, վաղ ամուսնությունները խնդրահարույց հետևանքների են հանգեցնում նաև առողջապահական իրավունքների տեսանկյունից: Մասնավորապես՝ վաղ ամուսնությունները բացասական ազդեցություն են ունենում աղջիկների առողջության վրա: Դրանցից են բարդ ծննդաբերությունները, հետագա կյանքում ի հայտ եկող առողջական խնդիրները, երեխայի խնամքի հետ կապված հարցերը և այլն: Օրինակ՝ ըստ Առողջապահության նախարարության տրամադրած տեղեկատվության՝ 15-19 տարեկան կանանց տարիքային խմբում չգրանցված ամուսնությունից ծնված երեխաների թիվը 2024 թվականին կազմել է 383 երեխա: Նշվել է նաև, որ 2025 թվականի տվյալները հասանելի չեն:

Հավելել են նաև, որ Առողջապահության նախարարության կողմից 2025 թվականի ընթացքում կանանց առողջապահական իրավունքի վերաբերյալ կազմակերպվել է 4 իրազեկման աշխատանք:

Միևնույն ժամանակ, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից հայտնել են, որ վաղ ամուսնությունների կանխարգելման համատեքստում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների համար ծնողավարման հմտությունների կատարելագործման ուղղությամբ Կոտայքի մարզում կազմակերպվել են միջոցառումներ և իրազեկման աշխատանքներ, որոնց շրջանակներում ստեղծվել է ծնողական ակումբ, կազմակերպվել են ծնողավարության դասընթացներ, որոնց մասնակցել է համայնքի շուրջ 100 ծնող: Ավելին, հավելել են, որ Լոռու մարզի տարբեր համայնքներում ծնողների, այդ թվում՝ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների համար ծնողավարման հմտությունների կատարելագործման և վաղ ամուսնությունների կանխարգելման նպատակով իրականացվել են անհատական հանդիպումներ ռիսկի տակ գտնվող ընտանիքների հետ: Վաղ ամուսնությունների կանխարգելման նպատակով սոցիալական աշխատողի և ԽՀՄ անդամների կողմից պարբերաբար իրականացվել է հանդիպում-զրույցներ ավագ դասարանների աշակերտների հետ, որոնց ընթացքում ներկայացվել է տեղի ունեցած օրենսդրական

փոփոխությունները, վաղ ամուսնությունների հնարավոր բոլոր հետևանքներն ու վտանգները:

Ուստի, Պաշտպանը կարևորում է հանրային իրավագիտակցության բարձրացմանը, հանրային իրազեկմանն ու կարծրատիպային մոտեցումների հաղթահարմանն ուղղված համակարգային և շարունակական միջոցառումների իրականացումը:

Քննչական կոմիտեից տրամադրվել է տեղեկատվություն առ այն, որ հաշվետու տարվա ընթացքում վաղ ամուսնությանն առնչվող դեպքով նախաձեռնվել է 16 քրեական վարույթ, նման բնույթի քրեական վարույթներով նախաքննությունը հանձնարարվում է առավել փորձառու քննիչներին, ովքեր ունեն բավարար մասնագիտական գիտելիքներ:

Վերոգրյալի արդյունքում Պաշտպանն արձանագրում է, որ այն դեպքերում, երբ վաղ կամ հարկադիր ամուսնությունները, ինչպես նաև դրանց բացասական հետևանքները վկայում են քրեական օրենսդրությամբ արգելված արարքի առկայության մասին, անհրաժեշտ է երաշխավորել այդ գործերի պատշաճ քննությունը՝ իրավունքի գերակայությանը բնորոշ չափանիշներին համապատասխան, ապահովելով նման դեպքերում պատասխանատվության անխուսափելիությունը:

Ավելին, Պաշտպանը կարևոր է համարում ընդգծել, որ իրավասու պետական մարմինները պարտավոր են ապահովել նշված և համանման այլ գործերի լիարժեք, օբյեկտիվ և իրավունքի գերակայության սկզբունքներին համապատասխան ուսումնասիրությունն ու քննությունը՝ անհրաժեշտության դեպքում երաշխավորելով պատասխանատվության անխուսափելիությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***մշակել ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության և խթանման հայեցակարգ, ռազմավարություն և դրանից բխող գործողությունների ծրագիր՝ հստակ անդրադառնալով նաև վաղ ամուսնությունների կանխարգելմանն ուղղված խնդիրների հաղթահարման կառուցակարգերին,***
- ✓ ***իրականացնել շարունակական վերապատրաստումներ կրթության ոլորտում ներգրավված անձանց համար՝ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների, այս ոլորտում առկա կարծրատիպային և ժամանակակից իրավունքի դոկտրինին չհամապատասխանող մոտեցումների հաղթահարման, իրավահավասարության և խտրականության արգելքի սկզբունքի առնչությամբ,***
- ✓ ***իրականացնել հանրային իրազեկման աշխատանքներ վաղ ամուսնությունների և դրանց բացասական հետևանքների առնչությամբ,***
- ✓ ***ներդնել հստակ կառուցակարգեր՝ ուղղված ծնողների համար ծնողավարման հմտությունների ձեռքբերմանը վաղ ամուսնությունների կանխարգելման համատեքստում,***
- ✓ ***նկատի ունենալով այն, որ կոնկրետ դեպքերում վաղ ամուսնությունները վկայում են քրեական օրենսդրությամբ արգելված արարքի առկայության մասին, երաշխավորել նշված դեպքերում գործերի արդյունավետ քննությունն ու պատասխանատվության անխուսափելիությունը:***

ԳԼՈՒԽ 2. ԼԳԲՏՔ+ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

2025 թվականի նոյեմբերի 25-ին Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանը մասնակցել է «Ընդդեմ գենդերային բռնության ակտիվության 16-օրյակի» ամենամյա միջազգային քարոզարշավի մեկնարկին նվիրված համաժողովին և հանդես եկել ողջույնի խոսքով: 2025 թվականին քարոզարշավը կրում էր «Միավորենք մեր ջանքերը՝ հանուն անվտանգ թվային միջավայրի» խորագիրը, որը համահունչ է ժամանակակից մարտահրավերներին՝ ընդգծելով թվային անվտանգությունը՝ որպես մարդու իրավունքների պաշտպանության կարևոր բաղադրիչ:

Անդրադառնալով ոլորտի համակարգային բարելավման անհրաժեշտությանը՝ Պաշտպանը կարևորել է մարդու իրավունքների կրթության զարգացումը՝ նշելով, որ կրթական միջավայրում սերմանվող արժեքները կարող են առանցքային դեր խաղալ կարծրատիպերի հաղթահարման, հավասարության ընկալման խորացման և բռնության կանխարգելման գործում:

Միջոցառմանը ողջույնի խոսքով հանդես են եկել նաև ՀՀ-ում Եվրոպական միության դեսպան Վասիլիս Մարագոսը, Ներքին գործերի նախարար Արփինե Սարգսյանը, Հայաստանում ՄԱԿ-ի մշտական համակարգող Ֆրանսուազ Ժակոբը և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Լուսինե Քոչարյանը:[176]

2025 թվականի նոյեմբերի 25-ին «Ընդդեմ գենդերային բռնության ակտիվության 16-օրյակ» քարոզարշավի շրջանակներում Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչը մասնակցել է «Տրանս ազգային կոալիցիա» հասարակական կազմակերպության կողմից կազմակերպված միջոցառմանը՝ նվիրված Հանդուրժողականության միջազգային օրվան:

2025 թվականի դեկտեմբերի 17-ին Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչը մասնակցել է «Փինք» իրավապաշտպան հասարակական կազմակերպության գործունեության 18 ամյակին նվիրված միջոցառմանը:

Հաշվետու տարում Մարդու իրավունքների պաշտպանը հանդիպումներ է ունեցել Հայաստանում հավատարմագրված բազմաթիվ դեսպանների հետ: Քննարկումները, ի թիվս այլնի, վերաբերել են ԼԳԲՏՔ+ անձանց իրավունքների պաշտպանությանը, խտրականության արգելքին, խտրական վերաբերմունքի բացառմանը, խոցելի վիճակում գտնվող խմբերի և անձանց նկատմամբ զգայուն մոտեցումներ արմատավորելու կարևորությանը և այլ զգայուն թեմաների:

2025 թվականի ընթացքում սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով անձանց իրավունքների խախտումների վերաբերյալ Պաշտպանը ստացել է դիմում-բողոքներ, որոնք Պաշտպանին ներկայացվել են և՛ գրավոր եղանակով, և՛ Պաշտպանի աշխատակազմի թեժ գծի հեռախոսահամարին ուղղված հեռախոսազանգերով: Ստացված ահազանգերի հիման վրա Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչներն այցեր են իրականացրել, օրինակ՝ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներ և հասցեավորել ազատությունից զրկված ԼԳԲՏՔ+ համայնքի ներկայացուցիչների՝ ազատությունից զրկման վայրերում առաջացած խնդիրները, որոնց կոնկրետ դեպքերում ՄԻՊ միջամտությամբ տրվել են լուծումներ: Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները 2025 թվականի ընթացքում նաև բազմաթիվ հանդիպումներ են ունեցել քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, ԼԳԲՏՔ+ անձանց շահերի պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպությունների և ԼԳԲՏՔ+ համայնքի ներկայացուցիչների հետ:

[176] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3598 հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

Պաշտպանը վերահաստատում է, որ ԼԳԲՏՔ+ համայնքի ներկայացուցիչների իրավունքների պաշտպանությունը մարդու իրավունքների համընդհանուր համակարգի բաղկացուցիչ մասն է: Մարդու արժանապատվության, հավասարության և խտրականությունից զերծ լինելու սկզբունքները համամարդկային են, իսկ խտրականությունը, պայմանավորված սեռական կողմնորոշմամբ կամ գենդերային ինքնությամբ, արգելված է:

Ասվածի համատեքստում՝ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքում վեր են հանվել ԼԳԲՏՔ+ անձանց իրավունքների պաշտպանության վերաբերյալ հետևյալ խնդիրները և մարտահրավերները՝

- Հասարակությունում ԼԳԲՏՔ+ անձանց նկատմամբ անհանդուրժող վերաբերմունք և ատելության խոսք,
- սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրական վերաբերմունք, այդ թվում՝ դրսևորված պետական մարմինների կողմից,
- օրենսդրական խնդիրներ,
- սեռական կողմնորոշմանը և գենդերային ինքնությանը առնչվող հատկանիշները որպես հոգեկան և վարքային խանգարում դիտարկելը:

1.ԼԳԲՏՔ+ անձանց իրավունքների պաշտպանության վիճակը ՀՀ-ում

<u>Հասարակությունում ԼԳԲՏՔ+ անձանց նկատմամբ անհանդուրժող վերաբերմունքն ու ատելության խոսքը սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով.</u>

Պաշտպանը, իր գործունեության ամբողջ ընթացքում, բազմիցս է անդրադարձել այն փաստին, որ ՀՀ-ում ԼԳԲՏՔ+ անձանց նկատմամբ վերաբերմունքի գնահատմանն ուղղված համապարփակ հետազոտություններ չեն իրականացվում, իսկ մշտադիտարկումը վկայում է այն մասին, որ հասարակությունում ԼԳԲՏՔ+ անձանց նկատմամբ անհանդուրժող վերաբերմունքն ու հոմոֆոբ[177] և տրանսֆոբ[178] գաղափարները շարունակում են տարածված լինել:

2025 թվականին ԼԳԲՏՔ+ անձանց իրավունքների խախտումների վերաբերյալ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին ներկայացվել է 15 գրավոր և բանավոր դիմում-բողոք՝ 23 անձի վերաբերյալ: Պաշտպանին հասցեագրված դիմում-բողոքների, ինչպես նաև

---

[177] «Հոմոֆոբիա» հասկացությունը Եվրոպական միության հիմնարար իրավունքների գործակալության (FRA) կողմից բնորոշվում է որպես նույնասեռականության և գեյ, լեսբի և երկսեռական (բիսեքսուալ) անձանց նկատմամբ նախապաշարմունքներից բխող իռացիոնալ վախ և զզվանք: Հասանելի է https://fra.europa.eu/sites/default/files/fra_uploads/397-FRA_hdgso_report_part2_en.pdf հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

[178] «Տրանսֆոբիա» հասկացությունը Եվրոպական միության հիմնարար իրավունքների գործակալության (FRA) կողմից բնորոշվում է որպես գենդերային անհամապատասխանությունից կամ գենդերային տրանսգրեսիայից իռացիոնալ վախ, ինչպես օրինակ առնական կանանցից կամ կանանցի տղամարդկանցից, տրանսգենդեր, տրանսեքսուալ անձանցից և ծննդյան պահին հաստատված սեռի վերաբերյալ գենդերային կարծրատիպերին չհամապատասխանող այլ անձանցից վախ կամ զզվանք: Հասանելի է՝ https://fra.europa.eu/sites/default/files/fra_uploads/397-FRA_hdgso_report_part2_en.pdf հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

առցանց հարթակների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ առկա է եղել ԼԳԲՏՔ+ անձանց նկատմամբ սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով անհանդուրժողականություն ու խտրական վերաբերմունք: Հասարակությունում ԼԳԲՏՔ+ անձանց նկատմամբ անհանդուրժողականության, ինչպես նաև սեռական կողմնորոշման ու գենդերային ինքնության հիմքով ատելության խոսքի առկայության մասին են վկայում նաև Մարդու իրավունքների պաշտպանին ԼԳԲՏՔ+ անձանց իրավունքների պաշտպանության ոլորտում գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացված ուսումնասիրությունները և արձանագրումները:

«Փինք» իրավապաշտպան հասարակական կազմակերպության կողմից Մարդու իրավունքների պաշտպանին են ներկայացվել 2025 թվականի ընթացքում կազմակերպության կողմից արձանագրված՝ ԼԳԲՏՔ+ անձանց իրավունքների խախտման դեպքերը, որոնց շարքում ընդգրկված են նաև այնպիսի դեպքեր, որոնք բովանդակում են ԼԳԲՏՔ+ անձանց նկատմամբ հասարակությունում անհանդուրժող վերաբերմունքի, ատելության խոսքի դրսևորումների մասին, այդ թվում՝ հանրային գործիչների մասնակցությամբ: Ասվածի շրջանակներում արձանագրվել են նաև իրավասու մարմինների կարծրատիպային մոտեցումներով պայմանավորված՝ մասնագիտական ոչ պատշաճ ու ոչ զգայուն մոտեցումներ:

Սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրական վերաբերմունքը, այդ թվում՝ դրսևորված պետական մարմինների կողմից

2025 թվականի ընթացքում Պաշտպանը ստացել է դիմում-բողոքներ, որոնցով ներկայացվել են ԼԳԲՏՔ+ անձանց նկատմամբ սեռական կողմնորոշման ու գենդերային ինքնության հիմքով իրավունքների խախտման, խտրական վերաբերմունքի և արժանապատվությունը նվաստացնելու դեպքեր:

«Փինք» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը, որն աջակցում է համայնքի կարիքներին, փաստագրում է սեռական կողմնորոշմամբ և գենդերային ինքնությամբ պայմանավորված՝ խտրականության, բռնությունների, ինչպես նաև ատելության խոսքի դեպքերը ԼԳԲՏՔ+ համայնքի ներկայացուցիչների նկատմամբ, 2025 թվականին արձանագրել է խտրականությամբ զուգորդված ԼԳԲՏՔ+ համայնքի ներկայացուցիչների իրավունքների խախտման 56 դեպք: Ըստ կազմակերպության կողմից ներկայացրած տեղեկատվության՝ դրանք վերաբերում են խոշտանգումների, անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունքի խախտումների, սեռական, ֆիզիկական, հոգեբանական բռնությանը, կրկնազոհացմանը, անձնական կյանքին վերաբերող տեղեկատվության տարածմանը կամ սպառնալիքներին, և այլ դեպքերի:

Հարկ է նշել, որ հասարակական կազմակերպության կողմից արձանագրված դեպքերի մեծ մասը վերաբերել է ընտանեկան բռնությանը, իսկ գրանցված 56 դեպքից միայն 9-ի պարագայում են տուժողները դիմել իրավապահ մարմիններին:

Հասարակական կազմակերպությունն ընդգծել է, որ արձանագրված իրավախախտումների թիվը տարեց տարի աճում է, միևնույն ժամանակ, նկատվում է իրավապահ մարմիններին դիմելու ԼԳԲՏՔ+ անձանց ցանկության նվազում՝ պայմանավորված ԼԳԲՏՔ+ համայնքի ներկայացուցիչների՝ ոստիկանական և քննչական համակարգի նկատմամբ բավարար վստահություն չունենալու հանգամանքով՝ իրավապահ

մարմինների կողմից ծաղրական, նվաստացուցիչ վերաբերմունքի, կրկնազոհացման և այլ պատճառներով:

2. Օրենսդրական խնդիրներ.

<u>Սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը՝ որպես պաշտպանված հատկանիշ, խտրականությանը, ատելության խոսքին և ատելության հիմքով հանցանքներին վերաբերելի կարգավորումներում նախատեսված չլինելը</u>

Պաշտպանի նախորդ տարիների տարեկան հաղորդումների շրջանակներում որպես օրենսդրական խնդիր արձանագրվել է ԼԳԲՏՔ+ անձանց իրավունքների պաշտպանության համատեքստում այն հանգամանքը, որ ՀՀ քրեական օրենսգրքով որպես արարքի որակյալ հատկանիշ չի նախատեսվում ատելության շարժառիթով հանցանքի կատարումը՝ պայմանավորված տուժողի սեռական կողմնորոշմամբ կամ գենդերային ինքնությամբ:

Քրեական օրենսգրքի 203-րդ, 329-րդ և 330-րդ հոդվածների ձևակերպումներում, որոնցով քրեական պատասխանատվություն է նախատեսվում համապատասխանաբար խտրականության, ատելություն հրահրելու, ինչպես նաև բռնություն գործադրելու հրապարակային կոչերի համար, որպես պաշտպանվող հատկանիշ ուղղակիորեն չեն սահմանվում տուժողի սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը[179]:

Ասվածի համատեքստում, Պաշտպանը վերահաստատում է, որ անհրաժեշտ է սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը որպես պաշտպանվող հանգամանք, օրենսդրությամբ ուղղակիորեն ամրագրել՝ չնայած այն հանգամանքին, որ իրավասու մարմինները շարունակում են պնդել այն համոզմունքը, որ վերաբերելի Քրեական օրենսդրության համապատասխան դրույթներով հարցը կարգավորված է:

Ասվածի համատեքստում, Պաշտպանը վերահաստատում է, որ անհրաժեշտ է սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը որպես պաշտպանվող հանգամանք օրենսդրությամբ ուղղակիորեն ամրագրել:

Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովը (ՌԱԵՀ) Հայաստանի վերաբերյալ 2023 թվականի զեկույցում ևս խնդրահարույց է համարել այս հանգամանքը՝ նշելով, որ նման օրենսդրական կարգավորումները, ինչպես նաև այն, որ ԼԳԲՏՔ+ անձանց ընկալմամբ՝ իշխանությունները դժկամությամբ են արձագանքում հոմոֆոբիայի և տրանսֆոբիայի շարժառիթով հանցանքներին, կարող են հիմք հանդիսանալ անպատժելիության մթնոլորտի ստեղծման համար: Հանձնաժողովը նաև մտահոգություն է հայտնել նման պաշտպանվող հատկանիշների՝ «Իրավահավասարության ապահովման մասին» օրենքի նախագծով նախատեսված չլինելու հանգամանքի վերաբերյալ[180]:

Հանձնաժողովի մտահոգությունները կիսում է նաև Մարդու իրավունքների պաշտպանը և այդ կապակցությամբ և՛ հրապարակային (այդ թվում՝ նախորդ տարեկան հաղորդման համատեքստում) և՛ ոչ հրապարակային եղանակներով բարձրացնում է նախագծում հիշյալ պաշտպանվող հատկանիշների նախատեսման անհրաժեշտությունը:

---

[179] Տե՛ս ՀՀ քրեական օրենսգիրք, (ընդունված է 2021 թվականի մայիսի 5-ին, ուժի մեջ է մտել 2022 թվականի հուլիսի 1-ին) հոդվածներ 203, 329,330, հասանելի է https://www.arlis.am/hy/acts/153080 հղումով:

[180] Տե՛ս, Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովի (ՌԱԵՀ)՝ Հայաստանի վերաբերյալ 2023 թվականի զեկույցը, էջեր 10-11, 18-19, հասանելի է https://rm.coe.int/sixth-report-on-armenia/1680ab9e33 հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

Սեռական կողմնորոշմանը և գենդերային ինքնությանն առնչվող հատկանիշների դասակարգումը՝ որպես հոգեկան և վարքային խանգարումներ

2024 թվականի տարեկան հաղորդման շրջանակներում Պաշտպանը մտահոգիչ է համարել ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 19-ի N 871-Ն հրամանով հաստատված Հիվանդությունների և առողջության հետ կապված խնդիրների վիճակագրական դասակարգչի (այսուհետ նաև՝ Հիվանդությունների վիճակագրական դասակարգիչ) 5-րդ՝ «Հոգեկան և վարքային խանգարումներ» գլխում ներառված տեղեկատվության այն հատվածը, որում ներառված են տրանսսեքսուալիզմը[181], սեռական նույնականացման այլ խանգարումներ, ինչպես նաև սեռական հասունության խանգարումը[182], էգոդիստոնիկ սեռական կողմնորոշումը[183] և սեռական զարգացման և կողմնորոշման հետ կապված հոգեբանական և վարքային այլ խանգարումները: Արդյունքում՝ Հիվանդությունների վիճակագրական դասակարգիչը չի համապատասխանեցվել Հիվանդությունների միջազգային դասակարգչի 11-րդ թարմացմանը, որը չի ներառում սեռական կողմնորոշմանն առնչվող հիվանդություններ:

Հիվանդությունների միջազգային դասակարգչի 11-րդ թարմացման մեջ «տրանսսեքսուալիզմ» տերմինի փոխարեն օգտագործում է «դեռահասների կամ մեծահասակների գենդերային անհամապատասխանություն» տերմինը, որը ներառված է «Սեռական առողջությանն առնչվող վիճակներ» գլխում: Հարկ է նշել, որ վերոնշյալ տերմինը չի ներառվել «Հոգեկան և վարքային խանգարումներ» գլխում:

Պաշտպանը, 2024 թվականի տարեկան հաղորդման մեջ կարևորել էր ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 19-ի N 871-Ն հրամանով հաստատված Հիվանդությունների և առողջության հետ կապված խնդիրների վիճակագրական դասակարգչում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը, ինչպես նաև ընդգծել էր հնարավոր կարճ ժամկետներում նոր դասակարգիչ հաստատելու կարևորությունը՝ նպատակ ունենալով այն համապատասխանեցնել Հիվանդությունների միջազգային դասակարգչի 11-րդ թարմացմանը:

Առողջապահության համաշխարհային ասամբլեայի 72-րդ հանդիպման ժամանակ բոլոր անդամ պետություններին՝ բնակչության հիվանդացության և մահացության վիճակագրության բարելավման նպատակով, առաջարկվել է ազգայնացնել և ներդնել ՀՄԴ-11-ը, որի նպատակն է ստեղծել միջազգային մակարդակով համադրելի առողջապահական տվյալների շտեմարան:

Պաշտպանը կրկին ընդգծում է, որ սեռական կողմնորոշմանը և գենդերային ինքնությանն առնչվող անձնային հատկանիշները որպես հոգեկան և վարքային խանգարում նախատեսելը նպաստում է նրանց նկատմամբ խարանին և կարող է

---

[181] «Տրանսսեքսուալիզմ» հասկացությունը բնորոշվում է որպես հակառակ սեռի կերպարով ապրելու և շրջապատի կողմից ընդունվելու ցանկություն, որը սովորաբար ուղեկցվում է սեփական անատոմիական կառուցվածքից և սեռային պատկանելությունից դժգոհ լինելու զգացումով: Նշվում է, որ հիվանդը ցանկանում է վիրահատվել կամ ստանալ հորմոնային բուժում, որպեսզի հնարավորինս համապատասխանի նախընտրած սեռին:

[182] Նշվում է, որ հիվանդը տառապում է սեփական սեռական պատկանելության կամ սեքսուալ կողմնորոշման անորոշությունից, ինչը հանդիսանում է տագնապի և դեպրեսիայի պատճառ:

[183] Նշվում է, որ սեռի պատկանելությունը և սեռական կողմնորոշումը կասկած չեն հարուցում, սակայն ուղեկցող հոգեբանական և վարքային խանգարումների հետևանքով անհատը ցանկանում է փոխել դա և այդ նպատակով կարող է դիմել բժշկական միջամտության:

ամրապնդել հասարակությունում առկա նախապաշարմունքները, կրկնազոհացումը և խտրական վերաբերմունքը, հատկապես՝ առողջապահական համակարգում:

3. Պետական մարմինների՝ ԼԳԲՏՔ+ անձանց իրավունքների պաշտպանությանը միտված աշխատանքը և քաղաքացիական հասարակության արձագանքը կատարված աշխատանքներին

Դեռևս 2024 թվականի տարեկան հաղորդման շրջանակներում Պաշտպանը նշել էր, որ 2023 թվականի սեպտեմբերի 9-ին ՀՀ կառավարության թիվ 1674-Լ որոշմամբ հաստատված Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2023-2025 թվականների գործողությունների ծրագրում անդրադարձ չի կատարվել ԼԳԲՏՔ+ անձանց իրավունքներին:

Ըստ Քննչական կոմիտեի և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տվյալների՝ 2025 թվականի ընթացքում խտրականության, իրավահավասարության և այլ թեմաների վերաբերյալ վերապատրաստման դասընթացներ են անցկացվել քննիչների, սոցիալական ոլորտի աշխատողների, ՀՀ ՆԳՆ ոստիկանության քրեական ոստիկանության ծառայողների և այլ մարմինների աշխատակիցների համար, որոնցով անդրադարձ է կատարվել նաև ԼԳԲՏՔ+ անձանց:

Արդարադատության նախարարության կողմից տեղեկացվել է, որ 2025 թվականին քրեակատարողական և պրոբացիայի ծառայությունների աշխատակիցների համար իրականացվել են դասընթացներ՝ նվիրված գենդերազգայուն մոտեցումների ամրապնդմանը, խտրականության արգելքին և ատելության խոսքի դեմ պայքարին:

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից տրամադրվել է տեղեկատվություն այն մասին, որ 2025 թվականի ընթացքում հանրակրթության ոլորտում կրթության բնագավառի աշխատողների և ուսուցիչների համար իրականացվել են մի շարք վերապատրաստումներ և դասընթացներ՝ նպատակ ունենալով իրազեկել դպրոցներում առկա գենդերային խնդիրների և դրանց հետևանքների մասին: Ըստ տրամադրած տեղեկատվության՝ դասընթացներին մասնակցել են բազմաթիվ ուսուցիչներ, որոնք, համապատասխան գիտելիք ստանալուց հետո, քննարկվող թեմաների վերաբերյալ իրականացրել են դասընթացներ ոլորտի այլ ներկայացուցիչների համար: Իրականացված միջոցառումները, ի թիվս այլնի՝ վերաբերել են խտրականության արգելքին, խտրական վերաբերմունքի բացառմանը, խոցելի խմբերի և անձանց նկատմամբ զգայունություն ձեռք բերելուն և այլ զգայուն թեմաների:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ էական է ԿԳՄՍ նախարարության կողմից տրամադրված տեղեկատվությունը այն մասին, որ մասնագիտական կրթության և ուսուցման բոլոր պետական կրթական չափորոշիչներում ներառվել են այնպիսի առարկաներ, որոնց ուսուցանման շրջանակում անդրադարձ է կատարվում գենդերային հավասարությանը, խտրականության կանխարգելմանը և այլ թեմաների: Նշվել է, որ իրականացված վերապատրաստումներին մասնակցել են արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների մանկավարժներ և վարչական աշխատողներ:

Երևանի քաղաքապետարանից տեղեկացվել է, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2012 թվականի հունիսի 12-ի N 51-Ա/1 և ՀՀ տարածքային կառավարման նախարարի, ՀՀ փոխվարչապետի 2012 թվականի հունիսի 18-ի N 78-Ա համատեղ հրամանի ընդունման և դրանից բխող գործառույթների իրականացման համար հիմք են հանդիսացել ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 20-ի նիստի N 19 և 2012 թվականի հունվարի 19-ի N 2 արձանագրային որոշումները, որոնք ՀՀ կառավարության

2021 թվականի հոկտեմբերի 21-ի N 1728-Ն որոշմամբ անվավեր են ճանաչվել: Տրամադրած տեղեկատվության համաձայն՝ հնարավոր չէ ապահովել «Գենդերային հարցերով հանձնաժողովի» կազմավորման ընթացքը, և օրենսդրական կարգավորումների առկայության դեպքում Երևանի քաղաքապետարանը պատրաստակամ է ապահովել գործի ընթացքը:

Ըստ Առողջապահության նախարարության՝ 2025 թվականին «Մարդու իրավունքների հիմնական սկզբունքները կենսաբժշկության մեջ» և «Առողջապահական իրավունքի արդի հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում» ՇՄՋ կրեդիտավորված դասընթացների շրջանակներում իրականացվել են վատ վերաբերմունքի, խարանի և խտրականության արգելքի թեմայով վերապատրաստումներ՝ ուղղված խոցելի խմբերի նկատմամբ զգայունության ձեռք բերմանը, որոնց մասնակցել է համապատասխանաբար 5000 և 103 բուժաշխատող:

Չնայած 2025 թվականին իրականացված վերապատրաստումներին՝ կարևոր է դրանց շարունակականությունը, թիրախային խմբերի հստակեցումը, ինչպես նաև արդյունավետության գնահատման առավել համակարգված մոտեցումների ներդրումը՝ ապահովելու համար խտրականության դեմ պայքարի իրական և կայուն արդյունքները, այդ թվում՝ ԼԳԲՏՔ+ անձանց իրավունքների պաշտպանության, նրանց առնչվող հարցերում զգայուն մոտեցումներ արմատավորելու և սեռական կողմնորոշման ու գենդերային ինքնության հիմքով խտրական վերաբերմունքի բացառման նպատակով:

Պաշտպանը նախորդ տարիների հաղորդումների շրջանակներում առաջարկել է նաև ԼԳԲՏՔ+ անձանց նկատմամբ հանրության վերաբերմունքի առնչությամբ իրականացնել ուսումնասիրություններ՝ նպատակ ունենալով պարզել հասարակությունում առկա հոմոֆոբիայի և տրանսֆոբիայի տարածվածությունը և հիմնական կարծրատիպերը, սակայն 2025 թվականի ընթացքում առաջարկի կատարմանն ուղղված աշխատանքները, ինչպես նաև առկա կարծրատիպերի վերացմանն ուղղված հանրային իրազեկման արշավներ չեն իրականացվել, որի արդյունքում բարձրացված խնդիրները շարունակում են արդիական մնալ:

Կարևոր է ընդգծել հաշվետու տարվա ընթացքում Պաշտպանի հաստատության, Մարդու իրավունքների դանիական ինստիտուտի և Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն (ՀՌԿԿ) - Հայաստան հիմնադրամի հետ ունեցած համագործակցության շրջանակում Հայաստանում խտրականության ընկալումների, վերաբերմունքի և փորձառությունների ուսումնասիրության վերաբերյալ նախաձեռնված հետազոտությունը:

Չնայած կատարված աշխատանքներին՝ 2025 թվականի ընթացքում ԼԳԲՏՔ+ անձանց իրավունքների պաշտպանության հարցում առկա են եղել բազմաթիվ խնդիրներ, որոնց մասին են վկայում սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով անձանց իրավունքների խախտումների վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված դիմում-բողոքներն ու խնդրի առնչությամբ Պաշտպանի աշխատակազմի դիտարկումների արդյունքները:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է

- ✓ ***իրականացնել ԼԳԲՏՔ+ անձանց նկատմամբ հանրության վերաբերմունքի ուսումնասիրություններ՝ նպատակ ունենալով հաղթահարել առկա հիմնական կարծրատիպերը, և պարզել հասարակությունում առկա կարծրատիպային մտածողության տարածվածությունը,***

✓ *շարունակաբար իրականացնել հոմոֆոբիայի և տրանսֆոբիայի, ԼԳԲՏՔ+ անձանց վերաբերյալ առկա կարծրատիպերի վերացմանն ուղղված հանրային իրազեկման արշավներ,*

✓ *ոստիկանների, քննիչների, դատախազների և դատավորների, բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող անձնակազմի համար նախատեսված դասընթացներ և վերապատրաստումներ անցկացնել՝ ուղղված ԼԳԲՏՔ+ անձանց նկատմամբ զգայուն, ոչ խտրական մոտեցումների ձևավորմանը և անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ կարողությունների զարգացմանը,*

✓ *ուղեցույցներ մշակել ոլորտի իրավապաշտպան հասարակական կազմակերպությունների համար՝ ուղղված ԼԳԲՏՔ+ անձանց իրավունքների պաշտպանությանը,*

✓ *օրենսդրությամբ «սեռական կողմնորոշումը» և «գենդերային ինքնությունը» սահմանել որպես պաշտպանվող հատկանիշ:*

✓ *փոփոխություններ կատարել ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 19-ի N 871-Ն հրամանով հաստատված Հիվանդությունների և առողջության հետ կապված խնդիրների վիճակագրական դասակարգչում կամ հնարավոր կարճ ժամկետներում հաստատել նոր դասակարգիչ՝ այն համապատասխանեցնելով Հիվանդությունների միջազգային դասակարգչի 11-րդ թարմացմանը:*

ԳԼՈՒԽ 3. ՍԵՌԱԿԱՆ ՈՏՆԶԳՈՒԹՅՈՒՆԻՑ ՈՒ ԲՌՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԴՐԱՆՑ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ

Սեռական բռնության ու ոտնձգության արգելքը սահմանված է մի շարք իրավական փաստաթղթերում, այդ թվում՝ «Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայում, Աշխատանքային օրենսգրքում, Քրեական օրենսգրքում և այլն: 2025 թվականին Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է նաև Բռնության և ոտնձգության մասին կոնվենցիան (թիվ 190 կոնվենցիա):

Սեռական ոտնձգությունից ու բռնությունից պաշտպանությանն ուղղված միջոցառումներ են նախանշվել ՀՀ կառավարության 2025 թվականի ապրիլի 23-ի «Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման 2025-2028 թվականների ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 482-Լ որոշմամբ:

Մարդու իրավունքների պաշտպանը 2025 թվականին շարունակել է մշտադիտարկել և տարբեր ձևաչափերով հասցեավորել սեռական ոտնձգությունների ու բռնությունների կանխարգելման, բացահայտման ու արձագանքման հետ կապված խնդիրները, ներկայացնել դրանց լուծմանն ուղղված առաջարկություններ, իրականացնել իրազեկման միջոցառումներ:

Այսպես, օրինակ, 2025 թվականի նոյեմբերի 25-ին Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանն ընդունել է «Շենացնենք մեր գյուղը» հասարակական կազմակերպության շահառուներից կազմված խմբի անդամներին, որոնց կազմում էին Կոտայքի մարզի մի շարք դպրոցների մանկավարժներ, քոլեջների դասախոսներ և բարձր դասարանների աշակերտներ: Հանդիպումը տեղի է ունեցել «Ընդդեմ գենդերային բռնության ակտիվության 16-օրյակի» ամենամյա միջազգային քարոզարշավի շրջանակում[184]:

2025 թվականի նոյեմբերի 25-ին Մարդու իրավունքների պաշտպանը մասնակցել է նաև «Ընդդեմ գենդերային բռնության ակտիվության 16-օրյակի» ամենամյա միջազգային քարոզարշավի մեկնարկին նվիրված համաժողովին և հանդես եկել ողջույնի խոսքով[185] և այլն:

Հարկ է փաստել, սակայն, որ Մարդու իրավունքների պաշտպանի 2025 թվականի մշտադիտարկման արդյունքները ցույց են տալիս, որ շարունակում են արդիական մնալ սեռական ոտնձգության ու բռնության դեպքերի կանխարգելման, բացահայտման ու արձագանքման պատշաճ կառուցակարգերի բացակայության հետ կապված խնդիրները, որոնց Մարդու իրավունքների պաշտպանն անդրադարձել է նախորդ տարիների տարեկան հաղորդումներում[186]: Մարդու իրավունքների պաշտպանը նշված խնդիրներին

---

[184] Տեղեկատվությունը հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3600 հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

[185] Տեղեկատվությունը հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3598 հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

[186] Տե՛ս 2024 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 321-328, հասանելի է https://ombuds.am/images/files/4d1335361f1f7e9fbcc1cfc10679701e.pdf հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ: Տե՛ս նաև 2023 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 772-786, հասանելի է

անդրադարձել է նաև 2025 թվականի «Կանանց տնտեսական իրավունքների իրացման երաշխիքներն ու խոչընդոտները Հայաստանում» վերտառությամբ արտահերթ զեկույցի[187], «Երեխայի նկատմամբ բռնության դեպքերի բացահայտման, կանխարգելման և արձագանքման հետ կապված խնդիրները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ արտահերթ զեկույցի շրջանակներում[188]:

Մասնավորապես, 2025 թվականին շարունակել են արդիական մնալ ուսումնական հաստատություններում սեռական ոտնձգությունների ու բռնությունների կանխարգելման, բացահայտման ու արձագանքման հետ կապված խնդիրները:

Խիստ դատապարտելի է այն, որ զանգվածային լրատվության միջոցներից մեկի տարածած տեղեկատվության համաձայն, օրինակ, նման բռնություն է գործադրվել ուսումնական հաստատության աշխատակցի կողմից երեխայի նկատմամբ:

Մարդու իրավունքների պաշտպանը ևս մեկ անգամ արձանագրում է, որ պետությունը պարտավոր է անհետաձգելի միջոցներ ձեռնարկել՝ բացառելու երեխայի նկատմամբ ցանկացած բռնության, այդ թվում՝ սեռական ոտնձգության ու բռնության դեպքերը: Երեխայի նկատմամբ բռնության դեպքերի բացահայտման, կանխարգելման ու արձագանքման հետ կապված խնդիրներին անդրադարձ է կատարվում սույն տարեկան հաղորդման համապատասխան բաժնում:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ նախարարության նախաձեռնությամբ և «Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից մշակված՝ «Դպրոցում երեխաների պաշտպանության և անվտանգության ուղեցույց» փաստաթուղթը շրջաբերական նամակով տրամադրվել է հանրապետության բոլոր հանրակրթական ուսումնական հաստատություններին: Ուղեցույցի շրջանակում «Ապահով և անվտանգ կրթական միջավայր» թեմայով իրականացվել են վերապատրաստման դասընթացներ՝ ուղղված կրթական միջավայրում անվտանգության, հոգեբանական բարեկեցության ապահովմանը, ինչպես նաև բռնության կանխարգելման մշակույթի ձևավորմանը: Իրականացված դասընթացների արդյունքում վերապատրաստվել են 1368 ուսումնական հաստատությունների ներկայացուցիչներ, այդ թվում՝ 987 հոգեբան, 1408 փոխտնօրեն /կրթական աջակցությունների և դաստիարակչական աշխատանքների համակարգող (ԿԴԱՀ), 35148 ուսուցիչ և 390164 ծնող: Միաժամանակ, հանրակրթական ուսումնական հաստատություններում կազմավորվել են Երեխաների պաշտպանության թիմեր (ԵՊ թիմեր), որոնց գործառույթն է ապահովել բռնության բոլոր դրսևորումների՝ այդ թվում սեռական ոտնձգությունների, կանխարգելման, վաղ հայտնաբերման և համակարգված արձագանքման գործընթացը: 2025 թվականի ընթացքում Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի կողմից իրականացվել են մի շարք միջոցառումներ՝ ուղղված ուսումնական հաստատություններում սեռական ոտնձգությունների կանխարգելման և արդյունավետ արձագանքման կառուցակարգերի ձևավորմանը: Մասնավորապես, իրականացվել է ձևավորող հետազոտություն՝

---

https://ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

[187] Տեղեկատվությունը հասանելի է https://ombuds.am/images/files/7a7be30b21311292e5436a24be9d0e8e.pdf հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

[188] Տեղեկատվությունը հասանելի է https://ombuds.am/images/files/2618c9730d8351a085332c232926e4ee.pdf հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

դպրոցական միջավայրում առկա ռիսկերի, երեխաների իրազեկվածության մակարդակի և արձագանքման մեխանիզմների արդյունավետության գնահատման նպատակով: Տրամադրված տեղեկատվության համաձայն՝ առաջին անգամ ՀՀ դպրոցներում իրականացվել է 12–17 տարեկան սովորողների շրջանում առցանց հարցում՝ սեռական ոտնձգությունների դրսևորումների, դրանց ընկալման և հաղորդման խոչընդոտների վերաբերյալ տվյալների հավաքագրման համար: Կազմակերպվել է թեմատիկ աշխատաժողով, որի շրջանակում ներկայացվել և վերլուծվել են հետազոտության արդյունքները և մեկնարկ է տրվել կանխարգելման ու արձագանքման ռազմավարությունների մշակմանը: Գործընթացում ներգրավվել են ոլորտային փորձագետներ և շահագրգիռ կառույցներ՝ ուղղված դպրոցներում սեռական ոտնձգությունների կանխարգելման, վաղ հայտնաբերման և միջամտության կառուցակարգերի տեղայնացմանն ու ներդրմանը: 2025 թվականին «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակի դասընթացները վերաբերել են նաև սեռական բռնության և սեռական ոտնձգություններին և դրանց դեմ պայքարին, որի շրջանակներում վերապատրաստվել են 73 մենթոր և շուրջ 2500 ուսուցիչ և հոգեբան:

Միաժամանակ, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ մասնագիտական կրթության և ուսուցման, ինչպես նաև բարձրագույն կրթության բոլոր պետական կրթական չափորոշիչներում ներառվել են «Իրավունքի հիմունքներ» առարկան, «Քաղաքագիտության և տեխնոլոգիայի հիմունքներ», «Անվտանգություն և առաջին օգնություն» մոդուլները, որոնց ուսուցանման շրջանակում անդրադարձ է կատարվում սեռական ոտնձգություններին առնչվող խնդիրներին:

Չնայած պետության կողմից իրականացված աշխատանքներին՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ դրանք բավարար չեն և անհրաժեշտ է ուսումնական բոլոր հաստատություններում մշակել և ներդնել սեռական ոտնձգությունների ու բռնությունների կանխարգելման, բացահայտման ու արձագանքման առավել արդյունավետ կառուցակարգեր:

2025 թվականին շարունակել են արձանագրվել նաև աշխատավայրերում սեռական ոտնձգությունների ու բռնությունների բացահայտման, կանխարգելման ու արձագանքման արդյունավետ կառուցակարգերի բացակայության հետ կապված խնդիրներ, որոնց առավել մանրամասն անդրադարձ է կատարվում սույն տարեկան հաղորդման «Գործարարության ոլորտում կանանց իրավունքների պաշտպանության և խթանման հետ կապված խնդիրներ» վերտառությամբ գլխի շրջանակներում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***ներդնել ուսումնական հաստատություններում սեռական ոտնձգության ու բռնության դեպքերի բացահայտման, կանխարգելման ու արձագանքման գործուն կառուցակարգեր,***
- ✓ ***օրենսդրությամբ սահմանել սեռական ոտնձգության ու բռնության դեմ պայքարի քաղաքականություն մշակելու՝ բոլոր ուսումնական հաստատությունների պարտականությունը և դրա ներդրման համար անհրաժեշտ ուղենիշային չափանիշները,***
- ✓ ***մշակել ուսումնական հաստատություններում սեռական ոտնձգության ու բռնության դեպքերի մասին հաղորդելու ընթացակարգերի և դրանց պատշաճ արձագանքի ապահովման նկատմամբ արդյունավետ վերահսկողական կառուցակարգեր,***

- ✓ *իրականացնել ուսումնական հաստատությունների պատասխանատուների վերապատրաստումներ՝ սեռական ոտնձգության ու բռնության դեպքերը նույնականացնելու, բացահայտելու, դրանք վարելու և պատշաճ ու զգայուն արձագանք ցուցաբերելու համար,*
- ✓ *հանրության շրջանում իրականացնել շարունակական ու թիրախային՝ բոլոր խմբերի ընդգրկմամբ իրազեկման աշխատանքներ սեռական բռնության ու ոտնձգության արգելքի ու պաշտպանության կառուցակարգերի վերաբերյալ,*
- ✓ *աշխատավայրերում ներդնել սեռական ոտնձգության ու բռնության բացահայտման, կանխարգելման ու արձագանքման արդյունավետ կառուցակարգեր:*

ԳԼՈՒԽ 4. ՊՏՂԻ ՍԵՌԻ ԽՏՐԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԵՌՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՀՂԻՈՒԹՅԱՆ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԸՆԴՀԱՏՈՒՄՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ

Պտղի սեռի խտրական ընտրության և սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների հետ կապված խնդիրները 2025 թվականին ևս շարունակել են մնալ արդիական:

Պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումն իրականացվում է, հիմնականում, այն հասարակություններում, որտեղ մշակութային նորմերով կամ ավանդույթներով է պայմանավորված երեխայի կոնկրետ սեռի նախապատվությունը: Խնդրի պատճառները կարող են շատ տարբեր և խորքային լինել, այդ թվում՝ հասարակությունում ավանդաբար հաստատված պատկերացումները, տղա երեխա ունենալու նախապատվությունը կամ կանանց դերի վերաբերյալ առկա կարծրատիպային մոտեցումները:

Պտղի սեռի խտրական ընտրության ու սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման խնդրի դեմ պայքարի և դրա կանխարգելման ոլորտում Մարդու իրավունքների պաշտպանը 2025 թվականին իրականացրել է լայնածավալ իրազեկման աշխատանքներ՝ ուղղված հասարակությունում կանանց դերի բարձրացմանը, նրանց կարողությունների զարգացմանը, կանանց կողմից որոշումների կայացման ազատության երաշխավորմանը, սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների կանխարգելմանը:

Այսպես, օրինակ, Մարդու իրավունքների պաշտպանի և Հայաստանում Նիդերլանդների Թագավորության դեսպանության համագործակցությամբ 2025 թվականի հոկտեմբերի 7-ին Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի մշակույթի տանը տեղի է ունեցել «Սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների կանխարգելում. իրազեկում և հասարակական գիտակցության ձևավորում» թեմայով միջոցառում: Ներկա են եղել Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի, քաղաքացիական հասարակության, ինչպես նաև ուսումնական հաստատությունների ներկայացուցիչներ՝ Գավառի պետական համալսարանի, քոլեջների դասախոսներ և ուսանողներ, դպրոցների տնօրեններ, ուսուցիչներ և ավագ դպրոցի աշակերտներ, ինչպես նաև թեմայով հետաքրքրված այլ անձինք: Միջոցառման շրջանակում ցուցադրվել է «Շնորհավոր, աղջիկ է» ֆիլմը՝ նվիրված սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների թեմային: Ֆիլմը ստեղծվել է Հայաստանում Նիդերլանդների Թագավորության դեսպանության աջակցությամբ և անդրադառնում է Հայաստանում սեռով պայմանավորված՝ հղիության արհեստական ընդհատումների հրատապ խնդրին:

Համանման իրազեկման աշխատանքներ իրականացվել են նաև այլ մարզերում: Միջոցառումների և խնդրի առնչությամբ պատրաստվել են նաև ռեպորտաժներ և հոլովակներ ու տարածվել զանգվածային լրատվության միջոցներով և սոցիալական մեդիայի հարթակներով:

Իրազեկվածության մակարդակի բարձրացման տեսանկյունից խիստ կարևոր է նաև իրավասու պետական մարմինների կողմից համապատասխան միջոցառումների կազմակերպումն ու իրականացումը:

Առողջապահության նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2025 թվականին պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների դեմ պայքարի շրջանակում կազմակերպվել է 4 հարցազրույց, որոնք տեղադրվել են ԱՆ սոցիալական հարթակներում և տարածվել զանգվածային լրատվամիջոցներով:

Հարկ է փաստել, սակայն, որ առանցքային է առողջապահական համակարգի, մասնավորապես, առաջնային օղակի բուժաշխատողների իրազեկվածության բարձրացումն ու բարեվարքությունը՝ պտղի սեռի խտրական ընտրության կանխարգելման, կանանց և նրանց ընտանիքի անդամների վերաբերմունքի փոփոխության, պտղի սեռով պայմանավորված հղիության ընդհատումների կանխարգելման հարցում: Հետևաբար, պետության կողմից իրականացվող միջոցառումները պետք է կրեն շարունակական բնույթ ու ընդգրկեն նաև ոլորտում գործունեություն իրականացնող մասնագետներին ու թիրախային բոլոր խմբերին:

Պտղի սեռի խտրական ընտրության կանխարգելման հետ կապված խնդիրները պայմանավորված են նաև օրենսդրական թերի կարգավորումներով: Այսպես, օրինակ, խնդրահարույց է այն, որ «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրման իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման դեպքում ապագա երեխայի սեռը պլանավորել չի թույլատրվում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ առկա է սեռի հետ կապված հիվանդության ժառանգման հավանականություն, կամ ընտանիքն ունի նույն սեռի 3 երեխա:

Բացի այդ, արձանագրվել է նաև, որ շարունակում են արդիական մնալ բուժաշխատողների կողմից հղիության 12-րդ շաբաթից հետո արհեստական ընդհատման գործընթացում բժշկասոցիալական ցուցումների պահպանման վերահսկողական պատշաճ մեխանիզմների բացակայության ու վիճակագրական տվյալների մշակման հետ կապված նախկինում արձանագրված խնդիրները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***նպաստել կանանց տնտեսական, սոցիալական և քաղաքական մասնակցությունը խթանող քաղաքականությունների մշակմանը՝ ուղղված հասարակությունում կանանց դերի բարձրացմանն ու արժևորմանը,***
- ✓ ***իրականացնել հանրային իրազեկման համակարգված միջոցառումներ, այդ թվում՝ զանգվածային լրատվության միջոցներով՝ ուղղված երեխայի արժևորմանը, սոցիալական նորմերի վերափոխմանը, կարծրատիպերի վերացմանը, կնոջ՝ որպես որոշում կայացնողի դերի ընդգծմանը,***
- ✓ ***իրականացնել առողջապահական համակարգի աշխատակիցների կարողությունների ամրապնդման վերապատրաստման դասընթացներ, հատկապես, թիրախային խմբին պատշաճ խորհրդատվության տրամադրման ու իրազեկման առումներով, և բարձրացնել բուժաշխատողների գենդերազգայունությունը,***

- ✓ *մշակել և կիրառել կառուցակարգեր՝ վերահսկելու բուժաշխատողների կողմից հղիության 12-րդ շաբաթից հետո արհեստական ընդհատման ժամանակ բժշկասոցիալական ցուցումների պահպանումը,*
- ✓ *դպրոցներում և բուհերում իրականացնել լայնամասշտաբ կրթական քարոզարշավներ ու հանրային իրազեկման նախաձեռնություններ՝ ուղղված, առհասարակ, երեխայի և, հատկապես, աղջիկ երեխաների արժևորմանը,*
- ✓ *միջոցներ ձեռնարկել օրենսդրական դաշտի կատարելագործման ուղղությամբ:*

ԳԼՈՒԽ 5. ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԴՈՒ ԻՄՈՒՆԱՅԻՆ ԱՆԲԱՎԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԻՐՈՒՍ/ՁԵՌՔԲԵՐՈՎԻ ԻՄՈՒՆԱՅԻՆ ԱՆԲԱՎԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԽՏԱՆԻՇ (ՄԻԱՎ/ՁԻԱՀ) ՈՒՆԵՆԱԼՈՒ ՀԻՄՔՈՎ

Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկման արդյունքները ցույց են տալիս, որ 2025 թվականին շարունակել են արդիական մնալ ՄԻԱՎ/ՁԻԱՀ ունեցող անձանց իրավունքների պաշտպանության հետ կապված նախորդ տարեկան հաղորդումներում ներկայացված խնդիրները[189]:

Մասնավորապես, 2025 թվականին, ի թիվս այլնի, շարունակել են արդիական մնալ ինչպես օրենսդրական կարգավորումներին, այնպես էլ ՄԻԱՎ/ՁԻԱՀ ունեցող անձանց նկատմամբ խտրականության դեպքերի բացառման, անձնական տվյալների պաշտպանության, պատշաճ բժշկական օգնության ու սպասարկման երաշխավորման, ցածր իրազեկվածության մակարդակի հետ կապված խնդիրները:

Այսպես, օրինակ, Քրեական օրենսգրքի համաձայն՝ մեկ ուրիշին մարդու իմունային անբավարարության վիրուսով հանցավոր ինքնավստահությամբ վարակելը շարունակում է մնալ քրեորեն պատժելի արարք:

Ավելին, Քննչական կոմիտեի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2025 թվականի ընթացքում մարդու իմունային անբավարարության վիրուսով անզգուշությամբ վարակելու 1 դեպքի վերաբերյալ ստացվել է հաղորդում, որի կապակցությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածով նախաձեռնվել է քրեական վարույթ:

Ընդ որում, ՄԱԿ-ի Հատուկ զեկուցողը մտահոգություն է հայտնել, որ Հայաստանում ՄԻԱՎ-ի փոխանցումը քրեականացված է՝ չհամապատասխանելով առողջության պահպանման իրավունքի ներքո ստանձնած միջազգային պարտավորություններին: Նշվածը, ըստ Հատուկ զեկուցողի, լուրջ խոչընդոտ է ռիսկի տակ գտնվող անձանց առողջության պահպանման իրավունքից օգտվելու ճանապարհին՝ սահմանափակելով անհրաժեշտ բժշկական ծառայությունների հասանելիությունը և բարձրացնելով առողջական ռիսկերը ոչ միայն իրենց, այլև ամբողջ հասարակության համար: Հատուկ զեկուցողն առաջարկել է քրեական պատասխանատվություն նախատեսել միայն այն դեպքերի համար, երբ ՄԻԱՎ-ի փոխանցումն իրականացվում է դիտավորությամբ և ՄԻԱՎ-ով ապրող անձը տեղյակ է իր մոտ վարակի առկայության մասին:[190]

Ուստի, Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ անհրաժեշտ է օրենսդրական փոփոխություններ իրականացնել՝ ուղղված մեկ ուրիշին մարդու իմունային անբավարարության վիրուսով հանցավոր ինքնավստահությամբ վարակելու արարքի ապաքրեականացմանը:

2025 թվականին շարունակել են արդիական մնալ ՄԻԱՎ/ՁԻԱՀ ունեցող անձանց նկատմամբ կյանքի բոլոր ոլորտներում՝ ընտանիքում, առողջապահական համակարգում,

---

[189] Տե՛ս 2024 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 332-336, հասանելի է https://ombuds.am/images/files/4d1335361f1f7e9fbcc1cfc10679701e.pdf հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ: Տե՛ս նաև 2023 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 786-796, հասանելի է https://ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

[190] Տեղեկատվությունը հասանելի է https://digitallibrary.un.org/record/1627460/files/A_HRC_38_36_Add-2-EN.pdf?ln=enհղումով հղումով, էջ 14, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

աշխատանքային հարաբերություններում, կրթական հաստատություններում և այլ բնագավառներում խտրականության դեպքերի բացահայտման, կանխարգելման ու արձագանքման արդյունավետ մեխանիզմների բացակայության հետ կապված խնդիրները: Ներդրված չեն նաև ՄԻԱՎ/ՁԻԱՀ ունեցող անձանց անձնական տվյալների պաշտպանությունը, այդ թվում՝ բժշկական գաղտնիքին առնչվող տեղեկատվության գաղտնիությունը գործնականում երաշխավորող արդյունավետ կառուցակարգեր:

Նշված հանգամանքները նաև լրջագույն խոչընդոտ են ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման, բուժման ու աջակցող ծրագրերի իրականացումը երաշխավորելու տեսանկյունից:

Առողջապահության նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2025 թվականի ընթացքում իրականացվել է բժշկական գաղտնիքի պահպանմանը առնչվող օրենսդրության ինտեգրում ՀՀ ԱՆ Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն ՓԲԸ-ի (այսուհետ՝ ԻՀԱԿ) ներքին նորմատիվ ակտերում: 2025 թվականին ԻՀԱԿ-ում բացվել է անհետաձգելի բուժօգնության բաժանմունք, որը նախատեսված է արագ բուժօգնություն, կարճատև հոսպիտալացում և տարբերակիչ ախտորոշում պահանջող իրավիճակների համար: Այն սպասարկում է պետական պատվերի շրջանակում՝ համապատասխան բժշկական ցուցումների դեպքում: Ընդլայնվել է ՄԻԱՎ վարակի նախակոնտակտային և հետկոնտակտային կանխարգելման հասանելիության աշխարհագրությունը՝ դարձել է նաև հասանելի ԻՀԱԿ-ի ստացիոնար բաժանմունքում և թոքաբանության ազգային կլինիկայում: ՄԻԱՎ վարակ ունեցող անձանց դիսպանսերային հսկողության և բուժման տրամադրման ապակենտրոնացման շնորհիվ, այն հասանելի է դարձել ՀՀ Շիրակի մարզում՝ «Գյումրու ԲԿ» ՓԲԸ և ՀՀ Լոռու մարզում՝ «Վանաձորի ԲԿ» ՓԲԸ: 2025 թվականին ԻՀԱԿ-ում սկիզբ է դրվել տնային կանչ ծառայությունը: 2025 թվականին ԻՀԱԿ-ի շարժական կլինիկաների միջոցով իրականացվել են այցեր տարբեր մարզեր՝ ապահովելով բժշկական ծառայությունների հասանելիություն այն բնակավայրերում, որտեղ դրանք սահմանափակ են: Այցերի ընթացքում 31 000 անձ հետազոտվել է ՄԻԱՎ-ի, հեպատիտների և սիֆիլիսի վերաբերյալ և ստացել է բժշկական խորհրդատվություն: 2025 թվականին ՀՀ կառավարության որոշմամբ «Թոքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ն վերակազմակերպման միջոցով միացել է ԻՀԱԿ-ին, ինչը հնարավորություն է տվել ստեղծել առավել համապարփակ և ինտեգրված ծառայությունների համակարգ՝ ուղղված տարաբնույթ ինֆեկցիոն հիվանդություններով անձանց արդյունավետ ախտորոշման և բուժման ապահովմանը: Առողջապահության նախարարի 2025 թվականի հունիսի 12-ի թիվ 3528-Ա հրամանով ընդունվել է «18 ամսականից բարձր տարիքի անձանց ՄԻԱՎ վարակի լաբորատոր ախտորոշման» կլինիկական ուղեցույցը: Նախաձեռնվել է նաև մի շարք այլ ուղեցույցների և չափորոշիչների մշակման գործընթացը և այլն:

Չնայած պետության կողմից իրականացված աշխատանքներին՝ Մարդու իրավունքների պաշտպանը կարևորում է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելումը, բուժումն ու աջակցությունների տրամադրումը երաշխավորելու հարցում առավել գործուն միջոցների ձեռնարկումը:

ՄԻԱՎ/ՁԻԱՀ ունեցող անձանց իրավունքների պաշտպանության առնչությամբ կարևոր նշանակություն ունի նաև տարբեր թիրախային խմբերի շրջանակում իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված աշխատանքների իրականացումը:

Առողջապահության նախարարության ու Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝

2025 թվականին հանրության ու մասնագետների շրջանում իրականացվել են մի շարք դասընթացներ, վերապատրաստումներ ու իրազեկման միջոցառումներ:

Հարկ է փաստել, սակայն, որ իրականացված իրազեկման միջոցառումները բավարար չեն ոլորտում առկա բոլոր խնդիրների առնչությամբ հանրության ու մասնագետների իրազեկվածության անհրաժեշտ մակարդակ ապահովելու համար: Ուստի, անհրաժեշտ է շարունակել ու իրականացնել առավել թիրախային ու ինստիտուցիոնալ բնույթ կրող իրազեկման միջոցառումներ:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

✓ օրենսդրական փոփոխություններ իրականացնել՝ ուղղված մեկ ուրիշին մարդու իմունային անբավարարության վիրուսով հանցավոր ինքնավստահությամբ վարակելու արարքի ապաքրեականացմանը,

✓ միջոցներ ձեռնարկել՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ ունեցող անձանց նկատմամբ կյանքի բոլոր ոլորտներում՝ ընտանիքում, առողջապահական համակարգում, աշխատանքային հարաբերություններում, կրթական հաստատություններում և այլ բնագավառներում խտրականության դեպքերի բացահայտման, կանխարգելման ու արձագանքման արդյունավետ կառուցակարգերի ներդրման ուղղությամբ,

✓ միջոցներ ձեռնարկել՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ ունեցող անձանց անձնական տվյալների պաշտպանությունը, այդ թվում՝ բժշկական գաղտնիքին առնչվող տեղեկատվության գաղտնիությունը գործնականում երաշխավորող արդյունավետ կառուցակարգերի ներդրման ուղղությամբ,

✓ առավել գործուն միջոցներ ձեռնարկել՝ երաշխավորելու ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման, բուժման ու աջակցությունների տրամադրման հարցում առավել արդյունավետ կառուցակարգերի ներդրումը,

✓ ՄԻԱՎ/ՁԻԱՀ ունեցող անձանց իրավունքների պաշտպանության ոլորտում շարունակել ու իրականացնել առավել թիրախային ու ինստիտուցիոնալ բնույթ կրող իրազեկման միջոցառումներ:

ԲԱԺԻՆ 5. ԿԱՆԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Կանանց նկատմամբ խտրականության բացառումը, կանանց իրավունքների պաշտպանությունն ու խթանումը 2025 թվականին շարունակել են լինել Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության առաջնահերթ ուղղություններից: Ոլորտում իրականացվող աշխատանքները, ի թիվս այլնի, ուղղված են կանանց նկատմամբ բռնության վերացմանը, կանանց հասարակական ու քաղաքական կյանքին ներգրավմանն ու առաջընթացի խթանմանը, կանանց տնտեսական հզորացմանը և նրանց նկատմամբ խտրականությունը բացառող ու իրավունքահեն մոտեցումների ամրապնդմանը:

Մարդու իրավունքների պաշտպանը 2025 թվականին շարունակել է մշտադիտարկել և տարբեր ձևաչափերով հասցեավորել կանանց իրավունքների հետ կապված խնդիրները, ներկայացնել դրանց լուծմանն ուղղված առաջարկություններ: Մարդու իրավունքների պաշտպանը կանանց իրավունքների պաշտպանության ոլորտում կազմակերպել ու իրականացրել է լայնածավալ իրազեկման միջոցառումներ՝ այդ գործընթացում ներգրավելով կանանց ու քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին, մասնակցել է տարբեր քննարկումների ու հանդիպումների, այդ թվում՝ պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, կանանց ու միջազգային դերակատարների հետ, ինչպես Երևանում, այնպես էլ ՀՀ մարզեր իրականացված այցերի շրջանակներում:

Այսպես, օրինակ, 2025 թվականի նոյեմբերի 27-ին Երևանում պաշտոնապես իրականացվել է բարձր մակարդակի միջազգային համաժողով՝ «Արդյունավետ պաշտպանություն և անվտանգություն. կանանց նշանակալի մասնակցության առաջխաղացում Հայաստանի զինված ուժերում և զինված ուժերից դուրս» թեմայով: Համաժողովին մասնակցել են Հայաստանում հավատարմագրված դեսպաններ, միջազգային կազմակերպությունների ղեկավարներ և ներկայացուցիչներ, Ազգային ժողովի պատգամավորներ, գործադիր իշխանության, իրավապահ մարմինների, զինված ուժերի, պետական այլ մարմինների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ, միջազգային փորձագետներ, տարբեր երկրների զինված ուժերում ներգրավված կանայք, ինչպես նաև ակադեմիական շրջանակների ներկայացուցիչներ: Միջոցառումը կազմակերպվել է ՆԱՏՕ-ի կապի գրասենյակի, Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության և «ՄԱԿ Կանայք» (UN Women) կառույցի համագործակցությամբ[191]:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը մարտի 19-ին մասնակցել է աշխատանքային հանդիպման՝ «Գենդերային հավասարության պարգևադրոշմը հանրային ինստիտուտների համատեքստում» թեմայով[192]: Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանի գլխավորությամբ՝ աշխատակազմում հուլիսի 8-ին նույնպես տեղի է ունեցել առցանց աշխատանքային քննարկում՝ Գենդերային հավասարության պարգևադրոշմի (ԳՀՊ) ներդրման համատեքստում Պաշտպանի

[191] Տեղեկատվությունը հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3603, https://ombuds.am/am/site/ViewNews/3604 հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

[192] Տեղեկատվությունը հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3313 հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

հաստատության նախնական գնահատման արդյունքների վերաբերյալ[193]: Աշխատանքային հանդիպումներն իրականացվել են գենդերային հավասարության պարգևադրոշմի ներդրման գործընթացի շրջանակներում, որը Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում պաշտոնապես գործարկվել է 2024 թվականի ապրիլի 9-ին:

Անահիտ Մանասյանը մարտի 7-ին՝ Կանանց միջազգային օրվան ընդառաջ, մասնակցել և հիմնական ելույթով է հանդես եկել «Կանանց ձայները մշակութային բազմազանության մեջ. ուժի և ստեղծագործականության տոն» միջոցառմանը, որը համատեղ կազմակերպել էին Հայաստանում Իսպանիայի դիվանագիտական գրասենյակն ու «Դեպի Հայաստան» համահայկական հասարակական կազմակերպությունը: Իր խոսքում Անահիտ Մանասյանը ներկայացրել է գենդերային հավասարության և կանանց իրավունքների ոլորտում առկա մարտահրավերները, այդ թվում՝ այն մարտահրավերները, որոնց ինքն է բախվում իր հանրային գործունեության շրջանակներում: Անդրադարձ է կատարվել գենդերային հավասարության տեսանկյունից կարծրացած մոտեցումներին, որոնք փոխանցվում են կրթական համակարգի միջոցով[194]:

Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանը սեպտեմբերի 15-16-ը մասնակցել է «Կանայք և գլոբալ անվտանգության ճարտարապետությունը» մտակենտրոնի կողմից «Համապարփակ անվտանգություն և դիմակայունություն 2025» ծրագրի շրջանակներում կազմակերպված միջազգային համաժողովին: Պաշտպանը, որպես խոսնակ, ելույթ է ունեցել «Կանայք զինված ուժերում, աճող ռազմականացումը կամ գենդերային բազմազանությունը որպես ռազմավարական առավելություն» թեմայով պանելային քննարկմանը: Իր խոսքում Պաշտպանն անդրադարձել է զինված ուժերում կանանց ներգրավվածության և գենդերային բազմազանության ապահովման տեսանկյունից տարբեր կարծրատիպերի և խոչընդոտների հաղթահարման կարևորությանը[195]:

2025 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանը միացել է «Ընդդեմ գենդերային բռնության ակտիվության 16-օրյակի» ամենամյա միջազգային քարոզարշավին, որի շրջանակներում Պաշտպանը և աշխատակազմի ներկայացուցիչները մասնակցել են մի շարք միջոցառումների[196]:

---

[193] Տեղեկատվությունը հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3450 հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

[194] Տեղեկատվությունը հասանելի է https://www.ombuds.am/am/site/ViewNews/3300 հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

[195] Տեղեկատվությունը հասանելի է https://www.ombuds.am/am/site/ViewNews/3512 հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

[196] Տեղեկատվությունը հասանելի է, օրինակ, https://ombuds.am/am/site/ViewNews/3600 հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանը մայիսի 26-ին ընդունել է Սերբիայի Հանրապետության գենդերային հավասարության, կանանց նկատմամբ բռնության կանխարգելման, կանանց տնտեսական և քաղաքական հզորացման հարցերով պետնախարար Տատյանա Մացուրային: Հանդիպման ընթացքում Անահիտ Մանասյանը ներկայացրել է մարդու իրավունքների պաշտպանի մանդատը և հաստատության գործունեության հիմնական ուղղությունները՝ ընդգծելով, որ մարդու իրավունքների պաշտպանությունը պետք է զուգակցվի դրանց խթանմանն ուղղված համակարգային և հետևողական քայլերով: Անահիտ Մանասյանն ընդգծել է, որ բռնության դեմ պայքարը պահանջում է ոչ միայն իրավական հստակություն, այլև քաղաքական կամք, հանրային գիտակցության բարձրացում և ոլորտային համակարգված մոտեցում[197]:

Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանը 2025 թվականի հունվարի 24-ին ընդունել է Կոնրադ Ադենաուեր հիմնադրամի «Քաղաքական երկխոսություն Հարավային Կովկաս» տարածաշրջանային ծրագրի ղեկավար Շտեֆան Մալերիուսին: Հանդիպման շրջանակում ներկայացվել են մարդու իրավունքների պաշտպանի աշխատանքի կարևոր ուղղությունները, որոնք, ի թիվս այլնի, ներառում են՝ կանանց, երեխաների, ազգային փոքրամասնությունների, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների, զինված ուժերում, բռնի տեղահանված անձանց իրավունքների պաշտպանության, հավաքների ազատության իրավունքի ոլորտները: Հանդիպման ընթացքում զրուցակիցներն ընդգծել են ատելության խոսքի, անհանդուրժողականության մթնոլորտի, խտրականության դեմ պայքարի շրջանակներում իրականացվող աշխատանքների կարևորությունը[198]:

Մարդու իրավունքների պաշտպանը կանանց իրավունքների պաշտպանության ոլորտում կազմակերպել, իրականացրել ու մասնակցել է մի շարք այլ միջոցառումների, հանդիպումների ու քննարկումների, որոնք հասանելի են Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնական կայքէջում:

Քաղաքացիական հասարակության հետ համագործակցությունը դրսևորվել է նաև Պաշտպանին առընթեր Կանանց իրավունքների հարցերով հասարակական խորհրդի գործունեությամբ, որի նպատակներից է Պաշտպանին աջակցությունը՝ կանանց իրավահավասարության ապահովման, քաղաքական մասնակցության ակտիվացման հարցերում, կանանց՝ հասարակական և քաղաքական կյանքին մասնակցության բացերի, գործնական խոչընդոտների վերհանումը, ինչպես նաև կյանքի այլ ոլորտներում կանանց հավասար մասնակցության և հավասար հնարավորությունների ընձեռնման մարտահրավերներին անդրադարձը:

Խորհուրդն իր գործունեությունը ծավալում է կանանց իրավազորման, տնտեսական հզորացման, իրավահավասարության ապահովման, քաղաքական մասնակցության ակտիվացման, կանանց նկատմամբ բռնության և գենդերային բռնության կանխարգելման, դրանց արձանագրման և աջակցության տրամադրման, իրավապահ համակարգում և

[197] Տեղեկատվությունը հասանելի է https://www.ombuds.am/am/site/ViewNews/3405 հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

[198] Տեղեկատվությունը հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3250 հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

զինված ուժերում կանանց ակտիվ ներգրավման ու առաջընթացի ոլորտներում, կանանց իրավունքներին առնչվող ռազմավարական ու կրթական ուղղություններում:

2025 թվականին ակտիվ գործունեություն է իրականացրել Մարդու իրավունքների պաշտպանի հրամանի հիման վրա ստեղծված ՄԻՊ աշխատակազմի ներկայացուցիչներից բաղկացած Գենդերային հավասարության հարցերով հանձնաժողովը: Հանձնաժողովը 2025 թվականին, ի թիվս այլնի, ակտիվորեն իրականացրել է ՄԻՊ հաստատության համար գենդերային հավասարությանն ուղղված առաջնահերթությունների որոշմանը, կարիքների գնահատմանը, խնդիրների վերհանմանը, գենդերային հավասարությանն առնչվող ՄԻՊ քաղաքականությունների վերաբերյալ որոշումների կայացմանը, ՄԻՊ աշխատակազմի տարբեր ստորաբաժանումների կողմից դրանց կատարման նկատմամբ մշտադիտարկման իրականացմանը, իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ու ոլորտի կատարելագործմանն ուղղված այլ աշխատանքներ: Հանձնաժողովը բաղկացած է ՄԻՊ աշխատակազմի բոլոր ստորաբաժանումների ղեկավարներից և ներկայացուցիչներից: Հանձնաժողովի աշխատանքները ղեկավարում է ՄԻՊ Գլխավոր քարտուղարը:

2025 թվականին Մարդու իրավունքների պաշտպանը հրապարակել է արտահերթ զեկույց՝ «Կանանց տնտեսական իրավունքների իրացման երաշխիքներն ու խոչընդոտները Հայաստանում» վերտառությամբ, որն իրականացվել է «Լիբերալ քաղաքականության ինստիտուտ» հասարակական կազմակերպության հետ համատեղ՝ Հայաստանի Հանրապետությունում Նիդերլանդների Թագավորության դեսպանության օժանդակությամբ իրականացված «Հզորացնելով կանանց իրավունքների պաշտպաններին Հայաստանում» ծրագրի շրջանակներում[199]:

2025 թվականին կանանց իրավունքների երաշխավորման համատեքստում Պաշտպանը շարունակել է իրականացնել նորմատիվ իրավական ակտերի կատարելագործմանն ուղղված աշխատանքներ: Այսպես, օրինակ, Մարդու իրավունքների պաշտպանին ուղարկված մի շարք նախագծերի առնչությամբ ներկայացվել են տարբեր ոլորտներում գենդերազգայուն մոտեցումների կիրառման ու կանանց իրավունքների խթանմանն ուղղված առաջարկություններ:

Հատկանշական է, որ Մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա Սահմանադրական դատարանը 2025 թվականին հակասահմանադրական է ճանաչել տարիքով պայմանավորված՝ վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու իրավունքի օրենսդրական արգելքը[200]:

Մշտադիտարկումների, ստացված դիմումների ու բողոքների ուսումնասիրության, տարբեր ձևաչափով անցկացված քննարկումների արդյունքում, Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ կանանց իրավունքների պաշտպանության ոլորտում 2025 թվականին շարունակել են արդիական մնալ մի շարք համակարգային խնդիրներ, որոնց անդրադարձ է կատարվել նաև նախորդ տարիների տարեկան հաղորդումներում[201]:

---

[199] Զեկույցը հասանելի է https://ombuds.am/images/files/7a7be30b21311292e5436a24be9d0e8e.pdf հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

[200] Տե՛ս Սահմանադրական դատարանի 2025 թվականի ապրիլի 1-ի ՍԴՈ-1775 որոշումը (https://concourt.am/decision/decisions/67ef8d563c463_SDV-1775.pdf), 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

[201] Տե՛ս 2024 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջեր 337-387, հասանելի է https://ombuds.am/images/files/4d1335361f1f7e9fbcc1cfc10679701e.pdf հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

Մասնավորապես, արձանագրվել է, որ 2025 թվականին շարունակել են արդիական մնալ.

- ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության հետ կապված խնդիրները,
- քաղաքական ու հասարակական կյանքին կանանց մասնակցությունը երաշխավորելու հետ կապված խնդիրները,
- առողջության պահպանման իրավունքի սահմանափակման հետ կապված խնդիրները և այլն:

2025 թվականին արձանագրվել են նաև կանանց իրավունքներին առնչվող մի շարք այլ խնդիրներ, այդ թվում՝ գործարարության ոլորտում կանանց իրավունքների պաշտպանության և խթանման հետ կապված խնդիրներ, արհեստական բանականության զարգացման համատեքստում գենդերազգայուն մոտեցումների կիրառման հետ կապված խնդիրներ և այլն, որոնց մանրամասն անդրադարձ է կատարվում սույն տարեկան հաղորդման համապատասխան բաժիններում:

1.Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության հետ կապված խնդիրներ

2025 թվականի ընթացքում ընտանեկան և կենցաղային բռնությանն առնչվող հարցերի վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանին են հասցեագրվել 141 գրավոր և բանավոր դիմումներ ու բողոքներ, ընդ որում, պետք է նկատի ունենալ, որ 141 թիվը ներկայացված է ըստ դիմումներում ու բողոքներում ներառված անձանց քանակի:

2016 թվականից սկսած՝ Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված ընտանեկան և կենցաղային բռնությանն առնչվող դիմումների ու բողոքների թիվը հետևյալն է. 2016 թվականի ընթացքում (26.02.2016թ.-31.12.2016թ. ժամանակահատված) ներկայացվել են 6 դիմումներ ու բողոքներ, 2017 թվականին՝ 24, 2018 թվականին՝ 50, 2019 թվականին՝ 91, 2020 թվականին՝ 127, 2021 թվականին՝ 105, 2022 թվականին՝ 95, 2023 թվականին՝ 96, իսկ 2024 թվականին՝ 93:



Ստացված դիմումների ու բողոքների ուսումնասիրության ու քննության արդյունքները ցույց են տալիս, որ դրանցից 91-ը վերաբերել են ֆիզիկական բռնության դեպքերին, որոնցից 25-ում ներկայացված են եղել նաև հոգեբանական, 6-ում՝ ինչպես հոգեբանական, այնպես էլ տնտեսական, 5-ում՝ տնտեսական բռնության վերաբերյալ տեղեկություններ: Դիմումներից ու բողոքներից 13-ում նշվել է հոգեբանական բռնության մասին, որից մեկում նշվել է նաև տնտեսական բռնության վերաբերյալ տեղեկատվություն: Ստացված բողոքներից ու դիմումներից 16-ի դեպքում ընտանեկան բռնության տեսակի վերաբերյալ ուղղակի մատնանշում չի արվել[202]:

Պաշտպանին հասցեագրված դիմումների ու բողոքների աշխարհագրական տեղակայվածության առումով հարկ է նշել, որ 21 դիմումներով ու բողոքներով հասցե չի նշվել: 120 դիմումներից ու բողոքներից 68-ի դեպքում նշվել է, որ դրանք տեղի են ունեցել Երևանում, իսկ 52-ի դեպքում՝ մարզերում:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ 2025 թվականի ընթացքում ներկայացված ընտանեկան և կենցաղային բռնության դեպքերի վերաբերյալ դիմումների ու բողոքների բովանդակային վերլուծությունը վկայում է, որ ըստ դիմումներն ու բողոքները ներկայացրած անձանց պնդումների՝ ստացված 141 դիմումներից ու բողոքներից 61-ի

[202] Վիճակագրության համար հիմք են հանդիսացել Պաշտպանին հասցեագրված անհատական և խմբային դիմումներն ու բողոքները:

դեպքում ընտանեկան ու կենցաղային բռնության են ենթարկվել իգական սեռի ներկայացուցիչներ, 8-ի դեպքում՝ արական, իսկ 72-ի դեպքում՝ երեխաներ:



Ըստ դիմումներով ու բողոքներով ներկայացրած անձանց՝ 98-ի դեպքում բռնություն է գործադրել արական սեռի ներկայացուցիչ, 43-ի դեպքում՝ իգական սեռի ներկայացուցիչ:



ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒՅԹ	ԴԵՊՔԵՐԻ ՔԱՆԱԿ
Ծնողի կողմից զավակի նկատմամբ	55
Ամուսնու կողմից կնոջ նկատմամբ	27
Նախկին ամուսնու կողմից կնոջ նկատմամբ	11
Պապի/տատի կողմից թոռան նկատմամբ	10
Զավակի կողմից ծնողի (1 տղամարդ, 7 կին) նկատմամբ	8
Ամուսնու ծնողի (սկեսուրի, սկեսրայրի) կողմից կնոջ (հարսի) նկատմամբ	5
Եղբոր կողմից քրոջ նկատմամբ	5
Կնոջ կողմից ամուսնու նկատմամբ	3
Հարսի կողմից ամուսնու ծնողի (1 տղամարդ, 2 կին) նկատմամբ	3
Կնոջ հորաքրոջ կողմից երեխաների նկատմամբ	3
Նախկին կնոջ կողմից երեխաների նկատմամբ	3
Ամուսնու եղբոր կողմից կնոջ (հարսի) նկատմամբ	2
Թոռան կողմից պապի նկատմամբ	2
Եղբոր կողմից եղբոր նկատմամբ	1
Ամուսնու քրոջ կողմից հարսի նկատմամբ	1
Փեսայի կողմից կնոջ ծնողի (մոր) նկատմամբ	1

Ամուսնու եղբոր կողմից երեխայի նկատմամբ	1

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում իրականացված ուսումնասիրության ու քննության արդյունքները ցույց են տալիս, որ ըստ դիմումների ու բողոքների՝ բռնությունների մեծ մասը գործադրվում է կանանց ու երեխաների նկատմամբ: Երեխայի նկատմամբ բռնությունների դեպքերի բացահայտման, կանխարգելման ու արձագանքման հետ կապված խնդիրներին անդրադարձ է կատարվում սույն տարեկան հաղորդման համապատասխան բաժնում:

Ստացված դիմումների ու բողոքների ուսումնասիրության ու քննության, ՄԻՊ աշխատակազմում իրականացված մշտադիտարկումների արդյունքները ցույց են տալիս, որ կանանց նկատմամբ ընտանեկան ու կենցաղային բռնության հիմնական պատճառներից են կանանց իրավունքների վերաբերյալ հասարակությունում արմատավորված կարծրատիպերը: Կարծրատիպային մոտեցումները նաև բացասաբար են ազդում բռնության ենթարկված անձի կողմից բռնության դեպքերի մասին բարձրաձայնելու և իր իրավունքների պաշտպանության համար քայլեր ձեռնարկելու, ինչպես նաև բռնության կանխարգելման հարցերում: Դիմումների ու բողոքների ուսումնասիրությունն ու քննությունը ցույց են տալիս, որ խտրական մոտեցումներն ու կարծրատիպերն արմատավորված են ողջ հասարակությունում՝ ընդգրկելով հասարակության բոլոր շերտերը: Ընդ որում, խիստ մտահոգիչ է այն, որ շարունակում են արդիական մնալ նաև իրավասու պետական մարմինների այն ներկայացուցիչների կողմից կարծրատիպային մոտեցումների դրսևորումները, ովքեր պատասխանատու են բռնության դեպքերի կանխարգելման ու արձագանքման համար: Ուսումնասիրությունը նաև ցույց է տալիս, որ բռնության ենթարկված անձի կողմից բռնության դեպքերի մասին չբարձրաձայնելու և իր իրավունքների պաշտպանության համար քայլեր չձեռնարկելու պատճառներից մեկն էլ պետության կողմից տրամադրվող ծառայությունների վերաբերյալ իրազեկվածության ցածր մակարդակն է:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2025թ. ապրիլի 23-ին ՀՀ կառավարության 482-Լ որոշմամբ ընդունվել է «Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման 2025-2028 թվականների ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումը, որի նպատակն է հանրային կյանքի բոլոր ոլորտներում կանանց և տղամարդկանց հավասար հնարավորությունների և իրավունքների իրացման համար բարենպաստ միջավայրի ձևավորումը:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2025 թվականին ապահովվել են առաջնային օղակի մասնագետների, իրավապահ համակարգի ներկայացուցիչների, տեղական ինքնակառավարման մարմինների բնակչության հետ անմիջական կապի մեջ գտնվող մասնագետների գենդերային հավասարության, գենդերազգայուն մոտեցումների, ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման, ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց աջակցության և պաշտպանության մեխանիզմների վերաբերյալ շարունակական վերապատրաստումները, իրականացվել են նաև լայնածավալ իրազեկման միջոցառումներ՝ մարզային և համայնքային մակարդակներում:

Ներքին գործերի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2025 թվականի ընթացքում ՀՀ ՆԳՆ կրթահամալիրում կազմակերպվել և իրականացվել են վերապատրաստման դասընթացներ՝ ՀՀ ՆԳՆ ոստիկանության համայնքային

ոստիկանության գլխավոր վարչության և ենթակա ստորաբաժանումների 1.517 ծառայողի և Պարեկային ծառայության 400 ծառայողի համար և այլն:

Չնայած պետության կողմից ձեռնարկված միջոցներին՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ կանանց իրավունքների վերաբերյալ հասարակությունում ու իրավասու մարմինների ներկայացուցիչների շրջանում արմատավորված կարծրատիպերի, իրազեկվածության ցածր մակարդակի հետ կապված խնդիրները շարունակում են մնալ արդիական:

2025 թվականին շարունակել են արձանագրվել նաև ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց անվտանգությունը և պաշտպանությունը, նրանց իրավունքների և օրինական շահերի ապահովման համար ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց աջակցության տրամադրումն արդյունավետորեն երաշխավորելու հետ կապված խնդիրներ:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2025 թվականին ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց աջակցման ծառայություններից օգտվել է 2137 անձ, որից 1444 կին, ապաստարանի ծառայությունից օգտվել է 196 անձ, որից 79-ը կին, միանվագ դրամական աջակցություն է տրամադրվել 94 անձի: Տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2024-2025թթ. ընթացքում էականորեն բարձրացել է միանվագ դրամական աջակցության չափը: Ըստ տրամադրված տեղեկատվության՝ 2025 թվականին համաֆինանսավորվել են ապաստարաններ:

2025 թվականին ընդունվել է ՀՀ կառավարության «Ընտանեկան և կենցաղային բռնության դեպքերի հայտնաբերման, ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց ուղղորդման, ընտանեկան և կենցաղային բռնության դեպքի կրկնման ռիսկի գնահատման կարգը հաստատելու մասին» որոշումը, որի շրջանակներում անդրադարձ է կատարվում նաև իրավասու մարմինների միջև համագործակցությանը: 2025 թվականին ընդունվել է նաև ՀՀ կառավարության «Ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկվածներին ժամանակավոր աջակցության հաշվեհամարի բացման և տնօրինման կարգը սահմանելու մասին» որոշումը:

Մինչդեռ՝ 2025 թվականին, ի թիվս այլնի, շարունակել են արդիական մնալ ՀՀ բոլոր բնակավայրերում ապաստարանների հասանելիության ու մատչելիության, իրավասու մարմինների միջև պատշաճ համագործակցության երաշխավորման հետ կապված խնդիրները:

Չնայած պետության կողմից ձեռնարկված միջոցներին՝ Պաշտպանը կարևորում է ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց անվտանգության ու պաշտպանության, նրանց իրավունքների և օրինական շահերի ապահովման համար ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց աջակցության տրամադրման, այդ թվում՝ փոխհատուցման մեխանիզմների արդյունավետության բարձրացմանն ուղղված շարունակական աշխատանքների իրականացումն ու գործնականում իրավասու մարմինների միջև պատշաճ համագործակցության ձևավորումը:

Մարդու իրավունքների պաշտպանը կարևորում է նաև ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձանց համար ռեաբիլիտացման ծրագրերի իրականացումը:

Հատկանշական է, որ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ ՀՀ-ում ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձանց ռեաբիլիտացման ծրագիրը, համաձայն ՀՀ

կառավարության 2025թ. հունվարի 16-ի N 35-Ն որոշման, մեկնարկել է 2026թ. հունվարի 1-ից:

2025 թվականին շարունակել են արդիական մնալ վիճակագրական տվյալների մշակման, օրենսդրական թերի կարգավորումների հետ կապված նախկինում արձանագրված խնդիրները:

Այսպես, օրինակ, Ներքին գործերի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ ընտանեկան և կենցաղային բռնության տեսակների՝ բռնության ենթարկված անձանց սեռատարիքային կենտրոնացված հաշվառում ՀՀ ՆԳՆ ոստիկանությունում չի իրականացվում: «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անգործունակ անձի նկատմամբ անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական որոշումներ չեն կայացվում և այլն:

Միաժամանակ, խիստ մտահոգիչ է այն, որ «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման ու դրա դեմ պայքարի մասին» ԵՄ կոնվենցիան ՀՀ կողմից ստորագրվել է 2018թ. հունվարի 18-ին, սակայն դեռևս չի վավերացվել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***գործուն միջոցներ ձեռնարկել՝ ուղղված կանանց իրավունքների վերաբերյալ հասարակությունում ու իրավասու մարմինների ներկայացուցիչների շրջանում արմատավորված կարծրատիպերի, իրազեկվածության ցածր մակարդակի հետ կապված խնդիրների հաղթահարմանը,***
- ✓ ***միջոցներ ձեռնարկել՝ երաշխավորելու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց անվտանգության ու պաշտպանության, նրանց իրավունքների և օրինական շահերի ապահովման համար ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց աջակցության տրամադրման, այդ թվում փոխհատուցման մեխանիզմների արդյունավետության բարձրացմանն ու գործնականում իրավասու մարմինների միջև պատշաճ համագործակցության ձևավորմանն ուղղված շարունակական աշխատանքների իրականացումը,***
- ✓ ***գործնականում երաշխավորել ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձանց համար ռեաբիլիտացման ծրագրերի իրականացումը,***
- ✓ ***միջոցներ ձեռնարկել ամբողջական ու համապարփակ վիճակագրական տվյալների մշակումը երաշխավորելու ուղղությամբ,***
- ✓ ***միջոցներ ձեռնարկել օրենսդրական թերի կարգավորումների առնչությամբ փոփոխություններ իրականացնելու ուղղությամբ,***
- ✓ ***վավերացնել «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման ու դրա դեմ պայքարի մասին» ԵՄ կոնվենցիան:***

2. Քաղաքական ու հասարակական կյանքին կանանց մասնակցությունը երաշխավորելու հետ կապված խնդիրներ

Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկման արդյունքները ցույց են տալիս, որ 2025 թվականին շարունակել են արդիական մնալ հասարակական ու քաղաքական կյանքում կանանց լիարժեք մասնակցության ու ներգրավվածության երաշխավորման հետ կապված խնդիրները:

Հայաստանի Հանրապետությունում կանանց կողմից որոշումների կայացման գործընթացում ու հասարակական կյանքում նրանց ոչ բավարար ներգրավվածության մասին են վկայում նաև պետական մարմիններում աշխատողների սեռային հարաբերակցության վերաբերյալ տվյալները:

Այսպես, օրինակ, տրամադրված տեղեկատվության համաձայն՝ քաղաքացիական ծառայության ղեկավար պաշտոններում գերակշռում են տղամարդիկ, մինչդեռ՝ կանայք զգալի թիվ են կազմում քաղաքացիական ծառայության մասնագիտական պաշտոններում:





Ստացվում է՝ չնայած քաղաքացիական ծառայության ոլորտում գրանցած հաջողություններին, այնուամենայնիվ, կանանց և տղամարդկանց հավասար ներկայացվածությունը ղեկավար պաշտոններում ապահովված չէ:

Պաշտպանի աշխատակազմին տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2025 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության դատական համակարգում պաշտոնավարում է 320 դատավոր, որոնցից 108-ը՝ կին, որը կազմում է պաշտոնավարող դատավորների թվաքանակի 33.75%-ը:

Ըստ Բարձրագույն դատական խորհրդի՝ 2025 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ պաշտոնավարող կին դատավորների թվաքանակն՝ ըստ առանձնացված դատարանների հետևյալն է.

Վճռաբեկ դատարանում դատավորների սեռային համամասնությունը.



Վերաքննիչ դատարանում դատավորների սեռային համամասնությունը.



Վարչական դատարանում դատավորների սեռային համամասնությունը.



Սնանկության դատարանում պաշտոնավարող դատավորների սեռային համամասնությունը.



Հակակոռուպցիոն դատարանում պաշտոնավարող դատավորների սեռային համամասնությունը.

ՀՀ մարզերում գործող առաջին ատյանի ընդհանուր իրավասության

դատարաններում դատավորների սեռային համամասնությունը.





Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավորների սեռային համամասնությունը



Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատավորների սեռային համամասնությունը



Միաժամանակ, տեղեկացվել է, որ 2025 թվականի ընթացքում դատական համակարգը համալրվել է թվով 12 պաշտոնավարող դատավորով, որոնցից 6-ը կին են, 6-ը՝ տղամարդ:

Գլխավոր դատախազության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ Գլխավոր դատախազի 5 տեղակալներից 1-ը կին է, ինչպես նաև ՀՀ գլխավոր դատախազության 13 վարչություններից 2-ի ղեկավարները կանայք են: 2017-2021 թթ. ծառայողական առաջխաղացման կարգով պաշտոնի է նշանակվել 15 կին դատախազ, մինչդեռ՝ միայն 2023-2025 թվականներին ծառայողական առաջխաղացման կարգով պաշտոնի է նշանակվել 35 կին դատախազ: Ըստ տրամադրած տեղեկատվության՝ ՀՀ դատախազության համակարգում աշխատում է 98 կին դատախազ, որը կազմում է դատախազների ընդհանուր թվի 27 տոկոսը:

ՀՀ դատախազության համակարգում կին դատախազների թիվը՝ ըստ պաշտոնների (2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ)



ՀՀ զինվորական դատախազությունում կին դատախազների թիվը՝ ըստ պաշտոնների (2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ)



Երևան քաղաքի և վարչական շրջանների դատախազների ընդհանուր թվի կին դատախազների թիվը՝ ըստ պաշտոնների (2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ)



Մարզերի դատախազների ընդհանուր թվի կին դատախազների թիվն՝ ըստ պաշտոնների (2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ)



8-րդ գումարման Ազգային ժողովի պատգամավորների սեռային համամասնությունը



Ազգային ժողովի աշխատակիցների սեռային համամասնությունը



Նախարարների սեռային համամասնություն



ՀՀ ՆԳՆ ոստիկանության ծառայողների սեռային համամասնությունը



Այսպիսով, վերը նշված տվյալների, ինչպես նաև ՄԻՊ աշխատակազմին պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրամադրված այլ տեղեկությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ պետական և տեղական ինքնակառավարման տարբեր մարմիններում կանանց ներկայացվածության մակարդակը շարունակում է մնալ մտահոգիչ, հատկապես, ղեկավար պաշտոններում: Հասարակական ու քաղաքական կյանքում կանանց լիարժեք մասնակցությանն ու ներգրավվածությանը խոչընդոտող գործոնները տարբեր են: Դրանք կարող են դրսևորվել, օրինակ, կանանց դերի, կարողությունների և հասարակական կյանքում նրանց ներգրավվածության շուրջ առկա կարծրատիպերի ու խտրական ընկալումների ձևով:

Իրավասու մարմինների տրամադրած տեղեկատվության համաձայն՝ նշված խնդրի առնչությամբ իրականացվել են մի շարք միջոցառումներ:

Այսպես, օրինակ, Վարչապետի աշխատակազմի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ 2025 թվականի մարտի 14-15-ին տեղի է ունեցել Քաղաքացիական ծառայության գրասենյակի և ՄԱԶԾ հայաստանյան գրասենյակի կողմից համատեղ կազմակերպված «Հանրային կառավարման բարեփոխումների և ներառական գործելակերպի համատեքստում հանրային ծառայության արդի հիմնախնդիրների քննարկում» խորագրով գլխավոր քարտուղարների համաժողովը՝ վարչապետի աշխատակազմի ներկայացուցիչների և մարզպետների աշխատակազմերի գլխավոր քարտուղարների մասնակցությամբ: Համաժողովի ընթացքում, ի թիվս այլնի՝ կարևորվել են գենդերային հավասարության սկզբունքները, հատկապես քաղաքացիական ծառայության բարձր պաշտոններում կանանց ներգրավվածության խթանման հարցերը: Ըստ ներկայացված տեղեկատվության՝ 2024 թվականից ՄԱԶԾ հայաստանյան գրասենյակի Գենդերային հավասարության պորտֆելի կողմից իրականացվում են մի շարք աշխատանքներ, ինչպես նաև Քաղաքացիական ծառայության գրասենյակի հետ միասին մշակվել և ՔԾԳ կայքէջ են տեղադրվել գենդերազգայունության վերաբերյալ վերապատրաստման մոդուլներ, որոնք նախատեսված են քաղաքացիական ծառայողների համար և միտված են խթանելու պետական կառավարման համակարգում գենդերային հավասարությունն ու վերացնելու սեռով պայմանավորված խտրական վերաբերմունքը:

Ըստ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության՝ ՀՀ համայնքներում իրականացվել են գենդերային քաղաքականության ամրապնդմանն ուղղված մի շարք միջոցառումներ, հանդիպումներ կանանց հետ, աշխատանքներ են իրականացվել համայնքային կյանքում կանանց ակտիվացնելու և որոշումների կայացման գործընթացներում ներառելու ուղղությամբ:

Գլխավոր դատախազության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2025 թվականի ընթացքում Արդարադատության ակադեմիայում իրականացվել են մի շարք վերապատրաստման դասընթացներ, որոնք, ի թիվս այլնի, վերաբերել են կանանց նկատմամբ բռնությանը և ընտանեկան բռնությանը, նմանատիպ դեպքերի կանխարգելմանը, դատավորների, դատախազների և քննիչների գործունեության միջոցով գենդերային հավասարության ապահովման հիմնահարցերին, ինչպես նաև խոցելի խմբերի հետ տարվող աշխատանքների վերաբերյալ մի շարք այլ թեմաների:

Չնայած ոլորտում իրականացված աշխատանքներին՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ շարունակում է արդիական մնալ հասարակական ու քաղաքական կյանքում կանանց լիարժեք մասնակցությանն ու ներգրավվածությանը խոչընդոտող գործոնների հաղթահարման առնչությամբ շարունակական միջոցների ձեռնարկման անհրաժեշտությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ***շարունակել հասարակության համար իրականացնել իրազեկման աշխատանքներ՝ նպատակ ունենալով ապահովել կանանց քաղաքական ներգրավվածությունը և հասարակական կյանքին մասնակցությունը,***
- ***ստեղծել այնպիսի կառուցակարգեր, որոնք կհանգեցնեն կանանց ներուժի լիարժեք, արդյունավետ և թիրախային օգտագործմանը: Վերոգրյալի համատեքստում՝ կազմակերպել կանանց մասնակցությունը և իրազեկվածության մակարդակը բարձրացնող միջոցառումներ, իրականացնել կանանց առաջնորդության ծրագրեր, նախատեսել համապատասխան քվոտաներ և այլն,***

✓ *բարձրացնել կանանց քաղաքական և իրավական գիտակցության մակարդակը, նպաստել երիտասարդ կանանց մոտ քաղաքական համակարգի, գործընթացների և արդյունավետ որոշումների ընդունման մեթոդաբանության վերաբերյալ մասնագիտական գիտելիքների և հմտությունների զարգացմանը,*

✓ *զանգվածային լրատվության միջոցների, տարբեր քննարկումների և սեմինարների շարունակական իրականացման միջոցով կանանց իրազեկել իրենց իրավունքների վերաբերյալ՝ նպաստելով հասարակության կարծրատիպային մտածելակերպի փոփոխմանը,*

✓ *ապահովել ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի՝ Հայաստանի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումների ամբողջական կատարումը,*

✓ *կրթական ծրագրերում կիրառել գենդերային հավասարության, կանանց դերի վերարժևորման և կարծրատիպերի վերացմանն ուղղված մոտեցումներ:*

3. Առողջության պահպանման իրավունքի սահմանափակման հետ կապված խնդիրներ

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում իրականացված մշտադիտարկման արդյունքները ցույց են տալիս, որ 2025 թվականին շարունակել են արդիական մնալ կանանց համար առողջության պահպանման իրավունքի սահմանափակման հետ կապված նախկին տարեկան հաղորդումներում բարձրացված խնդիրները[203]:

Այսպես, օրինակ, 2025 թվականին շարունակել է արդիական մնալ առանձին բժշկական ծառայությունների հասանելիության, հաշմանդամություն ունեցող անձանց համար բժշկական ծառայությունների մատչելիության, մատչելի տեղեկատվության տրամադրման, բժշկական գաղտնիքի պահպանումը երաշխավորելու, բուժաշխատողների կողմից գենդերազգայուն մոտեցումների կիրառումը երաշխավորելու, նրանց իրազեկվածության մակարդակի բարձրացման հետ կապված խնդիրները: Կանանց առողջության պահպանման իրավունքի հետ կապված մի շարք այլ խնդիրների անդրադարձ է կատարվում սույն տարեկան հաղորդման համապատասխան բաժիններում:

Առողջապահության նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2025 թվականին կանանց առողջապահական իրավունքի վերաբերյալ ընտանեկան բժիշկների, մանկաբարձ-գինեկոլոգների և այլ բուժաշխատողների համար իրականացվել են իրազեկման աշխատանքներ, դասընթացներ, կրեդիտավորված միջոցառումներ՝ կանանց առողջապահական ծառայությունների մատուցում իրականացնող բուժաշխատողների մասնագիտական գիտելիքները և հմտությունները կատարելագործելու նպատակով: Միջոցառումները կազմակերպվել են նաև հասարակական կազմակերպությունների հետ համագործակցությամբ:

Պաշտպանն ընդգծում է, որ չնայած կանանց առողջության պահպանման իրավունքի ապահովման ուղղությամբ իրականացված քայլերին՝ անհրաժեշտ է ձեռնարկել առավել գործուն ու համակարգային լուծումներ ենթադրող աշխատանքներ՝ ուղղված կանանց առողջության պահպանման իրավունքի սահմանափակման հետ կապված խոչընդոտների վերացմանը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***միջոցներ ձեռնարկել՝ երաշխավորելու բոլոր բժշկական ծառայությունների հասանելիությունն ու մատչելիությունը, մատչելի տեղեկատվության տրամադրումը, բժշկական գաղտնիքի պահպանումը,***
- ✓ ***բարձրացնել կանանց առողջապահական ծառայությունների վերաբերյալ ծառայությունների մատուցում իրականացնող բուժաշխատողների մասնագիտական գիտելիքները և հմտությունները՝ ՀՀ ամբողջ տարածքում շարունակական վերապատրաստումներ, դասընթացներ իրականացնելով և երաշխավորելով բժշկական ծառայությունների պատշաճ իրականացումը՝ առանց որևէ խտրականության,***
- ✓ ***կանանց առողջության պահպանման իրավունքի վերաբերյալ շարունակաբար իրականացնել իրազեկման արշավներ՝ ընդգրկելով ՀՀ ամբողջ տարածքը:***

---

[203] Տե՛ս 2024 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջեր 375-380, հասանելի է https://ombuds.am/images/files/4d1335361f1f7e9fbcc1cfc10679701e.pdf հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

ԲԱԺԻՆ 6. ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությունը Մարդու իրավունքների պաշտպանի առաջնահերթություններից է:

2025 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանը, որպես «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի՝ 2006 թվականի դեկտեմբերի 13-ին ընդունված կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկում իրականացնող պաշտոնատար անձ, շարունակել է հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանն ուղղված տարբեր ձևաչափերով աշխատանքների իրականացումը՝ այդ գործընթացում ընդգրկելով հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպություններին:

2025 թվականի ընթացքում իրականացվել են մի շարք մշտադիտարկման չհայտարարված այցեր, իրավասու մարմիններ են ներկայացվել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներին առնչվող իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ բազմաթիվ առաջարկություններ, տեղի են ունեցել հաշմանդամություն ունեցող անձանց, նրանց իրավունքների պաշտպանության հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների հետ հանդիպումներ, իրականացվել են լայնածավալ իրազեկման միջոցառումներ, որոնք կազմակերպվել են տարբեր ուսումնական հաստատությունների սաների, ոլորտի հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների և հաշմանդամություն ունեցող անձանց համար, քննարկվել են հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության առնչությամբ ներկայացված դիմումներն ու բողոքները, իրականացվել են մշտադիտարկման այլ աշխատանքներ:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը ինչպես Երևանում, այնպես էլ Հայաստանի բոլոր մարզերում, շուրջ 3 տասնյակ մշտադիտարկման այց է իրականացրել՝ տեղամասային կենտրոնների, ուսումնական հաստատությունների, հանրային տրանսպորտի և այլ շինությունների, ինչպես նաև ընտրական գործընթացի՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիությունը դիտարկելու նպատակով: Ի տարբերություն նախկինում իրականացված մշտադիտարկման այցերի՝ նշված այցերի մեծամասնությանը ներգրավված են եղել նաև հաշմանդամություն ունեցող անձինք և նրանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Հատկանշական է, որ մշտադիտարկման այցերն իրականացվել են համընդհանուր դիզայնի սկզբունքներին տիրապետող փորձագետի մասնակցությամբ, ով ոլորտում ունի համապատասխան փորձառություն, ճարտարապետություն և դիզայն մասնագիտությամբ բարձրագույն կրթություն:

Այսպես, օրինակ, այցեր են իրականացվել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Նորք» շուրջօրյա խնամքի կենտրոն ՊՈԱԿ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ, ՀՀ Արագածոտնի մարզի «Օհանավանի Ս. Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ, այլ դպրոցներ և հաստատություններ: Մշտադիտարկման չհայտարարված այցերի ընթացքում արձանագրվել են մի շարք համակարգային և հրատապ լուծումներ պահանջող խնդիրներ, որոնց վերաբերյալ տեղեկատվությունն ու դրանց լուծմանն ուղղված առաջարկությունները ներկայացվել են իրավասու մարմիններին:

2025 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանը հանդես է եկել նաև հրապարակային հայտարարություններով՝ արձագանքելով հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներին առնչվող տարբեր խնդրահարույց իրավիճակներին:

2025 թվականի ընթացքում ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոմիտեին ներկայացվել է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների կիրառության վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանի այլընտրանքային զեկույցը:

Մարդու իրավունքների պաշտպանը 2025 թվականի մարտի 25-ին Ժնևում մասնակցել է Միավորված ազգերի կազմակերպության Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նախանիստին, որտեղ ներկայացրել է Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներին վերաբերելի հարցերն ու խնդիրները: Նշված խնդիրներն ու դրանց լուծմանն ուղղված առաջարկությունները Կոմիտեին ներկայացվել են նաև «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների կիրառության վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանի այլընտրանքային զեկույցի շրջանակներում:[204]

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչը Ժնևում 2025 թվականի մարտի 11-ին և 12-ին մասնակցել է Մարդու իրավունքների ազգային ինստիտուտների գլոբալ դաշինքի (GANHRI) ամենամյա նիստի շրջանակներում անցկացված Գլխավոր վեհաժողովին, ինչպես նաև միջազգային համաժողովին՝ նվիրված կանանց և աղջիկների իրավունքներին ու գենդերային հավասարության խթանմանը: ՄԻՊ աշխատակազմի ներկայացուցիչը, ի թիվս այլնի, ընդգծել է հաշմանդամություն ունեցող անձանց՝ իրենց իրավունքներին առնչվող ռազմավարական փաստաթղթերի ու քաղաքականությունների մշակման գործընթացում արդյունավետ մասնակցության ու լսված լինելու կարևորությունը: Այս տեսանկյունից, իբրև դրական փորձ, ներկայացվել է Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության հարցերով հասարակական խորհրդի ակտիվ ներգրավվածությունը:

2025 թվականի դեկտեմբերի 25-ին հրապարակվել է նաև արտահերթ զեկույց՝ «Ուսումնական հաստատությունների կառուցման, վերակառուցման և հիմնանորոգման գործընթացում հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության սկզբունքների ապահովման հետ կապված առանձին խնդիրները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ:[205]

Մարդու իրավունքների պաշտպանը խիստ կարևորում է հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպությունների մասնակցության երաշխավորումը հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներին առնչվող իրավական ակտերի նախագծերի, ինչպես նաև Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից մշակվող զեկույցների վերաբերյալ առաջարկությունների ներկայացման գործընթացում: Այդ նպատակով 2025 թվականին Պաշտպանը շարունակել է նշված գործընթացում ներգրավել Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության հարցերով հասարակական խորհրդի անդամներին:

---

204 Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3324 հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:
205 Արտահերթ զեկույցը հասանելի է https://ombuds.am/images/files/4f3d6140d2ad70eb60739fa4eb5689a8.pdf հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

2025 թվականի հունվարի 29-ին տեղի է ունեցել նաև Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության հարցերով հասարակական խորհրդի հերթական առցանց նիստը, որի ընթացքում քննարկվել է Պաշտպանի կողմից «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկման շրջանակներում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոմիտեին ներկայացվող զեկույցը: Զեկույցի շրջանակում բարձրացված հարցերի առնչությամբ խորհրդի անդամները ներկայացրել են իրենց մտահոգություններն ու առաջարկությունները, որոնք ամփոփվել, ներառվել են զեկույցում և ներկայացվել են Կոմիտեին:

Հարկ է նշել նաև, որ 2025 թվականի դեկտեմբերի 29-ին տեղի է ունեցել Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության հարցերով հասարակական խորհրդի հերթական առցանց նիստը, որի ընթացքում քննարկվել են 2025 թվականի ընթացքում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության ոլորտում Մարդու իրավունքների պաշտպանի և Խորհրդի կողմից արձանագրված խնդիրները և դրանց լուծմանն ուղղված առաջարկությունները՝ 2025 թվականի Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդման մեջ ամփոփելու նպատակով:

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և նրանց առնչությամբ կարծրատիպերի հաղթահարման առումով բեկումնային նշանակություն ունեցավ Մարդու իրավունքների պաշտպանի դիմումը Սահմանադրական դատարան և Սահմանադրական դատարանի որոշումը, որով հակասահմանադրական ճանաչվեցին երկու ականջի կայուն լրիվ խլություն կամ խուլհամրություն ու երկու աչքերի (բինօկուլյար) կուրություն ունեցող անձանց համար դատավորի պաշտոնում նշանակվելու բացարձակ արգելքը սահմանող իրավական կարգավորումները: Արդյունքում, վերոնշյալ անձինք իրավական հնարավորություն կստանան դառնալու դատավորի թեկնածու:[206] Նշված հանգամանքը բեկումնային նշանակություն ունի մեր հասարակության համար, որտեղ արմատացած են հաշմանդամություն ունեցող անձանց առնչությամբ բազմաթիվ խորքային կարծրատիպեր:

2025 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանը պարբերաբար հանդիպումներ և քննարկումներ է ունեցել հաշմանդամություն ունեցող անձանց հետ, լսել է նրանց խնդիրներն ու իրազեկել նրանց իրենց իրավունքների վերաբերյալ: Այսպես, օրինակ, Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանը 2025 թվականի փետրվարի 27-ին այցելել է «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ում գործող «Ճախրուկ» մշակութային կենտրոն, 2025 նոյեմբերի 17-ին

[206] Սահմանադրական դատարանի որոշումը հասանելի է https://www.concourt.am/decision/decisions/68cd5259cee90_SDV-1796.pdf հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

Լոռու մարզ կատարած աշխատանքային այցի շրջանակում Պաշտպանն այցելել է «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» հասարակական կազմակերպության գրասենյակ և հանդիպել կազմակերպության շահառուների հետ, 2025 թվականի սեպտեմբերի 28-ին մասնակցել է «Ճախրուկ» ամենամյա միջազգային 5-րդ հոբելյանական փառատոնին: Մարդու իրավունքների պաշտպանը Ամանորի տոների կապակցությամբ այցելել է նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Մարի Իզմիրլյանի անվան խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություն, որտեղ խնամք են ստանում նաև հաշմանդամություն ունեցող անձինք: Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները 2025 թվականի հոկտեմբերի 10-ին Շիրակի մարզում հերթական հանդիպումն են ունեցել հաշմանդամություն ունեցող անձանց հետ, որը կազմակերպվել էր Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության հարցերով հասարակական խորհրդի անդամների, Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Ագաթ» հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանության կենտրոն հասարակական կազմակերպության հետ համատեղ:

Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր գործում է նաև երեխաների իրավունքների պաշտպանության հարցերով զբաղվող հասարակական խորհուրդը, որի կազմում ընդգրկված են նաև հաշմանդամություն ունեցող երեխաներ, ովքեր 2025 թվականին շարունակել են ակտիվորեն աջակցել Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկման աշխատանքներին, ոլորտում առկա խնդիրների վերհանմանը, իրազեկման աշխատանքների իրականացմանը, զեկույցների մշակմանը և այլն: 2025 թվականի նոյեմբերի 28-ին Մարդու իրավունքների պաշտպանի գլխավորությամբ ՄԻՊ-ին առընթեր երեխաների իրավունքների պաշտպանության հարցերով հասարակական խորհրդի և խորհրդին կից աշխատանքային խմբի անդամները, ինչպես նաև ՀՀ տարբեր բնակավայրերից մի շարք երեխաներ և երիտասարդներ հանդիպում են ունեցել Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ:

2025 թվականի ընթացքում կազմակերպվել են մի շարք միջոցառումներ, որոնք, ի թիվս այլնի, ուղղված են եղել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների վերաբերյալ հարցերի բարձրացմանն ու քննարկմանը միջազգային հարթակներում: Այսպես, օրինակ, Մարդու իրավունքների պաշտպանի նախաձեռնությամբ և Ռաուլ Վալենբերգի մարդու իրավունքների և մարդասիրական իրավունքի ինստիտուտի աջակցությամբ 2025 թվականի դեկտեմբերի 1-ին տեղի է ունեցել «Մատչելիություն: Ոչինչ մեր մասին՝ առանց մեզ» թեմայով համաժողովը, որը նվիրված էր Հաշմանդամություն ունեցող անձանց միջազգային օրվան:

2025 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանը և ՄԻՊ աշխատակազմը մասնակցել են նաև հաշմանդամություն ունեցող անձանց կողմից կամ նրանց ներգրավմամբ կազմակերպվող բազմաթիվ միջոցառումների: Այսպես, օրինակ, 2025 թվականի հոկտեմբերի 22-ին Պաշտպանը մասնակցել է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և ծառայությունների վերաբերյալ» ազգային համաժողովին, 2025 թվականի հոկտեմբերի 28-ին Պաշտպանը մասնակցել է «Արդարադատության մատչելիություն հաշմանդամություն ունեցող անձանց համար» խորագրով միջոցառմանը, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կոնվենցիոն մանդատների ապահովման վարչության ներկայացուցիչը 2025 թվականի նոյեմբերի 26-ին մասնակցել է Երևանի թիվ 3 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի և «Ներառում Հայաստան» հասարակական կազմակերպության նախաձեռնությամբ կազմակերպված «Ներառականությունը որպես անվտանգ և ապահով

կրթական միջավայրի հիմք» խորագրով աշխատաժողովին, իսկ 2025 թվականի դեկտեմբերի 13-ին՝ ոլորտում գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպության նախաձեռնությամբ կազմակերպված սեղանի թենիսի «Հավասարը՝ հավասարին» բաց առաջնությանը և այլն:

Մարդու իրավունքների պաշտպանը «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի՝ կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկումն իրականացնում է առանձնացված ստորաբաժանման՝ Կոնվենցիոն մանդատների ապահովման վարչության հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության բաժնի միջոցով: Այդ կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանը խիստ կարևորում է նաև բաժնի կարողությունների շարունակական զարգացումը, որի ուղղությամբ 2025 թվականին իրականացվել են մի շարք միջոցառումներ: Այսպես, օրինակ, 2025 թվականի նոյեմբերի 21-ին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կոնվենցիոն մանդատների ապահովման վարչության ներկայացուցիչները մասնակցել են Մարդու իրավունքների պաշտպանի կողմից և Ռաուլ Վալենբերգի մարդու իրավունքների և մարդասիրական իրավունքի ինստիտուտի աջակցությամբ կազմակերպված «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի ներպետական կիրարկումը և վերահսկումը» խորագրով աշխատաժողովին, որի նպատակն էր քարտեզագրել Մարդու իրավունքների պաշտպանի գործառույթները՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի շրջանակում (CRPD մանդատ), և ամրապնդել Պաշտպանի դերը հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մշտադիտարկման, պաշտպանության և խթանման գործընթացում:

2025 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանը ստացել է հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների վերաբերյալ 654 դիմումներ ու բողոքներ: Հոգեկան առողջության հետ կապված խնդիրներ ունեցող անձանց իրավունքների վերաբերյալ ստացվել են 332 դիմումներ ու բողոքներ:

ԳԼՈՒԽ 1. ԱՆԿԱԽ ԱՊՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՆԵՐԱՌՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման, խթանման և պաշտպանության պետական քաղաքականության հիմնական ուղղություններից են համայնքներում մատչելի ծառայությունների ստեղծումն ու զարգացումը, հաշմանդամություն ունեցող անձանց անկախ կյանքի, համայնքում ներառվելու, ընտանեկան կամ դրան մոտ միջավայր ապահովելու համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը և դրանց բարելավումը, հաշմանդամություն ունեցող անձանց համար սոցիալական ներառմանը միտված միջոցառումների, մատուցվող ծառայությունների և տրամադրվող աջակցող միջոցների մատչելիության, հասանելիության և հասցեականության ապահովումը, հաշմանդամություն ունեցող անձանց համար աջակցող միջոցների ստեղծման և զարգացման խթանումը, աջակցող միջոցների, այդ թվում՝ ծառայությունների ստեղծմանը և կիրառմանը միտված ծրագրերի (միջոցառումների) իրականացումը, աջակցող միջոցների վերաբերյալ տեղեկությունների մատչելիության և հասանելիության ապահովումը, շուրջօրյա խնամքի հաստատությունների ապաինստիտուցիոնալացումը, խնամքի ծառայությունների՝ համայնքահեն ծառայություններով փոխակերպումը:

Հաշմանդամություն ունեցող անձանց անկախ ապրելու և համայնքում ներառվելու իրավունքը սահմանվել է միջազգային մի շարք փաստաթղթերում և ներպետական օրենսդրությամբ, մասնավորապես՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայում, դրան վերաբերող մեկնաբանություններում, «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքում, ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերում և այլն:

Հաշմանդամություն ունեցող անձանց մատուցվող ծառայությունների բարելավումը, խնամքի ծառայությունների փոխակերպումը և անկախ կյանքի ապահովումը, որպես առաջնահերթություն է նախանշվել նաև ՀՀ կառավարության 2023 թվականի հունիսի 8-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2023-2027 թվականների համալիր ծրագիրը և ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» թիվ 943-Լ որոշմամբ:

Մինչդեռ՝ Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկումները, ստացված գրավոր և բանավոր դիմում-բողոքները, այդ թվում՝ թեժ գծի հեռախոսահամարին ստացված ահազանգերը վկայում են, որ հաշմանդամություն ունեցող անձանց անկախ ապրելու և համայնքում ներառվելու իրավունքի ապահովման տեսանկյունից շարունակում են արդիական մնալ մի շարք համակարգային խնդիրներ, որոնց անդրադարձ է կատարվել

նաև նախորդ տարիների տարեկան հաղորդումներում[207] և արտահերթ հրապարակային զեկույցում[208]:

Մարդու իրավունքների պաշտպանն, ի թիվս այլնի, արձանագրել է.

- ապահինստիտուցիոնալացման ապահովման, հաշմանդամություն ունեցող անձի անկախ կյանքի հմտությունների զարգացմանն ուղղված, համայնքահեն ծառայությունների տրամադրման հետ կապված խնդիրներ,
- անձին հաշմանդամություն ունեցող անձ ճանաչելու գործընթացի, գնահատման արդյունքում յուրաքանչյուր անձի կարիքից բխող հասցեական ծառայությունների և աջակցող միջոցների տրամադրման հետ կապված խնդիրներ,
- հաշմանդամություն ունեցող անձանց՝ իրենց վերաբերելի հարցերում անձամբ որոշումներ կայացնելու իրավունքն ապահովելու հետ կապված խնդիրներ:

Անկախ ապրելու և համայնքում ներառվելու իրավունքի ապահովման տեսանկյունից Մարդու իրավունքների պաշտպանը կարևորում է կյանքի բոլոր ոլորտներում մատչելիության երաշխավորումը, որի առնչությամբ արձանագրված խնդիրներին ավելի մանրամասն անդրադարձ է կատարվել տարեկան հաղորդման սույն բաժնի այլ գլուխների շրջանակում:

1. Ապահինստիտուցիոնալացման ապահովման, հաշմանդամություն ունեցող անձի անկախ կյանքի հմտությունների զարգացմանն ուղղված, համայնքահեն ծառայությունների տրամադրման հետ կապված խնդիրներ

Հաշմանդամություն ունեցող անձանց անկախ ապրելու և համայնքում ներառվելու իրավունքը հնարավոր է երաշխավորել միայն ցանկացած տեսակի հաստատություններից դուրս ապրելու իրական հնարավորության ապահովմամբ:

Մինչդեռ՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող բազմաթիվ անձինք շարունակում են խնամք ստանալ բնակչության սոցիալական պաշտպանության շուրջօրյա խնամք տրամադրող հաստատություններում: Ավելին, հաշմանդամություն ունեցող անձանց

---

[207] Տե՛ս 2020 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 1376-1385, հասանելի է https://www.ombuds.am/images/files/883f55af65e3c33553139031c7ac0ce6.pdf հղումով, 2026 թվականի հունվարի 20-ի դրությամբ: Տե՛ս նաև 2021 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 1370-1380, հասանելի է https://www.ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf հղումով, 2026 թվականի հունվարի 20-ի դրությամբ: Տե՛ս նաև 2023 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 652-666, հասանելի է https://ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2026 թվականի հունվարի 20-ի դրությամբ: Տե՛ս նաև 2024 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 392-401, հասանելի է https://ombuds.am/images/files/4d1335361f1f7e9fbcc1cfc10679701e.pdf հղումով, 2026 թվականի հունվարի 20-ի դրությամբ:

[208] Տե՛ս Մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույցը Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ, Երևան, 2022թ., էջեր 101-182 հասանելի է https://www.ombuds.am/images/files/66d55894cd4c933cef65a7d6d7d7b35a.pdf հղումով, 2026 թվականի հունվարի 20-ի դրությամբ:

խնամքը հաստատություններ տեղափոխելու միջոցով իրականացնելու գործընթացը շարունակվում է: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ միայն «Վարդենիս շուրջօրյա մասնագիտացված խնամքի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունում, շարունակում են խնամք ստանալ հաշմանդամություն ունեցող 439 անձ: «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» պետական ոչ առևտրային կազմակերպությունում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից 2025 թվականին իրականացված մշտադիտարկման չհայտարարված այցի դրությամբ շարունակում էին խնամք ստանալ 252 հաշմանդամություն ունեցող անձինք: Խնդրահարույց է նաև այն, որ նույն հաստատությունում խնամք են ստանում նաև 18-ից բարձր տարիքի հաշմանդամություն ունեցող անձինք, այնպիսի պայմաններում, երբ կազմակերպության ենթակառուցվածքներն ի սկզբանե նախատեսված են եղել երեխաներին խնամք տրամադրելու համար:

Հաշվի առնելով երեխաների, հատկապես, հաշմանդամություն ունեցող երեխաների ֆիզիկական ու հոգեկան առողջ զարգացումն ապահովելու հարցում ընտանեկան միջավայրում ապրելու կարևորությունը՝ առավել մտահոգիչ է հաստատություններում հաշմանդամություն ունեցող երեխաների թիվը: Այսպես, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ միայն «Երևանի «Մանկան տուն» պետական ոչ առևտրային կազմակերպությունում խնամք են ստանում 15 հաշմանդամություն ունեցող երեխաներ:

2025 թվականին իրականացված մշտադիտարկման այցերի արդյունքում հաստատություններում նույնպես արձանագրվել են խնամքի և ծառայությունների տրամադրման հետ կապված մի շարք համակարգային և հրատապ լուծումներ պահանջող խնդիրներ, որոնց առավել մանրամասն անդրադարձ է կատարվել տարեկան հաղորդման համապատասխան գլուխներում:

Այսպես, օրինակ, «Նորք» շուրջօրյա խնամքի կենտրոն պետական ոչ առևտրային կազմակերպություն իրականացված մշտադիտարկման չհայտարարված այցի արդյունքում արձանագրվել է, որ հաստատությունում բացակայում էին հաշմանդամություն ունեցող անձանց անկախ կյանքի հմտությունների զարգացմանն ուղղված թիրախային ծառայությունները, առկա էր շահառուներին սպորտային, ժամանցային ու մշակութային տարբեր միջոցառումների մասնակցությունը երաշխավորող ծառայությունների ապահովման անհրաժեշտություն: Խիստ մտահոգիչ է նաև այն, որ այցի պահին հաստատությունում խնամք էին ստանում այնպիսի շահառուներ, այդ թվում՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Կապանի թիվ 3 հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ-ից Հաստատություն տեղափոխված, որոնց համար, ըստ Հաստատությունում աշխատող մասնագետների, առկա էր պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման տրամադրման համար համապատասխան գնահատում իրականացնելու, համապատասխան բժշկական օգնություն և սպասարկում տրամադրելու անհրաժեշտություն, ինչը հնարավոր չէր պատշաճ կերպով ապահովել հաստատության բազմամասնագիտական թիմի և անհրաժեշտ ֆիզիկական միջավայրի բացակայության պայմաններում: Բացի այդ, Հաստատությունում աշխատողների թիվը պակաս էր խնամք ստացող շահառուների թվի համեմատությամբ և, չնայած իրավասու մարմնի կողմից իրականացվող վերապատրաստումներին, արդիական է մնում պետության կողմից նեղ մասնագիտական վերապատրաստումների կազմակերպման անհրաժեշտությունը և այլն: Հարկ է նշել նաև, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ ««Նորք» շուրջօրյա խնամքի կենտրոն»

ՊՈԱԿ-ում 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ խնամք է ստանում հատուկ տիպի խնամքի կարիք ունեցող հաշմանդամություն ունեցող 4 անձ, որոնք հաշվառված են ՄՍԾՏԿ-ում հատուկ տիպի խնամքի կենտրոն տեղափոխվելու համար:

Որպես հաստատություններին այլընտրանք՝ պետությունը իրավական հիմք է ստեղծել Հայաստանի Հանրապետությունում անկախ կյանքի կենտրոնի ստեղծման և գործունեության համար: Մարդու իրավունքների պաշտպանը կարևորում է հաշմանդամություն ունեցող անձանց անկախ կյանքի հմտությունների զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացումը, այդ թվում՝ անկախ կյանքի կենտրոնների ստեղծումը՝ միաժամանակ ընդգծելով, որ հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրվող անձի անկախ կյանքի հմտությունների զարգացմանն ուղղված, համայնքահեն ծառայությունները պետք է կրեն շարունակական բնույթ և հասանելի լինեն ՀՀ ամբողջ տարածքում հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց համար, ուստի անձի անկախ կյանքի հմտությունների զարգացմանն ուղղված ծառայությունների մատուցումը համակարգված և արդյունավետ իրականացնելու տեսանկյունից անհրաժեշտ է արագացնել անկախ կյանքի կենտրոնների ստեղծման գործընթացը: Մինչդեռ, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքում հաշմանդամություն ունեցող անձանց համար անկախ կյանքի կենտրոնի կառուցման շինարարական աշխատանքների մեկնարկը տրվել է միայն 2025 թվականին:

Որպես հաստատություններին այլընտրանք՝ 2025 թվականի ընթացքում շարունակել են գործել նաև համայնքային փոքր տները, որտեղ ծառայություն են ստանում հաշմանդամություն ունեցող անձինք: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2025 թվականին 5 համայնքային փոքր խմբային տներում ծառայություն է ստացել հաշմանդամություն ունեցող 70 անձ:

Հարկ է փաստել, որ թեև համայնքային փոքր տները նախատեսված են որպես ընտանեկան միջավայրին առավելագույնս մոտեցված, 8-16 անձի համար նախատեսված կենտրոններ, սակայն դրանք ևս ունեն ինստիտուցիոնալացմանը բնորոշ տարրեր: Այսպիսի պայմաններում Մարդու իրավունքների պաշտպանը խիստ կարևորում է ապաինստիտուցիոնալացման քաղաքականության իրականացման գործընթացում այնպիսի միջոցառումների ձեռնարկումը, որոնք կբացառեն հաշմանդամություն ունեցող անձանց հասարակությունից առանձնացնելը և ինստիտուցիոնալացմանը բնորոշ հատկանիշներ պարունակող պայմաններում ապրելը, միաժամանակ, կերաշխավորեն անկախ կյանքի հմտությունների զարգացմանն ուղղված համայնքահեն ծառայությունների տրամադրումը:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2025 թվականի դրամաշնորհի պայմանագրերով հասարարակական կազմակերպությունների կողմից ծառայություն է մատուցվում հանրապետության մարզերում և Երևան քաղաքում գործող 9 ցերեկային կենտրոններում: Միջոցառման շրջանակում փաստացի ծառայություն է ստացել ամսական հաշմանդամություն ունեցող 414 անձ: Ցերեկային կենտրոնների մասնագետների իրականացրած կարիքների գնահատման արդյունքում հաշմանդամություն ունեցող անձինք ստանում են իրենց կարիքներին և կարողություններին համապատասխան ծառայություններ՝ խմբային և անհատական պարապմունքների միջոցով: Ըստ տրամադրված տեղեկատվության՝ ծառայությունը ներդրված է նաև ՀՀ մարզերում, բացառությամբ Տավուշի, Արագածոտնի, Արմավիրի և Վայոց ձորի: Ըստ տրամադրված

տեղեկատվության՝ 2025 թվականին պետության հետ կնքած դրամաշնորհի պայմանագրի շրջանակում տնային խնամքի ծառայություն է ստանում 1325 շահառու, այդ թվում՝ 50 շահառու ստանում է մասնագիտացված խնամքի ծառայություն՝ նախատեսված հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց համար: Շահառուներից 624 հաշմանդամություն ունեցող անձինք են, ծառայությունները մատուցվում են դրամաշնորհային մրցույթներում հաղթած հասարակական կազմակերպությունների կողմից:

Մտահոգիչ է այն, որ ՀՀ մարզերում 65 անձի չի տրամադրվել տնային պայմաններում խնամքի ծառայություն՝ ծառայության բացակայության պատճառով: Միաժամանակ, ողջունելի է, որ 2025 թվականին ներդրվել է հաշմանդամություն ունեցող երեխաների տնային խնամքի ծառայությունը:

Թեև պետության կողմից ձեռնարկվող միջոցներին՝ Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկման արդյունքները վկայում են, որ բացակայում են արդյունավետ կառուցակարգերը, որով հնարավոր կլինի ՀՀ ամբողջ տարածքում և հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց, անհրաժեշտության դեպքում, տրամադրել անկախ կյանքի հմտությունների զարգացմանն ուղղված համայնքահեն ծառայություններ: Խնդրահարույց է այն, որ 2025 թվականի ընթացքում շարունակվել են միայն Արմավիրի մարզում անկախ կյանքի կենտրոն կառուցելու ուղղությամբ իրականացվող աշխատանքները, առկա են անձնական օգնականի ծառայությունների տրամադրման հետ կապված օրենսդրական և գործնական խնդիրներ և այլն:

Այսպես, օրինակ, 2025 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ստացված բողոքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ անձնական օգնականի ծառայություններ չեն տրամադրվել հաշմանդամություն ունեցող բազմաթիվ անձանց, ովքեր ունեցել են դրա անհրաժեշտությունը, սակայն չեն աշխատել կամ չեն սովորել, ինչն օրենսդրությամբ սահմանված պարտադիր պահանջ է նշված ծառայությունից օգտվելու համար: Խիստ մտահոգիչ է նաև այն, որ 2025 թվականի ընթացքում արձանագրվել են դեպքեր, երբ հաշմանդամություն ունեցող անձին ծառայությունների անհատական ծրագրով ցուցված էր անձնական օգնականի ծառայություն, սակայն վերջիններս հնարավորություն չեն ունեցել կնքել անձնական օգնականի ծառայության տրամադրման պայմանագիր և օգտվել անձնական օգնականի ծառայությունից:

2025 թվականի ընթացքում շրջանառվել է «Տարեց կամ հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի (բացառությամբ խնամատար ընտանիքներում կամ խնամակալի կամ հոգաբարձուի ընտանիքում իրականացվող խնամքի) տրամադրման նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» հրամանի նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ), որը, սակայն, պարունակում է մի շարք խնդրահարույց կարգավորումներ: Մասնավորապես, մտահոգիչ է այն, որ Նախագծով նախատեսվում է, որ հրամանն ուժի մեջ է մտնում 2028 թվականի հունվարի 1-ից, ինչից բխում է, որ մինչև նշված թվականը, ինչպես նաև դրանից հետո պետությունը շարունակելու է տարեց կամ հաշմանդամություն ունեցող անձանց խնամքն իրականացնել նաև բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում և համայնքային փոքր տներում: Ստացվում է, որ տարեց կամ հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրման գործընթացը մինչև 2028 թվականը և դրանից հետո շարունակելու է պարունակել ինստիտուցիոնալացմանը բնորոշ հատկանիշներ: Բացի այդ, Նախագծով նախատեսվում է, որ շուրջօրյա խնամքի կենտրոնում միաժամանակ կարող են բնակվել կամ ծառայություն ստանալ 100-ից ավել շահառու, եթե կենտրոնի տարածքը բավարարում է սահմանված պահանջներին, ինչը ևս մեկ անգամ վկայում է, որ մինչև 2028 թվականը չի նախատեսվում բացառել կամ առնվազն

նվազագույնի հասցնել շահառուների մուտքը շուրջօրյա խնամքի կենտրոններ: Մարդու իրավունքների պաշտպանը Նախագծի վերաբերյալ իր դիտողություններն ու առաջարկությունները ներկայացրել է պետական իրավասու մարմնին:

Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկումների արդյունքում արձանագրվել են նաև դեպքեր, երբ ընտանիքի անդամները ֆինանսական դրությամբ, հաշմանդամություն ունեցող անձի, այդ թվում՝ երեխայի խնամքը կազմակերպելու հմտությունների բացակայությամբ պայմանավորված՝ նախընտրել են նրանց խնամքը վստահել հաստատություններին: Ավելին, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ Հաշմանդամություն ունեցող անձանց ընտանիքի անդամի համար ՀՀ պետական բյուջեի «1160 Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառում» ծրագրի շրջանակներում աջակցության ծառայություններ նախատեսված չեն:

Նշվածն անընդունելի է, ինչի կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանը հատուկ կարևորում է նաև հաշմանդամություն ունեցող անձանց ընտանիքի անդամներին մատուցվող հասցեական ծառայությունների, այդ թվում՝ բավարար ֆինանսական աջակցության տրամադրման և անհրաժեշտ հմտությունների զարգացմանն ուղղված հստակ կառուցակարգերի ներդնումն ու իրականացումը: Այս համատեքստում, հարկ է ընդգծել նաև, որ Մարդու իրավունքների պաշտպանը Նախագծի շրջանակներում առաջարկել է Նախագծում նշված և հնարավոր այլ ծառայությունների շահառուների շարքում ընդգրկել նաև շահառուների ընտանիքի անդամներին՝ ապահովելով հաշմանդամություն ունեցող անձանց ընտանիքի անդամներին մատուցվող հասցեական ծառայությունների տրամադրումը:

Մարդու իրավունքների պաշտպանը խնդրահարույց է համարում նաև այն, որ ՀՀ կառավարության 2023 թվականի հունիսի 8-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2023-2027 թվականների համալիր ծրագիրը և ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» թիվ 943-Լ որոշմամբ, թեև նախատեսված են վերը նշված խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումներ և ակնկալվող արդյունքներ, սակայն դրանք չեն բովանդակում ապաինստիտուցիոնալացումն ապահովելու թիրախային արդյունքն ու պետական բյուջեով նախատեսված բավարար հատկացումներ, որոնց առնչությամբ 2025 թվականի ընթացքում փոփոխություններ չեն իրականացվել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

✓ ապաինստիտուցիոնալացման քաղաքականության իրականացման գործընթացում բացառել այնպիսի նոր հաստատությունների ստեղծումը, որոնք կպարունակեն ինստիտուցիոնալացման տարրեր և հաշմանդամություն ունեցող անձանց հասարակությունից առանձնացնելու հիմքեր:

✓ նախաձեռնել և իրականացնել այնպիսի կանխարգելիչ միջոցառումներ, որոնք կբացառեն հաշմանդամություն ունեցող անձանց մուտքը բնակչության պաշտպանության հաստատություններ:

✓ ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց ընտանիքի անդամներին մատուցվող հասցեական ծառայությունների տրամադրման հստակ կառուցակարգերի ներդնումն ու իրականացումը:

✓ ներդնել կառուցակարգ, որով հնարավոր կլինի ՀՀ ամբողջ տարածքում և հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց տրամադրել անձի անկախ կյանքի հմտությունների զարգացմանն ուղղված, համայնքահեն ծառայություններ, որը կերաշխավորի ապաինստիտուցիոնալացման գործընթացի պատշաճ և առանց

ձգձգումների իրականացումը: Նշված ծառայությունները ներդնելիս և իրականացնելիս պետք է առաջնորդվել այնպիսի մոտեցմամբ, որ դրանք հասանելի լինեն հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց և համապատասխանեն նրանց անձնական կարիքներին:

✓ գործուն միջոցներ ձեռնարկել, այդ թվում՝ օրենսդրական փոփոխություններ իրականացնել՝ ուղղված միջազգային չափորոշիչներին համապատասխան անձնական օգնականի ինստիտուտի կայացմանը:

✓ մշակել այնպիսի ռազմավարություն, որով ապաինստիտուցիոնալացումը կնախանշվի որպես արդյունք և պետական հատկացումները կուղղվեն հենց այդ նպատակով նախատեսված հստակ միջոցառումների իրականացմանը:

✓ շարունակել իրականացնել միջոցառումներ, այդ թվում՝ օրենսդրական փոփոխություններ՝ ուղղված խնամքի գործընթացում բազմամասնագիտական թիմ ներգրավելուն և պետության կողմից նեղ մասնագիտական կարիքահեն վերապատրաստումներ կազմակերպելուն:

2. Անձին հաշմանդամություն ունեցող անձ ճանաչելու գործընթացի, գնահատման արդյունքում յուրաքանչյուր անձի կարիքից բխող հասցեական ծառայությունների և աջակցող միջոցների տրամադրման հետ կապված խնդիրներ:

2025 թվականին անձին հաշմանդամություն ունեցող անձ ճանաչելու գործընթացն ամբողջությամբ իրականացվել է ֆունկցիոնալության գնահատման միջոցով, որի նպատակը՝ հաշմանդամություն ունեցող անձ ճանաչելու հետ կապված որոշումները անձի առողջական խնդիրների, գործունեության, մասնակցության և միջավայրային արգելքների գնահատման հիման վրա կայացնելն ու անհատական կարիքներին համարժեք սոցիալական ծառայություններ տրամադրելն է: Չնայած վերոնշյալին՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ իրականացված մշտադիտարկումները, ստացված գրավոր և բանավոր դիմում-բողոքները, այդ թվում՝ թեժ գծի հեռախոսահամարին ստացված զանգերը վկայում են, որ այդ գործընթացում առկա են մի շարք համակարգային խնդիրներ, որոնք վերաբերել են անձին հաշմանդամություն ունեցող անձ ճանաչելու գործընթացի հետ կապված օրենսդրական կարգավորումներին, ֆունկցիոնալության գնահատման գործընթացի իրականացմանը և այլն:

Մասնավորապես, արձանագրվել են խնդիրներ՝ կապված ուղեգրման գործընթացի, «Արմեդ» համակարգի և «e-disability» էլեկտրոնային համակարգերի պատշաճ փոխգործելիության, իրավասու մարմինների միջգերատեսչական համագործակցության ապահովման, գնահատվող անձին իր նկատմամբ ընդունված որոշման բոլոր էական հանգամանքների մասին ծանուցելու պարտավորության պատշաճ կատարման, մասնագետների պակասի, գնահատման ժամկետների ձգձգումների, վերագնահատման և կրկնակի գնահատման գործընթացների հետ և այլն:

2025 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ շարունակում է արդիական մնալ այն հարցը, որ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունները, անձին «Արմեդ» համակարգի միջոցով ուղեգրելուց հետո, հնարավորություն չունեն հետևելու իրենց կողմից տեղադրված ուղեգրի ընթացքին և խնդիրներ առաջանալու պարագայում՝ վերացնելու դրանք՝ կազմակերպելով անձի ուղեգրումը: Հաշմանդամություն ունեցող անձինք, այդ թվում՝ քրեակատարողական հիմնարկներում գտնվող, հաճախ են բարձրաձայնել այն հարցը, որ իրենց կողմից ներկայացված դիմումները մերժվել են, իսկ

իրենք և ուղեգրող անձինք տեղյակ չեն մերժման պատճառների վերաբերյալ, ինչը հանգեցնում է անձանց ֆունկցիոնալության գնահատման կազմակերպման գործընթացի անհարկի ձգձգումների: Միաժամանակ, արձանագրվել է նաև, որ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններն էլ իրենց հերթին, չնայած անցկացված դասընթացներին, շատ հաճախ ուղեգրման գործընթացն իրականացնում են մի շարք սխալներով՝ կցելով ոչ անհրաժեշտ նյութեր, չտրամադրելով անհրաժեշտ փաստաթղթեր և տեղեկություններ, իսկ քրեակատարողական հիմնարկներում գտնվող անձանց ֆուկցիոնալության գնահատման գործընթացում արձանագրվել են «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից անհրաժեշտ բժշկական հետազոտությունների կազմակերպման, բժշկական փաստաթղթերի փաթեթների պատրաստման հետ կապված ձգձգումներ:

Խիստ մտահոգիչ է նաև այն, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2025 թվականի ընթացքում ԱՖԳ անցնելու համար մերժվել է ընդհանուր 19236 դիմում, որոնցից 15126-ի մերժման պատճառն անձի ֆունկցիոնալության գնահատման ուղեգրման համար անհրաժեշտ տեղեկատվության բացակայությունն է եղել, իսկ 1077-ի մերժման պատճառը՝ փաստաթղթերի հետ կապված անճշտությունը: Խնդիրներ են արձանագրվել նաև «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի և Միասնական սոցիալական ծառայության համագործակցության ոլորտում: Այս համատեքստում, Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ կարևոր է նաև օրենսդրությամբ ֆունկցիոնալության գնահատման ուղեգրելու գործընթացի համար հստակ ժամկետների սահմանումը և ուղեգրմանը ներկայացվող պահանջների պահպանման նկատմամբ արդյունավետ վերահսկողական կառուցակարգերի ներդնումը:

Այսպես, օրինակ, Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկում (այսուհետ՝ Հիմնարկ) գտնվող անձը բարձրացրել է իրեն չվճարված հաշմանդամության նպաստը ստանալու հետ կապված հարց: Բողոքի քննարկման արդյունքում պարզ դարձած տեղեկատվության համաձայն՝ անձը հաշմանդամություն ունեցող անձի համար սահմանված ժամկետը լրանալուց մեկ ամիս առաջ դիմում է ներկայացրել Հիմնարկին ֆունկցիոնալության կրկնակի գնահատում անցնելու համար, մինչդեռ «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից անհրաժեշտ բժշկական հետազոտությունների կազմակերպման, բժշկական փաստաթղթերի փաթեթների պատրաստման ձգձգումների պատճառով անձի ֆունկցիոնալության կրկնակի գնահատումն իրականացվել է հաշմանդամություն ունեցող անձի համար սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ 9 ամիս անց, որի արդյունքում վերջինս ճանաչվել է հաշմանդամություն ունեցող անձ: Մինչդեռ, բողոք ներկայացրած անձին չվճարված հաշմանդամության նպաստը վճարելու իրավական հիմքեր առկա չեն եղել, քանի որ վերջինս իրենից անկախ հանգամանքներով կրկին հաշմանդամություն ունեցող անձ ճանաչվել է հաշմանդամության ժամկետը լրանալուց հետո՝ տասներկու ամսվա ընթացքում՝ համաձայն «Պետական նպաստների մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի, այն է՝ նպաստ ստանալու իրավունքը վերականգնվում է հաշմանդամության ժամկետը լրանալուց հետո՝ երեք ամսվա ընթացքում, կրկին հաշմանդամություն ունեցող անձ ճանաչվելու դեպքում՝ դադարեցնելու օրվանից, իսկ հաշմանդամության ժամկետը լրանալուց հետո՝ տասներկու ամսվա ընթացքում, հաշմանդամություն ունեցող անձ ճանաչվելու դեպքում՝ հաշմանդամություն ունեցող անձ ճանաչվելու օրվանից՝ անձի ֆունկցիոնալությունը գնահատող հանձնաժողովի կողմից ստացված՝ անձին հաշմանդամություն ունեցող անձ ճանաչելու մասին անձի

ֆունկցիոնալության գնահատման որոշման քաղվածքի հիման վրա: Այս առումով, հարկ է նշել, որ «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից անհրաժեշտ բժշկական հետազոտությունների կազմակերպման, բժշկական փաստաթղթերի փաթեթների պատրաստման ձգձգումների ու ֆունկցիոնալության կրկնակի գնահատումը ուշ իրականացվելու պատճառով անձը շուրջ 9 ամիս զրկվել է հաշմանդամության նպաստից:

2025 թվականի ընթացքում արձանագրվել են նաև մասնագետների, օրինակ, հոգեբույժների պակասի հետ կապված խնդիրներ: Նշված խնդիրն առավել արտահայտված է ՀՀ մարզերում:

Խնդրահարույց է նաև այն, որ «e-disability» համակարգի միջոցով ինքնաշխատ կերպով գեներացվող որոշումները չեն պարունակում համապատասխան տեղեկատվություն այն բոլոր էական փաստական և իրավաբանական հանգամանքների վերաբերյալ, որոնք հիմք են տվել ընդունելու համապատասխան որոշումը: Նշվածի կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանը կրկին ընդգծում է գնահատվող անձին համապարփակ տեղեկատվության փոխանցման անհրաժեշտությունը, որով հնարավորություն կտրվի վերջինիս ծանոթանալու իր նկատմամբ ընդունված որոշման բոլոր էական հանգամանքներին:

Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկման արդյունքները ցույց են տալիս, որ 2025 թվականի ընթացքում շարունակել է արդիական մնալ ֆունկցիոնալության գնահատման արդյունքում ընդունված որոշումների բողոքարկման մեխանիզմի կատարելագործման անհրաժեշտության հետ կապված հարցը: Մասնավորապես, դիմումների և բողոքների ուսումնասիրության և քննարկման շրջանակներում արձանագրվել է, որ ֆունկցիոնալության վերագնահատումների մեծ մասի արդյունքում անձի նկատմամբ սահմանվել է տոկոսային արտահայտությամբ ֆունկցիոնալության սահմանափակման ավելի ցածր աստիճան: Այսպես, օրինակ, բողոքներից մեկի քննարկման ընթացքում արձանագրվել է, որ ֆունկցիոնալության գնահատման արդյունքում անձի սահմանափակման աստիճանը գնահատվել է 21%, իսկ վերագնահատման արդյունքում՝ 9%, ինչը մտահոգիչ է:

Հարկ է նշել նաև, որ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2025 թվականի ընթացքում ֆունկցիոնալության գնահատման գործընթացի ընթացակարգային խախտումների վերաբերյալ ստացվել է 3 դիմում-բողոք, հարուցվել են վարչական վարույթներ, որոնք կարճվել են իրավախախտման բացակայության հիմքով:

ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից ստացված դիմում-բողոքների քանակը վկայում է իրազեկվածության հնարավոր պակասի մասին, ինչի հետևանքով շատերը տեղեկացված չեն այն մասին, որ կարող են դիմել ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնին՝ անձի ֆունկցիոնալության գնահատման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նպատակով: Վերոգրյալի մասին է վկայում նաև այն, որ 2025 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքներով հաշմանդամություն ունեցող բազմաթիվ անձինք բարձրացրել են իրենց նկատմամբ իրականացված ֆունկցիոնալության գնահատման խախտումների հետ կապված հարցեր:

2025 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ ստացված մի շարք բողոքներով քաղաքացիները բարձրաձայնել են նաև մտահոգություն, ըստ որի՝ առաջին տիպի շաքարային դիաբետ ունեցող իրենց երեխաները մինչև 18 տարին լրանալը ճանաչվել են հաշմանդամություն ունեցող անձ, իսկ 18 տարին լրանալուց հետո

իրականացվող ֆունկցիոնալության գնահատման արդյունքում նրանք հաշմանդամություն ունեցող անձի կարգավիճակ չեն ստանում: Այս համատեքստում անհրաժեշտ է ձեռնարկել համալիր միջոցառումներ՝ կատարելագործելու ֆունկցիոնալության գնահատման մեխանիզմները՝ առանձնակի ուշադրություն դարձնելով առաջին տիպի շաքարային դիաբետ ունեցող անձանց 18 տարին լրանալուց հետո իրականացվող ֆունկցիոնալության գնահատման մեխանիզմներին:

2025 թվականի ընթացքում շարունակել է արդիական մնալ այն, որ Մարդու իրավունքների պաշտպանին դիմած անժամկետ հաշմանդամություն ունեցող բազմաթիվ անձինք ստիպված են եղել անցնել ֆունկցիոնալության կրկնակի գնահատում իրենց անհրաժեշտ ծառայություններից, այդ թվում՝ անձնական օգնականի ծառայություններից օգտվելու համար, այնպիսի պայմաններում, երբ իրենք արդեն իսկ ունեցել են անժամկետ հաշմանդամություն ունեցող անձի կարգավիճակ, որը սահմանվել է վերականգնման ոչ ենթակա կենսագործունեության սահմանափակում ունենալու հիմքով:

ՀՀ կառավարության 2022 թվականի հուլիսի 28-ի «Անձի ֆունկցիոնալության գնահատման կարգը հաստատելու մասին» թիվ 1180-Ն որոշման հավելվածի 14-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ ֆունկցիոնալության կրկնակի գնահատումն իրականացվում է անժամկետ հաշմանդամություն ունեցող անձանց կողմից իրենց ցանկությամբ դիմելու դեպքում, իսկ 4-րդ ենթակետի համաձայն՝ կրկնակի գնահատումն իրականացվում է ծառայությունների անհատական ծրագիր կազմելու դեպքում, եթե հաշմանդամություն ունեցող անձն այն երբևէ չի ստացել: Այսպես, թեև մի դեպքում անժամկետ հաշմանդամություն ունեցող անձանց կողմից ֆունկցիոնալության կրկնակի գնահատում անցնելն օրենսդիրը թողնում է վերջիններիս հայեցողությանը, այնուամենայնիվ, մյուս դեպքում էլ օրենսդիրը որոշ ծառայություններից օգտվելու համար սահմանում է կրկնակի գնահատում անցնելու հստակ պահանջ, քանի որ առանց ֆունկցիոնալության կրկնակի գնահատում անցնելու և ծառայությունների անհատական ծրագիր կազմելու՝ անժամկետ հաշմանդամություն ունեցող անձինք չեն կարող օգտվել իրենց անհրաժեշտ ծառայություններից: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ անժամկետ հաշմանդամություն ունեցող անձը դիմում է կրկնակի գնահատման՝ հիմնականում առողջական վիճակի վատթարացման հիմքով կամ ծառայությունների անհատական ծրագրով երաշխավորվող ծառայություն ստանալու համար: 2025 թվականի ընթացքում ԾԱԾ կազմելու նպատակով կրկնակի գնահատում անցած 870 անձանցից 359 նախկինում անժամկետ հաշմանդամություն ունեցող անձինք են, ինչը խնդրահարույց է, մասնավորապես այն պայմաններում, երբ անժամկետ հաշմանդամություն ունեցող անձանց կողմից ֆունկցիոնալության կրկնակի գնահատում անցնելու արդյունքում վերջիններիս նկատմամբ նախկինում սահմանված վարչական ակտը ենթարկվում է փոփոխության:

Մասնավորապես, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2025 թվականի ընթացքում նախկինում անժամկետ հաշմանդամություն ունեցող անձանցից 181 անցել են անձի ֆունկցիոնալության գնահատում, որոնցից 101 ֆունկցիոնալության սահմանափակման աստիճանը ենթարկվել է փոփոխության, իսկ 5՝ ժամկետը: Այսպես, օրինակ 2025 թվականին Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով անձը հայտնել էր, որ մինչև ֆունկցիոնալության կրկնակի գնահատում անցնելն ունեցել է ֆունկցիոնալության ծանր աստիճանի սահմանափակմամբ զինվորական պատճառական կապով անժամկետ հաշմանդամություն, սակայն առողջական վիճակի վատթարացման

հիմքով իրականացված ֆունկցիոնալության կրկնակի գնահատման արդյունքում վերջինիս ֆունկցիոնալության սահմանափակման աստիճանը ծանրից դարձել է միջին:

Հարկ է նշել նաև, որ 2025 թվականի ընթացքում շրջանառված ««Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծով նախատեսվում էր ծառայությունների անհատական ծրագրում փոփոխություն (լրացում) կատարելու դեպքում ֆունկցիոնալության գնահատում չիրականացվելու վերաբերյալ կարգավորում, ինչի առնչությամբ Մարդու իրավունքների պաշտպանը իրավասու մարմնին առաջարկել է համանման կարգավորում նախատեսել նաև նախկինում բժշկասոցիալական փորձաքննության արդյունքում անժամկետ հաշմանդամություն ունեցող անձանց համար:

Մարդու իրավունքների պաշտպանի համար շարունակում է մտահոգիչ մնալ այն, որ ֆունկցիոնալության գնահատման արդյունքում մշակված փաստաթղթով՝ ծառայությունների անհատական ծրագրերով, թեև կարող են նախատեսվել հասարակական կյանքի բոլոր ոլորտներում հաշմանդամություն ունեցող անձի լիարժեք և արդյունավետ մասնակցությունը խթանելու, անկախ կյանքի իրավունքն իրացնելու նպատակով անհրաժեշտ բժշկական, վերականգնողական, կրթական, մասնագիտական, սոցիալական ծառայություններ և միջոցառումներ, սակայն դրանցից ոչ բոլորի իրականացումն է նախատեսված Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին:

2025 թվականի ընթացքում, չնայած պետության կողմից աջակցող միջոցների տրամադրման ոլորտում ձեռնարկած միջոցներին, շարունակել են արդիական մնալ աջակցող միջոցների տրամադրման հետ կապված խնդիրները, որոնք, ի թիվս այլնի, վերաբերել են աջակցող միջոցների որակին, քանակին, հասանելիությանը, օգտագործման առանձնահատկությունների վերաբերյալ ոչ պատշաճ իրազեկմանը, դրանց ձեռքբերման հետ կապված դժվարություններին, աջակցող միջոց ստանալու իրավունք ունեցող անձանց շրջանակի ընդլայնմանը և այլն:

Այսպես, օրինակ, Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով անձը հայտնել է, որ իր զավակին տրվել է «գիշերային կորսետ երկփեղկանի գերշտկումով» աջակցող միջոցի հավաստագիր՝ 100.000 ՀՀ դրամ արժեքով, որտեղ նշված են եղել այդ աջակցող միջոցը տրամադրող կազմակերպությունները: Բողոք ներկայացրած անձը հայտնել է, որ դիմել է հավաստագրում նշված կազմակերպություններին, սակայն պարզ է դարձել, որ նրանք վաղուց չեն զբաղվում «գիշերային կորսետ երկփեղկանի գերշտկումով» աջակցող միջոցի արտադրությամբ, և ցանկում նշված միայն մեկ կազմակերպություն է հայտնել, որ ունի տվյալ աջակցող միջոցը, սակայն 150.000 ՀՀ դրամ արժողությամբ:

2025 թվականի ընթացքում շրջանառվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հունիսի 27-ի թիվ 1004-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ, որի առնչությամբ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրել է, որ աջակցող միջոցների ցանկի, աջակցող միջոցներ ստանալու իրավունք ունեցող անձանց շրջանակի ընդլայնումը պետք է կրի շարունակական բնույթ՝ հետագա բարեփոխումների ընթացքում հաշվի առնելով հաշմանդամություն ունեցող անձանց անհատական կարիքներից բխող այն աջակցող միջոցների ավելացումը, որոնք առկա չեն ցանկում, այդ թվում՝ դիտարկելով ֆունկցիոնալ պրոթեզ ստանալու իրավունք ունեցող անձանց շրջանակի ընդլայնումը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

✓ միջոցներ ձեռնարկել ուղեգրման գործընթացի բարելավման ուղղությամբ, այդ թվում՝ բարձրացնելով այդ գործընթացում ներառված մասնագետների հմտություններն ու կարողությունները, բացառելով «e-disability» և «Արմեդ» համակարգերում առկա տեխնիկական խնդիրները, օրենսդրությամբ սահմանելով հստակ ժամկետներ, ներդնելով ուղեգրմանը ներկայացվող պահանջների պահպանման նկատմամբ արդյունավետ վերահսկողական կառուցակարգեր և այլն:

✓ միջոցներ ձեռնարկել բացառելու տարբեր պատճառներով ֆունկցիոնալության գնահատման գործընթացի ձգձգումները, ի թիվս այլնի, ապահովելով անհրաժեշտ մասնագետների ներգրավումը գործընթացին:

✓ միջոցներ ձեռնարկել երաշխավորելու բոլոր էական փաստական և իրավաբանական հանգամանքների վերաբերյալ տեղեկատվության ներառումը «e-disability» համակարգի միջոցով ինքնաշխատ կերպով գեներացվող որոշումներում:

✓ միջոցներ ձեռնարկել օրենսդրական և գործնական մակարդակում կատարելագործելու վերագնահատման և կրկնակի գնահատման մեխանիզմները:

✓ կատարելագործել ֆունկցիոնալության գնահատման մեխանիզմները՝ առանձնակի ուշադրություն դարձնելով առաջին տիպի շաքարային դիաբետ ունեցող անձանց 18 տարին լրանալուց հետո իրականացվող ֆունկցիոնալության գնահատման մեխանիզմներին:

✓ ծառայությունների անհատական ծրագրով հաշմանդամություն ունեցող անձանց անկախ կյանքի իրավունքն իրացնելու նպատակով սահմանված բոլոր ծառայությունների և միջոցառումների իրականացման համար ապահովել պետական բյուջեով նախատեսված միջոցներից դրանք ստանալու հնարավորություն:

✓ գործուն միջոցներ ձեռնարկել՝ ապահովելու հաշմանդամություն ունեցող անձի կարիքին համապատասխան որակյալ աջակցող միջոցների իրազեկ և անխոչընդոտ ձեռքբերումը, վերանորոգումը և օգտագործման առանձնահատկությունների վերաբերյալ պատշաճ իրազեկումը:

✓ գործուն և շարունակական միջոցներ ձեռնարկել աջակցող միջոցների ցանկի և շահառու անձանց շրջանակի ընդլայնման ուղղությամբ՝ ապահովելով հաշմանդամություն ունեցող անձանց անհատական կարիքին համապատասխան աջակցող միջոցների ձեռքբերումը:

3. Հաշմանդամություն ունեցող անձանց՝ իրենց վերաբերելի հարցերում անձամբ որոշումներ կայացնելու իրավունքն ապահովելու հետ կապված խնդիրներ

ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը և դրանից բխող 2020-2022 թվականների, 2023-2025 թվականների գործողությունների ծրագրերը և Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի «կանայք, խաղաղություն և անվտանգություն» թիվ 1325 բանաձևի դրույթների իրականացման 2025-2027 թվականների գործողությունների ազգային երրորդ ծրագիրը և ծրագրի իրականացման ժամանակացույցը հաստատելու մասին» թիվ 1978-Լ որոշման հավելված 2-ի համաձայն՝ որպես ակնկալվող արդյունք մինչև 2022 թվականի երկրորդ կիսամյակ նախատեսվել է ընդունել անգործունակության ինստիտուտին առնչվող իրավակարգավորումների վերանայման և աջակցության միջոցով որոշումների կայացման մեխանիզմի ներդրման վերաբերյալ գործողությունների ծրագիրը հաստատելու մասին Կառավարության որոշումը, ընդունել աջակցության միջոցով որոշումների կայացման մեխանիզմի վերաբերյալ

օրենսդրությունը, ներդնել աջակցության միջոցով որոշումների կայացման մեխանիզմը: Նույն որոշման հավելված 3-ի համաձայն՝ նախատեսվել է վերանայել անգործունակ ճանաչված անձանց՝ դատարանի մատչելիության իրավունքին առնչվող կարգավորումները՝ բացառելով իրենց իրավունքներին և շահերին առնչվող այլ խնդիրներով դատարան դիմելու կամ լսված լինելու իրավունքի անհամաչափ սահմանափակումները:

Անկախ ապրելու իրավունքի երաշխավորման նպատակով պետության կողմից հաշմանդամություն ունեցող անձանց աջակցության միջոցով որոշումների կայացման կառուցակարգի ներդրմանն ու նրանց փոխարեն որոշումներ ընդունելու գործելակերպի բացառմանն ուղղված միջոցների ձեռնարկման ու իրականացման կարևորությանը հատուկ անդրադարձ է կատարվել նաև Մարդու իրավունքների պաշտպանի նախորդ տարեկան հաղորդումների շրջանակում:[209] Մինչդեռ՝ Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկման արդյունքները վկայում են, որ անգործունակության ինստիտուտին առնչվող իրավակարգավորումները դեռևս վերանայված չեն և ներդրված չէ աջակցության միջոցով որոշումների կայացման մեխանիզմ: Խիստ մտահոգիչ է այն, որ օրենսդրական մակարդակում գործում են կարգավորումներ, որոնք արգելք են անգործունակ ճանաչված անձանց համար իրացնելու իրենց արդար դատաքննության իրավունքը: Օրինակ, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 4-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերի համաձայն՝ տասնչորս տարեկան չդարձած անչափահասների, ինչպես նաև անգործունակ ճանաչված անձանց իրավունքները և ազատությունները դատավարությունում ներկայացնում են նրանց օրինական ներկայացուցիչները՝ ծնողը, խնամակալը կամ օրենքով նման իրավունք ունեցող այլ անձինք: Դատարանը կարող է տասնչորս տարեկան չդարձած անչափահասին կամ անգործունակ ճանաչված անձին ընձեռել գործի քննության ընթացքում լսվելու իրավունք: Ընդ որում, նման կարգավորումը ոչ թե պարտադիր, այլ հայեցողական լիազորություն է նախատեսում՝ ապահովելու անգործունակ ճանաչված անձի լսված լինելու իրավունքը և այլն:

Անգործունակության ինստիտուտին առնչվող կարգավորումներից հարկ է անդրադառնալ նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 31-րդ հոդվածին, համաձայն որի՝ քաղաքացին, որը հոգեկան խանգարման հետևանքով չի կարող հասկանալ իր գործողությունների նշանակությունը կամ ղեկավարել դրանք, կարող է դատարանով անգործունակ ճանաչվել՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով: Նրա նկատմամբ սահմանվում է խնամակալություն: Անգործունակ ճանաչված քաղաքացու անունից գործարքներ է կնքում նրա խնամակալը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 37-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ խնամակալը կամ հոգաբարձուն նշանակվում է իր համաձայնությամբ: Ընդ որում, պետք է հաշվի առնվեն նրա բարոյական և անձնական այլ հատկանիշները, խնամակալի կամ հոգաբարձուի պարտականություններ կատարելու ունակությունը, նրա ու

[209] Տե՛ս, 2023 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 652-666, հասանելի է https://ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2026 թվականի հունվարի 20-ի դրությամբ: Տե՛ս նաև, 2024 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 392-401, հասանելի է https://ombuds.am/images/files/4d1335361f1f7e9fbcc1cfc10679701e.pdf հղումով, 2026 թվականի հունվարի 20-ի դրությամբ:

խնամակալության կամ հոգաբարձության կարիք ունեցող անձի միջև եղած հարաբերությունները, իսկ հնարավորության դեպքում՝ նաև խնամարկյալի ցանկությունը:

Վերոնշյալ դրույթը բավարար երաշխիքներ չի սահմանում խնամակալ կամ հոգաբարձու նշանակելիս դրանց կարիքը ունեցող անձանց ցանկությունը հաշվի առնելու համար և խնդրահարույց է, մասնավորապես, թե ինչպես է գնահատվում հնարավորության դեպքում խնամարկյալի ցանկությունը հաշվի առնելը: Այսպես, օրինակ, Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով անձը բարձրացրել է իր նկատմամբ սահմանված խնամակալին փոխելու հետ կապված հարց՝ նշելով, որ խնամակալը իրականացրել է գործարքներ՝ առանց իր իմացության, երբևէ իրեն չի խնամել, չի կատարել իր վրա դրված պարտականությունները:

Թեև ՀՀ արդարադատության նախարարության կողմից շրջանառվել է նախագիծ, որն ուղղված է անգործունակության ինստիտուտի և մի շարք այլ ոլորտների բարելավմանը, սակայն հարկ է փաստել, որ նախագծով նախատեսված կարգավորումները նույնպես հուսալի նախադրյալներ չեն ստեղծում՝ երաշխավորելու հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությունը, այդ թվում՝ աջակցության միջոցով որոշումների կայացման մեխանիզմի ներդրումն ու արդար դատաքննության իրավունքի մատչելիությունը:[210] Հարկ է կրկին ընդգծել, որ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոմիտեն Հայաստանի Հանրապետության վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում ևս անդրադարձել է նշված հարցին՝ առաջարկելով դադարեցնել առկա խտրական իրավական ակտերի գործողությունները, ինչպես նաև վերականգնել հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց լիարժեք գործունակությունը և ներդնել աջակցող որոշումների կայացման ռեժիմ:[211]

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Մարդու իրավունքների պաշտպանը անկախ ապրելու իրավունքի երաշխավորման նպատակով ևս մեկ անգամ կարևորում է պետության կողմից հաշմանդամություն ունեցող անձանց աջակցության միջոցով որոշումների կայացման կառուցակարգի ներդրմանն ու նրանց փոխարեն որոշումներ ընդունելու գործելակերպի բացառմանն ուղղված միջոցների ձեռնարկումն ու իրականացումը:

[210] Նախագիծը հասանելի է https://www.e-draft.am/projects/7838 հղումով, 2026 թվականի հունվարի 20-ի դրությամբ:

[211] Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոմիտեն Հայաստանի Հանրապետության նախնական զեկույցի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումները հասանելի են https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRPD%2FC%2FARM%2FCO%2F1%2FAdd.1&Lang=en հղումով, 2026 թվականի հունվարի 30-ի դրությամբ:

ԳԼՈՒԽ 2. ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆ

Մատչելիությունը հաշմանդամություն ունեցող անձանց անկախ կյանքի և հասարակության մեջ լիարժեք և հավասար մասնակցության նախապայման է: Առանց ֆիզիկական միջավայրի, տրանսպորտի, տեղեկատվության և հաղորդակցության, ներառյալ՝ տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների և համակարգերի, ինչպես նաև հանրության համար բաց հաստատությունների և հանրությանը մատուցվող ծառայությունների պատշաճ հասանելիության, հաշմանդամություն ունեցող անձինք չեն կարող հավասար մասնակցություն ունենալ հասարակական կյանքում:

Մատչելիությունը «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայով ամրագրված հիմնական սկզբունքներից է, որը կարևոր նախապայման է հաշմանդամություն ունեցող անձանց ազատ տեղաշարժվելու իրավունքի, կարծիքի արտահայտման ազատության և այլ իրավունքների իրացումն ապահովելու համար:

Մատչելիության ապահովման պարտավորությունն ամրագրված է միջազգային մի շարք փաստաթղթերում և ներպետական օրենսդրությամբ, մասնավորապես՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայում, դրան վերաբերող մեկնաբանություններում, Եվրոպայի խորհրդի «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» կոնվենցիայում, «Կույրերի, տեսողությունից հաշմանդամություն ունեցող կամ ընթերցողության ֆունկցիայի այլ դժվարություններ ունեցող անձանց համար հրատարակված ստեղծագործությունների մատչելիությունը դյուրացնելու մասին» Մարաքեշի պայմանագրում, «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքում, ենթաօրենսդրական իրավական ակտերում և այլն:

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությունը, հավասար հնարավորությունների և մատչելի պայմանների ապահովումը, խտրականության բացառումը, որպես առաջնահերթություն է նախանշվել նաև ՀՀ կառավարության 2023 թվականի հունիսի 8-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2023-2027 թվականների համալիր ծրագիրը և ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» թիվ 943- Լ որոշմամբ:

Մինչդեռ՝ 2025 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկումները, ստացված գրավոր և բանավոր դիմում-բողոքները, այդ թվում՝ թեժ գծի հեռախոսահամարին ստացված ահազանգերը վկայում են, որ մատչելիության ապահովման տեսանկյունից շարունակում են արդիական մնալ մի շարք համակարգային խնդիրներ, որոնց անդրադարձ է կատարվել նաև նախորդ տարիների տարեկան հաղորդումներում[212] և արտահերթ հրապարակային զեկույցում:[213]

---

[212] Տե՛ս 2021 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 1335-1367, հասանելի է https://www.ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf հղումով, 2026 թվականի հունվարի 23-ի դրությամբ: Տե՛ս նաև 2023 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 667-679, հասանելի է https://ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2026 թվականի հունվարի 23-ի դրությամբ: Տե՛ս նաև 2024 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 402-414, հասանելի է https://ombuds.am/images/files/4d1335361f1f7e9fbcc1cfc10679701e.pdf հղումով, 2026 թվականի հունվարի 23-ի դրությամբ:

[213] Տե՛ս Մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույցը Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ,

Մարդու իրավունքների պաշտպանն, ի թիվս այլնի, արձանագրել է.

- ֆիզիկական միջավայրի մատչելիության ապահովման հետ կապված համակարգային խնդիրներ,
- տեղեկատվության և հաղորդակցության, ներառյալ տեղեկատվական ու հաղորդակցության տեխնոլոգիաների և համակարգերի մատչելիության ապահովման հետ կապված համակարգային խնդիրներ:

Մարդու իրավունքների պաշտպանը հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման, խթանման և պաշտպանության տեսանկյունից խիստ կարևորում է կյանքի բոլոր ոլորտներում (այդ թվում՝ առողջապահության, կրթության, զբաղվածության) մատչելիության ապահովումը, որոնց ավելի մանրամասն անդրադարձ է կատարվել սույն բաժնի տարբեր գլուխներում:

1. Ֆիզիկական միջավայրի մատչելիության ապահովման հետ կապված համակարգային խնդիրներ

2025 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկումները ցույց են տալիս, որ շարունակում են արդիական մնալ բնակելի, հասարակական, արտադրական և այլ գործառնական նշանակություն ունեցող շենքերի և շինությունների, այդ թվում՝ նոր կառուցված, վերակառուցված և հիմնանորոգված շենքերի և շինությունների, տրանսպորտային միջոցների, կանգառների և այլնի մատչելիության ապահովման հետ կապված խնդիրները:

Մտահոգիչ է այն, որ շարունակում են արձանագրվել նոր կառուցված, վերակառուցված և հիմնանորոգված շենքերի և շինությունների մատչելիության նորմերի պահպանման հետ կապված խնդիրներ: Մարդու իրավունքների պաշտպանի հանձնարարությամբ Պաշտպանի աշխատակազմը 2025 թվականի ընթացքում իրականացրել է մի շարք մշտադիտարկման այցեր նոր կառուցված, վերակառուցված և հիմնանորոգված ուսումնական հաստատություններ, ուսումնասիրել է այդ ուսումնական հաստատությունների ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերը (այսուհետ՝ նաև նախագծային փաստաթղթեր)՝ նոր կառուցման, վերակառուցման և հիմնանորոգման գործընթացում մատչելիության սկզբունքների ապահովումը դիտարկելու նպատակով: Այս նպատակի համար ընտրվել են ՀՀ կառավարության 2023 թվականի նոյեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցներ»-ի ծրագրում ընդգրկված դպրոցների ցանկը հաստատելու և ցանկում ընդգրկված դպրոցների համար սահմանված շինարարական աշխատանքների՝ կառուցման, վերակառուցման կամ հիմնանորոգման համար միջամտության աստիճանի ընտրության չափորոշիչները սահմանելու մասին» թիվ 2093-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) հավելված 1-ով հաստատված ցանկում (այսուհետ՝ Ցանկ) ընդգրկված կառուցված, վերակառուցված կամ հիմնանորոգված և «ավարտված» կարգավիճակն ունեցող ուսումնական հաստատությունները: Ուսումնական հաստատությունները հիմնականում ընտրվել են ՀՀ մարզերից:

Այսպես, մշտադիտարկման այցեր են իրականացվել ՀՀ Արագածոտնի մարզի «Օհանավանի Ս. Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ, ՀՀ «Արարատի մարզի

Երևան, 2022թ., էջեր 62-100 հասանելի է https://www.ombuds.am/images/files/66d55894cd4c933cef65a7d6d7d7b35a.pdf հղումով, 2026 թվականի հունվարի 23-ի դրությամբ:

Դեղձուտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ, «Վաղարշապատի Մաքսիմ Գորկու անվան հ. 5 ավագ դպրոց» ՊՈԱԿ, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Ալավերդու Ստեփան Շահումյանի անվան թիվ 5 ավագ դպրոց» ՊՈԱԿ, «Երևանի Ալեքսանդր Բլոկի անվան հ.122 հիմնական դպրոց» ՊՈԱԿ, ՀՀ Վայոց Ձորի մարզի «Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ, ՀՀ Սյունիքի մարզի «Վաղատինի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ, «Սևանի Խաչատուր Աբովյանի անվան ավագ դպրոց» ՊՈԱԿ, ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու Վազգեն Ա-ի անվան թիվ 27 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ և ՀՀ Կոտայքի մարզի «Կաթնաղբյուրի հիմնական դպրոց» ՊՈԱԿ:

Իրականացված մշտադիտարկման այցերը և նոր կառուցված, վերակառուցված և հիմնանորոգված ուսումնական հաստատությունների նախագծային փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում են, որ ուսումնական հաստատությունների նոր կառուցման, հիմնանորոգման և վերակառուցման գործընթացում առկա են մատչելիության սկզբունքների ապահովման հետ կապված մի շարք համակարգային խնդիրներ:

Մշտադիտարկման այցերի և նախագծային փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում, մասնավորապես, արձանագրվել են.

- ուսումնական հաստատությունների նախագծային փաստաթղթերում մատչելիության սկզբունքների ապահովման հետ կապված խնդիրներ,
- փաստացի կատարված շինարարական աշխատանքների մատչելիության ապահովման հետ կապված խնդիրներ,
- նախագծային փաստաթղթերի և փաստացի կատարված շինարարական աշխատանքների անհամապատասխանության հետ կապված խնդիրներ,
- Ցանկում ընդգրկված ուսումնական հաստատությունների շենքերի և շինությունների փաստացի կարգավիճակի և Որոշմամբ նշված «կառուցված», «հիմնանորոգված», «վերակառուցված», «ավարտված» կարգավիճակների միջև անհամապատասխանության հետ կապված խնդիրներ:

Ընդ որում, մշտադիտարկման արդյունքում արձանագրվել են նաև ուսումնական հաստատություններում հաշմանդամություն ունեցող անձանց համար ֆիզիկական, տեղեկատվական և հաղորդակցական մատչելիության ապահովման հետ կապված այլ խնդիրներ ևս:

Նշված խնդիրները և դրանց լուծմանն ուղղված առաջարկությունները մանրամասն ներկայացված են 2025 թվականին հրապարակված «Ուսումնական հաստատությունների կառուցման, վերակառուցման և հիմնանորոգման գործընթացում հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության սկզբունքների ապահովման հետ կապված առանձին խնդիրները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ արտահերթ հրապարակային զեկույցում:[214]

Մտահոգիչ է այն, որ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ Ցանկով Արագածոտնի մարզում ներառված են թվով 45 ուսումնական հաստատություններ և 22 մանկապարտեզներ և ծրագրում ներառված Արագածոտնի մարզի ուսումնական հաստատություններում և մանկապարտեզների նախագծերում ներառված են հաշմանդամություն ունեցող անձանց համար ֆիզիկական միջավայրի մատչելիության պահանջները: Մինչդեռ, մատչելիության դիտարկման նպատակով իրականացված մշտադիտարկման այցերի արդյունքում Պաշտպանի աշխատակազմի կողմից Արագածոտնի մարզում Ցանկով կառուցված/վերակառուցված և «ավարտված»

[214] Հասանելի է https://ombuds.am/images/files/4f3d6140d2ad70eb60739fa4eb5689a8.pdf հետևյալ հղումով, 2026 թվականի հունվարի 22-ի դրությամբ:

կարգավիճակն ունեցող ուսումնական հաստատությունում ևս արձանագրվել են մատչելիության ապահովման հետ կապված բազմաթիվ խնդիրներ:

Երևանի քաղաքապետարանի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2025 թվականի ընթացքում Երևան քաղաքում կառուցվել է 551 թեքահարթակ: Կարևորելով նշված նախաձեռնությունը՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է դրա շարունակականության ապահովման անհրաժեշտությունը՝ բացառելով մատչելիության նորմերին չհամապատասխանող թեքահարթակների կառուցումը: Նշված մտահոգությունը պայմանավորված է նրանով, որ շատ հաճախ նոր կառուցված թեքահարթակները նույնպես չեն համապատասխանում մատչելիության չափորոշիչներին:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2025 թվականին Լոռու մարզում կառուցվել է 878 թեքահարթակ: Արձանագրվել է օրենսդրությամբ նախատեսված մատչելիության չափորոշիչներին չհամապատասխանող թեքահարթակների կառուցման 27 դեպք: Նշված թեքահարթակներից 25 վերակառուցվել են:

2025 թվականի ընթացքում իրականացված մշտադիտարկման այցերի արդյունքում արձանագրվել է, որ շուրջօրյա խնամքի կենտրոնների, օրինակ, «Նորք» շուրջօրյա խնամքի կենտրոն» ՊՈԱԿ-ի, «Ձորակ» շուրջօրյա մասնագիտացված խնամքի կենտրոն» ՊՈԱԿ-ի ֆիզիկական միջավայրը չեն համապատասխանում համընդհանուր դիզայնի սկզբունքներին:

Մարդու իրավունքների պաշտպանի կողմից իրականացված մշտադիտարկման արդյունքներն ու ստացված տեղեկատվության վերլուծությունը ցույց են տալիս, որ շենքերի և շինությունների կառուցման, վերակառուցման և հիմնանորոգման գործընթացներում մատչելիության սկզբունքը չապահովելու գործելակերպը կրում է շարունակական բնույթ, իսկ դրա պատճառները բազմաթիվ են: Այդպիսիք են թերի վերահսկողական կառուցակարգերը, օրինակ, մատչելիության նորմերի խախտումներ պարունակող նախագծերի առնչությամբ տրված թույլտվությունները վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի կողմից անվավեր ճանաչելու գործուն մեխանիզմների բացակայությունը, քաղաքաշինական գործունեության մեջ ներգրավված սուբյեկտների՝ մատչելիության նորմերի վերաբերյալ ոչ բավարար մասնագիտական գիտելիքները, ոչ բավարար մարդկային ռեսուրսները և այլն:

«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների 2-րդ ընդհանուր մեկնաբանության համաձայն՝ բոլոր նոր շենքերն ու շինությունները պետք է նախագծվեն այնպես, որ դրանք ամբողջությամբ մատչելի լինեն հաշմանդամություն ունեցող անձանց համար՝ համապատասխանելով համընդհանուր դիզայնի սկզբունքներին, և մասնակից պետությունները պետք է համապատասխան միջոցներ ձեռնարկեն հաշմանդամություն ունեցող անձանց առջև ծառացող մատչելիության հիմնահարցերի վերաբերյալ շահագրգիռ կողմերի համար ուսուցողական դասընթացներ կազմակերպելու ուղղությամբ, որը ներառում է նաև քաղաքաշինական գործունեության իրականացման մեջ ներգրավված բոլոր սուբյեկտների վերապատրաստումները:

Մտահոգիչ է այն, որ բժշկական կազմակերպությունները նույնպես շարունակում են մատչելի չլինել հաշմանդամություն ունեցող անձանց համար: Այսպես, օրինակ, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ Արագածոտնի մարզում գործող 25 բժշկական կազմակերպությունից 21 է մատչելի հաշմանդամություն ունեցող անձանց համար:

Մտահոգիչ է նաև այն, որ մշակութային և ժամանցային վայրերը նույնպես մատչելի չեն հաշմանդամություն ունեցող անձանց համար: Այսպես, օրինակ, 2025 թվականին Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքով անձը բարձրացրել է Վանաձոր քաղաքի Շառլ Ազնավուրի մշակույթի պալատի (այսուհետ՝ Մշակույթի պալատ) գլխավոր մուտքի թեքահարթակի ապամոնտաժման հետ կապված հարցը: Ըստ տրամադրված տեղեկատվության՝ 2020 թվականի հուլիսին Մշակույթի պալատի գլխավոր մուտքի թեքահարթակն ապամոնտաժվել է: Բողոքի ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ շինությունը համարվել է պատմամշակութային հուշարձան և նախկինում կառուցված թեքահարթակի նախագիծը լիազոր մարմնի՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ համաձայնեցված չի եղել, այդ պատճառով թեքահարթակն ապամոնտաժվել է: Միաժամանակ, ստացված տեղեկատվության համաձայն՝ օրենքով սահմանված կարգով շենքի ճակատային հատվածում վերհան հարթակի կառուցման նախագիծ է իրականացվել, որը համաձայնեցվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտամեթոդական խորհրդի 2025 թվականի նիստում: Համապատասխան փաստաթղթերը տրամադրվել են Վանաձորի համայնքապետարանին նշված վերհան հարթակի կառուցման համար: Մինչդեռ, բողոքի ուսումնասիրության շրջանակում, Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները հաշմանդամություն ունեցող անձանց հետ համատեղ 2025 թվականին մշտադիտարկման այց են իրականացրել Մշակույթի պալատ: Այցի արդյունքում պարզ է դարձել, որ Մշակույթի պալատի մուտքը մատչելի չէ հաշմանդամություն ունեցող անձանց համար և վերջիններիս մուտքը դեպի շենք ապահովվում է միայն շենքի երկրորդ՝ կողային մուտքով:

Պաշտպանի դիտարկմամբ՝ վերոնշյալը խիստ մտահոգիչ է և անհրաժեշտ է անհապաղ քայլեր ձեռնարկել հաշմանդամություն ունեցող անձանց կողմից Մշակույթի պալատ անխոչընդոտ մուտք ապահովելու ուղղությամբ՝ երաշխավորելով համակարգային լուծում, այլ ոչ թե սահմանափակվել ժամանակավոր լուծումներով:

Հատկանշական է, որ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի «Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագրի շրջանակներում մշակվել է «Դասավանդման և ուսումնառության ռազմավարություններ, մոտեցումներ, հնարներ. ՈՒՀԴ, տարբերակված ուսուցում, համատեղ դասավանդում, դասարանի կառավարում» թեմայով վերապատրաստման մոդուլ, որի հիման վրա 2025 թվականին հանրապետության 122 դպրոցում իրականացվել են շարունակական վերապատրաստումներ և մենթորական աջակցություն՝ ընդգրկելով 2124 մանկավարժ: Ըստ տրամադրված տեղեկատվության՝ Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի և տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների կողմից ունիվերսալ դիզայնի, մատչելիության և խելամիտ հարմարեցումների վերաբերյալ իրականացվել է 435 վերապատրաստման դասընթաց 8074 մասնակցի (ուսուցիչ, վարչական աշխատող, աջակցության ծառայություններ տրամադրող մասնագետ) համար: 46616 մասնակցի համար իրականացվել է 3138 վերապատրաստման դասընթաց «Ֆիզիկական և ուսումնական միջավայրերի մատչելիություն», «Կրթության աջակցող միջոցներ՝ մատչելիություն և խելամիտ հարմարեցումներ», «Ընկալման փոփոխություն. ուսուցիչների իրավունքների և հնարավորությունների ընդլայնում» թեմաներով:

Համընդհանուր մատչելիության նպատակին հասնելու հարցում Մարդու իրավունքների պաշտպանը կարևոր նախապայման է համարում ուսումնական հաստատությունների կրթական ծրագրերում մատչելիության ապահովման նպատակով կիրառելի չափանիշներին և համընդհանուր դիզայնի պահանջների ապահովմանը վերաբերող առարկայական ծրագրերի ներդրման ու մասնագետների վերապատրաստման ուղղությամբ իրականացվող աշխատանքների շարունակականության ապահովումը: Նշված առաջարկը պայմանավորված է նաև նրանով, որ շատ հաճախ, պետական իրավասու մարմինների աշխատակիցները մատչելիության ապահովումը դիտարկում են բացառապես թեքահարթակների կառուցման տրամաբանությամբ: Այսպես, օրինակ, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ Կոտայքի մարզի Նաիրի համայնքում 2025 թվականին տրվել է թվով 15 շինարարության թույլտվություն հասարակական նշանակության շինություններ կառուցելու համար, և բոլորն էլ ապահովված են եղել թեքահարթակներով:

Մարդու իրավունքների պաշտպանը խիստ կարևորում է նաև կառուցված հասարակական, արտադրական նշանակության շենքերի ու շինությունների փուլային կարգով վերակառուցմանն ուղղված գործուն և անհետաձգելի միջոցների ձեռնարկումը՝ ապահովելու հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության չափորոշիչների իրացումը:

Այդ կապակցությամբ խիստ մտահոգիչ է այն, որ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ ՀՀ կառավարության 2022 թվականի մարտի 3-ի թիվ 250-Լ որոշման շրջանակներում ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին հետազննված և անձնագրավորված Երևան քաղաքի կարևորագույն նշանակության 16 օբյեկտների, 28 շենքեր և շինությունների մասով 2023 թվականին ձեռք բերված փաստաթղթերի՝ շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննման եզրակացությունների, կազմված անձնագրերի, մշակված զեկույցների հիման վրա 2023-2024 թվականներին կազմակերպվել են մատչելիության նախագծային փաստաթղթերի մշակման աշխատանքների մրցութային գործընթացներ, կնքվել են 28 օբյեկտների մասով պետական գնման պայմանագրեր, որոնք 2024 թվականին չֆինանսավորվելու պատճառով միակողմանի լուծվել են, սակայն հարկ է նկատի ունենալ, որ 2025 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ ստացված տեղեկատվության համաձայն՝ կնքված պայմանագրերը ֆինանսավորում չնախատեսվելու պատճառով լուծվել են՝ 2026 թվականին դրանց ֆինանսավորմանն անդրադառնալու պայմանով: Ըստ տրամադրված տեղեկատվության՝ «Շենքերի և շինությունների մատչելիություն և անձնագրավորում» միջոցառման համար ՀՀ կառավարության 2025 թվականի հունիսի 5-ի «Հայաստանի Հանրապետության 2026-2028 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին» թիվ 741-Ն որոշմամբ չափաքանակներ չեն նախատեսվել, սակայն ՀՀ քաղաքաշինության կոմիտեն առաջարկել է 2026 թվականի պետական բյուջեի առաջնահերթությունների հավելվածում ներառել Կ. Դեմիրճյանի անվան մետրոպոլիտենի 10 կայարանների մատչելիության միջոցառումների նախագծային փաստաթղթերի (այդ թվում՝ փորձաքննության) մշակման աշխատանքները:

Ավելին, նախագծային հատուկ լուծումներով համալրման ենթակա օբյեկտների ցուցակում ընդգրկված չեն նախարարություններին, միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոններին, մարզպետների աշխատակազմերին, համայնքապետարաններին հատկացված շենքերը, սպորտային, մշակութային և ժամանցային բոլոր վայրերը, քրեակատարողական հիմնարկները, ՀՀ վճռաբեկ,

վերաքննիչ և առաջին ատյանի դատարանները և այլն: Խնդրահարույց է, որ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմին այս պահին հատկացված շենքը նույնպես մատչելի չէ հաշմանդամություն ունեցող անձանց համար, իսկ մատչելիության ապահովում հատկացված շենքում հնարավոր չէ իրականացնել: Հարցի կապակցությամբ առկա է ՀՀ կառավարության որոշում՝ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմին հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի կերպով վերակառուցված նոր շենք հատկացնելու վերաբերյալ, սակայն շենքի հատկացման աշխատանքները դեռևս ձգձգվում են:

Նշվածն առավել մտահոգիչ է այն հաշվառմամբ, որ ոլորտում ռազմավարական փաստաթուղթ հանդիսացող «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2023-2027 թվականների համալիր ծրագիրը և ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» թիվ 943-Լ որոշմամբ՝ որպես «Հասարակական, արտադրական նշանակության շենք-շինությունների մատչելիության ապահովում» միջոցառման արդյունք, նշված է միայն հասարակական, արտադրական նշանակության շենք-շինությունների մատչելիության ապահովման ծրագիր-ժամանակացույցի վերաբերյալ իրավական ակտի մշակումը:

Հարցի առնչությամբ Մարդու իրավունքների պաշտպանը կարևորում է պետության կողմից այնպիսի միջոցառումների մշակումն ու իրականացումը, որոնց համատեքստում որպես վերջնարդյունք հստակ կնախանշվի կառուցված հասարակական, արտադրական նշանակության շենքերի ու շինությունների վերակառուցումը՝ նշելով ֆինանսական աղբյուրներն ու անհրաժեշտ ֆինանսական միջոցները, իրականացվելիք աշխատանքների մշտադիտարկման ընթացակարգերը: Կարևոր է, որ այդ միջոցառումները հստակ ժամանակացույց պարունակեն բնակելի, հասարակական, արտադրական և այլ գործառնական նշանակություն ունեցող բոլոր շենքերի և շինությունների, այդ թվում՝ նախարարություններին, միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոններին, մարզպետների աշխատակազմերին, համայնքապետարաններին հատկացված շենքերի, սպորտային, մշակութային և ժամանցային բոլոր վայրերի, քրեակատարողական հիմնարկների, ՀՀ վճռաբեկ, վերաքննիչ և առաջին ատյանի դատարանների, այնպես էլ ՀՀ ողջ տարածքում կանգառների, ստորգետնյա և վերգետնյա անցումների, մայթերի և ճանապարհների, ավտոկայանատեղերի և այլնի մատչելիության ուղղությամբ իրականացվող անհետաձգելի աշխատանքների վերաբերյալ:

Ընդ որում, նշված միջոցառումների իրականացումը պետք է ընդգրկի ՀՀ ողջ տարածքը, հաշվի առնելով նաև այն, որ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ մարզերի մեծ մասում վերգետնյա և ստորգետնյա անցումները հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի դարձնելու ուղղությամբ միջոցառումներ չեն իրականացվել: 2025 թվականի դրությամբ Գեղարքունիքի և Կոտայքի մարզերում հաշմանդամություն ունեցող անձանց համար առկա չեն վերգետնյա և ստորգետնյա անցումներ:

Նշվածի համատեքստում Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ թեև տարիներ շարունակ բարձրացվել է ֆիզիկական մատչելիության ապահովման հարցում անհետաձգելի միջոցառումներ իրականացնելու անհրաժեշտությունը, ներկայացվել են առաջարկություններ, սակայն մշտադիտարկումների արդյունքները, ստացված բողոքների ուսումնասիրությունները ու տրամադրված տեղեկությունները կրկին վկայում են, որ չնայած պետության կողմից իրականացվող միջոցառումներին՝ դրանք բավարար չեն և չեն երաշխավորում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների

ապահովումը: Տեղեկությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ խնդիրն առավել արդիական է շարունակում մնալ ՀՀ մարզերում:

«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների 2-րդ ընդհանուր մեկնաբանության համաձայն՝ պետությունը պարտավոր է ապահովել ֆիզիկական միջավայրի մատչելիությունը և՛ քաղաքներում, և՛ գյուղական համայնքներում: Ֆիզիկական մատչելիության կարևոր բաղադրիչ է նաև փոխադրամիջոցների մատչելիության ապահովումը: Մինչդեռ՝ 2025 թվականի ընթացքում շարունակել են չլուծված մնալ նախկինում արձանագրված օրենսդրական խնդիրները՝ կապված, օրինակ, միջմարզային, ներմարզային և բազմաբնակավայր համայնքների բնակավայրերի միջև կանոնավոր երթուղիների մրցույթին ներկայացվող պահանջների հետ, որոնք հնարավորություն են տալիս կազմակերպություններին մրցույթին մասնակցել ընդամենը երթուղիներում ընդհանուր քանակի առնվազն 10 տոկոսի չափով մատչելի կամ հարմարեցված ավտոբուսների ապահովմամբ: Նշված հարցի առնչությամբ Մարդու իրավունքների պաշտպանը 2025 թվականին կայացրել է նաև իրավունքների խախտման առկայության վերաբերյալ որոշում:

«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների 2-րդ ընդհանուր մեկնաբանության համաձայն՝ օրենսդրությունը պետք է պարունակի մատչելիության պահանջներ պետական գնումների ընթացակարգերում: Անընդունելի է պետական միջոցների օգտագործումն անհավասարություն ստեղծելու կամ ամրապնդելու համար, որն անխուսափելիորեն առաջանում է անհասանելի ծառայությունների և ենթակառուցվածքների պատճառով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ օրենսդրությամբ նախատեսված է ոչ մատչելի նոր փոխադրամիջոցներ ձեռք բերելու հնարավորություն, որպիսի կարգավորումը չի բխում «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի պահանջներից:

Խիստ մտահոգիչ է այն, որ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ Գեղարքունիքի մարզում առկա է կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող 6 ավտոբուս և 51 միկրոավտոբուս, որոնք հարմարեցված չեն հաշմանդամություն ունեցող անձանց համար, իսկ Լոռու մարզում 2025 թվականի ընթացքում ձեռք է բերվել 5 ավտոբուս, 3 միկրոավտոբուս, ավտոբուսներից 5 մատչելի են հաշմանդամություն ունեցող անձանց համար, մինչդեռ, միկրոավտոբուսները հարմարեցված չեն հաշմանդամություն ունեցող անձանց համար: Շիրակի մարզի Գյումրի քաղաքի ներհամայնքային երթուղիները սպասարկում են 89 միկրոավտոբուս, որոնցից միայն 5 են հարմարեցված հաշմանդամություն ունեցող անձանց համար:

Խնդրահարույց է նաև այն, որ Երևանի քաղաքապետարանի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2025 թվականի դրությամբ Երևան քաղաքի ներհամայնքային երթուղիներում շահագործվում է «ՀԻԳԵՐ» մակնիշի 103 ավտոբուս, որոնք հարմարեցված չեն հաշմանդամություն ունեցող անձանց համար: ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2025 թվականի դրությամբ Սյունիքի մարզում գործում է 20 ավտոբուս և 17 միկրոավտոբուս, որոնք հարմարեցված չեն հաշմանդամություն ունեցող անձանց համար: Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի ենթակայությամբ գործող հասարակական տրանսպորտ առկա չէ, Ջերմուկ համայնքում հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի հասարակական տրանսպորտային միջոց առկա չէ, Արենի

համայնքում նույնպես հաշմանդամություն ունեցող անձանց համար հարմարեցված ավտոբուսներ, միկրոավտոբուսներ, տրոլեյբուսներ չկան:

Նշված ցուցանիշները շարունակում են վկայել այն մասին, որ գործող կառուցակարգերը չեն երաշխավորում հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի տրանսպորտային միջոցների ապահովումը, հատկապես, ՀՀ մարզերում, որպիսի պայմաններում անհրաժեշտ է ներդնել նոր կառուցակարգեր՝ ուղղված Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում փոխադրամիջոցների մատչելիության ապահովմանը՝ երաշխավորելով հաշմանդամություն ունեցող անձանց ազատ տեղաշարժի իրավունքը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***միջոցներ ձեռնարկել շենքերի և շինությունների, այդ թվում՝ ուսումնական հաստատությունների կառուցման, հիմնանորոգման և վերակառուցման գործընթացներում մատչելիության սկզբունքի ապահովումն առանց բացառության ապահովելու ուղղությամբ:***
- ✓ ***միջոցներ ձեռնարկել շենքերի և շինությունների կառուցման, հիմնանորոգման և վերակառուցման գործընթացներում մատչելիության սկզբունքի ապահովման նպատակով առկա վերահսկողական մեխանիզմների կատարելագործման ուղղությամբ:***
- ✓ ***շարունակել ուսումնական հաստատությունների կրթական ծրագրերում մատչելիության ապահովման նպատակով կիրառելի չափանիշներին և համընդհանուր դիզայնի պահանջների ապահովմանը վերաբերող առարկայական ծրագրերի ներդրմանն ու մասնագետների, այդ թվում՝ թույլտվություններ տրամադրելու և վերահսկողություն իրականացնելու գործընթացներում ներգրավված իրավասու մարմինների ներկայացուցիչների՝ մատչելիության ապահովման նպատակով կիրառելի չափանիշների և համընդհանուր դիզայնի պահանջների ապահովմանը վերաբերող թեմաներով վերապատրաստումների իրականացմանն ուղղված աշխատանքները:***
- ✓ ***մշակել և իրականացնել միջոցառումներ, որոնք կնախանշեն կառուցված հասարակական, արտադրական նշանակության շենքերի ու շինությունների, ինչպես նաև սպորտային, մշակութային ու ժամանցային վայրերի և բժշկական կազմակերպությունների վերակառուցումը՝ որպես վերջնարդյունք նշելով ֆինանսական աղբյուրներն ու անհրաժեշտ ֆինանսական միջոցները, իրականացվելիք աշխատանքների մշտադիտարկման ընթացակարգերը:***
- ✓ ***գործուն քայլեր ձեռնարկել ՀՀ մարզերում ֆիզիկական միջավայրի մատչելիության ապահովման ուղղությամբ:***
- ✓ ***իրականացնել ներհամայնքային, միջմարզային և ներմարզային բնակավայրերի միջև կանոնավոր երթուղիների բոլոր փոխադրամիջոցների մատչելիության ապահովմանն ուղղված օրենսդրական փոփոխություններ՝ երաշխավորելով հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց համար փոխադրամիջոցների հասանելիությունը:***
- ✓ ***միջոցներ ձեռնարկել գործնականում բացառելու ոչ մատչելի փոխադրամիջոցների ձեռքբերումը:***

2. Տեղեկատվության և հաղորդակցության, ներառյալ տեղեկատվական ու հաղորդակցության տեխնոլոգիաների և համակարգերի մատչելիության ապահովման հետ կապված համակարգային խնդիրներ

2025 թվականի ընթացքում շարունակում են արդիական մնալ տեղեկատվության և հաղորդակցության, ներառյալ տեղեկատվական ու հաղորդակցության տեխնոլոգիաների և համակարգերի մատչելիության ապահովման հետ կապված հաշմանդամություն ունեցող անձանց կյանքի բոլոր ոլորտներում բազմիցս բարձրաձայնվող, ինչպես նաև մատչելի թվային ծառայությունների ապահովման հետ կապված խնդիրները:

Մասնավորապես, Պաշտպանի մշտադիտարկման արդյունքները ցույց են տալիս, որ 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար դեռևս մատչելի չեն այնպիսի կարևոր նշանակություն ունեցող կայքէջեր, ինչպիսիք են, օրինակ, իրավական ակտերի նախագծերի միասնական կայքէջը՝ «e-draft.am», Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգը՝ «arlis.am», դատական տեղեկատվական համակարգը՝ «datalex.am», «e-request.am» էլեկտրոնային հարցումների միասնական հարթակը և այլն:

Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր երեխաների իրավունքների պաշտպանության հարցերով զբաղվող հասարակական խորհրդի՝ տեսողության հետ կապված խնդիրներ ունեցող երեխայի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ կայքերը հաճախ չեն համապատասխանում միջազգային մատչելիության չափանիշներին (WCAG), դրանց կառուցվածքը դժվար ընթեռնելի է էկրան ընթերցողներով, նկարները չունեն alt-բացատրություններ, իսկ հղումները չեն ունենում ձայնային ուղեցույց: Բացի դրանից՝ բջջային հավելվածների մեծ մասը օպտիմալացված չէ, ինչի պատճառով օգտատերերը չեն կարողանում ինքնուրույն կատարել կարևոր գործողություններ՝ առցանց վճարումներ, գրանցումներ, տեղեկությունների որոնում և այլն:

«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների 2-րդ ընդհանուր մեկնաբանության համաձայն՝ արդարադատության մատչելիության ապահովումը չի կարող երաշխավորվել պետության կողմից, եթե օրենսդիր և դատական համակարգի ծառայությունները չեն ապահովում իրենց կողմից տրամադրված տեղեկությունների և հաղորդակցման մեխանիզմների մատչելիությունը հաշմանդամություն ունեցող անձանց համար:

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) տրամադրած տեղեկատվության համաձայն՝ **https://www.e-draft.am/**, **https://www.arlis.am**, **http://www.datalex.am**, **https://e-request.am**, **https://e-disability.am**, **https://e-gov.am**, **http://www.parliament.am**, **https://www.e-register.am**, **https://www.gov.am** կայքերի մատչելիության ապահովման նպատակով 2025 թվականի ընթացքում իրականացվել են սահմանափակ մատչելիության բարելավման միջոցառումներ:

Նախարարությունը նաև նշել է, որ՝ **https://www.e-draft.am/**, **https://www.arlis.am**, և **https://e-gov.am** կայքերի համար անցկացվել է աուդիտ, **https://e-disability.am** կայքը համապատասխանեցվել է մատչելիության ստանդարտներին, իսկ **https://www.e-register.am** կայքը գտնվում է «Հենակետ» դիզայն համակարգի և մատչելիության պահանջներին համապատասխանեցման փուլում, իսկ մնացած կայքերի մասով միջոցառումներ դեռևս չեն իրականացվել:

Կարևորելով ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կողմից կայքերի մատչելիության ապահովման նպատակով ուղեցույցների և գործիքների

մշակման հետ կապված աշխատանքների իրականացումը՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ 2025 թվականի դրությամբ դեռևս ներդրված չեն այնպիսի գործուն կառուցակարգեր, որոնք կբացառեն ոչ մատչելի կայքերի ստեղծումը և կապահովեն նաև թվային ծառայությունների մատչելիությունը:

Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ շարունակում են արդիական մնալ նաև բանկերի և այլ ոլորտներում գործունեություն իրականացնող կազմակերպությունների կողմից տրամադրվող ծառայությունների մատչելիության ապահովման հետ կապված խնդիրները: Ընդ որում, խնդիրները կապված են ինչպես օրենսդրական կարգավորումների, այնպես էլ գործնականում մատչելի ծառայությունների տրամադրումը երաշխավորելու գործուն կառուցակարգերի ներդրման հետ: Այսպես, օրինակ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 296-րդ հոդվածի համաձայն. «Եթե քաղաքացին ֆիզիկական արատի, հիվանդության կամ անգրագիտության պատճառով չի կարող իր ձեռքով ստորագրել, ապա նրա խնդրանքով գործարքը կարող է ստորագրել այլ քաղաքացի: Վերջինիս ստորագրությունը պետք է վավերացնի նոտարը կամ նման նոտարական գործողություն կատարելու իրավունք ունեցող այլ պաշտոնատար անձը՝ նշելով այն պատճառները, որոնց ուժով գործարք կնքողը չի կարողացել այն ստորագրել»:

Մարդու իրավունքների պաշտպանը, որպես «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների մշտադիտարկում իրականացնող անձ, խնդրահարույց է համարում նման կարգավորումների առկայությունը և կիրառումը: Պետությունը պետք է գործուն միջոցներ ձեռնարկի՝ ապահովելու հասարակությանը տրամադրվող ծառայությունների մատչելիությունը՝ բացառելով մասնավոր սուբյեկտների կողմից այնպիսի խտրական մոտեցումներ կիրառելու օրենսդրական հնարավորությունը, ինչպիսիք են մատչելի տեղեկատվության տրամադրման փոխարեն հաշմանդամություն ունեցող անձի վրա լրացուցիչ ֆինանսական բեռ դնելն ու երրորդ անձի գործարքների մեջ ներգրավելը:

2025 թվականի ընթացքում շրջանառվել է ««Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» և ««Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը, որի վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանը իրավասու մարմին է ներկայացրել իր դիտողություններն ու առաջարկությունները և առաջարկել, որ օրենսդրական փոփոխությունները կրեն շարունակական բնույթ և բացի պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, բանկերում և դրանց մասնաճյուղերում, վարկային կազմակերպություններում և «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 2-րդ հոդվածում նշված ոլորտներում հաշմանդամություն ունեցող անձանց՝ իրենց համար մատչելի եղանակներով ծառայություններ ստանալու իրավունքի երաշխավորմանն ուղղված միջոցառումներից, գործուն միջոցներ ձեռնարկել նաև կենսագործունեության հնարավոր բոլոր ոլորտներում հասարակությանը տրամադրվող ծառայությունների մատչելիությունն ապահովելու ուղղությամբ:

«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների 1-ին ընդհանուր մեկնաբանության համաձայն.

«Իրավունակության իրացման հարցում հաշմանդամություն ունեցող անձանց աջակցությունը կարող է ներառել համընդհանուր դիզայնին և մատչելիությանը վերաբերող

միջոցառումներ, օրինակ, պահանջելով մասնավոր և պետական ոլորտի կազմակերպություններից, ինչպիսիք են բանկերը և ֆինանսական կազմակերպությունները, տրամադրել տեղեկատվություն հասկանալի ձևաչափով կամ ապահովել մասնագիտական ժեստերի լեզվի թարգմանություն՝ հաշմանդամություն ունեցող անձանց հնարավորություն տալու համար կատարել բանկային հաշիվ բացելու, պայմանագրեր կնքելու կամ այլ սոցիալական գործարքներ իրականացնելու համար անհրաժեշտ իրավական գործողությունները: Աջակցությունը կարող է նաև ներառել հաղորդակցման բազմազան, ոչ ավանդական մեթոդների մշակում և ճանաչում, հատկապես նրանց համար, ովքեր օգտագործում են հաղորդակցման ոչ վերբալ ձևեր՝ իրենց կամքն ու նախասիրություններն արտահայտելու համար:»:

Այսպես, օրինակ, Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով տեսողության հետ կապված խնդիրներով պայմանավորված հաշմանդամություն ունեցող անձը հայտնել է, որ վճարային քարտ ստանալու նպատակով ինքն այցելել է բանկ, որտեղ իրեն տեղեկացրել են, որ վճարային քարտի թողարկման և սպասարկման համար բանկային հաշվի գրավոր պայմանագիր իր հետ կնքվել չի կարող, քանի որ տեսողության հետ կապված խնդիրների պատճառով ինքը չի կարող ստորագրել որոշակի փաստաթղթեր: Բանկում առաջարկվել է, որ իր փոխարեն գրավոր գործարքը կնքի այլ քաղաքացի՝ նոտարական վավերացմամբ կամ էլ նշանակվի խնամակալ, ով կստորագրի իր փոխարեն: Մինչդեռ բողոք ներկայացրած անձը նշել է, որ ինքը կարող է ձեռքով ստորագրել, չի ցանկանում այլ անձի ներգրավել գործարքի կնքման գործընթացին և առաջարկել է գործարքի կնքման փաստաթուղթն առցանց եղանակով ուղարկել իրեն, որպեսզի ինքն իրեն մատչելի եղանակով, այն է՝ տեքստ ընթերցող ծրագրի միջոցով, ծանոթանա փաստաթղթի բովանդակությանը և ստորագրի այն, սակայն բանկը համաձայնություն չի տվել:

Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր երեխաների իրավունքների պաշտպանության հարցերով զբաղվող հասարակական խորհրդի՝ տեսողության հետ կապված խնդիրներ ունեցող երեխայի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ շարունակում են արդիական մնալ նաև բանկոմատների՝ ձայնային հրահանգներով ապահովված չլինելու, բոլոր ֆիզիկական կոճակները բրայլյան տառերով նշված չլինելու, հպման կամ հարմարեցված էկրաններով ապահովված չլինելու և այլ խնդիրները:

Մարդու իրավունքների պաշտպանը նշում է, որ վերոնշյալը խիստ մտահոգիչ է, և անհրաժեշտ է մշակել միասնական քաղաքականություն, որով կառաջնորդվեն Հայաստանի Հանրապետությունում գործող բոլոր բանկերը և այլ ֆինանսական կազմակերպությունները՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի ձևաչափերով տեղեկատվության և հաղորդակցության տրամադրման, ինչպես նաև խելամիտ հարմարեցումների ապահովման նպատակով:

Շարունակում են արդիական մնալ լսողության հետ կապված խնդիրներով պայմանավորված հաշմանդամություն ունեցող անձանց համար հաղորդակցության մատչելիության ապահովման հետ կապված այլ խնդիրներ ևս: Մասնավորապես, Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության հարցերով հասարակական խորհրդի անդամի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ լսողության հետ կապված խնդիրներով պայմանավորված հաշմանդամություն ունեցող անձինք, ովքեր հաղորդակցության տարբեր միջավայրերում՝ մեդիայում, ծառայությունների մատուցման ընթացքում կամ կրթական լսարաններում, նախընտրում են տեղեկատվությունը ստանալ ընթերցման միջոցով, նրանց համար այդ միջավայրերում չեն ապահովվում խոսքից տեքստի

միաժամանակյա լուսագրման ծառայություն, որպես աջակցող տեխնոլոգիա: Բացի այդ, հանրային մեծ և փակ տարածքներում դեռևս չեն տեղադրվել լսողական հանգույցներ, որոնք հնարավորություն կտան լսողության հետ կապված խնդիրներով պայմանավորված հաշմանդամություն ունեցող անձանց համար ապահովել լսողական սարքերի միջոցով խոսքի ավելի հստակ և որակյալ ընկալում:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում բարձրաձայնվել է նաև Հանրային պաշտպանի գրասենյակի կողմից հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ ոչ զգայուն վերաբերմունք դրսևորելու հետ կապված հարց: Հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ ոչ զգայուն վերաբերմունքը կարող է էականորեն սահմանափակել հաշմանդամություն ունեցող անձանց՝ իրավական գործընթացներին արդյունավետ մասնակցելու հնարավորությունը, ինչպես նաև նվազեցնել նրանց վստահությունը հանրային ծառայությունների նկատմամբ, ուստի անհրաժեշտ է արդյունավետ միջոցներ ձեռնարկել բարձրացնելու հասարակության՝ հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրների վերաբերյալ իրազեկվածությունը և հարգանք սերմանելու հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և արժանապատվության նկատմամբ:

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների 2-րդ ընդհանուր մեկնաբանության համաձայն.

«Մատչելիությունը հաշմանդամություն ունեցող անձանց համար անկախ ապրելու նախապայման է: Պետությունը պարտավոր է իրականացնել բոլոր համապատասխան միջոցները փոխելու այն օրենսդրական կարգավորումները, որոնք պարունակում են հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ խտրական մոտեցումներ:»:

2025 թվականի ընթացքում արդիական են մնացել նաև թանգարաններում, գրադարաններում և ոչ նյութական մշակութային ժառանգության բնագավառում հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի հիմունքներով արդյունավետ ծրագրերի իրականացման հետ կապված խնդիրները:

Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր երեխաների իրավունքների պաշտպանության հարցերով զբաղվող հասարակական խորհրդի՝ տեսողության հետ կապված խնդիրներ ունեցող երեխայի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ տեսողության խնդիրներ ունեցող անձինք գրեթե զրկված են մշակութային կյանքին լիարժեք մասնակցելու հնարավորությունից: Թատրոնները, կինոթատրոնները, թանգարաններն ու համերգասրահները չունեն աուդիոնկարագրություն (audio description), հատուկ լսողական ուղեկցում կամ հարմարեցված բովանդակություն: Բացի այդ, միջոցառումների տարածքներում չկան տակտիլ նշումներ կամ ուղեցույցներ, որոնք կօգնեին գտնել մուտքը, դահլիճը կամ նստատեղը: Արդյունքում մշակութային կյանքը հաշմանդամություն ունեցող անձանց համար նույնպես լիարժեք ապահովված չէ: Տեսողության հետ կապված խնդիրներ ունեցող անձանց համար աշխատաշուկայում ընդգրկվածությունը նույնպես սահմանափակվում է այն պատճառով, որ շատ կազմակերպություններում ապահովված չեն մատչելիության անհրաժեշտ պայմանները: Մասնավորապես, աշխատանքային միջավայրում բացակայում են համապատասխանեցված գործիքներ և տեղեկատվական տեխնոլոգիաներ՝ էկրան ընթերցող ծրագրեր, խոշորացնող սարքավորումներ, հարմարեցված ծրագրային ապահովում կամ այլ տեխնիկական լուծումներ, որոնք անհրաժեշտ են արդյունավետ աշխատանքի համար: Հայաստանում ներառական միջավայրի ձևավորման գործընթացում կարևոր նշանակություն ունի նաև ադապտիվ և պարալիմպիկ սպորտաձևերի հասանելիությունը: Չնայած միջազգային փորձը ցույց է տալիս, որ այդ սպորտաձևերը

կարևոր դեր են խաղում տեսողության հետ կապված խնդիրներ ունեցող անձանց ֆիզիկական և հոգեբանական զարգացման մեջ, Հայաստանում դրանց հասանելիությունն առայժմ սահմանափակ է: Պակասում են ինչպես համապատասխան ենթակառուցվածքներ, այնպես էլ հագեցած մարզասրահներ, մասնագիտացված մարզիչներ և անհրաժեշտ սարքավորումներ, ուստի Մարդու իրավունքների պաշտպանը կարևորում է նաև մշակութային, ժամանցային, սպորտային կյանքի, այդ թվում՝ ադապտիվ և պարալիմպիկ սպորտաձևերի հասանելիության ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացումը:

Պաշտպանը վերահաստատում է իր այն դիրքորոշումը, որ օրենսդրությամբ սահմանված մանկական և լրատվական մատչելի տեսալսողական հաղորդումների և ֆիլմերի չափաքանակները շարունակում են քիչ լինել հաշմանդամություն ունեցող անձանց՝ տեղեկատվություն ստանալու մատչելիության ապահովման տեսանկյունից: Այսպես, օրինակ, ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ տեսալսողական մեդիածառայություն մատուցող ընկերություններից մեկը տեսալսողական ծրագրով 2025 թվականի սեպտեմբերի 23-ից 25-ն ընկած ժամանակահատվածում եթեր էր հեռարձակել ֆիլմեր, առանց լսողական խնդիրներ ունեցող սպառողների համար տեղեկատվության մատչելիության ապահովման՝ օրվա ընթացքում չներկայացնելով ֆիլմեր ժեստերի լեզվով թարգմանությամբ կամ հայերեն ենթագրով: Միևնույն ժամանակ, տեսալսողական մեդիածառայություն մատուցող մեկ այլ ընկերության տեսալսողական ծրագրով 2025 թվականի սեպտեմբերի 27-ից հոկտեմբերի 2-ն ընկած ժամանակահատվածում եթեր էին հեռարձակվել մանկական հաղորդումներ, առանց լսողական խնդիրներ ունեցող սպառողների համար տեղեկատվության մատչելիության ապահովման՝ օրվա ընթացքում չներկայացնելով առնվազն մեկական մանկական հաղորդում հայերեն ժեստերի լեզվով թարգմանությամբ: Արդյունքում, նշված ընկերությունների նկատմամբ ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը կիրառել է վարչական տույժեր:

Տեղեկատվության մատչելիության ապահովման տեսանկյունից Մարդու իրավունքների պաշտպանը խիստ կարևորում է նաև հասարակական տրանսպորտից օգտվելու ընթացքում մատչելի տեղեկատվություն ստանալու իրավունքի ապահովումը: Մինչդեռ՝ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից իրականացված մշտադիտարկման արդյունքները վկայում են, որ մատչելի ձևաչափով տեղեկատվության տրամադրումը հաշմանդամություն ունեցող ուղևորներին գործնականում չի ապահովվում:

Այդ առումով կարևոր է նաև հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների վերաբերյալ վարորդների իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումների շարունակականության ապահովումը: Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկումները վկայում են, որ հասարակական տրանսպորտի վարորդները շատ հաճախ իրազեկված չեն հաշմանդամություն ունեցող ուղևորների իրավունքների մասին, չունեն նրանց հետ հաղորդակցվելու հմտություններ, ավտոբուսները կանգառներում կայանում են այնպիսի եղանակով, որը հնարավորություն չի տալիս սայլակ օգտագործող հաշմանդամություն ունեցող անձանց ինքնուրույն օգտվել փոխադրամիջոցից:

Հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության ապահովման համար կարևոր է տեղեկատվական տարբեր միջոցների, այդ թվում՝ ձայնային փարոսիկների (ձայնային լուսացույցների), տակտիլային ցուցանակների օգտագործումը:

Երևանի քաղաքապետարանի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ Երևան քաղաքում առկա է շուրջ 1200 կանգառ, որոնցից նոր տեղադրված թվով 97

կանգառասրահների հատակները կահավորված են գոգավոր-ուռուցիկ սալիկներով և մատչելի են հաշմանդամություն ունեցող անձանց համար: Նման փոքր թիվը խնդրահարույց է:

Խնդրահարույց է նաև այն, որ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ շատ մարզերում առկա չեն տակտիլ սալիկներ (օրինակ՝ Գեղարքունիքի մարզ, Լոռու մարզ, Տավուշի մարզ), ինչպես նաև ձայնային ազդանշանով լուսացույցներ (օրինակ՝ Արագածոտնի մարզ, Վայոց ձորի մարզ, Տավուշի մարզ), իսկ Երևանի քաղաքապետարանի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2025 թվականի ընթացքում Շենգավիթ վարչական շրջանի աշխատանքային ծրագրերով մայթերի, փողոցների և անցումների տակտիլ սալիկների տեղադրման աշխատանքներ չեն կատարվել: Աջափնյակ վարչական շրջանի ոչ բոլոր մայթերը, փողոցներն ու անցումներն են ապահովված տակտիլ սալիկներով:

Նոր կառուցվող, վերակառուցվող և հիմնանորոգվող շենքերի և շինությունների նախագծանախահաշվային փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ դրանք հիմնականում չեն նախանշում տակտիլային սալիկների օգտագործում: Իսկ ձայնային փարոսիկներ օգտագործվում են շատ քիչ՝ չերաշխավորելով տեսողության հետ կապված խնդիրներ ունեցող անձանց ազատ տեղաշարժը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***ներդնել գործուն կառուցակարգեր՝ ապահովելու հաշմանդամություն ունեցող անձանց համար թվային ծառայությունների, այդ թվում՝ կայքերի մատչելիությունն ու արդիականությունը:***
- ✓ ***իրականացնել օրենսդրական փոփոխություններ՝ ուղղված հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ խտրական մոտեցումների վերացմանը՝ բացառելով մյուսների հետ հավասար հիմունքներով ծառայություններից, այդ թվում՝ բանկերի կողմից տրամադրվող ծառայություններից օգտվելու սահմանափակումները:***
- ✓ ***միջոցներ ձեռնարկել՝ ավելացնելու մատչելի ձևաչափով հեռուստատեսությամբ հեռարձակվող նյութի չափաքանակը:***
- ✓ ***միջոցներ ձեռնարկել՝ ապահովելու հասարակական տրանսպորտից օգտվելու ընթացքում մատչելի տեղեկատվություն, այդ թվում՝ կանգառների վերաբերյալ ինքնուրույն տեղեկատվություն ստանալու իրավունքը:***
- ✓ ***իրականացնել կանոնավոր երթուղիների փոխադրամիջոցների վարորդների վերապատրաստումներ՝ ուղղված հաշմանդամություն ունեցող անձանց հետ հաղորդակցվելու, փոխադրամիջոցների հնարավորությունները օգտագործելու հմտությունների կատարելագործմանը:***
- ✓ ***միջոցներ ձեռնարկել՝ երաշխավորելու տեսողության հետ կապված խնդիրներ ունեցող անձի համար ազատ տեղաշարժվելու իրավունքը՝ տեղեկատվական տարբեր միջոցների՝ այդ թվում՝ ձայնային փարոսիկների (ձայնային լուսացույցների), տակտիլային ցուցանակների օգտագործմամբ:***
- ✓ ***միջոցներ ձեռնարկել հաշմանդամություն ունեցող անձանց համար մշակութային, սպորտային ու ժամանցային կյանքը մատչելի դարձնելու ուղղությամբ, այդ թվում՝ միջոցներ ձեռնարկել նաև ադապտիվ և պարալիմպիկ սպորտաձևերի հասանելիության ապահովման ուղղությամբ:***

- ✓ ***գործուն միջոցներ ձեռնարկել լսողության հետ կապված խնդիրներով պայմանավորված հաշմանդամություն ունեցող անձանց համար հաղորդակցության մատչելիության ապահովման ուղղությամբ, այդ թվում՝ անհրաժեշտ տեխնիկական սարքավորումներով ապահովելու ուղղությամբ, ներդնել խոսքից տեքստի միաժամանակյա լուսագրման ծառայություն, տեղադրել լսողական հանգույցներ և այլն:***

ԳԼՈՒԽ 3. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Պետությունը հաշմանդամություն ունեցող անձանց կրթություն ստանալու իրավունքի նկատմամբ հարգանքը սահմանել է որպես հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման, խթանման և պաշտպանության պետական քաղաքականության հիմնական սկզբունքներից մեկը: Այդ նպատակով պետությունը համընդհանուր ներառական կրթությունը հռչակել է որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք: Պետությունը պարտավորվել է ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց համար առանց խտրականության ու մյուսների հետ հավասար հիմունքներով ընդհանուր բարձրագույն կրթության, մասնագիտական կրթության, մեծահասակների ուսուցման և ամբողջ կյանքի ընթացքում կրթության մատչելիությունը:

Հաշմանդամություն ունեցող անձանց կրթության իրավունքն ապահովելու պարտավորությունն իր ամրագրումն է գտել միջազգային փաստաթղթերում և ներպետական օրենսդրությամբ, մասնավորապես՝ «Երեխայի իրավունքների մասին», «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիաներում, «Կույրերի, տեսողությունից հաշմանդամություն ունեցող կամ ընթերցողության ֆունկցիայի այլ դժվարություններ ունեցող անձանց համար հրատարակված ստեղծագործությունների մատչելիությունը դյուրացնելու մասին» Մարաքեշի պայմանագրում, դրանց վերաբերող մեկնաբանություններում, «Հանրակրթության մասին» օրենքում, «Նախադպրոցական կրթության մասին» օրենքում, «Մասնագիտական կրթության և ուսուցման մասին» օրենքում, ենթաօրենսդրական իրավական ակտերում և այլն:

Մինչդեռ՝ Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկումները, ստացված գրավոր և բանավոր դիմում-բողոքները, այդ թվում՝ թեժ գծի հեռախոսահամարին ստացված ահազանգերը վկայում են, որ հաշմանդամություն ունեցող անձանց կրթության իրավունքի ապահովման տեսանկյունից առկա են մի շարք համակարգային խնդիրներ, որոնց անդրադարձ է կատարվել նաև նախորդ տարիների տարեկան հաղորդումներում[215] և արտահերթ հրապարակային զեկույցներում[216]: Մարդու իրավունքների պաշտպանն, ի թիվս այլնի, արձանագրել է.

- մատչելիության ապահովման և խելամիտ հարմարեցումների տրամադրման հետ կապված խնդիրներ,

---

[215] Տե՛ս 2023 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 680-689, հասանելի է https://ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2026 թվականի հունվարի 29-ի դրությամբ: Տե՛ս նաև 2024 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 415-421, հասանելի է https://ombuds.am/images/files/4d1335361f1f7e9fbcc1cfc10679701e.pdf հղումով, 2026 թվականի հունվարի 29-ի դրությամբ:

[216] Տե՛ս Մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույցը Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ, Երևան, 2022թ., էջեր 64-71 և 154-184 հասանելի է https://www.ombuds.am/images/files/66d55894cd4c933cef65a7d6d7d7b35a.pdf հղումով, 2026 թվականի հունվարի 29-ի դրությամբ: Տե՛ս նաև Մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույցը՝ «Ուսումնական հաստատությունների կառուցման, վերակառուցման և հիմնանորոգման գործընթացում հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության սկզբունքների ապահովման հետ կապված առանձին խնդիրները Հայաստանի Հանրապետությունում», Երևան, 2025թ., հասանելի է https://ombuds.am/images/files/4f3d6140d2ad70eb60739fa4eb5689a8.pdf հղումով, 2026 թվականի հունվարի 29-ի դրությամբ:

- կրթության որակի և արդյունավետության ապահովման հետ կապված խնդիրներ,
- հաշմանդամություն ունեցող երեխաների կրթությունը առանձին միջավայրում կազմակերպելու խնդիրը:

1. Մատչելիության ապահովման և խելամիտ հարմարեցումների տրամադրման հետ կապված խնդիրներ

2025 թվականի ընթացքում շարունակում են արդիական մնալ ուսումնական հաստատությունների, այդ թվում՝ նախադպրոցական, հանրակրթական ուսումնական հաստատությունների, արհեստագործական և միջին մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող, բարձրագույն ուսումնական հաստատությունների շենքերի մատչելիության ապահովման հետ կապված խնդիրները:

Կարևորելով՝ նոր կառուցված, վերակառուցված և հիմնանորոգված ուսումնական հաստատությունների ֆիզիկական միջավայրի մատչելիության երաշխավորումը՝ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը 2025 թվականի ընթացքում իրականացրել է մի շարք մշտադիտարկման այցեր նոր կառուցված, վերակառուցված և հիմնանորոգված ուսումնական հաստատություններ, ուսումնասիրել է այդ ուսումնական հաստատությունների ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերը (այսուհետ՝ նաև նախագծային փաստաթղթեր)՝ նոր կառուցման, վերակառուցման և հիմնանորոգման գործընթացում մատչելիության սկզբունքների ապահովումը դիտարկելու նպատակով:

Նշված այցերը և նոր կառուցված, վերակառուցված և հիմնանորոգված ուսումնական հաստատությունների նախագծային փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում են, որ ուսումնական հաստատությունների նոր կառուցման, հիմնանորոգման և վերակառուցման գործընթացում առկա են մատչելիության սկզբունքների ապահովման հետ կապված մի շարք համակարգային խնդիրներ: Արձանագրված խնդիրներն առավել մանրամասն ներկայացված են սույն բաժնի «Մատչելիություն» վերտառությամբ գլխում:

Ուսումնական հաստատությունների հասանելիությունն ու մատչելիությունը հաշմանդամություն ունեցող անձանց համար հնարավոր է երաշխավորել միայն տրանսպորտային համակարգի, կանգառների, մայթերի և այլնի մատչելիության ապահովմամբ, որի առնչությամբ արձանագրված խնդիրները նույնպես ներկայացված են սույն բաժնի «Մատչելիություն» վերտառությամբ գլխում: Մտահոգիչ է այն, որ 2025 թվականին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ ստացված տեղեկատվության համաձայն՝ «Երևանի հենաշարժական համակարգի խախտումներ ունեցող երեխաների թիվ 17 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ում (այսուհետ՝ Հաստատություն) առկա են եղել երեխաների կրթության իրավունքի ապահովման հետ կապված խնդիրներ՝ մատչելի տրանսպորտային միջոցների անհրաժեշտությամբ պայմանավորված: Նշվածն անընդունելի է, քանի որ մատչելի տրանսպորտային միջոցի բացակայության հետևանքով երեխաները զրկվել են ուսումնական գործընթացին կանոնավոր մասնակցելու հնարավորությունից:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ ՀՀ ուսումնական հաստատություններում 2025 թվականի դրությամբ գործում են ժեստերի լեզվի 2 մասնագետ, որոնց ներգրավումն իրականացվում է՝ ելնելով առկա կարիքներից և հնարավորություններից: Մինչդեռ, Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկումների արդյունքում պարզ է դարձել, որ ժեստերի լեզվի

մասնագետների ներգրավումը կրթական գործընթացներին տարբեր պատճառներով չի իրականացվել: Այդ պատճառներից է եղել, օրինակ, իրազեկվածության պակասը, այն, որ ուսումնական հաստատություններից մեկի տնօրենը նշել է, որ հաստատության անձնակազմը որոշ չափով կարող է հաղորդակցվել ուսանողի հետ, և ժեստերի լեզվի թարգմանիչ ներգրավելու կարիք չկա:

Վերոնշյալի առնչությամբ Պաշտպանն արձանագրում է, որ պետությունը պարտավոր է վերացնել բոլոր խոչընդոտները, որոնք կարող են արգելք հանդիսանալ հաշմանդամություն ունեցող անձի կրթության իրավունքի իրացման համար, իսկ մինչև դրա վերացումը, այդ թվում՝ համապատասխան կրթական ծրագրի ամբողջական ներդրումն ու մասնագետների պատրաստումը, պետությունը պարտավոր է հաշմանդամություն ունեցող անձի կրթություն ստանալու իրավունքի իրացումը չբացառելու նպատակով ապահովել համապատասխան խելամիտ հարմարեցումների տրամադրումը: Նման խելամիտ հարմարեցում չտրամադրելը հաշմանդամության հիմքով խտրականություն է, որն էլ իր հերթին հանգեցնում է Կոնվենցիայով նախատեսված պարտավորության խախտման:

Ուսումնական հաստատություններում իրականացված մշտադիտարկումները ցույց են տալիս, որ վերոնշյալը պայմանավորված է նաև նրանով, որ առկա են խելամիտ հարմարեցումների տեսակների հետ կապված թյուր պատկերացումներ: Գործնականում, որպես խելամիտ հարմարեցումներ չեն դիտարկվում, օրինակ, ժեստերի լեզվի թարգմանչի, գրառումներ կատարողի ներգրավումը, առաջադեմ և բարդ սարքավորումների օգտագործումը և այլն:

Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկման արդյունքները վկայում են նաև, որ 2025 թվականի ընթացքում տեսողության հետ կապված խնդիրներ ունեցող հաշմանդամություն ունեցող անձանց համար ևս շարունակում են արդիական մնալ կրթության իրավունքի մատչելիության ապահովման հետ կապված խնդիրները:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2025 թվականի ընթացքում ՀՀ բոլոր այն ուսումնական հաստատությունները, որտեղ սովորում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողներ, ստացել են համապատասխան ֆինանսավորում՝ խելամիտ հարմարեցումների ապահովման նպատակով:

Մինչդեռ, 2025 թվականի ընթացքում շարունակել է արդիական մնալ բրայլյան տառատեսակով տպագրված նյութերի կամ թվային մատչելի նյութերի սակավաթիվ լինելու հետ կապված խնդիրը: Բացի այդ, ուսումնական հաստատություններում քիչ են կիրառվում տեխնոլոգիական լուծումներ՝ էկրան ընթերցող ծրագրեր, տակտիլ քարտեզներ, խոսող սարքեր և այլն:

Մարդու իրավունքների պաշտպանը արձանագրում է, որ վերոնշյալը խիստ մտահոգիչ է և անհրաժեշտ է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ տեսողության հետ կապված խնդիրներ ունեցող անձանց մատչելի կրթական իրավունքի ապահովման նպատակով:

Կոնվենցիայի 2-րդ ընդհանուր մեկնաբանության համաձայն՝ մատչելիությունը խթանելու նպատակով կրթությունը, ինչպես նաև դպրոցական ծրագրերի բովանդակությունը, պետք է խթանեն և իրականացվեն ժեստերի լեզվով, Բրայլի համակարգով, այլընտրանքային տառատեսակների, ինչպես նաև հաղորդակցության ուժեղացուցիչ ու այլընտրանքային միջոցներով ու ձևաչափերով (Կոնվենցիայի 24-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» կետ)՝ հատուկ ուշադրություն դարձնելով տեսողության, և

լսողության հետ կապված խնդիրներ ունեցող սովորողների կողմից օգտագործվող համապատասխան լեզուներին, հաղորդակցության եղանակներին և միջոցներին:

2025 թվականի ընթացքում արձանագրվել են նաև մտավոր, խոսքի և հաղորդակցության հետ կապված խնդիրներ ունեցող հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի ուսումնական նյութերի և ուսումնական ծրագրերի կազմակերպման հետ կապված խնդիրներ: Արձանագրվել է, որ երեխաների կարիքների գնահատման, կրթության կազմակերպման գործընթացը գործնականում չի երաշխավորում դրանց իրական և անհատականացված լինելը: Այսպես, օրինակ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ իրականացված չհայտարարված այցի ընթացքում պարզվել է, որ տնային ուսուցում ստացող սովորողների պարագայում առկա են կրթական գործընթացը յուրաքանչյուր երեխայի պահանջներին համապատասխանեցնելու և հարմարեցնելու, համապատասխան կրթական արձագանք ապահովելու հետ կապված խնդիրներ:

Արձանագրվել է նաև, որ ուսուցիչները կրթությունը կազմակերպելիս չեն առաջնորդվում կրթական աստիճանների և առարկայական ծրագրերի հիման վրա յուրաքանչյուր սովորողի համար մշակված անհատական ուսուցման պլաններով, փոխարենը՝ փորձում են բոլոր երեխաներին նույն մոտեցմամբ փոխանցել նյութը՝ երբեմն, որպես հիմնական գործառույթ, իրականացնելով երեխաներին հանդարտեցնելուն ուղղված աշխատանքներ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ չնայած հաշմանդամություն ունեցող անձանց կրթության իրավունքի մատչելիության ապահովման նպատակով պետության կողմից ձեռնարկած միջոցներին, այդ թվում՝ ուսումնական հաստատությունների կառուցմանը, վերակառուցմանն ու հիմնանորոգմանը, իրականացված օրենսդրական փոփոխություններին, 2025 թվականին շարունակում են արդիական մնալ հաշմանդամություն ունեցող անձանց կրթության մատչելիության ապահովման հետ կապված վերը նշված խնդիրները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է.

- ✓ ***միջոցներ ձեռնարկել բոլոր ուսումնական հաստատությունների, ֆիզիկական միջավայրի, այդ թվում՝ շենքերի և շինությունների, հատկապես նոր կառուցվող, հիմնանորոգվող և վերակառուցվող ենթակառուցվածքների, տրանսպորտային համակարգի, կանգառների և մայթերի մատչելիությունը:***
- ✓ ***անհետաձգելի միջոցներ ձեռնարկել հաշմանդամություն ունեցող անձանց համար խելամիտ հարմարեցումների տրամադրումը ապահովելու նպատակով՝ անհատական մոտեցմամբ երաշխավորելով յուրաքանչյուր հաշմանդամություն ունեցող անձի կրթության իրավունքի իրացումը:***
- ✓ ***ապահովել ուսումնական հաստատություններում տեղեկատվության և հաղորդակցության մատչելիությունը՝ անհրաժեշտ քանակի և որակի նյութերի, դասագրքերի և սարքավորումների ներգրավմամբ:***
- ✓ ***արագացնել օրենսդրական փոփոխությունների իրականացման գործընթացը, որոնք կերաշխավորեն հաշմանդամություն ունեցող անձանց կրթության մատչելիությունը ամբողջ կյանքի ընթացքում:***

2. Կրթության որակի և արդյունավետության ապահովման հետ կապված խնդիրներ

2025 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկումները ցույց են տվել, որ հաշմանդամություն ունեցող անձանց կրթության նկատմամբ մոտեցումները շարունակում են միտված չլինել սովորողի առանձնահատկություններին, զարգացման հնարավորություններին և առավելագույն ներուժին համապատասխան գիտելիքների, հմտությունների, դիրքորոշումների ու արժեքների ձևավորմանը: Մասնագետների մոտ առկա է յուրաքանչյուր սովորողի համար ուսումնական գործընթացը հավասարապես խթանելու, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ներառումն ու ակտիվ մասնակցությունն ապահովելու, գնահատումների ճիշտ մեթոդաբանություն կիրառելու, ինչպես նաև սովորողների և ծնողների հետ հարաբերությունները կառուցելու հարցում համապատասխան հմտությունների կատարելագործման անհրաժեշտություն:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ տնային ուսուցման պայմաններում կրթություն է ստանում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 288 սովորող:

2025 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչների կողմից իրականացված մշտադիտարկումները վկայում են, որ տնային ուսուցմամբ սովորողների կրթության կազմակերպումը, հիմնականում, չի ներառում արդյունավետության բաղադրիչը, ինչի պատճառով լինում են դեպքեր, երբ երեխայի կրթության իրավունքի երաշխավորումը ձևական բնույթ է կրում, չի ապահովվում համապատասխան կրթական արձագանք:

Հարկ է նշել նաև, որ հասարակական կազմակերությունների տեղեկացմամբ՝ արձանագրվել են դեպքեր, երբ մարզերում, հատկապես գյուղերում տնային ուսուցում որոշ դեպքերում անհնար է կազմակերպել՝ վարորդների կամ տրանսպորտային միջոցի բացակայության պատճառով:

Նույն կերպ, արձանագրվել է, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար կրթության արդյունավետության բաղադրիչը ամբողջությամբ չի ապահովվում ինչպես հատուկ, այնպես էլ հանրակրթական ուսումնական հաստատություններում:

Մի շարք ուսումնական հաստատություններ իրականացված այցերի արդյունքները ցույց են տալիս, որ ուսուցչի օգնականների շրջանում առկա է իրազեկվածության պակաս իրենց համար օրենսդրությամբ սահմանված հիմնական գործառույթների վերաբերյալ: Այսպես, օրինակ, որպես հիմնական գործառույթ, ուսուցչի օգնականները նշում են, որ իրենք օգնում են ուսուցիչներին հանդարտեցնել երեխաներին, ուղեկցում են երեխաներին սանհանգույց, օգնում են երեխաներին սնվելու գործընթացում և այլն: Առկա է նաև շարունակական վերապատրաստումների իրականացման անհրաժեշտություն՝ ըստ մասնագիտական աշխատանքային բովանդակության: Բացի այդ, խնդրահարույց է ինչպես հաստիքների, այնպես էլ նեղ մասնագետների բացակայությունը:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Երևանի և ՀՀ մարզերի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների կողմից արձանագրվել է մասնագետների, այդ թվում՝ հատուկ մանկավարժների, լոգոպեդների, սոցիալական մանկավարժների, հոգեբանների, տիֆլոմանկավարժների, էրգոթերապիստների, սուրդոմանկավարժների պակաս, ինչը խնդրահարույց է:

Համընդհանուր ներառական կրթության ապահովման տեսանկյունից շարունակում է արդիական մնալ հանրային իրազեկման բարձրացմանն ուղղված գործուն միջոցների

ձեռնարկման անհրաժեշտությունը: 2025 թվականի ընթացքում շարունակել են արձանագրվել դեպքեր, երբ ծնողները հրաժարվում են իրենց երեխային տանել դպրոց՝ վախենալով, որ իրենց երեխան կարող է թիրախավորվել դասընկերների կողմից, կամ չեն ցանկանում, որ իրենց երեխան սովորի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ նույն դասարանում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ չնայած հաշմանդամություն ունեցող անձանց կրթության որակի և արդյունավետության ապահովման նպատակով պետության կողմից ձեռնարկած միջոցներին, այդ թվում՝ իրականացված վերապատրաստումներին, այնուամենայնիվ, 2025 թվականին շարունակում են արդիական մնալ հաշմանդամություն ունեցող անձանց կրթության որակի և արդյունավետության ապահովման հետ կապված վերը նշված խնդիրները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է.

- ✓ ***միջոցներ ձեռնարկել ապահովելու, որ կրթությունը ուղղված լինի հաշմանդամություն ունեցող անձանց անհատականության, տաղանդների և ստեղծագործական ունակությունների, ինչպես նաև նրանց մտավոր, ֆիզիկական և հաղորդակցական կարողությունների լիարժեք զարգացմանը:***
- ✓ ***կրթական գործընթացում ապահովել բազմամասնագիտական թիմի ներգրավվածությունն ու վերջիններիս շարունակական վերապատրաստումները:***
- ✓ ***գործուն միջոցներ ձեռնարկել՝ ապահովելու համընդհանուր ներառականության վերաբերյալ հանրային իրազեկման բարձրացումը:***

3. Հաշմանդամություն ունեցող երեխաների կրթությունը առանձին միջավայրում կազմակերպելը

Մարդու իրավունքների պաշտպանը խիստ մտահոգիչ է համարում այն, որ հաշմանդամություն ունեցող որոշ երեխաներ շարունակում են կրթություն ստանալ առանձին միջավայրում: Նման մոտեցումն անթույլատրելի է և չի բխում համընդհանուր ներառականության ապահովման քաղաքականությունից:

Մտահոգիչ է, որ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորում է 459 սովորող:

Միաժամանակ, խնդրահարույց է այն, որ հասարակությունը, այդ թվում՝ նշված հաստատություններում կրթություն ստացող երեխաների ծնողները, առավել նպատակահարմար են համարում երեխաների՝ առանձնացված պայմաններում կրթություն ստանալը, քան մյուսների հետ հավասար պայմաններում հանրակրթական ուսումնական հաստատություններ հաճախելը: Նման մոտեցումը, ի թիվս այլնի, պայմանավորված է տվյալ ոլորտում պետության կողմից ներդրված կառուցակարգերի ոչ լիարժեք լինելու հանգամանքով:

Խնդրահարույց է նաև այն, որ շարունակում են ստացվել տեղեկություններ, որ երեխաների կրթությունն իրականացվում է տնային պայմաններում՝ հաշմանդամությամբ, այդ թվում՝ տեղաշարժման հետ կապված դժվարություններ ունենալով պայմանավորված:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունների վերակազմակերպում ռեսուրս-կենտրոնների դեռևս չի իրականացվել, մինչդեռ 2025 թվականին Մարդու իրավուքների

պաշտպանի աշխատակազմ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունից ստացված տեղեկատվությամբ նշվել է, որ Հայաստանի Հանրապետության հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունները հատուկ դպրոց-ռեսուրս կենտրոնների վերակազմակերպելու գործընթացը սկսվելու է 2025 թվականից:

Մարդու իրավունքների պաշտպանն այս գործընթացում խիստ կարևորում է վերակազմակերպման այնպիսի մեթոդաբանության կիրառումը, որը կերաշխավորի իրական ներառականություն և վստահություն ներդրվող կառուցակարգի նկատմամբ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է գործուն քայլեր ձեռնարկել բացառելու հաշմանդամություն ունեցող երեխաների ուսուցումը առանձնացված պայմաններում կամ տնային ուսուցման տարբերակով կազմակերպելը՝ ապահովելով յուրաքանչյուր երեխայի՝ հավասար պայմաններում կրթություն ստանալու իրավունքը:

ԳԼՈՒԽ 4. ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Առողջության պահպանման իրավունքը յուրաքանչյուրի, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց հիմնարար իրավունքներից է, որի իրացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը պետության պարտավորությունն է:

Առողջության պահպանման իրավունքն ամրագրված է մի շարք միջազգային և ներպետական ակտերում, այդ թվում՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ–ի կոնվենցիայով, համաձայն որի՝ պետությունը պարտավորություն է ստանձնել ապահովել և օժանդակել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների, այդ թվում՝ առողջության պահպանման իրավունքի լիակատար իրականացումն՝ առանց հաշմանդամության հիմքով որևէ խտրականության:

ՄԱԿ-ի կայուն զարգացման 3-րդ նպատակն ուղղված է ամուր առողջության ու բարեկեցության ապահովմանը: Նույն նպատակի շրջանակներում ողջ հանրությունը քայլեր պետք է ձեռնարկի բոլորի համար առողջ կյանքի ապահովման և բարեկեցության խթանման ուղղությամբ: Նշվածից բխում է առողջապահության մատչելիությունը, որի շրջանակներում, ի թիվս այլնի, նույն նպատակի թիրախներից է որակյալ էական առողջապահական ծառայությունների ու անվտանգ, արդյունավետ, որակյալ և մատչելի էական դեղորայքի ու պատվաստանյութերի հասանելիությունը բոլորի համար:

Մինչդեռ՝ Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկումները, ստացված գրավոր և բանավոր դիմում-բողոքները, այդ թվում՝ թեժ գծի հեռախոսահամարին ստացված ահազանգերը վկայում են, որ առողջության պահպանման իրավունքի իրացման տեսանկյունից առկա են մի շարք համակարգային խնդիրներ, որոնց անդրադարձ է կատարվել նաև նախորդ տարիների տարեկան հաղորդումներում[217] **և արտահերթ հրապարակային զեկույցում:**[218]

Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկումների արդյունքները վկայում են, որ շարունակում է արդիական մնալ բժշկական հաստատությունների ֆիզիկական միջավայրի մատչելիության ապահովման հետ կապված խնդիրը:

ՀՀ առողջապահության նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2025 թվականին ավարտվել են 14 առողջապահական հաստատությունների

---

[217] Տե՛ս 2020 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 305-341, հասանելի է https://www.ombuds.am/images/files/883f55af65e3c33553139031c7ac0ce6.pdf հղումով, 2026 թվականի փետրվարի 2-ի դրությամբ: Տե՛ս 2021 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 254-290, հասանելի է https://www.ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf հղումով, 2026 թվականի փետրվարի 2-ի դրությամբ: Տե՛ս նաև 2023 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 690-692, հասանելի է https://ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2026 թվականի փետրվարի 2-ի դրությամբ: Տե՛ս նաև 2024 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 422-425, հասանելի է https://ombuds.am/images/files/4d1335361f1f7e9fbcc1cfc10679701e.pdf հղումով, 2026 թվականի փետրվարի 2-ի դրությամբ:

[218] Տե՛ս Մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույցը Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ, էջեր 133-149, Երևան, 2022թ., հասանելի է Հասանելի է https://www.ombuds.am/images/files/66d55894cd4c933cef65a7d6d7d7b35a.pdf հետևյալ հղումով, 2026 թվականի փետրվարի 2-ի դրությամբ:

կառուցման/վերակառուցման և վերազինման աշխատանքները: Բոլոր բժշկական հաստատությունները, ինչպես նաև հագեցված սարքավորումները հարմարեցված են հաշմանդամություն ունեցող անձանց համար՝ համընդհանուր դիզայնի սկզբունքին համապատասխան:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ Գեղարքունիքի մարզում 2025 թվականի ընթացքում առողջապահական կազմակերպություններից վերանորոգվել է «Վերին Գետաշենի ԲԱ» ՊՈԱԿ-ը, կառուցվել է «Լճափի ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ը, որոնք հարմարեցվել են հաշմանդամություն ունեցող անձանց: Երեք առողջապահական հիմնարկներում («Վերին Գետաշենի ԲԱ» ՊՈԱԿ, «Ծովինարի ԲԱ» ՊՈԱԿ, «Նորատուսի ԲԱ» ՊՈԱԿ) կառուցվել են թեքահարթակներ: ՀՀ Կոտայքի մարզի Ձորաղբյուր բնակավայրում բնակիչների առողջության առաջնային պահպանման ծառայությունները որակյալ և պատշաճ կազմակերպելու նպատակով կառուցման ընթացքի մեջ է բժշկական կազմակերպության նոր շենքը: Բոլոր բժշկական հաստատությունները հարմարեցված են հաշմանդամություն ունեցող անձանց պահանջներին:

Մինչդեռ, Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ ինչպես Երևան քաղաքում, այնպես էլ ՀՀ տարբեր մարզերում շարունակում են արդիական մնալ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների մատչելիության ապահովման հետ կապված խնդիրները, շատ հաճախ դրանք դրսևորվում են միայն թեքահարթակների կառուցմամբ:

Հարցի առնչությամբ Պաշտպանը կարևորում է ինչպես սույն տարեկան հաղորդման «Մատչելիություն» գլխում ներկայացված՝ ֆիզիկական միջավայրի մատչելիության ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացումը, այնպես էլ այլ կանխարգելիչ միջոցառումների ձեռնարկումը: Այդպիսի միջոցառում կարող է լինել բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններին ու անհատ ձեռնարկատերերին լիցենզավորելու համար շինարարական նորմերի համապատասխանությունը ստուգելու գործընթացում այնպիսի կառուցակարգերի ներդնումը, որոնք կերաշխավորեն մատչելիության նորմերի ապահովումը:

Պաշտպանի իրականացրած մշտադիտարկման արդյունքները վկայում են, որ բժշկական հաստատություններում, հիմնականում, ներդրված չեն բժշկական տեղեկատվությունը հաշմանդամություն ունեցող անձանց մատչելի ձևաչափով տրամադրելու ընթացակարգեր (օրինակ՝ բրայլյան համակարգ): Չի տրամադրվում մատչելի, այլընտրանքային և հեշտ ընթերցվող տեղեկատվություն մտավոր խնդիրներով հաշմանդամություն ունեցող անձանց համար: Մինչդեռ՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքում ամրագրված է, որ հաշմանդամություն ունեցող անձինք ամուսնության և ընտանեկան հարաբերությունները լիարժեքորեն իրականացնելու նպատակով իրավունք ունեն ազատ և պատասխանատու որոշումներ կայացնելու երեխաների թվի և նրանց ծնվելու ժամկետների մասին, ստանալու մատչելի տեղեկություններ վերարտադրողական առողջության և ընտանիքի պլանավորման վերաբերյալ:

Մտավոր և զգայական խնդիրներ ունեցող հաշմանդամություն ունեցող անձինք հաճախ բախվում են իրենց վերաբերյալ բժշկական տեղեկատվություն ստանալու հետ կապված խոչընդոտների, որոնք պայմանավորված են տեղեկատվության և հաղորդակցության մատչելիության՝ հեշտ ընթեռնելի ձևաչափերի և հաղորդակցման հավելյալ և այլընտրանքային եղանակների բացակայությամբ:

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքներով հաշմանդամություն ունեցող անձինք բարձրացրել են նաև այն հարցը, որ շատ դեպքերում չեն ստանում անվճար հիմունքներով իրենց տրամադրվող դեղորայքը՝ պայմանավորված բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում դրանց բացակայությամբ:

Խիստ մտահոգիչ է այն, որ ՀՀ տարբեր բնակավայրերում շարունակում են արդիական մնալ հաշմանդամություն ունեցող անձանց, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող կանանց համար անհրաժեշտ բժշկական օգնության և սպասարկման հասանելիության և մատչելիության հետ կապված խնդիրները:

Արձանագրվել է, օրինակ, որ մարզերում անհրաժեշտ որակյալ բժշկական ծառայությունների բացակայությամբ պայմանավորված, ինչպես նաև ֆունկցիոնալության գնահատման համար անհրաժեշտ բժշկական հետազոտություններ անցնելու նպատակով հաշմանդամություն ունեցող անձինք ստիպված են եղել այցելել Երևանում գտնվող բժշկական հաստատություններ: Ըստ անձանց հայտնած տեղեկատվության՝ նշված խնդիրը, երբեմն, առաջացնում է լրացուցիչ ֆինանսական ծախսեր և հանգեցնում է ֆունկցիոնալության գնահատման գործընթացի ձգձգումների:

Խնդրահարույց է այն, որ հաշմանդամություն ունեցող անձինք զրկվել են իրենց հասանելիք դեղորայքը ստանալու հնարավորությունից «Փյունիկ» և «Արմեդ» տեղեկատվական համակարգերի միջև փոխգործելիության խնդիրների պատճառով: Մասնավորապես, Պաշտպանին հասցեագրված մի շարք բողոքներում անժամկետ հաշմանդամություն ունեցող անձանց դեղորայքի տրամադրմանն ուղղված գործընթացը հնարավոր չէր ապահովել այն պատճառաբանությամբ, որ վերջիններիս կարգավիճակի վերաբերյալ տվյալները բացակայում էին էլեկտրոնային առողջապահության միասնական «Արմեդ» համակարգում, սակայն նշված տեղեկատվությունը առկա էր «Փյունիկ» տեղեկատվական համակարգում: Մինչդեռ, ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ 2025 թվականի ընթացքում «Փյունիկ» և էլեկտրոնային առողջապահության «Արմեդ» համակարգերի փոխհամագործակցության ապահովման գործընթացում առաջացած խնդիրների վերաբերյալ Առողջապահության նախարարության կողմից դեպքեր չեն արձանագրվել, իսկ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ «Փյունիկ» և «Արմեդ» տեղեկատվական համակարգերի փոխգործելիության ապահովման գործընթացում առաջացած խնդիրները հընթացս կարգավորվում են:

«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 25-րդ հոդվածի համաձայն՝ մասնակից պետությունները պարտավոր են հաշմանդամություն ունեցող անձանց առողջապահական ծառայությունները մատուցել նրանց բնակության վայրին հնարավորինս մոտ, ներառյալ՝ գյուղական վայրերում՝ ապահովելով նույն կարգի, որակի ու չափանիշների անվճար կամ մատչելի առողջապահական ծառայություններով ու ծրագրերով, որոնք տրամադրվում են այլ անձանց:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Մարդու իրավունքների պաշտպանը կարևորում է այնպիսի միջոցների ձեռնարկումը, որոնք ՀՀ բոլոր մարզերում հասանելի կդարձնեն հաշմանդամություն ունեցող անձանց բժշկական որակյալ ծառայությունների տրամադրումը, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող կանանց համար կապահովեն բժշկական տարբեր

ծառայությունների մատուցման մատչելիության և առանց որևէ խտրականության համապատասխան բուժօգնություն ստանալու հնարավորությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***գործուն միջոցներ ձեռնարկել՝ ապահովելու բժշկական հաստատություններում ֆիզիկական միջավայրի, տեղեկատվական և հաղորդակցական մատչելիությունը:***
- ✓ ***ապահովել բժշկական որակյալ ծառայությունների տրամադրման հասանելիությունը Երևանում և ՀՀ բոլոր մարզերում:***
- ✓ ***ձեռնարկել անհետաձգելի միջոցներ «Ֆյունիկ» և «Արմեդ» տեղեկատվական համակարգերի փոխգործելիության ապահովման գործընթացում առաջացած խնդիրների վերացման ուղղությամբ:***

ԳԼՈՒԽ 5. ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Աշխատանքային իրավունքների իրացումը ոչ միայն հաշմանդամություն ունեցող անձի եկամտի, ապրուստի կայունությունն ապահովելու, այլ նաև նրա անկախ ապրելու և համայնքում ներգրավվելու իրավունքի իրացումը խթանող գործուն երաշխիքներից է:

Աշխատանքային իրավունքներն ամրագրված են միջազգային մի շարք փաստաթղթերում և ներպետական իրավական ակտերում, մասնավորապես՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայում, դրան վերաբերող մեկնաբանություններում, «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրում, «Աշխատանքի հիմնարար սկզբունքների և իրավունքների մասին» հռչակագրում, «Սոցիալական արդարության մասին հռչակագիրը՝ հանուն արդար գլոբալիզացիայի (2008թ.)» փաստաթղթում, ՀՀ Աշխատանքային օրենսգրքում, «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքում, ենթաօրենսդրական իրավական ակտերում և այլն:

Հաշմանդամություն ունեցող անձանց արդյունավետ զբաղվածության և արժանապատիվ աշխատանքի ապահովումը, որպես առաջնահերթություն է նախանշվել նաև ՀՀ կառավարության 2023 թվականի հունիսի 8-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2023-2027 թվականների համալիր ծրագրում և ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» թիվ 943-Լ որոշմամբ:

Միևնույն ժամանակ, Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկումները, ստացված գրավոր և բանավոր դիմում-բողոքները, այդ թվում՝ թեժ գծի հեռախոսահամարին ստացված ահազանգերը վկայում են, որ հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքային իրավունքների ապահովման տեսանկյունից առկա են մի շարք համակարգային խնդիրներ, որոնց անդրադարձ է կատարվել նաև նախորդ տարիների տարեկան հաղորդումներում[219] և արտահերթ հրապարակային զեկույցում[220]:

Նշված խնդիրները, մասնավորապես, վերաբերում են հաշմանդամության հիմքով խտրականության արգելքի պահպանման նկատմամբ վերահսկողության ապահովմանը, հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության, ինքնազբաղվածության, ձեռնարկատիրության խթանմանը և այլն: Այսպես, օրինակ, չեն իրականացվում արդյունավետ և թիրախային ծրագրեր, որոնք կարող են իրական հնարավորություն

---

[219] Տե՛ս 2021 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 193-229, հասանելի է https://www.ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf հղումով, 2026 թվականի փետրվարի 2-ի դրությամբ: Տե՛ս նաև 2023 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 693-696, հասանելի է https://ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2026 թվականի փետրվարի 2-ի դրությամբ: Տե՛ս նաև 2024 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 426-428, հասանելի է https://ombuds.am/images/files/4d1335361f1f7e9fbcc1cfc10679701e.pdf հղումով, 2026 թվականի փետրվարի 2-ի դրությամբ:

[220] Տե՛ս Մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույցը Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ, Երևան, 2022թ., հասանելի է https://www.ombuds.am/images/files/66d55894cd4c933cef65a7d6d7d7b35a.pdf հղումով, 2026 թվականի փետրվարի 2-ի դրությամբ:

ստեղծել հաշմանդամություն ունեցող անձանց համար՝ աշխատելու կամ զբաղվելու ձեռնարկատիրական գործունեությամբ:

ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2025 թվականի ընթացքում Տեսչական մարմնի հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության նկատմամբ վերահսկողություն իրականացնելիս խախտումներ չեն արձանագրվել:

Վերոնշյալը վկայում է այն մասին, որ անհրաժեշտ է կատարելագործել հաշմանդամության հիմքով խտրականության արգելքի պահպանման նկատմամբ վերահսկողական կառուցակարգերը:

Այդ հարցի առնչությամբ Մարդու իրավունքների պաշտպանը, ի թիվս այլնի, կարևորում է ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կարողությունների զարգացումը, հաշմանդամության հիմքով խտրականության դեպքերի բացահայտման հստակ գործիքակազմերի մշակումն ու ներդնումը:

Այսպես, օրինակ, 2025 թվականին Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով հաշմանդամություն ունեցող անձը հայտնել է, որ աշխատանքի անցնելու խնդրանքով պարբերաբար դիմել է տարբեր գործատուների, սակայն արդյունքի չի հասել այն պատճառաբանությամբ, որ հաշմանդամություն ունի և չի կարող աշխատել:

Խնդրահարույց է նաև այն, որ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կարողությունների զարգացման ուղղությամբ իրականացվել է ընդամենը մեկ միջոցառում: Ըստ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի տրամադրած տեղեկատվության՝ 2025 թվականի հոկտեմբերի 10-11-ը Եվրոպայի խորհրդի երևանյան գրասենյակի հետ համագործակցության շրջանակներում Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի աշխատողների համար կազմակերպվել է դասընթաց՝ Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության իրավունքի վերաբերյալ՝ երաշխավորված Եվրոպական սոցիալական խարտիայով, որին մասնակցել է 24 աշխատակից:

Վերահսկողական կառուցակարգերի կատարելագործումից բացի, խնդրի համակարգային լուծման տեսանկյունից, արդիական է մնում «Իրավահավասարության ապահովման և խտրականությունից պաշտպանության մասին» օրենքի ընդունման անհրաժեշտությունը:

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և նրանց առնչությամբ կարծրատիպերի հաղթահարման առումով բեկումնային նշանակություն ունեցավ Մարդու իրավունքների պաշտպանի դիմումը Սահմանադրական դատարան և Սահմանադրական դատարանի որոշումը, որով հակասահմանադրական ճանաչվեցին երկու ականջի կայուն լրիվ խլություն կամ խուլհամրություն ու երկու աչքերի (բինոկուլյար) կուրություն ունեցող անձանց համար դատավորի պաշտոնում նշանակվելու բացարձակ արգելքը սահմանող իրավական կարգավորումները: Արդյունքում, վերոնշյալ անձինք իրավական հնարավորություն կստանան դառնալու դատավորի թեկնածու:[221] Նշված հանգամանքը բեկումնային նշանակություն ունի մեր հասարակության համար, որտեղ արմատացած են հաշմանդամություն ունեցող անձանց առնչությամբ բազմաթիվ խորքային կարծրատիպեր:

[221] Սահմանադրական դատարանի որոշումը հասանելի է https://www.concourt.am/decision/decisions/68cd5259cee90_SDV-1796.pdf հղումով, 2026 թվականի հունվարի22-ի դրությամբ:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը հայտնել է, որ 2025 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ ՄՍԾ տարածքային կենտրոններում հաշվառվել է 1496 հաշմանդամություն ունեցող անձ, որոնցից աշխատանքի է տեղավորվել 94-ը: Խնդրահարույց է այն, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը հայտնել է, որ մնացածին աշխատանքով չապահովելու պատճառն ունակություններին համապատասխան թափուր աշխատատեղի բացակայությունն է և գործատուների պահանջներին չհամապատասխանելը:

Հարկ է փաստել, սակայն, որ Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկման արդյունքները վկայում են, որ հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության, ինքնազբաղվածության, ձեռնարկատիրության խթանման ուղղությամբ թիրախային ծրագրեր առկա չեն և բավարար չափով աշխատանքներ չեն իրականացվել:

Այսպես, օրինակ, Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով հաշմանդամություն ունեցող անձը բարձրացրել է իր՝ հաշմանդամություն ունեցող անձի կարգավիճակի հետ համատեղելի աշխատանքի բացակայության հետ կապված հարց: Սույն բողոքի քննարկման շրջանակում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից տրամադրված ցանկում թափուր աշխատատեղերի մի մասը անհամատեղելի էր անձի հաշմանդամության հետ, իսկ մնացածը արդիական չէր:

Բացի այդ, շարունակում է արդիական մնալ հաշմանդամություն ունեցող անձի կողմից Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով սեփական եկամտի աղբյուրն ինքնուրույն ապահովելու նպատակով ձեռքի աշխատանքների վաճառքի կրպակ տրամադրելու հետ կապված հարցը, սակայն պետության կողմից այդ հարցի առնչությամբ որևէ միջոցառում 2024 և 2025 թվականների ընթացքում չի իրականացվել:

Ավելին, ներդրված չեն նաև հաշմանդամություն ունեցող անձանց խնամքով զբաղվող անձանց համար զբաղվածության խթանման գործուն կառուցակարգեր:

Նշվածի առնչությամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը հայտնել է, որ 2025 թվականի ընթացքում 157 անձի ԾԱԾ-ով երաշխավորվել է անձնական օգնականի ծառայություն: 2025 թվականի պետական բյուջեից ֆինանսավորվել է 267 շահառու, որից 95-ը՝ 2024 թվականից 2025 թվական անցողիկ ծրագրերի համար:

Հարկ է փաստել, սակայն, որ անձնական օգնականի ծառայության ներդնումը չի կարող փոխարինել հաշմանդամություն ունեցող անձանց խնամքով զբաղվող անձանց համար զբաղվածության խթանման միջոցառումներին, մասնավորապես այն պայմաններում, երբ անձնական օգնականի ծառայության տրամադրումը սահմանափակված է որոշակի պայմաններով: Ավելին, անձնական օգնականի ծառայությունների հետ կապված ևս առկա են մի շարք համակարգային խնդիրներ, որոնց վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանը ներկայացրել է իր դիտողությունները: Դրանք, ի թիվս այլնի, վերաբերել են անձնական օգնականի ծառայությունների ժամաքանակին, անձնական օգնականի ծառայություններից օգտվելու իրավունք ունեցող անձին ներկայացվող պահանջներին և այլն:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

✓ ***կատարելագործել հաշմանդամության հիմքով խտրականության արգելքի պահպանման նկատմամբ վերահսկողության կառուցակարգերը, ի թիվս այլնի, իրականացնելով ոլորտային պատասխանատու մարմնի կարողությունների զարգացմանը, հաշմանդամության հիմքով խտրականության դեպքերի***

բացահայտման հսկակ գործիքակազմերի մշակմանն ու ներդրմանն ուղղված աշխատանքներ,

- ✓ *գործուն քայլեր ձեռնարկել՝ ընդունելու «Իրավահավասարության ապահովման և խտրականությունից պաշտպանության մասին» օրենքը,*
- ✓ *կատարելագործել հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության, ինքնազբաղվածության, ձեռնարկատիրության խթանման ուղղությամբ իրականացվող աշխատանքները, այդ թվում՝ ներդնել զբաղվածության, ինքնազբաղվածության, ձեռնարկատիրության խթանման ուղղությամբ թիրախային ծրագրեր:*
- ✓ *ներդնել հաշմանդամություն ունեցող անձանց խնամքով զբաղվող անձանց համար զբաղվածության խթանման գործուն կառուցակարգեր:*

ԳԼՈՒԽ 6. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԻՆ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման, խթանման և պաշտպանության պետական քաղաքականության հիմնական ուղղություններից է հաշմանդամություն ունեցող անձանց՝ քաղաքական ու հասարակական կյանքին մյուսների հետ հավասար հիմունքներով, ուղղակիորեն կամ ազատ ընտրված ներկայացուցիչների միջոցով արդյունավետ ու լիարժեք մասնակցության իրավունքի ապահովումը:

Հաշմանդամություն ունեցող անձանց՝ քաղաքական և հասարակական կյանքին մասնակցության իրավունքն ամրագրվել է միջազգային մի շարք փաստաթղթերում և ներպետական օրենսդրությամբ:

«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 29-րդ հոդվածի ընդհանուր մեկնաբանության համաձայն[222]՝ ընտրական գործընթացներից և քաղաքական կյանքում մասնակցության այլ ձևերից բացառվելը հաճախ հանդիսանում է հաշմանդամության հիմքով խտրականության օրինակ: Դրանք հաճախ սերտորեն կապված են իրավունակության մերժման կամ սահմանափակման հետ: Պետությունները պետք է նպատակ դնեն՝

- վերափոխել այն օրենքները, քաղաքականությունները և կանոնակարգերը, որոնք համակարգված կերպով բացառում են հաշմանդամություն ունեցող անձանց ընտրելու և/կամ ընտրություններին թեկնածու առաջադրվելու իրավունքը:
- ապահովել, որ ընտրական գործընթացը մատչելի լինի հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց համար՝ ներառյալ ընտրություններից առաջ, ընթացքում և հետո:
- ապահովել խելամիտ հարմարեցումներ հաշմանդամություն ունեցող առանձին անձանց համար և աջակցող միջոցներ՝ հիմնված հաշմանդամություն ունեցող անձանց անհատական կարիքների վրա, նրանց քաղաքական և հասարակական կյանքին մասնակցությունը խթանելու համար:
- աջակցել և համագործակցել հաշմանդամություն ունեցող անձանց ներկայացուցիչ կազմակերպությունների հետ քաղաքական մասնակցության գործընթացներում՝ ազգային, տարածաշրջանային և միջազգային մակարդակներում, ներառյալ այդ կազմակերպությունների հետ խորհրդակցել այն հարցերի շուրջ, որոնք ուղղակիորեն առնչվում են հաշմանդամություն ունեցող անձանց:
- ստեղծել տեղեկատվական համակարգեր և օրենսդրություն, ինչը թույլ կտա երաշխավորել հաշմանդամություն ունեցող անձանց շարունակական քաղաքական մասնակցությունը, ներառյալ ընտրությունների միջև ընկած ժամանակահատվածը:

Այնուամենայնիվ, չնայած վերոնշյալին, Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկումները վկայում են, որ հաշմանդամություն ունեցող անձանց՝ քաղաքական և հասարակական կյանքում մասնակցության իրավունքի ապահովման տեսանկյունից առկա են մի շարք համակարգային խնդիրներ, որոնց անդրադարձ է կատարվել նաև

[222] «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 29-րդ հոդվածի ընդհանուր մեկնաբանություն, էջ 17, հասանելի է՝ https://docs.un.org/CRPD/C/GC/6 հղումով:

նախորդ տարիների տարեկան հաղորդումներում[223] և արտահերթ հրապարակային զեկույցում:[224]

Արձանագրված խնդիրները, մասնավորապես, վերաբերում են ընտրական տեղամասերի մատչելիությանը, ընտրություններին առնչվող տեղեկատվության և հաղորդակցության մատչելիությանը, իրավական ակտերի նախագծերի հանրային քննարկումները հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի ձևաչափով անցկացնելու և այլ հարցերի:

Այսպես, 2025 թվականի մարտի 30-ին՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների օրը, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների կողմից իրականացվել են չհայտարարված մշտադիտարկման այցեր՝ Շիրակի մարզի Գյումրի և Արմավիրի մարզի Փարաքար համայնքների տեղամասային կենտրոններ, որտեղ արձանագրվել են մի շարք խնդիրներ՝ կապված նախընտրական քարոզչության գործընթացի մատչելիության ապահովման, ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական կայքէջում հրապարակված մատչելի տեղամասային կենտրոնների ցանկում նշված տեղեկատվության և մշտադիտարկման այցերի արդյունքում արձանագրված տեղեկատվության միջև անհամապատասխանության, տեղամասային կենտրոնների ֆիզիկական միջավայրի մատչելիության ապահովման, տեղեկատվության և հաղորդակցության մատչելիության ապահովման, իրազեկվածության բարձրացման, հաշմանդամություն ունեցող անձանց հետ վարվեցողության կանոնների պահպանման հետ: Մշտադիտարկման չհայտարարված այցերի արդյունքում արձանագրված խնդիրների մի մասը պայմանավորված է օրենսդրական թերի կարգավորումներով կամ բացերով:

Խնդրահարույց է այն, որ վերոգրյալ խնդիրներն արձանագրվել են նաև ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքում հրապարակված մատչելի և մասամբ մատչելի տեղամասային կենտրոնների ցանկում՝ (այսուհետ՝ Ցանկ) որպես այդպիսիք նշված տեղամասային կենտրոններում: Մասնավորապես, Պաշտպանի աշխատակազմի կողմից իրականացված մշտադիտարկման այցերի արդյունքների և Ցանկում առկա տեղեկատվության միջև առկա էր անհամապատասխանություն: Այսպես, օրինակ, Ցանկում ներառված տեղեկատվության համաձայն՝ Գյումրի համայնքի թիվ 31/62 և 31/74

---

[223] Տե՛ս 2020 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 1358-1359, հասանելի է https://www.ombuds.am/images/files/883f55af65e3c33553139031c7ac0ce6.pdf հղումով, 2026 թվականի հունվարի 21-ի դրությամբ: Տե՛ս նաև 2021 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 1350-1351, հասանելի է https://www.ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf հղումով, 2026 թվականի հունվարի 21-ի դրությամբ: Տե՛ս նաև 2023 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 697-702, հասանելի է https://ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2026 թվականի հունվարի 21-ի դրությամբ: Տե՛ս նաև 2024 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 429-431, հասանելի է https://ombuds.am/images/files/4d1335361f1f7e9fbcc1cfc10679701e.pdf հղումով, 2026 թվականի հունվարի 21-ի դրությամբ:

[224] Տե՛ս Մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույցը Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ, էջեր 93-100, Երևան, 2022թ., էջեր 101-182 հասանելի է https://www.ombuds.am/images/files/66d55894cd4c933cef65a7d6d7d7b35a.pdf հղումով, 2026 թվականի հունվարի 21-ի դրությամբ:

տեղամասային կենտրոնները ապահովված էին թեքահարթակներով, մինչդեռ, այցի արդյունքում արձանագրվել է, որ տվյալ տեղամասային կենտրոնների միակ մուտքի մոտ առկա չեն եղել թեքահարթակներ, իսկ այլ մուտքերի մոտ առկա թեքահարթակներով մուտք գործելն արգելված էր: Թեև Ցանկում Գյումրի համայնքի թիվ 31/13 տեղամասային կենտրոնի քվեարկության սենյակը նշված է եղել առաջին հարկում, սակայն այցի ընթացքում արձանագրվել է, որ այն գտնվել է նկուղային հարկում, իսկ մուտք գործել հնարավոր էր միայն աստիճաններով:

Հաշմանդամություն ունեցող անձանց համար տեղեկատվության մատչելիության ապահովման տեսանկյունից արձանագրվել է, որ Գյումրի համայնքի տեղամասային կենտրոններում բացակայում էին խոշորացնող ոսպնյակներ, ընդ որում՝ թիվ 31/12 տեղամասային կենտրոնում ընտրող և այցին մասնակից տեսողության հետ կապված խնդիրներ ունեցող անձի կողմից բարձրացվել էր դրա անհրաժեշտության հարցը: Փարաքար համայնքի տեղամասային կենտրոններում ևս առկա չէին խոշորացնող ոսպնյակներ: Արձանագրվել է նաև քվեաթերթիկների համար բրայլյան կաղապարների կիրառման վերաբերյալ իրազեկվածության պակաս, քվեարկության խցիկում առկա նախազգուշացումը, տեղամասային կենտրոններում փակցված ընտրողների ցուցակները և ընտրություններին մասնակցող կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների ընտրական ցուցակները, մատչելի չէին տեսողության հետ կապված խնդիրներ ունեցող անձանց համար և մի շարք դեպքերում փակցված էին բավականին բարձր, ինչը խոչընդոտում էր սայլակով տեղաշարժվող անձանց տեղեկատվության ստացման հնարավորությունը: Լսողության հետ կապված խնդիրներ ունեցող անձանց համար Գյումրի համայնքի տեղամասային կենտրոններում բացակայում էր ժեստերի լեզվի թարգմանությունը՝ վերջիններիս մատչելի հաղորդակցության և ընտրական իրավունքի անխոչընդոտ ապահովման նպատակով:

Ֆիզիկական միջավայրի մատչելիության ապահովման հետ կապված արձանագրվել են մի շարք այլ խնդիրներ: Մասնավորապես, Գյումրի համայնքի թիվ 31/16, 31/18 և 31/74 տեղամասային կենտրոնների քվեարկության խցիկները մատչելի չէին հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց համար: Փարաքար համայնքի թիվ 14/4 տեղամասային կենտրոնի՝ դեպի թեքահարթակ տանող ճանապարհը մատչելի չէր՝ հարթեցված չէր, թեքահարթակը չուներ բռնաձողեր և չէր համապատասխանում ՀՀ քաղաքաշինության նախարարի 2006 թվականի նոյեմբերի 10-ի թիվ 253-Ն հրամանի (այսուհետ՝ Հրաման) 5.3-րդ կետի՝ 5.3.5-րդ և 5.3.6-րդ ենթակետերով սահմանված շինարարական նորմերի պահանջներին: Բացի այդ, Հրամանի 5.2-րդ կետի 5.2.11-րդ ենթակետով սահմանված պահանջների խախտմամբ, թե՛ Փարաքար, թե՛ Գյումրի համայնքների մի շարք տեղամասային կենտրոնների դռների բացվածքները ունեին շեմեր, որոնց բարձրությունը կամ բարձրությունների անկումը գերազանցում է 0.025 մ-ը: Փարաքար համայնքի թիվ 14/11 տեղամասային կենտրոնում քվեարկության խցիկներից մեկի վրա փակցված էր հաշմանդամություն ունեցող անձանց նշանը, սակայն այդ խցիկը քվեարկության մյուս խցիկներից փաստացի չէր տարբերվում և ամբողջությամբ մատչելի չէր սայլակով տեղաշարժվող անձանց համար, քանի որ քվեատուփը տեղադրված էր բարձր:

Բացի այդ, արձանագրվել է տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների՝ հաշմանդամություն ունեցող անձանց հետ շփման հմտությունների զարգացմանն ուղղված վերապատրաստումների անհրաժեշտություն՝ պայմանավորված վերջիններիս հետ վարվելակերպի կանոնների բացակայությամբ և որոշ դեպքերում նաև կոպիտ վերաբերմունքով: Միաժամանակ, ինչպես տեղամասային կենտրոնների

աշխատակիցների, այնպես էլ հաշմանդամություն ունեցող անձանց շրջանում առկա էր իրենց իրավունքների վերաբերյալ իրազեկվածության պակաս: Մասնավորապես, վերջիններս տեղեկացված չէին, որ ՀՀ ընտրական օրենսգրքի 10-րդ հոդվածի 3.1-ին մասի համաձայն՝ կարող են լիազոր մարմին դիմում ներկայացնել՝ ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակից ժամանակավորապես դուրս գալու և իրենց նախընտրած վայրի մատչելի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ընդգրկվելու մասին:

Հարկ է նշել նաև, որ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ Գյումրի և Փարաքար համայնքներում 2025 թվականի մարտի 30-ին տեղի ունեցած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների կապակցությամբ Հանձնաժողովը, իր վերահսկողական լիազորությունների շրջանակում, իրականացրել է տեսալսողական մեդիածառայություն մատուցողների գործունեության մշտադիտարկում՝ նախընտրական քարոզչության՝ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված կարգի պահպանման նկատմամբ, որի արդյունքում արձանագրվել են ՀՀ ընտրական օրենսդրության և «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի պահանջների խախտումներ, որի հիման վրա որոշ ընկերությունների նկատմամբ հարուցվել են վարչական վարույթներ:

Այսպես, չնայած այն հանգամանքին, որ ընտրական իրավունքի մատչելիության երաշխավորման նպատակով Հայաստանի Հանրապետության ներպետական օրենսդրության մեջ իրականացվել են փոփոխություններ, այնուամենայնիվ Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկումները վկայում են, որ հաշմանդամություն ունեցող անձանց՝ քաղաքական և հասարակական կյանքում մասնակցության իրավունքի ապահովման տեսանկյունից շարունակում են առկա մնալ մի շարք համակարգային խնդիրներ, որոնց անդրադարձ է կատարվել նաև Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին 2024 թվականի տարեկան հաղորդման շրջանակներում:

Խնդրահարույց է նաև, որ Սահմանադրության 48-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ընտրելու և ընտրվելու, ինչպես նաև հանրաքվեին մասնակցելու իրավունք չունեն դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված անձինք:

ՀՀ ընտրական օրենսգրքի 2-րդ հոդվածի 4-րդ մասով ևս սահմանված է, որ ընտրելու իրավունք չունեն դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով (...) անգործունակ ճանաչված անձինք:

Վերոնշյալ իրավակարգավորումների վերլուծությունից գալիս ենք այն եզրահանգման, որ Հայաստանի Հանրապետությունում բացակայում է հաշմանդամություն ունեցող անձանց կողմից աջակցության միջոցով որոշումների կայացման կառուցակարգը: Անգործունակության ինստիտուտի ներկայիս կարգավորումները հանգեցնում եմ այնպիսի իրավիճակի, երբ անձը ամբողջությամբ զրկվում է իր ընտրական իրավունքից, ուստի, Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ անհրաժեշտ է վերանայել Հայաստանի Հանրապետությունում անգործունակության ինստիտուտին առնչվող իրավակարգավորումները և ներդնել աջակցության միջոցով որոշումների կայացման մեխանիզմ:

Միաժամանակ, հարկ է անդրադառնալ ՀՀ ընտրական օրենսգրքի 10-րդ հոդվածի 3.1-ին մասին, որի համաձայն՝ ընտրությունների ժամանակ իրենց տեղամասային կենտրոնում քվեարկելու անհնարինության դեպքում տեղաշարժման (հենաշարժական) դժվարություններ ունեցող ընտրողները քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 12 օր առաջ՝ մինչև ժամը 14:00-ն, կարող են լիազոր մարմին դիմում ներկայացնել՝ ըստ հաշվառման

վայրի ընտրողների ցուցակից ժամանակավորապես դուրս գալու և իրենց նախընտրած վայրի մատչելի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ընդգրկվելու մասին՝ նշելով տեղաշարժման (հենաշարժական) դժվարություններ ունեցող անձանց համար մատչելի ընտրական տեղամասի համարը: Լիազոր մարմինը դիմումն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, ընտրողի տվյալները ժամանակավորապես հանում է ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակից և ավելացնում նախընտրած վայրի մատչելի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում և ծանուցում է դիմողին այդ մասին: Ծանուցման մեջ նշվում են նախընտրած վայրի մատչելի ընտրական տեղամասի համարը և տեղամասային կենտրոնի հասցեն:

Վերոնշյալ կարգավորման նպատակն է ապահովել հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց ընտրական իրավունքի իրացումը, սակայն գործնականում այն չի հանդիսանում բավարար երաշխիք: Մասնավորապես, Լիազոր մարմնին դիմում ներկայացնելու ընթացակարգը սահմանված է ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2025 թվականի մարտի 27-ի 11-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում), սակայն կարգավորման կիրառման ընթացքում կարող են ի հայտ գալ որոշ խնդիրներ: Այսպես, օրինակ, հաշմանդամություն ունեցող անձանց նախընտրած վայրի մատչելի ընտրական տեղամասը հնարավոր է բավականին հեռու գտնվի անձի բնակության վայրից և նման դեպքերում, գուցե, առաջանա նաև մատչելի տրանսպորտային միջոցի անհրաժեշտություն, ինչը կարող է ուղեկցվել լրացուցիչ ֆինանսական բեռով:

Բացի այդ, Որոշմամբ սահմանված է, որ ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակից ժամանակավորապես դուրս գալու և ըստ գտնվելու վայրի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում, նախընտրած վայրի մատչելի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ժամանակավորապես ընդգրկվելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում հաշվառում չունեցող ընտրողների կողմից՝ Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ ըստ գտնվելու վայրի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ընդգրկվելու մասին դիմումները ներկայացվում են առցանց՝ էլեկտրոնային եղանակով, սակայն դրանք Որոշմամբ հստակեցված չեն, հստակեցված չէ նաև, թե կոնկրետ որ հարթակի կամ կայքի միջոցով են ներկայացվելու նշված դիմումները, ինչպես նաև բացակայում են երաշխիքներ այն մասին, որ տվյալ հարթակը կամ կայքը մատչելի է հաշմանդամություն ունեցող անձանց համար:

Վերը նշվածի համատեքստում հարկ է ընդգծել, որ միայն նման օրենսդրական երաշխիքներ սահմանելը բավարար չէ հաշմանդամություն ունեցող անձանց համար ընտրական իրավունքի մատչելիության ապահովման համար, քանի որ սահմանված իրավանորմը պրակտիկայում կիրառելու համար պետք է գնահատել բոլոր հնարավոր ռիսկերը և ապահովել նորմի կիրառումը առանց ավելորդ խոչընդոտների:

Միաժամանակ, նպատակահարմար է դիտարկել յուրաքանչյուր ընտրությունից առաջ հաշմանդամություն ունեցող բոլոր ընտրողների անձնական տվյալների, հաշվառման հասցեների հավաքագրման հնարավորությունը, որպեսզի յուրաքանչյուր տեղամասային կենտրոն նախապես տեղեկացված լինի տվյալ տեղամասում քվեարկող հաշմանդամություն ունեցող ընտրողների թվի վերաբերյալ՝ ընտրական գործընթացի մատչելիության ապահովմանն ուղղված բոլոր անձանց կարիքից բխող անհրաժեշտ և հրատապ միջոցառումներ ձեռնարկելու նպատակով:

Հարկ է անդրադառնալ նաև շրջիկ արկղի միջոցով քվեարկության կազմակերպման հարցին: ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 9-ի թիվ 129-Ն որոշմամբ սահմանված է, որ Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ ստացիոնար բուժման մեջ գտնվող, քվեարկության օրը

տեղամասային կենտրոն ինքնուրույն ներկայանալու հնարավորություն չունեցող ընտրողների, ռազմաբժշկական հաստատությունում ստացիոնար բուժման մեջ գտնվող զինծառայող ընտրողների և ձերբակալված անձանց պահելու վայրերում ձերբակալված ընտրողների քվեարկությունը տեղամասային ընտրական հանձնաժողովը կազմակերպում է համապատասխանաբար ստացիոնար բուժում իրականացնող բժշկական հաստատությունում, ռազմաբժշկական հաստատությունում և ձերբակալված անձանց պահելու վայրում՝ շրջիկ արկղի միջոցով: Միևնույն ժամանակ, նման կարգավորում նախատեսված չէ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների համար:

Հարկ է նշել, որ մշտադիտարկման այցի արդյունքում արձանագրվել է, որ շրջիկ արկղի միջոցով քվեարկության օրենսդրական հնարավորության բացակայությունը հանգեցրել է այնպիսի դեպքերի, երբ հաշմանդամություն ունեցող անձը չի կարողացել տանից դուրս գալ և իրացնել իր ընտրական իրավունքը:

Վերոնշյալը վկայում է, որ անհրաժեշտ է շրջիկ արկղի կիրառման հնարավորությունը տարածել նաև տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների վրա:

2025 թվականի ընթացքում շարունակել են արդիական մնալ իրավական ակտերի նախագծերի հանրային քննարկումներին հաշմանդամություն ունեցող անձանց լիարժեք մասնակցությունն ապահովելու հետ կապված խնդիրները: ՀՀ կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 1146-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 10-րդ կետի համաձայն՝ հանրային քննարկումը իրականացվում է քննարկում իրականացնող մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից վարվող իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում հրապարակման եղանակով:

Հատկանշական է, որ իրավական ակտերի նախագծերի հանրային քննարկումները, որպես կանոն, իրականացվում են վերոնշյալ եղանակով: Մինչդեռ, Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկումների արդյունքում արձանագրվել է, որ իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքը, այն է՝ e-draft.am-ը, մատչելի չէ հաշմանդամություն ունեցող անձանց համար: Այսպիսի պայմաններում խնդրահարույց է իրավական ակտերի նախագծերի հանրային քննարկումը միայն ոչ մատչելի կայքերի միջոցով իրականացնելը, ինչը չի բխում միջազգային իրավական մոտեցումներից:

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ **https://www.e-draft.am/** կայքի մատչելիության ապահովման նպատակով 2025 թվականի ընթացքում իրականացվել են սահմանափակ մատչելիության բարելավման միջոցառումներ և կայքի համար անցկացվել է աուդիտ: Մինչդեռ, արձանագրված խնդիրների համատեքստում նշված միջոցառումները դեռևս չեն ապահովում հաշմանդամություն ունեցող անձանց լիարժեք ու արդյունավետ մասնակցությունը իրավական ակտերի նախագծերի հանրային քննարկումներին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է իրականացնել գործուն և համակարգված միջոցառումներ՝ ուղղված բոլոր ընտրությունների և հանրային քննարկումների լիարժեք մատչելիության ու հասանելիության ապահովմանը հաշմանդամություն ունեցող անձանց համար՝ ներառյալ օրենսդրական բարեփոխումները, աջակցության միջոցով որոշումների կայացման կառուցակարգի ներդրումը, ֆիզիկական միջավայրի, տեղեկատվության և հաղորդակցության

մատչելիության ապահովումը, ընտրական գործընթացներում խելամիտ հարմարեցումների կիրառումը, կայքերի, այդ թվում՝ https://www.e-draft.am/ կայքի մատչելիության ապահովումը, ինչպես նաև պետական մարմինների և ընտրական հանձնաժողովների աշխատակիցների կարողությունների ու իրազեկվածության բարձրացումը:

ԲԱԺԻՆ 7. ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Երեխաների իրավունքների պաշտպանությունը շարունակում է մնալ Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության առանցքային ուղղություններից մեկը՝ նպաստելով երեխայակենտրոն և իրավունքահեն հասարակության զարգացմանը:

2025 թվականին Մարդու իրավունքների պաշտպանը, իր սահմանադրական և միջազգային մանդատի շրջանակում, իրականացրել է «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի 1989 թվականի նոյեմբերի 20-ին ընդունված կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկում՝ հատուկ ուշադրություն դարձնելով երեխայի իրավունքների արդյունավետ ապահովմանը և պաշտպանության մեխանիզմների բարելավմանը: Այդ շրջանակում իրականացվել են բազմաթիվ ուսումնասիրություններ, իրազեկման նախաձեռնություններ, ինչպես նաև ամրապնդվել է երեխաների մասնակցությունը որոշումների կայացման գործընթացներին:

2025 թվականի ընթացքում իրականացվել են մի շարք մշտադիտարկման չհայտարարված այցեր, իրավասու մարմիններ են ներկայացվել երեխայի իրավունքներին վերաբերող իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ առաջարկություններ, երեխաների հետ տեղի են ունեցել հանդիպումներ, 2025 թվականի Պաշտպանի հայտարարած իրազեկման արշավի շրջանակներում իրականացվել են լայնածավալ իրազեկման միջոցառումներ, որոնք ընդգրկել են 1000 և ավել երեխա Հայաստանի Հանրապետության տարբեր մարզերից և բնակավայրերից:

2025 թվականի ընթացքում հրապարակվել են արտահերթ զեկույցներ: Մասնավորապես, Մարդու իրավունքների պաշտպանը հրապարակել է «Երեխայի նկատմամբ բռնության դեպքերի բացահայտման, կանխարգելման և արձագանքման հետ կապված խնդիրները ՀՀ-ում» արտահերթ զեկույցը:[225]

2025 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանը հանդես է եկել նաև հրապարակային հայտարարություններով՝ արձագանքելով երեխայի իրավունքներին առնչվող տարբեր խնդրահարույց իրավիճակներին:[226][227][228]

Քննարկվել են երեխայի իրավունքների պաշտպանության առնչությամբ ներկայացված դիմումներն ու բողոքները, երեխաների մասնակցությամբ իրականացվել են տարբեր ձևաչափերով միջոցառումներ, անցկացվել են Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր երեխաների իրավունքների հասարակական խորհրդի նիստեր և Խորհրդին կից աշխատանքային խմբի անդամների հետ հանդիպումներ, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները մասնակցել են Անչափահասների արդարադատության խորհրդի նիստերին, իրականացվել են մշտադիտարկման և երեխայի ձայնը լսելի դարձնելուն ուղղված այլ աշխատանքներ:

Միջազգային բազմաթիվ հարթակներում քննարկվել և ներկայացվել են երեխայի իրավունքների, նրանց ձայնը լսելի դարձնելու հետ կապված հարցերը: Պարբերաբար

---

[225] Հասանելի է https://ombuds.am/images/files/2618c9730d8351a085332c232926e4ee.pdf հետևյալ հղումով 2026 թվականի հունվարի 22-ի դրությամբ:

[226] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3529 հետևյալ հղումով 2026 թվականի հունվարի 22-ի դրությամբ:

[227] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3573 հետևյալ հղումով 2026 թվականի հունվարի 22-ի դրությամբ:

[228] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3472 հետևյալ հղումով 2026 թվականի հունվարի 22-ի դրությամբ:

հանդիպումներ և քննարկումներ են տեղի ունեցել Մարդու իրավունքների ազգային ինստիտուտների եվրոպական ցանցի (European Network of National Human Rights Institutions, Երեխաների հարցերով օմբուդսմանների եվրոպական ցանցի (ENOC) կողմից կազմակերպված քննարկումներին և այլն:

2025 թվականի մարտի 13-ին Ժնևում ընթացող Մարդու իրավունքների խորհրդի 58-րդ նստաշրջանի՝ երեխաների իրավունքներին նվիրված ամենամյա քննարկման երկրորդ հատվածում Հայաստանի Հանրապետության երեխաների անունից ելույթով է հանդես եկել Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր երեխաների իրավունքների պաշտպանության հարցերով հասարակական խորհրդի անդամը:[229] Ելույթում նշվել է, որ վաղ մանկությունը պետք է ուղեկցվի անվտանգ, խաղաղ և կայուն միջավայրով, սակայն ներկայումս բազմաթիվ երեխաներ ամբողջ աշխարհում ականատես են դառնում պատերազմների և զինված ընդհարումների՝ կրելով դրանց ծանր հետևանքները: 2020 թվականի պատերազմը և դրան հաջորդած զարգացումները լրջորեն անդրադարձան երեխաների վրա՝ ազդելով նրանց հիմնարար իրավունքների, այդ թվում՝ կրթության և առողջապահության հասանելիության վրա: Ավելին, երեխաները բախվեցին վախի մթնոլորտի, տեղահանման, կրթական գործընթացից դուրս մնալու և ընտանիքների վերամիավորման խոչընդոտների հետ կապված խնդիրներին: Ելույթում նաև ընգծվել է, որ պատերազմների և ճգնաժամերի պայմաններում երեխաների անվտանգությունը և քաղաքացիական ենթակառուցվածքների, մասնավորապես՝ դպրոցների պաշտպանությունը պետք է դիտարկվի որպես առաջնահերթություն, պետությունները պարտավոր են համատեղ միջոցներ ձեռնարկել դրանց ապահովման ուղղությամբ: Միևնույն ժամանակ կարևորվել է երիտասարդության ներգրավվածությունը խաղաղ, արդար և համերաշխ հասարակության կառուցման գործընթացում, ինչը կարող է նպաստել կայուն և անվտանգ ապագայի ձևավորմանը:

Հատկանշական է, որ 2025 թվականի ընթացքում անցկացվել է Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր երեխաների իրավունքների հասարակական խորհրդի 6 նիստ, երեխաների ներգրամամբ և մասնակցությամբ իրականացվել են այլ աշխատանքներ:

Այսպես, օրինակ, 2025 թվականի տեղի է ունեցել Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր երեխաների իրավունքների պաշտպանության հարցերով հասարակական խորհրդի նիստ Պաշտպան Անահիտ Մանասյանի և ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեի փոխնախագահ Ֆիլիպ Ջաֆֆեի մասնակցությամբ: Քննարկման ընթացքում կողմերն անդրադարձել են ոլորտում առկա մի շարք հիմնարար և հրատապ խնդիրների՝ այդ թվում՝ ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոնվենցիայի արդյունավետ կիրառման խոչընդոտներին, երեխաների իրավունքների վերաբերյալ իրազեկվածության պակասին, ոլորտում մասնագիտական կարողությունների զարգացման անհրաժեշտությանը, կրթության իրավունքի իրացման սահմանափակումներին, հավասար հնարավորությունների ապահովման հարցերին, ինչպես նաև բուլինգի և խտրականության դրսևորումներին: Հասարակական խորհրդի անդամները ներկայացրել են իրենց հուզող

[229] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3309 հետևյալ հղումով 2026 թվականի հունվարի 26-ի դրությամբ:

հարցերն ու առաջարկությունները՝ կարևորելով ոլորտում համակարգված բարեփոխումների անհրաժեշտությունն ու համագործակցության շարունակականության ապահովումը:

2025 թվականի մարտի 13-ին տեղի է ունեցել Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր երեխաների իրավունքների պաշտպանության հարցերով հասարակական խորհրդի հերթական նիստը, որի ժամանակ Եվրոպայի խորհրդի փորձագետը ներկայացրել է «Երիտասարդների հզորացում և առաջնորդության հաղորդակցություն երեխաների համար» երեխաների իրավունքների պաշտպանության և խթանման Եվրոպայի խորհրդի չափանիշները: ՄԻՊ փորձագետը ծանոթության և մտքերի փոխանակումից հետո, խորհրդի անդամներին ներկայացրել է երեխայի լավագույն շահի, հաշմանդամություն ունեցող երեխաների համար մատչելի միջավայրի ապահովման, դպրոցներում բուլինգի և բռնության բոլոր դրսևորումների կանխարգելման, բացահայտման և արձագանքման հետ կապված խնդիրները:

Երեխաների պաշտպանության միջազգային օրվան ընդառաջ հունիսի 1-2-ը Մարդու իրավունքների պաշտպանի նախաձեռնությամբ և ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ

անցկացվել է Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր երեխաների իրավունքների պաշտպանության հարցերով հասարակական խորհրդի հերթական նիստը: Միջոցառումը բացառիկ հնարավորություն էր երեխաների համար՝ ուղղել իրենց հարցերը տարբեր ոլորտների պատասխանատուներին և որոշում կայացնողներին:[230]

2025 թվականի նոյեմբերի 28-ին Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանի գլխավորությամբ ՄԻՊ առընթեր երեխաների իրավունքների պաշտպանության հարցերով հասարակական խորհրդի և խորհրդին կից աշխատանքային խմբի անդամները, ինչպես նաև մի շարք այլ երեխաներ և երիտասարդներ տարբեր բնակավայրերից ՀՀ կառավարությունում հանդիպում են ունեցել Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ: [231]

[230] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3476 հետևյալ հղումով 2026 թվականի հունվարի 22-ի դրությամբ:

[231] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3608 հետևյալ հղումով 2026 թվականի հունվարի 22-ի դրությամբ:

Հանդիպման նպատակն էր ստեղծել ուղիղ և արդյունավետ երկխոսության հարթակ, որտեղ երեխաներն ու երիտասարդները կկարողանան անձամբ բարձրաձայնել իրավունքների պաշտպանությանը վերաբերելի հրատապ խնդիրները, առաջարկել լուծումներ և ստանալ պատասխաններ անմիջապես Հանրապետության վարչապետից: Մասնակիցները ՀՀ վարչապետին են ներկայացրել ինչպես համակարգային, այնպես էլ կոնկրետ խնդիրներին առնչվող մի շարք հարցերմ որոնք վերաբերել են երեխաների անվտանգության, կրթական միջավայրի բարելավման, բռնության կանխարգելման, առողջապահական ծառայությունների հասանելիության, միջավայրի մատչելիության, հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության, որոշումների կայացման գործընթացում երեխաների ներգրավվածության, համայնքներում երիտասարդների զբաղվածության հետ կապված և մի շարք այլ բնագավառների: Հանդիպումն անցկացվել է հարցուպատասխանի ձևաչափով, ինչը հնարավորություն է տվել երեխաներին բարձրաձայնելու այն խնդիրները, որոնց իրենք են բախվում, և առաջարկելու դրանց համար լուծումներ: Միջոցառումը ևս մեկ քայլ է երեխաների ձայնը պետական որոշումների կայացման գործընթացներում առավել լսելի և ազդեցիկ դարձնելու ուղղությամբ, ինչը Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր երեխաների իրավունքների պաշտպանության հարցերով հասարակական խորհրդի կարևոր նպատակներից է:

2025 թվականի հունիսի 18-ին տեղի է ունեցել Անկախ Պետությունների Համագործակցության Երեխաների իրավունքների հանձնակատարների հանձնաժողովի հինգերորդ նիստը, որի շրջանակում Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր երեխաների իրավունքների պաշտպանության հարցերով հասարակական խորհրդի անդամը հանդես է եկել «Երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի ապահովման և երեխայի այլընտրանքային խնամքի կազմակերպման մասին» թեմայով զեկույցի ներկայացմամբ:[232]

Անկախ Պետությունների Համագործակցության Երեխաների իրավունքների հանձնակատարների հանձնաժողովի հետ համագործակցության շրջանակում ձևավորվել է նաև ԱՊՀ մասնակից պետությունների երեխաների իրավունքների հանձնակատարներին առընթեր Երեխաների խորհուրդը, որի առաջին նիստին Հայաստանը ներկայացրել են ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին առընթեր երեխաների իրավունքների պաշտպանության հարցերով հասարակական խորհրդի անդամները:

2025 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի կողմից հայտարարված իրազեկման արշավի շրջանակներում Պաշտպանի աշխատակազմ և մարզային ստորաբաժանումներ այցելել են շուրջ 20 դպրոցներից բազմաթիվ աշակերտներ: Նշված արշավի շրջանակներում ինչպես Մարդու իրավունքներիր պաշտպանն անձնապես, այնպես էլ Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչերն այցելել են Հայաստանի Հանրապետության տարբեր հանրակրթական ուսումնական հաստատություններ:

[232] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3429 հետևյալ հղումով 2026 թվականի հունվարի 22-ի դրությամբ:

Այսպես, օրինակ, 2025 թվականի հոկտեմբերի 9-ին Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանը հյուրընկալել է Երևանի Սերո Խանզադյանի անվան թիվ 184 ավագ դպրոցի աշակերտներին: Այցը ճանաչողական բնույթ էր կրում և նվիրված էր երեխաների իրավունքների թեմային:

Իրազեկման շրջանակում, ի թիվս այլ հարցերի, երեխաներին ներկայացվել են Պաշտպանի ինստիտուտի առաքելությունը, լիազորությունների շրջանակը, աշխատանքի հիմնական ուղղություններն ու առաջնահերթությունները: Քննարկվել են երեխաների իրավունքների պաշտպանությանն առնչվող մի շարք հարցեր, այդ թվում՝ երեխաների նկատմամբ բռնության կանխարգելման, կրթության իրավունքի ապահովման և երեխայի անձնական տվյալների պաշտպանության, առցանց միջավայրում երեխայի անվտանգության ապահովման, ինչպես նաև իրավունքի վերաբերյալ պատշաճ իրազեկվածության վերաբերյալ:[233]

2025 թվականի ընթացքում անցկացվել են Պաշտպանին առընթեր երեխաների իրավունքների պաշտպանության հասարակական խորհրդի նիստեր, այդ թվում՝ առցանց ձևաչափով: Այսպես, օրինակ, օգոստոսի 15-ին տեղի է ունեցել Պաշտպանին առընթեր երեխաների իրավունքների պաշտպանության հասարակական խորհրդի և Խորհրդին կից աշխատանքային խմբի հերթական առցանց նիստը, որի ընթացքում, ի թիվս այլ հարցերի, քննարկվել են նաև երեխայի նախադպրոցական և հանրակրթության իրավունքի վերաբերյալ հարցեր: Խորհրդի և աշխատանքային խմբի անդամները ներկայացրել են ոլորտում առկա խնդիրները և առաջարկել հնարավոր լուծումներ՝ իրենց տեսանկյունից: Հատուկ ուշադրություն է դարձվել երեխայի՝ հանրակրթության մեջ ընդգրկվելու տարիքի առնչությամբ գործող իրավակարգավորումներին, որոնց վերաբերյալ երեխաները ներկայացրել են առկա խնդիրները և դրանց լուծմանն ուղղված իրենց առաջարկությունները:

2025 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունը, համագործակցելով Եվրոպայի խորհրդի հետ, սկսել է «Child Safeguarding» քաղաքականության մշակման գործընթացը «Հայ երեխաների իրավունքների պաշտպանությունը հետկոնֆլիկտային համատեքստում» ծրագրի շրջանակում, որը ներառված է Եվրոպայի խորհրդի՝ Հայաստանի համար իրականացվող 2023–2026 թվականների գործողությունների ծրագրում և հանդիսանում է Հայաստանում փախստականների ներհոսքին արձագանքող համալիր աջակցության փաթեթի բաղադրիչ:

[233] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3540 հետևյալ հղումով 2026 թվականի հունվարի 22-ի դրությամբ:

Կարևորելով երեխաների ներգրավվածությունն իրենց վերաբերյալ քաղաքականությունների մշակմանը՝ անցկացվել է նաև Պաշտպանին առընթեր երեխաների իրավունքների պաշտպանության հասարակական խորհրդի հերթական առցանց նիստը, որը նվիրված էր «Child Safeguarding»՝ երեխայի պաշտպանության և նրա համար անվտանգ միջավայրի ապահովման նպատակով մշակվող հստակ քաղաքականությանը:[234]

Հատկանշական է, որ 2025 թվականի դեկտեմբերի 3-ին Մարդու իրավունքների պաշտպանը մասնակցել է «Հայ երեխաներին ցուցաբերվող աջակցության ամրապնդումն արտակարգ իրավիճակներում և դրանից հետո» վերտառությամբ միջոցառմանը, որին մասնակցել են նաև Պաշտպանին առընթեր երեխաների իրավունքների պաշտպանության հարցերով հասարակական խորհրդի և խորհրդին կից աշխատանքային խմբի անդամները:[235] Միջոցառման ընթացքում երեխաներն իրենց առաջարկություններն են արել «Child Safeguarding»՝ երեխայի պաշտպանության և նրա համար անվտանգ միջավայրի ապահովման նպատակով մշակվող քաղաքականության առնչությամբ:

2025 թվականին իրականացվել են նաև աշխատակազմի կարողությունների զարգացմանն ուղղված միջոցառումներ: Այսպես, օրինակ, ՄԻՊ աշխատակազմի երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի աշխատակիցները մասնակցել են «Երեխաներին սեռական շահագործումից և սեռական բռնությունից պաշտպանելու վերաբերյալ» HELP դասընթացին:

2025 թվականի դեկտեմբերի 23-ին Մարդու իրավունքների պաշտպանի նախաձեռնությամբ կազմակերպվել է վերապատրաստման դասընթաց՝ նվիրված Հայաստանի Հանրապետությունում 2023-2025 թվականների ընթացքում մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման դեմ պայքարի կազմակերպման ազգային ծրագրի շրջանակներում Հանրային պաշտպանի գրասենյակի, զանգվածային լրատվամիջոցների և ՄԻՊ աշխատակազմի ներկայացուցիչների համար՝ նվիրված մարդկանց թրաֆիքինգի կամ աշխատանքային շահագործման՝ ներառյալ երեխաների թրաֆիքինգի կամ շահագործման հիմնախնդիրներին:[236]

2025 թվականին անչափահասների Արդարադատության խորհրդի կազմում իրականացված աշխատանքների շրջանակում Մարդու իրավունքների պաշտպանի

---

[234] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3618 հետևյալ հղումով 2026 թվականի հունվարի 22-ի դրությամբ:

[235] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3616 հետևյալ հղումով 2026 թվականի փետրվարի 12-ի դրությամբ:

[236] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3639 հետևյալ հղումով 2026 թվականի փետրվարի 12-ի դրությամբ:

աշխատակազմի ներկայացուցիչները մասնակցել են նաև անչափահասների Արդարադատության խորհրդի կազմում ձևավորված աշխատանքային խմբի նիստերին, որոնց ընթացքում քննարկվել և համապատասխան առաջարկություններ են ներկայացվել հարկադիր կատարման փուլում երեխայի լավագույն շահի ապահովման հիմնախնդիրների վերաբերյալ, ինչպես նաև հոգեբանի ներգրավման խնդիրների, անչափահասների, անգործունակ կամ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց մասնակցությամբ քննչական գործողությունների ընթացքում:

2025 թվականի դեկտեմբերին՝ Ամանորին ընդառաջ, Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանը՝ աշխատակազմի ներկայացուցիչների ուղեկցությամբ, այցելել է Արդարադատության նախարարության «Աբովյան» քրեակատարողական հիմնարկ:[237] Այցի ընթացքում Պաշտպանն առանձնազրույցներ է ունեցել ազատությունից զրկված անչափահասների, այդ թվում՝ օտարերկրացիների, ինչպես նաև իրենց մոտ մինչև 3 տարեկան երեխա ունեցող ազատությունից զրկված կանանց հետ: Պաշտպանը ողջունելի է համարում «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի շենքային պայմանների էական բարելավումը, մասնավորապես՝ երկարատև տեսակցությունների համար նախատեսված սենյակների, ինչպես նաև խցերի վերանորոգումն ու կահավորումը՝ միևնույն ժամանակ կարևորելով, որպեսզի այդ բարեփոխումները լինեն շարունակական, քանի որ այդ հանգամանքը նպաստում է ազատությունից զրկված անձանց վերասոցիալականացման գործընթացի արդյունավետ իրականացմանը:

Մարդու իրավունքների պաշտպանը 2025–2026 թթ. ուսումնական տարում հանրակրթության մեջ իրենց տարիքային խմբին համապատասխան միանգամից 2-րդ դասարան ընդունված երեխաների իրավունքների ապահովման հարցի առնչությամբ կայացրել է երեխայի իրավունքների խախտման վերաբերյալ որոշում:[238]

2025 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանը ստացել է և քննարկել է 1211 գրավոր և բանավոր բողոք՝ երեխայի նկատմամբ բռնության, անձնական տվյալների պաշտպանության, նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատությունների հասանելիության և մի շարք այլ հարցերի հետ կապված:

[237] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3636 հետևյալ հղումով 2026 թվականի փետրվարի 12-ի դրությամբ:

[238] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3653 հետևյալ հղումով 2026 թվականի հունվարի 26-ին:

ԳԼՈՒԽ 1. ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Երեխաների իրավունքների պաշտպանության համակարգը

Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների և շահերի պաշտպանության միասնական պետական քաղաքականությունն իրականացվում է երեխայի պաշտպանության եռաստիճան համակարգի միջոցով, որում ներառված են.

- Երեխայի իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովը,
- մարզպետների աշխատակազմերի համապատասխան ստորաբաժանումներն ու Երևանի քաղաքապետարանի երեխաների և սոցիալական պաշտպանության վարչությունը,
- խնամակալության և հոգաբարձության մարմինները:

Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկումները, գրավոր և բանավոր ստացված դիմում-բողոքները, թեժ գծի հեռախոսահամարին ստացված զանգերը վկայում են, որ եռաստիճան համակարգի յուրաքանչյուր օղակում առկա են համակարգային բնույթ կրող խնդիրներ, որոնք իրենց ազդեցությունն են ունենում երեխայի իրավունքների պաշտպանության համակարգի արդյունավետ գործունեության վրա: Արձանագրված որոշ խնդիրներին Մարդու իրավունքների պաշտպանն անդրադարձել է նաև իր տարեկան հաղորդումներում[239] և արտահերթ հրապարակային զեկույցում[240]:

Հատկանշական է, որ 2025 թվականին հոտկեմբերի 22-ին «Երեխայի իրավունքների և երեխայի պաշտպանության համակարգի մասին» օրենքի ընդունմամբ ոլորտում համապատասխան փոփոխություններ են իրականացվել, որոնցով, ի թիվս այլնի, առանձնահատուկ նշանակություն և կարևորություն է տրվել երեխայի պաշտպանության բազմամասնագիտական խորհրդին: Պաշտպանն արժևորում է երեխայի իրավունքների պաշտպանության ոլորտում իրականացվող օրենսդրական փոփոխությունների իրականացումը և կարևորում դրանցից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի շուտափույթ ընդունումը:

Ողջունելի է նաև, որ «Երեխայի իրավունքների և երեխայի պաշտպանության համակարգի մասին» օրենքի 21-րդ հոդվածով սահմանվում են Երեխայի իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովի հասկացության, նպատակների, գործառույթների, գործունեության վերաբերյալ կարգավորումներ: Հարկ է նշել, որ նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Ազգային հանձնաժողովի գործունեության կարգը, կազմավորման կարգը և անհատական կազմը, ինչպես նաև Ազգային հանձնաժողովի աշխատանքային խմբերի ձևավորման հիմքերը և կարգը, գործունեության կարգը հաստատում է սոցիալական պաշտպանության ոլորտի պետական լիազոր մարմնի

---

[239] Տե՛ս, 2021 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, հասանելի է https://www.ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ: Տե՛ս նաև, 2023 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 545-547, հասանելի է https://ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[240] Տե՛ս, Մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույցը Հայաստանի Հանրապետության կողմից «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայով և կից արձանագրություններով սահմանված պարտավորությունների կատարման վիճակի վերաբերյալ, Երևան, 2025թ., հասանելի է https://ombuds.am/images/files/86112aec12c1a4e935e2c7a23d80bb2a.pdf հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

ղեկավարը, մինչդեռ այժմ գործում է Վարչապետի 2012 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 1295-Ն որոշումը, որի համաձայն. «Երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովը (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) խորհրդակցական մարմին է, որի գործունեության հիմնական նպատակը երեխայի իրավունքների և շահերի պաշտպանության միասնական պետական քաղաքականության ապահովմանը նպաստելն է:»: Այս կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանը վերահաստատում է, որ Երեխայի իրավունքների և շահերի պաշտպանության միասնական պետական քաղաքականության ապահովմանը նպաստելու նպատակի իրագործման համար, Հանձնաժողովն ունի առավել արդյունավետ մեխանիզմների գործադրմամբ աշխատանքներն իրականացնելու անհրաժեշտություն:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2025 թվականի ընթացքում գումարվել է Երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովի 1 նիստ: «Երեխայի իրավունքների պաշտպանության 2024-2029 թվականների համալիր ծրագրի» նախագիծը մշակելիս ամրագրվել է, որ Երեխաների իրավունքների պաշտպանության հանրապետական մակարդակում արդյունավետության բարձրացման նպատակով, նախատեսվում է վերանայել ազգային հանձնաժողովի գործառույթները՝ անհրաժեշտ մարդկային և տեխնիկական ռեսուրսներով ապահովման, երեխաների մասնակցության չափանիշների սահմանման և այլ հարցերի շուրջ՝ դրանով իսկ մեծացնելով երեխայի իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովի գործունեության արդյունավետությունը: Այս համատեքստում Պաշտպանը վերստին արձանագրում է, որ երեխայի իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովի առջև դրված նպատակի իրագործման հարցում կարևոր է նաև վերջինիս օժտել անհրաժեշտ մարդկային, ֆինանսական և տեխնիկական ռեսուրսներով: Ընդ որում, նման դիրքորոշում է հայտնել նաև Երեխայի իրավունքների կոմիտեն՝ 2024 թվականին Հայաստանի Հանրապետության վերաբերյալ ներկայացրած եզրափակիչ դիտարկումներում[241]

Չնայած կատարված օրենսդրական փոփոխություններին, 2025 թվականի ընթացքում շարունակում են արդիական մնալ խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների գործունեությանն առնչվող խնդիրները: Մասնավորապես՝ խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովները դեռ շարունակում են գործել կամավորության սկզբունքով՝ հնարավորություն չտալով կազմում ներառել անհրաժեշտ և բավարար գիտելիքներ ու հմտություններ ունեցող մասնագետներ: Գործնական խնդիրներ են արձանագրվել նաև մարզպետների աշխատակազմերի և Երևանի քաղաքապետարանի երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության հետ խնամակալության և հոգաբարձության մարմինների աշխատանքի իրականացման գործընթացում բավարար գիտելիքներ չունենալու առնչությամբ: Բազմաթիվ են դեպքերը, երբ խնամակալության և հոգաբարձության մարմնի ներկայացուցիչները չեն տիրապետում:

Մտահոգիչ է այն, որ ոչ բոլոր համայնքներում է ապահովված անհրաժեշտ մասնագետների ներգրավվածությունը ԽՀՀ կազմում, մի շարք համայնքներում խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների կազմում ընդգրկված չեն անգամ հոգեբաններ:

Մարդու իրավունքների պաշտպանը արժևորում է այս ոլորտում օրենսդրական փոփոխությունների իրականացումը, մասնավորապես, հերթափոխով աշխատանքի

[241] Հասանելի է https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRC%2FC%2FARM%2FCO%2F5-6&Lang=en հետևյալ հղումով:

միջոցով մասնագիտացված սոցիալական աշխատողների 24-ժամյա հասանելիության ապահովումը, և ընդգծում դրանցից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի շուտափույթ ընդունման անհրաժեշտությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***մշակել և ներդնել Երեխայի իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովի գործունեության առավել արդյունավետ կառուցակարգեր՝ ապահովելով վերջինիս անհրաժեշտ լիազորություններով, մարդկային, ֆինանսական և տեխնիկական ռեսուրսներով: ապահովող***
- ✓ ***արագացնել երեխայի իրավունքների պաշտպանության ոլորտում իրականացված օրենսդրական փոփոխություններից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի շուտափույթ ընդունումը:***

2. Երեխայի իրավունքների պաշտպանության համալիր ծրագիրը

«Երեխայի իրավունքների և երեխայի պաշտպանության համակարգի մասին» օրենքով նախատեսվել է, որ երեխայի իրավունքների պաշտպանության ոլորտում պետական քաղաքականությունը, այդ թվում՝ համատեղ միջոլորտային միջոցառումները, սահմանվում են երեխայի իրավունքների պաշտպանության համալիր ծրագրով (այսուհետ՝ համալիր ծրագիր): Համալիր ծրագիրն ապահովում է երեխայի իրավունքների ապահովման, երեխայի իրավունքների պաշտպանության ոլորտում պետական քաղաքականության համակարգված, նպատակային, շարունակական և արդյունավետ իրականացումը, ինչպես նաև հանդիսանում է երեխայի իրավունքների պաշտպանության, այդ թվում՝ միջազգային պարտավորությունների մշտադիտարկման գործիք: Ընդ որում, նախատեսվել է նաև, որ համալիր ծրագիր ընդունելու վերաբերյալ ՀՀ կառավարության որոշումը պետք է ընդունվի օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 24 ամսվա ընթացքում:

2025 թվականի ՀՀ աշխատանքի և սոցիալական նախարարության տրամադրած պատասխանի համաձայն՝ «Երեխայի իրավունքների և երեխայի պաշտպանության համակարգի մասին» ՀՕ-364-Ն և «Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկը և ժամանակացույց հաստատելու մասին» ՀՀ վարչապետի որոշման նախագծում ներառվել է նաև «Համալիր ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

Մինչդեռ՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ նշված համալիր ծրագիրը, որը պետք է պարունակեր երեխայի իրավունքների պաշտպանության բոլոր հիմնախնդիրները, ռազմավարական ուղղություններն ու նպատակները, երեխայի իրավունքների պաշտպանության ոլորտում իրավիճակի վերլուծությունը, առաջնահերթությունները, ֆինանսական աղբյուրներն ու անհրաժեշտ ֆինանսական միջոցները, առաջընթացի ցուցանիշները, ելակետային և թիրախային արդյունքները, իրականացվելիք աշխատանքների մշտադիտարկման ընթացակարգն արտացոլող միջոցների համալիրը, 2025 թվականին չի ընդունվել:

Նշվածը խնդրահարույց է երեխայի իրավունքների ապահովման, պաշտպանության ոլորտում պետական քաղաքականության համակարգված, նպատակային, շարունակական և արդյունավետ իրականացման տեսանկյունից: ***Չնայած համալիր ծրագրի նախագծի մշակմանն ու ընդունմանն ուղղված աշխատանքների իրականացմանը՝ Մարդու իրավունքների պաշտպանը խիստ կարևորում է դրա շուտափույթ ընդունումը և***

նախատեսված միջոցառումների համար պետական բյուջեից բավարար ֆինանսական միջոցների հատկացումը: Ռազմավարական փաստաթղթի ընդունման կարևորությանն անդրադարձել է նաև Երեխայի իրավունքների կոմիտեն 2024 թվականին Հայաստանի Հանրապետության վերաբերյալ ներկայացրած եզրափակիչ դիտարկումներում, որի համաձայն՝ համալիր ծրագիրը պետք է հիմնված լինի Երեխայի իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարական ծրագրերի իրականացման գնահատման վրա և ընդգրկի «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայով և դրան կից կամընտիր արձանագրություններով սահմանված բոլոր ոլորտները: Կոմիտեն նաև առաջարկել է մասնակից պետությանը ծրագիրն ապահովել բավարար մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսներով[242]:

[242] Հասանելի է https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRC%2FC%2FARM%2FCO%2F5-6&Lang=en հետևյալ հղումով:

ԳԼՈՒԽ 2. ԵՐԵԽԱՅԻ՝ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԱՊՐԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈՒ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԽՆԱՄՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Պետությունը, որդեգրելով ապաինստիտուցիոնալացման քաղաքականություն, պարտավորվել է ապահովել երեխայի՝ իր կենսաբանական ընտանիքում և իր կենսաբանական ծնողների հետ պատշաճ խնամք ստանալու իրավունքի իրացումը, և միայն դրա անհնարինության դեպքում՝ դիտարկել խնամքի այլընտրանքային ձևերը՝ նախապատվությունը տալով ընտանեկան կապերին փոխարինող այլ ընտանեկան միջավայրում երեխայի խնամքի կազմակերպմանը: Մարդու իրավունքների պաշտպանն ընտանիքում ապրելու երեխայի իրավունքի կարևորությանը և այդ իրավունքը երաշխավորելու պետության պարտավորությանն անդրադարձել է նաև նախորդ տարիների տարեկան հաղորդումներում[243] և արտահերթ հրապարակային զեկույցներում[244]:

Մինչդեռ, 2025 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկումները, գրավոր և բանավոր դիմում-բողոքները, այդ թվում՝ թեժ գծի հեռախոսահամարին ստացված զանգերը վկայում են, որ երեխայի խնամքը կենսաբանական ընտանիքում և ընտանեկան կապերին փոխարինող այլ ընտանեկան միջավայրում կազմակերպելու հարցում առկա են ինչպես օրենսդրական, այնպես էլ գործնական արդյունավետ լուծումներ պահանջող մի շարք համակարգային խնդիրներ: Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրել է.

1. երեխայի խնամքը կենսաբանական ընտանիքում կազմակերպելու հետ կապված խնդիրներ.
2. որդեգրման հետ կապված խնդիրներ.
3. խնամակալության կամ հոգաբարձության հետ կապված խնդիրներ.
4. խնամատար ընտանիքում երեխայի խնամքի կազմակերպման հետ կապված խնդիրներ.
5. հաստատություններում երեխայի խնամքի և պաշտպանության կազմակերպման հետ կապված խնդիրներ.
6. հետխնամքի ապահովման հետ կապված խնդիրներ.
7. մանկալքության կանխարգելման հետ կապված խնդիրներ:

---

243 Տե՛ս 2021 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 1236-1250, հասանելի է https://www.ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf հղումով, 2026 թվականի փետրվարի 10-ի դրությամբ: Տե՛ս նաև 2023 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 549-552, հասանելի է https://www.ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2026 թվականի փետրվարի 10-ի դրությամբ: Տե՛ս նաև 2024 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 442-444, հասանելի է https://ombuds.am/images/files/4d1335361f1f7e9fbcc1cfc10679701e.pdf հղումով, 2026 թվականի փետրվարի 10-ի դրությամբ:

244 Տե՛ս Մարդու իրավունքների պաշտպանի այլընտրանքային հրապարակային զեկույցը Հայաստանի Հանրապետության կողմից «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայով և կից արձանագրությունների կատարման վիճակի վերաբերյալ, 11-13, հասանելի է https://www.ombuds.am/images/files/86112aec12c1a4e935e2c7a23d80bb2a.pdf հղումով, 2026 թվականի փետրվարի 10-ի դրությամբ:

1. Երեխայի խնամքը կենսաբանական ընտանիքում կազմակերպելու հետ կապված խնդիրներ

Երեխայի խնամքը կենսաբանական ընտանիքում կամ ընտանեկան կապերին փոխարինող այլ ընտանեկան միջավայրում կազմակերպելու հարցում առկա համակարգային խնդիրներն արդիական են նաև 2025 թվականի ընթացքում, ինչի մասին, ի թիվս այլնի, վկայում է նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած տեղեկատվությունն այն մասին, որ 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ երեխայի խնամք և պաշտպանություն իրականացնող շուրջօրյա պետական հաստատություններում խնամվում է 280 երեխա: 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ երեխաների շուրջօրյա խնամք իրականացնող ոչ պետական հաստատություններում խնամվում է 226 շահառու, որոնցից 222՝ երեխա, նրանց մեջ կան նաև հաշմանդամություն ունեցող երեխաներ:

Հատկանշական է, որ երեխայի խնամքը կենսաբանական ընտանիքում կազմակերպելու համար հաճախ խոչընդոտ է լինում ընտանիքի ոչ բավարար կենսապայմաններ ունենալը և այդ ուղղությամբ համապատասխան համայնքահեն ծառայությունների բացակայությունը: Դա, երբեմն, պատճառ է դառնում նաև երեխային շուրջօրյա խնամքի ռեժիմով դպրոցներ տեղափոխելու համար:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» պետական ոչ առևտրային կազմակերպություն իրականացված մշտադիտարկման չհայտարարված այցի արդյունքները վերահաստատում են այն, որ հաշմանդամություն ունեցող երեխաների դեպքում բավարար կենսագործունեության և կենցաղային պատշաճ պայմաններով ապահովված չլինելուն ավելանում են նաև հաշմանդամությամբ պայմանավորված հավելյալ ծախսերը, որոնք պատճառ են երեխայի խնամքը հաստատությունում կազմակերպելու համար:

Չնայած պետության գործադրած ջանքերին և շարունակաբար իրականացվող բարեփոխումներին՝ Մարդու իրավունքների պաշտպանը, այդուամենայնիվ, արձանագրում է, որ մինչև Համալիր ծրագրի ընդունումը պետությունը պետք է գործուն միջոցներ ձեռնարկի՝ բացառելու երեխային միայն սոցիալ-տնտեսական անբարենպաստ պայմաններով պայմանավորված՝ իր կենսաբանական ընտանիքից բաժանելու գործելակերպը: Պետությունը պարտավոր է ապահովել երեխայի համար սոցիալ-հոգեբանական և սոցիալ-բժշկական աջակցության, համայնքներում ինքնուրույն կյանքով ապրելուն ուղղված ծառայությունների հասանելիությունը, ծնողների համար ծնողավարման հմտությունների ու երեխայի ընտանիքի անդամների համար անհրաժեշտ հոգեբանական և սոցիալական աջակցություն ստանալու իրական հնարավորությունը: Այդպիսի պահանջը բխում է նաև «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայով նախատեսված կարգավորումներից, Երեխայի իրավունքների կոմիտեի 9-րդ ընդհանուր մեկնաբանության և միջազգային իրավական այլ փաստաթղթերի վերլուծությունից[245]:

Թեև 2025 թվականին հոկտեմբերի 22-ին «Երեխայի իրավունքների և երեխայի պաշտպանության համակարգի մասին» օրենքով նշված ոլորտում իրականացվել են օրենսդրական բարեփոխումներ, շարունակում են համակարգային մնալ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխային կենսաբանական ընտանիք վերադարձնելուց հետո մշտադիտարկում իրականացնելու անհրաժեշտության գնահատման ու դրա առկայության

[245] Տե՛ս, Երեխայի իրավունքների կոմիտեի 9-րդ ընդհանուր մեկնաբանությունը, հասանելի է https://www.refworld.org/legal/general/crc/2007/en/48507 հղումով, 2026 թվականի փետրվարի 10-ի դրությամբ:

դեպքում՝ գործնականում համապատասխան քայլերի ձեռնարկման հետ կապված խնդիրները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ***շարունակել միջոցներ ձեռնարկել՝ բացառելու՝ երեխային միայն սոցիալ-տնտեսական անբարենպաստ պայմաններով պայմանավորված՝ իր կենսաբանական ընտանիքից բաժանելու գործելակերպը:***
- ***ապահովել երեխայի համար սոցիալ-հոգեբանական և սոցիալ-բժշկական աջակցության, համայնքներում ինքնուրույն կյանքով ապրելուն ուղղված ծառայությունների իրական հասանելիությունը, ծնողների համար ծնողավարման հմտությունների ու երեխայի ընտանիքի անդամների համար անհրաժեշտ հոգեբանական և սոցիալական աջակցություն ստանալու իրական հնարավորությունը:***
- ***ներդնել կառուցակարգեր, որոնցով հնարավոր կլինի իրականացնել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխային կենսաբանական ընտանիք վերադարձնելուց հետո մշտադիտարկում իրականացնելու անհրաժեշտության գնահատում ու գնահատման արդյունքներով պայմանավորված՝ համապատասխան քայլերի ձեռնարկում:***

2. Որդեգրման հետ կապված խնդիրներ

Մարդու իրավունքների պաշտպանի իրականացրած մշտադիտարկումները վկայում են այն մասին, որ 2025 թվականի ընթացքում շարունակում են արդիական մնալ որդեգրման գործընթացի համակարգման հետ կապված մի շարք խնդիրներ:

«Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2025 թվականի հոկտեմբերի 22-ի ՀՕ-363-Ն օրենքով ՀՀ ընտանեկան օրենսգրքի երեխաների որդեգրմանը (դստերագրմանը) նվիրված 18-րդ գլխում իրականացվել են մի շարք օրենսդրական փոփոխություններ և լրացումներ, որոնք, ի թիվս այլնի, վերաբերել են որդեգրման ենթակա երեխաների վերաբերյալ տվյալները տրամադրելուն, որդեգրման ենթակա երեխայի և որդեգրել ցանկացող անձի համադրմանը, օտարերկրյա որդեգրման կազմակերպման առանձնահատկություններին, երեխաների անձնական տվյալների պաշտպանությանը, որդեգրողի ընտանիքում որդեգրված երեխայի խնամքի նկատմամբ վերահսկողությանը և այլն:

Մարդու իրավունքների պաշտպանը ողջունում է նշված օրենսդրական փոփոխությունների իրականացումը ու ընդգծում, որ որդեգրման գործընթացի համակարգմանն ուղղված օրենսդրական փոփոխությունները պետք է կրեն շարունակական բնույթ: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2025 թվականի հոկտեմբերի 22-ի ՀՕ-363-Ն օրենքի 65-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված է, որ սույն օրենքի ընդունմամբ պայմանավորված՝ համապատասխան ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 24 ամսվա ընթացքում: Սույն օրենքով սահմանված հոդվածները, որոնց իրականացումը պայմանավորված է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունմամբ, գործելու են համապատասխան ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ուժի մեջ մտնելու պահից: Այս առումով, Մարդու իրավունքների պաշտպանն ընդգծում է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի շուտափույթ ընդունման կարևորությունը:

Կարևոր է նաև օրենսդրությամբ որդեգրողի ընտանիքում մշտադիտարկման իրականացման և տրամադրվող ծառայությունների առանձնահատկությունների նախատեսումը: Ընդ որում, որդեգրումից հետո պետության տրամադրած ծառայությունների նպատակը պետք է լինի նոր միջավայրում երեխայի ինտեգրումն ապահովելը[246]:

Ջանքեր պետք է գործադրվեն նաև օտարերկրյա որդեգրումների գործընթացում, մասնավորապես, պետությունը պետք է շարունակի ձեռնարկել միջոցներ՝ ուղղված օտարերկրյա որդեգրման գործընթացում երեխայի լավագույն շահի ապահովումը երաշխավորելուն, երեխաների առևանգումը, վաճառքը կամ նրանց առևտուրը կանխելուն, և նշված հարցերում այլ պետությունների հետ արդյունավետ համագործակցության ձևավորմանը: Ընդ որում, այդպիսի միջոցները պետք է ուղղված լինեն ոչ միայն որդեգրել ցանկացող անձի պատշաճ գնահատմանը, այլև օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց, ինչպես նաև ՀՀ սահմաններից դուրս բնակվող ՀՀ քաղաքացիների կողմից որդեգրումներից հետո որդեգրված երեխայի խնամքի նկատմամբ Հայաստանի Հանրապետության կողմից վերահսկողության գործուն և արդյունավետ կառուցակարգերի ներդրմանը:

Նշված պահանջը բխում է «Երեխաների պաշտպանության և օտարերկրյա որդեգրման բնագավառում համագործակցության մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայով նախատեսված կարգավորումներից:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 128.1-ին հոդվածի 3-րդ մասով սահմանվում է, որ որդեգրողի ընտանիքում որդեգրված երեխայի խնամքի նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է որդեգրման մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ երեք տարվա ընթացքում: Այս առումով, հարկ է նշել, որ վերահսկողության համար սահմանված եռամյա ժամկետը կարող է լինել շատ կարճ ժամանակահատված երեխաների խնամքի վերահսկողությունը պատշաճ իրականացնելու համար, քանի որ երեխաները պետք է ունենան բավական ժամանակ՝ ադապտացվելու նոր ընտանիքին և նշված ժամկետը կարող է չապահովել երեխաների երկարաժամկետ բարեկեցության և հոգեբանական զարգացման համար անհրաժեշտ մշտական գնահատման հնարավորությունները, ուստի անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել, որպեսզի որդեգրողի ընտանիքում որդեգրված երեխայի խնամքի նկատմամբ վերահսկողությունը լինի շարունակական և առավել արդյունավետ:

Հարկ է նշել, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2025 թվականի ընթացքում ՀՀ քաղաքացիների կողմից որդեգրվել է ընդամենը 15 երեխա, որոնց մեջ հաշմանդամություն ունեցող երեխա չի եղել, իսկ օտարերկրյա քաղաքացու կողմից որդեգրվել է 6 երեխա, որոնցից 2՝ հաշմանդամություն ունեցող երեխա:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Մարդու իրավունքների պաշտպանը կարևորում է որդեգրման, այդ թվում՝ օտարերկրյա որդեգրման գործընթացի լավարկմանն ուղղված օրենսդրական փոփոխությունների և գործուն կառուցակարգերի ներդրման հարցում միջոցառումների իրականացման շարունակականությունը:

3. Խնամակալության կամ հոգաբարձության հետ կապված խնդիրներ

Մարդու իրավունքների պաշտպանը խնամակալության և հոգաբարձության սահմանման առնչությամբ նույնպես արձանագրել է մի շարք համակարգային խնդիրներ:

[246] Հասանելի է https://assets.hcch.net/docs/bb168262-1696-4e7f-acf3-fbbd85504af6.pdf հղումով, 2026 թվականի փետրվարի 10-ի դրությամբ:

Չնայած «Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2025 թվականի հոկտեմբերի 22-ի ՀՕ-363-Ն օրենքով ՀՀ ընտանեկան օրենսգրքի երեխայի նկատմամբ խնամակալությանը և հոգաբարձությանը նվիրված 19-րդ գլխում իրականացվել են մի շարք օրենսդրական փոփոխություններ և լրացումներ, մասնավորապես, ՀՀ ընտանեկան օրենսգրքի 135-րդ հոդվածը լրացվել է հետևյալ բովանդակությամբ 4-րդ մասով՝ խնամակալ կամ հոգաբարձու նշանակելը և խնամակալությունը կամ հոգաբարձությունը դադարեցնելը, խնամակալին կամ հոգաբարձուին ներկայացվող պահանջները, խնամակալի կամ հոգաբարձուի պարտականությունները կատարելու նրա ունակությունները գնահատելու չափորոշիչները, ինչպես նաև խնամակալ կամ հոգաբարձու նշանակելու վեճի կամ անհամաձայնության դեպքում դրանց լուծման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: «Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2025 թվականի հոկտեմբերի 22-ի ՀՕ-363-Ն օրենքի 65-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված է, որ սույն օրենքի ընդունմամբ պայմանավորված՝ համապատասխան ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 24 ամսվա ընթացքում: Այս առումով, Մարդու իրավունքների պաշտպանը **ևս մեկ անգամ ընդգծում** է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի շուտափույթ ընդունման կարևորությունը:

Շարունակում է արդիական մնալ երկու ծնողների բացակայության պայմաններում խնամակալ նշանակելու պարագայում երեխայի մերձավոր ազգականների հետ տեսակցության և շփման իրավունքի իրականացման հստակ կառուցակարգերի բացակայությունը: Բացի այդ, թեև օրենսդրությամբ նախատեսված է խնամակալի ընտրության ընթացքում մի շարք հանգամանքների հաշվառումը, այնուամենայնիվ, բացակայում է երեխայի և խնամակալի համադրելիության գնահատման հստակ և պարտադիր չափորոշիչներով կարգավորված մեխանիզմը:

Ընդ որում, խնամակալություն և հոգաբարձություն սահմանելու դեպքերում կարևոր է, որ այդ գործընթացն իրականացվի բազմամասնագիտական թիմի ներգրավմամբ: Բազմամասնագիտական թիմի ներգրավումը ներկայումս իրականացվում է խնամակալության և հոգաբարձության մարմիններին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների ստեղծմամբ: Սակայն հարկ է փաստել, որ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում արձանագրվել են բազմաթիվ դեպքեր, երբ խնամակալության և հոգաբարձության մարմինների կողմից հարցի քննարկման շրջանակում անհրաժեշտ մասնագետի ներգրավումը եղել է անհնարին՝ խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովում նման մասնագետ ընդգրկված չլինելու պատճառով, ինչը պայմանավորված է եղել խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների հասարակական հիմունքներով գործելու հանգամանքով:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ ՀՀ-ում կան մի շարք համայնքներ, օրինակ, Կոտայքի, Սյունիքի, Վայոց ձորի մարզերի, որտեղ խնամակալության և հոգաբարձության մարմինների կազմերում հոգեբան ներգրավված չէ, իսկ նման մասնագետի ներգրավումը պայմանավորված է աշխատանքային անհրաժեշտությամբ:

Հատկանշական է, որ «Պետական սոցիալական աջակցության ծրագրերի շրջանակում երեխաների խնամքի տրամադրման կարգերը, պայմանները, տրամադրվող խնամքի ձևերը, տրամադրվող սոցիալական ծառայությունների, խնամքի տրամադրումը մերժելու հիմք հանդիսացող հիվանդությունների ցանկերը հաստատելու մասին» ՀՀ

կառավարության 2025 թվականի նոյեմբերի 14-ի թիվ 1613-Ն որոշման շրջանակներում ոչ աշխատանքային օրերին կամ ժամերին կյանքին և առողջությանը վտանգ սպառնացող իրավիճակում հայտնաբերված երեխային՝ երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն է տեղափոխում ոստիկանությունը՝ համապատասխան արձանագրությամբ (սույն դեպքում երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոնը երեխային ընդունում է առանց խնամակալության և հոգաբարձության մարմնի արձանագրության), իսկ տեղափոխմանը հաջորդող աշխատանքային օրը գրավոր տեղեկացնում է երեխայի հայտնաբերման վայրի խնամակալության և հոգաբարձության մարմնին:

Հատկանշական է, որ թեև գործող կարգավորումներով նախատեսվել է ոչ աշխատանքային օրերին կամ ժամերին կյանքի դժվարին իրավիճակում հայտնաբերված երեխային ժամանակավորապես տեղավորելու հնարավորություն երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոնում՝ առանց խնամակալության և հոգաբարձության մարմնի արձանագրության, այնուամենայնիվ նման դեպքերում խնամակալության և հոգաբարձության մարմինների անմիջական ներգրավման ապահովման հետ կապված գործնական դժվարությունները շարունակում են արդիական մնալ: Մարդու իրավունքների պաշտպանն ընդգծում է, որ երեխայի լավագույն շահի ապահովման և նման դեպքերում պատշաճ արձագանքի ապահովման տեսանկյունից կարևոր նշանակություն ունի երեխայի վիճակի գնահատման գործընթացում բազմամասնագիտական թիմի ներգրավումը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ***գործուն միջոցներ ձեռնարկել հնարավորինս սեղմ ժամկետում ընդունելու «Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2025 թվականի հոկտեմբերի 22-ի ՀՕ-363-Ն օրենքով սահմանված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական բոլոր ակտերը:***
- ***օրենսդրությամբ նախատեսել խնամակալի և հոգաբարձուի ընտրության հարցում անձի և երեխայի համադրելիության գնահատման պարտադիր պայման:***
- ***ներդնել կառուցակարգեր, որոնցով հնարավոր կլինի խնամակալության և հոգաբարձության սահմանման դեպքերում՝ դիտարկման և գնահատման առարկա դարձնել նաև երեխայի մյուս հարազատների հետ շփման հարցը:***
- ***բացառել խնամակալության և հոգաբարձության մարմինների կողմից անգործության դրսևորումը և յուրաքանչյուր երեխայի պարագայում պատշաճ գնահատել խնամակալության և հոգաբարձության հանձնելու հետ կապված հարցերը:***
- ***խնամակալության և հոգաբարձության սահմանման յուրաքանչյուր դեպքում ապահովել անհրաժեշտ մասնագետների ներգրավվածությունը:***

4. Խնամատար ընտանիքում երեխայի խնամքի կազմակերպման հետ կապված խնդիրներ

Երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի ապահովումն երաշխավորելու նպատակով վերջին տարիներին պետության կողմից աշխատանքներ են իրականացվել խնամատար ընտանիքների ձևավորման հարցում, ձեռնարկվել են միջոցներ օրենսդրական դաշտի կատարելագործման ուղղությամբ:

Այնուամենայնիվ, Մարդու իրավունքների պաշտպանի կողմից իրականացված մշտադիտարկումների արդյունքները ցույց են տալիս, որ խնամատար ընտանիքների ձևավորման և ինստիտուտի կայացման հարցում առկա են մի շարք համակարգային

խնդիրներ: Այդ մասին է վկայում նաև այն, որ անգամ 0-3 տարեկան երեխաների այլընտրանքային խնամքը շարունակվում է կազմակերպվել հաստատություններում:

Ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարության տրամադրած տեղեկատվության՝ խնամատար ընտանիքներում խնամվող երեխաների ընդհանուր թիվը 201 է, որից 91-ը իգական սեռի: 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ 115 անձ հաշվառված է որպես խնամատար ծնող դառնալ ցանկացող անձ: 2025 թվականի ընթացքում 120 խնամատար ընտանիքից՝ 10-ի հետ պայմանագրերը դադարեցվել են, շարունակվում են պայմանագրերը 110 խնամատար ընտանիքի հետ: Նույն ժամանակահատվածում 218 երեխաներից 21-ի խնամքը տարբեր պատճառներով դադարեցվել է, մասնավորապես, 18 տարին լրանալու հիմքով, կենսաբանական ընտանիքի հետ վերամիավորման, որդեգրման, արդյունքում շարունակվում է 197 երեխայի խնամքը:

Խնդրահարույց է, որ 2025 թվականին շարունակվել են արձանագրվել խնամատարության պայմանագրերի վաղաժամկետ լուծման դեպքեր:

Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է նաև, որ ի թիվս վերոնշյալի, 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ հաստատություններում խնամք ստացող երեխաների թիվը նույնպես վկայում է այն մասին, որ խնամատարության ինստիտուտը դեռևս ամբողջությամբ չի ծառայում իր նպատակին՝ երեխայի՝ ընտանեկան միջավայրում ապրելու հնարավորության ապահովմանը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է վեր հանել խնամատարության ինստիտուտի ոչ լիարժեք կայացման հիմքում ընկած խնդիրները և տալ դրանց առարկայական լուծումներ՝ ապահովելով երեխայի՝ ընտանեկան միջավայրում ապրելու իրավունքի իրացումը և բացառելով երեխաների խնամքը հաստատություններում կազմակերպելու շարունակական պրակտիկան:

5. Հաստատություններում երեխայի խնամքի և պաշտպանության կազմակերպման հետ կապված խնդիրներ

2025 թվականի ընթացքում հաստատություններում երեխայի խնամքի և պաշտպանության կազմակերպման հետ կապված խնդիրները Մարդու իրավունքների պաշտպանի ուշադրության ներքո են եղել:

2025 թվականի ընթացքում, որպես համակարգային խնդիր, շարունակում է մտահոգիչ մնալ այնպիսի երաշխիքների բացակայությունը, որոնք հնարավորություն կտան պետությանը ապահովել մինչև հավաստագրումը ոչ պետական հաստատությունների կողմից երեխաների խնամքի և պաշտպանության իրականացման գործընթացում ներպետական օրենսդրության և միջազգային չափորոշիչների պահպանումը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ երաշխավորել պատշաճ արձագանքը:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները 2025 թվականի ընթացքում մշտադիտարկման չհայտարարված այցեր են իրականացրել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» պետական ոչ առևտրային կազմակերպություն, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Երևանի «Զատիկ» երեխաների աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն:

Արձանագրվել են մի շարք խնդիրներ, որոնց մի մասը համակարգային է:

Այսպիսով՝ երեխայի խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում արձանագրվել են.

1. անհրաժեշտ կենսապայմանների ապահովման հետ կապված խնդիրներ.

2. կրթության, բազմակողմանի և ներդաշնակ զարգացման իրավունքի ապահովման հետ կապված խնդիրներ.

3. բազմամասնագիտական թիմով համալրելու, ինչպես նաև վատ վերաբերմունքից զերծ մնալու և կարծիք արտահայտելու իրավունքի ապահովման հետ կապված խնդիրներ.

5.1 Անհրաժեշտ կենսապայմանների ապահովման հետ կապված խնդիրներ

Անհրաժեշտ կենսապայմանների ապահովման հետ կապված խնդիրներ արձանագրվել են, բոլոր այն հաստատություններում, որտեղ իրականացվել են մշտադիտարկման չհայտարարված այցեր: Այսպես, օրինակ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» պետական ոչ առևտրային կազմակերպություն (այսուհետ՝ նաև Հաստատություն) իրականացված այցի արդյունքում արձանագրվել է, որ Հաստատությանը հատկացված ոչ բավարար տարածքի պատճառով պահպանված չէին բնակելի մակերեսի համար նախատեսված պահանջները, ինչով պայմանավորված առկա էր շահառուների սեռատարիքային բաշխվածության հետ կապված խնդիր, ննջասենյակներում առկա էին իրար միացված կամ շատ մոտ տեղադրված մահճակալներ, բացակայում էր առանձնացված պայմաններում շահառուների նեղ անձնական պահանջմունքները, կարիքները (անձնական հիգիենա) ինքնուրույն բավարարելու հնարավորությունը, առկա էր սանհանգույցների և լոգարանների թվի պակաս, որոշ դեպքերում բացակայում էր միջնապատը ցնցուղարանների և զուգարանակոնքերի միջև և այլն: Հաստատության ֆիզիկական միջավայրը չէր համապատասխանում համընդհանուր դիզայնի սկզբունքներին: Հաստատությունում առկա էր խելամիտ հարմարեցումների ապահովման անհրաժեշտություն: Արձանագրվել է նաև անհրաժեշտ աջակցող միջոցի տրամադրման հետ կապված խնդիր: Հաստատությունում առկա էր շահառուների պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման տրամադրման համար համապատասխան գնահատում իրականացնելու անհրաժեշտություն:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է անհետաձգելի միջոցառումներ իրականացնել՝ վերացնելու վերը նշված խախտումները Հաստատությունում, ապահովելու այնպիսի միջավայր, որտեղ կերաշխավորվեն երեխաների խնամքի իրականացման համար անհրաժեշտ կենսապայմաններ:

5.2 Կրթության, բազմակողմանի և ներդաշնակ զարգացման իրավունքի ապահովման հետ կապված խնդիրներ

Հաստատություններում իրականացված մշտադիտարկման չհայտարարված այցերի ընթացքում արձանագրվել են այնտեղ խնամք ստացող երեխաների կրթության, բազմակողմանի և ներդաշնակ զարգացման իրավունքի ապահովման հետ կապված խնդիրներ: Արձանագրվել են կրթական գործընթացը յուրաքանչյուր երեխայի պահանջներին համապատասխանեցնելու և հարմարեցնելու, համապատասխան կրթական արձագանք ապահովելու, ուսումնական հաստատությունների և հաստատության արդյունավետ փոխհամագործակցության բացակայության հետ կապված

համակարգային խնդիրներ: Այսպես, օրինակ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» պետական ոչ առևտրային կազմակերպություն (այսուհետ՝ նաև Հաստատություն) իրականացված չհայտարարված այցի ընթացքում տրամադրված տեղեկատվության համաձայն՝ Հաստատությունում տնային ուսուցում ստացող սովորողների պարագայում առկա էր կրթական գործընթացը յուրաքանչյուր երեխայի պահանջներին համապատասխանեցնելու և հարմարեցնելու, համապատասխան կրթական արձագանք ապահովելու հետ կապված խնդիրներ: Արձանագրվել է, որ չնայած Հաստատության կողմից ձեռնարկված միջոցներին՝ Հաստատությունում խնամք ստացող երեխաներից մեկը շարունակում էր դուրս մնալ կրթությունից: Տնօրենի տեղեկացմամբ՝ տնային ուսուցման գործընթացը կրում է ձևական բնույթ և չի ապահովում համապատասխան կրթական արձագանք: Հաստատությունում լիարժեքորեն չէր երաշխավորվում երեխաների բազմակողմանի և ներդաշնակ զարգացման իրավունքի ապահովումը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է անհետաձգելի միջոցառումներ իրականացնել՝ երաշխավորելու հաստատություններում գտնվող երեխաների կրթության, բազմակողմանի և ներդաշնակ զարգացման իրավունքի ապահովումը:

5.3 Բազմամասնագիտական թիմով համալրելու հետ կապված խնդիրներ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» պետական ոչ առևտրային կազմակերպությունում (այսուհետ՝ նաև Հաստատություն), օրինակ, աշխատողների թիվն անհամեմատ պակաս էր խնամք ստացող շահառուների թվի համեմատությամբ, առկա էր աշխատողների ոչ մասնագիտական ծանրաբեռնվածություն: Խնդիրը, հիմնականում, պայմանավորված է գործող իրավակարգավորմամբ նախատեսված հաստիքների թվի պակասով, ինչը, հատկապես, ակնառու էր դայակների և դաստիարակների աշխատանքը դիտարկելիս: Հաստատությունն ուներ բազմամասնագիտական թիմով, այդ թվում՝ էրգոթերապիստներով համալրվելու անհրաժեշտություն: Չնայած իրավասու մարմնի կողմից իրականացվող վերապատրաստումներին՝ արդիական է մնում նաև պետության կողմից նեղ մասնագիտական վերապատրաստումների կազմակերպման անհրաժեշտությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է անհետաձգելի միջոցառումներ իրականացնել Հաստատությունը համապատասխան բազմամասնագիտական թիմով համալրելու ուղղությամբ:

6. Հետխնամքի ապահովման հետ կապված խնդիրներ

Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկումները վկայում, որ երեխաների հետխնամքի ապահովման գործուն մեխանիզմների ներդրման և կիրառման հարցում առկա են մի շարք խնդիրներ:

Մշտադիտարկման արդյունքում արձանագրվել է, որ երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում ապրող երեխաների համար չկան մշակված հստակ ռազմավարություններ և դրանցից բխող միջոցառումներ, որոնք նպատակաուղղված կլինեն անհատական մոտեցման ցուցաբերմամբ՝ երեխաներին

մասնագիտական և ինքնուրույն կյանք վարելուն ուղղված հմտությունների ձեռքբերմանն աջակցելուն, այդ թվում՝ մասնագիտության, գործունեության բնագավառի ընտրություն կատարելուն, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի տեղավորելուն աջակցելուն:

Այս նպատակով իրականացվող աշխատանքը, հիմնականում, դասընթացների և խմբային պարապմունքների կազմակերպումն է, որը սակայն, երբեմն չի ընդգրկում հաստատությունում գտնվող բոլոր անձանց:

Խնամք ստացող երեխաներին մասնագիտական և ինքնուրույն կյանք վարելու հմտությունների ձեռքբերմանն աջակցելուն ուղղված պետության կողմից ձեռնարկվող միջոցների կատարելագործման անհրաժեշտության մասին է վկայում նաև այն, որ երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում շարունակում են դեռ շուրջօրյա խնամք ստանալ 18 տարին լրացած անձինք:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից իրականացված մշտադիտարկումները վկայում են այն մասին, որ հետխնամքի ժամանակահատվածում անկախ կյանքի ապահովման նպատակով պետության տրամադրած սոցիալական աջակցության միջոցները նույնպես ունեն կատարելագործման անհրաժեշտություն:

ՀՀ կառավարության 2023 թվականի հունիսի 22-ի թիվ 1007-Ն որոշմամբ հաստատվել է Հայաստանի Հանրապետությունում գործող՝ երեխաներին շուրջօրյա խնամք տրամադրող բնակչության սոցիալական պաշտպանության պետական հաստատությունների (մանկատների) կամ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ուղեգրի հիման վրա առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին շուրջօրյա խնամք տրամադրող կազմակերպությունների 18 տարին լրացած և հաստատությունից (կազմակերպությունից) դուրս գրված շրջանավարտների դրամական աջակցության և բնակելի տարածության վարձավճարի հատուցման կարգերը**:**

Նշված ակտի վերլուծությունից հետևում է, որ հետխնամքի ժամանակահատվածում դրամական աջակցություն տրամադրվելու է միայն այն անձանց, ովքեր մինչև 18 տարին լրանալը, իսկ 18 տարին լրանալու օրվա դրությամբ պարտադիր կրթությունն ավարտած չլինելու պարագայում՝ պարտադիր կրթությունն ավարտելուց հետո դուրս գրվելու օրվան նախորդող վերջին 24 ամիսների ընթացքում անընդմեջ խնամվել են Հայաստանի Հանրապետությունում գործող՝ երեխաներին շուրջօրյա խնամք տրամադրող բնակչության սոցիալական պաշտպանության պետական հաստատությունում կամ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ուղեգրի հիման վրա առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին շուրջօրյա խնամք տրամադրող կազմակերպությունում:

Նշված ակտի վերլուծությունից հետևում է, որ հետխնամքի ժամանակահատվածում դրամական աջակցություն տրամադրվում է այն անձանց, ովքեր մինչև 18 տարին լրանալը կամ պարտադիր կրթությունն ավարտելուց հետո դուրս են գրվել համապատասխան հաստատությունից և դուրս գրվելու օրվան նախորդող վերջին 24 ամիսների ընթացքում անընդմեջ խնամվել են երեխաներին շուրջօրյա խնամք տրամադրող պետական հաստատությունում կամ նախարարության ուղեգրի հիման վրա գործող կազմակերպությունում:

Այսպիսի պայմաններում խնդրահարույց է այն, որ նշված կարգավորումը չի տարածվում այն երեխաների վրա, ում խնամքն ու պաշտպանությունն իրականացվել է առանց Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ուղեգրի հիման վրա

գործող բնակչության սոցիալական պաշտպանության ոչ պետական հաստատություններում:

ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 7-ի N 1555-Ն որոշմամբ տրամադրվող սոցիալական աջակցության խնդիրներին Մարդու իրավունքների պաշտպանը բազմիցս անդրադարձել է իր տարեկան հաղորդումներում:[247]

Միավորված Ազգերի Կազմակերպության Գլխավոր ասամբլեայի ընդունած՝ «Երեխաների այլընտրանքային խնամքի ուղեցույցի» համաձայն՝ գործակալությունները և հաստատությունները պետք է ունենան հստակ քաղաքականություն և համաձայնեցված ընթացակարգեր՝ կապված՝ երեխաների խնամքի պլանավորված և չպլանավորված ավարտի հետ՝ ապահովելու երեխայի հետխնամքը և/կամ դրա մշտադիտարկումը: Խնամքի ողջ ժամանակահատվածում նրանք պետք է նպատակ ունենան երեխաներին նախապատրաստելու անկախ կյանքին և համայնքում ներառվելուն սոցիալական և կյանքի հմտությունների ձեռքբերման միջոցով, որոնք խթանվում են համայնքի կյանքին մասնակցությամբ:

Խնամքից հետխնամք անցնելու գործընթացը պետք է իրականացվի՝ հաշվի առնելով երեխաների սեռը, տարիքը, հասունությունը և առանձնահատուկ հանգամանքները և ներառի խորհրդատվություն և աջակցություն՝ հատկապես շահագործումից խուսափելու համար: Խնամք ստացող երեխաները պետք է խրախուսվեն մասնակցել հետխնամքի պլանավորմանը: Հատուկ կարիքներ ունեցող երեխաները, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող երեխաները, պետք է օգտվեն համապատասխան աջակցության համակարգից, որը ի թիվս այլնի՝ կբացառի անհարկի ինստիտուցիոնալացումը: Պետք է խրախուսել և՛ պետական, և՛ մասնավոր հատվածներին աշխատանքի տեղավորել խնամք ստացող երեխաներին, հատկապես խնամքի հատուկ կարիք ունեցող երեխաներին:

Հատուկ ջանքեր պետք է գործադրվեն՝ ապահովելու, հնարավորության դեպքում, յուրաքանչյուր երեխայի մասնագիտական հմտությունների ձեռքբերումը, որը կարող է նպաստել նրա անկախ կյանքի ապահովմանը խնամքից հետո:

Հետխնամքին պետք է նախապատրաստվել հնարավորինս շուտ, մինչև երեխայի խնամքի տրամադրման ավարտը:

Ընթացիկ կրթական և մասնագիտական վերապատրաստումները խնամք ստացող երիտասարդներին պետք է տրամադրվեն որպես անկախ կյանքի հմտությունների ձեռքբերմանն ուղղված կրթական ծրագրերի մաս՝ օգնելու նրանց դառնալ ֆինանսապես անկախ և ստեղծել սեփական եկամուտը:

Սոցիալական, իրավական և առողջապահական ծառայությունների հասանելիությունը, համապատասխան ֆինանսական աջակցության հետ մեկտեղ, պետք է տրամադրվի երիտասարդներին, ովքեր թողել են խնամքը և հետխնամքի ընթացքում[248]:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

✓ ***երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում ապրող երեխաների համար մշակել և ներդնել հստակ***

---

[247] Տե՛ս, 2021 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 1267-1280, հասանելի է https://www.ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf հղումով, 2026 թվականի փետրվարի 12-ի դրությամբ:

[248] Տե՛ս, Միավորված Ազգերի Կազմակերպության Գլխավոր ասամբլեայի ընդունած՝ «Երեխաների այլընտրանքային խնամքի ուղեցույց», հասանելի է https://digitallibrary.un.org/record/673583?ln=en հղումով, 2026 թվականի փետրվարի 12-ի դրությամբ:

ռազմավարություններ և դրանցից բխող միջոցառումներ, որոնք նպատակաուղղված կլինեն անհատական մոտեցման ցուցաբերմամբ երեխաներին մասնագիտական և ինքնուրույն կյանք վարելուն ուղղված հմտությունների ձեռքբերմանն աջակցելուն, այդ թվում՝ մասնագիտության, գործունեության բնագավառի ընտրություն կատարելուն, աշխատանքի տեղավորելուն աջակցելուն,

✓ ***դիտարկել կարգավորման շրջանակի ընդլայնման հնարավորությունը՝ բնակելի տարածություն և սոցիալական աջակցություն տրամադրելով նաև այլ տեսակի այլընտրանքային, այդ թվում՝ առանց Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ուղեգրի հիման վրա գործող բնակչության սոցիալական պաշտպանության ոչ պետական հաստատություններում խնամք ստացած անձանց համար: Բնակելի տարածության և սոցիալական աջակցության տրամադրման հիմքում անհրաժեշտ է դնել անձանց իրական կարիքները:***

7. Մանկալքության կանխարգելման հետ կապված խնդիրներ

Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկումները, գրավոր և բանավոր դիմում-բողոքները, այդ թվում՝ թեժ գծի հեռախոսահամարին ստացված զանգերը վկայում են, որ 2025 թվականի ընթացքում շարունակում են արդիական մնալ մանկալքության կանխարգելման հետ կապված խնդիրները:

ՀՀ առողջապահության նախարարության տրամադրած տվյալների համաձայն՝ 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է մանկալքության 19 դեպք, որից 11 եղել է նորածինների առողջական խնդիրներով պայմանավորված:

ՀՀ առողջապահության նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2020 թվականի ապրիլի 30-ից ուժի մեջ է մտել և գործում է Առողջապահության նախարարի 2020 թվականի ապրիլի 21-ի թիվ 13-Ն հրամանը, որի 3-րդ հավելվածով հաստատվել է երեխայի հիվանդությամբ պայմանավորված մանկալքության դեպքում բժշկական կազմակերպության կողմից մասնագիտական երկրորդ կարծիքի ստացման գործելակարգը: Վերջինիս կիրառման արդյունքում ապահովվում է երեխայի առողջական վիճակի համապարփակ ուսումնասիրությունը և մորը/ծնողներին այդ մասին օբյեկտիվ, արժանահավատ տեղեկատվության տրամադրումը: Համաձայն վերոհիշյալ գործելակարգի, նույնիսկ այն դեպքում, երբ մանկալքությունը, այնուամենայնիվ, տեղի է ունեցել, կապ է հաստատում երեխայի ծնողի/ծնողների հետ և տրամադրում երեխայի առողջական վիճակի, բուժման հնարավորությունների վերաբերյալ կոնսիլիումի եզրակացությունը՝ անձնական հանդիպման և/կամ պատվիրված նամակի միջոցով: Առողջապահության նախարարության տարածքում փակցված են պաստառներ, որոնք իրազեկում են երեխայի առողջական խնդիրների հետ կապված մանկալքության խնդրի կանխարգելման վերաբերյալ և աջակցության թեժ գծի հեռախոսահամարները: Միաժամանակ, Առողջապահության նախարարությունը հայտնել է, որ 2025 թվականի ընթացքում շարունակաբար իրականացվել են 7 նորածնային սքրինինգային ծրագրեր, որոնք ուղղված են բնածին և ժառանգական հիվանդությունների վաղ հայտնաբերմանը: Դրանք են բնածին հիպոթիրեոզը, ֆենիլկետոնուրիան, անհասության ռետինոպաթիան, սրտի բնածին արատների, կոնքազդրային հոդի բնածին հոդախախտի, մակերիկամի կեղևի բնածին դիսֆունկցիան կամ ադրենոգենիտալ համախտանիշի (վերջինս 2025 թվականից իրականացվել է ՀՀ ողջ տարածքով), լսողության նորածնային սքրինինգային ծրագրերը, 2026 թվականի հունվարի 1-ից ՀՀ ամբողջ տարածքով կմեկնարկի նոր սքրինինգային ծրագիրը՝ նորածնային ակնային սքրինինգը:

Կարևորելով պետության կողմից ձեռնարկված միջոցները՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ մանկալքության դեպքերի վերաբերյալ տվյալները վկայում են նշված կառուցակարգերի կատարելագործմանն ուղղված աշխատանքների շարունակականության անհրաժեշտության մասին: Մանկալքության կանխարգելման հարցում Մարդու իրավունքների պաշտպանը կարևորում է մանկալքության իրական պատճառների բացահայտմանը, առկա կարծրատիպերի վերացմանը, անկախ երեխայի առողջական վիճակից՝ սոցիալական և հոգեբանական երաշխիքներով ապահովված լինելուն, դեռահասների շրջանում իրազեկվածության բարձրացմանն ուղղված միջոցների ձեռնարկումը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***իրականացնել մանկալքության դեպքերի համապարփակ ուսումնասիրություն՝ վեր հանելով իրական պատճառները:***
- ✓ ***ուսումնասիրության արդյունքների հիման վրա ներդնել մանկալքության դեմ պայքարի ծրագիր, որը կներառի կարծրատիպերի վերացմանը, սոցիալական և հոգեբանական երաշխիքներով ապահովելուն, իրազեկվածության բարձրացմանը:***

ԳԼՈՒԽ 3. ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ ՇՓՎԵԼՈՒ ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ

1. Հարկադիր կատարումն ապահովող ծառայության գործողությունների իրավաչափությունը երեխայի իրավունքների ապահովման տեսանկյունից

Երեխայի տեսակցության կազմակերպմանն առնչվող, երեխային պահանջատիրոջ խնամքին հանձնելու (երեխային կողմերից մեկին հանձնելու) հետ կապված կատարողական գործողությունների պատշաճ իրականացումն առանձնահատուկ կարևորություն ունի երեխայի իրավունքների ապահովման տեսանկյունից: Կատարողական գործողություններում երեխայի լավագույն շահի ապահովումն առաջնահերթություն է:

Մարդու իրավունքների պաշտպանը ողջունում է 2024 և 2025 թվականներին ոլորտի կատարելագործմանն ուղղված օրենսդրական փոփոխությունները, մասնավորապես, 2024 թվականի ապրիլի 11-ին ընդունվել է «Կատարողական վարույթի մասին» օրենքը, որն ուժի մեջ է մտել 2026 թվականի հունվարի 1-ից, ընդունվել է ՀՀ արդարադատության նախարարի 2025 թվականի դեկտեմբերի 3-ի «Երեխայի տեսակցության և երեխային պահանջատիրոջ խնամքին հանձնելու պահանջների հարկադիր կատարման ընթացակարգը հաստատելու և Արդարադատության նախարարի 2024 թվականի հունիսի 28-ի թիվ 378-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 795-Ն հրամանը և այլն:

Նշված օրենսդրական փոփոխություններով կարգավորվել են երեխայի տեսակցության և երեխային պահանջատիրոջ խնամքին հանձնելու պահանջների հարկադիր կատարմանն առնչվող մի շարք հարցեր, որոնց Մարդու իրավունքների պաշտպանն անդրադարձել է նախորդ տարիների տարեկան հաղորդումներում: Այսպես, օրինակ, նախատեսվել է լիազորող նորմ, որը հնարավորություն է տվել սահմանել երեխայի տեսակցության և երեխային պահանջատիրոջ խնամքին հանձնելու հարկադիր կատարման ընթացակարգ, նախատեսվել է, որ այն դեպքում, երբ առկա են բավարար հիմքեր՝ ենթադրելու, որ տեսակցությանը համազգեստ կրող հարկադիր կատարողի մասնակցությունը կարող է երեխայի մոտ վախ կամ հոգեբանական այլ խնդիրներ առաջացնել, կատարողական վարույթն իրականացնող հարկադիր կատարողն իր անմիջական ղեկավարի թույլտվությամբ տեսակցությանը կարող է ներկայանալ առանց համազգեստի, նախատեսվել է կատարողական վարույթով հոգեբան-փորձագետ ներգրավելու հնարավորություն և այլն:

Հարկ է փաստել, սակայն, որ 2025 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկումները, ստացված գրավոր և բանավոր դիմում-բողոքները, այդ թվում՝ թեժ գծի հեռախոսահամարին ստացված ահազանգերը ցույց են տալիս, որ ոլորտում շարունակում են արդիական մնալ մի շարք խնդիրներ:

Դրանք, մասնավորապես, վերաբերում են հարկադիր կատարողների կողմից կատարողական վարույթի շրջանակում երեխայակենտրոն մոտեցումների ցուցաբերման համար անհրաժեշտ հմտությունների բացակայությանը, վարույթում տարբեր ձևաչափով ներգրավված հոգեբանների մասնագիտական պատրաստվածության ցածր մակարդակին, որակավորում ունենալու պահանջի բացակայությանը և այլն:

Նշվածից հետևում է, որ չնայած պետության կողմից ոլորտի կատարելագործմանն ուղղված միջոցներին, այդ թվում՝ անցկացված վերապատրաստումներին և կատարված օրենսդրական փոփոխություններին՝ գործնականում շարունակում են արձանագրվել կատարողական վարույթների շրջանակում երեխայի լավագույն շահի ապահովման հետ կապված խնդիրներ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել՝ երաշխավորելու երեխայի տեսակցության կազմակերպմանն առնչվող, երեխային պահանջատիրոջ խնամքին հանձնելու հետ կապված կատարողական գործողություններում բարձր որակավորում և հմտություններ ունեցող, երեխայի լավագույն շահի սկզբունքներին տիրապետող հոգեբանների ներգրավումը:

2. Երեխայի հետ շփման իրավունքի ապահովումը երեխային օտարերկրյա պետություն անօրինական տեղափոխելու դեպքում

Երեխայի հետ շփման իրավունքի ապահովման կարևորագույն տարրերից են երեխայի բնակության վայրի իմացությունն ու դրա հասանելիությունը: Այս առնչությամբ հաճախ անհրաժեշտություն է առաջանում քննարկման առարկա դարձնել երեխային այլ պետություն տեղափոխելու և պահելու, ինչպես նաև ՀՀ տարածքում երեխայի բնակության վայրը փոփոխելու դեպքերում երեխայի հետ շփման իրավունքի ապահովման հետ կապված հարցերը:

Նշվածի առնչությամբ Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկումների, ստացված գրավոր և բանավոր դիմում-բողոքների քննարկման արդյունքում արձանագրվել են ՀՀ տարածքից երեխային անօրինական տեղափոխելու դեպքերը կանխելու ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումների հետ կապված խնդիրներ:

«Երեխայի միջազգային առևանգման քաղաքացիական մոտեցումների մասին» կոնվենցիայի վերլուծությունից հետևում է, որ առանց մեկ ծնողի համաձայնության մյուս ծնողի կողմից երեխային տեղափոխելը և պահելը այլ պետությունում համարվում է անօրինական:

Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկման արդյունքները վկայում են, որ առկա է միջազգային առևանգման դեպքերը կանխելու հստակ և գործուն կառուցակարգեր ներդնելու անհրաժեշտություն:

Այս առումով միջազգային առևանգման դեպքերը կանխելու տեսանկյունից կարևոր է օրենսդրությամբ երեխայի տեղափոխման գործընթացի առնչությամբ հստակ կարգավորումների ներդրումը:

Երեխայի անօրինական տեղափոխումը կանխելուն ուղղված որոշակի կարգավորումներ նախատեսված են «Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասով, համաձայն որի՝ մինչև 16 տարեկան երեխային մյուս ծնողի դիմումի հիման վրա անձնագիր չի տրամադրվում, եթե ծնողը, որի մոտ օրինական հիմքերով բնակվում է երեխան, լիազոր մարմին նախապես ներկայացնում է անձնագիր տրամադրելու անհամաձայնության վերաբերյալ գրավոր հայտարարություն: Հայտարարությանը կցվում է երեխայի բնակության վայրը որոշելու՝ նոտարական կարգով վավերացված համաձայնության պատճենը կամ դատական ակտի պատճենը:

Նշվածը խնդրահարույց է, մասնավորապես, այն տեսանկյունից, որ անձնագիր չի տրամադրվում միայն այն ծնողի գրավոր հայտարարության հիման վրա, ում մոտ օրինական հիմքերով բնակվում է երեխան: Մինչդեռ, մի շարք դեպքերում երեխայի անօրինական տեղափոխումը այլ պետություն իրականացվում է այն ծնողի կողմից, ում մոտ օրինական հիմքով բնակվում է երեխան: Նշված կարգավորումը՝ որպես կանխարգելիչ դրույթ, չի կարող կիրառվել նաև այն դեպքերում, երբ երեխան արդեն իսկ ունի անձնագիր:

Ուստի, պետությունը պետք է իրականացնի այնպիսի օրենսդրական փոփոխություններ, որոնք ուղղված կլինեն երեխաների անօրինական տեղափոխումը կանխելուն՝ երաշխավորելով վերջիններիս լավագույն շահի ապահովումը:

Անդրադառնալով «Երեխայի միջազգային առևանգման քաղաքացիական մոտեցումների մասին» կոնվենցիային՝ հարկ է փաստել, որ ներկայում այն միակ գործիքն է, որով հնարավոր է ապահովել անօրինական տեղափոխված երեխայի վերադարձը Հայաստանի Հանրապետություն: Մինչդեռ, գործնականում բազմաթիվ դժվարություններ են առաջանում նաև կոնվենցիայի կիրառման տեսանկյունից: Այդպիսիք են, օրինակ, այն, որ բոլոր երկրները չէ, որ միացել են կոնվենցիային, կոնվենցիայի 4-րդ հոդվածի համաձայն՝ կոնվենցիայի կիրառումը դադարեցվում է, երբ երեխան դառնում է 16 տարեկան և այլն:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է նախատեսել հստակ և գործուն կառուցակարգեր, այդ թվում՝ իրականացնել օրենսդրական փոփոխություններ՝ ուղղված երեխայի անօրինական տեղափոխման դեպքերի կանխմանը:

3. ՀՀ-ի տարածքում երեխայի բնակության վայրի փոփոխության դեպքում երեխայի հայտնաբերման և երեխայի հետ շփման իրավունքի ապահովման կառուցակարգերի հետ կապված խնդիրներ

Երեխայի հետ շփվելու իրավունքը խախտվում է նաև այն դեպքերում, երբ ծնողներից մեկը ՀՀ տարածքում փոխում է երեխայի բնակության վայրը՝ առանց մյուս ծնողին այդ մասին տեղեկացնելու: Եթե նշված իրավիճակը հնարավոր է հաղթահարել դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռի առկայության պայմաններում, ապա խնդրի հաղթահարումը բարդանում է ծնողների միջև երեխայի բնակության վայրի վերաբերյալ փոխադարձ համաձայնության առկայության դեպքում, քանի որ նման դեպքերում սահմանված չեն ծնողի հետ երեխայի շփման իրավունքի ապահովման հստակ կառուցակարգեր: Այսպես, օրինակ, մեկ ծնողը կարող է փոխել երեխայի բնակության վայրը՝ այդ մասին չտեղեկացնելով մյուս ծնողին: Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ստացված ահազանգերը վկայում են այն մասին, որ ծնողները խնդրի լուծման առնչությամբ պատասխանատու մարմինների իրավասությունների վերաբերյալ ունեն ոչ բավարար իրազեկվածություն:

Գործող իրավական կարգավորումների համաձայն՝ մշտական բնակության վայրը (կացարանը) փոխելիս նոր բնակության վայրի (կացարանի) հասցեն օրենքով սահմանված ժամկետում չհայտնելը առաջացնում է վարչական պատասխանատվություն: Հարկ է փաստել, սակայն, որ առկա չեն հստակ կառուցակարգեր նշված իրավախախտումները բացահայտելու համար, ինչի հետևանքով խախտվում է ծնողի հետ շփվելու երեխայի իրավունքը:

Առավել խնդրահարույց են այն դեպքերը, երբ մեկ ծնողի կողմից երեխայի բնակության վայրը փոխելը կատարվում է պարբերաբար և անգամ երեխայի բնակության վայրի հայտնաբերման պարագայում ծնողի հետ երեխայի շփման իրավունքի իրացումը չի ապահովվում: Մասնավորապես, ՀՀ Կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի թիվ 631-Ն որոշմամբ հաստատված խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությամբ ամրագրված չէ երեխայի հետ ծնողի տեսակցության կազմակերպման հստակ պարտականություն և յուրաքանչյուր դեպքում հարցի լուծումը թողնվում է խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի հայեցողությանը: Նման

պարագայում խնդրի լուծումը կարող է ապահովվել միայն դատական կարգով, ինչից մի շարք քաղաքացիներ խուսափում են՝ ֆինանսական միջոցների սղության և այլ պատճառներով: Հետևաբար, համայնքային մակարդակում խնդրի կանխարգելումը և լուծումը կարող է դիտվել որպես առավել նպատակային մոտեցում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***մշակել և իրացնել առանց համայնքի տեղական ռեգիստրին տեղեկացնելու երեխայի մշտական բնակության վայրը (կացարանը) փոխելու կանխարգելման և վարչական իրավախախտման հայտնաբերման հստակ կառուցակարգեր:***
- ✓ ***գործուն քայլեր ձեռնարկել մեկ ծնողի կողմից ՀՀ-ի տարածքում երեխայի բնակության վայրը փոխելու դեպքում երեխայի և ծնողի շփման իրավունքի ապահովման համար:***

4. Երեխայի հետ շփվելու իրավունքի ապահովումը անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական որոշման կիրառման դեպքերում

Երեխայի հետ շփվելու իրավունքի իրացումը անհրաժեշտ է քննարկել նաև «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) կարգավորումների և դրանց կիրառման համատեքստում:

Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անհետաձգելի միջամտության որոշման գործողության ժամկետը սահմանվում է 20-25 օր:

Օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ պաշտպանական որոշումը կայացվում է 4-12 ամիս ժամկետով, և այն կարող է դրա անհրաժեշտությունը հիմնավորող համապատասխան դիմումի հիման վրա դատարանի պատճառաբանված որոշմամբ երկարաձգվել մինչև վեց ամիս ժամկետով:

Հետևաբար՝ անհետաձգելի և պաշտպանական որոշումներով սահմանվող սահմանափակումները կարող են տևել 12 ամսից ավելի, որի ընթացքում կարող են կիրառվել տարատեսակ սահմանափակումներ, որոնք անմիջականորեն վերաբերում են երեխայի հետ շփման՝ ծնողի իրավունքի սահմանափակմանը: Մինչդեռ, բաց են մնում ծնողի և երեխայի շփման իրավունքի ապահովման հարցերն այն պարագայում, երբ չեն կիրառվում նշված սահմանափակումները, սակայն երեխաները, օրինակ, գտնվում են ապաստարանում, ինչն ինքնին հանգեցնում է վերը նշված սահմանափակումներին:

Ընդ որում, բաց է մնում նաև այն հարցը, թե ինչպես է հետագայում ապահովվելու ծնողի՝ երեխայի հետ շփման իրավունքի իրացումը և տեսակցությունների կազմակերպումն անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական որոշմամբ սահմանված ժամկետը լրանալուց հետո, երբ բռնության ենթարկված անձը և երեխաները շարունակում են մնալ ապաստարանում: Հարկ է ընդգծել, որ դեպքերի մեծ մասի պարագայում սահմանված ժամկետը լրանալուց հետո բռնության ենթարկված անձը և երեխաները շարունակում են մնալ ապաստարանում, և փաստացի շարունակվում է նշված որոշումներով կիրառված սահմանափակումների գործողությունը: Ապաստարանում մնալը որոշ դեպքերում հանգեցնում է նաև անհետաձգելի միջամտության որոշմամբ չկիրառված սահմանափակումների, օրինակ՝ երեխաների հետ հեռախոսային, նամակագրական կամ կապի այլ միջոցներով հաղորդակցվելու կամ երեխայի հետ տեսակցության արգելքի:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պաշտպանը վերահաստատում է իր դիրքորոշումն առ այն, որ անհրաժեշտ է օրենսդրական մակարդակով նախատեսել բռնության ենթարկված անձի անվտանգային երաշխիքների և ծնողի հետ երեխայի շփման իրավունքի հարաբերակցության արդյունավետ կառուցակարգեր՝ միաժամանակ պահպանելով նաև որոշակիություն որոշումներով նախատեսված սահմանափակումների և գործնականում առկա իրավիճակի միջև:

Այն դեպքերում, երբ երեխաները բռնության չեն ենթարկվել, և առկա չէ երեխաների նկատմամբ բռնության վտանգ, կարևոր է քննարկման առարկա դարձնել խնդիրների խորքային ուսումնասիրության և դրանց արդյունքների հիման վրա, ըստ նպատակահարմարության, տեսակցությունների իրականացման կարգ սահմանելու հարցը՝ երեխայի լավագույն շահի հաշվառմամբ:

Հարկ է նշել, որ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում 2025 թվականի ընթացքում շարունակել են ստացվել բազմաթիվ դիմում-բողոքներ նշված հարցի առնչությամբ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

✓ լավարկել «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենքի կարգավորումները և մոտեցումները երեխաների հետ տեսակցությունների կազմակերպման համատեքստում,

✓ ներդնել հստակ կառուցակարգեր՝ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում անհատականացված մոտեցում ցուցաբերելու և տեսակցությունների կազմակերպման նպատակահարմարությունը որոշելու համար:

ԳԼՈՒԽ 4. ԵՐԵԽԱՅԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Նախադպրոցական ուսումնական հաստատությունները երեխաների զարգացման գործընթացում ունեն բացառիկ նշանակություն, ինչը հաստատված է մի շարք միջազգային իրավական և ռազմավարական փաստաթղթերով: Միավորված ազգերի կազմակերպության կայուն զարգացման 4-րդ նպատակի 4.2 կետի համաձայն՝ անհրաժեշտ է մինչև 2030 թ. ապահովել, որ բոլոր աղջիկների և տղաների համար հասանելի լինեն որակյալ վաղ մանկության զարգացման հնարավորությունները, խնամքը և նախադպրոցական կրթությունը, որպեսզի նրանք պատրաստ լինեն տարրական կրթության[249]:

Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպությունը (ՅՈՒՆԵՍԿՕ) Կայուն զարգացման 4-րդ նպատակի իրականացմանն ուղղված «Կրթություն 2030» խորագրով փաստաթղթում, ընդգծել է առնվազն մեկ տարվա անվճար և պարտադիր որակյալ նախադպրոցական կրթության ապահովման անհրաժեշտությունը[250]: Վերոնշյալ միջազգային փաստաթղթերի վերլուծությունից հետևում է, որ նախադպրոցական կրթությունը կարևոր և որոշիչ դեր ունի ինչպես երեխայի վաղ մանկության համակողմանի զարգացման, այնպես էլ նրա հետագա կրթական հաջողությունների և կյանքի ողջ ընթացքի վրա, որի ապահովումը հանդիսանում է պետության առաջնահերթ պարտավորություններից մեկը: Այնուամենայնիվ, ՀՀ-ում նախադպրոցական կրթության իրավունքի ապահովման հարցում շարունակում են արդիական մնալ մի շարք համակարգային խնդիրներ: Մասնավորապես, արձանագրվել են.

1. նախադպրոցական ուսումնական հաստատությունների հասանելիության հետ կապված խնդիրներ,
2. նախադպրոցական ուսումնական հաստատությունների ընդունելությունը կազմակերպելիս առաջնահերթություն ունեցող երեխաների շրջանակի հետ կապված խնդիրներ,
3. նախադպրոցական ուսումնական հաստատությունից սանի ազատմանը վերաբերելի կարգավորումների հետ կապված խնդիրներ:

1. Նախադպրոցական ուսումնական հաստատությունների հասանելիության հետ կապված խնդիրներ

2025 թվականին նախադպրոցական ուսումնական հաստատությունների հասանելիության հետ կապված խնդիրները շարունակում են պահպանել իրենց արդիականությունը ինչպես Երևանում, այնպես էլ ՀՀ մարզերում: Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից իրականացված մշտադիտարկումների արդյունքները վկայում են, որ երեխաների նախադպրոցական կրթության իրավունքը հաճախ մնում է չիրացված ՀՀ բնակչության զգալի մասի՝ Երևան քաղաքում բնակվելու, նախադպրոցական ուսումնական հաստատությունների ծանրաբեռնվածության, մարզերի

[249] Հասանելի է https://armenia.un.org/hy/sdgs/4 հղումով, 2026 թվականի մարտի 31-ի դրությամբ:
[250] ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Կրթություն 2030»-ը հասանելի է https://uis.unesco.org/sites/default/files/documents/education-2030-incheon-framework-for-action-implementation-of-sdg4-2016-en_2.pdf հղումով, էջ 27, 2026 թվականի մարտի 31-ի դրությամբ:

մի շարք բնակավայրերում նախադպրոցական ուսումնական հաստատությունների բացակայության կամ ոչ բավարար քանակի, մարզերում նախադպրոցական ուսումնական հաստատությունների հիմնական մասի վճարովի լինելու և մի շարք այլ պատճառներով:

Այսպես, օրինակ, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ ՀՀ մարզերի մի շարք բնակավայրերում առհասարակ չեն գործում նախադպրոցական ուսումնական հաստատություններ: Ըստ տրամադրած տեղեկատվության՝ Արագածոտնի մարզի 4 համայնքներում չի գործում նախադպրոցական հաստատություն, նախակրթարաններ չեն գործում երեքում, Արարատի մարզի 34 բնակավայրերում, Արմավիրի մարզի 30 բնակավայրերում, Գեղարքունիքի մարզի 22 բնակավայրերում չի իրականացվում նախադպրոցական կրթություն, Կոտայքի մարզի՝ 5 համայնքների 10 բնակավայրերում, Տավուշի մարզի՝ 5 բնակավայրերում, Լոռու մարզի 14 համայնքում որևէ նախադպրոցական ուսումնական հաստատություն չի գործում, ինչը խիստ մտահոգիչ է:

Արձանագրվել է, որ Երևանում, օրինակ, անգամ շատ վաղ հերթագրման պարագայում երեխան չի կարողացել հաճախել մանկապարտեզ հաստատությունների ծանրաբեռնվածության պատճառով: Ընդ որում, 2026 թվականի փետրվարի 20-ի դրությամբ «Մանկապարտեզ կառավարման համակարգում» առկա տվյալների համաձայն՝ հերթագրված են 14865 երեխա, որից 12874-ը նախադպրոցական ուսումնական հաստատության ընդունելության տարիքային խմբերին համապատասխան են:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2025 թվականի ընթացքում ՀՀ որոշ մարզերում, այդ թվում՝ Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի և այլ մարզերում կառուցվել, վերակառուցվել և հիմնանորոգվել են նախադպրոցական ուսումնական հաստատություններ: Մինչդեռ՝ 2025 թվականի ընթացքում Երևան քաղաքի որոշ վարչական շրջաններում, օրինակ, Նուբարաշենի, Նորք-Մարաշի, Արաբկիրի, չի իրականացվել նախադպրոցական ուսումնական հաստատությունների կառուցում, վերակառուցում կամ հիմնանորոգում:

Կարևորելով նախադպրոցական ուսումնական հաստատությունների կառուցմանը, վերակառուցմանն ու հիմնանորոգմանն ուղղված աշխատանքները՝ Մարդու իրավունքների պաշտպանը խիստ կարևորում է դրանց շարունակականության ապահովումը՝ երաշխավորելով նախադպրոցական ուսումնական հաստատությունների հասանելիությունը բոլոր երեխաների համար:

Երևանի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 267-Ն որոշմամբ նախատեսվել է Երևանի ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատություններում երեխայի նախադպրոցական կրթության անվճար իրականացումը՝ երեխայի ծնողների կամ ծնողներից մեկի կամ նրա օրինական ներկայացուցիչների կամ օրինական ներկայացուցիչներից մեկի մշտապես կամ փաստացի Երևան քաղաքում հաշվառված լինելու պարագայում:

Կարևորելով Երևան քաղաքում նախադպրոցական կրթության անվճար իրականացումը՝ Մարդու իրավունքների պաշտպանը խիստ մտահոգիչ է համարում այն, որ 2025 թվականի ընթացքում ՀՀ մարզերում մի շարք համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատություններ շարունակում են գործել վճարովի հիմունքներով:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ ՀՀ մարզերի մի շարք համայնքներում առհասարակ չեն գործում անվճար նախադպրոցական ուսումնական հաստատություններ, իսկ որոշ մարզերում սահմանվել են որոշ արտոնություններ:

Նշվածը մտահոգիչ է, հատկապես, այն հաշվառմամբ, որ հաճախ վճարովիությունը հիմնական խոչընդոտն է նախադպրոցական կրթության իրավունքի իրացման համար:

Հարկ է նկատի ունենալ, որ միջազգային չափանիշների համաձայն՝ նախադպրոցական կրթության երաշխավորումը պետության պարտավորությունն է: Նախադպրոցական կրթության ընթացքում ձևավորվող հիմնական հմտությունները՝ մասնավորապես, սոցիալական, հաղորդակցման, ուսումնական գործընթացի կազմակերպման և տարիքին համապատասխան ճանաչողական հմտությունները, ապահովում են երեխայի պատրաստվածությունը, այդ թվում՝ հանրակրթության մեջ ընդգրկվելու գործընթացում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ պետության պարտավորությունն է ստեղծել երեխայի վաղ մանկության կրթության համար անհրաժեշտ բոլոր պայմանները՝ որպես յուրաքանչյուր երեխայի մտավոր, ֆիզիկական, հոգեկան և սոցիալական զարգացման, դաստիարակության, ուսուցման և խնամքի կարևոր երաշխիք:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***ներդնել ամուր նախադպրոցական կրթական համակարգ՝ ձեռնարկելով բոլոր հնարավոր միջոցները նախադպրոցական կրթությունը պարտադիր դարձնելու ուղղությամբ:***
- ✓ ***շարունակել և ընդլայնել գործուն միջոցների իրականացումը համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատություններում անվճար հիմունքներով կրթության իրավունքի լիարժեք իրացումն ապահովելու նպատակով,***
- ✓ ***ձեռնարկել լրացուցիչ արդյունավետ միջոցներ՝ նախադպրոցական ուսումնական հաստատությունների հասանելիությունն ապահովելու համար:***

2. Նախադպրոցական ուսումնական հաստատությունների ընդունելությունը կազմակերպելիս առաջնահերթություն ունեցող երեխաների շրջանակի հետ կապված խնդիրներ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի հոկտեմբերի 11-ի թիվ 76-Ն հրամանով հաստատված հավելվածի 10-րդ կետի համաձայն՝ ընդունելությունը կազմակերպելիս առաջնահերթությունը տրվում է, առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամություն ունեցող կամ ֆունկցիոնալության ծանր կամ խորը աստիճանի սահմանափակումով ծնողի երեխաներին, երեք և ավելի երեխա ունեցող ծնողի երեխաներին, զոհված զինծառայողի երեխային, քրոջը, եղբորը, երկկողմանի ծնողազուրկ երեխաներին, Հայաստանի Հանրապետության զինված ուժերում զինվորական ծառայություն անցնող զինծառայողի երեխաներին, կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին, տվյալ ուսումնական հաստատությունում (կազմակերպությունում) ընդգրկված քույր, եղբայր ունեցող

երեխաներին, տվյալ ուսումնական հաստատության (կազմակերպության) աշխատակիցների երեխաներին:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի նշված հրամանով նախադպրոցական ուսումնական հաստատություններ ընդունելության համար սահմանված առաջնահերթություն ունեցող երեխաների շրջանակը աստիճանաբար ընդլայնվել է:

Այնուամենայնիվ, 2025 թվականին շարունակել է արդիական մնալ նախադպրոցական ուսումնական հաստատություններ ընդունելության համար սահմանված առաջնահերթություն ունեցող անձանց շրջանակի ընդլայնման հետ կապված խնդիրը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է ընդլայնել նախադպրոցական ուսումնական հաստատություններում ընդունելության համար առաջնահերթություն ունեցող երեխաների շրջանակը:

3. Նախադպրոցական ուսումնական հաստատությունից սանի ազատմանը վերաբերելի կարգավորումների հետ կապված խնդիրներ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի հոկտեմբերի 11-ի թիվ 76-Ն հրամանով հաստատված հավելվածի 22-րդ կետի համաձայն՝ սանի ազատումը հաստատությունից կատարվում է՝ ծնողի դիմումի հիման վրա, դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա, հաստատության և ծնողի միջև կնքված պայմանագրի դրույթները ծնողի կողմից չպահպանելու դեպքում, ուսումնական տարվա ընթացքում սանի, անկախ պատճառից, 75 աշխատանքային օր բացակայելու դեպքում:

Վերոնշյալ կարգավորումից հետևում է, որ սանը կարող է ազատվել նախադպրոցական ուսումնական հաստատությունից նաև ծնողի կողմից հաստատության և ծնողի միջև կնքված պայմանագրի դրույթները ծնողի կողմից չպահպանելու դեպքում, ինչն ակնհայտորեն հանգեցնում է երեխայի նախադպրոցական կրթության շարունակականության ընդհատման: Նման մոտեցումը խնդրահարույց է այն տեսանկյունից, որ երեխայի նախադպրոցական կրթության իրավունքի իրացումը կապվում է ծնողի պայմանագրային պարտավորությունների կատարման հետ:

Յուրաքանչյուր պարագայում պետությունը պարտավոր է առաջնորդվել երեխայի լավագույն շահի սկզբունքով՝ անկախ ծնողի դրսևորած վարքագծից: Մինչդեռ, տվյալ կարգավորմամբ նախադպրոցական կրթության ստացումը, դիտարկվում է պայմանագրային հարաբերությունների համատեքստում, ինչը հակասում է երեխայի իրավունքների պաշտպանության հիմնարար սկզբունքներին և չի կարող համարվել թույլատրելի: Երեխայի նախադպրոցական կրթության ստացումը որևէ պարագայում չպետք է պայմանավորված լինի այլ գործոններով, քան երեխայի լավագույն շահի ապահովումն է:

Միաժամանակ, սանի՝ ուսումնական տարվա ընթացքում 75 աշխատանքային օր բացակայելը ևս սահմանված է որպես նախադպրոցական ուսումնական հաստատությունից ազատման հիմք: Մասնավորապես, երեխայի՝ նախադպրոցական

ուսումնական հաստատություն հաճախելը կարող է ընդհատվել ամենատարբեր պատճառներով, որոնց համար երեխային նախադպրոցական կրթությունը շարունակել չթույլատրելը որևէ պարագայում չի կարող երեխայակենտրոն համարվել: Պետության քաղաքականությունը պետք է միտված լինի երեխաներին նախադպրոցական կրթության մեջ ընդգրկելուն, դրա ապահովմանը, այլ ոչ՝ որոշակի հանգամանքներով պայմանավորված, նախադպրոցական ուսումնական հաստատություն չհաճախելու դեպքում՝ երեխայի կրթություն ստանալու իրավունքը սահմանափակելուն:

Հատկանշական է, որ վերոնշյալ հարցը քննարկվել է Մարդու իրավունքների պատշանին առընթեր երեխաների իրավունքների պաշտպանության հարցերով հասարակական խորհրդի հերթական նիստի ժամանակ, որտեղ Խորհրդի և աշխատանքային խմբի անդամները ներկայացրել են ոլորտում առկա խնդիրները և առաջարկել հնարավոր լուծումներ՝ իրենց տեսանկյունից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է վարել երեխաներին նախադպրոցական կրթության մեջ ընդգրկելուն ուղղված քաղաքականություն, իսկ նախադպրոցական ուսումնական հաստատություններից սանի ազատումն իրականացնել՝ ելնելով բացառապես երեխայի լավագույն շահի ապահովումից:

ԳԼՈՒԽ 5. ԵՐԵԽԱՅԻ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Երեխայի անվճար պարտադիր միջնակարգ կրթության իրավունքը սահմանված է ինչպես ՀՀ ներպետական, այնպես էլ բազմաթիվ միջազգային-իրավական փաստաթղթերով և կոնվենցիաներով:

Այդուհանդերձ, 2025 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկումները, ստացված գրավոր և բանավոր դիմում-բողոքները, այդ թվում՝ թեժ գծի հեռախոսահամարին ստացված ահազանգերը վկայում են, որ երեխայի պարտադիր կրթության իրավունքի ապահովման տեսանկյունից շարունակում են արդիական մնալ մի շարք համակարգային խնդիրներ, որոնց Պաշտպանն անդրադարձել է տարեկան հաղորդումներում[251] և 2024 թվականի արտահերթ հրապարակային զեկույցում[252]:

Մարդու իրավունքների պաշտպանը, ի թիվս այլնի, արձանագրել է.

1.հանրակրթական ուսումնական հաստատությունների հասանելիության հետ կապված խնդիրներ,

2. հանրակրթական ուսումնական հաստատությունների ներքին կարգապահական կանոնների, սովորողի վարքագծի կանոնների և դրանց հասանելիության հետ կապված խնդիրներ,

3. երեխաների պարտադիր կրթությունից դուրս մնալու հետ կապված խնդիրներ,

4. երեխայի՝ հանրակրթության մեջ միանգամից 2-րդ դասարան ընդգրկվելու հետ կապված խնդիրներ:

1.Հանրակրթական ուսումնական հաստատությունների հասանելիության հետ կապված խնդիրներ

Կրթության իրավունքի իրացման համատեքստում, առաջնահերթ ուշադրության է արժանի հանրակրթական ուսումնական հաստատությունների հասանելիության հարցը:

ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների կոնվենցիայի թիվ 26-րդ ընդհանուր մեկնաբանության համաձայն՝ պետությունները պետք է ստեղծեն անվտանգ, առողջ և ճկուն ենթակառուցվածք՝ արդյունավետ ուսուցման համար: Սա ներառում է հետիոտնային և հեծանվային երթուղիների և դպրոց հասնող հասարակական տրանսպորտի հասանելիության ապահովումը[253]:

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023 թվականի մայիսի 22-ի թիվ 04-Ն հրամանի հավելվածի 109-րդ կետի համաձայն՝ տրանսպորտային հասանելիության առավելագույն ժամանակի հաշվարկով հանրակրթական դպրոցների տեղաբաշխումը

---

[251] Տե՛ս, 2024 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 472-476, հասանելի է https://ombuds.am/images/files/4d1335361f1f7e9fbcc1cfc10679701e.pdf հղումով, 2026 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[252] Տե՛ս, Մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույցը Հայաստանի Հանրապետության կողմից «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայով և կից արձանագրություններով սահմանված պարտավորությունների կատարման վիճակի վերաբերյալ, Երևան, 2025թ., հասանելի է https://ombuds.am/images/files/86112aec12c1a4e935e2c7a23d80bb2a.pdf հղումով, 2026 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[253] Տե՛ս, ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների կոնվենցիայի թիվ 26-րդ ընդհանուր մեկնաբանությունը, հասանելի է հետևյալ https://www.ohchr.org/en/documents/general-comments-andrecommendations/crccgc26-general-comment-no-26-2023-childrens-rights հղումով, էջ 9:

բնակավայրերում թույլատրվում է՝ տարրական դասարանների (տարրական դպրոց) համար՝ 10-15 րոպե, միջին դասարանների (միջին դպրոց) համար՝ 30 րոպե, ավագ դասարանների (ավագ դպրոց) համար՝ 45 րոպե: Մինչև տրասնպորտային միջոցների կանգառ աշակերտների հետիոտնային հասանելիության հեռավորությունը (բնակելի թաղամասում, վարչական շրջանի սահմաններում) պետք է կազմի առավելագույնը 500 մ:

Մինչդեռ, չնայած վերոնշյալ նորմատիվ պահանջներին, Մարդու իրավունքների պաշտպանի կողմից արձանագրվել են մի շարք խնդիրներ: Մասնավորապես, արձանագրվել է, որ համայնքների ոչ բոլոր բնակավայրերում են առկա հանրակրթական ուսումնական հաստատություններ:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ մի շարք մարզերի բնակավայրերում, օրինակ, Արագածոտնի մարզի՝ 13 բնակավայրերում, Արմավիրի մարզի՝ 3, Արարատի մարզի՝ 5, Լոռու մարզի՝ 15, Սյունիքի մարզի՝ 44 բնակավայրերում առհասարակ չեն գործում հանրակրթական ուսումնական հաստատություններ, իսկ Գեղարքունիքի մարզի Բերդկունք, Տորֆավան, Վերին Շորժա, Ներքին Շորժա, Բարեպատ և Գեղաքար բնակավայրերում հանրակրթական ուսումնական հաստատություններ առկա չեն:

Մեկ այլ խնդիր է, երբ բնակավայրերին մոտ գտնվող դպրոցներ թեև առկա են, սակայն լիցենզիայով սահմանված տեղերն արդեն իսկ համալրված են լինում: Խնդիրն առավել արդիական է տարրական դպրոցի աշակերտների պարագայում և, հատկապես, ՀՀ մարզերում:

Պաշտպանը 2025 թվականի ընթացքում ստացել է նաև բողոքներ այն մասին, որ մի շարք դեպքերում երեխաների բնակության վայրը հեռու է գտնվում հանրակրթական ուսումնական հաստատություններից:

«Հանրակրթության մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1.1 մասի 1.1 կետի համաձայն՝ սովորողների ընդունելությունը կազմակերպելիս առաջնահերթություն տրվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ տվյալ դպրոցից մինչև տուն սպասարկման հետիոտնային հասանելիության շառավղով բնակվող՝ «Պետական նպաստների մասին» օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատված կարգով ընտանիքի մեկ հաշվարկային անդամի՝ անապահովության նպաստ ստանալու իրավունք տվող սահմանային շեմի 160 տոկոսի արժեքից ցածր ամսական եկամուտ ունեցող և ընտանիքի անապահովության գնահատման կարգով սոցիալապես անապահով ճանաչված ընտանիքների, խնամակալության տակ գտնվող, հաշմանդամություն ունեցող կամ հաշմանդամություն ունեցող ծնողների երեխաներին:

Վերոնշյալ նորմի վերլուծությունից հետևում է, որ տվյալ հանրակրթական ուսումնական հասկացությունից մինչև երեխայի բնակության վայր սպասարկման հետիոտնային հասանելիության շառավղով բնակվելու հանգամանքը ինքնին բավարար չէ հանրակրթական ուսումնական հաստատություն ընդունելության առաջնահերթություն ստանալու համար, ինչը խնդրահարույց է: Նման պայմաններում առաջանում են հանրակրթական ուսումնական հաստատությունների հասանելիության հետ կապված խնդիրներ, մասնավորապես, այն դեպքերում, երբ երեխայի ծնողները կամ այլ օրինական ներկայացուցիչները փաստացի հնարավորություն չունեն ապահովելու երեխայի

տեղափոխումը դպրոց: Նշված իրավիճակում, մի կողմից, սահմանվում է ծնողի պարտականությունը ապահովել երեխայի՝ դպրոց հաճախումը պատշաճ կերպով, մյուս կողմից՝ պետությունը չի ստեղծում համապատասխան պայմաններ այդ պարտականության կատարման համար:

Վերոգրյալից հետևում է, որ 2025 թվականի ընթացքում շարունակում են իրենց արդիականությունը պահպանել հանրակրթական ուսումնական հաստատությունների հասանելիության հետ կապված վերը նշված խնդիրները:

Հաշվի առնելով վերոգրյալը, անհրաժեշտ է՝

- ***ՀՀ համայնքների բոլոր բնակավայրերն ապահովել երեխաների թվին համապատասխան լիցենզիայով սահմանված տեղ ունեցող դպրոցներով:***
- ***դպրոցի և երեխայի բնակության վայրի միջև մեծ հեռավորության պարագայում՝ ապահովել երեխայի տեղափոխումը:***

2. Հանրակրթական ուսումնական հաստատությունների ներքին կարգապահական կանոնների, սովորողի վարքագծի կանոնների և դրանց հասանելիության հետ կապված խնդիրներ

Յուրաքանչյուր հանրակրթական ուսումնական հաստատություն ունի իր ներքին կարգապահական, այդ թվում՝ սովորողի վարքագծի կանոնները, որոնք, «Հանրակրթության մասին» օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ հաստատում է պետական ուսումնական հաստատության խորհուրդը: Մարդու իրավունքների պաշտպանի կողմից իրականացված մշտադիտարկումների արդյունքները վկայում են, որ ներքին կարգապահական կանոնները, մասնավորապես, սովորողների վարքագծի կանոնները ոչ միշտ են պատշաճ կերպով հասանելի լինում սովորողներին, ինչի հետևանքով վերջիններս անգամ տեղեկացված և իրազեկ չեն լինում այդ կանոններով սահմանված իրենց իրավունքների և պարտականությունների մասին: Միաժամանակ, անհրաժեշտ է դիտարկել և գնահատել նաև հանրակրթական ուսումնական հաստատությունների ներքին կարգապահական կանոնների, այդ թվում՝ սովորողի վարքագծի կանոնների համապատասխանությունը երեխայի իրավունքներին և երեխայի լավագույն շահի ապահովման սկզբունքին:

Մասնավորապես, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների 2025 թվականի մշտադիտարկումների արդյունքները վկայում են այն մասին, որ առանձին դեպքերում սովորողի վարքագծի կանոններում կիրառվում են ոչ հստակ և հայեցողական մեկնաբանություն ենթադրող եզրույթներ, օրինակ՝ «աշակերտին վայել տեսք», «աշակերտին վայել վարքագիծ» և այլ նմանատիպ ձևակերպումներ: Նման եզրույթների ոչ պատշաճ կամ կամայական մեկնաբանման արդյունքում կարող են սահմանափակվել երեխայի իրավունքները՝ վերջինիս համար ստեղծելով անհամաչափ և չարդարացված պարտավորություններ:

Արձանագրվել են նաև աշակերտին՝ առաջին դասաժամին ուշացումով ներկայանալու համար դպրոց ներս չթողնելու դեպքեր, ինչն անթույլատրելի է երեխայի լավագույն շահի ապահովման տեսանկյունից:

Այս և մի շարք այլ դեպքերում հանրակրթական ուսումնական հաստատությունների ներքին կարգապահական կանոնները, այդ թվում՝ սովորողների վարքագծի կանոնները չեն համապատասխանում «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի դրույթներին և երեխայի լավագույն շահի սկզբունքին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

✓ իրականացնել վերահսկողություն հանրակրթական ուսումնական հաստատությունների ներքին կարգապահական կանոնների և սովորողների վարքագծի կանոնների՝ երեխաների իրավունքներին և լավագույն շահին համապատասխանության նկատմամբ,

✓ ներքին կարգապահական կանոնների և սովորողների վարքագծի կանոնների մշակումը կազմակերպել համապատասխան մասնագետների ներգրավմամբ՝ ապահովելով դրանց որոշակիությունն ու երեխայի լավագույն շահի սկզբունքին համապատասխանությունը,

✓ ապահովել սովորողների իրազեկումը վարքագծի կանոնների վերաբերյալ՝ դրանք փակցնելով տեսանելի վայրերում կամ հասանելի դարձնելով այլ արդյունավետ եղանակներով,

✓ հանրակրթական ուսումնական հաստատությունների ներկայացուցիչների համար իրականացնել համապատասխան վերապատրաստումներ ներքին կարգապահական կանոնների և սովորողների վարքագծի կանոնների, ինչպես նաև դրանց՝ երեխայի իրավունքներին և լավագույն շահին համապատասխան կիրառման և մեկնաբանման վերաբերյալ:

3.Երեխաների՝ պարտադիր կրթությունից դուրս մնալու հետ կապված խնդիրներ

Պետության պարտականությունն է ապահովել անվճար, հասանելի և որակյալ միջնակարգ կրթությանը, ինչպես նաև ձեռնարկել անհրաժեշտ բոլոր միջոցները՝ երեխայի պարտադիր կրթությունից դուրս մնալու ցանկացած դեպք բացառելու ուղղությամբ: Պետության կողմից ձևավորվող և իրականացվող կրթական քաղաքականությունը պետք է ուղղված լինի երեխայի կրթության իրավունքի արդյունավետ և անխոչընդոտ իրացման ապահովմանը:

Մինչդեռ՝ Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկման արդյունքները վկայում են, որ բազմաթիվ երեխաներ տարբեր պատճառներով շարունակում են դուրս մնալ պարտադիր կրթությունից: Արձանագրված պատճառները բազմազան են և ի թիվս այլնի, կարող են լինել երեխայի հաշմանդամություն ունենալու հանգամանքը, երեխայի աշխատելու հանգամանքը, կրթությունից դուրս մնացած երեխաների բացահայտման արդյունավետ մեխանիզմների բացակայությունը, իրավասու մարմինների միջև արդյունավետ համագործակցության և տվյալների փոխանակման ոչ բավարար մակարդակը, կրթությունից դուրս մնացած երեխային կրթության գործընթացում ընդգրկելու կառուցակարգերի և գործնական հմտությունների պակասը, ծնողների հետ աշխատելու արդյունավետ մեթոդաբանության բացակայությունը, վաղ ամուսնությունները և այլ գործոններ:

Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ անհրաժեշտ է իրականացնել կրթությունից դուրս մնալու պատճառների խորքային վերլուծություն, մշակել

այդ պատճառների վերացմանն ուղղված գործուն և արդյունավետ կառուցակարգեր և գործնականում բացառել երեխայի՝ որևէ պատճառով կրթությունից դուրս մնալու դեպքերը:

2025 թվականին շարունակում են արդիական մնալ տնային ուսուցման կազմակերպման ընթացքում կրթության որակի ապահովման և արդյունավետ վերահսկողական մեխանիզմների բացակայության առնչությամբ նախորդ տարիներին արձանագրված խնդիրները: Բազմաթիվ դեպքերում տնային ուսուցումը կրում է ձևական բնույթ՝ չերաշխավորելով անհրաժեշտ կրթական արդյունք, իսկ որոշ դեպքերում այն ընդհանրապես չի իրականացվում, մինչդեռ՝ դրա նկատմամբ իրականացվող արդյունավետ վերահսկողական մեխանիզմները բացակայում են:

2025 թվականին արձանագրվել են նաև միգրացիայի համատեքստում ընտանիքից անջատված երեխայի կրթության իրավունքի ապահովման հետ կապված խնդիրներ: Մասնավորապես, արձանագրվել են դեպքեր, երբ երեխան հաճախում է դպրոց, սակայն լեզվական խոչընդոտի պատճառով կրթական գործընթացը կրում է ձևական բնույթ և չի ապահովում անհրաժեշտ ուսումնական արդյունք:

Միևնույն ժամանակ, բազմաթիվ դեպքերում, արձանագրվում է, որ կրթությունից դուրս մնացած երեխաների բացահայտումից հետո, անգամ, բացակայում են արդյունավետ կառուցակարգեր՝ երեխաներին կրթության գործընթացում ընդգրկելու համար: Խնամակալության և հոգաբարձության մարմինների, ուսումնական հաստատության աշխատակիցների կողմից հաճախ չեն ապահովվում երեխաների և ծնողների հետ աշխատելու համար անհրաժեշտ հմտությունները, ինչն էլ, որոշ դեպքերում, դառնում է երեխաների կրթությունից դուրս մնալու հիմնական պատճառ:

Պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների կրթության իրավունքի ապահովումը երաշխավորելու ուղղությամբ ՀՀ տարբեր մարզերում ձեռնարկվել են տարբեր միջոցներ, օրինակ՝ ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքում պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների կրթության իրավունքի ապահովումը երաշխավորելու ուղղությամբ կատարվել են տունայցեր՝ խնդիրը բացահայտելու և լուծումներ տալու նպատակով, ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի, համայնքապետարանների, ՀՀ ներքին գործերի նախարարության և դպրոցների աշխատակիցների կողմից իրականացվել են բացատրական աշխատանքներ ծնողների շրջանում:

Արժևորելով պետության կողմից ձեռնարկվող քայլերը, հարկ է նշել, որ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, օրինակ, Արարատի մարզի Մասիս համայնքում պարտադիր կրթությունից դուրս է մնացել 17 երեխա, Արմավիրի մարզում պարտադիր կրթությունից դուրս է մնացել 4 երեխա, իսկ պարտադիր կրթությունից դուրս մնալու ռիսկի տակ գտնվում են 2 երեխա, Տավուշի մարզում պարտադիր կրթությունից դուրս է մնացել 14 երեխա և այլն: 2025 թվականի դեկտեմբերի դրությամբ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների թիվը կազմում է 10441:

Այս համատեքստում առանձնահատուկ կարևորություն ունի կրթությունից դուրս մնալու դեպքերի կանխարգելման և արձագանքման ոլորտում ներգրավված

մասնագետների կարողությունների և հմտությունների կատարելագործմանն ուղղված միջոցների ձեռնարկումը և դրանց շարունակականության ապահովումը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

✓ իրականացնել կրթությունից դուրս մնալու պատճառների խորքային վերլուծություն, մշակել այդ պատճառների վերացմանն ուղղված գործուն կառուցակարգեր և գործնականում բացառել երեխայի՝ որևէ պատճառով կրթությունից դուրս մնալու դեպքերը:

✓ միջոցներ ձեռնարկել՝ բացառելու տնային ուսուցման գործընթացի ձևական բնույթը և ներդնել դրա նկատմամբ արդյունավետ վերահսկողական մեխանիզմներ:

✓ միջոցներ ձեռնարկել՝ երաշխավորելու միգրացիոն գործընթացներում հայտնված երեխաների կրթության իրավունքի լիարժեք իրացման ապահովման ուղղությամբ՝ այդ թվում համապատասխան լեզվի մասնագետների ներգրավմամբ:

✓ շարունակել իրականացնել հմտությունների կատարելագործմանն ուղղված համակարգային վերապատրաստման ծրագրեր կրթությունից դուրս մնալու դեպքերի կանխարգելման և արձագանքման գործընթացում ընդգրկված բոլոր մասնագետների համար:

4.Երեխայի՝ հանրակրթության մեջ միանգամից 2-րդ դասարան ընդգրկվելու հետ կապված խնդիրներ

2025 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել են բազմաթիվ դիմում-բողոքներ 2025–2026 թթ. ուսումնական տարում հանրակրթության մեջ իրենց տարիքային խմբին համապատասխան միանգամից 2-րդ դասարան ընդունված երեխաների իրավունքների ապահովման հարցի առնչությամբ: Պաշտպանը, 2025 թվականի դեկտեմբերի 30-ին նշված հարցի առնչությամբ կայացրել է իրավունքների խախտման վերաբերյալ որոշում, որով արձանագրվել են միանգամից երկրորդ դասարան ընդգրկված երեխաների իրավունքների ապահովման, մասնավորապես, երեխայի կրթության, հանգստի և ժամանցի իրավունքի և երեխայի լավագույն շահի պահանջի երաշխավորման հետ կապված խնդիրներ:[254] Խնդիրներ են արձանագրվել նաև երեխաների հետ աշխատող մասնագետների հմտությունների, կարողությունների և երեխաների հետ աշխատանքի ընթացքում կիրառվող մեթոդաբանության տեսանկյունից:

Պաշտպանի աշխատակազմում իրականացված մշտադիտարկման արդյունքները ցույց են տալիս, որ Հայաստանի Հանրապետության մարզերի մի շարք բնակավայրերում ընդհանրապես բացակայում են նախադպրոցական ուսումնական հաստատությունները կամ դրանց քանակը բավարար չէ: Այս բնագավառում առկա են մի շարք խնդիրներ ևս, որոնց Պաշտպանը պարբերաբար անդրադառնում է:

Հարկ է նկատի ունենալ, որ միջազգային չափանիշների համաձայն՝ նախադպրոցական կրթության երաշխավորումը պետության պարտավորությունն է: Նախադպրոցական կրթության ընթացքում ձևավորվող հիմնական հմտությունները՝ մասնավորապես, սոցիալական, հաղորդակցման, ուսումնական գործընթացի

[254] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3653 հետևյալ հղումով 2026 թվականի փետրվարի 9-ի դրությամբ:

կազմակերպման և տարիքին համապատասխան ճանաչողական հմտությունները, ապահովում են երեխայի պատրաստվածությունը դպրոցական կյանքին: Ուստի, նախադպրոցական կրթության բացակայության կամ այդ ոլորտում առկա խնդիրների պայմաններում, ինչը Պաշտպանի գնահատմամբ անընդունելի է, նշվածը պետք է երաշխավորվի առնվազն տարրական կրթության միջոցով:

Բացի այդ, Մարդու իրավունքների պաշտպանի որոշմամբ արձանագրվել է, որ հանրակրթության մեջ միանգամից 2-րդ դասարան ընդգրկված երեխաների մոտ առկա են առաջին և երկրորդ դասարանների կրթական ծրագրերով նախատեսված ուսումնական նյութի յուրացման հետ կապված դժվարություններ: Մասնավորապես, քանի որ միանգամից 2-րդ դասարանում սովորող երեխաները չեն հաճախել 1-ին դասարան, 1-ին դասարանի կրթական նյութի ուսումնասիրությունն իրականացվում է 2-րդ դասարանի կրթական նյութին զուգահեռ, և այն լիարժեք կերպով յուրացնելու համար երեխաներն այցելում եմ երկարօրյա խմբեր, հաճախում եմ լրացուցիչ դասընթացների, ինչի արդյունքում հաճախ զրկվում են իրենց տարիքին և զարգացմանը համապատասխան խաղի, հանգստի և լիարժեք ժամանցի հնարավորությունից:

Պաշտպանի որոշմամբ արձանագրվել է նաև, որ որոշ երեխաների մոտ ի հայտ են եկել հոգեբանական խնդիրներ, նրանցից շատերը հաճախ պնդել են, որ իրենց մոտ ոչինչ չի ստացվում, իրենք չեն կարողանում կատարել իրենց տրված հանձնարարությունները:
Մարդու իրավունքների պաշտպանին ուղղված դիմումների և բողոքների, թեժ գծի հեռախոսահամարին ստացված զանգերի, ինչպես նաև հանրակրթական ուսումնական հաստատություններ իրականացված այցերի արդյունքների ուսումնասիրությունները նույնպես ցույց են տվել, որ հանրակրթության մեջ միանգամից երկրորդ դասարան ընդգրկված երեխաների մոտ առկա են վախի, անհանգստության, սեփական ուժերի նկատմամբ անվստահության զգացումներ, լացի, հուզական լարվածության դրսևորումներ, որոնք արտահայտվում են ուսումնական նյութի յուրացման և առաջադրանքների կատարման գործընթացում: Ուսումնասիրության արդյունքները ցույց են տվել նաև, որ աշակերտների մոտ առկա են համադասարանցիների հետ շփման խնդիրներ, երեխաներն իրենց զգում են մյուսներից առանձնացված, քանի որ նրանցից շատերն իրենց համադասարանցիների պես չեն կարողանում գրել և հաշվել, իսկ իրենց համար նախատեսված ուսումնական լրացուցիչ նյութի ուսումնասիրությունն իրականացվում է խիստ սեղմ ժամկետում, և երեխաները միշտ չէ, որ հասցնում են այն յուրացնել:

Մարդու իրավունքների պաշտպանը ևս մեկ անգամ վերահաստատում է, որ կրթությունը պետք է լինի երեխայակենտրոն և նպատակ ունենա ոչ միայն փոխանցելու գիտելիքներ, այլ նաև երեխայի կյանքի համար անհրաժեշտ հմտություններ, ուժեղացնելու նրա կարողությունները, զարգացնելու արժանապատվության զգացումն ու ինքնավստահությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է

- ✓ ***միջոցներ ձեռնարկել օրենսդրական դաշտի կատարելագործման և գործնականում հանրակրթության մեջ ընդգրկվելու գործընթացում երեխաների համար հոգեբանական, սոցիալական, ճանաչողական և այլ դժվարություններից զերծ կրթական միջավայրի ապահովման, նախադպրոցական կրթության, հանգստի և ժամանցի իրավունքների երաշխավորման ուղղությամբ:***
- ✓ ***միջոցներ ձեռնարկել երեխաների հետ աշխատող մասնագետների պատշաճ պատրաստվածության երաշխավորման ուղղությամբ՝ ապահովելով դրանց շարունակականությունը:***

✓ *իրականացնել անհրաժեշտ օրենսդրական փոփոխություններ՝ ուղղված հանրակրթության մեջ տարիքային խմբին համապատասխան միանգամից երկրորդ դասարան ընդգրկված յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի կազմակերպման գործընթացում անհատական մոտեցման և երեխայի լավագույն շահի պահանջի երաշխավորմանը:*

ԳԼՈՒԽ 6. ԵՐԵԽԱՅԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ, ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ ԵՎ ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄ

Պետությունը ստանձնել է պարտավորություն ձեռնարկել անհրաժեշտ բոլոր օրենսդրական, վարչական, սոցիալական և կրթական միջոցները՝ պաշտպանելու երեխային ծնողների, օրինական խնամակալների կամ երեխայի մասին հոգ տանող ցանկացած այլ անձի կողմից ֆիզիկական կամ հոգեկան բռնության բոլոր ձևերից, վիրավորանքից կամ չարաշահումից, հոգատարության բացակայությունից կամ անուշադրությունից, կոպիտ վերաբերմունքից կամ շահագործումից, ներառյալ՝ սեռական չարաշահումը: Երեխայի՝ ցանկացած տեսակի բռնությունից պաշտպանված լինելու իրավունքը իր ամրագրումն է գտել միջազգային մի շարք փաստաթղթերում և ներպետական օրենսդրությամբ, մասնավորապես՝ «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայում, «Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայում, դրանց վերաբերող մեկնաբանություններում, «Երեխայի իրավունքների և երեխայի պաշտպանության համակարգի մասին» օրենքում, « Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենքում և այլն: Մինչդեռ, Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկումները, գրավոր և բանավոր ստացված դիմում-բողոքները, այդ թվում՝ թեժ գծի հեռախոսահամարին ստացված զանգերը վկայում են, որ երեխայի նկատմամբ բռնության բացահայտման, կանխարգելման և արձագանքման գործընթացում առկա են մի շարք համակարգային խնդիրներ, որոնց անդրադարձ է կատարվել նաև նախորդ տարիների տարեկան հաղորդումներում[255] և արտահերթ հրապարակային զեկույցներում[256]:

Բռնության բացահայտման, կանխարգելման և արձագանքման առնչությամբ արձանագրված խնդիրներին Մարդու իրավունքների պաշտպանը հատուկ անդրադարձել է նաև «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայով և կից արձանագրություններով սահմանված պարտավորությունների կատարման 2013-2024 թվականների վիճակի վերաբերյալ այլընտրանքային հրապարակային զեկույցի շրջանակներում:[257]

---

[255] Տե՛ս, 2020 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 1232-1240, հասանելի է https://www.ombuds.am/images/files/883f55af65e3c33553139031c7ac0ce6.pdf հղումով, 2026 թվականի փետրվարի 24-ի դրությամբ: Տե՛ս նաև, 2021 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 1209-1215, հասանելի է https://www.ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf հղումով, 2026 թվականի փետրվարի 24-ի դրությամբ: Տե՛ս, 2023 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 609-622, հասանելի է https://ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2026 թվականի փետրվարի 24-ի դրությամբ: Տե՛ս նաև, 2024 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 477-481, հասանելի է https://ombuds.am/images/files/4d1335361f1f7e9fbcc1cfc10679701e.pdf հղումով, 2026 թվականի փետրվարի 24-ի դրությամբ:

[256] Հասանելի է https://ombuds.am/images/files/2618c9730d8351a085332c232926e4ee.pdf հղումով, 2026 թվականի փետրվարի 24-ի դրությամբ:

[257] Տե՛ս, ՀՀ-ն կողմից «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿԻ-ի կոնվենցիայով և կից արձանագրություններով սահմանված պարտավորությունների կատարման 2013-2024 թվականների վիճակի

Երեխայի նկատմամբ բռնության բացահայտման, կանխարգելման և արձագանքման կառուցակարգում առկա խնդիրներին Մարդու իրավունքների պաշտպանն անդրադարձել է նաև Պաշտպանին կարծիքի ներկայացված նախագծերի առնչությամբ տրված առաջարկությունների շրջանակում: Այսպես, օրինակ, 2024 թվականի ընթացքում Պաշտպանը բռնության դեպքերի բացահայտման, կանխարգելման և արձագանքման շրջանակում իրականացվելիք միջոցառումների առնչությամբ կարծիք է ներկայացրել երեխաների իրավունքների պաշտպանությանն առնչվող մի շարք իրավական ակտերի նախագծերի, այդ թվում՝ «Երեխայի իրավունքների պաշտպանության 2024-2029 թվականների համալիր ծրագիրը և ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ: Երեխայի նկատմամբ բռնության կանխարգելման, բացահայտման և արձագանքման հետ կապված հարցերը բազմիցս բարձրաձայնվել են պետական իրավասու մարմիններին հասցեագրված գրությունների, աշխատանքային քննարկումների, հրապարակումների շրջանակներում:

Մարդու իրավունքների պաշտպանը կարևորում է «Երեխայի իրավունքների և երեխայի պաշտպանության համակարգի մասին» օրենքի ընդունմամբ՝ երեխայի նկատմամբ բռնության կանխարգելման, բացահայտմանն ուղղված պետական քաղաքականության, միջգերատեսչական համագործակցության և երեխայի լավագույն շահի առաջնահերթության վրա հիմնված պաշտպանության միասնական համակարգի ստեղծումը:

Մինչդեռ, 2025 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում պարբերաբար տեղեկություններ են ստացվել հանրակրթական ուսումնական հաստատություններում երեխաների նկատմամբ բռնության դեպքերի առկայության առնչությամբ: Ընդ որում, ահազանգերը վերաբերել են ոչ միայն ֆիզիկական, այլ նաև հոգեբանական բռնությանը, ուսուցիչների կողմից երեխաների հետ հաղորդակցվելու հմտությունների բացակայությանը: Նշված խնդիրները հասցեավորելու նպատակով Մարդու իրավունքների պաշտպանն ու աշխատակազմի ներկայացուցիչները պարբերաբար այցեր են իրականացրել հանրակրթական ուսումնական հաստատություններ:[258]

Մտահոգիչ նաև, որ ՀՀ ներքին գործերի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ ըստ ՀՀ ՆԳՆ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի տվյալների՝ 2025 թվականի 11 ամիսների ընթացքում անչափահասների նկատմամբ արձանագրվել է բռնության 325 դեպք: Մտահոգիչ է նաև, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ երեխայի խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունում 2025 թվականի ընթացքում երեխաների նկատմամբ արձանագրվել է բռնության 2 դեպք՝ կազմակերպության աշխատակիցների կողմից: ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ բռնության և բուլինգի դեպքեր են արձանագրվել նաև ՀՀ որոշ մարզերի ուսումնական հաստատություններում:

վերաբերյալ այլընտրանքային հրապարակային զեկույց, հասանելի է https://ombuds.am/images/files/86112aec12c1a4e935e2c7a23d80bb2a.pdf հղումով:

[258] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3352 հետևյալ հղումով, 2026 թվականի մարտի 31-ի դրությամբ

Խիստ մտահոգիչ է, որ նախորդ տարիների համեմատությամբ գրանցվել է երեխաների նկատմամբ բռնության վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված գրավոր և բանավոր դիմում-բողոքների թվի աճ:

2024 թվականին երեխայի նկատմամբ բռնության դեպքերին վերաբերող գրավոր և բանավոր դիմում-բողոքների թիվը եղել է 97, այնպիսի պայմաններում, երբ 2023 թվականին՝ եղել է 67, 2022 թվականին՝ 66, 2021 թվականին՝ 50, 2025 թվականին՝ 157, որից 72՝ երեխայի նկատմամբ բռնություն ընտանիքում, 35՝ հանրակրթական ուսումնական հաստատությունում, 6՝ նախադպրոցական ուսումնական հաստատությունում և այլն:

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված գրավոր և բանավոր դիմում-բողոքներով հայտնած, ինչպես նաև մշտադիտարկման արդյունքում վեր հանված դեպքերը տեղի են ունեցել հաստատություններում, այդ թվում՝ մանկապարտեզներում, դպրոցներում, երեխայի խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում, ընտանիքում, ինչպես նաև թվային միջավայրում: Արձանագրվել են ֆիզիկական, սեռական և հոգեբանական, ինչպես նաև անտեսման և այլ ձևերով դրսևորված բռնություններ, որոնք տեղի են ունեցել ինչպես երեխաների միջև, այնպես էլ՝ երեխաների ծնողների, երեխաների հետ աշխատող մասնագետների կողմից երեխաների նկատմամբ և այլն:

Հատկանշական է, որ երեխաների նկատմամբ բռնության վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ահազանգեր են ստացվել նաև հենց բռնության ենթարկված երեխաներից և նրանց ընկերներից, որոնք հիմնականում վերաբերել են հանրակրթական ուսումնական հաստատությունում, երեխայի խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում երեխայի նկատմամբ ֆիզիկական և հոգեբանական բռնությանը:

Վերոնշյալի հաշվառմամբ՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ 2025 թվականի ընթացքում շարունակում են արդիական մնալ.

1. ռազմավարության բացակայության և թերի օրենսդրական կարգավորումների հետ կապված խնդիրները.
2. երեխաների նկատմամբ բռնության դեպքերի բացահայտման, կանխարգելման և արձագանքման հարցում մասնագիտական պատրաստվածության հետ կապված խնդիրները.
3. իրավագիտակցության և իրազեկվածության մակարդակի բարձրացման, կարծրատիպերի վերացման հետ կապված խնդիրները.
4. երեխաների նկատմամբ բռնության վերաբերյալ ճշգրիտ վիճակագրական միասնական տվյալների բացակայության հետ կապված խնդիրները

1. Երեխաների նկատմամբ բռնության բացահայտման, կանխարգելման և արձագանքման հարցում համապարփակ մոտեցումներ ապահովող ռազմավարության բացակայության և թերի օրենսդրական կարգավորումների հետ կապված խնդիրներ

2024 թվականին ընդունվել է ՀՀ կառավարության 2024 թվականի ապրիլի 4-ի «Բռնության ենթարկված երեխայի՝ պաշտպանության կամ աջակցության տրամադրման նպատակով համապատասխան մարմիններ ուղղորդման կարգը, բռնության ենթարկված երեխային տրամադրվող աջակցության ձևերը և տրամադրման կարգը սահմանելու մասին» թիվ 479-Ն որոշումը:

2024 թվականին ընդունվել է նաև ուսումնական հաստատությունների անձնակազմի համար երեխաների հանդեպ բռնության կանխարգելման և արձագանքման վերաբերյալ

ուղեցույցը: Կարևորելով կատարված օրենսդրական փոփոխությունների կարևորությունը՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, սակայն, որ դրանք ամբողջապես չեն անդրադառնում բռնության բոլոր ձևերի կանխարգելման, բացահայտման և արձագանքման մեխանիզմներին՝ հաշվի չառնելով բռնության տեսակների առանձնահատկությունները: Այսպես, օրինակ, ստացված տեղեկությունների համաձայն՝ երեխաները առավել շատ բռնության են ենթարկվում տեղեկատվական հաղորդակցման ցանցերում, որի բացահայտման, արձագանքման և կանխարգելման հստակ կառուցակարգեր օրենսդրությամբ նախատեսված չեն:

Ավելին, խնդրահարույց է նաև այն, որ շատ հաճախ ուսումնական հաստատություններն, օրինակ, տեղեկացված չեն ընդունված որոշման և ուղեցույցի մասին: Բացի թերի օրենսդրական կարգավորումներից, խնդրահարույց է նաև ռազմավարական փաստաթղթի բացակայությունը, որն ուղղված կլինի երեխայի նկատմամբ բռնության բացահայտմանը, կանխարգելմանն ու արձագանքմանը, կներառի ֆինանսական աղբյուրներն ու անհրաժեշտ ֆինանսական միջոցները, առաջընթացի ցուցանիշները, ելակետային և թիրախային արդյունքները, իրականացվելիք աշխատանքների մշտադիտարկման ընթացակարգը: Այս առումով, որպես լուծում կարող է լինել երեխայի իրավունքների պաշտպանության համալիր ծրագրի շուտափույթ ընդունումը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***շարունակել իրականացնել օրենսդրական փոփոխություններ՝ անդրադառնալով բռնության բոլոր ձևերի կանխարգելման, բացահայտման և արձագանքման մեխանիզմներին՝ հաշվի առնելով բռնության բոլոր տեսակների առանձնահատկությունները:***
- ✓ ***մշակել ռազմավարություն և միջոցառումների ծրագիր, որն ուղղված կլինի երեխայի նկատմամբ բռնության բացահայտմանը, կանխարգելմանն ու արձագանքմանը, կներառի ֆինանսական աղբյուրներն ու անհրաժեշտ ֆինանսական միջոցները, առաջընթացի ցուցանիշները, ելակետային և թիրախային արդյունքները, իրականացվելիք աշխատանքների մշտադիտարկման ընթացակարգը:***

2. Երեխաների նկատմամբ բռնության դեպքերի բացահայտման, կանխարգելման և արձագանքման հարցում մասնագիտական պատրաստվածության հետ կապված խնդիրներ

Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկման արդյունքները ցույց են տալիս, որ բռնությունների բացահայտման, կանխարգելման և արձագանքման տեսանկյունից խիստ կարևոր է երեխաների հետ առնչվող անձանց, մասնագետների կարողությունների և հմտությունների շարունակական կատարելագործումը: Մշտադիտարկման արդյունքները ցույց են տալիս, որ երեխաների հետ առնչվող մասնագետների մեծ մասը բռնության նշանները ճանաչելու և արձագանքելու, բռնությունը կանխարգելելու և վաղ փուլում հայտնաբերելու հմտություններ չունեն, նրանց աշխատանքները, հիմնականում, հիմնված են սուբյեկտիվ մոտեցումների վրա: Երեխաների նկատմամբ բռնության թեմայի վերաբերյալ մասնագետների շրջանում իրականացվող վերապատրաստումները հիմնականում միջազգային և տեղական կազմակերպությունների նախաձեռնությունների և ծրագրերի արդյունք են: Իսկ պետական իրավասու մարմինների կողմից կազմակերպվող վերապատրաստումները հիմնականում

կարճատև են և դրանց ոչ բոլոր մասնագետներն են ընդգրկվում: Երեխայի նկատմամբ բռնության նշանները ճանաչելու և արձագանքելու, բռնությունը կանխարգելելու և վաղ փուլում հայտնաբերելու հարցում առանցքային դեր ունի կրթական միջավայրը: Մինչդեռ, Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկման արդյունքները ցույց են տվել, որ հանրակրթական ուսումնական հաստատությունների մասնագետները կամ չեն ճանաչում բռնությունը, կամ բռնության մասին կասկածելու դեպքում չեն տիրապետում արձագանքելու համար համապատասխան մասնագիտական գիտելիքների և հմտությունների: Խնդրահարույց է նաև այն, որ ուսուցիչների շրջանում կատարված հարցումները վկայում են, որ վերջիններս բուլինգի արձագանքման հարցում, օրինակ, ունեն կարծրատիպային մոտեցումներ, որոնք, ըստ էության, երեխայակենտրոն չեն և չեն ապահովում կարեկից միջավայր: Արձանագրվել է, որ դպրոցներում երեխաների հետ զրույցները կրում են ֆորմալ խրատական բնույթ, երեխաների միջև կոնֆլիկտների դեպքում հրավիրում են ծնողի՝ բողոքելով երեխայի վարքագծից: Հատկանշական է այն փաստը, որ որոշ ուսուցիչների պնդմամբ, կան մանկավարժներ, որոնք աշակերտների հետ հաղորդակցվում են վիրավորանքների միջոցով:

Մեկ այլ խնդիր է նաև մասնագետների կողմից երեխաների նկատմամբ բռնություն գործադրելու հարցը՝ ինչպես հանրակրթական ուսումնական, այնպես էլ նախադպրոցական ուսումնական հաստատություններում: Հատկանշական է, որ 2025 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ մուտքագրված դիմումներից 6-ը վերաբերել են երեխայի նկատմամբ բռնություն գործադրելուն նախադպրոցական ուսումնական հաստատությունում:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ստացված բողոքների ուսումնասիրության, երեխաների հետ ունեցած քննարկումների արդյունքում արձանագրվել է, որ շատ հաճախ հենց ուսուցիչներն են բուլինգի ենթարկում երեխաներին՝ դրանով իսկ հիմք ստեղծելով մյուս երեխաների կողմից երեխային բուլինգի ենթարկելու համար: Երեխաները բարձրաձայնել են նաև ուսուցիչների կողմից աշակերտների նկատմամբ թե՛ ֆիզիկական, թե՛ հոգեբանական բռնություն կիրառելու դեպքերի մասին:

2025 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում շարունակվել են ստացվել բռնության վերաբերյալ բողոքներ նաև հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողներից: Արձանագրվել է նաև հանրակրթական ուսումնական հաստատությունում հաշմանդամություն ունեցող երեխայի նկատմամբ սեռական բռնության դեպք:

Վերոնշյալը վկայում է, որ չնայած պետության կողմից իրականացվող միջոցներին՝ 2025 թվականի ընթացքում երեխաների նկատմամբ բռնության դեպքերի բացահայտման, կանխարգելման և արձագանքման հարցում մասնագիտական պատրաստվածության հետ կապված վերոնշյալ խնդիրները շարունակում են արդիական մնալ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***երեխայի հետ աշխատող և երեխայի նկատմամբ բռնության կանխարգելման, բացահայտման և արձագանքման պարտավորություն ունեցող բոլոր մասնագետների համար պարտադիր դասընթացների և պարբերական վերապատրաստումների շարունակական անցկացում:***
- ✓ ***երեխայի հետ աշխատող մասնագետների համար ուսումնական հաստատությունների կրթական ծրագրերում երեխայի նկատմամբ բռնության վերաբերյալ թեմաների ներառում:***

- ✓ ***երեխայի նկատմամբ բռնության դեպքերի հայտնաբերման, դրանց կանխարգելման և արձագանքման ուղղությամբ տարվող աշխատանքների հստակ մեթոդաբանության, գործիքակազմերի և ուղեցույցների պարտադիր կիրառության ապահովում:***
- ✓ ***ուսումնական հաստատությունների և պետական մարմինների աշխատողների կողմից երեխայի նկատմամբ որևէ տեսակի բռնություն կիրառելու դեպքերի հաղորդման և արձագանքման համար հստակ կառուցակարգերի ներդնում՝ ապահովելով գաղտնիությունն ու բացառելով երեխայի թիրախավորումը:***

3. Իրավագիտակցության և իրազեկվածության մակարդակի բարձրացման, կարծրատիպերի վերացման հետ կապված խնդիրներ

Բռնության հիմնախնդրի վերաբերյալ կատարված ուսումնասիրությունները, ինչպես նաև ստացված գրավոր և բանավոր ահազանգերը վկայում են, որ ծնողները և երեխաները հաճախ չգիտեն երեխայի նկատմամբ բռնության դրսևորումների և դրանց անթույլատրելիության մասին: Ծնողները բռնության մասին ահազանգում են, հիմնականում, անելանելի վիճակում, երբ բռնությունը տեղի է ունենում պարբերաբար և հանգեցնում է բացասական հետևանքների:

Արձանագրվել է, որ շատ հաճախ երեխաները բռնություն համարում են միայն ֆիզիկական բռնությունը, իսկ բուլինգի դրսևորումները, առցանց բռնությունը, սոցիալական հարթակներում իրար թիրախավորելը և այլն, առհասարակ, բռնություն չեն համարում: Արձանագրվել են նաև դեպքեր, երբ երեխաները, թեև գիտակցել են, որ իրենց նկատմամբ բռնություն է կիրառվում, սակայն չեն բարձրաձայնել այդ մասին՝ վախենալով հասարակության կողմից թիրախավորվելուց: Ստացված տեղեկությունները վկայում են նաև այն մասին, որ շատ հաճախ երեխայի նկատմամբ բռնությունը հասարակության մեջ ձևավորված կարծրատիպային մտածողության հետևանք է: Բռնությունը հաճախ դիտարկվում է՝ որպես դաստիարակության միջոց, և, երբեմն, նաև խրախուսվող արարք: Շատ հաճախ, հասարակությունում ձևավորված մտածողության հետևանքով հոգեբանական բռնության են ենթարկվում հաշմանդամություն ունեցող երեխաները, երեխայի խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում բնակվող երեխաները և այլն: Այդ նպատակով Մարդու իրավունքների պաշտպանը պարբերաբար իրականացնում է իրազեկման միջոցառումներ, այցեր, կազմակերպում է երեխաների ընդունելություն աշխատակազմում և այլն:

Հարկ է փաստել, որ 2025 թվականի ընթացքում արձանագրվել են դեպքեր, երբ երեխաները իրենք են դիմել Մարդու իրավունքների պաշտպանին՝ բարձրաձայնելով իրենց նկատմամբ գործադրվող բռնության մասին, այդ թվում՝ հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչների կողմից գործադրված հոգեբանական բռնության դեպքերի, խտրական մոտեցումների, երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում տեղի ունեցած բռնության դեպքերի մասին:

Հատկանշական է, որ բռնության մասին բարձրաձայնած երեխաների մեծ մասը մասնակցել են Մարդու իրավունքների պաշտպանի կողմից իրականացված իրազեկման հանդիպումներին և 2025 թվականին Պաշտպանի հայտարարած լայնածավալ իրազեկման արշավին, ինչը վկայում է նման միջոցառումների խիստ կարևորության, արդյունավետության, ինչպես նաև Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության նկատմամբ վստահության բարձրացման մասին:

Խնդրահարույց է նաև այն, որ չնայած մշտադիտարկման այցերի, երեխաների իրավունքների պաշտպանության համատեքստում իրականացվող այլ գործառույթների շրջանակներում իրավասու մարմիններն ու հանրակրթական ուսումնական հաստատությունները ցուցաբերում են համագործակցային մոտեցում ՄԻՊ աշխատակազմի ներկայացուցիչների հետ՝ առանձին դեպքերում ուսումնական հաստատության աշխատակիցները տեղեկացված չեն Մարդու իրավունքների պաշտպանի մանդատի, դրանից բխող լիազորությունների շրջանակի մասին, ինչը կարող է լրացուցիչ խոչընդոտ հանդիսանալ Պաշտպանի կողմից երեխայի իրավունքների պաշտպանության ոլորտում իր լիազորություններն իրականացնելու տեսանկյունից: Ընդ որում, «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» օրենքի համաձայն՝ Պաշտպանը պարտավոր չէ նախապես տեղեկացնել այցերի ժամանակի և նպատակի մասին:

Հարկ է արձանագրել, որ թեև պետությունն իրականացնում է միջոցառումներ, ինչպիսիք են, օրինակ, երեխայի խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում, կրթական հաստատություններում երեխայի իրավունքների վերաբերյալ պաստառներ փակցնելը, իրազեկման հանդիպումներ կազմակերպելը, 2025 թվականի ընթացքում իրավագիտակցության և իրազեկվածության մակարդակի բարձրացման, կարծրատիպերի վերացման հետ կապված վերը նշված խնդիրները շարունակում են մնալ արդիական: Անհրաժեշտ է նաև ընդգծել, որ ՄԱԿ-ի երեխայի իրավունքների կոմիտեն 2024 թվականի եզրափակիչ դիտարկումներում ևս նշել է, որ անհրաժեշտ է հասարակության ներկայացուցիչների, հատկապես երեխաների, ինչպես նաև երեխաների հետ աշխատող և նրանց շահերը ներկայացնող մասնագետների շրջանում իրականացնել երեխաների սեռական բռնության և շահագործման վերաբերյալ իրազեկվածության բարձրացման համար անհրաժեշտ միջոցառումներ և արձագանքել երեխաների շահագործման և բռնության առցանց բոլոր դրսևորումներին, այդ թվում՝ ամրապնդելով մասնագիտական կարողությունները և ծրագրային գործիքները՝ նման բռնությունները հայտնաբերելու և հետաքննելու համար:[259]

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***ներդնել հստակ ծրագրեր հասարակությունում, հաստատություններում առկա բռնությունը խրախուսող արժեհամակարգի և երեխայի լավագույն շահից չբխող կարծրատիպերի փոփոխության ուղղությամբ,***
- ✓ ***դասընթացների և այլ միջոցառումների շրջանակում երեխաներին, այդ թվում՝ մանկապարտեզներում և դպրոցներում սովորող, խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում բնակվող երեխաներին, մշտապես իրազեկել իրենց իրավունքների վերաբերյալ:***
- ✓ ***քայլեր ձեռնարկել իրավասու մարմինների կողմից ՄԻՊ մանդատի առնչությամբ իրավասու անձանց իրազեկվածության մակարդակի բարձրացման ուղղությամբ:***

4. Երեխաների նկատմամբ բռնության վերաբերյալ ճշգրիտ վիճակագրական միասնական տվյալների բացակայության հետ կապված խնդիրներ

[259] Հասանելի է https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRC%2FC%2FARM%2FCO%2F5-6&Lang=en հղումով, 2026 թվականի մարտի 31-ի դրությամբ:

2025 թվականին Պաշտպանի աշխատակազմում ուսումնասիրված դեպքերը վկայում են այն մասին, որ բռնության պատշաճ արձագանքման և կանխարգելման հարցում կարևոր նշանակություն ունի բռնության դեպքերի մասին տեղեկատվության փոխանցման միջգերատեսչական կառուցակարգերի ձևավորումը և ճշգրիտ, համապարփակ վիճակագրության վարումը: Մինչդեռ, ՀՀ-ում երեխաների նկատմամբ բռնության վիճակագրություն առանձին չի վարվում, չեն հավաքագրվում վիճակագրական տվյալներ բռնության տեսակների, բռնության ենթարկված երեխաների տարիքի, բռնության ենթարկողի կարգավիճակի և այլ կարևոր տվյալների վերաբերյալ: Տարբեր գերատեսչությունների կողմից հավաքագրված տեղեկատվությունը չունի միասնական մոտեցում և հնարավորություն չի տալիս բացահայտելու երեխայի նկատմամբ բռնության դեպքերի իրական պատկերը: Երեխայի նկատմամբ բռնության առանձնացված տեղեկատվություն պարունակող վիճակագրություն չվարելու հետևանքով առաջանում են նաև իրավասու մարմինների միջև տեղեկությունների և տվյալների փոխանակման և արդյունավետ համագործակցության ապահովման հետ կապված խնդիրներ, ինչը խիստ կարևոր է երեխայի նկատմամբ բռնությունների բացահայտման, կանխարգելման և արձագանքման արդյունավետ մեխանիզմների ներդրման տեսանկյունից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է ապահովել երեխայի նկատմամբ բռնության առանձին վիճակագրության վարումը՝ հավաքագրելով բռնության տեսակների, բռնության ենթարկված երեխաների սեռի, տարիքի, բռնության ենթարկողի կարգավիճակի և այլ կարևոր տվյալների վերաբերյալ առանձնացված տեղեկատվություն:

ԳԼՈՒԽ 7. ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Պետությունը, վավերացնելով «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան, պարտավորություն է ստանձնել ապահովելու, որ քրեական օրենսդրությունը խախտած համարվող կամ վերջինիս խախտման մեջ մեղադրվող յուրաքանչյուր երեխա արժանանա այնպիսի վերաբերմունքի, որը նպաստում է նրա արժանապատվության և նշանակալիության զգացման զարգացմանը, ամրապնդում է երեխայի հարգանքը մարդու իրավունքների և այլոց հիմնարար ազատությունների նկատմամբ, ինչպես նաև հաշվի է առնում երեխայի տարիքը և նրա վերաինտեգրման ու հասարակությունում կառուցողական դերակատարում ունենալու խթանման անհրաժեշտությունը:

Հետևաբար, երեխայի մասնակցությամբ արդարադատության իրականացումը պետք է լիարժեքորեն երաշխավորի երեխայի արժանապատվության պաշտպանությունը և բխի «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայով և միջազգային այլ իրավական ակտերով սահմանված բոլոր սկզբունքներից ու երաշխիքներից:

Միևնույն ժամանակ, 2025 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկումների արդյունքները վկայում են, որ երեխայի պարտադիր կրթության իրավունքի ապահովման տեսանկյունից շարունակում են պահպանվել մի շարք համակարգային խնդիրներ, որոնց անդրադարձ է կատարվել նաև տարեկան հաղորդումներում[260] և արտահերթ հրապարակային զեկույցում[261]:

Ըստ ՀՀ արդարադատության նախարարության տրամադրած տեղեկատվության՝ ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում հանրակրթությունն իրականացվում է ԱՆ «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից, և 2025-2026 թվականների ուսումնական տարում հանրակրթական ծրագրում ընդգրկվել է ընդհանուր առմամբ 17 անձ:

Չնայած պետության ձեռնարկած միջոցներին, այդ թվում՝ օրենսդրական փոփոխություններին՝ շարունակում են արդիական մնալ տնային կալանք կիրառելու դեպքում երեխայի կրթության իրավունքի իրացման հետ կապված՝ նախկինում արձանագրված խնդիրները: Օրենսդրությամբ նախատեսված չեն նաև տնային կալանքի ներքո գտնվող անչափահասների կրթության իրավունքի իրացման առանձնահատկությունները: Այս առումով, ողջունելի է ՀՀ արդարադատության նախարարության կողմից շրջանառված «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը, որով նախատեսվում է քրեական դատավարության օրենսգրքում կատարել լրացում և սահմանել իրավակարգավորում այն մասին, որ դատարանի կողմից տնային կալանք կիրառելիս՝ նամակագրությունից, հեռախոսային խոսակցություններ, հաղորդակցության այլ ձևերից (այդ թվում՝ փոստային առաքանուց) օգտվելու սահմանափակումները կարող են չտարածվել կրթության շարունակականությունն ապահովելու համար կրթական ծրագրերով հեռավար (դիստանցիոն) կրթությունը շարունակելու դեպքերի նկատմամբ:

---

[260] Տե՛ս, 2024 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 472-476, հասանելի է https://ombuds.am/images/files/4d1335361f1f7e9fbcc1cfc10679701e.pdf հղումով, 2026 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[261] Տե՛ս, Մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույցը Հայաստանի Հանրապետության կողմից «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայով և կից արձանագրություններով սահմանված պարտավորությունների կատարման վիճակի վերաբերյալ, Երևան, 2025թ., հասանելի է https://ombuds.am/images/files/86112aec12c1a4e935e2c7a23d80bb2a.pdf հղումով, 2026 թվականի մարտի 31-ի դրությամբ:

Մարդու իրավունքների պաշտպանն արժևորում և ընդգծում է նշված օրենսդրական փոփոխությունների շուտափույթ ընդունման անհրաժեշտությունը:

Թեև Նախարարությունից հայտնել են նաև, որ իրականացվել է 2025-2026 թվականների ուսումնական տարվա ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի վերանայում և «Հոգեբանություն» առարկայի առարկայական ծրագրում ներառվել են թմրամիջոցների և հոգեմետ նյութերի գործածման և չարաշահման կանխարգելմանն ուղղված դասաժամեր, Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ անչափահասների շրջանում հանցավորության կանխարգելմանն ուղղված պարտադիր և շարունակական ծրագրերի մշակման և ներդրման անհրաժեշտությունը շարունակում է արդիական մնալ:

Մարդու իրավունքների պաշպանի աշխատակազմում արձանագրվել է նաև դեպք, երբ իրականացված արագ արձագանքման այցերի շրջանակում պարզվել է, որ արդարադատության իրականացմանը խոչընդոտելու անմիջական ծագած կասկածի հիմքով ձերբակալվել են անչափահասներ, ինչը մտահոգիչ է:

Հարցի առնչությամբ Մարդու իրավունքների պաշտպանը խիստ կարևորում է, որ նշված գործընթացում յուրաքանչյուր անչափահասի ազատությունից զրկումը կիրառվի որպես վերջին միջոց և հնարավորինս կարճ ժամկետով, նրանց հետ ցանկացած գործողություն իրականացվի՝ հաշվի առնելով նրանց տարիքը, խոցելիությունը և զարգացման կարիքները: Ծայրահեղ անհրաժեշտության դեպքում անչափահասներին ազատությունից զրկելիս նրանք պետք է անմիջապես առանձնացվեն մեծահասակներից՝ երաշխավորելով նրանց ֆիզիկական և հոգեբանական անվտանգությունը: Անչափահասներին պետք է անհապաղ տրամադրվի իրենց ծնողների կամ օրինական ներկայացուցիչների հետ կապ հաստատելու, իրավաբանական օգնություն ստանալու հնարավորություն:

2025 թվականին շարունակում են արդիական մնալ նաև իրավասու մարմինների միջև անչափահասների արդարադատության ոլորտում պատշաճ համագործակցության ապահովման հետ կապված խնդիրները, որոնց մասին բազմիցս բարձրաձայնվել է: Մասնավորապես, արձանագրվել է պրոբացիայի ծառայության և խնամակալության և հոգաբարձության մարմինների միջև համակարգված և արդյունավետ համագործակցության պակասը:

Արդարադատության նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2025 թվականի սեպտեմբերին շրջանառության մեջ է դրվել «Քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը: Առաջարկվող կարգավորումները իրենց բնույթով օրենսդրական և ինստիտուցիոնալ բարեփոխումների համակցություն են, որոնք միտված են խոցելի խմբերի, մասնավորապես՝ անչափահասների իրավունքների պաշտպանությանը և քրեական վարույթում նրանց մասնակցության, ներգրավվածության պայմանների բարելավմանը: Բացի այդ, ՅՈՒՆԻՍԵՖ-ի հետ համագործակցությամբ 2025 թվականին իրականացվել է նաև «Բարնահուսի մոդելի կիրառման նպատակով մասնագետների՝ հոգեբանների և քննիչների կարողությունների զարգացում» դասընթացը, որին մասնակցել է 240 մասնագետ (քննիչ, դատախազ, սոցիալական աշխատող, որակավորված հոգեբան, ոստիկան):

ՀՀ արդարադատության նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2025 թվականի ընթացքում Անչափահասների արդարադատության խորհրդի 3 նիստ է անցկացվել:

Պաշտպանը, կարևորելով պետության կողմից ոլորտի կատարելագործմանն ուղղված ջանքերը, այդուհանդերձ, արձանագրում է, որ 2025 թվականի դրությամբ Բառնահուսի սենյակներ առկա չեն բոլոր մարզերում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***ապահովել անչափահասների շրջանում հանցավորության կանխարգելմանն ուղղված պարտադիր և շարունակական ծրագրերի մշակումը, ներդրումն ու արդյունավետ իրականացումը:***
- ✓ ***ձեռնարկել միջոցներ՝ յուրաքանչյուր տուժող և վկա երեխայի հարցաքննության կազմակերպման գործընթացում երեխայակենտրոն մոտեցումների և համապատասխան պայմանների ապահովման ուղղությամբ՝ սահմանված չափանիշների հիման վրա Բառնահուսի սենյակներ ստեղծելով նաև այլ մարզերում:***
- ✓ ***միջոցներ ձեռնարկել՝ ապահովելու իրավասու մարմինների միջև անչափահասների արդարադատության ոլորտում համակարգված և արդյունավետ համագործակցությունը:***
- ✓ ***ներդնել տնային կալանքի ներքո գտնվող երեխաների կրթության իրավունքի ապահովման հստակ կառուցակարգեր:***
- ✓ ***երաշխավորել անչափահասների՝ ազատությունից զրկման դեպքում նրանց անհապաղ առանձնացումը մեծահասակներից՝ ապահովելով նրանց ֆիզիկական և հոգեբանական անվտանգությունը:***

ԳԼՈՒԽ 8. ԵՐԵԽԱՅԻ ԿԱՐԾԻՔ ԱՐՏԱՀԱՅՏԵԼՈՒ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Իր հայացքները ձևակերպելու ընդունակ երեխայի համար պետությունը պարտավոր է ապահովել դրանք ազատորեն արտահայտելու իրավունք այն բոլոր դեպքերում, որոնք վերաբերում են երեխային: Երեխայի հայացքների նկատմամբ պետք է ցուցաբերվի նրա տարիքին և հասունությանը համապատասխան պատշաճ ուշադրություն:

Մինչդեռ՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ 2025 թվականին շարունակում են արդիական մնալ երեխայի լսված լինելու իրավունքի ապահովման հետ կապված նախկինում արձանագրված համակարգային խնդիրները:

Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ 2025 թվականի ընթացքում շարունակում են արդիական մնալ երեխայի կարծիքն արտահայտելու հետ կապված որոշ խնդիրներ:

Պաշտպանի աշխատակազմում արձանագրվել է նաև դեպք, երբ երեխայի և ծնողի միջև մասնագիտական կողմնորոշման վերաբերյալ հարցերում տարաձայնությունների պաճառով երեխայի կրթության իրավունքը պատշաճ չի ապահովվել:

Առկա են նաև գործնականում երեխային լսելու և նրա կարծիքը հաշվի առնելու առնչությամբ համապատասխան գործիքակազմի, մասնագիտական հմտությունների և գիտելիքների կիրառման հետ կապված խնդիրներ: Այսպես, օրինակ, Պաշտպանի աշխատակազմում ստացվել են տեղեկություններ, որ, երբեմն, խնամակալության և հոգաբարձության մարմինների կողմից չի ապահովվել երեխայի՝ իր հայացքները ազատորեն արտահայտելու հնարավորությունը: Օրինակ, հաճախ հանդիպող խնդիրներից է, երբ խնամակալության և հոգաբարձության մարմինների՝ երեխաների վերաբերյալ որոշումները կայացվում են առանց երեխաների կարծիքը հաշվի առնելու: Արձանագրվել են նաև խնդիրներ՝ կապված ուսումնական հաստատություններում երեխաների ձայնը լսելի դարձնելու հետ: Պաշտպանի մշտադիտարկման արդյունքները վկայում են, որ հանրակրթական ուսումնական հաստատություններում հիմնականում առկա են ձևավորված աշակերտական խորհուրդներ: Խորհուրդների ներկայացուցիչների հետ զրույցները ցույց են տալիս, որ վերջիններս զբաղվում են միայն դպրոցում միջոցառումների կազմակերպչական հարցերով, և հաճախ ստեղծված հարթակը չի ծառայում իրենց տեսակետների և կարիքների ներկայացման նպատակին: Արձանագրվել է նաև, որ երեխայի խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում, նույնպես, շատ հաճախ ներդրված չեն երեխաներին վերաբերելի հարցերում վերջինների մասնակցության, լսված լինելու իրավունքի ապահովման, ինչպես նաև բողոքարկելու իրավունքի իրացման իրական, հասանելի և մատչելի հնարավորություն ապահովող մեխանիզմներ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ չնայած պետության կողմից ոլորտի մասնագետների վերապատրաստումների, երեխաների մասնակցությամբ միջոցառումների իրականացմանը, ուսումնական հաստատությունների աշակերտական խորհուրդների գործունեության լավարկմանն ուղղված և մի շարք այլ աշխատանքներին՝ 2025 թվականին շարունակում են արդիական մնալ երեխաներին վերաբերելի հարցերում վերջինների մասնակցության, լսված լինելու իրավունքի ապահովման առնչությամբ բազմիցս բարձրաձայնված խնդիրները:

Մարդու իրավունքների պաշտպանն առանձնահատուկ կարևորում է նաև իր կողմից իրականացվող մշտադիտարկման աշխատանքներում երեխաների ներգրավվածության ապահովումը: Այս համատեքստում հատկանշական է, որ 2025 թվականին Պաշտպանին

առընթեր երեխաների իրավունքների պաշտպանության հարցերով հասարակական խորհրդի հերթական նիստը նվիրված էր «Child Safeguarding»՝ երեխայի պաշտպանության և նրա համար անվտանգ միջավայրի ապահովման նպատակով մշակվող հստակ քաղաքականությանը: «Child Safeguarding» քաղաքականությունը կազմակերպության ներսում սահմանված պարտադիր կանոնների ու ընթացակարգերի համակարգ է, որի նպատակն է կանխել երեխային վնասելու կամ շահագործելու գործելակերպը: Քաղաքականությունը սահմանում է աշխատակիցների և կազմակերպության գործընկերների վարքագծային չափանիշները, պատասխանատվությունը երեխայի անվտանգության ապահովման գործում, ռիսկերի կանխարգելման մեխանիզմները, ինչպես նաև միջադեպերին պատշաճ արձագանքելու գործընթացները: Նիստի ընթացքում, հատուկ մշակված մեթոդաբանության կիրառմամբ, երեխաները հնարավորություն են ունեցել արտահայտելու իրենց կարծիքներն ու դիտարկումները տվյալ քաղաքականության վերաբերյալ: Հարկ է նշել նաև, որ «Child Safeguarding» քաղաքակության մշակման բոլոր փուլերում նախատեսվում է Խորհրդի և դրան կից աշխատանքային խմբի անդամների ակտիվ մասնակցությանը՝ ուղղված աշխատանքների շարունակականության ապահովումը:

Երեխայի ձայնը լսելի դարձնելու հարցում Մարդու իրավունքների պաշտպանը խիստ կարևորում է նաև իր կողմից իրականացվող մշտադիտարկման աշխատանքներում երեխաների ներգրավվածության ապահովումը, որի վերաբերյալ տեղեկատվությունը առավել մանրամասն ներկայացված է «Երեխայի իրավունքների» վերտառությամբ բաժնի նախաբանում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է.

✓ ***ապահովել, որպեսզի երեխային վերաբերելի բոլոր գործընթացներում երեխայի կարծիքն իր տարիքին և հասունությանը համապատասխան հաշվի առնվի գործնականում:***

✓ ***միջոցներ ներդնել երեխային լսելու և նրա կարծիքը հաշվի առնելու առնչությամբ իրավասու մարմինների համար համապատասխան գործիքակազմերի մշակման, մասնագիտական հմտությունների և գիտելիքների շարունակական կատարելագործման ուղղությամբ:***

ԳԼՈՒԽ 9. ԵՐԵԽԱՅԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Անձնական տվյալների պաշտպանության իրավունքն ամրագրված է ինչպես միջազգային իրավական փաստաթղթերով, այնպես էլ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով և այլ կիրառելի իրավական ակտերով:

Մինչդեռ, 2025 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի կողմից արձանագրվել են երեխաների անձնական տվյալների պաշտպանության և մշակման հետ կապված խնդիրներ: Պաշտպանի աշխատակազմում ստացված գրավոր և բանավոր բողոքները վերաբերել են լրագրողների, փաստաբանների պատրաստած տեսանյութերում, սոցիալական ցանցերում երեխաներին, այդ թվում՝ բռնության ենթարկված երեխաներին նույնականացնող տվյալների հրապարակումներին, «ԴատաԼեքս» էլեկտրոնային կառավարման և տեղեկությունների տրամադրման հանրային տեղեկատվական համակարգի տվյալների (այսուհետ՝ նաև «ԴատաԼեքս» համակարգ) հրապարակումներին և այլն:

«Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքով կարգավորվում են պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական կամ համայնքային հիմնարկների կամ կազմակերպությունների, իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից անձնական տվյալները մշակելու, դրանց նկատմամբ պետական հսկողություն իրականացնելու կարգն ու պայմանները:

Երեխայի անձնական տվյալների պաշտպանությունն ունի առանձնահատուկ բնույթ և պահանջում է հատուկ մոտեցում: Յուրաքանչյուր դեպքում երեխայի անձնական տվյալների հետ առնչվելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ տվյալները կրող սուբյեկտը հենց երեխան է, և ոչ թե նրա ծնողը կամ օրինական ներկայացուցիչը՝ անկախ երեխայի տարիքից, ֆիզիկական և մտավոր զարգացման աստիճանից, սեռից և իրավագիտակցության մակարդակից:

Երեխայի անձնական տվյալները հրապարակելիս, տեղեկատվական և հաղորդակցման ցանցերում տեղադրելիս կամ այլ եղանակով երրորդ անձանց համար մատչելի դարձնելիս անհրաժեշտ է խստորեն պահպանել անձնական տվյալները այլ անձանց հասանելի դարձնելու՝ միջազգային և ներպետական օրենսդրությամբ նախատեսված պահանջները: Միաժամանակ, հրապարակումներում անհրաժեշտ է ներկայացնել ճշգրիտ փաստեր՝ խուսափելով չհիմնավորված ընդհանրացումներից և խտրական կամ պիտակավորող ձևակերպումներից: Երեխայի ռասայի, ազգային պատկանելության, կրոնի կամ հաշմանդամության առկայության վերաբերյալ տեղեկություններ հրապարակելիս պետք է առաջնորդվել երեխայի լավագույն շահի և նրան չվնասելու սկզբունքներով՝ բացառելով երեխայի արժանապատվությանը կամ հետագա սոցիալական ինտեգրմանը վնաս հասցնելու ցանկացած դրսևորում:

ՀՀ արդարադատության նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2025 թվականին ՅՈՒՆԻՍԵՖ-ի հայաստանյան գրասենյակի աջակցությամբ մշակվել և հրապարակվել է «Անձնական տվյալների պաշտպանության իրավակարգավորումները ուսումնական հաստատություններում» ձեռնարկը, որում ներառված է նաև երեխաների անձնական տվյալների մշակումը: Վերջինիս հիման վրա իրականացվել է 200-ից ավելի ուսուցչի վերապատրաստում:

Մինչդեռ, Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկումների, գրավոր և բանավոր դիմում-բողոքների, այդ թվում՝ թեժ գծի հեռախոսահամարին ստացված զանգերի արդյունքում արձանագրվել են.

1.«ԴատաԼեքս» համակարգում երեխայի անձնական տվյալների մշակման և հրապարակման հետ կապված խնդիրներ,

2. զանգվածային լրատվության միջոցների, մասնագիտական համայնքների կողմից, ինչպես նաև տեղեկատվական հաղորդակցման ցանցերում երեխաների անձնական տվյալների մշակման և հրապարակման հետ կապված խնդիրներ:

1.«ԴատաԼեքս» համակարգում երեխայի անձնական տվյալների մշակման և հրապարակման հետ կապված խնդիրներ

Խնդրահարույց է, որ 2025 թվականի ընթացքում շարունակել են արդիական մնալ «ԴատաԼեքս» համակարգում երեխաների անձնական տվյալների հրապարակման հետ կապված խնդիրները, որոնց Մարդու իրավունքների պաշտպանն անդրադարձել է 2024 թվականի տարեկան հաղորդման շրջանակում:262

2. Զանգվածային լրատվության միջոցներով, տեղեկատվական հաղորդակցման ցանցերում երեխաների անձնական տվյալների մշակման և հրապարակման հետ կապված խնդիրներ

ԶԼՄ-ները երեխայի իրավունքների խախտումների կամ դրանց հավանականության վերաբերյալ բարձրաձայնելու կարևոր գործիք են, սակայն խիստ կարևոր է այդ գործընթացում հետևել երեխայի լավագույն շահի և երեխային չվնասելու սկզբունքներին:

Լրագրողների և մամուլի ներկայացուցիչների գործունեությունն այնպիսին է, որ վերջիններս լավագույնս կարող են երեխայի իրավունքների պաշտպանության հարցը պահել լրատվական օրակարգում՝ ներկայացնելով ոչ միայն երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում ձեռնարկված միջոցառումները, այլ նաև առկա մարտահրավերները և խնդիրները:

Այս ոլորտում լրագրողական գործունեության համապատասխանությունը երեխայի իրավունքների պաշտպանության հիմնարար սկզբունքներին ապահովելու նպատակով, 2018 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից մշակվել և հրապարակվել է «Ինչպես լուսաբանել երեխաներին վերաբերող հարցերը» ձեռնարկը, որում մանրամասն ներկայացված են այն հիմնական սկզբունքները և կանոնները, որոնք պետք է հիմք հանդիսանան լրագրողների երեխաների առնչվող խնդիրը հրապարակելիս[263]:

Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ 2025 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմում ստացվել են բազմաթիվ ահազանգեր, իսկ իրականացված մշտադիտարկումների արդյունքում արձանագրվել են դեպքեր, երբ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխայի պաշտպանության կամ առկա խնդիրների բարձրաձայնման նպատակով հրապարակված նյութերում չի ապահովվել երեխային չվնասելու սկզբունքի պատշաճ պահպանումը:

---

[262] Տե՛ս՝ 2024 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջ 490, հասանելի է https://ombuds.am/images/files/4d1335361f1f7e9fbcc1cfc10679701e.pdf, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[263] Հասանելի է https://www.ombuds.am/images/files/53988c684fec6a6dd0af986eff694827.pdf հղումով, 2026 թվականի մարտի 31-ի դրությամբ:

2025 թվականին երեխայի մահվան դեպքին առնչվող և հանրային հնչեղություն ունեցող հարցի առնչությամբ զանգվածային լրատվության միջոցներում և սոցիալական ցանցերում տարածվել են այլ երեխաների մասնակցությամբ տեսանյութեր, որոնք պատրաստվել և տարածվել են երեխայի «լավագույն շահի», «մի' վնասիր» սկզբունքների և «պատասխանատու» լրատվական գործունեության հիմքում ընկած արժեքների խախտմամբ:

Մարդու իրավունքների պաշտպանը հատուկ ընդգծում է, որ նման հրապարակումների հետևանքով երեխաները թիրախավորվում ու առավել խոցելի են դառնում: Պաշտպանը նաև ընդգծում է, որ երեխաների մասնակցությամբ նյութեր պատրաստելուն ուղղված մասնագիտական լրատվական գործունեությունը պետք է իրականացվի բացառապես էթիկայի կանոնների, «պատասխանատու լրագրության» սկզբունքների պահպանման համատեքստում՝ խիստ կարևորելով երեխաների իրավունքների ապահովումը, այդ թվում՝ երեխաների մասնակցությամբ լուսանկարների, տեսանյութերի պատրաստումը, մշակումը և հրապարակումը երեխայի «լավագույնի շահի» ապահովմամբ իրականացնելը, այդ գործընթացում «մի՛ վնասիր» սկզբունքի և երեխաների անձնական տվյալների պաշտպանությունը երաշխավորելը: Նույնը վերաբերում է երեխաների հետ աշխատող այլ մասնագիտական համայնքներին:

Արձանագրվել է նաև դեպք, երբ փաստաբանը երեխային նկարահանել և անձնական տվյալները տարածել է այնպիսի հանգամանքներում, որոնք կարող են երեխայի լավագույն շահի պահանջի երաշխավորման հետ կապված խնդիրներ առաջացնել:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից իրականացված մշտադիտարկման արդյունքների վերլուծությունը վկայում է նաև, որ երեխաների վերաբերյալ կամ մասնակցությամբ նկարահանումների և նյութերի պատրաստման գործընթացում անհատների, քաղաքական գործիչների, լրագրողների, իրավաբանական համայնքի ներկայացուցիչների, հեռուստաընկերությունների կողմից հաճախ չի կիրառվում նաև իրազեկ համաձայնություն ստանալու ընթացակարգը:

Ողջունելով երեխաների անձնական տվյալների պաշտպանության ոլորտում հանրային իրազեկման արշավների իրականացման ուղղությամբ պետության ձեռնարկած միջոցները, այդ թվում՝ ՀՀ արդարադատության նախարարության անձնական տվյալների պաշտպանության գործակալության կողմից իրականացված ծրագրերը, Մարդու իրավունքների պաշտպանը, այդուհանդերձ, արձանագրում է, որ անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ իրազեկվածության պակասի հետ կապված խնդիրները շարունակում են մնալ արդիական:

2025 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմում ստացված ահազանգերի զգալի մասով առաջացել է անհրաժեշտություն՝ քաղաքացիներին պարզաբանել Անձնական տվյալների պաշտպանության գործակալության լիազորությունները, ինչպես նաև վերջինիս դիմելու կարգը:

Խիստ մտահոգիչ է, որ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում արձանագրվել է նաև դեպք, երբ «TikTok» սոցիալական ցանցում տեղադրվել են անչափահասների լուսանկարներ՝ երեխաներին թիրախավորող գրառումներով:

Մեկ այլ դեպքով «Facebook» սոցիալական ցանցի օգտատեր, բլոգերն իր անձնական էջում տեղադրել և տարածել է տարբեր, այդ թվում՝ երեխաների մասնակցությամբ և իրենց կողմից հրապարակված տեսանյութեր: Տեսանյութերի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ դրանցում առկա են երեխայի լավագույն շահի ապահովման հետ կապված մի շարք խնդիրներ: Այս առումով խիստ մտահոգիչ է այն հանգամանքը, որ երեխաների ծնողները

որոշ դեպքերում մտահոգություն չեն արտահայտել բլոգերի գործողությունների վերաբերյալ, մինչդեռ նման վերաբերմունքը վկայում է երեխայի իրավունքների պաշտպանության, մասնավորապես՝ երեխայի անձնական կյանքի և անձնական տվյալների պաշտպանության կարևորության վերաբերյալ իրազեկվածության բացակայության մասին:

Անհրաժեշտ է փաստել, որ երեխաներին վերաբերող կամ նրանց մասնակցությամբ հրապարակումների պատրաստման գործընթացը պահանջում է առավել բարձր պատասխանատվություն, ուշադրություն և զգուշություն՝ հաշվի առնելով երեխաների խոցելիությունը և նրանց լավագույն շահի առաջնահերթությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է հրապարակումներ իրականացնելիս խստորեն պահպանել երեխային չվնասելու սկզբունքը և ձեռնարկել հետևյալ միջոցները՝

- ✓ ***գործուն քայլեր ձեռնարկել ՀԼՄ-ների, մասնագիտական համայնքների կողմից երեխաների իրավունքների խախտման դեպքերը նվազեցնելու ուղղությամբ,***
- ✓ ***շարունակել և ընդլայնել երեխաների անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ հանրային իրազեկման արշավների իրականացումը՝ ապահովելով ավելի լայն շրջանակի ներգրավվածություն,***
- ✓ ***ապահովել լրագրողների, մասնագիտական համայնքների ներկայացուցիչների կայուն և շարունակական վերապատրաստումները երեխաներին վերաբերող հրապարակումների պատրաստման վերաբերյալ,***
- ✓ ***գործուն միջոցներ ձեռնարկել հեռուստատեսությամբ երեխայի լավագույն շահից չբխող նյութերի հեռարձակումը բացառելու ուղղությամբ,***
- ✓ ***բարձրացնել հանրային իրազեկվածությունը Անձնական տվյալների պաշտպանության գործակալության լիազորությունների և «Անձնական տվյալների պաշտպանության մասին»՝ Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների խախտման համար նախատեսված պատասխանատվության վերաբերյալ:***

ԳԼՈՒԽ 10. ՄԱՆԿԱԿԱՆ ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆ

Աղքատության մեջ մեծացող երեխաները հաճախ բախվում են առողջ սննդով, հիգիենայի պարագաներով, բնակելի տարածությամբ ապահովված լինելու, առողջության պահպանման, կրթության, մշակութային արժեքներին հաղորդակցվելու և այլ իրավունքների խախտման: Աղքատությունը նաև երեխաներին թափառաշրջիկության և մուրացկանության մեջ ներգրավելու հիմնական պատճառներից է:

ՄԱԿ-ի «Կայուն զարգացման 2030 նպատակներ»-ի 1-ին նպատակի համաձայն՝ մինչև 2030 թվականը ամենուրեք և բոլոր մարդկանց համար պետք է իսպառ վերացնել ծայրահեղ աղքատությունը, առնվազն կիսով չափ նվազեցնել ըստ ազգային սահմանումների աղքատության բոլոր ձևերի մեջ ապրող բոլոր տարիքների տղամարդկանց, կանանց և երեխաների համամասնությունը, ներդնել տվյալ երկրում համապատասխան սոցիալական պաշտպանության համակարգեր և միջոցառումներ բոլորի համար, այդ թվում՝ սոցիալական պաշտպանության երաշխիքների խմբեր:

Մինչդեռ, 2025 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի իրականացրած մշտադիտարկումները վկայում են այն մասին, որ Հայաստանի Հանրապետությունում, հատկապես, մարզերում շարունակում է բարձր մնալ աղքատության, այդ թվում՝ մանկական աղքատության մակարդակը: Մանկական աղքատության նվազեցման նպատակով Մարդու իրավունքների պաշտպանը կարևորում է դրան ուղղված հստակ ռազմավարության, ինչպես նաև համապատասխան սոցիալական աջակցության ծրագրերի մշակումն ու իրականացումը: Մինչդեռ՝ այդ նպատակի իրականացմանն ուղղված հստակ ռազմավարություն, որը, ի թիվս այլնի՝ կներառի նաև ֆինանսական աղբյուրներն ու անհրաժեշտ ֆինանսական միջոցները, առաջընթացի ցուցանիշները, ելակետային և թիրախային արդյունքները, իրականացվելիք աշխատանքների մշտադիտարկման ընթացակարգը, մշակված չէ:

Բացի այդ, մանկական աղքատության նվազեցման հարցում Մարդու իրավունքների պաշտպանը կարևորում է նաև թիրախային սոցիալական աջակցության ծրագրերի իրականացումը: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ ՀՀ կառավարության 2025 թվականի հունվարի 9-ի թիվ 27-Ն որոշմամբ 2025 թվականի մարտի 17-ից ՀՀ Սյունիքի և Կոտայքի մարզերում գործարկվել է (պիլոտային) ընտանիքների անապահովության գնահատման նոր համակարգը, որը 2026 թվականի հուլիսի 1-ից կգործարկվի ամբողջ հանրապետությունում:

Հարկ է փաստել, սակայն, որ Պաշտպանի աշխատակազմում արձանագրվել են դեպքեր, երբ բազմազավակ ընտանիքի միակ կերակրողն աշխատանք չունենալու պատճառով հայտնվել է ծանր սոցիալական վիճակում, իսկ հասանելի նպաստը հնարավորություն չի տվել հոգալ նույնիսկ երեխաների կրթության իրավունքի ապահովման հետ կապված ծախսերը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Մարդու իրավունքների պաշտպանն ընդգծում է, որ պետության տրամադրած դրամական աջակցությունն ու ծառայությունները պետք է լինեն փոխկապակցված երեխաներին տրամադրվող այլ ծառայությունների հետ, որոնք դրական ազդեցություն կունենան երեխաների կյանքի որակի բարելավման վրա:

Ընդ որում, Միավորված ազգերի կազմակերպության երեխայի իրավունքների կոմիտեն, 2024 թվականի ամփոփիչ դիտարկումներում անդրադառնալով պետության սոցիալական պաշտպանության համակարգին, որը ներառում է ներդրումային և ոչ ներդրումային փոխանցումներ և ծառայություններ, ինչպես նաև աշխատաշուկային

առնչվող ծրագրեր, նշել է, որ սոցիալական պաշտպանության համակարգն ընդգրկում է երեխաների բնակչության միայն մի փոքր մասը և ընկալվում է որպես աղքատությունը մեղմացնող, սակայն ոչ կանխարգելող մեխանիզմ: Բացի այդ, երեխայի ծննդյան միանվագ և երեխայի խնամքի նպաստները, թեև հանդիսանում են ծայրահեղ աղքատության դեմ պայքարի միջոցներ, սակայն սահմանափակ ազդեցություն ունեն ընտանիքներին աղքատությունից դուրս բերելու գործում:[264]

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***յուրաքանչյուր տարվա համար հավաքագրել մանկական աղքատության վերաբերյալ տվյալները և վերլուծություն իրականացնել դրանց իրական պատճառների բացահայտման ուղղությամբ:***
- ✓ ***սոցիալական ծառայությունների ընդլայնման միջոցով ապահովել կարիքների վրա հիմնված ծառայությունների հասանելիությունը, հատկապես մարզերում:***
- ✓ ***մշակել ռազմավարություն՝ ուղղված մանկական աղքատության մակարդակի նվազեցմանը:***
- ✓ ***ապահովել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված բոլոր երեխաների բացահայտումն ու թիրախային, իրական կարիքներին համապատասխան սոցիալական ծրագրերի և աջակցության իրականացումը:***

[264] Հասանելի է https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRC%2FC%2FARM%2FCO%2F5-6&Lang=en հղումով, 2026 թվականի փետրվարի 10-ի դրությամբ:

ԳԼՈՒԽ 11. ՄՈՒՐԱՑԿԱՆՈՒԹՅԱՄԲ ԵՎ ԹԱՓԱՌԱՇՐՋԻԿՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Մուրացկանության և թափառաշրջիկության երևույթները էապես խոչընդոտում են երեխայի առողջ զարգացմանը և հանգեցնում մի շարք բացասական հետևանքների, օրինակ, խախտվում են բավարար կենսապայմաններ ունենալու, առողջության պահպանման և կրթության իրավունքները:

Մինչդեռ, Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկումները, գրավոր և բանավոր ստացված դիմում-բողոքները, այդ թվում՝ թեժ գծի հեռախոսահամարին ստացված զանգերը վկայում են, որ Հայաստանի Հանրապետությունում շարունակում են արդիական մնալ մուրացկանությամբ և թափառաշրջիկությամբ զբաղվող երեխաների հիմնախնդիրները:

Մասնավորապես, արձանագրվել են մուրացկանությամբ և թափառաշրջիկությամբ զբաղվող երեխաների հիմնախնդիրների առնչությամբ միասնական քաղաքականության մշակման, բացահայտման և կանխարգելման, հանրային իրազեկման, անհրաժեշտ աջակցության ցուցաբերման հետ կապված խնդիրներ:

ՀՀ ՆԳՆ ոստիկանության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 1044-Ն որոշմամբ սահմանված միջգերատեսչական համագործակցության շրջանակներում կազմակերպվում են ստուգայց-շրջագայություններ, որոնց մասնակցում են Երևանի քաղաքապետարանի Երեխաների և սոցիալական պաշտպանության վարչությանը ենթակա վարչական շրջանների խնամակալության և հոգաբարձության մարմինները, Միասնական սոցիալական ծառայության աշխատակիցները, իսկ մարզերում՝ առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչությունների ներկայացուցիչները: Նշված միջոցառումների նպատակն է մուրացիկ և թափառաշրջիկ անչափահասների հայտնաբերումը, նրանց սոցիալական և առողջական վիճակի գնահատումը, խնամքի և դաստիարակության կազմակերպումը, սոցիալապես անապահով ընտանիքների անչափահաս երեխաների զբաղվածության հարցերի կարգավորումը, ինչպես նաև համապատասխան կանխարգելիչ և համատեղ մեխանիզմների մշակումը: Նշված միջոցառումների իրականացումն ուղղված է հանրապետությունում մուրացկանությամբ և թափառաշրջիկությամբ զբաղվող անչափահասների թվի նվազեցմանը և նրանց կողմից շարունակական բնույթ կրող հակաիրավական արարքների կատարման կանխարգելմանը:

Մինչդեռ՝ Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկման արդյունքները վկայում են, որ 2025 թվականին շարունակում են արդիական մնալ մուրացկանության և թափառաշրջիկության դեպքերի բացահայտման հետ կապված խնդիրները: Այսպես, օրինակ, Պաշտպանի աշխատակազմում, նույնպես, ստացվել է տեղեկատվություն երեխայի մուրացկանության վերաբերյալ, որն անմիջապես փոխանցվել է համապատասխան իրավասու մարմնին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Մարդու իրավունքների պաշտպանը խիստ կարևորում է այնպիսի կառուցակարգերի ներդնումը, որոնք հնարավորություն կտան առավել արդյունավետ կերպով բացահայտել և դրա արդյունքում նաև կանխարգելել երեխաների՝ մուրացկանությամբ և թափառաշրջիկությամբ զբաղվելու դեպքերը:

Նշվածի առնչությամբ կարևոր է դժվարին իրավիճակում հայտնված երեխաների վաղ հայտնաբերումը համայնքում, որտեղ առաջնային է խնամակալության և հոգաբարձության մարմնի արդյունավետ աշխատանքը և վերջիններիս կողմից ՀՀ ՆԳՆ ոստիկանության և ՀՀ միասնական սոցիալական ծառայության տարածքային

կենտրոնների հետ կայուն համագործակցությունը, յուրաքանչյուր ընտանիքի և երեխայի պարագայում՝ սոցիալ-վերականգնողական ծառայությունների ապահովումը:

Երեխային հայտնաբերելուց հետո պետք է նախատեսվեն և իրականացվեն հստակ աշխատանքներ ընտանիքի և երեխայի հետ՝ երեխայի՝ կրկին մուրացկանությամբ կամ թափառաշրջիկությամբ զբաղվելու ռիսկը բացառելու և երեխայի բոլոր իրավունքների իրացումը երաշխավորելու համար՝ իրավասու բոլոր մարմինների միջև կայուն և արդյունավետ համագործակցության ձևավորմամբ:

Մուրացկանության և թափառաշրջիկության որոշ դեպքերի առնչությամբ Պաշտպանի աշխատակազմը արձանագրել է նաև, որ խնդիրն ուղղակիորեն կապված է նաև ծնողների ցածր ծնողավարման հմտությունների և ցածր իրավագիտակցության հետ: Հաճախ են դեպքերը, երբ երեխաները զբաղվում են մուրացկանությամբ ծնողների իմացությամբ և, երբեմն, նաև դրդմամբ: Ուստի, կարևոր է նաև պետության կողմից նշվածի առնչությամբ ծնողների հետ աշխատանքի և հստակ միջոցառումների պլանավորումը:

Պաշտպանը կարևորում է երեխաների մուրացկանության և թափառաշրջիկության հիմնախնդիրների և իրավասու պետական մարմինների լիազորությունների մասին իրազեկման միջոցառումների շարունակական կազմակերպումն ու իրականացումը՝ հաշվի առնելով այն, որ հաճախ հարցի առնչությամբ քաղաքացիները նախընտրում են դիմել Մարդու իրավունքների պաշտպանին, քանի որ իրազեկված չեն իրավասու մարմինների գործունեության վերաբերյալ:

Առավել խնդրահարույց է այն, որ մուրացկանության և թափառաշրջիկության դեպքերին ոչ պատշաճ արձագանքումը, երբեմն, կարող է հանգեցնել նաև երեխայի թրաֆիքինգի կամ շահագործման:

Ըստ ՀՀ ներքին գործերի նախարարության տրամադրած տեղեկատվության՝ 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ-ում հաշվառված է 2 մուրացիկ և 1 թափառաշրջիկ անչափահաս, որոնցից Երևան քաղաքում՝ 2 արական սեռի մուրացիկ անչափահաս՝ 15 և 16 տարեկան և Լոռու մարզում՝ 1 արական սեռի թափառաշրջիկ անչափահաս՝ 16 տարեկան:

Հարկ է փաստել, որ ՄԱԿ-ի երեխաների իրավունքների կոմիտեն նույնպես իր դիտարկումներում անդրադարձել է խնդրին՝ նշելով, որ խիստ մտահոգիչ է 14 տարեկանից ցածր բազմաթիվ երեխաների՝ գյուղատնտեսության կամ շինարարական աշխատանքներում ներգրավված լինելը, ինչպես նաև մուրացկանությամբ զբաղվող երեխաների թվի աճը:[265]

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***ներդնել հստակ ծրագրեր մուրացկանությամբ և թափառաշրջիկությամբ զբաղվող երեխաների հայտնաբերման և պատշաճ ծառայությունների տրամադրման ուղղությամբ:***
- ✓ ***ապահովել մուրացկանությամբ և թափառաշրջիկությամբ զբաղվող երեխաների ծնողների հետ աշխատանքների և հստակ պլանավորված միջոցառումների շարունակականությունը:***

[265] Տե՛ս նաև, ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեի 2024թ հոտկեբերի 14-ին Հայաստանի հինգերորդ և վեցերորդ պարբերական զեկույցների վերաբերյալ ամփոփիչ դիտարկումները (CRC/C/ARM/CO/5-6) հասանելի է https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRC%2FC%2FARM%2FCO%2F5-6&Lang=en հղումով, 2026 թվականի փետրվարի 11-ի դրությամբ:

- ✓ *ապահովել ՀՀ ՆԳՆ ոստիկանության, տեղական ինքնակառավարման մարմինների և ՀՀ միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնների շարունակական և արդյունավետ համագործակցությունը՝ երաշխավորելու համար մուրացկանությամբ ու թափառաշրջիկությամբ զբաղվող երեխաների բացահայտումը և աջակցության տրամադրումը:*
- ✓ *զանգվածային լրատվության միջոցների, այդ թվում՝ հեռուստատեսության միջոցով շարունակաբար իրազեկել հասարակությանը մուրացկանությամբ զբաղվող երեխաներ հանդիպելու դեպքում իրավասու պետական մարմինների պարտականությունների, դիմելու հնարավորությունների և գործող կառուցակարգերի մասին:*
- ✓ *միջոցներ ձեռնարկել՝ բացառելու օրենսդրության պահանջների խախտմամբ երեխաներին աշխատանքի մեջ ներգրավելը:*

ԳԼՈՒԽ 12. ԵՐԵԽԱՅԻ՝ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԻՑ ՊԱՇՏՊԱՆՎԱԾ ԼԻՆԵԼՈՒ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Աշխատանքային իրավունքների պատշաճ ապահովումը հիմնարար նշանակություն ունի յուրաքանչյուր անձի համար, իսկ երեխաների դեպքում այն ձեռք է բերում առանձնահատուկ կարևորություն՝ պայմանավորված վերջիններիս ֆիզիկական և հոգեբանական զարգացման առանձնահատկություններով, ինչպես նաև շահագործման բարձր ռիսկերով: Երեխաների ներգրավվածությամբ աշխատանքային հարաբերությունները բնութագրվում են մի շարք առանձնահատկություններով, որոնք պահանջում են պետության կողմից ուժեղացված իրավական կարգավորում, մշտադիտարկում և վերահսկողություն:

Աշխատանքի ընտրության ազատությունն ամրագրված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, ինչպես նաև մի շարք միջազգային իրավական փաստաթղթերով:

«Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակից պետությունները ճանաչում են երեխայի՝ տնտեսական շահագործումից և այնպիսի աշխատանք կատարելուց պաշտպանվելու իրավունքը, որը կարող է վտանգավոր լինել կամ խոչընդոտել երեխայի կրթությանը կամ վնասել նրա առողջությանը և ֆիզիկական, մտավոր, բարոյական ու սոցիալական զարգացմանը:

ՄԱԿ-ի «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 10-ի հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ երեխաները և դեռահասները պետք է պաշտպանված լինեն տնտեսական և սոցիալական շահագործումից: Նրանց բարոյականության և առողջության համար վնասակար կամ նրանց կյանքի համար վտանգավոր կամ նրանց բնականոն զարգացմանը հնարավոր վնասաբեր բնագավառում նրանց աշխատանքի օգտագործումը պետք է պատժելի լինի օրենքով: Դրանից բացի, պետությունները պետք է սահմանեն տարիքային չափեր, որոնցից ներքև մանկական վճարովի աշխատանքից օգտվելն արգելվում է և պատժվում օրենքով:

Երեխայի տնտեսական շահագործման, այդ թվում՝ երեխայի աշխատանքի վերաբերյալ հիմնախնդիրների անդրադարձել է նաև Երեխայի իրավունքների կոմիտեն իր 2024 թվականի եզրափակիչ դիտարկումներում՝ նշելով, որ երեխաների աշխատանքը կանխարգելելու, հատկապես գյուղական բնակավայրերում անապահով վիճակում գտնվող երեխաների, ինչպես նաև երեխաներին վտանգավոր աշխատանքներում ներգրավելն արգելող օրենքների կիրարկումն ապահովելու նպատակով պետության ձեռնարկած միջոցները բավարար չեն:[266]

ՀՀ աշխատանքային օրենսգիրքը նախատեսում է հատուկ կարգավորումներ մինչև տասնութ տարեկան անձանց մասնակցությամբ աշխատանքային հարաբերությունների համար՝ նպատակ ունենալով ապահովել երեխաների իրավունքների արդյունավետ պաշտպանությունը, նրանց առողջության և բնականոն զարգացման պահպանումը, ինչպես նաև կանխարգելել երեխաների՝ աշխատանքի շահագործման և նրանց համար վտանգավոր կամ վնասակար աշխատանքներում ներգրավման դեպքերը:

Աշխատանքի իրավունքի պատշաճ իրականացման ապահովման գործընթացում նշանակալի դեր ունի Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի

[266] Տե՛ս, Երեխայի իրավունքների կոմիտեի 2024 թվականի եզրափակիչ դիտարկումները, հասանելի են https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRC%2FC%2FARM%2FCO%2F5-6&Lang=en հղումով 2026 թվականի փետրվարի 26-ի դրությամբ:

տեսչական մարմինը, որի գործունեության շրջանակում իրականացվում են մի շարք միջոցառումներ՝ ուղղված աշխատանքային օրենսդրության պահանջների պահպանման ապահովմանը, այդ թվում՝ մինչև տասնութ տարեկան անձանց աշխատանքի ոլորտում:

Հատկանշական է, որ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2025 թվականի ընթացքում մինչև 18 տարեկան անձանց համար աշխատանքային օրենսդրությամբ սահմանված երաշխիքների ապահովման վերահսկողության իրականացման շրջանակում արձանագրվել է խախտման 14 դեպք: Խախտումները վերաբերել են առանց օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված աշխատանքային պայմանագրերին, աշխատավարձին, աշխատողի աշխատանքի ռեժիմին և հանգստի ժամանակին, ինչպես նաև աշխատանքի ընդունվելիս նախնական և պարբերական բժշկական զննության անցկացման կարգին:

Ընդ որում, ՀՀ գլխավոր դատախազության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ աշխատանքային շահագործման դեպքերով տուժող են ճանաչվել 29 անձ, որոնցից 5-ը՝ անչափահասներ:

2025 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի կողմից իրականացված մշտադիտարկումները, ինչպես նաև ստացված գրավոր և բանավոր դիմում-բողոքները, այդ թվում՝ թեժ գծի հեռախոսահամարին ուղղված զանգերը, վկայում են, որ երեխայի աշխատանքի իրավունքի իրացման գործընթացում առկա են մի շարք համակարգային խնդիրներ:

Այսպես, 2025 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմին ներկայացված դիմում-բողոքներից մեկի ուսումնասիրության ընթացքում արձանագրվել են աշխատանքային օրենսդրության մի շարք խախտումներ, մասնավորապես՝ աշխատանքային պայմանագրի բացակայության, աշխատավարձի վճարման ժամկետների և կարգի հետ կապված:

Մարդու իրավունքների պաշտպանն ընդգծում է, որ աշխատանքային պայմանագրի բացակայությունը էականորեն խաթարում է երեխայի աշխատանքային իրավունքի պատշաճ իրացումը և ստեղծում է երեխայի շահագործման բարձր ռիսկեր: Նման պայմաններում երեխան զրկվում է աշխատանքային հարաբերություններից բխող հիմնական երաշխիքներից, այդ թվում՝ աշխատանքի պայմանների հստակ սահմանումից, վարձատրության չափի և վճարման կարգի կանխատեսելիությունից, ինչպես նաև աշխատանքի անվտանգության և առողջության պահպանման մեխանիզմներից:

Հատկանշական է նաև, որ աշխատանքային պայմանագրի բացակայության պատճառով մինչև տասնութ տարեկան աշխատողները հաճախ ներգրավվում են օրենքով սահմանված առավելագույն աշխատաժամանակը գերազանցող աշխատանքներում, զրկվում են հանգստի և արձակուրդի իրավունքից:

Նմանատիպ խախտումները ոչ միայն հակասում են ներպետական օրենսդրությանը, այլև կարող են բացասաբար անդրադառնալ երեխայի կրթության շարունակականության, ֆիզիկական և հոգեբանական առողջության, ինչպես նաև սոցիալական զարգացման վրա: Հատկապես մտահոգիչ են այն դեպքերը, երբ աշխատանքային գործունեությունը խոչընդոտում է պարտադիր կրթության գործընթացին կամ կատարվում է երեխայի համար վտանգավոր կամ վնասակար պայմաններում:

Վերոգրյալը վկայում է, որ մինչև տասնութ տարեկան անձանց մասնակցությամբ աշխատանքային հարաբերությունների ոլորտում առկա խնդիրները կրում են համակարգային բնույթ: Դրանք մեծապես պայմանավորված են վերահսկողական մեխանիզմների, իրավախախտումների բացահայտման և կանխարգելման գործող մեխանիզմների ոչ բավարար արդյունավետությամբ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է գործուն միջոցներ ձեռնարկել աշխատանքային հարաբերություններում երեխայի շահագործման կանխարգելման և վարչական իրավախախտման հայտնաբերման հստակ կառուցակարգերի արդյունավետության ուղղությամբ՝ ուժեղացնելով վերահսկողական և կանխարգելիչ միջոցառումները, բարձրացնելով երեխաների և գործատուների իրազեկվածությունը աշխատանքային օրենսդրության պահանջների վերաբերյալ:

ԲԱԺԻՆ 8. ՄՏՔԻ, ԽՂՃԻ ԵՎ ԿՐՈՆԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Մտքի, խղճի ու կրոնի ազատության իրավունքը սահմանված է Սահմանադրությամբ: Սահմանադրության համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում է կրոնական կազմակերպությունների գործունեության ազատությունը: Կրոնական կազմակերպություններն իրավահավասար են և օժտված են ինքնավարությամբ: Խտրականությունը, կախված կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից արգելվում է:

Մինչդեռ՝ 2025 թվականին զանգվածային լրատվության միջոցներում և սոցիալական ցանցերում տարածվող տեղեկությունների, ստացված դիմումների ու բողոքների ուսումնասիրության, իրականացված մշտադիտարկումների արդյունքում Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրել է մի շարք խնդիրներ՝ կապված մտքի, խղճի, կրոնի ազատության իրավունքին վերաբերելի միջազգային չափորոշիչների պահպանման հետ:

Մասնավորապես, 2025 թվականին արձանագրվել են.

- կրոնական ազատությունների երաշխիքների պահպանման, այդ թվում՝ կրոնական կազմակերպությունների ինքնավարության նկատմամբ հարգանքի երաշխավորման հետ կապված խնդրահարույց իրավիճակներ,
- Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու ներկայացուցիչների նկատմամբ հնչեղություն ունեցող քրեաիրավական գործընթացներում հանրային պատշաճ հաղորդակցության երաշխավորման հետ կապված խնդիրներ,
- Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու, կրոնական այլ կազմակերպությունների ներկայացուցիչների և աթեիստների թիրախավորման դեպքեր, վերջիններիս նկատմամբ խտրական, ատելության խոսքի դրսևորումներ,
- ազատությունից զրկված անձանց կրոնական ազատությունների երաշխավորման հետ կապված խնդիրներ:

Կրոնական ազատություններին առնչվող երաշխիքների անշեղ պահպանման, այդ թվում՝ կրոնական կազմակերպությունների ինքնավարության նկատմամբ հարգանքի կարևորության առնչությամբ Մարդու իրավունքների պաշտպանը 2025 թվականին հանդես է եկել հրապարակային հայտարարություններով[267]:

Պաշտպանն ընդգծում է, որ կրոնական կազմակերպություններին առնչվող տարբեր քննարկումներ, այդ թվում՝ Հայ Առաքելական Եկեղեցուն վերաբերելի, իրականացվել են նշված կազմակերպությունների ինքնավարության նկատմամբ անհրաժեշտ զգայունության բացակայությամբ:

Այդ համատեքստում Մարդու իրավունքների պաշտպանը շեշտադրում է, որ կրոնական կազմակերպություններին և կրոնական ազատություններին առնչվող բոլոր հանրային քննարկումները պետք է իրականացվեն կրոնական կազմակերպությունների ինքնավարության նկատմամբ հարգանքի հստակ մատնանշմամբ: Միջազգային իրավական մոտեցումների, այդ թվում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայի ամփոփմամբ՝ հարկ է ընդգծել հետևյալ առանցքային հիմնադրույթները՝

[267] Հայտարարությունները հասանելի են https://ombuds.am/am/site/ViewNews/3435, https://ombuds.am/am/site/ViewNews/3441 հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

➢ կրոնական համայնքների ինքնավար գոյությունը ժողովրդավարական հասարակության բազմակարծության անքակտելի մասն է: Թեև կարող է հարկ լինել, որ պետությունը ժողովրդավարական հասարակության մեջ գոյակցող տարբեր կրոնների և կրոնական խմբերի շահերը մեկտեղելու քայլեր ձեռնարկի, սակայն կանոնակարգման իր իրավասությունները կիրառելիս և զանազան կրոնների ու համոզմունքների հետ իր հարաբերություններում պետությունը պարտավոր է մնալ չեզոք և անկողմնակալ (Մահմեդական համայնքի Գերագույն սուրբ խորհուրդն ընդդեմ Բուլղարիայի [Supreme Holy Council of the Muslim Community v. Bulgaria]):

➢ հավատացյալների՝ կրոնի ազատության իրավունքը, որը նախատեսում է նաև այլ անձանց հետ համատեղ սեփական դավանանքն արտահայտելու իրավունքը, ենթադրում է, որ հավատացյալներին թույլ է տրվում միավորվել՝ ազատ, առանց պետության կամայական միջամտության: Իրոք, կրոնական համայնքների ինքնավար գոյությունը ժողովրդավարական հասարակությունում բազմակարծության անքակտելի մասն է և, հետևաբար մտքի, խղճի ու կրոնի ազատության երաշխավորման պաշտպանության առանցքը (Բեսարաբիայի Մետրոպոլիտեն եկեղեցին ընդդեմ Մալդովայի [Metropolitan Church of Bessarabia v. Moldova]):

➢ պետությունը պարտավոր է հարգել կրոնական կամ համոզմունք դավանող համայնքների ինքնավարությունը՝ վերջիններիս իրավաբանական անձի կարգավիճակին հասանելիության ապահովման իր պարտականությունն իրականացնելու ընթացքում:

➢ պետությունը պետք է կատարի իր պարտավորությունները՝ ապահովելով, որ ազգային օրենսդրությունը հնարավորություն տա կրոնական կամ համոզմունք դավանող համայնքին ինքնուրույն որոշել՝ իր առաջնորդության կազմը, ներքին կանոնները, իր հավատամքի բովանդակային էությունը, համայնքի կառուցվածքը և հոգևորականների նշանակման մեթոդները, ինչպես նաև իր անվանումն ու այլ խորհրդանիշները:

➢ պետությունը պետք է զերծ մնա կրոնական կազմակերպության կանոնադրության և էության բովանդակային (սուբստանտիվ), այլ ոչ թե ձևական վերլուծությունից: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կրոնական կամ համոզմունք դավանող համայնքները գործնականում կարող են ունենալ կազմակերպչական ամենատարբեր ձևաչափեր, այս ոլորտում ազգային օրենսդրության շրջանակներում անհրաժեշտ է ապահովել բարձր մակարդակի ճկունություն[268]:

➢ իրավունքներն ապահովելու հիմնարար պարտավորությունը, սակայն, չի սահմանափակվում այն պահանջով, որ պետությունները զերծ մնան պաշտպանվող իրավունքներին միջամտելուց. այն կարող է նաև պետությունների վրա ակտիվ քայլեր ձեռնարկելու պարտավորություն դնել: Օրինակ՝ հնարավոր է, որ իշխանությունների կողմից «չեզոք միջնորդության» անհրաժեշտություն առաջանա՝ օգնելու խմբավորումներին լուծել կրոնական համայնքների ներքին վեճերը:

➢ պետության միջամտության համաչափությունը դիտարկելիս առանցքային է հարցի դիտարկումը, թե նման միջամտությունն անցել է արդյոք «չեզոք միջնորդության» սահմանը, որով պարփակվում է ակնկալիքն առ այն, որ համայնքին թույլ կտրվի գործել առանց խաթարումների և պետության կամայական միջնորդության:

---

[268]Տեղեկատվությունը հասանելի է https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD%282014%29023-e&fbclid=IwY2xjawLR7S1IeHRuA2FIbQIxMABicmIkETE2T3hjSUcxdFJFb0hDQmpOAR7Dze2vWPVJbcxRsO5cx43_VUz5QBEpYwDENINPi7cLfMjcidozFTUsNzX_AA_aem_Kdd4Zn898I9aDIidvMKuaw հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

Հետևաբար, Մարդու իրավունքների պաշտպանն ընդգծում է, որ նշված ոլորտում պետության միջամտությունը թեև հնարավոր է, սակայն այն պետք է լինի համաչափ, չեզոք և որևէ իրավիճակում չի կարող լինել կամայական, որպիսի պարագայում միայն կարող է երաշխավորված համարվել կրոնական կազմակերպությունների ինքնավարությունը:

Ուստի, Պաշտպանը պահանջում է բոլոր հանրային քննարկումներն իրականացնել կրոնական կազմակերպությունների ինքնավարության նկատմամբ հարգանքի պահպանմամբ: Այս համատեքստում Մարդու իրավունքների պաշտպանը կարևորում է նաև իրավասու մարմինների կողմից պատշաճ պարզաբանումների ներկայացումը առ այն, թե որքանով են պահպանվում ՄԻՊ այս դիրքորոշման շրջանակներում ներկայացված չափանիշները:

Պաշտպանն ընդգծում է նաև, որ այն բոլոր դեպքերում, երբ իրավապահ մարմինների կողմից իրականացվող գործընթացները վերաբերում են Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու կամ այլ կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչներին, իրավապահ և այլ իրավասու մարմինները պարտավոր են ցուցաբերել անհրաժեշտ զգայունություն, հարգել անձանց կրոնական համոզմունքները, և գործընթացներն իրականացնել այն տրամաբանությամբ ու այնպիսի հանրային հաղորդակցությամբ, որպեսզի նույնիսկ նվազագույն հանրային տպավորություն չձևավորվի առ այն, որ չեն հարգվում անձանց կրոնական համոզմունքները կամ քրեաիրավական գործընթացներն իրականացվում են կրոնական համոզմունքների հիմքով:

Այս համատեքստում հարկ է նկատի ունենալ, որ հնչեղություն ունեն Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու ներկայացուցիչների նկատմամբ մի քանի քրեաիրավական գործընթացներ: Գործերից մեկով հրապարակային բանավեճի առարկա է դարձել այն հարցը, թե արդյոք խնդիրը կարող էր քննարկվել իրավական գործընթացների համատեքստում՝ նկատի ունենալով եկեղեցու ինքնավարությունը: Ի գիտություն ընդունելով գործով դատական ակտի առկայությունն ու որևէ կերպ չմիջամտելով դատարանների գործունեությանը՝ Մարդու իրավունքների պաշտպանը բավարար չի համարում նշված հարցով իրավասու մարմինների կողմից վարվող հանրային հաղորդակցությունը և ընդգծում է, որ նման զգայուն ու իրավական բանավեճեր ենթադրող հարցերի առնչությամբ անհրաժեշտ է վարել անընդհատ, ամբողջական, միջազգային չափանիշների համաձայն՝ իրավասու մարմինների գործողությունների իրավաչափության հիմքերը ներկայացնող հաղորդակցություն: Ընդ որում՝ նշված հարցերով հանրային հաղորդակցությունը պետք է իրականացվի՝ անհրաժեշտ զգայունություն պահպանելով:

2025 թվականին զանգվածային լրատվության միջոցներում և սոցիալական ցանցերում տարածվող տեղեկությունների, ստացված դիմումների ու բողոքների ուսումնասիրության, մշտադիտարկումների արդյունքում Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրել է նաև Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու, կրոնական այլ կազմակերպությունների ներկայացուցիչների և աթեիստների թիրախավորման դեպքեր, վերջիններիս նկատմամբ խտրական, ատելության խոսքի դրսևորումներ:

Մարդու իրավունքների պաշտպանն անթույլատրելի է համարում հրապարակային խոսքի նման դրսևորումները և ընդգծում, որ ցանկացած հարց կարող է դառնալ ժողովրդավարական բանավեճի առարկա, բայց դա չի կարող իրականացվել մարդու իրավունքների չափանիշներն ու կրոնական ազատություններին առնչվող երաշխիքները ոտնահարելու միջոցով:

Մարդու իրավունքների պաշտպանն ընդգծում է, որ հանրային իշխանության ներկայացուցիչները, քաղաքական, հանրային գործիչները, զանգվածային լրատվության միջոցները, մասնագիտական համայնքները պետք է ակտիվ դերակատարություն ունենան ինչպես արգելված խոսքի տեսակները բացառելու, այնպես էլ այդպիսի խոսքին հակազդելու տեսանկյունից՝ որպես ուղենիշ ունենալով հասարակությունում բազմազանության նկատմամբ հարգանքի արմատավորումը, խտրականության բացառումը, հանրային համերաշխության և առողջ հանրային դիսկուրսի ձևավորումը:

Մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքի իրացման տեսանկյունից Մարդու իրավունքների պաշտպանը խնդրահարույց է համարում նաև Հայաստանում կոնկրետ հանրային դերակատարների խտրական խոսքի դրսևորումները անձանց կրոնական համոզմունքների կամ դրանց բացակայության հիմքով (այդ թվում՝ աթեիստների կամ մեծամասնության կրոնական համոզմունքներից տարբերվող համոզմունքներ ունեցող անձանց նկատմամբ տարածվող խտրական, ատելության խոսույթը): Արձանագրվել են դեպքեր, երբ մի կրոնական կազմակերպության ներկայացուցիչների պաշտպանությունն իրականացվել է այլ կրոնական համոզմունքներ ունեցող անձանց պիտակավորելու կամ նրանց նկատմամբ ոչ զգայուն ու խտրական մոտեցումներ տարածելու միջոցով:

Ուստի, Մարդու իրավունքների պաշտպանը՝ որպես Հայաստանում մարդու իրավունքների խթանման գործառույթ իրականացնող պաշտոնատար անձ, պահանջում է բոլոր պաշտոնատար անձանցից, հանրային գործիչներից, կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչներից բացառել այնպիսի խոսույթի օգտագործումն ու այնպիսի գործունեությունը, որը պարունակում է իրավունքի ժամանակակից չափանիշներին հակասող դրսևորումներ, այդ թվում՝ արտահայտվող ատելության խոսքի տեսքով:

2025 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի անմիջական ուշադրության կենտրոնում են եղել նաև ազատությունից զրկված անձանց կրոնական ազատությունների երաշխավորման հարցերը: Դրանք, մասնավորապես, վերաբերել են կալանավորվածներին պահելու վայրում կալանավորված անձի նկատմամբ կիրառված սահմանափակումներով պայմանավորված՝ հոգևորականի հետ հանդիպելու հնարավորություն չունենալու հետ կապված հարցերին, կրոնական ծիսակատարություններին մասնակցելու հնարավորություն չունենալուն և այլն: Ազատությունից զրկման վայրերում նշված իրավունքի երաշխավորմանն առնչվող մի շարք հարցեր ՄԻՊ հաստատության և իրավասու մարմինների համագործակցության արդյունքում հընթացս ստացել են լուծում: Միևնույն ժամանակ, Պաշտպանը հարկ է համարում կրկին արձանագրել, որ ազատությունից զրկված անձանց կրոնական ազատությունների երաշխավորումն ունի բազմաթիվ առանձնահատկություններ, ուստի՝ հարցին անհրաժեշտ է ցուցաբերել համակարգային մոտեցում և մշակել վերջինիս առնչությամբ հայեցակարգային լուծումներ:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում դիմումներ են ստացվել Հայ Առաքելական Եկեղեցու ներկայացուցիչներից, որոնց մի մասը վերաբերել է հանրային իշխանության մարմինների կողմից իրենց իրավունքների խախտումներին՝ քրեական վարույթների շրջանակներում կամ եկեղեցու ինքնավարությանը միջամտելու դիտանկյունից: Դիմումների մյուս մասը վերաբերել է Եկեղեցու ներսում իրենց իրավունքների առերևույթ խախտումներին: Եկեղեցու ներսում առկա՝ իրավունքներին վերաբերելի խնդիրների առնչությամբ Պաշտպանը չունի անհատական գործեր քննարկելու հնարավորություն, ինչի առնչությամբ տեղեկացվել են նաև դիմողները: Ուստի նշված խնդիրները հասցեավորվում են բացառապես իրավունքների խթանման մանդատի

համատեքստում: Ինչ վերաբերում է հանրային իշխանության մարմինների կողմից իրավունքների առերևույթ խախտումներին, դրանց Մարդու իրավունքների պաշտպանն անդրադարձել է ինչպես հրապարակային հայտարարությունների, ելույթների շրջանակներում, այնպես էլ տարեկան հաղորդման՝ քրեական վարույթներին առնչվող ընդհանուր խնդիրների նկարագրության համատեքստում: Գործերի մի մասն այժմ էլ գտնվում է քննարկման փուլում:

2025 թվականին շարունակվել են դիմումներ ու բողոքներ ստացվել կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչներից այլընտրանքային ծառայության կազմակերպման ու իրականացման գործընթացի առնչությամբ: Ոլորտում առկա խնդիրների մասին բարձրաձայնել են նաև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները: Դրանք, ի թիվս այլնի, վերաբերել են ոլորտային օրենսդրության կիրառման տարբերակված ու հայեցողական պրակտիկային, այլընտրանքային աշխատանքային ծառայության իրականացման ընթացքում ծագող խոչընդոտներին, ծառայողների սոցիալական երաշխիքների անհավասարությանը և այլն: Նշված խնդիրներին առավել մանրամասն անդրադարձ է կատարվել սույն տարեկան հաղորդման համապատասխան բաժնում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Մարդու իրավունքների պաշտպանը վերահաստատում է դիրքորոշումն առ այն, որ մտքի, խղճի ու կրոնի ազատությանն առնչվող հարցերը պետք է կարգավորվեն՝ հիմնվելով պետություն-կրոնական կազմակերպություն փոխգործակցության սկզբունքի վրա և հաշվի առնելով յուրաքանչյուրի դերակատարության թույլատրելի սահմանները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է

- ***երաշխավորել կրոնական ազատություններին առնչվող երաշխիքների անշեղ պահպանումը, այդ թվում՝ կրոնական կազմակերպությունների ինքնավարության նկատմամբ հարգանքը,***
- ***զգայուն ու իրավական բանավեճեր ենթադրող՝ կրոնական ազատություններին առնչվող հարցերի առնչությամբ վարել անընդհատ, ամբողջական, միջազգային չափանիշների համաձայն՝ իրավասու մարմինների գործողությունների իրավաչափության հիմքերը ներկայացնող հաղորդակցություն: Ընդ որում՝ նշված հարցերով հանրային հաղորդակցությունը պետք է իրականացվի՝ անհրաժեշտ զգայունություն պահպանելով,***
- ***գործուն միջոցներ ձեռնարկել՝ կրոնական համոզմունքների (կամ դրանց բացակայության) հիմքով խտրական խոսքի տեսակները բացառելու ուղղությամբ և հակազդել այդպիսի խոսքին՝ որպես ուղենիշ ունենալով հասարակությունում բազմազանության նկատմամբ հարգանքի արմատավորումը, խտրականության բացառումը, հանրային համերաշխության և առողջ հանրային դիսկուրսի ձևավորումը,***
- ***առանձնահատկությունների հաշվառմամբ՝ երաշխավորել ազատությունից զրկված անձանց կրոնական ազատությունները, այդ նպատակով մշակել և իրացնել հայեցակարգային լուծումներ:***

ԲԱԺԻՆ 9. ԿԱՐԾԻՔԻ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Կարծիքի արտահայտման ազատությունն ու տեղեկություններ ստանալու իրավունքը ժողովրդավարության էական հիմքերից են, որոնք իրենց ամրագրումն են գտել ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային մի շարք փաստաթղթերում, այդ թվում՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայում, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրում, «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» Եվրոպայի Խորհրդի կոնվենցիայում և այլն:

Կարծիքի արտահայտման ազատության և ատելության խոսքի հակազդման անհրաժեշտության առնչությամբ ընդունվել են մի շարք միջազգային ուղենշային փաստաթղթեր և հանձնարարականներ, որոնք, միաժամանակ, շեշտադրում են ինչպես կարծիքի արտահայտման ազատության պաշտպանության, այնպես էլ ատելության խոսքի դեմ արդյունավետ և համաչափ հակազդման անհրաժեշտությունը:

Այս համատեքստում կարևոր նշանակություն ունի, օրինակ, Եվրոպայի Խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից ընդունված CM/Rec(2022)16 հանձնարարականը՝ «Ատելության խոսքի դեմ պայքարի մասին», որով անդամ պետություններին առաջարկվում է մշակել համապարփակ քաղաքականություն՝ ներառելով օրենսդրական, վարչական և կրթական միջոցառումներ՝ միաժամանակ ապահովելով, որ կիրառվող սահմանափակումները համապատասխանեն օրինականության, անհրաժեշտության և համաչափության չափանիշներին[269]:

Մարդու իրավունքների ազգային հաստատությունների եվրոպական ցանցն (ENNHRI), օրինակ, 2025 թվականի իր զեկույցում կոչ է անում ազգային իշխանություններին ընդունել և կիրառել օրենսդրական այնպիսի կարգավորումներ, որոնք կերաշխավորեն լրատվամիջոցների ազատությունը: Միաժամանակ, Մարդու իրավունքների ազգային հաստատությունների եվրոպական ցանցն առաջարկում է ազգային իշխանություններին ներդնել համարժեք միջոցներ, որոնք կբարելավեն տեղեկատվության հասանելիությունը, կհակազդեն ապատեղեկատվության ու ատելության խոսքի տարածմանը՝ ապահովելով խոսքի ազատության նկատմամբ հարգանքը:

Մարդու իրավունքների ազգային հաստատությունների եվրոպական ցանցն (ENNHRI) իր նույն զեկույցի շրջանակում անդրադարձել է նաև այն հարցին, որ առցանց հարձակումների և ատելության խոսքի դրսևորումներ տեղի են ունեցել նաև ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի նկատմամբ[270]:

Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովը արձանագրել է, որ չնայած 2023-2025 թթ. Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությամբ նախատեսված գործողությունների իրականացմանն ուղղված որոշ քայլերին, հանձնարարականները, որոնց շարքում է եղել նաև ատելության խոսքի, ատելության շարժառիթով բռնության և խտրականության կանխարգելմանը և պայքարին նվիրված իրազեկման միջոցառումների իրականացումը, կատարված են միայն մասնակիորեն[271]:

---

[269] Հասանելի է https://rm.coe.int/0900001680a5ff5c հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

[270] Հասանելի է https://rule-of-law.ennhri.org/export?country%5B0%5D=2&year%5B0%5D=2025 հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

[271] Տեղեկատվությունը հասանելի է https://www.ecoi.net/en/file/local/2132484/ARM-IFU-VI-2025-30-ENG.pdf հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

2025 թվականի ընթացքում կարծիքի արտահայտման ազատության, տեղեկություններ ստանալու իրավունքի երաշխավորումն ու ատելության խոսքի բացառումը եղել են Մարդու իրավունքների պաշտպանի առաջնահերթություններից: Մարդու իրավունքների պաշտպանը, ոչ միայն ամենօրյա ռեժիմով քննարկել, հասցեավորել, առաջարկություններ է ներկայացրել իրավասու մարմիններին, հանդես է եկել հայտարարություններով մշտադիտարկումների, ստացված դիմումների ու բողոքների շրջանակում բարձրացված հարցերի առնչությամբ, այլև կարծիքի արտահայտման ազատության, տեղեկություններ ստանալու իրավունքի երաշխավորման ու ատելության խոսքի բացառման թեմաներով իրականացրել է լայնածավալ իրազեկման միջոցառումներ:

Այսպես, 2025 թվականի ընթացքում ավելի քան 1000 երեխա մասնակցել է Մարդու իրավունքների պաշտպանի հայտարարած իրազեկման արշավի շրջանակում կազմակերպված հանդիպումներին, ինչպես Երևանում, այնպես էլ ՀՀ մարզերում: Այդ հանդիպումների ընթացքում քննարկվել են, ի թիվս այլնի, տեղեկություններ ստանալու իրավունքի, կարծիքի արտահայտման ազատության երաշխավորման և ատելության խոսքի բացառման հետ կապված հարցերը: Մարդու իրավունքների պաշտպանն անձամբ է իրականացրել իրազեկման միջոցառումների մի մասը:

Տեղեկություններ ստանալու իրավունքի, կարծիքի արտահայտման ազատության երաշխավորման և ատելության խոսքի բացառման հետ կապված հարցերի քննարկման նպատակով Մարդու իրավունքների պաշտպանի նախաձեռնությամբ կազմակերպվել են մի շարք միջոցառումներ:

Այսպես, օրինակ, Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանի նախաձեռնությամբ 2025 թվականի ապրիլի 28-ին տեղի է ունեցել աշխատաժողով, որի նպատակն էր ամրապնդել պետական հաստատությունների և լրատվամիջոցների միջև հաղորդակցությունը՝ հանրային տիրույթում ատելության խոսքի դեմ պայքարի համատեքստում, ստեղծել կառուցողական երկխոսության հարթակ՝ վեր հանելու ոլորտում առկա խնդիրները, խթանելու պետական մարմինների և լրատվամիջոցների համագործակցությունը՝ միջազգային լավագույն փորձի կիրառմամբ նվազեցնելու հանրային միջավայրում ատելության խոսքի դրսևորումները:[272]

Մարդու իրավունքների պաշտպանի և Կոնրադ Ադենաուեր հիմնադրամի համագործակցությամբ 2025 թվականի հոկտեմբերի 4-ին և 5-ին Ծաղկաձորում կազմակերպվել է երկօրյա քննարկում՝ «Ատելության խոսքի վերաբերյալ իրազեկվածության բարձրացում» թեմայով: Միջոցառման նպատակն էր քննարկել ատելության խոսքի տարածման խնդիրները, մասնավորապես՝ սոցիալական մեդիայի և սոցցանցերի միջոցով տարածվող ատելության դրսևորումները, դրանց պատճառները, պայքարի միջազգային չափանիշները, ինչպես նաև անդրադառնալ առավել հաճախ թիրախավորվող խմբերին: Մասնակցել են Ազգային ժողովի պատգամավորներ, ԱԺ, դատական իշխանության, դատախազության, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի, ինչպես նաև ՄԻՊ աշխատակազմի ներկայացուցիչներ: Քննարկման ընթացքում ներկայացվել են միջազգային փորձը,

[272] Տեղեկատվությունը հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3374 հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

իրավական մոտեցումները և մեդիայի պատասխանատվության հարցերը: Միջոցառման շրջանակում անցկացվել են նաև խմբային աշխատանքներ, և պանելային քննարկումներ, որոնց ընթացքում մասնակիցները քննարկել են գործնական իրավիճակներ՝ փորձելով համատեղ մշակել արդյունավետ մեխանիզմներ ատելության խոսքի դեմ պայքարի և իրազեկման բարձրացման ուղղությամբ:[273]

2025 թվականին մարդու իրավունքների պաշտպանության միջազգային օրվա առթիվ անցկացվել է «Էթիկական չափորոշիչները իրավահավասարության և հակախտրականության երաշխավորման ոլորտում» խորագրով բարձր մակարդակի միջազգային համաժողովը: Միջազգային համաժողովի պանելային քննարկումների ընթացքում հատուկ անդրադարձ է կատարվել նաև կարծիքի արտահայտման ազատության երաշխավորման ու ատելության խոսքի բացառման ոլորտում առկա մարտահրավերներին ու խնդիրների լուծման ուղիներին[274] և այլն:

Մարդու իրավունքների պաշտպանը, հատուկ ուշադրություն դարձնելով կրթական միջավայրի առանցքային ու կենտրոնական դերակատարմանը անհանդուրժողականության կանխարգելման գործում ու չափազանց մտահոգիչ համարելով կրթական համակարգում տարածված կարծրատիպերն ու խտրական մոտեցումները, այդ տեսանկյունից կրթական բարեփոխումների մեկնարկի միտումով 2025 թվականի ընթացքում նախաձեռնել է բարձրագույն կրթության ոլորտում ատելության խոսքի դեմ պայքարին նվիրված կլոր-սեղան քննարկում: Միջոցառումը նպատակ է հետապնդել քննարկելու կրթական հաստատություններում ատելության խոսքի դեմ պայքարի կարևորությունը, ձևավորելու կառուցողական երկխոսության հարթակ՝ ներգրավելով պետական մարմինների, միջազգային կազմակերպությունների և ուսումնական հաստատությունների ներկայացուցիչների, ինչպես նաև բարձրացնելու հանդուրժողականության, իրավահավասարության ու հակախտրական արժեքների վերաբերյալ գիտելիքներն ու համագործակցությունը[275]:

Մարդու իրավունքների պաշտպանը տեղեկություն ստանալու իրավունքի, կարծիքի արտահայտման ազատության երաշխավորման և ատելության խոսքի բացառման հետ կապված հարցերին հատուկ անդրադարձել է նաև ՀՀ տարբեր մարզեր 2025 թվականին իրականացրած այցերի շրջանակում հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների, քաղաքացիների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների, զանգվածային լրատվության միջոցների հետ անցկացված հանդիպումների ու քննարկումների ընթացքում: Նշված հարցերին Մարդու իրավունքների պաշտպանը հատուկ անդրադարձել է նաև տարբեր խորագրերով կազմակերպված միջոցառումներում բացման հիմնական խոսքի, պանելային քննարկումների շրջանակում: Բացի այդ, Մարդու իրավունքների պաշտպանը արձանագրված խնդիրներին հատուկ անդրադարձել ու դրանց լուծման ուղիները քննարկել

[273] Տեղեկատվությունը հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3530 հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

[274] Տեղեկատվությունը հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3621 հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

[275] Տեղեկատվությունը հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3409 հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

է ամենօրյա աշխատանքային հանդիպումներում, այդ թվում՝ միջազգային դերակատարների, դեսպանների հետ հանդիպումներում:

Միջոցառումների, այցերի, հանդիպումների վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը հասանելի է Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնական կայքէջում:

Մարդու իրավունքների պաշտպանը տեղեկություններ ստանալու իրավունքի, կարծիքի արտահայտման ազատության երաշխավորման և ատելության խոսքի բացառման հարցում հատուկ կարևորում է նաև ոլորտի պատասխանատու այլ դերակատարների կողմից իրազեկման ու ոլորտի բարեփոխմանն ուղղված միջոցառումների իրականացումը:

Իրազեկման միջոցառումների անցկացման ու ոլորտի բարելավմանն ուղղված աշխատանքների մասին ՄԻՊ աշխատակազմին տեղեկատվություն է տրամադրվել ՀՀ վարչապետի աշխատակազմի, ՀՀ արդարադատության նախարարության, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության, ՀՀ ներքին գործերի նախարարության կողմից:

Չնայած ձեռնարկված միջոցներին՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ 2025 թվականի ընթացքում շարունակել են արդիական մնալ ատելության խոսքի բացառման, կարծիքի արտահայտման ազատության ու տեղեկություններ ստանալու սահմանադրական իրավունքների երաշխավորման հետ կապված ստորև ներկայացված խնդիրները:

ԳԼՈՒԽ 1. ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ԲԱՑԱՌՄԱՆ ՈՒ ԿԱՐԾԻՔԻ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՆՐԱՅԻՆ ՏԻՐՈՒՅԹՈՒՄ

Պաշտպանի աշխատակազմի կողմից լրատվամիջոցների և սոցիալական հարթակների 2025 թվականին իրականացված մշտադիտարկումները վկայում են, որ հայաստանյան հանրային խոսույթը շարունակում է աչքի ընկնել խտրական, անհանդուրժող, հասարակական տարբեր խմբերի թիրախավորող, պիտակավորող և ատելություն սերմանող ձևակերպումներով: Հայաստանյան հանրային խոսույթում առավել լայն տարածում են ստացել կանանց, հաշմանդամություն ունեցող անձանց պիտակավորող, թիրախավորող ձևակերպումները, էթնիկ պատկանելության հիմքով խտրական, ատելության խոսույթը, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու, կրոնական այլ կազմակերպությունների ներկայացուցիչների, աթեիստների նկատմամբ տարածվող խտրական խոսույթը, այլակարծության համար մարդկանց թիրախավորման դեպքերը:

Մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքի իրացման տեսանկյունից Մարդու իրավունքների պաշտպանը խնդրահարույց է համարում 2025 թվականի ընթացքում Հայաստանում խտրական, ատելության խոսույթի տարածումը Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու ներկայացուցիչների նկատմամբ, անձանց կրոնական համոզմունքների կամ դրանց բացակայության հիմքով, այդ թվում՝ աթեիստների կամ մեծամասնության կրոնական համոզմունքներից տարբերվող համոզմունքներ ունեցող անձանց նկատմամբ: Տարվա ընթացքում լայն տարածում է ունեցել «աղանդավոր» ձևակերպմամբ տարբեր դերակատարների կողմից միմյանց պիտակավորումը, ինչն անթույլատրելի է քննարկվող չափանիշների տեսանկյունից: Հարկ է ընդգծել նաև, որ բազմաթիվ իրավիճակներում մի կրոնական կազմակերպության կամ վերջինիս ներկայացուցիչների պաշտպանությունը տարբեր դերակատարների կողմից իրականացվել է այլ կրոնական կազմակերպության ներկայացուցիչների նկատմամբ պիտակավորող ու ոչ զգայուն մոտեցումներ տարածելով, ինչն արդյունքում տարածում է ստացել նաև զանգվածային լրատվության միջոցներով:

2025 թվականին արձանագրվել են դեպքեր, երբ հանրային գործիչների, պաշտոնատար անձանց կողմից տարածվել է էթնիկ կամ ազգային պատկանելության հիմքով ատելություն, խտրականություն, անհանդուրժողականություն հրահրելուն ուղղված խոսույթ: Հայաստանում տարածված էթնիկ և ազգային պատկանելության հիմքով ատելության խոսքին անդրադարձ է կատարել նաև Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովը՝ ներկայացնելով նման արգելված խոսքի տարածված օրինակները և արձանագրելով այդ ոլորտում Հայաստանում առկա խնդիրները, նման խոսքի բացառման ուղղությամբ կոնկրետ քայլեր ձեռնարկելու անհրաժեշտությունը, այդ թվում՝ ընդգծելով կրթության միջոցով հասարակությունում բազմազանության նկատմամբ հարգանքի արմատավորման, ինչպես նաև ցանկացած անձի կամ անձանց խմբի նկատմամբ էթնիկ կամ ազգային ծագման հիմքով խտրականության կանխարգելման ուղղությամբ քայլերի անհրաժեշտությունը:

Պաշտպանի աշխատակազմի ուսումնասիրությունները վկայում են, որ նախընտրական գործընթացների շրջանակներում տարատեսակ հիմքերով հանրության բևեռացման աստիճանը բավականին բարձր է եղել:

Հանրային գործիչների, պաշտոնատար անձանց կողմից ատելություն, խտրականություն, անհանդուրժողականություն հրահրելուն ուղղված խոսույթը,

հատկապես, ակնառու է եղել առանձին տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության, ինչպես նաև ՏԻՄ ընտրական գործընթացների, օրինակ, Գյումրի համայնքում տեղի ունեցող տեղական ինքնակառավարման մարմինների ընտրական գործընթացների շրջանակներում: Նման խոսույթի լայն տարածումն ակտիվացել է նաև համապետական ընտրություններին նախորդող ժամանակահատվածում:

Պաշտպանի աշխատակազմի կողմից իրականացված սոցիալական մեդիայի և զանգվածային լրատվության միջոցների մշտադիտարկման արդյունքում արձանագրվել են խտրականության և ատելության խոսքի դրսևորումներ, որոնք խոչընդոտում են կանանց իրավունքների իրացմանը և խաթարում հանրային համերաշխությունը: Սեռով պայմանավորված նախապաշարմունքներն ու կնոջ դերի վերաբերյալ թյուր ընկալումները արմատավորված են հասարակությունում ու հասարակական կյանքի բոլոր մակարդակներում՝ հակասելով իրավահավասարության սկզբունքին և շատ հաճախ դրսևորվելով ատելության խոսքի լայն տարածմամբ:

Արձանագրվել են նաև մարդու ծննդավայրի կամ բնակության վայրի հիմքով խտրականության և ատելության խոսքի տարատեսակ դրսևորումներ, այդ թվում՝ արցախահայերի նկատմամբ, ինչը խիստ անթույլատրելի է հանրային համերաշխության ամրապնդման և հասարակության բևեռացման բացառման տեսանկյունից:

Մշտադիտարկման արդյունքում արձանագրվել են նաև հանրակրթական ուսումնական հաստատություններում դասապրոցեսի բնականոն ընթացքի խաթարումների, ուսուցիչ-աշակերտ-ծնող հարաբերություններում անհանդուրժողականության դրսևորումների դեպքեր: Այսպես, օրինակ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում սոցիալական ցանցերի և զանգվածային լրատվության միջոցների հրապարակումների մշտադիտարկման արդյունքում արձանագրվել է, որ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Մերձավան գյուղի միջնակարգ դպրոցում տեղի է ունեցել միջադեպ, որի ժամանակ որոշ ուսուցիչների, աշակերտների և ծնողների կողմից անձը թիրախավորվել է այնպիսի ձևակերպումների տարածմամբ, որոնք հաշմանդամություն, այդ թվում՝ հոգեկան առողջության հետ կապված խնդիր ունենալու հանգամանքով պայմանավորված անձանց թիրախավորման դրսևորում են հանդիսանում:

Արձանագրվել են անձանց հաշմանդամություն ունենալու հանգամանքով պայմանավորված թիրախավորման բազմաթիվ այլ դեպքեր ևս: Արձանագրվել է, օրինակ, դեպք, երբ դատական իշխանության նախկին պաշտոնատար անձի կողմից հրապարակային խոսքի շրջանակներում արվել են մի շարք դատողություններ, որոնք իրենց էությամբ խտրական են և թիրախավորում են հաշմանդամություն ունեցող անձանց: Ընդ որում, լրատվամիջոցի կողմից տեսանյութը հրապարակվել է «Խայտառակություն է, որ խուլն ու կույր մարդը կարող է դատավոր դառնալ» վերտառությամբ[276]:

Առավել մտահոգիչ է այն, որ իրավահավասարության և հակախտրականության ոլորտին առնչվող՝ միջազգային չափանիշներին հակասող խտրական մոտեցումներ են տարածում մասնագիտական հանրույթի ներկայացուցիչները, իսկ խտրական ու ատելության խոսույթը տարածվում է նաև զանգվածային լրատվության միջոցների կողմից:

Նկատի ունենալով մեր հասարակությունում առկա խորքային կարծրատիպերը, տարբեր հիմքերով խտրականության բազմապիսի դրսևորումները, որոնք արտահայտվում են, այդ թվում՝ խտրական ու ատելության խոսույթի լայն տարածմամբ, Մարդու

[276] Տեղեկատվությունը հասանելի է https://armlur.am/1491973/ հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

իրավունքների պաշտպանն ընդգծում է ոլորտին վերաբերելի շուտափույթ բարեփոխումների իրականացման անհրաժեշտությունը: Այդ բարեփոխումները, ի թիվս այլնի, պետք է վերաբերեն մարդու իրավունքների կրթության ամբողջական բարեփոխմանը, իրավահավասարության համապարփակ օրենսդրության ընդունմանն ու պատշաճ գործարկմանը, պետական մարմինների, մասնագիտական ու ակադեմիական համայնքների ներկայացուցիչների վարքագծի կանոնների ու էթիկայի պահպանման կառուցակարգերի փաստացի ու պատշաճ գործարկմանը, հանրային իրազեկման ու վերապատրաստումների լայնածավալ աշխատանքների իրականացմանը, ոլորտին առնչվող քրեական օրենսդրության պատշաճ գործարկմանը և այլն: Մարդու իրավունքների պաշտպանն ընդգծում է, որ այս բոլոր ոլորտներում առկա են անհետաձգելի լուծում պահանջող խնդիրներ, որոնք պետք է շուտափույթ հասցեավորվեն:

Մարդու իրավունքների պաշտպանը անթույլատրելի է համարում ատելության խոսքի ցանկացած դրսևորում ու ընդգծում է, որ հանրային իշխանության ներկայացուցիչները, քաղաքական, հանրային գործիչները, զանգվածային լրատվության միջոցները, մասնագիտական համայնքները պետք է ակտիվ դերակատարություն ունենան ինչպես արգելված խոսքի տեսակները բացառելու, այնպես էլ այդպիսի խոսքին հակազդելու տեսանկյունից՝ որպես ուղենիշ ունենալով հասարակությունում բազմազանության նկատմամբ հարգանքի արմատավորումը, խտրականության բացառումը, հանրային համերաշխության և առողջ հանրային դիսկուրսի ձևավորումը:

Այս առումով Պաշտպանը մտահոգիչ է համարում այն, որ խտրական, ատելություն սերմանող, պիտակավորող ու թիրախավորող խոսքի տեսակներ օգտագործում են գրեթե բոլոր դերակատարները, իսկ հանրային ընկալման համատեքստում նման խոսքի դրսևորումները հաճախ կամ չեն ընկալվում որպես խնդրահարույց և չեն արժանանում հանրային անհրաժեշտ հակազդեցության, կամ հակազդեցությունը իրականացվում է պիտակավորող ու խտրական այլ ձևակերպումներով, տեղեկատվությունը ձևախեղելով, ինչը չի կարող ունենալ որևէ արդարացում և պետք է համանմանորեն արժանանա հակազդեցության:

Ավելին, արձանագրվել են նաև դեպքեր, երբ, օրինակ, երեխայի իրավունքների պաշտպանության ոլորտում ՄԻՊ գործունեությունը խոչընդոտելու ու այդ ոլորտի առնչությամբ ձևախեղված հանրային ընկալումներ ձևավորելու հանգամանքին նպաստել են մասնագիտական հանրույթի ներկայացուցիչները:

Վերը շարադրվածը նկատի ունենալով՝ Մարդու իրավունքների պաշտպանը կոչ է անում բոլոր դերակատարներին՝ քաղաքական ու ցանկացած այլ հանրային քննարկում իրականացնելիս բացառել անձի կամ անձանց խմբի նկատմամբ որևէ հիմքով խտրական, ատելության խոսույթ, ձևախեղված տեղեկատվության տարածում, ինչպես նաև պահանջում է հանրային դիսկուրսն ու իրավական բոլոր գործընթացներն իրականացնել մարդու իրավունքների չափանիշների անշեղ պահպանմամբ:

Միաժամանակ, խիստ մտահոգիչ է այն, որ 2025 թվականին արձանագրվել են ատելության հրահրման և բռնության կոչերի քննության քրեադատավարական պրակտիկայի՝ միջազգային չափանիշներին համապատասխանության հետ կապված խնդիրներ:

Առանձին դեպքերում Մարդու իրավունքների պաշտպանը հանդես է եկել նաև հրապարակային հայտարարությամբ՝ հատուկ ընդգծելով, որ որևէ կերպ չեն կարող արդարացվել հասարակության որևէ խմբի, այդ թվում՝ քաղաքական գործիչների, իշխանության ներկայացուցիչների, պետական ծառայողների նկատմամբ պաշտպանվող որևէ հատկանիշով պայմանավորված՝ ատելության խոսքի, վիրավորանքների, ծաղրի կամ

զրպարտության տարածումը ու դրա միջոցով կատարվող հարձակումները: Դրանք ոչ միայն չեն նպաստում պատշաճ քաղաքական երկխոսությանը, այլև հանգեցնում են բազմաթիվ հակահրավական հետևանքների: Այնուամենայնիվ, նույնիսկ այս իրավիճակում, նմանատիպ խոսքից պաշտպանության նպատակով քրեահրավական կառուցակարգերի գործադրումը պետք է ունենա ակնհայտ ծանրակշիռ պատճառներ և համապատասխանի միջազգային չափանիշներին[277]:

Ընդ որում, ատելության հրահրման և բռնության կոչերի դեպքերի քննության միջազգային չափանիշներին, Հայաստանում ատելության հրահրման և բռնության կոչերի քննության պրակտիկային ու առկա խնդիրներին Մարդու իրավունքների պաշտպանն անդրադարձել է դեռևս 2023 թվականին հրապարակված իր՝ «Ատելության հրահրման և բռնության կոչերի դեպքերի քննությունը Հայաստանի Հանրապետության քրեադատավարական համակարգում» վերտառությամբ ուսումնասիրության շրջանակներում՝ անդրադառնալով ինչպես խնդրին վերաբերելի միջազգային չափանիշներին, այնպես էլ Հայաստանում առկա պրակտիկայի խնդիրներին:

Ատելության խոսքի քննությանը վերաբերելի միջազգային իրավական չափանիշներով մանրամասն ամրագրվում են այն բոլոր հանգամանքները, որոնք պետք է հաշվի առնել ատելության հրահրման պարագայում կարծիքի արտահայտման ազատության սահմանափակումների իրավաչափությունը գնահատելիս:

Ըստ այդմ՝ Մարդու իրավունքների պաշտպանն ընդգծում է, որ հանրային շահին առնչվող, հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերի շուրջ արված հայտարարությունների, հրապարակումների, տարածված նյութերի, քաղաքական բանավեճի, քաղաքական բնույթի քննադատության և երկխոսության պարագայում խոսքի իրավաչափ սահմանափակման շրջանակը բավականին նեղ է, և այդ սահմանափակումը, հատկապես եթե այն իրականացվում է քրեահրավական կառուցակարգերով, պետք է ունենա ակնհայտ ծանրակշիռ պատճառներ:

Ավելին, քաղաքական գործիչներին և պետական իշխանությանն ուղղված քննադատության թույլատրելի շրջանակը ավելի լայն է, քան մասնավոր անձանց պարագայում, և պետությունը պետք է զգուշավորություն ցուցաբերի նրանց պաշտպանության նպատակով քրեահրավական միջոցների դիմելու հարցում, հատկապես երբ առկա են այլ միջոցներ, որոնցով հնարավոր է արձագանքել անարդարացի քննադատությանը:

Միջազգային չափանիշների համաձայն՝ ատելության կամ բռնության հրահրման փաստի առկայության վերաբերյալ դատողություններ անելիս պետք է հաշվի առնել մի շարք հանգամանքներ, ինչպես, օրինակ՝ այն հանգամանքը, թե ում է ուղղված խոսքը, որքանով է այդ խոսքի հասցեատերը կամ թիրախավորված խումբը խոցելի տվյալ հասարակությունում: Օրինակ՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, իր որոշումներից մեկով անդրադառնալով ոստիկանությանն ուղղված անվայելուչ, նսեմացնող և անհարգալից եզրութաբանությամբ քննադատությանը, կարևորելով ոստիկանների պաշտպանության համակարգի անհրաժեշտությունը, միևնույն ժամանակ, ընդգծել է, որ վիրավորանքների, ծաղրի կամ զրպարտության միջոցով կատարվող հարձակումներից քրեահրավական կառուցակարգերով պաշտպանության համատեքստում ոստիկանությունը, որպես իրավապահ մարմին, չի կարող դիտարկվել որպես չպաշտպանված փոքրամասնություն կամ ճնշումների և անհավասարության պատմություն

[277] Տե՛ս, օրինակ, https://ombuds.am/am/site/ViewNews/3261 https://ombuds.am/am/site/ViewNews/3546 հրապարակումը, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

ունեցող խումբ, կամ նախապաշարմունքների, թշնամանքի և խտրականության ենթարկվող խումբ կամ որևէ այլ պատճառով խոցելի խումբ:

Տարվա ընթացքում արձանագրվել են արգելված խոսքի տեսակների համար քրեական պատասխանատվության գործիքների կիրառման դեպքեր, որոնց պարագայում՝ գործը դատաքննության փուլում գտնվելու հանգամանքով պայմանավորված, Մարդու իրավունքների պաշտպանը ձեռնպահ է մնացել գործերի քննությանը որևէ կերպ միջամտելու դրսևորումներից և պահպանելով համապատասխան արգելքները՝ եզրահանգումներ չի կատարել կոնկրետ գործերի քննության առնչությամբ: Միևնույն ժամանակ, Պաշտպանը, որպես համակարգային խնդիր է արձանագրել այն, որ նման գործերով սովորաբար իրավասու մարմինների կողմից չի վարվում այնպիսի հանրային հաղորդակցություն, որը ցույց կտար, թե ինչով է խոսքի կոնկրետ տեսակը հատել հանրային վտանգավորության այն շեմը, որի համար պետք է կիրառվի քրեական պատասխանատվություն, այլ ոչ պատասխանատվության այլ մեխանիզմներ՝ արդյունքում ձևավորելով նաև հայեցողական արդարադատության առկայության տպավորություն:

Կարծիքի արտահայտման ազատության երաշխավորման տեսանկյունից խիստ մտահոգիչ է այն, որ 2025 թվականին շարունակել են արդիական մնալ հանրային մասնակցության դեմ ռազմավարական հայցերի (SLAPP) կանխարգելման արդյունավետ կառուցակարգերի բացակայության հետ կապված խնդիրները: Զանգվածային լրատվության միջոցներով հրապարակված, քաղաքացիական հասարակության տրամադրած տեղեկությունների համաձայն՝ 2025 թվականին շարունակվել են դատարաններ ներկայացվել հանրային մասնակցության դեմ ռազմավարական հայցեր:

Նշվածի առնչությամբ Մարդու իրավունքների պաշտպանը խիստ կարևորում է գործուն միջոցների ձեռնարկումը՝ հանրային մասնակցության դեմ ռազմավարական հայցերի (SLAPP) կանխարգելման արդյունավետ կառուցակարգերի ներդրման ուղղությամբ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է

- ✓ ***գործուն միջոցներ ձեռնարկել՝ ինչպես արգելված խոսքի տեսակները բացառելու, այնպես էլ այդպիսի խոսքին հակազդելու տեսանկյունից՝ որպես ուղենիշ ունենալով հասարակությունում բազմազանության նկատմամբ հարգանքի արմատավորումը, խտրականության բացառումը, հանրային համերաշխության և առողջ հանրային դիսկուրսի ձևավորումը,***
- ✓ ***արգելված խոսքի տեսակները բացառելու նպատակով բարձրացնել հանրային իշխանության ներկայացուցիչների, քաղաքական, հանրային գործիչների, զանգվածային լրատվության միջոցների, մասնագիտական համայնքների իրազեկվածությունը,***
- ✓ ***միջոցներ ձեռնարկել ատելության հրահրման, բռնության կոչերի, ինչպես նաև խոսքի արգելված այլ տեսակներին առնչվող գործերի՝ միջազգային չափանիշներին համապատասխանող քննության իրականացումը երաշխավորելու ուղղությամբ՝ միաժամանակ իրավասու մարմինների կողմից այդպիսի գործերով վարելով պատշաճ հանրային հաղորդակցություն,***
- ✓ ***միջոցներ ձեռնարկել հանրային մասնակցության դեմ ռազմավարական հայցերի (SLAPP) կանխարգելման արդյունավետ կառուցակարգերի ներդրման ուղղությամբ:***

ԳԼՈՒԽ 2. ԼՐԱԳՐՈՂԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՆԽՈՉԸՆԴՈՏ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ՝ ՈՐՊԵՍ ԿԱՐԾԻՔԻ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐ

Տեղեկատվություն ստանալու իրավունքի ու կարծիքի արտահայտման ազատության երաշխավորման տեսանկյունից խիստ կարևոր է լրագրողների անխոչընդոտ մասնագիտական աշխատանքի ապահովումը:

Այս համատեքստում Մարդու իրավունքների պաշտպանը խիստ կարևորում է, որ զանգվածային լրատվության միջոցները բարենպաստ միջավայր ունենան իրենց գործունեությունն իրականացնելու համար: Այդ առումով առանցքային է, որպեսզի պետական մարմիններն ու պաշտոնատար անձինք՝ որպես հանրային իշխանության կրողներ, ակտիվ քայլեր ձեռնարկեն նման միջավայրի ձևավորման նպատակով: Ընդ որում, խիստ կարևոր է նաև այն, որ լրագրողները, իրենց մասնագիտական գործունեությունն իրականացնելիս, պաշտպանված լինեն ցանկացած տեսակի անհարկի միջամտությունից կամ ճնշումից:

Հարկ է փաստել, սակայն, որ 2025 թվականի ընթացքում արձանագրվել են լրագրողների գործունեության անխոչընդոտ իրականացման առնչությամբ մի շարք խնդրահարույց դեպքեր:

Այսպես, օրինակ, 2025 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում սոցիալական ցանցերի և զանգվածային լրատվության միջոցների հրապարակումների մշտադիտարկման արդյունքում արձանագրվել է Ազգային ժողովում լրագրողների հետ տեղի ունեցած միջադեպը, որի առնչությամբ Պաշտպանը հանդես է եկել հրապարակային հայտարարությամբ՝ ընդգծելով, որ խորհրդարանում լրագրողների գործունեության համար սահմանված կանոնները չպետք է վերածվեն նրանց իրավունքների սահմանափակման կամ մասնագիտական գործունեության անհարկի միջամտության միջոցի: Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանը հարցի առնչությամբ կարևորել է պետության կողմից բնականոն և անխոչընդոտ լրատվական գործունեության ապահովումը: Իրավասու մարմինները պետք է պատշաճ քննարկման առարկա դարձնեն ցանկացած դեպք, որը կարող է վկայել լրագրողի մասնագիտական գործունեությանը խոչընդոտելու կամ խոսքի ազատության անհարկի ու ոչ իրավաչափ սահմանափակման մասին:

Խիստ մտահոգիչ է, որ 2025 թվականին ՄԻՊ աշխատակազմի մշտադիտարկման արդյունքում արձանագրվել է Ոստիկանության ծառայողի կողմից լրագրող Մերի Մանուկյանի մասնագիտական գործունեությունը առերևույթ խոչընդոտելու և նրա նկատմամբ բռնություն կիրառելու դեպք: Նշված հարցի առնչությամբ Պաշտպան Անահիտ Մանասյանը խիստ դատապարտել է Ոստիկանության ծառայողի նման վարքագիծը, լրագրողի նկատմամբ բռնությունը և ընդգծել է, որ լրագրողների համար պետք է երաշխավորված լինի մասնագիտական գործունեությունն իրականացնելու համար պատշաճ միջավայր: Պաշտպանը պահանջել է, որպեսզի իրավասու մարմինները պատշաճ քննություն իրականացնեն նշված դեպքով[278]: «ԴատաԼեքս» էլեկտրոնային կառավարման և տեղեկությունների տրամադրման հանրային տեղեկատվական համակարգում ներկայացված տվյալների համաձայն՝ քրեական գործը գտնվում է դատական վարույթում:

[278] Տեղեկատվությունը հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3420 հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի մշտադիտարկման արդյունքում տեղեկություն է ստացվել առ այն, որ 2025 թվականին բռնության է ենթարկվել լրագրող, Երևանի մամուլի ակումբի ներկայացուցիչ Հակոբ Կարապետյանը: Մարդու իրավունքների պաշտպանը հարցի առնչությամբ հանդես է եկել հրապարակային հայտարարությամբ՝ ընդգծելով, որ բռնության ցանկացած դրսևորում խստորեն անընդունելի և դատապարտելի է: Յուրաքանչյուր դեպք պետք է արժանանա պատշաճ իրավական գնահատականի, իսկ մեղավորները ենթարկվեն պատասխանատվության: Պետությունն այս առումով ունի հստակ իրավական պարտավորություններ: Հատկապես կարևոր է մասնագիտական, այդ թվում՝ լրագրողական գործունեություն իրականացնող անձանց անխոչընդոտ, էթիկայի չափանիշներին համապատասխանող գործունեությունը ու դրա երաշխավորումը: ՄԻՊ աշխատակազմում կատարված ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ նշված դեպքի առթիվ նախաձեռնվել է քրեական վարույթ և իրականացվում է նախաքննություն: Կարևորելով նշված հանգամանքը՝ Մարդու իրավունքների պաշտպանն առանցքային է համարում նմանատիպ դեպքերով արագ, օբյեկտիվ ու բազմակողմանի քննության իրականացումն ու հանրությանը այդ առնչությամբ թույլատրելի ծավալի տեղեկատվության ներկայացումը[279]:

Գլխավոր դատախազության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2025 թվականի ընթացքում լրագրողների մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելու առիթով նախաձեռնվել է 4 քրեական վարույթ:

Պաշտպանը ընդգծում է, որ պետությունը պետք է հստակ և նպատակային քայլեր ձեռնարկի՝ լրատվամիջոցների բնականոն գործունեության համար բարենպաստ միջավայրի և լրագրողների անվտանգության լիարժեք ապահովման ուղղությամբ: Մասնավորապես, անհրաժեշտ է մշակել և գործադրել այնպիսի կառուցակարգեր, որոնք կերաշխավորեն լրատվամիջոցների ազատ և անվտանգ գործունեությունը, ինչպես նաև կկանխարգելեն լրագրողների իրավունքների խախտումները և կապահովեն պատասխանատվության անխուսափելիությունը նման դեպքերում:

Ներկայացվածից բացի, լրագրողի մասնագիտական օրինական գործունեության երաշխավորման համատեքստում Պաշտպանի ուշադրության ներքո են գտնվել նաև լրագրողների հավատարմագրման դադարեցման հետ կապված հարցերը՝ լրագրողի մասնագիտական գործունեությունը խոչընդոտելու ռիսկի տեսանկյունից: Այսպես, 2025 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի ուշադրության ներքո է գտնվել «Ժողովուրդ» օրաթերթի լրագրող Քնարիկ Մանուկյանի և «Armlur» լրատվական կայքի լրագրող Սոնա Գրիգորյանի՝ Ազգային ժողովում հավատարմագրումների դադարեցման հարցը: Հավատարմագրումների դադարեցման հարցի կապակցությամբ Պաշտպանի աշխատակազմի կողմից պարզաբանումներ են պահանջվել իրավասու մարմնից:

Ի պատասխան՝ Պաշտպանը տեղեկացվել է, որ «Armlur» լրատվական կայքի լրագրող Սոնա Գրիգորյանը 2025 թվականի դեկտեմբերի 17-ին, իսկ «Ժողովուրդ» օրաթերթի լրագրող Քնարիկ Մանուկյանը 2025 թվականի դեկտեմբերի 18-ին նախազգուշացվել են Ազգային ժողովի խորհրդի 2024 թվականի դեկտեմբերի 2-ի թիվ 062-Լ որոշմամբ հաստատված Ազգային ժողովում լրագրողների հավատարմագրման կարգի խախտման մասին, այնուհետև կրկին թույլ են տվել կարգի խախտում, որից հետո լրագրողների հավատարմագրումը վաղաժամկետ դադարեցվել է:

[279] Տեղեկատվությունը հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3514 հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

Մարդու իրավունքների պաշտպանը խիստ կարևորում է լրագրողներ-պետական մարմիններ պատշաճ հարաբերությունների և հավատարմագրման ինստիտուտին առնչվող չափանիշների պահպանումը, և նշված ինստիտուտին անդրադարձը տարեկան հաղորդման շրջանակներում առանցքային է համարում ներպետական օրենսդրությունն ու պրակտիկան միջազգային չափանիշներին համապատասխան զարգացնելու տեսանկյունից:

Հարկ է ընդգծել, որ միջազգային իրավական չափանիշներով ամրագրվում է այն գաղափարը, որ լրագրողների հավատարմագրումն ունի առավելապես վերջիններիս մասնագիտական գործունեության մատչելիության ապահովման դեր: Այն ոչ մի պարագայում չպետք է հանդես գա որպես լրագրողի մասնագիտական գործունեությունը սահմանափակող գործիք, իսկ հավատարմագրման մերժումը կամ դադարեցումը՝ որպես սանկցիա:

Հավատարմագրումը չպետք է կիրառվի որպես գործիք զանգվածային լրատվության միջոցների մասնագիտական գործունեությունը և տեղեկատվության մատչելիության պահանջի իրացումը խոչընդոտելու համար: Ավելին, հավատարմագրման վերաբերյալ կարգավորումները չպետք է դիտարկվեն որպես լրագրողների՝ իրենց մասնագիտական գործունեությունն իրականացնելու նպատակով տրվող պետության թույլտվություն: Այլ կերպ, հավատարմագրումը պետք է դիտարկվի լրագրողական գործունեության համար ոչ թե որպես սահմանափակող, այլ «թույլատրող» միջոց[280]:

ԵԱՀԿ չափանիշների համաձայն՝ հավատարմագրման կանոնները պետք է լինեն հստակ ու թափանցիկ: Դա ենթադրում է նաև հավատարմագրման մերժման ու դադարեցման օրինական հիմքերի ամրագրում: Հավատարմագրումը չպետք է ծառայի որպես բովանդակությունը վերահսկելու միջոց: Ավելին, այն չպետք է կիրառվի որպես սանկցիա կամ սահմանափակում՝ ի պատասխան մեդիա քարոզչության կամ այլ ճնշումների[281]:

Այս համատեքստում Պաշտպանը ևս մեկ անգամ ընդգծում է, որ պետական մարմինների ու լրագրողների միջև հանրային հաղորդակցության ու փոխգործակցության հարցերը, պետական մարմինների գործունեության հաշվետվողականությունն ու թափանցիկությունը, լրագրողների և լրատվամիջոցների մասնագիտական պաշտպանված և արդյունավետ աշխատանքը Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի մշտական ուշադրության ներքո գտնվող հարցեր են:

Պաշտպանն ընդգծում է, որ անհրաժեշտ է ապահովել մի կողմից լրագրողների՝ պատասխանատու լրագրության կանոնները պահպանելու ու «մի՛ վնասիր» սկզբունքով առաջնորդվելու պահանջի, մյուս կողմից՝ պետության կողմից լրատվական գործունեության համար լիովին բարենպաստ միջավայրի առկայությունը և լրագրողների անվտանգությունը երաշխավորելուն ուղղված կառուցակարգեր ներդնելու ու գործարկելու պարտականության պատշաճ կատարումը:

Որպես ոլորտում առկա ընդհանուր խնդիր՝ Պաշտպանը խնդրահարույց է համարում այն հանգամանքը, որ ներպետական պատշաճ մեխանիզմների բացակայության

---

280 Տե՛ս «Տարշաշագ ա սաբադշագյոգոկերտ»-ն ընդդեմ Հունգարիայի (TÁRSASÁG A SZABADSÁGJOGOKÉRT V. HUNGARY) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2009 թվականի հուլիսի 14-ի վճիռը, գանգատ թիվ 37374/05, կետ 38, հասանելի է https://hudoc.echr.coe.int/eng?i=001-92171 հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

281 Հասանելի է https://www.osce.org/files/f/documents/2/8/245146.pdf հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

պատճառով՝ պաշտոնատար անձ-լրագրող յուրաքանչյուր միջադեպին հաջորդում են փոխադարձ մեղադրանքները էթիկայի նորմերի պահպանման հարցի շուրջ:

Մարդու իրավունքների պաշտպանն ընդգծում է, որ պետության պարտավորությունն է՝ մշակել և գործադրել ինչպես պաշտոնատար անձանց, այնպես էլ լրագրողների էթիկային առնչվող հարցերի քննարկման պատշաճ կառուցակարգեր, որպիսիք Հայաստանի Հանրապետությունում կա՛մ բացակայում են, կա՛մ պատշաճ չեն գործադրվում:

Պաշտպանը ընդգծում է, որ ինչպես պաշտոնատար անձանց կողմից լրագրողների հետ պատշաճ հաղորդակցությունը, այնպես էլ «պատասխանատու լրագրության» սկզբունքների պահպանումը (անկախության, լրագրողական էթիկայի, ներկայացվող տեղեկատվության ճշգրտության, չեզոքության, հաշվետվողականության և այլ վերաբերելի սկզբունքների պահպանման տեսանկյունից) բացառիկ կարևորություն ունեն քաղաքացիների տեղեկատվություն ստանալու և կարծիքի արտահայտման ազատության տեսանկյունից:

Լրատվամիջոցների ազատ, անվտանգ և պաշտպանված գործունեությունը կարևոր նախապայման է հասարակության իրազեկվածության և քննադատական մտածողության զարգացման համար:

Վերոգրյալից հետևում է, որ լրագրողական գործունեության ցանկացած սահմանափակում պետք է լինի իրավաչափ, իսկ նման սահմանափակման ցանկացած հնարավորություն պետք է լինի կանխատեսելի և որոշակի: Այդ առումով կարևոր է քննարկվող հիմնախնդրի կանոնակարգմանն ուղղված կոնկրետ իրավակարգավորումների առկայությունն ու պահպանումը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է

- ✓ ***հստակ և նպատակային քայլեր ձեռնարկել՝ ուղղված լրատվամիջոցների բնականոն գործունեության համար բարենպաստ միջավայրի և լրագրողների անվտանգության լիարժեք ապահովման ուղղությամբ: Մասնավորապես, անհրաժեշտ է մշակել և գործադրել այնպիսի կառուցակարգեր, որոնք կերաշխավորեն լրատվամիջոցների ազատ և անվտանգ գործունեությունը, ինչպես նաև կկանխարգելեն լրագրողների իրավունքների խախտումները և կապահովեն պատասխանատվության անխուսափելիությունը նման դեպքերում:***
- ✓ ***մշակել և գործադրել ինչպես պաշտոնատար անձանց, այնպես էլ լրագրողների էթիկային առնչվող հարցերի քննարկման պատշաճ կառուցակարգեր:***
- ✓ ***միջոցներ ձեռնարկել բացառելու՝ լրագրողների հավատարմագրումը, որպես լրագրողի մասնագիտական գործունեությունը սահմանափակող գործիք, իսկ հավատարմագրման մերժումը կամ դադարեցումը՝ որպես սանկցիա կիրառելու ցանկացած դրսևորում:***
- ✓ ***իրականացնել շարունակական միջոցառումներ՝ ուղղված բոլոր դերակատարների՝ կարծիքի ազատության երաշխավորման վերաբերյալ առկա միջազգային ու ներպետական չափանիշերի առնչությամբ իրազեկվածության մակարդակի բարձրացմանը:***

ԳԼՈՒԽ 3. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԻՐԱՌ ՊՐԱԿՏԻԿԱՅՈՒՄ ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐ

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ստացված 91 դիմումների ու բողոքների, սոցիալական ցանցերի, զանգվածային լրատվության միջոցների մշտադիտարկումն ու քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների կողմից բարձրացված խնդիրների ուսումնասիրությունը վկայում են, որ 2025 թվականին շարունակել են արդիական մնալ տեղեկատվության ազատության երաշխավորման առնչությամբ նախկինում արձանագրված խնդիրները:

Մասնավորապես, արձանագրվել է, որ 2025 թվականին շարունակել է արդիական մնալ միջազգային չափորոշիչներին համապատասխան տեղեկատվության ազատության լիազոր մարմնի բացակայության հետ կապված նախկինում բազմիցս բարձրաձայնված խնդիրը:

ՀՀ արդարադատության նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ դիտարկվում է անձնական տվյալների պաշտպանության ոլորտում նոր լիազոր մարմնի ստեղծման շրջանակում տեղեկատվության ազատության երաշխավորման ոլորտում լիազորությունների նախատեսում:

Հարցի առնչությամբ Մարդու իրավունքների պաշտպանը խիստ կարևորում է, որ նշված մարմնի ստեղծման առնչությամբ իրականացվեն գործուն միջոցառումներ, իսկ ստեղծվող մարմինը համապատասխանի միջազգային չափանիշներին, ունենա ինստիտուցիոնալ անկախություն, օժտված լինի անհրաժեշտ բոլոր լիազորություններով, մարդկային ու ֆինանսական բավարար ռեսուրսներով:

Ընդ որում, նշված պահանջը բխում է նաև մի շարք միջազգային, այդ թվում՝ Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբի (ԳՐԵԿՈ) քսաներեքերորդ ընդհանուր գործունեության զեկույցում նշված հանձնարարականներից[282]:

2025 թվականին շարունակել են արդիական մնալ ստացված հարցումների վերաբերյալ վիճակագրական և ամփոփ տվյալների մշակման միասնական ձևաչափի ու մեթոդաբանության բացակայության հետ կապված խնդիրները: Հարցի առնչությամբ Պաշտպանը խիստ կարևորում է համապատասխան ձևաչափի ու մեթոդաբանության մշակումն ու դրա գործնական կիրառումն երաշխավորող կառուցակարգերի ներդրմանն ուղղված միջոցների ձեռնարկումը:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ստացված դիմումների ու բողոքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առկա են տեղեկատվություն ստանալու հարցումներին, այդ թվում՝ լրագրողների հարցումներին պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից թերի կամ ոչ ամբողջական պատասխաններ ներկայացնելու, ժամկետների խախտմամբ պատասխանելու կամ ընդհանրապես չպատասխանելու հետ կապված խնդիրներ: Չնայած այն հանգամանքին, որ ստացված դիմումների ու բողոքների քննարկման արդյունքում Պաշտպանի միջամտությամբ այդ խնդիրների հիմնական մասը լուծվում է՝ Մարդու իրավունքների պաշտպանը մտահոգիչ է համարում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների մոտ ձևավորված նման գործելակերպն ու խիստ կարևորում է նշված համակարգային բնույթ ունեցող խնդրի լուծման ուղղությամբ անհետաձգելի միջոցների ձեռնարկումը:

[282] Տեղեկատվությունը հասանելի է https://rm.coe.int/general-activity-report-2022-eng-web-2769-5632-1800-1/1680ab9bc1 հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է.

- ✓ *գործուն միջոցներ ձեռնարկել՝ միջազգային չափորոշիչներին համապատասխանող, ինստիտուցիոնալ անկախությամբ ու անհրաժեշտ լիազորություններով, մարդկային ու ֆինանսական բավարար ռեսուրսներով օժտված լիազոր մարմնի ստեղծման ուղղությամբ,*
- ✓ *գործուն միջոցներ ձեռնարկել՝ ստացված հարցումների վերաբերյալ վիճակագրական և ամփոփ տվյալների մշակման միասնական ձևաչափի ու մեթոդաբանության մշակման ու դրա գործնական կիրառումն երաշխավորող կառուցակարգերի ներդրման ուղղությամբ,*
- ✓ *միջոցներ ձեռնարկել՝ բացառելու տեղեկատվություն ստանալու հարցումներին, այդ թվում՝ լրագրողների հարցումներին պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից թերի կամ ոչ ամբողջական պատասխաններ ներկայացնելու, ժամկետների խախտմամբ պատասխանելու կամ ընդհանրապես չպատասխանելու դեպքերը,*
- ✓ *իրականացնել շարունակական միջոցառումներ՝ ուղղված բոլոր դերակատարների՝ տեղեկատվություն ստանալու իրավունքի երաշխավորման վերաբերյալ առկա միջազգային ու ներպետական չափանիշերի առնչությամբ իրազեկվածության մակարդակի բարձրացմանը:*

ԲԱԺԻՆ 10. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Անձնական տվյալների պաշտպանության իրավունքը սահմանվել է Սահմանադրությամբ, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայով, «Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին» կոնվենցիայով, «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով և այլ միջազգային ու ներպետական իրավական ակտերով: Կարևոր է նաև այն հանգամանքը, որ 2025 թվականի դեկտեմբերին ընդունվել են «Կիբեռանվտանգության մասին», «Հանրային տեղեկությունների մասին» օրենքները, ինչպես նաև հարակից օրենքների փաթեթը:

Մարդու իրավունքների պաշտպանը 2025 թվականին շարունակել է մշտադիտարկել և տարբեր ձևաչափերով հասցեավորել անձնական տվյալների պաշտպանության ոլորտում առկա խնդիրները, ներկայացնել դրանց լուծմանն ուղղված առաջարկություններ, իրականացնել իրազեկման միջոցառումներ՝ այդ գործընթացում ներգրավելով երեխաների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների և այլն:

Այսպես, օրինակ, 2025 թվականի նոյեմբերի 26-ին տեղի է ունեցել Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր երեխաների իրավունքների պաշտպանության հարցերով հասարակական խորհրդի հերթական առցանց նիստը, որի շրջանակներում առանձնահատուկ ուշադրություն է դարձվել երեխայի անձնական տվյալների պաշտպանությանն առնչվող հարցերին: Մասնավորապես, ներկայացվել են այն պարտադիր ընթացակարգերը, որոնք պետք է պահպանվեն երեխայի մասնակցությամբ լուսանկարների, տեսանյութերի, հարցազրույցների և այլ տվյալների հավաքագրման, մշակման, տարածման և հրապարակման ընթացքում՝ ապահովելով երեխայի անձնական տվյալների անվտանգությունն ու գաղտնիությունը[283]:

Դեկտեմբերի 23-ին Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանի նախաձեռնությամբ կազմակերպվել է վերապատրաստման դասընթաց՝ նվիրված մարդկանց թրաֆիքինգի կամ աշխատանքային շահագործման՝ ներառյալ երեխաների թրաֆիքինգի կամ շահագործման հիմնախնդիրներին: Դասընթացին մասնակցել են զանգվածային լրատվության միջոցների, Հանրային պաշտպանի գրասենյակի, ինչպես նաև Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչներ: Դասընթացի ընթացքում հատուկ անդրադարձ է կատարվել երեխաներին առնչվող նյութերի լուսաբանման գործընթացում անձնական տվյալների պաշտպանության երաշխավորման հետ կապված խնդիրներին և այլն[284]:

Հաշվի առնելով անձնական տվյալների պաշտպանության ոլորտում գործուն միջոցների ձեռնարկման անհրաժեշտությունը՝ Մարդու իրավունքների պաշտպանը 2025 թվականին հրապարակել է «Անձնական տվյալների պաշտպանության ոլորտում

[283] Տեղեկատվությունը հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3618 հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

[284] Տեղեկատվությունը հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3639 հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

Հայաստանի Հանրապետությունում առկա համակարգային խնդիրների վերաբերյալ» վերտառությամբ արտահերթ զեկույցը[285]:

Մինչդեռ՝ 2025 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ստացված բողոքների և դիմումների ուսումնասիրություններն ու քննարկումները, մշտադիտարկման արդյունքները վկայում են, որ շարունակում են արդիական մնալ անձնական տվյալների պաշտպանության ոլորտում նախկին տարեկան հաղորդումներում ու արտահերթ զեկույցներում ներկայացված խնդիրները[286]:

Մասնավորապես, արձանագրվել է, որ 2025 թվականին, ի թիվս այլնի, շարունակել են արդիական մնալ.

- անձնական տվյալների պաշտպանության ոլորտում անկախ ու արդյունավետ վերահսկողական մեխանիզմի բացակայության հետ կապված խնդիրը,
- զանգվածային լրատվության միջոցներով, տեղեկատվական հաղորդակցման ցանցերում անձնական տվյալների մշակման և հրապարակման հետ կապված խնդիրները,
- «ԴատաԼեքս» էլեկտրոնային կառավարման և տեղեկությունների տրամադրման հանրային տեղեկատվական համակարգում անձնական տվյալների մշակման և հրապարակման հետ կապված խնդիրները:

1. Անձնական տվյալների պաշտպանության ոլորտում անկախ ու արդյունավետ վերահսկողական մեխանիզմի բացակայության հետ կապված խնդիր

Անձնական տվյալների պաշտպանության ոլորտում անկախ ու արդյունավետ վերահսկողական մեխանիզմի ներդրման անհրաժեշտությանն ու կարևորությանը Մարդու իրավունքների պաշտպանն անդրադարձել է նախորդ տարիների տարեկան հաղորդումներում ու հրապարակային զեկույցում: Դրանց շրջանակում միջազգային փաստաթղթերի ուսումնասիրության, միջազգային լավագույն փորձի ու մշտադիտարկումների արդյունքում արձանագրված խնդիրների համադրությամբ Մարդու իրավունքների պաշտպանը հատուկ ընդգծել է, որ անձնական տվյալների պաշտպանություն իրականացնող անկախ մարմնի առկայությունը կարևոր նախապայման է անկողմնակալ որոշումների կայացման, անձնական տվյալների նկատմամբ անօրինական հասանելիության դեպքերի նվազեցման, արդյունավետ վերահսկողության իրականացման ու անձնական տվյալների պաշտպանության իրավունքի խախտումների կանխման նպատակի իրականացման հարցում:

ՀՀ արդարադատության նախարարության ներկայացրած տեղեկատվության համաձայն՝ 2025 թվականի ընթացքում նախարարության կողմից մշակվել է անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնի անկախության հայեցակարգը (այսուհետ՝ Հայեցակարգ), որը 2025 թվականի հոկտեմբերի 31-ին ներկայացվել է ՀՀ վարչապետին և քննարկման արդյունքում հայեցակարգային ուղղությունները հաստատվել են: Հայեցակարգի համաձայն՝ ընտրվել է անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնի գործառույթների պատշաճ իրականացման և անկախության ապահովման պահանջներին համապատասխանող՝ ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված

[285] Տեղեկատվությունը հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3335 հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

[286] Տեղեկատվությունը հասանելի է https://ombuds.am/images/files/4d1335361f1f7e9fbcc1cfc10679701e.pdf հղումով, էջ 498-509, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

ինքնավար մարմնի կարգավիճակը: Հայեցակարգով նախատեսված միջոցառումների իրագործման համար մշակվել է նաև համապատասխան գործողությունների իրականացման ժամանակացույց: Նախարարության կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն՝ նախատեսվում է օրենսդրական փաթեթի մշակումն ու ընդունումն ավարտին հասցնել մինչև 2026 թվականի 4-րդ եռամսյակ, իսկ հանձնաժողովի անդամների ընտրությունը, ռեսուրսների տրամադրումը, ինչպես նաև ենթաօրենսդրական ակտերի մշակումը՝ մինչև 2027 թվականի 1-ին եռամսյակ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Մարդու իրավունքների պաշտպանը ևս մեկ անգամ վերահաստատում է անձնական տվյալների պաշտպանության ոլորտում անկախ ու արդյունավետ վերահսկողական մեխանիզմի ստեղծման անհրաժեշտությունն ու առաջարկում է շարունակել ձեռնարկված միջոցառումների իրականացումը՝ միջազգային չափորոշիչներին համապատասխան մեխանիզմի ներդրման ուղղությամբ:

2. Զանգվածային լրատվության միջոցներով, տեղեկատվական հաղորդակցման ցանցերում անձնական տվյալների մշակման և հրապարակման հետ կապված խնդիրներ

2025 թվականի մշտադիտարկման, ստացված դիմումների ու բողոքների ուսումնասիրության ու քննարկման արդյունքները վկայում են զանգվածային լրատվության միջոցներով ու տեղեկատվական հաղորդակցման ցանցերում անձնական տվյալների պաշտպանության իրավունքի բազմաթիվ խախտումների ու դրանք կանխարգելելու ուղղությամբ բավարար քայլերի բացակայության մասին:

Մասնավորապես, արձանագրվել է, որ անձնական տվյալների պաշտպանության իրավունքի երաշխավորման հետ կապված խնդիրները շարունակում են մնալ արդիական, բայց, հատկապես, մեծ ծավալներ ու տարածում են ստանում հանրային հնչեղություն ունեցող դեպքերով: Խնդրահարույց է, հատկապես, այն, որ անձնական տվյալների՝ միջազգային չափանիշներին հակասող եղանակով տարածման դեպքեր հանդիպում են հատկապես երեխաներին առնչվող հրապարակումներում, որոնք իրականացվում են նաև մասնագիտական համայնքները ներկայացնող դերակատարների կողմից:

Նշվածի առնչությամբ հատկանշական է, որ օրենքով սահմանված կարգի խախտմամբ անձնական տվյալների հավաքագրումը կամ օրենքով սահմանված կարգի խախտմամբ անձնական տվյալների տարածումը ոչ միայն հակասում են Սահմանադրությանն ու միջազգային պարտավորություններին, այլև հանդիսանում են մարդու մի շարք հիմնարար իրավունքների խախտում:

Անձնական տվյալների ապօրինի ձեռքբերման կամ ապօրինի տարածման հարցում դերակատարություն ունեն բոլոր սուբյեկտները: Միևնույն ժամանակ, Մարդու իրավունքների պաշտպանն ընդգծում է, որ պետությունն է պատասխանատու խախտումները կանխարգելելու կառուցակարգեր մշակելու, իսկ դեպքերի առկայության պարագայում՝ պատշաճ իրավական արձագանք ապահովելու հարցում:

Անձնական տվյալների պաշտպանության որոշ հարցերի առնչությամբ Մարդու իրավունքների պաշտպանը 2025 թվականին հանդես է եկել նաև հայտարարություններով[287]:

Վերոնշյալի կապակցությամբ հատկանշական է, որ անձնական տվյալների պաշտպանության ոլորտում իրավունքների խախտման դեպքերը բացառելու ուղղությամբ անհրաժեշտ է իրականացել անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ հանրային իրազեկման արշավներ ու վերապատրաստումներ, բարձրացնել իրազեկվածությունը, ի թիվս այլնի, «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պահանջների և դրանք խախտելու համար նախատեսված պատասխանատվության վերաբերյալ:

Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության, Արդարադատության նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2025 թվականի ընթացքում անձնական տվյալների պաշտպանության ոլորտում իրականացվել են մի շարք իրազեկման միջոցառումներ:

Հարկ է փաստել, սակայն, որ ոլորտում արձանագրվող խնդիրները ցույց են տալիս, որ դրանք բավարար չեն և անհրաժեշտ է իրականացնել առավել լայնածավալ ու ինստիտուցիոնալ բնույթ ունեցող իրազեկման միջոցառումներ ու կրթական ծրագրեր:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

✓ մշակել ու ներդնել անձնական տվյալների պաշտպանության ոլորտում խախտումները կանխարգելելու, իսկ դեպքերի առկայության պարագայում պատշաճ իրավական արձագանք ապահովելուն ուղղված գործուն կառուցակարգեր,

✓ անձնական տվյալների պաշտպանության ոլորտում իրականացնել առավել լայնածավալ ու ինստիտուցիոնալ բնույթ ունեցող իրազեկման միջոցառումներ ու կրթական ծրագրեր:

3. «ԴատաԼեքս» էլեկտրոնային կառավարման և տեղեկությունների տրամադրման հանրային տեղեկատվական համակարգում անձնական տվյալների մշակման և հրապարակման հետ կապված խնդիրներ

Խնդրահարույց է, որ 2025 թվականի ընթացքում շարունակել են արդիական մնալ «ԴատաԼեքս» համակարգում անձնական տվյալների հրապարակման հետ կապված նախկին տարեկան հաղորդումներում ու հրապարակային զեկույցներում ներկայացված խնդիրները: Մասնավորապես, շարունակել են արձանագրվել դատական գործերի շրջանակում ապանձնավորման ենթակա տվյալների հրապարակային ներկայացման դեպքեր:

Իրավասու մարմնի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ «ԴատաԼեքս» համակարգում հրապարակվող դատական գործերի էլեկտրոնային քարտերում տվյալների ապանձնավորումը 2025 թվականին շարունակել է իրականացվել մեխանիկական մոտեցման կիրառմամբ:

[287] Տեղեկատվությունը հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3558, https://ombuds.am/am/site/ViewNews/3252, https://ombuds.am/am/site/ViewNews/3547 և այլ հղումներով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է ապահովել ապանձնավորման մեխանիզմի շուտափույթ ներդրումն ու պատշաճ վերահսկողության իրականացումը, իսկ մինչ այդ՝ անձնական տվյալների պաշտպանությունն երաշխավորող անհետաձգելի միջոցառումների ձեռնարկումը:

ԲԱԺԻՆ 11 ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Արհեստական բանականության տեխնոլոգիաները վերջին տարիներին զարգանում են արագ տեմպերով և աստիճանաբար ներթափանցում են հանրային և մասնավոր կյանքի տարբեր ոլորտներ: Այդ համատեքստում արհեստական բանականության համակարգերի կիրառումը կարող է ունենալ ինչպես դրական, այնպես էլ բացասական ազդեցություն մարդու իրավունքների վիճակի, ժողովրդավարության և իրավունքի գերակայության վրա[288]:

Արհեստական բանականության օգտագործումը՝ մարդու իրավունքների երաշխավորման, ժողովրդավարության և իրավունքի գերակայության սկզբունքներին համապատասխան ապահովելու, ինչպես նաև այդ նպատակով բավարար միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտությանը Մարդու իրավունքների պաշտպանն անդրադարձել է նաև իր նախորդ տարիների տարեկան հաղորդումներում[289]:

Արհեստական բանականության օգտագործումը՝ մարդու իրավունքների երաշխավորման, ժողովրդավարության և իրավունքի գերակայության սկզբունքներին համապատասխան ապահովելու տեսանկյունից հատկանշական է Եվրոպայի խորհրդի «Արհեստական բանականության և մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության մասին» շրջանակային կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Կոնվենցիա) ստորագրումը[290]: Արտաքին գործերի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ փաստաթուղթը ստորագրել է 19 պետություն, սակայն այն դեռևս ուժի մեջ չի մտել, քանի որ դրա համար անհրաժեշտ է 5 պետության կողմից վավերացում, որից առնվազն 3-ը պետք է լինեն Եվրոպայի խորհրդի անդամ պետություններ:

Մարդու իրավունքների պաշտպանը խիստ կարևորում է, որ անկախ Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու հանգամանքից, պետությունը գործուն միջոցներ ձեռնարկի ներպետական կարգավորումներն և արհեստական բանականության գործնական օգտագործումը Կոնվենցիայով նախատեսված սկզբունքներին և դրույթներին համապատասխանեցնելու ուղղությամբ:

Կոնվենցիայով նախատեսված սկզբունքների համաձայն՝ պետությունները պետք է միջոցներ ձեռնարկեն՝ պաշտպանելու մարդու արժանապատվությունն ու անձի ինքնուրույն գործելու հնարավորությունը, անձնական տվյալներն արհեստական բանականության համակարգերի գործարկման ընթացքում, երաշխավորելու այդ համակարգերի հաշվետվողականությունը, պատասխանատվությունը, թափանցիկությունն ու դրանց

---

[288] Տե՛ս, Մարդու իրավունքների ազգային հաստատությունների եվրոպական ցանցի 2023 թվականի «Իրավունքի գերակայություն» զեկույցը, էջ 94, հասանելի է https://ennhri.org/wp-content/uploads/2023/08/ENNHRI-2023-Report-on-the-State-of-the-Rule-of-Law-in-Europe.pdf հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

[289] Տե՛ս 2024 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 383-387, 505-508, հասանելի է https://ombuds.am/images/files/4d1335361f1f7e9fbcc1cfc10679701e.pdf հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ: Տե՛ս նաև 2023 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 667-679, հասանելի է https://ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

[290] Հասանելի է https://rm.coe.int/1680afae3c հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

նկատմամբ պատշաճ վերահսկողությունը: Պետությունը պետք է երաշխավորի նաև, որ արհեստական բանականության համակարգերը իրենց գործունեությունն իրականացնեն հավասարության, այդ թվում՝ գենդերային հավասարության ապահովմամբ ու խտրականության բացառմամբ, հաշմանդամություն ունեցող անձանց ու երեխաների հատուկ կարիքների հաշվառմամբ:

Միաժամանակ, հատկանշական է, որ Մարդու իրավունքների ազգային հաստատությունների եվրոպական ցանցը (ENNHRI) Եվրոպայի խորհրդի Արհեստական բանականության կոմիտեի (CAI) լիագումար նիստի շրջանակում ներկայացրել է մտահոգություններ՝ Կոնվենցիայի նախագծի բովանդակության վերաբերյալ: Այդ մասին Մարդու իրավունքների ազգային հաստատությունների եվրոպական ցանցը (ENNHRI) հանդես է եկել նաև հայտարարությամբ[291]: Հարկ է փաստել, որ ներկայացված դիտարկումների մի մասը չի արտացոլվել Կոնվենցիայի վերջնական տեքստում, մինչդեռ՝ դրանք նույնպես կարևոր նշանակություն ունեն արհեստական բանականության կիրառման գործընթացում մարդու իրավունքների պաշտպանությունը երաշխավորելու տեսանկյունից:

Այսպես, օրինակ, Մարդու իրավունքների ազգային հաստատությունների եվրոպական ցանցի (ENNHRI) ներկայացրած դիրքորոշման համաձայն՝ Կոնվենցիայի կարգավորումները պետք է հավասարապես տարածվեն ինչպես պետական, այնպես էլ մասնավոր հատվածի կողմից մշակվող և կիրառվող արհեստական բանականության համակարգերի վրա, քանի որ մասնավոր հատվածը այս ոլորտում կենտրոնական դերակատար է և կարող է էական ազդեցություն ունենալ մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության վրա և այլն:

Նշվածի առնչությամբ Մարդու իրավունքների պաշտպանը կարևորում է, որ պետությունը Մարդու իրավունքների ազգային հաստատությունների եվրոպական ցանցի (ENNHRI) ներկայացրած դիրքորոշումները նույնպես հաշվի առնի ներպետական կարգավորումները և արհեստական բանականության գործնական օգտագործումը մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից երաշխավորելիս:

Իրավասու մարմինների տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2025 թվականի ընթացքում իրականացվել են մի շարք միջոցառումներ՝ ուղղված արհեստական բանականության համակարգի զարգացմանն ու դրա վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացմանը:

Այսպես, օրինակ, ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կողմից ներկայացված տեղեկությունների համաձայն՝ Firebird ընկերությունը, ՀՀ կառավարությունը և NVIDIA-ն մեկնարկել են համատեղ նախագիծ՝ Հայաստանի Հանրապետությունում արհեստական բանականության տվյալային կենտրոնի կառուցման առնչությամբ: Կյանքի է կոչվել ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության ռազմավարական նախաձեռնությունը՝ Արհեստական բանականության վիրտուալ ինստիտուտը, որը բաց հարթակ է նորարարության համար՝ նախատեսված միավորելու արհեստական բանականության ոլորտի նորարարներին, տեխնոլոգիական ընկերություններին, հետազոտողներին, SS ստեղծագործողներին՝ խթանելով առաջատար հետազոտությունները, նորարարությունն ու արտադրանքի զարգացումը: Ընդունվել է ՀՀ կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի «Պետության կողմից արհեստական բանականության ոլորտում բարձր արտադրողականությամբ հաշվողական ռեսուրսներին հասանելիության ապահովման

[291] Տեղեկատվությունը հասանելի է https://ennhri.org/wp-content/uploads/2024/03/ENNHRI-statement-of-concern-on-AI-Convention-at-CAI-plenary.pdf հղումով. 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

պետական աջակցության փորձնական ծրագիրը հաստատելու մասին» թիվ 1966–Ն որոշումը, որով սահմանվել է նաև աջակցության տրամադրման ընթացակարգը և այլն:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ներկայացրած տեղեկատվության համաձայն՝ ուսումնական հաստատություններում հանրակրթական և բարձրագույն կրթության մակարդակներում իրականացվել են արհեստական բանականության թեմայով ծրագրեր, դասընթացներ, սեմինարներ և վերապատրաստումներ աշակերտների, ուսանողների, ինչպես նաև դասախոսների համար: Արհեստական բանականության թեմայով կազմակերպված ծրագրերի ու դասընթացների անցկացման վերաբերյալ տեղեկատվություն է տրամադրվել նաև ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից:

Վերոնշյալի համատեքստում՝ Պաշտպանը կարևորում է, որ պետության կողմից արհեստական բանականության համակարգի գործածության առնչությամբ նախաձեռնված և նախատեսվող բոլոր աշխատանքները, այդ թվում՝ իրազեկման միջոցառումները իրականացվեն Կոնվենցիայով ու Մարդու իրավունքների ազգային հաստատությունների եվրոպական ցանցի (ENNHRI) ներկայացրած դիրքորոշմամբ նախանշված սկզբունքների համաձայն: Արհեստական բանականության համակարգերի կիրառման առումով կարևոր է նշված սկզբունքների հաշվառմամբ ոլորտի առանձնահատկությունների լիարժեք ուսումնասիրությունը, մարդու իրավունքների վրա արհեստական բանականության համակարգերի ազդեցության պատշաճ գնահատումը, այդ առնչությամբ մարդու իրավունքների պաշտպանության հստակ կառուցակարգերի նախատեսումն ու ռազմավարական փաստաթղթերի մշակումը: Պաշտպանը խիստ կարևորում է նաև նշված բոլոր գործընթացներում հասարակության մասնակցության ապահովումը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***միջոցներ ձեռնարկել՝ ներպետական կարգավորումները, արհեստական բանականության գործնական օգտագործումն ու իրազեկման միջոցառումները Եվրոպայի խորհրդի «Արհեստական բանականության և մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության մասին» շրջանակային կոնվենցիայով նախատեսված սկզբունքներին և Մարդու իրավունքների ազգային հաստատությունների եվրոպական ցանցի (ENNHRI) ներկայացրած դիրքորոշումներին համապատասխանեցնելու ուղղությամբ,***
- ✓ ***մարդու իրավունքների պաշտպանությունը երաշխավորող սկզբունքների հաշվառմամբ լիարժեքորեն ուսումնասիրել արհեստական բանականության համակարգերի կիրառման առանձնահատկությունները, գնահատել մարդու իրավունքների վրա արհեստական բանականության համակարգերի ազդեցությունը,***
- ✓ ***մշակել մարդու իրավունքների պաշտպանությունը երաշխավորող սկզբունքների վրա հիմնված արհեստական բանականության համակարգերի կիրառման մեխանիզմ ու ռազմավարական փաստաթուղթ,***
- ✓ ***իրականացնել շարունակական ու թիրախային՝ բոլոր խմբերի ընդգրկմամբ իրազեկման աշխատանքներ արհեստական բանականության գործարկման ռիսկերի և վտանգների, արհեստական բանականության և մարդու իրավունքների փոխազդեցության վերաբերյալ:***

ԲԱԺԻՆ 12.ՀԱՎԱՔՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Մարդու իրավունքների պաշտպանի՝ 2025 թվականի գործունեության ուղղություններից է եղել հավաքների ազատության՝ որպես մարդու հիմնական իրավունքի պաշտպանության ապահովումը: Հավաքների ազատության արդյունավետ իրացման երաշխիքների ապահովումն ու նշված իրավունքի իրացման առնչությամբ առաջացած խնդիրները եղել են Մարդու իրավունքների պաշտպանի անմիջական ուշադրության ներքո:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմն իրականացրել է հավաքների, այդ թվում՝ զանգվածային լրատվության միջոցների և սոցիալական ցանցերի հրապարակումների մշտադիտարկում: Հավաքների ազատության իրավունքի պաշտպանության և խթանման համատեքստում Պաշտպանն իր լիազորություններն իրականացրել է՝ նաև հիմք ընդունելով ստացված դիմումներն ու բողոքները:

Հավաքների ընթացքում ազատությունից զրկված անձանց իրավունքների պաշտպանությունն առավելագույնս երաշխավորելու նպատակով Պաշտպանի ներկայացուցիչներն արագ արձագանքման այցեր են իրականացրել Ներքին գործերի նախարարության ոստիկանության տարբեր ստորաբաժանումներ, առանձնազրույցներ ունեցել ազատությունից զրկված անձանց հետ, ուսումնասիրել վերջիններիս իրավունքների ապահովման վիճակն ու ազատությունից զրկելու հիմքերը, կազմված փաստաթղթերը, պարզաբանել ազատությունից զրկված անձի կարգավիճակից բխող իրավունքներն ու պարտականությունները: Այցերի ընթացքում տեղում ուսումնասիրվել են ազատությունից զրկված անձանց կողմից բարձրացված խնդիրները, և դրանք քննարկվել են իրավասու մարմինների ներկայացուցիչների հետ: Պաշտպանը խնդիրները քննարկել է իրավասու մարմինների պաշտոնատար անձանց հետ, հանդես եկել նաև հրապարակային հայտարարություններով, խնդիրները բարձրացրել է տարբեր քննարկումների ընթացքում[292]:

2025 թվականի ընթացքում հավաքների ազատության իրավունքի պաշտպանությանն ուղղված աշխատանքների իրականացման համատեքստում Մարդու իրավունքների պաշտպանի կողմից սկսվել են մի շարք ուսումնասիրություններ, այդ թվում՝ սեփական նախաձեռնությամբ: Այսպես, այցերի ընթացքում արձանագրված բոլոր խնդիրների, ներառյալ՝ առերևույթ բռնության, անհամաչափ ուժի գործադրման առնչությամբ պարզաբանումներ են պահանջվել ՀՀ ներքին գործերի նախարարությունից, Գլխավոր դատախազությունից և Քննչական կոմիտեից: Անհրաժեշտ իրավիճակներում ՄԻՊ միջամտությամբ երաշխավորվել է անձանց զանգի և այլ իրավունքների իրացումը, այդ թվում՝ փաստաբանի հետ կապ հաստատելու նպատակով:

2025 թվականի ընթացքում տեղի ունեցած հավաքների մշտադիտարկման արդյունքների ուսումնասիրությամբ արձանագրվել և վերահաստատվել են Մարդու իրավունքների պաշտպանի գործունեությունն ամփոփող տարեկան հաղորդումներով տարիներ շարունակ բարձրացվող համակարգային և շարունակական բնույթ կրող խնդիրները: Կարևորելով ոլորտում կատարվող բարեփոխումները՝ Պաշտպանն ընդգծում է, որ դեռևս առկա են իրավասու մարմինների ոչ իրավաչափ պրակտիկային առնչվող խնդիրներ, որոնք ունեն շուտափույթ հաղթահարման կարիք:

Մասնավորապես, արձանագրվել է, որ 2025 թվականին, ի թիվս այլնի, շարունակել են արդիական մնալ.

---

[292] Տեղեկատվությունը հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3553, https://ombuds.am/am/site/ViewNews/3437, https://ombuds.am/am/site/ViewNews/3420 և այլն:

• հավաքի մասնակիցներին ազատությունից զրկելու հիմքերի և պատճառների չներկայացման հետ կապված խնդիրներ,

• ազատությունից զրկված անձի ընտրած անձին տեղյակ պահելու իրավունքն անհապաղ չապահովելու հետ կապված խնդիրներ,

• լրագրողների մասնագիտական օրինական գործունեությունն իրականացնելիս վերջիններիս անվտանգության երաշխավորման հետ կապված խնդիրներ,

• ազատությունից զրկված անձանց նկատմամբ ոչ համաչափ ուժի գործադրման և վատ վերաբերմունքի, ոստիկանության ծառայողների գործողությունների իրավաչափության պատշաճ գնահատման, այդ առումով քննությունների իրականացման հետ կապված խնդիրներ:

2025 թվականին արձանագրվել են նաև հավաքների ազատության իրավունքին առնչվող մի շարք այլ խնդիրներ, այդ թվում՝ փաստաբանների՝ ոստիկանության տարբեր բաժիններ մուտք գործելու, անձանց պաշտպանությունը ստանձնելու կամ վերջիններիս իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը ապահովելու, հավաքների ընթացքում երեխայի իրավունքների երաշխավորման հետ կապված խնդիրներ, որոնց առավել մանրամասն անդրադարձ է կատարվում տարեկան հաղորդման համապատասխան բաժիններում:

1. Հավաքի մասնակիցներին ազատությունից զրկելու հիմքերի և պատճառների չներկայացման հետ կապված խնդիրներ

2025 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմի կողմից իրականացված հավաքների մշտադիտարկման, ինչպես նաև ոստիկանության բաժիններում ազատությունից զրկված անձանց հետ տեղի ունեցած առանձնազրույցների ընթացքում արձանագրվել են դեպքեր, երբ ինչպես վարչական ձերբակալման ենթարկելիս, այնպես էլ Ոստիկանության բաժնում, ձերբակալված անձանց չեն պարզաբանվել վարչական ձերբակալման ենթարկելու հիմքերն ու պատճառները, վերջիններիս իրավունքներն ու պարտականությունները: Նշված խնդիրն արձանագրվել է Մարդու իրավունքների պաշտպանի կողմից տարիներ շարունակ՝ ինչպես նախորդ տարեկան հաղորդումներում, այնպես էլ այլ հրապարակային և ոչ հրապարակային հաղորդակցության շրջանակներում: Անձին ազատությունից զրկելուց հետո վերջինիս անհապաղ՝ իրեն հասկանալի լեզվով ազատությունից զրկելու պատճառների մասին տեղեկացնելու պարտականությունն ամրագրող ներպետական ու միջազգային իրավական չափանիշներն ու կարգավորումները, ինչպես նաև իրավակիրառ պրակտիկայում որդեգրված մոտեցումները մանրամասն ներկայացվել են Պաշտպանի նախորդ տարեկան հաղորդումներում:[293]

2025 թվականի ընթացքում իրականացված հավաքների շրջանակներում ազատությունից զրկված մի շարք անձինք Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչներին հայտնել են, որ Ոստիկանության ծառայողների կողմից օրինական

[293] Տե՛ս առավել մանրամասն, օրինակ, 2023 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում էջեր՝ 372-375, հասանելի է https://www.ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ, 2024 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում էջեր՝ 540-542, հասանելի է https://www.ombuds.am/images/files/4d1335361f1f7e9fbcc1cfc10679701e.pdf հղումով 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

պահանջ չի հնչեցվում կամ հնչեցվում է ոչ լսելի կերպով կամ հնչեցվելու պարագայում օրինական պահանջի իրականացման համար ողջամիտ ժամկետ չի տրամադրվում:

Արձանագրված դեպքերի ընդհանուր ուսումնասիրությունից բխում է, որ, հիմնականում, անձանց վարչական ձերբակալման հիմքը եղել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 182-րդ հոդվածով նախատեսված՝ Ոստիկանության օրինական պահանջը չկատարելը: Դիտարկումները ցույց են տալիս, որ վարչական ձերբակալման ենթարկելու հիմքերը ներկայացվել են ընդհանրական կերպով, չեն անհատականացվել՝ զրկելով վարչական ձերբակալման ենթարկված անձին հնարավորությունից՝ հասկանալու, թե կոնկրետ ինչ հիմքով և պատճառաբանությամբ է իրականացվում վարչական ձերբակալումը: Շատ դեպքերում անձանց համար պարզ չի եղել, թե որն է իրենց ներկայացված կոնկրետ «օրինական պահանջը»: Վարչական ձերբակալման ենթարկելու որոշ դեպքերում, ըստ Պաշտպանին դիմած կամ առանձնազրույցների ընթացքում անձանց կողմից ներկայացված պնդումների, իրենց առհասարակ որևէ պահանջ չի ներկայացվել, որևէ հակաօրինական արարք չեն կատարել, և վարչական ձերբակալման են ենթարկվել զուտ հավաքի անցկացման վայրում գտնվելու փաստի ուժով: Ավելին, ըստ վարչական ձերբակալման ենթարկված անձանց՝ որոշ դեպքերում վարչական ձերբակալումը տեղի է ունեցել անգամ օրինական պահանջի իրականացման պայմաններում:

Ըստ ՆԳՆ-ի ներկայացրած տվյալների՝ 2025 թվականին Հայաստանի Հանրապետությունում անցկացված հավաքների ընթացքում ձերբակալվել և ՀՀ ՆԳՆ ոստիկանության տարածքային բաժիններ են բերվել ընդհանուր 755 անձ, որոնցից 2-ը՝ անչափահաս, 40-ը՝ զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ: Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182-րդ հոդվածով նախատեսված՝ հասարակական կարգի պահպանության և հասարակական անվտանգության ապահովման պարտականությունները կատարելու ընթացքում զինծառայողի կամ ոստիկանության ծառայողի օրինական պահանջը չկատարելու հիմքով վարչական ձերբակալման է ենթարկվել 471 անձ, որոնցից 1-ը՝ անչափահաս, 5-ը՝ զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ: Անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով բաժին բերված անձանց նկատմամբ նախաձեռնվել է 152 քրեական վարույթ: 2025 թվականին անցկացված հավաքների ընթացքում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182-րդ հոդվածով նախատեսված իրավախախտում կատարելու համար վարչական դատարան է ներկայացվել 5 անձի վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հայցադիմում, որոնցով առկա չէ վերջնական դատական ակտ:

Ներկայացվածի համատեքստում, վերը նկարագրված խնդիրներն ու վիճակագրական տվյալները վկայում են, որ դեռևս շարունակում են արդիական մնալ իրականացված վարչական ձերբակալումների (Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182-րդ հոդվածով նախատեսված) հիմնավորվածության և իրավաչափության հարցերը, ինչն իր հերթին կասկածի տակ է դնում հավաքների մասնակիցներին վարչական ձերբակալման ենթարկելու իրական նպատակներն ու հիմքերը:

Հարկ է նկատել, որ իրենց նվազագույն իրավունքների մասին վարչական ձերբակալման ենթարկված անձինք որոշ դեպքերում տեղեկացել են հենց Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչներից՝ իրականացված արագ արձագանքման այցերի ընթացքում:

Պաշտպանն ընդգծում է, որ նաև Սահմանադրության 27-րդ հոդվածով ամրագրված պահանջ է, որ անձն ազատությունից զրկվելուց հետո անհապաղ պետք է իրեն հասկանալի լեզվով տեղեկացվի իրեն ազատությունից զրկելու պատճառների մասին՝ փաստական և իրավական բավարար հիմնավորմամբ: Սահմանադրական դատարանը, քննարկելով անձին ազատությունից զրկելիս հիմքերը չներկայացնելու և իր իրավունքներն ու պարտականությունները չպարզաբանելու խնդիրները, Պաշտպանի դիմումի հիման վրա իր՝ 2017 թվականի հունվարի 24-ի ՍԴՈ-1339 որոշմամբ արձանագրել է, որ ազատությունից զրկվելու պատճառների մասին անձին «անհապաղ տեղեկացնելը» հանրային իշխանության ուղղակի պարտականությունն է, և այդ հարցում հայեցողական մոտեցումն անթույլատրելի է:

Իր հերթին, օրինական պահանջը պետք է անձի համար լինի որոշակի և հասկանալի, նախորդի վարչական ձերբակալման ենթարկելուն և համապատասխանի վերաբերելի ներպետական և միջազգային չափանիշներին:

Պաշտպանի աշխատակազմի մշտադիտարկումներն ու Ոստիկանության բաժիններ իրականացված այցերը վկայում են, որ խնդիրը նախորդ տարիների հետ նույնական է, իսկ պրակտիկան՝ խնդրահարույց:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

✓ **վերանայել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ իրավունքներին միջամտություն ենթադրող վարչական ձերբակալման հարցերը կանոնակարգող կարգավորումները ու համապատասխանեցնել դրանք Սահմանադրության 27-րդ հոդվածով ամրագրված կարգավորմանը՝ ուղղակիորեն ամրագրելով անձնական ազատությունից զրկված յուրաքանչյուր անձի՝ ազատությունից զրկվելու պատճառների ու հիմքերի, իրավունքների ու պարտականությունների մասին իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվելու պահանջը,**

✓ **ազատությունից զրկելու յուրաքանչյուր դեպքում միջազգային չափանիշներին համապատասխան՝ անձին ներկայացնել ազատությունից զրկելու կոնկրետ հիմքերն ու պատճառները, անձի իրավունքներն ու պարտականությունները, այդ հարցին չցուցաբերել ձևական մոտեցում**,

✓ **պահպանել «օրինական պահանջին» առնչվող միջազգային և ներպետական չափանիշները:**

2. Ազատությունից զրկված անձի ընտրած անձին տեղյակ պահելու իրավունքն անհապաղ չապահովելու հետ կապված խնդիրներ

2025 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի՝ հավաքների ընդհանուր դիտարկման արդյունքները վկայել են վարչական ձերբակալման մասին իր ընտրած անձին անհապաղ տեղեկացնելու սահմանադրական իրավունքի մասին չտեղեկացնելու ու այդ իրավունքի պատշաճ իրացումը չապահովելու խնդրի շարունակականության մասին: Վարչական ձերբակալման ենթարկված անձինք որոշ դեպքերում Պաշտպանի աշխատակազմի՝ Ոստիկանության բաժիններ այցելած ներկայացուցիչներից են տեղեկացել այս իրավունքի վերաբերյալ:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի հետ ունեցած առանձնազրույցի ընթացքում ազատությունից զրկված անձը հայտնել է, որ

Ոստիկանության բաժնում չի ապահովվել իր զանգի իրավունքը, այդ թվում՝ չի թույլատրվել զանգահարել ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի թեժ գիծ հեռախոսահամարին:

Չնայած արձանագրված որոշակի առաջընթացին, ինչի մասին է վկայում նաև այս խնդրի առնչությամբ Պաշտպանին ներկայացված դիմումների և բողոքների քանակի նվազումը, միևնույն է, խնդրի շարունակականությունն ու արդիականությունը արձանագրվել են նաև 2025 թվականին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է գործնականում ապահովել յուրաքանչյուրի՝ անազատության մեջ գտնվելու մասին իր ընտրած անձին անհապաղ տեղյակ պահելու սահմանադրական իրավունքի մասին իրազեկումը և այդ իրավունքի պատշաճ իրացումը:

3. Լրագրողների մասնագիտական օրինական գործունեությունն իրականացնելիս վերջիններիս անվտանգության երաշխավորման հետ կապված խնդիրներ

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի՝ 2025 թվականի ընթացքում ՀՀ տարածքում տեղի ունեցած բողոքի ակցիաների և իրավապահ մարմինների գործողությունների ամբողջական դիտարկման, այդ թվում՝ լրատվամիջոցների և սոցիալական ցանցերի հրապարակումների ուսումնասիրության արդյունքում արձանագրվել են նաև դեպքեր, երբ իրենց մասնագիտական գործունեությունն իրականացնելիս Ոստիկանության ծառայողի գործողությունների հետևանքով տուժել է նաև լրագրող:

2025 թվականին ՄԻՊ աշխատակազմի մշտադիտարկման արդյունքում արձանագրվել է Ոստիկանության ծառայողի կողմից լրագրող Մերի Մանուկյանի մասնագիտական գործունեությունը առերևույթ խոչընդոտելու և նրա նկատմամբ բռնություն կիրառելու դեպք: Նշված հարցի առնչությամբ Պաշտպան Անահիտ Մանասյանը խիստ դատապարտել է Ոստիկանության ծառայողի նման վարքագիծը, լրագրողի նկատմամբ բռնությունը և ընդգծել է, որ լրագրողների համար պետք է երաշխավորված լինի մասնագիտական գործունեությունն իրականացնելու համար պատշաճ միջավայր: Պաշտպանը պահանջել է, որ իրավասու մարմինները պատշաճ քննություն իրականացնեն նշված դեպքով[294]: «ԴատաԼեքս» էլեկտրոնային կառավարման և տեղեկությունների տրամադրման հանրային տեղեկատվական համակարգում ներկայացված տվյալների համաձայն՝ քրեական գործը գտնվում է դատական վարույթում:

Լրագրողների ազատ գործունեության ու մասնագիտական օրինական գործունեության անխոչընդոտ իրականացման երաշխավորումը կարևորագույն նշանակություն ունի խաղաղ հավաքների իրավունքի լիարժեք իրացման համար: Նույն մեկնաբանությամբ ընդգծվում է, որ ոստիկանության ծառայողները հավաքների ընթացքում պետք է հարգեն և ապահովեն հավաքի կազմակերպիչների և մասնակիցների հիմնարար իրավունքները՝ միաժամանակ պաշտպանելով, ի թիվս այլնի, լրագրողներին, դիտորդներին, բժշկական անձնակազմին և հանրության այլ անդամներին:

Վերոշարադրյալի համատեքստում՝ հարկ է նկատել, որ Մարդու իրավունքների պաշտպանը բազմիցս է ընդգծել զանգվածային լրատվության միջոցների առանցքային դերակատարությունը ժողովրդավարական հասարակությունում՝ այս համատեքստում

[294] Տեղեկատվությունը հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3420 հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

պահանջելով նրանց անխոչընդոտ մասնագիտական գործունեության անհրաժեշտ երաշխիքների ապահովում ու լրագրողների նկատմամբ հավաքների ընթացքում դրսևորված բռնության գործերով պատշաճ քննության իրականացում: Վերը շարադրված դեպքն ու նկարագրված միջազգային չափանիշները հիմք են տալիս եզրակացնելու, որ, չնայած որոշ զարգացումներին, այս առումով Հայաստանի Հանրապետությունում դեռևս շարունակում են առկա լինել խնդիրներ, որոնք ունեն պատշաճ հասցեավորման անհրաժեշտություն:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է ապահովել մասնագիտական օրինական գործունեությունն իրականացնելիս լրագրողների ու լրատվամիջոցների այլ ներկայացուցիչների անվտանգությունը հավաքների ընթացքում, իսկ օրենսդրությամբ արգելված դեպքերի առկայության պարագայում իրականացնել գործերով պատշաճ քննություն:

4. Ազատությունից զրկված անձանց նկատմամբ ոչ համաչափ ուժի գործադրման և վատ վերաբերմունքի, ոստիկանության ծառայողների գործողությունների իրավաչափության պատշաճ գնահատման, այդ առումով քննությունների իրականացման հետ կապված խնդիրներ

2025 թվականի ընթացքում կազմակերպված հավաքների մշտադիտարկումը ցույց է տվել, որ շարունակում են արդիական մնալ ազատությունից զրկելիս անձանց նկատմամբ առերևույթ անհամաչափ ուժի գործադրումն ու որոշ դեպքերում՝ անհարգալից վերաբերմունքը: Ընդ որում՝ խնդիրը վեր է հանվել ինչպես Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների՝ ազատությունից զրկված անձանց հետ տեղի ունեցած առանձնազրույցների, այնպես էլ զանգվածային լրատվության միջոցների հրապարակումների մշտադիտարկման արդյունքում: Խնդրի մասին Պաշտպանին ներկայացվել են նաև ահազանգեր, այդ թվում՝ թեժ գծի միջոցով:

2025 թվականին կազմակերպված հավաքների ընթացքում Պաշտպանի ներկայացուցիչների՝ Ոստիկանության տարբեր բաժիններ կատարած այցերի ընթացքում վարչական ձերբակալման ենթարկված անձինք պնդել են, որ վարչական ձերբակալության ընթացքում ձերբակալման ենթարկված անձանց նկատմամբ անհամաչափ ֆիզիկական ուժ է գործադրվել: Ըստ ազատությունից զրկված անձանց՝ վերջիններիս նկատմամբ դրսևորվել է նաև անհարգալից վերաբերմունք: Արձանագրված բոլոր դեպքերի առնչությամբ անմիջապես գրություններ են հասցեագրվել իրավասու պետական մարմիններին:

Այսպես, օրինակ՝ 2025 թվականի մարտի 1-ին «Ջունիոր սպորտ» մարզադաշտում ՀՖՖ նախագահի հրաժարականի պահանջով ակցիայի ընթացքում վարչական ձերբակալման ենթարկված անձանց հետ տեղի ունեցած առանձնազրույցների ժամանակ ազատությունից զրկված անձինք հայտնել են, որ իրենց նկատմամբ կիրառվել է ֆիզիկական անհամաչափ ուժ: Մասնավորապես, ազատությունից զրկված անձանց կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ մարզադաշտ մուտք գործած ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության պարեկապահակետային հատուկ նշանակության գումարտակի ծառայողներից երեքը ազատությունից զրկված անձանց գցել են գետնին, ծնկները դրել մեջքին, գործադրել ձեռնաշղթաներ, շուրջ երկու րոպե պահել պառկած վիճակում, այնուհետև՝ ուղեկցել Ոստիկանության բաժին:

Քասախում բողոքի ակցիայի ժամանակ քաղաքացիների ձերբակալման դեպքի առնչությամբ Մարդու իրավունքների պաշպանի հանձնարարությամբ աշխատակազմի արագ արձագանքման խումբը մեկնել է ՀՀ ՆԳՆ ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Աշտարակի բաժին: Առանձնազրույցների ընթացքում ազատությունից զրկված անձինք հայտնել են, որ Ոստիկանության մի շարք ծառայողներ իրենց արգելանքի վերցնելիս կիրառել են անհամաչափ ֆիզիկական ուժ, հարվածել են, ինչի հետևանքով նրանցից մեկի ձախ ձեռքի հատվածում վնասվածք է առաջացել, մյուսի պարագայում՝ արգելանքի վերցնելիս Ոստիկանության շուրջ 15 ծառայողներ պատռել են շապիկը և այլն:

ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքի հարակից տարածքում բողոքի ակցիա իրականացրած անձանց հետ տեղի ունեցած առանձնազրույցների ընթացքում ազատությունից զրկված անձինք հայտնել են, օրինակ, որ ոստիկանության 6 կամ 7 ծառայողներ անհամաչափ ֆիզիկական ուժի կիրառմամբ՝ անձին թևերից բռնելով նստեցրել են Ոստիկանության ավտոմեքենան ու տեղափոխել Ոստիկանության բաժին[295]:

Գյումրու քաղաքապետարանի դիմաց իրականացված ակցիայի շրջանակներում Մարդու իրավունքների պաշտպանի հանձնարարությամբ ՄԻՊ ներկայացուցիչները այց են իրականացրել Ոստիկանության համապատասխան բաժին՝ ազատությունից զրկված անձանց իրավունքների ապահովման վիճակին տեղում ծանոթանալու նպատակով: Ազատությունից զրկված անձանցից մեկն, օրինակ, տեղեկացրել է, որ իրեն արգելանքի են վերցրել երկու ծառայողներ, որոնցից մեկը բիրտ ուժ է կիրառել իր նկատմամբ և այլն[296]:

Հարկ է նկատել, որ Մարդու իրավունքների պաշտպանն իր նախորդ տարեկան հաղորդումներում մանրամասն անդրադարձել է այն բոլոր իրավական կարգավորումներին ու չափանիշներին, այդ թվում՝ միջազգային փաստաթղթերում ամրագրված, որոնց պահպանումը առանցքային նշանակություն ունի խաղաղ հավաքների երաշխավորման հարցում[297]:

Այս համատեքստում հիշատակման է արժանի այն հանգամանքը, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Կոնվենցիայի 11-րդ հոդվածի խախտում է արձանագրել Հայաստանի դեմ կայացված վճիռներում՝ արձանագրելով, որ անցկացվող հավաքը ցրելը կատարվել է առանց բավարար հիմնավորման, առանց ցրելու մասին նախազգուշացումների և ուժի չհիմնավորված և անհամաչափ գործադրմամբ: Նշվածը, ըստ դատարանի, որպես անհամաչափ միջոց, անցել է ողջամտության այն սահմանները, որը հավաքների ազատությունը սահմանափակելիս կարելի էր ակնկալել իշխանություններից:

Ելնելով վերոգրյալից՝ Մարդու իրավունքների պաշտպանն ընդգծում է, որ շարունակում է համակարգային առումով գործադրվել իրավակիրառ այն պրակտիկան, որը

---

[295] Տեղեկատվությունը հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3437 հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

[296] Տեղեկատվությունը հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3553 հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

[297] Տե՛ս առավել մանրամասն, օրինակ 2023 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր՝ 378-383, հասանելի է https://www.ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ: 2024 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում էջեր՝ 545-550, հասանելի է https://www.ombuds.am/images/files/4d1335361f1f7e9fbcc1cfc10679701e.pdf հղումով 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

խնդրահարույց է ուժի կիրառման համաչափության վերաբերյալ միջազգային իրավական չափանիշների տեսանկյունից:

Հարկ է ընդգծել, որ Պաշտպանը կարևորում է նաև հավաքի մասնակիցների կողմից հավաքի խաղաղ բնույթի և օրենսդրությամբ սահմանված պահանջների պահպանումը:

Միաժամանակ, Մարդու իրավունքների պաշտպանը խիստ կարևորում է նաև հավաքների ընթացքում Ոստիկանության ծառայողների գործողությունների իրավաչափության պատշաճ գնահատման հարցը: Նշվածի առնչությամբ խնդրահարույց է, որ, օրինակ, Ներքին գործերի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2025 թվականին անցկացված հավաքների ընթացքում ոստիկանության ծառայողների գործողությունների իրավաչափությունը, այդ թվում՝ ոչ համաչափ ֆիզիկական ուժի գործադրման հանգամանքները պարզելու նպատակով ՆԳՆ ներքին անվտանգության և հակակոռուպցիոն վարչությունում իրականացվել է 2 կարգապահական վարույթ, որոնք թողնվել են անհետևանք, ոստիկանության ծառայողների գործողություններում կարգապահական բնույթի խախտման հատկանիշներ չհայտնաբերվելու հիմքով:

ՀՀ ներքին գործերի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2025 թվականի ընթացքում իրականացված հավաքների ընթացքում ՀՀ ՆԳՆ ոստիկանության գվարդիայի կողմից հատուկ միջոցներ չեն կիրառվել:

Նշվածի առնչությամբ հարկ է փաստել, որ Մարդու իրավունքների պաշտպանի անմիջական ուշադրության ներքո են եղել ոչ միայն 2025 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցած հավաքների ընթացքում արձանագրված խնդիրները, այլև նախկինում տեղի ունեցած հավաքների ընթացքում ոստիկանության ծառայողների գործողությունների, այդ թվում՝ հատուկ միջոցների կիրառման իրավաչափության պատշաճ գնահատման հետ կապված հարցերը:

2024 թվականի հունիսի 12-ին հատուկ միջոցների կիրառման համատեքստում Պաշտպանը շարունակում է խնդրահարույց համարել այն, որ մինչ այժմ հանրությանը չի տրամադրվել դեպքի հանգամանքների առնչությամբ այնպիսի պատշաճ տեղեկատվություն, որը հնարավորություն կտար նվազագույն պատկերացում կազմել հատուկ միջոցի կիրառման հիմքերի և իրավաչափության մասին: Ավելին, թե՛ կիրառված հատուկ միջոցի տեսակի, թե՛ մնացյալ հանգամանքների վերաբերյալ տեղեկատվությունը դիտարկվում է նախաքննական գաղտնիքի ներքո՝ սահմանափակելով վերջինիս հանրային հասանելիությունը: Մարդու իրավունքների պաշտպանը կարևորում է քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված կարգավորումների դերը համապատասխան գործընթացները պատշաճ կանոնակարգելու տեսանկյունից: Միևնույն ժամանակ, Պաշտպանն ընդգծում է, որ դրանք չեն կարող վերածվել հանրային հետաքրքրություն ներկայացնող դեպքերի առնչությամբ հանրության տեղեկացվածությունը սահմանափակելու կամ դա փաստացի արդարացնելու միջոցի: Ավելին, նշված գործերով անհրաժեշտ է երաշխավորել շուտափույթ, օբյեկտիվ և բազմակողմանի քննություն:

Գլխավոր դատախազության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2024 թվականի ընթացքում ՀՀ տարբեր տարածքներում իրականացված հավաքների կապակցությամբ ՀՀ ՔԿ ՀԿԳ քննության գլխավոր վարչության խոշտանգումների և պաշտոնատար անձանց կողմից բռնություն գործադրելով լիազորությունները չարաշահելու կամ անցնելու հանցագործությունների քննության վարչությունում նախաձեռնվել է 30 քրեական վարույթ, որից 13 քրեական վարույթ կարճվել է, իսկ թվով 17 քրեական վարույթներով նախաքննությունը շարունակվում է:

Այս համատեքստում հիշատակման է արժանի Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2025 թվականի՝ Ֆարմանյանն ու այլք ընդդեմ Հայաստանի գործով ընդունած վճիռը, որի շրջանակներում դատարանն անդրադարձել է մի քանի կարևոր հանգամանքների, այդ թվում՝ արձանագրել է, որ պետությունը պարտավոր է ոչ միայն ձեռնպահ մնալ անձանց կյանքից դիտավորյալ և անօրինական զրկելուց, այլև ձեռնարկել համապատասխան քայլեր իր իրավասության ներքո գտնվող անձանց կյանքը պաշտպանելու համար: Պետության այս պարտավորությունը, մասնավորապես, ենթադրում է միջազգային չափորոշիչների լույսի ներքո համապատասխան իրավական և վարչական/ ընթացակարգային շրջանակի ձևավորում, որով նախատեսած կլինեն այն սահմանափակ քանակով դեպքերը կամ հանգամանքները, որոնց պարագայում իրավապահ մարմինների ծառայողները կարող են կիրառել ֆիզիկական ուժ և հրազեն: Սա նշանակում է, որ ազգային օրենսդրությամբ սահմանված լինելուց բացի, ոստիկանական գործողությունները պետք է բավարար չափով համակարգված լինեն՝ ապահովելով կամայականությունն ու ուժի չարաշահումը բացառող երաշխիքներ, ինչպես նաև պատահարների կանխարգելման մեխանիզմներ:

Միևնույն ժամանակ, դատարանն, ի թիվս այլնի, նշել է, որ իշխանությունը չի կարողացել արդյունավետ քննություն իրականացնել դիմողների հարազատների մահվան հանգամանքների վերաբերյալ: Դատարանն ընդգծել է, որ նման քննությունը պետք է լինի նախաձեռնված և իրականացված ժամանակին, իրականացվի ողջամիտ ժամկետում, անկախ, անաչառ՝ բացառելով այնպիսի անձանց կամ կառույցների ներգրավումը, որոնք կարող են կողմնակալ վերաբերմունք դրսևորել[298]:

Այս առնչությամբ, հարկ է նշել նաև, որ քրեական արդարադատության համակարգում պատժի ու պատասխանատվության առաջացման որոշակիության ու կանխատեսելիության չափանիշներն ամրագրված են բազմաթիվ միջազգային իրավական փաստաթղթերում:

Հարկ է ընդգծել, որ ինչպես նշված որոշմամբ, այնպես էլ ՄԻԵԴ այլ նախադեպերի համատեքստում քննությունը վերաբերում է ոչ միայն քրեական վարույթների առկայությանը, այլև համապատասխան ծառայողական քննության իրականացմանը, կառույցների ներսում ծառայողների և վերադաս կազմի գործողություններին համապատասխան գնահատական տալու և պատասխանատվության ենթարկելու մեխանիզմների առկայությանը և դրանց գործադրմանը: Հաշվի առնելով վերոգրյալը՝ հարկ է նկատել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր որոշումներից մեկով ցուցարարների նկատմամբ խոշտանգումների և այլ դաժան վերաբերմունքի համար պատասխանատու անվտանգության ուժերի անդամներին պատժելու իրավական կառուցակարգերի անբավարարությունը ճանաչել է խախտում[299]:

Ներկայացվածի համատեքստում՝ Մարդու իրավունքների պաշտպանը խիստ անհրաժեշտ է համարում Ոստիկանության ծառայողների գործողությունների իրավաչափության առնչությամբ պատշաճ քննության իրականացումն ու քննության արդյունքների հիման վրա վերջիններիս գործողություններն իրավաչափ չճանաչվելու դեպքում համապատասխան պատասխանատվության միջոցների կիրառումը: Պաշտպանն ընդգծում է, որ նման բոլոր դեպքերի քննությունը պետք է իրականացվի միջազգային չափանիշներին համապատասխան՝ չսահմանափակվելով ձևական կամ մասնակի ուսումնասիրություններով, այլ ուղղված լինի հանգամանքների լիարժեք բացահայտման և

[298] Տեղեկատվությունը հասանելի է https://hudoc.echr.coe.int/eng#{%22itemid%22:[%22001-245048%22]} հղումով:
[299] Տե՛ս, Սեստարոն ընդդեմ Իտալիայի (Cestaro v. Italy) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2015 թվականի ապրիլի 7-ի վճիռը, գանգատ թիվ 6884/11:

համապատասխան անձանց նկատմամբ պատասխանատվության մեխանիզմների գործարկմանը: Միևնույն ժամանակ, այս գործընթացները պետք է զուգորդված լինեն պատշաճ հանրային իրազեկմամբ՝ երաշխավորելով իրավասու մարմինների գործունեության թափանցիկությունը:

Նման արդյունավետ քննության և պատասխանատվության մեխանիզմների կիրառումը ոչ միայն ուղղված է կոնկրետ դեպքերում արդարության վերականգնմանը, այլև ունի համակարգային նշանակություն՝ նպաստելով ապագա խախտումների կանխարգելմանը, ինչպես նաև հանրային վստահության բարձրացմանը իրավապահ մարմինների նկատմամբ:

Այս առումով առկա խնդիրների մասին են վկայում նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից ներկայացված դիրքորոշումները:

Ներկայացվածի հետ մեկտեղ, հարկ է նկատել, որ ՀՀ ներքին գործերի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն, իրականացվել են մի շարք իրազեկման միջոցառումներ՝ ուղղված խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունքի երաշխավորմանը: Այսպես, օրինակ, 2025 թվականի ընթացքում ՀՀ ՆԳՆ կրթահամալիրում կազմակերպվել և իրականացվել են վերապատրաստման դասընթացներ ՀՀ ՆԳՆ ոստիկանության 19 ծառայողների համար, 2.651 ծառայող ծառայողական պարապմունքների ընթացքում ուսումնասիրել է «Խոշտանգման և վատ վերաբերմունքի դեպքերի կանխարգելման» թեման: Տրամադրված տեղեկատվության համաձայն՝ շարունակական աշխատանքներ են տարվում՝ ուղղված ոստիկանության ծառայողների գիտելիքների և հմտությունների կատարելագործմանը, վերջիններս պարբերաբար հրահանգավորվում են, որպեսզի հավաքների ընթացքում ոստիկանության կողմից գործադրված միջոցները լինեն համաչափ, բխեն ստեղծված իրավիճակից և անհրաժեշտ լինեն տվյալ իրադրությունում հասարակական կարգի ու անվտանգության ապահովման՝ օրենքով սահմանված ոստիկանության պարտականությունները կատարելու համար և այլն:

Հատկանշական է նաև ՀՀ ներքին գործերի նախարարի 2025 թվականի հոկտեմբերի 30-ի «Ոստիկանության ծառայողների կողմից ուժային միջոցների գործադրման ստանդարտացված գործելակարգը սահմանելու մասին» թիվ 6-Ն հրամանի ընդունումը:

Չնայած վերոշարադրյալ առանձին քայլերին և զարգացումներին՝ Մարդու իրավունքների պաշտպանը խիստ կարևորում է խաղաղ հավաքների իրականացումն ու երաշխավորումը, որպես ժողովրդավարության առանցքային բաղադրիչ և խնդրահարույց է համարում իրավակիրառ պրակտիկայում ձևավորված ու արմատացած համակարգային խնդիրների շարունակական առկայությունը: Պաշտպանը այս տեսանկյունից հատուկ ընդգծում է նաև Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի ընդունման կարևորությունը: Վարչական իրավախախտումների ու դրանց վարույթների վերաբերյալ օրենսդրության արդիականության խնդրի մասին արձանագրվել է դեռևս Սահմանադրական դատարանի՝ Պաշտպանի դիմումի հիման վրա 2017 թվականի հունվարի 24-ի թիվ ՍԴՈ-1339 որոշմամբ, ըստ որի՝ երկրում սահմանադրական օրինականության հաստատման տեսանկյունից անհետաձգելի անհրաժեշտություն է Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի ընդունումը:

Միևնույն ժամանակ, Պաշտպանն արձանագրում է, որ հավաքի խաղաղ ընթացքի երաշխավորումը ենթադրում է ինչպես պետական իրավասու մարմինների, այնպես էլ հավաքի կազմակերպիչների և մասնակիցների կողմից վերջիններիս կողմից օրենսդրությամբ սահմանված պահանջների պահպանում: Դա վերաբերում է, այդ թվում՝

հավաքի ընթացքում բռնությունից, բռնության կոչերից, ատելության խոսքի դրսևորումներից զերծ մնալուն, որպիսի դրսևորումները ևս 2025 թվականի ընթացքում եղել են ակնհայտ և խնդրահարույց:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է.

✓ շարունակական քայլեր ձեռնարկել, այդ թվում՝ պարբերական վերապատրաստումների միջոցով, Ոստիկանության կողմից անհամաչափ ուժի գործադրումը և վատ վերաբերմունքի դեպքերը բացառելու նպատակով,

✓ իրականացնել անհամաչափ ուժի գործադրման և վատ վերաբերմունքի առերևույթ դեպքերի առնչությամբ պատշաճ, օբյեկտիվ և բազմակողմանի քննություն՝ երաշխավորելով պատասխանատվության անխուսափելիությունը,

✓ շարունակել ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ հավաքների ազատության իրավունքի երաշխավորման և իրավունքի սահմանափակման իրավաչափության վերաբերյալ ՀՀ ՆԳՆ ոստիկանության ծառայողների գիտելիքների և կարողությունների զարգացման ուղղությամբ՝ ներպետական և միջազգային իրավական չափանիշների հաշվառմամբ,

✓ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ հավաքների ազատության իրավունքի սահմանափակման յուրաքանչյուր կոնկրետ դեպքում սահմանափակման իրավաչափության չափանիշները պահպանելու ուղղությամբ՝ իրավունքի սահմանափակումը հիմնավորելով ծանրակշիռ և համոզիչ փաստարկներով,

✓ երաշխավորել պատասխանատվության անխուսափելիությունն այն դեպքերում, երբ Ոստիկանության ծառայողները չեն պահպանում օրենսդրությամբ սահմանված պահանջները:

✓ երաշխավորել 2024 թվականին հավաքի ընթացքում հատուկ միջոցների կիրառման դեպքի հանգամանքների առնչությամբ պատշաճ հանրային հաղորդակցություն՝ տրամադրելով տեղեկատվություն կիրառված հատուկ միջոցի տեսակի, կիրառման հիմքերի և իրավաչափության մասին, ինչպես նաև իրականացնելով օբյեկտիվ և բազմակողմանի քննություն:

ԲԱԺԻՆ 13. ՊԱՏՇԱՃ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

1. Կատարողական վարույթի իրականացման ընթացքում առաջացած տարատեսակ խնդիրներ

Հաշվետու տարում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի և Հարկադիր կատարումն ապահովող ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) միջև հաստատված է եղել պատշաճ և բարձր մակարդակի համագործակցություն, որի շնորհիվ քաղաքացիների դիմում-բողոքներով բարձրացրած բազմաթիվ հարցեր ստացել են լուծումներ: Միևնույն ժամանակ, 2025 թվականին Մարդու իրավունքների պաշտպանին շարունակել են հասցեագրվել բողոքներ՝ կապված կատարողական վարույթի իրականացման ընթացքում առաջացած տարատեսակ խնդիրների հետ:

Այսպես, օրինակ՝ Մարդու իրավունքների պաշտպանին դիմած անձը հայտնել է, որ որդու ուսման վարձը չվճարելու հետևանքով ուսումնական հաստատությունը դիմել է դատարան, արդյունքում հայցը բավարարվել է և տրվել է կատարողական թերթ: Ըստ բողոք ներկայացրած անձի՝ կատարողական թերթի կատարման ընթացքում արգելանք է դրվել ոչ թե պարտապան հանդիսացող որդու դրամական միջոցների, այլ իր ամուսնուն պատկանող գույքի և դրամական միջոցների վրա (վերջինս չի հանդիսանում կատարողական վարույթի կողմ): Հայտնել է նաև, որ խնդրի լուծման նպատակով դիմել է Ծառայություն, սակայն եռօրյա ժամկետում հարկադիր կատարողի կողմից արգելանքը չի հանվել, ուստի խնդրել է ՄԻՊ աջակցությունը Ծառայության կողմից դրված արգելանքը հանելու հարցում:

Պաշտպանի ներկայացուցիչը բարձրացված հարցը քննարկել է Ծառայության իրավասու ներկայացուցչի հետ: Վերջինս հայտնել է, որ հարկադիր կատարողի կողմից դրված արգելանքն արդեն իսկ հանվել է: Ավելի ուշ՝ ստացված տեղեկատվությունը հաստատել է նաև Պաշտպանին դիմած անձը: Այս դեպքում, թեև խնդիրը լուծվել է և Ծառայությունը հանել է դրված արգելանքը, այնուհանդերձ խնդրահարույցն այն է, որ արգելանքը չի հանվել դրա համար հիմք հանդիսացող հանգամանքները հայտնի դառնալու օրվանից եռօրյա ժամկետում, ինչը բողոք ներկայացրած անձի տեղեկացմամբ՝ ընտանիքի համար առաջացրել է հավելյալ դժվարություններ դրամական միջոցները տնօրինելու տեսանկյունից:

Պաշտպանին ներկայացված մեկ այլ բողոքով անձը հայտնել է, որ կատարողական թերթի կատարման ընթացքում Ծառայությունն իր (որպես պարտապանի) ամբողջ աշխատավարձի (հարյուր տոկոսի) չափով է կատարել պահումը: Մինչդեռ, ըստ բողոք ներկայացրած անձի, պարտապանի աշխատավարձից կարող է պահվել հիսուն տոկոսից ոչ ավելի: Հայտնել է նաև, որ խնդիրը լուծելու համար գործատուի կողմից տրամադրված՝ աշխատավարձի չափի մասին տեղեկանքը ներկայացրել է Ծառայություն և ստացել պատասխան, որ *2-3 աշխատանքային օրվա ընթացքում* աշխատավարձից պահվող գումարի չափը կվերանայվի: Այնուհանդերձ, ըստ բողոք ներկայացրած անձի, Պաշտպանին դիմելու օրվա դրությամբ այն չի վերանայվել: ՄԻՊ աշխատակազմի և Ծառայության արդյունավետ համագործակցության արդյունքում հնարավոր է եղել կարգավորել խնդիրը, սակայն այս դեպքում նույնպես վարչարարական քաշքշուքների պատճառով անձի համար առաջացրել են հավելյալ դժվարություններ և վերջինս ստիպված է եղել օրենքով սահմանված ժամկետից ավելի սպասել խնդրի լուծմանը: Այս առումով,

կարևոր է նաև այն հանգամանքը, որ օրենքով սահմանված եռօրյա ժամկետի հաշվարկը Ծառայությունը պետք է կատարեր ոչ թե աշխատանքային, այլ օրացուցային օրերով:

Հաշվետու տարում ՄԻՊ-ին հընթացս հասցեագրվել է նաև բողոք, որով անձը հայտնել է, որ Ծառայությունը կատարողական թերթի կատարման ընթացքում իր (որպես պարտապանի) աշխատավարձից յուրաքանչյուր ամիս բռնագանձում է 70 700 դրամի չափով գումար: Հավելել է, որ նոյեմբեր ամսին նշված գումարի փոխարեն՝ բռնագանձվել է 141 400 դրամի չափով գումար (կրկնակի ավել): Ըստ պնդման՝ այս հարցով դիմել է հարկադիր կատարողին և տեղեկացվել, որ խնդրի կարգավորման ուղղությամբ միջոցներ կձեռնարկվեն: Բողոք ներկայացրած անձը հավելել է, որ Պաշտպանին դիմելու օրվա դրությամբ աշխատավարձից բռնագանձված 70 700 դրամ գումարն այդպես էլ չի վերադարձվել իրեն: Չնայած բարձրացված խնդիրը Պաշտպանի միջամտության արդյունքում ստացել է լուծում և բողոք ներկայացրած անձի աշխատավարձից հավելյալ բռնագանձված 70 700 դրամ գումարը Ծառայության կողմից վերադարձվել է նրան, սակայն պարտապանը տևական ժամանակ զրկված է եղել իր աշխատավարձը (դրա մի մասը) տնօրինելու հնարավորությունից:

Հարկ է նկատել, որ ոչ բոլոր դեպքերում է հնարավոր լինում բողոք ներկայացրած անձանց աշխատավարձից հավելյալ բռնագանձված գումարները վերադարձնել իրենց: Այսպես, օրինակ՝ ՄԻՊ-ին ներկայացված բողոքներից մեկով անձը տեղեկացրել է, որ ամուսինը ստանում է 90 000 դրամ աշխատավարձ, որն ընտանիքի միակ եկամուտն է: Հայտնել է, որ Ծառայությունը պարտապան հանդիսացող ամուսնու աշխատավարձից յուրաքանչյուր ամիս 30 տոկոսի չափով կատարում է բռնագանձում, սակայն հուլիս ամսին բռնագանձել է ամբողջ աշխատավարձը (100 տոկոսի չափով): Ըստ պնդման՝ այդ մասին հայտնել է Ծառայության ներկայացուցչին, սակայն վերջինիս կողմից միջոցներ չեն ձեռնարկվել խնդրի կարգավորման ուղղությամբ:

Բարձրացված հարցի կապակցությամբ ՄԻՊ աշխատակազմ Ծառայությունից ստացվել է պարզաբանում առ այն, որ տեխնիկական խնդրով պայմանավորված՝ պարտապանի ամբողջ աշխատավարձն ուղղվել է կատարողական թերթից բխող պարտավորությունների մարմանը: Արդյունքում, տրամադրված տեղեկատվության համաձայն, պարտապանի վերաբերյալ առկա կատարողական վարույթներից մեկը կարճվել է:

Այսպիսով, ստացվում է, որ Ծառայությունն առերևույթ չի ապահովել բողոք ներկայացրած անձի հայեցողությամբ իր սեփականություն հանդիսացող աշխատավարձի տիրապետման, օգտագործման և տնօրինման իրավունքը (արդյունքում՝ ստեղծված իրավիճակը հանգեցրել է բողոք ներկայացրած անձի կամաարտահայտությունից անկախ նրա սեփականության իրավունքի սահմանափակման):

Մեկ այլ բողոքով Պաշտպանին դիմած անձը հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի կողմից կայացված վարչական տույժ նշանակելու մասին որոշումն օրենքով սահմանված ժամկետում բողոքարկել է Վարչական դատարան: Մինչդեռ, ըստ բողոք ներկայացրած անձի, Երևանի քաղաքապետարանը վարչական ակտն անբողոքարկելի դառնալու համապատասխան հիմքի բացակայության պայմաններում՝ այն ուղարկել է հարկադիր կատարման: Բողոք ներկայացրած անձն իր մտահոգությունն է հայտնել առ այն, որ հարկադիր կատարողը, ներկայացված փաստաթղթերը վարչական մարմնին վերադարձնելու փոխարեն՝ կայացրել է կատարողական վարույթ հարուցելու, գույքի նկատմամբ հետախուզում հայտարարելու և արգելանք դնելու մասին որոշում: Հավելել է, որ վարչական ակտի դատական կարգով բողոքարկված լինելու մասին

տեղեկացրել է Ծառայությանը՝ խնդրելով հանել իր գույքի նկատմամբ դրված արգելանքը, սակայն արդյունքի չի հասել:

Բարձրացված հարցի կապակցությամբ Պաշտպանը պարզաբանումներ է պահանջել Ծառայությունից: Ի պատասխան՝ հայտնել են, որ հարուցված կատարողական վարույթը, որով պետք է անձից հօգուտ Երևանի քաղաքապետարանի բռնագանձվեր 150 000 դրամ, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի հիմքով կարճվել է:

Սույն տարեկան հաղորդման կազմման աշխատանքների շրջանակում նշված խնդիրների կարգավորման ուղղությամբ ձեռնարկված միջոցների առնչությամբ Արդարադատության նախարարությունից ստացվել են պարզաբանումներ առ այն, որ կատարողական վարույթների վարման էլեկտրոնային համակարգում ներդրված է Պետական եկամուտների կոմիտե հարցում կատարելու միջոցով պարտապանի՝ որպես վարձու աշխատող հանդիսանալու հանգամանքը պարզելու, ինչպես նաև ինքնաշխատ եղանակով գործատուի հաշիվներից փոխանցվող գումարներին ազատ տնօրինում տալու կառուցակարգը, այլ կերպ ասած՝ Պետական եկամուտների կոմիտեից տեղեկատվություն է ստացվում ինչպես պարտապանի՝ վարձու աշխատող հանդիսանալու վերաբերյալ, այնպես էլ տրամադրվում են տվյալ պարտապանի գործատուի հաշվեհամարները, որոնցից պարտապանին փոխանցվում է աշխատավարձի գումարը (նշված հաշվեհամարները ևս ինքնաշխատ եղանակով արտացոլվում են կատարողական վարույթների վարման էլեկտրոնային համակարգում), *ինչի արդյունքում հնարավորինս նվազեցվել է կատարողական վարույթը հարուցելիս պարտապանին որպես աշխատավարձ վճարված գումարի վրա արգելանք դնելու և բռնագանձելու հնարավորությունը, քանի որ նախկինում հարկադիր կատարողը տեղեկացված չէր լինում աշխատավարձի հանգամանքի մասին մինչև պարտապանի կողմից աշխատանքի վայրի վերաբերյալ տեղեկանք ներկայացնելը:* Նույն պարտապանի մի շարք պարտավորությունների առկայության դեպքում հարուցված կատարողական վարույթների շրջանակներում վերջիններից որպես աշխատավարձ բռնագանձված գումարները 2025 թվականին բաշխվել են ըստ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 69-րդ հոդվածով սահմանված հաջորդականության:

Նախարարության տեղեկացմամբ՝ *հարուցված կատարողական վարույթների շրջանակներում պարտապանի կողմից աշխատանքի վայրից տրամադրված տեղեկանքը ներկայացնելու դեպքում հարկադիր կատարողի կողմից գործատուի հաշիվներին փոխանցվող գումարներին տրվում է եռօրյա ժամկետում ազատ տնօրինում:*

Ըստ նախարարության պարզաբանման՝ *կատարողական վարույթի կողմ չհանդիսացող անձի գույքի նկատմամբ արգելանք չի կիրառվում*, ինչ վերաբերում է պարտապանի ամուսնու գույքի նկատմամբ հայտարարված հետախուզմանը, ապա նշված կարգավորումը բխում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածից և գույքի հետախուզումն իրականացվում է պարտապանին պատկանող գույք հայտնաբերելու նպատակով: *Եթե առանձին դեպքերում ներկայացված սխալ տվյալների հիման վրա կատարողական վարույթով որպես պարտապան է ընդգրկվում պարտավորության կողմ չհանդիսացող անձ, ապա վերջինիս գույքի նկատմամբ կիրառված արգելանքներն անմիջապես վերացվում են համապատասխան հիմքերը ներկայացնելուց հետո:*

Վերոգրյալ պարզաբանման համատեքստում՝ Պաշտպանը մեկ անգամ ևս հրավիրում է իրավասու պետական մարմինների ուշադրությունը վերը ներկայացված դեպքերին, որոնք, ըստ էության (առերևույթ), փաստում են հակառակի մասին: Միևնույն ժամանակ, հարկ է ընդգծել, որ վերը ներկայացված դեպքերը վերլուծության են ենթարկվել

կատարողական գործողության կատարման պահին գործող իրավակարգավորումների լույսի ներքո: Այս տեսանկյունից, իբրև դրական առաջընթաց պետք է դիտել այն, որ 2026 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ է մտել կատարողական վարույթը կանոնակարգող նոր օրենք[300], որի գործողությունը կարող է նպաստել կատարողական գործողությունների իրականացման օպերատիվության և արդյունավետության բարձրացմանը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պաշտպանը վերահաստատում է, որ անհրաժեշտ է՝

✓ միջոցներ ձեռնարկել կատարողական վարույթով որպես պարտապան ընդգրկված, սակայն պարտավորության կողմ չհանդիսացող անձի դրամական միջոցների վրա արգելանք դնելու պրակտիկայում հանդիպող դեպքերը բացառելու ուղղությամբ.

✓ կատարողական գործողությունների կատարման ձգձգման և (կամ) ուշացման հետևանքով կատարողական վարույթի կողմերին ոչ պատշաճ վարչարարությամբ վնաս հասցնելու հնարավոր դեպքերը բացառելու նպատակով՝ ուժեղացնել հարկադիր կատարողների՝ օրենքի պահանջների հստակ և ժամանակին կատարման նկատմամբ վերահսկողությունը:

2. Փաստացի կատարման հիմքով կարճված կատարողական վարույթի վերսկսման օրենսդրական հիմքերի բացակայության խնդիր

2025 թվականին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ ստացված բողոքի ուսումնասիրության արդյունքում վեր է հանվել ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայությունում (այսուհետ՝ Ծառայություն) հարուցված, ապա փաստացի կատարման հիմքով կարճված կատարողական վարույթի վերսկսման օրենսդրական հիմքերի բացակայության հետ կապված խնդիր:

Այսպես, օրինակ՝ Պաշտպանին հասցեագրված բողոքով փաստաբանը հայտնել է, որ իր վստահորդի կողմից ինքնակամ կառուցվել է բնակելի տան պարիսպ: Հավելել է, որ պարսպի օրինականացման նպատակով 2021 թվականի հունվարին դիմել է Երևանի քաղաքապետարան, սակայն օրենքով սահմանված ժամկետում վարչական ակտ չի կայացվել:

Հաջորդիվ, ըստ տեղեկացման, 2021 թվականի նոյեմբերին հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան՝ կառուցված ինքնակամ պարիսպը՝ ըստ գեոդեզիական հանույթի դրանով պարփակված հողամասն օրինական ճանաչելու վերաբերյալ վարչական ակտը տրամադրելուն պարտավորեցնելու, ինչպես նաև հողամասն ու շինությունը մինչև 2021 թվականի հունվարի 1-ը գործող կադաստրային արժեքով իրեն օտարելու պահանջի մասին: Նշել է, որ վարչական գործի շրջանակում 2023 թվականի հունիսի 16-ին կայացված վճռով դատարանը մասնակի բավարարել է պահանջը՝ կառուցված ինքնակամ պարիսպը՝ ըստ գեոդեզիական հանույթի դրանով պարփակված հողամասն օրինական ճանաչելու վերաբերյալ վարչական ակտը տրամադրելուն պարտավորեցնելու մասով:

Բողոք ներկայացրած փաստաբանը նշել է, որ Երևանի քաղաքապետարանի կողմից վճռի պահանջը չի կատարվել, ուստի տրամադրվել է կատարողական թերթ, որի հիման վրա Ծառայությունում 2025 թվականի մարտին հարուցվել է կատարողական վարույթ: Հայտնել է, որ կատարողական վարույթի շրջանակում 2025 թվականի ապրիլին Երևանի

[300] Հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.arlis.am/hy/acts/218956/latest (20/03/2026թ.-ի դրությամբ):

քաղաքապետի կողմից ընդունվել է համապատասխան վարչական ակտ, որի հաշվառմամբ՝ նույն ամսին կատարողական վարույթը կարճվել է:

Փաստաբանը հավելել է, որ 2025 թվականի մայիսին Երևանի քաղաքապետը կայացրել է նոր որոշում, որով անվավեր է ճանաչել կատարողական վարույթի շրջանակում կայացված Երևանի քաղաքապետի 2025 թվականի ապրիլին ընդունված վարչական ակտը: Նշել է նաև, որ կարճված կատարողական վարույթը վերսկսելու նպատակով դիմում է ներկայացրել Ծառայություն, սակայն արդյունքի չի հասել:

Բողոք ներկայացրած փաստաբանի պնդմամբ՝ վերոնշյալ հանգամանքների հաշվառմամբ՝ ստեղծվել է մի իրավիճակ, երբ կատարողական վարույթը կարճվել է՝ հիմքում դնելով այնպիսի որոշում, որն ավելի ուշ մեկ այլ որոշմամբ անվավեր է ճանաչվել:

Միևնույն ժամանակ, փաստաբանը տեղեկացրել է, որ 2025 թվականի հուլիսին հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ Երևան համայնքի՝ Երևանի քաղաքապետի 2025 թվականի մայիսին կայացված որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասով, որը 2025 թվականի օգոստոսին ընդունվել է վարույթ:

Քննարկվող խնդրի կապակցությամբ պարզաբանումներ ստանալու նպատակով Մարդու իրավունքների պաշտպանը գրություն է հասցեագրել Ծառայություն: Պատասխան գրությամբ տեղեկություն է տրամադրվել այն մասին, որ Վարչական դատարանի կողմից տրված կատարողական թերթի հիման վրա Ծառայությունում 2025 թվականի մարտին հարուցվել է կատարողական վարույթ, որի շրջանակում նույն օրը կայացվել է «Պարտապանին որոշակի գործողություններ կատարելուն պարտադրելու կամ որոշակի գործողություններից ձեռնպահ մնալուն հարկադրելու մասին» որոշում: Հաջորդիվ, 2025 թվականի ապրիլին Ծառայություն է մուտքագրվել Երևանի քաղաքապետարանի գրությունը, որով ներկայացվել է Երևանի քաղաքապետի կողմից 2025 թվականի ապրիլին կայացված՝ ինքնակամ կառույցի օրինականացման մասին որոշում: Նշվածի հիման վրա կատարողական վարույթը 2025 թվականի նույն ամսին կարճվել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով:

Միևնույն ժամանակ, գրությամբ Ծառայությունն անդրադարձ է կատարել նաև կատարողական վարույթը վերսկսելու հնարավորության հարցին՝ նշելով, որ կատարողական վարույթի շրջանակում կատարողական թերթի պահանջը փաստացի կատարվել է Երևանի քաղաքապետի կողմից 2025 թվականի ապրիլին կայացված՝ ինքնակամ կառույցի օրինականացման մասին որոշմամբ, որի հիման վրա կատարողական վարույթը նույն ամսին կարճվել է, իսկ Երևանի քաղաքապետարանի նոր որոշումը կայացվել է 2025 թվականի մայիսին, այսինքն՝ նշված իրավահարաբերությունն առաջացել է կատարողական վարույթը փաստացի կարճելուց հետո: Տեղեկացվել է նաև, որ տվյալ պարագայում կատարողական թերթը մեկանգամյա կատարման գործողություն է ենթադրել, ինչն իրականացվել և կատարողական թերթի պահանջը փաստացի կատարվել է, որի հիմքով կատարողական վարույթը կարճվել է:

Խնդրի ուսումնասիրության և դրա լուծման ուղղությամբ համապատասխան միջոցներ ձեռնարկելու *(այդ թվում՝ օրենսդրական մակարդակում փոփոխություններ նախաձեռնելու)* հարցի քննարկման նպատակով Մարդու իրավունքների պաշտպանը գրություն է հասցեագրել նաև ՀՀ արդարադատության նախարարություն:

Ստացված պատասխան գրությամբ, ի թիվս այլնի, անդրադարձ է կատարվել նաև նմանատիպ կարճված կատարողական վարույթների վերսկսման հարցին, մասնավորապես, նշվել է, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 28-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հարկադիր կատարողի կայացրած որոշումը կարող

է բողոքարկվել վերադասության կարգով որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ երկամսյա ժամկետում, կամ վարչական դատարան՝ օրենքով սահմանված ժամկետներում:

Միևնույն ժամանակ, նախարարության կողմից հղում է կատարվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգավորումներին, մասնավորապես, վարչական ակտը վարչական կամ դատական կարգով բողոքարկվելու ընթացակարգերին, նշելով, որ կատարողական վարույթի կողմերը հարկադիր կատարողի կայացրած որոշումները կարող են բողոքարկել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում: Նշվածի ամփոփմամբ՝ նախարարությունը հայտնել է, որ քննարկման առարկա չի կարող դարձվել օրենսդրական մակարդակում փոփոխություններ ձեռնարկելու անհրաժեշտությունը:

Այսպիսով, ստացվում է, որ նման պայմաններում պարտատերը ստիպված է ի նպաստ իրեն կայացված դատական ակտի կատարումն ապահովելու նպատակով կրկին դիմել դատական պաշտպանության՝ ծախսելով հավելյալ ժամանակ և ֆինանսներ:

Կարծում ենք, որ նման գործելաոճը համահունչ չէ իրավական որոշակիության սկզբունքի առանցքային տարրերից մեկի՝ դատական ակտերի կայունության (res judicata) սկզբունքի հետ, որի ցանկացած խախտում հանգեցնում է իրավական որոշակիության խաթարման և ազդում իրավունքի գերակայության սկզբունքի վրա: Այդ սկզբունքի հիմքում ընկած է իրավական կարգադրագրերի կայունության, օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի անփոփոխելիության և համընդհանուր պարտադիրության գաղափարը, որով, ի թիվս այլնի, ապահովվում է դատարանների հեղինակությունն ու վստահությունը դատական իշխանության նկատմամբ: Իրավական պետության հայեցակարգից և դրանից ածանցվող իրավական որոշակիության սահմանադրահիրավական սկզբունքից բխում է օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի նկատմամբ վստահության, այլ կերպ ասած՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի ճշմարտացիության կանխավարկածը, ինչից էլ բխում է ներպետական դատարանների վերջնական դատողությունները հարգելու ու դրանք կասկածի տակ չդնելու կանոնը:

Տրամադրված պարզաբանման համատեքստում հարկ է անդրադառնալ նաև ՀՀ վճռաբեկ դատարանի արձանագրումներին, ըստ որոնց՝ *իրավական որոշակիության սկզբունքն ըստ էության երաշխավորում է օրինական ուժի մեջ մտած դատական ակտի կայունությունը, ինչը, ի թիվս այլ հատկանիշների (անհերքելիություն, բացառիկություն, նախադատելիություն), ենթադրում է այդպիսի դատական ակտի պարտադիրությունը: Պարտադիրության հատկանիշը ենթադրում է, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, իրավաբանական անձինք ու քաղաքացիներն իրենց գործունեության ընթացքում պարտավոր են հաշվի առնել օրինական ուժի մեջ մտած դատական ակտը և իրավունք չունեն տվյալ դատական ակտով կայացված հարցի վերաբերյալ կայացնելու նոր որոշում*[301]*:*

Վերոնշյալի հաշվառմամբ՝ Պաշտպանն առաջարկում է քննարկման առարկա դարձնել կատարողական թերթի փաստացի կատարման հիմքով կարճված կատարողական վարույթը վերսկսելու կամ դատական ակտի պահանջների կատարման ապահովմանն ուղղված օրենսդրական արդյունավետ կառուցակարգերի նախատեսման հարցը:

[301] Տե՛ս Վճռաբեկ դատարանի 2015 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ ԵԱԴԴ/0913/02/13 և 2024 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ ԱՎԴ2/0105/02/23 քաղաքացիական գործերով որոշումները:

3. Անբողոքարկելի չդարձած վարչական ակտերը հարկադիր կատարման ներկայացնելու հետ կապված գործնական խնդիր

2025 թվականին Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված դիմում-բողոքների ուսումնասիրության արդյունքում վեր է հանվել անբողոքարկելի չդարձած վարչական ակտերը հարկադիր կատարման ներկայացնելու հետ կապված գործնական խնդիր: Հաշվետու տարում Պաշտպանին դիմած անձինք հայտնել են, որ մինչև վարչական ակտերի վերադասության կամ դատական կարգով բողոքարկելու օրենքով սահմանված ժամկետը լրանալը՝ դրանք պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ուղարկվում են հարկադիր կատարման, արդյունքում՝ իրենք զրկվում են բողոքարկման, ինչպես նաև լսված լինելու իրենց իրավունքների պատշաճ իրացման հնարավորությունից:

Թեև 2025 թվականի ընթացքում Պաշտպանի միջամտությամբ և իրավասու պետական մարմինների հետ արդյունավետ համագործակցության արդյունքում հնարավոր է եղել մի շարք այդպիսի հարցերի տալ լուծում, այնուհանդերձ խնդրի հաղթահարման համար անհրաժեշտ է գտնել համակարգային լուծումներ:

Այսպես, օրինակ՝ Պաշտպանին ներկայացված բողոքներից մեկով փաստաբանը հայտնել է, որ Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնում (այսուհետ՝ Տեսչական մարմին) 2024 թվականի նոյեմբերի 11-ին հարուցվել է վարչական վարույթ՝ իր վստահորդին պատկանող մասնավոր կազմակերպությունում ՀՀ աշխատանքային օրենսգրքի մի շարք հոդվածների պահանջների պահպանումը պարզելու նպատակով: Հավելել է, որ Տեսչական մարմնի նույն թվականի դեկտեմբերի 26-ի որոշմամբ՝ իր վստահորդի նկատմամբ նշանակվել է վարչական տույժ: Բողոք ներկայացրած անձը հայտնել է նաև, որ 2025 թվականի փետրվարի 24-ին հայցադիմում է ներկայացրել Վարչական դատարան՝ Տեսչական մարմնի որոշումն անվավեր ճանաչելու պահանջով (2025 թվականի մարտի 6-ին հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշում է կայացվել): Հավելել է, որ հայցադիմումի և կից փաստաթղթերի օրինակները նույն օրը փոստային առաքանիով ուղարկվել են Տեսչական մարմին: Ըստ պնդման՝ Տեսչական մարմնում դրանք ստացվել են 2025 թվականի փետրվարի 26-ին: Բողոք ներկայացրած անձը նշել է, որ չնայած այն հանգամանքին, որ վարչական ակտը սահմանված ժամկետում դատական կարգով բողոքարկվել է և այդ մասին պատշաճ կերպով տեղեկացված է եղել Տեսչական մարմինը, այնուհանդերձ Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունից (այսուհետ՝ Ծառայություն) 2025 թվականի մարտի 24-ին տեղեկացվել է այն մասին, որ վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշումը դարձել է անբողոքարկելի և այդ հաշվառմամբ՝ Ծառայությունում հարուցվել է կատարողական վարույթ ու արգելանք է կիրառվել իր վստահորդին պատկանող գույքի և դրամական միջոցների վրա:

Բողոքի քննարկման շրջանակներում Տեսչական մարմնից ստացվել է պարզաբանում այն մասին, որ վարչական բողոքի հիման վրա 2025 թվականի մարտի 27-ին հարուցվել է բողոքարկման վարույթ, որի արդյունքում՝ վարչական բողոքն ամբողջությամբ բավարարվել է՝ Տեսչական մարմնի վարչական տույժ նշանակելու մասին որոշումը հարկադիր կատարման ներկայացնելու գործողության ոչ իրավաչափ լինելու հիմքով: Հայտնել են նաև, որ Ծառայության 2025 թվականի ապրիլի 1-ի «Հարկադիր կատարողի կողմից կայացված որոշումը վերադասության կարգով վերացնելու մասին» որոշմամբ վերացվել են կատարողական վարույթի շրջանակներում կայացված «Կատարողական վարույթ հարուցելու, գույքի նկատմամբ հետախուզում հայտարարելու և

արգելանք դնելու մասին» որոշումը և որպես հետևանք կատարողական վարույթի շրջանակներում կայացված մյուս որոշումները:

Մյուս դեպքում, Պաշտպանին հասցեագրված բողոքով փաստաբանը հայտնել է, որ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության կողմից իր վստահորդների նկատմամբ կայացվել են վարչական ակտեր, որոնք բողոքարկվել են վարչական կամ դատական կարգով: Հավելել է, որ Պարեկային ծառայությունը, անտեսելով այդ ակտերի բողոքարկված լինելու հանգամանքը, վարչական ակտերն անբողոքարկելի դառնալու հիմնավորմամբ՝ դրանք ուղարկել է հարկադիր կատարման: Արդյունքում, բողոք ներկայացրած փաստաբանի տեղեկացմամբ, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 5-րդ հոդվածով սահմանված կարգով քաղաքացիների դրամական միջոցների նկատմամբ կիրառվել են հարկադիր կատարման միջոցներ, ավելին՝ վարչական ակտերով սահմանված տուգանքներին ավելացվել են նաև նույն օրենքի 8-րդ գլխով սահմանված կատարողական գործողությունների կատարման ծախսերը, ինչը լրացուցիչ ֆինանսական դժվարություններ է առաջացրել իր վստահորդների համար: Բացի այդ, փաստաբանը տեղեկացրել է, որ վարչական ակտերի մի մասն անվավեր է ճանաչվել օրինական ուժի մեջ մտած դատական ակտերով, սակայն Պարեկային ծառայության կողմից անվավեր ճանաչված վարչական ակտերի հիման վրա գանձված գումարները չեն վերադարձվել իր վստահորդներին: Բողոք ներկայացրած փաստաբանը խնդրել է Պաշտպանի աջակցությունն իր վստահորդների նկատմամբ կայացված վարչական ակտերով բռնագանձված գումարները վերադարձնելու և նմանատիպ դեպքերը բացառելու ուղղությամբ համապատասխան միջոցներ ձեռնարկելու հարցերում:

Բարձրացված հարցերի կապակցությամբ՝ Պաշպանի գրությանն ի պատասխան՝ ՆԳՆ-ից հայտնել են, որ փաստաբանի վստահորդներից մեկի նկատմամբ կայացված վարչական ակտի վիճարկման հայցը Վարչական դատարանը վարույթ է ընդունել 02.09.2024 թվականին թվագրված որոշմամբ, որը ՀՀ դատական տեղեկատվական համակարգ է մուտքագրվել 29.09.2024 թվականին, սակայն որոշման օրինակը Պարեկային ծառայությանը տրամադրելու համար առաքման է հանձնվել 07.10.2024 թվականին: Այն Պարեկային ծառայությունում ստացվել է 11.10.2024 թվականին: Ըստ տրամադրված պարզաբանման՝ վարչական ակտը Պարեկային ծառայության կողմից էլեկտրոնային համակարգի միջոցով հարկադիր կատարման է ներկայացվել 09.10.2024 թվականին, քանի որ այդ օրվա դրությամբ դեռևս առկա չի եղել նշված ակտի վիճարկման հայցը վարույթ ընդունելու վերաբերյալ որոշում, իսկ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վիճարկվող վարչական ակտի կատարումը կասեցվում է մինչև այդ գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը միայն վիճարկման հայցը վարույթ ընդունվելու դեպքում: Այնուամենայնիվ, փաստաբանի դիմումի հիման վրա Պարեկային ծառայությունը հետ է կանչել վարչական ակտը հարկադիր կատարման ներկայացնելու մասին գրությունը, իսկ բռնագանձված գումարը վերադարձվել է փաստաբանի վստահորդին:

Փաստաբանի մյուս վստահորդի նկատմամբ կայացված վարչական ակտի վիճարկման հայցը վարչական դատարանը վարույթ է ընդունել 30.12.2024 թվականին, սակայն որոշման օրինակը Պարեկային ծառայությանը տրամադրելու համար առաքման է հանձնվել 15.01.2025 թվականին, որը Պարեկային ծառայությունը ստացել է 24.01.2025 թվականին: Ըստ տրված պարզաբանման՝ վարչական ակտը Պարեկային ծառայության կողմից էլեկտրոնային համակարգի միջոցով հարկադիր կատարման է ներկայացվել 05.02.2025 թվականին, երբ դեռ հայցը վարույթ ընդունելու վերաբերյալ որոշման մասին

տվյալները ներմուծված չեն եղել էլեկտրոնային համակարգ: Փաստաբանի դիմումի հիման վրա Պարեկային ծառայությունը հետ է կանչել վարչական ակտը հարկադիր կատարման ներկայացնելու մասին գրությունը, իսկ բռնագանձված գումարը վերադարձվել է նրա վստահորդին:

Փաստաբանի մեկ այլ վստահորդի նկատմամբ կայացված վարչական ակտի վիճարկման հայցը վարչական դատարանը վարույթ է ընդունել 30.12.2024 թվականին, սակայն որոշման օրինակը Պարեկային ծառայությանը տրամադրելու համար առաքման է հանձնվել 15.01.2025 թվականին, որը Պարեկային ծառայությունը ստացել է 24.01.2025 թվականին: Վարչական ակտը Պարեկային ծառայության կողմից էլեկտրոնային համակարգի միջոցով հարկադիր կատարման է ներկայացվել 03.02.2025 թվականին, երբ դեռ հայցը վարույթ ընդունելու վերաբերյալ որոշման մասին տվյալները ներմուծված չեն եղել էլեկտրոնային համակարգ: Փաստաբանի դիմումի հիման վրա բռնագանձված գումարը վերադարձվել է նրա վստահորդին:

Ըստ տեղեկացման՝ Փաստաբանի վստահորդի նկատմամբ կայացված վարչական ակտի վիճարկման հայցը վարչական դատարանը վարույթ է ընդունել 28.08.2024 թվականին, սակայն դատական տեղեկատվական համակարգ է մուտքագրվել 12.09.2025 թվականին, իսկ որոշման օրինակը Պարեկային ծառայություն է ստացվել 24.09.2025 թվականին՝ առձեռն: Վարչական ակտը Պարեկային ծառայության կողմից էլեկտրոնային համակարգի միջոցով հարկադիր կատարման է ներկայացվել 23.09.2025 թվականին, քանի որ այդ օրվա դրությամբ դեռևս առկա չի եղել նշված ակտի վիճարկման հայցը վարույթ ընդունելու վերաբերյալ որոշում, իսկ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վիճարկվող վարչական ակտի կատարումը կասեցվում է մինչև այդ գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը միայն վիճարկման հայցը վարույթ ընդունվելու դեպքում: Այնուամենայնիվ, Փաստաբանի դիմումի հիման վրա բռնագանձված գումարը վերադարձվել է նրա վստահորդին:

Հաշվի առնելով բարձրացված խնդրի համակարգային բնույթը՝ Մարդու իրավունքների պաշտպանը կրկին գրություն է հասցեագրել ՆԳՆ՝ խնդրելով հայտնել, *թե ի՞նչ միջոցներ են ձեռնարկվում անբողոքարկելի չդարձած վարչական ակտերը հարկադիր կատարման ուղարկելու դեպքերը բացառելու ուղղությամբ:*

Ի պատասխան՝ տրամադրվել է տեղեկատվություն այն մասին, որ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության կողմից ընդունված վարչական ակտերը հարկադիր կատարման են ներկայացվում էլեկտրոնային համակարգի միջոցով, որը ծրագրավորված է այնպես, որ վիճարկման հայց ներկայացնելու համար սահմանված երկամսյա ժամկետի սկիզբ է ընդունվում վարչական ակտի վերադասության կարգով բողոքարկման արդյունքում կայացված որոշումը հասցեատիրոջ կողմից ստանալու (պատշաճ ծանուցված համարվելու) օրվան հաջորդող օրը: Վարչական ակտը վերադասության կարգով բողոքարկելու արդյունքում կայացված որոշումն ուժի մեջ մտնելուց հետո վարչական ակտն էլեկտրոնային համակարգի միջոցով հարկադիր կատարման է ներկայացվում առնվազն 3 ամիս 15 օր անց: Այսինքն, բացի վիճարկման հայցի համար նախատեսված երկամսյա ժամկետը, ևս 1 ամիս 15 օր վարչական ակտը հարկադիր կատարման չի ներկայացվում՝ հաշվի առնելով դատավարական ընթացակարգերը և փոստային ծառայության ժամկետները: Նշված ժամկետում վարչական ակտի վիճարկման հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշման բացակայության պայմաններում միայն վարչական ակտը ներկայացվում է հարկադիր կատարման: *Ըստ նախարարության տեղեկացման՝ անբողոքարկելի դարձած վարչական ակտերը հարկադիր կատարման ներկայացնելու դեպքերը բացառելու նպատակով 2025*

թվականի մայիս ամսին փոփոխություն է իրականացվել վարչական ակտերը հարկադիր կատարման ներկայացնելու էլեկտրոնային համակարգում և նախկին 3 ամիս 15 օրվա փոխարեն վարչական ակտն էլեկտրոնային համակարգի միջոցով հարկադիր կատարման է ներկայացվում վերադասության կարգով բողոքարկման արդյունքում կայացված որոշումն ուժի մեջ մտնելուց առնվազն 4 ամիս անց:

Մարդու իրավունքների պաշտպանը ողջունում է նախարարության ձեռնարկած քայլերը, այնուամենայնիվ, արձանագրում է, որ անբողոքարկելի չդարձած վարչական ակտերը հարկադիր կատարման ներկայացնելու դեպքերը բացառելու նպատակով անհրաժեշտ է նաև քննարկման առարկա դարձնել այդ ուղղությամբ վերահսկողությունը խստացնելու հարցը:

ՄԻՊ-ին ներկայացված մեկ այլ բողոքով անձը հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի կողմից 2025 թվականի հուլիսի 2-ին կայացված վարչական տույժ նշանակելու մասին որոշումը՝ 2025 թվականի օգոստոսի 15-ին բողոքարկել է Վարչական դատարան, սակայն մինչև գործն ըստ էության լուծող դատական ակտի կայացումը՝ Երևանի քաղաքապետարանը վարչական ակտն ուղարկվել է հարկադիր կատարման: Հավելել է, որ վարչական ակտի բողոքարկված լինելու վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացրել է Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն և խնդրել վերացնել իր գույքի և դրամական միջոցների նկատմամբ դրված արգելանքները, սակայն արդյունքի չի հասել: Բողոք ներկայացրած անձը խնդրել է Մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունը Ծառայության գործողությունների իրավաչափությունը ստուգելու, գույքի և դրամական միջոցների վրա դրված արգելանքները հանելու հարցերում:

Բողոքի քննարկման շրջանակում ՄԻՊ աշխատակազմ ստացվել է պարզաբանում առ այն, որ Ծառայության համապատասխան բաժնում Երևանի քաղաքապետարանի 2025 թվականի հուլիսի 2-ի վարչական տույժ նշանակելու մասին որոշման հիման վրա նույն թվականի հոկտեմբերի 24-ին հարուցված կատարողական վարույթը, որով պետք է հօգուտ Երևանի քաղաքապետարանի բռնագանձել 150 000 դրամ, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի հիմքով՝ 2025 թվականի դեկտեմբերի 12-ին կայացված որոշմամբ կարճվել է և կիրառված արգելանքը վերացվել է:

Իհարկե, կոնկրետ դեպքերում խնդիրը ստացել է լուծում, սակայն անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել գործնականում նման իրավիճակները բացառելու ուղղությամբ: Այս հաշվառմամբ՝ սույն տարեկան հաղորդման կազմման աշխատանքների շրջանակում Մարդու իրավունքների պաշտպանը հարցադրումներ է ուղարկել Երևանի քաղաքապետարան այն մասին, *թե 2025 թվականի ընթացքում քանի՞ բողոք է ստացվել անբողոքարկելի չդարձած վարչական ակտերը հարկադիր կատարման ուղարկելու վերաբերյալ և ի՞նչ միջոցներ են ձեռնարկվել դիմումների ընթացքն ապահովելու և խնդիրները կարգավորելու ուղղությամբ: Ի՞նչ միջոցներ են ձեռնարկվում անբողոքարկելի չդարձած վարչական ակտերը հարկադիր կատարման ուղարկելու դեպքերը բացառելու ուղղությամբ և ի՞նչ խոչընդոտներ են առկա խնդրի լուծման համար:* Ի պատասխան՝ ստացվել է ընդհանրական պարզաբանում այն մասին, որ հայցվող չափորոշիչների համապատասխան հաշվառում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչությունում չի վարվում: Նշվել է նաև, որ նմանատիպ դեպքերում խնդրի լուծման նպատակով սեղմ ժամկետում տրվում է համապատասխան ընթացք:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պաշտպանն արձանագրում է, որ անհրաժեշտ է պատշաճ վերահսկողական միջոցներ ձեռնարկել անբողոքարկելի չդարձած

վարչական ակտը կատարման ներկայացնելու, ինչպես նաև օրենսդրության պահանջներին չհամապատասխանող փաստաթղթերը պատշաճ ստուգելու և խախտումներ հայտնաբերելու դեպքում դրանք վերադարձնելու ուղղությամբ:

4. Ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման, ինչպես նաև քանդման (ապամոնտաժման) գործընթացների իրականացման հետ կապված խնդիրներ

Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2025 թվականին շարունակել են մտահոգիչ և խնդրահարույց լինել ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման, ինչպես նաև քանդման (ապամոնտաժման) գործընթացների իրականացման հետ կապված խնդիրները:

Այսպես, սույն տարեկան հաղորդման կազմման աշխատանքների շրջանակում Մարդու իրավունքների պաշտպանի այն հարցադրմանը, *թե քանի՞ ինքնակամ շինություն է քանդվել 2025 թվականին՝ առանց ինքնակամ շինությունը քանդելու մասին Երևանի քաղաքապետի որոշման և արդյո՞ք նման պրակտիկա առկա է*, Երևանի քաղաքապետարանից ներկայացվել է պատասխան առ այն, որ 2025 թվականին Երևան քաղաքում՝ առանց համապատասխան որոշման քանդվել է *թվով 380* ինքնակամ շինություն, իսկ շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելու, վերակառուցելու կամ տեղադրելու համար կազմվել է *թվով 445* արձանագրություն:

Փաստորեն, ստացված պարզաբանումից հետևում է, որ առանց համայնքի ղեկավարի համապատասխան որոշման ինքնակամ կառուցված շինությունները քանդելու պրակտիկա առկա է և այդ դեպքերը, ըստ ներկայացված տվյալների, քիչ չեն:

Մինչդեռ, հարկ է նշել, որ ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 3-րդ մասի՝ *պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում կայացնում են օրենքով սահմանված իրավասու մարմինները:* Նույն հոդվածի 1.1-ին մասի համաձայն՝ ինքնակամ (...) կառույցի քանդման (ապամոնտաժման) կարգը և ժամկետները սահմանվում են ՀՀ կառավարության որոշմամբ:

Նշվածին համապատասխան՝ ինքնակամ կառույցների օրինականացման գործընթացի առավել ամբողջական կարգավորումը սահմանված է ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում), որով ***ուղղակիորեն նախատեսված է, որ համայնքի ղեկավարը սեփական նախաձեռնությամբ ընդունում է որոշում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում գտնվող ինքնակամ կառույցներն օրինականացնելու կամ քանդելու մասին (տե՛ս 33-րդ կետը):***

Վերոգրյալից բացի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ինչպես նաև «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի 5.1-ին կետով նախատեսված են իրավական կարգավորումներ, որոնց բովանդակային վերլուծությունը նույնպես վկայում է, որ համայնքի ղեկավարի և Երևանի քաղաքապետի՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) լիազորությունը կարող է իրականացվել բացառապես համապատասխան որոշման հիման վրա:

Այսպիսով, ստացվում է, որ գործող իրավական կարգավորումների համաձայն՝ այնպիսի ընթացակարգ, որով հնարավոր է ինքնակամ կառուցված շինությունները քանդել առանց համապատասխան որոշման կայացման, նախատեսված չէ:

Ավելին, հատկանշական է, որ «Քաղաքաշինության մասին» օրենքի 26-րդ հոդվածով ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին վերապահված է՝ համայնքի ղեկավարի կողմից համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշման կայացման և համայնքի ղեկավարի կողմից իր լիազորությունների շրջանակներում օրենսդրությամբ սահմանված կարգով որոշման կատարման ապահովման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու լիազորություն:

2025 թվականին Պաշտպանին ներկայացված բողոքները, մասնավորապես, վերաբերել են ինքնակամ կառույցի օրինականացումը մերժելու և դրանք քանդելու մասին Երևանի քաղաքապետի որոշման վերաբերյալ ինքնակամ կառույցն իրականացրած անձանց պատշաճ եղանակով չծանուցելու պարագայում, քանդման գործողություններ նախաձեռնելու և որպես հետևանք՝ այդ անձանց հասանելի իրավական միջոցների գործադրման *(օրինակ՝ համայնքի ղեկավարի համապատասխան որոշման օրինականությունը դատական կարգով վիճարկելու)* հնարավորություն չապահովելու հարցին:

Այսպես, հաշվետու տարվա ընթացքում Պաշտպանին ներկայացված բողոքներից մեկով փաստաբանը տեղեկացրել է, որ իր վստահորդը Երևան քաղաքի փողոցներից մեկում զբաղվել է ձեռնարկատիրական գործունեությամբ՝ կրպակում պատրաստել է տաք ուտեստներ և վաճառել դրանք: Հավելել է, որ կրպակն իր վստահորդը ձեռք է բերել առուվաճառքի պայմանագրով և դրա նկատմամբ սահմանված կարգով գրանցվել է վերջինիս սեփականության իրավունքը: Նշել է նաև, որ Երևանի քաղաքապետարանը 2024 թվականից սկսած շուրջ 30 անգամ իր վստահորդին ենթարկել է վարչական պատասխանատվության՝ նպատակ ունենալով ապամոնտաժել կրպակը և դադարեցնել վերջինիս գործունեությունը: Այնուհետև, իր վստահորդի կողմից կրպակն արդիականացնելու նպատակով էսքիզային նախագիծ է ներկայացվել Երևանի քաղաքապետարան, սակայն դրա հաստատման վերաբերյալ պատասխան չի ստացել: Փաստաբանը հայտնել է նաև, որ ***29.07.2025 թվականին*** Երևանի քաղաքապետի կողմից կայացվել է իր վստահորդին պատկանող տաղավարն ապամոնտաժելու մասին որոշում: Հավելել է, որ Երևանի քաղաքապետարանի և նախկին սեփականատիրոջ միջև նախորդիվ կնքված հողամասի կառուցապատման պայմանագիրը չի լուծվել: Միևնույն ժամանակ, նշել է, որ տաղավարի տեղափոխման վերաբերյալ որևէ ծանուցում իր վստահորդը չի ստացել: Փաստաբանի տեղեկացմամբ՝ ***29.07.2025 թվականին*** *(այսինքն՝ որոշման կայացման օրը)* Երևանի քաղաքապետի մի խումբ աշխատակիցներ, տեխնիկայի գործադրմամբ, ապամոնտաժել են նշված տաղավարը՝ արդյունքում իր վստահորդին պատճառվելով նյութական վնաս:

Այսպիսով, ստացվում է, որ կրպակի ապամոնտաժման որոշման մասին անձը ծանուցվել է այն կայացնելու օրը՝ զրկվելով դրան պատշաճ ծանոթանալու, դատական կարգով վիճարկելու հնարավորությունից: Պետք է նշել, որ 2025 թվականին նմանատիպ խնդիրների վերաբերյալ Պաշտպանի աշխատակազմ ստացվել են նաև այլ բողոքներ:

Հաշվի առնելով այն, որ Երևանի քաղաքապետարանի որդեգրած մոտեցման մասով Մարդու իրավունքների պաշտպանի նախորդ տարեկան հաղորդման[302], ինչպես նաև Լվովյան փողոցի մի խումբ բնակիչների իրավունքների կամ ազատությունների խախտման առկայության մասին որոշման[303] շրջանակներում ամփոփվել և մանրամասն ներկայացվել են խնդրի առնչությամբ վերաբերելի իրավակարգավորումները, բարձր դատարանների իրավական դիրքորոշումները, ինչպես նաև Պաշտպանի արտահայտած դիրքորոշումներն ու առաջարկությունները, ուստի հարկ չենք համարում սույն պարագրաֆում կրկին անդրադառնալ դրանց:

Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով անձը հայտնել է, որ 2021 թվականին դիմել է Երևանի քաղաքապետարան՝ Երևան քաղաքի փողոցներից մեկում գտնվող ինքնակամ կառույցը Որոշման շրջանակում օրինականացնելու նպատակով: Հավելել է, որ 2021-2024 թվականների ընթացքում ինքնակամ կառույցի օրինականացման հարցի հետ կապված Երևանի քաղաքապետարանից ստացել է հարցն ըստ էության չլուծող և իրարամերժ պատասխաններ: Միևնույն ժամանակ, նշել է, որ Երևանի քաղաքապետարանի կողմից 2024 թվականի սեպտեմբերի 26-ին տրամադրված գրությամբ պարզաբանվել է, որ ինքնակամ կառույցը չի կարող օրինականացվել, քանի որ ըստ ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն, քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի 10-րդ գլխի 79-րդ կետի՝ շենքերի երկար կողմերի միջև հեռավորությունները հարկավոր է ընդունել 2-3 հարկանի շենքերի համար 18 մետրից ոչ պակաս, որը Երևանի քաղաքապետարանի պնդմամբ՝ քննարկվող շինության պարագայում չի պահպանվել: Մինչդեռ, բողոք ներկայացրած անձի տեղեկացմամբ՝ Երևանի քաղաքապետարանի 2024 թվականի փետրվարի 21-ի պատասխան գրությամբ իրեն հայտնել են, որ քննարկվող ինքնակամ շինության օրինականացման համար Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրվել է *դրական եզրակացություն, որպիսի պարագայում ինքնակամ կառույցի օրինականացումը ենթակա չէր մերժման:*

Բողոքի քննարկման շրջանակում Մարդու իրավունքների պաշտպանը պարզաբանումներ է պահանջել Երևանի քաղաքապետարանից: Ի պատասխան՝ հայտնել են, որ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրման արդյունքում պարզվել է, որ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» ՀՀ շինարարական նորմերի 11-րդ գլխի 126-րդ կետի համաձայն՝ շենքերի երկար կողմերի միջև հեռավորությունները (կենցաղային խզումներ) թույլատրվում է ընդունել՝ 2-3 հարկանի շենքերի համար՝ 15 մ, որը քննարկվող շինության դեպքում չի պահպանվել:

Հարկ է նշել, որ Երևանի քաղաքապետի պատասխան գրությամբ անդրադարձ չի կատարվել այն հանգամանքին, որ Երևանի քաղաքապետարանի կողմից 2024 թվականի փետրվարի 21-ի գրությամբ բողոք ներկայացրած անձին հայտնել են, որ քննարկման առարկա ինքնակամ կառույցի օրինականացման համար աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրվել է դրական եզրակացություն:

---

[302] Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի վերաբերյալ 2024 թվականի տարեկան հաղորդումները, էջեր 572-580:

[303] Որոշումն ու դրանում արտահայտված Մարդու իրավունքների պաշտպանի դիրքորոշումները հասանելի են հետևյալ հղումով՝ https://surl.li/ojcoja (20/03/2026թ.-ի դրությամբ):

Պաշտպանի կողմից կրկին գրություն է հասցեագրվել Երևանի քաղաքապետարան ինքնակամ կառույցի օրինականացման համար դրական եզրակացության տրամադրումից հետո դրա օրինականացումը մերժելու հիմնավորման, ինչպես նաև բողոք ներկայացրած անձի կողմից ՄԻՊ աշխատակազմ ներկայացրած՝ այդ տարածքում նույնանման քաղաքաշինական նորմերի չպահպանմամբ կառուցված ինքնակամ շինությունների օրինականացված լինելու պնդման վերաբերյալ պարզաբանումներ ստանալու նպատակով:

Ի պատասխան՝ ստացվել է տեղեկատվություն առ այն, որ Որոշման շրջանակում դիմումատուին բազմիցս գրավոր և բանավոր տրվել է պարզաբանում առ այն, որ համաձայն վերը նշված շինարարական նորմերի 11-րդ գլխի 126-րդ կետի՝ շենքերի երկար կողմերի միջև հեռավորությունները (կենցաղային խզումներ) թույլատրվում է ընդունել՝ 2-3 հարկանի շենքերի համար՝ 15 մ, որը քննարկվող շինության դեպքում չի պահպանվել: Ուսումնասիրվել է նաև նշված հասցեում գտնվող ինքնակամ իրականացված շինության՝ առանց վերը նշված խոչընդոտ հանդիսացող հատվածի օրինականացման հարցը, որի արդյունքում՝ պարզվել է, որ քննարկվող ինքնակամ շինությունը հանդիսանում է մեկ ամբողջական գույքային միավոր, ուստի շինությունն օրինականացնելու հարցը մասնակի չի կարող քննարկվել:

Տրամադրվել է տեղեկատվություն նաև այն մասին, որ Երևանի քաղաքապետարանում 13.03.2025 թվականին տեղի ունեցած քաղաքացիների ընդունելության ժամանակ առաջարկվել է ապամոնտաժել խոչընդոտ հանդիսացող շինության հատվածը, բերել թույլատրելի չափերի, որից հետո հիշյալը հաստատող փաստաթղթերով և լուսանկարներով բարձրացված հարցի վերաբերյալ վերանայման դիմում ներկայացնել Երևանի քաղաքապետարան: Մինչ քանդման աշխատանքներ կատարելն առաջարկվել է չափագրության միջոցով ստուգել վերը նշված քաղաքաշինական նորմերի ապահովումը:

Նշել են նաև, որ հաշվի առնելով վերոհիշյալ ձեռք բերված պայմանավորվածությունը, դիմումատուի կողմից Երևանի քաղաքապետարան ներկայացված տեղեկատվության համաձայն, առանց խոչընդոտ հանդիսացող շինության հատվածի կատարված չափագրության արդյունքում քաղաքաշինական նորմերը չեն պահպանվում, որն էլ հակասում է Որոշմամբ հաստատված կարգի դրույթներին:

Այս համատեքստում պարզ չէ Երևանի քաղաքապետարանի հիշյալ վարչության կողմից տրված դրական եզրակացությունն այն պարագայում, երբ ի սկզբանե հայտնի է եղել վերը նշված քաղաքաշինական նորմի խախտման հանգամանքը: Հարկ է նշել, որ այս դիմում-բողոքը Պաշտպանի աշխատակազմում գտնվում է քննարկման փուլում և պահանջում է հետագա լրացուցիչ ուսումնասիրություններ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պաշտպանը վերահաստատում է, որ անհրաժեշտ է՝

✓ ***ինքնակամ կառուցված շինությունների քանդման (ապամոնտաժման) գործընթացը կազմակերպելիս և իրականացնելիս մշտապես պահպանել օրենսդրության պահանջները՝ գործնականում բացառելով առանց համապատասխան որոշման ինքնակամ կառուցված շինությունները քանդելու պրակտիկան, ինչպես նաև պատշաճ վերահսկողություն իրականացնել ինքնակամ կառույցների քանդման որոշումների կայացման և դրանց կատարման ապահովման նկատմամբ.***

✓ ***վարչարարությունն իրականացնելիս անձանց իրավունքների և օրենքով պահպանվող շահերի խախտումները բացառելու նպատակով միջոցներ ձեռնարկել ինքնակամ կառույցի օրինականացումը մերժելու, ինչպես նաև այն քանդելու մասին***

համապատասխան որոշումն ինքնակամ կառույցն իրականացրած անձին պատշաճ եղանակով հասու դարձնելու, դրան ծանոթանալը և բողոքարկման համար բավարար ժամանակ ունենալը գործնականում երաշխավորելու ուղղությամբ:

5. Կառուցված շինության ավարտական ակտի (շահագործման թույլտվության) ձևակերպման գործընթացում առաջացած խոչընդոտներ

Հաշվետու տարվա ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել են մի շարք բանավոր բողոքներ, որոնք վերաբերել են կառուցված շինության ավարտական ակտի (շահագործման թույլտվության) ձևակերպման գործընթացում առաջացած խոչընդոտներին:

Թեև 2025 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի միջամտությամբ և Երևանի քաղաքապետարանի հետ արդյունավետ համագործակցության արդյունքում ՄԻՊ աշխատակազմ ստացված բողոքներից մեկով հնարավոր է եղել բարձրացված անհատական հարցին տալ լուծում, այնուհանդերձ, խնդրի հաղթահարման նպատակով անհրաժեշտ է գտնել համակարգային լուծումներ:

Այսպես, օրինակ՝ 2025 թվականին Պաշտպանին հասցեագրված բանավոր բողոքներից մեկով անձը հայտնել է, որ Երևան քաղաքում ունի իրեն սեփականության իրավունքով պատկանող բնակելի կառուցապատման հողամաս՝ ծանրաբեռնված կիսակառույց շինությամբ (բնակելի տուն): Հավելել է, որ վարչական շրջանի ղեկավարի կողմից տրամադրված շինարարության թույլտվության հիման վրա սահմանված ժամկետում և նախապես հաստատված ճարտարապետահատակագծային առաջադրանքին (նախագծին) համապատասխան կառուցել և ավարտել է բնակելի տան կառուցապատման աշխատանքները: Այնուհետև, ըստ տեղեկացման, քաղաքաշինության ոլորտի թվային ծառայությունների հարթակի (urban.e-gov.am) միջոցով ավարտական ակտի հաստատման համար էլեկտրոնային դիմում է մուտքագրել՝ կցելով բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը: Վերջինիս պնդմամբ՝ իր կողմից էլեկտրոնային դիմումի մուտքագրման օրվա դրությամբ իրեն տրամադրված շինարարության թույլտվության ժամկետն ավարտված չի եղել: Նշել է նաև, որ ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի բոլոր անդամները տվել են դրական եզրակացություն՝ բացառությամբ Երևանի քաղաքապետարանի՝ շինարարության թույլտվության ժամկետն ավարտված լինելու պատճառաբանությամբ:

Բողոք ներկայացրած անձի պնդմամբ՝ կառուցապատման աշխատանքները կատարվել են սահմանված ժամկետներում, այնուհետև՝ ներկայացրել է դիմում ավարտական ակտի հաստատման և շահագործման թույլտվության ստանալու համար, որոնց ընթացքում շինարարության թույլտվության ժամկետն ավարտված չի եղել, հետևաբար հանձնաժողովի բոլոր անդամների կողմից տրվել են դրական եզրակացություններ: Ինչ վերաբերում է Երևանի քաղաքապետարանի նշած պատճառաբանությանը, ապա բողոք ներկայացրած անձի պնդմամբ՝ այն անհիմն է, քանի որ Երևանի քաղաքապետարանի անգործության (իր դիմումին ուշ արձագանքելու) հետևանքով է լրացել շինարարության թույլտվության ժամկետը: Հավելել է, որ որպես խնդրի լուծման տարբերակ Երևանի քաղաքապետարանից առաջարկել են վճարել 800 000 դրամի չափով տեղական տուրք և երկարաձգել իր շինարարության թույլտվությունը, որից հետո անհրաժեշտ է կրկին մուտքագրել էլեկտրոնային դիմում:

Բարձրացված հարցը ՄԻՊ ներկայացուցիչը քննարկել է Երևանի քաղաքապետարանի իրավասու ներկայացուցչի հետ: Վերջինս նույնպես հայտնել է, որ

ավարտական ակտի հաստատումը մերժվել է շինարարության թույլտվության ժամկետն ավարտված լինելու պատճառաբանությամբ, այդ իսկ պատճառով բողոք ներկայացրած անձին առաջարկվել է վճարել տեղական տուրքը և երկարաձգել շինարարության թույլտվության ժամկետը: Ինչ վերաբերում է քաղաքացու դիմումին ուշ ընթացք տալուն, ապա այդ առնչությամբ տեղեկացրել է, որ իրավասու մարմինը կառուցապատողին պատշաճ ձևով ծանուցում է ավարտական ակտի (շահագործման թույլտվության) վերաբերյալ որոշման ընդունման մասին՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով՝ 30-օրյա ժամկետում: Հավելել է, որ իրենց կողմից ծանուցումն ուղարկվել է նշված ժամկետում:

Երևանի քաղաքապետարանի իրավասու ներկայացուցչի հետ քննարկման առարկա են դարձվել նաև ՀՀ կառավարության 2015 թվականի թիվ 596-Ն որոշման (այսուհետև՝ Որոշում) և Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի «Երևան համայնքում 2025 թվականի տեղական տուրքերի գծով արտոնություններ սահմանելու մասին» թիվ 266-Ն որոշման վերաբերելի իրավակարգավորումները: Մասնավորապես, ըստ Երևան քաղաքի ավագանու հիշյալ որոշման 6-րդ կետի՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան Երևանի վարչական տարածքում նոր շենքերի և շինությունների շինարարության թույլտվության ժամկետների՝ 2025 թվականի ընթացքում մեկ անգամ և մինչև 3 ամիս ժամկետով երկարաձգման համար 2025 թվականի համար սահմանված տեղական տուրքի դրույքաչափի նկատմամբ կիրառվում է արտոնություն՝ տեղական տուրքի դրույքաչափի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառմամբ, եթե դիմումատուն (իրավաբանական անձի դեպքում նաև գործադիր մարմնի ղեկավարը) Երևան համայնքի հանդեպ թույլտվության ժամկետի երկարաձգման օրվա դրությամբ չունի ժամկետանց դրամական պարտավորություններ:

Խնդրո առարկա դեպքի վերաբերյալ իրականացված հաջորդ քննարկման ժամանակ Երևանի քաղաքապետարանի իրավասու ներկայացուցիչը հայտնել է, որ բողոք ներկայացրած անձին տրամադրված շինարարության թույլտվության ժամկետը վարչական շրջանի կողմից երկարաձգվել է 3 ամսով՝ առանց տեղական տուրքի վճարման, որի արդյունքում՝ այն, պահանջվող մյուս փաստաթղթերի հետ միասին, կրկին մուտքագրվել է քաղաքաշինության ոլորտի թվային ծառայությունների հարթակ: Այնուհետև, ըստ տեղեկացման, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանման կողմից կատարված տեղատեսության արդյունքում՝ տրված դրական եզրակացության հիման վրա՝ անձին տրամադրվել է շահագործման թույլտվություն:

Վերոգրյալը հաստատել է նաև Պաշտպանին բողոք ներկայացրած անձը: Վերջինս նշել է նաև, որ շահագործման թույլտվության տրամադրումից հետո դիմել է Կադաստրի կոմիտե, որտեղ էլ պետական գրանցման է ենթարկվել իր սեփականության իրավունքը կառուցված բնակելի տան նկատմամբ: Բողոք ներկայացրած անձը նաև իր գոհունակությունն է հայտնել Պաշտպանի հաստատությանը:

Թեև կոնկրետ դեպքում Մարդու իրավունքների պաշտպանի միջամտությամբ և Երևանի քաղաքապետարանի հետ համագործակցության արդյունքում բարձրացված հարցը ստացել է լուծում, այնուհանդերձ, նշված խնդրի վերաբերյալ ՄԻՊ աշխատակազմ ստացված այլ բողոքների ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ լինում են դեպքեր, երբ խնդիրը տևական ժամանակ լուծում չի ստանում: Այսպես, օրինակ՝ Պաշտպանին հասցեագրված բանավոր բողոքներից մեկով անձը հայտնել է, որ ունի սեփականության իրավունքով իրեն պատկանող բնակելի կառուցապատման նշանակության հողամաս, որի վրա տաղավար կառուցելու համար շինարարության

թույլտվություն ստանալու նպատակով դիմում է ներկայացրել վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ՝ կից ներկայացնելով պահանջվող փաստաթղթերը: Հավելել է, որ թույլտվությունը ստանալուց և տաղավարը կառուցելուց հետո շինարարության ավարտական ակտը հաստատվել է ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի բոլոր անդամների կողմից, բացառությամբ այդ հանձնաժողովի կազմում ընդգրկված Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ներկայացուցչի: Բողոք ներկայացրած անձի տեղեկացմամբ՝ վերջինս տվել է բացասական եզրակացություն՝ շինարարության թույլտվության ժամկետն ավարտված լինելու պատճառաբանությամբ: Հավելել է, որ որպես խնդրի լուծման տարբերակ իրեն առաջարկվել է վճարել 630 000 դրամի չափով տեղական տուրք և երկարաձգել իր շինարարության թույլտվության ժամկետը, որից հետո կրկին մուտքագրել էլեկտրոնային դիմում: Հաջորդիվ, բողոք ներկայացրած անձը ՄԻՊ աշխատակազմ լրացուցիչ տեղեկատվություն է ներկայացրել այն մասին, որ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմն իրեն առաջարկել է շինարարության թույլտվության ժամկետը երկարաձգելու հարցով դիմել 2026 թվականին: Հավելել է, որ այդ նպատակով 2025 թվականի դեկտեմբեր ամսին դիմել է վարչական շրջանի ղեկավարին, սակայն մինչ 2026 թվականի մարտ ամիսը պատասխան չի ստացել: Բանավոր բողոքի ընթացքի նկատմամբ Պաշտպանի աշխատակազմում շարունակում է իրականացվել հետևողական աշխատանք:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ անհրաժեշտ է ջանքեր գործադրել կառուցված շինության ավարտական ակտի (շահագործման թույլտվության) ձևակերպման գործընթացում առաջացող խոչընդոտները վերացնելու ուղղությամբ՝ ըստ անհրաժեշտության քննարկման առարկա դարձնելով նաև այնպիսի կառուցակարգերի մշակման և գործարկման հարցը, որոնք կերաշխավորեն այդ գործընթացի կազմակերպման բնականոն ընթացքը:

6. Թափառող շների հարձակումների կանխարգելման խնդիր

Մարդու իրավունքների պաշտպանն իր գործունեությունն ամփոփող տարեկան հաղորդումներում տարիներ շարունակ բարձրաձայնում է թափառող շների հարձակումների կանխարգելման ոլորտում առկա համակարգային և բազմաշերտ խնդիրները՝ շեշտադրելով դրանց ազդեցությունը մարդու կյանքի, առողջ ու անվտանգ շրջակա միջավայրում ապրելու իրավունքների պատշաճ իրացման վրա[304]: Այս առումով խիստ մտահոգիչ է այն, որ տարիներ շարունակ ՄԻՊ-ի կողմից բարձրացվող և լրջագույն բացասական հետևանքների հանգեցնող խնդրին լուծում չի տրվում:

2025 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրված բողոքների, թեժ գծին ստացված զանգերի, ինչպես նաև սոցիալական ցանցերի և զանգվածային լրատվության միջոցների մշտադիտարկման արդյունքները վկայում են, որ մարդկանց, այդ թվում՝ երեխաների վրա թափառող շների պարբերաբար հարձակումների խնդիրը նախորդ տարիների համեմատ ավելի է սրվել:

Հաշվի առնելով մարդու իրավունքների խախտումների վտանգավորության աստիճանն ու խնդրի հրատապությունը՝ Մարդու իրավունքների պաշտպանը

[304] Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի վերաբերյալ 2020, 2021, 2023 և 2024 թվականների տարեկան հաղորդումները (համապատասխանաբար՝ էջեր 857-860, 793-797, 173-175, 592-597):

յուրաքանչյուր դեպքով պարզաբանումներ է պահանջել իրավասու մարմիններից՝ հատուկ ընդգծելով, որ խնդրի արդյունավետ լուծման համար անհրաժեշտ են համատեղ ջանքեր ու մասնագիտական քննարկումներ բոլոր շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ կենդանիների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունների հետ: Անհրաժեշտ է նաև ստեղծել համապատասխան իրավական դաշտ և նախատեսել բավարար ֆինանսավորում՝ արձանագրված խնդիրներին պատշաճ լուծում տալու համար: Ընդ որում, խնդրի լուծմանն ուղղված միջոցառումները պետք է կրեն համալիր բնույթ: Այս տեսանկյունից կարևոր է նաև համայնքներում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների ապահովումը:

Սույն տարեկան հաղորդման կազմման աշխատանքների շրջանակում ստացված տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ 2025 թվականին թափառող շների՝ մարդկանց վրա հարձակման դեպքեր գրանցվել են տարբեր համայնքներում, ընդ որում՝ այդ թվերն ամեն մարզում տարբեր են եղել: Այսպես, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2025 թվականի ընթացքում Արարատի մարզում ստացվել է թվով 20 դիմում-բողոք, ընդ որում՝ Վեդի համայնքում թափառող շների հարձակումներից տուժած բնակիչները ստացել են համապատասխան բուժօգնություն, իսկ համայնքային անասնաբուժական ծառայության կողմից սահմանվել է 15-օրյա վերահսկողություն թափառող շների նկատմամբ, որից հետո «ՊԵԳԱՍ 2020» ՍՊ ընկերության կողմից նրանք տեղափոխվել և վնասազերծվել են: Գեղարքունիքի մարզում նշված խնդրով ստացվել է 31 ահազանգ-բողոք: Նման դեպքերը կանխելու համար իրականացվել են տարատեսակ աշխատանքներ, մասնավորապես, ըստ նախարարության տեղեկացման՝ Սևանի համայնքապետարանի կողմից հայտարարվել են թափառող կենդանիների վնասազերծման ծառայությունների իրականացման մրցույթներ, որի արդյունքում՝ շահող կազմակերպությունն իրականացրել է ստերջացման աշխատանքներ (թվով մոտ 130 թափառող կենդանի), Մարտունի համայնքում վնասազերծվել է 350 թափառող կենդանի, իսկ Գավառ համայնքում թափառող շների վնասազերծման և ստերջացման աշխատանքների նպատակով համայնքի բյուջեից տրամադրվել է 2.289.900 ՀՀ դրամ:

Նախարարության ներկայացրած տվյալներով՝ 2025 թվականի ընթացքում Լոռու մարզում գրանցվել է թվով 71 դիմում-բողոք, ընդ որում՝ դրանցից 14-ը Ալավերդի համայնքում, 12-ը Ստեփանավան համայնքում, 45-ը՝ Վանաձորում, իսկ Շիրակի մարզի բժշկական հաստատություններում գրանցվել է թվով 1188 շան կծածի դեպք: Հարկ է նշել, որ Լոռու մարզի Տաշիր համայնքի բյուջեով 2025 թվականին նախատեսվել է 2.000.000 ՀՀ դրամ թափառող կենդանիների ստերիլիզացման/ստերջացման ծառայությունների իրականացման համար և արդյունքում վնասազերծվել է շուրջ 70 թափառող շուն: Կոտայքի մարզում մարդկանց վրա շների հարձակման, կծելու դեպքերով ստացվել է շուրջ 122 և ավել դիմում-բողոք, որոնց տրվել է համապատասխան ընթացք, մասնավորապես, կատարվել է շուրջ հարյուր և ավելի շների ստերիլիզացում/ստերջացում, կենդանիների մոտ այլ մակաբույծների առկայության դեպքում ձեռնարկվել են անհրաժեշտ միջոցառումներ՝ համապատասխան դեղամիջոցների օգտագործմամբ, ինչպես նաև պատվաստում կատաղություն հիվանդության դեմ: Տավուշի մարզի Իջևան խոշորացված համայնքի կողմից հայտարարված մրցույթի արդյունքում հաղթած ԱՁ «Արսեն Սումբուլյանի» միջոցով իրականացվել են 100 թափառող շների ստերջացման ծրագիր, որի նպատակն է եղել թափառող կենդանիների թվի կարգավորումը և համաճարակաբանական ռիսկերի նվազեցումը, բացի դրանից՝ 2025 թվականի ապրիլի 25-30-ն ընկած ժամանակահատվածում Իջևանի համայնքապետարանի և Fondation Brigitte Bardot և

Tierschutz Entwicklungshilfe e.V. կազմակերպությունների համատեղ ջանքերով իրականացվել է շների և կատուների ստերելիզացիայի միջազգային բարեգործական ակցիա, որը բնակիչների կողմից արժանացել է դրական արձագանքի և նպաստել է քաղաքում թափառող կենդանիների թվի նվազեցմանը:

Հարկ է արձանագրել, որ թափառող կենդանիների համար կացարաններ կառուցելու տեսանկյունից, ըստ նախարարությունից ստացված տեղեկատվության, նկատելի է դրական տեղաշարժ: Մասնավորապես, Վայոց ձորի մարզի Վայք խոշորացված համայնքում թափառող շների համար կացարանի կառուցման աշխատանքները գտնվում են ընթացքի մեջ, իսկ Տավուշի մարզի Իջևան խոշորացված համայնքում կենդանապաշտպանների ջանքերով կառուցվել է կացարան, որտեղ ներկայում գտնվում են 35-45 շներ և համայնքապետարանը ցուցաբերում է անհրաժեշտ աջակցություն:

Ըստ Երևանի քաղաքապետարանից ստացված տեղեկատվության՝ «Կենդանիների խնամքի կենտրոն» ՀՈԱԿ-ը (այսուհետ՝ ՀՈԱԿ) թափառող շների հետ կապված բողոք-ահազանգերը ստանում է Երևանի քաղաքապետարանի զանգերի սպասարկման կենտրոնի, «Ակտիվ քաղաքացի» հարթակի, կազմակերպության ֆեյսբուքյան և ինստագրամյան էջերի միջոցով: Ստացված բողոք ահազանգերի հիման վրա իրականացվում են այցեր, կատարվում են անհրաժեշտ միջոցառումներ: ՀՈԱԿ-ը ստերջացման համալիր ծրագրին զուգընթաց իրականացնում է նաև կանխարգելիչ միջոցառումներ վտանգավոր վարակիչ հիվանդությունների կանխարգելման ուղղությամբ (հիվանդությունների հայտնաբերում, պատվաստումներ):

Տեղեկացրել են նաև, որ ՀՈԱԿ-ի տարածքում նախատեսված շների կացարանի կառուցման շինարարության մրցույթն արդեն հայտարարված է: Ըստ տրամադրված տեղեկատվության՝ Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Արցախի պողոտա 4-րդ նրբանցք 12 տարածքում թափառող կենդանիների համար նախատեսվող կացարանի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված բաց մրցույթի հայտերի բացումը տեղի է ունեցել 2026 թվականի հունվարի 9-ին:

Վերոգրյալի հետ մեկտեղ, ներկայացվել է նաև տեղեկատվություն առ այն, որ 2025 թվականի ընթացքում Նուբարաշեն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ թափառող շների հարձակման վերաբերյալ ստացվել է 62 դիմում-բողոք: Ըստ տեղեկացման՝ դիմել են ՀՈԱԿ համապատասխան միջոցներ ձեռնարկելու թափառող ագրեսիվ շներին վնասազերծելու նպատակով: Էրեբունի վարչական շրջանում թափառող շների վնասազերծման հարցերով ստացվել է թվով 175 բողոք: 2025 թվականի ընթացքում Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ թափառող շների վնասազերծման, մարդկանց վրա թափառող շների հարձակման, կծելու դեպքերը կանխելու, առողջությանը պատճառված վնասը փոխհատուցելու մասով դիմում-բողոքներ չեն ստացվել: Մնացյալ վարչական շրջանների վերաբերյալ տեղեկատվություն ՄԻՊ աշխատակազմ չի ներկայացվել:

ՄԻՊ աշխատակազմի կատարած ուսումնասիրությունները վկայում են, որ 2025 թվականին կենդանիների խնամքի ոլորտում ՀՈԱԿ-ն իրականացրել է մի շարք ծրագրեր, այդ թվում՝ շուրջ 4000 թափառող կենդանու տեղափոխում կազմակերպության կլինիկա, շների ստերջացում, պատվաստում կատաղություն հիվանդության դեմ և վարակիչ հիվանդությունների կանխարգելման աշխատանքներ: Բացի վերոնշյալից, ՀՈԱԿ-ի տեղեկացմամբ՝ ներկայում ակտիվորեն զարկ է տրվում կլինիկա տեղափոխված

կենդանիների որդեգրմանը, մասնավորապես, 2025 թվականի ընթացքում որդեգրվել է շուրջ 80 անտուն կենդանի[305]:

Հարկ է նշել, որ հաշվետու տարում Պաշտպանի միջամտությամբ և ՀՈԱԿ-ի հետ արդյունավետ համագործակցության արդյունքում անհատական դիմում-բողոքներով բարձրացված մի շարք հարցեր ստացել են լուծում: Այսպես, օրինակ՝ Պաշտպանին ներկայացված բողոքով հաշմանդամության ունեցող անձը հատնել է, որ համայնքում առկա թափառող ագրեսիվ շների պատճառով վախենում է դուրս գալ տանից: Պաշտպանի ներկայացուցիչը նշված խնդիրը քննարկել է համապատասխան համայնքապետարանի իրավասու ներկայացուցչի հետ: Վերջինս տրամադրել է տեղեկատվություն առ այն, որ համայնքում թափառող շների վնասազերծման հարցը գտնվում է համայնքի վարչական ղեկավարի աշխատակազմի ուշադրության կենտրոնում և աշխատանքները կրում են շարունակական բնույթ: Հավելել է նաև, որ թափառող կենդանիների վնասազերծման ծառայությունների համար համայնքապետարանի կողմից մրցույթ է հայտարարվել, որի արդյունքում՝ հաղթող ճանաչված կազմակերպության կողմից 2025 թվականին կիրականացվի թափառող շների ստերջացման և ստերիլիզացման աշխատանքներ: Արդյունքում, Պաշտպանի միջամտությամբ համայնքապետարանի կողմից գործուն ջանքեր են գործադրվել բողոք ներկայացրած անձի բնակության վայրի հարակից տարածքից թափառող շներին այլ վայր տեղափոխելու ուղղությամբ: Հաջորդիվ, Պաշտպանի աջակցությանը դիմած անձը հայտնել է իր գոհունակությունը և նշել, որ տարածքում թափառող շներ այլևս չկան:

Պաշտպանը կարևորում է իրավասու մարմինների կողմից բարձրացված խնդիրների լուծման նպատակով իրականացված քայլերը, այնուհանդերձ, մեկ անգամ ևս ընդգծում է, որ դրանք իրավիճակային են և համակարգային առումով խնդիրը շարունակում է մնալ չլուծված: ՄԻՊ աշխատակազմ ստացված դիմում-բողոքներով անձինք հայտնում են, որ ՀՈԱԿ-ի և մյուս համայնքներում թափառող շների վնասազերծման աշխատանքներ կատարող կազմակերպությունների աշխատակիցների կողմից թափառող շները տեղափոխվում են այլ վայրեր և նշված վայրերում չկարողանալով սնունդ հայթայթել՝ վերադառնում են մարդաշատ վայրեր: Արդյունքում, խնդիրը չի կարգավորվում:

Հարկ է նշել, որ 2025 թվականի ընթացքում թափառող շների հարձակումների հետ կապված խնդիրներ վեր են հանվել ոչ միայն դիմում-բողոքների քննարկման արդյունքում, այլ նաև Մարդու իրավունքների պաշտպանի մարզային այցերի ընթացքում: Մասնավորապես, Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաք, Կեչուտ և Գնդեվազ բնակավայրեր կատարած այցի ընթացքում[306] բնակիչների կողմից Պաշտպանին ներկայացվել է նաև թափառող շների հարձակումների կանխարգելման անհրաժեշտության հարցը: Բնակիչները մտահոգություն են հայտնել թափառող շների քանակի ավելացման, ինչպես նաև մարդկանց վրա հարձակման դեպքերի աճի մասին:

Վերոնշյալ հարցի վերաբերյալ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից հայտնել են, որ նշված հարցով օրենսդրական դաշտում առկա բացը

[305] Հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.facebook.com/YerevanCityHall/videos/1198321159065596/ (20/03/2026թ.-ի դրությամբ):

[306] Հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.ombuds.am/am/site/ViewNews/3487 (20/03/2026թ.-ի դրությամբ):

լրացնելու նպատակով Ազգային ժողովի պատգամավորների կողմից մշակվել և շրջանառության մեջ է դրվել «Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» օրենքի և մի շարք օրենքներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքների նախագծեր, որոնցով հստակեցվում են ոլորտում պետական և տեղական ինքնակառավարման համակարգի մարմինների լիազորությունները: Նշվել է նաև, որ օրենսդրական նախաձեռնությունը կարգավորում է առհասարակ ոլորտում առկա խնդիրները, մասնավորապես՝ նախատեսվում է մի քանի մարզերում կենդանիների կենտրոնացված կացարանների կառուցում, բոլոր համայնքներում համատարած ստերջացման ծրագրի իրականացում, տնային կենդանիների, հատկապես շների պարտադիր հաշվառում և չիպավորում, տվյալների բազայի վարում, օրենքի պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացում և այլն:

Մարդու իրավունքների պաշտպանը կարևորում է բարձրացված խնդրի լուծման նպատակով պետության գործադրած ջանքերը, այնուհանդերձ, հարկ է համարում ընդգծել, որ նման պարզաբանում նախարարությունը ներկայացրել է նաև նախորդ տարիներին, ուստի անձանց իրավունքների առավել արդյունավետ երաշխավորման տեսանկյունից՝ անհրաժեշտ է արագացնել համապատասխան իրավական դաշտի ստեղծման գործընթացը:

Հաշվետու տարվա ընթացքում Պաշտպանի աշխատակազմի կատարած ուսումնասիրությունները և ստացված տվյալները վկայում են, որ շարունակում է չլուծված մնալ նաև թափառող շների հարձակման հետևանքով մարդկանց առողջությանը պատճառված վնասի փոխհատուցման հետ կապված խնդիրը: Այս համատեքստում հարկ է նշել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Ջեորջելը և Ջեորջետա Ստոիչեսկուն ընդդեմ Ռումինիայի գործով, մասնավորապես, անդրադառնալով Ընտանի կենդանիների պաշտպանության եվրոպական կոնվենցիայի (European Convention for the Protection of Pet Animals[307]) 12-րդ հոդվածի դրույթներին՝ *արձանագրել է պետության պոզիտիվ պարտականության խախտում Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի հիմքով[308]՝ հարձակման հետևանքով պատճառված վնասի հատուցման պարտավորությունը դնելով պետության վրա:*

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Պաշտպանը վերահաստատում է, որ.

✓ ***մարդկանց վրա թափառող շների հարձակման դեպքերը կանխելու ուղղությամբ պետությունը պետք է մշակի և իրացնի առավել արդյունավետ և գործուն կառուցակարգեր, որոնք առավելագույնս կնպաստեն խնդրի լուծմանը, կապահովեն մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանությունը և կբխեն կենդանիների նկատմամբ մարդասիրական վերաբերմունքի պահանջներից,***

✓ ***մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում ունեցած պոզիտիվ պարտականությունների համատեքստում պետությունը պետք է մշակի և իրացնի կառուցակարգեր՝ թափառող շների հարձակման հետևանքով քաղաքացիների առողջությանը պատճառված վնասի հատուցման վերաբերյալ իրավական հիմքերի ստեղծման և գործնականում դրանց պատշաճ կիրառության նպատակով:***

---

[307] Հասանելի է հետևյալ հղումով՝ https://rm.coe.int/168007a67d (20/03/2026թ.-ի դրությամբ):

[308] Տե՛ս Ջեորջելը և Ջեորջետա Ստոիչեսկուն ընդդեմ Ռումինիայի (Gerorgel and Georgeta Stoicescu v. Romania) գործով 2011 թվականի հոկտեմբերի 26-ի վճիռը, գանգատ թիվ 9718/03, կետեր 33, 49, 62, 63 և 80:

ԲԱԺԻՆ 14. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Սույն բաժնում արտացոլված են սոցիալական ապահովության իրավունքին առնչվող գործնական ու օրենսդրական համակարգային բնույթի խնդիրներ, ընդ որում՝ ինչպես տարիներ շարունակ բարձրաձայնվող և դեռևս լուծում չստացած, այնպես էլ նոր: Այսպես, սույն տարեկան հաղորդման շրջանակում առաջին անգամ առանձին անդրադարձ է կատարվում ընտանիքների անապահովության գնահատման նոր համակարգի գործարկման արդյունքում առաջացած գործնական խնդիրներին, անաշխատունակության և մայրության նպաստների նշանակման նոր համակարգի խնդիրներին և դրանց լուծման կոնկրետ առաջարկներին, ինչպես նաև առաջին անգամ սոցիալական ապահովության իրավունքի արդյունավետ ապահովման համատեքստում ներկայացվում են Ծնողական փառքի մեդալով պարգևատրմանն առնչվող խնդիրները: Սոցիալական ապահովության ոլորտին առնչվող խնդիրների մասով Պաշտպանն առանցքային է համարում իրավունքահեն կառուցակարգերի միջոցով կանխորոշված խնդիրների հաղթահարումն ու սոցիալական իրավունքների անխոչընդոտ իրացումը:

Հաշվետու տարվա ընթացքում Պաշտպանը սոցիալական իրավունքների ապահովման հարցերի շրջանակներում շարունակել է ինչպես գրագրությամբ, այնպես էլ՝ պետական մարմինների հետ հաղորդակցության տարբեր ձևաչափերով ներկայացնել ոլորտային խնդիրներն ու դրանց լուծման եղանակները: Պաշտպանի աջակցությամբ քաղաքացիների կողմից բարձրացված սոցիալական իրավունքների ապահովման հետ կապված բազմաթիվ հարցեր ստացել են դրական լուծում:

Մարդու իրավունքների պաշտպանի ամենօրյա և անմիջական ուշադրության կենտրոնում շարունակում են գտնվել բռնի տեղահանված անձանց սոցիալական իրավունքների ապահովման հարցերը: 2025 թվականին ՄԻՊ միջամտությամբ, ինչպես նաև իրավասու մարմինների հետ արդյունավետ համագործակցության արդյունքում հնարավոր է եղել բռնի տեղահանված անձանց տրամադրվող սոցիալական աջակցության ծրագրերին առնչվող մի շարք խնդիրների տալ լուծում:

2025 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի և Եվրոպայի խորհրդի համագործակցությամբ՝ Եվրոպայի խորհրդի *«Մարդու սոցիալական իրավունքների ամրապնդումը Հայաստանում»* ծրագրի շրջանակում կազմակերպվել է երկօրյա դասընթաց-քննարկում: Դասընթացի նպատակն էր ամրապնդել Պաշտպանի աշխատակազմի կարողություններն ու գործնական հմտությունները՝ կապված Եվրոպական սոցիալական խարտիայի չափանիշների կիրառման, ինչպես նաև տեղահանված անձանց և փախստականների սոցիալական իրավունքների խախտումների և պաշտպանության վերաբերյալ տվյալների հավաքագրման, փաստաթղթավորման և մշակման գործընթացների հետ: Դասընթացը վարել են Սերբիայում մարդու իրավունքների ոլորտի փորձագետ Դանիլո Չուրչիչը, Սլովակիայի Մարդու իրավունքների ազգային կենտրոնի ներկայացուցիչ Լենկա Վեստենիչկան և Մոլդովայի Հանրապետության օմբուդսմանական հաստատության ավագ խորհրդատու Իոն Միրոնը: ՄԻՊ աշխատակազմի կարողությունների զարգացմանն ուղղված նման միջոցառումները կրում են շարունակական բնույթ[309]:

[309] Հասանելի է հետևյալ հղումով՝ https://ombuds.am/am/site/ViewNews/3569 (20/03/2026թ.-ի դրությամբ):

2025 թվականին սոցիալական իրավունքների ապահովմանն առնչվող հարցերով ՄԻՊ աշխատակազմի ներկայացուցիչների մասնակցությամբ կազմակերպվել են նաև մի շարք այլ քննարկումներ, որոնց անդրադարձ է կատարվում սույն բաժնում:

ԳԼՈՒԽ 1. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Կրթության իրավունքը երաշխավորված է Սահմանադրությամբ: Յուրաքանչյուր ոք օրենքով սահմանված դեպքերում և կարգով ունի մրցութային հիմունքներով պետական բարձրագույն և այլ մասնագիտական կրթական հաստատություններում անվճար կրթություն ստանալու իրավունք: Բարձրագույն ուսումնական հաստատություններն օրենքով սահմանված շրջանակներում ունեն ինքնակառավարման իրավունք, ներառյալ՝ ակադեմիական և հետազոտությունների ազատությունը:

Մարդու իրավունքների պաշտպանը 2025 թվականին շարունակել է մշտադիտարկել և տարբեր ձևաչափերով հասցեավորել կրթության իրավունքի երաշխավորման հետ կապված խնդիրները, ներկայացնել դրանց լուծմանն ուղղված առաջարկություններ, իրականացնել իրազեկման միջոցառումներ՝ այդ գործընթացում ներգրավելով երեխաների, երիտասարդների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների և այլն:

Այսպես, օրինակ, 2025 թվականին անցկացվել է Մարդու իրավունքների Ձմեռային դպրոցը, որը կազմակերպվել է ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի նախաձեռնությամբ՝ Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակի հետ համագործակցությամբ: Մրցութային կարգով ընտրված՝ ծրագրին մասնակցող ՀՀ տարբեր բուհերի իրավագիտության ֆակուլտետներում սովորող 25 ուսանող ընդգրկվել է մի շարք հանդիպումներում և դասընթացներում[310]:

Հոկտեմբերի 27-ին Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանը հյուրընկալել է «Խորհուրդ X» երիտասարդական նախաձեռնության անդամներին: Հանդիպման ընթացքում, ի թիվս այլնի, քննարկվել են կրթության իրավունքի երաշխավորման հետ կապված խնդիրները[311]:

Նոյեմբերի 17-ին ուսանողների միջազգային օրվա առթիվ Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանն այցելել է Վանաձորի Հովհաննես Թումանյանի անվան պետական համալսարան՝ ուսանողների հետ հանդիպելու և նրանց տոնը շնորհավորելու նպատակով: Հանդիպման ընթացքում, ի թիվս այլնի, քննարկվել են կրթության իրավունքի երաշխավորման հետ կապված խնդիրները[312]:

Նոյեմբերի 10-ին, օրինակ, Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանը ընդունել ու, ի թիվս այլնի, կրթության իրավունքի երաշխավորման հետ կապված հարցերը քննարկել է Լիբերալ քաղաքականության դպրոցի սաների հետ[313]:

Մարդու իրավունքների միջազգային օրվան նվիրված բարձր մակարդակի միջազգային համաժողովին մասնակցելու նպատակով Հայաստան ժամանած մարդու իրավունքների ոլորտի փորձագետներ՝ Մոլդովայի օմբուդսմանի տեղակալ Վալենտին Ռոսկան, Սերբիայի Հանրապետության նախկին Ազգային օմբուդսման, մարդու իրավունքների փորձագետ Սաշա Յանկովիչը, ինչպես նաև Մալթայի համալսարանի

---

[310] Տեղեկատվությունը հասանելի է https://www.ombuds.am/am/site/ViewNews/3275, https://www.ombuds.am/am/site/ViewNews/3279, https://www.ombuds.am/am/site/ViewNews/3284, https://www.ombuds.am/am/site/ViewNews/3287, https://www.ombuds.am/am/site/ViewNews/3288, https://www.ombuds.am/am/site/ViewNews/3290 և https://www.ombuds.am/am/site/ViewNews/3383 հղումներով:

[311] Տեղեկատվությունը հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3560 հղումով:

[312] Տեղեկատվությունը հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3585 հղումով:

[313] Տեղեկատվությունը հասանելի է https://www.ombuds.am/am/site/ViewNews/3579 հղումով:

պրոֆեսոր Էն Մարի Թեյքը, Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանի և ՀՀ-ում ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի մշտական ներկայացուցիչ Նաթիա Նացվլիշվիլի ուղեկցությամբ դեկտեմբերի 11-ին այցելել են Երևանի պետական համալսարան, հանդիպել ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի հետ: Այցը կազմակերպվել է Մարդու իրավունքների պաշտպանի նախաձեռնությամբ՝ Եվրոպական Միության կողմից ֆինանսավորվող «Մարդու իրավունքների պաշտպանության խթանում և ազգային հաստատությունների հզորացում» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի և Միավորված ազգերի կազմակերպության բնակչության հիմնադրամի հետ համատեղ[314]:

Մարդու իրավունքների պաշտպանը կրթության իրավունքի երաշխավորման հետ կապված հարցերը քննարկել է նաև ՀՀ տարբեր մարզեր, այդ թվում՝ սահմանամերձ բնակավայրեր իրականացված այցերի ընթացքում:

Այսպես, օրինակ, Սյունիքի մարզ իրականացրած աշխատանքային այցի շրջանակներում Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանը մայիսի 21-ին

այցելել է Տեղ խոշորացված համայնքի Խոզնավար և Խնածախ բնակավայրեր: Այցի նպատակն էր տեղում մարդու իրավունքների վիճակին ծանոթանալը և փաստահավաք աշխատանքներ իրականացնելը: Պաշտպանն ու աշխատակազմի ներկայացուցիչները հանդիպել են բնակիչների հետ, լսել նրանց մտահոգող, այդ թվում՝ կրթության իրավունքի երաշխավորման առնչությամբ ներկայացված հարցերը, ինչպես նաև շրջայց իրականացրել բնակավայրերում: Ներկայացված խնդիրները բարձրաձայնվել և, ըստ ոլորտների, հասցեավորվել են իրավասու պետական մարմիններին[315]:

Մարդու իրավունքների պաշտպանը կրթության իրավունքի երաշխավորման որտում կազմակերպել, իրականացրել ու մասնակցել է մի շարք այլ միջոցառումների, հանդիպումների ու քննարկումների, որոնք հասանելի են Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնական կայքէջում:

Մշտադիտարկումների, ստացված դիմումների ու բողոքների ուսումնասիրության ու քննության, տարբեր ձևաչափով անցկացված քննարկումների արդյունքում, Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ 2025 թվականին շարունակել են արդիական մնալ մի շարք համակարգային խնդիրներ, որոնց անդրադարձ է կատարվել նաև նախորդ տարիների տարեկան հաղորդումներում[316]:

Մասնավորապես, արձանագրվել է, որ 2025 թվականին շարունակել են արդիական մնալ.

- բարձրագույն ուսումնական հաստատություններում կրթության իրավունքի երաշխավորման հետ կապված խնդիրները,

---

[314] Տեղեկատվությունը հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3625 հղումով:

[315] Տեղեկատվությունը հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3400 հղումով:

[316] Տե՛ս 2024 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջեր 599-619, հասանելի է https://ombuds.am/images/files/4d1335361f1f7e9fbcc1cfc10679701e.pdf հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

• ուսումնական հաստատություններում կրթության իրավունքի երաշխավորման նպատակով պատշաճ պայմանների ապահովման հետ կապված խնդիրները:

2025 թվականին արձանագրվել են նաև կրթության իրավունքի երաշխավորմանն առնչվող մի շարք այլ խնդիրներ, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց կրթության իրավունքի, երեխայի նախադպրոցական ու հանրակրթության իրավունքի, ուսումնական հաստատություններում սեռական ոտնձգության ու բռնության դեպքերի բացահայտման, կանխարգելման ու արձագանքման հետ կապված խնդիրներ, որոնց մանրամասն անդրադարձ է կատարվում սույն տարեկան հաղորդման համապատասխան բաժիններում:

1. Բարձրագույն ուսումնական հաստատություններում կրթության իրավունքի երաշխավորման հետ կապված խնդիրներ

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում իրականացված մշտադիտարկման արդյունքները ցույց են տալիս, որ 2025 թվականի ընթացքում շարունակել են արդիական մնալ բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնակառավարման իրավունքի երաշխավորման, բարձրագույն ուսումնական հաստատությունների տնտեսական մատչելիության երաշխավորման, ուսանողներին հատկացվող հանրակացարանների թվի ավելացման ու պայմանների բարելավման, ուսանողների հոգեկան առողջության պահպանման երաշխավորմանն ուղղված արդյունավետ կառուցակարգերի ներդրման հետ կապված խնդիրները:

Այսպես, օրինակ, 2025 թվականին ընդունվել է «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքը, որի համաձայն՝ հանրային բուհի հոգաբարձուների խորհուրդը բաղկացած է 20 անդամից: Հանրային բուհի հոգաբարձուների խորհրդի անդամներից տասին առաջադրում է բարձրագույն կրթության և գիտության ոլորտներում պետական կառավարման լիազոր մարմինը՝ գիտության, կրթության կամ հումանիտար, արվեստների, սպորտի, գործարար միջավայրում մեծ հեղինակություն վայելող անձանցից, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիներից:

Նշվածի առնչությամբ հատկանշական է, որ Մարդու իրավունքների պաշտպանը դեռևս օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացված դիտարկումների շրջանակներում հատուկ անդրադարձել է վերոնշյալ կարգավորմանը բուհերի ինքնավարության երաշխավորման համատեքստում՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ բուհական ինքնավարությունը անհրաժեշտ պայման և նախադրյալ է բուհերում՝ գիտակրթական գործընթացի սուբյեկտների ակադեմիական և հետազոտական ազատության ապահովման և երաշխավորման համար: Միաժամանակ, բուհական ինքնավարությունը հաստատության կարողությունն ու իրավունքն է՝ որոշելու իր գործողությունների ընթացքն առանց պետության անհարկի միջամտության: Մինչդեռ՝ նման կարգավորումը կարող է խնդրահարույց լինել՝ բուհերի ինքնակառավարման սահմանադրական իրավունքին միջամտելու ռիսկերի առկայությամբ պայմանավորված:

Խնդրահարույց է, որ 2025 թվականի ընթացքում չեն ձեռնարկվել գործուն միջոցառումներ՝ ուղղված բարձրագույն ուսումնական հաստատություններում անվճար կրթություն ստանալու հնարավորության ընդլայնմանը: Այսպես, օրինակ, ՀՀ կառավարության որոշումների[317] ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2020/2021-

[317] Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մայիսի 21-ի N 797-Ն 2021 թվականի ապրիլի 1-ի N 465-Ն, 2022 թվականի ապրիլի 7-ի N 474-Ն, 2023 թվականի մարտի 16-ի N 350-Ն, 2024 թվականի ապրիլի 12-ի N 488-Ն և 2025 թվականի ապրիլի 17-ի N 449-Ն որոշումներ:

2025/2026 ուսումնական տարիների համար պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար), առկա ուսուցմամբ բակալավրի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերով ընդունելության տեղերի թիվը հետևյալն է.



Ընդ որում, խնդրահարույց է այն, որ նշված դեպքում 2025/2026 ուսումնական տարվա համար գրանցվել է անվճար տեղերի քանակի նվազում:

Բուհերում ոչ բավարար քանակի անվճար տեղերի հատկացման հանգամանքին զուգահեռ՝ խնդրահարույց է նաև ուսման վարձավճարների բարձրացումը, ինչը ևս լուրջ խոչընդոտ է բարձրագույն կրթության իրավունքի տնտեսական մատչելիության երաշխավորման տեսանկյունից:

Վերոգրյալի համատեքստում՝ մտահոգիչ է այն, որ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ ՀՀ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններից 2025 թվականին ուսման վարձը չվճարելու պատճառով հեռացվել է 127 ուսանող: Ըստ տրամադրված տեղեկատվության՝ ուսանողական իրավունքները վերականգնել է ընդամենը 37 ուսանող:

2025 թվականին շարունակել են արդիական մնալ հանրակացարանների ոչ նպատակային օգտագործման, ոչ պատշաճ պայմանների ու հանրակացարանների թվի ընդլայնման հետ կապված խնդիրները:

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2025 թվականի դրությամբ նպատակային նշանակությամբ օգտագործվող ուսանողական հանրակացարաններ ունեցել են Երևանի պետական համալսարանը, Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանը, Հայաստանի ազգային ագրարային համալսարանը, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանն ու Գավառի պետական համալսարանը:

2025 թվականին շարունակել են արդիական մնալ նաև բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հոգեկան առողջության պահպանման հետ կապված խնդիրները:

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ ուսանողների հոգեկան առողջության պահպանման ու բարելավման ուղղությամբ ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում պարբերաբար անցկացվում են դասախոսություններ՝ «Սթրեսի կառավարում և հաղթահարում», «Կոնֆլիկտների կառավարում», «Արտակարգ իրավիճակներում հոգեբանական կառավարում», «Սոցիալական խմբեր. դիագնոստիկա և կոռեկցիա» թեմաներով, որոնց մասնակցություն են ցուցաբերում ինչպես ուսանողները, այնպես էլ

դասախոսները: Տարբեր բուհերի հոգեբանության ամբիոնները պարբերաբար կազմակերպում են տեղեկատվական և ուսուցողական միջոցառումներ՝ ուղղված ուսանողների և աշխատակիցների հոգեբանական գրագիտության բարձրացմանը և բարենպաստ կրթական միջավայրի ձևավորմանը: Տարբեր բուհերի ուսանողներին տրամադրված հոգեբանական աջակցության վիճակագրությունը ներկայացված է ստորև.



Չնայած պետության կողմից ձեռնարկված միջոցներին՝ Պաշտպանն արձանագրում է, որ անհրաժեշտ է իրականացնել առավել ինստիտուցիոնալ բնույթ ունեցող միջոցառումներ՝ ուղղված ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հոգեկան առողջության պահպանման երաշխավորմանը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

✓ գործուն միջոցներ ձեռնարկել, այդ թվում՝ օրենսդրական փոփոխություններ իրականացնել՝ ուղղված բուհերի ինքնակառավարման իրավունքի պատշաճ երաշխավորմանը,

✓ ավելացնել բարձրագույն ուսումնական հաստատություններում հատկացվող անվճար տեղերի քանակը,

✓ դիտարկել բարձրագույն ուսումնական հաստատությունների վարձավճարների չափերի նվազեցման հարցը,

✓ ավելացնել բարձրագույն ուսումնական հաստատությունների հանրակացարանների քանակը՝ ապահովելով և երաշխավորելով բոլոր անհրաժեշտ պայմանները վերջիններիս նպատակային օգտագործման համար,

✓ բուհական կրթություն ստացող ուսանողների հոգեկան առողջության պահպանման ու բարելավման, վերջիններիս բարեկեցության ապահովման ուղղությամբ մշակել ու ներդնել միասնական քաղաքականություն,

✓ ***ուսանողների ու դասախոսական անձնակազմի շրջանում շարունակաբար իրականացնել հոգեկան առողջության պահպանման և բարելավման վերաբերյալ իրազեկման աշխատանքներ:***

2. Ուսումնական հաստատություններում կրթության իրավունքի երաշխավորման նպատակով պատշաճ պայմանների ապահովման հետ կապված խնդիրներ

Մարդու իրավունքների պաշտպանի իրականացրած մշտադիտարկման արդյունքները, ՀՀ տարբեր բնակավայրեր, այդ թվում՝ սահմանամերձ բնակավայրեր կատարված այցերի արդյունքները ցույց են տալիս, որ 2025 թվականի ընթացքում շարունակել են արդիական մնալ ուսումնական հաստատություններում ջեռուցման ապահովման, շենքային, գույքային, սանիտարահիգիենիկ պայմանների բարելավման, սննդի կազմակերպմանը ներկայացվող պահանջների, ջրի, այդ թվում՝ տաք ու խմելու ջրի հասանելիության երաշխավորման հետ կապված նախորդ տարեկան հաղորդումներում ներկայացված խնդիրները[318]:

Այսպես, օրինակ, ուսումնական հաստատություններում ջեռուցման ապահովման, շենքային, գույքային, սանիտարահիգիենիկ պայմանների բարելավման հետ կապված խնդիրներ են արձանագրվել Սյունիքի մարզի Մեղրի համայնքի, Ալվանք և Շվանիձոր բնակավայրեր Մարդու իրավունքների պաշտպանի և Հայաստանում ՄԱԿ-ի մշտական համակարգողի համատեղ ուսումնական հաստատություններ իրականացրած այցերի ու զրույցների ընթացքում[319]: Համանման խնդիրներ են արձանագրվել նաև Գեղարքունիքի մարզի Ճամբարակ խոշորացված համայնքի ավագ դպրոց իրականացված այցի, ինչպես նաև Պաշտպանի ու աշխատակազմի կողմից տարբեր, այդ թվում՝ Երևանի ուսումնական հաստատություններ 2025 թվականին իրականացրած այցերի ընթացքում: Նշված խնդիրների առնչությամբ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ստացվել են նաև դիմումներ ու բողոքներ: Արձանագրված խնդիրները անմիջապես հասցեավորվել են իրավասու մարմիններին, հարցերի մի մասը հընթացս ստացել են լուծումներ, իսկ համակարգային բնույթ կրող խնդիրները պարբերաբար ներկայացվում են իրավասու մարմիններին՝ քննարկման առարկա դարձնելու և համապատասխան գործողություններ ձեռնարկելու նպատակով: Հատկանշական է, որ նշված մարմինները ևս արձանագրում են խնդիրների առկայությունն ու պարբերաբար ներկայացնում են իրականացված ու նախատեսվելիք աշխատանքները:

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, Երևանի քաղաքապետարանի, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տրամադրած տեղեկատվության վերլուծության համաձայն՝

---

[318] Տե՛ս, օրինակ, 2024 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջեր 599-619, հասանելի է https://ombuds.am/images/files/4d1335361f1f7e9fbcc1cfc10679701e.pdf հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

[319] Տեղեկատվությունը հասանելի է https://www.ombuds.am/am/site/ViewNews/3396 հղումով:

ուսումնական հաստատություններում ջեռուցման ապահովման, շենքային, գույքային, սանիտարահիգիենիկ պայմանների բարելավման, ջրի, այդ թվում՝ տաք ու խմելու ջրի հասանելիության երաշխավորման ուղղությամբ իրականացվել են մի շարք միջոցառումներ, որոնցից, հատկապես, հատկանշական է «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 500 մանկապարտեզ և նախակրթարան», «մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցներ» ծրագրերի շրջանակում իրականացված միջոցառումները:

Չնայած պետության կողմից ձեռնարկված միջոցներին՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ անհրաժեշտ է ձեռնարկել շարունակական ու գործուն միջոցներ՝ բոլոր ուսումնական հաստատություններում երաշխավորելու կլիմայական պայմաններին համապատասխան ջեռուցման ապահովումը, շենքային, գույքային, սանիտարահիգիենիկ պայմանների բարելավումն ու ջրի, այդ թվում՝ տաք և խմելու ջրի հասանելիությունը:

2025 թվականին շարունակել են արդիական մնալ նաև ուսումնական հաստատություններում սննդի տրամադրումը կազմակերպելու հետ կապված խնդիրները:

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ներկայացրած տեղեկատվության համաձայն՝ ՀՀ 10 մարզերի հանրակրթական դպրոցներում ՀՀ կառավարության կողմից տրամադրվում է միջազգային ստանդարտներին համապատասխան անվճար դպրոցական սնունդ տարրական դասարանների աշակերտների և նախակրթարանների 5-6 տարեկան երեխաների համար: Մշակվել է միջին դասարանների սովորողների համար նախատեսված դպրոցական սնունդ պիլոտային ծրագիրը, որը կմեկնարկի 2026 թվականի հունվար-փետրվար ամիսներին 5-րդ և 6-րդ դասարանի աշակերտների ծնողների համաֆինանսավորմամբ՝ հետագայում ավելի լայն տարածում ապահովելու համար: Այս համատեքստում՝ Կառավարության 300 դպրոց, 500 մանկապարտեզ ծրագրի շրջանակում վերանորոգվող, կառուցվող և հիմնանորոգվող դպրոցներում՝ նախարարության կողմից շինարարական կազմակերպություններին տրամադրվում է խորհրդատվություն՝ հանրակրթական դպրոցներում ճաշարանների և խոհանոցային հատվածների սարքավորումների հագեցման և նորմերի պահպանման վերաբերյալ, որն էլ նոր հնարավորություն կստեղծի ներդնել դպրոցական սննդի համակարգ՝ միջին և բարձր դասարանի աշակերտների համար: Սկսվել են Երևանի դպրոցներում դպրոցական սննդի համակարգի ներդրման աշխատանքները:

Երևանի քաղաքապետարանի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ Երևանի ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատություններում 2025 թվականի ընթացքում ներդրվել է միասնական ճաշացանկ՝ կազմված ոլորտային մասնագետների խորհրդատվությամբ: Սննդի նմուշառումներն ու քննությունը կրում են շարունակական բնույթ: Երևանի ենթակայության դպրոցներում վարձակալական հիմունքներով գործում են բուֆետներ, որոնց գործունեության նկատմամբ վերահսկողությունը վերապահված է դպրոցների տնօրեններին:

Երևանի քաղաքապետարանի ու Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ներկայացրած տեղեկատվության համաձայն՝ ուսումնական հաստատություններում շարունակում են արձանագրվել սննդի որակի հետ կապված խնդիրներ, որոնք, ըստ տրամադրված տեղեկատվության, ստացել և ստանում են լուծումներ:

Չնայած պետության կողմից ձեռնարկված միջոցներին՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ անհրաժեշտ է ձեռնարկել ինստիտուցիոնալ ու շարունակական միջոցառումներ՝ ուղղված բոլոր ուսումնական հաստատություններում միջազգային չափորոշիչներին համապատասխան սննդի տրամադրումը երաշխավորելուն:

2025 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի ուշադրության կենտրոնում է եղել նաև անվճար դասագրքերի տրամադրումը երաշխավորելու հետ կապված խնդիրները:

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված կամ պետության կողմից իրականացվող սոցիալական աջակցության ծրագրերում ընդգրկված ընտանիքների սովորողներին հատկացվող դասագրքերի համար ներդրումային գումարների փոխհատուցումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներից՝ «Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարների փոխհատուցում» ծրագրի շրջանակներում: Հաստատության սոցիալապես անապահով ընտանիքների սովորողների ցուցակը կազմվում է հաստատության մանկավարժական և ծնողական խորհուրդների համատեղ նիստում և հաստատվում տնօրենի կողմից:

Մարդու իրավունքների պաշտպանը խիստ կարևորում է անվճար դասագրքերի տրամադրման հարցում պետության կողմից այնպիսի քաղաքականության որդեգրումը, որը կերաշխավորի յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի իրացման հասանելիությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ***ձեռնարկել շարունակական ու գործուն միջոցներ՝ բոլոր ուսումնական հաստատություններում երաշխավորելու կլիմայական պայմաններին համապատասխան ջեռուցման ապահովումը, շենքային, գույքային, սանիտարահիգիենիկ պայմանների բարելավումն ու ջրի, այդ թվում՝ տաք և խմելու ջրի հասանելիությունը,***
- ***ձեռնարկել ինստիտուցիոնալ ու շարունակական միջոցառումներ՝ ուղղված բոլոր ուսումնական հաստատություններում միջազգային չափորոշիչներին համապատասխան սննդի տրամադրումը երաշխավորելուն,***
- ***անվճար դասագրքերի տրամադրման հարցում որդեգրել այնպիսի քաղաքականություն, որը կերաշխավորի յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի իրացման հասանելիությունը:***

ԳԼՈՒԽ 2. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Աշխատանքի ընտրության ազատությունն ու աշխատանքային իրավունքները երաշխավորված են Սահմանադրությամբ: Աշխատանքային իրավունքների՝ որպես մարդու իրավունքների դերն ու նշանակությունն ընդգծվում է նաև Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում, Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայում, Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայով, Աշխատանքային օրենսգրքով և մի շարք այլ միջազգային ու ներպետական փաստաթղթերով:

Պետության պարտավորությունն է նպաստել արժանապատիվ, հավասար և անվտանգ աշխատանքային միջավայրի ձևավորմանն ու ամրապնդմանը, որտեղ յուրաքանչյուրը կունենա իր կարողություններն ու ներուժն իրացնելու հնարավորություն:

Մինչդեռ՝ ՄԻՊ աշխատակազմի մշտադիտարկումների, ստացված բողոքների ու դիմումների ուսումնասիրության ու քննության արդյունքները ցույց են տալիս, որ 2025 թվականին շարունակել են արդիական մնալ մի շարք համակարգային խնդիրներ, որոնց անդրադարձ է կատարվել նաև նախորդ տարիների տարեկան հաղորդումների շրջանակներում[320]**:**

Մասնավորապես, արձանագրվել է, որ 2025 թվականին, ի թիվս այլնի, շարունակել են արդիական մնալ.

- անվտանգ, առողջ ու արժանապատիվ աշխատանքային պայմանների երաշխավորման հետ կապված խնդիրները,
- պատշաճ վերահսկողական կառուցակարգերի ներդրման հետ կապված խնդիրները,
- գործադուլի իրավունքի սահմանափակումների հետ կապված խնդիրները,
- աշխատանքային իրավունքների պաշտպանության ու խթանման հարցում արհեստակցական միությունների դերի բարձրացման հետ կապված խնդիրները,
- աշխատանքից ազատվելիս աշխատողների հետ վերջնահաշվարկ չկատարելու կամ ոչ ամբողջովին կատարելու հետ կապված խնդիրները:

2025 թվականին արձանագրվել են նաև աշխատանքային իրավունքներին առնչվող մի շարք այլ խնդիրներ, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց, երեխաների աշխատանքային իրավունքներին առնչվող խնդիրներ, աշխատավայրերում սեռական ոտնձգությունների, խտրականության դեպքերի բացահայտման, կանխարգելման ու արձագանքման արդյունավետ մեխանիզմների բացակայության հետ կապված խնդիրներ, որոնց մանրամասն անդրադարձ է կատարվում սույն տարեկան հաղորդման համապատասխան բաժիններում:

Վերոգրյալից բացի 2025 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի ուշադրության ներքո են եղել նաև համայնքներում, այդ թվում՝ սահմանամերձ բնակավայրերում զբաղվածության խթանման հետ կապված խնդիրները:

---

[320] Տե՛ս 2024 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջեր 620-634, հասանելի է https://ombuds.am/images/files/4d1335361f1f7e9fbcc1cfc10679701e.pdf հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում զբաղվածության խթանման հետ կապված խնդիրներ արձանագրվել են ինչպես դիմումների ու բողոքների ուսումնասիրության ու քննության, այնպես էլ ՀՀ տարբեր բնակավայրեր իրականացված, այդ թվում՝ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից անձամբ իրականացված այցերի ընթացքում:

Այսպես, օրինակ, զբաղվածության խթանման հետ կապված խնդիրներ արձանագրվել են 2025 թվականի հոկտեմբերի 21-ին Մարդու իրավունքների պաշտպանի կողմից Շիրակի մարզ իրականացված այցի շրջանակներում Ամասիա և Աշոցք համայնքների բնակիչների, այդ թվում՝ բռնի տեղահանված անձանց հետ ունեցած առանձնազրույցների ընթացքում[321], օգոստոսի 8-ին Ջերմուկ խոշորացված համայնք, ինչպես նաև Կեչուտ և Գնդեվազ բնակավայրեր իրականացված այցի շրջանակներում, մայիսի 21-ին Տեղ խոշորացված համայնքի Խոզնավար և Խնածախ բնակավայրեր, իսկ Հայաստանում ՄԱԿ-ի մշտական համակարգող Ֆրանսուազ Ժակոբի հետ համատեղ իրականացված այցի շրջանակներում Շիկահող, Սրաշեն և Ծավ բնակավայրերի բնակիչների հետ ունեցած հանդիպումների ընթացքում[322], Բերդ խոշորացված համայնք իրականացված այցի շրջանակներում[323] և այլն:

Խնդրահարույց է, որ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ սահմանամերձ համայնքների և բնակավայրերի բնակիչների զբաղվածության ապահովման նպատակով 2025 թվականին առանձին նպատակային ծրագրեր նախատեսված չեն եղել:

Միաժամանակ, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2025 թվականին տարբեր թիրախային խմբերի համար իրականացվել են մի շարք ծրագրեր:

Չնայած պետության կողմից ձեռնարկված միջոցներին՝ Մարդու իրավունքների պաշտպանը կարևորում է առավել գործուն ու համակարգային բնույթ կրող, բոլոր թիրախային խմբերին ընդգրկող ծրագրերի իրականացումը՝ ուղղված համայնքներում, այդ թվում՝ սահմանամերձ բնակավայրերում զբաղվածության խթանմանը:

1. Անվտանգ, առողջ ու արժանապատիվ աշխատանքային պայմանների երաշխավորման հետ կապված խնդիրներ

Սահմանադրությամբ երաշխավորված է յուրաքանչյուր անձի՝ առողջ, անվտանգ և արժանապատիվ աշխատանքային պայմաններ ունենալու իրավունքը:

Մինչդեռ՝ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ստացված դիմումների ու բողոքների ուսումնասիրությունն ու քննությունը, մշտադիտարկման արդյունքները ցույց են տալիս, որ 2025 թվականին շարունակվել են արձանագրվել մի շարք

---

[321] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3554 հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

[322] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3487, https://ombuds.am/am/site/ViewNews/3400, https://ombuds.am/am/site/ViewNews/3394 հղումներով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

[323] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3392 հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

խնդիրներ՝ կապված անվտանգ, առողջ ու արժանապատիվ աշխատանքային պայմանների երաշխավորման հետ:

Այսպես, օրինակ, առողջ, անվտանգ և արժանապատիվ աշխատանքային պայմանների երաշխավորման հետ կապված խնդիրներ են բարձրաձայնվել Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի աշխատակիցների կողմից: Հարցի առնչությամբ Մարդու իրավունքների պաշտպանի հանձնարարությամբ ՄԻՊ ներկայացուցիչները մեկնել են Սյունիքի մարզ, տեղում ծանոթացել են իրավիճակին, հանդիպումներ են ունեցել ԶՊՄԿ-ի աշխատակիցների հետ: Ի թիվս այլնի, Մարդու իրավունքների պաշտպանին և աշխատակազմին մտահոգություններ են ներկայացվել այն մասին, որ անձինք արտադրամասերում աշխատում են առողջության համար վնասակար պայմաններում: Օրինակ՝ ընկերության մանր և միջին ջարդման տեղամասում, հարստացուցիչ ֆաբրիկայում, հանքաքարերի ջարդման և տեղափոխման արտադրամասում բացակայում են հովացման, օդափոխության և ջեռուցման պատշաճ համակարգերը, վիբրացիան, փոշին, խոնավությունը և աղմուկը նորմայից բարձր են, աղմուկի պայմաններում անձինք աշխատում են ութ ժամ, ընկերության լոգարանում տեղադրված ցնցուղների սակավության պատճառով յուրաքանչյուր աշխատանքային հերթափոխից հետո աշխատակիցները կա՛մ երկար սպասում են մինչև հերթն իրենց հասնի, կա՛մ էլ մեկ ցնցուղից միաժամանակ օգտվում է մի քանի անձ: Ավելին, ըստ ներկայացված տեղեկատվության՝ ընկերությունում աշխատում են աշխատակիցներ, ովքեր, թեև զբաղեցնում են միևնույն հաստիքը, կատարում են միևնույն աշխատանքը, սակայն ստանում են տարբեր չափերի աշխատավարձեր, ինչը աշխատակիցների շրջանում արհեստական լարվածություն է առաջացնում:

Բարձրացված հարցերը Պաշտպանի հանձնարարությամբ հաշվառվել և հասցեագրվել են համապատասխան տեսչական մարմիններ: Պաշտպանի գրության հիման վրա ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնում հարուցվել է վարչական վարույթ: Վարչական վարույթի շրջանակում կազմված զննման արձանագրության և վարչական վարույթի ընթացքում ձեռք բերված փաստաթղթերի ուսումնասիրման արդյունքում պարզ է դարձել, որ խախտվել են վերաբերելի իրավական ակտերով սահմանված մի շարք պահանջներ, մասնավորապես, կապված՝ աշխատավայրում խտրականության, աշխատողների անվտանգության ապահովման, առողջության պահպանման և հիգիենայի պահանջները բավարարող պայմանների, աշխատաժամանակի և այլնի հետ: ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից տրամադրված պարզաբանման համաձայն՝ վարչական տույժ նշանակելու մասին որոշմամբ ընկերության համապատասխան պաշտոնատար անձը ենթարկվել է վարչական պատասխանատվության: Ըստ տրամադրված տեղեկատվության՝ նշանակված վարչական տուգանքը վճարվել է պետական բյուջե: Հարցի առնչությամբ Մարդու իրավունքների պաշտպանը հանդես է եկել նաև հրապարակային հայտարարությամբ[324]:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի՝ սոցիալական մեդիայի և զանգվածային լրատվության միջոցների մշտադիտարկման արդյունքում ստացվել են տեղեկություններ նաև Իջևան քաղաքի արտադրամասերից մեկում աշխատող Հնդկաստանի մի խումբ քաղաքացիների անվտանգ, առողջ ու արժանապատիվ

[324] Տեղեկատվությունը հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3417, https://ombuds.am/am/site/ViewNews/3271, https://ombuds.am/am/site/ViewNews/3268 հղումներով 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

աշխատանքային իրավունքների երաշխավորման հարցի առնչությամբ[325]: ՄԻՊ աշխատակազմի Տավուշի մարզային ստորաբաժանման ներկայացուցիչը առանձնազրույց է ունեցել աշխատակիցներից մի քանիսի հետ, գրություններ են հասցեագրվել համապատասխան պետական իրավասու մարմիններ: Ստացված տեղեկությունների համաձայն՝ դեպքի առթիվ նախաձեռնվել է քրեական վարույթ, ինչպես նաև տեսչական մարմնի կողմից հարուցվել է վարչական վարույթ: Հարկ է նշել, որ այս հարցը Պաշտպանի աշխատակազմում գտնվում է քննարկման փուլում և պահանջում է հետագա լրացուցիչ ուսումնասիրություններ:

Նշվածի կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանը կարևորում է աշխատանքի անվտանգության և առողջության վերաբերյալ միասնական ազգային ռազմավարության կամ գործողությունների ծրագրի առկայությունը: Առանց հստակ ազգային տեսլականի դժվար է կանխել մասնագիտական ռիսկերը, իրականացնել համապարփակ օրենսդրական բարեփոխումներ կամ ապահովել աշխատանքային պայմանների համակարգված բարելավում: Նշված խնդրին անդրադարձել է նաև Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեն Հայաստանի վերաբերյալ 2025 թվականի զեկույցում:[326]

Բացի այդ, Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեի 2025 թվականի հունիսի 27-ին հրապարակված զեկույցում անդրադարձ է կատարվել նաև աշխատավայրում վտանգների մասին արդյունավետ իրազեկմանը, ինչը պահանջում է տեսանելի ստանդարտացված անվտանգության նշանների և արտակարգ իրավիճակների դեպքում հրահանգների առկայություն: Այս բացը վերացնելու համար միասնական իրավական ակտում պետք է սահմանվեն անվտանգության նշանների առկայության պարտադիր պահանջները, որոնք կիրառելի են բոլոր ոլորտների և աշխատատեղերի տեսակների համար:[327]

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2025 թվականին աշխատանքային իրավունքներին առնչվող թեմաներով հանրային իրազեկման աշխատանքներ են իրականացվել հետևյալ հարթակների միջոցով՝ նախարարության պաշտոնական ու ֆեյսբուքյան էջեր, տելեգրամյան ալիք, X-հարթակ, ինստագրամյան, տիկտոկյան և յութուբյան ալիքներ, ինչպես նաև հեռուստաընկերությունների, ռադիոընկերությունների և էլեկտրոնային թերթերում հրապարակումներ հանրայնացնելով:

ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2025 թվականի ընթացքում աշխատողների և գործատուների շրջանում աշխատանքային իրավունքի առնչությամբ իրականացվել է 24 սեմինար-իրազեկում՝ իրազեկվածության մակարդակի բարձրացման ուղղությամբ:

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ աշխատանքային իրավունքների, այդ թվում՝ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման վերաբերյալ ավելի քան 1400 աշխատողի շրջանում անցկացրել են իրազեկման միջոցառումներ:

---

[325] Հասանելի է https://www.ombuds.am/am/site/ViewNews/3488 հղումով 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

[326] Հասանելի է https://rm.coe.int/conclusions-2025-armenia-en/48802a3b58 հղումով էջեր 6-7, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

[327] Հասանելի է https://rm.coe.int/comments-ctua-armenia-18-nr-2025/1680b6812e հղումով էջ 8, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

Հարցի առնչությամբ Մարդու իրավունքների պաշտպանը խիստ կարևորում է, որ ներդրվեն անվտանգ, առողջ ու արժանապատիվ աշխատանքային պայմանների երաշխավորմանն ուղղված համակարգային իրազեկման մեխանիզմներ և պարբերաբար իրականացվեն աշխատանքային անվտանգության մասին իրազեկման և վերապատրաստման միջոցառումներ՝ ներգրավելով աշխատողների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող քաղաքացիական հասարակության ու արհեստակցական միությունների ներկայացուցիչներին:

Արժանապատիվ աշխատանքային պայմանների երաշխավորման տեսանկյունից Մարդու իրավունքների պաշտպանը խիստ կարևորում է նաև հանգստի իրավունքի, արդար վարձատրության, ներառյալ՝ արտաժամյա աշխատանքի դիմաց վարձատրվելու իրավունքի ապահովման համատեքստում լրացուցիչ ջանքերի ձեռնարկման անհրաժեշտությունը:

Առողջ, անվտանգ և արժանապատիվ աշխատանքային պայմանների երաշխավորման տեսանկյունից կարևոր է նաև «Աշխատանքի անվտանգության և առողջության մասին» ԱՄԿ թիվ 155 կոնվենցիայի վավերացումը: Խնդրահարույց է այն, որ իրավասու մարմինների տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2025 թվականին կոնվենցիայի վավերացմանն ուղղված միջոցառումներ չեն իրականացվել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է.

- ✓ ***մշակել ու ներդնել աշխատանքի անվտանգության և առողջության վերաբերյալ միասնական ազգային ռազմավարություն կամ գործողությունների ծրագիր՝ ուղղված աշխատանքային պայմանների համակարգային բարելավմանը:***
- ✓ ***միջոցներ ձեռնարկել՝ անվտանգ, առողջ ու արժանապատիվ աշխատանքային պայմանների երաշխավորմանն ուղղված համակարգային իրազեկման մեխանիզմի ներդրման ուղղությամբ:***
- ✓ ***պարբերաբար իրականացնել աշխատանքային անվտանգության մասին իրազեկման և վերապատրաստման միջոցառումներ՝ ներգրավելով աշխատողների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող քաղաքացիական հասարակության ու արհեստակցական միությունների ներկայացուցիչներին:***
- ✓ ***միջոցներ ձեռնարկել՝ ուղղված «Աշխատանքի անվտանգության և առողջության մասին» ԱՄԿ թիվ 155 կոնվենցիայի վավերացմանը:***
- ✓ ***միջոցներ ձեռնարկել՝ երաշխավորելու աշխատողների հանգստի իրավունքի, արդար վարձատրության, ներառյալ՝ արտաժամյա աշխատանքի դիմաց վարձատրվելու իրավունքի ապահովումը:***

2. Պատշաճ վերահսկողական կառուցակարգերի ներդրման հետ կապված խնդիրներ

Պատշաճ վերահսկողական կառուցակարգերի բացակայության հետ կապված խնդրին Մարդու իրավունքների պաշտպանն անդրադարձել է նաև նախորդ տարիների տարեկան հաղորդումների շրջանակում:

Խնդրահարույց է, որ 2025 թվականին միջոցներ չեն ձեռնարկվել՝ ընդլայնելու ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի լիազորությունների շրջանակը, չեն նախատեսվել անանուն դիմումների քննության արդյունավետ կառուցակարգեր, պարբերաբար չհայտարարված այցեր իրականացնելու հնարավորություն և այլն: Նշված խնդրին անդրադարձել են նաև մի շարք միջազգային կառույցներ:

Այսպես, օրինակ, Եվրոպայի խորհրդի մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի փորձագետների խմբի 2022 թվականի հանձնարարականում Հայաստանի Հանրապետությանը կոչ է արվել ձեռնարկել քայլեր՝ ուղղված Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնին՝ ստուգումներ անցկացնելու համար բավարար լիազորություններ և ռեսուրսներ տրամադրելուն, ներառյալ՝ գրանցված ու չգրանցված կազմակերպություններում չհայտարարված այցեր իրականացնելու հնարավորություն նախատեսելուն:[328]

Բացի այդ, 2025 թվականին շարունակում է արդիական մնալ աշխատանքային իրավունքների և օրենսդրության կիրառման նկատմամբ պետական հսկողություն իրականացնող արտադատական մարմնի բացակայության հետ կապված խնդիրը: Հարցի առնչությամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը տեղեկացրել է, որ մշակվել և շրջանառության է դրվել աշխատանքային վեճերի լուծման արտադատական համակարգի ներդրմանն ուղղված «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի և հարակից նախագծերի փաթեթը: Մարդու իրավունքների պաշտպանը խիստ կարևորում է, որ նշված օրենսդրական փոփոխությունները համապատասխանեն միջազգային չափանիշներին և երաշխավորեն այդ մարմնի արդյունավետ գործունեությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է.

- ✓ ***միջոցներ ձեռնարկել՝ ընդլայնելու ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի լիազորությունների շրջանակը,***
- ✓ ***միջոցներ ձեռնարկել՝ միջազգային չափորոշիչների հաշվառմամբ աշխատանքային իրավունքների և օրենսդրության կիրառման նկատմամբ պետական հսկողություն իրականացնող արտադատական մարմնի ստեղծման ուղղությամբ:***

3. Գործադուլի իրավունքի սահմանափակումների հետ կապված խնդիրներ

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ստացված դիմումների ու բողոքների ուսումնասիրությունն ու քննությունը, մշտադիտարկման արդյունքները ցույց են տալիս, որ 2025 թվականին շարունակել են արձանագրվել մի շարք խնդիրներ՝ կապված գործադուլի իրավունքի պատշաճ իրացման հետ:

Այսպես, օրինակ, Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի աշխատակիցների հետ իրենց կողմից բարձրացված խնդիրների քննարկման նպատակով իրականացված այցի ընթացքում արձանագրվել է, որ կոմբինատի աշխատակիցները պատշաճ իրազեկված չեն եղել գործադուլի կազմակերպման և իրականացման համար օրենսդրությամբ սահմանված պահանջների վերաբերյալ: Հարցի առնչությամբ Մարդու իրավունքների պաշտպանը հանդես է եկել հրապարակային հայտարարությամբ[329]:

Մարդու իրավունքների պաշտպանին 2025 թվականին հասցեագրված բողոքների, թեժ գծին ստացված զանգերի, ինչպես նաև սոցիալական ցանցերի և զանգվածային լրատվության միջոցների հրապարակումների մշտադիտարկումները վկայում են, որ խնդիրը համակարգային է:

---

[328] Տեղեկատվությունը հասանելի է https://rm.coe.int/greta-third-evalution-report-on-armenia/1680a6b4ba հղումով, էջ 35, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

[329] Տեղեկատվությունը հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3271 հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

Այս համատեքստում Պաշտպանն ընդգծում է, որ պետությունը պետք է շարունակական իրազեկման աշխատանքներ իրականացնի կոլեկտիվ աշխատանքային վեճերի կարգավորման և գործադուլի իրականացման օրենսդրորեն ամրագրված կառուցակարգերի վերաբերյալ:

Խնդրահարույց է, որ գործադուլի իրավունքը շարունակում է սահմանափակված լինել խիստ իրավական պահանջներով: Աշխատանքային օրենսգիրքը նախատեսում է, որ գործադուլ հայտարարվում է այն դեպքում, երբ այդ մասին որոշումը գաղտնի քվեարկությամբ հավանության է արժանացել գործատուի մոտ գործադուլի դեպքում (աշխատողների կոլեկտիվի գործադուլի դեպքում)՝ քվեարկությանը մասնակցած աշխատողների ձայների մեծամասնությամբ, որը չի կարող պակաս լինել աշխատողների ընդհանուր թվի կեսից: Նման բարձր շեմը չի համապատասխանում միջազգային չափանիշներին, որոնք սահմանում են գործադուլի իրավունքի իրականացման ընթացակարգերի մատչելի և համաչափ լինելու անհրաժեշտությունը: Խնդրին անդրադարձել է նաև Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեն Հայաստանի վերաբերյալ 2024 թվականի զեկույցում:[330]

Նշվածի հետ մեկտեղ, օրենսդրական խնդիրների շարքում հիշատակման է արժանի այն հանգամանքը, որ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված են ոլորտներ, որտեղ գործադուլի իրավունքը արգելվում է (ոստիկանությունում, զինված ուժերում (դրան հավասարեցված այլ ծառայություններում), պահպանության ծառայություններում, ինչպես նաև կենտրոնացված էլեկտրամատակարարման, ջերմամատակարարման, գազամատակարարման կազմակերպություններում, անհետաձգելի բժշկական օգնության ծառայություններում): Նշված դրույթների առնչությամբ Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեն Հայաստանի վերաբերյալ 2025 թվականի եզրակացություններում հանգել էր նրան, որ Հայաստանում իրավիճակը չի համապատասխանում Վերանայված եվրոպական սոցիալական խարտիային այն հիմքով, որ էներգամատակարարման ծառայություններում գործադուլներն արգելված են, ոստիկանությունը զրկված է գործադուլ անելու իրավունքից, որոշ ոլորտներում գործադուլի իրավունքի սահմանափակումները լայն են և դուրս են Խարտիայով թույլատրված սահմաններից[331]:

Նշված հանգամանքի կապակցությամբ Պաշտպանը հատուկ ընդգծում է, որ պետությունում գործող իրավակարգավորումները չպետք է լինեն այնպիսին, որ գործնականում խոչընդոտեն գործադուլի միջոցով աշխատողների կողմից համապատասխան խնդիրների բարձրաձայնմանը, իսկ աշխատանքային պայմանների վերաբերյալ հարցերը իրավասու մարմինները պետք է մանրամասն ուսումնասիրության առարկա դարձնեն և լինեն հետևողական, որպեսզի հնարավորին սեղմ ժամկետում գտնվեն դրանց համակարգային լուծումները: Այս առումով առկա խնդիրները բազմաթիվ են:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է.

✓ ***շարունակական իրազեկման աշխատանքներ իրականացնել կոլեկտիվ աշխատանքային վեճերի կարգավորման և գործադուլի իրականացման օրենսդրորեն ամրագրված կառուցակարգերի վերաբերյալ,***

---

[330] Հասանելի է https://rm.coe.int/comments-ctua-armenia-18-nr-2025/1680b6812e հղումով էջ 14, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

[331] Տե՛ս, Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեի Հայաստանի վերաբերյալ 2025 թվականի եզրակացությունը, հասանելի է https://rm.coe.int/conclusions-2025-armenia-en/48802a3b58 հղումով, էջ 24, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

✓ ***իրականացնել օրենսդրական փոփոխություններ՝ գործադուլի իրավունքի սահմանափակումները միջազգային չափորոշիչներին համապատասխանեցնելու ուղղությամբ:***

4. Աշխատանքային իրավունքների պաշտպանության ու խթանման հարցում արհեստակցական միությունների դերի բարձրացման հետ կապված խնդիրները

2025 թվականին արհեստակցական միություններում ցածր ներգրավվածությունը շարունակել է պահպանվել՝ պայմանավորված դրանց թույլ ինստիտուցիոնալ վիճակով և սոցիալական ցածր դերակատարությամբ:

Արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամակցելու իրավունքը միավորվելու ազատության դրսևորումներից է, որը երաշխավորված է ինչպես Սահմանադրությամբ, այնպես էլ միջազգային փաստաթղթերով, որոնք բազմիցս քննարկման առարկա են դարձել Պաշտպանի տարեկան հաղորդումներում[332]:

2026 թվականի հունվարի 1-ի դրությամբ Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան միավորել է 18 ճյուղային հանրապետական միություններ, որոնց կազմում գործել է 582 արհմիութենական կազմակերպություն՝ 188,280 անդամներով: Մտահոգիչ է այն, որ նախորդ տարվա համեմատությամբ Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի ճյուղային հանրապետական միություններում ընդգրկված արհմիութենական կազմակերպությունների ու դրանցում ընդգրկված անդամների թիվը նվազել է:

Նշվածի առնչությամբ հատկանշական է, որ Հանրային ծառայություններում աշխատողների արհմիությունների Եվրոպական ֆեդերացիայի (EPSU) հրապարակած ուղեցույցում ընդգծվել է, որ արհմիությունում անդամների քանակի ավելացումն անգամ բավարար երաշխիք չէ արհմիության հզորության ավելացման համար, պետք է երաշխավորել ավելացող անդամների քանակի գերազանցումը արհմիությունը լքողների քանակին ու ակտիվ անդամակցություն, որպեսզի հնարավոր լինի նրանց արագ մոբիլիզացնել արհմիության արշավների ու բանակցությունների ժամանակ[333]: Առավել խնդրահարույց է այն, որ տեղի է ունենում արհեստակցական միությունների անդամների թվի նվազում:

Արհեստակցական միությունների դերի բարձրացման հետ կապված խնդիրները, ի թիվս այլնի, պայմանավորված են նաև թերի օրենսդրական կարգավորումներով:

Հատկանշական է, որ նախկինում Պաշտպանի կողմից արձանագրված խնդիրների լուծման առնչությամբ 2025 թվականին իրականացվել են որոշ օրենսդրական փոփոխություններ: Մասնավորապես, վերացվել է ՀՀ զինված ուժերի, ոստիկանության, ազգային անվտանգության, դատախազության մարմինների ծառայողների, ինչպես նաև դատավորների համար արհեստակցական կազմակերպության մասնակից լինելու բացարձակ արգելքը:

Կարևորելով ոլորտում իրականացված փոփոխությունը՝ Պաշտպանն արձանագրում է, որ շարունակում են արդիական մնալ մի շարք համակարգային խնդիրներ:

---

[332] Տեղեկատվությունը հասանելի է https://ombuds.am/images/files/4d1335361f1f7e9fbcc1cfc10679701e.pdf հղումով, էջ 632-634, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

[333] Տե՛ս, Հանրային ծառայություններում աշխատողների արհմիությունների Եվրոպական ֆեդերացիայի ուղեցույցը, հասանելի է https://www.epsu.org/sites/default/files/article/files/Organising%20guide_ARM.pdf հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

Մասնավորապես, արհեստակցական միությունների ստեղծման և պահպանման իրավական և վարչական միջավայրը մնում է չարդարացված ծանրաբեռնված և միջազգային չափանիշներին անհամապատասխան, քանի որ, ի տարբերություն առևտրային կազմակերպությունների, որոնք կարող են գրանցվել արագ և համեմատաբար նվազագույն պահանջներով, արհմիությունները բախվում են գրանցման բարդ, երկար և հաճախ ծախսատար ընթացակարգերի: Կարգավորումը խնդրահարույց է համարել նաև Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեն Հայաստանի վերաբերյալ 2025 թվականի զեկույցում:[334]

Բացի այդ, արհեստակցական միություններն իրավունք ունեն դատական կարգով բողոքարկել գործատուների և նրանց լիազոր ներկայացուցիչների որոշումներն ու գործողությունները, որոնք հակասում են ազգային օրենսդրությանը, կոլեկտիվ պայմանագրերին, աշխատանքային պայմանագրերին կամ խախտում են աշխատողների և նրանց ներկայացուցիչների իրավունքները կազմակերպության ներսում: Այնուամենայնիվ, այս դրույթը գործնականում մնում է անկիրառելի, քանի որ Քաղաքացիական դատավարության օրենսգրքում համապատասխանեցման անհրաժեշտ փոփոխություններ չեն կատարվել: Խնդրին անդրադարձել է նաև Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեն Հայաստանի վերաբերյալ 2024 թվականի զեկույցում:[335]

«Արհեստակցական միությունների մասին» օրենքի համաձայն՝ արհեստակցական միությունները միավորում են տվյալ գործատուի հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող աշխատողներին, իսկ աշխատող համարվում է միայն աշխատանքային պայմանագրի հիման վրա գործատուի մոտ աշխատանք կատարող անձը: Նման կարգավորումը բացառում է, օրինակ, ինքնազբաղված անձանց՝ արհմիությունների անդամակցության իրավունքը: Կարգավորումը խնդրահարույց է համարել նաև Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեն Հայաստանի վերաբերյալ 2025 թվականի զեկույցում:[336]

Հատկանշական է, որ որոշ խնդիրների լուծման նպատակով 2025 թվականին մշակվել է օրենսդրական փոփոխությունների նախագիծ: Հարցի առնչությամբ Պաշտպանը խիստ կարևորում է միջազգային չափորոշիչների հաշվառմամբ համապատասխան փոփոխությունների շուտափույթ իրականացումը:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***իրականացնել օրենսդրական փոփոխություններ՝ ուղղված արհեստակցական միություններին վերաբերող կարգավորումները՝ միջազգային չափանիշներին համապատասխանեցնելուն,***
- ✓ ***շարունակաբար իրականացնել հանրային իրազեկման աշխատանքներ և վերապատրաստումներ՝ ուղղված արհեստակցական միությունների սոցիալական դերակատարության բարձրացմանը:***

---

[334] Հասանելի է https://rm.coe.int/conclusions-2025-armenia-en/48802a3b58 հղումով էջ 15, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

[335] Հասանելի է https://rm.coe.int/comments-ctua-armenia-18-nr-2025/1680b6812e հղումով էջ 14-15, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

[336] Հասանելի է https://rm.coe.int/conclusions-2025-armenia-en/48802a3b58 հղումով էջ 14-15, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

5. Աշխատանքից ազատվելիս աշխատողների հետ վերջնահաշվարկ չկատարելու կամ ոչ ամբողջովին կատարելու հետ կապված խնդիրներ

Աշխատանքային իրավունքների պատշաճ իրացման հետ կապված խնդիրները վեր հանելու նպատակով հաշվետու տարվա ընթացքում ՄԻՊ աշխատակազմում, ի թիվս այլ աշխատանքների, իրականացվել է վիճակագրական տվյալների ուսումնասիրություն, որի արդյունքում արձանագրվել է աշխատանքային իրավունքների ենթադրյալ խախտումների վերաբերյալ Պաշտպանին հասցեագրված գրավոր ու բանավոր դիմում-բողոքների թվի աճ:

Այսպես, դրանց համեմատական պատկերը ցույց է տալիս, որ եթե 2024 թվականին աշխատանքային իրավունքների ենթադրյալ խախտումների վերաբերյալ Պաշտպանի աշխատակազմ մուտքագրված գրավոր և բանավոր դիմում-բողոքների թիվը կազմել է 299, ապա 2025 թվականին՝ նշված դիմում-բողոքների թիվը կազմել է 355: Այսինքն՝ 2024 թվականի համեմատությամբ՝ 2025 թվականին ՄԻՊ-ին հասցեագրված դիմում-բողոքների թիվն ավելացել է 56-ով կամ 18,7 %-ով:

Ուշագրավ է, որ 2024 և 2025 թվականներին ՄԻՊ աշխատակազմ աշխատանքային իրավունքների ենթադրյալ խախտումներով ստացված բողոքներով բարձրացված թերևս ամենատարածված խնդիրները վերաբերել են աշխատանքից ազատվելիս աշխատողների հետ վերջնահաշվարկ չկատարելուն, ոչ ամբողջովին կատարելուն կամ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված ժամկետը չպահպանելով կատարելուն: Այսպես, վերը նշված տարիներին քննարկվող խնդիրների վերաբերյալ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին ներկայացվել է համապատասխանաբար՝ 78 և 86 գրավոր ու բանավոր դիմում-բողոք, որոնց ընդհանուր վերլուծությունը հնարավորություն է տալիս փաստել, որ աշխատանքային պայմանագրի լուծման դեպքում աշխատողների հետ վերջնահաշվարկ չկատարելու, ոչ ամբողջովին կատարելու կամ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված ժամկետը չպահպանելով կատարելու հետ կապված խնդիրները շարունակում են արդիական մնալ: Այս խնդիրների շարունակականության մասին են վկայում նաև ՄԻՊ-ի՝ տարբեր տարիների գործունեությունն ամփոփող հաղորդումներում[337], արտահերթ զեկույցներում[338], իրազեկող տեսանյութերում[339] և հրապարակային ելույթներում[340] անդրադարձերը:

Աշխատողի հետ վերջնահաշվարկ կատարելու կարգը, մասնավորապես, ամրագրված է աշխատանքային իրավահարաբերությունները կարգավորող հիմնական իրավական ակտով՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքով, որի 130-րդ հոդվածի բովանդակային ուսումնասիրությունը վկայում է, որ ընդհանուր և իմպերատիվ պայմանն այն է, որ աշխատանքային պայմանագիրը լուծվելու դեպքում գործատուն պարտավոր է աշխատողի հետ կատարել լրիվ վերջնահաշվարկ աշխատանքային պայմանագրի լուծման օրը, եթե նույն օրենսգրքով, օրենքով կամ գործատուի և աշխատողի համաձայնությամբ

---

[337] Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի վերաբերյալ, 2019, 2020, 2021, 2023 և 2024 թվականների տարեկան հաղորդումները (համապատասխանաբար՝ էջեր 149-150, 225-227, 202-204, 90-91, 620-622):

[338] Տե՛ս Պաշտպանի 2022 թվականի «Աշխատանքային իրավունքների մի շարք խնդիրներ՝ ըստ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին ուղղված դիմում-բողոքների քննարկման» արտահերթ հրապարակային զեկույցը: էլեկտրոնային տարբերակը հասանելի է հետևյալ հղումով՝ https://ombuds.am/images/files/3e8c442679f3517741050c3a1bcc4fa8.pdf (20/03/2026թ.-ի դրությամբ):

[339] Հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.ombuds.am/am/site/VideoGalleryView/614 (20/03/2026թ.-ի դրությամբ):

[340] Հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.ombuds.am/am/site/ViewNews/3045 (20/03/2026թ.-ի դրությամբ):

վերջնահաշվարկի այլ կարգ նախատեսված չէ: Ընդ որում, հատկանշական է, որ գործատուն վերջնահաշվարկի օրը պարտավոր է աշխատողին վճարել աշխատավարձը և դրան հավասարեցված այլ վճարումներ, իսկ եթե այդ պարտավորությունը, գործատուից անկախ պատճառներով, հնարավոր չէ կատարել, ապա աշխատողի աշխատավարձը և դրան հավասարեցված վճարումները կատարվում են աշխատողի կողմից նման պահանջ ներկայացնելուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Ամենամյա արձակուրդը չօգտագործելու համար դրամական հատուցումը ևս վճարվում է աշխատանքային պայմանագիրը լուծելիս և ներառվում է վերջնահաշվարկի մեջ (տե՛ս նույն օրենսգրքի 170-րդ հոդվածը): Ինչ վերաբերում է գործատուների կողմից վերջնահաշվարկը ոչ ամբողջովին կամ մասնակի կատարելուն, ապա այս համատեքստում հատկանշական է, որ Աշխատանքային օրենսգիրքը գործատուներին վերջնահաշվարկը մասնակի կատարելու կամ վերջնահաշվարկ կատարելիս որոշ տեսակի գումարներ չհաշվարկելու համար ոչ միայն որևէ իրավական հիմք չի տալիս, այլև պարտավորեցնում է կատարել ***լրիվ վերջնահաշվարկ:***

Վերոգրյալի համատեքստում հարկ է նշել, որ 2025 թվականի ընթացքում ՄԻՊ-ին հասցեագրված բողոքների ուսումնասիրությունը վկայում է, որ աշխատանքային ոլորտում հաճախ հանդիպող խախտումներից է չօգտագործված ամենամյա արձակուրդի համար գործատուի կողմից փոխհատուցում չտրամադրելը: Օրինակ՝ բողոքներից մեկով Պաշտպանին դիմած անձը հայտնել է, որ 2023 թվականի մարտ ամսից մինչև 2025 թվականի փետրվար ամիսն աշխատել է մասնավոր կազմակերպությունում և այդ ժամանակահատվածում չի օգտվել իր արձակուրդի իրավունքից: Հավելել է, որ գործատուն աշխատողի հետ լուծել է աշխատանքային պայմանագիրը և վերջնահաշվարկ անելիս հրաժարվել է վճարել չօգտագործված բոլոր ամենամյա արձակուրդների համար փոխհատուցում: Աշխատանքային օրենսդրությունն իրավական որևէ հիմք չի տալիս գործատուներին վերջնահաշվարկը մասնակի կատարելու կամ վերջնահաշվարկ կատարելիս որոշ տեսակի գումարներ չհաշվարկելու համար. ինչպես արդեն իսկ նշվեց, չօգտագործված ամենամյա արձակուրդի համար հասանելիք գումարները նույնպես մտնում են վերջնահաշվարկի մեջ՝ որպես աշխատավարձին հավասարեցված այլ վճարներ: Ինչ վերաբերում է արձակուրդային բոլոր օրերի համար հատուցում տրամադրելուն՝ հարկ է վկայակոչել ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/3516/02/08 որոշումը, որում դատարանը պարզաբանել է, որ հատուցումը պետք է վճարվի չօգտագործված բոլոր արձակուրդների համար: Հետևաբար, պետք է արձանագրել, որ չօգտագործված, ընդ որում՝ բոլոր, արձակուրդների համար դրամական հատուցումը վերջնահաշվարկի մաս է, և վերջնահաշվարկ կատարելիս գործատուն պարտավոր է աշխատողին չօգտագործված բոլոր արձակուրդների համար փոխհատուցել:

Այսպիսով, վերը նշված իրավանորմերն ունեն իմպերատիվ բնույթ և ուղղված են աշխատողի աշխատանքային իրավունքների պատշաճ ապահովմանն ու դրանցից որևէ շեղում չի կարող լինել: Նշվածի համատեքստում՝ Մարդու իրավունքների պաշտպանը վերահաստատում է նախորդ տարեկան հաղորդումների շրջանակներում արտահայտած այն դիրքորոշումները, ըստ որոնց՝ աշխատանքային պայմանագիրը լուծելիս աշխատողի հետ վերջնահաշվարկ կատարելը գործատուների ոչ թե իրավունքն է, այլ պարտականությունը, իսկ գործատուի և աշխատողի համաձայնությամբ վերջնահաշվարկի այլ կարգ նախատեսելու հնարավորությունը վերաբերում է ոչ թե վերջնահաշվարկ կատարելու կամ չկատարելու կողմերի հայեցողությանը, այլ վերջնահաշվարկի կատարման կարգին, օրինակ՝ ժամկետին: Այսինքն՝ գործատուն որևէ կերպ իրավասու չէ

սահմանափակելու աշխատանքից ազատվելուց հետո աշխատողի հետ վերջնահաշվարկ կատարելու իրավունքը:

Հարկ է նշել, որ աշխատանքային պայմանագրի լուծման դեպքում աշխատողների հետ վերջնահաշվարկ չկատարելու, ոչ ամբողջովին կատարելու կամ օրենսդրությամբ սահմանված ժամկետը չպահպանելով կատարելու վերաբերյալ հաշվետու տարում ստացված բողոքները հիմնականում վերաբերել են մասնավոր ոլորտին, իսկ մասնավոր կազմակերպությունների դեմ բողոքներ քննարկելու իրավասություն Պաշտպանը չունի: Նշվածի հաշվառմամբ՝ ՄԻՊ-ին հասցեագրված նման բողոքները դրանք ներկայացրած անձանց գրավոր համաձայնությամբ փոխանցվել են ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին: Դրանց ընթացքի նկատմամբ իրականացվել է հետագա հետևողական աշխատանք: Այդպիսի արդյունավետ համագործակցության արդյունքում հնարավոր է եղել մի շարք անհատական հարցերի տալ լուծում:

Այսպես, օրինակ՝ Պաշտպանին ներկայացրած բողոքներից մեկով անձը հայտնել է, որ աշխատել է մասնավոր կազմակերպությունում՝ որպես գործավար: Բողոք ներկայացրած անձի պնդմամբ՝ 2025 թվականի փետրվար ամսին գործատուն, առանց իրեն նախապես ծանուցելու, հաստիքների կրճատման հիմքով լուծել է աշխատանքային պայմանագիրը: Ըստ բողոք ներկայացրած անձի՝ պայմանագրի լուծման օրն իր հետ վերջնահաշվարկ չի կատարվել: Նշել է նաև, որ այս խնդրով բազմիցս գրավոր և բանավոր դիմել է գործատուին, սակայն արդյունքի չի հասել:

Նշված բողոքը, այն ներկայացրած անձի գրավոր համաձայնությամբ, փոխանցվել է Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին: Արդյունքում տեսչական մարմնում հարուցվել է վարչական վարույթ՝ մասնավոր կազմակերպության կողմից Աշխատանքային օրենսդրության պահանջների պահպանումը պարզելու նպատակով: Հաջորդիվ, բողոք ներկայացրած անձը ՄԻՊ աշխատակազմ լրացուցիչ տեղեկատվություն է ներկայացրել առ այն, որ խնդիրը ստացել է լուծում և իր հետ կատարվել է վերջնահաշվարկ:

Հաշվի առնելով, որ աշխատանքային օրենսդրության պահանջների պահպանման հարցում առաջնահերթ դերակատարությունը ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնինն է՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը 2025 թվականի տարեկան հաղորդման կազմման շրջանակում քննարկվող խնդիրների վերաբերյալ ներկայացված բողոքների քանակի, ընթացքի և արդյունքների մասին տեղեկատվություն է պահանջել նաև տեսչական մարմնից:

Ի պատասխան՝ տրամադրվել է տեղեկություն առ այն, որ 2025 թվականի ընթացքում տեսչական մարմինն աշխատանքային պայմանագրի լուծման դեպքում աշխատողների հետ վերջնահաշվարկ չկատարելու, ոչ ամբողջովին կատարելու կամ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված ժամկետը չպահպանելով կատարելու վերաբերյալ ստացել է 321 դիմում, որից 125-ի դեպքում արձանագրվել են խախտումներ և տրվել են կարգադրագրեր, 177-ը կարճվել են՝ հիմնականում դիմումից հրաժարվելու և վարչական իրավախախտման դեպքի բացակայության հիմքով, թվով 19 վարչական վարույթ գտնվում է ընթացիկ փուլում:

Հարկ է նշել, որ վերջին տարիներին Պաշտպանին հասցեագրված գրավոր և բանավոր դիմում-բողոքների ուսումնասիրության արդյունքները վկայում են նաև, որ շարունակում են խնդրահարույց մնալ, Մարդու իրավունքների պաշտպանի կողմից բազմիցս բարձրացված, աշխատանքային իրավունքների վերաբերյալ աշխատողների իրազեկվածության պակասի և դրա հետևանքով առաջ եկող հարցերը՝ նկատի ունենալով, որ մարդու իրավունքների խախտման հանգեցնող պատճառներից մեկն իրազեկվածության պակասն է: Այս տեսանկյունից Պաշտպանը կարևորում է աշխատանքային իրավունքների

ապահովման նկատմամբ պետության պատշաճ վերահսկողության միջոցների ձեռնարկումը, ինչպես նաև աշխատողների և գործատուների շրջանում աշխատանքային իրավունքների առնչությամբ իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացումը:

Աշխատանքային իրավունքների վերաբերյալ իրազեկվածության բարձրացման խնդրին Պաշտպանը մշտապես անդրադառնում է ինչպես իր ուղերձներում, այնպես էլ վերաբերելի քննարկումների, համաժողովների և այլ միջոցառումների ժամանակ: Այսպես, օրինակ՝ Աշխատանքի օրվա առթիվ վերջին տարիների շնորհավորական ուղերձներում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը կարևոր է համարում աշխատողների և գործատուների շրջանում աշխատանքային իրավունքների առնչությամբ իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացումը[341]:

Վերոգրյալի համատեքստում դրական պետք է գնահատել այն, որ ՄԻՊ-ի՝ 2025 թվականի տարեկան հաղորդման կազմման նպատակով ներկայացված համապատասխան հարցադրմանն *(առ այն, թե 2025 թվականի ընթացքում ի՞նչ միջոցներ են ձեռնարկվել աշխատողների և գործատուների շրջանում աշխատանքային իրավունքների առնչությամբ իրազեկվածության մակարդակի բարձրացման ուղղությամբ)* ի պատասխան՝ ԱԱՏՄ-ն տրամադրել է տեղեկատվություն այն մասին, որ 2025 թվականին այս ուղղությամբ իրականացվել է 24 սեմինար-իրազեկում:

Ամփոփելով վերոգրյալը, Պաշտպանը վերահաստատում է, որ անհրաժեշտ է՝

- ✓ ***մշտապես առաջնորդվել օրենսդրության պահանջների պահպանմամբ. աշխատանքից ազատվող աշխատողի հետ կատարել պատշաճ և լրիվ վերջնահաշվարկ՝ պահպանելով նաև օրենսդրությամբ սահմանված ժամկետները.***
- ✓ ***պարբերաբար կազմակերպել միջոցառումներ աշխատանքային իրավունքների և դրանց պաշտպանության կառուցակարգերի վերաբերյալ իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով:***

[341] Տե՛ս, օրինակ՝ https://www.ombuds.am/am/site/ViewNews/2511, https://www.ombuds.am/am/site/ViewNews/2947, https://www.ombuds.am/am/site/ViewNews/3378 (հասանելի է 20/03/2026թ.-ի դրությամբ):

ԳԼՈՒԽ 3. ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Սահմանադրությունը և բազմաթիվ միջազգային իրավական փաստաթղթեր ճանաչում և երաշխավորում են յուրաքանչյուրի սեփականության իրավունքը: Պետությունն ապահովում է սեփականության հարաբերությունների կայունությունը և սեփականության իրավունքի պաշտպանությունը:

Հարկ է նշել, որ միայն սեփականության իրավունքի հռչակումը դեռևս բավարար չէ այդ իրավունքի լիարժեք իրացման համար: Դրա պաշտպանվածության համար անհրաժեշտ է նաև ստեղծել լիարժեք և արդյունավետ օրենսդրական և իրավակիրառ կառուցակարգեր և գործածել դրանք:

Հաշվետու տարվա ընթացքում ևս Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել են սեփականության իրավունքի խախտումների մասին դիմում-բողոքներ: Հարկ է նկատել, որ այդ իրավունքի խախտումները բաժին են ընկնում տարիներ շարունակ մեր երկրում լուծում չստացած, այն է՝ համակարգային բնույթ կրող խնդիրներին: Այդպիսիք են, մասնավորապես, պետության կողմից բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու հետևանքով սեփականության իրավունքը սահմանափակելու խնդիրը, աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժից հետո տեղադրված (կառուցված) ոչ հիմնական շինությունների ազատման և դրանցում բնակվող ընտանիքների բնակապահովման խնդիրները, «Դալմայի» այգիների նախկին հողօգտագործողների օտարված հողատարածքների դիմաց փոխհատուցում չտրամադրելու շարունակական խնդիրը և այլն: Ընդ որում, նշված համակարգային խնդիրները Մարդու իրավունքների պաշտպանը մշտապես է բարձրացնում իր գործունեությունն ամփոփող տարեկան հաղորդումների շրջանակում: Այսպես, օրինակ՝ Պաշտպանն իր տարբեր տարիների հաղորդումներում բարձրացրել է «Դալմայի» այգիներում հողամասեր վարձակալած կամ զբաղեցրած անձանց հողատարածքներն այլ նպատակային նշանակության համար վերցնելու և փոխհատուցում չտրամադրելու խնդիրը[342]: Այս առումով խիստ մտահոգիչ է այն, որ երկար տարիներ Պաշտպանը բարձրաձայնել է խնդիրը, սակայն դրան ամբողջական լուծում չի տրվել:

Հաշվի առնելով, որ հաշվետու տարում խնդիրը շարունակել է մնալ չլուծված և 2025 թվականին Պաշտպանը ստացել է լրացուցիչ դիմումներ «Դալմայի» այգիների նախկին հողօգտագործողներից՝ Մարդու իրավունքների պաշտպանի նախաձեռնությամբ ՄԻՊ աշխատակազմում տեղի է ունեցել աշխատանքային քննարկում մարդու իրավունքների և բնապահպանության ոլորտի փորձագետի հետ: Քննարկումը, ի թիվս այլնի, իրականացվել է բարձրացված խնդրի կարգավորման համար Պաշտպանի հաստատության իրավասության սահմաններում (մանդատի շրջանակում) ձեռնարկվելիք միջոցառումների ուղղությունները նախանշելու նպատակով: Բացի այդ, լրացուցիչ բողոքների քննարկման պատշաճ ընթացքն ապահովելու համար 2025 թվականին ՄԻՊ աշխատակազմում տեղի է ունեցել հանդիպում Պաշտպանին դիմում ներկայացրած «Դալմայի» այգիների նախկին հողօգտագործողների հետ:

Միևնույն ժամանկ, 2025 թվականին Մարդու իրավունքների պաշտպանը շարունակել է բարձրացված խնդրի առնչությամբ հաղորդակցություն վարել Երևանի քաղաքապետարանի հետ: Արդյունքում՝ «Դալմայի» այգիների նախկին վարձակալների (հողօգտագործողների) օտարված հողատարածքների դիմաց փոխհատուցման

[342] Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի վերաբերյալ 2018, 2019, 2020, 2021, 2023 և 2024 թվականների տարեկան հաղորդումները (համապատասխանաբար՝ էջեր 109-111, 127-131, 197-200, 166-169, 76-79, 643-645):

տրամադրման խնդրի վերաբերյալ Երևանի քաղաքապետարանի դիրքորոշումը մնացել է անփոփոխ: Հաշվի առնելով այն, որ այդ դիրքորոշման և ընդհանրապես Երևանի քաղաքապետարանի որդեգրած մոտեցման մասով ՄԻՊ նախորդ տարիների հաղորդումների շրջանակներում ամփոփվել և մանրամասն ներկայացվել են խնդրի առնչությամբ վերաբերելի իրավակարգավորումները, միջազգային կառույցների դիտարկումները, դատական պրակտիկան, ինչպես նաև Մարդու իրավունքների պաշտպանի արտահայտած դիրքորոշումներն ու առաջարկությունները, ուստի հարկ չենք համարում կրկին անդրադառնալ դրանց[343]: *Այնուհանդերձ, Պաշտպանը վերահաստատում է, որ անհրաժեշտ է մշակել և իրացնել կառուցակարգեր հողամասերն այլ նպատակային նշանակության համար վերցնելու դեպքում ձեռք բերման վաղեմության իրավունք ունեցող անձանց այլ հողամասեր տրամադրելու կամ նրանց վնասները հատուցելու, իսկ նման հողամասերը վաճառելու դեպքերում գնման նախապատվության իրավունք ունեցող անձանց շահերը հաշվի առնելու նպատակով:* ***Այս համատեքստում անհրաժեշտ է ավարտին հասցնել «Դալմայի» այգիների նախկին վարձակալների և (կամ) հողօգտագործողների օտարված հողատարածքների դիմաց փոխհատուցման տրամադրման գործընթացը:***

2025 թվականին Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները, այդ թվում՝ Շիրակի և Լոռու մարզային ստորաբաժանումների ղեկավարները, մասնակցել են ՀՀ Ազգային ժողովի Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ Ռուստամ Բաքոյանի նախաձեռնությամբ կազմակերպված՝ *«1988 թվականի ավերիչ երկրաշարժի հետևանքով աղետի գոտում առկա ինքնակամ կառույցների հաշվառման գործընթացում առաջացող խնդիրներ. որոշակի խումբ անձանց համար վերաբերելի արտոնությունների սահմանման անհրաժեշտություն»* թեմայով աշխատանքային քննարկմանը:

Քննարկմանը մասնակցել են պատգամավորներ, Շիրակի մարզպետը, Լոռու մարզպետի տեղակալը, Կադաստրի կոմիտեի նախագահը, պատասխանատուներ

նախարարություններից, Քաղաքաշինության կոմիտեից և այլ շահագրգիռ կազմակերպություններից:

Հանդիպմանը, իրավասու պետական մարմինների ներկայացուցիչներից բացի, մասնակցել են նաև նոտարիատի, հասարակական կազմակերպության և աղետից տուժած քաղաքացիներ: Հանդիպման ընթացքում, ի թիվս այլնի, քննարկվել են 1988 թվականի երկրաշարժի հետևանքով աղետի գոտում հայտնված մեր հայրենակիցների կողմից կառուցված բնակելի տների փաստաթղթավորման հետ կապված խնդիրները, որոնց

[343] Տե՛ս նույն տեղում:

լուծման նպատակով քննարկման մասնակիցները ներկայացրել են մի շարք առաջարկներ, կարևորել հարցի շուտափույթ կարգավորումը: Քննարկման արդյունքում որոշվել է գույքագրել մարզերում առկա վերոնշյալ խնդիրները՝ գտնելու համար դրանց լուծման ուղիները:

Ամփոփելով քննարկումը՝ Ռուստամ Բաքոյանը նշել է, որ բարձրացված խնդիրները պատշաճ կերպով կհասցեավորվեն և բնակիչներին հուզող հարցերն անպատասխան չեն մնա: Հանձնաժողովի փոխնախագահը հայտնել է, որ անհրաժեշտության դեպքում կնախաձեռնվեն նաև օրենսդրական փոփոխություններ[344]:

1. Պետության կողմից բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու հետևանքով սեփականության իրավունքը սահմանափակելու խնդիր

2025 թվականին Մարդու իրավունքների պաշտպանին շարունակել են հասցեագրվել բողոքներ, որոնք վերաբերել են որոշ տարածքների հանրային գերակա շահ ճանաչվելու հետևանքով մարդկանց իրավունքների սահմանափակման հարցերին:

Այսպես, օրինակ՝ հաշվետու տարվա ընթացքում Պաշտպանին ներկայացված դիմում-բողոքներից մեկով փաստաբանը հայտնել է, որ իր վստահորդին սեփականության իրավունքով պատկանող՝ ք. Երևան, Տիգրան Մեծի պողոտա 13 հասցեում գտնվող բնակարանը ՀՀ կառավարության 2004 թվականի հոկտեմբերի 7-ի «Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին» թիվ 1616-Ն որոշմամբ ընդգրկված է Երևան քաղաքի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակում: Հավելել է, որ ՀՀ կառավարության 2018 թվականի մարտի 22-ին ընդունված և նույն թվականի ապրիլի 16-ին ուժի մեջ մտած թիվ 332-Ն որոշմամբ (այսուհետև՝ Որոշում) հիշյալ բնակարանի նկատմամբ ճանաչվել է բացառիկ գերակա հանրային շահ, որով հետապնդվող օտարման նպատակը Պաշտպանին դիմելու օրվա (2025 թվականի սեպտեմբերի 16-ի) դրությամբ չի իրագործվել: Այս համատեքստում՝ փաստաբանը, վկայակոչելով «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» օրենքի (այսուհետև՝ Օրենք) 4-րդ հոդվածի 3-րդ մասը, ըստ որի՝ *հանրության շահը չի կարող համարվել գերակա, եթե օտարման նպատակի իրագործումը չի սկսվելու հանրության գերակա շահ ճանաչելու մասին կառավարության համապատասխան որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ յոթ տարվա ընթացքում,* եկել է հետևության, որ վերը նշված հասցեում գտնվող բնակարանն այլևս ենթակա չէ օտարման:

Բարձրացված հարցը Պաշտպանը հասցեավորել է ՀՀ վարչապետի աշխատակազմ: Ի պատասխան՝ ստացվել է տեղեկատվություն առ այն, որ փոխվարչապետի հանձնարարությամբ Մարդու իրավունքների պաշտպանի գրությունը վերահասցեագրվել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն՝ հետագա ընթացքն ապահովելու նպատակով:

Մեկ այլ բողոքով Երևան քաղաքի 33-րդ թաղամասի բնակիչները Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած խմբային բողոքով հայտնել են, որ բնակիչների մի մասի սեփականության նկատմամբ Որոշմամբ ճանաչվել է բացառիկ՝ գերակա հանրային շահ: Մինչդեռ, ըստ բողոք ներկայացրած անձանց, բնակիչների մյուս մասին

[344] Մանրամասն տե՛ս հետևյալ հղումներով՝ http://www.parliament.am/news.php?cat_id=2&NewsID=21697&year=2025&month=02&day=03&lang=arm, https://www.facebook.com/share/p/1DYb2g4r98/?mibextid=wwXIfr (20/03/2026 թ.-ի դրությամբ):

դեռևս շարունակում են սեփականության իրավունքով պատկանել անշարժ գույքեր նույն թաղամասում:

Ըստ բողոք ներկայացրած անձանց՝ Երևան քաղաքի 33-րդ թաղամասի նկատմամբ բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին Որոշման 3-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ *սույն որոշմամբ նախատեսված՝ բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչված տարածքներում օտարվող սեփականության սեփականատերերի կամ այլ իրավունքներ ունեցողների և սույն որոշման հավելվածներում նշված տարածքները ձեռք բերողի միջև կնքվող պայմանագրերում անհրաժեշտ է բացառել, որպես օտարվող տարածքի փոխհատուցման ձև, ապագայում կառուցվելիք շենքից գույքային միավորի տրամադրումը:*

Բողոք ներկայացրած անձինք հայտնել են իրենց մտահոգությունը վերոգրյալ իրավական կարգավորման վերաբերյալ, քանի որ այն ոչ իրավաչափորեն սահմանափակում է օտարման գոտում՝ անշարժ գույք ունեցող սեփականատերերի՝ Սահմանադրությամբ և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով երաշխավորված սեփականության իրավունքը: Նշել են նաև, որ այդ դրույթն ուղղակիորեն հակասում է նաև Օրենքի պահանջներին: Հավելել են, որ առավել քան հիմնավորված, արդարացի և իրավաչափ պետք է համարվի օտարման գոտում անշարժ գույք ունեցող սեփականատիրոջը գույքը հարկադիր կարգով վերցնելու դիմաց նույն թաղամասում բնակվել շարունակելու հնարավորության ընձեռումը՝ որպես փոխհատուցման ձև՝ հնարավորություն տալով ընտրել նույն վայրում կառուցվելիք շենքից գույքային միավոր ստանալու միջոցը:

Բողոք ներկայացրած անձինք վկայակոչել են մի շարք միջազգային և ներպետական իրավական կարգավորումներ, ինչպես նաև դատական նախադեպեր, որոնցով հիմնավորել են այն, որ Որոշման 3-րդ կետի 2-րդ ենթակետն ուղղակիորեն հակասության մեջ է գտնվում Օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի հետ, որն իրավունք է վերապահում ձեռքբերողին և օտարման ենթակա սեփականության սեփականատիրոջն ազատորեն կնքելու պայմանագիր, փոխադարձ համաձայնությամբ որոշելու օտարվող սեփականության դիմաց տրվող համարժեք փոխհատուցման չափը, ձևը, կարգը, ժամկետները, պայմաններն ու կողմերի պատասխանատվությունը[345]:

Միևնույն ժամանակ, նշել են, որ մի շարք դիմումատուներ ստիպված են եղել կնքել անշարժ գույքերի օտարման պայմանագրեր ձեռքբերողի հետ, քանի որ հնարավորություն չեն ունեցել, որպես իրենց գույքերի դիմաց փոխհատուցման ձև ընտրել կառուցվելիք շենքից գույքային միավորի տրամադրումը՝ Որոշման 3-րդ կետի 2-րդ ենթակետի առկայության պայմաններում: Ավելին, ըստ պնդման՝ դիմումատուներից մի քանիսը վերոգրյալ ոչ իրավաչափ դրույթը շրջանցելու համար իրենց գույքերն օտարման պայմանագրերի հիման վրա օտարել են ձեռքբերողին և պայմանավորվածություն են ձեռք բերել ապագայում կառուցվելիք շենքերից համարժեք անշարժ գույքային միավորներ գնել, ինչն ըստ էության (իրականում) եղել է իրենց սեփականության իրավունքով պատկանող գույքերի դիմաց փոխհատուցման տրամադրման համաձայնեցված ձև: Նշել են նաև, որ տեղի է ունեցել Օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասը կյանքի կոչելու նպատակով միջնորդավորված գործընթաց՝ արհեստական երկու տեսակի պայմանագրերի կնքման միջոցով:

Ըստ բողոք ներկայացրած անձանց՝ փաստացի ձեռքբերողի և սեփականատերերի միջև փոխադարձ համաձայնությամբ որոշվել է օտարվող սեփականության դիմաց

[345] Թեև նշված իրավակարգավորումը 2026 թվականի փետրվարի 11-ին կատարված օրենսդրական փոփոխության արդյունքում շարադրվել է նոր խմբագրությամբ, այնուհանդերձ, քննարկվող հարցի մասով փոփոխություն չի կրել:

տրամադրվող համարժեք փոխհատուցման չափը, ձևը, կարգը, ժամկետները, պայմանները, կողմերի պատասխանատվությունը, սակայն, քանի որ Որոշմամբ նախատեսվել է նման պայմանագրի կնքման ոչ իրավաչափ արգելք, նույն նպատակին հասնելու համար ընտրվել է գույքն օտարելու և կառուցվող շենքից համարժեք գույք գնելու երկու առանձին պայմանագրերի կնքման ընթացակարգ, որը, սակայն առաջացրել է հավելյալ հարկային բեռ:

Խմբային բողոքում բարձրացված հարցերը Մարդու իրավունքների պաշտպանը հասցեավորել է Վարչապետի աշխատակազմ: Ի պատասխան՝ ստացվել է տեղեկատվություն առ այն, որ բողոք ներկայացրած անձանց կողմից բարձրացված արդարացի փոխհատուցում ստանալու երաշխավորված իրավունքի տեսանկյունից պետք է կարևորվի ոչ թե համապատասխան փոխհատուցման ընտրված կոնկրետ եղանակը, այլ արդյունքում այդ փոխհատուցման համաչափությունը կորսված գույքի արժեքին, այլ կերպ ասած՝ յուրաքանչյուր պարագայում փոխհատուցման իրավաչափության համատեքստում քննարկման առարկա պետք է հանդիսանա ոչ թե փոխհատուցման ընտրված եղանակն ինքնին (օրինակ՝ հողատարածքի դիմաց մեկ այլ հողատարածքի տրամադրում կամ սահմանված չափով գումարի հատուցում), այլ այդ եղանակի միջոցով տրամադրված նյութական բարիքի համարժեքությունը հանրության գերակա շահի համար օտարվող գույքին: Փոխհատուցման համաչափությունն էլ իր հերթին յուրաքանչյուր կոնկրետ դեպքով կարող է պայմանավորված լինել մի շարք փաստական հանգամանքներով և անհատական գործոններով:

Միևնույն ժամանակ, նշվել է, որ Օրենքը կարգավորում է նաև Կառավարության համապատասխան որոշման բողոքարկման կամ անվավերության հետ կապված հարաբերությունները, ինչպես նաև նախատեսում է հանրության գերակա շահ ճանաչելու մասին որոշման անվավերությանը վերաբերող կարգավորումներ: Այսպիսով, հավելել են, որ Օրենքը հնարավորություն է նախատեսում Կառավարության որոշման՝ դատական կարգով բողոքարկման և առաջացած վեճերը դատավարական օրենսդրությամբ սահմանված կարգով լուծելու համար, և չի զրկում գույքի սեփականատիրոջն իր խախտված իրավունքները վերականգնելու իրավունքներն արդյունավետ իրականացնելու հնարավորությունից: Հետևաբար, այն դեպքում, եթե առկա է Կառավարության որոշման անվավերության հիմք, ապա այն կարող է վիճարկվել դատական կարգով՝ Օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

Նշվածի կապակցությամբ հայտնել են նաև, որ խնդրո առարկա Որոշումն արդեն իսկ դարձվել է դատական վերահսկողության առարկա՝ ինչպես մասամբ, այնպես էլ ամբողջությամբ: Այսպես, օրինակ՝ թիվ ՎԴ/7649/05/18 վարչական գործով Վարչական դատարանը 2020 թվականի մարտի 16-ին կայացված վճռով, բավարարելով «Հայ Յեղափոխական Դաշնակցություն» հասարակական քաղաքական կազմակերպության դիմումը, Որոշումը՝ Հանրապետության փողոցի թիվ 30 հասցեում գտնվող անշարժ գույքի՝ «Քաղաք» պանդոկի աստիճանավանդակի մասով, ճանաչել է Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին հակասող և անվավեր, բացի այդ, Վարչական դատարանի վարույթում է գտնվում թիվ ՎԴ/5866/05/18 վարչական գործը՝ Որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Հավելել են, որ Օրենքով ընձեռնված հնարավորությունը՝ վիճարկելու կառավարության որոշումը դատական կարգով, Կառավարության խնդրո առարկա որոշման մասնավոր դեպքում համապատասխան սուբյեկտների կողմից արդեն իսկ իրացվել/իրացվում է:

Հարկ է նշել, որ 2025 թվականին հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման խնդիրների վերաբերյալ Պաշտպանի աշխատակազմ ստացվել են նաև այլ դիմում-բողոքներ *(օրինակ՝ կապված ՀՀ կառավարության 2024 թվականի հունիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի Կապան քաղաքում գտնվող որոշ տարածքների նկատմամբ հանրության գերակա շահ ճանաչելու մասին» թիվ 852-Ն որոշման կիրարկման ընթացքում առաջացած խնդիրների հետ):* Այդ, ինչպես նաև վերը նշված դիմում-բողոքները, ՄԻՊ աշխատակազմում գտնվում են քննարկումների փուլում և պահանջում են հետագա լրացուցիչ ուսումնասիրություններ:

Հաշվետու տարվա ընթացքում Պաշտպանի ուշադրության կենտրոնում շարունակել են մնալ նաև հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման ոլորտը կարգավորող օրենսդրության մեջ առկա խնդիրները[346]: Պետք է նշել, որ 2025 թվականին հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման ոլորտում առկա օրենսդրական խնդիրները հաղթահարելու ուղղությամբ պետությունը որոշակի քայլեր է ձեռնարկել, մասնավորապես, մշակել է հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին օրենսդրության վերանայմանն ուղղված նախաձեռնություն:

Օրենսդրական այդ փոփոխությունների փաթեթը ներկայացվել է նաև Մարդու իրավունքների պաշտպանի կարծիքին: Այսպես, ««Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և հարակից օրենքների նախագծերի վերաբերյալ Պաշտպանի աշխատակազմը 2025 թվականին ներկայացրել է նկատառումներ: Ընդ որում, դրանք կազմելիս հաշվի են առնվել նաև Իրավունքների զարգացման և պաշտպանության հիմնադրամի, ինչպես նաև «Թրանսփարենսի ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի կողմից ներկայացված մտահոգությունները:

Անդրադառնալով Պաշտպանի աշխատակազմի նկատառումներին՝ հարկ է նախ ընդգծել, որ 2026 թվականի փետրվարին ոլորտը կարգավորող օրենսդրությունում կատարվել են մի շարք փոփոխություններ և լրացումներ: Այս առումով խնդրահարույցն այն է, որ դրանց արդյունքում Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ներկայացված մի շարք առաջարկություններ դեռևս չեն իրագործվել *(ուստի, օրենսդրական մակարդակում առկա որոշ խնդիրներ շարունակում են արդիական մնալ):* Մասնավորապես, Օրենքի 11-րդ հոդվածը լրացվել է հետևյալ բովանդակությամբ 4.1-ին մասով. «Օտարվող սեփականության շուկայական արժեքը որոշելիս հաշվի չեն առնվում (չեն գնահատվում) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով չհաշվառված ինքնակամ շենքերը կամ շինությունները»:

---

[346] Ընդ որում, այդ խնդիրների մասին Մարդու իրավունքների պաշտպանը մշտապես է բարձրաձայնել իր գործունեությունն ամփոփող տարեկան հաղորդումներում: Մասնավորապես, դրանց շրջանակներում Պաշտպանին տարբեր տարիներին հասցեագրված բողոքներում շարադրված հանգամանքների լույսի ներքո ամփոփվել և մանրամասն ներկայացվել են խնդիրների առնչությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներում (այդ թվում՝ Հայաստանի դեմ քննված գործերով) ու Սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները, որոնց հաշվառմամբ՝ Պաշտպանի կողմից ներկայացվել են ոլորտի օրենսդրության կատարելագործմանն ուղղված կոնկրետ առաջարկություններ *(տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի վերաբերյալ 2017, 2018, 2019, 2020, 2021, 2023 և 2024 թվականների տարեկան հաղորդումները, համապատասխանաբար՝ էջեր 63-67, 102-106, 112-119, 180-185, 161-166, 73-76, 635-643):*

Մեջբերված իրավակարգավորման համատեքստում՝ հարկ է անդրադառնալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկային, որով հստակ սահմանվում է, որ նույնիսկ ոչ ֆորմալ շինությունները կարող են ընկնել Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի պաշտպանության ներքո, երբ առկա է ճանաչված բնակության և կայունության բավարար աստիճան, հատկապես, երբ պետությունը հանդուրժել է նման բնակավայրերի առկայությունը և նպաստել դրանց ինտեգրմանը: Այս դեպքում ՄԻԵԴ-ը մերժել է կառավարության այն փաստարկը, որ ապօրինի կառուցված տունը պաշտպանված գույք չէ[347]:

Այսպես, ՄԻԵԴ վերաբերելի նախադեպային իրավունքի հաշվառմամբ՝ կարելի է փաստել, որ առնվազն օգտագործելու հնարավորությունից զրկվելու առումով քննարկման առարկա պետք է դառնա ինքնակամ շինությունը որոշակի չափով հաշվի առնելու հարցը:

Չնայած վերոգրյալին՝ ՀՀ արդարադատության նախարարությունը չի ընդունել Մարդու իրավունքների պաշտպանի առաջարկությունը՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ վերջին տարիներին իրականացված օրենսդրական փոփոխությունների արդյունքում ՀՀ-ն այլևս իրավական պաշտպանություն չի տրամադրում օրենքով սահմանված ժամկետում և կարգով չհաշվառված ինքնակամ շինություններին, ուստի օրենքի խախտմամբ կառուցված այդպիսի շինությունների դիմաց փոխհատուցման տրամադրումը, եթե այդպիսիք հաշվառված կամ Կադաստրի կոմիտեի համապատասխան քարտեզներում արտացոլված չեն, ՀՀ օրենսդրության գործող կարգավորումների համատեքստում անհամատեղելի է: Այսինքն՝ սույն կարգավորման ներքո ներառված են այն ինքնակամ շինությունները, որոնք ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 2021 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ ՀՕ-397-Ն օրենքով սահմանված ժամկետներում և կարգով չեն հաշվառվել: Բացի դրանից, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայում շրջանառվում է «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2021 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-397-Ն օրենքում փոփոխություն կատարելու մասին օրենքի նախագիծը, որով առաջարկվում է 2021 թվականի օրթոֆոտոհատակագծերում (օրթոֆոտոլուսանկարներում) արտացոլված ինքնակամ կառույցների (կիսակառույց ինքնակամ կառույցների հատվածների) դեպքում՝ մինչև 2026 թվականի սեպտեմբերի 1-ը: Սույն նախագծի ընդունմանը համահունչ համապատասխան փոփոխություններ կկատարվեն քննարկվող նախագծերի փաթեթում:

Վերոգրյալից բացի, Օրենքի 13-րդ հոդվածը լրացվել է հետևյալ բովանդակությամբ 1.1-ին մասով. «Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հայցի, ինչպես նաև հանրության գերակա շահ ճանաչելու որոշմանը և դրանից բխող գործողություններին, այդ թվում՝ օտարվող գույքի նկատմամբ ձեռքբերողի սեփականության իրավունքի գրանցմանն առնչվող որևէ այլ հայցի ներկայացումը չի կասեցնում և չի կարող կասեցնել համապատասխան գույքի վերաբերյալ հանրության գերակա շահ ճանաչելու մասին կառավարության որոշման կատարումը, այդ թվում՝ գույքի օտարումը և գույքի նկատմամբ ձեռքբերողի սեփականության իրավունքի գրանցման գործընթացը, իսկ նման հայցերի, ինչպես նաև օտարվող կամ օտարված գույքի առնչությամբ որևէ վեճի քննության ընթացքում չի կարող կիրառվել հայցի ապահովման այնպիսի միջոց, որը կհանգեցնի հանրության գերակա շահ ճանաչելու վերաբերյալ կառավարության որոշման, դրանից բխող գործողությունների, ձեռքբերողի սեփականության իրավունքի գրանցման կամ

[347] Տե՛ս *Օներյիլդիզ ընդդեմ Թուրքիայի* (Öneryildiz v. Turkey) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2004 թվականի նոյեմբերի 30-ի վճիռը, գանգատ թիվ 48939/99:

դրանից բխող այլ գործողությունների կամ հանրության գերակա շահի ապահովման նպատակով սեփականության օտարման հիմք հանդիսացող գործունեության արգելմանը, կասեցմանը կամ դադարեցմանը»:

Միևնույն ժամանակ, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածը լրացվել է հետևյալ բովանդակությամբ 2.1-ին մասով. ««Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով կարգավորվող իրավահարաբերություններից բխող, այդ թվում՝ օտարվող կամ օտարված գույքի կամ դրա նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման վերաբերյալ վեճերով չի կարող կիրառվել հայցի ապահովման այնպիսի միջոց, որը կհանգեցնի հանրության գերակա շահ ճանաչելու վերաբերյալ Կառավարության որոշման, ձեռքբերողի սեփականության իրավունքի պետական գրանցման կամ դրանից բխող այլ գործողությունների կամ հանրության գերակա շահի ապահովման նպատակով սեփականության օտարման հիմք հանդիսացող գործունեության արգելմանը, կասեցմանը, դադարեցմանը կամ խոչընդոտմանը»:

Այս իրավակարգավորումների համատեքստում՝ ստացվում է, որ ձեռքբերողը, վերոգրյալ իրավակարգավորումների ուժով, ունենալու է սեփականատիրոջ գույքը քանդելու/ոչնչացնելու անխափան հնարավորություն, քանի որ դրա արգելմանն ուղղված որևէ ապահովման միջոցի կիրառումը հանգեցնելու է գերակա շահի ապահովման նպատակով սեփականության օտարման հիմք հանդիսացող գործունեության կասեցմանը կամ խոչընդոտմանը:

Առաջարկվող իրավական նորմերը խիստ խնդրահարույց են, քանի որ անձին զրկում են իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքից իր իրավունքների պաշտպանության որևէ գործընթաց իրականացնելիս, քանի որ բացառում են պաշտպանության որևէ միջանկյալ միջոցի կիրառման հնարավորությունը: Նման իրավական կարգավորումներն անհամաչափորեն սահմանափակում են մարդու դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքները: Այս առնչությամբ Վենետիկի հանձնաժողովը նշում է, որ նման իրավիճակը կարող է հանգեցնել հիմնավորված պահանջների կամայական բացառմանը, քանի որ դա կարող է կանխել կասեցումը նույնիսկ այն դեպքերում, երբ փոխհատուցման գումարը կամ օտարման գործընթացի այլ առանցքային ասպեկտները հիմնավորված կասկածի առարկա են հանդիսանում:

Ավելին՝ Եվրոպայի խորհրդի քաղաքացիական և վարչական իրավունքի ոլորտում իրավական օգնության սխեմաների արդյունավետության վերաբերյալ ուղեցույցներն ընդգծում են, որ պետական մարմինները պետք է իրենց իրավասության ներքո գտնվող յուրաքանչյուրին տրամադրեն քաղաքացիական գործերով փաստաբանի օգնություն, երբ դա անհրաժեշտ է դառնում դատարանի արդյունավետ հասանելիության համար, կամ, երբ նման օգնության բացակայությունը կարող է զրկել մարդուն արդար դատաքննությունից[348]:

Հասարակական կարիքների համար գույքի օտարման վերաբերյալ գործերում անվճար իրավաբանական օգնությունը բացարձակապես անհրաժեշտ է թվում այն պատճառով, որ դեպքերի այս կատեգորիան բնութագրվում է կողմերի անհավասարությամբ, գնահատման ընթացակարգերի տեխնիկական բարդությամբ և դիմումատուի համար վեճի առարկայի հիմնարար կարևորությամբ, քանի որ մենք խոսում ենք անշարժ գույքի կորստի մասին: Այս դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել, որ այս բոլոր գործոնները ստեղծում են մի իրավիճակ, երբ առանց որակյալ իրավական

[348] Ուղեցույցները հասանելի են հետևյալ հղումով՝ https://rm.coe.int/guidelines-of-the-committee-of-ministers-of-the-council-of-europe-on-t/1680a39918:

ներկայացուցչության սեփականատերն ի վիճակի չէ արդյունավետորեն պաշտպանել իր իրավունքները բարդ բազմամակարդակ ընթացակարգում, ներառյալ վարչական և դատական բողոքարկումը, փորձագիտական եզրակացությունները և փոխհատուցման չափը վիճարկելու մասնագիտացված ընթացակարգերը: Հետևաբար, այս բոլոր գործոնները պետք է հաշվի առնվեն միայն այն դեպքում, եթե առկա է իրավական ներկայացուցչություն:

Հետևաբար, անհրաժեշտ է հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարմանն առնչվող քաղաքացիական և վարչական գործերով անձանց իրավունքների պաշտպանությունը ներառել «Փաստաբանության մասին» օրենքի 41-րդ հոդվածում սահմանված անվճար իրավաբանական օգնություն նախատեսող դեպքերի շարքում:

Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարմանն առնչվող քաղաքացիական և վարչական գործերով անձանց իրավունքների պաշտպանությունը վերը նշված օրենքի 41-րդ հոդվածում սահմանված անվճար իրավաբանական օգնություն նախատեսող դեպքերի ցանկում ներառելու վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանի առաջարկը չի ընդունվել ՀՀ արդարադատության նախարարության կողմից, քանի որ նշված դեպքերը չեն ներառվում քննարկվող օրենքով անվճար իրավաբանական օգնության տրամադրման ընդհանուր սկզբունքների, այն է՝ սոցիալապես խոցելի խմբերի պաշտպանության ապահովման մեջ, իսկ այն դեպքերում, երբ սեփականատերը «Փաստաբանության մասին» օրենքի համատեքստում անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունք ունեցող անձ կլինի, վերջինիս համար արդեն իսկ երաշխավորված է անվճար իրավաբանական օգնություն ստանալու հնարավորությունը:

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը, Պաշտպանը կարևորում է հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման ոլորտում առկա օրենսդրական խնդիրները հաղթահարելու ուղղությամբ պետության գործադրած ջանքերը, այնուհանդերձ, ընդգծում է, որ մարդու սեփականության հիմնարար իրավունքի առավել արդյունավետ երաշխավորման տեսանկյունից՝ անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել օրենսդրական մակարդակում վերը ներկայացված առաջարկներն իրագործելու հարցը:

2. Երևան քաղաքի գլխավոր հատակագիծը հաստատվելուց հետո առաջացած խնդիրներ

Հաշվետու տարում Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել են բողոքներ, որոնք վերաբերել են Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի «Երևան քաղաքի գլխավոր հատակագիծը հաստատելու մասին» թիվ 204-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) գործարկման արդյունքում առաջացած խնդիրներին:

Այսպես, օրինակ՝ Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով փաստաբանը հայտնել է, որ Երևանյան լճի հարակից տարածքում գտնվող հողամասի նկատմամբ գրանցված է իր վստահորդի սեփականության իրավունքը: Հավելել է, որ առանց իր վստահորդի համաձայնության՝ նշված հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը փոփոխվել է՝ ներառվելով անտառային հողերի կազմում: Փաստաբանի տեղեկացմամբ՝ բարձրացված հարցով իր վստահորդը բազմիցս դիմել է Երևանի քաղաքապետարան՝ Որոշմամբ հաստատված գլխավոր հատակագծում ուղղում

կատարելու և այն անտառային հողերի կազմից հանելու նպատակով, սակայն արդյունքի չի հասել: Նշել է, որ նույն հարցով դիմել է նաև Կադաստրի կոմիտե, Քաղաքաշինության կոմիտե, ինչպես նաև «Երևաննախագիծ» ՓԲ ընկերություն:

Ի պատասխան՝ Կադաստրի կոմիտեից հայտնել են, որ ըստ ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ սահմանված կարգի՝ *հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխությունները կատարվում են համայնքների ղեկավարների կողմից՝ հողամասերի նկատմամբ սեփականության իրավունք ունեցող անձանց կողմից ներկայացված դիմումների հիման վրա:*

Հայտնել են նաև, որ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 24-րդ հոդվածի պահանջների համաձայն՝ պետական գրանցման վարույթի հարուցման հիմք է իրավունքի պետական գրանցում հայցող իրավատիրոջ կողմից ներկայացված դիմումը՝ էլեկտրոնային եղանակով *(անշարժ գույքի պետական ռեգիստրի պաշտոնական կայքի www.e-cadastre.am էլեկտրոնային համակարգի միջոցով)* կամ անշարժ գույքի պետական ռեգիստրի որևէ սպասարկման գրասենյակ ներկայացնելու միջոցով:

Քաղաքաշինության կոմիտեից բողոք ներկայացրած անձին պատասխան գրությամբ տեղեկացրել են, որ համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթների՝ հողամասերի գործառնական նշանակության փոփոխությունները, *եթե դրանք չեն հանգեցնում հողամասի նպատակային նշանակության փոփոխությանը,* կատարվում են համայնքների ղեկավարների կողմից, բացառությամբ սույն կետի 4-րդ ենթակետում նշված դեպքերի, երբ հողամասի գործառնական նշանակությունը կարող է փոխվել միայն Լիազոր մարմնի համաձայնությամբ:

Նշել են նաև, որ քաղաքաշինական գործունեության իրականացում չնախատեսող դեպքերում, հողամասի սեփականատերը կամ օգտագործման իրավունք ունեցող անձը համայնքի ղեկավարին ներկայացնում է դիմում՝ համաձայն սույն Կարգի Ձև 4-ի: Ըստ նույն որոշման 25-րդ կետի դրույթների՝ հողամասի նպատակային նշանակությունը փոխելու նպատակով հողամասի սեփականատերը կամ օգտագործողը համայնքի ղեկավարին ներկայացնում է դիմում՝ համաձայն սույն Կարգի Ձև 5-ի:

Ի պատասխան՝ «Երևաննախագիծ» ՓԲ ընկերությունից հայտնել են, որ քաղաքի քաղաքաշինական միջավայրի բարելավման, զարգացման՝ Երևանյան լճի հարակից տարածքներում բարենպաստ տարածական կենսամիջավայրի ստեղծման նպատակով՝ Որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծում քննարկվող հողամասը ներառվել է անտառային հողերում:

Միևնույն ժամանակ, հայտնել են, որ սահմանված կարգի համաձայն՝ Երևան քաղաքի գլխավոր հատակագծի նախագիծը և դրա ռազմավարական էկոլոգիական գնահատման հաշվետվությունը ստացել են ՀՀ շրջակա միջավայրի նախարարի կողմից հաստատված 04.09.2024 թվականի ԲՓ թիվ 182-24 շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննական դրական եզրակացությունը: Այնուհետև, ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված՝ ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի կողմից տրվել է 05.09.2024 թվականի պետական փորձագիտական թիվ 2-18 դրական եզրակացությունը, որոնց առկայության պարագայում գործող ընթացակարգով նախագիծը ներկայացվել է ավագանու հաստատմանը և 10.09.2024 թվականի նիստով հաստատվել:

Ամփոփելով վերոգրյալը՝ բողոք ներկայացրած անձը խնդրել է Մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունն իր վստահորդին սեփականության իրավունքով պատկանող հողամասն անտառային հողերի կազմից հանելու հարցում:

Բողոքի քննարկման շրջանակում Պաշտպանը գրություն է հասցեագրել Երևանի քաղաքապետարան, որտեղից ի պատասխան՝ տեղեկացրել են, որ համաձայն Որոշմամբ հաստատված Երևան քաղաքի նոր գլխավոր հատակագծի՝ անտառային հողերի կազմում ներառված լինելու խնդրի կարգավորմանն ուղղված միասնական լուծում ստանալու նպատակով ներկայում Երևանի քաղաքապետարանում համապատասխան գերատեսչությունների հետ համատեղ քննարկվում է նշված տարածքի անտառային հողերում ներառված հողամասերը համարժեք տարածքներով փոխանակելու առաջարկը, որի մասին տեղեկացվել է նաև անձի ներկայացուցիչը:

Կատարված աշխատանքների ընթացքի և արդյունքների վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն ստանալու նպատակով Պաշտպանի կողմից կրկին գրություն է հասցեագրվել Երևանի քաղաքապետարան: Ի պատասխան՝ հայտնել են, որ խնդրո առարկա հողամասը Երևան քաղաքի նոր գլխավոր հատակագծի անտառային հողերի կազմում ներառված լինելու հարցի կապակցությամբ դեռևս տարվում են աշխատանքներ՝ քննարկվող տարածքում նմանատիպ հարցերի կարգավորմանն ուղղված միասնական լուծում ստանալու նպատակով:

Պաշտպանի աշխատակազմում իրականացվել է նաև «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգի ուսումնասիրություն, որի արդյունքում պարզվել է, որ բողոք ներկայացրած անձը դրանում բարձրացված նույն հարցով 09.06.2025 թվականին դիմել է ՀՀ վարչական դատարան[349]:

Այսպիսով, ստացվում է, որ առանց սեփականատիրոջ կամաարտահայտության վերջինիս սեփականության իրավունքով պատկանող հողամասն ամբողջությամբ ընդգրկվել է Որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծում՝ որպես այլ նպատակային նշանակության հողամաս (այն ներառվել է անտառային հողերի կազմում): Այսպիսի մոտեցումը խնդրահարույց է ինչպես Սահմանադրությամբ, այնպես էլ մի շարք միջազգային իրավական փաստաթղթերով սահմանված մարդու սեփականության հիմնարար իրավունքի երաշխավորման տեսանկյունից:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ բարձրացված և նմանատիպ խնդիրների կարգավորմանն ուղղված միասնական լուծում գտնելու, ինչպես նաև անձանց սեփականության իրավունքի պատշաճ երաշխավորման նպատակով՝ Պաշտպանն անհրաժեշտ է համարում համատեղ ջանքերի ու մասնագիտական քննարկումների իրականացումը բոլոր շահագրգիռ կողմերի հետ: Այս տեսանկյունից՝ Պաշտպանը կարևորում է նաև անձանց սեփականության իրավունքով պատկանող հողամասերը Երևան քաղաքի գլխավոր հատակագծում պատշաճ կերպով տեղադրելու և վերջիններիս սեփականության իրավունքի վերականգնման հարցերի ուղղությամբ անհրաժեշտ քայլերի ձեռնարկումը:

3. Հողամասերը սխալ չափագրելու և կադաստրային քարտեզում ամրագրելու պատճառով առաջացած հողամասերի համադրումները վերացնելու և որպես

[349] Հարկ է նշել, որ Պաշտպանը բողոքը չի քննարկում, իսկ բողոքի կապակցությամբ սկսված քննարկումը դադարեցնում է նաև այն դեպքում, երբ բողոքի ուսումնասիրության կամ քննարկման ընթացքում անձը դրանում բարձրացված նույն հարցով դիմել է դատարան, առկա է նույն հարցի վերաբերյալ դատարանի վերջնական դատական ակտ:

հետևանք՝ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումները մերժելու խնդիրներ

2025 թվականին Մարդու իրավունքների պաշտպանին շարունակել են հասցեագրվել դիմում-բողոքներ, որոնք վերաբերել են անձանց հողամասերը սխալ չափագրելու և կադաստրային քարտեզում ամրագրելու հետևանքով առաջացած իրավունքների խախտումներին: Հարկ է նշել, որ այս խնդիրներին Պաշտպանը մշտապես անդրադառնում է իր տարեկան հաղորդումներում[350]:

Այսպես, օրինակ՝ հաշվետու տարում բողոքներից մեկով անձը տեղեկացրել է, որ Հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի որոշման հիման վրա Կոտայքի մարզի Արզնի գյուղում գտնվող 0,15 հա մակերեսով այգու և 0,128 հա մակերեսով վարելահողի նկատմամբ 2008 թվականի հունիսի 10-ին գրանցվել է իր սեփականության իրավունքը: Այնուհետև, 2023 թվականի նոյեմբերի 29-ին գնել է իր հողամասին կից 0,106 հա մակերեսով այգի: Նշել է նաև, որ նոր հողամասի նկատմամբ իր սեփականության իրավունքի գրանցման ժամանակ պարզվել է, որ կադաստրային քարտեզներում իրեն պատկանող վերը նշված 0,15 հա հողամասը գտնվում է իրական վայրից մոտ 80 մ հեռավորության վրա՝ 48 քմ տարածքով (շեղումով): Հավելել է, որ 0,106 հա այգու փոխարեն՝ գրանցված է իր 0,128 հա մակերեսով վարելահողը՝ 620 քմ տարածքով (շեղումով), իսկ արդեն նոր գնված հողամասի իրական մակերեսը կազմում է 720 քմ:

Բացի այդ, ըստ բողոք ներկայացրած անձի, պարզվել է, որ կադաստրային քարտեզում իր այգիների տարածքում գրանցված է մեկ այլ անձին սեփականության իրավունքով պատկանող 1200 քմ մակերեսով վարելահող: Մինչդեռ, բողոք ներկայացրած անձի պնդմամբ՝ ինքն ու մյուս անձը հողամասերը ձեռք են բերել 1992 թվականին, և մինչ օրս ինքն օգտագործում է իրեն պատկանող հողամասը: Միևնույն ժամանակ, նշել է, որ իրականացվել է չափագրում, որից հետո համապատասխան փաստաթղթերը ներկայացրել է ՀՀ կադաստրի կոմիտե՝ ուղղում կատարելու համար, սակայն ստացել է մերժում:

Բողոքի քննարկման շրջանակում Պաշտպանի գրությանն ի պատասխան՝ Կադաստրի կոմիտեից ստացված տեղեկատվության համաձայն՝ Կոտայքի մարզի Արզնի համայնքում գտնվող բողոք ներկայացրած անձին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքի կադաստրային գործի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ ***իրավունքի պետական գրանցումը կատարվել է իրավահաստատող փաստաթղթերի, ինչպես նաև համայնքի ղեկավարի կողմից հաստատված կադաստրային քարտեզի հատվածի և հողամասի հատակագծի հիման վրա, որոնք կազմվել են սխեմատիկորեն՝ առանց շրջադարձային (բեկման) կետերի կոորդինատների:*** Նշել են նաև, որ 2024 թվականի մայիսի 24-ին իրավունքի պետական գրանցման պահանջով դիմումին կից ներկայացվել է որակավորում ունեցող անձի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագիծ, որը կադաստրային քարտեզում արտացոլելիս համադրվում է այլ կադաստրային ծածկագրով, այլ անձանց սեփականության իրավունքով պատկանող հողամասի հետ, որն էլ իր հերթին կադաստրային քարտեզում արտացոլվել է 2025 թվականի հունվարի 20-ին որակավորում ունեցող անձի կողմից կազմված և համայնքի նույն ղեկավարի կողմից հաստատված հատակագծի համաձայն:

---

[350] Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի վերաբերյալ 2020, 2021, 2023 և 2024 թվականների տարեկան հաղորդումները (համապատասխանաբար՝ էջեր 185-188, 170-173, 79-80, 646-649):

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայտնել են, որ քննարկվող հողամասերը ճշտված սահմաններով կադաստրային քարտեզում արտացոլելու հարցը հնարավոր կլինի դիտարկել մյուս՝ ***համադրվող կադաստրային ծածկագրով հողամասի սեփականատերերի կողմից տրված համաձայնության առկայության, ինչպես նաև մյուս անձին սեփականության իրավունքով պատկանող հողամասը ճշտված տեղադիրքում վերագրանցելու պարագայում:***

Պաշտպանին հասցեագրված մեկ այլ բողոքով անձը հայտնել է, որ Հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի որոշմամբ Կոտայքի մարզի Ակունք համայնքում իր ընտանիքին հատկացվել է 1600 քմ մակերեսով հողամաս: Վերջինիս պնդմամբ՝ Ակունքի համայնքապետի որոշմամբ իրենց հատկացված հողամասը փոխարինվել է այլ անձի պատկանող՝ մեկ այլ կադաստրային ծածկագրով 1160 քմ հողամասի հետ:

Բողոքի պատշաճ քննարկումն ապահովելու նպատակով՝ Պաշտպանը գրություն է հասցեագրել Կոտայքի մարզի Ակունքի համայնքապետարան: Ի պատասխան՝ ստացվել է տեղեկատվություն այն մասին, որ բողոք ներկայացրած անձին հատկացվել է 1160 քմ մակերեսով հողամաս, որն էլ ստացել է պետական գրանցում, սակայն ***առկա է անհամապատասխանություն կադաստրային էլեկտրոնային քարտեզի և հողամասերի համարակալման միջև***: Նշել են նաև, որ առաջնային քարտեզագրման ժամանակ բողոք ներկայացրած անձի հողամասը նշվել է 7-13 կադաստրային համարի տակ, իսկ քարտեզների ուղղումից և վերջնական հաստատումից հետո դարձել է 7-15 կադաստրային համարով: Հավելել են, որ ներկայում գործող կադաստրային էլեկտրոնային քարտեզի տվյալներով բողոք ներկայացրած անձին պատկանող հողամասը համապատասխանում է մեկ այլ կադաստրային ծածկագրով հողամասին:

Հաշվետու տարվա ընթացքում Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով էլ անձը հայտնել է, որ 2022 թվականից սկսվել է Երևան քաղաքի փողոցներից մեկում գտնվող բնակելի տան և հողամասի նկատմամբ իր իրավունքների վերականգման գործընթացը: Հավելել է, որ նշված խնդրի վերաբերյալ առկա է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրամադրված գրությունն առ այն, որ այդ հասցեում գտնվող բնակելի տան և հողամասի նկատմամբ իրավունքների վերականգնման հարցը «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 28.06.2008 թվականի ՀՕ-117-Ն օրենքի շրջանակներում քննարկման ենթակա չէ, քանի որ հողամասի մեծ մասն ընդգրկված է այլ կադաստրային ծածկագրով պետական գրանցման ենթարկված հողամասի մեջ:

Բողոք ներկայացրած անձի տեղեկացմամբ՝ խնդրի վերաբերյալ դիմել է նաև Կադաստրի կոմիտե, որին ի պատասխան՝ տեղեկացրել են, որ ՀՀ կառավարության 29.04.2021 թվականի «Կադաստրային քարտեզում հայտնաբերված սխալների ուղղման կարգը սահմանելու մասին» թիվ 698-Ն որոշման հ. 1 հավելվածի համաձայն՝ *կադաստրային քարտեզներում անշարժ գույքի միավորի գծային չափերի կամ մակերեսների սխալի ուղղումները կատարվում են սեփականատիրոջ կամ իրավատիրոջ դիմումի, հողամասի սահմանները ճշտելու մասին համայնքի ղեկավարի գրության և վերջինիս կողմից հաստատված անշարժ գույքի (հողամասի) միավորների չափագրման փաստաթղթերի կամ իրադրության հատակագծի հիման վրա՝ ուղղվող անշարժ գույքի և ուղղման արդյունքում փոփոխվող սահմանակից հողամասերի բոլոր սեփականատերերի և դրանց նկատմամբ այլ իրավունքներ ունեցող անձանց համաձայնությամբ:*

Նշել են նաև, որ ուղղման ներկայացված անշարժ գույքի միավորի սահմանի ուղղումներն իրականացվում են առանց սահմանակից հողամասերի գրանցման տվյալների փոփոխության: Վերոնշյալ համաձայնությունը համարվում է նաև տրված համաձայնություն այն մասին, որ հետագայում իրենց անշարժ գույքի (հողամասի) միավորների նկատմամբ գործարքներ իրականացնելիս պետք է ներկայացվեն նոր չափագրման փաստաթղթեր կամ իրադրության հատակագիծ:

Կադաստրի կոմիտեից բողոք ներկայացրած անձին տրամադրված գրությամբ նշվել է, որ առցանց՝ www.e-cadastre.am կայքի միջոցով կամ Կադաստրի կոմիտեի ցանկացած սպասարկման գրասենյակ անհրաժեշտ է ներկայացնել վերոնշյալ որոշմամբ սահմանված կարգին համապատասխան համաձայնագրեր, համայնքի ղեկավարի որոշում և վերջինիս կողմից հաստատված հատակագիծ, որոնք հարուցվելիք իրավունքի պետական գրանցման վարույթի շրջանակներում բավարար հիմք կհանդիսանան կադաստրային քարտեզում ուղղումներ կատարելու համար:

ՄԻՊ աշխատակազմում բողոքին կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ բողոք ներկայացրած անձին պատկանող բնակելի տանը և հողամասին կից գտնվող մեկ այլ բնակելի տան և հողամասի սեփականատիրոջ կողմից վերջինիս տրամադրվել է համաձայնագիր՝ իր բնակելի տան և հողամասի նկատմամբ վերջինիս սեփականության իրավունքի պետական գրանցման և կադաստրային քարտեզում ուղղում կատարելու վերաբերյալ: Նշված գույքի սեփականատերը հայտնել է իր պատրաստակամությունը հողամասի նոր չափագրում կատարելու վերաբերյալ:

Բողոքի քննարկման շրջանակներում Պաշտպանը գրություն է հասցեագրել Երևանի քաղաքապետարան, որտեղից ստացվել է տեղեկատվություն առ այն, որ բողոք ներկայացրած անձը դիմել է Երևանի քաղաքապետարան 2008 թվականի հունիսի 28-ի «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» հ. ՀՕ-117-Ն օրենքի շրջանակում բնակելի տան և հողամասի նկատմամբ իրավունքների վերականգնման խնդրանքով: Սակայն փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզվել է, որ քննարկվող հողամասի մեծ հատվածն ընդգրկված է այլ ծածկագրով գրանցված հողամասի մեջ, ինչպես նաև համադրվում է երեք այլ ծածկագրերով հողամասերի հետ:

Նշել են նաև, որ ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի թիվ 698-Ն որոշման 1-ին հավելվածի 3-րդ կետի համաձայն՝ կադաստրային քարտեզներում անշարժ գույքի միավորի գծային չափերի կամ մակերեսների սխալի ուղղումները կատարվում են սեփականատիրոջ կամ իրավատիրոջ դիմումի, հողամասի սահմանները ճշտելու մասին համայնքի ղեկավարի գրության և վերջինիս կողմից հաստատված անշարժ գույքի (հողամասի) միավորների չափագրման փաստաթղթերի կամ իրադրության հատակագծի հիման վրա՝ ուղղվող անշարժ գույքի և ուղղման արդյունքում փոփոխվող սահմանակից հողամասերի բոլոր սեփականատերերի և դրանց նկատմամբ այլ իրավունքներ ունեցող անձանց համաձայնությամբ, իսկ 8-րդ կետի համաձայն՝ նշված 3-րդ կետով սահմանված համաձայնությունը համարվում է նաև տրված համաձայնություն այն մասին, որ հետագայում իրենց անշարժ գույքի (հողամասի) միավորների նկատմամբ գործարքներ իրականացնելիս պետք է ներկայացվեն նոր չափագրման փաստաթղթեր կամ իրադրության հատակագիծ:

Հայտնել են նաև, որ հարևան հողամասի սեփականատիրոջը բանավոր պարզաբանում է տրամադրվել Երևանի քաղաքապետարանում տեղի ունեցած քաղաքացիների ընդունելության ժամանակ, որի արդյունքում պարզվել է, որ ***տվյալ***

համադրվող գույքերը գտնվում են իրարից բավականին հեռավորության վրա, ուստի նշված գործընթացի ապահովման նպատակով, անհրաժեշտություն է առաջացել բողոք ներկայացրած անձի կողմից Երևանի քաղաքապետարան ներկայացնել նոր ճշգրտված չափագրություն:

Հաջորդիվ, բողոք ներկայացրած անձը ՄԻՊ աշխատակազմ լրացուցիչ տեղեկություն է ներկայացրել այն մասին, որ խնդիրը շարունակում է մնալ չլուծված, քանի որ իրեն չի հաջողվում ստանալ իր հարևանի համաձայնությունը կադաստրային քարտեզում առկա անշարժ գույքի միավորի գծային չափերի և մակերեսների սխալի ուղղումները վերացնելու նպատակով նոր չափագրում կատարելու վերաբերյալ:

Վերոգրյալ բողոքների վերլուծությունից հետևում է, որ ՀՀ կադաստրի կոմիտեն, հիմնվելով իրավահաստատող փաստաթղթերի, ինչպես նաև համայնքի ղեկավարի կողմից հաստատված կադաստրային քարտեզների հատվածների և հողամասերի հատակագծերի վրա, որոնք իրականացվել են սխեմատիկորեն՝ առանց շրջադարձային (բեկման) կետերի կոորդինատների, իրականացրել է իրավունքի պետական գրանցում, որը հետագայում հանգեցրել է հողամասերի համադրումների և դրանց չափերի փոփոխության: Հարկ է նշել, որ իրավասու պետական մարմինների գործողությունների հետևանքով անհամաչափ բեռ է դրվում քաղաքացիների վրա, որոնք, ժամանակին կատարելով իրենց պատկանող հողամասերի չափագրման աշխատանքները, հարկադրված են այն կրկին կատարելու՝ կրելով հավելյալ ծախսեր, երբեմն խնդրի լուծման նպատակով ստիպված ձեռք են բերում իրենց հատկացված հողամասերից ավելի փոքր մակերեսով հողամասեր: Այս ամենի հետևանքով քաղաքացիների ներկայացրած բողոքները շարունակում են մնալ չլուծված, իսկ այդպիսի բողոքների ճնշող մեծամասնության դեպքում Կադաստրի կոմիտեն վերջիններիս ուղղորդում է դատարան՝ դատական կարգով խնդրի լուծման նպատակով:

Հարկ է նշել, որ դեռևս նախորդ տարի Կադաստրի կոմիտեն Պաշտպանի աշխատակազմ, ի թիվս այլնի, տեղեկատվություն է ներկայացրել այն մասին, որ հողամասերի համադրումները վերացնելու աշխատանքները ՀՀ տարածքում նախատեսվում է ***ավարտել մինչև 2026 թվականը***:

Հողամասերի համադրումները վերացնելու, այն է՝ ՀՀ ամբողջ տարածքում առկա համակարգային խնդիրը կարգավորելու ուղղությամբ ձեռնարկվող քայլերի առնչությամբ Կադաստրի կոմիտեից Պաշտպանին՝ սույն տարեկան հաղորդման կազմման աշխատանքների շրջանակում կատարված հարցմանն ի պատասխան՝ ներկայացվել է տեղեկատվություն առ այն, որ կոմիտեի նախաձեռնությամբ իրականացվում են ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի «Կադաստրային քարտեզում հայտնաբերված սխալների ուղղման կարգը սահմանելու մասին» թիվ 698-Ն որոշման 2-րդ հավելվածի դրույթներով սահմանված՝ կադաստրային քարտեզներում առկա վարչական սահմանների և կադաստրային թաղամասերի տեղադիրքերի ու սահմանների սխալների ուղղման աշխատանքներ, որոնց շրջանակներում մինչ օրս ***(2026 թվականի հունվարի 15-ի դրությամբ)*** *ուղղվել են 780 ՀՀ բնակավայրերի կադաստրային քարտեզներ (որոնցից 280-ը՝ 2025 թվականի ընթացքում):* Ներկայում ուղղման ընթացիկ աշխատանքներ են իրականացվում շուրջ 15 բնակավայրերի կադաստրային քարտեզներում:

Պաշտպանը ողջունելի է համարում իրավասու մարմնի կողմից խնդրի լուծմանն ուղղված որոշակի քայլերի ձեռնարկումը՝ միևնույն ժամանակ արձանագրելով, որ հարցը պետք է ստանա շուտափույթ համակարգային լուծում:

Ելնելով վերոգրյալից՝ Պաշտպանը վերահաստատում է նախորդ տարիներին արտահայտած դիրքորոշումներն ու ներկայացված առաջարկները, մասնավորապես՝

✓ ***իրականացնել պատշաճ վերահսկողություն գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների իրականացման նկատմամբ՝ կադաստրային քարտեզում սխալները բացառելու համար.***

✓ ***իրականացնել պատշաճ վարչարարություն՝ սեփական նախաձեռնությամբ ձեռնարկելով միջոցներ կադաստրային քարտեզներում անշարժ գույքի (հողամասի) միավորների գծային չափերի կամ տեղադիրքի կամ երկրաչափական տեսքի կամ արտացոլմանը վերաբերող սխալները հնարավորին սեղմ ժամկետում ուղղելու համար:***

4. Աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժից հետո տեղադրված (կառուցված) ոչ հիմնական շինությունների ազատման (հեռացման) և դրանցում բնակվող ընտանիքների բնակապահովման խնդիրներ

Մարդու իրավունքների պաշտպանն իր գործունեությունն ամփոփող վերջին տարիների հաղորդումներում մանրամասն անդրադարձ է կատարել աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժից հետո տեղադրված (կառուցված) ոչ հիմնական շինությունների ազատման (հեռացման) և դրանցում բնակվող ընտանիքների բնակապահովման խնդիրներին[351]: Դրանց շրջանակներում, մասնավորապես, վերլուծության են ենթարկվել Պաշտպանին ներկայացված անհատական բողոքների ուսումնասիրության արդյունքում վերհանված դեպքերը, ոլորտը կարգավորող իրավական ակտերը և գործնականում առաջացող խնդիրները: Հարկ է նկատել, որ Պաշտպանը չի սահմանափակվել հիմնական խնդիրների մատնանշմամբ, այլ կատարված աշխատանքի հիման վրա իրավասու պետական մարմիններին ներկայացրել է նաև դրանց լուծմանն ուղղված կոնկրետ առաջարկություններ: 2025 թվականին ՄԻՊ աշխատակազմը դրանց կատարման և խնդիրների լուծման վիճակի նկատմամբ իրականացրել է հետագա հետևողական մշտադիտարկում:

Այսպես, դեռևս նախորդ տարեկան հաղորդման կազմման շրջանակում քննարկվող խնդիրների առնչությամբ ՀՀ քաղաքաշինության կոմիտեն տեղեկատվություն է տրամադրել այն մասին, որ ՀՀ կառավարության 2022 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ 1601-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) սահմանված աջակցության տրամադրման մեկնարկի համար 2025 թվականին ՀՀ պետական բյուջեից միջոցներ հատկացնելու հարցը գտնվում է քննարկման փուլում: Նշել է նաև, որ ՀՀ տարեկան պետական բյուջեներով հատկացված միջոցների չափից ելնելով և որոշմամբ սահմանված հերթականության համաձայն՝ կորոշվի տվյալ տարվա ընթացքում աջակցություն ստանալու հավակնող ընտանիքների թիվը:

Այս առնչությամբ 2025 թվականի տարեկան հաղորդման կազմման շրջանակում ՄԻՊ աշխատակազմ ՀՀ քաղաքաշինության կոմիտեից ստացվել է տեղեկատվություն այն մասին, որ Որոշման համաձայն՝ երկրաշարժից հետո աղետի գոտու բնակավայրերի ***պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում տեղադրված կամ կառուցված բոլոր ոչ հիմնական շինություններում ընտանիքների վերաբնակեցման ուղղությամբ ծրագրերի իրականացման համար ՀՀ 2025 թվականի պետական բյուջեով, ինչպես նաև ՀՀ կառավարության 2025 թվականի հունիսի 5-ի թիվ 741-Ն որոշմամբ հաստատված՝ ՀՀ 2026-2028 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով ֆինանսական միջոցներ <u>չեն նախատեսվել</u>:*** Ըստ

[351] Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի վերաբերյալ 2023 և 2024 թվականների տարեկան հաղորդումները (համապատասխանաբար՝ էջեր 80-86, 649-653):

այդմ, խնդրի լուծմանն ուղղված ծրագրեր չեն իրականացվել և դրանից ելնելով ծրագրի շահառուներից դիմումներ չեն ստացվել:

Ներկայացված տեղեկատվության վերաբերյալ առավել մանրամասն պարզաբանումներ ստանալու նպատակով Պաշտպանի ներկայացուցիչն այն աշխատանքային կարգով քննարկել է կոմիտեի իրավասու ներկայացուցչի հետ: Վերջինս հայտնել է, որ Որոշման շրջանակում նախատեսված ծրագրերի իրականացման համար ՀՀ 2025 թվականի պետական բյուջեով, ինչպես նաև 2026-2028 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ բնակարանային ծրագրերի բյուջետային գլխավոր կարգադրիչ հանդիսացող ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից՝ ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի «Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն» բաժնի 8.4-րդ կետի միջոցառման համաձայն՝ մշակման փուլում է գտնվում «Բնակարանով ապահովելու միասնական սոցիալական ռազմավարությունը և հնգամյա գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Հետևաբար, ըստ կոմիտեի ներկայացուցչի, հանրապետությունում անօթևան և բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքների բնակապահովման խնդրի մասով մոտեցումները նպատակահարմար է հստակեցնել մշակվող ռազմավարության շրջանակներում, իսկ բուն խնդիրների լուծումը դիտարկել ռազմավարությամբ հաստատվելիք գործողությունների ծրագրի շրջանակներում: Իսկ առանձին խումբ ընտանիքների բնակարանային խնդիրը կարող է դիտարկվել որպես նշված ռազմավարության առանձին գործողություն կամ այդ ընտանիքների մասով՝ ռազմավարությամբ նախատեսվող գործողությունների շրջանակներում սահմանել առաջնահերթություն:

Վերոնշյալի համատեքստում հարկ է նշել, որ Որոշման շրջանակում պետական աջակցության տրամադրումն իրականացվում է ընտանիքների՝ ոչ հիմնական շինությունում բնակվողի կարգավիճակում հայտնվելու հիմքերի գնահատման արդյունքում: Մինչդեռ, ոչ հիմնական շինություններում փաստացի բնակվող ընտանիքների հարցն անհրաժեշտ է քննարկել և գնահատել իրական կարիքի անհրաժեշտության տեսանկյունից, այլապես, ոչ հիմնական շինություններում փաստացի բնակվող ընտանիքը, չունենալով պետական աջակցություն ստանալու հիմքեր, միաժամանակ, չունենալով անհրաժեշտ միջոցներ կացարան ձեռք բերելու կամ վարձակալելու համար, ոչ հիմնական շինության քանդումից հետո հայտնվելու է անորոշ կարգավիճակում՝ չունենալով բնակարանային բավարար պայմաններ կեցությունը շարունակելու համար:

Նշվածի համատեքստում անհրաժեշտ է նաև ընդգծել, որ Որոշման շրջանակում պետական աջակցության հավակնորդ չեն հանդիսանում այն ընտանիքները, որոնք պետական կամ բարեգործական ծրագրերի շրջանակում արդեն իսկ ստացել են բնակարաններ: Նշվածից հետևում է, որ նախորդիվ ժամանակահատվածում պետությունը կատարել է անձի նկատմամբ ունեցած իր պարտավորությունը, որից հետո, սակայն, ընտանիքի կազմի ընդլայնման, ընտանիքի բաժանման կամ այլ պատճառներով վերջիններս կրկին հայտնվել են վագոն տնակում:

Հաշվի առնելով այն, որ աղետի գոտու բնակավայրերում բնակարան կորցրած անձանց իրավունքների պատշաճ իրացման, ինչպես նաև աղետի գոտու բնակավայրերը պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը երկրաշարժից հետո տեղադրված կամ կառուցված ոչ հիմնական շինություններից ազատելու հարցերը տարիներ շարունակ ծառացած են եղել պետության առջև, ուստի Որոշումը կիրարկելիս

կարևոր է որպես առաջնային նպատակ սահմանել ոչ միայն համայնքային հողերը ոչ հիմնական շինություններից ազատելու հարցը, այլ խնդրին մոտենալ համակարգային տեսանկյունից՝ քննարկվող հարցերին մեկընդմիշտ լուծում տրամադրելու նպատակով:

Հարկ է նաև ընդգծել, որ Որոշմամբ արդեն իսկ նախատեսվել են արդյունավետ լուծումներ, այդ թվում՝ համապատասխան կարգավիճակ ունեցող անձանց պետական աջակցության տրամադրման եղանակով: Դրան զուգահեռ կարևոր է ուշադրության կենտրոնում պահել նաև վերը նշված ընտանիքների հարցը, որոնց պետական աջակցություն չի տրամադրվելու: Հակառակ պարագայում ձեռնարկվող գործողությունները կարող են նպաստել անօթևանության թվի և այլ սոցիալական խնդիրների արհեստական աճին:

Հաշվի առնելով վերոգրյալը և վերահաստատելով նախորդ տարիների տարեկան հաղորդումներում կատարված առաջարկությունները՝ Պաշտպանն արձանագրում է, որ անհրաժեշտ է.

- ✓ ***միջոցներ ձեռնարկել ոչ հիմնական շինության քանդման կամ ապամոնտաժման արդյունքում անձանց անօթևանի կարգավիճակում հայտնվելու դեպքերը բացառելու ուղղությամբ: Այս տեսանկյունից կարևոր է Որոշման շրջանակում պետական աջակցության չհավակնող և ապամոնտաժման ենթակա ոչ հիմնական շինություններում բնակվող ընտանիքների հարցը դիտարկել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության բնակարանով ապահովելու միասնական սոցիալական ռազմավարության շրջանակում,***
- ✓ ***ոչ հիմնական շինություններում բնակվող, սակայն Որոշման շրջանակում պետական աջակցություն ստանալու հավակնորդ չհանդիսացող յուրաքանչյուր դեպքով իրականացնել առանձին դիտարկում՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով այն ընտանիքներին, որոնց կազմում կան երեխաներ, կենսաթոշակառուներ, հաշմանդամություն ունեցող անձինք, ինչպես նաև հատուկ խնամքի կարիք ունեցող այլ անձինք:***

5. Տրանսպորտային միջոցի հափշտակման պարագայում գույքահարկի վճարման պահանջ առաջադրելու խնդիր

Տարիներ շարունակ Մարդու իրավունքների պաշտպանն իր գործունեությունն ամփոփող տարեկան հաղորդումներում բարձրաձայնել է տրանսպորտային միջոցի հափշտակման պարագայում գույքահարկի վճարման պահանջ առաջադրելու խնդիր մասին, մասնավորապես, ընդգծելով, որ ՀՀ հարկային օրենսգրքում նախատեսված չեն դրույթներ փոխադրամիջոցը հափշտակվելու դեպքում գույքահարկի պարտավորությունից ազատելու վերաբերյալ[352]: Նշվածի հաշվառմամբ՝ ***Պաշտպանն առաջարկել էր սահմանել օրենսդրական կարգավորումներ փոխադրամիջոցը հափշտակվելու դեպքում այն ժամանակավորապես հաշվառումից հանելու պարագայում դրա սեփականության իրավունքի սուբյեկտին գույքահարկի պարտավորությունից ազատելու վերաբերյալ:***

Վերոգրյալի համատեքստում՝ իբրև դրական առաջընթաց պետք է դիտել այն, որ 2025 թվականին Հարկային օրենսգրքում կատարվել են մի շարք լրացումներ: Մասնավորապես, նշված օրենսգրքի 245-րդ հոդվածի 1-ին մասը լրացվել է հետևյալ

[352] Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի վերաբերյալ 2020, 2021 և 2024 թվականների տարեկան հաղորդումները (համապատասխանաբար՝ էջեր 211-214, 180-183, 657-659):

բովանդակությամբ 6-րդ կետով. «Փոխադրամիջոցների գույքահարկից ազատվում են՝ (…) հանցագործության հիմքով սեփականատիրոջ տիրապետումից դուրս գտնվող փոխադրամիջոցների սեփականատերերը՝ այդ փոխադրամիջոցի մասով: Սույն կետի իմաստով հանցագործության հիմքով սեփականատիրոջ տիրապետումից դուրս գտնվող փոխադրամիջոցների սեփականատերերը հանցագործության հիմքով փոխադրամիջոցը սեփականատիրոջ տիրապետումից դուրս գտնվելու մասին քրեական վարույթ նախաձեռնելու պահից մինչև փոխադրամիջոցը դրա սեփականատիրոջ տիրապետմանը հանձնելն ազատվում են հանցագործության հիմքով սեփականատիրոջ տիրապետումից դուրս գտնվող փոխադրամիջոցի գույքահարկից, եթե շարժական գույքի կադաստր վարող մարմնի կողմից Կառավարության որոշմամբ սահմանված կարգով փոխադրամիջոցի գույքահարկի հաշվառում իրականացնող համապատասխան տեղական ինքնակառավարման մարմնում տեղեկատվություն է ստացվում հանցագործության հիմքով սեփականատիրոջ տիրապետումից դուրս գտնվող փոխադրամիջոցի պետական գրանցումը կասեցված լինելու մասին»:

Դրանից բացի, օրենսգրքի 246-րդ հոդվածը լրացվել է հետևյալ բովանդակությամբ 5-րդ մասով. «Սույն Օրենսգրքի 245-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հիմքով փոխադրամիջոցների գույքահարկի հաշվարկումը դադարում է, իսկ հանցագործության հիմքով սեփականատիրոջ տիրապետումից դուրս գտնվող փոխադրամիջոցի պետական գրանցումը կասեցվում է ոչ ավելի, քան մեկ տարի ժամկետով: Սույն մասում նշված ժամկետը ենթակա է երկարաձգման նույն ժամկետով, եթե շարժական գույքի կադաստր վարող մարմնում տեղեկատվություն է ստացվում քրեական վարույթի (այդ թվում՝ դատական վարույթի) հիմքով տրանսպորտային միջոցը սեփականատիրոջ տիրապետումից դուրս լինելու մասին»:

Արձանագրելով կատարված օրենսդրական փոփոխությունների կարևորությունը *(դրանց արդյունքում նախկինում վերհանված մի շարք խնդիրներ, որոնք ներկայացվել են ՄԻՊ տարեկան հաղորդումներում, մասամբ լուծվել են)*՝ Մարդու իրավունքների պաշտպանն ընդգծում է, որ ընդունված իրավական կարգավորումներին հետադարձ ուժ չի տրվել: Այսպես, 2025 թվականի մարտի 5-ին ընդունված և նույն թվականի ապրիլի 6-ին ուժի մեջ մտած «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՕ-55-Ն օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը և ***տարածվում է օրենքն ուժի մեջ մտնելուց հետո կատարված հանցագործությունների հիմքով սեփականատիրոջ տիրապետումից դուրս գտնվող փոխադրամիջոցների գույքահարկի հաշվարկման գործընթացի վրա:***

Այս համատեքստում հարկ է նկատել, որ Պաշտպանը նախորդ տարեկան հաղորդման շրջանակում *(երբ նշված օրենքը դեռևս գտնվում էր նախագծային փուլում)* վկայակոչելով ՀՀ Սահմանադրության և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի վերաբերելի իրավակարգավորումները՝ անձանց իրավունքների առավել արդյունավետ երաշխավորման նպատակով առաջարկել էր քննարկման առարկա դարձնել նախագծով օրենքին հետադարձ ուժ տալու համար համապատասխան նորմեր (անցումային դրույթներ) նախատեսելու հարցը:

Հենց այդ պատճառով է, որ 2025 թվականի ընթացքում Պաշտպանին շարունակել են հասցեագրվել այս խնդրի հետ կապված դիմում-բողոքներ: Այսպես, օրինակ՝ Պաշտպանին ներկայացված բողոքներից մեկով անձը հայտնել է, որ մոտ 5 տարի առաջ նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում իրեն պատկանող տրանսպորտային միջոցը տեղափոխվել է հատուկ պահպանվող տարածք և մինչ Պաշտպանին դիմելու պահը

շարունակում է գտնվել այնտեղ: Հայտնել է նաև, որ նշված ողջ ժամանակահատվածում վճարել է փոխադրամիջոցի գույքահարկը, չնայած նրան, որ այդքան տարի փաստացի չի շահագործել այն:

Այսպիսով, ստացվում է, որ օրենքին հետադարձ ուժ չտալու կամ այլ կերպ՝ 06.04.2025 թվականին նախորդող ժամանակահատվածից առաջ կատարված հանցագործությունների հիմքով սեփականատիրոջ տիրապետումից դուրս գտնվող փոխադրամիջոցների գույքահարկի հաշվարկման գործընթացի վրա այն չտարածելու պատճառով՝ անարդար վիճակ է ստեղծվում այդ կատեգորիայի սեփականատերերի համար, քանի որ վերջիններից գույքահարկի գանձման պարտավորություն է ակնկալվում այն տրանսպորտային միջոցի համար, որը վերջիններս չեն տնօրինում:

Հարկ է նշել, որ բարձրացված խնդիրը գտնվել է նաև Երևանի քաղաքապետարանի ուշադրության կենտրոնում: Սույն տարեկան հաղորդման կազմման աշխատանքների շրջանակում Երևանի քաղաքապետարանից ստացվել է տեղեկատվություն այն մասին, որ աշխատանքային գործընթացներում բազմաթիվ են քաղաքացիների կողմից ներկայացված խնդիրներ, որոնց մասով քրեական վարույթ (այդ թվում՝ դատական վարույթ) նախաձեռնվել է մինչ վերոնշյալ օրենսդրական փոփոխությունները (06.04.2025 թվական), որոնց անվամբ հաշվառված տրանսպորտային միջոցները տվյալ պահին հանդիսանում են հանցագործության հիմքով սեփականատիրոջ տիրապետումից դուրս գտնվող փոխադրամիջոցներ, սակայն հիմք ընդունելով վերոշարադրյալ օրենսդրական լրացումները՝ նշյալ արտոնությունների սահմանումը կիրառելի չէ տվյալ փոխադրամիջոցների համար:

Ըստ Երևանի քաղաքապետարանի՝ հաշվի առնելով, որ վերոնշյալ օրենսդրական լրացումները նախաձեռնվել են ՀՀ ներքին գործերի նախարարության կողմից և ուժի մեջ մտնելուց հետո տարածվել են միայն 06.04.2025 թվականին հաջորդող ժամանակահատվածից հետո առաջացած իրավահարաբերությունների վրա, Երևանի քաղաքապետի կողմից համապատասխան գրություն է ներկայացվել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, ապահովելու նաև 06.04.2025 թվականին նախորդող ժամանակահատվածում հանցագործության հիմքով սեփականատիրոջ տիրապետումից դուրս գտնվող փոխադրամիջոցների համար քրեական կամ դատական վարույթ նախաձեռնված լինելու դեպքում, վերոնշյալ իրավադրույթների կիրառման հնարավորության անհրաժեշտ իրավական գործընթացը, ինչին ի պատասխան՝ ՀՀ ներքին գործերի նախարարության կողմից ներկայացված հարցի վերաբերյալ տրամադրվել են մասնագիտական նկատառումներ, համաձայն որոնց. *«(…) 2025 թվականի մարտի 5-ի թիվ ՀՕ-55-Ն օրենքի ընդունմամբ պայմանավորված՝ հանցագործության հիմքով սեփականատիրոջ տիրապետումից դուրս գտնվող փոխադրամիջոցների սեփականատերերը՝ այդ փոխադրամիջոցի մասով, ազատվում են գույքահարկի վճարման պարտավորությունից, իսկ համայնքն իրական հնարավորություն է ստանում նշված տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ փոխարեն փոխադրամիջոցի գույքահարկի գծով առաջացած հարկային պարտավորության արժեքի չափով՝ որպես հանցագործությամբ պատճառված վնաս, գումար գանձել հանցանք կատարած անձից: Այս համատեքստում, անհրաժեշտ է հաշվի առնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 4-րդ հոդվածով սահմանված հետադարձ ազդեցության հարաբերական կանոնը, համաձայն որի՝* ***վարույթին ներգրավված անձանց իրավունքները կամ ազատությունները սահմանափակող, ինչպես նաև նրանց իրավական վիճակն այլ կերպ վատթարացնող քրեադատավարական նորմերը***

***հետադարձ ուժ չունեն**, իսկ իրավական վիճակը բարելավող քրեադատավարական նորմերը հետադարձ ուժ ունեն, եթե դա ուղղակիորեն սահմանվել է օրենսդրի կողմից:*

Ուստի, մեր դիտարկմամբ, անհրաժեշտ է վերը նշված օրենքներով նախատեսված կարգավորումներին անդրադառնալ համակարգային կերպով՝ հաշվի առնելով նաև վարույթի այլ մասնակիցների՝ օրենսդրությամբ պաշտպանվող իրավունքները, քանի որ հետադարձություն կիրառելու դեպքում այդ կերպ կվատթարանա հանցանք կատարած անձի իրավական վիճակը: Միաժամանակ, նշված օրենքներում արձանագրված մոտեցումն արդարացված է նաև կարգավորումների իրավական որոշակիության և կիրառման կանխատեսելիության ապահովման համատեքստում»:

Վերոգրյալի համատեքստում՝ կարծում ենք, որ ՀՀ ներքին գործերի նախարարության կողմից Երևանի քաղաքապետարան ներկայացված նկատառումներն ունեն լրացուցիչ հիմնավորումների կարիք:

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը՝ Պաշտպանը կարևորում է բարձրացված խնդրի լուծման նպատակով իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից գործադրված ջանքերը, այնուհանդերձ, վերահաստատում է, որ անձանց իրավունքների առավել արդյունավետ երաշխավորման տեսանկյունից՝ անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել հիշյալ օրենքին հետադարձ ուժ տալու հնարավորության հարցը:

6. 1988-1992 թվականներին Ադրբեջանից Հայաստան բռնագաղթած անձանց բնակարանային ապահովման խնդիր

Մարդու իրավունքների պաշտպանն իր գործունեությունն ամփոփող տարեկան հաղորդումներում բազմիցս անդրադարձել է 1988-1992 թվականներին Ադրբեջանից Հայաստան բռնագաղթած անձանց բնակարանային ապահովման խնդրին[353]: Մասնավորապես, հաշվի առնելով այն, որ 1988-1992 թվականներին Ադրբեջանից բռնագաղթած և Հայաստանում ապաստանած փախստականների հիմնախնդիրներից իր սրությամբ կարևորվում է նրանց բնակարանային ապահովության խնդիրը՝ Պաշտպանն իր նախորդ տարեկան հաղորդման շրջանակում արձանագրել էր, որ այդ համակարգային խնդրի արդյունավետ և վերջնական կարգավորման համար՝ պետության ջանքերը պետք է կրեն շարունակական բնույթ և ունենան պատշաճ գործնական իրացում: Նշվածի առումով շարունակում է մտահոգիչ լինել այն հանգամանքը, որ ՄԻՊ տարեկան հաղորդումներում պարբերաբար բարձրացված այս խնդրին լուծում չի տրվում:

Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2025 թվականին Պաշտպանին շարունակվել են ներկայացվել 1988-1992 թվականներին Ադրբեջանից բռնագաղթելու, վարձակալական հիմունքներով կամ զանազան վատթար պայմաններով ժամանակավոր կացարաններում բնակվելու, սակայն մինչ օրս պետության կողմից բնակարաններով չապահովվելու հարցի վերաբերյալ բողոքներ:

Այսպես, օրինակ՝ բողոքներից մեկով անձինք հայտնել են, որ իրենց ընտանիքը, որպես փախստական, 1995 թվականի նոյեմբերի 24-ին գրանցվել է ՀՀ փախստականների հարցերի պետական վարչությունում: Ընտանիքի կազմը բաղկացած է եղել 3 անձից, մայրը և երեխաները 1991 թվականի փետրվարի 25-ին հաշվառվել են որպես 1988-1992

[353] Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին 2018, 2019, 2023 և 2024 թվականների տարեկան հաղորդումները (համապատասխանաբար էջեր՝ 677-679, 782-784, 816-820, 659-662):

թվականներին Ադրբեջանից բռնի տեղահանված անձինք և 1995 թվականի նոյեմբերի 24-ին վերահաշվառվել են: Նշել են, որ ընտանիքի հայրը փախստական չի հանդիսանում:

Բողոք ներկայացրած անձինք հայտնել են նաև, որ որպես ժամանակավոր կացարան ընտանիքին տրամադրվել է մեկ սենյակ: Հավելել են, որ իրենց տվյալները ներառված են ՀՀ կառավարության 1997 թվականի օգոստոսի 9-ի թիվ 330 որոշմամբ հաստատված հավելվածում (բնակարանի կարիք ունեցող փախստական ընտանիքների ցուցակում): Ըստ պնդման՝ ավելի ուշ (2000-ական թվականներին)՝ փախստականներին հատկացված մասնաշենքերից մեկն օտարվել է և այնտեղ բնակվող ընտանիքները դուրս են հանվել: Ըստ տեղեկացման՝ բնակիչների մի մասը տեղափոխվել է այլ մասնաշենք, իսկ մյուս մասը՝ բնակություն է հաստատել հարազատների մոտ կամ վարձակալությամբ:

Հավելել են, որ Միգրացիայի և փախստականների վարչությունից պաշտոնական գրություններով տեղեկացվել են, որ իրենց բնակարանային խնդիրը լուծվելու է այլ առաջնահերթ ծրագրերով: Մինչդեռ, ըստ պնդման, մինչ օրս ընտանիքը չի ընդգրկվել որևէ ծրագրում:

Տեղեկացրել են նաև, որ Կառավարության 2007 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 1486-Ա որոշմամբ սահմանված մասնաշենքերում զբաղեցրած սենյակները որպես նվիրատվություն հատկացվել են այն բռնագաղթած փախստականներին, որոնք ընդգրկված են Տարածքային կառավարման նախարարության բնակապահովության ծրագրում:

Բացի այդ, հայտնել են, որ Կառավարության 2019 թվականի նոյեմբերի 21-ի թիվ 1666-Ա որոշմամբ (լիազոր մարմին է նշանակվել Միգրացիայի և քաղաքացիության ծառայությունը) 1988-1992 թվականներին Ադրբեջանից բռնագաղթած բնակարանի կարիք ունեցող անձանց տրամադրվել են բնակարանի գնման վկայագրեր, իսկ իրենց չի տրամադրվել: Ըստ պնդման՝ այս ծրագրից կարող են օգտվել Ադրբեջանից բռնագաղթած այն ընտանիքները, որոնք համապատասխանում են Կառավարության 2004 թվականի մայիսի 20-ի թիվ 747-Ն որոշմամբ հաստատված ծրագրով սահմանված չափանիշներին: Ըստ բողոք ներկայացրած անձանց՝ իրենց ընտանիքն ամբողջությամբ համապատասխանում է սահմանված չափանիշներին:

Նշել են նաև, որ Կառավարության 2022 թվականի նոյեմբերի 10-ի թիվ 1711-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ-ում փախստական ճանաչված անձանց բնակարանային ապահովության ծրագիրը, որում ևս իրենց ընտանիքը չի ընդգրկվել:

Ամփոփելով վերոգրյալը՝ հավելել են, որ 2002-2003 թվականներից փաստացի բնակվելով հարազատին պատկանող քարաշեն ինքնակամ շինությունում, այնուհետև՝ վարձակալությամբ, պարբերաբար դիմել են իրավասու պետական մարմիններին՝ ընտանիքի բնակարանային ապահովության խնդրին լուծում տալու նպատակով: Ըստ բողոք ներկայացրած անձանց՝ պարզվել է, որ ընտանիքը տարիներ շարունակ հաշվառված է եղել լիազոր մարմնում, սակայն Կառավարության 2019 թվականի նոյեմբերի 21-ի թիվ 1666-Ա որոշումից հետո, իրենց ընտանիքի բնակապահովման հարցն օրակարգից հանվել է: Ըստ բողոքի՝ իրենց ընտանիքը ՀՀ կառավարության 1997 թվականի օգոստոսի 9-ի թիվ 330 որոշմամբ, որպես ՀՀ-ում բնակարանի կարիք ունեցող փախստական, հաշվառված և հերթագրված է (59-րդ համարի ներքո):

Բողոքի քննարկման շրջանակում Պաշտպանը գրություն է հասցեագրել Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, բնակարանի կարիք ունեցող փախստականներին բնակելի տարածությունների հատկացման ծրագրերի իրականացման ընթացքի և դրանցում Պաշտպանին դիմած քաղաքացիներին չընդգրկելու հիմնավորումների վերաբերյալ տեղեկություն ստանալու համար:

Պաշտպանի գրությանն ի պատասխան՝ նախարարությունից հայտել են, որ ՀՀ-ում ապաստան ստացած փախստականների, տեղահանվածների, երկարաժամկետ միգրանտների և հարկադիր վերադարձող ՀՀ քաղաքացիների ինտեգրման կամ վերաինտեգրման ոլորտներում Կառավարության քաղաքականության մշակման և իրականացման լիազորությունները ՀՀ ներքին գործերի նախարարության Միգրացիայի և քաղաքացիության ծառայությունից (այսուհետ՝ Ծառայություն) նախարարություն են փոխանցվել 2024 թվականի մարտից: Հավելել են, որ Կառավարության 2019 թվականի նոյեմբերի 21-ի թիվ 1666-Ն և 2007 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 1486-Ա որոշումներով սահմանված գործընթացներին առնչվող հարցերի կարգավորումը դուրս է նախարարության լիազորությունների շրջանակից: Միաժամանակ, առաջարկել են, որ բողոք ներկայացրած անձինք դիմեն Ծառայություն:

Հայտնել են նաև, որ նախարարության կողմից իրականացվում է Կառավարության 2022 թվականի նոյեմբերի 10-ի թիվ 1711-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում փախստական ճանաչված անձանց բնակարանային ապահովման» ծրագիրը: Ծրագրի շրջանակում նախատեսվում է փոխհատուցման տրամադրում՝ ՀՀ-ում փախստական ճանաչված անձանց ժամանակավոր կացարանով ապահովման խնդրի լուծման նպատակով: Փոխհատուցումն իրականացվում է մինչև 6 ամիս ժամկետով: Հավելել են, որ Պաշտպանին դիմած անձանց տվյալները չեն համապատասխանում վերը նշված որոշմամբ սահմանված պահանջներին:

Տեղեկացրել են նաև, որ նախարարությունը ՆԳՆ-ից ստացել է Կառավարության 1997 թվականի օգոստոսի 9-ի «Հայաստանի Հանրապետությունում բնակարանի կարիք ունեցող փախստականների հաշվառման և բնակելի տարածությունների հատկացման կարգը հաստատելու մասին» թիվ 330 որոշմամբ սահմանված 2019 թվականի հաշվառման հերթացուցակները, որոնց ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ բողոք ներկայացրած անձանց անունները նշված են համապատասխան հերթացուցակի 58-րդ համարում: *Բացի այդ, հայտնել են, որ այս որոշման հիման վրա որևէ անձի բնակելի տարածք չի հատկացվել:*

Հարկ է նշել, որ այս դիմում-բողոքը Պաշտպանի աշխատակազմում գտնվում է քննարկման փուլում և պահանջում է հետագա լրացուցիչ ուսումնասիրություններ:

Հաշվետու տարվա ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված մեկ այլ բողոքով անձը հայտնել է, որ 1988-1989 թվականներին բռնագաղթել է Ադրբեջանից: Բռնի տեղահանվելուց հետո մինչև 2003 թվականը բնակվել է վարձակալական հիմունքներով, այնուհետև՝ 2004 թվականին մեկնել Ռուսաստանի Դաշնություն արտագնա աշխատանքի: Հավելել է, որ 2015 թվականին ՀՀ վերադառնալուց հետո մինչ օրս շարունակում է բնակվել վարձակալական հիմունքներով (ըստ տեղեկացման՝ վարձավճարի չափն օրական կազմում է 7 000 դրամ): Բողոք ներկայացրած անձի պնդմամբ՝ դեռևս 2016 թվականին բնակարանային ապահովության ծրագրի շրջանակներում մայրը և եղբայրը, որպես փախստական, պետության կողմից ստացել են բնակարան, իսկ ինքը չի ստացել: Խնդրել է ՄԻՊ աջակցությունը, որպես Ադրբեջանից բռնագաղթած և բնակարանի կարիք ունեցող, իրեն բնակարան հատկացնելու հարցում:

Բողոքի շրջանակում գրություն է հասցեագրվել Ծառայություն: Ի պատասխան տրամադրվել է տեղեկատվություն առ այն, որ ՀՀ կառավարության 2004 թվականի մայիսի 20-ի թիվ 747-Ն որոշմամբ հաստատվել է 1988-1992թթ. Ադրբեջանից բռնի տեղահանված անձանց բնակարանային ապահովության ծրագիրը, որի շահառուներ են ճանաչվել ՀՀ տարածքում գտնվող ժամանակավոր կացարաններում (հանրակացարաններ, հյուրանոցներ, առողջարաններ, մանկապարտեզներ, հանրային

նշանակության այլ շենքեր ու շինություններ) և վագոն-տնակներում մշտապես բնակվող և 2003 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ ՀՀ ԿԱ միգրացիայի և փախստականների նախկին վարչության կողմից հաշվառված ընտանիքները: Նշել են նաև, որ բողոք ներկայացրած անձը չի ընդգրկվել վերոնշյալ ծրագրում, քանի որ 2003 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ որպես՝ 1988-1992թթ. Ադրբեջանից բռնի տեղահանված ժամանակավոր կացարանում բնակվող անձ չի հաշվառվել: Միևնույն ժամանակ հայտնել են, որ վերոնշյալ ծրագրի իրականացումն ապահովելու նպատակով հաստատվել է ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 21-ի թիվ 1666-Ն որոշումը, որով ընդլայնվել է ծրագրի շահառուների շրջանակը և Երևանում ծրագրի շահառուներ են դիտարկվել նաև այն ընտանիքները, որոնք հաշվառվել են 2003 թվականի փոխարեն 2005 կամ 2008 թվականներին: Հավելել են, որ բողոք ներկայացրած անձը չի հաշվառվել որպես՝ 1988-1992թթ. Ադրբեջանից բռնի տեղահանված ժամանակավոր կացարանում բնակվող նաև 2005 կամ 2008 թվականներին կատարված ուսումնասիրությունների ժամանակ, ուստի չի ընդգրկվել ՀՀ կառավարության թիվ 1666-Ն որոշմամբ հաստատված ծրագրում: Վերոնշյալ ծրագիրն իրականացվել է 2020-2024 թվականներին և ծրագրով նախատեսված բոլոր միջոցառումներն իրականացվել և ավարտին են հասցվել ՀՀ տարածքում ժամանակավոր կացարաններում (հանրակացարաններում, վարչական շենքերում, հյուրանոցներում և այլն) բնակվող 1988–1992 թվականներին Ադրբեջանից բռնի տեղահանված ընտանիքների բնակարանային խնդրի լուծման նպատակով: Դրանից բացի, հայտնել են, որ վերոնշյալ ծրագրում չընդգրկված Ադրբեջանից բռնի տեղահանված բնակարանի կարիքավոր ընտանիքները հաշվառվում են ՀՀ կառավարության 1997 թվականի օգոստոսի 9-ի թիվ 330 որոշմամբ հաստատված կարգի համաձայն:

Նշված դիմում-բողոքը ևս Պաշտպանի աշխատակազմում գտնվում է քննարկման փուլում ու պահանջում է հետագա լրացուցիչ ուսումնասիրություններ:

Սույն տարեկան հաղորդման կազմման աշխատանքների շրջանակում Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն կատարված հարցադրմանն առ այն, թե *2025 թվականի ընթացքում ի՞նչ քայլեն են ձեռնարկվել 1988-1992 թվականներին Ադրբեջանից բռնագաղթած ծրագրի շահառու փախստականներին բնակարանով ապահովելու ուղղությամբ*, ի պատասխան՝ հայտնել են, որ ՀՀ կառավարության 1997 թվականի օգոստոսի 9-ի թիվ 330 որոշման շրջանակներում տարածքային կենտրոններն իրականացրել են միայն 1988-1992 թվականներին Ադրբեջանից բռնագաղթած բնակարանի կարիք ունեցող փախստականների հաշվառման և հերթագրման աշխատանքներ, որոնք ավարտվել են 1997 թվականի դեկտեմբերին: Նշել են, որ Որոշման շրջանակում հաշվառված է 1900 ընտանիք: Այդ Որոշմամբ նախարարությունն այլ լիազորություն չունի: Հավելել են, որ ՆԳՆ-ի հետ համագործակցությամբ ներկայում նախարարությունն իրականացնում է հաշվառման վերցված փախստականների ցուցակների ճշգրտման աշխատանքներ: Տեղեկացրել են նաև, որ ՀՀ կառավարության 2022 թվականի նոյեմբերի 10-ի թիվ 1711-Ն որոշման շրջանակներում ՀՀ-ում փախստական ճանաչված անձանց բնակարաններ վարձակալելու փոխհատուցում տրամադրելու համար դիմել է 50 փախստական ճանաչված անձ (6 ամիս 60.000 դրամ), 2025 թվականի ընթացքում փոխհատուցում է ստացել 22 շահառու: Նշել են նաև, որ ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 19-ի թիվ 336-Լ որոշման շրջանակներում ՀՀ վերադարձող (այդ թվում՝ հարկադիր վերադարձող) քաղաքացիների վերաինտեգրմանն ուղղված առաջնային աջակցության պետական բնակարաններ վարձակալելու փոխհատուցում տրամադրելու համար դիմել է 17 անձ (6 ամիս 60.000 ՀՀ դրամ) և 2025 թվականի ընթացքում փոխհատուցում է ստացել 7 շահառու:

Վերոգրյալի համատեքստում հարկ է նշել, որ 1988-1992 թվականներին Ադրբեջանից բռնագաղթած և Հայաստանում ապաստանած փախստականների բնակարանային ապահովության հիմնախնդրի լուծման նպատակով թեև ՀՀ կառավարությունը տարբեր տարիներին նախատեսել է միջոցառումներ և ծրագրել գործողություններ, որոնք, իհարկե, գնահատելի են, այնուհանդերձ, Պաշտպանին հասցեագրած բողոքները վկայում են, որ ինչպես նախորդ տարիներին, 2025 թվականին ևս բավարար քայլեր չեն ձեռնարկվել դրանք լիարժեք իրականացնելու ուղղությամբ և փախստականների բնակապահովման խնդիրը դեռևս մնում է չլուծված և արդիական:

Նշված պարզաբանումների համատեքստում հարկ է նաև ընդգծել, որ «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի հավելվածի համաձայն՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը մշակում և իրականացնում է (…) սոցիալական բնակարանային ֆոնդի ձևավորման (…) Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստացած փախստականների, տեղահանվածների, երկարաժամկետ միգրանտների և հարկադիր վերադարձող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ինտեգրման կամ վերաինտեգրման ոլորտներում Կառավարության քաղաքականությունը:

Ըստ «Փախստականների և ապաստանի մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ աշխատանքի և սոցիալական հարցերով լիազոր մարմինը՝ իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստացած փախստականներին հասարակությանն ինտեգրելուն ուղղված միջոցառումներ (բնակարանային ապահովության ծրագրեր, լեզվի և քաղաքացիական կողմնորոշման դասընթացներ, առօրյա կյանքին վերաբերող տեղեկությունների տրամադրում, հանրային կյանքին մասնակցություն և այլն): Ըստ նույն մասի 3-րդ կետի՝ իրականացնում է ծրագրեր 1988-1992 թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթած փախստականներին մշտական կացարանով ապահովելու նպատակով:

Ամփոփելով վերոգրյալը՝ հարկ է նշել, որ «Փախստականների կարգավիճակի մասին» կոնվենցիայի 19-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պայմանավորվող պետություններն իրենց օրենքներին և սահմանադրություններին համապատասխան գործադրում են իրենց լավագույն ջանքերը՝ ապահովելու նման փախստականների բնակեցումը: Նույն կոնվենցիայի 21-րդ հոդվածը սահմանում է, որ բնակարանով ապահովելու կապակցությամբ պայմանավորվող պետություններն իրենց տարածքում օրինական կարգով բնակվող փախստականների հանդեպ հնարավորության սահմաններում ցուցաբերում են բարեհաճ վերաբերմունք, ինչպիսին ցուցաբերվում է նույն հանգամանքներում օտարերկրացիներին:

Հաշվի առնելով այն, որ 1988-1992 թվականներին Ադրբեջանից բռնագաղթած և Հայաստանում ապաստանած փախստականների հիմնախնդիրներից իր սրությամբ կարևորվում է նրանց բնակարանային ապահովության խնդիրը՝ Մարդու իրավունքների պաշտպանը վերահաստատում է, որ այդ համակարգային խնդրի արդյունավետ և վերջնական կարգավորման համար պետության ջանքերը պետք է կրեն շարունակական բնույթ և ունենան պատշաճ գործնական իրացում:

ԳԼՈՒԽ 4. ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Առողջության պահպանման իրավունքը երաշխավորված է Սահմանադրությամբ և մի շարք միջազգային իրավական փաստաթղթերով: Այդ փաստաթղթերի մեջ կարևոր տեղ է զբաղեցնում Եվրոպական սոցիալական խարտիան, որն ընդունվել է 1961 թվականին և վերանայվել 1996 թվականին: Խարտիան դիտարկվում է որպես Եվրոպայի սոցիալական սահմանադրություն և էական բաղադրիչ է մայրցամաքի մարդու իրավունքների կառուցման գործում: Այն երաշխավորում է մարդու իրավունքների լայն շրջանակ՝ կապված աշխատանքի, բնակարանի ապահովման, առողջապահության, կրթության, սոցիալական պաշտպանվածության և բարեկեցության հետ: Խարտիայի 11-րդ հոդվածն ամրագրում է.

Հոդված 11. Առողջության պաշտպանվածության իրավունքը

Առողջության պաշտպանվածության իրավունքի արդյունավետ կիրառումը ապահովելու նպատակով Կողմերը պարտավորվում են, ուղղակիորեն կամ պետական կամ մասնավոր կազմակերպությունների հետ համագործակցելով, ձեռնարկել համապատասխան միջոցներ, որոնք, inter alia, ուղղված կլինեն՝

1. հնարավորին չափ վերացնելու վատառողջության պատճառները,

2. ապահովելու խորհրդատվական և կրթական հնարավորություններ՝ առողջությանը նպաստելու և առողջության հարցերում անհատի պատասխանատվությունը խրախուսելու նպատակով,

3. հնարավորին չափ կանխելու համաճարակային, տեղական (էնդեմիկ) և այլ հիվանդությունները, ինչպես նաև դժբախտ պատահարները:

Այս հոդվածի նպատակն է երաշխավորել բոլոր անձանց իրավունքը՝ օգտվելու ցանկացած միջոցից, որը նրանց համար մատչելի կդարձնի առողջապահության հնարավոր ամենաբարձր մակարդակը: Խարտիայի 11-րդ հոդվածով երաշխավորված առողջության պաշտպանության իրավունքը լրացնում է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 2-րդ և 3-րդ հոդվածները: Երկու փաստաթղթերում առողջությանը վերաբերող իրավունքները փոխկապակցված են, քանի որ մարդու արժանապատվությունը մարդու իրավունքների եվրոպական իրավակարգի հիմքն է, իսկ առողջապահությունն արժանապատվության պահպանման նախապայմանն է: Ընդ որում, առողջության պահպանման իրավունքը պետք է պաշտպանվի ոչ միայն տեսականորեն, այլ նաև փաստացիորեն: Սոցիալական խարտիայի կողմ հանդիսացող պետությունները պարտավոր են ձեռնարկել ինչպես իրավական, այնպես էլ գործնական միջոցներ՝ ապահովելով դրանում ամրագրված իրավունքները լիարժեքորեն իրականացնելու համար անհրաժեշտ ռեսուրսներն ու գործառնական ընթացակարգերը[354]:

Խարտիայի 11-րդ հոդվածի վավերացումը Հայաստանի համար կլինի հանրային առողջության պաշտպանության նկատմամբ հստակ քաղաքական և իրավական հանձնառություն: Այն կնպաստի ազգային առողջապահական և սոցիալական քաղաքականությունների ներդաշնակեցմանը մարդու իրավունքների եվրոպական չափանիշներին, կուժեղացնի ինստիտուցիոնալ կարողությունները՝ առողջապահական

[354] Մանրամասն տե՛ս «Առողջության պաշտպանության իրավունքը. Վերանայված Եվրոպական սոցիալական խարտիայի 11-րդ հոդված» փաստաթերթ, էլեկտրոնային տարբերակը հասանելի է հետևյալ հղումով՝ https://rm.coe.int/factsheet-article-11arm/native/488029b1a4 (20/03/2026թ.-ի դրությամբ):

անհավասարությունները նվազեցնելու, խոցելի վիճակում գտնվող անձանց աջակցելու և առողջապահական մարտահրավերներին արդյունավետ արձագանքելու ուղղությամբ: Բացի այդ, վավերացումը կբարձրացնի պետական պատասխանատվությունը և կխրախուսի առողջության հավասարության սկզբունքի գործնական իրականացումը՝ նպաստելով ավելի առողջ, արդյունավետ և դիմացկուն հասարակության ձևավորմանը:

Ուստի, Խարտիայի 11-րդ հոդվածի վավերացման ուղղությամբ 2025 թվականի ընթացքում ձեռնարկված քայլերի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով սույն տարեկան հաղորդման կազմման աշխատանքների շրջանակում Մարդու իրավունքների պաշտպանը հարցադրում է կատարել Առողջապահության նախարարություն: Ի պատասխան՝ տրամադրվել է տեղեկատվություն այն մասին, որ 2025 թվականի ընթացքում նախարարությունը Խարտիայի 11-րդ հոդվածը, վերջինիս նախադեպային իրավունքը շրջանառել է շահագրգիռ մարմինների շրջանում, իրականացնելով ներպետական համաձայնեցման գործընթաց՝ մշակել Հոդվածի վավերացման մասին ՀՀ օրենքի նախագծի փաթեթ և ներկայացրել Վարչապետի աշխատակազմ: Արդյունքում, որոշվել է տալ դրական դիրքորոշում՝ պայմանով, որ նախքան Կառավարության նիստի օրակարգում ներառելը, նախագիծը կհամաձայնեցվի Ֆինանսների նախարարության հետ, ինչպես նաև Ֆինանսների նախարարություն և Վարչապետի աշխատակազմ կներկայացվեն լրացուցիչ հիմնավորումներ Խարտիայի 11-րդ հոդվածը վավերացնելու անհրաժեշտության վերաբերյալ: Ըստ տեղեկացման՝ Առողջապահության նախարարությունն աշխատանք է իրականացրել Շրջակա միջավայրի նախարարության հետ, որի կողմից ներկայացված տեղեկանքը *(մասնավորապես՝ նախադեպային իրավունքի 11.3-րդ բաժնի «Առողջ շրջակա միջավայրը», «Օդի աղտոտվածությունը», «Ջրային ռեսուրսների կառավարումը» դրույթներում շարադրված ոլորտների վերաբերյալ)* ներկայացվել է Ֆինանսների նախարարություն՝ հիշյալ փաստաթղթով ստանձնվող պարտավորություններից ՀՀ պետական բյուջեի համար լրացուցիչ ծախսային պարտավորությունների մասով եզրակացություն ստանալու նպատակով:

Պաշտպանը գնահատում է Խարտիայի 11-րդ հոդվածի վավերացման ուղղությամբ պետության կողմից գործադրված ջանքերը, այնուհանդերձ հարկ է համարում ընդգծել, որ անհրաժեշտ է արագացնել վավերացման գործընթացը: Նշվածի հետ մեկտեղ, Պաշտպանն ընդգծում է իրազեկման աշխատանքների կարևորությունը՝ հանրության և մասնագետների շրջանում Խարտիայով երաշխավորված իրավունքների մասին իրական պատկերացում ձևավորելու համար: Այս հարցում առանցքային է նաև լրագրողների դերակատարությունը:

Վերոգրյալի համատեքստում, կարևոր է նշել, որ հաշվետու տարվա ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանը և նրա ներկայացուցիչները մասնակցել են առողջապահական համակարգում մարդու իրավունքների պաշտպանությանը վերաբերող մի շարք միջոցառումների, այդ թվում՝ Խարտիայի 11-րդ հոդվածի վավերացմանը նվիրված միջոցառման: Այսպես, 2025 թվականի նոյեմբերի 13-ին Եվրոպայի խորհուրդը Երևանում անցկացրեց բարձր մակարդակի կլոր սեղան քննարկում[355]՝ նպատակ ունենալով առաջ մղել Եվրոպական սոցիալական խարտիայի 11-րդ հոդվածի վավերացումը:

Միջոցառմանը մասնակցել են ՀՀ կառավարության, Ազգային ժողովի, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչներ, Առողջապահության

[355] Միջոցառումը իրականացվել է Եվրոպայի խորհրդի ***«Հայաստանում մարդու սոցիալական իրավունքների ամրապնդում»*** ծրագրի շրջանակում, որը Հայաստանի համար Եվրոպայի խորհրդի Գործողությունների ծրագրի (2023–2026թթ.) մաս է կազմում:

համաշխարհային կազմակերպության, ինչպես նաև միջազգային փորձագետներ՝ ներառյալ Եվրոպական սոցիալական իրավունքների կոմիտեի և Եվրոպայի խորհրդի քարտուղարության անդամներ: Մասնակիցները քննարկել են բոլորի համար որակյալ առողջապահական ծառայությունների հասանելիության ապահովման, առողջապահական անհավասարությունների հաղթահարման և ամենախոցելի խմբերի պաշտպանության համար ինստիտուցիոնալ կարողությունների ամրապնդման կարևորությունը: Առողջապահության, աշխատանքի և սոցիալական հարցերի, ֆինանսների և արտաքին գործերի նախարարությունների, ինչպես նաև Ազգային ժողովի առողջապահության, աշխատանքի և սոցիալական հարցերի ու մարդու իրավունքների մշտական հանձնաժողովների ներկայացուցիչները փոխանակեցին տեսակետներ՝ վավերացման իրավական, ֆինանսական և քաղաքական հետևանքների վերաբերյալ: Միջազգային փորձագետներն ընդգծեցին, որ Եվրոպական սոցիալական խարտիայով երաշխավորված առողջության իրավունքը լրացնում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով նախատեսված պաշտպանությունը՝ պետություններին պարտավորեցնելով իրականացնել դրական քայլեր՝ առողջությունը խթանելու և հիվանդությունները կանխելու նպատակով: Քննարկման ընթացքում անդրադարձ կատարվեց նաև Եվրոպայի խորհրդի այլ անդամ պետությունների համեմատական փորձին՝ ցույց տալով, թե ինչպես կարող է վավերացումը նպաստել հաշվետվողականության բարձրացմանը, հանրային առողջապահության կառավարման բարելավմանը և առողջապահական ծառայությունների հասանելիության հավասարեցմանը:

Կլոր սեղանը վերահաստատեց Եվրոպայի խորհրդի շարունակական աջակցությունը Հայաստանին՝ սոցիալական իրավունքների առաջխաղացման և երկրի՝ եվրոպական չափանիշներին համապատասխանեցման խթանման գործում: ***Քննարկումը եզրափակվեց բոլոր շահագրգիռ կողմերի համատեղ հանձնառությամբ՝ խորացնելու համագործակցությունը և շարունակելու աշխատանքը 11-րդ հոդվածի վավերացման ուղղությամբ[356]:***

[356] Մանրամասն տե՛ս հետևյալ հղումներով՝ https://www.facebook.com/share/1CPjXqpuAp/?mibextid=wwXIfr, https://surl.li/antzen (20/03/2026թ.-ի դրությամբ):

1. Բժշկական օգնության և սպասարկման հասանելիության խնդիր

Հաշվետու տարում շարունակել է արդիական մնալ բժշկական օգնության և սպասարկման հասանելիության հետ կապված խնդիրը: Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2025 թվականին Պաշտպանին շարունակել են հասցեագրվել դիմում-բողոքներ նշված համակարգային խնդրի վերաբերյալ: Ընդ որում, հաշվետու տարվա ընթացքում այդպիսի խնդիրներ Մարդու իրավունքների պաշտպանը վերհանել է ոչ միայն անհատական բողոքների ուսումնասիրության արդյունքում, այլ նաև մարզային այցերի ընթացքում:

Այսպես, օրինակ՝ Լոռու մարզի Դեբետ գյուղում տեղակայված «ՔՈԱՖ» սմարթ կենտրոնում անցկացված վարպետաց դասի ավարտից հետո Պաշտպանին են դիմել հարակից բնակավայրերի բնակիչները՝ հայտնելով, որ Մարց գյուղի բուժկետը գործում է դեռևս 2000 թվականին տեղադրված տնակում, որտեղ բացակայում են ոչ միայն կոմունալ-կենցաղային տարրական պայմանները, այլ նաև անհրաժեշտ բժշկական սարքավորումները, պարագաներն ու կահավորումը: Բացի այդ, նշել են, որ տնակի մակերեսը շատ փոքր է, որի պատճառով՝ բուժզննման կամ բուժօգնության տրամադրման օրերին, այդ թվում՝ վատ եղանակային պայմաններին, բուժառուները ստիպված են լինում սպասել դրսում:

Բարձրացված հարցը Մարդու իրավունքների պաշտպանը հասցեավորել է Լոռու մարզպետարանի աշխատակազմ: Ի պատասխան՝ ստացվել է տեղեկատվություն առ այն, որ Հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից 2024 թվականի ընթացքում իրականացվել են այցեր Լոռու մարզի մի քանի առողջապահական ընկերություններ և բուժակ-մանկաբարձական կետեր (ԲՄԿ), այդ թվում՝ Մարցի բուժակ-մանկաբարձական կետ: Տեղում կատարվել է կարիքների գնահատում, կազմվել են նախնական փաստաթղթեր՝ վերանորոգման աշխատանքներ կատարելու նպատակով: Հայտնել են նաև, որ Հայկական Կարմիր խաչի ընկերության հետ քննարկվել է իրենց կողմից նախաձեռնված վերոնշյալ ծրագրի ընթացքը, սակայն ներդրողների կողմից ընկերությանը գումարների հատկացման խնդիրների պատճառով՝ ծրագրին դեռևս ընթացք չի տրվել: Հայտնել են նաև, որ քննարկվում է ներդրողների կողմից այլ առաջարկ: Մարց բնակավայրի ԲՄԿ-ի վերջնական ուսումնասիրման փաստաթղթերը կներկայացվեն Լոռու մարզպետի աշխատակազմ, ներկայացվելուց հետո նախաձեռնվելու է մրցույթի կազմակերպում:

Արձանագրված խնդիրների ընթացքի նկատմամբ ՄԻՊ աշխատակազմում իրականացվել է հետևողական աշխատանք: Արդյունքում, Պաշտպանի մեկ այլ հարցմանն ի պատասխան՝ 2026 թվականի հունվարի 21-ին Լոռու մարզպետարանի աշխատակազմը ներկայացրել է լրացուցիչ տեղեկատվություն առ այն, որ Մարցի բուժակ-մանկաբարձական կետն այսուհետ կգործի Մարցի համայնքապետարանի առաջին հարկում, որը Հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից վերանորոգվել է: Ըստ տրամադրված տեղեկատվության՝ այն ունի 41 քառակուսի մետր մակերես, ապահովված է ջրով, էլեկտրաէներգիայով և կոյուղով:

Ստացված տեղեկատվությունը փոխանցվել է Մարդու իրավունքների պաշտպանին դիմած անձանց: Վերջիններս հաստատել են վերոնշյալ հանգամանքները և շնորհակալություն հայտնել Պաշտպանի հաստատությանը կատարած աշխատանքի համար:

Չնայած անհատական մակարդակում արձանագրված դրական առաջընթացին՝ հարկ է նշել, որ բժշկական օգնության և սպասարկման հասանելիության հետ կապված

հարցերը համակարգային առումով շարունակում են խնդրահարույց մնալ: Նշվածի հաշվառմամբ՝ սույն տարեկան հաղորդման կազմման աշխատանքների շրջանակում Պաշտպանը հարցադրում է կատարել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանն առ այն, թե 2025 թվականի ընթացքում առողջապահական կազմակերպություններից քանի՞սն են վերակառուցվել և հիմնանորոգվել (ըստ մարզերի): Ի պատասխան՝ ներկայացվել են տվյալներ այն մասին, որ 2025 թվականին ավարտվել են Թալինի բժշկական կենտրոնի վերակառուցման աշխատանքները: Կենտրոնն ապահովված է անհրաժեշտ գույքով և ժամանակակից տեխնիկական սարքավորումներով: Աշտարակի բժշկական կենտրոնի պոլիկլինիկայի կառուցման աշխատանքներն ավարտված են: Այն հագեցված է անհրաժեշտ գույքով և ժամանակակից բժշկական սարքավորումներով: 2025 թվականին հիմնանորոգվել է Այնթապի բուժամբուլատորիան, որը մատչելի է հաշմանդամություն ունեցող անձանց համար: Հիմնանորոգվել է շինություն Տափերականի բուժամբուլատորիայի համար: Վերանորոգվել է «Վերին Գետաշենի ԲԱ» ՊՈԱԿ-ը և կառուցվել է «Լճափի ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ը: Լոռու մարզի առողջապահական ընկերություններում կատարվել են ընթացիկ վերանորոգման աշխատանքներ: «Մեծավանի առողջության կենտրոն» ՊՈԱԿ-ի համար կառուցվում է նոր շենք և շահագործման կհանձնվի 2026 թվականի 3-րդ եռամսյակում: «Օձունի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ի և «Վահագնիի առողջության կենտրոն» ՊՈԱԿ-ի շենքերի կառուցման աշխատանքներն ընթացքի մեջ են: Կոտայքի մարզի Ձորաղբյուր բնակավայրում բնակիչների առողջության առաջնային պահպանման ծառայությունները որակյալ և պատշաճ կազմակերպելու նպատակով կառուցման ընթացքի մեջ է բժշկական կազմակերպության նոր շենքը: Շիրակի մարզում կառուցվում է 5 առողջապահական կազմակերպություն՝ Արթիկի բժշկական կենտրոնը, Արթիկ համայնքի Պեմզաշեն բնակավայրի բժշկական ամբուլատորիան, Ախուրյան համայնքի Ախուրիկ և Հացիկ բնակավայրերի բժշկական ամբուլատորիաները և շարունակվում են «Գյումրու ԲԿ» ՓԲ ընկերության ծննդատան շինարարական աշխատանքները: Սյունիքի մարզային ենթակայությամբ գործում է 9 գյուղական ամբուլատորիա: 2025 թվականի ընթացքում իրականացվել է.

1. ՀՕՖ կազմակերպության կողմից փոխվել են Բռնակոթի ԱԱՊԿ ՊՈԱԿ-ի շենքի պատուհանները և գազի կաթսայի մարտկոցները և խողովակաշարերը,

2. Տաթևի ԱԱՊԿ-ում մասնակի վերանորոգվել է մանկական պատվաստումների սենյակը և կառուցվել է նոր սանհանգույց,

3. Տեղի ԱԱՊԿ-ում կատարվել է 1 ԲՄԿ-ի կառուցում,

4.«Կապանի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության պոլիկլինիկայի մասնաշենքի ընթացիկ վերանորոգում:

Կարմիր խաչի միջազգային կազմակերպության կողմից Վայոց ձորի մարզի բժշկական կազմակերպություններում իրականացվել են ֆինանսական ներդրումներ, մասնավորապես՝ 5 բժշկական կազմակերպությունում կառուցվել են արևային կայաններ, Արտավան բնակավայրում կառուցվել է նոր բուժակ մանկաբարձական կետ: Տավուշի մարզում իրականացվել են թվով 2 բժշկական հաստատության վերանորոգում:

Մարդու իրավունքների պաշտպանը բարձր է գնահատում նախարարության գործադրած ջանքերը, այնուհանդերձ կարևոր է համարում ևս մեկ անգամ ընդգծել, որ ամբուլատոր-պոլիկլինիկական բուժհաստատությունները պետք է գործեն անձանց առաջնային բժշկական օգնության իրավունքի առնչությամբ գործող միջազգային չափանիշներին համապատասխան, այդ թվում՝ տեղաշարժման հետ կապված դժվարություններ ունեցող անձանց (հաշմանդամություն ունեցող անձինք, տարեցներ)

առաջնային բժշկական օգնության իրավունքի իրացումը ֆիզիկական և աշխարհագրական մատչելիության, ինչպես նաև ԱԱՊ բժշկի համար տնային այցելություններ կատարելու տեսանկյունից:

Հարկ է նաև նշել, որ բուժօգնության հասանելիության սկզբունքը սերտորեն կապված է մատչելիության հետ: Այն վերաբերում է առողջապահական հաստատությունների, ծառայությունների առկայությանը և բաշխմանը, դեղերի տրամադրմանը և աշխարհագրական անհավասարությունների վերացմանը: Բոլոր անձինք պետք է ունենան առողջապահական ծառայությունների հավասար հասանելիություն՝ առանց խտրականության:

Ուշագրավ է նաև խնդրի վերաբերյալ միջազգային իրավունքի աղբյուրների անդրադարձը: Օրինակ՝ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների ոլորտում մարդու իրավունքների ամերիկյան կոնվենցիայի լրացուցիչ արձանագրությունը (Սան-Սալվադորի արձանագրություն) պետություններից պահանջում է առաջնային առողջապահությունը հասանելի դարձնել համայնքի բոլոր անհատների և ընտանիքների համար[357]:

Հաշվետու տարում Պաշտպանին հընթացս հասցեագրվել են նաև բողոքներ, որոնք վերաբերել են դեղորայք չտրամադրելու կամ ուշացումով տրամադրելու, դրանք մատչելի չլինելու պատճառով գնել չկարողանալու, առաջնային օղակի բժիշկների կողմից պատշաճ բուժօգնություն չտրամադրելու (խորհրդատվություն, նեղ մասնագետի մոտ ուղեգրում) խնդիրներին: Հարկ է նշել, որ Պաշտպանի միջամտությամբ և իրավասու մարմինների հետ արդյունավետ համագործակցության արդյունքում հնարավոր է եղել մի շարք անհատական հարցերի տալ լուծում: Այսպես, օրինակ՝ ՄԻՊ-ին դիմած անձը հայտնել է, որ իրեն նշանակվել է «Սիմպոնի 50մգ» դեղամիջոցը: Հավելել է, որ բավարար ֆինանսական միջոցներ չունի նշված դեղամիջոցն ինքնուրույն ձեռք բերելու համար, իսկ իր առողջական վիճակը գնալով վատթարանում է դեղամիջոցը չընդունելու պատճառով:

Բարձրացված հարցն աշխատանքային կարգով քննարկվել է Առողջապահության նախարարության և բժշկական հաստատության հետ: Արդյունքում՝ բողոք ներկայացրած անձին տրամադրվել է իրեն հասանելիք դեղամիջոցը:

Մեկ այլ դեպքում, Պաշտպանին բողոք ներկայացրած անձը հայտնել է, որ տառապում է շաքարային դիաբետով և շուրջ մեկ ամիս չի ստանում անհրաժեշտ դեղամիջոցը՝ պոլիկլինիկայում առկա չլինելու պատճառով: Վերջինիս տեղեկացմամբ՝ նշված հարցով դիմել է Առողջապահության նախարարություն և ստացել պատասխան, որ համապատասխան դեղորայքն առկա է պոլիկլինիկաներում: Դիմողի մտահոգմամբ, չնայած իր հիվանդությունն ընդգրկված է այն հիվանդությունների ցանկում, որոնց դեպքում դեղերը շահառուներին հատկացվում են դրանց արժեքի լրիվ փոխհատուցմամբ, սակայն պետությունն այն պատշաճ չի ապահովում: Պաշպանի ներկայացուցիչը բարձրացված հարցը քննարկել է ԱԱՊ-ի իրավասու ներկայացուցչի հետ: Վերջինիս տեղեկացմամբ՝ ներկայում դեղերի հետ կապված խնդիր առկա չէ: Միաժամանակ, պատրաստակամություն է հայտնել հնարավոր սեղմ ժամկետում անհրաժեշտ դեղամիջոցը տրամադրել շահառուին: Նույն օրը՝ բողոք ներկայացրած անձը Պաշտպանի աշխատակազմ լրացուցիչ տեղեկատվություն է ներկայացրել դեղամիջոցն իրեն տրամադրելու վերաբերյալ:

---

[357] Տե՛ս Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների ոլորտում մարդու իրավունքների ամերիկյան կոնվենցիայի լրացուցիչ արձանագրության 10-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետը: Փաստաթղթի էլեկտրոնային տարբերակը հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.oas.org/juridico/english/treaties/a-52.html (20/03/2026թ.-ի դրությամբ):

Սույն տարեկան հաղորդման կազմման աշխատանքների շրջանակում դեղորայքի չտրամադրման կամ տրամադրումն ուշացնելու խնդիրների վերաբերյալ ստացվող դիմում-բողոքների (ըստ մարզերի) և դրանց քննարկման արդյունքների մասին տեղեկատվություն է պահանջվել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից: Ի պատասխան՝ ստացվել է տեղեկատվություն այն մասին, որ Արագածոտնի մարզում դեղորայքի տրամադրումն իրականացվել է պետության կողմից կենտրոնացված կարգով ձեռքբերվող, մարդասիրական ճանապարհով ստացված, ինչպես նաև օֆերտայի շրջանակներում: Ըստ նախարարության՝ բողոքները եղել են հիմնականում դեղորայքի տրամադրումն ուշացնելու վերաբերյալ, բոլոր բողոքները սեղմ ժամկետներում բավարարվել են: Գեղարքունիքի մարզում ստացվել է մեկ դիմում-բողոք՝ դեղորայքի չտրամադրման վերաբերյալ: Համաձայն «Վարդենիսի ԲԿ» ՓԲԸ-ի տնօրենի ներկայացրած բացատրության՝ հասանելիք դեղորայքի տրամադրման ուշացումը կապված է եղել էլեկտրոնային առողջապահության միասնական տեղեկատվական «Արմեդ» համակարգում տվյալների մուտքագրման հետ, իսկ բնակիչը չսպասելով մուտքագրման ավարտին՝ հեռացել է՝ չստանալով հասանելիք դեղորայքը: Շիրակի մարզում հաշմանդամություն ունեցող անձանց դեղորայքի չտրամադրման կամ տրամադրումն ուշացնելու վերաբերյալ դիմումները քննարկվել են Շիրակի մարզպետի աշխատակազմում: Քննարկման արդյունքում բժշկական հաստատություններից պարզվել են չտրամադրման կամ տրամադրումն ուշացնելու պատճառները: Դեղերի հիմնական ցանկում չընդգրկված, ինչպես նաև չգրանցված թանկարժեք դեղորայքի տրամադրման նպատակով դիմել են ՀՀ առողջապահության նախարարություն: Ըստ նախարարության՝ մյուս մարզերում դեղորայքի հետ կապված բողոքներ չեն արձանագրվել:

Դեղերի տրամադրման գործընթացի արդյունավետության բարձրացմանն ուղղված քայլերի վերաբերյալ Պաշտպանի հարցադրման կապակցությամբ Առողջապահության նախարարությունից հայտնել են, որ 2025 թվականին ՀՀ պետական բյուջեի միջոցներով կենտրոնացված կարգով ձեռք են բերվել 16 հիվանդությունների համար նախատեսված 95 անվանում դեղեր, որոնց համար հատկացվել է 5,4 մլրդ. ՀՀ դրամ: Ծրագրի շահառուների ընդհանուր թիվը կազմում է շուրջ 238 964 պացիենտ: Անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղերի տրամադրման գործընթացի արդյունավետության բարձրացմանը նպաստել է նաև 2025 թվականի դեկտեմբերի 25-ից ուժի մեջ մտած «Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» օրենքը, համաձայն որի՝ 2026 թվականի հունվարի 1-ից իրականացվում է առողջության համընդհանուր ապահովագրության փուլային ներդրում: Ըստ նախարարության՝ պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով դեղերի տրամադրումն իրականացվում է ՀՀ առողջապահության նախարարի 2025 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 7342-Լ հրամանի համաձայն, որն ուժի մեջ է մտել 2025 թվականի դեկտեմբերի 1-ից: Շահառուներին դեղերով անընդհատությունն ապահովելու նպատակով ԱԱՊ ծառայություններ մատուցող բժշկական կազմակերպությունները հաջորդ տարվա իրենց կարիքների համար գնման ընթացակարգերը կազմակերպում և իրականացնում են ընթացիկ տարվա հոկտեմբեր ամսվա ընթացքում՝ «Գնումների մասին» օրենքի պահանջների համաձայն: Առողջապահության նախարարության կողմից պետության կարիքների համար կենտրոնացված կարգով ձեռք բերվող դեղերի սպառման և (կամ) գնման և (կամ) մատակարարման ընդհատման դեպքում պացիենտների բուժման շարունակականության և անընդհատության ապահովման նպատակով ԱԱՊ ծառայություններ մատուցող բժշկական կազմակերպությունները, նախարարության գրավոր հանձնարարականով, պետք է ձեռք բերեն և անվճար ապահովեն պացիենտներին:

Վերոգրյալի համատեքստում՝ հարկ է նշել, որ թեև օրենսդրական մակարդակում դեղերի, ինչպես նաև բժշկական օգնության և սպասարկման (այդ թվում՝ առաջնային օղակի) հասանելիությունը, ընդհանուր առմամբ, ապահովված է, բայց գործնականում (անհատական մակարդակում) դեռևս արձանագրվում են խնդիրներ:

Հաշվետու տարում Պաշտպանին ներկայացվել են նաև վերը նշված խնդիրների հետ փոխկապակցված այլ բողոքներ: Մասնավորապես, Պաշտպանին հասցեագրած խմբային բողոքով անձինք հայտնել են, որ իրենց մերձավոր ազգականը՝ ի ծնե ունի 2-րդ տիպի ողնուղեղային մկանային ատրոֆիա (այսուհետ՝ ՈՄԱ) Spinal Muscular Atrophy (SMA) գենետիկ նյարդամկանային ախտորոշում, որի հետևանքով՝ նրա նկատմամբ սահմանվել է առաջին խմբի հաշմանդամություն: Ըստ պնդման՝ վերջինս 22 տարեկանում ամբողջովին կորցրել է շարժունակությունը, բացի աջ ձեռքի ցուցամատից, տառապում է խիստ թոքային անբավարարությամբ, ինչի պատճառով հաճախ շնչահեղձ է լինում: Բժիշկ-նյարդաբանները նշանակել են «Էվրիսդի» (Evrysdi) դեղը՝ օրական 6.5 մլ չափաբաժնով՝ հիվանդության առաջխաղացումը կանխելու և մնացյալ առողջությունը պահպանելու համար: Ըստ բողոքի՝ այն ցուցված է նրա տարիքի և կարգավիճակի ՈՄԱ ունեցող անձանց և այդ դեղի արդյունավետությունն ու կիրառման անհրաժեշտությունն ապացուցված է: Նշել են նաև, որ դեղամիջոցը վերջին տարիներին կլինիկական փորձարկում է անցել և մի շարք երկրներում *(ԱՄՆ, ՌԴ, Վրաստան, Ուզբեկստան, Լեհաստան, Ավստրիա, Բելգիա, Գերմանիա, Լյուքսեմբուրգ, Ռումինիա, Չեխիա և այլն)* անվճար տրամադրվում է պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով: Բողոք ներկայացրած անձինք իրենց մտահոգությունն են հայտնել առ այն, որ «Էվրիսդի» դեղամիջոցը ոչ միայն գրանցված չէ ՀՀ-ում, այլ նաև ներառված չէ Հիմնական դեղերի ցանկում: Հավելել են, որ հաշմանդամություն ունեցող ազգականին դեղը ձեռք բերելու հարցում աջակցում են ընկերներն ու հարազատները: Հավելել են, որ վերոնշյալ խնդրով և՛ անհատական, և՛ խմբային դիմումներով, դիմել են Առողջապահության նախարարություն, սակայն արդյունքի չեն հասել: Բողոք ներկայացրած անձինք խնդրել են Պաշտպանի աջակցությունը «Էվրիսդի» (Evrysdi) դեղամիջոցի գրանցման, ինչպես նաև այն շահառուներին դրա արժեքի լրիվ փոխհատուցմամբ հատկացնելու հարցերում:

Բարձրացված հարցը Մարդու իրավունքների պաշտպանը հասցեավորել է Առողջապահության նախարարություն, որտեղից ստացել է պատասխան այն մասին, որ դեղը գրանցված է Ռուսաստանի Դաշնությունում ԵԱՏՄ ընթացակարգով և Հայաստանն ընտրվել է որպես ճանաչող երկիր: Հիմք ընդունելով Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2016 թվականի նոյեմբերի 3-ի թիվ 78 որոշմամբ հաստատված «Բժշկական օգտագործման դեղերի գրանցման և փորձաքննության կանոնների» VII.VI բաժնով սահմանված ընթացակարգը՝ 2025 թվականի հունիսի 5-ին Ռոշ, Շվեյցարիա ընկերությանն ուղարկվել է լիազոր մարմնի նախաձեռնությամբ դեղի արտահերթ գրանցման առաջարկ: «Էվրիսդի (Evrysdi) (համընդհանուր անվանում՝ ռիսդիպլամ)» գրանցման հավաստագրի իրավատեր ընկերությունը պատրաստակամություն է հայտնել սեղմ ժամկետում ներկայացնել դեղի դոսյեն՝ լիազոր մարմնի նախաձեռնության ընթացակարգով գրանցման համար: Միաժամանակ, հայտնել են, որ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2016 թվականի նոյեմբերի 3-ի «Բժշկական օգտագործման դեղերի գրանցման և փորձաքննության կանոնների մասին» թիվ 78 որոշման VII.VI բաժնի 120.15 կետի համաձայն՝ գրանցման գործընթացի առավելագույն ժամկետը սահմանված է 40 աշխատանքային օր: Առողջապահության նախարարության տեղեկացմամբ՝ «Սպինալ մկանային ատրոֆիա» հիվանդության հետ կապված խնդիրներն ուսումնասիրվել են նախարարությունում, կազմակերպվել են մասնագիտական

քննարկումներ, ինչպես նաև քննարկումներ դեղ արտադրող կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Դեռևս քննարկման և մշակման փուլում են գտնվում համապատասխան հաշվարկները: 2026 թվականին ֆինանսական միջոցների առկայության դեպքում կձեռնարկվեն համապատասխան միջոցառումներ դեղապահովման կազմակերպման ուղղությամբ:

Արձանագրված խնդիրների ընթացքի նկատմամբ ՄԻՊ աշխատակազմում իրականացվել է հետևողական աշխատանք: Արդյունքում, Պաշտպանի մեկ այլ հարցմանն ի պատասխան՝ 2026 թվականի փետրվարի 18-ին Առողջապահության նախարարությունը հայտնել է, որ «Սպինալ մկանային ատրոֆիա» հիվանդության բուժման համար նախատեսված «Ռիսդիպլամ», «Զոլգենսմա» և «Սպինռազա» դեղերը Հայաստանում գրանցված չեն: Պացիենտների պատշաճ բուժսպասարկման և դեղապահովման կարևորությամբ պայմանավորված՝ ՀՀ առողջապահության նախարարության կողմից նախաձեռնվել են մի շարք միջոցառումներ՝ ուղղված դեղերի գրանցումը ՀՀ-ում խթանելուն, այդ թվում՝ «Սպինալ մկանային ատրոֆիա» հիվանդության բուժման համար նախատեսված դեղերի մասով: Հայտնել է նաև, որ ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման համաձայն՝ դեղ արտադրող կազմակերպության կամ պատշաճ լիազորություններ ունեցող իրավատիրոջ կողմից դեղի գրանցման հայտ և գրանցման դոսյե ներկայացվելու դեպքում Առողջապահության նախարարությունը պատրաստակամ է իրականացնել դեղի գրանցում պարզեցված ընթացակարգով՝ առավելագույնը 31 օրացուցային օրվա ընթացքում: Հավելել է, որ ՀՀ-ում դեղերի գրանցումն իրականացվում է ազգային և ԵԱՏՄ ընթացակարգերին համապատասխան: Ազգային ընթացակարգը ներառում է ընդհանուր և պարզեցված գրանցում: Պարզեցված եղանակով գրանցման ենթակա են ԱյՍիԷյԶ-ի անդամ երկրներում գրանցված կամ Առողջապահության համաշխարհային կազմակերպության նախաորակավորում ստացած դեղերը: Պարզեցված ընթացակարգով գրանցման առավելագույն ժամկետը կազմում է 31 օրացուցային օր՝ ներառյալ փորձաքննության փուլը: ԵԱՏՄ ընթացակարգով գրանցումը ներառում է ապակենտրոնացված գրանցում և փոխադարձ ճանաչում, որը բաղկացած է երկու փուլից՝ դեղի դոսյեի փաստաթղթային ամբողջականության ստուգում, բուն փորձաքննություն:

Տրամադրվել է տեղեկատվություն նաև այն մասին, որ համաձայն 2016 թվականի մայիսի 17-ի «Դեղերի մասին» ՀՕ-86-Ն օրենքի՝ դեղի գրանցումը, գրանցումը մերժելը, կասեցնելը և ուժը կորցրած ճանաչելը փորձագիտական եզրակացության հիման վրա իրականացնում է լիազոր մարմինը՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով: Դեղերի պետական գրանցման լիազոր մարմինն է ՀՀ առողջապահության նախարարությունը: Միաժամանակ, նշվել է, որ համաձայն «Դեղերի մասին» օրենքի (հոդված 16, մաս 23 և հոդված 21, մաս 6)՝ սահմանված դեպքերում թույլատրվում է չգրանցված դեղերի ներմուծում, մասնավորապես՝ բուժման կուրսի կամ անձնական օգտագործման նպատակով՝ ֆիզիկական անձանց անունով, լիազոր մարմնի գրավոր որոշման առկայության դեպքում՝ պետության կարիքների կամ առանձին պացիենտների համար բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելու նպատակով:

Բացի այդ, համաձայն ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 202-Ն որոշման 2-րդ կետի 49-րդ ենթակետի՝ ՀՀ-ում չգրանցված դեղերը ֆիզիկական անձանց թույլատրվում է պատվիրել և ստանալ միջազգային փոստային առաքանիների միջոցով: Առանձին պացիենտների համար չգրանցված կամ ՀՀ դեղագործական շուկայում բացակայող դեղ ձեռք բերելու նպատակով դիմումատուն (բժշկական օգնություն և սպասարկում, դեղատնային գործունեություն իրականացնող իրավաբանական անձ,

անհատ ձեռնարկատեր կամ ֆիզիկական անձ) դիմում է լիազոր մարմին՝ հիմնավորելով տվյալ դեղի կիրառման անհրաժեշտությունը: Թույլատրվում է տվյալ օրացուցային տարվա ընթացքում մեկ անգամ ներմուծել մինչև 5 անվանում դեղ, յուրաքանչյուրից՝ առավելագույնը երեքական սպառողական փաթեթ:

Վերոգրյալի հետ մեկտեղ, տեղեկացվել է, որ «Սպինալ մկանային ատրոֆիա» հիվանդությամբ պացիենտները, եթե հանդիսանում են հրապարակային օֆերտայի կամ առողջության համընդհանուր ապահովագրության շրջանակներում ապահովագրական փաթեթի շահառու, ՀՀ կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 1973-Ն որոշման համաձայն՝ կարող են օգտվել սահմանված արտոնություններից:

Ըստ տեղեկացման՝ նշված հիվանդության հետ կապված խնդիրներն ուսումնասիրվել են նախարարությունում, կազմակերպվել են մասնագիտական քննարկումներ, ինչպես նաև քննարկումներ դեղ արտադրող կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Համապատասխան հաշվարկները ներկայում գտնվում են քննարկման և մշակման փուլում: Ներկայում աշխատանքներ են իրականացվում՝ առաջիկա տարիներին վերոնշյալ հիվանդությամբ պացիենտների դեղապահովումը կազմակերպելու ուղղությամբ:

Հարկ է նաև նշել, որ այս դիմում-բողոքը Պաշտպանի աշխատակազմում գտնվում է քննարկման փուլում և պահանջում է հետագա լրացուցիչ ուսումնասիրություն:

ՄԻՊ-ին ներկայացված մեկ այլ բողոքով էլ անձը տեղեկացրել է, որ ունի առողջական խնդիրներ, ինչով պայմանավորված՝ բժիշկը նշանակել է «Dimethyl fumarate 240mg» դեղը՝ օրը 2 հաբ չափաբաժնով: Ըստ պնդման՝ այն ստանում է պոլիկլինիկայից: Դիմողի տեղեկացմամբ՝ պոլիկլինիկան դեղը բժշկի կողմից նշանակված չափաբաժնով չի տրամադրում՝ պետության կողմից անհրաժեշտ քանակով ապահովված չլինելու պատճառաբանությամբ: Խնդրել է ՄԻՊ աջակցությունը դեղամիջոցն իրեն բժշկի կողմից նշանակված չափաբաժնով տրամադրելու հարցում:

Բարձրացված հարցի կապակցությամբ պարզաբանումներ են պահանջվել Առողջապահության նախարարությունից: Ի պատասխան՝ տեղեկատվություն է տրամադրվել այն մասին, որ նախարարությունը կենտրոնացված կարգով ձեռք է բերել «Ցրված սկլերոզ» հիվանդության բուժման համար նախատեսված չորս անվանում դեղ՝ «Օկրելիզումաբ», «Ինտերֆերոն բետա 1a», «Դիմեթիլֆումարատ», «Գլատիրամեր ացետատ», որոնք սահմանված կարգով տրամադրվել են պացիենտներին: Ըստ նախարարության՝ դեղերը տրամադրվում են՝ հիմք ընդունելով ՀՀ առողջապահության նախարարի 2024 թվականի մայիսի 31-ի «Ցրված սկլերոզ ախտորոշմամբ պացիենտներին առողջապահության նախարարության կողմից կենտրոնացված կարգով ձեռք բերված դեղերի տրամադրման մասին» թիվ 2990–Լ հրամանը: Միաժամանակ, նշել են, որ նախարարությունը ջանք չի խնայում պետության կարիքների համար կենտրոնացված կարգով ձեռք բերվող դեղերի սպառման և (կամ) գնման և (կամ) մատակարարման պացիենտների բուժման շարունակականության և անընդհատության ապահովման ուղղությամբ, սակայն պացիենտների թվի ավելացմամբ պայմանավորված՝ արձանագրվում են դեղերի մատակարարման ընդհատման դեպքեր, ինչի ուղղությամբ ձեռնարկվում են միջոցներ դեղերով ժամանակին ապահովելու ուղղությամբ:

Դիմում-բողոքի ընթացքի նկատմամբ ՄԻՊ աշխատակազմում իրականացվել է հետևողական աշխատանք: Արդյունքում, բողոք ներկայացրած անձը լրացուցիչ դիմումով հայտնել է, որ բողոքում բարձրացված հարցը ստացել է լուծում:

2025 թվականին Պաշտպանի աշխատակազմում շարունակվել է քաղցկեղ ախտորոշում ունեցող անձի (IV փուլի դրական HER2/NEU կրծքագեղձի քաղցկեղ) բողոքի քննարկումը՝ կապված «Հերցեպտին» դեղամիջոցն իրեն անվճար չտրամադրելու խնդրի

հետ: Նշվածի առնչությամբ նախարարությունից ստացվել է պարզաբանում առ այն, որ «Հերցեպտին (Տրաստուզումաբ)» դեղն ընդգրկված է պետության կողմից կենտրոնացված կարգով գնվող ու համապատասխան հիվանդներին անվճար հատկացվող դեղերի ցանկում և որ այն ծրագրի շրջանակներում, անվճար տրամադրվում է հաշվառված I-III փուլի դրական HER2/NEU կրծքագեղձի քաղցկեղ ունեցող պացիենտներին:

Միևնույն ժամանակ, IV փուլի դրական HER2/NEU կրծքագեղձի քաղցկեղ ունեցող անձանց հիշյալ ծրագրում ընդգրկելու Պաշտպանի առաջարկի կապակցությամբ նախարարությունը հայտնել է, որ հավելյալ ֆինանսական միջոցների առկայության դեպքում IV փուլի դրական HER2/NEU կրծքագեղձի քաղցկեղ ունեցող պացիենտներին ծրագրում ընդգրկելու հարցը կքննարկվի:

Բարձրացված հարցի կապակցությամբ հաջորդիվ, նախարարությունից տեղեկացրել են, որ առողջության համընդհանուր ապահովագրության շրջանակներում տրամադրվող չարորակ նորագոյացությունների քիմիաթերապևտիկ բուժումն իրականացվում է համավճարային սկզբունքով՝ մինչև 1 200 000 (մեկ միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամի չափով հատուցմամբ՝ համաձայն ՀՀ կառավարության 25.12.2025 թվականի թիվ 1979-Ն որոշման 3-րդ բաժնի 24-րդ գլխի 4-րդ կետի: Դեղերը տրամադրվում են ապահովագրված անձանց համար ապահովագրական փաթեթում ներառված հատուցման ենթակա հակաուռուցքային դեղերի ցանկին համապատասխան: «Հերցեպտին (Տրաստուզումաբ)» դեղն ընդգրկված է նշված ցանկում:

Մյուս դեպքում, երկրորդ խմբի հաշմանդամություն ունեցող անձը Պաշտպանին հասցեագրված բողոքով հայտնել է, որ ունի առողջական լուրջ խնդիրներ, օրըստօրե ինքնազգացողությունը վատթարանում է, ունենում է ախորժակի անկում, թույլության զգացողություն, գունատություն: Ըստ բողոք ներկայացրած անձի՝ դիմել է պոլիկլինիկայի բժշկին, ստացված բժշկական խորհրդատվության արդյունքում նշանակվել է վիտամինային բուժում, սակայն գանգատները շարունակվում են:

ՄԻՊ ներկայացուցիչը խնդիրը քննարկել է ԱԱՊ-ի իրավասու ներկայացուցչի հետ, որի արդյունքում դիմողն ուղեգրվել է գործիքային և լաբորատոր հետազոտությունների: Հաջորդիվ, քաղցկեղ ախտորոշմամբ՝ վերջինս ուղեգրվել է նեղ մասնագետի (ուռուցքաբանի), այնուհետև վիրաբույժի մոտ՝ վիրահատության հստակ ցուցումով: Մեկ ամիս անց, դիմողը ՄԻՊ աշխատակազմ լրացուցիչ տեղեկատվություն է ներկայացրել այն մասին, որ ենթարկվել է վիրահատության, ներկայում քննարկվում է քիմիաթերապևտիկ բուժօգնության անհրաժեշտության հարցը: Բողոք ներկայացրած անձը շնորհակալություն է հայտնել Պաշտպանի հաստատությանը կատարած աշխատանքի համար:

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը՝ Պաշտպանը կարևորում է, որպեսզի անընդհատ քայլեր ձեռնարկվեն անհրաժեշտ և բավարար թվով գործող առողջապահական հաստատությունների առկայության, պետության կողմից առողջապահական հաստատությունները (թե՛ պետական, և թե՛ մասնավոր), ապրանքները (հատկապես հիմնական դեղերը), ծառայությունները և տեղեկատվությունը քաղաքացիներին գործնականում հասանելի դարձնելու ուղղությամբ: Դրանք պետք է համարժեք լինեն, քանի որ առաջնային օղակի բուժաշխատողը մատուցում է ԱԱՊ ծառայություններ, կազմակերպում առաջնային բուժօգնության այլ ծառայություններ:

Պաշտպանն ընդգծում է նաև, որ առողջության պահպանման, այդ թվում՝ առողջապահական ծառայություններից օգտվելու և օրենքով սահմանված կարգով անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղորայք, ինչպես նաև բուժօգնություն ստանալու իրավունքների ապահովման նպատակով պետությունը պարտավոր է իրացնել պատշաճ և համալիր մեթոդաբանությամբ քաղաքականություն և ցուցաբերել բավարար

փութաջանություն: Պաշտպանը ողջունում է այդ ուղղությամբ նախարարության ձեռնարկած քայլերը, այնուամենայնիվ, արձանագրում, որ անհրաժեշտ է կատարել կարիքների շարունակական գնահատում և ըստ անհրաժեշտության՝ քննարկման առարկա դարձնել մի շարք դեղեր Հայաստանում գրանցելու հարցը:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է՝

✓ մարզային բնակավայրերում բժշկական օգնությունն ու սպասարկումը, այդ թվում՝ առաջնային օղակի, բնակչության համար առանց խտրականության հասանելի դարձնելու նպատակով շարունակաբար զարգացնել բժշկական հաստատությունները՝ վերազինելով անհրաժեշտ բժշկական սարքավորումներով, պարագաներով և կահավորմամբ.

✓ կատարել կարիքների շարունակական գնահատում և ըստ անհրաժեշտության՝ քննարկման առարկա դարձնել առողջության և սոցիալական բարեկեցության համար անհրաժեշտ մի շարք դեղեր (օրինակ՝ «Ռիսդիպլամ», «Զոլգենսմա» և «Սպինռազա») Հայաստանում գրանցելու հարցը: Միևնույն ժամանակ, ջանքեր գործադրել շահառուներին պետության կողմից անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղերի անխափան և ժամանակին տրամադրումն ապահովելու ուղղությամբ:

2. Բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատչելիության խնդիր

Հաշվետու տարում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին շարունակվել են բողոքներ ներկայացվել բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատչելիության հետ կապված[358]:

Հարկ է նշել, որ 2025 թվականի ընթացքում Պաշտպանի միջամտությամբ և իրավասու մարմինների հետ արդյունավետ համագործակցության արդյունքում հնարավոր է եղել մի շարք անհատական հարցերի տալ լուծում: Այսպես, օրինակ՝ ՄԻՊ-ին հասցեագրված բողոքներից մեկով քաղաքացին հայտնել է, որ իր ընտանիքը 1994 թվականից հաշվառված է ընտանիքների անապահովության գնահատման համակարգում *(անապահովության միավորը կազմում է 31.44 և իր խնամքին գտնվում են երեք անչափահաս երեխա ու կենսաթոշակառու ծնողներ)*: Հավելել է, որ մարզից տեղափոխվել է մայրաքաղաքի համապատասխան բժշկական կենտրոն, որտեղ ախտորոշվել է գլխուղեղի արյան շրջանառության սուր խանգարում՝ հեմոռագիկ տիպի: Ըստ նրա՝ հարազատները բժշկական կենտրոնում կատարել են անհրաժեշտ վճարումը, որից հետո ինքը վիրահատվել է: Ըստ տեղեկացման՝ մինչ մայրաքաղաքի համապատասխան բժշկական կենտրոն տեղափոխվելը՝ առաջնային բուժօգնությունը ստացել է իր մարզի բժշկական կենտրոնում: Քաղաքացու պնդմամբ՝ բժշկական կենտրոններից որևէ մեկում ինքը և իր հարազատները չեն ստացել բանավոր կամ գրավոր տեղեկատվություն պետության երաշխավորած անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնությունից և սպասարկումից օգտվելու հնարավորությունների, ծավալների, իրավունքների և դրանց իրականացման մեխանիզմների մասին, իսկ հարազատները, գտնվելով հուզական ծանր վիճակում, չեն տեղեկացրել իր՝ ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված լինելու մասին:

---

[358] Սույն պարագրաֆի շրջանակում ներկայացված դեպքերը վերլուծության են ենթարկվել իրավահարաբերությունների ծագման պահին գործող կարգավորումների լույսի ներքո:

Բարձրացված հարցի կապակցությամբ պարզաբանումներ ստանալու նպատակով Պաշտպանը դիմել է Առողջապահության նախարարություն: Ի պատասխան՝ ներկայացվել է տեղեկատվություն առ այն, որ բարձրացված հարցն ուսումնասիրվել է նախարարությունում, և վերջինիս համապատասխան ընթացք է տրվել: Արդյունքում՝ Պաշտպանի միջամտությամբ և իրավասու մարմնի հետ համագործակցությամբ՝ քաղաքացու կողմից բարձրացված հարցը ստացել է լուծում, և բժշկական օգնության ու սպասարկման համար նախապես վճարված գումարը վերադարձվել է: Նշված տեղեկատվությունը ՄԻՊ ներկայացուցիչը փոխանցել է քաղաքացուն՝ ուղղորդելով համապատասխան բժշկական կենտրոն՝ դիմում լրացնելու և անհրաժեշտ փաստաթղթեր ներկայացնելու նպատակով: Հաջորդիվ, քաղաքացին ՄԻՊ-ին հասցեագրած լրացուցիչ դիմումով տեղեկացրել է, որ իր բարձրացրած հարցը Պաշտպանի աջակցությամբ ստացել է լուծում, և բժշկական օգնության ու սպասարկման համար նախապես վճարված գումարը վերադարձվել է[359]:

Մյուս դեպքում, անչափահաս երեխաների միայնակ մայրը դիմել է Մարդու իրավունքների պաշտպանի աջակցությանը՝ իր երեխայի համար անհրաժեշտ բժշկական օգնությունն անվճար կազմակերպելու խնդրանքով:

Դիմումում նշվել է, որ երեխան ունի լուրջ առողջական խնդիր, որի բուժման նպատակով բժշկական հաստատության կողմից ցուցվել է բժշկական հատուկ տեխնոլոգիայի կիրառմամբ վիրահատություն: Ըստ բժշկական տեղեկանքի՝ դրա արժեքը կազմում է շուրջ 3 միլիոն դրամ: Քաղաքացին հավելել է, որ իր ընտանիքը գտնվում է սոցիալապես անապահով վիճակում և առկա չեն բավարար ֆինանսական միջոցներ վերոնշյալ թանկարժեք տեխնոլոգիան ձեռք բերելու համար: Միաժամանակ ընդգծվել է, որ վիրահատությունը պետք է իրականացվի հնարավորին սեղմ ժամկետում, իսկ առողջական խնդիրը կարող է նաև խոչընդոտ հանդիսանալ երեխայի կրթության պատշաճ կազմակերպմանը:

Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության և Առողջապահության նախարարության համագործակցության շնորհիվ վիրահատական միջամտության ժամանակ օգտագործվող թանկարժեք տեխնոլոգիայի արժեքը պետական պատվերի շրջանակներում ամբողջությամբ փոխհատուցվել է և քաղաքացու կողմից բարձրացված խնդիրը ստացել է լուծում[360]:

Հարկ է նշել, որ անհատական մակարդակում արձանագրված դրական առաջընթացին զուգահեռ՝ քիչ չեն դեպքերը, երբ հնարավոր չի եղել անձանց համար անհրաժեշտ բժշկական օգնությունն ու սպասարկումը պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով իրականացնել:

Այսպես, օրինակ՝ Պաշտպանին ներկայացված բողոքներից մեկով քաղաքացին տեղեկացրել է, որ բժշկական կենտրոնում անցել է սելեկտիվ կորոնարոգրաֆիա, արդյունքում իր մոտ ախտորոշվել է ՍԻՀ, ձախ փորոքի սրտամկանի սուր ինֆարկտ առանց ST էլևացիայի: Այնուհետև, ըստ պնդման, վճարովի հիմունքներով իրականացվել է կորոնար զարկերակի ստենտավորում: Հետագայում, տեղեկացել է, որ, որպես մարտական գործողությունների մասնակցի ընտանիքի անդամ, իրավունք ուներ նորագույն և թանկարժեք տեխնոլոգիաների կիրառմամբ նշված բժշկական ծառայությունները ստանալ պետության կողմից երաշխավորված անվճար պայմաններով: Նշվածի հաշվառմամբ՝

[359] Այս առնչությամբ Պաշտպանը հանդես է եկել նաև հրապարակային հայտարարությամբ: Հասանելի է հետևյալ հղումով https://ombuds.am/am/site/ViewNews/3688 (20/03/2026թ.-ի դրությամբ):

[360] Այս առնչությամբ Պաշտպանը հանդես է եկել նաև հրապարակային հայտարարությամբ: Հասանելի է հետևյալ հղումով https://www.ombuds.am/am/site/ViewNews/3497 (20/03/2026թ.-ի դրությամբ):

դիմել է Առողջապահության նախարարություն վճարված գումարը (1 180 000 դրամը) իրեն վերադարձնելու նպատակով, սակայն արդյունքի չի հասել:

Բողոքի քննարկման շրջանակում Պաշտպանը համապատասխան պարզաբանումներ է պահանջել Առողջապահության նախարարությունից: Ի պատասխան՝ հայտնել են, որ անհետաձգելի հիվանդանոցային բուժօգնություն պահանջող դեպքերում պացիենտը կարող է ծրագրի շրջանակներում բժշկական օգնություն ու սպասարկում ստանալ շտապ օգնության ծառայության ուղեգրով կամ հիվանդանոցային բուժօգնություն իրականացնող բժշկական կազմակերպության ընդունարանի բժշկի եզրակացության հիման վրա՝ ***մեկ աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան կարգավիճակը և անձը հաստատող փաստաթղթերը բժշկական կազմակերպություն ներկայացնելու պայմանով:*** Պատասխան գրությամբ տեղեկացրել են նաև, որ պացիենտին ծառայություն է մատուցվել ընթացիկ տարվա 1-ին եռամսյակում, իսկ ֆինանսական տարին ավարտվել է դեկտեմբերի 15-ին: Առողջապահության նախարարի 2024 թվականի նոյեմբերի 4-ի թիվ 2092–Լ հրամանի դրույթների խախտմամբ ներկայացված դեպքերը փոխհատուցման ենթակա չեն: Միևնույն ժամանակ, հայտնել են, որ բարձրացված խնդիրները պարզաբանելու նպատակով գրություն է ուղարկվել բժշկական կենտրոն:

Այնուհետև, բժշկական կենտրոնից տրամադրվել է տեղեկատվություն, որ ***պացիենտի կողմից անվճար պայմաններով բուժսպասարկման համար որևէ փաստաթուղթ չի ներկայացվել:*** Հավելել են, որ բժշկական կենտրոնը պատրաստակամ է օգնելու պացիենտին և իրականացնել գումարի վերադարձ Առողջապահության նախարարության համապատասխան թույլտվության և պետպատվերի շրջանակում գումարի փոխհատուցման դեպքում:

Լրացուցիչ պարզաբանումներ ներկայացնելու պահանջով Պաշտպանը կրկին դիմել է Առողջապահության նախարարություն: Ի պատասխան, ի թիվս այլնի, նշվել է, որ *բուժառուի և բժշկական կազմակերպության միջև կնքվել է բժշկական ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր:* Վերջինս բժշկական կազմակերպություն չի ներկայացրել պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու հիմք հանդիսացող փաստաթղթերը և կնքել է բժշկական ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր: Հավելել են, որ բուժառուն խախտել է վերոնշյալ հրամանի պահանջները, որի պատճառով նրա բժշկական օգնության և սպասարկման դեպքը պետական պատվերի շրջանակներում փոխհատուցման ենթակա չէ:

Պաշտպանին հասցեագրված մեկ այլ բողոքով քաղաքացին տեղեկացրել է, որ 2025 թվականի մայիսի 1-ին ինքնազգացողությունը կտրուկ վատթարացել է և շտապ բժշկական ծառայության միջոցով տեղափոխվել է Աբովյանի բժշկական կենտրոն, որտեղից էլ՝ Երևանի բժշկական կենտրոններից մեկը, որտեղ վճարովի հիմունքներով անցել է մագնիսա-ռեզոնանսային տոմոգրաֆիա (ՄՌՏ) հետազոտություն: Հավելել է, որ չնայած իր կինը տեղեկացրել է իր հաշմանդամություն ունենալու հանգամանքի մասին, այնուամենայնիվ Երևանում գտնվող բժշկական կենտրոնում հայտնել են, որ 80 000 դրամ վճարումը կատարելուց հետո գումարը նրան կվերադարձվի: ՄՌՏ հետազոտությունն իրականացնելուց հետո տեղափոխվել է Աբովյանի բժշկական կենտրոն, որտեղ էլ պահանջել են վճարել 40 000 դրամ՝ շտապ բժշկական ծառայության համար: Այնուհետև, տեղափոխել են այլ բժշկական կենտրոն, որտեղ մի քանի ժամ տարատեսակ բժշկական հետազոտություններ անցնելուց հետո վերադարձել է տուն:

Բողոք ներկայացրած անձը հայտնել է իր մտահոգությունն առ այն, որ իրեն անհրաժեշտ բժշկական օգնությունը և սպասարկումը կարող էր տրամադրվել միայն

Աբովյանի բժշկական կենտրոնի կողմից՝ առանց իրեն այլ բժշկական կենտրոններ տեղափոխելու: Նշել է նաև, որ բազմիցս դիմել է Առողջապահության նախարարություն՝ իրենից գանձված գումարները վերադարձնելու խնդրանքով, սակայն վերադարձվել է միայն Աբովյանի բժշկական կենտրոնում վճարած 40 000 դրամը:

Բողոք ներկայացրած անձը խնդրել է Պաշտպանի աջակցությունը ՄՌՏ հետազոտության համար վճարած 80 000 դրամն իրեն վերադարձնելու հարցում:

Հաշմանդամություն ունեցող անձին անհրաժեշտ բժշկական օգնությունն ու սպասարկումը պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով չիրականացնելու, ինչպես նաև տարբեր բժշկական կենտրոններ տեղափոխելու իրավական հիմքերի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու նպատակով Մարդու իրավունքների պաշտպանը գրություն է հասցեագրել Առողջապահության նախարարություն: Ի պատասխան՝ հայտնել են, որ բուժառուն շտապ օգնության ծառայության միջոցով տեղափոխվել է Աբովյանի բժշկական կենտրոնի ընդունարան: Հաշվի առնելով բուժառուի օբյեկտիվ վիճակը և անամնեզը՝ հերթապահ բժշկի կողմից կատարվել է խորհրդատվություն այլ բժշկական կենտրոնների հետ: Համատեղ քննարկման արդյունքում որոշում է կայացվել ախտորոշումը ճշտելու և հետագա բուժօգնությունը կազմակերպելու համար Երևանի բժշկական կենտրոններից մեկում կատարել մագնիսառեզոնանսային շերտագրություն հետազոտություն: Նշվել է նաև, որ պետական պատվերի շրջանակներում հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների ընդունարանում անհետաձգելի բժշկական օգնություն պահանջող վիճակները և ախտորոշումները սահմանված են Առողջապահության նախարարի 2019 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 44-Ն հրամանով: Կատարված հետազոտությունն ընդգրկված չէ վերոնշյալ հրամանով հաստատված ցանկում, ինչպես նաև բացակայում է ուղեգիրը և բժշկական կենտրոնների միջև պետական պատվերի շրջանակներում իրավահարաբերությունները կարգավորող պայմանագիր, ուստի հետազոտությունն իրականացվել է վճարովիր հիմունքներով: Հետազոտության արդյունքում ժխտվել է «գլխուղեղի սուր կամ ենթասուր իշեմիկ ինսուլտ» ախտորոշումը և պացիենտը տեղափոխվել է Աբովյանի բժշկական կենտրոն: Պացիենտին պարզաբանվել է անհայտ խոտաբույսով թունավորման փաստը և վերջինս տեղափոխվել է Երևանի բժշկական կենտրոններից մեկը, որտեղ բուժօգնությունը կազմակերպվել է պետական պատվերի շրջանակներում:

Այսպիսով, ստացվում է, որ առկա չեն ճկուն կառուցակարգեր, որոնք թույլ կտան կատարել գումարի վերադարձ, այն դեպքերում, երբ սոցիալական կարգավիճակ ունեցող անձանց բուժօգնությունը վճարովի հիմունքներով է մատուցվել: Հարկ է նշել, որ այս դիմում-բողոքները ՄԻՊ աշխատակազմում գտնվում են քննարկումների փուլում և պահանջում են հետագա լրացուցիչ ուսումնասիրություններ:

Պաշտպանին հասցեագրված մեկ այլ բողոքով էլ անձը տեղեկացրել է, որ 76-ամյա մայրը 3-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձ է, ունի առողջական լուրջ խնդիրներ, ներկայում ստացիոնար պայմաններում ստանում է բժշկական օգնություն: Ըստ տեղեկացման՝ մոր մոտ ախտորոշված է ստորին վերջույթի փտախտ և ցուցված է հատում: Ըստ պնդման՝ մինչ ցուցված բժշկական միջամտությունն անհրաժեշտ է իրականացնել ձախ ստորին վերջույթի մակերեսային ազդրային զարկերակի, ծնկափոսային, (...) զարկերակների բալոնային անգիոպլաստիկա ստենտավորում: Նշված բուժօգնության արժեքը գերազանցում է մեկ միլիոն դրամը: Հավելել է, որ մոր եկամուտը միայն 53.000 դրամ հաշմանդամության կենսաթոշակն է, ինքն էլ չի կարող մոր բուժօգնության ծախսը հոգալ, քանի որ ընտանիքը սոցիալապես անապահով է և ընդգրկված է ընտանիքների

անապահովության գնահատման համակարգում: Միևնույն ժամանակ, բողոք ներկայացրած անձը ՄԻՊ աշխատակազմ տեղեկություն է ներկայացրել այն մասին, որ աջակցության հարցով դիմել է նաև ՀՀ առողջապահության նախարարություն, սակայն արդյունքի չի հասել:

Պաշտպանը գրություն է հասցեագրել Առողջապահության նախարարություն՝ խնդրելով քննարկել բարձրացված հարցը: Ի պատասխան՝ հայտնել են, որ պացիենտին ցուցված բժշկական միջամտությունն ընդգրկված է ՀՀ առողջապահության նախարարի 2023 թվականի մայիսի 11-ի «Նորագույն և թանկարժեք տեխնոլոգիաների կիրառմամբ մատուցվող բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների ցանկը հաստատելու մասին» թիվ 20-Ն հրամանով հաստատված ցանկում և պետական պատվերի շրջանակներում իրականացվում է ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 4-ի «Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման մասին» թիվ 318-Ն որոշման հավելված 3-ի 8-րդ կետով սահմանված բնակչության սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերի ցանկում ընդգրկված քաղաքացիների համար: Հաշմանդամություն ունեցող անձինք՝ ֆունկցիոնալության միջին աստիճանի սահմանափակումով, ինչպես նաև 3-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձինք ընդգրկված չեն վերոնշյալ խմբերի ցանկում և բուժօգնությունն իրականացվում վճարովի հիմունքներով:

Մարդու իրավունքների պաշտպանը հընթացս ստացել է նաև բողոքներ, որոնք վերաբերել են՝ բիոպսիա (կենսազննում) ախտորոշիչ գործողությունը մատչելի չլինելու, անվճար չիրականացվելու, քիմիաթերապևտիկ դեղորայքի թանկարժեք լինելու, այն անվճար չստանալու և այլ խնդիրներին:

Այսպես, օրինակ՝ Պաշտպանին դիմած անձը տեղեկացրել է, որ իր 62-ամյա բարեկամը բնակվում է միայնակ՝ վարձակալական հիմունքներով, ունի առողջական լուրջ խնդիրներ, որի պատճառով՝ հիմնականում գտնվում է անկողնային վիճակում և շատ դժվարությամբ է տեղաշարժվում: Նշել է, որ առողջական վիճակով պայմանավորված՝ աշխատել չի կարող, որի պատճառով բավարար ֆինանսական միջոցներ չունի բնակվարձի վճարման համար և սեփականատերը պահանջել է ազատել բնակարանը, սակայն վերջինս բնակության այլ վայր տեղափոխվելու հնարավորություն չունի: Միաժամանակ, նշել է, որ դիմել են պոլիկլինիկա, որտեղ կատարված հետազոտությունների արդյունքում նախնական ախտորոշվել է կրծքագեղձի քաղցկեղ, որի հաստատման համար անհրաժեշտ է իրականացնել բիոպսիայի ախտորոշիչ գործողություն: Բողոք ներկայացրած անձը նշել է, որ վերջինս չունի ֆինանսական հնարավորություն տվյալ հետազոտությունը կատարելու համար և խնդրել է Պաշտպանի աջակցությունը կացարանի և անհրաժեշտ բուժօգնությունն անվճար կազմակերպելու հարցերում:

Պաշտպանի միջամտության արդյունքում քաղաքացին տեղավորվել է «Հանս Քրիստիան Կոֆոեդ» բարեգործական հիմնադրամում, որից հետո Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոնում իրականացվել է անհրաժեշտ բժշկական հետազոտությունը, այնուհետև վերջինս վերադարձել է անօթևանների ժամանակավոր կացարան: Հաջորդիվ, ՄԻՊ աշխատակազմ ստացվել է տեղեկատվություն առ այն, որ բողոք ներկայացրած անձը մահացել է: Հարկ է նշել, որ բողոքի կապակցությամբ սկսված քննարկումը դադարեցվում է այն դեպքում, երբ այն անձը, որի իրավունքների ենթադրյալ խախտմանն առնչվել է բողոքը, մահացել է:

Սույն տարեկան հաղորդման կազմման աշխատանքների շրջանակում Պաշտպանի կատարած համապատասխան հարցադրումներին ի պատասխան՝ Առողջապահության

նախարարությունը տեղեկացրել է, որ 2025 թվականի ընթացքում ստացվել են 17 բողոքներ ախտորոշիչ նպատակով կատարվող բիոպսիան անվճար չիրականացվելու վերաբերյալ: Բոլոր բողոքները եղել են որևէ սոցիալական կարգավիճակ չունեցող անձանց կողմից: Նախարարության տեղեկացմամբ՝ 2025 թվականին «Ուռուցքաբանական և արյունաբանական հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ» ծրագրի ծառայությունների գները չեն վերանայվել: Քիմիաթերապևտիկ դեղերով ապահովումն իրականացվում է նախարարության կողմից հաստատված քիմիաթերապևտիկ միջոցառումների նվազագույն սխեմաների շրջանակներում, կազմակերպության միջոցների հաշվին՝ համավճարային եղանակով: Առողջապահության նախարարի 2024 թվականի հուլիսի 16-ի թիվ 3880–Ա հրամանով հինգ անվանում դեղերով համալրվել է և հաստատվել պետության կողմից երաշխավորված անվճար ուռուցքաբանական բժշկական օգնության և սպասարկման մեջ ընդգրկված քիմիաթերապևտիկ բժշկական օգնության ընթացքում կիրառվող քիմիապրեպարատների ցանկը: Ըստ տեղեկացման՝ 2025 թվականի ստացվել են դիմումներ թիրախային և իմունոթերապիայի համար նախատեսված թանկարժեք դեղերի բացակայության վերաբերյալ, որոնք հիմնականում գրանցված չեն Հայաստանի Հանրապետությունում: Նշված դեղերն Առողջապահության նախարարությունը թույլատրում է ստանալ փոստային առաքանիների միջոցով, ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 202-Ն որոշմամբ հաստատված կարգին համաձայն:

Այս առումով Պաշտպանը ողջունում է քիմիաթերապևտիկ բժշկական օգնության ընթացքում կիրառվող քիմիապրեպարատների ցանկի համալրումը՝ միաժամանակ կարևորելով դրանց լիարժեք հասանելիությունն ու մատչելիությունը բնակչության բոլոր խմբերի համար:

2025 թվականին ՄԻՊ աշխատակազմ բողոքներ են ստացվել նաև սիրտ-անոթային բուժօգնությունը, մասնավորապես, անոթների ստենտավորումը մատչելի չլինելու պատճառով բուժօգնություն ստանալ չկարողանալու վերաբերյալ: Այսպես, օրինակ՝ Պաշտպանին դիմած անձը հայտնել է, որ հորեղբայրը սուր ինֆարկտի նախանշաններով շտապ օգնության միջոցով տեղափոխվել է «Էրեբունի» ԲԿ: Հավելել է, որ հորեղբոր մոտ ախտորոշվել է սուր-ինֆարկտ և անհրաժեշտ է իրականացնել անոթների ստենտավորում: Միևնույն ժամանակ, ըստ դիմողի՝ նման թանկարժեք բուժման մեթոդի համար չունեն բավարար ֆինանսական միջոցներ:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ բուժառուն չունի սոցիալական կարգավիճակ, ինչպես նաև ախտորոշումը չի համապատասխանում ՀՀ առողջապահության նախարարի 2021 թվականի հուլիսի 15-ի թիվ 54-Ն հրամանով սահմանված պետության կողմից երաշխավորված անվճար պայմաններով սրտամկանի սուր ինֆարկտի անհետաձգելի վիրահատական բուժման ծառայությունների կազմակերպման համար հիմք հանդիսացող վիճակներից մեկին, առաջարկվել է հնարավոր աջակցության համար դիմել Առողջապահության նախարարություն:

Սույն տարեկան հաղորդման կազմման աշխատանքների շրջանակում Պաշտպանը հարցադրում է կատարել Առողջապահության նախարարություն առ այն, թե ի՞նչ քայլեր են ձեռնարկվել 2025 թվականի ընթացքում սիրտ-անոթային վիրաբուժական բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում նորագույն և թանկարժեք տեխնոլոգիաների կիրառմամբ մատուցվող ծառայություններից անվճար կամ արտոնյալ պայմաններով օգտվելու իրավունք ունեցող անձանց շրջանակը կամ ուղեգրման չափանիշներն ընդլայնելու կապակցությամբ: Դրա հետ մեկտեղ, տվյալներ է պահանջել սիրտ-անոթային վիրաբուժական բժշկական օգնության և սպասարկման ծառայության կարիք ունեցող և

վճարման հնարավորություն չունեցող անձանց կողմից 2025 թվականին ներկայացված բողոքների քանակի վերաբերյալ:

Առողջապահության նախարարությունը, ի թիվս այլնի, տեղեկացրել է, որ համաձայն Կառավարության 2004 թվականի մարտի 4-ի թիվ 318-Ն որոշման (ուժը կորցրել է 25.12.2025 թվականի թիվ 1974-Ն) 2025 թվականի ընթացքում ամբողջ բնակչության համար շարունակական ապահովվել է պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում սրտի անհետաձգելի վիրահատական (Stent for Life) ծառայությունների, գլխուղեղի սուր կամ ենթասուր իշեմիկ կաթվածների թրոմբոլիտիկ բուժման և մեխանիկական թրոմբէկտոմիայի ծառայությունների, աորտայի շերտազատված անևրիզմայի վիրահատական բուժման ծառայությունների տրամադրումը:

Համաձայն Առողջապահության նախարարի 2025 թվականի հուլիսի 14-ի թիվ 67-Ն հրամանով հաստատված չափորոշչի՝ վերանայվել և ընդլայնվել է սրտի անհետաձգելի վիրահատական (Stent for Life) ծառայությունների ծրագիրը: Մասնավորապես, ծրագրում ընդգրկվել են առանց ST էլևացիայի սրտամկանի սուր ինֆարկտի բոլոր այն դեպքերը, երբ առկա է իշեմիկ ախտանշանների սկզբից 24 ժամվա ընթացքում արյան պլազմայում տրոպոնինի կոնցենտրացիայի պարտադիր որոշված երկու ցուցանիշների դինամիկ աճ (երկրորդը պարտադիր ավել է առաջինից), ընդ որում՝ առնվազն երկրորդ ցուցանիշը գերազանցում է տրոպոնինի մակարդակը որոշող սարքի տրոպոնինի նորման առնվազն 5 անգամ և ստորև թվարկված պացիենտների շատ բարձր և բարձր ռիսկի խմբերի համար նշվածներից առնվազն մեկի առկայությամբ.

ա. հեմոդինամիկական անկայունություն կամ կարդիոգեն շոկ,

բ. բուժման նկատմամբ ռեֆրակտեր կրկնվող կամ շարունակական կորոնար ցավեր,

գ. իշեմիայի պատճառով զարգացող սուր սրտային անբավարարություն,

դ. կյանքին վտանգ սպառնացող սրտի ռիթմի խանգարումներ կամ սրտի կանգ,

ե. սրտամկանի ինֆարկտի մեխանիկական բարդություններ,

զ. ԷՍԳ –ի ST սեգմենտի և/կամ T ատամիկի դինամիկ փոփոխություններ, ST սեգմենտի տրանզիտոր էլևացիա,

է. GRACE ռիսկի ցուցանիշը >140:

Ըստ նախարարության՝ 2025 թվականի ընթացքում անվճար կամ արտոնյալ պայմաններով օգտվելու իրավունք չունեցող և սիրտ-անոթային վիրաբուժական բժշկական օգնության և սպասարկման ծառայության կարիք ունեցող և վճարման հնարավորություն չունեցող անձանց կողմից ստացվել է 51 բողոք: Բոլոր դեպքերն ուսումնասիրվել են, և հաշվի առնելով քաղաքացու այլ կարգավիճակները, մի շարք դեպքերում տրամադրվել են Առողջապահության նախարարի հրամաններ պետական մասնակցության չափով:

Ողջունելով նախարարության գործադրած ջանքերը՝ այնուամենայնիվ, պետք է փաստել, որ Պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրությունը վկայում է, որ հաշվետու տարում շարունակվել են դեպքերը, երբ բնակչության սոցիալապես անապահով խմբին սիրտ-անոթային վիրաբուժական բժշկական օգնությունը փաստացի հասանելի չի եղել:

Պաշտպանն իր նախորդ տարեկան հաղորդումների շրջանակներում բուժօգնության ծառայությունների մատչելիության ապահովման խնդրի կարգավորման համար առաջարկել էր մշակել և իրացնել առողջապահության ոլորտում անհավասարությունը նվազեցնելու համալիր քաղաքականություն, որով կապահովվի առողջապահական ծառայությունների ֆինանսական մատչելիությունն՝ անկախ սոցիալական վիճակից: Այս տեսանկյունից, իբրև դրական առաջընթաց պետք է դիտել այն, որ 2025 թվականի

դեկտեմբերի 25-ից ուժի մեջ է մտել «Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» օրենքը[361], որի նպատակն է ապահովել մարդու առողջության պահպանման սահմանադրական իրավունքի արդյունավետ իրականացմանն անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգերը, ՀՀ առողջապահական համակարգի կայունությունը, բարելավել բնակչության առողջության և դրա հետ կապված այլ ցուցանիշները, ինչպես նաև նվազեցնել հիվանդացության, մահացության ցուցանիշները, աջակցել ՀՀ-ում սոցիալական համերաշխության միջավայրի ձևավորմանը, նպաստել բնակչության առողջապահական կարիքների բավարարմանը, բարձրացնել բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների հասանելիության, այդ թվում՝ ֆինանսական հասանելիության աստիճանը, բարելավել դրանց որակը:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պաշտպանը կարևորում է առողջության համապարփակ ապահովագրության ներդրման ուղղությամբ պետության կողմից գործադրված ջանքերը, որոնց արդյունքում բոլոր ապահովագրված անձանց համար նախատեսված է միևնույն ծածկույթը՝ անկախ վճարունակությունից և սոցիալական կարգավիճակից: Այնուհանդերձ, հարկ է ընդգծել, որ անձանց առողջության պահպանման իրավունքի առավել արդյունավետ երաշխավորման և բնակչության կյանքի որակի բարելավման տեսանկյունից՝ կարևոր է իրականացնել կարիքների արագ ու շարունակական գնահատում և ըստ անհրաժեշտության՝ քննարկման առարկա դարձնել ապահովագրական փաթեթի շրջանակում հատուցման ենթակա բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների ու դեղերի ընդլայնման հարցը:

3.Շուրջօրյա խնամքի կենտրոններում (տուն-ինտերնատներում) ինքնասպանությունների կանխարգելման համալիր կառուցակարգերի բացակայության խնդիր

Նախորդ տարեկան հաղորդումների շրջանակներում Մարդու իրավունքների պաշտպանը բարձրաձայնել էր շուրջօրյա խնամքի կենտրոններում (տուն-ինտերնատներում) ինքնասպանությունների կանխարգելման համալիր կառուցակարգերի բացակայության խնդրի մասին[362]: Մասնավորապես, մտահոգիչ համարելով 2020-2023 թվականներին գրանցված ինքնասպանության դեպքերի ցուցանիշը[363]՝ Պաշտպանը նշել էր, որ շուրջօրյա խնամքի կենտրոններում այս դեպքերի կանխարգելման խնդրին համակողմանի լուծում տալու համար ներկայում առկա չէ հստակ կառուցակարգ *(օրինակ՝ ռազմավարություն):* Մինչդեռ, նշված ոլորտում համակարգված և արդյունավետ քաղաքականության որդեգրումն ու դրա հետևողական իրականացումը կարող է կարևոր նշանակություն ունենալ ինքնասպանությունների կանխարգելման հարցում:

---

[361] Հասանելի է հետևյալ հղումով՝ https://arlis.am/hy/acts/218650/latest (20/03/2026թ.-ի դրությամբ):

[362] Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի վերաբերյալ 2023 և 2024 թվականների տարեկան հաղորդումները, էջեր 162-165, 678-679:

[363] Այսպես, ըստ ԱՍՀՆ-ի տրամադրած տեղեկությունների՝ նախարարության համակարգում գործում են տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց շուրջօրյա խնամքի 4 կենտրոններ: Տրամադրված տվյալների համաձայն՝ 2020-2023 թվականներին միայն «Երևանի № 1 տուն-ինտերնատ»-ում է արձանագրվել ինքնասպանության 4 դեպք: Ընդ որում, նշված 4 դեպքերից 1-ը տեղի է ունեցել 2020 թվականին, 2-ը՝ 2022 թվականին, 1-ը՝ 2023 թվականին:

Պաշտպանն ընդգծել էր նաև, որ նշված խնդրի լուծմանն ուղղված գործնական բավարար քայլերի, նման դեպքերի կանխարգելմանն ուղղված համապատասխան կազմակերպական մեխանիզմների առկայությունը, ի թիվս այլնի, անհրաժեշտ է նաև այդ հաստատությունների շահառուների իրավունքների արդյունավետ պաշտպանության համար:

Ռազմավարության իրավական կարգավորման առարկա կարող են դառնալ օրինակ՝ շուրջօրյա խնամքի կենտրոններում արձանագրված ինքնասպանության դեպքերի հիմքում ընկած հանգամանքների (պատճառների) ու նպաստող գործոնների գնահատման, շուրջօրյա խնամքի կենտրոնում ինքնասպանության դեպքերի կանխարգելման համալիր ծրագրի մշակման և իրականացման հետ կապված հարցերը:

Դրա հետ մեկտեղ, ինքնասպանության ռիսկի խմբին դասվող շահառուներին կյանքից զրկելու միջոցներին *(օրինակ՝ երկարացման լար, պարան, կոշկաքուղեր, սավան, գոտի և այլն*[364]*)* անհրաժեշտ ժամանակահատվածով հասանելիությունը սահմանափակելու օրենսդրական հնարավորության նախատեսման հետ կապված հարցը նույնպես կարող է դառնալ ռազմավարության իրավակարգավորման առարկա:

Արդյունքում, խնդրին համակողմանի լուծում տալու նպատակով Պաշտպանը, ի թիվս այլնի, *առաջարկել էր մշակել և պատշաճ իրացնել ինքնասպանությունների կանխարգելման համալիր կառուցակարգեր (օրինակ՝ ռազմավարություն):* Առաջարկի կատարման վիճակի նկատմամբ իրականացվել է հետագա հետևողական մշտադիտարկում, որի շրջանակում 2025 թվականին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն հասցեագրված գրությամբ Պաշտպանը, ի թիվս այլնի, բարձրացրել էր նաև այս հարցը:

Նախարարությունն իր պատասխանում նշել է, որ շուրջօրյա խնամքի կենտրոններում ինքնասպանության դեպքերի կանխարգելման խնդրին համակողմանի լուծում տալու նպատակով ռազմավարություն չի մշակվել, սակայն սոցիալական աշխատողները, հոգեբանները մշտական աշխատանքներ են իրականացնում շահառուների հետ այս ուղղությամբ: Հայտնել է նաև, որ նման դեպքեր տարվա ընթացքում չեն արձանագրվել:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը և վերահաստատելով նախորդ տարեկան հաղորդումների շրջանակներում կատարված առաջարկները՝ Պաշտպանն արձանագրում է, որ խնդրին համակողմանի լուծում տալու նպատակով անհրաժեշտ է՝ մշակել և պատշաճ իրացնել ինքնասպանությունների կանխարգելման համալիր կառուցակարգեր (օրինակ՝ ռազմավարություն): Այդ կառուցակարգերով նախատեսվող միջոցառումների իրականացմամբ անհրաժեշտ է ապահովել համակարգված, թիրախային և արդյունավետ քաղաքականություն շուրջօրյա խնամքի կենտրոններում ինքնասպանության դեպքերի կանխարգելման ուղղությամբ, ստեղծել համապատասխան իրավակազմակերպական նախադրյալներ նման դեպքերի հայտնաբերման, գնահատման համար, ապահովել անձնակազմի և շահառուների պատշաճ մասնագիտական պատրաստվածությունը:

4. Աղմուկի թույլատրելի մակարդակի գերազանցման հետ կապված խնդիր

[364] Նախորդ տարի «Երևանի № 1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի կողմից տրամադրած տեղեկությունների համաձայն՝ ինքնասպանությունների հիշյալ 4 դեպքերից 3-ն իրականացվել են երկարացման լարով կախվելու միջոցով և միայն 1-ն է կատարվել այլ եղանակով՝ երրորդ հարկի սենյակից ցած նետվելու միջոցով:

2025 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի անմիջական ուշադրության ներքո շարունակել է գտնվել աղմուկի թույլատրելի մակարդակի գերազանցման հետ կապված խնդիրը: Այս խնդրին Պաշտպանն անդրադարձ է կատարել իր գործունեությունն ամփոփող տարեկան հաղորդումում[365], հայտարարություններում[366], հրապարակային ելույթներում[367], ինչպես նաև խորհրդարանական լսումների[368] և քննարկումների[369] ընթացքում:

Հաշվետու տարում ՄԻՊ-ին ներկայացված բողոքների, թեժ գծին ստացված զանգերի, զանգվածային լրատվության միջոցների և սոցիալական ցանցերի հրապարակումների հիման վրա նախաձեռնված ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ Հայաստանի տարբեր բնակավայրերում, հատկապես՝ մայրաքաղաքում տեղակայված հանրային սննդի, զվարճանքի և ժամանցի կետերում հնչող բարձր երաժշտության, ինչպես նաև աղմուկով ուղեկցվող շինարարական աշխատանքների վերաբերյալ խնդիրները շարունակել են խնդրահարույց մնալ:

Այսպես, օրինակ՝ Պաշտպանին ներկայացված բողոքներից մեկով անձը հայտնել է, որ իր բնակելի տան անմիջապես հարևանությամբ գործում է հյուրատուն, որտեղ մշտապես կազմակերպվում են տարատեսակ խնջույքներ, հնչում է բարձր երաժշտություն, սուլոցներ, բղավոց, ինչը խաթարում է իր ընտանիքի անդորրը: Հավելել է, որ խնդրի կարգավորման նպատակով բազմիցս դիմել է Ոստիկանություն, սակայն արդյունքի չի հասել: Բողոք ներկայացրած անձը խնդրել է նշված հանգամանքները դարձնել քննարկման առարկա և Պաշտպանի իրավասության շրջանակում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ:

Հաշվի առնելով վերոգրյալը և նկատի ունենալով այն, որ Պաշտպանին հասցեագրած բողոքում բարձրացված հարցը չի քննարկվել ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) կողմից, և այն ըստ էության կարող է լուծվել այդ մարմնի կողմից, ինչպես նաև առկա է բողոք ներկայացրած անձի գրավոր համաձայնությունը, հիշյալ բողոքը՝ համապատասխան ընթացք տալու համար փոխանցվել է Տեսչական մարմին:

Ի պատասխան՝ տրամադրվել է տեղեկատվություն այն մասին, որ Տեսչական մարմնում հարուցվել է վարչական վարույթ՝ ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի մարտի 6-ի թիվ 138 հրամանով հաստատված «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» թիվ 2-III-11.3 սանիտարական նորմի (այսուհետ՝ Սանիտարական նորմեր) 5.3-րդ կետի աղյուսակ 3-ի 4-րդ կետի պահանջների պահպանումը պարզելու նպատակով:

Վարչական վարույթի արդյունքում հայտնաբերված խախտումների վերացման նպատակով տվյալ հյուրատանը ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձին տրվել է կարգադրագիր՝ հյուրատան գործունեության արդյունքում թափանցող աղմուկի ձայնի համարժեք մակարդակը հիշյալ սանիտարական նորմի պահանջներին համապատասխանեցնելու համար:

2025 թվականի ընթացքում Պաշտպանին ներկայացված մի շարք այլ բանավոր և գրավոր բողոքներով անձիք իրենց դժգոհությունն են արտահայտել նաև շինարարական ու քանդման աշխատանքների հետևանքով առաջացող բարձր աղմուկի և

---

[365] Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի վերաբերյալ 2024 թվականի տարեկան հաղորդումը, էջեր 680-685:

[366] Հասանելի են հետևյալ հղումներով՝ https://surl.lu/kydblp, https://surl.lt/gbnbhe (20/03/2026թ.-ի դրությամբ):

[367] Հասանելի են հետևյալ հղումներով՝ https://surl.li/pnjptg, https://surl.li/vnfrdz (20/03/2026թ.-ի դրությամբ):

[368] Հասանելի է հետևյալ հղումով՝ https://ombuds.am/am/site/ViewNews/3318 (20/03/2026թ.-ի դրությամբ):

[369] Հասանելի է հետևյալ հղումով՝ https://ombuds.am/am/site/ViewNews/3371 (20/03/2026թ.-ի դրությամբ):

շինաշխատանքները հանգստյան, ինչպես նաև ոչ աշխատանքային օրերին ու ժամերին իրականացնելու արդյունքում՝ իրենց իրավունքների խախտումների վերաբերյալ:

Այսպես, օրինակ՝ Երևան քաղաքի Պարույր Սևակի 5/1 հասցեի հարակից շենքերի բնակիչները բարձրացրել են հարևանությամբ իրականացվող բազմաբնակարան բնակելի շենքի կառուցապատման հետևանքով առաջացած բարձր աղմուկի վերաբերյալ հարց: Բողոք ներկայացրած անձանց պնդմամբ՝ այդ հասցեում իրականացվող շինարարական ու քանդման աշխատանքները սկսվում են վաղ առավոտյան, իսկ դրանց արդյունքում առաջացած փոշին, բարձր աղմուկը և թրթռումները խաթարում են բնակիչների բնականոն կյանքը: Հավելել են, որ շինարարության հարևանությամբ բնակվում են նաև առողջական խնդիրներ և հաշմանդամություն ունեցող անձինք, տարեցներ ու երեխաներ: Պաշտպանի աշխատակազմ է ներկայացվել նաև շինհրապարակում իրականացվող աշխատանքների վերաբերյալ տեսանյութ:

Բարձրացված հարցերը ՄԻՊ-ը հասցեավորել է Տեսչական մարմին: Ի պատասխան՝ տրամադրվել է տեղեկություն առ այն, որ Պաշտպանի գրության հիման վրա իրականացվել է զննում Պ. Սևակ փողոց, թիվ 5/1 հասցեում կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքերի շինհրապարակում և հարակից տարածքում: Որոշում է կայացվել աղմուկի և թրթռման մակարդակների գործիքային չափումներ իրականացնել շինհրապարակին ամենամոտ՝ Երևան քաղաքի Պ. Սևակ փողոցի թիվ 5/3 շենքի հարակից տարածքում:

Հավելել են, որ Տեսչական մարմին մուտքագրված Էկոնոմիկայի նախարարության «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲ ընկերության կողմից ներկայացված փորձագիտական եզրակացությունից պարզ է դարձել, որ ձայնի համարժեք և առավելագույն մակարդակները Երևան քաղաքի Պ. Սևակ փողոցի թիվ 5/3 շենքի հարակից տարածքում Երևան քաղաքի Պ. Սևակ փողոցի թիվ 5/1 հասցեում կառուցվող բազմաբնակարան շենքերի շինարարության ժամանակ չեն համապատասխանել Սանիտարական նորմերի 5.3-րդ կետով սահմանված աղյուսակ 3-ի 4-րդ կետով սահմանված պահանջներին: Նշել են նաև, որ Տեսչական մարմնի Երևան քաղաքի տարածքային կենտրոնի պետի կողմից շինարարական աշխատանքներ կատարող ընկերությանը տրվել է խախտումների վերացման կարգադրագիր:

Կարգադրագրի կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով ՄԻՊ ներկայացուցիչը կապ է հաստատել Տեսչական մարմնի իրավասու ներկայացուցչի հետ: Վերջինս հայտնել է, որ 2025 թվականի նոյեմբերի 26-ին Տեսչական մարմնում հարուցվել է վարչական վարույթ՝ կարգադրագրով տրված առաջադրանքների կատարված լինելը պարզելու նպատակով: Հավելել է, որ դրա շրջանակում իրականացվել է զննում, ինչպես նաև աղմուկի մակարդակի գործիքային չափումներ, որի արդյունքում՝ 2025 թվականի դեկտեմբերի 24-ին շինարարական աշխատանքներ կատարող ընկերությանը տրվել է նախազգուշացում: Տեսչական մարմնի ներկայացուցչի տեղեկացմամբ՝ ընկերությունը ծանուցվել է, որ 2026 թվականի հունվարի 29-ից մինչև մարտի 2-ը ներառյալ՝ Տեսչական մարմինը շարունակելու է իրականացնել զննման և աղմուկի մակարդակի գործիքային չափման աշխատանքներ:

Հարկ է նկատել, որ վերոհիշյալ բողոքներով բարձրացված հարցերը շարունակում են գտնվել Պաշտպանի աշխատակազմի ուշադրության կենտրոնում և Տեսչական մարմնի կողմից տրված կարգադրագրերի կատարման ընթացքի և արդյունքների վերաբերյալ իրականացվելու է հետագա հետևողական աշխատանք:

ՄԻՊ աշխատակազմ ստացված մեկ այլ խմբային բողոքով Երևան քաղաքի Սարյան փողոցի բնակելի շենքերից մեկի բնակիչները հայտնել են, որ իրենց շենքի դիմաց՝ բազմաբնակարան շենքի 4-րդ հարկում 2024 թվականից գործում է ռեստորան, որին

թույլտվություն է տրամադրվել գործունեություն ծավալել նաև գիշերային ժամերին (ժամը 23:00-ից մինչև 04:30-ը): Բողոք ներկայացրած անձանց պնդմամբ՝ գիշերային ժամերին երաժշտական գործիքներից, այդ թվում՝ արաբական թմբուկներից արձակվող աղմուկը խախտում է լռությունը, խաթարում բնակիչների անդորրը և գիշերային հանգիստը՝ վնաս պատճառելով բնակիչների առողջությանը: Հավելել են, որ ռեստորանի հաճախորդները հաճախ դրսևորում են հակահասարակական վարքագիծ, մասնավորապես, հայհոյում են, բարձր ծիծաղում և նմանատիպ այլ գործողություններ կատարում:

Բարձրացված հարցերը ՄԻՊ-ը հասցեավորել է Տեսչական մարմին: Ի պատասխան՝ տրամադրվել է տեղեկատվություն այն մասին, որ Տեսչական մարմնում հարուցվել է վարչական վարույթ՝ Սանիտարական նորմերի 5.3-րդ կետի աղյուսակ 3-ի 4-րդ կետով սահմանված պահանջների պահպանումը պարզելու նպատակով: Նշվել է նաև, որ հարուցված վարչական վարույթի շրջանակում բողոքաբերի բնակարանում 2025 թվականի օգոստոսի 27-ի ժամը 23^{0}-ից մինչև ժամը 01^{00}-ն ընկած ժամանակահատվածում նախատեսված էր իրականացնել թափանցող աղմուկի մակարդակի գործիքային կրկնակի չափումներ, սակայն այն չի իրականացվել բողոքաբերի և շենքի բնակիչների կողմից՝ այն թույլ չտալու պատճառով, արդյունքում, հարուցված վարչական վարույթը կարճվել է իրավիճակի փոփոխման հիմքով:

Վերոգրյալի կապակցությամբ բողոք ներկայացրած անձինք հայտնել են, որ իրենց դիրքորոշումը պայմանավորված է այն հանգամանքով, որ ռեստորանի ղեկավարությունը՝ որպես վարույթի մասնակից, նախապես ծանուցված են եղել Տեսչական մարմնի աշխատակցի այցի և համապատասխան չափումներ իրականացնելու օրվա և ժամի մասին, ուստի միջոցներ են ձեռնարկել բարձր աղմուկի մասին վկայող բոլոր երաժշտական գործիքները տարածքից հեռացնելու, դրանք թաքցնելու, ինչպես նաև աղմուկի մակարդակը նվազեցնելու ուղղությամբ: Բողոք ներկայացրած անձանց պնդմամբ՝ նման պայմաններում չափումներ իրականացնելն իմաստազուրկ է, քանի որ օբյեկտիվ պատկերը պարզել այլևս անհնար է: Հարկ է նշել, որ այս բողոքը ՄԻՊ աշխատակազմում գտնվում է քննարկման փուլում և պահանջում է հետագա լրացուցիչ ուսումնասիրություններ:

Աղմուկի թույլատրելի մակարդակի գերազանցման վերաբերյալ ստացվող բողոքների ընդհանրական ուսումնասիրության հիման վրա՝ Մարդու իրավունքների պաշտպանը հարկ է համարում ընդգծել, որ խիստ կարևոր է պահպանել համակեցության կանոնները, իսկ այս ոլորտում անձանց հիմնարար, այդ թվում՝ հանգստի, առողջության պահպանման և այլ իրավունքների երաշխավորման պարտականությունը կրում է պետությունը: Միջազգային չափանիշներին չհամապատասխանող պայմաններում առկա մշտական կամ պարբերական բնույթ կրող աղմուկը բացասաբար է անդրադառնում մարդկանց առողջական վիճակի վրա, խաթարում է նրանց հանգստի համար անհրաժեշտ միջավայրը: Հարկ է նկատի ունենալ, որ մեր շրջապատում կան առողջական խնդիրներ և հաշմանդամություն ունեցող անձինք, տարեց մարդիկ, երեխաներ, ինչպես նաև բժշկական հաստատություններ, որոնց բնականոն գործունեության համար, հատկապես ուշ երեկոյան և գիշերային ժամերին, լռությունը պահպանելն ունի կենսական նշանակություն:

Այս տեսանկյունից՝ Պաշտպանը նախորդ տարեկան հաղորդման շրջանակում հրավիրել էր իրավասու պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների ուշադրությունը վերոգրյալ խնդիրներին և կոչ արել այլ պետությունների հաջողված փորձի հաշվառմամբ՝ մշակել դրանց հաղթահարման պատշաճ կառուցակարգեր (որոնք կապահովեն բնակչության հիմնարար իրավունքները) և հետևողականորեն իրացնել դրանք: Ընդ որում, այդ կառուցակարգերը կարող են վերաբերել ինչպես անհրաժեշտ օրենսդրական, այնպես էլ այլ փոփոխությունների իրականացմանը:

Քննարկվող խնդրի համատեքստում՝ հարկ է նաև անդրադարձ կատարել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ)՝ հանրային աղմուկի վերաբերյալ նախադեպային պրակտիկային: Այսպես, օրինակ՝ *Մորենո Գոմեսն ընդդեմ Իսպանիայի* գործով դիմումատուն բողոքում էր իր տան մոտ գտնվող գիշերային ակումբներից եկող պարբերական բնույթ կրող աղմուկից: Նա պնդում էր, որ այդ աղմուկն իր մոտ առաջացրել է քնի քրոնիկ խանգարումներ: Այս գործով, ՄԻԵԴ-ը գտել էր, որ գիշերային աղմուկի վերաբերյալ իշխանությունների անգործության պատճառով՝ լրջորեն խախտվել է դիմումատուի՝ իր բնակարանի անձեռնմխելիության իրավունքը: Հաշվի առնելով ձայնային աղտոտման ինտենսիվությունը (գիշերային ժամերին թույլատրելի աղմուկի մակարդակը գերազանցելը) և այն փաստը, որ այս իրավիճակը շարունակվել է մի քանի տարի, ՄԻԵԴ-ն արձանագրել էր 8-րդ հոդվածի խախտում[370]:

Մեկ այլ՝ *Միլևան և այլոք ընդդեմ Բուլղարիայի* գործով դիմումատուները բողոքում էին իրենց բնակարաններին անմիջապես հարևանությամբ գտնվող գրասենյակից, էլեկտրոնային խաղերի և համակարգչային ակումբներից արձակվող բարձր աղմուկից: Նշված գործով ՄԻԵԴ-ն ընդգծել էր, որ իշխանություններն անտեսել են դիմումատուների բողոքները: Թեև, ըստ ՄԻԵԴ-ի, երկու անգամ որոշում է կայացվել ակումբների գործունեությունը դադարեցնելու վերաբերյալ, այնուհանդերձ դրանք այդպես էլ չեն կատարվել: Արդյունքում, չորս տարուց ավելի դիմումատուները ստիպված են եղել դիմանալ բարձր աղմուկի ձևով անհարմարությունների, ինչը հանգեցրել է ՄԻԵԿ 8-րդ հոդվածով երաշխավորված անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքի խախտման[371]:

Վերադառնալով հաշվետու տարում այս ուղղությամբ ՄԻՊ գործունեությանը՝ հարկ է նշել, որ Մարդու իրավունքների պաշտպանի նախաձեռնությամբ և Ազգային ժողովի մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի հետ համագործակցությամբ 2025 թվականի մարտի 21-ին անցկացվել են խորհրդարանական լսումներ *«Հանրային աղմուկը՝ որպես համակեցության կանոնների պահպանման խոչընդոտ, գործող իրավական կարգավորումներ. Օրենսդրական լուծումներ»* թեմայով:

Խորհրդարանական լսումներին մասնակցել են ԱԺ պատգամավորներ, պետական տարբեր գերատեսչությունների, քաղաքացիական հասարակության, ակադեմիական շրջանակների ներկայացուցիչներ, փորձագետներ: Պաշտպանն իր ելույթում նշել է, որ թեև աղմուկի անթույլատրելի մակարդակի հետ կապված խնդիրը հաճախ մարդու իրավունքների դիտանկյունից քննարկման առարկա չի դառնում, այն ուղղակի ազդեցություն ունի մարդու հիմնարար իրավունքների վրա՝ ինչպես անձի առողջության պահպանման իրավունքի, այնպես էլ՝ մասնավոր կյանքի անձեռնմխելիության և վատ վերաբերմունքի դրսևորման տեսանկյունից: Պաշտպանն ընդգծել է նաև, որ թեև մի շարք հարցեր ՄԻՊ աջակցությամբ դրական լուծում են ստանում, այնուամենայնիվ դրանց կրկնվելու ռիսկը բավական մեծ է՝ հաշվի առնելով, որ չկան վերահսկողության հստակ մեխանիզմներ: Այսպիսով, անհրաժեշտ է այս ոլորտի վերաբերյալ ունենալ համապարփակ օրենսդրություն, որը տոտալ կվերափոխի ոլորտը:

Հանրային լսումների ավարտին, Պաշտպանը նշել է նաև, որ բոլոր այն քննարկումները, թե ոլորտում իրականացվող փոփոխությունները կարող են խաթարել գործարարության բնագավառում որոշակի գործունեություն, ընդհանրապես տեղին չեն,

---

[370] Տե՛ս *Մորենո Գոմեսն ընդդեմ Իսպանիայի* (Moreno Gómez v. Spain) 2004 թվականի նոյեմբերի 16-ի գործով վճիռը, գանգատ թիվ 4143/02:

[371] Տե՛ս *Միլևան և այլոք ընդդեմ Բուլղարիայի* (Mileva and others v. Bulgaria) 2010 թվականի նոյեմբերի 25-ի գործով վճիռը, գանգատ թիվ 43449/02, 21475/04:

քանի որ դրանց միակ նպատակը լինելու է աղմուկի այնպիսի մակարդակ և համակեցության այնպիսի կանոններ ունենալը, որոնք կհամապատասխանեն այսօրվա աշխարհում սահմանված չափանիշներին[372]:

Վերոգրյալից բացի, Մարդու իրավունքների պաշտպանի և Ազգային ժողովի մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի համագործակցությամբ 2025 թվականի ապրիլի 23-ին Ազգային ժողովում անցկացվել է քննարկում՝ հանրային աղմուկին վերաբերելի հարաբերությունների կարգավորման առնչությամբ: Քննարկմանը մասնակցել են ԱԺ պատգամավորներ, Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի դասախոսներ, ՄԻՊ աշխատակազմի և ԱԺ աշխատակազմի ներկայացուցիչներ: Ներկայացվել են նախագծային կարգավորումներ, որոնց առնչությամբ կողմերը ներկայացրել են դիտարկումներ և առաջարկություններ:

Պաշտպանն իր ելույթում, մասնավորապես, նշել է, որ այս քննարկումը վերը նշված խորհրդարանական լսումների շարունակությունն է: Պաշտպանը, կարևորել է նաև այս ուղղությամբ բոլորի ջանքերի մեկտեղումը՝ պատշաճ արդյունքի հասնելու նպատակով[373]:

Հաշվի առնելով այն, որ Սանիտարական նորմերի պահպանման հարցում առաջնահերթ դերակատարությունը Տեսչական մարմնինն է՝ Պաշտպանը 2025 թվականի տարեկան հաղորդման կազմման շրջանակում քննարկվող խնդիրների վերաբերյալ ներկայացված բողոքների քանակի, դրանց ընթացքի և արդյունքների մասին տեղեկատվություն է պահանջել նաև Տեսչական մարմնից:

Ի պատասխան՝ տեղեկացվել է, որ 2025 թվականի ընթացքում բազմաբնակարան շենքերի հարակից տարածքներում տարբեր ծառայությունների մատուցման *(փաբեր, հանրային սննդի կետեր, զվարճանքի կենտրոններ, ընթացիկ շինարարություն և այլն)* հետևանքով շենքերի բնակիչների հետ հարաբերվելու համակեցության կանոնների խախտման վերաբերյալ *(աղմուկի բարձր մակարդակ)* Տեսչական մարմնում ստացվել է 83 բողոք: Խնդրի կարգավորման նպատակով Տեսչական մարմնի կողմից հարուցվել է 83 վարչական վարույթ, որից 55-ը կարճվել է՝ վարչական իրավախախտման դեպքի բացակայության հիմքով, 26-ի դեպքում տրվել է խախտումները վերացնելու վերաբերյալ կարգադրագիր, իսկ 2 վարչական վարույթ ընթացքի մեջ է:

Սեփական նախաձեռնությամբ հարուցվել է թվով 22 վարչական վարույթ, որից 12-ը կարճվել է՝ վարչական իրավախախտման դեպքի բացակայության հիմքով, 3-ի դեպքում տրվել է խախտումները վերացնելու վերաբերյալ կարգադրագիր, իսկ 7-ը ընթացքի մեջ է:

Հաշվի առնելով վերոգրյալը և վերահաստատելով նախորդ տարվա տարեկան հաղորդմամբ կատարված առաջարկը՝ Պաշտպանը ևս մեկ անգամ հրավիրում է իրավասու պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների ուշադրությունը վերոգրյալ խնդիրներին և կոչ անում այլ պետությունների հաջողված փորձի հաշվառմամբ՝ մշակել դրանց հաղթահարման պատշաճ կառուցակարգեր (որոնք կապահովեն բնակչության հիմնարար իրավունքները) և հետևողականորեն իրացնել դրանք: Ընդ որում, այդ կառուցակարգերը կարող են վերաբերել ինչպես անհրաժեշտ օրենսդրական, այնպես էլ այլ փոփոխությունների իրականացմանը: Պաշտպանը հետևողական է լինելու վերոգրյալ խնդիրների համակարգային լուծումների մշակման հարցում:

---

[372] Հասանելի է հետևյալ հղումով՝ https://ombuds.am/am/site/ViewNews/3318 (20/03/2026թ.-ի դրությամբ):

[373] Հասանելի է հետևյալ հղումով՝ https://ombuds.am/am/site/ViewNews/3371 (20/03/2026թ.-ի դրությամբ):

5. Պալիատիվ բժշկական օգնության տրամադրման հետ կապված խնդիրներ

Պալիատիվ խնամքը նպատակ ունի բարելավելու կյանքին սպառնացող, ինչպես նաև անբուժելի հիվանդության հետ կապված ֆիզիկական, հոգեբանական, սոցիալական մարտահրավերներ ունեցող անձանց և նրանց ընտանիքների կյանքի որակը, նպաստելու նրանց հարմարավետ, արժանապատիվ կյանքով ապրելուն: Պալիատիվ խնամքն իրականացվում է վաղ հայտնաբերման, ճիշտ գնահատման ու բուժման միջոցով[374]:

Պալիատիվ բժշկական օգնության տրամադրման հետ կապված խնդիրները 2025 թվականին նույնպես շարունակել են գտնվել Մարդու իրավունքների պաշտպանի ուշադրության ներքո:

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը նշել է, որ չափազանց կարևոր է հնարավորինս շուտ բացահայտել պալիատիվ խնամքի կարիքները և պալիատիվ խնամքի ծառայություններ մատուցել խնամքի բոլոր մակարդակներում:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Խորհրդարանական վեհաժողովը կոչ է արել Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին ինչպես մեծահասակների, այնպես էլ երեխաների համար, ովքեր ունեն պալիատիվ խնամքի կարիք, ձեռնարկել հետևյալ միջոցները՝ պալիատիվ խնամքի ծառայություններն ուժեղացնելու և որակյալ պալիատիվ խնամքի հասանելիությունն ապահովելու համար.

- ճանաչել պալիատիվ խնամքը, որպես մարդու իրավունք, սահմանել այն որպես առողջապահական համակարգի մաս և անհրաժեշտ ռեսուրսներ տրամադրել դրա համար,
- ինտեգրել պալիատիվ խնամքը առողջապահական համակարգի բոլոր ծառայությունների և պարամետրերի մեջ, մասնավորապես, ընդլայնել պալիատիվ խնամքի ծառայությունները, որոնք տրամադրվում են կյանքին սպառնացող կամ կյանքը սահմանափակող քրոնիկական հիվանդություններ ունեցող բոլոր անձանց,
- ապահովել ցավի բուժման հասանելիությունը՝ վերացնելով իրավական խոչընդոտները, որոնք սահմանափակում են ցավազրկող դեղամիջոցների հասանելիությունը պալիատիվ խնամքի համատեքստում,
- լուծել կրթական և վերաբերմունքի խոչընդոտները՝ բարձրացնելով առողջապահական մասնագետների և հանրության շրջանում ցավի համապատասխան և արդյունավետ կառավարման, ներառյալ՝ օփիոիդների վրա հիմնված բուժումների մասին իրազեկվածությունը,
- ապահովել պալիատիվ խնամքի վերաբերյալ համապատասխան ուսուցում առողջապահության ոլորտի մասնագետների համար, մասնավորապես, ներառել հիմնական պալիատիվ խնամքի ուսուցումը բժշկական և բուժքույրական դպրոցներում և ապահովել պալիատիվ խնամքի վերաբերյալ շարունակական մասնագիտական կրթություն,
- ճանաչել պալիատիվ խնամքը՝ որպես բժշկական մասնագիտություն,
- համակարգված եղանակով տրամադրել հոգեբանական, հուզական և հոգևոր աջակցություն հիվանդություն ունեցող անձանց և ընտանիքներին,
- բարելավել պալիատիվ խնամքի մասին հանրային իրազեկվածությունը լրատվամիջոցների և տեղեկատվական արշավների միջոցով,

---

[374] Տե՛ս Առողջապահության համաշխարհային կազմակերպություն (ԱՀԿ), «Պալիատիվ խնամք», հասանելի է https://www.who.int/news-room/fact-sheets/detail/palliative-care հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

• միջոցներ ձեռնարկել՝ խթանելու կառավարության և քաղաքացիական հասարակության միջև համագործակցությունը պալիատիվ խնամքի ծառայությունների մատուցման հարցում,

• խորհրդակցել կյանքին սպառնացող կամ կյանքը սահմանափակող պայմաններով ապրող մարդկանց, ինչպես նաև նրանց խնամողների և առողջապահական մասնագետների հետ՝ պալիատիվ խնամքին առնչվող քաղաքականության և ծառայությունների մշակման գործընթացում և այլն[375]:

Առողջապահության համաշխարհային ասամբլեան ևս հորդորել է անդամ պետություններին անհրաժեշտության դեպքում մշակել, ամրապնդել և կիրառել պալիատիվ խնամքի քաղաքականությունը, աջակցել առողջապահական համակարգերի համապարփակ հզորացմանը՝ ինտեգրելու ապացույցների վրա հիմնված, ծախսարդյունավետ և արդար պալիատիվ խնամքի ծառայություններ, ապահովել խնամքի շարունակականությունը բոլոր մակարդակներում, անհրաժեշտության դեպքում ապահովել համապատասխան ներքին ֆինանսավորում և մարդկային ռեսուրսների բաշխում պալիատիվ խնամքի նախաձեռնությունների համար, ներառյալ պալիատիվ խնամքի մշակումն ու իրականացումը, քաղաքականությունը, կրթությունը և ուսուցումը, ներառել պալիատիվ խնամքը, որպես շարունակական կրթության անբաժանելի բաղադրիչ և ուսուցում, որն առաջարկվում է խնամք տրամադրողներին՝ համաձայն նրանց դերերի և պարտականությունների, խթանել համագործակցությունը կառավարությունների և քաղաքացիական հասարակության, ներառյալ հիվանդություն ունեցող անձանց միջև և այլն[376]:

Մարդու իրավունքների պաշտպանի 2025 թվականի մշտադիտարկման արդյունքները ցույց են տալիս, որ պալիատիվ խնամքի տրամադրման ոլորտում շարունակել են արդիական մնալ նախկին տարեկան հաղորդումներում բարձրացված խնդիրները[377]:

Այսպես, օրինակ, 2025 թվականին շարունակել է արդիական մնալ պալիատիվ խնամքի տրամադրման հասանելիության հետ կապված խնդիրը:

Խնդրահարույց է, որ Առողջապահության նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ արտահիվանդանոցային պայմաններում պալիատիվ բժշկական օգնությունն ու սպասարկումը պետական պատվերի շրջանակներում

---

[375] Հասանելի է https://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-XML2HTML-en.asp?fileid=25214&lang=en հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

[376] Տե՛ս Առողջապահության համաշխարհային ասամբլեայի WHA67.19 բանաձևը, 2014 թվականի մայիսի 24, հասանելի է https://apps.who.int/gb/ebwha/pdf_files/WHA67/A67_R19-en.pdf հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

[377] Տե՛ս, 2024 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր՝ 688-691, հասանելի է https://ombuds.am/images/files/4d1335361f1f7e9fbcc1cfc10679701e.pdf հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ: Տե՛ս, 2023 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր՝ 157-162, հասանելի է https://ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

իրականացվել է ոչ բոլոր մարզերում, իսկ հիվանդանոցային պայմաններում՝ միայն Երևան քաղաքի բժշկական հաստատություններում:

2025 թվականի ընթացքում շարունակել են արդիական մնալ պալիատիվ խնամքի կարիք ունեցող բոլոր թիրախային խմբերին, այդ թվում՝ վաղ հայտնաբերման փուլում դրա տրամադրումը երաշխավորելու, պատշաճ գնահատում իրականացնելու հետ կապված խնդիրները:

Այսպես, օրինակ, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի մշտադիտարկման այցի ընթացքում պարզ է դարձել, որ հաստատությունում առկա էր շահառուների պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման տրամադրման համար համապատասխան գնահատում իրականացնելու անհրաժեշտություն:

Առողջապահության նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2025 թվականի դրությամբ նախարարությունը խնամքի հաստատություններում գտնվող 18 տարեկան և բարձր տարիքի անձանց պալիատիվ բժշկական օգնության տրամադրման ու սպասարկման գնահատման գործառույթ չունի: Երեխաների շուրջօրյա խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում մեկնարկել է և ընթացքի մեջ է գտնվում երեխաների գնահատման գործընթացը:

Բացի այդ, ըստ Առողջապահության նախարարության տրամադրած տեղեկատվության՝ 2025 թվականի հունվարից մեկնարկել է մանկական պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման արտահիվանդանոցային պիլոտային շարժական (մոբիլ) ծառայությունը, որի տևողությունը սահմանվել էր 6 ամիս, և շահառու կարող էին հանդիսանալ միաժամանակ առավելագույնը 40 երեխա, այնուհետև 2025 թվականի հուլիսի 1-ից ծառայությունը ընդլայնվել է և սահմանվել է որպես շարունակական ծրագիր, շահառուների թիվը սահմանվել էր 70: Հաստատվել են մանկական պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման արտահիվանդանոցային շարժական (մոբիլ) ծառայության գործունեության կազմակերպման գործընթացին առնչվող բժշկական փաստաթղթերի ձևերը և դրանց լրացման կարգը (Առողջապահության նախարարի 2025 թվականի հունվարի 15-ի թիվ 05-Ն հրաման): Բացի այդ, լրամշակման փուլում է գտնվում Առողջապահության նախարարի 2017 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 45-Ն հրամանի հավելվածով հաստատված «Պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման տրամադրման չափորոշիչ»-ը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Մարդու իրավունքների պաշտպանը խիստ կարևորում է բոլոր թիրախային խմբերին, այդ թվում վաղ հայտնաբերման նպատակով, միջազգային չափորոշիչների հաշվառմամբ գնահատումների իրականացմանն ու պատշաճ պալիատիվ բժշկական օգնության տրամադրմանն ուղղված գործուն միջոցների ձեռնարկումը:

Առողջապահության նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2025 թվականի ընթացքում իրականացվել են մի շարք միջոցառումներ դեղապահովումն, այդ թվում՝ օփիոիդային ցավազրկող դեղամիջոցների հասանելիությունն ապահովելու ուղղությամբ: Մարդու իրավունքների պաշտպանը կարևորում է նշված դեղամիջոցների հասանելիության ապահովման շարունակականության երաշխավորումը:

Մարդու իրավունքների պաշտպանը նաև խիստ կարևորում է պալիատիվ խնամքի տրամադրման վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացումը ինչպես հանրության, այնպես էլ մասնագետների շրջանում:

Խնդրահարույց է, որ Առողջապահության նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2025 թվականի ընթացքում ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ ուռուցքաբանության ամբիոնի կողմից իրականացվել է «Պալիատիվ խնամք» ՇՄՋ կրեդիտավորված դասընթաց, որին մասնակցել է ընդամենը 10 ավագ բուժաշխատող:

Ուստի, հաշվի առնելով վերոգրյալը՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ 2025 թվականին շարունակել է արդիական մնալ հանրության ու մասնագետների շրջանում պալիատիվ խնամքի վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացման հետ կապված խնդիրը: 2025 թվականին, ի թիվս այլնի, շարունակել է արդիական մնալ նաև պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման ոլորտում պալիատիվ խնամքի կարիք ունեցող, նրանց բժշկական օգնություն տրամադրող անձանց ու քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ներգրավմամբ համապարփակ քաղաքականության իրականացման հետ կապված խնդիրը:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ ի թիվս այլնի, անհրաժեշտ է՝

- ✓ ***միջոցներ ձեռնարկել՝ երաշխավորելու պալիատիվ խնամքի տրամադրման հասանելիությունը Հայաստանի Հանրապետության բոլոր բնակավայրերում,***
- ✓ ***միջոցներ ձեռնարկել՝ երաշխավորելու բոլոր թիրախային խմբերին, այդ թվում՝ վաղ հայտնաբերման նպատակով, միջազգային չափորոշիչների հաշվառմամբ գնահատումների իրականացումն ու պատշաճ պալիատիվ բժշկական օգնության տրամադրումը,***
- ✓ ***երաշխավորել օփիոիդային ցավազրկող դեղամիջոցների հասանելիության ապահովման շարունակականությունը թիրախային բոլոր խմբերի համար,***
- ✓ ***միջոցներ ձեռնարկել՝ ուղղված հանրության ու մասնագետների շրջանում պալիատիվ խնամքի տրամադրման վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացմանը,***
- ✓ ***միջոցներ ձեռնարկել՝ բժշկական օգնության և սպասարկման ոլորտում պալիատիվ խնամքի կարիք ունեցող, նրանց բժշկական օգնություն տրամադրող անձանց ու քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ներգրավմամբ համապարփակ քաղաքականության իրականացման ուղղությամբ:***

ԳԼՈՒԽ 5. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

1. Կենսաթոշակի իրավունքի իրացման հետ կապված գործնական և օրենսդրական խնդիրներ

1.1. Արտոնյալ պայմաններով կենսաթոշակ նշանակելու խնդիր

Մարդու իրավունքների պաշտպանն իր գործունեությունն ամփոփող տարեկան հաղորդումներում բազմիցս բարձրացրել է արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունքի իրացման հետ կապված խնդիրը[378]: Այս առումով մտահոգիչ է այն, որ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից տարիներ շարունակ բարձրացվող հարցերին լուծումներ չեն տրվում և համակարգային առումով կենսաթոշակի այս տեսակի հետ կապված հարցերը շարունակում են խնդրահարույց մնալ:

2025 թվականի ընթացքում ՄԻՊ աշխատակազմ շարունակել են ստացվել կենսաթոշակի այս տեսակին վերաբերող բողոքներ: Այսպես, Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով քաղաքացին հայտնել է, որ արտոնյալ պայմաններով կենսաթոշակ նշանակելու խնդրով դիմել է Միասնական սոցիալական ծառայության (այսուհետ՝ ՄՍԾ) տարածքային կենտրոն, սակայն դիմումը մերժվել է: Ըստ բողոք ներկայացրած անձի՝ իր աշխատանքային ստաժում չեն հաշվառվել 03.12.1998-30.12.2003 թվականներին «Դի Սի Էյ» ադամանդագործական ընկերություն ՓԲԸ-ում՝ որպես ալմաստից ադամանդ ստացող (առանց ռոբոտատեխնիկայի կիրառման), ինչպես նաև 09.02.2010-01.04.2021 թվականներին «Լորի» ՍՊ ընկերությունում՝ որպես ալմաստից ադամանդ ստացող՝ նիստավորող աշխատելու ժամանակահատվածները, որոնց վերաբերյալ առկա են գրառումներ իր աշխատանքային գրքույկում: Խնդրել է Պաշտպանի աջակցությունն իրեն արտոնյալ պայմաններով կենսաթոշակ նշանակելու հարցում:

Բողոքի քննարկման շրջանակում Պաշտպանը պարզաբանումներ է պահանջել ինչպես ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից, այնպես էլ այլ իրավասու պետական մարմիններից: Ի պատասխան՝ նախարարությունից հայտնել են, որ «Պետական կենսաթոշակների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ թիվ 2 ցուցակով արտոնյալ պայմաններով կենսաթոշակ նշանակվում է 59 տարին լրացած անձին, եթե նա ունի առնվազն 25 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ, առնվազն 20 օրացուցային տարին աշխատել է վնասակար, ծանր պայմաններում (թիվ 2 ցուցակ), մինչև 2014 թվականի հունվարի 1-ը առնվազն 10 օրացուցային տարին աշխատել է վնասակար, ծանր պայմաններում և այդ ժամանակահատվածում լրիվ աշխատանքային օրը կատարել արտոնյալ կենսաթոշակի իրավունք տվող աշխատանք:

Հավելել են, որ Կառավարության 2012 թվականի հունվարի 12-ի թիվ 12-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) հաստատված՝ արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող արտադրությունների, աշխատանքների, մասնագիտությունների, պաշտոնների և ցուցանիշների 11-րդ հատվածի թիվ 21511000 ծածկագրի 10-րդ կետի համաձայն՝ արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք ունեն առանց ռոբոտատեխնիկայի կիրառման ալմաստներից ադամանդ մշակող բանվորները:

Նշվել է նաև, որ Որոշմամբ հաստատված 2-րդ հավելվածով սահմանված են «Պետական կենսաթոշակների մասին» օրենքով կենսաթոշակ նշանակելու համար

[378] Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի վերաբերյալ 2019, 2020, 2021, 2023 և 2024 թվականների տարեկան հաղորդումները (համապատասխանաբար՝ էջեր 62-64, 84-89, 97-103, 45-48, 692-696):

աշխատանքային ստաժը հաշվարկելու, դրանում աշխատանքային կամ այլ գործունեության առանձին տեսակներ հաշվառելու կանոնները (այսուհետ՝ Կանոններ): Կանոնների 39-րդ կետի համաձայն՝ եթե աշխատանքային գրքույկում չկան արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող աշխատանքի բնույթի մասին բավարար՝ ՀՀ կառավարության հաստատած թիվ 1, 2, 3 և 4 ցուցակներում նշված մասնագիտություններին և պաշտոններին ամբողջությամբ համապատասխանող տվյալներ, ապա աշխատանքի բնույթը հաստատվում է կազմակերպության տված՝ արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող աշխատանքային ստաժի մասին տեղեկանքով:

Միաժամանակ, տեղեկացրել են, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2012 թվականի հուլիսի 20-ի թիվ 66-Ն հրամանի թիվ 1 հավելվածի 17-րդ կետի համաձայն՝ երբ կենսաթոշակ նշանակող մարմինների կատարած ստուգումներով հիմնավորվում է, որ այդ աշխատողները կատարում են իրենց մասնագիտությանը չհամապատասխանող աշխատանքներ կամ աշխատում են համատեղությամբ, ապա նրանց արտոնյալ պայմաններով կենսաթոշակ չի նշանակվում:

Ըստ նախարարությունից ստացված տեղեկության՝ բողոք ներկայացրած անձը դիմել է ՄՍԾ տարածքային կենտրոն՝ որպես ալմաստից ադամանդ ստացող՝ նիստավորող, արտոնյալ պայմաններով՝ ըստ թիվ 2 ցուցակի կենսաթոշակ նշանակելու համար: Ըստ աշխատանքային գրքույկում կատարված գրառումների՝ վերջինս 1993 թվականի դեկտեմբերի 1-ից սկսած ադամանդագործական կազմակերպություններում (25.01.1993-14.09.1995թթ., 17.01.1996-02.11.1998թթ.՝ Նոր-Հաճընի «Շողակն» գործարան, 03.12.1998-30.12.2003թթ. «ԴԻ ՍԻ ԷՅ» Հայաստանի ադամանդագործական ընկերություն, 18.03.2002-13.01.2005թթ. և 18.01.2006-28.06.2006թթ. «Շողակն» ՓԲԸ-ում, 09.02.2010-01.04.2021թթ.՝ «Լորի» ՍՊԸ-ում, 2021 թվականի մատի 29-ից առ այսօր «ԷՅ ԴԻ ԷՄ ԴԱԱՅՄՈՆԴՍ» ՍՊԸ-ում) աշխատել է որպես ալմաստից ադամանդ նիստավորող:

Հայտնել են նաև, որ «ԴԻ ՍԻ ԷՅ» Հայաստանի ադամանդագործական ընկերությունում, «Շողակն» ՓԲԸ-ում, «Լորի» ՍՊԸ-ում և «ԷՅ ԴԻ ԷՄ ԴԱԱՅՄՈՆԴՍ» ՍՊԸ-ում 1999 թվականի սեպտեմբերի 1-ից հետո աշխատելու ժամանակահատվածներում արտոնյալ կենսաթոշակի իրավունք տվող աշխատանքային ստաժը, մասնավորապես, առանց ռոբոտատեխնիկայի կիրառման աշխատանքը հիմնավորելու նպատակով, կենսաթոշակ նշանակող ստորաբաժանման կողմից հարցումներ են կատարվել Հայաստանի ազգային արխիվ և կազմակերպություններ: Կատարված հարցմանն ի պատասխան՝ տեղեկացվել է, որ Կոտայքի մարզում գործող մի շարք ադամանդագործական կազմակերպություններում «ՇՈՂԱՆԿ» ՓԲԸ, «ԼՈՐԻ» ՍՊԸ, «ԱՐԵՎԱԿՆ» ՓԲԸ, «ԴԱՅՄՈԹԵՔ» ՓԲԸ, «ԱԳԱԹԵՍ» ՓԲԸ, «ՎԻ ԴԻ ԷՅ ԴԱՅՄՈՆԴ», «ԷՅ ԴԻ ԷՄ ԴԱՅՄՈՆԴՍ» ՓԲԸ դեռևս 2002 թվականից ի վեր ալմաստ մշակելու աշխատանքներն իրականացվում են իսրայելական և հնդկական հայտնի «SARINE» և «OGI» ճշգրիտ սարքավորումների օգտագործմամբ, որոնց միջոցով ալմաստի հումքը եռաչափ սկանավորվում է, նշմարվում է հումքի կտրման օպտիմալ գծանշումը, որից հետո իրականացվում է կտրում լազերային կտրող սարքի միջոցով:

Միաժամանակ, տեղեկացրել են, որ ըստ բողոք ներկայացրած անձի կողմից ներկայացված աշխատանքային գրքույկում կատարված գրառումների՝ վերջինս 09.02.1989-01.09.1999թթ. ժամանակահատվածում աշխատել է Նոր-Հաճընի թիվ 1 միջնակարգ դպրոցում որպես ուսուցիչ, համատեղությամբ «Շողակն» գործարանում՝ որպես ալմաստից ադամանդ նիստավորող աշխատելու՝ 25.01.1993-14.09.1995թթ., 17.01.1996-02.11.1998թթ. և «ԴԻ ՍԻ ԷՅ» Հայաստանի ադամանդագործական

ընկերությունում՝ 03.12.1998-01.09.1999թթ. աշխատելու ժամանակահատվածները չեն հաշվառվել արտոնյալ կենսաթոշակի իրավունք տվող աշխատանքային ստաժում, իսկ արխիվից ստացված պատասխանով չի հիմնավորվել «Շողակն» ՓԲԸ-ում բողոք ներկայացրած անձի առանց ռոբոտատեխնիկայի կիրառման արտոնյալ կենսաթոշակի՝ 18.03.2002-13.01.2005թթ. և 18.01.2006-28.06.2006թթ. ժամանակահատվածների աշխատանքային ստաժը:

Միաժամանակ, նշվել է, որ «ԷՅ ԴԻ ԷՄ ԴԱՅՄՈՆԴՍ» ՍՊԸ-ի 2024 թվականի հոկտեմբերի 3-ի գրության համաձայն՝ բողոք ներկայացրած անձը 2021 թվականի մարտի 29-ից աշխատում է ընկերությունում որպես ալմաստից ադամանդ նիստավորող և կազմակերպությունում արտոնյալ պայմաններով աշխատանքային ստաժ սահմանված չէ, «Լորի» ՍՊԸ կատարված հարցումները հետ են վերադարձվել «Հայփոստ» ՓԲԸ-ի կողմից «լուծարված է» գրառմամբ:

Հավելել են, որ «Լորի» ՍՊԸ-ում աշխատելու ժամանակահատվածը (առանց ռոբոտատեխնիկայի կիրառման աշխատանքը հիմնավորելու դեպքում) արտոնյալ կենսաթոշակի իրավունք տվող աշխատանքային ստաժում հաշվառելու դեպքում էլ, ըստ ներկայացված փաստաթղթերի, բողոք ներկայացրած անձը չունի օրենքով սահմանված 20 օրացուցային տարվա արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող աշխատանքային ստաժ, ուստի բողոք ներկայացրած անձին արտոնյալ պայմաններով աշխատանքային կենսաթոշակ նշանակելու հիմքեր չկան:

Տրամադրված պարզաբանման վերաբերյալ բողոք ներկայացրած անձը Պաշտպանի աշխատակազմ լրացուցիչ տեղեկատվություն է ներկայացրել առ այն, որ ալմաստներից ադամանդ մշակման աշխատանքներն իրականացրել է առանց ռոբոտատեխնիկայի կիրառման: Համատեղությամբ աշխատելու մասով հայնել է, որ այդ աշխատանքը կատարել է բացառապես հիմնական աշխատանքից ազատ ժամանակ: Հավելել է, որ բողոքում բարձրացված նույն հարցով դիմել է դատարան:

Բողոք ներկայացրած անձի դատարան դիմելու հանգամանքը հաստատել է նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը՝ տեղեկացնելով, որ 2025 թվականի նոյեմբերի 18-ին բողոք ներկայացրած անձն արտոնյալ պայմաններով կենսաթոշակ նշանակելու հարցով հայց է ներկայացրել ՀՀ վարչական դատարան, որտեղ, որպես երրորդ անձ, ներգրավված է ՄՍԾ-ն: Ըստ այդմ, հավելել են, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետի համաձայն՝ դիմումով հարուցված վարչական վարույթը կարճվում է, եթե դատարանի վարույթում գտնվում է միևնույն անձանց միջև, միևնույն առարկայի վերաբերյալ և միևնույն հիմքերով գործ:

Այս առումով հիշատակման արժանի է նաև «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքի այն պահնջը, որի համաձայն՝ Պաշտպանը բողոքի կապակցությամբ սկսված քննարկումը դադարեցնում է այն դեպքում, երբ բողոքի քննարկման ընթացքում անձը դրանում բարձրացված նույն հարցով դիմել է դատարան, առկա է նույն հարցի վերաբերյալ դատարանի վերջնական դատական ակտ: Ավելին, ըստ նույն սահմանադրական օրենքի՝ Պաշտպանը չի կարող դատարաններից ու դատավորներից ստանալ բողոքի քննարկման ընթացքում առաջացած հարցերի վերաբերյալ պարզաբանումներ: Պաշտպանն իրավասու չէ միջամտելու դատական վարույթին կամ դատավորների լիազորությունների իրականացմանը կոնկրետ գործով: Հարկ է նշել, որ «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա է տեղեկատվություն առ այն, որ ներկայում տվյալ հարցի առնչությամբ նշանակված է

դատական նիստ: Դատական գործի ընթացքի նկատմամբ Պաշտպանի աշխատակազմում կիրականացվի հետագա մշտադիտարկում:

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված մեկ այլ բողոքով քաղաքացին հայտնել է, որ 2004 թվականի դեկտեմբերի 20-ից աշխատել է «Գյումրու Ն. Ա. Մելիքյանի անվան թիվ 2 պոլիկլինիկա» ՓԲ ընկերության ռենտգեն-ֆլուորոգրաֆիայի կաբինետում և մինչ 2025 հունվարի 21-ը կատարել է ռենտգեն-լաբորանտի համապատասխան գործառույթներ:

Նշել է, որ 2005 թվականին անցել է մասնագիտական վերապատրաստում ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ»-ի Ճառագայթային ախտորոշման ամբիոնում (դասընթացի անվանումը՝ «Քույրական գործ, ճառագայթային ախտորոշում»)՝ ստանալով ճառագայթային ախտորոշման բուժքրոջ որակավորում: Հավելել է, որ վերապատրաստումից հետո փաստաթղթերը ներկայացրել է «Գյումրու Ն. Ա. Մելիքյանի անվան թիվ 2 պոլիկլինիկա» ՓԲ ընկերության տնօրենին և անձնակազմի կառավարման բաժին:

Հայտնել է նաև, որ հինգ տարին մեկ Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանում մասնակցել է ռենտգեն լաբորանտների վերապատրաստման դասընթացների, գրանցված է ՀՀ ԱՆ «Այրվածքաբանության և մաշկաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ում և իրավունք ունի աշխատել իոնացնող ճառագայթման աղբյուրների օգտագործմամբ ռենտգեն կաբինետներում:

Ըստ պնդման՝ տնօրենի կարգադրությամբ մինչև 2025 թվականի հունվարի 21-ն աշխատել է ռենտգեն-ֆլուորոգրաֆիայի կաբինետում, որտեղ ընդգրկված են եղել երեք աշխատակից՝ մեկ բժիշկ և երկու լաբորանտ:

Ըստ բողոք ներկայացրած անձի՝ տարիներ շարունակ իր աշխատանքային պարտականությունները կատարել է բարեխղճորեն և որպես առողջության համար վտանգավոր պայմաններում աշխատող՝ օրենքով սահմանված կարգով պարբերաբար բժշկական ստուգումների է ենթարկվել:

Բողոք ներկայացրած անձը հավելել է, որ 55 տարին լրանալուց հետո արտոնյալ պայմաններով կենսաթոշակ ստանալու համար գործատուից վերցրած տեղեկանքից իրազեկվել է, որ 2005-2022 թվականներին աշխատել է որպես սովորական բուժքույր, մինչդեռ փաստացի կատարել է ռենտգեն-լաբորանտի աշխատանք:

Հայտնել է նաև, որ 2006 թվականի հունվարի 3-ի թիվ 123 աշխատանքային պայմանագրում 2023 թվականի մարտի 24-ին փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ լրացուցիչ համաձայնագրի համաձայն՝ պայմանագրի 1.2-րդ կետը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. «աշխատողը նշանակվում է ռենտգեն-ֆլուորոգրաֆ կաբինետի ռենտգեն լաբորանտի պաշտոնում 0.75 դրույքով»:

Նշել է նաև, որ արտոնյալ պայմաններով կենսաթոշակ ստանալու համար դիմել է ՄՍԾ տարածքային կենտրոն, սակայն մերժվել է օրենսդրությամբ պահանջվող 15 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ չունենալու պատճառաբանությամբ: Իսկ իր աշխատանքային գործունեության վերաբերյալ տրամադրած լրացուցիչ տեղեկությունը համարվել է անհիմն այն պատճառաբանությամբ, որ 2006 թվականի հունվարի 3-ի թիվ 123 աշխատանքային պայմանագրում՝ 2023 թվականի մարտի 24-ին կատարված փոփոխությունները չեն կարող հիմք հանդիսանալ աշխատանքային ստաժը արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող ստաժ համարելու համար: Բողոք ներկայացրած անձը խնդրել է Պաշտպանի աջակցությունն արտոնյալ պայմաններով կենսաթոշակ ստանալու հարցում:

Բողոքի քննարկման շրջանակում Պաշտպանը պարզաբանումներ ներկայացնելու պահանջով գրություն է հասցեագրել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն: Ի պատասխան՝ հայտնել են, որ Կառավարության 2012 թվականի հունվարի 12-ի թիվ 12-Ն որոշմամբ հաստատված արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող թիվ 1 ցուցակի XVI բաժնի («Առողջապահական հիմնարկներ») թիվ 12300000-24577 ծածկագրով նախատեսված են՝ ռենտգենալաբորանտները, այդ թվում՝ ռենտգենավիրահատական, անոթագրական, ֆլյուորագրական կաբինետներում, իսկ թիվ 12300000-24713 ծածկագրով նախատեսված են՝ ռենտգենային բաժանմունքների (կաբինետների) միջին բժշկական անձնակազմը, ինչպես նաև միջին բժշկական անձնակազմը, որը մշտապես աշխատում է ռենտգենավիրահատական, անոթագրական կաբինետներում:

Հավելել են, որ Կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի թիվ 665-Ն որոշմամբ հաստատված կանոնների 39-րդ կետի համաձայն՝ եթե աշխատանքային գրքույկում չկան արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող աշխատանքի բնույթի մասին բավարար՝ ՀՀ կառավարության հաստատած թիվ 1, 2, 3 և 4 ցուցակներում նշված մասնագիտություններին և պաշտոններին ամբողջությամբ համապատասխանող տվյալներ, ապա աշխատանքի բնույթը հաստատվում է կազմակերպության տված՝ արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող աշխատանքային ստաժի մասին տեղեկանքով:

Միևնույն ժամանակ, նշել են, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2012 թվականի հուլիսի 20-ի թիվ 66-Ն հրամանով հաստատված 29-րդ կետի համաձայն՝ բացի կենսաթոշակային արտոնություններից, տրվում են նաև մի շարք այլ արտոնություններ (լրացուցիչ արձակուրդ, հատուկ սնունդ, կրճատ աշխատանքային օր և այլն), սակայն դրանք արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունքի հիմք լինել չեն կարող:

Տեղեկացրել են նաև, որ պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանում առկա տեղեկատվության համաձայն՝ բողոք ներկայացրած անձը դիմել է արտոնյալ պայմաններով՝ ըստ թիվ 1 ցուցակի աշխատանքային կենսաթոշակ նշանակելու համար 2022 թվականի դեկտեմբերի 1-ին և 2024 թվականի ապրիլի 8-ին: Հավելել են, որ դիմումին կից ներկայացված փաստաթղթերի համաձայն՝ աշխատանքային գրքույկի գրառումների և արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող աշխատանքային ստաժի մասին տեղեկանքի համաձայն՝ վերջինս 2004 թվականի դեկտեմբերի 20-ից մինչև դիմելու ժամանակ աշխատել է ֆլյուրոգրաֆ կաբինետում որպես ֆլյուրոգրաֆի բուժքույր, որը տեղեկանքում նշված 12300000-24577 ծածկագրով նախատեսված չէ, ուստի կենսաթոշակի դիմումը մերժվել է:

Դրա հետ մեկտեղ, նշել են, որ թիվ 1 ցուցակի XVI բաժնով («Առողջապահական հիմնարկներ») արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք ունեն ֆլյուորագրական կաբինետներում աշխատող ռենտգենալաբորանտները, իսկ բուժքույրերն այդ իրավունքից չեն օգտվում: Հավելել են, որ 2004 թվականի դեկտեմբերի 20-ից մինչև դիմելու օրն ընկած ժամանակահատվածում, որպես ֆլյուորագրական կաբինետի բուժքույր, աշխատած ժամանակահատվածներն արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող աշխատանքային ստաժում հաշվառվել չեն կարող:

Միևնույն ժամանակ, պատասխան գրությամբ ներկայացվել են տվյալներ այն մասին, որ «Գյումրու Ն. Ա. Մելիքյանի անվան թիվ 2 պոլիկլինիկա» ՓԲ ընկերության պարզաբանումը նրա կատարած աշխատանքի վերաբերյալ չի հանդիսանում պատշաճ փաստաթուղթ և չի կարող հիմք ընդունվել խնդրո առարկա ժամանակահատվածը

արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող մասնագիտական ստաժում հաշվառելու համար և արտոնյալ պայմաններով կենսաթոշակ նշանակելու համար պահանջվող առնվազն 15 օրացուցային տարվա առանձնապես վնասակար, առանձնապես ծանր պայմաններում մասնագիտական աշխատանքային ստաժ չունենալու պատճառով բողոք ներկայացրած անձը արտոնյալ պայմաններով ըստ թիվ 1 ցուցակի կենսաթոշակի իրավունք չունի:

Նշվածի հաշվառմամբ՝ արտոնյալ պայմաններով կենսաթոշակի նշանակման խնդրով բողոք ներկայացրած անձը դիմել է դատարան[379]: ՄԻՊ աշխատակազմում ուսումնասիրվել է «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում հրապարակված դատական ակտը: Ըստ այդմ, 2025 թվականի սեպտեմբերի 30-ին Վարչական դատարանի կողմից կայացված վճռով դատարանը բողոք ներկայացրած անձի հայցը բավարարել է և, ի թիվս այլնի, արձանագրել է, որ եթե անձը փաստացի աշխատել է որպես ռենտգենալաբորանտ, այդ թվում՝ ռենտգենավիրահատական, անոթագրական կամ ֆլյուորագրական բաժանմունքներում, և այդ աշխատանքը կատարվել է առանձնապես վնասակար պայմաններում, ապա նա կարող է ունենալ արտոնյալ պայմաններով կենսաթոշակի նշանակման իրավունքը, եթե նաև բավարարված են տարիքի և աշխատանքային ստաժի պահանջները: *Հետևաբար՝ կենսաթոշակի իրավունքը այս պարագայում օրենսդրորեն հիմնավորված է, և վարչական մարմինը չի կարող մերժել նման դիմումն այն դեպքում, երբ ներկայացված են վկայագրեր, բնութագրեր կամ արխիվային տեղեկանքներ, որոնք հաստատում են տվյալ աշխատանքի բնույթը:*

Այսպիսով, վերոնշյալ ապացույցների համակցված գնահատմամբ Դատարանը հաստատված է համարել հետևյալ հանգամանքները՝ հայցվորը 2004 թվականից մինչև օրս իրականում իրականացրել է ռենտգենալաբորանտի աշխատանք, աշխատանքն իրականացվել է արտոնյալ պայմաններով՝ իոնացնող ճառագայթների ազդեցության ներքո, գործատուն պաշտոնապես ճանաչել և փաստաթղթերով հաստատել է, որ անվանման տարբերությունը եղել է տեխնիկական սխալ:

Վերոգրյալի հիման վրա Դատարանը եզրահանգել է, որ հայցվորը փաստացի աշխատել է որպես ռենտգենալաբորանտ, ըստ այդմ՝ իր աշխատանքը եղել է արտոնյալ պայմաններով աշխատանք, իսկ գործատուի բացթողումը չի կարող դրվել աշխատողի վրա՝ որպես իրավազրկման հիմք: Ընդ որում, հարկ է փաստել, որ ՄՍԾ-ի կողմից մերժման իրավական հիմքերը սույն գործի շրջանակներում չեն ապացուցվել:

Անհրաժեշտ է ընդգծել, որ վերոնշյալ հարցերի վերաբերյալ Վարչական դատարանը 2025 թվականի ապրիլի 7-ի թիվ ՎԴ/8782/05/24 վարչական գործի շրջանակներում նշել է, որ այն դեպքում, երբ անձի կատարած աշխատանքի բնույթը (զբաղեցրած պաշտոնում կատարած պարտականությունները) համապատասխանում է ՀՀ կառավարության վերը նշված որոշմամբ հաստատված ցուցակով սահմանված աշխատանքների բնույթին (ցուցակում նշված պաշտոններ զբաղեցնող անձանց պարտականություններին), ապա միայն զբաղեցրած պաշտոնի անվանման անհամապատասխանության հիմքով անձին արտոնյալ պայմաններով կենսաթոշակի անցնելու իրավունքից զրկելով, խախտվում է նրա՝ ՀՀ Սահմանադրության 3-րդ և 83-րդ հոդվածներով սահմանված հիմնարար իրավունքները[380]:

---

[379] Հիշեցման կարգով նշենք, որ Պաշտպանը բողոքը չի քննարկում, իսկ բողոքի կապակցությամբ սկսված քննարկումը դադարեցնում է նաև այն դեպքում, երբ բողոքի ուսումնասիրության կամ քննարկման ընթացքում անձը դրանում բարձրացված նույն հարցով դիմել է դատարան, առկա է նույն հարցի վերաբերյալ դատարանի վերջնական դատական ակտ:

[380] Տե՛ս Վարչական դատարանի 2025 թվականի ապրիլի 7-ի թիվ ՎԴ/8782/05/24 գործը:

Արդյունքում ստացվում է՝ եթե անձինք նմանատիպ դեպքերում դատարան չդիմեն՝ արտադատական կարգով արդյունքի հասնել չեն կարող: Այս համատեքստում Պաշտպանը վերահաստատում է դատական պրակտիկան կենսաթոշակի նշանակման յուրաքանչյուր դեպքում հաշվի առնելու անհրաժեշտությունը: Կարևոր է, որ կենսաթոշակային մարմինը նպաստի արտոնյալ պայմաններով կենսաթոշակի նշանակման գործընթացում առաջացող խնդիրների արագ և արդյունավետ լուծմանը: Դա կնպաստի կենսաթոշակային մարմնի նկատմամբ քաղաքացիների վստահության աճին և դատարանների ծանրաբեռնվածության թոթափմանը և, որ առավել կարևոր է, մարդիկ ստիպված չեն լինի ժամանակ և ֆինանսական միջոցներ ծախսել դիմելով դատարան: Նշվածի հետ մեկտեղ, անհրաժեշտ է ընդգծել, որ կենսաթոշակային մարմինը վարչարարություն իրականացնելիս պարտավոր է հաշվի առնել ոչ միայն գործող իրավական ակտերի պահանջները, այլև այդպիսի ակտերի նորմերը մեկնաբանելիս առաջնորդվել անձանց Սահմանադրությամբ երաշխավորված հիմնարար իրավունքների արդյունավետ իրացման կանխավարկածով: 2025 թվականի ընթացքում ևս կենսաթոշակային մարմնի նախկինում ձևավորած այդպիսի պրակտիկան, ընդհանուր առմամբ, մնացել է նույնը, ընդհանուր գնահատականով վիճակը չի փոխվել: Այսպիսի մոտեցումն անթույլատրելի է ոչ միայն մարդկանց սոցիալական իրավունքների պատշաճ իրացման, այլ նաև կենսաթոշակային մարմնի իրականացրած վարչարարության տեսանկյունից:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Պաշտպանը վերահաստատում է, որ անհրաժեշտ է՝

- ✓ ***իրավակիրառ պրակտիկայում առաջացած յուրաքանչյուր դեպքի հիման վրա իրականացնել օբյեկտիվ, պատշաճ, պիտանի վարչարարություն, հաշվի առնել կենսաթոշակի իրավունք տվող յուրաքանչյուր մասնագիտության և պաշտոնի բուն էությունն ու բնույթը, կենսաթոշակառուի օգտին հանգամանքները, իսկ մասնագիտություններ և պաշտոններ սահմանող դրույթներին չտալ նեղ մեկնաբանություն.***
- ✓ ***պրակտիկայում առաջացած խնդիրները հաշվի առնելով՝ կատարելագործել վերաբերելի իրավական ակտերով հաստատված արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող ցուցակները.***
- ✓ ***արտոնյալ պայմաններով կենսաթոշակի նշանակման յուրաքանչյուր դեպքում հաշվի առնել նմանատիպ գործերով դատական պրակտիկան:***

1.2. Մասնակի կենսաթոշակ նշանակելու խնդիր

Հաշվետու տարում ՄԻՊ աշխատակազմի իրականացրած ուսումնասիրությունները և ստացված բողոքների քննարկման արդյունքները վկայում են, որ մասնակի կենսաթոշակի իրավունքի իրացման հետ կապված խնդիրները համակարգային առումով շարունակում են խնդրահարույց մնալ: Այդ խնդիրներին Պաշտպանը տարիներ շարունակ անդրադարձել է իր գործունեությունն ամփոփող հաղորդումներում[381]:

Կենսաթոշակի այս տեսակի իրավունքը տվող մասնագիտությունների, պաշտոնների, կազմակերպությունների անվանումների ցանկը հաստատված է ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի թիվ 665-Ն որոշմամբ: Հարկ է նշել, որ ինչպես նախորդ տարիներին, 2025 թվականին նույնպես մասնակի կենսաթոշակ նշանակելու վերաբերյալ քաղաքացիների դիմումները Միասնական սոցիալական ծառայության

[381] Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի վերաբերյալ 2020, 2021, 2023 և 2024 թվականների տարեկան հաղորդումները (համապատասխանաբար՝ էջեր 89-94, 103-110, 48-50, 696-700):

(այսուհետ՝ ՄՍԾ) կողմից մերժվել են, քանի որ զբաղեցրած պաշտոնը, մասնագիտությունը կամ այն կազմակերպությունը, որտեղ աշխատել են, Կառավարության հիշյալ որոշման մեջ ներառված չեն:

Այսպես, օրինակ՝ հաշվետու տարում ՄԻՊ-ին ներկայացված բողոքով անձը հայտնել է, որ ունի 25 տարվա աշխատանքային ստաժ, որից 12 տարի 8 ամիսը մասնագիտական ստաժ է: Մինչդեռ, ըստ բողոք ներկայացրած անձի, դիմել է ՄՍԾ մասնակի կենսաթոշակ նշանակելու նպատակով, սակայն անհիմն ստացել է մերժում՝ 12 օրացուցային տարվա մասնագիտական ստաժ չունենալու պատճառաբանությամբ: Հավելել է, որ ՄՍԾ-ից հայտնել են, որ ևս մի քանի ամիս մասնագիտական ստաժում հաշվառելու արդյունքում՝ 11 տարի 6 ամսվա փոխարեն ներկայում մասնագիտական ստաժը կազմում է 11 տարի 11 ամիս:

Ըստ բողոք ներկայացրած անձի՝ իրեն հասկանալի չէ, թե իր աշխատած տարիներից ո՞ր ժամանակահատվածն է հաշվառվել մասնագիտական ստաժում, որը՝ ոչ և ի՞նչ պատճառաբանությամբ: Ըստ պնդման՝ մասնակի կենսաթոշակ նշանակելու համար ՄՍԾ է ներկայացրել օրենսդրությամբ պահանջվող անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը: Խնդրել է Պաշտպանի աջակցությունը մասնակի կենսաթոշակ նշանակելու հարցում:

Բարձրացված խնդիրը Պաշտպանը հասցեավորել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն: Ի պատասխան՝ ստացվել է պարզաբանում առ այն, որ ըստ «Պետական կենսաթոշակների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 14-րդ հոդվածի՝ մասնակի կենսաթոշակ նշանակվում է կրթության, մշակույթի որոշ կատեգորիաների աշխատողներին, եթե լրացել է նրանց 55 տարին և ունեն առնվազն 25 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ, որից առնվազն 12 օրացուցային տարին մասնագիտական ստաժ է: Մասնակի կենսաթոշակի իրավունք տվող մասնագիտական աշխատանքային ստաժում հաշվառվում են ՀՀ կառավարության սահմանած ցանկում նշված մասնագիտություններով և պաշտոններում մինչև 2003 թվականի օգոստոսի 1-ն աշխատած ժամանակահատվածները: Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին և 1.1-ին մասերի համաձայն՝ մինչև 1992 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածի համար աշխատանքային ստաժը հաստատող հիմնական փաստաթուղթն աշխատանքային գրքույկն է կամ Կառավարության սահմանած այլ փաստաթուղթ: 1992 թվականի հունվարի 1-ից մինչև 2013 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածի համար աշխատանքային ստաժը հաստատող հիմնական փաստաթուղթը աշխատանքային գրքույկն է կամ Կառավարության սահմանած այլ փաստաթուղթ և սոցիալական վճարներ կատարելը կամ աշխատավարձ ստանալը հաստատող փաստաթուղթը, բացառությամբ Կառավարության սահմանած դեպքերի:

Ըստ նախարարության տեղեկացման՝ աշխատանքային ստաժը հաստատող արխիվային տեղեկություններն անհրաժեշտության դեպքում լիազոր մարմինը հարցման միջոցով ստանում է պետական արխիվից, եթե դիմումին կից ներկայացվել են հարցման համար անհրաժեշտ տվյալներ: Կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի թիվ 665-Ն որոշմամբ հաստատված՝ 6-րդ հավելվածի 1-ին մասի 1-ին կետի 1-ին և 2-րդ սյունակներով նախատեսված են՝ պետական հանրակրթական դպրոցների (...) ուսուցիչները, (...) իսկ 8-րդ կետով՝ մանկապատանեկան (մանկական, պատանեկան) դպրոցների (մարզադպրոց) և օլիմպիական հերթափոխի ուսումնարանների մարզիչ-մանկավարժները:

Ըստ նույն որոշմամբ հաստատված 2-րդ հավելվածի՝ կենսաթոշակ նշանակելու համար աշխատանքային ստաժը հաշվարկելու կանոնների (այսուհետ՝ Կանոններ) 43-րդ կետի համաձայն՝ աշխատանքային ստաժը հաստատվում է աշխատանքային և այլ գործունեության ժամանակահատվածներին վերաբերող՝ աշխատանքային գրքույկում

կատարված գրառումներով: Կանոնների 44-րդ կետի համաձայն՝ աշխատանքային կամ այլ գործունեության ժամանակահատվածները հաստատելու համար տրված փաստաթղթերը պետք է պարունակեն դրանք տալու օրը, ամիսը, տարեթիվը, հիմքերը (հրամաններ), անձի ազգանունը, անունը, հայրանունը, աշխատանքի վայրը, մասնագիտությունը (պաշտոնը), աշխատանքային կամ այլ գործունեության ժամանակահատվածի սկիզբը (օրը, ամիսը, տարեթիվը) և վերջը (օրը, ամիսը, տարեթիվը):

Նախարարության տրամադրած պարզաբանմամբ՝ պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանում առկա տեղեկատվության համաձայն՝ բողոք ներկայացրած անձը 2020 թվականի օգոստոսի 21-ին և սեպտեմբերի 29-ին դիմել է ՄՍԾ տարածքային բաժին՝ մասնակի կենսաթոշակ նշանակելու հարցով: Դիմումին կից ներկայացված 03.05.2002 թվականին լրացված կրկնօրինակ աշխատանքային գրքույկի գրառումների համաձայն՝ 01.09.1990 թվականի թիվ 13 հրամանով ընդունվել է աշխատանքի սպորտդպրոցում, որպես ֆուտբոլի մարզիչ-մանկավարժ և 11.03.1992 թվականի թիվ 23 հրամանով ազատվել աշխատանքից (հրամանները հաստատված են անընթեռնելի կնիքով, միաժամանակ, ***վերը նշված ցանկով սպորտդպրոցների աշխատողները նախատեսված չեն***, նախատեսված են մանկապատանեկան մարզադպրոցների աշխատողները), այնուհետև, ըստ գրառումների, 09.03.1992-05.10.2010թթ. աշխատել է միջնակարգ դպրոցում՝ որպես ուսուցիչ (ցանկով նախատեսված է): Աշխատանքային գրքույկի գրառումների հիմքերը, ինչպես նաև, ըստ վերջինիս գրավոր հայտարարության, 1990-1991թթ. ժամանակահատվածում միջնակարգ դպրոցում, որպես ուսուցիչ աշխատելու հանգամանքը ճշտելու նպատակով տարածքային բաժինը հարցում է կատարել Հայաստանի ազգային արխիվ: Տարածքային բաժնի հարցմանն ի պատասխան՝ ստացված Հայաստանի ազգային արխիվի 10.09.2020 թվականի և 22.10.2020 թվականի տեղեկանքների հիմա վրա հաստատվել է միջնակարգ դպրոցում 19.11.1991 թվականի թիվ 583 հրամանով փոխարինող ուսուցչի, 09.03.1992 թվականի թիվ 17 հրամանով ուսուցչի պաշտոնում նշանակվելու փաստը, ինչպես նաև տրամադրվել է 1992-1995թթ. ըստ տարիների և ամիսների վճարված աշխատավարձի չափի մասին տեղեկատվությունը:

Ըստ նախարարության՝ բողոք ներկայացրած անձի 01.09.1990-01.09.1991թթ. աշխատելու վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար, արխիվի խորհրդով, կենսաթոշակ նշանակող ստորաբաժանման կողմից հարցում է կատարվել նաև մանկապատանեկան մարզադպրոց, որին ի պատասխան՝ մարզադպրոցի 30.03.2021 թվականի թիվ 9 գրությամբ տեղեկացվել է, որ մարզադպրոցի 01.09.1990-01.09.1991թթ. հրամանագրքերում և աշխատավարձի վճարման ցուցակներում բողոք ներկայացրած անձի վերաբերյալ տեղեկատվություն չկա:

Ըստ միջնակարգ դպրոցի 19.08.2020 թվականի թիվ 18 տեղեկանքի՝ բողոք ներկայացրած անձին աշխատավարձ է վճարվել 1995 թվականի հունիս ամսից մինչև 1999 թվականը ներառյալ, 2000 թվականի սեպտեմբեր, 2001 թվականի սեպտեմբեր, հոկտեմբեր և 2002 թվականի սեպտեմբեր ամիսներին աշխատավարձ չի վճարվել, իսկ 2003 թվականի համար վճարվել է ամբողջությամբ: Այնուհետև, բողոք ներկայացրած անձը 1990-1991թթ. և 1991-1992թթ. ուսումնական տարիներին միջնակարգ դպրոցում աշխատելու վերաբերյալ ներկայացրել է ժողկրթբաժնի կողմից տրված տեղեկանքներ, որոնք Կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի թիվ 665-Ն որոշման թիվ 2 հավելվածով հաստատված կանոնների 44-րդ կետով պահանջվող պայմանները չբավարարելու պատճառով, որպես աշխատանքային ստաժը հաստատող փաստաթուղթ, չեն կարող ընդունվել (առկա չեն դրանք տալու օրը, ամիսը, տարեթիվը, հիմքերը

(հրամաններ), աշխատանքային կամ այլ գործունեության ժամանակահատվածի սկիզբը (օրը, ամիսը, տարեթիվը) և վերջը (օրը, ամիսը, տարեթիվը):

Վերոգրյալի հետ մեկտեղ, նախարարությունը հայտնել է, որ միջնակարգ դպրոցի 19.08.2020 թվականի թիվ 18 տեղեկանքի հիմքով բողոք ներկայացրած անձի աշխատանքային ստաժում հաշվառվել է մինչև 2003 թվականի օգոստոսի 1-ն աշխատած ժամանակահատվածը, որի արդյունքում՝ մասնագիտական ստաժը կազմել է 11 տարի 11 ամիս: Ըստ այդմ, մասնակի կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ առնվազն 12 օրացուցային տարվա մասնագիտական ստաժ չունենալու պատճառով բողոք ներկայացրած անձին այդպիսի կենսաթոշակ նշանակվել չի կարող:

Այսպիսով, ստացվում է, որ բողոք ներկայացրած անձին մասնակի կենսաթոշակի նշանակումը մերժվել է, քանի որ հիշյալ որոշմամբ, մասնավորապես, նախատեսված են մանկապատանեկան (մանկական, պատանեկան) դպրոցների (մարզադպրոց) մարզիչ-մանկավարժները, իսկ սպորտդպրոցների մարզիչ-մանկավարժները նախատեսված չեն: Այս համատեքստում՝ հարկ է անդրադառնալ Մարդու իրավունքների պաշտպանի նախորդ տարիների հաղորդումների շրջանակներում բազմիցս կատարած այն արձանագրմանը, որ վերը նշված որոշմամբ թվարկված կազմակերպությունների, մասնագիտությունների և պաշտոնների ցանկը թերի է, ավելին՝ ցանկում ընդգրկված պաշտոններն ու մասնագիտությունները լիազոր մարմնի կողմից մեկնաբանվում են տառացի ու նեղ ընկալմամբ, իսկ ցանկում չընդգրկված մասնագիտությունների ու պաշտոնների փաստացի բնույթն ու իրականացված գործունեության էությունը հաշվի չի առնվում: Մասնակի կենսաթոշակի նշանակման յուրաքանչյուր դեպքում կենսաթոշակային մարմինը պետք է առաջնորդվի մարդկանց մասնագիտության և պաշտոնի բուն էությունը հիմք ընդունելու մոտեցմամբ:

Հաշվի առնելով քննարկվող խնդրի արդիականությունը՝ սույն տարեկան հաղորդման կազմման աշխատանքների շրջանակում Մարդու իրավունքների պաշտպանը հարցադրում է կատարել նախարարություն՝ պարզելու համար, թե արդյոք *2025 թվականին նախատեսվե՞լ են մասնակի կենսաթոշակի իրավունք ունեցող անձանց համար աշխատանքային ստաժի հավաստման մատչելի կառուցակարգեր: Պաշտպանը հարցադրում է կատարել նաև մասնակի կենսաթոշակի նշանակման առնչությամբ ստացված դիմումների քանակի և դրանց ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ:*

Ի պատասխան՝ տրամադրվել է պարզաբանում առ այն, որ 2025 թվականին կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում ներկայացվել է մասնակի կենսաթոշակի նշանակման 634 դիմում, որից բավարարվել է (նշանակվել է) թվով 168-ը:

Միևնույն ժամանակ, տրամադրվել է տեղեկատվություն այն մասին, որ օրենսդրական փոփոխությունների արդյունքում՝ նախատեսվել են մի շարք կարևոր կարգավորումներ: Մասնավորապես.

- էականորեն ընդլայնվել է այն կազմակերպությունների ցանկը, որտեղ աշխատելու դեպքում 1992-2004թթ. ստաժը կհաստատվի միայն աշխատանքային գրքույկով՝ առանց սոցիալական վճար կատարած լինելը կամ աշխատավարձ ստանալը հավաստող տեղեկանքի: Ցանկն ընդլայնվել է ի հաշիվ 1992-2004թթ. գործունեություն իրականացրած բյուջետային հիմնարկների, բանկերի, առողջապահական հիմնարկների, կուլտուր-մշակութային, ուսումնական հաստատությունների, որոնց աշխատանքներն այդ տարիներին հիմնականում չեն դադարեցվել:
- միասնականացվել է աշխատանքային ստաժը հաստատելու ընթացակարգը՝ 1992–2013թթ. ժամանակահատվածների աշխատանքային ստաժը հաստատելիս աշխատանքային գրքույկի պատշաճ գրառումների և ապահովագիրի կողմից սոցիալական

վճար կատարած լինելու տեղեկատվության առկայության դեպքում աշխատավարձի վերաբերյալ փաստաթղթեր չեն պահանջվի:

Վերոգրյալի համատեքստում, հարկ է նաև նշել, որ ՄԻՊ աշխատակազմում կատարված ուսումնասիրությունից պարզվել է, որ ՀՀ կառավարության 2025 թվականի նոյեմբերի 6-ի թիվ 1569-Ն որոշմամբ լրացումներ և փոփոխություններ են կատարվել ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի թիվ 665-Ն որոշման մեջ: Մասնավորապես, 6-րդ հավելվածի (կրթության, մշակույթի որոշ կատեգորիաների աշխատողներին մասնակի կենսաթոշակի իրավունք տվող մասնագիտությունների և պաշտոնների ցանկ) աղյուսակի 1-ին կետի 3-րդ սյունակում լրացվել է պիոներ ջոկատավարի պաշտոնը: Դրանից բացի, իրականացված փոփոխության արդյունքում ուսումնադաստիարակչական (ուսումնական, դաստիարակչական), ուսումնաարտադրական մասի կամ արտադրական ուսուցման գծով տեղակալների, արտադասարանական, արտադպրոցական աշխատանքների գծով տնօրենի (դիրեկտորի) տեղակալների (փոխտնօրեններ) պաշտոնի փոխարեն՝ մասնակի կենսաթոշակի իրավունք տվող պաշտոն է նախատեսվել պարզապես տնօրենի (դիրեկտորի) տեղակալների (փոխտնօրենների) պաշտոնը:

Պաշտպանը ողջունում է կատարված փոփոխությունները՝ միաժամանակ ընդգծելով, որ հիշյալ որոշմամբ սահմանված ցանկում թվարկված կազմակերպությունների, մասնագիտությունների և պաշտոնների ցանկի կատարելագործման անհրաժեշտությունը պետք է կրի շարունակական բնույթ:

Հաշվետու տարում Մարդու իրավունքների պաշտպանին հընթացս հասցեագրվել են նաև քննարկվող հարցի հետ կապված այլ բողոքներ, որոնք վերաբերում են Օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի այն կարգավորմանը, ըստ որի՝ մասնակի կենսաթոշակի իրավունք տվող մասնագիտական աշխատանքային ստաժում հաշվառվում են Կառավարության սահմանած ցանկում նշված մասնագիտություններով և պաշտոններում ***մինչև 2003 թվականի օգոստոսի 1-ն*** աշխատած ժամանակահատվածները: Այս իրավակարգավորմամբ՝ 55 տարին լրացած շատ անձինք, որոնք աշխատել են մասնակի կենսաթոշակի իրավունք տվող մասնագիտություններով կամ պաշտոններում և ունեն առնվազն 25 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ, զրկվում են մասնակի կենսաթոշակ ստանալու հնարավորությունից: Այսպես, նշված խնդրի կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել է խմբային բողոք ուսուցիչներից: Մասնավորապես, վերջիններս նշել են, որ ներկայում այն ուսուցիչները, ովքեր ունեն 25 և ավելի տարվա մասնագիտական ստաժ, չեն ստանում մասնակի կենսաթոշակ, քանի որ Օրենքի 14-րդ հոդվածով ամրագրված կարգի համաձայն՝ մինչև 2003 թվականի օգոստոսի 1-ը չունեն 12 տարվա մասնագիտական ստաժ: Բողոքի կապակցությամբ Պաշտպանը գրություն է հասցեագրել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն: Ի պատասխան՝ ի թիվս այլ տեղեկությունների, ստացվել է պարզաբանում այն մասին, որ խնդրո առարկա կենսաթոշակի իրավունքը սահմանված է եղել դեռևս խորհրդային տարիներին՝ որպես արտոնություն այն անձանց համար, որոնք անբարենպաստ միջավայրում երկարատև աշխատանքի հետևանքով մասնակիորեն կամ ամբողջությամբ կորցնում են մասնագիտական աշխատունակությունը. այս մարդկանց տրվել է ժամկետից շուտ կենսաթոշակի իրավունք, եթե անձը դադարում էր զբաղվել աշխատանքային գործունեության տվյալ տեսակով: Անկախության առաջին տարիներին երկրում տեղի ունեցած սոցիալ-տնտեսական վերափոխումների հետևանքով արձանագրված իրողությունների շրջանակներում կենսաթոշակի այս տեսակը «վերածվեց» կրթության և մշակույթի ոլորտի որոշ կատեգորիաների աշխատողների աշխատավարձին տրվող «հավելման» (պայմանավորված՝ նրանց աշխատավարձերի մակարդակով): Ըստ այդմ,

վերացվեց նաև աշխատանքային գործունեության տվյալ տեսակով (տվյալ մասնագիտությամբ) չաշխատելու պայմանը:

Նախարարության տեղեկացմամբ՝ Կառավարության 1999 թվականի դեկտեմբերի 2-ի թիվ 734 որոշմամբ հաստատվել են Հայաստանի Հանրապետությունում կենսաթոշակային ապահովության ռազմավարության հիմնադրույթները, որոնցով սահմանվել են կենսաթոշակային համակարգի կատարելագործման հիմնական նպատակներն ու սկզբունքները: Մասնավորապես, համաձայն վերոնշյալ ռազմավարության՝ կենսաթոշակային ապահովության համակարգը նոր սոցիալ-տնտեսական իրողություններին համապատասխանեցնելու նպատակով, որպես կենսաթոշակային ապահովության համակարգի կատարելագործման հիմնական ուղղություն, սահմանվել էր կենսաթոշակի այս տեսակի վերացումը: Միաժամանակ, նշված ռազմավարությամբ սահմանվել է, որ այն անձինք, որոնք արդեն ունեն երկարամյա ծառայության կենսաթոշակի անցնելու պահանջվող ստաժի առնվազն կեսը (պահանջվող ստաժը կազմել է 25 տարի), համապատասխան տարիքի հասնելու դեպքում կստանան փոխհատուցում: Այդ փոխհատուցումները կնշանակվեն համամասնական չափով, ըստ ունեցած արտոնյալ ստաժի, և կվճարվեն մինչև ընդհանուր հիմունքներով կենսաթոշակային տարիքը լրանալը:

Հիմք ընդունելով վերը նշված ռազմավարությունը՝ ընդունվեց «Պետական կենսաթոշակների մասին» 2002 թվականի նոյեմբերի 19-ի ՀՕ-519-Ն օրենքը (ուժը կորցրել է 2011 թվականի հունվարի 1-ին), որով սահմանվեց մասնակի կենսաթոշակի իրավունք կրթության, մշակույթի որոշ կատեգորիաների աշխատողների համար՝ 55 տարին լրանալու և մինչև օրենքն ուժի մեջ մտնելը (10.04.2003 թվական) առնվազն 12 տարվա մասնագիտական ստաժի առկայության դեպքում: Մասնակի կենսաթոշակի իրավունք տվող մասնագիտությունների և պաշտոնների ցանկը սահմանելու իրավասությունը վերապահվեց ՀՀ կառավարությանը: Սահմանվեց նաև, որ մասնակի կենսաթոշակի իրավունք տվող ստաժում հաշվառվում է մինչև ՀՀ կառավարության կողմից խնդրո առարկա ցանկերը սահմանելն աշխատած ժամանակահատվածը: Մասնակի կենսաթոշակի իրավունք տվող մասնագիտությունների և պաշտոնների ցանկը սահմանվել է ՀՀ կառավարության 2003 թվականի մայիսի 29-ի թիվ 793-Ն որոշմամբ (ուժի մեջ է մտել 24.07.2003 թվականին և ուժը կորցրել է 09.06.2011 թվականին):

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից հայտնել են նաև, որ 2011 թվականի հունվարի 1-ին ուժի մեջ է մտել «Պետական կենսաթոշակների մասին» 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-243-Ն օրենքը, որով ուժը կորցրած է ճանաչվել նաև 2002 թվականի նոյեմբերի 19-ի ՀՕ-519-Ն օրենքը, որի՝ մասնակի կենսաթոշակի իրավունքին վերաբերող դրույթները գրեթե նույնությամբ իրենց արտացոլումը գտել են 2011 թվականի հունվարի 1-ին ուժի մեջ մտած օրենքում: Օրենքով սահմանված՝ մասնակի կենսաթոշակի իրավունք տվող մասնագիտական ստաժում մինչև 2003 թվականի օգոստոսի 1-ն ընկած ժամանակահատվածը հաշվառելը պայմանավորված է «Պետական կենսաթոշակների մասին» 2002 թվականի նոյեմբերի 19-ի ՀՕ-519-Ն օրենքը և ՀՀ կառավարության 2003 թվականի մայիսի 29-ի թիվ 793-Ն որոշումն ուժի մեջ մտնելու ժամկետներով: Հավելել են, որ մասնակի կենսաթոշակ նշանակելու համար օրենսդրությամբ այլ պայմաններ սահմանելը չի բխում կենսաթոշակային ապահովության բնագավառում վարվող երկարաժամկետ քաղաքականության գաղափարաբանությունից:

Այսպիսով, ստացվում է, որ միևնույն աշխատանք կատարած կամ միևնույն գործունեությունն իրականացրած անձանց մի մասը հնարավորություն է ստանում օգտվել մասնակի կենսաթոշակի իրավունքից, իսկ մյուս մասը՝ զրկվում է նման իրավունքից:

Ավելին՝ մինչև 2003 թվականի օգոստոսի 1-ն աշխատած ժամանակահատվածները մասնագիտական ստաժում հաշվառելու վերաբերյալ դրույթը չվերանայելու դեպքում կրթության և մշակույթի որոշ կատեգորիաների աշխատողները զրկվելու են մասնակի կենսաթոշակ ստանալու հնարավորությունից: Մինչդեռ, հարկ է նշել, որ մանկավարժական աշխատանքը մշտապես ունեցել է և ունի առանցքային նշանակություն՝ անկախ այն հանգամանքից, թե այն երբ է իրականացվել՝ մինչև 2003 թվականը, թե դրանից հետո: Ներկայում աշխատող մանկավարժները փաստացի հայտնվում են անբարենպաստ վիճակում: Վերջիններս ունեն երկարամյա ստաժ, իրականացրել են նույն հանրօգուտ գործունեությունը, սակայն զրկվում են մասնակի կենսաթոշակ ստանալու հնարավորությունից միայն այն պատճառով, որ նրանց աշխատանքային գործունեությունը ձևավորվել է այլ ժամանակահատվածում: Այսպիսի մոտեցումը կարող է ազդել նաև նոր սերնդի մանկավարժների վրա՝ աշխատանքի գրավչության տեսանկյունից: Այս առումով Պաշտպանը կարևորում է ներկայում այս կատեգորիաների աշխատողների համար համարժեք փոխհատուցման կամ արտոնության նախատեսման հարցի քննարկումը:

Ելնելով վերոգրյալից՝ Պաշտպանն արձանագրում է, որ անհրաժեշտ է՝

✓ մասնակի կենսաթոշակի նշանակման յուրաքանչյուր դեպքում հաշվի առնել մարդկանց մասնագիտության և պաշտոնի բուն էությունը՝ Կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի թիվ 665-Ն որոշման՝ մասնակի կենսաթոշակի իրավունք տվող մասնագիտություններ և պաշտոններ սահմանող դրույթներին տառացի և նեղ մեկնաբանություն չտալով.

✓ իրավակիրառ պրակտիկայում առկա յուրաքանչյուր դեպք հաշվի առնելով՝ քննարկման առարկա դարձնել հիշյալ որոշման մեջ անհրաժեշտ փոփոխություններ իրականացնելու անհրաժեշտության հարցը.

✓ շարունակաբար մշակել և իրականացնել մասնակի կենսաթոշակի իրավունք ունեցող անձանց համար աշխատանքային ստաժի հավաստման մատչելի կառուցակարգեր.

✓ քննարկման առարկա դարձնել մի շարք կատեգորիաների աշխատողների համար համարժեք փոխհատուցում կամ արտոնություններ նախատեսելու հարցը:

1.3. Կենսաթոշակ նշանակելիս աշխատանքային ստաժի հաշվարկման հետ կապված խնդիր

Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2025 թվականին շարունակել է խնդրահարույց լինել մարդկանց փաստացի աշխատած ժամանակահատվածը կենսաթոշակի իրավունք տվող աշխատանքային ստաժում չհաշվառելու համակարգային խնդիրը: Պաշտպանն իր նախորդ տարիների հաղորդումներում մշտապես անդրադարձել է այդ խնդրին և ներկայացրել դրա լուծմանն ուղղված կոնկրետ առաջարկներ[382]:

Հարկ է ընդգծել, որ աշխատանքային ստաժի հաշվարկման վերաբերյալ Պաշտպանի աշխատակազմ ստացված բողոքների քննարկման արդյունքում մի շարք հարցեր 2025 թվականին ստացել են լուծում: Այսպես, օրինակ՝ Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով անձը հայտնել է, որ իր աշխատանքային ստաժում չեն հաշվառվել 1994-2000 թվականներին «Դիլիջանի փոստ» ձեռնարկությունում և «Տավուշի փոստատուն» ՓԲ

[382] Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի վերաբերյալ 2020, 2021, 2023 և 2024 թվականների տարեկան հաղորդումները (համապատասխանաբար՝ էջեր 104-110, 110-117, 50-52, 700-705):

ընկերությունում աշխատելու ժամանակահատվածները, որոնց վերաբերյալ առկա են գրառումներ իր աշխատանքային գրքույկում:

Բարձրացված հարցի կապակցությամբ Պաշտպանը գրություն է հասցեագրել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, որի հիման վրա նախարարությունում կատարվել են հավելյալ ուսումնասիրություններ: Արդյունքում, նախարարությունից տեղեկացրել են, որ կատարված լրացուցիչ ուսումնասիրությունների արդյունքում բողոք ներկայացրած անձի կենսաթոշակը վերահաշվարկվել է 28 տարի 9 ամիս 26 օր (29 տարի)՝ ընդհանուր աշխատանքային ստաժի հաշվառմամբ, 46 610 դրամ գումարի չափով (նախկին՝ 42 080 դրամի փոխարեն): Միաժամանակ, տեղեկացրել են, որ նախորդ ժամանակահատվածի համար (08.11.2024-31.05.2025թթ.) թերի վճարված կենսաթոշակի գումարը կփոխանցվի վճարման՝ 2025 թվականի հունիս ամսվա կենսաթոշակի վճարման ցուցակներով:

Մյուս դեպքում, Պաշտպանին բողոք ներկայացրած անձը հայտնել է, որ տարիքային աշխատանքային կենսաթոշակ նշանակելու նպատակով դիմել է Միասնական սոցիալական ծառայություն (այսուհետ՝ ՄՍԾ), սակայն դիմումը մերժվել է: Ըստ բողոք ներկայացրած անձի՝ ինքը Հայաստանի Հանրապետության երկքաղաքացի է, 1997 թվականից տեղափոխվել, աշխատել և ներկայում բնակվում է ՀՀ-ում: Խնդրել է Պաշտպանի աջակցությունն իրեն տարիքային աշխատանքային կենսաթոշակ նշանակելու հարցում:

Բարձրացված հարցի կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանը գրություն է հասցեագրել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, որի հիման վրա նախարարության կողմից իրականացվել են լրացուցիչ ուսումնասիրություններ: Ըստ այդմ, նախարարությունը հայտնել է, որ ՌԴ կենսաթոշակային և սոցիալական ապահովագրության հիմնադրամի Ստավրոպոլի երկրամասի բաժանմունք կրկնակի կատարված հարցմանն ի պատասխան՝ տրամադրվել է բողոք ներկայացրած անձին ՌԴ-ում կենսաթոշակ և այլ սոցիալական նպաստ նշանակած չլինելու վերաբերյալ տեղեկատվություն: Նշել են նաև, որ հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոք ներկայացրած անձին նշանակվել է տարիքային աշխատանքային կենսաթոշակ, իսկ տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու օրվանից հաշվարկված լրավճար գումարը փոխանցվել է վճարման՝ 2025 թվականի նոյեմբեր ամսվա կենսաթոշակի վճարման ցուցակներով:

Ստացված տեղեկատվությունը փոխանցվել է բողոք ներկայացրած անձին: Վերջինս հաստատել է նշված հանգամանքները և շնորհակալություն հայտնել Պաշտպանին և նրա աշխատակազմին՝ կատարված աշխատանքի համար:

Վերոգրյալի հետ մեկտեղ, քիչ չեն դեպքերը, երբ մարդկանց փաստացի աշխատած ժամանակահատվածը կենսաթոշակի իրավունք տվող աշխատանքային ստաժում չի հաշվառվում: Այսպես, օրինակ՝ Պաշտպանին ներկայացված բողոքներից մեկով անձը հայտնել է, որ տարիքային աշխատանքային կենսաթոշակ նշանակելու նպատակով դիմել է ՄՍԾ տարածքային կենտրոն, սակայն դիմումը մերժվել է: Ըստ բողոք ներկայացրած անձի՝ իր աշխատանքային ստաժում չի հաշվառվել 26.06.1990-12.12.1997 թվականներին Կոտայքի մարզի Բյուրեղավան քաղաքի կոշիկի ֆաբրիկայում աշխատելու ժամանակահատվածը, որի վերաբերյալ առկա են գրառումներ իր աշխատանքային գրքույկում: Խնդրել է Պաշտպանի աջակցությունը վերը նշված ժամանակահատվածն իր աշխատանքային ստաժում հաշվառելու հարցում:

Բարձրացված հարցի կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանը գրություն է հասցեագրել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, որի

հիման վրա նախարարությունում կատարվել են հավելյալ ուսումնասիրություններ: Արդյունքում, պատասխան գրությամբ տրամադրվել է տեղեկատվություն այն մասին, որ պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանում առկա տեղեկատվության համաձայն՝ 09.07.2025 թվականին բողոք ներկայացրած անձի կողմից տարիքային աշխատանքային կենսաթոշակ նշանակելու նպատակով ՄՍԾ տարածքային կենտրոն ներկայացված դիմումը մերժվել է՝ առնվազն 10 օրացուցային տարվա աշխատանքային ստաժի բացակայության պատճառով: Նախարարության պարզաբանմամբ՝ ներկայացված աշխատանքային գրքույկի գրառումների համաձայն՝ բողոք ներկայացրած անձը 26.06.1990 թվականին ընդունվել է աշխատանքի Աբովյանի «Գառնի» առևտրա-արդյունաբերական միավորման Բյուրեղավանի տեղամասում, 03.01.1991 թվականին շնորհվել է 2-րդ կարգի կարողի կոչում: 22.02.1991 թվականին տեղափոխվել է աշխատանքի Բյուրեղավանի կոշիկի ֆաբրիկայում, 12.12.1997 թվականին ազատվել է աշխատանքից: Տեղեկացրել են նաև, որ ՄՍԾ ապահովագիրների կողմից սոցիալական վճարներ կատարած լինելու մասին տվյալների շտեմարանում կազմակերպության վերաբերյալ տվյալների բացակայության հիմքով բողոք ներկայացրած անձի՝ 1992 թվականի հունվարի 1-ից սկսած աշխատելու, ըստ տարիների և ամիսների աշխատավարձ վճարվելու վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով կատարվել է հարցում Հայաստանի ազգային արխիվ, որտեղից ստացվել է տեղեկատվություն՝ Բյուրեղավանի կոշիկի ֆաբրիկայի անձնակազմին վերաբերող փաստաթղթերն արխիվ հանձնված չլինելու մասին: Ըստ այդմ, աշխատանքային ստաժում հաշվառվել է 26.06.1990-01.01.1992 թվականների ժամանակահատվածը և աշխատանքային ստաժը կազմել է 7 տարի 10 ամիս 27 օր: Հայտնել են նաև, որ Նշանակման վարչության կողմից ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն կատարված կրկնակի հարցումներին ի պատասխան ստացված գրություններով՝ Բյուրեղավանի կոշիկի ֆաբրիկայի պետական գրանցում ստանալու կամ կազմակերպության վերանվանվելու, վերակազմակերպվելու վերաբերյալ տեղեկատվություն չի տրամադրվել: Ելնելով վերոգրյալից, նշել են, որ եղած տվյալներով բողոք ներկայացրած անձի աշխատանքային ստաժում խնդրո առարկա՝ 01.01.1992-12.12.1997 թվականների ժամանակահատվածը հաշվառելու, տարիքային աշխատանքային կենսաթոշակ նշանակելու իրավական հիմքեր առկա չեն:

Հարկ է նշել, որ 2025 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրվել են նմանատիպ այլ բողոքներ, որոնց ուսումնասիրությունը վկայում է, որ մարդիկ աշխատանքային ստաժի հաշվարկման հետ կապված խնդիրների հիմնականում բախվում են, երբ կենսաթոշակ նշանակելիս չեն կարողանում ներկայացնել աշխատանքային ստաժը հաստատող կամ դա ապացուցող փաստարկներ:

Այդ խնդիրներն առաջանում են սոցիալական վճարներ կատարելը կամ աշխատավարձ ստանալը հաստատող փաստաթղթերի պահպանված չլինելու կամ արխիվ հանձնված չլինելու դեպքերում, երբ կենսաթոշակ նշանակելիս չեն գործում *(վերացված կամ լուծարված են լինում)* բոլոր այն կազմակերպությունները, որտեղ անձինք աշխատել են:

Ստացվում է, որ գործատուների բարեխիղճ չլինելու *(սոցիալական վճարներ կատարելը կամ աշխատավարձ ստանալը հաստատող փաստաթղթերը չպահպանելու կամ դրանք արխիվ չհանձնելու)* և պետական պատշաճ վերահսկողության բացակայության *(սոցիալական վճարներ կատարելու ուղղությամբ)* պատճառով մարդիկ բախվում են խնդիրների, որոնց լուծման ճանապարհը մնում է դատարան դիմելը:

Սույն տարեկան հաղորդման կազմման աշխատանքների շրջանակում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից, մասնավորապես, ներկայացվել է տեղեկատվություն առ այն, որ օրենսդրական փոփոխությունների արդյունքում՝ նախատեսվել են մի շարք կարևոր կարգավորումներ.

✓ էականորեն ընդլայնվել է այն կազմակերպությունների ցանկը, որտեղ աշխատելու դեպքում 1992 - 2004թթ. ստաժը կհաստատվի միայն աշխատանքային գրքույկով՝ առանց սոցիալական վճար կատարած լինելը կամ աշխատավարձ ստանալը հավաստող տեղեկանքի: Ցանկն ընդլայնվել է ի հաշիվ 1992-2004թթ. գործունեություն իրականացրած բյուջետային հիմնարկների, բանկերի, առողջապահական հիմնարկների, կուլտուր-մշակութային, ուսումնական հաստատությունների, որոնց աշխատանքներն այդ տարիներին հիմնականում չեն դադարեցվել,

✓ միասնականացվել է աշխատանքային ստաժը հաստատելու ընթացակարգը՝ 1992–2013թթ. ժամանակահատվածների աշխատանքային ստաժը հաստատելիս աշխատանքային գրքույկի պատշաճ գրառումների և ապահովադիրի կողմից սոցիալական վճար կատարած լինելու տեղեկատվության առկայության դեպքում աշխատավարձի վերաբերյալ փաստաթղթեր չեն պահանջվի,

✓ պարզեցվել է Ղարաբաղի տարածքում աշխատած անձանց աշխատանքային ստաժը հաստատելու կարգը,

✓ հստակեցվել է, որ 1992թ. մայիսի 15-ի «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակային ապահովության և պետական ապահովագրության մասին», 1993 թվականի դեկտեմբերի 24-ի «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների ներքին գործերի մարմինների աշխատակիցների կենսաթոշակային ապահովման և պետական ապահովագրության կարգի մասին» համաձայնագրերին մասնակցությունը դադարեցրած պետության (ներկայումս՝ ՌԴ և Ուկրաինա) տարածքում ձեռք բերված զինվորական ծառայության ստաժը համաձայնագրին մասնակցությունը դադարեցնելու օրվանից հետո կենսաթոշակ նշանակելիս զինվորական ծառայության ստաժում չի հաշվառում,

✓ նախատեսվում է մշակել և ներդնել ծրագրային գործիքներ, որոնք հնարավորություն կտան ինքնաշխատ եղանակով հաշվարկել քաղաքացիաիրավական պայմանագրերով կատարված աշխատանքների ստաժը և ձևավորել սոցիալական վճարների վերաբերյալ տեղեկանքներ: Այս բարեփոխումները կնպաստեն՝

➢ կենսաթոշակների նշանակման գործընթացի արդյունավետության բարձրացմանը՝ թույլ տալով կիրառել ավելի լայն և ճկուն մոտեցումներ փաստաթղթերը գնահատելիս,

➢ քաղաքացիների կողմից ներկայացվող փաստաթղթերի քանակի կրճատմանը,

➢ կենսաթոշակային իրավունքների ամբողջական պահպանմանը և պետական կառավարման համակարգի թվայնացմանը:

Հաշվետու տարվա ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչները խորհրդարանում մասնակցել են երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի նշանակման մեխանիզմի և դրա հետ կապված խնդիրների վերաբերյալ աշխատանքային քննարկմանը, որը նախաձեռնել էր Ազգային ժողովի աշխատանքի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովը:

Քննարկման ընթացքում Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալը, ներկայացնելով կենսաթոշակային օրենսդրության հիմնական սկզբունքները, արտոնյալ կենսաթոշակի տեսակները, նշել է՝ եթե անձն ունի մի քանի կենսաթոշակ ստանալու հնարավորություն, ապա պետք է ընտրի դրանցից իր համար նախընտրելի տարբերակը: Փոխնախարարի խոսքով բարձրացված խնդիրը վերաբերում է միայն մինչև 1974 թվականը ծնվածներին:

Պաշտպանի ներկայացուցիչը նշել է, որ խնդրի վերաբերյալ տարիներ շարունակ ՄԻՊ-ին ներկայացվել են դիմում-բողոքներ: Ընդգծել է նաև օրենսդրական փոփոխությունների անհրաժեշտությունը[383]:

Վերը նշված խնդրի կապակցությամբ Պաշտպանը հանդես է եկել նաև հրապարակային հայտարարությամբ՝ նշելով, որ պետք է մշակել կառուցակարգեր, որոնց շնորհիվ հնարավոր կլինի երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկելիս հաշվի առնել նաև անձանց՝ զինվորական ծառայության ժամանակահատված չհամարվող աշխատանքային ստաժը[384]:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պաշտպանը ողջունում է խնդրի կարգավորման ուղղությամբ իրավասու մարմինների կողմից գործադրված(ող) ջանքերը, այնուհանդերձ, վերահաստատում է, որ խնդիրների համակարգային կարգավորման տեսանկյունից՝ լուծումները պետք է կրեն շարունակական բնույթ և ունենան պատշաճ գործնական իրացում: Ընդ որում, այդ համատեքստում անհրաժեշտ է նկատի ունենալ կենսաթոշակառուների համար աշխատանքային ստաժի հաստատման մատչելի կառուցակարգեր մշակելու և ներդնելու կարևորությունը: Պետք է նաև մշակել կառուցակարգեր, որոնց շնորհիվ հնարավոր կլինի երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկելիս հաշվի առնել նաև անձանց՝

[383] Հասանելի է հետևյալ հղումով՝ http://www.parliament.am/news.php?cat_id=2&NewsID=21682&year=2025&month=01&day=27&lang=arm (20/03/2026թ.-ի դրությամբ):

[384] Հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.facebook.com/share/1B9WWr2op4/?mibextid=wwXIfr (20/03/2026թ.-ի դրությամբ):

զինվորական ծառայության ժամանակահատված չհամարվող աշխատանքային ստաժը:

1.4. Կենսաթոշակի վճարման շարունակականության ապահովման գործընթացի խնդիրներ

2025 թվականի ընթացքում շարունակել են արդիական մնալ կենսաթոշակի վճարման շարունակականությունն ապահովելու համար կենսաթոշակառուի համար նախատեսված որոշ պարտականությունների կատարմանը վերաբերելի խնդիրները:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ ստացված գրավոր և բանավոր դիմում-բողոքների ուսումնասիրության արդյունքների հաշվառմամբ՝ սույն պարագրաֆի շրջանակում կենսաթոշակի վճարման շարունակականության ոլորտում առկա խնդիրները վեր են հանվել երկու հարթություններում՝

1) կենսաթոշակառուները տեղաշարժման դժվարությունների կամ անհնարինություն առաջացնող այլ խնդիրներ *(օրինակ՝ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող, սակայն սահմանված կարգով անգործունակ չճանաչված անձանց դեպքում)* ունենալու պատճառով չեն կարողանում տարեկան առնվազն մեկ անգամ ներկայանալ բանկ.

2) տասներկու ամսից ավել ժամանակահատվածում ՀՀ-ում չգտնվող և ՀՀ վերադառնալու օբյեկտիվ խոչընդոտների առկայության պարագայում (հիմնականում երկարատև առողջական խնդիրներ) կենսաթոշակառուները զրկված են իրենց չվճարված կենսաթոշակն ամբողջությամբ *(բացի դիմելու ամսվան նախորդող 12 ամսվա ժամանակահատվածից)* ստանալու հնարավորությունից:

Անդրադառնալով առաջին խնդրին՝ հարկ է նշել, որ «Պետական կենսաթոշակների մասին» օրենքի 35-րդ հոդվածի 6-րդ և 6.1-ին մասերի համաձայն՝ կենսաթոշակն անկանխիկ եղանակով ստացող կենսաթոշակառուն (անչափահաս կամ խնամակալության տակ գտնվող կենսաթոշակառուի դեպքում՝ կենսաթոշակառուի օրինական ներկայացուցիչը՝ ծնողը, որդեգրողը կամ խնամակալը) կենսաթոշակի վճարումը շարունակելու համար պարտավոր է տարեկան առնվազն մեկ անգամ՝ վերջին անգամ բանկ ներկայանալու ամսվան հաջորդող տասներկուերորդ ամսվա վերջին աշխատանքային օրվանից ոչ ուշ ներկայանալ բանկ և հայտարարություն ստորագրել ՀՀ-ում լինելու մասին: Կենսաթոշակը անկանխիկ եղանակով ստացող կենսաթոշակառուի՝ ՀՀ-ում լինելը բանկի կողմից կարող է հաստատվել նաև առանց կենսաթոշակառուի բանկ ներկայանալու՝ Կառավարության սահմանած կարգով կամ կենսաթոշակ նշանակող ստորաբաժանման կողմից՝ անձամբ կենսաթոշակառուի ներկայացրած՝ կենսաթոշակին առնչվող ցանկացած գրավոր դիմումի հիման վրա:

ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 12-ի թիվ 284-Ն որոշմամբ սահմանված է սոցիալական ապահովության հաշվի պայմանագրի օրինակելի ձևը, որի 3.1-ին կետի համաձայն՝ շահառուի՝ ՀՀ-ում լինելը բանկի կողմից կարող է հաստատվել նաև առանց նրա բանկ ներկայանալու, եթե շահառուի՝ ՀՀ-ում լինելը բանկը հաստատել է՝

1) բանկի աշխատակցի՝ ՀՀ-ում շահառուի գտնվելու վայր այցելությամբ.

2) իր ներքին ընթացակարգերին համապատասխան՝ տեղեկատվատեխնիկական միջոցների կիրառմամբ (հաստատելով շահառուի՝ ՀՀ-ում լինելը).

3) համապատասխան հնարավորությունների առկայության դեպքում՝ առաքող կազմակերպության միջոցով[385]:

---

[385] Հարկ է նշել, որ այս կետը լրացվել է Կառավարության 2026 թվականի փետրվարի 26-ի թիվ 223-Ն որոշմամբ, ինչը, անշուշտ, պետք է դրական գնահատել: Ողջունելի է նաև այն, որ նշված որոշմամբ

Սույն կետում նշված՝ շահառուի՝ ՀՀ-ում լինելը հաստատելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են շահառուի և բանկի միջև կնքված բանկային հաշվի պայմանագրով:

Պաշտպանի աշխատակազմ ստացված բողոքների ուսումնասիրությունը վկայում է, որ նույնիսկ վերոգրյալ կարգավորումների պարագայում շարունակում են արդիական մնալ բանկ ներկայանալու հետ կապված խնդիրները, քանի որ բանկի կողմից ոչ միշտ է ապահովվում շահառուի գտնվելու վայրի այցելության կամ տեղեկատվատեխնիկական միջոցներով շահառուի՝ ՀՀ-ում լինելու փաստը հավաստելը (օրինակ՝ կենսաթոշակառուին պատկանող բջջային հեռախոսը չունի նման հնարավորություն):

Այսպես, օրինակ՝ հաշվետու տարվա ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված բողոքներից մեկով անձը հայտնել է, որ իր կենսաթոշակառու տատը կենսաթոշակը ստանում է անկանխիկ եղանակով: Ըստ տեղեկացման՝ կենսաթոշակի վճարումը շարունակելու համար վերջինս պարտավոր է տարեկան մեկ անգամ ներկայանալ բանկ և հայտարարություն ստորագրել ՀՀ-ում գտնվելու մասին: Հավելել է, որ նկատի ունենալով այն հանգամանքը, որ իրենց բնակության վայրում առկա չէ իր տատին կենսաթոշակ վճարող բանկի մասնաճյուղ՝ վերջինիս ավտոմեքենայով փոխադրել է այլ քաղաք, որտեղ առկա է համապատասխան բանկի մասնաճյուղ: Ըստ բողոք ներկայացրած անձի՝ հաշվի առնելով, որ տատն ունի տեսողության հետ կապված խնդիրներ և տեղաշարժման դժվարություններ՝ խնդրել է հիշյալ բանկի աշխատակիցներին, որպեսզի հայտարարության ստորագրման գործընթացն ապահովելու համար մոտենան մեքենային: Ի պատասխան՝ բանկի աշխատակիցները հայտնել են, որ իրենց վերադասն աշխատավայրում չէ, ուստի առանց նրա թույլտվության իրենք իրավասու չեն այդ գործողությունը կատարելու: Հաջորդիվ, բողոք ներկայացրած անձը ՄԻՊ աշխատակազմ լրացուցիչ տեղեկատվություն է ներկայացրել այն մասին, որ մոտեցել են իր տատին կենսաթոշակ վճարող բանկի Երևանում գտնվող մասնաճյուղ, ներկայացրել խնդիրը և բանկի կառավարչի թույլտվությամբ՝ աշխատակիցները մոտեցել են ավտոմեքենային և կազմակերպել ՀՀ-ում գտնվելու մասին հայտարարության ստորագրման գործընթացը:

Վերոգրյալի հետ մեկտեղ, հարկ է նկատել, որ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի և Միասնական սոցիալական ծառայության (այսուհետ՝ ՄՍԾ) տարածքային կենտրոնների միջև ձևավորված արդյունավետ համագործակցության արդյունքում հաշվետու տարվա ընթացքում հնարավոր է եղել վերականգնել կենսաթոշակառուի կենսաթոշակի վճարումը:

Այսպես, օրինակ՝ Պաշտպանին դիմած անձը տեղեկացրել է, որ արդեն 6 ամիս է հայրը տարիքային աշխատանքային կենսաթոշակ չի ստանում: Ըստ բողոք ներկայացրած անձի տեղեկացման՝ հայրն ունի առողջական լուրջ խնդիրներ (գտնվում է անկողնային վիճակում, երբեմն կորցնում է հիշողությունը), ինչի պատճառով չի կարողանում ներկայանալ բանկ և ստորագրել ՀՀ-ում լինելու մասին հայտարարությունը: Ըստ բողոք ներկայացրած անձի՝ անձամբ մոտեցել է ՄՍԾ և ներկայացրել իրավիճակը, սակայն արդյունքի չի հասել: Խնդրել է Պաշտպանի աջակցությունը հոր կենսաթոշակի վճարումը վերսկսելու հարցում:

սահմանվել են կենսաթոշակների և պետական նպաստների՝ բացառապես անկանխիկ եղանակով վճարմանն սահուն անցնելու համար անհրաժեշտ մեխանիզմներ՝ տարբեր օբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված տեղաշարժման սահմանափակում ունեցող և ներկայում կենսաթոշակը կամ նպաստը կանխիկ եղանակով ստացող անձանց համար (մանրամասն տե՛ս հետևյալ հղումով՝ https://www.e-draft.am/projects/9790, 20/03/2026թ.-ի դրությամբ):

Բարձրացված հարցը ՄԻՊ ներկայացուցիչը քննարկել է ՄՍԾ տարածքային կենտրոնի իրավասու ներկայացուցչի հետ՝ առաջարկելով շահառուի բնակարան այցելության միջոցով կազմակերպել ՀՀ-ում լինելու մասին հայտարարության ստորագրումը: Հաջորդիվ, բողոք ներկայացրած անձը ՄԻՊ աշխատակազմ լրացուցիչ տեղեկատվություն է հայտնել առ այն, որ բարձրացված հարցը Պաշտպանի աջակցությամբ ստացել է լուծում:

Թեև անհատական մակարդակում Պաշտպանի միջամտությամբ և իրավասու մարմնի հետ արդյունավետ համագործակցության արդյունքում նման բողոքներով բարձրացվող որոշ հարցեր ստանում են լուծում, այնուհանդերձ համակարգային առումով բարձրացված խնդիրը շարունակում է խնդրահարույց մնալ:

Համակարգային առումով արդիական խնդիր է շարունակում մնալ նաև ՀՀ տարածքից դուրս գտնվող ՀՀ քաղաքացիների չվճարված կենսաթոշակը ստանալու հնարավորության բացակայության հարցը: Դրա մասին են վկայում ինչպես նախորդ տարիների, այնպես էլ 2025 թվականի ընթացքում ՄԻՊ-ին հասցեագրվող բողոքները: Օրինակ՝ հաշվետու տարվա ընթացքում Պաշտպանին ներկայացված բանավոր բողոքներից մեկով անձը հայտնել է, որ իր տատը երկու տարուց ավել բացակայել է ՀՀ-ից, որի ընթացքում նրան կենսաթոշակ չի վճարվել: Հավելել է, որ ՀՀ վերադառնալուց հետո դիմել է ՄՍԾ տարածքային կենտրոն կենսաթոշակի վճարումը վերսկսելու համար և տեղեկացվել, որ նրան վճարվելու է միայն դիմելու ամսվան նախորդող մեկ տարվա կենսաթոշակի գումարը:

Այս համատեքստում հարկ է անդրադառնալ «Պետական կենսաթոշակների մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասին, ըստ որի՝ *եթե կենսաթոշակը վճարելը դադարեցվել է, ապա չվճարված կենսաթոշակի գումարը վճարվում է դիմելու կամ կենսաթոշակ վճարելը վերսկսելու (կենսաթոշակ ստանալու իրավունքը վերականգնելու) համար հիմք համարվող տեղեկատվությունը ստացվելու ամսվան նախորդող մեկ տարվա այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում անձը կենսաթոշակ ստանալու իրավունք է ունեցել:*

ՀՀ Կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի ««Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու մասին» թիվ 665-Ն որոշմամբ հաստատված 1-ին հավելվածի 51-րդ կետով սահմանվում է, որ *եթե կենսաթոշակը վճարելը դադարեցվել է, չվճարված կենսաթոշակի գումարը վճարվում է դիմելու կամ կենսաթոշակ վճարելը վերսկսելու (կենսաթոշակ ստանալու իրավունքը վերականգնելու) համար հիմք հանդիսացող տեղեկատվությունն ստացվելու ամսվան նախորդող մեկ տարվա այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում անձը կենսաթոշակ ստանալու իրավունք է ունեցել՝ հաշվի առնելով դիմելու ամսվան նախորդող ժամանակահատվածում կենսաթոշակի չափի հաշվարկման (վերահաշվարկման)՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանների փոփոխությունները: Այս դեպքում վճարվում է նաև դիմելու ամսվա կենսաթոշակի գումարը:*

Հարկ է նշել, որ Մարդու իրավունքների պաշտպանը վերը մեջբերված իրավանորմերի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ 2026 թվականի հունվարի 30-ին դիմում է ներկայացրել Սահմանադրական դատարան[386]:

Մարդու իրավունքների պաշտպանը խնդրահարույց է համարում այն, որ անձի կենսաթոշակ ստանալու իրավունքի առկայության պայմաններում չվճարված կենսաթոշակի գումարի վճարումը սահմանափակվում է միայն մեկ տարվա

[386] 2026 թվականի փետրվարի 18-ին Սահմանադրական դատարանը քննության է ընդունել ՄԻՊ դիմումը:

ժամանակահատվածով, ինչը, ըստ Պաշտպանի՝ հակասում է Սահմանադրությամբ երաշխավորված սեփականության իրավունքին:

Պաշտպանն ընդգծում է, որ պետության ցանկացած միջամտություն սեփականության իրավունքին, այդ թվում՝ կենսաթոշակի վճարման իրավունքի սահմանափակումը, պետք է լինի օրինական, կանխատեսելի, համաչափ և ուղղված ընդհանուր շահին, իսկ սեփականությունից զրկումը՝ որպես առավել խիստ միջամտություն, կարող է կիրառվել միայն բացառիկ դեպքերում և օրենքով հստակ ամրագրված պայմաններով:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ձևավորված կայուն իրավական դիրքորոշումներով ևս հաստատվում է, որ սեփականության իրավունքը հանդիսանում է սահմանադրական հիմնարար իրավունքներից մեկը, որի սահմանափակումը, ինչպես նաև սեփականությունից զրկումը հնարավոր է բացառապես օրենքով ամրագրված կարգով և պայմաններով:

Այսպիսով, Մարդու իրավունքների պաշտպանը եզրահանգել է, որ թեև անձն օրենսդրորեն ձեռք է բերում կենսաթոշակի և կենսաթոշակ ստանալու իրավունք, սակայն գործող օրենսդրության կարգավորումները հակասում են Սահմանադրությանը՝ ստեղծելով իրավիճակներ, երբ անձը ունի կենսաթոշակ ստանալու իրավունք, բայց կոնկրետ ժամանակահատվածի համար զրկվում է իրեն հասանելիք կենսաթոշակից:

Խնդրին բախվում են բազմաթիվ քաղաքացիներ, որոնցից շատերը հարցին լուծում գտնելու նպատակով դիմել են Մարդու իրավունքների պաշտպանին[387]:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պաշտպանը վերահաստատում է, որ անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել տեղաշարժման դժվարություններ (առողջական լուրջ խնդիրներ) ունեցող կենսաթոշակառուի՝ ՀՀ-ում լինելը հավաստելու վերաբերյալ հայտարարություն ստորագրելու օրենսդրական պահանջի կատարման առավել դյուրին կառուցակարգեր օրենսդրորեն մշակելու և իրացնելու ուղղությամբ:

Պաշտպանը խիստ կարևորում է նաև այնպիսի կառուցակարգերի մշակումն ու իրացումը, որոնք ՀՀ-ում չլինելու ամբողջ ժամանակահատվածի համար կենսաթոշակառուին չվճարված կենսաթոշակն ամբողջությամբ վճարելու իրավական հնարավորություն կտան:

1.5. Սխալմամբ կենսաթոշակառուին ավել վճարված կենսաթոշակի գումարները հետ գանձելու խնդիր

2025 թվականին Պաշտպանին շարունակել են հասցեագրվել բողոքներ՝ սխալմամբ (Հայաստանի Հանրապետության օրենքի խախտմամբ) կենսաթոշակառուին ավել վճարված կենսաթոշակի գումարները հետ գանձելու (կամ այլ կերպ՝ այդ գումարները ՀՀ պետական բյուջե վերադարձնելու պահանջը կենսաթոշակառուին ներկայացնելու) վերաբերյալ:

Այսպես, Պաշտպանին ներկայացված բողոքներից մեկով անձը հայտնել է, որ միայնակ (անժառանգ) կենսաթոշակառու է և 2014 թվականից ստանում է տարիքային աշխատանքային կենսաթոշակ: Հավելել է, որ Միասնական սոցիալական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) 2025 թվականի հունիսի 20-ի գրությամբ տեղեկացվել է, որ ի կատարումն Ծառայության պետի հրամանի՝ «Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲ ընկերությունում իրականացվել է իր աշխատելու

[387] Տե՛ս հետևյալ հղումով՝ https://www.ombuds.am/am/site/ViewNews/3693 (20/03/2026թ.-ի դրությամբ):

ժամանակահատվածը հաստատող փաստաթղթերում կատարված գրառումների հավաստիության ուսումնասիրություն, որի արդյունքում՝ ընկերությունում աշխատած, սակայն աշխատավարձ չվճարված ժամանակահատվածը՝ 14.03.1997-20.05.2003թթ., նվազեցվել է աշխատանքային ստաժի հաշվարկից և արձանագրվել է կենսաթոշակի ոչ իրավաչափ վճարում 259 200 ՀՀ դրամի չափով: Արդյունքում՝ Ծառայության կողմից կենսաթոշակառուին ներկայացվել է նշված գումարը պետական բյուջե վերադարձնելու պահանջ:

Նմանատիպ մեկ այլ բողոքով անձը հայտնել է, որ Ծառայության 2025 թվականի հունիսի 25-ի գրությամբ տեղեկացվել է, որ ի կատարումն Ծառայության պետի հրամանի՝ իրականացվել է իր աշխատելու ժամանակահատվածը հաստատող փաստաթղթերում կատարված գրառումների հավաստիության ուսումնասիրություն, որի արդյունքում՝ արձանագրվել է, որ «Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲ ընկերությունում աշխատանքային ծավալների կրճատման պատճառով 01.01.1996-10.10.2003 թվականներին իրեն չի վճարվել աշխատավարձ: Նշել է նաև, որ աշխատանքային ստաժում նվազեցվել է նշված ժամանակահատվածը և իրականացվել կենսաթոշակի վերահաշվարկ, որի արդյունքում՝ իր ընդհանուր աշխատանքային ստաժը կազմել է 46 տարի 2 ամիս 2 օր, իսկ կենսաթոշակի չափը՝ համապատասխանաբար 63 050 ՀՀ դրամ: Հավելել է, որ Ծառայությունից ստացված գրությամբ պահանջվել է ավել վճարված 384 000 ՀՀ դրամ գումարը վերադարձնել գանձապետական հաշվեհամարին:

Բողոք ներկայացրած անձանց պնդմամբ՝ վերոնշյալ ժամանակահատվածում և՛ աշխատել են, և՛ աշխատավարձ են ստացել: Բացի այդ, ըստ պնդման, կենսաթոշակը նշանակելիս իրենց կողմից ներկայացված աշխատանքային ստաժը հաստատող փաստաթղթերը կենսաթոշակային մարմնում ստուգվել են և համադրվել տվյալների շտեմարանում առկա տեղեկատվության հետ, որից հետո կենսաթոշակը նշանակվել և մինչև 2025 թվականի հունիսի 1-ը վճարվել է նույն աշխատանքային ստաժով:

Բողոքների քննարկման շրջանակներում Պաշտպանը պարզաբանումներ է պահանջել Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից: Ի պատասխան՝ ներկայացվել է տեղեկատվություն առ այն, որ Ծառայության պետի հրամանի համաձայն՝ «Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲ ընկերությունում իրականացված ստուգումների արդյունքում պարզվել է, որ խնդրո առարկա ժամանակահատվածների համար դիմող քաղաքացիներին աշխատավարձ չի վճարվել, որն էլ եղել է նշված ժամանակահատվածները նրանց աշխատանքային ստաժից նվազեցնելու և կենսաթոշակի վերահաշվարկման պատճառը: Նշել են նաև, որ երկու դեպքում էլ ավել վճարված կենսաթոշակները ենթակա են վերադարձման:

Հարկ է նշել, որ այս դիմում-բողոքները Պաշտպանի աշխատակազմում գտնվում են քննարկումների փուլում և պահանջում են հետագա լրացուցիչ ուսումնասիրություններ:

Բարձրացված խնդրի համատեքստում հարկ է անդրադարձ կատարել «Պետական կենսաթոշակների մասին» օրենքի իրավակարգավորումներին, որոնց ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ սխալմամբ (Հայաստանի Հանրապետության օրենքի խախտմամբ) ավել վճարված կենսաթոշակի գումարները կենսաթոշակ նշանակող ստորաբաժանման հետ փոխհամաձայնեցված ժամանակացույցի հիման վրա կարող են ՀՀ պետական բյուջե վերականգնվել ***կամ*** կենսաթոշակ նշանակող ստորաբաժանման այն աշխատակցի կողմից, որի մեղքով (գործողությունների կամ անգործության արդյունքում) վճարվել են ավել վճարված կենսաթոշակի գումարները ***կամ*** կենսաթոշակառուի, նրա օրինական ներկայացուցչի, նրանց փոխարեն կենսաթոշակն ստանալու՝ օրենքով այդ իրավունքն ունեցող անձի կամ այլ անձի կողմից:

Այսպիսով, ստացվում է, որ սխալմամբ ավել վճարված կենսաթոշակի գումարը հետ գանձելու լիազորության իրացման ընթացքում վարչական մարմնին տրված է հայեցողություն, որը պետք է իրացվի համաչափության և այլ սկզբունքների պահպանմամբ: Հայեցողական լիազորություն իրականացնելիս անհրաժեշտ է, որպեսզի յուրաքանչյուր դեպքով վարչական մարմինը քննարկման առարկա դարձնի գործի բոլոր հանգամանքները, այդ թվում՝ անձի օգտին առկա հանգամանքները: Ուստի, վարչական ակտի ընդունման իրավաչափությունը պայմանավորված է ապացույցների և գործի հանգամանքների պատշաճ գնահատման և հայեցողության պատշաճ իրացման հանգամանքներով:

Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված հայեցողական լիազորությունների իրացման խնդրին, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ պետաիշխանական լիազորություններով օժտված ցանկացած մարմնին, վերջինիս գործառնական կարգավիճակին համապատասխան, օրենքով կարող են վերապահվել ինչպես պարտադիր, այնպես էլ հայեցողական լիազորություններ: Վճռաբեկ դատարանը կարևորել է նաև «հայեցողություն» կատեգորիայի իրավական բովանդակության բացահայտման անհրաժեշտությունը: ***Ըստ Վճռաբեկ դատարանի՝ «հայեցողությունը» թույլատրելի իրավաչափ վարքագծի ընտրության կամ դրսևորման հնարավորությունն է[388]: Որպես ուղենիշ պետք է հիմք ընդունվի իրավունքի գերակայության սկզբունքը, մարդու և քաղաքացու՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության գաղափարը[389]:***

Մեկ այլ որոշմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով ամրագրված վարչական մարմնի հայեցողական լիազորության հասկացությունից հետևում է, որ.

1) հայեցողական լիազորությունը պետք է վարչական մարմնին վերապահված լինի օրենքով,

2) հայեցողական լիազորությունը հանգում է մի քանի լուծումներից մեկն ընտրելու և այն իրացնելու՝ վարչական մարմնի հնարավորությանը,

3) վարչական մարմնի կողմից ընտրվող և իրացվող բոլոր լուծումները պետք է լինեն իրավաչափ. վարչական մարմինը չի կարող ընտրել որևէ լուծում, որը դուրս է հայեցողական լիազորությունների՝ օրենքով սահմանված շրջանակներից և ուղղված չէ օրենքով հետապնդվող նպատակներին:

Նշված որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը փաստել է, որ իրավական պետությունում պետաիշխանական լիազորություններով օժտված բոլոր սուբյեկտներին վերապահված հայեցողական լիազորությունները կարող են գործադրվել միայն իրավունքի սահմաններում[390]:

Այսպիսով, հայեցողական լիազորության իրացումը յուրաքանչյուր գործով փաստերի և ներկայացված ապացույցների համակցության մեջ գնահատման միջոցով և օրենքով կանխորոշված նպատակի հետ ողջամիտ հարաբերակցություն է ենթադրում: Ուստի, սխալմամբ ավել վճարված կենսաթոշակի գումարները ՀՀ պետական բյուջե վերադարձնելու պահանջ ներկայացնելու հայեցողական լիազորությունն իրացնելիս

---

[388] Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ *«Հայեցողություն» եզրույթի ներքո պետք է նկատի ունենալ նպատակահարմարության և օրինականության ողջամիտ հարաբերակցությունը* (տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ԳԴ4/0504/02/14 որոշումը):

[389] Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2022 թվականի ապրիլի 14-ի թիվ ՎԴ/0424/05/18 որոշումը:

[390] Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2015 թվականի նոյեմբերի 27-ի թիվ ԵՇԴ/3780/02/14 որոշումը:

վարչական մարմինը պետք է ապահովի գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները *(օրինակ՝ կենսաթոշակառուի միայնակ, անժառանգ լինելը, ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված լինելը, կենսաթոշակը միակ եկամուտը լինելը և այլն)*:

Ելնելով վերոգրյալից՝ Պաշտպանը վերահաստատում է, որ սխալմամբ ավել վճարված կենսաթոշակի գումարները ՀՀ պետական բյուջե վերադարձնելու պահանջ ներկայացնելու հայեցողական լիազորությունն իրացնելիս էական նշանակություն ունի գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումն ու դրա ելքի վրա ազդող բոլոր հանգամանքների հաշվառումը:

1.6. Ծնողական փառքի մեդալով պարգևատրմանն առնչվող խնդիրները սոցիալական ապահովության իրավունքի արդյունավետ ապահովման համատեքստում

Ծնողական փառքի մեդալը շնորհվում է ՀՀ քաղաքացի հանդիսացող այն ծնողներին (ծնողին), որդեգրողներին (որդեգրողին), ***որոնք դաստիարակել և դաստիարակում են 6 և ավելի զավակ:*** Նշված մեդալով պարգևատրվում են այն ծնողները (որդեգրողները), ***որոնք կազմում են ընտանիք, վարում են առողջ ապրելակերպ, ապահովում են զավակների առողջության, կրթության, ֆիզիկական, հոգևոր և բարոյական լիարժեք ու ներդաշնակ զարգացման համար անհրաժեշտ պայմաններ, օրինակ են ծառայում զավակների դաստիարակության և ընտանիքի ամրապնդման գործում***[391]***:*** Ծնողական փառքի մեդալով պարգևատրված անձանց տրվում է ամենամսյա պատվովճար (100 000 ՀՀ դրամի չափով), որի նշանակման ու վճարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ կառավարության 2022 թվականի ապրիլի 28-ի թիվ 591-Ն որոշմամբ:

2025 թվականի ընթացքում Պաշտպանին ներկայացվել են բողոքներ 6 և ավելի երեխա ունեցող ծնողներից, որոնք վերաբերել են մարզպետի (կամ համայնքի ղեկավարի) կողմից Ծնողական փառքի մեդալով պարգևատրելու վերաբերյալ ՀՀ վարչապետին ներկայացված առաջարկությունը մերժելուն[392]՝ այն պարագայում, երբ իրենց

---

[391] Մանրամասն տե՛ս «Հայաստանի Հանրապետության պետական պարգևների և պատվավոր կոչումների մասին» օրենքի 27-րդ հոդվածը և 45-րդ հոդվածի 3.1-ին մասը: Հատկանշական է, որ «Բազմազավակ ընտանիքների մասին» օրենքի նախագծով նախատեսվել է այս մեդալի շնորհման այլ կարգավորում: Այսպես, նշված օրինագծի 18-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ այն բազմազավակ ծնողները, իսկ միածնող ընտանիքի դեպքում՝ միակ բազմազավակ ծնողը, որոնք (որը) ծնել կամ որդեգրել են (է) և խնամում են (է) վեց և ավելի երեխա, պարգևատրվում է Ծնողական փառքի մեդալով *(նախագիծը և դրա ընդունման հիմնավորումը հասանելի են հետևյալ հղումով՝ https://www.e-draft.am/projects/3084/about՝ 20/03/2026 թվականի դրությամբ)*:

[392] Ըստ «Հայաստանի Հանրապետության պետական պարգևների և պատվավոր կոչումների մասին» օրենքի՝ Հանրապետության նախագահին Հայաստանի Հանրապետության պետական պարգևներով պարգևատրելու կամ պատվավոր կոչում շնորհելու վերաբերյալ միջնորդությամբ դիմելու իրավասություն ունեն վարչապետը, Ազգային ժողովի, Սահմանադրական դատարանի և Բարձրագույն դատական խորհրդի նախագահները: Վարչապետն իրավասու է միջնորդությամբ դիմելու Հանրապետության նախագահին ՀՀ բոլոր պետական պարգևների և պատվավոր կոչումների վերաբերյալ: Վարչապետը ՀՀ պետական պարգևներով պարգևատրելու կամ պատվավոր կոչում շնորհելու վերաբերյալ միջնորդությամբ դիմում է սեփական նախաձեռնությամբ և Սահմանադրությամբ նախատեսված մարմինների, ինչպես նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց առաջարկությունների հիման վրա: Կառավարությանը և վարչապետին ենթակա մարմինների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված այլ մարմինների և համայնքի ղեկավարներն

ընտանիքների նկարագիրը, ըստ բողոք ներկայացրած անձանց, բավարարում է «Հայաստանի Հանրապետության պետական պարգևների և պատվավոր կոչումների մասին» օրենքով սահմանված պահանջներին: Ըստ բողոքների՝ *վերջին տարիներին հիշյալ մեդալին հավակնող ոչ մի ընտանիք չի ներկայացվել պարգևատրման:* Հավելել են, որ բարձրացված հարցով բազմիցս դիմել են ինչպես տեղական ինքնակառավարման, այնպես էլ տարբեր պետական մարմինների (այդ թվում՝ Վարչապետի աշխատակազմ), սակայն արդյունքի չեն հասել:

Նշված բողոքների քննարկման շրջանակում Վարչապետի աշխատակազմից ստացվել է պարզաբանում այն մասին, որ Ծնողական փառքի մեդալով պարգևատրելու վերաբերյալ միջնորդությամբ ՀՀ նախագահին դիմելը վարչապետի *հայեցողական լիազորությունն է:* Ըստ Վարչապետի աշխատակազմից ստացված տվյալների՝ ***2022 թվականից մինչև պատասխան գրություն ներկայացնելու օրը (2025 թվականի սեպտեմբեր 10-ը) վարչապետի կողմից Ծնողական փառքի մեդալով պարգևատրման որևէ միջնորդություն Հանրապետության նախագահին չի ներկայացվել:***

Թեև, պետական պարգևների վերաբերյալ օրենսդրության վերլուծությունը վկայում է, որ վերը նշված մեդալով պարգևատրելու վերաբերյալ միջնորդությամբ ՀՀ նախագահին դիմելը վարչապետի հայեցողական լիազորությունն է, այնուհանդերձ ստացված տվյալները թույլ են տալիս եզրակացնել, որ բազմազավակ ծնողների պետական խրախուսման համակարգը գործուն և արդյունավետ չէ, ինչի հետևանքով՝ 6 և ավելի երեխա ունեցող ու հիշյալ մեդալին հավակնող ծնողները զրկվում են ամսական պատվովճարից: Մինչդեռ, այսպիսի դրամական աջակցությունը ոչ միայն հնարավորություն կտար ընդգծել բազմազավակ ծնողների ունեցած ավանդը ժողովրդագրական իրավիճակի բարելավման և առաջընթացի գործում, այլ նաև կստեղծեր լրացուցիչ սոցիալական երաշխիքներ այդ ընտանիքների համար և, ըստ էության, կբխեր Սահմանադրության 83-րդ հոդվածով երաշխավորված բազմազավակության դեպքում սոցիալական ապահովության իրավունք ունենալու տրամաբանությունից:

Այսպիսի մոտեցումը համահունչ կլիներ նաև ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածով ամրագրված պետության քաղաքականության հիմնական նպատակներին: Մասնավորապես, տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներից է (...) ***ծնելիության և բազմազավակության խթանումը:*** Ընդ որում, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց իրավասությունների և հնարավորությունների շրջանակում պարտավոր են իրագործել այդ հոդվածով սահմանված նպատակները (տե՛ս Սահմանադրության 87-րդ հոդվածի 1-ին մասը):

Բացի այդ, այն կնպաստեր նաև ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հավանության արժանացած Կառավարության հնգամյա ծրագրի[393] 4-րդ՝ «Մարդկային կապիտալի զարգացում» բաժնի 4.1-ին ենթաբաժնում տեղ գտած մի շարք նպատակների իրագործմանը, ինչպես նաև նախադրյալներ կստեղծեր ՀՀ կառավարության 2024 թվականի հոկտեմբերի 17-ի թիվ 1641-Լ որոշմամբ հաստատված

առաջարկությունը վարչապետին ներկայացնում են անմիջականորեն, իսկ նախարարություններին ենթակա մարմինների ղեկավարները՝ համապատասխան նախարարի միջոցով:

[393] Էլեկտրոնային տարբերակը հասանելի է հետևյալ հղումով՝ file:///D:/Data/Downloads/2021_n1363hav.pdf (20/03/2026 թվականի դրությամբ):

ՀՀ ժողովրդագրական իրավիճակի բարելավման 2024-2040 թվականների ռազմավարության[394] 3-րդ գլխում նշված հիմնախնդիրների լուծման համար:

Բազմազավակ ընտանիքների աջակցության արտասահմանյան փորձի ուսումնասիրությունը նույնպես վկայում է, որ բազմազավակության պետական խրախուսման համակարգը որոշ երկրներում ակտիվ գործում է և կրում է շարունակական բնույթ: Օրինակ՝ վերջին տարիներին Ղազախստանում բազմաթիվ բազմազավակ մայրերի շնորհվել են «Կումիս ալկա (Күміс алқа)» *(6 երեխա ծնած և դաստիարակած)* և «Ալտին ալկա (Алтын алқа)» *(7 և ավելի երեխա ծնած ու դաստիարակած)* պետական պարգևներ[395]: Հարկ է նշել, որ այս պարգևներով պարգևատրված բազմազավակ մայրերը ստանում են ամենամսյա նպաստ, որի չափը կազմում է համապատասխանաբար՝ 25 165 և 29 097 տենգե[396]:

Ուկրաինայում այն բազմազավակ մայրերը, որոնք ծնել և առնվազն մինչև 8 տարեկանը լրանալը մեծացրել են 5 և ավելի երեխա, կարող են ստանալ «Հերոսուհի մայր» պատվավոր կոչումը: Այսպես, օրինակ՝ հրապարակային աղբյուրների ուսումնասիրությունը վկայում է, որ 2025 թվականին Դնեպրոպետրովսկի մարզում 22 կին ստացել է հիշյալ պատվավոր կոչումը: Կոչման հետ մեկտեղ, մայրերը ստանում են ավելի քան 30 000 գրիվնա միանվագ վճար: 2025 թվականին ընդհանուր առմամբ մարզաբնակ 31 կին է ստացել այդ կոչումը[397]:

Ռուսաստանի Դաշնությունում «Հերոսուհի մայր» պատվավոր կոչումը շնորհվում է այն կանանց, ովքեր ծնել և մեծացրել են 10 կամ ավելի երեխա: Ծնողական փառքի շքանշանը շնորհվում է 7 կամ ավելի երեխա մեծացնող ծնողներին, իսկ այս շքանշանի մեդալը՝ 4 կամ ավելի երեխա մեծացնող ծնողներին: Հատկանշական է, որ «Հերոսուհի մայր» պատվավոր կոչմանն արժանացած կանայք ստանում են միանվագ 1 միլիոն ռուբլի: Ծնողական փառքի շքանշանով պարգևատրված մայրերն ու հայրերը՝ 500 000 ռուբլի, իսկ շքանշանի մեդալով պարգևատրված ծնողները՝ 200 000 ռուբլի:

ՌԴ Կառավարության 2024 թվականի հունիսի 18-ի կարգադրությամբ այդ նպատակի համար հատկացվել է 60 միլիոն ռուբլի: Ընդ որում, Կառավարությունը նմանատիպ որոշում է ընդունել նաև 2024 թվականի մարտ ամսին: Այդ ժամանակ վճարումների համար լրացուցիչ ֆինանսավորման չափը կազմել է ավելի քան 30 միլիոն ռուբլի[398]:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Պաշտպանն առաջարկում է միջոցներ ձեռնարկել բազմազավակ ծնողների պետական խրախուսման համակարգի գործուն և արդյունավետ իրականացումը երաշխավորելու ուղղությամբ՝ ապահովելով բազմազավակության դեպքում սոցիալական ապահովության իրավունքի արդյունավետ կիրառումը:

---

[394] Էլեկտրոնային տարբերակը հասանելի է հետևյալ հղումով՝ file:///D:/Data/Downloads/2024_n1641hav.%20(2).pdf (20/03/2026 թվականի դրությամբ):

[395] Մանրամասն տե՛ս հետևյալ հրապարակումները՝ https://surl.li/toygzy, https://surl.li/enefaa, https://surli.cc/poswib (20/03/2026 թվականի դրությամբ):

[396] Մանրամասն տե՛ս հետևյալ հրապարակումը՝ https://surli.cc/gnmptx (20/03/2026 թվականի դրությամբ):

[397] Մանրամասն տե՛ս հետևյալ հրապարակումները՝ https://surl.li/eenock, https://surl.lt/mfsork (20/03/2026 թվականի դրությամբ):

[398] Մանրամասն տե՛ս հետևյալ հրապարակումը՝ http://government.ru/docs/52274/ (20/03/2026 թվականի դրությամբ):

2. Սոցիալական աջակցության իրավունքների ապահովումը

2.1. Ընտանիքի անապահովության գնահատման նոր համակարգի գործարկման ընթացքում առաջացած խնդիրներ

ՀՀ կառավարության 2025 թվականի հունվարի 9-ի թիվ 27-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) 2025 թվականի մարտի 17-ից Կոտայքի և Սյունիքի մարզերում ներդրվել է ընտանիքի անապահովության գնահատման նոր համակարգ, որն ամբողջ հանրապետությունում նախատեսվում է ներդնել 2026 թվականի հուլիսի 1-ից: Պիլոտային 2 մարզերում ներդրված անապահովության գնահատման նոր համակարգի գործարկումից հետո Մարդու իրավունքների պաշտպանին սկսել են հասցեագրվել բողոքներ, որոնց քննարկման արդյունքում վեր են հանվել օրենսդրական և գործնական խնդիրներ: Դրանց լուծման ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու տեսանկյունից Պաշտպանը կարևորում է գործուն քայլերի իրականացման անհրաժեշտությունը:

Այսպես, օրինակ՝ Պաշտպանին ներկայացված բողոքներից մեկով անձը հայտնել է, որ վարձակալական հիմունքներով բնակվում է Սյունիքի մարզի Սիսիան քաղաքում: Հավելել է, որ 67 տարեկան է, բնակվում է միայնակ և տարիներ շարունակ ստացել է անապահովության նպաստ (20 000 դրամի չափով), սակայն 2025 թվականի օգոստոս ամսից նպաստ ստանալու իրավունքը դադարեցվել է: Բողոք ներկայացրած անձի տեղեկացմամբ՝ ստանում է 60 000 դրամ հաշմանդամության աշխատանքային կենսաթոշակ, որը չի բավականացնում բնակվարձի (կազմում է 40 000 դրամ), կոմունալ վճարների (յուրաքանչյուր ամիս մոտ 13 000 դրամ) և իր կենսաապահովման առօրյա կարիքները հոգալու համար, ուստի խնդրել է Պաշտպանի աջակցությունն անապահովության նպաստ ստանալու իրավունքը վերականգնելու հարցում:

Նմանատիպ մեկ այլ բողոքով Պաշտպանին դիմած անձը հայտնել է, որ 74 տարեկան է, միայնակ բնակվում է Կոտայքի մարզի Աբովյան քաղաքում: Հայտնել է նաև, որ իր նկատմամբ սահմանված է 2-րդ խմբի հաշմանդամություն, ունի մի շարք առողջական խնդիրներ, ավելին՝ գտնվում է անկողնային վիճակում և չի կարողանում ինքնուրույն տեղաշարժվել: Ըստ բողոք ներկայացրած անձի՝ միակ եկամուտը եղել է անապահովության նպաստը (20 000 դրամ) և հաշմանդամության աշխատանքային կենսաթոշակը (կազմում է 60 650 դրամ), սակայն 2025 թվականի մայիս ամսից նպաստ ստանալու իր իրավունքը դադարեցվել է: Նշել է նաև, որ անապահովության նպաստի գումարով է ձեռք բերել անհրաժեշտ դեղորայքը, իսկ ներկայում միայն կենսաթոշակի գումարը չի բավարարում նույնիսկ նվազագույն կարիքները հոգալու համար: Հավելել է, որ չունի իրեն աջակցություն ցուցաբերող ազգական, միակ օգնականն իրեն այցելող՝ «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության աշխատակիցն է:

Նշված բողոքների քննարկման շրջանակներում Մարդու իրավունքների պաշտպանը պարզաբանումներ է պահանջել Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից: Վկայակոչելով Որոշման մի շարք իրավակարգավորումներ՝ նախարարությունից հայտնել են, որ անապահովության նպաստ ստանալու իրավունք ունի որոշմամբ հաստատված ընտանիքի անապահովության գնահատման կարգով սոցիալապես անապահով ճանաչված այն ընտանիքը, որի մեկ հաշվարկային անդամի ամսական եկամտի չափը ցածր է ՀՀ կառավարության կողմից տվյալ տարվա համար սահմանված անապահովության նպաստ ստանալու իրավունք տվող սահմանային շեմից և ընտանիքի համար հաշվարկված անապահովության նպաստի չափը բարձր է ՀՀ կառավարության կողմից տվյալ տարվա համար սահմանված անապահովության նպաստի

նվազագույն չափից: Հայտնել են նաև, որ 2025 թվականի համար անապահովության նպաստ ստանալու իրավունք տվող սահմանային շեմը սահմանվել է 34 581 ՀՀ դրամը:

Համաձայն նախարարությունից ստացված տեղեկատվության՝ բողոք ներկայացրած անձանց անապահովության նպաստը վերականգնելու իրավական հիմքեր առկա չեն, քանի որ վերջիններիս ամսական եկամտի չափը բարձր է ՀՀ կառավարության կողմից 2025 թվականի համար սահմանված անապահովության նպաստ ստանալու իրավունք տվող սահմանային շեմից:

Հարկ է նկատել, որ նմանատիպ բոլոր դեպքերում անձանց անապահովության նպաստ ստանալու իրավունքը դադարեցվել է՝ ամսական եկամտի չափը ՀՀ կառավարության կողմից 2025 թվականի համար սահմանված անապահովության նպաստ ստանալու իրավունք տվող սահմանային շեմից բարձր լինելու հիմքով:

Վերոգրյալի համատեքստում՝ հարկ է նշել, որ Կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 1902-Լ որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների» ծրագրի 19-րդ կետի համաձայն՝ *նախատեսվում էր մինչև 2026 թվականը նվազագույն կենսաթոշակի և կենսաթոշակի միջին չափերը համապատասխանաբար հավասարեցնել պարենային և սպառողական զամբյուղների արժեքներին*[399]*:* Այսինքն, ստացվում է, որ կենսաթոշակի միջին չափի և սպառողական զամբյուղի արժեքի միջև փոխկապվածության և համաչափության ապահովումը Կառավարության կողմից իրականացվող քաղաքականության առաջնային ուղղություններից է:

Ըստ Վիճակագրական կոմիտեի «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2024 թվականի հունվար-դեկտեմբերին» և «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2025 թվականի հունվար-դեկտեմբերին» զեկույցների[400]՝ նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը[401] 2024 և 2025 թվականի IV-րդ եռամսյակի միջին ընթացիկ գներով *(հաշվարկված Արմստատի կողմից՝ համաձայն Առողջապահության նախարարության կողմից մշակված սննդամթերքի կազմի, կառուցվածքի և էներգետիկայի վերաբերյալ նորմատիվների)* կազմել է համապատասխանաբար՝ ***75 811.0*** և ***78 836.3*** դրամ, իսկ Համաշխարհային բանկի մեթոդաբանությամբ իրականացված հաշվարկի դեպքում՝ մեկ մեծահասակի հաշվով կազմել է համապատասխանաբար՝ ***67 875.9*** և ***68 784.1*** դրամ[402]:

Այսպիսով, եթե վերոգրյալի լույսի ներքո դիտարկենք հիշյալ դեպքերը, կստացվի, որ բողոք ներկայացրած անձանց նույնիսկ միջինից բարձր[403] կենսաթոշակների չափերը (60

---

[399] Այս համատեքստում հարկ է նաև հավելել, որ 2025 թվականին շրջանառության մեջ է դրվել «Պետական կենսաթոշակների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծ, որով առաջարկվում է 2026 թվականի հունվարի 1-ից սահմանել ստորին շեմեր՝ նվազագույն կենսաթոշակի և միջին աշխատանքային կենսաթոշակի չափի համար, այն է՝ պարենային զամբյուղի և սպառողական զամբյուղի ամսական արժեքները: Հասանելի է հետևյալ հղումով՝ http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=12846&Reading=0: Հաջորդիվ, օրինագծի փաթեթի ընդունումը համարվել է ոչ նպատակահարմար և այն հանվել է շրջանառությունից:

[400] Հասանելի են հետևյալ հղումներով՝ https://www.armstat.am/am/?nid=82&id=2716, https://armstat.am/am/?nid=82&id=2796 (20/03/2026թ.-ի դրությամբ):

[401] Ըստ Վիճակագրական կոմիտեի՝ ՀՀ-ում նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը որևէ օրենքով կամ այլ իրավական ակտով ընդունված չէ (պաշտոնապես սահմանված չէ):

[402] Տե՛ս նշված զեկույցները, համապատասխանաբար էջեր՝ 19-20, 16-17:

[403] Ըստ Վիճակագրական կոմիտեի՝ նշանակված ամսական կենսաթոշակի միջին չափը 2024 թվականին կազմել է 49 567 դրամ, տեղեկատվությունը հասանելի է հետևյալ հղումով՝ https://armstat.am/file/doc/99563928.pdf (20/03/2026թ.-ի դրությամբ): 2025 թվականի վերաբերյալ տեղեկատվություն նշված օրվա դրությամբ առկա չէ:

000 և 60 650 դրամ) պակաս են եղել նվազագույն սպառողական զամբյուղի արժեքից: Եթե անգամ անկանխիկ եղանակով վճարումներից կենսաթոշակառուներին հետվճար տրամադրվեր՝ 6 000 դրամի չափով (այդ պահին գործող օրենսդրության համաձայն), ապա այդ դեպքում ևս բողոք ներկայացրած անձանց կենսաթոշակների չափերը պակաս կլինեին նվազագույն սպառողական զամբյուղի արժեքից:

Ամփոփելով վերոգրյալը՝ հարկ է նշել, որ բողոք ներկայացրած անձանց անապահովության նպաստ ստանալու իրավունքը դադարեցնելիս ՄՍԾ տարածքային կենտրոնները, Որոշման մեջ համապատասխան կառուցակարգերի բացակայության պատճառով, հաշվի չեն առել վերոգրյալ հանգամանքները և հիմք են ընդունել բացառապես այն հանգամանքը, որ բողոք ներկայացրած անձանց ամսական եկամտի չափը ՀՀ կառավարության կողմից 2025 թվականի համար սահմանված անապահովության նպաստ ստանալու իրավունք տվող սահմանային շեմից բարձր է եղել: Արդյունքում, այդ անձանց կենսամակարդակը վատթարացել է: Որոշմամբ ամրագրված մոտեցումը համահունչ չէ Սահմանադրությամբ երաշխավորված սոցիալական ապահովության իրավունքի տրամաբանությանը և «Պետական նպաստների մասին» օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված՝ պետական նպաստների տրամադրման նպատակներին: Դրանք են, մասնավորապես՝ *1) անապահով ընտանիքների կենսամակարդակի բարձրացմանն օժանդակելը կամ դրա վատթարացումը կանխելը, 2) ընտանիքի կամ քաղաքացու որոշակի ծախսերի մասնակի հատուցումը, 3) սոցիալական ապահովության իրավունքի իրականացումը:*

Վերոգրյալի հաշվառմամբ՝ գտնում ենք, որ քննարկվող իրավիճակներում կենսաթոշակը՝ ընտանիքի եկամտի կազմի մեջ ներառելը հիմնավորված և արդարացված կարող էր լինել միայն այն պարագայում, երբ կենսաթոշակի միջին չափը հավասար լիներ նվազագույն սպառողական զամբյուղի արժեքին: Նախքան այդ, գտնում ենք, որ նման իրավիճակներում անապահովության նպաստ ստանալու իրավունքը դադարեցնելը խնդրահարույց է և չի բխում ո՛չ սոցիալական ապահովության իրավունքի պատշաճ ապահովման տրամաբանությունից, ո՛չ պետական նպաստների տրամադրման նպատակներից, ո՛չ էլ կենսաթոշակի միջին չափի և սպառողական զամբյուղի արժեքի միջև փոխկապվածության և համաչափության ապահովմանն ուղղված ՀՀ կառավարության կողմից իրականացվող քաղաքականությունից:

Ամփոփելով վերոգրյալը՝ հարկ է նկատի ունենալ նաև Սահմանադրական դատարանի 2014 թվականի ապրիլի 2-ի թիվ ՍԴՈ-1142 որոշմամբ արտահայտած դիրքորոշումը, ըստ որի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ «կենսաթոշակ» հասկացությունը որևէ ձևով ամրագրված չէ: Սակայն «սոցիալական» եզրույթը դիտարկվում է որպես պետության սոցիալական բնույթի բնութագրիչ, խտրականությունը բացառող հանգամանք, աշխատողի շահի դրսևորում, սոցիալական ապահովության իրավունքի բնութագրիչ, պետության հիմնական խնդիրների սահմանները բնորոշող ոլորտ, կառավարության կողմից իրականացվող քաղաքականության բնագավառ: Բոլոր դեպքերում էականն այն է, որ իրեն նաև սոցիալական հռչակած պետությունը սահմանադրորեն որդեգրում է մարդկանց սոցիալական կյանքին առնչվող խնդիրների նկատմամբ հստակ դիրքորոշումներ: Դրանց թվում՝ սոցիալական ապահովության իրավունքը ճանաչվել է որպես ՀՀ քաղաքացիների հիմնական իրավունքներից մեկը և Սահմանադրության 3-րդ հոդվածի ուժով պետությունը սահմանափակված է նաև այս իրավունքով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:

Հայաստանի Հանրապետությունը, վավերացնելով Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին 1966 թվականի դեկտեմբերի 16-ի միջազգային

դաշնագիրը, նաև դրա 9-րդ հոդվածով է միջազգային պարտավորություն ստանձնել ճանաչելու յուրաքանչյուրի սոցիալական ապահովության իրավունքը:

Վկայակոչված որոշմամբ Սահմանադրական դատարանն ընդգծել է, որ այդ իրավունքի երաշխավորման, ապահովման ու պաշտպանության հիմնական առանձնահատկություններից մեկն այն է, որ սահմանադրական դրույթի հիման վրա սոցիալական ապահովության ծավալն ու ձևերը սահմանվում են օրենքով: Սահմանադրական իրավակարգավորումից հստակ է, որ օրենսդրի հայեցողությանն է թողնված ինչպես սոցիալական ապահովության ծավալի՝ քանակական որոշակիության, այնպես էլ ձևերի ընտրության խնդիրը: ***Տվյալ ոլորտում, համաչափության և համամասնականության հիմնարար սկզբունքների պահանջներից ելնելով՝ հայեցողության սահմանները պայմանավորվում են, մի կողմից, պետության սոցիալ-տնտեսական հնարավորություններով, մյուս կողմից՝ սոցիալական պետության սահմանադրական բնույթի պահանջներով[404]:***

Այսպիսով, ստացվում է, որ պետությունն ունի լայն հայեցողություն՝ այս ոլորտում քաղաքականություն մշակելու և այն իրականացնելու հարցերում, ի թիվս այլնի, հիմնվելով տնտեսական և ֆինանսական ընթացիկ հնարավորությունների վրա: Այնուհանդերձ, սոցիալական ապահովության իրավունքի պատշաճ երաշխավորման, ապահովման ու պաշտպանության տեսանկյունից՝ կարծում ենք, որ վերը նշված իրավիճակներում (միայնակ չաշխատող կենսաթոշակառուների դեպքում) անհրաժեշտ է ձեռնպահ մնալ անձանց անապահովության նպաստ ստանալու իրավունքը դադարեցնելու պրակտիկայից, այնքան ժամանակ՝ մինչև կենսաթոշակի միջին չափը կհավասարեցվի նվազագույն սպառողական զամբյուղի արժեքին: Այս տեսանկյունից, ողջունելի են իրավասու պաշտոնատար անձանց հայտարարություններն առ այն, որ 2026 թվականի ապրիլի 1-ից վերանայվելու (բարձրացվելու) են կենսաթոշակները[405]:

Պաշտպանին հընթացս հասցեագրվել է նաև խնդրի հետ փոխկապակցված այլ դիմում-բողոք, որով անձը տեղեկացրել է, որ իր վեց հոգուց բաղկացած ընտանիքը բնակվում է Սյունիքի մարզի Կապան քաղաքում գտնվող մեկսենյականոց բնակարանում: Հավելել է, որ իր ընտանիքը տարիներ շարունակ ստացել է անապահովության նպաստ, սակայն ՄՍԾ 2025 թվականի նոյեմբերի 1-ի կարգադրությամբ անապահովության նպաստի վճարումը դադարեցվել է: Բողոք ներկայացրած անձի տեղեկացմամբ՝ հիշյալ կարգադրությունում նշված է. «Նպաստի վճարման դադարեցման փաստացի հիմքը՝ ընտանիքի մեկ հաշվարկային անդամի ամսական եկամտի չափը բարձր է ՀՀ կառավարության կողմից տվյալ տարվա համար սահմանված անապահովության նպաստ ստանալու իրավունք տվող սահմանային շեմից կամ առկա է Որոշման 1-ին հավելվածով սահմանված որևէ բացառող գործոն կամ ընտանիքի կեցության պայմանների ուսումնասիրության արդյունքը 0 է»:

Բողոք ներկայացրած անձի տեղեկացմամբ՝ վեց հոգուց բաղկացած ընտանիքի միակ եկամուտը կնոջ հաշմանդամության աշխատանքային կենսաթոշակն է, որը կազմում է 36 000 դրամ *(հետևաբար, ըստ բողոք ներկայացրած անձի, ընտանիքի մեկ հաշվարկային անդամի ամսական եկամտի չափը կազմում է 6 000 դրամ, որը ցածր է Կառավարության կողմից 2025 թվականի համար սահմանված անապահովության նպաստ ստանալու իրավունք տվող սահմանային շեմից)*: Ինչ վերաբերում է ընտանիքի կեցության պայմանների ուսումնասիրության արդյունքին, ապա, ըստ բողոք ներկայացրած անձի,

---

[404] Հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.arlis.am/hy/acts/89650 (20/03/2026թ.-ի դրությամբ):

[405] Հասանելի են հետևյալ հղումներով՝ https://www.facebook.com/share/v/1AtTAPApEw/?mibextid=wwXIfr, https://www.facebook.com/share/v/1GGJfxUheN/?mibextid=wwXIfr (20/03/2026թ.-ի դրությամբ):

2025 թվականի սեպտեմբեր ամսին ՄՄԾ Կապանի տարածքային կենտրոնի մասնագետը կատարել է տնայց, որի արդյունքում իր ընտանիքը ճանաչվել է սոցիալապես անապահով:

Ըստ բողոք ներկայացրած անձի՝ հնարավոր է իր ընտանիքի անապահովության նպաստի վճարման դադարեցումը պայմանավորված է Որոշման 1-ին հավելվածով սահմանված որևէ բացառող գործոնի առկայությամբ: Այս կապակցությամբ բողոք ներկայացրած անձը հավելել է, որ Որոշման 1-ին հավելվածով սահմանված են ընտանիքի անապահովության գնահատման ժամանակ անապահովության հիմքով սոցիալական աջակցության տրամադրումը բացառող մի շարք գործոններ, մինչդեռ ՄՄԾ-ի կարգադրությամբ հստակ նշված չէ, թե կոնկրետ ո՞ր բացառող գործոնն է հիմք հանդիսացել իր ընտանիքի անապահովության նպաստ ստանալու իրավունքի դադարեցման համար: Բացի այդ, բողոք ներկայացրած անձը նշել է, որ նպաստ ստանալու իրավունքը դադարեցնելու արդյունքում իր ընտանիքը հայտնվել է սոցիալապես ծանր վիճակում:

Բողոք ներկայացրած անձի ընտանիքի անապահովության նպաստ ստանալու իրավունքը դադարեցնելու իրավական հիմքերի վերաբերյալ Պաշտպանը պարզաբանումներ է պահանջել Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից: Ի պատասխան՝ տեղեկացրել են, որ Որոշմամբ սահմանվել են ընտանիքի անապահովության գնահատման համար օգտագործվող հետևյալ բնութագրիչները՝ ընտանիքի կազմը, ընտանիքի անդամի սոցիալական խումբը, ընտանիքի անդամների փաստացի և հաշվարկային թիվը, ընտանիքի եկամուտը, ընտանիքի անդամին վերագրվող եկամուտը, անապահովության հիմքով սոցիալական աջակցության տրամադրումը բացառող գործոնների առկայությունը (այսուհետ՝ բացառող գործոն), ընտանիքի կեցության պայմանների ուսումնասիրության արդյունքը:

Ըստ նախարարության պարզաբանման՝ ընտանիքի անապահովության աստիճանը որոշվում է գնահատման համակարգում առկա տվյալների հիման վրա՝ ինքնաշխատ: Համաձայն Որոշման 4-րդ հավելվածի 5-րդ կետի 2-րդ ենթակետի՝ անապահովության նպաստի նշանակումը մերժվում է, եթե առկա է Որոշման 1-ին հավելվածով սահմանված որևէ բացառող գործոն: Գնահատման համակարգի շրջանակներում անապահով ճանաչվելու համար 07.01.2026 թվականին անձի ներկայացրած առցանց դիմումը մերժվել է՝ պայմանավորված որոշման 1-ին հավելվածի 39-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված՝ ընտանիքի անապահովության գնահատման ժամանակ օգտագործվող բացառող գործոնի՝ անշարժ գույքի (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողից) առկայության հանգամանքով: Մասնավորապես, ***անապահովության հիմքով սոցիալական աջակցության տրամադրումը մերժվել է մարզային բնակավայրերում առկա անշարժ գույքի գույքահարկի տարեկան չափը 5250 դրամը գերազանցելու պատճառով:***

Տրամադրված պարզաբանման համատեքստում՝ հարկ է անդրադարձ կատարել Որոշման ընդունման հիմնավորումներին[406], որոնց համաձայն՝ հասցեական ծրագրերում շահառուների իրավունակությունը որոշելու համար համաշխարհային պրակտիկայում սոցիալական աջակցության, այդ թվում՝ դրա դրամական ձևերի տրամադրման համար օգտագործվող համակարգերը սովորաբար հենվում են հնարավոր շահառուների միջոցների ստուգման (Means Testing, այսուհետ՝ MT) տարբեր մեթոդների կիրառման և այդ միջոցների որոշակի սահմանաչափերի սահմանման հիման վրա նպաստի իրավունքի ու չափի որոշման տեխնիկայի վրա: Համաշխարհային պրակտիկայում կիրառվում են MT-ի 4-5 հիմնական մեթոդներ կամ իրենց միախառնված տարբերակները՝ միջոցների

[406] Հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.e-draft.am/projects/8005/justification (20/03/2026թ.-ի դրությամբ):

փաստագրված ստուգում (Veryfied Means Test–VMT), միջոցների մոտարկված ստուգում՝ (Proxy Means Test-PMT), հիբրիդային կամ խառը մեթոդ՝ (Hybrid Means Test-HMT), համայնքի վրա հիմնված (Community Based Testing), խմբային՝ ըստ սոցիալական խմբերի կատեգորիաների (Categorical), աշխարհագրական (Geographic):

Ըստ հիմնավորման՝ ելնելով Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման ներկա իրավիճակից և հետագա զարգացման նպատակադրումներից, անապահովության մակարդակի գնահատման համակարգի համար միջազգային պրակտիկայում կիրառվող առավել համապատասխան մեթոդը միջոցների ստուգման հիբրիդային մեթոդն է: Հիբրիդային մեթոդը ենթադրում է զտիչների կամ որ նույնն է՝ բացառող գործոնների կիրառում:

Որոշմամբ սահմանված զտիչ՝ բացառող գործոններն են, ի թիվս այլնի, անշարժ գույքի (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողից) առկայությունը, եթե՝ մարզային բնակավայրերում առկա անշարժ գույքի գույքահարկի (մեկից ավելի գույքի առկայության դեպքում՝ հանրագումարային) տարեկան չափը գերազանցում է 5250 դրամը:

Հանրագումարի բերելով ասվածը՝ հարկ է նշել.

նախ՝ Որոշման ընդունման հիմնավորումներից պարզ չէ, թե ի՞նչ չափանիշներից ելնելով է անշարժ գույքի հարկը (որն, Հարկային օրենսգրքի համաձայն, տեղական հարկի տեսակ է) վերագրվում որպես եկամուտ,

երկրորդ՝ պարզ չէ նաև, թե ի՞նչ մեթոդաբանությամբ է մարզային բնակավայրերում առկա անշարժ գույքի գույքահարկի (մեկից ավելի գույքի առկայության դեպքում՝ հանրագումարային) տարեկան չափը սահմանվել 5250 դրամ (նկատի ունենալով նաև հարկման նոր համակարգին անցնելուց հետո վերջին տարիներին գույքահարկի շարունակական աճի հանգամանքը):

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Մարդու իրավունքների պաշտպանն ընդգծում է, որ ընտանիքի անապահովության գնահատման նոր համակարգի լավարկման ուղղությամբ քայլեր ձեռնարկելու, ինչպես նաև սոցիալական ապահովության իրավունքի պատշաճ երաշխավորման, ապահովման ու պաշտպանության տեսանկյունից անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել՝

✓ ***վերը նշված իրավիճակներում (միայնակ չաշխատող կենսաթոշակառու) անձանց անապահովության նպաստ ստանալու իրավունքը դադարեցնելու պրակտիկայից ձեռնպահ մնալու հարցը՝ առնվազն այնքան ժամանակ՝ մինչև կենսաթոշակի միջին չափը կհավասարեցվի նվազագույն սպառողական զամբյուղի արժեքին: Ընդ որում, այս նպատակով անհրաժեշտ է նաև քննարկել Որոշման մեջ համապատասխան փոփոխություններ կատարելու հարցը.***

✓ ***մարզային բնակավայրերում առկա անշարժ գույքի գույքահարկի (մեկից ավելի գույքի առկայության դեպքում՝ հանրագումարային) տարեկան չափի շեմը վերանայելու հարցը:***

2.2. Անօթևան անձանց կացարանով ապահովման և խնամքի կազմակերպման խնդիրներ

Անօթևան անձանց կացարանով ապահովման և խնամքի կազմակերպման հետ կապված խնդիրները վեր հանելու նպատակով հաշվետու տարում, ի թիվս այլ աշխատանքների, ՄԻՊ աշխատակազմում իրականացվել է վիճակագրական տվյալների

ուսումնասիրություն, որի արդյունքում արձանագրվել է նշված խնդիրների վերաբերյալ Պաշտպանին հասցեագրված գրավոր ու բանավոր դիմում-բողոքների թվի նվազում:

Այսպես, դրանց համեմատական պատկերը ցույց է տալիս, որ եթե 2023 թվականին անձանց դրսում հայտնվելու և կացարանի կարիք ունենալու վերաբերյալ ՄԻՊ աշխատակազմ է ստացվել 101 գրավոր և բանավոր դիմում-բողոք, ապա 2024 թվականին՝ նշված դիմում-բողոքների թիվը նվազել է՝ կազմելով 78: Այդ միտումը 2025 թվականին շարունակվել է և տարվա արդյունքներով՝ այդ դիմում-բողոքների թիվը կազմել է 58: Չնայած դրան՝ դիմում-բողոքների քանակական ցուցանիշը շարունակում է մտահոգիչ մնալ:

Հարկ է նշել, որ 2025 թվականին Պաշտպանի միջամտությամբ և իրավասու մարմինների հետ արդյունավետ համագործակցության արդյունքում մի շարք դեպքերում հնարավոր է եղել անօթևան անձանց տեղավորել կացարանում, ինչպես նաև հիվանդանոցային (ստացիոնար) պայմաններում կազմակերպել նրանց բժշկական օգնությունը և սպասարկումը:

Այսպես, օրինակ՝ Պաշտպանին ներկայացված բողոքներից մեկով անձը հայտնել է, որ իր նախկին ամուսինը և վերջինիս եղբայրը ներկայում բնակվում են շենքի բակում գտնվող զրուցարանում և ունեն կացարանի կարիք: Դիմողը խնդրել է ՄԻՊ աջակցությունն անձանց ժամանակավոր կացարանում տեղավորելու հարցում:

Բողոքի պատշաճ ուսումնասիրությունն ապահովելու և լրացուցիչ տեղեկատվություն ստանալու նպատակով Պաշտպանի ներկայացուցիչը կապ է հաստատել նշված անձանց հետ: Վերջիններս հայտնել են, որ շուրջ տասը օր է բնակվում են շենքի բակում: Եղբայրներից մեկը նշել է, որ ունի առողջական մի շարք խնդիրներ, այդ թվում՝ ոտքի և կոնքազդրի կոտրվածք, որի պատճառով չի կարող տեղաշարժվել և մշտապես պառկած վիճակում է գտնվում: Նշել է, որ շտապ բժշկական օգնության մեքենայով տեղափոխվել է բժշկական կենտրոն, որտեղ իրեն տրամադրվել է անհրաժեշտ բուժօգնություն, որից հետո դուրս է գրվել և կրկին վերադարձել է նույն շենքի բակ: Ըստ բողոք ներկայացրած անձանց՝ իրենց են այցելել նաև Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) տարածքային կենտրոնի աշխատակիցները, սակայն խնդիրը չի լուծվել:

ՄԻՊ ներկայացուցիչը բարձրացված հարցերն անմիջապես քննարկել է Ծառայության տարածքային կենտրոնի ներկայացուցչի հետ: Վերջինս նշել է, որ տեղեկացված են այդ խնդրի մասին, դեպքի վերաբերյալ բազմաթիվ զանգեր են ստացել նաև այլ պետական մարմիններից և մտահոգ քաղաքացիներից: Հավելել է, որ կատարվել է դեպքի գնահատում և հետագա ընթացքը լուծելու նպատակով տեղեկատվությունը և կազմված փաստաթղթերը փոխանցվել են Ծառայություն: Տեղեկացրել է նաև, որ անօթևանի կարգավիճակում հայտնված անձանց հերթագրել են՝ «Հանս Քրիստիան Կոֆոեդ» բարեգործական հիմնադրամ *(անօթևանների ժամանակավոր կացարան, այսուհետ՝ Հիմնադրամ)* տեղավորելու համար, սակայն այնտեղ ազատ տեղերի բացակայությամբ պայմանավորված՝ դեռևս հնարավոր չի եղել գործընթացը ավարտին հասցնել:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ ՄԻՊ ներկայացուցիչը կապ է հաստատել նաև Հիմնադրամի ներկայացուցչի հետ և քննարկել բողոք ներկայացրած անձանց կացարան ընդունելու հարցը: Վերջինս պատրաստակամություն է հայտնել իրավասու այլ մարմինների հետ համատեղ կազմակերպել անձանց տեղափոխումը և ընդունումը: Նույն օրը Պաշտպանի աշխատակազմ լրացուցիչ տեղեկատվություն է ներկայացվել Հիմնադրամի ներկայացուցչի կողմից առ այն, որ քաղաքացիներն ընդունվել են կացարան: Հաջորդիվ, նշված տեղեկատվությունը հաստատել են նաև բողոք ներկայացրած անձինք:

Մեկ այլ դեպքում, Պաշտպանին դիմած անձը տեղեկացրել է, որ 60 տարեկան է, չունի մշտական բնակության վայր, նախկինում բնակվել է վարձակալական հիմունքներով, սակայն բնակարանի վարձակալության գումարը չվճարելու պատճառով սեփականատերը պահանջել է ազատել բնակարանը: Նշել է նաև, որ ժամանակավոր կացարանի տրամադրման խնդրով զանգահարել է Հիմնադրամ, որտեղից իրեն հայտնել են, որ կացարանում ազատ տեղերի բացակայության պատճառով չեն կարող կազմակերպել ընդունելությունը: Հավելել է, որ ունի մի շարք առողջական խնդիրներ, այդ թվում՝ տեսողության հետ կապված, որի պատճառով դժվարանում է հերթագրման համար անձամբ մոտենալ Հիմնադրամ: ՄԻՊ ներկայացուցիչը խնդիրը քննարկել է Հիմնադրամի ներկայացուցչի հետ, վերջինս հայտնել է, որ հատկացված բոլոր տեղերը լրացել են և նոր շահառու ընդունել հնարավոր չէ: ՄԻՊ ներկայացուցիչը դիմողի տվյալները փոխանցել է Հիմնադրամի ներկայացուցչին և պայմանավորվածություն ձեռք բերել նրան հերթացուցակում ընդգրկելու վերաբերյալ: Օրեր անց, Հիմնադրամի ներկայացուցիչը ՄԻՊ աշխատակազմ լրացուցիչ տեղեկություն է տրամադրել առ այն, որ մեկ տեղ ազատվել է, ուստի բողոք ներկայացրած անձին հնարավոր է ընդունել կացարան: Արդյունքում՝ ՄԻՊ աջակցությամբ անօթևան անձը տեղավորվել է Հիմնադրամում:

Մյուս դեպքում, ՄԻՊ-ին է դիմել իրավապաշտպան հասարակական կազմակերպություն՝ բարձրացնելով անվասայլակով տեղաշարժվող անօթևան անձին կացարանում տեղավորելու, նրա բժշկական օգնությունը և սպասարկումը կազմակերպելու հարցեր: Կազմակերպության տեղեկացմամբ՝ անօթևան անձը պետական աջակցություն չի ստանում, քանի որ չունի անձը հաստատող որևէ փաստաթուղթ: Ըստ կազմակերպության՝ անցորդներից մեկի կողմից շտապ բժշկական օգնության կանչ է տրվել, որից հետո անօթևան անձը տեղափոխվել է բժշկական կենտրոն:

Ստացված տեղեկատվությունը Պաշտպանի ներկայացուցիչը փոխանցել է Ծառայության տարածքային կենտրոն: Հաջորդիվ, Ծառայության տարածքային կենտրոնի ներկայացուցիչը ՄԻՊ աշխատակազմ տեղեկություն է ներկայացրել առ այն, որ աշխատակիցները բժշկական կենտրոնում տեսակցել են անօթևան անձին և կատարել առաջնային գնահատում, ինչպես նաև առանձնացրել հրատապ լուծում պահանջող խնդիրները: Միևնույն ժամանակ, հայտնել է, որ անօթևան անձն ունի առողջական լուրջ խնդիրներ: Ըստ տեղեկացման՝ անօթևան անձին տրամադրվել է առաջնային բժշկական օգնություն, սակայն բժիշկների տեղեկացմամբ՝ դրան զուգահեռ՝ անհրաժեշտ է նաև վիրաբուժական միջամտություն, որը բժշկական կենտրոնում հնարավոր չի եղել իրականացնել՝ անձը հաստատող փաստաթուղթ չունենալու, ինչպես նաև անվճարունակ լինելու պատճառով: ՄԻՊ աշխատակազմ տեղեկություն է ներկայացվել նաև այն մասին, որ անօթևան անձը վերադարձել է իր նախկին գտնվելու վայր և շարունակում է բնակվել դրսում: Նշվածի հաշվառմամբ՝ Պաշտպանը դիմել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և Առողջապահության նախարարություն՝ խնդրելով անհապաղ միջոցներ ձեռնարկել անօթևան մնացած անձին անհրաժեշտ աջակցություն ցուցաբերելու ուղղությամբ:

Ի պատասխան՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից հայտնել են, որ Ծառայություն ստացված տեղեկատվության համաձայն՝ Ծառայության տարածքային կենտրոնը 2023 թվականից պարբերաբար աշխատանքներ է իրականացնում անօթևան անձի հետ: Հավելել են, որ տարածքային կենտրոնի կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզ է դարձել, որ անօթևան անձը մոտ 8 տարի ապրում է Երևան քաղաքի այգիներից մեկի հարակից տարածքում, չունի անձը հաստատող փաստաթուղթ: Ըստ քաղաքացու տեղեկատվության ամուսնացած է,

սակայն վերջինիս կողմից չի տրվել հավաստի տեղեկատվություն ընտանիքի անդամների վերաբերյալ:

Նախարարության տեղեկացմամբ՝ տարածքային կենտրոնի աշխատողների կողմից պարբերաբար իրականացվող աշխատանքների ժամանակ մի քանի անգամ փորձ է արվել անօթևան անձին տեղավորել շուրջօրյա խնամք տրամադրող բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն, սակայն տարբեր պատճառաբանությամբ քաղաքացին հրաժարվել է, գրավոր տվել է հայտարարություն իր անհամաձայնության մասին, մասնավորապես, Հիմնադրամից հրաժարվելու մասին:

Ըստ նախարարության՝ տարածքային կենտրոնի սոցիալական աշխատողի կողմից աշխատանքներ են իրականացվել նաև քաղաքացու անձը հաստատող փաստաթղթի վերականգնման նպատակով, սակայն վերջինս հրաժարվել է ներկայանալ ՀՀ ՆԳՆ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն: Տարածքային կենտրոնի աշխատողների կողմից կապ է հաստատվել հիշյալ վարչության համապատասխան բաժանմունքի աշխատակիցների հետ և վերջիններս հայտնել են, որ քաղաքացու տվյալներով նման անձ չի հայտնաբերվել և նույնականացումը չի ստացվել:

Նախարարության տվյալներով՝ անօթևան անձը մշտապես գտնվել է բժիշկների հսկողության ներքո, երկու օրը մեկ ներկայացել է հիվանդանոց, որտեղ ոտքերի վիրակապերն են փոխվել:

Ըստ նախարարության՝ 2025 թվականի սեպտեմբեր ամսին անօթևան անձին առաջարկվել է տեղափոխվել Հիմնադրամ, որին ի պատասխան՝ այս անգամ քաղաքացին տվել է իր համաձայնությունը: Հաջորդ օրն անօթևան անձը շտապ օգնության մեքենայով տեղափոխվել է բժշկական կենտրոն՝ ստացիոնար բուժման:

Նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ տարածքային կենտրոնի կողմից 2025 թվականի սեպտեմբերի վերջին ՀՀ ՆԳՆ Միգրացիայի և քաղաքացիության ծառայություն է ուղարկվել գրություն՝ անօթևան անձի անձը հաստատող փաստաթղթի վերականգնման նպատակով՝ անձի նույնականացման համար: Ներկայում Միգրացիայի և քաղաքացիության ծառայության աշխատակիցների Հիմնադրամում աշխատանքներ են իրականացնում՝ անձի նույնականացման և անձը հաստատող փաստաթղթի վերականգնման նպատակով:

Առողջապահության նախարարությունից ստացված պատասխան գրության համաձայն՝ նախարարությունը կազմակերպել է անօթևան անձի բուժօգնությունը հիվանդանոցային պայմաններում: Միաժամանակ, տրամադրվել է տեղեկատվություն առ այն, որ Ծառայության գործընկերների հետ համագործության արդյունքում որոշում է կայացվել՝ բուժօգնության ավարտից հետո անօթևան անձին տեղափոխել սոցիալական պաշտպանության հաստատություն:

Բողոքի ընթացքի նկատմամբ Պաշտպանի աշխատակազմում իրականացվել է հետագա հետևողական աշխատանք: Արդյունքում՝ ՄԻՊ աշխատակազմ տեղեկատվություն է ստացվել այն մասին, որ 2025 թվականի նոյեմբեր ամսին անօթևան անձը փաստաթղթավորվել է ՀՀ քաղաքացու անձնագրով:

Միևնույն ժամանակ, իրավասու մարմնից պարբերաբար ստացվել են տեղեկություններ անօթևան անձի առողջական վիճակի, տրամադրվող բուժօգնության ծավալների, այդ թվում՝ բժշկական հետազոտությունների կազմակերպման ընթացքի և արդյունքների, ինչպես նաև խնամքի կազմակերպման մասին: Այսպես, ՄԻՊ աշխատակազմ ներկայացված տվյալների համաձայն՝ 2026 թվականի փետրվարի 2-ի դրությամբ անօթևան մնացած անձը շարունակել է գտնվել հիվանդանոցում և ստացիոնար պայմաններում ստանալ անհրաժեշտ բժշկական օգնություն և սպասարկում:

Ըստ Ծառայությունից ստացված տեղեկատվության՝ անօթևան մնացած անձին շուրջօրյա մասնագիտացված խնամքի կենտրոն ուղեգրելու, ինչպես նաև վերջինիս ֆունկցիոնալության գնահատումը կազմակերպելու նպատակով իրականացվում են անհրաժեշտ բժշկական հետազոտություններ:

Հարկ է նշել, որ անհատական մակարդակում արձանագրված դրական առաջընթացին զուգահեռ՝ քիչ չեն դեպքերը, երբ Հիմնադրամին հատկացված տեղերի (ընդհանուր 100 տեղ) լրացած լինելու հանգամանքով պայմանավորված՝ հնարավոր չի եղել անօթևան անձանց տեղավորել ժամանակավոր կացարան և վերջիններս շարունակել են մնալ դրսում:

Հիմնադրամին հատկացված տեղերի սակավությունը հատկապես նկատելի է դառնում տարվա ցուրտ եղանակներին, երբ կացարանի կարիք ունենալու հարցով դիմելիության թիվը զգալի աճում է, իսկ տեղերի բացակայությամբ պայմանավորված՝ անձինք ստիպված են լինում տևական ժամանակ սպասել հերթացուցակում:

Մարդու իրավունքների պաշտպանի՝ 2025 թվականի տարեկան հաղորդման կազմման շրջանակում Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանն ուղղված հարցմանն ի պատասխան՝ ներկայացվել է տեղեկատվություն առ այն, որ 2025 թվականին բնակության վայր չունեցող անօթևան 37 անձ դիմել է բնակչության սոցիալական պաշտպանության խնամքի հաստատություններում խնամք ստանալու համար, որից 32-ն արդեն ստանում է շուրջօրյա խնամք, *իսկ մնացածը դեռևս գտնվում են հերթացուցակում:*

Անօթևանության հարցը քննարկելիս անհրաժեշտ է նաև անդրադարձ կատարել Մարդու իրավունքների պաշտպանին վերջին տարիներին հասցեագրվող դիմում-բողոքներով հաճախ բարձրացվող այն իրավիճակներին, երբ Հիմնադրամի շահառու հանդիսացող անձինք ներքին կարգապահական կանոնների խախտման հիմքով հեռացվում են Հիմնադրամից և հայտնվում դրսում: Այսպես, օրինակ՝ ալկոհոլամոլության, ոչ պատշաճ վարքի դրսևորման, ինչպես նաև համակեցության կանոնների այլ խախտումների պատճառով շահառուների միջև հաճախ առաջանում են վիճաբանություններ, որոնց արդյունքում դադարեցվում է շահառուի խնամքի տրամադրումը:

Վերոնշյալի համատեքստում Պաշտպանը վերահաստատում է նախորդ տարեկան հաղորդման շրջանակում արտահայտած իր դիրքորոշումն առ այն, որ անձանց հեռացումը ժամանակավոր կացարանից պետք է լինի ծայրահեղ լուծում, իսկ մինչ այդ համապատասխան մասնագիտացում և պատրաստվածություն ունեցող մասնագետների կողմից պետք է իրականացվեն սոցիալ-հոգեբանական աշխատանքներ՝ շահառուների վարքագծի շտկման և հետագա բնակությունը թույլատրելի դարձնելու ուղղությամբ:

Հիմնադրամի ներքին կարգապահական կանոնների համատեքստում անհրաժեշտ է նաև անդրադարձ կատարել գործնականում հաճախ հանդիպող այն խնդրին, երբ անօթևանների ժամանակավոր կացարան ընդունելուն աջակցելու խնդրանքով Պաշտպանի աշխատակազմ ներկայացած կամ զանգահարած անձանց առաջարկվում է Հիմնադրամում ժամանակավոր բնակության տեղափոխվելու վերաբերյալ դիմում ներկայացնել Ծառայության տարածքային կենտրոն, սակայն վերջիններս հրաժարվում են այդ առաջարկից՝ նշելով, որ նախկինում հանդիսացել են այդ կացարանի շահառու, սակայն իրենց կամքով դուրս են եկել այդտեղից՝ հաշվի առնելով կացարանում տեղի ունեցող դեպքերը *(օրինակ՝ անձնական իրերի գողություն)* կամ անբավարար նյութակենցաղային և սանիտարահիգիենիկ պայմանները:

Այսինքն, ստեղծվում է մի իրավիճակ, երբ կացարանի և փողոցում բնակվելու միջև ընտրություն կատարելիս՝ անձը նախապատվությունը տալիս է անօթևանի

կարգավիճակով փողոցում բնակվելուն: Նշված օրինակները մեկ անգամ ևս փաստում են համապատասխան մասնագիտացում ունեցող անձանց կողմից Հիմնադրամի շահառուների հետ անհատական աշխատանքների իրականացման, հավելյալ տեղերի ստեղծման և բնակության պայմանների բարելավման անհրաժեշտության մասին:

Վերոգրյալին զուգահեռ շարունակում է խնդրահարույց մնալ նաև ոչ աշխատանքային օրերին և ժամերին կացարանի հասանելիության հարցը: Այսպես, ժամանակավոր կացարանի տրամադրման հարցում աջակցություն ցուցաբերելու խնդրանքով ոչ աշխատանքային օրերին և ժամերին Պաշտպանի աշխատակազմում գործող շուրջօրյա թեժ գիծ հեռախոսահամարին ստացվում են զանգեր անօթևանի կարգավիճակում հայտնված անձանցից, ովքեր ակնկալում են Պաշտպանի աջակցությունը կացարանի տրամադրման հարցում: ՄԻՊ-ին հասցեագրված բողոքների ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ անօթևանության խնդրին արագ արձագանքելը շարունակում է լուրջ խնդիր մնալ:

Ըստ ՄԻՊ աջակցությանը դիմած անձանց՝ անօթևանների ժամանակավոր կացարանի անհրաժեշտության խնդրի վերաբերյալ փորձել են տեղեկացնել Ծառայության տարածքային կենտրոնին, սակայն չեն կարողացել կապ հաստատել՝ ոչ աշխատանքային օրերին և ժամերին սպասարկում չիրականացնելու պատճառով: Ավելին՝ որոշ դեպքերում Պաշտպանին դիմած անձինք հայտնել են, որ նաև անձամբ են մոտեցել Հիմնադրամ, որտեղ ևս տեղեկացել են, որ ժամը 17:00-ից հետո և հանգստյան օրերին կացարանը փակ է, հետևաբար ընդունելություն կազմակերպել հնարավոր չէ: Արդյունքում՝ անօթևան մնացած անձանց օգնելու գործընթացը, երբեմն, երկար է տևում: Լինում են դեպքեր, երբ մարդիկ մի քանի օր շարունակ ապրում են դրսում մինչև կացարանում տեղավորվելը:

Այդպիսի իրավիճակներում Հիմնադրամի ներկայացուցիչը, որպես կանոն, Պաշտպանի աշխատակազմ տեղեկատվություն է տրամադրում այն մասին, որ անօթևան անձին կացարան ընդունելու համար անհրաժեշտ է կազմակերպել մի շարք բժշկական հետազոտություններ *(այլ խոսքով՝ սկսել ուղեգրման գործընթաց)*՝ մի շարք վարակիչ հիվանդությունների առկայությունը բացառելու նպատակով:

Վերոգրյալի համատեքստում Պաշտպանը վերահաստատում է իր դիրքորոշումն առ այն, որ այդպիսի դեպքերից խուսափելու և անօթևաններին ժամանակին կացարան տեղավորելու համար անհրաժեշտ է աշխատանքները կազմակերպել այնպես, որպեսզի ոչ աշխատանքային օրերին և ժամերին կացարանի հերթապահ աշխատակցի կողմից անձանց ընդունումն իրականացվի կացարանի առանձնացված (կարանտինային) հատվածում՝ մինչև բժշկական հետազոտության իրականացումը:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պաշտպանը հարկ է համարում ընդգծել նաև, որ պետության սոցիալական քաղաքականությունը, ի թիվս այլնի, պետք է ուղղված լինի անօթևանության կանխարգելմանն ու այդպիսի կարգավիճակում հայտնված անձանց՝ հասարակության մեջ ինտեգրելուն: Անօթևան մնացած անձանց կացարանով ապահովելը և խնամքը պատշաճ կազմակերպելը կարևոր է դիտարկել որպես պետության և իրավասու մարմինների գործունեության առաջնահերթություն: Ուստի, անօթևանության կանխարգելման խնդրի լուծման եղանակների նախանշման, ինչպես նաև ձեռնարկվելիք միջոցառումների հստակեցման տեսանկյունից՝ Պաշտպանը կարևորում է նաև այդ ուղղությամբ համապատասխան ռազմավարական փաստաթուղթ ունենալու անհրաժեշտությունը:

Մարդու իրավունքների պաշտպանի՝ 2025 թվականի տարեկան հաղորդման կազմման շրջանակում Պաշտպանի կողմից Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ուղղված այն հարցադրմանը, թե 2025 թվականին մշակվել է արդյո՞ք անօթևանության կանխարգելման հայեցակարգ կամ ռազմավարություն, դրանից բխող

գործողությունների ծրագիր՝ նախարարությունը հայտնել է, որ *իր լիազորությունների շրջանակում նման հայեցակարգի կամ ռազմավարության մշակման պահանջ դրված չէ:*

Հաշվի առնելով վերոգրյալը և վերահաստատելով նախորդ տարվա տարեկան հաղորդմամբ կատարված առաջարկը՝ Պաշտպանն ընդգծում է, որ արձանագրված խնդիրներին պատշաճ լուծում տալու նպատակով անհրաժեշտ է մշակել անօթևանության կանխարգելման հայեցակարգ, ռազմավարություն և գործողությունների ծրագիր՝ ի թիվս այլնի անդրադառնալով նաև նման կարգավիճակում հայտնված անձանց սոցիալական ինտեգրման խնդիրների հաղթահարմանն ուղղված կառուցակարգերին:

2.3. Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների նշանակման, հաշվարկման և վճարման նոր համակարգի գործարկման ընթացքում առաջացած խնդիրներ

Հաշվետու տարվա ընթացքում ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների նշանակման գործընթացը բարելավելու նպատակով կատարվել են օրենսդրական փոփոխություններ, որոնց արդյունքում՝ 2025 թվականի սեպտեմբերի 1-ից գործարկվել է ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների հաշվարկման, նշանակման և վճարման նոր համակարգ: Մասնավորապես, նոր կարգավորումներով՝

✓ թղթային անաշխատունակության թերթիկներ այլևս չեն լինի: Անաշխատունակության դեպքում (այդ թվում՝ հղիության և ծննդաբերության հիմքով բացված) անձը դիմում է համապատասխան բժշկական կազմակերպություն, իր անվամբ էլեկտրոնային առողջապահական համակարգում բացվում է անաշխատունակության թերթիկ, որն ինքնաշխատ եղանակով փոխանցվում է Միասնական սոցիալական ծառայության (այսուհետ՝ ՄՍԾ) կողմից վարվող համապատասխան տեղեկատվական համակարգ,

✓ էլեկտրոնային առողջապահական համակարգից ստացված՝ անձի անաշխատունակության վերաբերյալ տեղեկատվությունն ինչպես անաշխատունակության թերթիկը բացելիս, այնպես էլ փակելիս ՄՍԾ-ն ինքնաշխատ եղանակով փոխանցում է ՊԵԿ-ին, որն իր հերթին տեղեկատվությունը հասանելի է դարձնում գործատուին,

✓ անաշխատունակության թերթիկը փակելուց հետո ՊԵԿ-ից ինքնաշխատ եղանակով ստացվում են նպաստի հաշվարկման համար անհրաժեշտ տվյալներ (նախորդող 12 ամսում անձի ստացած եկամուտների վերաբերյալ),

✓ ստացված տվյալների հաշվառմամբ ինքնաշխատ եղանակով հաշվարկվում է նպաստը, որից հետո ՀՀ պետական բյուջեից վճարման ենթակա գումարը փոխանցվում է վճարման, իսկ գործատուի միջոցներից վճարման ենթակա գումարի վերաբերյալ տեղեկատվությունը կրկին ՊԵԿ-ի միջոցով փոխանցվում է գործատուին, որպեսզի վերջինս առաջիկա աշխատավարձի վճարման հետ վարձու աշխատողին վճարի նաև նպաստի՝ իր միջոցներից վճարման ենթակա մասը (անաշխատունակության առաջին 7 օրվա համար),

✓ նպաստը վճարվում է բացառապես անկանխիկ եղանակով՝ քաղաքացու կողմից ընտրված բանկի միջոցով: Ընդ որում, բանկի ընտրությունը քաղաքացին կատարում է անաշխատունակության թերթիկ բացելիս: Եթե քաղաքացու ընտրած բանկում վերջինս ունի գործող հաշիվ (չի հանդիսանում ավանդային կամ վարկային հաշիվ), ապա նպաստի՝ պետական բյուջեից վճարման ենթակա գումարը փոխանցվում է այդ հաշվին: Եթե

քաղաքացին իր ընտրած բանկում չունի գործող բանկային հաշիվ, ապա բացվում է նոր՝ միանվագ դրամական վճարների հաշիվ և նպաստի գումարը վճարվում է այդ հաշվի միջոցով,

Չաշխատող անձանց մայրության նպաստը ևս նշանակվում է նոր համակարգի միջոցով՝ էլեկտրոնային առողջապահական համակարգից ստացված տվյալների հիման վրա:

Նոր ստեղծված համակարգի միջոցով նպաստը հաշվարկելուց և վճարման փոխանցվելուց հետո անձն այդ մասին ծանուցվում է, իսկ հաշվարկված նպաստի (այդ թվում՝ նպաստի հաշվարկման համար հիմք հանդիսացած միջին ամսական եկամտի չափի) վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվություն քաղաքացին կարող է ստանալ e-social.am ՀՀ սոցիալական պաշտպանության ծառայությունների միասնական հարթակում գրանցվելուց և նույնականացում անցնելուց հետո:

Այսպիսով, եթե անաշխատունակության կամ հղիության և ծննդաբերության արձակուրդի առաջին օրը 2025 թվականի սեպտեմբերի 1-ն է կամ դրանից հետո, ապա քաղաքացին որևէ դիմում կամ փաստաթուղթ ՄՍԾ տարածքային կենտրոն կամ գործատուին ներկայացնելու կարիք չի ունենա:

Հարկ է նշել, որ մինչ այս եղած կարգավորումների համաձայն՝ ժամանակավոր անաշխատունակության կամ մայրության նպաստի նշանակման, հաշվարկման և վճարման համար աշխատողը ժամանակավոր անաշխատունակության թերթիկը ներկայացնում էր գործատուին, որի հիման վրա վերջինս հաշվարկում, նշանակում և վճարում էր նպաստը, որից հետո գործատուին պետական բյուջեից փոխհատուցվում էր նպաստի՝ պետական բյուջեից վճարման ենթակա գումարը[407]:

Վերոնշյալ համատեքստում հարկ է նկատել, որ 2025 թվականի սեպտեմբերի 1-ից հետո Մարդու իրավունքների պաշտպանին սկսել են հասցեագրվել բազմաթիվ դիմում-բողոքներ, որոնց ուսումնասիրության արդյունքները վկայում են այն մասին, որ ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների նշանակման, հաշվարկման և վճարման նոր համակարգի գործարկման ընթացքում առաջացող տեխնիկական և ընթացակարգային խնդիրների հետևանքով անձինք տևական ժամանակ զրկված են լինում ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստները ստանալու հնարավորությունից:

Թեև 2025 թվականի ընթացքում Պաշտպանի միջամտությամբ և իրավասու մարմինների հետ արդյունավետ համագործակցության արդյունքում հնարավոր է եղել մի շարք այդպիսի հարցերի լուծում տալ, այնուհանդերձ խնդրի հաղթահարման համար անհրաժեշտ է գտնել համակարգային լուծումներ:

Այսպես, օրինակ՝ Պաշտպանին ներկայացված բողոքներից մեկով անձը հայտնել է, որ իր երեխան ծնվել է 2025 թվականի հոկտեմբերի 20-ին, սակայն հոկտեմբերի 30-ի դրությամբ մայրության նպաստը դեռևս չի ստացել: Խնդրել է Պաշտպանի աջակցությունը մայրության նպաստը ստանալու հարցում:

ՄԻՊ ներկայացուցիչը խնդիրը քննարկել է ՄՍԾ իրավասու ներկայացուցչի հետ: Վերջինս հայտնել է, որ «Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամից (այսուհետ՝ Հիմնադրամ) ստացված տեղեկատվության համաձայն՝ ժամանակավոր անաշխատունակության թերթիկն

[407] Տե՛ս ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պաշտոնական հրապարակումները, հասանելի են հետևյալ հղումներով՝ https://www.mlsa.am/news/999, https://www.facebook.com/watch/?v=1096247046028340 (20/03/2026թ.-ի դրությամբ):

անվավեր է ճանաչվել, սակայն պատճառների վերաբերյալ որևէ նշում էլեկտրոնային առողջապահության միասնական տեղեկատվական «ԱՐՄԵԴ» համակարգում առկա չէ:

Նշվածի հաշվառմամբ՝ Պաշտպանի ներկայացուցիչը կապ է հաստատել Հիմնադրամի իրավասու աշխատակցի հետ, վերջինս տեղեկացրել է, որ անաշխատունակության թերթիկը հիշյալ համակարգն անվավեր է համարել: Հաջորդիվ, խնդիրը քննարկվել է նաև բժշկական հաստատության ներկայացուցչի հետ, վերջինիս տեղեկացմամբ՝ անաշխատունակության թերթիկը սկզբում չեղարկվել է, սակայն հոկտեմբերի 14-ին հաստատվել է: «Էլեկտրոնային առողջապահության ազգային օպերատոր» ՓԲ ընկերությունից ՄԻՊ աշխատակազմ ստացված տեղեկության համաձայն՝ բողոք ներկայացրած անձի անհատական տվյալները համակարգում չեն երևում:

Բողոքի պատշաճ ընթացքն ապահովելու նպատակով կրկին կապ է հաստատվել Հիմնադրամի ներկայացուցչի հետ, որտեղից տեղեկացրել են, որ համակարգի թարմացումից հետո ևս անաշխատունակության թերթիկի կարգավիճակը շարունակել է մնալ անվավեր:

Հաջորդիվ, ՄԻՊ աշխատակազմ Հիմնադրամի ներկայացուցչի կողմից լրացուցիչ տեղեկատվություն է տրամադրվել այն մասին, որ նախորդիվ անվավեր ճանաչված անաշխատունակության թերթիկների մասով անհրաժեշտ տեղեկատվություն կուղարկվի «ԱՐՄԵԴ» համակարգից: Այնուհետև, ՄՍԾ ներկայացուցիչը ՄԻՊ աշխատակազմ տեղեկատվություն է ներկայացրել առ այն, որ մայրության նպաստն ուղարկվել է վճարման: Նշված հանգամանքը հաստատել է նաև բողոք ներկայացրած անձը՝ նշելով, որ մայրության նպաստը ստացել է 2025 թվականի նոյեմբերի 13-ին: Թեև ՄԻՊ աշխատակազմի և իրավասու մարմինների արդյունավետ համագործակցության արդյունքում հնարավոր է եղել կարգավորել խնդիրը, սակայն այս դեպքում խնդրահարույցն այն է, որ վարչարարական քաշքշուքների (համակարգի ոչ կանոնավորված աշխատանքի) պատճառով անձի համար առաջացրել են հավելյալ դժվարություններ և վերջինս ստիպված է եղել տևական ժամանակ (25 օր) սպասել խնդրի լուծմանը:

Պաշտպանին հասցեագրված մեկ այլ բողոքով անձը հայտնել է, որ 2025 թվականի սեպտեմբերի 12-ից գտնվել է հղիության և ծննդաբերության արձակուրդում, սակայն մայրության նպաստը չի վճարվել: Բողոք ներկայացրած անձի պնդմամբ՝ խնդրի լուծման համար դիմել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, որտեղից տեղեկացրել են, որ նպաստի վճարման վերջնաժամկետ է սահմանվել հոկտեմբերի 22-ը, սակայն, ըստ բողոք ներկայացրած անձի, 2025 թվականի հոկտեմբերի 24-ի դրությամբ խնդիրը շարունակել է մնալ չլուծված: Վերջինս խնդրել է Պաշտպանի աջակցությունը նպաստը ստանալու հարցում:

Խնդրո առարկա դեպքը ՄԻՊ ներկայացուցիչը քննարկել է նախարարության իրավասու աշխատակցի հետ, վերջինս տեղեկացրել է, որ անաշխատունակության նպաստի վճարման նոր համակարգի տեխնիկական խնդիրներով պայմանավորված՝ նպաստների վճարումն ուշանում է: Միևնույն ժամանակ, նշել է, որ առաջացած խնդիրների լուծման նպատակով ստեղծվել է հատուկ աշխատանքային խումբ, որի հավաքագրած տվյալների հիման վրա ստեղծվել է ընդգրկուն ցուցակ, որտեղ ներառված քաղաքացիների նպաստները պետք է վճարվեն մինչև 2025 թվականի նոյեմբերի 10-ը:

Պաշտպանի ներկայացուցիչը նախարարության աշխատակցին է տրամադրել բողոք ներկայացրած անձի անհատական տվյալները՝ վերոնշյալ ցուցակում ընդգրկելու նպատակով: Ավելի ուշ, վերջինս ՄԻՊ աշխատակազմ տեղեկատվություն է տրամադրել այն մասին, որ մայրության նպաստը վճարվել է:

Մյուս դեպքում անձը հայտնել է, որ 2025 թվականի սեպտեմբերի 17-ից հոկտեմբերի 10-ն ընկած ժամանակահատվածում գտնվել է ժամանակավոր անաշխատունակության մեջ, սակայն նույն թվականի դեկտեմբերի 9-ի դրությամբ՝ դեռևս անաշխատունակության նպաստի վճարումը չի կատարվել: Հավելել է, որ չնայած «ԱՐՄԵԴ» համակարգում բժշկական հաստատության կողմից անաշխատունակության թերթիկին «ավարտ» կարգավիճակ է տրվել, սակայն նախարարությունից իրեն հայտնել են, որ հիշյալ համակարգում անաշխատունակության թերթիկին դեռևս «ավարտ» կարգավիճակ տրված չէ: Բողոք ներկայացրած անձի պնդմամբ՝ նշված ժամանակահատվածին հաջորդող երկու ամսվա ընթացքում պարբերաբար կապ է հաստատել նախարարության համապատասխան աշխատակիցների հետ, սակայն խնդրին լուծում չի տրվել: Վերջինս խնդրել է Պաշտպանի աջակցությունն իր անաշխատունակության նպաստի վճարման հարցում: Այս դեպքում նույնպես բողոք ներկայացրած անձի համար առաջացրել են հավելյալ դժվարություններ և վերջինիս նպաստի վճարումը կատարվել է միայն 2026 թվականի հունվար ամսի առաջին աշխատանքային օրին:

Նշվածի համատեքստում հարկ է անդրադարձ կատարել «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» օրենքի 24-րդ հոդվածի 8-րդ կետի այն կարգավորմանը, ըստ որի՝ **մայրության նպաստի, ժամանակավոր անաշխատունակության նպաստի՝ պետական բյուջեից վճարման ենթակա գումարը լիազոր մարմինը վճարում է առաջիկա աշխատավարձի վճարման համար օրենսդրությամբ սահմանված ժամկետից ոչ ուշ, անկանխիկ եղանակով՝ վարձու աշխատողի կամ ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձի ընտրած բանկի միջոցով՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով:**

Նույն հոդվածի 9-րդ կետի համաձայն՝ ժամանակավոր անաշխատունակության նպաստի՝ վարձու աշխատողի գործատուի կողմից վճարման ենթակա գումարը գործատուն վճարում է հարկային մարմնի միջոցով ստացված տեղեկատվության հիման վրա՝ **նպաստի հաշվարկման և նշանակման ամսվա աշխատավարձի վճարման համար օրենսդրությամբ սահմանված ժամկետում:**

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պաշտպանն ընդգծում է, որ ներդրված նոր համակարգի լավարկման, ինչպես նաև սոցիալական ապահովության իրավունքի պատշաճ ապահովման տեսանկյունից անհրաժեշտ է շուտափույթ միջոցներ ձեռնարկել ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների վճարման անհարկի ձգձգումները գործնականում բացառելու ուղղությամբ:

2.4. Երեխայի ծննդյան միանվագ նպաստի նշանակման խնդիրներ

Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2025 թվականին երեխայի ծննդյան միանվագ նպաստի նշանակման վերաբերյալ Պաշտպանին հասցեագրված բողոքները վերաբերել են նոր ծնված երեխայի հերթական կարգաթվի որոշմանն այն ընտանիքներում, որտեղ երեխաները սերված են տարբեր ամուսնություններից: Այս խնդրի շարունակականության մասին են վկայում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի տարբեր տարիների գործունեության հաղորդումներում անդրադարձները[408]:

[408] Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի վերաբերյալ 2021, 2023 և 2024 թվականների տարեկան հաղորդումները (համապատասխանաբար՝ էջեր 138-140, 71-72, 722-726):

Երեխայի ծննդյան միանվագ նպաստը նշանակելուն և վճարելուն առնչվող հարաբերությունները կարգավորվում են ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 6-ի թիվ 275-Ն որոշմամբ: Նշված որոշմամբ հաստատված 1-ին հավելվածի 8-րդ կետի 2-րդ ենթակետի «դ» և «է» պարբերությունների համաձայն՝ նոր ծնված երեխայի կարգաթիվը որոշելիս՝ հաշվի են առնվում նպաստը նշանակելու համար դիմելու օրվա դրությամբ բնակչության պետական ռեգիստրում հաշվառված (անկախ բնակության (հաշվառման) վայրից)՝ (...) նոր ծնված երեխայի ծնողից (հորից կամ մորից) սերված երեխաները և զավակները (նոր ծնված երեխայի համահայր կամ համամայր քույրերն ու եղբայրները), եթե՝ (...)

դ. *նոտարական ակտով հաստատված է այդ երեխայի՝ նոր ծնված երեխայի ծնողի խնամքի տակ լինելու փաստը կամ այդ զավակի նոտարական ակտով հաստատված հայտարարությունն այն մասին, որ անչափահաս տարիքում իր փաստացի խնամքն ու դաստիարակությունն իրականացրել է նոր ծնված երեխայի ծնողը,*

է. *ծնողի (ով չի հանդիսանում նոր ծնված երեխայի ծնողը) գրավոր համաձայնությամբ այդ երեխայի խնամքն ու դաստիարակությունն իրականացնում է նոր ծնված երեխայի ծնողը (...):*

Մարդու իրավունքների պաշտպանին տարբեր տարիներին ներկայացված բողոքների համալիր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ամուսնալուծված ծնողը, որպես կանոն, խուսափում է նման հայտարարություն ներկայացնելուց կամ նրանցից մեկի բնակության վայրը հայտնի չի լինում: Արդյունքում նոր ծնված երեխայի կարգաթիվը ճիշտ չի որոշվում: Առանձին բողոքների դեպքերում էլ անձինք բավարար ֆինանսական միջոցներ չեն ունենում ինչպես նոտարների կողմից մատուցվող ծառայությունների համար սահմանված պետական տուրքը վճարելու, այնպես էլ՝ նոտարական ծառայություններից օգտվելու համար վերջինիս գտնվելու վայր հասնելու համար:

Հաշվի առնելով հաշվետու տարում ստացվող դիմում-բողոքներով բարձրացված խնդրի արդիականությունը՝ սույն տարեկան հաղորդման կազմման աշխատանքների շրջանակում Մարդու իրավունքների պաշտպանը հարցադրում է կատարել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն առ այն, թե *ի՞նչ քայլեր են ձեռնարկվել ծննդյան միանվագ նպաստի նշանակման կառուցակարգերը մատչելի դարձնելու նպատակով:* Միևնույն ժամանակ, Մարդու իրավունքների պաշտպանը տեղեկատվություն է պահանջել Կառավարության 2014 թվականի մարտի 6-ի թիվ 275-Ն որոշման շրջանակներում նշանակվող նպաստի առնչությամբ ստացված բողոքների քանակի վերաբերյալ:

Ի պատասխան՝ ներկայացվել է պարզաբանում առ այն, որ նախարարությունում երեխայի ծննդյան միանվագ նպաստի վերաբերյալ դիմումների առանձին հաշվառում չի իրականացվել: Նախարարության տեղեկացմամբ՝ ըստ նշված որոշման՝ երեխայի ծննդյան միանվագ նպաստը միանվագ բնույթի է, նշանակվում է նոր ծնված յուրաքանչյուր երեխայի համար, և չափը պայմանավորված է երեխայի կարգաթվով:

Հավելել են, որ «Պետական նպաստների մասին» օրենքում երեխայի ծննդյան միանվագ նպաստի՝ երեխայի կարգաթվով պայմանավորված չափեր սահմանելու կարգավորումներում սահմանվել է երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափի համահարթեցում, ըստ որի, երեխայի ծննդյան միանվագ նպաստը 2026 թվականի սեպտեմբերի 1-ին և դրանից հետո ծնված երեխաների համար կսահմանվի երեխայի ծննդյան միանվագ նպաստի համահարթ չափ՝ անկախ ընտանիքում ծնված երեխայի կարգաթվից (նախատեսվում է 500 000 դրամ):

Տրամադրված պարզաբանման համատեքստում հարկ է անդրադառնալ 2025 թվականի դեկտեմբերի 17-ին ընդունված ««Պետական նպաստների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-482-Ն օրենքի 16-րդ և 18-րդ հոդվածներին: Ըստ նշված օրենքի 16-րդ հոդվածի՝ սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, բացառությամբ սույն օրենքի 6-րդ *(Երեխայի ծննդյան միանվագ նպաստի իրավունքը)* և 7-րդ *(Երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելը և վճարելը)* հոդվածների, որոնք ուժի մեջ են մտնում ***2026 թվականի սեպտեմբերի 1-ից:*** Նույն օրենքի 18-րդ հոդվածի համաձայն՝ սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ (...) ***յոթամսյա ժամկետում՝*** սույն օրենքի 6-րդ և 7-րդ հոդվածների դեպքում:

Այսինքն, ստացվում է, որ ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 6-ի թիվ 275-Ն որոշմամբ հաստատված 1-ին հավելվածի 8-րդ կետի կիրառումը դեռևս տևական ժամանակ շարունակելու է խնդրահարույց լինել՝ նոր ծնված երեխայի հերթական կարգաթիվը որոշելու տեսանկյունից: Ուստի, մինչև վերը նշված հոդվածների ուժի մեջ մտնելը և օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունումը, անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել երեխայի ծննդյան միանվագ նպաստի նշանակման առավել դյուրին և արդյունավետ կառուցակարգեր ներդնելու հարցը:

Նախորդ տարեկան հաղորդումների շրջանակներում ամփոփելով և մանրամասն ներկայացնելով խնդրի առնչությամբ վերաբերելի իրավական կարգավորումները (այդ թվում՝ պետական նպաստների տրամադրման նպատակները), Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան[409], Սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները[410], Վերաքննիչ վարչական դատարանի պրակտիկան և արձանագրումները[411]՝ Մարդու իրավունքների պաշտպանն ընդգծել էր, որ նոր ծնված երեխայի կարգաթիվն արտացոլում և պայմանավորվում է ընտանիքում խնամվող երեխաների քանակով, որով էլ պայմանավորվում է վճարվող նպաստի չափը: Ընտանիքում ծնված երեխաների կարգաթիվ սահմանելու նպատակը, ըստ էության, այն է, որ տրամադրվող սոցիալական ապահովության միջոցը ծառայի ընտանիքի բազմազավակությամբ պայմանավորված կարիքներին, ինչպես նաև ունենա խթանիչ ազդեցություն: Հետևաբար, նոր ծնված երեխայի ծննդյան միանվագ նպաստի իրավունքը պետք է ձեռք բերվի՝ հաշվի առնելով ընտանիքում փաստացի խնամվող երեխաների քանակը և դրա համար պետք է ներդրված լինեն և կիրառվեն արդյունավետ մեխանիզմներ, որոնք կոչված են առավելագույնս բարենպաստ որոշում կայացնելուն:

---

[409] Ծնողական կարգավիճակի հիմքով նպաստի վճարման մերժման վերաբերյալ գործերից մեկով ՄԻԵԴ-ը դիրքորոշում է արտահայտել առ այն, որ «մայրական նպաստի վճարման մերժումը դիմումատուներին հանդիսանում է տարբերակված մոտեցում» և «որ այդ իրավունքից օգտվող անձանց լայն շրջանակը հաստատում էր, որ ***նպաստը տրամադրվում է նորածին երեխաներին և նրանց խնամող ողջ ընտանիքին օժանդակելու համար, այլ ոչ միայն մոր՝ ծննդաբերության հետևանքով առաջացած բարդությունների նվազեցման նպատակով***: Հետևաբար, դիմումատուի կարգավիճակը կարելի էր համեմատել այն ընտանիքների և նրանց անդամների կարգավիճակի հետ, որոնք իրավունք ունեն օգտվել մայրական նպաստից: Այնուամենայնիվ, ո՛չ ազգային իշխանությունները և ո՛չ էլ կառավարությունը չէին ներկայացրել որևէ ողջամիտ և օբյեկտիվ հիմնավորում կենսաբանական հայրերին նպաստի վճարման ընդհանուր կանոնից բացառելու վերաբերյալ, որը տրամադրվում էր այն անձանց, ովքեր խնամում են նորածին երեխաներին, այն դեպքում, երբ մայրերը, որդեգրող ծնողները և խնամակալները օգտվում էին այդ նպաստից» **(«Weller v. Hungary», 31/03/2009, app. no. 44399/05):**

[410] Տե՛ս ՍԴ-ի 2019 թվականի հունվարի 15-ի թիվ ՍԴՈ-1438 որոշման 4.1-ին կետը:

[411] Տե՛ս Վերաքննիչ վարչական դատարանի 2024 թվականի հունվարի 15-ի թիվ ՎԴ6/0004/05/21 գործը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պաշտպանը վերահաստատում է, որ անհրաժեշտ է մշակել և ներդնել երեխայի ծննդյան միանվագ նպաստի նշանակման առավել դյուրին և արդյունավետ կառուցակարգեր, որոնք կյանքի կկոչեն օրենսդրի նպատակը և անհարկի դժվարություններ չեն առաջացնի ծնողների համար:

2.5. Ընտանիքում 3-րդ և յուրաքանչյուր հաջորդ նոր ծնված երեխայի ծննդյան կապակցությամբ դրամական աջակցության նշանակման խնդիրներ

Հաշվետու տարում Մարդու իրավունքների պաշտպանին շարունակել են հասցեագրվել դիմում-բողոքներ, որոնցով քաղաքացիները բարձրացրել են ընտանիքում 3-րդ և յուրաքանչյուր հաջորդ նոր ծնված երեխայի ծննդյան կապակցությամբ դրամական աջակցության նշանակման գործընթացի հետ կապված խնդիրներ:

Այսպես, օրինակ՝ Պաշտպանին ներկայացված բողոքներից մեկով անձը հայտնել է, որ ունի չորս երեխա *(ծնված՝ 26.03.1998, 18.10.2002, 15.09.2014, 04.12.2024 թվականներին):* Ըստ բողոք ներկայացրած անձի՝ 2013 թվականին ամուսնալուծվել է: Նշել է նաև, որ 2014 թվականին ամուսնացել է այլ անձի հետ: Հավելել է, որ ընտանիքում 3-րդ և յուրաքանչյուր հաջորդ նոր ծնված երեխայի ծննդյան կապակցությամբ ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 2169-Լ որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) սահմանված դրամական աջակցությունն ստանալու նպատակով դիմել է Միասնական սոցիալական ծառայություն (այսուհետ՝ ՄՍԾ)՝ ներկայացնելով բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, սակայն դիմումը մերժվել է: Խնդրել է ՄԻՊ աջակցությունը Որոշմամբ սահմանված դրամական աջակցությունը ստանալու հարցում:

Բողոքի քննարկման շրջանակում Մարդու իրավունքների պաշտպանը պարզաբանումներ է պահանջել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից: Ի պատասխան՝ տրամադրվել է տեղեկատվություն առ այն, որ ըստ Որոշմամբ հաստատված հավելվածի 9-րդ կետի 2-րդ ենթակետի «դ» և «ը» պարբերությունների՝ շահառու երեխայի կարգաթիվը որոշելիս հաշվի են առնվում դրամական աջակցությունը նշանակելու համար դիմելու օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում բնակության վայրի հասցեով հաշվառված՝ (…) շահառու երեխայի ծնողից (հորից կամ մորից) սերված երեխաները (շահառու երեխայի համահայր կամ համամայր քույրերն ու եղբայրները), եթե՝ (…) նոտարական ակտով հաստատված է այդ երեխայի՝ շահառու երեխայի ծնողի խնամքի տակ լինելու փաստը, (…) այդ երեխայի (շահառու երեխայի համահայր կամ համամայր քույր կամ եղբայր) ծնողներն ամուսնալուծվել են նրա չափահաս դառնալուց հետո:

Ըստ նախարարության՝ ուսումնասիրությամբ պարզվել է, որ դիմողը ամուսնալուծվել է, երբ նրա զավակները *(ծնված՝ 26.03.1998 և 18.10.2002 թվականներին)* անչափահաս են եղել: Ըստ այդմ, դիմողի՝ ընտանիքում 4-րդ երեխայի ծննդյան կապակցությամբ դրամական աջակցություն նշանակելու դիմումը մերժվել է, քանի որ նոր ծնված երեխայի կարգաթիվը որոշելիս հաշվի չեն առնվել նրա ավագ զավակները: Ըստ նախարարությունից ստացված պարզաբանման՝ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությամբ պարզվել է նաև, որ ներկայացվել է նոտարական հաստատմամբ հայտարարություն, այն դեպքում, երբ Որոշմամբ անհրաժեշտ է ներկայացնել նոտարական ակտ, որով հաստատվում է երեխաների հոր խնամքի տակ լինելու փաստը:

Ըստ այդմ, առկա տվյալներով ընտանիքում 3-րդ և յուրաքանչյուր հաջորդ նոր ծնված երեխայի ծննդյան կապակցությամբ դրամական աջակցության ծրագրի շրջանակներում դիմողի չափահաս երեխաները նոր ծնված երեխայի կարգաթիվը որոշելիս հաշվի առնվել

չեն կարող, ինչով պայմանավորված էլ քաղաքացուն 50 000 դրամ աջակցություն նշանակվել չի կարող:

Մյուս դեպքում Պաշտպանին ներկայացված բանավոր բողոքով քաղաքացին հայտնել է, որ ընտանիքում 3-րդ և յուրաքանչյուր հաջորդ նոր ծնված երեխայի ծննդյան կապակցությամբ դրամական աջակցություն նշանակելու նպատակով դիմում է ներկայացրել ՄՄԾ տարածքային կենտրոն, որը բավարարվել է: Հավելել է, որ հետագայում առաջացել են խնդիրներ իր անձը հաստատող փաստաթղթերի հետ, որի պատճառով՝ դրամական աջակցության վճարումը դադարեցնելու և այն կնոջը նշանակելու հարցով դիմել է ՄՄԾ տարածքային կենտրոն: Նշել է նաև, որ կինը դիմում է ներկայացրել ՄՄԾ դրամական աջակցությունն իրեն նշանակելու համար, սակայն դիմումը մերժվել է:

ՄԻՊ ներկայացուցիչը բարձրացված հարցը քննարկել է ՄՄԾ իրավասու ներկայացուցչի հետ: Արդյունքում, պարզ է դարձել, որ դիմողի կնոջը չի նշանակվել դրամական աջակցությունը, քանի որ չի պահպանվել Որոշմամբ հաստատված հավելվածի 25-րդ կետի 9-րդ ենթակետի պահանջը, այն է՝ դրամական աջակցություն ստանալու իրավունքը դադարում է՝ (…) դրամական աջակցություն ստանալու իրավունքը դադարեցնելու մասին նոտարական կարգով վավերացված հայտարարությունը տարածքային բաժին ներկայացնելու կամ այդ գրավոր հայտարարությունը տարածքային բաժնում տալու դեպքում:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ հարկ է նշել, որ ինչպես նախորդ տարի, այնպես էլ 2025 թվականին ՄԻՊ աշխատակազմ ստացված բողոքների ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ շահառու երեխաների կարգաթիվը որոշելիս իրավակիրառ պրակտիկայում դեռևս առկա են խնդիրներ, որոնք դժվարացնում են դրամական աջակցություն ստանալու իրավունքի իրացումը և ծնողի համար առաջացնում վարչարարական ավելորդ քաշքշուկներ: Մարդիկ ստիպված են լինում հավելյալ ֆինանսական բեռ կրել դրամական աջակցությունը ստանալու համար:

Սույն տարեկան հաղորդման կազմման աշխատանքների շրջանակներում Որոշմամբ սահմանված դրամական աջակցության վերաբերյալ նախարարություն ստացվող բողոքների թվի, ինչպես նաև նշանակման կառուցակարգերը մատչելի դարձնելու ուղղությամբ ձեռնարկված քայլերի մասին հարցադրում է կատարել նախարարություն: Ի պատասխան՝ հայտնել են, որ ընտանիքում 3-րդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծննդյան դեպքում մինչև երեխայի 6 տարեկանը լրանալը, ամսական 50 000 դրամ դրամական աջակցություն նշանակելու և վճարելու վերաբերյալ 2025 թվականի ընթացքում քաղաքացիներից ստացվել է 54 դիմում-բողոք, որոնք հիմնականում վերաբերել են դրամական աջակցություն նշանակելու և վճարելու ընդհանուր կարգին, նոր ծնված երեխայի կարգաթվում մյուս երեխաներին և զավակներին (համամայր կամ համահայր) հաշվի առնելու կարգին, դրամական աջակցություն ստանալու իրավունքն օրենսդրության պահանջների համաձայն ոչ ժամանակին (ուշ կամ շուտ) դադարեցնելու, դրամական աջակցության ստանալու իրավունքի դադարեցման հիմքերի թերի լինելու խնդրին և այլն:

Հավելել են, որ Որոշմամբ հաստատված՝ ընտանիքում 3-րդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծննդյան կապակցությամբ տրվող՝ ամսական 50 000 դրամի չափով աջակցությունը տարածվում է այն դեպքերի վրա, երբ երեխան ծնվել է 2022 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո՝ մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ: Ավելին, ըստ տեղեկացման, կատարված բազմակողմանի ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքները հանգեցրել են այն եզրակացության, որ վերը նշված ծրագիրն ունեցել է զգալի դրական ազդեցություն՝ երրորդ և հերթական ծնված երեխաների

թվի, ինչպես նաև երեխաների խնամքի ապահովման և բարեկեցության վրա, ինչն էլ իր հերթին ունեցել է ժողովրդագրական վիճակի բարելավման վրա որոշակի դրական ազդեցություն:

Ըստ նախարարության՝ հաշվի առնելով քննարկվող միջոցառման դրական ազդեցությունները՝ ինչպես ժողովրդագրական իրավիճակի, այնպես էլ 3 և ավել երեխա ունեցող ընտանիքների բարեկեցության վրա, սահմանվել է ընտանիքում 3-րդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծննդյան կապակցությամբ աջակցության ծրագրի իրականացման ձևաչափը՝ դրան տալով ավելի բարձր իրավական կարգավիճակ. «Պետական նպաստների մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանել որպես պետական նպաստի տեսակ: Ըստ այդմ, 2026 թվականի հունվարի 1-ին և դրանից հետո ընտանիքում ծնված 3-րդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի համար Օրենքով սահմանված կարգով կնշանակվի համապատասխան նպաստը:

Հավելել են նաև, որ ստացված դիմում-բողոքների վերլուծությունների արդյունքներով բողոքները հիմնականում վերաբերվում են ընտանիքում շահառու երեխաների կարգաթվի որոշմանը: Օրենքի 26.1-ին հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ շահառու երեխայի կարգաթիվը որոշելու կարգը սահմանում է ՀՀ կառավարությունը և այդ հիմքով ներկայում մշակվել է համապատասխան իրավական ակտի նախագիծ, որն ուղարկվել է պետական-իրավական փորձաքննության: Նախագծով առաջարկված կարգավորումներով որոշակի փոփոխություններ են կատարվել Որոշման ընթացակարգերում (սահմանված կարգավորումների համեմատ):

Մարդու իրավունքների պաշտպանը ողջունում է պետության կողմից գործադրվող ջանքերը, որոնք ուղղված են 3 և ավելի երեխա ունեցող ընտանիքների բարեկեցության բարձրացմանը և այս դրամական աջակցությանն ավելի բարձր իրավական կարգավիճակ տալուն, այնուհանդերձ, վերահաստատում է, որ ծնունդների խրախուսումների ու բազմազավակ ընտանիքներին տրամադրվող սոցիալական երաշխիքների տեսանկյունից՝ անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել ընտանիքում 3-րդ և յուրաքանչյուր հաջորդ նոր ծնված երեխայի ծննդյան կապակցությամբ դրամական աջակցության նշանակման առավել մատչելի և արդյունավետ կառուցակարգերի նախատեսման ու իրացման հարցերը:

2.6. Պատժից ազատվող և բնակության վայր չունեցող դատապարտյալներին բնակարանի վարձակալության վարձավճարի հատուցում չտրամադրելու խնդիր

Հաշվետու տարում շարունակել է արդիական մնալ պատժից ազատվող և բնակության վայր չունեցող դատապարտյալներին բնակարանի վարձակալության վարձավճարի հատուցման չտրամադրման հետ կապված խնդիրը[412]: Ընդ որում, հարկ է ընդգծել, որ այս խնդիրը ՄԻՊ հաստատության կողմից արձանագրվել է ոչ միայն անհատական բողոքների ուսումնասիրության արդյունքում, այլ նաև Մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեության շրջանակներում իրականացված մշտադիտարկման այցերի արդյունքում:

[412] Պաշտպանն այս խնդրին մանրամասն անդրադարձ է կատարել նաև իր նախորդ տարեկան հաղորդման շրջանակում, մանրամասն տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին 2024 թվականի տարեկան հաղորդումը, էջեր 730-733:

Նշված խնդրի համատեքստում հարկ է անդրադարձ կատարել ՀՀ կառավարության 2023 թվականի ապրիլի 13-ի «Պատժից ազատվող դատապարտյալներին տրամադրվող սոցիալական աջակցության ձևը, ծավալն ու տրամադրելու կարգը, ինչպես նաև դատապարտյալին տրամադրվող միանվագ դրամական օգնության չափն ու տրամադրման կարգը սահմանելու մասին» թիվ 502-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) հաստատված 1-ին հավելվածի 8-րդ կետին, որով ուղղակիորեն նախատեսվում է, որ ***եթե պատժից ազատվող դատապարտյալը չունի բնակության վայր, ապա նրան տրամադրվում է բնակարանի վարձակալության վարձավճարի հատուցում (այսուհետ՝ հատուցում)՝ մինչև վեց ամիս ժամկետով:***

Նույն հավելվածի 9-րդ կետի համաձայն՝ դատապարտյալը համարվում է բնակության վայր չունեցող, եթե ՀՀ տարածքում չունի սեփականության կամ համասեփականության իրավունքով բնակարան (բնակելի տարածություն)[413], իսկ ըստ 10-րդ կետի՝ բնակության վայր չունեցող դատապարտյալի պատժից ազատումից առնվազն երկու ամիս առաջ քրեակատարողական հիմնարկի պետն ապահովում է դատապարտյալի վարձակալությամբ բնակարան գտնելը և առցանց դիմումի ներկայացումը միասնական սոցիալական ծառայություն՝ հատուցում ստանալու համար:

Այս հարցն իրավական կարգավորման է ենթարկվել նաև այլ միջազգային իրավական փաստաթղթերով: Մասնավորապես, Միավորված ազգերի կազմակերպության 2015 թվականի դեկտեմբերի 17-ի «Ազատությունից զրկված անձանց հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնների (Նելսոն Մանդելայի կանոններ)» 108-րդ կետում նշվում է, որ *կառավարական կամ այլ մարմիններն ու հաստատությունները, որոնք ազատված բանտարկյալներին օգնում են հասարակության մեջ իրենց տեղը գտնելու (...) պետք է հոգ տանեն, որ այդպիսի բանտարկյալներն անձը հաստատող անհրաժեշտ փաստաթղթեր ու վկայականներ ստանան, **համապատասխան բնակարան և աշխատանք գտնեն**, ունենան տվյալ կլիմային ու տարվա եղանակին հարմար հագուստ և այնքան միջոցներ, որը բավարար է նշանակման վայրը մեկնելու և ազատվելուն անմիջապես հաջորդող ժամանակահատվածում ապրելու համար*[414]:

Մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային իրավաբանության այս պահանջներն իրացվել են նաև ներպետական օրենսդրության մեջ: Այսպես, ըստ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 141-րդ հոդվածի 3-րդ մասի՝ պատժից ազատվող և բնակության վայր չունեցող դատապարտյալն ապահովվում է ժամանակավոր կացարանով՝ մինչև վեց ամիս ժամկետով՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համագործակցելով:

Չնայած գործող իրավական կարգավորումներին՝ Մարդու իրավունքների պաշտպանին 2024 և 2025 թվականներին հասցեագրված բողոքների ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ պատժից ազատվող և բնակության վայր չունեցող դատապարտյալները չեն կարողանում ստանալ բնակարանի վարձակալության վարձավճարի հատուցում՝ Որոշման կիրարկման ընթացքում ի հայտ եկած որոշակի խնդիրների, մասնավորապես, նշված գործընթացի ապահովման համար անհրաժեշտ էլեկտրոնային համակարգը գործարկված չլինելու պատճառով:

---

[413] Դատապարտյալին սեփականության կամ համասեփականության իրավունքով պատկանող բնակարանի (բնակելի տարածության) առկայության կամ բացակայության վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրում է Կադաստրի կոմիտեն՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

[414] Էլեկտրոնային տարբերակը հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.unodc.org/documents/justice-and-prison-reform/Nelson_Mandela_Rules-E-ebook.pdf (20/03/2026թ.-ի դրությամբ):

Այսպես, օրինակ՝ հաշվետու տարում ՄԻՊ-ին ներկայացրած բանավոր բողոքներից մեկով անձը հայտնել է, որ շուրջ 14 տարի ազատազրկման ձևով կրել է պատիժ: Նշել է նաև, որ պատժից ազատվելուց ամիսներ առաջ դիմել է քրեակատարողական հիմնարկի պետին՝ վարձակալությամբ բնակարան գտնելու ու բնակարանի վարձակալության վարձավճարի հատուցում ստանալու նպատակով Միասնական սոցիալական ծառայություն առցանց դիմում ներկայացնելու համար, սակայն ստացել է մերժում, որի արդյունքում՝ հատուցումը չի տրամադրվել: Հավելել է, որ բավարար ֆինանսական միջոցներ չունենալու պատճառով՝ ստիպված է եղել գիշերել դրսում (հայտնվել է անօթևանի կարգավիճակում): Բողոք ներկայացրած անձը խնդրել է Պաշտպանի աջակցությունը բնակարանի վարձակալության վարձավճարի հատուցում ստանալու, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ժամանակավոր կացարան տեղափոխվելու հարցերում:

Խնդրո առարկա դեպքով համապատասխան պարզաբանումներ ստանալու նպատակով Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչը կապ է հաստատել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության իրավասու ներկայացուցչի հետ: Վերջինս հայտնել է, որ Որոշմամբ սահմանված կարգավորումները փաստացի չեն գործում և ներկայում դրանում համապատասխան փոփոխություններ կատարելու նպատակով նախագիծ է շրջանառվում, որից հետո միայն հնարավոր կլինի ապահովել ամրագրված կարգավորումների կիրարկումը:

Խնդրին լուծում տալու նպատակով Պաշտպանի ներկայացուցիչը բարձրացված հարցը քննարկել է «Հանս Քրիստիան Կոֆոեդ» բարեգործական հիմնադրամի ներկայացուցչի հետ: Թեև ՄԻՊ միջամտության և անօթևանների ժամանակավոր կացարանի հետ արդյունավետ համագործակցության արդյունքում, անձը տեղավորվել է նշված կացարան, այնուհանդերձ, այս առումով խիստ մտահոգիչ է այն, որ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից դեռևս նախորդ տարի բարձրացված և բացասական հետևանքների հանգեցնող խնդրին լուծում չի տրվում:

Հաշվի առնելով, որ հաշվետու տարում խնդիրը շարունակել է չլուծված մնալ և 2025 թվականին Մարդու իրավունքների պաշտպանը բարձրացված հարցի առնչությամբ ստացել է բողոքներ՝ սույն տարեկան հաղորդման կազմման աշխատանքների շրջանակում խնդրի կարգավորման համար ձեռնարկված միջոցների առնչությամբ, ինչպես նաև ստացված դիմում-բողոքների, դրանց ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով Պաշտպանը հարցում է ուղարկել Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն: Ի պատասխան՝ տրամադրվել է տեղեկատվություն առ այն, որ 2025 թվականի ընթացքում պատժից ազատվող դատապարտյալներից Որոշմամբ նախատեսված բնակարանի վարձակալության վարձավճարի հատուցման տրամադրման համար ստացվել է 2 դիմում, որոնք մերժվել են և տրամադրել է խորհրդատվություն ընթացակարգի վերաբերյալ, քանի որ դեռևս ծրագրային ապահովումն առկա չէ: Ըստ նախարարության՝ 2025 թվականի ընթացքում Որոշման մեջ փոփոխություններ նախաձեռնելու նպատակով աշխատանքներ են իրականացվել ՀՀ արդարադատության նախարարության հետ, այդ թվում՝ հանդիպումների և համատեղ քննարկումների միջոցով:

Վերոգրյալի հետ մեկտեղ, հարկ է ընդգծել, որ Որոշման կիրարկումից հետո ՄԻՊ-ին հասցեագրված դիմում-բողոքների բովանդակությունը, ինչպես նաև քրեակատարողական հիմնարկներ իրականացվող մշտադիտարկման այցերի արդյունքները վկայում են պատժից ազատվող դատապարտյալներին տրամադրվող սոցիալական աջակցության *(դրա ձևի, ծավալի, տրամադրման կարգի)*, ինչպես նաև դատապարտյալներին տրամադրվող միանվագ դրամական օգնության *(դրա չափի)* վերաբերյալ վերջիններիս իրազեկվածության ոչ բավարար մակարդակի մասին: Այս տեսանկյունից Պաշտպանը

կարևորում է պատժից ազատվող դատապարտյալներին տրամադրվող սոցիալական աջակցության վերաբերյալ վերջիններիս իրազեկվածության բարձրացմանն ուղղված ջանքերի անհրաժեշտությունը: Դրանք կարելի է կազմակերպել ինչպես պատիժը կատարող հիմնարկների միջոցով, այնպես էլ հանրային իրազեկման աղբյուրներով (օրինակ՝ հեռուստատեսության և ռադիոյի միջոցով):

Ամփոփելով վերոգրյալը՝ Պաշտպանը կարևորում է բարձրացված խնդիրների լուծման համար անհրաժեշտ ուղիների նախանշման նպատակով շարունակական քննարկումների իրականացումը, այնուհանդերձ, վերահաստատում է, որ խնդիրները պետք է ստանան շուտափույթ լուծում և պատժից ազատվող դատապարտյալների սոցիալական աջակցության իրավունքի առավել արդյունավետ երաշխավորման տեսանկյունից՝ անհրաժեշտ է արագացնել համապատասխան օրենսդրական փոփոխությունների կատարման գործընթացը, որպեսզի պատժից ազատվող դատապարտյալները կարողանան պատշաճ և ամբողջ ծավալով օգտվել իրենց համար նախատեսված սոցիալական աջակցությունից:

Անհրաժեշտ է նաև ջանքեր գործադրել պատժից ազատվող դատապարտյալներին տրամադրվող սոցիալական աջակցության, դրա ձևի, ծավալի, տրամադրման կարգի, ինչպես նաև դատապարտյալներին տրամադրվող միանվագ դրամական օգնության ու դրա չափի մասին իրազեկվածության բարձրացման ուղղությամբ:

ԳԼՈՒԽ 6. ՀԱՆՐԱՅԻՆ ՈՒՂԵՎՈՐԱՏԱՐ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՐԱԿԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐ

1. Միջմարզային և միջհամայնքային հանրային ուղևորատար տրանսպորտի հետ կապված խնդիրներ

Հանրային ուղևորատար տրանսպորտի հետ կապված խնդիրներին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը մշտապես է անդրադառնում իր գործունեությունն ամփոփող տարեկան հաղորդումներում[415]: Պաշտպանը, մասնավորապես, նշել է, որ ուղևորատար տրանսպորտի թերզարգացվածությունը մարդկանց համար առաջացնում է մի շարք սոցիալական և այլ տեսակի խնդիրներ, ինչպես նաև անհարմարություններ, այդ թվում՝ անձանց ազատ տեղաշարժի անխոչընդոտ իրականացման տեսանկյունից: Ընդգծել է նաև, որ անհրաժեշտ է բարձրացնել հասարակական տրանսպորտի սպասարկման որակը՝ սահմանելով վերահսկողության մեխանիզմներ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների մատուցած ծառայությունների որակի նկատմամբ, ինչպես նաև գերծանրաբեռնվածության հարցի լուծման կապակցությամբ ավելացնել տրանսպորտային միջոցների քանակը՝ ապահովելով մարզային բոլոր համայնքներում տրանսպորտի առկայությունը և հասանելիությունը:

Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2025 թվականին շարունակել են արդիական մնալ հանրային ուղևորատար տրանսպորտի սպասարկման որակի, երթուղու և սակագնի փոփոխության, գերծանրաբեռնվածության, ժամանակին և կանոնավոր չաշխատելու հետ կապված խնդիրները: Ընդ որում, դրանք վեր են հանվել ինչպես Պաշտպանին հասցեագրված գրավոր ու բանավոր բողոքների, զանգվածային լրատվության միջոցների հրապարակումների հիման վրա, այնպես էլ տարբեր մարզեր իրականացված այցերի ընթացքում:

Այսպես, օրինակ՝ Պաշտպանին հասցեագրված խմբային բողոքներից մեկով ՀՀ Կոտայքի մարզի Նաիրի համայնքի Պռոշյան և Քասախ բնակավայրերի բնակիչները հայտնել են, որ 59 և 25 համարների տրանսպորտի երթուղին փոխվել է և ըստ այդմ, դադարեցվել է Երևանի հանրային ուղևորատար տրանսպորտի կողմից Երևանին հարող տարածքների սպասարկումը: Հավելել են, որ 59 համարի ավտոբուսի երթուղին պահպանելու պահանջի և խնդրի շարունակական չլուծման պատճառով՝ Պռոշյան և Քասախ համայնքների բնակիչները բողոքի ակցիաներ[416] են կազմակերպել Երևան-Աշտարակ ճանապարհին, որից հետո թվով երեք քննարկում և հանդիպում են ունեցել Կոտայքի մարզպետի և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալի հետ, որին մասնակցել է նաև սպասարկող ընկերության ներկայացուցիչը:

Նշել են նաև, որ 2025 թվականի ապրիլի 15-ին տեղի ունեցած քննարկման ընթացքում պետական մարմինների կողմից կատարվել են այնպիսի առաջարկներ, որոնք բնակիչների համար անընդունելի են եղել: Մասնավորապես, ըստ բողոք ներկայացրած անձանց, քննարկումների ընթացքում երթուղու փոփոխության հարցը վերաբերել է բացառապես

---

[415] Առավել մանրամասն տե՛ս, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի վերաբերյալ 2020, 2021 և 2024 թվականների տարեկան հաղորդումները (համապատասխանաբար՝ էջեր 848-851, 797-799, 734-738):

[416] Հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.azatutyun.am/a/boghoki-aktsia-erevan-ashtarak-chanaparhin-teghoum-en-karmirberetavornery/33374357.html (20/03/2026թ.-ի դրությամբ):

ներհամայնքային երթուղուն, ինչպես նաև քննարկման առարկա է դարձվել ոչ թե երթուղին երկարացնելու, այլ կրճատելու տարբերակը, ինչի արդյունքում նախատեսվել է նաև սակագնի նվազեցում:

Բնակիչների պնդմամբ՝ սակագնի կամ երթուղու փոփոխության վերաբերյալ որևէ ընդառաջ քայլ չի կատարվել, իսկ սպասարկող ընկերության ներկայացուցիչը բնակիչներին հայտնել է համայնքի տարածքում նախատեսված 3 կմ երթուղին պահպանվելու դեպքում սակագինը չփոխվելու՝ 200 դրամ կազմելու, իսկ երթուղու երկարեցման դեպքում՝ 300 դրամ կազմելու մասին:

Նշված բնակավայրերի բնակիչների տեղեկացմամբ՝ ներկայում նրանք օգտվում են միասնական տոմսային համակարգից, իսկ միայն մեկ տրանսպորտի պարագայում բնակիչների վրա դրվելու է հավելյալ ֆինանսական բեռ, ինչի մասին էլ նրանք հայտնել են իրավասու պետական մարմիններին, սակայն որևէ արդյունքի չեն հասել;

Բարձրացված հարցի կապակցությամբ Պաշտպանը գրություն է հասցեագրել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն (այսուհետ՝ Նախարարություն): Ի պատասխան՝ տեղեկացրել են, որ Պռոշյան և Քասախ բնակավայրերը գտնվում են Կոտայքի մարզի կազմում, հետևաբար՝ վերոնշյալ բնակավայրի սպասարկումն իրականացվում է մարզի միասնական երթուղային ցանցի շրջանակներում, մասնավորապես՝ «Պռոշյան-Երևան» թիվ 277, «Քասախ-Երևան» թիվ 276 միջմարզային երթուղիներով:

Միաժամանակ, հայտնել են, որ Քասախ և Պռոշյան բնակավայրերի բնակիչների, վարչական ղեկավարների, Երևանի քաղաքապետարանի և Կոտայքի մարզի երթուղային ցանցը սպասարկող ընկերության ներկայացուցիչների հետ կազմակերպվել են մի շարք հանդիպումներ, որոնց արդյունքում որոշվել է, որ թիվ 25 համարի երթուղու ուղեգիծը կերկարացվի մինչև Պաշտպանության նախարարության նախկին շենքի մոտ, իսկ 59 համարի երթուղին կանցնի Քասախ բնակավայրի սկզբնամասով: «Պռոշյան-Երևան» թիվ 277 միջմարզային երթուղու սակագինը կսահմանվի 200 դրամ, իսկ «Քասախ-Երևան» թիվ 276 միջմարզային երթուղունը՝ 150 դրամ:

Հաշվի առնելով բնակիչների կողմից Պաշտպանի աշխատակազմ ներկայացված լրացուցիչ դիմումներն այն մասին, որ 59 համարի տրանսպորտի երթուղու վերջնակետի փոփոխության արդյունքում ստիպված են ոտքով կամ այլ տրանսպորտային միջոցներով հասնել նշված բնակավայր, որը լրացուցիչ ֆինանսական բեռ է ստեղծում բնակիչների համար, ինչպես նաև այն հանգամանքը, որ մինչ երթուղու փոփոխությունը նրանք ձեռք են բերել Երևան քաղաքի տոմսային միասնական համակարգի փաթեթներ, որոնք նոր երթուղու սահմանումից հետո հնարավոր չէ օգտագործել (դրանք գործում են միայն Երևան քաղաքի տարածքում)՝ Պաշտպանը կրկնակի գրություն է հասցեագրել Նախարարություն:

Ի պատասխան տեղեկացրել են, որ Քասախ և Պռոշյան բնակավայրերը սպասարկվում էին Երևանի քաղաքապետարանի կողմից, հետևաբար Կոտայքի մարզի երթուղային ցանցի շրջանակներում վերոնշյալ երթուղիների տրանսպորտային սպասարկումը հնարավոր եղավ կազմակերպել միայն «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքում 2023 թվականի հուլիսի 12-ի փոփոխությունից և դրա կիրարկումն ապահովող ՀՀ կառավարության 2024 թվականի օգոստոսի 8-ի թիվ 1253-Ն որոշման պահանջները հաստատելուց հետո, որով սահմանվեց կանոնավոր ուղևորափոխադրումների երթուղիների փոխադրավարձը:

Պատասխան գրությամբ Նախարարությունը վերահաստատել է նախորդիվ տրված պատասխանն այն մասին, որ թիվ 25 համարի երթուղու ուղեգիծը կերկարացվի մինչև Պաշտպանության նախարարության նախկին շենքի մոտ, իսկ 59 համարի երթուղին կանցնի Քասախ բնակավայրի սկզբնամասով, ինչպես նաև այն, որ «Պռոշյան-Երևան» թիվ 277 միջմարզային երթուղու սակագինը կսահմանվի 200 դրամ, իսկ «Քասախ-Երևան» թիվ 276 միջմարզային երթուղունը՝ 150 դրամ:

Հարկ է նշել, որ վերոգրյալ տեղեկատվության վերաբերյալ բողոքը ներկայացրած անձանցից մեկը Պաշտպանի ներկայացուցչին հայտնել է, որ թիվ 25 համարի երթուղու ուղեգծի փոփոխությունը մինչև Պաշտպանության նախարարության նախկին շենքի մոտ Պռոշյան համայնքի բնակիչների համար ընդունելի է և նշված խնդրով Պռոշյան համայնքում դժգոհություններ ներկայում առկա չեն: Այնուհանդերձ, այս բողոքը Պաշտպանի աշխատակազմում գտնվում է քննարկման փուլում և պահանջում է հետագա լրացուցիչ ուսումնասիրություններ:

Հաշվետու տարում Պաշտպանի թեժ գծին բանավոր բողոք է ստացվել նաև Արարատի մարզի Մասիս համայնքի Մասիս քաղաքից մինչև Նոր Խարբերդ բնակավայր երթևեկությունն ապահովող միջհամայնքային տրանսպորտի չգործելու վերաբերյալ:

Պաշտպանի ներկայացուցիչը բարձրացված հարցը քննարկել է Մասիս համայնքի ղեկավարի աշխատակազմի իրավասու ներկայացուցչի հետ: Վերջինս տրամադրել է տեղեկատվություն այն մասին, որ հայտարարվել է ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթ՝ Մասիս քաղաքից մինչև Նոր Խարբերդ բնակավայր երթևեկությունն ապահովելու համար: Հավելել է, որ նշված մրցույթին մասնակցելու համար որևէ կազմակերպություն չի դիմել:

Ավելի ուշ՝ հարցը կրկին քննարկվել է Մասիս համայնքի ղեկավարի աշխատակազմի իրավասու ներկայացուցչի հետ: Վերջինս հայտնել է, որ 2025 թվականի ընթացքում 4 անգամ հայտարարվել է ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպության ընտրության մրցույթ և միայն վերջին մրցույթի ժամանակ է ընտրվել ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի որոշմամբ հաստատված կարգի պահանջներին համապատասխանող կազմակերպություն:

Պաշտպանը կարևորում է տեղական ինքնակառավարման մարմնի կողմից իրականացված աշխատանքները, այնուհանդերձ հատուկ ընդգծում է, որ խնդրի արդյունավետ լուծման համար անհրաժեշտ է նաև վերանայել ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթների գործընթացի մեթոդաբանությունը, մասնավորապես, մշակել և իրացնել գործընթացի ռիսկերը պատշաճ գնահատելու կառուցակարգեր:

2025 թվականին հանրային ուղևորատար տրանսպորտի հետ կապված խնդիրներ արձանագրվել են նաև Պաշտպանի՝ Արմավիրի մարզի եզդիական բնակչություն ունեցող Ֆերիկ համայնք, Գեղարքունիքի մարզի Ճամբարակ խոշորացված համայնք, Սյունիքի մարզի Տեղ խոշորացված համայնքի Խոզնավար և Խնածախ սահմանամերձ բնակավայրեր, Լոռու մարզի Վանաձոր համայնք, Արարատի մարզի Վերին Դվին համայնք իրականացրած այցերի շրջանակում:

Արմավիրի մարզի եզդիական բնակչություն ունեցող Ֆերիկ համայնք այցը կազմակերպվել է Ազգային ժողովի պատգամավոր, ԱԺ-ում եզդիական համայնքի ներկայացուցիչ, Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնակատար Ռուստամ Բաքոյանի հետ: Այցին մասնակցել են նաև Ազգային ժողովի, Արմավիրի մարզպետարանի, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Այցի ընթացքում կազմակերպվել է հանդիպում նաև բնակիչների հետ՝ համայնքում առկա խնդիրներին ծանոթանալու նպատակով: Հանդիպման ընթացքում բնակիչները, ի թիվս այլնի, իրենց մտահոգությունն են հայտնել միջհամայնքային տրանսպորտի ոչ պատշաճ, մասնավորապես, օրը 2 անգամ գործարկվելու, միջհամայնքային ճանապարհների բարեկարգման անհրաժեշտության վերաբերյալ[417]: Արձանագրված խնդիրը (մնացյալ խնդիրների հետ միասին) ամփոփվել և ներկայացվել են իրավասու պետական մարմիններին:

Նախարարությունից ստացված պատասխանի համաձայն՝ Արմավիրի մարզի միասնական երթուղային ցանցը սպասարկող օպերատորի ընտրության մրցույթը կայացել է 2021 թվականի նոյեմբերի 19-ին, որի արդյունքում մարզի Վաղարշապատ տարածաշրջանը սպասարկվում է «Էջմիածնի ԲՈՒԱՏ» ԲԲ ընկերության կողմից, իսկ Արմավիրի տարածաշրջանը սպասարկելու համար մրցույթին հայտ ներկայացրած կազմակերպությունները չեն բավարարել ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի որոշմամբ հաստատված կարգի պահանջները, որի հետևանքով մրցույթում հաղթող չի ճանաչվել: Նշվել է նաև, որ մրցույթի արդյունքները ներկայում վիճարկվում են դատական կարգով և դատական գործընթացի ավարտից հետո միայն հնարավոր կլինի անդրադառնալ մարզում միասնական երթուղային ցանցի ներդրմանը:

Մարդու իրավունքների պաշտպանի գլխավորած աշխատանքային խմբի՝ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ խոշորացված համայնք իրականացրած այցի շրջանակներում նույնպես բնակիչների կողմից բարձրացվել է հանրային ուղևորատար տրանսպորտի բացակայության հետ կապված խնդիրներ, մասնավորապես, նշվել է, որ Ճամբարակ համայնքի գյուղերում բնակիչների համար հասանելի չեն շատ ծառայություններ, որոնցից օգտվելու համար նրանք պետք է հասնեն Ճամբարակ քաղաք, սակայն համայնքում առկա է հասարակական տրանսպորտի բացակայության խնդիր, որի պայմաններում նշված

[417] Հասանելի է հետևյալ հղումով՝ https://ombuds.am/am/site/ViewNews/3438, (20/03/2026թ.-ի դրությամբ):

ծառայություններից օգտվելն իրենց համար ավելի է դժվարանում և լրացուցիչ ֆինանսական բեռ է առաջացնում[418]:

Վերոնշյալ հարցի վերաբերյալ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմից հայտնել են, որ Ճամբարակ համայնքում հասարակական տրանսպորտի հարցը կարող է լուծվել միասնական երթուղային ցանցի ներդրման դեպքում, որի նպատակով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից հայտարարվել է մրցույթ:

Հաջորդիվ, Պաշտպանի աշխատակազմ տեղեկատվություն է ստացվել առ այն, որ Ճամբարակ համայնքի ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպության ընտրության մրցույթը կայացել է, և հաղթող կազմակերպությանը տրվել է վեցամսյա ժամկետ՝ համապատասխան տրանսպորտային միջոցների ներկրման համար:

2025 թվականի ընթացքում Սյունիքի մարզ իրականացրած աշխատանքային

այցի շրջանակում Մարդու իրավունքների պաշտպանն այցելել է Տեղ խոշորացված համայնքի Խոզնավար և Խնածախ բնակավայրեր: Կատարած այցի շրջանակում հանդիպումներ են տեղի ունեցել նշված բնակավայրերի բնակիչների հետ: Վերջիններս, ի թիվս այլնի, բարձրաձայնել են հանրային տրանսպորտի բացակայության հետ կապված հարցեր[419]:

Նույն թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի Լոռու մարզ կատարած այցերի ժամանակ «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» ՊՈԱԿ-ի ուսանողներն իրենց մտահոգությունն են հայտնել միջքաղաքային, մասնավորապես, Տաշիր քաղաքից դեպի Վանաձոր տրանսպորտի բացակայության վերաբերյալ՝ նշելով, որ մեծ դժվարություն է իրենց համար ամեն օր համալսարան հասնելը[420]:

2025 թվականի դեկտեմբերի 18-ին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանն

աշխատակազմի ներկայացուցիչների ուղեկցությամբ այցելել է Հայաստանում ասորական ամենախոշոր՝ Արարատի մարզի Վերին Դվին համայնք: Այցի ընթացքում արձանագրվել են նաև միջհամայնքային տրանսպորտի կանոնավոր փոխադրման կազմակերպման, ինչպես նաև

[418] Հասանելի է հետևյալ հղումով՝ https://ombuds.am/am/site/ViewNews/3525, (20/03/2026թ.-ի դրությամբ):
[419] Հասանելի է հետևյալ հղումով՝ https://ombuds.am/am/site/ViewNews/3400, (20/03/2026թ.-ի դրությամբ):
[420] Հասանելի է հետևյալ հղումով՝ https://ombuds.am/am/site/ViewNews/3585, (20/03/2026թ.-ի դրությամբ):

միջհամայնքային ճանապարհների բարեկարգման հետ կապված հարցեր[421]:

Այցերի շրջանակներում վերհանված խնդիրներն ուսումնասիրվել են ՄԻՊ աշխատակազմում և հասցեագրվել են իրավասու պետական մարմիններին: Դրանց ընթացքի նկատմամբ իրականացվում է հետևողական աշխատանք:

Հաշվի առնելով միջմարզային և միջհամայնքային հանրային ուղևորատար տրանսպորտի հետ կապված հարցերի համակարգային բնույթը և շարունակականությունը՝ Պաշտպանը 2025 թվականի տարեկան հաղորդման նախապատրաստական աշխատանքների շրջանակում հարցադրում է ուղարկել Նախարարություն այն մասին, թե *նախարարության իրավասության շրջանակում ի՞նչ միջոցներ են ձեռնարկվել(ում) միջհամայնքային և միջմարզային ուղևորափոխադրումները պատշաճ կերպով կազմակերպելու, իսկ երթուղու բացակայության պայմաններում՝ այդպիսիք նախատեսելու ուղղությամբ:*

Ի պատասխան Պաշտպանի հարցադրմանը՝ Նախարարությունից հայտնել են, որ ՀՀ-ում ուղևորափոխադրումների ոլորտը բարելավելու նպատակով ներդրվում է միասնական երթուղային ցանց: Մասնավորապես, Կոտայքի մարզի միասնական երթուղային ցանցը սպասարկող օպերատորի ընտրության մրցույթը կայացել է 2021 թվականի հոկտեմբերի 29-ին, որի արդյունքում մարզը սպասարկվում է «Մուլտի Տրանսպորտ» ՍՊ ընկերության կողմից: Արմավիրի մարզի միասնական երթուղային ցանցը սպասարկող օպերատորի ընտրության մրցույթը կայացել է 2021 թվականի նոյեմբերի 19-ին, որի արդյունքում մարզի Վաղարշապատ տարածաշրջանը սպասարկվում է «Էջմիածնի ԲՈՒԱՏ» ԲԲ ընկերության կողմից: Իսկ Արմավիրի տարածաշրջանը սպասարկելու համար մրցույթին հայտ ներկայացրած կազմակերպությունները չեն բավարարել ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի որոշմամբ հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) պահանջները, որի հետևանքով մրցույթում հաղթող չի ճանաչվել: Հարկ ենք համարում նշել, որ մրցույթի արդյունքները ներկայում վիճարկվում են դատական կարգով և դատական գործընթացի ավարտից հետո միայն հնարավոր կլինի անդրադառնալ մարզում միասնական երթուղային ցանցի ներդրմանը:

Արարատի մարզի միասնական երթուղային ցանցը սպասարկող օպերատորի ընտրության մրցույթը կայացել է 2022 թվականի հունվարի 20-ին, որի արդյունքում Արարատի մարզի միասնական երթուղային ցանցը սպասարկելու մրցույթի արդյունքում հաղթող էր ճանաչվել «Ռեգնում» ՍՊԸ-ն, որը հայտ-պարտավորությամբ նախատեսված ավտոտրանսպորտային միջոցները մրցութային հանձնաժողովի գնահատմանը ներկայացնելու պայմանագրային պարտավորությունները չկատարելու պատճառով ՀՀ ՏԿԵՆ 24.10.2025 թվականի թիվ 3196-Ա հրամանի համաձայն՝ զրկվել է Արարատի մարզի միասնական երթուղային ցանցը սպասարկելու իրավունքից:

Նախարարությունը 2026 թվականի հունվարի 29-ին կրկին հայտարարել է Արարատի մարզի միասնական երթուղային ցանցը սպասարկող օպերատորի ընտրության մրցույթ, որի արդյունքում մարզի բոլոր բնակավայրերը կունենան տրանսպորտային սպասարկում:

Արագածոտնի մարզի միասնական երթուղային ցանցը սպասարկող օպերատորի ընտրության մրցույթը կայացել է 2024 թվակականի հոկտեմբերի 4-ին, որի արդյունքում հաղթող է ճանաչվել «Մուլտի Տրանսպորտ» ՍՊ ընկերությունը:

---

[421] Հասանելի է հետևյալ հղումով՝ https://ombuds.am/am/site/ViewNews/3634 հղումով, (20/03/2026թ.-ի դրությամբ):

Ըստ նախարարության տրամադրած տեղեկատվության՝ 2025 թվականի նոյեմբերի 24-ին կայացել է Գեղարքունիքի մարզի Գավառի, Սևանի և Ճամբարակի, Մարտունի և Վարդենիսի տարածաշրջանների միասնական երթուղային ցանցը սպասարկող օպերատորի ընտրության մրցույթը: Գեղարքունիքի մարզի Սևանի և Ճամբարակի տարածաշրջանների միասնական երթուղային ցանցը սպասարկելու համար հաղթող է ճանաչվել «Ավտոփայլ» ՍՊ ընկերությունը, իսկ Գեղարքունիքի մարզի Գավառի տարածաշրջանի միասնական երթուղային ցանցը սպասարկելու համար՝ «Գավառտրանս» ՍՊ ընկերությունը: Միաժամանակ, տեղեկացվել է, որ 2025 թվականի դեկտեմբերի 10-ին ՀՀ ՏԿԵՆ և վերոնշյալ ընկերությունների միջև կնքվել է հայտ-պարտավորությամբ սահմանված ավտոբուսները ներկայացնելու ժամանակացույցի մասին պայմանագիր, որի պահանջներին համապատասխան՝ մինչև 2026 թվականի հունիսի 10-ը ընկերությունը տրանսպորտային միջոցները պետք է ներկայացնի մրցութային հանձնաժողովի գնահատմանը:

Միաժամանակ, ըստ նախարարությունից ստացված տեղեկատվության՝ Գեղարքունիքի մարզի Մարտունի և Վարդենիսի տարածաշրջանների միասնական երթուղիների սպասարկման համար հայտարարված մրցույթին որևէ հայտ չի ներկայացվել և մրցույթը չի կայացել: Նախարարությունը հայտարարել է Գեղարքունիքի մարզի Մարտունի և Վարդենիսի տարածաշրջանների միասնական երթուղիների սպասարկման համար կրկնակի մրցույթ, որը կկայանա 2026 թվականի հունվարի 27-ին:

Ըստ նախարարության տեղեկացման՝ ՏԿԵՆ-ի կողմից 2025 թվականի ընթացքում հայտարարվել է Շիրակի, Տավուշի և Լոռու մարզերի միասնական երթուղային ցանցի օպերատորի ընտրության մրցույթներ, սակայն չեն կայացել հայտերի բացակայության պատճառով:

Նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2025 թվականի ընթացքում Արագածոտնի մարզում ներդրվել է միասնական երթուղային ցանց: Ինչպես նաև միջհամայնքային և միջմարզային ուղևորափոխադրումները պատշաճ կերպով կազմակերպելու նպատակով նախարարության կողմից հայտարարվել են միասնական երթուղային ցանցի ձևավորման մրցույթներ, որոնց արդյունքում Գավառի, Սևանի և Ճամբարակի տարածաշրջանների միասնական երթուղային ցանցերի սպասարկման նպատակով հաղթող կազմակերպությունների հետ կնքվել են պայմանագրեր: Գեղարքունիքի մարզի Սևանի և Ճամբարակի տարածաշրջանների միասնական երթուղային ցանցը սպասարկելու համար հաղթող է ճանաչվել «Ավտոփայլ» ՍՊ ընկերությունը, իսկ Գեղարքունիքի մարզի Գավառի տարածաշրջանի միասնական երթուղային ցանցը սպասարկելու համար՝ «Գավառտրանս» ՍՊ ընկերությունը:

Ըստ նախարարության՝ Սյունիքի մարզում ընդհանուր օգտագործման տրանսպորտով միասնական երթուղային ցանցի ձևավորումը դեռևս ընթացքի մեջ է:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պաշտպանը վերահաստատում է, որ անհրաժեշտ է՝

- ***ապահովել հասարակական տրանսպորտի սպասարկման որակի շարունակական զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացումը՝ ներդնելով արդյունավետ վերահսկողական մեխանիզմներ այն***

կազմակերպությունների գործունեության նկատմամբ, որոնք իրականացնում են հանրային ուղևորափոխադրումներ.

✓ ձեռնարկել համապատասխան միջոցներ հանրապետության բոլոր մարզերում հասարակական տրանսպորտի որակի բարելավումն ապահովելու և պատշաճ ու անվտանգ երթևեկությունը երաշխավորելու ուղղությամբ.

✓ քննարկման առարկա դարձնել ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթների գործընթացի մեթոդաբանության վերանայման հարցը, մասնավորապես, գործընթացի ռիսկերը պատշաճ գնահատելու կառուցակարգեր մշակելու և իրացնելու տեսանկյունից:

2. Երևան քաղաքի հանրային ուղևորատար տրանսպորտի գերծանրաբեռնվածության, սպասարկման որակի, ուղեվարձի թանկացման և այլ խնդիրներ

Հաշվետու տարում շարունակել են արդիական մնալ Երևան քաղաքում հանրային ուղևորատար տրանսպորտի գերծանրաբեռնվածության, տրանսպորտի սպասարկման որակի, ուղեվարձի թանկացման և այլ խնդիրները: Հատկանշական է, որ դրանց շարունակականության մասին են վկայում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ տարբեր տարիների գործունեության տարեկան հաղորդումներում անդրադարձերը[422]:

Հանրային ուղևորատար տրանսպորտն այն ոլորտն է, որի հետ առնչվում է գրեթե յուրաքանչյուր մարդ: Տարիներ շարունակ Երևան քաղաքն ունեցել է տրանսպորտային համակարգի հիմնախնդիրներ, որոնց բարելավումը և վերահսկումն օրվա հրամայական է: Ցանկացած համայնքի կանոնավոր զարգացման և բարեկեցության ապահովման գործում մեծ դեր ունի տրանսպորտի արդյունավետ աշխատանքը, իսկ արդյունավետությունն այս համատեքստում նշանակում է տրանսպորտի աշխատանքի համապատասխանությունը համայնքի բնակիչների կարիքներին: Հանրային ուղևորատար տրանսպորտն ապահովում է բնակչության հիմնական մասի տրանսպորտային շարժունակությունը: Հետևաբար, ուղևորատար տրանսպորտի թերզարգացվածությունը մարդկանց համար առաջացնում է մի շարք սոցիալական և այլ տեսակի խնդիրներ և անհարմարություններ, այդ թվում՝ ազատ տեղաշարժի անխոչընդոտ իրականացման տեսանկյունից:

Հաշվետու տարվա ընթացքում, քաղաքացիները ՄԻՊ-ին ներկայացված գրավոր և բանավոր դիմում-բողոքներով բազմիցս արտահայտել են դժգոհություններ Երևան քաղաքի հանրային ուղևորատար տրանսպորտի ուղեվարձի թանկացման վերաբերյալ: Այսպես, 2025 թվականին ՄԻՊ թեժ գծին ստացվել են մի շարք բողոքներ կենսաթոշակառուների կողմից այն մասին, որ իրենց համար թեև սահմանվել է զեղչով տոմսային փաթեթներ ձեռք բերելու հնարավորություն[423], սակայն մեկանգամյա ուղետոմսի արժեքի մասով որևէ տեսակի արտոնություն չի նախատեսվել: Այս բողոքներով

---

[422] Առավել մանրամասն տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի վերաբերյալ 2020 և 2021 թվականների տարեկան հաղորդումները (համապատասխանաբար՝ էջեր 848-851, 797-799):

[423] Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի սեպտեմբերի 9-ի թիվ 413-Ն որոշման համաձայն՝ կենսաթոշակառուների համար 30 տոկոսի չափով վճարի արտոնություն գործում է միայն «30 օր», «90 օր», «365 օր» էլեկտրոնային տոմս կամ ֆիզիկական քարտ տոմս ձեռք բերելու դեպքում: Ներկայում «մեկ ուղևորություն» ֆիզիկական կամ էլեկտրոնային տոմս ձեռք բերելու դեպքում ուղեվարձը կազմում է 150 դրամ՝ առանց դրա նկատմամբ որևէ արտոնության կիրառման:

քաղաքացիները հիմնականում հայտնել են, որ տրանսպորտից օգտվելու կարիք են ունենում ամսվա ընթացքում ընդամենը մի քանի անգամ, ուստի իրենց համար նպատակահարմար չէ հանրային տրանսպորտից օգտվելու ամսական կամ տարեկան փաթեթներ ձեռք բերել: Հավելել են, որ նույնիսկ այդ դեպքում՝ ուղեվարձի արժեքը շատ ավելի բարձր է լինում, քան նախկինում:

Նշված խնդիրը ՄԻՊ-ը հասցեավորել է Երևանի քաղաքապետարան: Ի պատասխան՝ ստացվել է տեղեկատվություն առ այն, որ Երևան քաղաքի ավագանու կողմից ընդունված 2024 թվականի նոյեմբերի 19-ի թիվ 243-Ն և 244-Ն, ինչպես նաև 2025 թվականի փետրվարի 11-ի թիվ 295-Ն որոշումներով, ի թիվս այլ սոցիալական խմբերի, հատուկ ուշադրություն դարձնելով կենսաթոշակառուների կարիքներին՝ նրանց տրվել է առավելագույն զեղչով տոմսային փաթեթներ ձեռք բերելու հնարավորություն (կազմում է 30%): *Միաժամանակ, տրամադրվել է տեղեկատվություն առ այն, որ ՀՀ կառավարության կողմից առաջիկայում նախատեսվում է ներդնել կենսաթոշակային քարտով անկանխիկ եղանակով ձեռք բերվող ծառայությունների և ապրանքի արժեքից 10% ետվճար ստանալու հնարավորություն: Սա նշանակում է, որ շուտով կենսաթոշակառուների համար իրենց կենսաթոշակային բանկային քարտով ձեռք բերվող արտոնյալ փաթեթների զեղչը կկազմի 40%, իսկ մեկանգամյա երթերի պարագայում՝ 10%, ինչը համարժեք է 135 դրամին:*

Կարևորելով այդպիսի հնարավորության նախատեսումը *(կամ այլ կերպ՝ վերաբերելի իրավական ակտերում փոփոխություններ կատարելու ուղղությամբ ձեռնարկվող քայլերը)*՝ Պաշտպանն արձանագրում է, որ 2025 թվականի դրությամբ այդպիսի կառուցակարգ դեռևս չի գործարկվել, ուստի տրանսպորտի ուղեվարձի համար հետվճար ներկայում չի հաշվարկվում:

Մեկ այլ դեպքում, Պաշտպանին դիմած անձը հայտնել է, որ կենսաթոշակառու է, ունի ***հաշմանդամության երրորդ խումբ*** և առողջական խնդիրներով պայմանավորված՝ մեծ ծախսեր է հատկացնում բուժմանը, հետևաբար հանրային ուղևորատար տրանսպորտի մեկանգամյա ուղետոմսի թանկացումը բացասաբար է ազդում իր ֆինանսական վիճակի վրա:

Նշված խնդրի կապակցությամբ Պաշտպանի հարցմանն ի պատասխան՝ Երևանի քաղաքապետարանը, ի թիվս այլնի, տեղեկացրել է, որ Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի մարտի 25-ի թիվ 318-Ն որոշմամբ սահմանվել է, որ ***արտոնություն տրամադրվում է ֆունկցիոնալության խորը և ծանր աստիճանի սահմանափակում ունեցող անձանց (1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձանց) կամ ֆունկցիոնալության միջին աստիճանի սահմանափակում ունեցող անձանց (3-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձանց՝ <u>զինվորական ծառայության հետ պատճառական կապով</u>):***

Այսինքն, ստացված պարզաբանումից հասկանալի է դառնում, որ ֆունկցիոնալության միջին աստիճանի սահմանափակում (երրորդ խմբի հաշմանդամություն) ունեցող անձանց համար արտոնություն նախատեսված չէ: Կարծում ենք, որ այսպիսի մոտեցումը կարող է բացասաբար ազդել նշված անձանց իրավունքների, այդ թվում՝ ազատ տեղաշարժվելու իրավունքի պատշաճ իրացման վրա:

2025 թվականին Պաշտպանի աշխատակազմ դիմումներ են ստացվել նաև հանրային ուղևորատար տրանսպորտի սպասարկման որակի վերաբերյալ: Մասնավորապես՝ ՄԻՊ-ին հասցեագրված բողոքներից մեկով անձը հայտնել է, որ ապրում է Մասիս համայնքի Նոր Խարբերդ բնակավայրում: Նշել է, որ տեղի բնակիչները տևական ժամանակ է բախվում են հանրային ուղևորատար տրանսպորտից օգտվելու հետ կապված մի շարք խնդիրների (տրանսպորտի աշխատանքի անկանոն գրաֆիկի, տեխնիկական վիճակի,

սահմանափակ քանակի շարժակազմի և այլն): Հայտնել է նաև, որ Երևան քաղաքի Դավթաշենի 4-րդ թաղամասից մինչև Նոր Խարբերդ բնակավայր երթուղին սպասարկում է 33 համարի ավտոբուսը, որը մինչև 2020 թվականն աշխատել է առավոտյան 07:30-ից մինչև երեկոյան 23:00-ն, սակայն հետագայում, բողոք ներկայացրած անձի պնդմամբ, ժամային գրաֆիկը փոխվել է, ինչի հետևանքով շատ բնակիչներ, ովքեր աշխատում են Երևան քաղաքում, ստիպված են լինում օգտվել տաքսի ծառայությունից, որն էլ հավելյալ ֆինանսական բեռ է առաջացնում իրենց համար:

Բարձրացված հարցի կապակցությամբ Պաշտպանի հարցմանն ի պատասխան՝ Երևանի քաղաքապետարանը հայտնել է, որ նշված խնդիրները քննարկվել են երթուղին սպասարկող «Երևանի ավտոբուս» ՓԲ ընկերության հետ և ըստ ներկայացված տեղեկատվության՝ ձեռնարկված միջոցառումների արդյունքում վերջին ժամանակաշրջանում ավելացվել է շարժակազմի քանակը և ապահովվում է երթուղու սպասարկման համար անհրաժեշտ թվաքանակը (14 միավոր), ինչի հետևանքով որոշակիորեն բարելավվել է երթուղու սպասարկման վիճակը: Նշվել է նաև, որ ներկայում 3-4 «Ժոնգ Թոնգ» մակնիշի պահուստային ավտոբուս փոխարինում են «Հիգեր» մակնիշի ավտոբուսներին, որոնք աշխատում են մինչև ժամը 23:00-ն: Այնուամենայնիվ, ընկերության տնօրինությանը հանձնարարվել է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել երթուղու աշխատանքը կանոնավորելու, սպասարկման վիճակը բարելավելու (մասնավորապես, երեկոյան ժամերին) ուղղությամբ: Միաժամանակ, հայտնել են, որ երթուղու շարժակազմի փոփոխության (քանակի ավելացման) հնարավորության և սպասարկման որակի բարձրացման հարցը լրացուցիչ կդիտարկվի մայրաքաղաք նոր ավտոբուսների ներկրման պարագայում:

2025 թվականի ընթացքում ՄԻՊ-ին ներկայացվել են հասարակական տրանսպորտի որակի և հասանելիության հետ անքակտելիորեն կապված նաև այլ բողոքներ: Այսպես, Պաշտպանին ներկայացված խմբային բողոքներից մեկով Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Նորաշեն թաղամասի մի խումբ բնակիչներ բարձրացրել են 34 համարի ավտոբուսի երթուղում կանգառների բացակայության խնդիր: Ըստ բողոք ներկայացրած անձանց՝ Դավթաշեն վարչական շրջանից դեպի Նորաշեն ընկած հատվածում կանգառ առկա չէ, ինչն անհարմարություններ է առաջացնում երթուղուց օգտվող ուղևորների համար: Դրանից բացի, բողոք ներկայացրած անձինք բարձրացրել են նաև 10Ա համարի տրոլեյբուսային երթուղում կանգառների բացակայության հարցը՝ նշելով, որ Եղվարդի խճուղում մինչև «Նոր զովք» սուպերմարկետ (4-րդ թաղամաս) ընկած տարածքում կանգառ առկա չէ: Բողոք ներկայացրած անձիք խնդրել են նշված հանգամանքները դարձնել քննարկման առարկա և Պաշտպանի իրավասության շրջանակում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ:

Նշված խնդիրները ՄԻՊ-ը հասցեագրել է Երևանի քաղաքապետարան՝ արդյունքում դրանք ստացել են մասնակի լուծում: Այսպես, Երևանի քաղաքապետարանից ստացվել են պարզաբանումներ առ այն, որ Աշտարակի խճուղում 34 համարի ավտոբուսային երթուղու համար նախատեսված կանգառում տեղադրվել է կանգառանշան, իսկ 10Ա համարի տրոլեյբուսային երթուղու համար նախատեսված հասարակական տրանսպորտի կանգառում կանգառանշան և կանգառասրահ կարող է տեղադրվել միայն կանգառահարթակի կառուցումից հետո, որի նպատակով կատարվել է տեղանքի լրացուցիչ ուսումնասիրություն, որի արդյունքներով հանձնարարվել է համապատասխան կազմակերպությանը Ա. Միկոյան 27 հասցեին հարակից և հանդիպակաց ճանապարհահատվածներում տեղադրելու 5.16.՝ «Ավտոբուսի և (կամ) տրոլեյբուսի կանգառի տեղ» ճանապարհային նշանները:

Պաշտպանի աշխատակազմ ստացված մեկ այլ բողոքով քաղաքացին հայտնել է, որ Երևան քաղաքի, Մոնթե Մելքոնյան փողոցի շենքերից մեկի բնակիչ է: Նշել է նաև, որ այդ հասցեում է գտնվում շուրջ 4000 բնակչություն ունցեցող «Վերածնունդ» թաղամասը: Բողոք ներկայացրած անձը բարձրացնելով Ծիծեռնակաբերդի խճուղում գծանշված հետիոտնային անցումների և կանգառների նախատեսման, հանրային տրանսպորտի հասանելիության ապահովման հարցեր՝ խնդրել է ՄԻՊ աջակցությունը թաղամասի ենթակառուցվածքային զարգացման հարցում:

Բողոքի քննարկման շրջանակում Պաշտպանի կողմից Երևանի քաղաքապետարան հասցեագրված գրությանն ի պատասխան՝ տեղեկացվել է, որ Ծիծեռնակաբերդի խճուղում հետիոտնային անցում կազմակերպելը, հետիոտների անվտանգության նկատառումներից ելնելով, գտնվել է ոչ նպատակահարմար, քանի որ տեսանելիությունը բավարար չէ և ճանապարհահատվածը կահավորված չէ մայթերով, որն էլ առաջ կբերի տարաբնույթ վթարների, իսկ Ծիծեռնակաբերդի խճուղում կանգառի տեղ սահմանելը հնարավոր կլինի միայն թաղամասի շինարարական աշխատանքների ավարտից հետո:

Միաժամանակ, հայտնել են, որ թաղամասի բնակիչների խնդրանքով՝ Մ. Մելքոնյան փողոցում կազմակերպվել է հետիոտնային անցում, իսկ ինչ վերաբերում է նշված փողոցի «Վերածնունդ» թաղամասի տրանսպորտային սպասարկման ապահովմանը, ապա ներկա պահին այն հնարավոր չէ կազմակերպել անհրաժեշտ քանակի շարժակազմի բացակայության պատճառով և թաղամասի լիարժեք սպասարկման հնարավորությունը կդիտարկվի ավտոբուսների նոր խմբաքանակի ներկրման պարագայում՝ Երևան քաղաքի հանրային տրանսպորտի նոր երթուղային ցանցի ներդրման գործընթացի շրջանակներում իրականացվելիք աշխատանքների ընդհանուր համատեքստում:

Հարկ է նշել, որ այս դիմում-բողոքները Պաշտպանի աշխատակազմում գտնվում են քննարկման փուլում և պահանջում են հետագա լրացուցիչ ուսումնասիրություններ:

Նկատի ունենալով քննարկվող խնդիրների զանգվածային և շարունակական բնույթը՝ ՄԻՊ-ը 2025 թվականի տարեկան հաղորդման կազմման աշխատանքների շրջանակում համապատասխան հարցադրումներ է հասցեագրել Երևանի քաղաքապետարան:

Ի պատասխան՝ ստացվել են պարզաբանումներ առ այն, որ Երևան քաղաքում հասարակական տրանսպորտի գերծանրաբեռնվածության խնդրի կարգավորման նպատակով 2025 թվականի հունվարի 1-ից կազմակերպվել է 2024 թվականի վերջին ձեռք բերված 171 հատ նոր, 8.6 մետր երկարությամբ, միջին դասի «ԺՈՆԳ-ԹՈՆԳ» մակնիշի ավտոբուսների շահագործումը Երևանի ներհամայնքային կանոնավոր ուղևորափոխադրումների երթուղիներում: Բացի այդ, ըստ Երևանի քաղաքապետարանի, դրանցով փոխարինվել են մասնավոր կազմակերպությունների կողմից սպասարկվող թվով 8 երթուղիների հին շարժակազմերը («Հունդաի» մակնիշի), «Երևանի ավտոբուս» ՓԲ ընկերության կողմից սպասարկվող թվով 6 երթուղիների հին շարժակազմերը («Հիգեր» մակնիշի), ինչպես նաև համալրվել է առանձին երթուղիների (9 հատ) շարժակազմերը:

Հայտնել են նաև, որ Գայի, Մաշտոցի պողոտաներում, Խորենացու, Աբովյան, Իսահակյան և Մոսկովյան փողոցներում առաջին երթևեկելի գոտին առանձնացվել է հանրային տրանսպորտի երթևեկության համար, որի արդյունքում՝ զգալիորեն բարելավվել է երթուղիների շահագործման արդյունավետությունը, բարձրացել է սպասարկման որակը և ապահովվել է ուղևորների անվտանգ ու հարմարավետ սպասարկումը:

Երևանի քաղաքապետարանի տեղեկացմամբ՝ հասարակական ուղևորատար տրանսպորտի սպասարկման որակի բարձրացման նպատակով 2026 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում նախատեսվում է ներկրել թվով 45 նոր տրոլեյբուս (շարժման

ընթացքում լիցքավորվող), ինչպես նաև ձեռք բերել թվով 250 հատուկ մեծ դասի համակցված նոր էլեկտրաավտոբուս:

Պաշտպանը կարևորում է Երևանի քաղաքապետարանի իրականացրած աշխատանքները, այնուհանդերձ հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում է քննարկման առարկա դարձնել՝

✓ կենսաթոշակառուների համար ուղեփոմսի (այդ թվում՝ մեկանգամյա ուղեփոմսի) առավել մատչելի սակագներ (հավելյալ զեղչեր) սահմանելու հարցը: Դրա հետ մեկտեղ, անհրաժեշտ է արագացնել տրանսպորտի ուղեվարձը կենսաթոշակային քարտով ձեռք բերելու դեպքում կենսաթոշակառուներին հետվճար տրամադրելու կառուցակարգերի մշակումը և գործարկումը.

✓ ֆունկցիոնալության միջին աստիճանի սահմանափակումով հաշմանդամություն ունեցող անձանց համար հանրային տրանսպորտից անվճար կամ արտոնությամբ օգտվելու հարցը.

✓ երթուղիների շարժակազմի քանակի ավելացման և հանրային տրանսպորտի սպասարկման որակի բարձրացման հարցերը՝ սահմանելով խիստ վերահսկողության մեխանիզմներ մատուցվող ծառայությունների նկատմամբ.

✓ հանրային տրանսպորտի կանգառների արդյունավետ տեղաբաշխման (կանոնակարգման), բարեկարգման և կահավորման հարցերը՝ դրանց արդյունավետ լուծման ուղղությունները նախանշելու նպատակով:

ԲԱԺԻՆ 15. ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐ

Բռնի տեղահանված անձանց իրավունքների իրացմանն ու պաշտպանությանն առնչվող խնդիրներն ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2025 թվականին գտնվել են ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հատուկ ուշադրության ներքո: Այդ ուղղություններով տարվող աշխատանքները կրում են շարունակական բնույթ և բարձրացված հարցերի նկատմամբ իրականացվում է հետևողական աշխատանք:

Հարկ է նշել, որ 2025 թվականին Պաշտպանի միջամտությամբ, ինչպես նաև իրավասու մարմինների հետ արդյունավետ համագործակցության արդյունքում հնարավոր է եղել բռնի տեղահանված անձանց տրամադրվող սոցիալական աջակցության ծրագրերին առնչվող մի շարք խնդիրների տալ լուծում:

Այսպես, օրինակ՝ Պաշտպանին ներկայացված բողոքներից մեկով անձը հայտնել է, որ 2023 թվականի սեպտեմբերին ռազմական գործողությունների հետևանքով Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվել է Հայաստան և վարձակալական հիմունքներով բնակվում է Երևան քաղաքում: Հավելել է, որ 2014 թվականին ամուսնալուծվել է և իր խնամքին ունի մեկ անչափահաս երեխա: Ըստ բողոք ներկայացրած անձի՝ ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 1763-Լ որոշմամբ հաստատված միջոցառման շրջանակում տրամադրվող ամսական սոցիալական աջակցությունը ստանալու նպատակով դիմել է Միասնական սոցիալական ծառայություն, սակայն ամսական սոցիալական աջակցությունը 2023 թվականի նոյեմբերից մինչև 2024 թվականի հունիս ամիսը 50 000 ՀՀ դրամի փոխարեն վճարվել է 10 000 ՀՀ դրամի չափով՝ նախկին ամուսնու անվամբ ՀՀ-ում սեփականության իրավունքով բնակվելու համար նախատեսված անշարժ գույք ունենալու հիմքով:

Հավելել է, որ հիշյալով պայմանավորված դիմել է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, որտեղից պարզաբանել են, որ անհրաժեշտ է ԼՂ ՔԿԱԳ մարմնի կողմից 2014 թվականին կատարված ամուսնալուծության ակտային գրանցումը վերականգնել ՀՀ ԱՆ ՔԿԱԳ գործակալությունում:

Ըստ պնդման՝ ՀՀ ԱՆ ՔԿԱԳ գործակալության կողմից 2024 թվականի հուլիսի 26-ին ամուսնալուծության ակտային գրանցումը վերականգնելուց հետո՝ 2024 թվականի հուլիս ամսից, աջակցության գումարը վճարվել է 50 000 ՀՀ դրամի չափով:

Բողոք ներկայացրած անձի տեղեկացմամբ՝ իր և նախկին ամուսնու ամուսնությունը դադարել է դեռևս 2014 թվականին, հետևաբար պնդել է, որ նախկին ամուսնու անվամբ ՀՀ-ում սեփականության իրավունքով բնակվելու համար նախատեսված անշարժ գույք ունենալու հիմքով իրեն և իր անչափահաս երեխային վերը նշված որոշմամբ հաստատված սոցիալական աջակցության գումարը 2023 թվականի նոյեմբերից մինչև 2024 թվականի հունիս ամիսը մասնակի՝ 10 000 ՀՀ դրամի չափով վճարելն իրավաչափ չէ:

Բարձրացված հարցի կապակցությամբ պարզաբանումներ ստանալու նպատակով Պաշտպանը գրություն է հասցեագրել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն: Ի պատասխան՝ տեղեկացրել են, որ 2023 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 1763-Լ որոշման շրջանակներում բողոք ներկայացրած անձի և վերջինիս անչափահաս երեխայի՝ 2023 թվականի նոյեմբերից մինչև 2024 թվականի հունիս ամիսների համար չվճարված 40 000 ՀՀ դրամ աջակցության գումարները տրամադրվել են վճարման «ԱՐՑԱԽԲԱՆԿ» ՓԲ ընկերությանը:

Վերոգրյալի համատեքստում անհրաժեշտ է արձանագրել, որ բոլոր նմանատիպ դեպքերում նախարարությունը պետք է հաշվի առնի քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող համապատասխան մարմնի կողմից ամուսնալուծության պետական գրանցման պահը:

Մեկ այլ բողոքով, անձը տեղեկացրել է, որ հանդիսանում է ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 1763-Լ որոշմամբ հաստատված միջոցառման շրջանակում տրամադրվող 50 000 ՀՀ դրամ սոցիալական աջակցության շահառու: Ըստ բողոք ներկայացրած անձի՝ իրեն չեն վճարվել հիշյալ որոշմամբ հաստատված միջոցառման շրջանակում 2024 թվականի ապրիլ և մայիս ամիսների դրամական աջակցության գումարները:

Հավելել է, որ նշվածով պայմանավորված՝ դիմում է հասցեագրել Միասնական սոցիալական ծառայություն, որտեղից ստացել է պարզաբանում այն մասին, որ որոշմամբ հաստատված միջոցառման շրջանակում իր՝ 2024 թվականի ապրիլ և մայիս ամիսների դրամական աջակցության գումարները վերադարձվել են ՀՀ պետական բյուջե՝ փոխանցելու ամսվան հաջորդող երեք ամսվա ընթացքում բանկին գումարը ստանալու պահանջ չներկայացվելու պատճառով:

Բարձրացված հարցը Պաշտպանը հասցեավորել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն: Ի պատասխան՝ տեղեկացրել են, որ ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 1763-Լ որոշման շրջանակում բողոք ներկայացրած անձի՝ 2024 թվականի ապրիլ և մայիս ամիսների դրամական աջակցության գումարները՝ համապատասխանաբար 2024 թվականի մայիսի 13-ին և 2024 թվականի հունիսի 14-ին ներկայացվել են վճարման «Ամերիաբանկ» ՓԲԸ:

Տեղեկացրել են նաև, որ դրամական աջակցության գումարները բանկի կողմից վերադարձվել են ՀՀ պետական բյուջե՝ գումարները բանկին փոխանցելու ամսվան հաջորդող երեք ամսվա ընթացքում քաղաքացու կողմից գումարը ստանալու պահանջ չներկայացնելու հիմնավորմամբ:

Համաձայն ստացված տեղեկատվության՝ բողոք ներկայացրած անձի՝ ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 1763-Լ որոշման շրջանակում տրամադրվող 2024 թվականի ապրիլ և մայիս ամիսների դրամական աջակցության գումարները վճարելու նպատակով՝ նախարարությունը վերջինիս տվյալները տրամադրել է ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամին՝ որոշմամբ սահմանված տեղեկատվական շտեմարանների տվյալների հետ համապատասխան համադրումներն իրականացնելու և մերժման հիմք հանդիսացող պայմանների բացակայության պարագայում առաջիկա վճարման ցուցակ ներառելու նպատակով:

Վերոգրյալ տեղեկությունը փոխանցվել է բողոք ներկայացրած անձին: Վերջինս նշել է, որ ստացել է իրեն հասանելիք դրամական աջակցության գումարները:

Նշվածի համատեքստում հարկ է նկատել, որ 2023 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 1763-Լ որոշման մեջ նախատեսված չէ որևէ իրավակարգավորում, որը ժամկետային առումով սահմանափակում է շահառուի՝ բանկից իրեն հասանելիք դրամական աջակցության գումարը ստանալու հնարավորությունը: Ուստի, իրավասու մարմինները պետք է համապատասխան միջոցներ ձեռնարկեն գործնականում նման իրավիճակներ թույլ չտալու համար:

Պաշտպանին հասցեագրած մեկ այլ բողոքով էլ անձը տեղեկացրել է, որ 2023 թվականի սեպտեմբերի 27-ին ընտանիքով ԼՂ-ից տեղահանվել և բնակություն են հաստատել ՀՀ-ում: Հավելել է, որ որդին ծնվել է 2023 թվականի սեպտեմբերի 22-ին՝

Ստեփանակերտում, սակայն երեխայի ծննդյան պետական գրանցումը կատարվել է 2023 թվականի հոկտեմբերի 5-ին:

Ըստ պնդման՝ երեխայի ծննդյան պետական գրանցումն ավելի վաղ հնարավոր չէր կատարել, քանի որ ռազմական գործողությունների հետևանքով ԼՂ պետական մարմինները չէին աշխատում:

Բողոք ներկայացրած անձի տեղեկացմամբ՝ 2023 թվականի սեպտեմբերի 29-ին ընտանիքը հաշվառվել է Վայքի հումանիտար կենտրոնում: Նկատի ունենալով, որ վերը նշված հանգամանքներով պայմանավորված՝ որդու ծննդյան վերաբերյալ պետական գրանցման վկայական տվյալ պահին առկա չի եղել՝ երեխային հաշվառելու նպատակով վերջինիս տվյալները բանավոր կերպով փոխանցվել են հումանիտար կենտրոն: Նշել է նաև, որ երեխան օգտվում է բռնի տեղահանված ընտանիքներին տրամադրվող բոլոր սոցիալական աջակցության ծրագրերից:

Ըստ բողոք ներկայացրած անձի՝ ՀՀ կառավարության 2024 թվականի հունիսի 14-ի թիվ 898-Լ որոշմամբ հաստատված՝ բռնի տեղահանված ընտանիքների բնակարանային ապահովման պետական աջակցության ծրագրից օգտվելու նպատակով դիմել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, սակայն դիմումը մերժվել է:

Բարձրացված հարցի կապակցությամբ Պաշտպանը գրություն է հասցեագրել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն: Ի պատասխան՝ տեղեկացրել են, որ բողոք ներկայացրած անձի ընտանիքին ՀՀ կառավարության 2024 թվականի մայիսի 16-ի թիվ 710-Լ որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակում 2025 թվականի մարտի 29-ին տրամադրվել է հավաստագիր, որում ներառված են եղել վերջինիս ընտանիքի անդամների տվյալները: Ինչ վերաբերում է 2023 թվականի սեպտեմբերի 22-ին ծնված երեխայի՝ հավաստագրում ներառված չլինելու հանգամանքին, պարզաբանել են, որ առկա է տվյալների նույնականացման հետ կապված խնդիր, որը տեխնիկական բնույթ է կրում և գտնվում է կարգավորման փուլում:

Ստացված տեղեկատվությունը փոխանցվել է բողոք ներկայացրած անձին: Վերջինս նշել է, որ իր ընտանիքին տրամադրվել է բռնի տեղահանված ընտանիքների բնակարանային ապահովման պետական աջակցության ծրագրի շահառու հանդիսանալու մասին փաստը հավաստող փաստաթուղթ՝ հավաստագիր, որում ներառված են նաև 2023 թվականի սեպտեմբերի 22-ին ծնված որդու տվյալները:

Պաշտպանին հասցեագրված մեկ այլ բողոքով անձը հայտնել է, որ իր ընտանիքը հանդիսանում է բռնի տեղահանված ընտանիքների բնակարանային ապահովման պետական աջակցության ծրագրի շահառու, որի շրջանակում Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայության կողմից տրամադրվել է ծրագրի շահառու հանդիսանալու մասին փաստը հավաստող փաստաթուղթ՝ հավաստագիր: Հավելել է, որ տրամադրված հավաստագիրը չի կարողանում օգտագործել, քանի որ բանկի կողմից վարկային հայտը մերժվել է՝ կնոջ՝ վատ վարկային պատմություն ունենալու պատճառով, որն առաջացել է 44-օրյա պատերազմից հետո:

Բողոք ներկայացրած անձի տեղեկացմամբ՝ կնոջ կողմից չկատարված վարկային պարտավորությունների առնչությամբ Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունում հարուցվել է կատարողական վարույթ: Նշել է նաև, որ թեպետ ինքը չի հանդիսանում համավարկառու, այնուհանդերձ արգելանքներ են կիրառվել ինչպես կնոջ, այնպես էլ իր գույքի և եկամուտների վրա:

Հաշվի առնելով, որ բարձրացված հարցը կրում է համակարգային բնույթ և վերաբերում է բռնի տեղահանված բազմաթիվ անձանց՝ Պաշտպանը խնդրի կարգավորման ուղղությամբ ձեռնարկվող քայլերի վերաբերյալ տեղեկատվություն

ստանալու նպատակով գրություն է հասցեագրել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն: Ի պատասխան՝ տեղեկացրել են, որ ՀՀ կառավարության 2024 թվականի մայիսի 16-ի թիվ 710-Լ որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակում շահառու ընտանիքը տրամադրված հավաստագիրը կարող է իրացնել գործող ժամկետանց վարկային պարտավորություններ չունեցող անդամի կողմից պայմանագիրը կնքելու դեպքում:

Տեղեկացրել են նաև, որ անձի՝ վարկային պարտավորություններ ունենալու հանգամանքը 100% սուբսիդավորվող ծրագրերում հաշվի չառնելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ ներկայում Կենտրոնական բանկը ներքին իրավական կարգավորումներում փոփոխություններ է իրականացնում, որից հետո ֆինանսական կազմակերպությունները կկարողանան տրամադրել հիփոթեքային վարկ՝ առանց շահառու ընտանիքի անդամների վարկային պատմությունը հաշվի առնելու:

Բողոքի քննարկման ընթացքում բողոք ներկայացրած անձը ՄԻՊ աշխատակազմ լրացուցիչ տեղեկատվություն է ներկայացրել առ այն, որ խնդիրը լուծվել է և ինքը՝ հավաստագրի հիման վրա Տավուշի մարզի սահմանամերձ բնակավայրերից մեկում ձեռք է բերել բնակելի տուն՝ 32 մլն. ՀՀ դրամով:

Չնայած անհատական մակարդակում արձանագրված դրական առաջընթացին՝ հարկ է նշել, որ 2025 թվականի ընթացքում բռնի տեղահանված անձանց սոցիալական ապահովության իրավունքին, ինչպես նաև սոցիալական աջակցության միջոցառումներին առնչվող հարցերի վերաբերյալ ստացված դիմում-բողոքների քննարկման ընթացքում վեր են հանվել մի շարք գործնական և օրենսդրական խնդիրներ, որոնց լուծման ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու տեսանկյունից Մարդու իրավունքների պաշտպանը կարևորում է շարունակական քննարկումների և գործուն քայլերի իրականացման անհրաժեշտությունը:

Այսպես, 2025 թվականին բռնի տեղահանված անձինք շարունակել են Պաշտպանին հասցեագրել են բողոքներ՝ ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 1763-Լ որոշմամբ սահմանված սոցիալական աջակցություն ստանալու համար Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն դիմելու և Օպերատիվ շտաբի տրամադրած՝ 2023 թվականի սեպտեմբերի 19-ի դրությամբ Հայաստանում գտնվող ԼՂ-ի բնակիչ հանդիսացող անձանց ցուցակներում տվյալների բացակայության հիմքով մերժելու վերաբերյալ:

Օրինակ՝ Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով անձը հայտնել է, որ 2020 թվականի սեպտեմբերին Լեռնային Ղարաբաղից ընտանիքով տեղահանվել և բնակություն են հաստատել ՀՀ-ում: Հավելել է, որ ուսումը շարունակելու նպատակով ինքը վերադարձել է ԼՂ, սակայն ընտանիքը մնացել է ՀՀ-ում: Այնուհետև, 2023 թվականի սեպտեմբերին վերադարձել է ՀՀ: Բողոք ներկայացրած անձի տեղեկացմամբ՝ հանդիսանում է ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 1763-Լ որոշմամբ հաստատված սոցիալական աջակցության ծրագրի շահառու, սակայն մայրը և 1-ին խմբի հաշմանդամություն ունեցող եղբայրը ծրագրի շահառու չեն հանդիսանում: Հավելել է, որ ծրագրից օգտվելու նպատակով մայրը և եղբայրը դիմել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, սակայն դիմումները մերժվել են:

Նշված բողոքի քննարկման շրջանակում պարզաբանումներ ստանալու նպատակով Պաշտպանը գրություն է հասցեագրել Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն: Նախարարությունից տեղեկացրել են, որ ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 1763-Լ որոշմամբ հաստատված միջոցառման շրջանակում համապատասխան հարթակում բողոք ներկայացրած անձի ընտանիքի անդամների տվյալներով ներկայացված առցանց դիմումները մերժվել են, քանի որ

վերջիններիս տվյալներն առկա չեն ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ 1675-Լ որոշմամբ հաստատված միջոցառման շահառուների կամ **Օպերատիվ շտաբի տրամադրած՝ 2023 թվականի սեպտեմբերի 19-ի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում գտնվող Լեռնային Ղարաբաղի բնակիչ հանդիսացող անձանց ցուցակներում՝ համաձայն Որոշման N 2 հավելվածի 8-րդ կետի 3-րդ ենթակետի:**

Նմանատիպ մեկ այլ բողոքով անձը հայտնել է, որ 2020 թվականի սեպտեմբերին ԼՂ-ից տեղահանվել և բնակություն է հաստատել Տավուշի մարզի Տավուշ գյուղում: Հավելել է, որ դիմել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն՝ ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 1763-Լ որոշմամբ հաստատված ծրագրից օգտվելու խնդրով, սակայն դիմումը մերժվել է:

Բացի այդ, բողոք ներկայացրած անձը նշել է, որ ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ 1675-Լ որոշմամբ տրամադրվող 100 000 դրամ միանվագ աջակցությունը փոխանցվել է իր բանկային հաշվին, սակայն հաշմանդամություն ունեցող դստերը հիվանդանոցում խնամելու պատճառով չի կարողացել ստանալ այդ գումարը, որը վերադարձվել է պետական բյուջե:

Նշված բողոքի քննարկման շրջանակում պարզաբանումներ ստանալու նպատակով Պաշտպանը գրություն է հասցեագրել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն: Ի պատասխան՝ տեղեկացրել են, որ ռազմական գործողությունների հետևանքով բռնի տեղահանված քաղաքացիներին 100 000 ՀՀ դրամ միանվագ դրամական աջակցությունը տրամադրվել է ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ 1675-Լ որոշմամբ, որի 1-ին հավելվածով հաստատված միջոցառման 1-ին և 1.1-ին կետերի համաձայն՝ սոցիալական աջակցություն տրամադրվել է 2023 թվականի սեպտեմբերի 19-ից ռազմական գործողությունների հետևանքով բռնի տեղահանված և 2023 թվականի սեպտեմբերի 24-ի՝ ժամը 12:00-ից հետո ՀՀ ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայության կողմից հաշվառված, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հուլիսի 27-ի թիվ 1287-Լ որոշման հավելվածի 7-րդ կետի համաձայն՝ Սյունիքի մարզպետի աշխատակազմի և Երևանի քաղաքապետարանի կողմից հաշվառված հյուրընկալվողին, Լեռնային Ղարաբաղի բժշկական կազմակերպությունների կողմից ուղեգրված և 2022 թվականի դեկտեմբերի 1-ից մինչև 2023 թվականի սեպտեմբերի 19-ն ընկած որևէ ժամանակահատվածում ՀՀ-ում հիվանդանոցային ձևով (պայմաններում) բուժված (ներառյալ հիվանդանոցային ձևով ախտորոշիչ հետազոտությունները և վերականգնողական բուժումը) անձանց, ուսումնամարզական կամ այլ միջոցառումներին մասնակցելու նպատակով Լեռնային Ղարաբաղից ՀՀ տեղափոխված և 2022 թվականի դեկտեմբերի 12-ի դրությամբ ՀՀ-ում գտնվող՝ Լեռնային Ղարաբաղի բարձրագույն, միջին մասնագիտական և հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորող, ինչպես նաև 2022 թվականի դեկտեմբերի 12-ից հետո Լեռնային Ղարաբաղից ՀՀ ուսման նպատակով տեղափոխված անձանց:

Տեղեկացրել են նաև, որ 2023 թվականի հոկտեմբեր ամսին ՀՀ վարչապետի աշխատակազմից Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն է վերահասցեագրվել բողոք ներկայացրած անձի դիմումը՝ որպես բռնի տեղահանված քաղաքացի՝ 100 000 ՀՀ դրամ միանվագ դրամական աջակցության ծրագրում ընդգրկվելու նպատակով:

Համաձայն ստացված տեղեկատվության՝ դիմումում բարձրացված հարցերն ուսումնասիրելուց հետո պարզվել է, որ բողոք ներկայացրած անձը չի հանդիսանում 2023 թվականի սեպտեմբերի ռազմական գործողությունների հետևանքով բռնի տեղահանված

անձ, սակայն ընդգրկված է եղել 100 000 ՀՀ դրամ միանվագ դրամական աջակցության ցուցակներում: Որոշման N 2 հավելվածով հաստատված կարգի 32-րդ կետի համաձայն՝ Միասնական սոցիալական ծառայության կողմից ձեռնարկվել են միջոցներ փոխանցված դրամական աջակցության գումարի հետգանձման համար:

Պարզաբանվել է նաև, որ ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 1763-Լ որոշմամբ հաստատված միջոցառման շրջանակում համապատասխան հարթակում բողոք ներկայացրած անձի տվյալներով ներկայացրած առցանց դիմումները մերժվել են, քանի որ վերջինիս տվյալներն առկա չեն ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ 1675-Լ որոշմամբ հաստատված միջոցառման շահառուների կամ **Օպերատիվ շտաբի տրամադրած՝ 2023 թվականի սեպտեմբերի 19-ի դրությամբ ՀՀ-ում գտնվող Լեռնային Ղարաբաղի բնակիչ հանդիսացող անձանց ցուցակներում՝ համաձայն ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 1763-Լ որոշման N 2 հավելվածի 8-րդ կետի 3-րդ ենթակետի:**

Տեղեկացրել են, որ բողոք ներկայացրած անձը չի հանդիսացել ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 1763-Լ որոշման հաստատված սոցիալական աջակցության միջոցառման շահառու, քանի որ նրա տվյալները չեն բավարարել նույն որոշմամբ սահմանված պահանջներին:

Վերոհիշյալի համատեքստում Պաշտպանը կրկին ընդգծում է, որ 2020 թվականի տեղահանության ժամանակ, ինչպես նաև դրանից հետո Օպերատիվ շտաբ ներկայանալու և Հայաստանում իրենց գտնվելու վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնելու օրենսդրական պահանջ չի եղել և ներկայում էլ առկա չէ, ուստի նման անհրաժեշտության մասին անձինք պատշաճ իրազեկված չեն եղել: Ավելին, շատ դեպքերում անձանց Հայաստանում գտնվելու վերաբերյալ տվյալներն Օպերատիվ շտաբին հասանելի են դարձել միայն, երբ վերջիններս որոշակի փաստաթղթեր ստանալու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ դիմել են շտաբ: Այլ խոսքով՝ դիմելու բուն նպատակը չի եղել Օպերատիվ շտաբին իրենց տվյալները ներկայացնելը:

Բացի այդ, հատկանշական է, որ շատ անձինք 2020 թվականի տեղահանությունից հետո օգտվել են պետության կողմից տրամադրվող սոցիալական աջակցության այլ ծրագրերից, որն ինքնին թույլ է տալիս փաստել տեղահանված լինելու և Հայաստանում գտնվելու հանգամանքները:

Այսպիսով, կարելի է արձանագրել, որ 2020 թվականի սեպտեմբերի 27-ից հետո բռնի տեղահանված և 2023 թվականի սեպտեմբերի 19-ի դրությամբ Հայաստանում գտնվող անձանց շրջանակի որոշման համար բացառապես Օպերատիվ շտաբի կողմից տրամադրված ցուցակները հիմք ընդունելու հանգամանքն օբյեկտիվորեն բավարար չէ:

Բռնի տեղահանված անձինք Պաշտպանին հասցեագրել են նաև բազմաթիվ գրավոր և բանավոր բողոքներ՝ ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 1763-Լ որոշմամբ սահմանված սոցիալական աջակցություն ստանալու համար Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն դիմելու և ՀՀ-ից բացակայելու հիմքով մերժում ստանալու վերաբերյալ:

Օրինակ՝ Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով անձը հայտնել է, որ ինքը և իր չորս երեխաները հանդիսանում են ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 1763-Լ որոշմամբ հաստատված միջոցառման շրջանակում տրամադրվող 50 000 ՀՀ դրամ սոցիալական աջակցության շահառու: Հավելել է, որ իրեն և իր երեխաներին չեն վճարվել որոշմամբ հաստատված միջոցառման շրջանակում 2025 թվականի մարտ ամսվա սոցիալական աջակցության գումարները՝ 10 օրվանից ավել ՀՀ-ից բացակայելու հիմքով:

Բողոք ներկայացրած անձը նշել է, որ հիշյալով պայմանավորված՝ դիմել է Միասնական սոցիալական ծառայություն, որտեղից պարզաբանել են, որ մերժված դիմումներն անձը կարող էր բողոքարկել մինչև 2025 թվականի մարտի 1-ը: Բողոք ներկայացրած անձի տեղեկացմամբ՝ ինքը և իր ավագ դուստրը «Erasmus» կրթական ծրագրի շրջանակում 2025 թվականի մարտի 30-ից մինչև ապրիլի 8-ը բացակայել են Հայաստանից: Հավելել է, որ Միասնական սոցիալական ծառայության կողմից ներկայացված՝ մինչև 2025 թվականի մարտի 1-ը մերժված դիմումները բողոքարկելու պահանջն իրավաչափ չէ, քանի որ դիմումի մերժման մասին տեղեկացել է 2025 թվականի ապրիլ ամսին, հետևաբար մերժված դիմումը մինչև 2025 թվականի մարտի 1-ը չէր կարող բողոքարկել:

Նմանատիպ մեկ այլ բողոքով անձինք հայտնել են, որ իրենք և իրենց անչափահաս երեխաները հանդիսանում են ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 1763-Լ որոշմամբ հաստատված միջոցառման շրջանակում տրամադրվող 50 000 ՀՀ դրամ սոցիալական աջակցության շահառուներ:

Բողոք ներկայացրած անձանց տեղեկացմամբ՝ մահամերձ ազգականին տեսակցելու նպատակով 2025 թվականի մարտի 5-ին մեկնել են Ռուսաստանի Դաշնություն: Հավելել են, որ ազգականը մարտի 7-ին մահացել է, իսկ իրենք մարտի 13-ին վերադարձել են Հայաստան՝ պահպանելով որոշմամբ հաստատված միջոցառման շրջանակում տրամադրվող դրամական աջակցության վճարման համար անհրաժեշտ՝ ՀՀ-ից 10 օրվանից ավել չբացակայելու պահանջը:

Բողոք ներկայացրած անձանց պնդմամբ՝ ՌԴ-ից վերադառնալուց հետո տեղեկացել են, որ իրենց և երեխաներին չեն վճարվել որոշմամբ հաստատված միջոցառման շրջանակում 2025 թվականի փետրվար և մարտ ամիսների հասանելիք սոցիալական աջակցության գումարները:

Հավելել են, որ նշվածով պայմանավորված՝ նույն թվականի մարտի 14-ին այցելել են Միասնական սոցիալական ծառայություն, որտեղից բանավոր հայտնել են, որ նոր դիմում ներկայացնելու անհրաժեշտություն չկա, խնդիրը կրում է տեխնիկական բնույթ և անհրաժեշտ է սպասել մինչև ապրիլի 1-ը:

Բողոք ներկայացրած անձանց տեղեկացմամբ՝ նկատի ունենալով, որ մինչև ապրիլի 1-ը խնդիրը չի կարգավորվել՝ ապրիլի 5-ին գրավոր դիմում են հասցեագրել Միասնական սոցիալական ծառայություն, որտեղից գրավոր պարզաբանվել է, որ իրենց դիմումները մերժվել են, քանի որ ՀՀ ազգային անվտանգության ծառայությունից ստացված տեղեկատվության համաձայն՝ բացակայել են ՀՀ-ից: Հավելել են, որ ծառայությունից պարզաբանվել է նաև, որ մերժված դիմումները կարող էին բողոքարկել մինչև 2025 թվականի մարտի 1-ը:

Ըստ բողոք ներկայացրած անձանց՝ ՀՀ վերադառնալու օրը՝ 2025 թվականի մարտի 13-ին են տեղեկացել, որ մարտի 5-ից 8 օրով Հայաստանից բացակայելու հիմքով իրենց և երեխաների սոցիալական աջակցության գումարները չեն ներկայացվել վճարման, ուստի մերժված դիմումներն ավելի վաղ բողոքարկելու հնարավորություն չեն ունեցել, բացի այդ, Ծառայությունից նախապես ստացել են պարզաբանում, որ նոր դիմում ներկայացնելու անհրաժեշտություն չկա և խնդիրը կրում է տեխնիկական բնույթ:

Ստացված մեկ այլ բողոքով՝ անձինք հայտնել են, որ մինչև 2025 թվականի մարտ ամիսը ստացել են ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 1763-Լ որոշմամբ հաստատված միջոցառման շրջանակում իրենց հասանելիք սոցիալական աջակցության գումարները: Հավելել են, որ երեխաներին թողնելով տատիկի խնամքին՝ 2025 թվականի մարտի 26-ից տասն օրից պակաս ժամանակով բացակայել են ՀՀ-ից, ինչի

պատճառով իրենց և երեխաներին հասանելիք մարտ ամսվա աջակցության գումարները չեն վճարվել: Նշվածով պայմանավորված՝ դիմել են Միասնական սոցիալական ծառայություն, որտեղից առաջարկել են էլեկտրոնային եղանակով ներկայացնել դիմում՝ նշելով, որ ՀՀ-ից տասն օրվանից պակաս բացակայելու դեպքում կվճարվի աջակցության գումարները:

Մինչդեռ, ըստ բողոք ներկայացրած անձանց՝ համապատասխան հարթակում կատարվող աշխատանքների պատճառով չեն կարողացել ներկայացնել նոր դիմում: Այնուհետև, Միասնական սոցիալական ծառայության աշխատակցի խորհրդով գրավոր դիմում են ներկայացրել ծառայություն, սակայն ստացել են պատասխան այն մասին, որ աջակցության գումարները չեն տրամադրվի, քանի որ վճարման ցուցակ կազմելու ժամանակ իրենց և երեխաների անուններով հարթակում առկա չի եղել «ենթակա է վճարման» կարգավիճակով դիմում: Պարզաբանվել է նաև, որ մերժված դիմումը կարող է բողոքարկվել մինչև 2025 թվականի մարտի 1-ը:

Մինչդեռ, ըստ պնդման՝ դիմումի մերժման համար հիմք է հանդիսացել մարտի 26-ից երկրից բացակայելու հանգամանքը, ուստի չէին կարող մերժված դիմումը բողոքարկել մինչև մարտի 1-ը:

Միևնույն ժամանակ, հայտնել են, որ էլեկտրոնային հարթակով հնարավոր է եղել նոր դիմում ներկայացնել միայն մայիսի 12-ին, իսկ Միասնական սոցիալական ծառայության աշխատակիցը հայտնել է, որ հունիս ամսին կվճարվեն մարտ և ապրիլ ամիսներին հասանելիք աջակցության գումարները: Մինչդեռ, ըստ բողոք ներկայացրած անձանց՝ չեն տրամադրվել աջակցության գումարները, ավելին՝ գրավոր դիմում են ներկայացրել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, սակայն արդյունքի չեն հասել:

Նշված բողոքների քննարկման շրջանակում պարզաբանումներ ստանալու նպատակով Պաշտպանը գրություններ է հասցեագրել նախարարություն: Վկայակոչելով գործող իրավակարգավորումները՝ նախարարությունից տեղեկացրել են, որ դիմումը մերժվում է այն անձի մասով, ով ՀՀ ազգային անվտանգության ծառայությունից ստացված տեղեկատվության համաձայն՝ չի գտնվում ՀՀ-ում, իսկ դիմումը մերժվելու դեպքում ներկայացվում է նոր դիմում՝ մինչև մարտի 15-ը:

Տեղեկացրել են նաև, որ ամսական դրամական աջակցությունը նախորդ ամիսների համար վճարվում է տվյալ ամսվա ընթացքում ՀՀ-ից 10 օրվանից պակաս բացակայելու դեպքում, բացառությամբ այն դեպքերի, երբ շահառուն բացակայել է ՀՀ-ից՝ պետական կառավարման համակարգի մարմինների կամ նրանց հետ համագործակցության արդյունքում իրականացվող ծրագրերի շրջանակում:

Համաձայն նախարարությունից ստացված տեղեկատվության՝ շահառուների տվյալները (անունը, ազգանունը, ծննդյան օրը, ամիսը, տարին, անձը հաստատող փաստաթղթի համարը, հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին տեղեկանքի համարը, բացակայության սկիզբը և ավարտը) Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանն է տրամադրում համապատասխան պետական կառավարման համակարգի մարմինը՝ շահառուի համաձայնությունը ստանալուց հետո:

Պարզաբանվել է նաև, որ մինչև 18 տարեկան երեխան որոշմամբ հաստատված միջոցառման շահառու է, եթե նրան դրամական աջակցություն նշանակելու դիմումը ներկայացրած ծնողը կամ խնամակալը կամ հոգաբարձուն հանդիսանում է միջոցառման շահառու:

Նախարարությունից տեղեկացրել են նաև, որ որոշմամբ հաստատված սոցիալական աջակցության միջոցառումն արդեն իսկ ավարտվել է, որի շրջանակում դիմումներ ներկայացնելու վերջնաժամկետը սահմանված է եղել մինչև 2025 թվականի մարտի 15-ը ներառյալ:

Նշվածի համատեքստում անհրաժեշտ է արձանագրել, որ սոցիալական աջակցության տրամադրման դիմումները քննարկելիս և մերժման որոշում կայացնելիս նախարարության կողմից հաշվի չի առնվել շահառուների՝ ինչպես ՀՀ-ից 10 օրվանից պակաս բացակայելու փաստը, այնպես էլ որոշմամբ սահմանված ժամկետներում նոր դիմում ներկայացնելու կամ մերժված դիմումը բողոքարկելու իրական հնարավորությունը:

Այսպես, Սահմանադրության 50-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի վարչական մարմինների կողմից իրեն առնչվող գործերի անաչառ, արդարացի և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Ըստ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 5-րդ հոդվածի՝ վարչարարություն իրականացնելիս վարչական մարմիններին արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպատակով անձանց ծանրաբեռնել պարտականություններով կամ **մերժել նրանց որևէ իրավունք տրամադրելը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են:**

ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 1763-Լ որոշման 2-րդ հավելվածի 21.1-ին կետի համաձայն՝ ամսական դրամական աջակցությունը նախորդ ամիսների համար վճարվում է տվյալ ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունից 10 օրվանից պակաս բացակայելու դեպքում (…):

Նշված դեպքերում, բողոք ներկայացրած անձինք ոչ միայն տվյալ ամսվա ընթացքում, այլ առհասարակ Հայաստանից բացակայել են 10 օրվանից պակաս ժամանակահատվածով, հետևաբար բովանդակային առումով վերջիններս կատարել են իրենց վրա դրված պարտականությունը և պահպանել են ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 1763-Լ որոշմամբ սահմանված՝ 10 օրվանից պակաս բացակայելու պահանջը: Մինչդեռ, նախարարությունը ոչ միայն հաշվի չի առել հիշյալ հանգամանքը, այլև բողոք ներկայացրած անձանց ծանրաբեռնել է լրացուցիչ պարտականություններով՝ առաջարկելով մերժված դիմումները բողոքարկել կամ նոր դիմում ներկայացնել՝ բողոքարկման կամ նոր դիմում ներկայացնելու համար սահմանելով այնպիսի ժամկետներ, որոնց ընթացքում շահառուն չի իմացել և չէր էլ կարող իմանալ իր դիմումի մերժման մասին:

Հարկ է նշել, որ նախարարության նման մոտեցումը չի բխում ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 1763-Լ որոշմամբ հաստատված սոցիալական աջակցության միջոցառման նպատակից և էությունից:

Այս առումով, Պաշտպանը ընդգծում է, որ նման իրավիճակներում անհրաժեշտ է գործել պետական աջակցության ծրագրով նախանշված նպատակներին համահունչ և դիմումների ուսումնասիրության շրջանակում պատշաճ քննարկման առարկա դարձնել անձանց կողմից ներկայացված հանգամանքները և այդ համատեքստում կայացնել հիմնավորված և պատճառաբանված որոշումներ:

2025 թվականի ընթացքում բռնի տեղահանված անձինք Պաշտպանին հասցեագրել են նաև բողոքներ՝ բռնի տեղահանված ընտանիքների բնակարանային ապահովման պետական աջակցության ծրագրից օգտվելու համար Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն դիմելու և տեխնիկական խնդիրներով պայմանավորված՝ մերժում ստանալու վերաբերյալ:

Այսպես, Պաշտպանին հասցեագրած բողոքներից մեկով անձը տեղեկացրել է, որ ՀՀ կառավարության 2024 թվականի մայիսի 16-ի թիվ 710-Լ որոշմամբ հաստատված՝ բռնի տեղահանված ընտանիքների բնակարանային ապահովման պետական աջակցության ծրագրից օգտվելու նպատակով իր ընտանիքը դիմում է ներկայացրել Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայություն: Հավելել է, որ դիմումը մերժվել է իր դստեր տվյալները 2023 թվականի սեպտեմբերի 19-ից հետո ռազմական գործողությունների հետևանքով բռնի տեղահանված և ՀՀ ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայության կողմից հաշվառված բռնի տեղահանվածների տվյալների շտեմարանում բացակայելու հիմքով:

Բողոք ներկայացրած անձի տեղեկացմամբ՝ մերժված դիմումն ուսումնասիրելու նպատակով 2025 թվականի հուլիսի 15-ին դիմել է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը ենթակա միջգերատեսչական հանձնաժողովին, սակայն 2025 թվականի դեկտեմբեր ամսվա դրությամբ իր դիմումի ընթացքի վերաբերյալ որևէ տեղեկատվություն չի ստացել:

Բողոքի ուսումնասիրության ընթացքում՝ բողոք ներկայացրած անձը Պաշտպանի աշխատակազմ լրացուցիչ տեղեկություն է ներկայացրել այն մասին, որ Պաշտպանին դիմում հասցեագրելուց հետո իրավասու պետական մարմնից տեղեկացվել է, որ իր դստեր տվյալները հիշյալ ծրագրի շահառուների ցուցակում չէին ներառվել տեխնիկական խնդիրների պատճառով: Հավելել է, որ թեև խնդիրը կարգավորվել է, սակայն իր ընտանիքը տևական ժամանակ զրկված է եղել ՀՀ կառավարության 2024 թվականի մայիսի 16-ի թիվ 710-Լ որոշմամբ հաստատված՝ բռնի տեղահանված ընտանիքների բնակարանային ապահովման պետական աջակցության ծրագրից օգտվելու և բնակարանի ձեռքբերման հավաստագիր ստանալու հնարավորությունից:

Նմանատիպ մեկ այլ բողոքով անձը տեղեկացրել է, որ ՀՀ կառավարության 2024 թվականի մայիսի 16-ի թիվ 710-Լ որոշմամբ հաստատված՝ բռնի տեղահանված ընտանիքների բնակարանային ապահովման պետական աջակցության ծրագրից օգտվելու նպատակով իր ընտանիքը դիմում է ներկայացրել Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայություն, սակայն դիմումն իր մասով մերժվել է՝ իր տվյալները 2020 թվականի սեպտեմբերի 27-ից և 2023 թվականի սեպտեմբերի 19-ից հետո ռազմական գործողությունների հետևանքով բռնի տեղահանված և ՀՀ ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայության կողմից հաշվառված բռնի տեղահանվածների տվյալների շտեմարանում բացակայելու հիմքով:

Բողոք ներկայացրած անձի տեղեկացմամբ՝ որպես բռնի տեղահանված անձ՝ ստացել է 2023 թվականի սեպտեմբերի 19-ից բռնի տեղահանված անձանց տրամադրվող բոլոր սոցիալական աջակցությունները, հետևաբար պնդել է, որ հանդիսանում է նաև ՀՀ կառավարության 2024 թվականի մայիսի 16-ի թիվ 710-Լ որոշմամբ հաստատված ծրագրի շահառու:

Բարձրացված հարցի կապակցությամբ պարզաբանումներ ստանալու նպատակով Պաշտպանը գրություն է հասցեագրել նախարարություն: Ի պատասխան՝ տեղեկացրել են, որ ՀՀ կառավարության 2024 թվականի հունիսի 14-ի թիվ 898-Լ որոշման հավելվածի 3-րդ կետի 2-րդ ենթակետի «ա» և «զ» պարբերությունների համաձայն՝ ստացված դիմում-հայտարարության մշակման արդյունքում 10 աշխատանքային օրվա ընթացքում որոշման պահանջներին բավարարող դիմողն ինքնաշխատ եղանակով ստանում է շահառուի կարգավիճակ՝ հիմք ընդունելով 2020 թվականի սեպտեմբերի 27-ից և 2023 թվականի սեպտեմբերի 19-ից հետո ռազմական գործողությունների հետևանքով բռնի տեղահանված

և ՀՀ ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայության կողմից հաշվառված բռնի տեղահանվածների տվյալները և Օպերատիվ շտաբի տրամադրած՝ 2023 թվականի սեպտեմբերի 19-ի դրությամբ ՀՀ-ում գտնվող ԼՂ-ի բնակիչ հանդիսացող անձանց ցուցակները:

Պարզաբանվել է նաև, որ բողոք ներկայացրած անձի տվյալները բացակայել են վերոնշյալ ցուցակներում, ուստի 2025 թվականի օգոստոսի 19-ին housing.socservice.am հարթակում ներկայացված վերջինիս դիմում-հայտարարությունը մերժվել է:

Համաձայն ստացված տեղեկատվության՝ 2024 թվականի մայիսի 16-ի թիվ 710-Լ որոշման թիվ 4 և թիվ 5 հավելվածներով հաստատվել է միջգերատեսչական հանձնաժողովի կազմը և աշխատակարգը, որի խնդիրը բռնի տեղահանված ընտանիքների բնակարանային ապահովման պետական աջակցության ծրագրին դիմած և մերժված (շահառուի կարգավիճակ չստացած) դիմումատուների անհատական դեպքերն ուսումնասիրելու նպատակով գործընթացների իրագործումն է, որոնք ուղղված են որոշումներ կայացնելու համար անհրաժեշտ տեղեկատվության բացակայության կամ առկա տեղեկատվության թերի կամ ոչ ճշգրիտ լինելու հետևանքով դիմումատուների չիրացված իրավունքների վերականգնմանը:

Նախարարությունից տեղեկացրել են, որ բողոք ներկայացրած անձը 2025 թվականի օգոստոսի 28-ին դիմել է վերոնշյալ հանձնաժողով և վերջինիս կողմից ներկայացված փաստաթղթերն ուսումնասիրության փուլում են: Ուսումնասիրությունների և քննարկումների արդյունքների հիման վրա միջգերատեսչական հանձնաժողովը կկայացնի որոշում՝ շահառուի կարգավիճակ շնորհելու կամ դիմումը մերժելու վերաբերյալ, եթե ներկայացված փաստաթղթերը չբավարարեն որոշմամբ սահմանված պահանջներին:

Արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով ՄԻՊ-ը կրկին գրություն է հասցեագրել Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն: Ի պատասխան՝ տեղեկացրել են, որ բռնի տեղահանված ընտանիքների բնակարանային ապահովման պետական աջակցության ծրագրին դիմած և մերժված դիմումատուների անհատական դեպքերն ուսումնասիրելու համար ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովը 2025 թվականի նոյեմբերի 10-ին և դեկտեմբերի 23-ին անցկացրել է նիստեր, որոնց ընթացքում ուսումնասիրվել են նաև բողոք ներկայացրած անձի կողմից դիմումին կից ներկայացված փաստաթղթերը:

Տեղեկացրել են նաև, որ քննարկումների և ուսումնասիրությունների արդյունքում հանձնաժողովը որոշում է կայացրել բողոք ներկայացրած անձին շնորհել շահառուի կարգավիճակ և, որպես դրա հետևանք, հաստատել և տրամադրել հավաստագիր՝ վերջինիս կողմից housing.socservice.am հարթակում ներկայացված տվյալների հիման վրա՝ 6 անձից բաղկացած ընտանիքի համար:

Համաձայն նախարարությունից ստացված տեղեկատվության՝ նշված գործընթացի կազմակերպումն ապահովելու նպատակով համապատասխան հանձնարարական է տրվել տեխնիկական թիմին՝ համակարգում անհրաժեշտ գործողությունների իրականացումն ապահովելու համար: Գործընթացի ավարտից հետո դիմումատուի հավաստագիրը կուղարկվի վերջինիս կողմից ներկայացված էլեկտրոնային փոստի հասցեին:

Հարկ է նշել, որ հիշյալ դեպքերում անձինք, փաստացի լինելով բռնի տեղահանված, տեխնիկական խնդիրների պատճառով տևական ժամանակ զրկվում են բռնի տեղահանված ընտանիքների բնակարանային ապահովման պետական աջակցության ծրագրից օգտվելու հնարավորությունից:

Հաշվետու տարում Պաշտպանին ներկայացվել են նաև բողոքներ առ այն, որ բռնի տեղահանված անձինք իրենց կենսաթոշակ նշանակելու կամ կենսաթոշակը

վերահաշվարկելու համար դիմել են Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայություն, սակայն սոցիալական վճարները կատարելը կամ աշխատավարձ ստանալը հավաստող փաստաթղթերի բացակայության պատճառով ԼՂ-ի տարածքում աշխատած ժամանակահատվածներն աշխատանքային ստաժում չեն հաշվառվել:

Այսպես, օրինակ՝ Պաշտպանին ներկայացված բողոքներից մեկով անձը հայտնել է, որ 1996 թվականի փետրվարի 1-ից մինչև 2007 թվականի դեկտեմբերի 30-ն աշխատել է «Նվեր» ՍՊԸ-ում, իսկ 2017 թվականի օգոստոսի 1-ից մինչև 2020 թվականի սեպտեմբերի 27-ը և 2020 թվականի դեկտեմբերի 1-ից մինչև 2023 թվականի մարտի 13-ը՝ «Էլիզաբեթ Պողոսյան» ԱՁ-ում: Հավելել է, որ իր աշխատանքային գրքույկում առկա են գրառումներ հիշյալ ժամանակահատվածներում աշխատելու վերաբերյալ:

Բողոք ներկայացրած անձի տեղեկացմամբ՝ տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրանալու կապակցությամբ դիմել է Միասնական սոցիալական ծառայություն՝ տարիքային աշխատանքային կենսաթոշակ նշանակելու խնդրանքով: Նշել է, որ դիմումին կից ներկայացրել է իր աշխատանքային գրքույկը և «Նվեր» ՍՊԸ-ից տրված տեղեկանքը, համաձայն որի՝ 1996 թվականի փետրվար ամսից մինչև 2007 թվականի դեկտեմբեր ամիսն աշխատել է հիշյալ ընկերությունում և նշյալ ժամանակահատվածի համար իրեն վճարվել է աշխատավարձ:

Ըստ բողոք ներկայացրած անձի՝ Ծառայությունը մերժել է տարիքային աշխատանքային կենսաթոշակ նշանակելու դիմումը՝ 10 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ չունենալու հիմքով: Մինչդեռ, ըստ իր աշխատանքային գրքույկի տվյալների՝ ունի ավելի քան տասնյոթ տարվա աշխատանքային ստաժ:

Բարձրացված հարցի կապակցությամբ պարզաբանումներ ստանալու նպատակով Պաշտպանը գրություն է հասցեագրել նախարարություն: Վկայակոչելով «Պետական կենսաթոշակների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասը, 32-րդ հոդվածի 1-ին, 1.1-ին մասը, ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի թիվ 665-Ն որոշման թիվ 1 հավելվածի 15-րդ կետի 3-րդ ենթակետը, նույն հավելվածի 15.8-րդ կետը, թիվ 2 հավելվածի 10-րդ կետը՝ նախարարությունը տեղեկացրել է, որ մինչև 1992 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածի համար աշխատանքային ստաժը հաստատող հիմնական փաստաթուղթն աշխատանքային գրքույկն է կամ Կառավարության սահմանած այլ փաստաթուղթ: 1992 թվականի հունվարի 1-ից մինչև 2013 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածի համար աշխատանքային ստաժը հաստատող հիմնական փաստաթուղթն աշխատանքային գրքույկն է կամ Կառավարության սահմանած այլ փաստաթուղթ և սոցիալական վճարներ կատարելը կամ աշխատավարձ ստանալը հաստատող փաստաթուղթը, բացառությամբ՝ Կառավարության սահմանած դեպքերի:

Պարզաբանվել է նաև, որ աշխատանքային գրքույկի բացակայության դեպքում աշխատանքային ստաժը հաստատելու համար ընդունվում են արխիվային տեղեկանքներ, աշխատանքի ընդունելու և աշխատանքից ազատելու մասին հրամաններ կամ հրամանների քաղվածքներ, ինչպես նաև համապատասխան իրավահարաբերությունների առաջացման օրվա դրությամբ գործող աշխատանքային օրենսդրության համաձայն կնքված աշխատանքային գրավոր պայմանագրեր և համաձայնագրեր կամ ըստ տարիների և ամիսների վճարված աշխատավարձի չափի վերաբերյալ արխիվային տեղեկանքներ կամ «Պետական կենսաթոշակների մասին» օրենքի 55-րդ հոդվածի 2-րդ մասում նշված՝ անհատական (անձնավորված) հաշվառման տվյալների բազայում առկա տեղեկատվությունը:

Նախարարությունից պարզաբանվել է նաև, որ պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանում առկա տեղեկատվության համաձայն՝ բողոք ներկայացրած անձը դիմել է Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոն՝ կենսաթոշակի նշանակման նպատակով: Վերջինիս օրացուցային աշխատանքային ստաժը կազմում է 5 տարի 5 ամիս 8 օր, ուստի կենսաթոշակի նշանակման դիմումը մերժվել է:

Հավելել են, որ բողոք ներկայացրած անձի ընդհանուր աշխատանքային ստաժում չի հաշվառվել 1996-2007 թվականների աշխատած ժամանակահատվածը, քանի որ Միասնական սոցիալական ծառայությունը չի տիրապետում խնդրո առարկա ժամանակահատվածում ապահովագիրների կողմից կատարված սոցիալական վճարներ կատարելու վերաբերյալ տեղեկատվությանը: Բողոք ներկայացրած անձը դիմումին կից ներկայացրել է տեղեկանք «Նվեր» ՍՊԸ-ում 1996-2007 թվականների ժամանակահատվածում աշխատավարձ ստանալու վերաբերյալ, որում նշված չեն տեղեկանքը տրամադրելու հիմքերը, ուստի վերը նշված տեղեկանքի հիման վրա խնդրո առարկա ժամանակահատվածը վերջինիս ընդհանուր աշխատանքային ստաժում հաշվառելու իրավական հիմքեր չկան:

Միևնույն ժամանակ, նախարարությունից տեղեկացրել են, որ Ղարաբաղի տարածքում աշխատած ժամանակահատվածներն աշխատանքային ստաժում ավելի պարզ ընթացակարգով հաշվառելու նպատակով առաջիկայում կշրջանառվի համապատասխան իրավական ակտի նախագիծ:

Հիշյալ բողոքի շրջանակում կրկին գրություն է հասցեագրվել Նախարարություն, որին ի պատասխան՝ տեղեկացվել է, որ բողոք ներկայացրած անձին 08.11.2025 թվականից 21 տարի 9 ամիս 26 օր (22 տարի) ընդհանուր աշխատանքային ստաժի հաշվառմամբ՝ նշանակվել է տարիքային աշխատանքային կենսաթոշակ: Միաժամանակ, տեղեկացվել է, որ բողոք ներկայացրած անձին 08.11.2025-31.12.2025 թթ. ժամանակահատվածի համար չվճարված կենսաթոշակի գումարը փոխանցվել է վճարման՝ 2026 թվականի հունվար ամսվա կենսաթոշակի վճարման ցուցակներով:

Նմանատիպ մեկ այլ բողոքով անձը հայտնել է, որ 2023 թվականի հոկտեմբերի 4-ին լրացել է կենսաթոշակի իրավունք տվող տարիքը, ինչով պայմանավորված՝ կենսաթոշակ նշանակելու համար դիմել է կենսաթոշակ նշանակող մարմին՝ ներկայացնելով անհրաժեշտ բոլոր փաստաթղթերն, այդ թվում՝ աշխատանքային գրքույկները, սոցիալական վճարներ կատարելը և աշխատավարձ ստանալը հաստատող փաստաթղթերը, 1998-2023 թվականներն ընկած ժամանակահատվածում աշխատելու վերաբերյալ փաստաթղթեր, ինչպես նաև մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ ունենալու մասին տեղեկանք:

Ըստ բողոք ներկայացրած անձի՝ ունի 46 տարվա աշխատանքային ստաժ, սակայն կենսաթոշակ նշանակելիս ստաժում հաշվառվել է միայն մինչև 1992 թվականի հունվարի 1-ն աշխատած ժամանակահատվածը (ընդհանուր՝ 15 տարի, 6 ամիս, 9 օր): Միևնույն ժամանակ, գրություններով իրեն հայտնել են, որ 1992 թվականի հունվարի 1-ից մինչև 2023 թվականի սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածն աշխատանքային ստաժում հաշվառելու հարցը կքննարկվի համապատասխան բազաները տրամադրելուց հետո:

Մինչդեռ, բողոք ներկայացրած անձը հայտնել է, որ Ադրբեջանի զինված հարձակման հետևանքով բազմաթիվ գործատուներ հնարավորություն չեն ունեցել անհրաժեշտ փաստաթղթերը բերել Հայաստանի Հանրապետություն, ուստի չեն

կարող տրամադրել սոցիալական վճարներ կատարելը կամ աշխատավարձ ստանալը հաստատող փաստաթղթեր, ինչն ըստ «Պետական կենսաթոշակների մասին» օրենքի՝ պահանջվող փաստաթղթերից է 1992-2013 թվականն ընկած ժամանակահատվածն աշխատանքային ստաժում հաշվառելու համար:

Ըստ բողոք ներկայացրած անձի՝ նշվածից ելնելով՝ կենսաթոշակ նշանակող մարմինը նշված ժամանակահատվածը չի հաշվառում աշխատանքային ստաժում և անձանց ուղղորդում է դիմել դատարան, որի դեպքում մարդիկ լրացուցիչ քաշքշուկի մեջ են հայտնվում, իսկ դատարաններն՝ անհարկի ծանրաբեռնվում:

Բացի այդ, նշել է, որ որպես մարտական գործողությունների մասնակցի՝ իրեն պարգևավճար չի նշանակվել ՀՀ կառավարության համապատասխան որոշումով նախատեսված փաստաթղթերը չունենալու պատճառով:

Բարձրացված հարցի կապակցությամբ պարզաբանումներ ստանալու նպատակով Պաշտպանը գրություն է հասցեագրել Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն: Վկայակոչելով գործող իրավակարգավորումները՝ նախարարությունը ներկայացրել է պարզաբանում այն մասին, որ պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանում առկա տեղեկատվության համաձայն՝ բողոք ներկայացրած անձին 2023 թվականի հոկտեմբերի 4-ից 22 տարի 10 ամիս 24 օր աշխատանքային ստաժի հաշվառմամբ նշանակվել է տարիքային աշխատանքային կենսաթոշակ:

Ըստ պարզաբանման՝ Ղարաբաղում անձի կողմից եկամտային հարկ վճարած լինելու վերաբերյալ հարկային մարմնի կողմից տրամադրվող տեղեկատվական շտեմարանի տվյալները Միասնական սոցիալական ծառայությանը հասանելի դառնալուց հետո բողոք ներկայացրած անձի կենսաթոշակը վերահաշվարկվել է 32 տարի 5 ամիս 24 օր աշխատանքային ստաժի հաշվառմամբ, իսկ 04.10.2023-30.06.2024 թվականների ժամանակահատվածի համար թերի վճարված կենսաթոշակի գումարը փոխանցվել է վճարման 2024 թվականի հուլիս ամսվա կենսաթոշակի վճարման ցուցակներով:

Միաժամանակ, տեղեկացրել են, որ բողոք ներկայացրած անձի ընդհանուր աշխատանքային ստաժում չի հաշվառվել 1999-2004 թվականներն ընկած ժամանակահատվածում աշխատած ժամանակահատվածը, քանի որ Միասնական սոցիալական ծառայությունը չի տիրապետում խնդրո առարկա ժամանակահատվածում ապահովագիրների կողմից կատարված սոցիալական վճարներ կատարելու վերաբերյալ տեղեկատվությանը:

Քննարկվող խնդրի շրջանակում, իբրև դրական առաջընթաց պետք է արձանագրել այն, որ ՀՀ կառավարության «Պետական կենսաթոշակների մասին» օրենքի կիրարկումն ապահովելու մասին 2011 թվականի մայիսի 5-ի թիվ 665-Ն որոշման մեջ կատարվել են փոփոխություններ և Լեռնային Ղարաբաղի տարածքում աշխատած անձանց աշխատանքային ստաժը հաստատելու կարգը պարզեցվել է:

Այսպես, 2025 թվականի նոյեմբերի 8-ին ուժի մեջ է մտել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի թիվ 665-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության 2025 թվականի նոյեմբերի 6-ի թիվ 1569-Ն որոշումը: Որոշմամբ նախատեսվել է ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» թիվ 665-Ն որոշման թիվ 1 հավելվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ 14.7-րդ կետով՝

«14.7. Եթե անձն աշխատել է (զբաղեցրել է պաշտոն) Լեռնային Ղարաբաղի տարածքում, ապա սոցիալական վճարներ կատարելը կամ աշխատավարձ ստանալը հաստատող փաստաթուղթ չի պահանջվում՝

1) 1992 թվականի հունվարի 1-ից մինչև 2004 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածի համար.

2) 2004 թվականի հունվարի 1-ից մինչև 2014 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածի համար, եթե Կառավարության 2023 թվականի նոյեմբերի 30-ի N 2100-Ն որոշման 3-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն չի ստացվել մինչև 2014 թվականը վարված՝ տվյալ բնակավայրի անհատական (անձնավորված) հաշվառման տվյալների համապատասխան բազան.

3) անկախ սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերի համաձայն աշխատանքային ստաժը հաստատված լինելու կամ չլինելու հանգամանքից՝

ա. մինչև 2014 թվականի հունվարի 1-ը ընկած ժամանակահատվածի համար, եթե առկա է աշխատանքային ստաժը սահմանող՝ Լեռնային Ղարաբաղի հանձնաժողովի 2021 թվականի հուլիսի 30-ից մինչև 2023 թվականի սեպտեմբերի 19-ը տրված տեղեկանքը,

բ. կոլտնտեսությունում (խորհրդային տնտեսությունում) աշխատած՝ մինչև 1998 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածի համար:»:

ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի թիվ 665-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելուց հետո՝ բողոք ներկայացրած անձինք կենսաթոշակը նշանակելու կամ վերահաշվարկելու նոր դիմումներ են ներկայացրել Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոններ, որի արդյունքում կենսաթոշակները վերահաշվարկվել և խնդրո առարկա ժամանակահատվածները հաշվառվել են աշխատանքային ստաժում:

Ողջունելով ոլորտում կատարված փոփոխությունները, այնուամենայնիվ, Պաշտպանն ընդգծում է, որ սոցիալական ապահովության իրավունքն իրացնելիս բռնի տեղահանված անձինք շարունակում են բախվել խնդիրների, որոնք պահանջում են համակարգային շուտափույթ լուծումներ, այդ թվում՝ օրենսդրական մակարդակում: Ուստի, ոլորտը կարգավորող իրավական ակտերը պետք է շարունակական կատարելագործման ենթարկվեն:

Հաշվետու տարում բռնի տեղահանված անձինք Պաշտպանին հընթացս հասցեագրել են նաև սոցիալական աջակցության տրամադրման հետ կապված այլ դիմում-բողոքներ: Այսպես, օրինակ՝ ՄԻՊ-ին ներկայացված բողոքով անձը հայտնել է, որ 2023 թվականի սեպտեմբերին ռազմական գործողությունների հետևանքով ԼՂ-ից բռնի տեղահանվել են Հայաստան: Հավելել է, որ 2016 թվականի ապրիլի 2-ին 12-ամյա որդին ռազմական գործողությունների հետևանքով ԼՂ միջնակարգ դպրոցներից մեկի բակում արկի բեկորներից զոհվել է, իսկ մյուս որդին՝ ստացել բեկորային վիրավորում:

Բողոք ներկայացրած անձի տեղեկացմամբ՝ որդու մահից հետո Լեռնային Ղարաբաղում գործող՝ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի շրջանակներում իրեն և կնոջը նշանակվել է ամենամսյա անժամկետ նպաստ, որը ստացել են մինչև տեղահանվելը՝ 2023 թվականի սեպտեմբեր ամիսը: Հավելել է, որ նշանակված նպաստի շարունակականությունը Հայաստանում ապահովելու համար դիմել է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, սակայն արդյունքի չի հասել:

Բողոք ներկայացրած անձը խնդրել է Պաշտպանի աջակցությունը որդու մահվան կապակցությամբ նշանակված նպաստը ստանալու իրավունքը Հայաստանում վերականգնելու և նույն ծավալով վճարելու հարցում:

Նշված բողոքի քննարկման շրջանակում նախարարությանն ուղղված Պաշտպանի հարցմանն ի պատասխան՝ պարզաբանում է տրամադրվել առ այն, որ ՀՀ-ում կենսաթոշակների (այդ թվում նաև՝ զինվորական կենսաթոշակների), նպաստների (ծերության նպաստ, հաշմանդամության նպաստ, կերակրողին կորցնելու դեպքում նպաստ) նշանակմանը և վճարմանն առնչվող հարցերը կարգավորվում են համապատասխանաբար «Պետական կենսաթոշակների մասին» և «Պետական նպաստների մասին» օրենքներով, ինչպես նաև Կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի թիվ 665-Ն և Կառավարության 2014 թվականի հունիսի 26-ի թիվ 635-Ն որոշումներով, իսկ զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների, առանձին կատեգորիաների անձանց ընտանիքների անդամների ամենամսյա պարգևավճարի իրավունքին առնչվող հարցերը կարգավորվում են «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքով և Կառավարության 2021 թվականի փետրվարի 4 ի թիվ 141-Ն որոշմամբ:

Տեղեկացվել է նաև, որ բռնի տեղահանված անձանց կենսաթոշակի իրավունքն իրացնելու ընթացակարգերը պարզեցնելու նպատակով ընդունվել են մի շարք իրավական ակտեր, իսկ գործող իրավական ակտերում կատարվել են մի շարք լրացումներ և փոփոխություններ:

Ըստ նախարարությունից ստացված պարզաբանման՝ Ղարաբաղում նշանակված կենսաթոշակները, պարգևավճարները, նպաստները, այլ վճարները ոչ թե շարունակվում են վճարվել ՀՀ-ում, այլ նշանակվում և վճարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Պարզաբանվել է նաև, որ քննարկվող վճարատեսակը ՀՀ օրենսդրությամբ սահմանված չէ, ուստի ՀՀ-ում նշանակել և վճարել (վճարումը շարունակել) հնարավոր չէ:

Հարկ է նշել, որ այս դիմում-բողոքը ՄԻՊ աշխատակազմում գտնվում է քննարկման փուլում և պահանջում է հետագա լրացուցիչ ուսումնասիրություններ:

Վերոգրյալի համատեքստում հարկ է նաև արձանագրել, որ անհրաժեշտ է կատարել ռազմական գործողությունների հետևանքով քաղաքացիական անձանց շրջանում զոհերի ընտանիքներին և վիրավորում ստացած անձանց կարիքների շարունակական գնահատում և ըստ անհրաժեշտության՝ քննարկման առարկա դարձնել հասցեական և նպատակային սոցիալական աջակցության տրամադրման հարցը:

Ամփոփելով վերոգրյալը՝ հարկ է նշել, որ բռնի տեղահանված անձանց իրավունքների իրացմանն ու պաշտպանությանն առնչվող բոլոր հարցերը գտնվում են ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հատուկ ուշադրության ներքո:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պաշտպանն ընդգծում է, որ բռնի տեղահանված անձանց սոցիալական երաշխիքների շարունակական բարելավման ուղղությամբ քայլեր ձեռնարկելու տեսանկյունից անհրաժեշտ է՝

- ✓ ***մշակել և ներդնել գործուն իրավական կառուցակարգեր՝ 2020 թվականի սեպտեմբերի 27-ից հետո բռնի տեղահանված և 2023 թվականի սեպտեմբերի 19-ի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում գտնվող, սակայն Օպերատիվ շտաբի ցուցակներում չընդգրկված անձանց ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 1763-Լ որոշման շահառու դարձնելու նպատակով.***
- ✓ ***սոցիալական աջակցության տրամադրման դիմումները քննարկելիս պատշաճ քննարկման առարկա դարձնել անձանց կողմից ներկայացված հանգամանքները (օրինակ՝ ամուսնալուծության պետական գրանցման պահը) և այդ***

համատեքստում կայացնել հիմնավորված և պատճառաբանված որոշումներ: Միևնույն ժամանակ, հաշվի առնել ինչպես Հայաստանի Հանրապետությունից 10 օրվանից պակաս բացակայելու հանգամանքը, այնպես էլ որոշմամբ սահմանված ժամկետներում նոր դիմում ներկայացնելու կամ մերժված դիմումը բողոքարկելու իրական հնարավորությունը: Ընդ որում, վերոգրյալ և նմանօրինակ այլ հանգամանքների լույսի ներքո քննարկման առարկա դարձնել Կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 1763-Լ որոշմամբ սահմանված մերժված դիմումը բողոքարկելու կամ նոր դիմում ներկայացնելու ժամկետը վերանայելու (երկարաձգելու), այն հարգելի համարելու կառուցակարգ նախատեսելու հնարավորության հարցերը.

- ✓ *միջոցներ ձեռնարկել սոցիալական աջակցության տրամադրման դիմումների քննարկման ընթացքում ծագած ծրագրային և տեխնիկական խնդիրները նվազագույնի հասցնելու ուղղությամբ՝ սոցիալական աջակցությունն օպերատիվ և ժամանակին տրամադրելու նպատակով.*
- ✓ *քննարկման առարկա դարձնել ռազմական գործողությունների հետևանքով քաղաքացիական անձանց շրջանում զոհերի ընտանիքներին և վիրավորում ստացած անձանց սոցիալական աջակցության տրամադրման, ինչպես նաև այդ նպատակով համապատասխան կառուցակարգերի մշակման հարցերը:*

ԲԱԺԻՆ 16. ՏԱՐԵՑՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Տարեցների իրավունքների պաշտպանության և խթանման հարցերը կարևոր տեղ են զբաղեցնում մարդու իրավունքների ընդհանուր համակարգում: Տարեցները հաճախ բախվում են սոցիալական մեկուսացման, խտրականության, առողջապահական և սոցիալական ծառայությունների սահմանափակ հասանելիության խնդիրներին, ինչպես նաև տնտեսական խոցելիության ռիսկերին: Մարդու իրավունքների պաշտպանությունը տարեցների համար ենթադրում է նրանց արժանապատվության, ինքնուրույնության և լիարժեք մասնակցության ապահովում հասարակական կյանքին: Այս համատեքստում պետության պարտականությունն է ձևավորել և իրականացնել այնպիսի քաղաքականություններ, որոնք կերաշխավորեն տարեցների իրավունքների պաշտպանությունը և խթանումը:

Տարեց անձանց հիմնարար իրավունքների ամբողջ ծավալով երաշխավորումն ու անխոչընդոտ իրացումը Մարդու իրավունքների պաշտպանի աշխատանքի հիմնական ուղղություններից է: Կարևոր է տարեցների սոցիալական պաշտպանության ապահովումը, նրանց կյանքի որակի բարձրացումը և արժանավայել ծերություն ունենալու համար անհրաժեշտ ու բավարար նախադրյալների ստեղծումը: Չնայած այս ուղղությամբ դրական որոշակի տեղաշարժին՝ ոլորտում դեռևս առկա են բազմաթիվ օրենսդրական և գործնական խնդիրներ, որոնք հիմնականում վերաբերում են տարեցների սոցիալական ծառայությունների տրամադրմանը, առողջապահական ծառայություններից օգտվելու անմատչելիությանը, կենսամակարդակի ապահովմանը, խնամքի հարցում աջակցության և այլ հարցերի:

2025 թվականին տարեցների իրավունքների պաշտպանության խնդիրներին առնչվող հարցերով կազմակերպվել են քննարկումներ, որոնց մասնակցել են նաև Պաշտպանի ներկայացուցիչները: Այսպես, հաշվետու տարվա ընթացքում Եվրոպայի խորհրդի կողմից ***«Մարդու սոցիալական իրավունքների ամրապնդումը Հայաստանում»*** ծրագրի շրջանակում կազմակերպվել է բնակարանային և տարեցների իրավունքներին նվիրված աշխատաժողով (այն իրականացվում է ԵԽ 2023-2026 թվականների գործողությունների պլանի շրջանակում):

Միջոցառմանը մասնակցում էին՝ Հայաստանի կառավարության, քաղաքացիական հասարակության և միջազգային կազմակերպություններից ավելի քան 30 առանցքային ներկայացուցիչներ, ովքեր անդրադարձան սոցիալական բնակարանային ապահովման և տարեցների իրավունքների պաշտպանության ոլորտներում երկրի կողմից շարունակաբար ներդրվող ջանքերին:

Չնայած Հայաստանն արդեն 2004 թվականին վավերացրել է վերանայված Եվրոպական սոցիալական խարտիան, այնուամենայնիվ, դեռևս չի ընդունել խարտիայի որոշ դրույթներ, որոնք առնչվում են բնակարանային և տարեցների իրավունքներին: Սակայն վերջին շրջանում իրականացվող բարեփոխումները և նախաձեռնությունները վկայում են ազգային քաղաքականությունը եվրոպական չափանիշներին համապատասխանեցնելու հանձնառության մասին: Աշխատաժողովի նպատակն էր նպաստել այս կարևոր հարցերի շուրջ երկխոսությանը և ուսումնասիրել հետագա օրենսդրական ու քաղաքական առաջընթացի հնարավոր ուղիները:

Քննարկումների ընթացքում ներկայացվեց Եվրոպայի խորհրդի «Սոցիալական բնակարանային ապահովման» զեկույցը, որի շրջանակում առանձնացվեցին Եվրոպական սոցիալական իրավունքների կոմիտեի կարևոր նախադեպային որոշումները: Այն հարթակ հանդիսացավ կոնկրետ քաղաքականության վերանայման և ռազմավարական պլանավորման համար՝ նպաստելով եվրոպական սոցիալական չափանիշների հետ համապատասխանեցմանը:

Եվրոպայի խորհրդի Սոցիալական իրավունքների դեպարտամենտի Համագործակցության բաժնի ղեկավարը բարձր գնահատեց Հայաստանի ջանքերը՝ նշելով. «Մենք բարձր ենք գնահատում սոցիալական բնակարանային հարցերի և տարեցների իրավունքների ուղղությամբ Հայաստանի կողմից իրականացվող նախաձեռնությունները և վերահաստատում ենք Եվրոպայի խորհրդի պատրաստակամությունը՝ աջակցելու Հայաստանին ազգային օրենսդրությունը եվրոպական չափանիշներին համապատասխանեցնելու գործում»:

Գաղափարների և հնարավոր լուծումների փոխանակումը հնարավորություն տվեց ամրապնդել համագործակցությունը Հայաստանի և Եվրոպայի խորհրդի միջև՝ վերահաստատելով հայ գործընկերների հանձնառությունը խոցելի վիճակում գտնվող խմբերի պաշտպանությանը և սոցիալական իրավունքների առաջմղմանը:

Աշխատաժողովը կարևոր քայլ էր խոցելի վիճակում գտնվող խմբերի պաշտպանության ուժեղացման համար՝ նրանց հատուկ կարիքները հաշվի առնող նպատակային միջոցներով և երկրում սոցիալական իրավունքների ավելի լայն տարածմամբ: Այն հաջորդեց «Մարդու սոցիալական իրավունքների ամրապնդումը Հայաստանում» ծրագրի ղեկավար կոմիտեի երկրորդ հանդիպմանը, որի ընթացքում մասնակիցները կարևորեցին շարունակական աջակցության անհրաժեշտությունը՝ ամրապնդելու Հայաստանի սոցիալական իրավունքների շրջանակը և ապահովելու դիմակայունությունն ապագա մարտահրավերներին դիմագրավելու համար[424]:

Ոլորտում առկա գործնական և օրենսդրական խնդիրներ

Պաշտպանն իր գործունեությունն ամփոփող հաղորդումներում տարիներ շարունակ բարձրացրել է **«տարեց»** եզրույթի հետ կապված իրավական անորոշության առկայության հարցը, որը պայմանավորված է օրենսդրական կարգավորումներով: Այսպես, «Սոցիալական աջակցության մասին» օրենքում «տարեց» հասկացությունը շարունակում է սահմանված մնալ՝ որպես 65 տարին լրացած անձ (տե՛ս նույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 27-րդ կետը):

Մինչդեռ, «Պետական կենսաթոշակների մասին» օրենքով տարիքային աշխատանքային կենսաթոշակի անցնելու տարիք է սահմանված 63-ը: Այսինքն, այդ տարիքից անձը համարվում է կենսաթոշակառու: Այդ տարիքում անձին կնշանակվի կենսաթոշակ, եթե նա ունի առնվազն 10 օրացուցային տարվա աշխատանքային

[424] Տեղեկատվությունը հասանելի է հետևյալ հղումով՝ https://surl.li/ctbenc (20/03/2026թ.-ի դրությամբ):

ստաժ, իսկ չունենալու պարագայում սոցիալական կարգավիճակ ձեռք չի բերում: Կենսաթոշակ ստանալու իրավունք չունեցող անձը միայն 65 տարին լրանալու դեպքում ծերության նպաստի իրավունք ունի:

Ստացվում է, որ տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունք չունենալու պարագայում 63-65 տարեկան անձինք զրկվում են տարեցներին մատուցվող խնամքի և սոցիալական աջակցության ծառայություններից օգտվելու հնարավորությունից *(օրինակ՝ կացարանով ապահովում, խնամքի ծառայություններ տնային պայմաններում, շուրջօրյա խնամքի կենտրոններում և այլն):* Իսկ խնամքի ծառայությունների տրամադրման համար որոշիչ նշանակություն ունի անձի տարիքը, քանի որ խնամք տրամադրվում է տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց:

Այսպիսով, օրինակ՝ 63 տարեկանում չաշխատելու, տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունք չունենալու և անապահովության նպաստ չստանալու դեպքում տարեց անձը կարող է հայտնվել կյանքի դժվարին իրավիճակում՝ չկարողանալով ապահովել կենսական կարիքները: Խնդիրն ավելի է սրվում, երբ անձը բնակվում է միայնակ:

Այսպես, օրինակ՝ հաշվետու տարում Պաշտպանի աշխատակազմ ներկայացված բողոքներից մեկով 64 տարեկան անձը նշել է, որ սոցիալապես անապահով է, բնակվում է միայնակ, չունի մշտական աշխատանք, չի ստանում կենսաթոշակ: Նշել է նաև, որ տան տանիքը վնասված է, սակայն չունի միջոցներ այն վերանորոգելու համար: Խնդրել է ՄԻՊ միջամտությունը սոցիալական աջակցություն ստանալու հարցում: Բարձրացված հարցերը քննարկվել են համայնքապետարանի հետ, որտեղից պատրաստակամություն են հայտնել աջակցություն տրամադրել բողոք ներկայացրած անձին:

2025 թվականին ստացված մեկ այլ բողոքով անձը տեղեկացրել է, որ միայնակ կենսաթոշակառու է, ունի 2-րդ խմբի հաշմանդամություն, ապրում է Կոտայքի մարզի գյուղերից մեկում: Ըստ տեղեկացման՝ եկամուտը միայն կենսաթոշակն է: Տարվա մեջ մեկ անգամ Միասնական սոցիալական ծառայության կամ համայնքապետարանի կողմից որպես օգնություն սննդի փաթեթ է ստացել, սակայն այս տարի չի ստացել: Խնդրել է Պաշտպանի աջակցությունը սննդի փաթեթ ստանալու հարցում:

Պաշտպանի ներկայացուցիչը հարցը քննարկել է վարչական ղեկավարի հետ: Վերջինս պատրաստակամություն է հայտնել խնդրի լուծմանն աջակցելու հարցում: Հաջորդիվ, բողոք ներկայացրած անձը տեղեկացրել է, որ ստացել է սննդի փաթեթը, միաժամանակ, շնորհակալություն է հայտնել ՄԻՊ աշխատակազմին կատարված աշխատանքի համար: Չնայած տրամադրվող աջակցություններով ինչ-որ չափով մեղմվում է տարեց անձանց սոցիալական վիճակը, սակայն համակարգային առումով խնդիրը մնում է չլուծված:

Պաշտպանի աշխատակազմ շարունակվել են մտահոգություններ ներկայացվել նաև այն հարցի կապակցությամբ, որ 63 տարեկանից բարձր տարիքի անձանց համար դժվար է աշխատանքի ընդունվելը, քանի որ հիմնականում գործատուները չեն ցանկանում և աշխատանքի չեն ընդունում այդ տարիքի անձանց: Այսինքն, ստացվում է, որ 63-65 տարեկան անձը, որը չունի օրենքով տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունք տվող 10 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ և չի ստանում կենսաթոշակ, առողջական խնդիրների պատճառով չի կարողանում աշխատել կամ պարզապես տարիքի պատճառով չեն ընդունում աշխատանքի, փաստացի հայտնվում է կյանքի դժվարին իրավիճակում:

Միևնույն ժամանակ, չի կարողանում օգտվել տարեցներին կամ հաշմանդամություն ունեցող անձանց մատուցվող խնամքի և սոցիալական ծառայություններից որևէ կարգավիճակ չունենալու պատճառով:

Բացի այդ, շարունակում է խնդիր մնալ հիվանդություններ ունենալու հիմքով տարեցներին շուրջօրյա խնամք չտրամադրելը: Նշվածի կապակցությամբ նախորդ տարեկան հաղորդման շրջանակում Պաշտպանն առաջարկել էր քննարկման առարկա դարձնել ՀՀ կառավարության 2022 թվականի նոյեմբերի 10-ի թիվ 1744-Ն որոշմամբ սահմանված հիվանդությունների ցանկը վերանայելու հնարավորության հարցը, ինչպես նաև այդ որոշմամբ նախատեսված հիվանդություններ ունեցող անձանց խնամքը կազմակերպելու նպատակով այլընտրանքային խնամքի հաստատություններ և (կամ) ներկայիս խնամքի հաստատություններում հատուկ տարածքներ առանձնացնելու հնարավորությունը[425]:

Այս առնչությամբ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից սույն տարեկան հաղորդման կազմման աշխատանքների շրջանակում կատարված հարցմանն ի պատասխան՝ տեղեկացրել են, որ վերանայվել է ՀՀ կառավարության 2022 թվականի նոյեմբերի 10-ի «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրման կարգը, պայմանները, չափորոշիչները, տրամադրվող խնամքի ձևերը, խնամքի տրամադրումը մերժելու հիմք հանդիսացող հիվանդությունների ցանկը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի թիվ 1112-Ն և հոկտեմբերի 29-ի N 1292-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» թիվ 1744-Ն որոշումը: Արդյունքում, ընդունվել է ՀՀ կառավարության 2025 թվականի նոյեմբերի 14-ի «Պետական սոցիալական աջակցության ծրագրերի շրջանակում տարեց կամ հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրման կարգերը, պայմանները, տրամադրվող խնամքի ձևերը, տրամադրվող սոցիալական ծառայությունների, խնամքի տրամադրումը մերժելու հիմք հանդիսացող հիվանդությունների ցանկերը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» թիվ 1614-Ն որոշումը: Մշակվել և շրջանառման մեջ են դրվել «Տարեց կամ հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրման կարգերից և պայմաններից բխող ընթացակարգերը և օրինակելի ձևաթղթերը հաստատելու մասին» և «Տարեց կամ հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի (բացառությամբ խնամատար ընտանիքներում կամ խնամակալի կամ հոգաբարձուի ընտանիքում իրականացվող խնամքի) տրամադրման նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» ԱՍՀ նախարարի հրամանի նախագծերը:

Մինչդեռ, հարկ է նշել, որ ՀՀ կառավարության 2025 թվականի նոյեմբերի 14-ի թիվ 1614-Ն որոշման բովանդակային ուսումնասիրությունը վկայում է, որ խնամքը տրամադրելու մերժման հիմք հանդիսացող հիվանդությունների մասով այն, ըստ էության, չի վերանայվել: Այսպես, նշված որոշման 42-րդ կետի համաձայն՝ խնամքը տրամադրելու մերժման հիմք հանդիսացող հիվանդություններն են՝

1) քրոնիկ ալկոհոլամոլությունը կամ թմրամոլությունը.

2) մաշկային վարակիչ հիվանդությունները, մասնավորապես, քոս, ոջլոտություն.

[425] Տե՛ս 2024 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջեր 873-881:

3) ՀՀ կառավարության 2001 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 1286 որոշմամբ հաստատված՝շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությունները՝ բացառությամբ մարդու իմունային անբավարարության վիրուսի վարակի և ոչ մանրէազատ տուբերկուլյոզի:

Կարծում ենք, որ տարեցների սոցիալական իրավունքների և սոցիալական երաշխիքների պաշտպանության տեսանկյունից իրավասու մարմինները պետք է քննարկման առարկա դարձնեն վերը նշված կետով նախատեսված հիվանդությունների ցանկը վերանայելու հնարավորության հարցը: Հատուկ քննարկման առարկա պետք է դարձվի նաև վերը նշված հիվանդություններն ունեցող անձանց խնամքը կազմակերպելու նպատակով այլընտրանքային խնամքի հաստատություններ և (կամ) ներկայիս խնամքի հաստատություններում հատուկ տարածքներ առանձնացնելու հնարավորությունը՝ հաշվի առնելով նման կարգավիճակ ունեցող անձանց կարիքներն ու հասարակության մեջ ինտեգրվելու անհրաժեշտությունը:

Բացի այդ, հաշվետու տարում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից Մարդու իրավունքների պաշտպանի կարծիքին է ներկայացվել ««Սոցիալական աջակցության մասին» օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» թիվ 47-Ա որոշման հավելվածի 18-րդ կետի կատարումն ապահովելու նպատակով «Տարեց կամ հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրման կարգերից և պայմաններից բխող ընթացակարգերը և օրինակելի ձևաթղթերը հաստատելու մասին» ԱՍՀ նախարարի հրամանի նախագիծը, որով սահմանված է, որ տարեց կամ հաշմանդամություն ունեցող անձի խնամքի տրամադրումը բացառող հանգամանք է ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված խնամքը տրամադրելու մերժման հիմք հանդիսացող հիվանդություններից որևէ մեկի ախտորոշումը:

Մինչդեռ, նախագծով նախատեսված չէ նման հիվանդություններից որևէ մեկի ախտորոշման պարագայում տարեց և հաշմանդամություն ունեցող անձանց խնամք տրամադրելու հնարավորություն նախատեսող մեխանիզմ, ուղղորդման կարգ և այլն:

Նշվածի հաշվառմամբ՝ Մարդու իրավունքների պաշտպանն առաջարկել է նախատեսել համապատասխան կարգավորումներ, այն հաշվառմամբ, որպեսզի հստակեցվի, թե ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված խնամքը տրամադրելու մերժման հիմք հանդիսացող հիվանդություններից որևէ մեկի ախտորոշման պարագայում՝ ինչպես է ապահովվելու տարեց և հաշմանդամություն ունեցող անձանց համայնքահեն ծառայությունների տրամադրման հնարավորությունն ու շարունակականությունը:

Վերոգրյալի հետ մեկտեղ, հարկ է նշել, որ 2025 թվականի ընթացքում ՄԻՊ աշխատակազմ բողոքներ են ստացվել՝ շուրջօրյա խնամքի հաստատություն տեղավորելու հետ կապված:

Բողոք ներկայացրած անձը հայտնել է, որ 2023 թվականի սեպտեմբերի 27-ին իր ընտանիքը, ինչպես նաև իր քույրը բռնի տեղահանվել են Հայաստան: Հավելել է, որ տեղահանումից հետո քույրը բնակություն է հաստատել «Հաղթանակ» շուրջօրյա խնամքի կենտրոնում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերջինս առողջական խնդիրներով պայմանավորված՝ խնամքի անհրաժեշտություն է ունեցել: Նշել է նաև, որ Պաշտպանին դիմելու օրվա դրությամբ քույրը գտնվում է խնամքի կենտրոնում: Հավելել է, որ խնամքի կենտրոնի աշխատակիցն իրեն տեղեկացրել է, որ քույրը մոտակա ժամանակում դուրս է գրվելու կենտրոնից, քանի որ վերջինս չի

հանդիսանում տարեց կամ հաշմանդամություն ունեցող անձ: Բողոք ներկայացրած անձը տեղեկացրել է նաև, որ իր ընտանիքը սոցիալապես անապահով է, բնակվում է փոքր մակերեսով բնակարանում՝ վարձակալական հիմունքներով, ուստի չեն կարող քրոջ խնամքը այդտեղ կազմակերպել: Բացի այդ, նշել է, որ քույրն ունի մի շարք առողջական խնդիրներ, դժվարությամբ է տեղաշարժվում: Հայտնել է նաև, որ քրոջը տրամադրվել է չորս օր ժամանակ՝ խնամքի կենտրոնից դուրս գրելու համար: Խնդրել է ՄԻՊ աջակցությունը խնամքի հաստատությունում բնակությունը շարունակելու հարցում: Պաշտպանի ներկայացուցիչը խնդիրը քննարկել է խնամքի հաստատության իրավասու աշխատակցի հետ և առաջարկել շահառուի՝ անձի ֆունկցիոնալության գնահատում իրականացնելու գործընթաց կազմակերպել:

Արդյունքում, պայմանավորվածություն է ձեռք բերվել այն մասին, որ անձը կշարունակի բնակվել խնամքի կենտրոնում, որին զուգահեռ կկազմակերպվի նաև ֆունկցիոնալության գնահատման գործընթացը: Բողոքի ընթացքի նկատմամբ իրականացվել է հետագա հետևողական աշխատանք, արդյունքում, ՄԻՊ աշխատակազմ լրացուցիչ տեղեկություն է ստացվել առ այն, որ անձը շարունակվում է բնակվել խնամքի կենտրոնում, ինչպես նաև սկսվել է անձի ֆունկցիոնալության գնահատման գործընթաց:

Հաշվետու տարում ՄԻՊ-ին է հասցեագրվել ներկայացվող խնդրին առնչվող մեկ այլ բողոք ևս, որով անձը տեղեկացրել է, որ իր 85-ամյա մայրը տևական ժամանակ բուժօգնություն է ստանում բժշկական կենտրոններից մեկի վերակենդանացման բաժանմունքում: Հավելել է, որ բժշկական կենտրոնից իրեն տեղեկացրել են մորը դուրսգրելու անհրաժեշտության մասին, քանի որ այլևս բուժօգնության կարիք առկա չէ: Մինչդեռ, ըստ բողոք ներկայացրած անձի, տնային պայմաններում վերջինիս խնամքի կազմակերպումն անհնար է, քանի որ սնվում է արհեստական կերակրման զոնդով և գտնվում է անգիտակից վիճակում, իսկ ընտանիքի անդամները չեն տիրապետում անհրաժեշտ հմտությունների մոր խնամքը պատշաճ կազմակերպելու համար: Նշել է նաև, բավարար ֆինանսական միջոցներ չունի մորը մասնավոր խնամքի կենտրոն տեղավորելու համար: Հավելել է, որ մայրը չունի հաշմանդամության խումբ, որն ունենալու պարագայում՝ բուժօգնությունն անվճար կտրամադրվեր: Մինչդեռ, բժշկական կենտրոնում և Միասնական սոցիալական ծառայությունում իրեն տեղեկացրել են, որ մայրն անձի ֆունկցիոնալության գնահատում կարող է անցնել երեք ամիս անց: Բողոք ներկայացրած անձը լրացուցիչ տեղեկատվություն է տրամադրել նաև այն մասին, որ մորը խնամքի հաստատություն տեղավորելու նպատակով նույնպես դիմել է ՄՍԾ, որտեղից հայտնել են, որ ներկա առողջական վիճակի պայմաններում՝ մայրը համաձայնություն չի կարող տրամադրել իրեն խնամքի հաստատություն տեղավորելու վերաբերյալ[426], ուստի հետագա ընթացքի կազմակերպումը ներկայում հնարավոր չէ:

Բողոք ներկայացրած անձը խնդրել է Պաշտպանի աջակցությունը պետական աջակցությամբ մորը խնամքի հաստատություն տեղավորելու և հաշմանդամություն սահմանելու հարցերում:

Բողոքի քննարկման շրջանակում Պաշտպանը գրություն է հասցեագրել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն: Ի պատասխան՝

[426] Ըստ ՀՀ կառավարության 2025 թվականի նոյեմբերի 14-ի թիվ 1614-Ն որոշման՝ խնամք տրամադրվում է խնամք հայցող անձի կամ նրա ներկայացուցչի (լիազորագրի առկայությամբ՝ առանց նոտարական վավերացման), կամ դատարանի կողմից անգործունակ ճանաչված լինելու դեպքում՝ նրա խնամակալի ներկայացրած դիմումի հիման վրա:

տրամադրվել է տեղեկատվություն առ այն, որ ՄՍԾ սոցիալական աշխատողի կողմից 2025 թվականի նոյեմբերի 21-ին կատարվել է այցելություն բժշկական կենտրոն՝ տարեցի սոցիալական կարիքների գնահատումն ու խնամքի ուղեգրման գործընթացն իրականացնելու նպատակով: Տարածքային կենտրոնն, առաջնորդվելով ՀՀ կառավարության 2025 թվականի նոյեմբերի 14-ի թիվ 1614-Ն որոշմամբ, 2025 թվականի դեկտեմբերի 2-ին որոշում է կայացրել 85-ամյա տարեցին բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի հաստատությունում խնամք տրամադրելու վերաբերյալ և հաշվառել է համապատասխան հերթացուցակում, սակայն հետագայում որդին տեղեկացրել է, որ 2025 թվականի դեկտեմբերի 8-ին մայրը մահացել է բժշկական կենտրոնում, ինչի հիման վրա վերջինս հանվել է հերթացուցակից:

Մյուս դեպքում ՄԻՊ-ին դիմած 70-ամյա անձը հայտնել է, որ ամուսնալուծված է, բնակվում է տղայի ընտանիքի հետ, որոնց անդամների հետ ունի լարված հարաբերություններ: Դեռևս 2022 թվականի հոկտեմբերի 5-ին դիմել է Միասնական սոցիալական ծառայություն, իրեն շուրջօրյա խնամքի կենտրոնում խնամք տրամադրելու հարցով, սակայն մերժվել է՝ խնամքի կարիք չունենալու և կյանքի դժվարին իրավիճակում հայտնված չլինելու հիմնավորմամբ: Հավելել է, որ 2025 թվականին կրկին դիմել և ընդգրկվել է խնամք հայցող անձանց հերթացուցակի 25-րդ տեղում: Խնդրել է Պաշտպանի աջակցությունը շուրջօրյա խնամքը հնարավոր սեղմ ժամկետում կազմակերպելու հարցում:

Պաշտպանի ներկայացուցիչը հարցը քննարկել է Միասնական սոցիալական ծառայության իրավասու ներկայացուցչի հետ: Վերջինս տեղեկացրել է, որ արտահերթ ընդունելությունը հնարավոր է օրենսդրությամբ սահմանված կարգով խնամողներ և բնակության վայր չունեցող այն խնամք հայցող անձանց համար, ում խնամքի ծառայություն չտրամադրելը կարող է վտանգավոր լինել նրանց առողջության կամ կյանքի համար, ինչպես նաև բնակության վայր ունեցող, սակայն խնամողներ չունեցող, ինքնասպասարկման ապահովման ունակությունները և ինքնուրույն տեղաշարժվելու կարողությունները մասամբ կամ ամբողջությամբ սահմանափակված խնամք հայցող անձանց համար: Հավելել է, որ կարիքի գնահատման արդյունքում՝ շահառուն չի ընդգրկվել արտահերթ ընդունելության ցուցակում:

Մեկ այլ բողոքով անձը հայտնել է, որ եղբայրն ունի խորը ֆունկցիոնալության սահմանափակում (81%), աուտիզմ և ծանր մտավոր հետամնացություն: Նշել է նաև, որ «նրա դրսևորած ագրեսիվ վարքը, սեռական բնույթի շեղվածությունն անմիջական վտանգ են ստեղծում ընտանիքի անդամների, հատկապես՝ երեխաների կյանքի ու առողջության համար»: Հավելել է, որ եղբայրը գրանցված է «Վարդենիսի շուրջօրյա մասնագիտացված խնամքի կենտրոն» ՊՈԱԿ-ի հերթացուցակում, սակայն վերջինիս տեղափոխումը ձգձգվում է՝ ազատ տեղերի բացակայության պատճառով: Խնդրել է ՄԻՊ աջակցությունը եղբորն արտահերթ կարգով մասնագիտացված շուրջօրյա խնամքի կենտրոն տեղափոխելու հարցում:

Բարձրացված հարցի կապակցությամբ Պաշտպանը գրություն է հասցեագրել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն՝ առաջարկելով քննարկել անձին արտահերթ կարգով մասնագիտացված շուրջօրյա խնամքի կենտրոն տեղափոխելու հարցը: Ի պատասխան՝ հայտնել են, որ անձը Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնի կողմից ուղեգրվել է «Ձորակ» շուրջօրյա մասնագիտացված խնամքի կենտրոն ՊՈԱԿ:

Վերոգրյալը փոխանցվել է բողոք ներկայացրած անձին: Վերջինս հաստատել է նշված տեղեկատվությունը և շնորհակալություն հայտնել Պաշտպանին և նրա աշխատակազմին կատարած աշխատանքի համար:

Սույն տարեկան հաղորդման կազմման աշխատանքների շրջանակում Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն կատարված՝ 2025 թվականին տարեց և/կամ հաշմանդամություն ունեցող անձանց տուն-ինտերնատներ ուղեգրելու ընթացակարգը բարելավելու նպատակով ձեռնարկված քայլերի մասին Պաշտպանի կողմից կատարված հարցադրմանն ի պատասխան՝ տրամադրվել է տեղեկատվություն այն մասին, որ 2025 թվականի նոյեմբերի 14-ին ընդունվել է ՀՀ կառավարության թիվ 1614-Ն որոշումը, ինչի արդյունքում հստակեցվել և պարզեցվել են խնամքի տրամադրման ընթացակարգերը: Միաժամանակ, մշակվել և շրջանառության մեջ է դրվել «Տարեց կամ հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրման կարգերից և պայմաններից բխող ընթացակարգերը և օրինակելի ձևաթղթերը հաստատելու մասին» ԱՍՀ նախարարի հրամանի նախագիծը, որի ընդունումը կհանգեցնի խնամքի ծառայությունների ուղեգրման գործընթացների ստանդարտացման, աշխատանքների օպտիմալացման և արդյունավետության, հաշվետվողականության և թափանցիկության բարձրացման: Ուղեգրման գործընթացի շրջանակում նախատեսվող թվայնացումը ևս կհանգեցնի գործընթացի շղթան ապահովող մի շարք օղակների ավտոմատացման:

Վերոգրյալի համատեքստում հարկ է արձանագրել, որ անհրաժեշտ է կատարել տարեց կամ հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրման գործընթացի շարունակական գնահատում և ըստ անհրաժեշտության՝ քննարկման առարկա դարձնել ոլորտը կարգավորող իրավական ակտերը կատարելագործելու հարցերը:

2025 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի անմիջական ուշադրության ներքո շարունակել են գտնվել տարեցների հիմնարար իրավունքներին առնչվող միջազգային իրավական փաստաթղթերի այն դրույթները, որոնք չեն վավերացվել ՀՀ-ի կողմից: Այսպես, օրինակ՝ Հայաստանի Հանրապետությունը 2004 թվականին վավերացրել է Եվրոպական սոցիալական (վերանայված) խարտիայի մի շարք հոդվածներ, սակայն չի վավերացրել ու չի ստանձնել խարտիայի 23-րդ հոդվածով նախատեսված պարտավորությունները, որոնք վերաբերում են տարեցների սոցիալական պաշտպանության հարցերին:

Պաշտպանի՝ 2025 թվականի տարեկան հաղորդման կազմման աշխատանքների շրջանակում 23-րդ հոդվածը վավերացնելու համար ձեռնարկված միջոցների առնչությամբ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանն ուղղված հարցմանն ի պատասխան՝ ներկայացվել է տեղեկատվություն առ այն, որ Եվրոպական սոցիալական (վերանայված) խարտիայի՝ տարեց անձանց իրավունքների սոցիալական պաշտպանության մասին 23-րդ հոդվածը վավերացնելու հարցը մշտապես գտնվում է ՀՀ կառավարության, մասնավորապես՝ նախարարության ուշադրության ներքո: 2025 թվականին ակտիվ նախապատրաստական աշխատանքներ են տարվել խարտիայի 23-րդ հոդվածի դրույթները կյանքի կոչելու ուղղությամբ, ինչը հնարավորություն կընձեռի Հայաստանի Հանրապետությանը վավերացնել նշված հոդվածը:

Խարտիայի 23-րդ հոդվածն անդրադառնում է տարբեր ոլորտներում առկա տարիքային խտրականությանը, մասնավորապես՝ հարմարությունների և ծառայությունների հասանելիության, առողջապահության, կրթության, ապահովագրության և բանկային ծառայությունների, քաղաքականության մշակմանը, քաղաքացիական երկխոսության մասնակցությանը, ռեսուրսների և հնարավորությունների բաշխմանը:

Վերը նշված դրույթների ուղղությամբ բավականին աշխատանքներ են կատարվել օրենսդրության կատարելագործման ուղղությամբ. մշակվել և ընդունվել է «Սոցիալական աջակցության մասին» նոր օրենքը, օրենքից բխող մի շարք ենթաօրենսդրական ակտեր: Մշակվել է 2024 թվականին ընդունված «Հայաստանի Հանրապետության Ժողովրդագրական իրավիճակի բարելավման 2024-2040 թվականների ռազմավարության» իրականացման գործողությունների պլանի նախագիծը, որտեղ մեծ ուշադրություն է դարձվում տարեցների զբաղվածության ապահովման հարցերին, իրավունքների իրազեկմանը, տարիքային խտրականության դրսևորումների բացառմանը և այլն:

Խարտիայի 23-րդ հոդվածը նաև պահանջում է, որ մասնակից պետությունները համապատասխան միջոցներ ձեռնարկեն տարեցների բռնության դեմ: Այս միջոցները կարող են լինել օրենսդրական կամ այլ կերպ և պետք է թույլ տան պետություններին գնահատել խնդրի չափը և բարձրացնել տարեցների նկատմամբ բռնությունը և անտեսումը արմատախիլ անելու անհրաժեշտության մասին իրազեկվածությունը:

2025 թվականին ԱՍՀ նախարարի հրամանով հաստատվեց «Բնակչության սոցիալական պաշտպանության տարեց կամ հաշմանդամություն ունեցող անձանց շուրջօրյա խնամքի հաստատություններում շահառուների նկատմամբ խանգարումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի մասին անանուն հաղորդումներ ներկայացնելու ընթացակարգը», ինչը ևս մեկ քայլ է վերը նշված դրույթի իրականացման ճանապարհին:

Ինչ վերաբերում է տարեցների առողջության պահպանմանը, ապա խարտիայի 23-րդ հոդվածի պահանջների համաձայն՝ տարեցների համար պետք է գոյություն ունենան հատուկ մշակված առողջապահական ծրագրեր ու ծառայություններ (մասնավորապես՝ առաջնային խնամքը, ներառյալ բնակարանային բուժքույրը կամ խնամքը)՝ վերջինիս վերաբերյալ ուղեցույցների հետ մեկտեղ: Բացի այդ, պետք է լինեն հոգեկան առողջության ծրագրեր տարեցների հոգեբանական խնդիրների լուծման համար:

Հավելել են, որ 2025 թվականի վերջին հանրապետությունում ներդրվեց առողջապահության համընդհանուր ապահովագրության համակարգ, որի առաջին փուլում ընդգրկվեցին 65+ տարիքի անձինք, որոնց ապահովագրավճարն ամբողջությամբ հատուցում է պետությունը:

Խարտիայի 23-րդ հոդվածն ամրագրում է նաև դրույթ տարեցներին համապատասխան ռեսուրսներով ապահովման վերաբերյալ, ինչը հնարավորություն կտա նրանց արժանապատիվ կյանք վարել և ակտիվ մասնակցություն ունենալ հասարակական, սոցիալական և մշակութային կյանքին: Համարժեք ռեսուրսների իրավունքի առաջնային ուշադրությունը կենսաթոշակների վրա է: Կենսաթոշակները և պետական այլ նպաստները պետք է բավարար լինեն, որպեսզի տարեցներին հնարավորություն տան վարել «արժանապատիվ կյանք» և ակտիվ մասնակցություն ունենան հասարակական, սոցիալական և մշակութային կյանքում: Այս տեսանկյունից կարևոր քայլ էր 2024-2025թթ. ներդրված, իսկ 2026 թվականից առավել ընդլայնված ծավալով գործող՝ կենսաթոշակառուների կողմից անկանխիկ եղանակով կատարած առևտրի դիմաց հետվճարի տրամադրման համակարգը, ինչը որոշ չափով կբարելավի կենսաթոշակառուների ֆինանսական վիճակը ու կնպաստի նրանց կյանքի որակի բարելավմանը:

Պաշտպանը կարևորում է Խարտիայի 23-րդ հոդվածի վավերացման ուղղությամբ պետության կողմից գործադրված ջանքերը, այնուհանդերձ հարկ է համարում ընդգծել, որ անհրաժեշտ է արագացնել վավերացման գործընթացը: Նշվածի հետ մեկտեղ,

Պաշտպանն ընդգծում է իրազեկման աշխատանքների կարևորությունը՝ հանրության և հատկապես տարեց անձանց շրջանում խարտիայով երաշխավորված իրավունքների մասին իրական պատկերացում ձևավորելու համար: Այս հարցում առանցքային է նաև զանգվածային լրատվության միջոցների դերակատարությունը:

Տարեցների սոցիալական իրավունքների, ինչպես նաև սոցիալական երաշխիքների պաշտպանության տեսանկյունից անհրաժեշտ է նաև.

- ✓ *վերանայել օրենսդրությամբ նախատեսված «տարեց» համարվող անձանց տարիքային շեմը,*
- ✓ *քննարկման առարկա դարձնել ՀՀ կառավարության 2025 թվականի նոյեմբերի 14-ի թիվ 1614-Ն որոշմամբ սահմանված հիվանդությունների ցանկը վերանայելու հնարավորության հարցը, ինչպես նաև որոշմամբ նախատեսված հիվանդություններ ունեցող անձանց խնամքը կազմակերպելու նպատակով այլընտրանքային խնամքի հաստատություններ և (կամ) ներկայիս խնամքի հաստատություններում հատուկ տարածքներ առանձնացնելու հնարավորությունը,*
- ✓ *տարեց անձին շուրջօրյա խնամքի կենտրոնում արտահերթ ընդունելությունն առավել սեղմ ժամկետում կազմակերպելու նպատակով նախատեսել առավել ճկուն կառուցակարգեր:*

ԲԱԺԻՆ 17. ՄԱՔՈՒՐ, ԱՌՈՂՋ ԵՎ ԿԱՅՈՒՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ ԱՊՐԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ

Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր Ասամբլեան և ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհուրդը ճանաչել են մաքուր, առողջ և կայուն շրջակա միջավայրը՝ որպես մարդու իրավունք[427]:

Սահմանադրությամբ սահմանված է պետության պարտավորությունը խթանելու շրջակա միջավայրի պահպանությունը, բարելավումը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը՝ ղեկավարվելով կայուն զարգացման սկզբունքով և հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև: Միաժամանակ, Սահմանադրությամբ յուրաքանչյուր անձի համար սահմանված է պարտավորություն հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին:

Նշվածի վերլուծությունից հետևում է, որ Սահմանադրությամբ պետությունն ունի միայն շրջակա միջավայրի պահպանությունը, բարելավումը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը խթանելու պարտավորություն: Մինչդեռ՝ մաքուր, առողջ և կայուն շրջակա միջավայրը կարևոր նախապայման է մարդու՝ Սահմանադրությամբ ամրագրված մյուս իրավունքների երաշխավորման համար: Ուստի, հաշվի առնելով վերոգրյալը՝ Մարդու իրավունքների պաշտպանը կարևորում է, որ Սահմանադրությամբ հստակ սահմանվի մաքուր, առողջ և կայուն շրջակա միջավայրում ապրելու մարդու իրավունքը և պետության պարտավորությունը՝ ապահովելու այդ իրավունքի պատշաճ իրացումը:

Ընդ որում, հատկանշական է, որ ՄԱԿ Գլխավոր Ասամբլեայի 2025 թվականի հունիսի 26-ի A/HRC/60/11 հանձնարարականով, նույնպես, պետությանը ներկայացվել է առաջարկություն առ այն, որ անհրաժեշտ է ուժեղացնել շրջակա միջավայրի պաշտպանության կիրարկումը՝ ներառելով մաքուր, առողջ և կայուն միջավայրի իրավունքը Սահմանադրության մեջ[428]:

Մարդու իրավունքների պաշտպանը, ղեկավարվելով Մարդու իրավունքների ազգային ինստիտուտների գլոբալ դաշինքի (GANHRI) «Մարդու իրավունքների ազգային հաստատությունների համար՝ մարդու իրավունքների կլիմայի փոփոխության հարցերի հասցեագրման վերաբերյալ գործնական ուղեցույց»[429]-ով նշված գործիքակազմով և մեթոդաբանությամբ, 2025 թվականին շարունակել է մշտադիտարկել և տարբեր ձևաչափերով հասցեավորել մաքուր, առողջ և կայուն շրջակա միջավայրում ապրելու իրավունքի երաշխավորման հետ կապված խնդիրները, ներկայացնել դրանց լուծմանն ուղղված առաջարկություններ, իրականացնել իրազեկման միջոցառումներ՝ այդ գործընթացում ներգրավելով երեխաների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների և այլն:

---

[427] Տե՛ս Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր ասամբլեայի «Մարդու՝ մաքուր, առողջ և կայուն շրջակա միջավայր ունենալու իրավունքը» վերտառությամբ թիվ A/RES/76/300 բանաձևը, 2022 թվականի հուլիսի 28, հասանելի է https://documents.un.org/doc/undoc/gen/n22/442/77/pdf/n2244277.pdf հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ: Տե՛ս Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված և մարդու իրավունքների խորհուրդի կողմից հաստատված թիվ A/HRC/RES/48/13 բանաձև, 2021 թվականի հոկտեմբերի 8, հասանելի է https://docs.un.org/en/A/HRC/RES/48/13 հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

[428] ՄԱԿ Գլխավոր Ասամբլեայի 2025 թվականի հունիսի 26-ի A/HRC/60/11 հանձնարարականը հասանելի է https://docs.un.org/en/A/HRC/60/11 հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

[429] Ուղեցույցը հասանելի է https://ganhri.org/wp-content/uploads/2022/10/Practical-Guidance-for-NHRIs-on-Addressing-Climate-Change_EN.pdf հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

Այսպես, օրինակ, Մարդու իրավունքների պաշտպանի նախաձեռնությամբ և ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ հունիսի 1-2-ը անցկացվել է Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր երեխաների իրավունքների պաշտպանության հարցերով հասարակական խորհրդի հերթական նիստը, որի պանելային քննարկումներից մեկը նվիրված է եղել հենց շրջակա միջավայրի ազդեցությանը՝ երեխաների իրավունքների իրացման վրա[430]: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի և Եվրոպայի խորհրդի համագործակցությամբ հունիսի 17-ին տեղի է ունեցել միջազգային համաժողով «Բիզնես և մարդու իրավունքներ. Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն» խորագրով, որը կազմակերպվել է «Մարդու իրավունքներ և շրջակա միջավայրի համար պատասխանատու բիզնես պրակտիկա» ծրագրի շրջանակում: Միջոցառման պանելի ընթացքում քննարկվել են միջազգային ներդրումների հնարավոր ազդեցությունը մարդու իրավունքների և շրջակա միջավայրի վրա, ինչպես նաև իրավական կարգավորումների անհրաժեշտությունը և դրանց ներառման հնարավորությունները ներդրումային քաղաքականության շրջանակում[431]: Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանի նախաձեռնությամբ և Ազգային ժողովի մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի հետ համագործակցությամբ մարտի 21-ին անցկացվել են խորհրդարանական լսումներ «Հանրային աղմուկը՝ որպես համակեցության կանոնների պահպանման խոչընդոտ, գործող իրավական կարգավորումներ. Օրենսդրական լուծումներ» թեմայով[432] և այլն:

Մշտադիտարկումների, ստացված դիմումների ու բողոքների ուսումնասիրության, տարբեր ձևաչափով անցկացված քննարկումների արդյունքում, Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ 2025 թվականին շարունակել են արդիական մնալ մի շարք համակարգային խնդիրներ, որոնց անդրադարձ է կատարվել նաև նախորդ տարիների տարեկան հաղորդումներում[433]:

Մասնավորապես, արձանագրվել է, որ 2025 թվականին շարունակել են արդիական մնալ.

- շրջակա միջավայրի պահպանության ոլորտում հանրության պատշաճ ներգրավման ու արդարադատության մատչելիության երաշխավորման հետ կապված խնդիրները,
- անկախ և անաչառ արտադատական մշտադիտարկման արդյունավետ կառուցակարգի ներդրման հետ կապված խնդիրները,
- օդի աղտոտվածության հետ կապված խնդիրները,

---

[430]Տեղեկատվությունը հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3413 հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

[431] Տեղեկատվությունը հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3423 հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

[432] Տեղեկատվությունը հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3318 հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

[433] Տե՛ս 2024 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջեր 745-767, հասանելի է https://ombuds.am/images/files/4d1335361f1f7e9fbcc1cfc10679701e.pdf հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

• հանրային աղմուկի նվազեցմանն ուղղված արդյունավետ մեխանիզմների ներդրման հետ կապված խնդիրները,

• ընդերքօգտագործման ոլորտում բնությունը և շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պաշտպանության, թափոնների, ջրային ռեսուրսների կառավարման, անօրինական անտառահատումների դեմ պայքարի արդյունավետ կառուցակարգերի ներդրման հետ կապված խնդիրները,

• շրջակա միջավայրի, կլիմայի փոփոխության և աղետների ռիսկի նվազեցման քաղաքականություններում մարդու իրավունքների վրա հիմնված և գենդերային առումով զգայուն մոտեցումների կիրառման հետ կապված խնդիրները,

• շրջակա միջավայրի պահպանության հարցերի վերաբերյալ հանրային իրազեկվածության մակարդակի բարձրացման հետ կապված խնդիրները և այլն:

Այսպես, օրինակ, շրջակա միջավայրի պահպանության ոլորտում հանրության պատշաճ ներգրավման ու արդարադատության մատչելիության երաշխավորման տեսանկյունից խիստ մտահոգիչ է այն, որ 2025 թվականին «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի կարգավորումները շարունակում են չհամապատասխանել Օրհուսի կոնվենցիային, այն պատճառով, որ հանրային լսումների համատեքստում չեն սահմանում հանրության մասնակցության առավել ճկուն ժամկետներ: 2025 թվականին չեն նվազեցվել շրջակա միջավայրի պահպանության հարցերով դատարան դիմելու համար հասարակական կազմակերպություններին ներկայացվող պահանջները, չեն ներդրվել հանրային մասնակցության դեմ ռազմավարական հայցերի (SLAPP), այդ թվում՝ հանքարդյունաբերության ոլորտում նման հայցերի կանխարգելման արդյունավետ կառուցակարգեր:

Խնդրահարույց է, որ 2025 թվականին չի ներդրվել անկախ և անաչառ արտադատական մշտադիտարկման արդյունավետ կառուցակարգ:

Մարդու իրավունքների պաշտպանը խիստ մտահոգիչ է համարում այն, որ Հաշվեքննիչ պալատի ընթացիկ եզրակացության համաձայն՝ 2025 թվականին համադրելի երկրների համեմատությամբ, Հայաստանի Հանրապետությունում մթնոլորտային օդի աղտոտվածության մակարդակը հարաբերականորեն բարձր է[434]: Օդի աղտոտվածության հետ կապված խնդիրը արձանագրվել է նաև Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկումների և ստացված դիմումների ու բողոքների ուսումնասիրության արդյունքում: Ընդ որում, խնդիրն առավել տարածված է Երևան քաղաքում:

Իրավասու մարմինների տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2025 թվականին ձեռնարկվել են մի շարք միջոցառումներ՝ ուղղված օդի աղտոտվածության նվազեցմանը: Այսպես, օրինակ, Երևանի քաղաքապետարանի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ մշակվել է Երևան քաղաքում օդի աղտոտվածության նվազեցման քառամյա ծրագիր, որի նպատակն է նվազեցնել արտանետումները աղտոտման հիմնական աղբյուրներից, բարելավել օդի որակի մոնիթորինգի համակարգը: Երևանի քաղաքապետարանի կողմից շինարարական հրապարակներում տեղադրվել են սարքեր, որոնց միջոցով դիտարկվում է փոշու մանր մասնիկների՝ PM2.5-ի և PM10-ի պարունակությունը և Երևան քաղաքի օդի աղտոտվածության ցուցանիշները նվազեցնելու նպատակով աշխատակազմի բնապահպանության վարչության մասնագետների կողմից պարբերաբար իրականացվում է օդի աղտոտման առկա աղբյուրների մշտադիտարկում՝

[434] Տե՛ս, ՀՀ հաշվեքննիչ պալատի ընթացիկ եզրակացությունն օդի աղտոտվածության նվազեցման վերաբերյալ, էջ 9, հասանելի է https://armsai.am/sites/default/files/program/2025/Report%2027A%202025.pdf հղումով, 2026 թվականի մարտի 31-ի դրությամբ:

օրենսդրությամբ սահմանված կարգով պարտադրելով տնտեսվարող սուբյեկտներին ապահովել օդի աղտոտման նվազեցման սահմանված միջոցառումները և այլն: ՀՀ շրջակա միջավայրի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ հաստատվել է մթնոլորտային օդի պահպանության բնագավառում 2025-2030 թվականների համալիր միջոցառումների ծրագիրը: Մթնոլորտային օդի աղտոտվածության խնդիրների լուծման նպատակով ՀՀ վարչապետի 2025 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 1145-Ա որոշմամբ ստեղծվել է միջգերատեսչական աշխատանքային խումբ և ներկայումս մշակվում են մեխանիզմներ շինարարության և հանքարդյունաբերության բնագավառում անընդհատ, ավտոմատ չափումների միջոցով մթնոլորտային օդի մշտադիտարկման սարքավորումների կիրառման պահանջ սահմանելու վերաբերյալ և այլն:

Նշվածի առնչությամբ Մարդու իրավունքների պաշտպանը հատուկ ընդգծում է, որ անհրաժեշտ է ձեռնարկել անհետաձգելի և առավել գործուն միջոցներ՝ նվազեցնելու օդի աղտոտվածությունը Հայաստանի Հանրապետությունում և, հատկապես, Երևանում: Նշվածը խիստ կարևոր է, հատկապես, այն բանի հաշվառմամբ, որ օդի աղտոտվածությունը համարվում է մարդու առողջության վրա ազդող ամենամեծ բնապահպանական ռիսկն աշխարհում[435]:

Աղմուկը նույնպես համարվում է շրջակա միջավայրի լուրջ խնդիր, առողջության համար առաջնային բնապահպանական ռիսկ բոլոր տարիքային և սոցիալական խմբերի համար: Բարձր մակարդակի աղմուկի երկարատև ազդեցությունը վնասում է մարդու առողջությունն ու բարեկեցությունը, ինչը մեծ մարտահրավեր է ինչպես հասարակության, այնպես էլ քաղաքականություն մշակողների համար: Աղմուկը ծագում է ավանդական աղբյուրներից, ինչպիսիք են ավտոճանապարհները, երկաթուղիները, օդանավակայանները և արդյունաբերական ձեռնարկությունները: Սակայն բարձր աղմուկի մակարդակներ կարող են առաջանալ նաև կենցաղային կամ ժամանցային գործունեությունից:

Մարդու իրավունքների պաշտպանը խիստ մտահոգիչ է համարում այն, որ մշտադիտարկումների, դիմումների ու բողոքների ուսումնասիրության արդյունքում շարունակում են արձանագրվել աղմուկի անթույլատրելի մակարդակի հետ կապված խնդիրներ: Խնդիրը տարածված է ինչպես Երևանում, այնպես էլ ՀՀ մարզերում:

Խնդիրները, հիմնականում, վերաբերել են ինչպես հանրային սննդի օբյեկտներից, զվարճանքի վայրերից, ավտոլվացման կետերից, ռեստորաններից հնչող աղմուկին, այնպես էլ՝ շինարարական աղմուկին, նույնիսկ հանգստյան օրերին: Նշվածը պայմանավորված է նաև պատշաճ վերահսկողական մեխանիզմների բացակայությամբ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է գործուն միջոցներ ձեռնարկել, այդ թվում՝ օրենսդրական փոփոխություններ իրականացնել՝ ուղղված աղմուկը նվազեցնելուն ու պատշաճ վերահսկողական մեխանիզմների ներդրմանը:

Խիստ մտահոգիչ է այն, որ չնայած իրավասու մարմնի կողմից տրամադրած տեղեկատվության համաձայն՝ իրականացվել են մի շարք օրենսդրական փոփոխություններ ու գործնական քայլեր, սակայն 2025 թվականին շարունակվել են առկա լինել խնդիրներ՝ կապված ընդերքօգտագործման ոլորտում բնությունը և շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պաշտպանության, թափոնների, ջրային ռեսուրսների կառավարման, անօրինական անտառահատումների դեմ պայքարի արդյունավետ կառուցակարգերի բացակայության հետ:

[435] Տե՛ս ՄԱԿ-ի բնապահպանական ծրագիրը, հասանելի է https://www.unep.org/explore-topics/air/about-air հղումով, 2026 թվականի մարտի 31-ի դրությամբ:

2025 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի ուշադրության ներքո են գտնվել հանքարդյունաբերության, այդ թվում՝ Ամուլսարի հանքավայրի շահագործման հետ կապված խնդիրները: Հարցի առնչությամբ Մարդու իրավունքների պաշտպանը հատուկ ուշադրություն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ Եվրոպայի խորհրդի «Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին» կոնվենցիայի (Բեռնի կոնվենցիայի) մշտական հանձնաժողովի՝ 2025 թվականի դեկտեմբերին տեղի ունեցած 45-րդ նիստի արդյունքում կազմված հաշվետվությամբ հանձնաժողովը խորը մտահոգություն է հայտնել շինարարական աշխատանքների առաջընթացի առնչությամբ՝ նշելով, որ այն հակասում է հանձնաժողովի 43-րդ և 44-րդ նիստերում ընդունված որոշումներին[436]:

Մարդու իրավունքների պաշտպանը կարևորում է, որ շրջակա միջավայրի, կլիմայի փոփոխության և աղետների ռիսկի նվազեցման քաղաքականություններում առաջնային դիտարկվի մարդու իրավունքների վրա հիմնված և գենդերային առումով զգայուն մոտեցումների կիրառման անհրաժեշտությունը: Խնդրին անդրադարձ է կատարվել նաև մի շարք միջազգային փաստաթղթերում: Այսպես, օրինակ, ՄԱԿ-ի երեխայի իրավունքների հարցերով կոմիտեի դիտարկումների համաձայն՝ անհրաժեշտ է ապահովել, որ երեխաների իրավունքների վրա ազդեցության գնահատումները կատարվեն՝ կլիմայի փոփոխության և աղետների ռիսկի կառավարմանն ուղղված քաղաքականության և ծրագրերի մշակման ու իրականացման գործընթացը հիմնավորելու համար, և որ երեխաները պատշաճ կերպով ներգրավվեն ինչպես գնահատման, այնպես էլ քաղաքականության մշակման գործընթացում:[437]

Շրջակա միջավայրի պահպանության ոլորտում առկա խնդիրների լուծման ու որոշումների կայացման հարցում հասարակության պատշաճ ներգրավվածության երաշխավորման տեսանկյունից խիստ կարևոր է թիրախային տարբեր խմբերի շրջանակներում շարունակական վերապատրաստումների ու իրազեկման արշավների իրականացումը:

Շրջակա միջավայրի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2025 թվականի ընթացքում շրջակա միջավայրի պահպանության որոշ հարցերի առնչությամբ իրականացվել են իրազեկման միջոցառումներ:

Հարցի առնչությամբ Մարդու իրավունքների պաշտպանն ընդգծում է, որ խիստ կարևոր է, որ այդ իրազեկման աշխատանքներն ընդգրկեն շրջակա միջավայրի պահպանության բոլոր ոլորտներն ու թիրախային բոլոր խմբերը, կրեն շարունակական ու ինստիտուցիոնալ բնույթ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ✓ **Սահմանադրությամբ հստակ սահմանել մաքուր, առողջ և կայուն շրջակա միջավայրում ապրելու մարդու իրավունքը և պետության պարտավորությունը՝ ապահովելու այդ իրավունքի պատշաճ իրացումը,**
- ✓ **միջոցներ ձեռնարկել երաշխավորելու՝ արդարադատության մատչելիությունը, այդ թվում՝ նվազեցնելով շրջակա միջավայրի պահպանության հարցերով դատարան դիմելու համար հասարակական կազմակերպություններին ներկայացվող պահանջները,**

---

[436] Տեղեկատվությունը հասանելի է https://rm.coe.int/tpvs23e-2025-report-45th-standing-committee-2766-5523-1250-1/48802a9d53 հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

[437] Առավել մանրամասն տե՛ս https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRC%2FC%2FARM%2FCO%2F5-6&Lang=en հղումով:

- ✓ միջոցներ ձեռնարկել հանրային մասնակցության դեմ ռազմավարական հայցերի (SLAPP), այդ թվում՝ հանքարդյունաբերության ոլորտում նման հայցերի կանխարգելման արդյունավետ կառուցակարգերի ներդրման ուղղությամբ,
- ✓ միջոցներ ձեռնարկել՝ երաշխավորելու՝ շրջակա միջավայրի հարցերի վերաբերյալ հանրության պատշաճ ներգրավվածության ապահովումը, այդ թվում՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի կարգավորումները Օրհուսի կոնվենցիային համապատասխանեցնելու ուղղությամբ,
- ✓ գործուն միջոցներ ձեռնարկել՝ երաշխավորելու անկախ և անաչառ արտադատական մշտադիտարկման արդյունավետ կառուցակարգի ներդրման ուղղությամբ,
- ✓ անհետաձգելի և առավել գործուն միջոցներ ձեռնարկել՝ նվազեցնելու օդի աղտոտվածությունը Հայաստանի Հանրապետությունում, այդ թվում՝ Երևանում,
- ✓ գործուն միջոցներ ձեռնարկել, այդ թվում՝ օրենսդրական փոփոխություններ իրականացնել՝ ուղղված աղմուկը նվազեցնելուն ու պատշաճ վերահսկողական մեխանիզմների ներդրմանը,
- ✓ միջոցներ ձեռնարկել երաշխավորելու՝ շրջակա միջավայրի, կլիմայի փոփոխության և աղետների ռիսկի նվազեցման քաղաքականություններում մարդու իրավունքների վրա հիմնված և գենդերային առումով զգայուն մոտեցումների կիրառումը,
- ✓ միջոցներ ձեռնարկել՝ ընդերքօգտագործման ոլորտում բնության և շրջակա միջավայրի՝ վնասակար ազդեցություններից պաշտպանության, թափոնների, ջրային ռեսուրսների կառավարման, անօրինական անտառահատումների դեմ պայքարի արդյունավետ կառուցակարգերի ներդրման ուղղությամբ,
- ✓ միջոցներ ձեռնարկել՝ երաշխավորելու, որ շրջակա միջավայրի պահպանության հարցերի վերաբերյալ իրազեկման աշխատանքներն ընդգրկեն շրջակա միջավայրի պահպանության բոլոր ոլորտներն ու թիրախային բոլոր խմբերը, այդ աշխատանքները կրեն շարունակական ու ինստիտուցիոնալ բնույթ:

ԲԱԺԻՆ 18. ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության առանցքային ուղղություններից է գործարարության ոլորտում մարդու իրավունքների պաշտպանությունը և խթանումը: Մարդու իրավունքների պաշտպանի մանդատն այս ոլորտում ընդգրկում է ինչպես գործարարների շահերի պաշտպանությանը, այնպես էլ՝ տնտեսական գործունեության ազատության երաշխավորմանը վերաբերող հարցերը:

2025 թվականին Պաշտպանի անմիջական ուշադրության ներքո շարունակել են գտնվել գործարարության ոլորտում կանանց իրավունքների պաշտպանության և խթանման հետ կապված հարցերը: Հաշվետու տարում Մարդու իրավունքների պաշտպանը հրապարակել է արտահերթ զեկույց՝ ***«Կանանց տնտեսական իրավունքների իրացման երաշխիքներն ու խոչընդոտները Հայաստանում»*** վերտառությամբ[438]: Զեկույցը պատրաստվել է «Լիբերալ քաղաքականության ինստիտուտ» հասարակական կազմակերպության հետ համագործակցությամբ՝ Հայաստանի Հանրապետությունում Նիդերլանդների Թագավորության դեսպանության օժանդակությամբ իրականացված «Հզորացնելով կանանց իրավունքների պաշտպաններին Հայաստանում» ծրագրի շրջանակներում: Արտահերթ զեկույցի շրջանակում, ի թիվս այլնի, անդրադարձ է կատարվել Հայաստանում կանանց տնտեսական իրավունքների իրացման իրավական և ինստիտուցիոնալ երաշխիքներին և վերջիններիս իրավունքների իրացման հիմնական խոչընդոտներին: Մասնավորապես, ուսումնասիրության առարկա են դարձել կանանց տնտեսական իրավունքների վերաբերյալ ՀՀ օրենսդրությունն ու միջազգային պարտավորությունները, տվյալ ոլորտում պետական գերատեսչությունների գործառույթները, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների արձանագրումները, միջազգային կառույցների դիտարկումներն ու գնահատականները: Վեր են հանվել կանանց տնտեսական իրավունքների իրացման վրա ազդող սոցիալ-մշակութային, կրթական, տնտեսական խնդիրները, հանրային կառավարման ոլորտում կանանց մասնակցությունը խոչընդոտող հանգամանքները:

2025 թվականի հունիսի 25-ին զեկույցը ՄԻՊ աշխատակազմի ներկայացուցչի կողմից ներկայացվել է Լիբերալ քաղաքականության ինստիտուտի կողմից իրականացվող «Հզորացնելով կանանց իրավունքների պաշտպաններին Հայաստանում» ծրագրի փակման արարողությանը[439]:

Հաշվետու տարվա ընթացքում ակտիվ ջանքեր են գործադրվել ՄԻՊ աշխատակազմի ինստիտուցիոնալ կարողությունները հզորացնելու ուղղությամբ: Մասնավորապես, 2025 թվականի ապրիլի 14-ին ՄԻՊ աշխատակազմի նախաձեռնությամբ կազմակերպվել է վերապատրաստման դասընթաց վարչարարության իրականացման գործընթացում գործարարների իրավունքների պաշտպանության վերաբերյալ: Դասընթացի նպատակն էր

[438] Զեկույցի էլեկտրոնային տարբերակը հասանելի է հետևյալ հղումով՝ https://ombuds.am/images/files/7a7be30b21311292e5436a24be9d0e8e.pdf (20/03/2026թ. դրությամբ):
[439] Մանրամասն տե՛ս հետևյալ հղումով՝ https://www.ombuds.am/am/site/ViewNews/3433 (20/03/2026թ. դրությամբ):

զարգացնել աշխատակազմի ինստիտուցիոնալ կարողությունները մասնավոր հատվածի և պետական մարմինների միջև հարաբերություններում գործարարների իրավունքների պաշտպանության համատեքստում: Վերապատրաստման դասընթացը վարել է իրավաբանական գիտությունների թեկնածու, Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի Սահմանադրական իրավունքի ամբիոնի դոցենտ, փաստաբան Գնել Մուղնեցյանը: Դասընթացի շրջանակում պատշաճ վարչարարության իրավունքի և վարչարարության իրականացման գործընթացում գործարարների իրավունքների պաշտպանության վերաբերյալ գործնական և օրենսդրական խնդիրներ, ինչպես նաև այդ ոլորտում գործարարների իրավունքների արդյունավետ իրականացման հետ կապված հարցեր[440]:

Մարդու իրավունքների պաշտպանի և Եվրոպայի խորհրդի համագործակցությամբ 2025 թվականի հունիսի 17-ին տեղի է ունեցել միջազգային համաժողով «Բիզնես և մարդու իրավունքներ. Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն» խորագրով: Միջոցառումը կազմակերպվել է «Մարդու իրավունքներ և շրջակա միջավայրի համար պատասխանատու բիզնես պրակտիկա» ծրագրի շրջանակում:

Համաժողովի նպատակն էր խթանել երկխոսությունը գործարարության ոլորտում մարդու իրավունքների պաշտպանության, ինչպես նաև կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ոլորտում միջազգային ստանդարտների կիրառման ուղղությամբ, ուսումնասիրել մի շարք երկրների՝ Ֆրանսիայի, Գերմանիայի, Նիդեռլանդների և Բելգիայի փորձը գործարար հարաբերություններում մարդու իրավունքների ապահովման և կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ոլորտում բարելավել ոլորտի դերակատարների, այդ թվում՝ ՄԻՊ աշխատակազմի կարողություններն ու բարձրացնել բիզնես համայնքի իրազեկվածությունը իրավունքների արդյունավետ միջոցների պաշտպանության ոլորտում:

Համաժողովի ընթացքում բացման խոսքով է հանդես եկել Մարդու իրավունքների պաշտպանը: Համաժողովի ընթացքում ներկայացվել է նաև ՀՀ փոխվարչապետի ուղերձը, որում կարևորվել է գործարարության ոլորտում մարդու իրավունքների պաշտպանության պետական քաղաքականության ձևավորումն ու միջազգային փորձի կիրառումը: Ողջույնի խոսքով է հանդես եկել նաև ԵԽ Մարդու իրավունքների և իրավունքի գերակայության հարցերով գլխավոր տնօրինության գլխավոր տնօրենը (տեսաուղերձ):

Պանելային քննարկումներին մասնակցել են ՀՀ Ազգային ժողովի տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահը, Արդարադատության նախարարի տեղակալը, Էկոնոմիկայի նախարարի տեղակալը, Շրջակա միջավայրի նախարարի

[440] Մանրամասն տե՛ս հետևյալ հղումներով՝ https://ombuds.am/am/site/ViewNews/3449, https://www.facebook.com/reel/3069202600047881 (20/03/2026թ.-ի դրությամբ):

տեղակալը, Հայաստանում Նիդեռլանդների Թագավորության արտակարգ և լիազոր դեսպանը, ՄԻՊ աշխատակազմի ներկայացուցիչները, պետական մարմինների, քաղաքացիական հասարակության, Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, փաստաբաններ և միջազգային փորձագետներ՝ «Beyond Human Rights Compliance» միջազգային իրավաբանական կազմակերպությունից, ֆրանսիացի միջազգային փաստաբան և միջնորդ, OHADAC տարածաշրջանային արբիտրաժային կենտրոնից (CARO կենտրոն) և այլ միջազգային կազմակերպություններից:

Միջոցառման շրջանակում տեղի են ունեցել պանելային քննարկումներ ու դասընթաց-քննարկումներ, որոնց ընթացքում պետական մարմինների ներկայացուցիչները, փաստաբանները և միջազգային փորձագետները քննարկել ու ներկայացրել են ոլորտին առնչվող մի շարք կարևոր հարցեր: Առաջին պանելի ընթացքում քննարկվել են միջազգային ներդրումների հնարավոր ազդեցությունը մարդու իրավունքների և շրջակա միջավայրի վրա, ինչպես նաև իրավական կարգավորումների անհրաժեշտությունը և դրանց ներառման հնարավորությունները ներդրումային քաղաքականության շրջանակում: Օրինակներ են ներկայացվել Ֆրանսիայի և Գերմանիայի փորձից, հատուկ ուշադրություն է դարձվել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) նախադեպերին և դրանց կիրառելիությանն այս համատեքստում: Երկրորդ պանելային քննարկումը նվիրված էր գործարարության ոլորտում մարդու իրավունքների պաշտպանությանը: Մասնակիցները վերլուծել են գործարար գործունեության շրջանակում առաջացող իրավական խնդիրները՝ ներառյալ հարկային քաղաքականության թափանցիկությունն ու կանխատեսելիությունը, ներդրող-պետություն վեճերի կարգավորման մեխանիզմները, ինչպես նաև իրավունքի իրական պաշտպանության գործիքակազմի հնարավոր բարելավումները: Երրորդ պանելի շրջանակում համաժողովը միջդիսցիպլինար հարթակ է հանդիսացել քաղաքականություն մշակողների, իրավաբանների, բիզնեսի և ներդրումային ոլորտի ներկայացուցիչների համար՝ քննարկելու, թե ինչպես կարելի է ապահովել մարդու իրավունքների լիարժեք պաշտպանությունը մրցակցային և արագ զարգացող տնտեսական միջավայրում:

ՄԻՊ աշխատակազմի կողմից ներկայացվել են առավել հաճախ արձանագրվող խնդիրները, մասնավորապես՝ հարկային օրենսդրության կիրառման, իրականացվող վարչարարության, իրազեկման պակասի, մաքսազերծման գործընթացների, մաքսային վճարների հաշվարկման և մի շարք այլ ուղղություններով:

Համաժողովի կազմակերպման ընթացքում նպատակ է դրվել միավորել մի քանի վերապատրաստումներ ու մասնագիտական դասընթացներ: Ուստի, կարևոր է այն արձանագրումը, որ թեև խոսքը մեկ համաժողովի մասին է, այն ներառում է «Բիզնես և մարդու իրավունքներ» խորագրով տարբեր թեմատիկ շրջանակներ ընդգրկող վերապատրաստման կոմպոնենտ ներառող մի քանի քննարկում, որոնք ի սկզբանե միավորվել են մեկ մեծ միջոցառման շրջանակներում և կարող են դիտարկվել որպես առանձին վերապատրաստումներ ու մասնագիտական դասընթացներ[441]:

Հանրային իրազեկման նպատակով նշված համաժողովի վերաբերյալ պատրաստվել է ռեպորտաժ[442]: Ընդ որում, հարկ է նշել, որ 2025 թվականի ընթացքում ՄԻՊ աշխատակազմը իրականացրել է գործարարության ոլորտում իրավունքների պաշտպանությանը վերաբերելի հանրային իրազեկման նաև այլ լայնածավալ

[441] Մանրամասն տե՛ս հետևյալ հղումով՝ https://www.ombuds.am/am/site/ViewNews/3423 (20/03/2026թ.-ի դրությամբ):

[442] Հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.youtube.com/watch?v=2gW3q3tu8Wg (20/03/2026թ.-ի դրությամբ):

աշխատանքներ: Մասնավորապես, հաշվետու տարվա ընթացքում այդպիսի իրազեկման աշխատանքներ ու տարատեսակ քննարկումներ են իրականացվել Պաշտպանի մարզային այցերի ընթացքում: Հաշվետու տարում նման միջոցառումներ են իրականացվել Սյունիքի, Տավուշի և Վայոց Ձորի մարզերում[443]: Ընդ որում, մարզային այցերի ընթացքում կազմակերպված տարատեսակ քննարկումներին մասնակցել նաև ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձինք: Հատկանշական է, որ հանրային իրազեկման նպատակով նշված մարզային այցերի առնչությամբ պատրաստվել են ռեպորտաժներ, որոնք տարածվել են ՄԻՊ պաշտոնական սոցիալական հարթակներում:

Դրանից բացի, Լիբերալ քաղաքականության ինստիտուտի հետ համագործակցությամբ նկարահանվել և տարածվել է երկու փոդքասթ[444] Մարդու իրավունքների պաշտպանի և նրա աշխատակազմի ներկայացուցչի մասնակցությամբ, որի շրջանակներում անդրադարձ է կատարվում նաև Հայաստանում կանանց տնտեսական իրավունքների իրացման երաշխիքներին ու խոչընդոտներին:

Հաշվետու տարվա ընթացքում Պաշտպանի աշխատակազմը մասնակցություն է ունեցել գործարարության ոլորտում շահագրգիռ կազմակերպությունների կողմից կազմակերպված տարատեսակ քննարկումներին ու միջոցառումներին: Այսպես, 2025 թվականի սեպտեմբերի 16-ին Պաշտպանի ներկայացուցիչները մասնակցել են Երևանի պետական համալսարանի կողմից կազմակերպված «ԲանՈւԳործ. ԵՊՀ Էքսպո-2025» միջոցառմանը, որի շրջանակներում, ի թիվս այլնի, ներկայացվել են Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության հիմնական ուղղությունները, այդ թվում՝ գործարարության ոլորտում[445]:

[443] Առավել մանրամասն տեղեկատվություն հասանելի է հետևյալ հղումներով՝ https://ombuds.am/am/site/ViewNews/3396, https://ombuds.am/am/site/ViewNews/3394, https://ombuds.am/am/site/ViewNews/3392, https://www.youtube.com/watch?v=aHI3iG8eB0Q (20/03/2026թ.-ի դրությամբ):

[444] Հասանելի է հետևյալ հղումներով՝ https://www.ombuds.am/am/site/VideoGalleryView/1251, https://www.youtube.com/watch?v=mNSvDfqOwb8 (20/03/2026թ.-ի դրությամբ):

[445] Մանրամասն տե՛ս հետևյալ հղումով՝ https://ombuds.am/am/site/ViewNews/3513 (20/03/2026թ.-ի դրությամբ):

2025 թվականի նոյեմբերի 7-ին ՄԻՊ աշխատակազմի ներկայացուցիչները մասնակցել են Հայաստանում ֆրանսիական համալսարանի (ՀՖՀՀ) կողմից կազմակերպված աշխատանքի տոնավաճառին, որի շրջանակում նույնպես ներկայացվել է Պաշտպանի մանդատը գործարարության ոլորտում[446]:

Վերոգրյալի հետ մեկտեղ, հարկ է նշել, որ հաշվետու տարում Մարդու իրավունքների պաշտպանն ակտիվացրել է համագործակցությունը նաև ոլորտի քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ մասնավոր հատվածի և պետական մարմինների միջև հարաբերություններում գործարարների իրավունքների պաշտպանությանը վերաբերող հարցերի առնչությամբ: Նպատակ ունենալով միավորել ջանքերն այս ոլորտում իրավունքների արդյունավետ պաշտպանության ուղղությամբ՝ 2025 թվականին իրականացվել են համապատասխան նախապատրաստական աշխատանքներ Պաշտպանին առընթեր գործարարների իրավունքների պաշտպանության և խթանման հարցերով հասարակական խորհուրդ ստեղծելու ուղղությամբ: Խորհուրդը միտված է լինելու համախմբել գործարար անձանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպություններին, անկախ փորձագետներին, ոլորտային մասնագետներին՝ ստեղծելով համագործակցության և երկխոսության ընդհանուր հարթակ, որտեղ քննարկվելու և թիրախային հասցեավորվելու են ոլորտային խնդիրները: Խորհրդի գործունեության մեկնարկը նախատեսվում է 2026 թվականին:

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքով սահմանված դեպքերում Պաշտպանին վերապահված է նաև հանրային ծառայության ոլորտում գործող կազմակերպությունների կողմից մարդու իրավունքների և ազատությունների խախտման վերաբերյալ հարցերի քննարկումը: Այս ուղղությամբ 2025 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանը շարունակել է պետական մարմինների հետ հաղորդակցության տարբեր ձևաչափերով ներկայացնել հանրային ծառայության ոլորտներում առկա օրենսդրական և գործնական խնդիրները: Ընդ որում, այդ խնդիրների մի մասն ունի համակարգային բնույթ և տարիներ շարունակ լուծում չի ստանում *(ուստի արդիական է մինչ օրս)*, իսկ խնդիրների մյուս մասը՝ նոր է և վեր է հանվել հաշվետու տարվա ընթացքում ՄԻՊ գործունեության ընթացքում: Այս առումով, էական է նաև այն, որ հաշվետու տարվա ընթացքում իրավասու մարմինների հետ արդյունավետ համագործակցության արդյունքում քաղաքացիների կողմից բարձրացված բազմաթիվ խնդիրներ ստացել են լուծում:

Հանրային ծառայության ոլորտներում առկա խնդիրները մշտապես գտնվում են ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հատուկ ուշադրության ներքո:

[446] Մանրամասն տե՛ս հետևյալ հղումով՝ https://ombuds.am/am/site/ViewNews/3580 (20/03/2026թ.-ի դրությամբ):

ԳԼՈՒԽ 1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

1. Գործարարության ոլորտում կանանց իրավունքների պաշտպանության և խթանման հետ կապված խնդիրներ

Գործարարության ոլորտում կանանց իրավունքների պաշտպանության և խթանման հետ կապված հարցերն ինչպես նախորդ տարի, այնպես էլ 2025 թվականին շարունակել են գտնվել Պաշտպանի անմիջական ուշադրության ներքո: Ասվածի մասին է վկայում նաև այն, որ 2025 թվականին Պաշտպանը հրապարակել է ***«Կանանց տնտեսական իրավունքների իրացման երաշխիքներն ու խոչընդոտները Հայաստանում»*** վերտառությամբ արտահերթ զեկույց[447]:

Զեկույցի շրջանակում անդրադարձ է կատարվել Հայաստանում կանանց տնտեսական իրավունքների իրացման իրավական և ինստիտուցիոնալ երաշխիքներին և վերջիններիս իրավունքների իրացման հիմնական խոչընդոտներին: Մասնավորապես, ուսումնասիրության առարկա են դարձել կանանց տնտեսական իրավունքների վերաբերյալ ՀՀ օրենսդրությունն ու միջազգային պարտավորությունները, տվյալ ոլորտում պետական գերատեսչությունների գործառույթները, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների արձանագրումները, միջազգային կառույցների դիտարկումներն ու գնահատականները: Վեր են հանվել կանանց տնտեսական իրավունքների իրացման վրա ազդող սոցիալ-մշակութային, կրթական, տնտեսական խնդիրները, հանրային կառավարման ոլորտում կանանց մասնակցությունը խոչընդոտող հանգամանքները:

Հաշվի առնելով այն, որ արտահերթ զեկույցում արտահայտված՝ Մարդու իրավունքների պաշտպանի դիրքորոշումները հրապարակված են՝ սույն պարագրաֆի շրջանակում հարկ չենք համարում մանրամասն անդրադառնալ դրանց, այնուհանդերձ, նպատակահարմար ենք գտնում համառոտ ներկայացնել (առանձնացնել) դրանցում տեղ գտած հիմնական շեշտադրումները:

Այսպես, զեկույցի շրջանակում՝ անդրադառնալով Հայաստանում կանանց տնտեսական իրավունքների իրացման իրավական և ինստիտուցիոնալ երաշխիքներին՝ Պաշտպանը, մասնավորապես, ընդգծել է, որ կանանց տնտեսական իրավունքների պատշաճ իրացմանն ուղղված կարևորագույն երաշխիքներից է խտրականության բացառումը՝ սեռական անձեռնմխելիության երաշխավորմանն ուղղված անվտանգ ու ապահով աշխատանքային միջավայրի ձևավորման համատեքստում: Այս առնչությամբ հիշատակելով Աշխատանքային օրենսգրքի՝ աշխատանքում (աշխատավայրում) բռնության կամ սեռական ոտնձգության արգելք սահմանող 3.3-րդ հոդվածը՝ Պաշտպանը նշել է, որ դրա պատշաճ կիրառման ապահովման տեսանկյունից խնդրահարույց է այն հանգամանքը, որ օրենսդրությամբ չեն սահմանվել նշված արարքի համար պատասխանատվության կիրառման իրավական կառուցակարգեր: Այսպես.

- ✓ ՀՀ աշխատանքային օրենսգիրքը, անդրադարձ կատարելով սեռական ոտնձգությանը, չի սահմանում պատասխանատվության որևէ միջոց ոտնձգողի նկատմամբ: Ուստի, կարգավորված չեն սեռական ոտնձգության դեպքում գործադրողի նկատմամբ առաջացող իրավական հետևանքները, ինչպիսիք են, օրինակ՝ կարգապահական պատասխանատվությունը, աշխատանքային պայմանագրի դադարեցումը և այլն,
- ✓ Աշխատանքում սեռական ոտնձգության դեպքերի մասին հաղորդման ու դրանց քննության կարգ օրենսդրությամբ նախատեսված չէ: ՀՀ աշխատանքային

[447] Զեկույցի էլեկտրոնային տարբերակը հասանելի է հետևյալ հղումով՝ https://ombuds.am/images/files/7a7be30b21311292e5436a24be9d0e8e.pdf (20/03/2026թ. դրությամբ):

օրենսգրքի 218-րդ հոդվածի համաձայն՝ աշխատանքում (աշխատավայրում) բռնության կամ սեռական ոտնձգության արգելքին, ինչպես նաև աշխատանքային հարաբերություններին վերաբերող հարցերը կանոնակարգվում են կազմակերպության ներքին կարգապահական կանոններով,

✓ Օրենսդրությունը չի նախատեսում սեռական ոտնձգության դեպքերի կանխարգելման ու բացառման ոլորտում պետության ու գործատուի պարտականությունները, ինչպես նաև սեռական ոտնձգությունների կանխարգելման քաղաքականություն ընդունելու կարգավորումներ, դեպքերի վերաբերյալ բողոքների քննություն չիրականացնելու համար պատշաճ ընթացակարգեր,

✓ Ինչպես հանրության շրջանում, այնպես էլ պետական համակարգի և մասնավոր հատվածի աշխատողների համար սեռական ոտնձգության դեպքերի մասին հաղորդման ընթացակարգերի մասին իրազեկվածության մակարդակը խիստ ցածր է:

Նշվածի հաշվառմամբ՝ Պաշտպանն արձանագրել է, որ ապահովված չէ աշխատավայրում սեռական ոտնձգության ենթարկվող անձանց իրավունքների, ներառյալ՝ արժանապատիվ աշխատանքի իրավունքի պաշտպանությունը: Մինչդեռ, միջազգային իրավական կարգավորումներն ամրագրում են առանց բռնության և ոտնձգությունների աշխատանքի իրավունքի իրացման երաշխավորման ու գործուն կառուցակարգեր ներդնելու պետությունների պարտականությունը:

Հատկանշական է, որ կանանց տնտեսական իրավունքների համատեքստում Հայաստանի Հանրապետությունը ստանձնել է նաև միջազգային իրավական պարտավորություններ խտրականության արգելքի ու գենդերային հավասարության երաշխավորման ուղղությամբ՝ վավերացնելով կանանց իրավունքներն ամրագրող միջազգային պայմանագրեր և կոնվենցիաներ ու ստանձնելով կանանց և տղամարդկանց՝ պատմականորեն արմատավորված անհավասարության վերացման, կանանց իրավունքների ճանաչման, դրանց պաշտպանության և հավելյալ երաշխիքների սահմանման պարտականություն:

Նշվածի կոնտեքստում Պաշտպանը, հաշվի առնելով նաև համապատասխան միջազգային փորձը, արձանագրել է, որ *աշխատանքային օրենսդրությամբ բացակայում է Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի պահանջներից բխող փոխհատուցման ամբողջական մեխանիզմը աշխատանքային հարաբերություններում խտրականության դրսևորման դեպքերի համար: Այս առումով հատկանշական է, որ Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեի կողմից Հայաստանի վերաբերյալ նախկինում ընդունված դիտարկումներով*[448] *արձանագրվել է Խարտիայի պահանջների հետ անհամապատասխանություն՝ խտրականության բոլոր դրսևորումների համար օրենսդրությամբ Խարտիայի պահանջներից բխող փոխհատուցման ամբողջական մեխանիզմի բացակայությամբ պայմանավորված: Խարտիան պահանջում է խտրականության բոլոր դրսևորումների համար փոխհատուցման ապահովում, որը պետք է համաչափ լինի խտրականության զոհի կրած վնասին և բավարար չափով զսպող բնույթ ունենա գործատուի համար*[449]*:*

---

[448] Հասանելի են հետևյալ հղումով՝ https://www.ecoi.net/en/document/2110032.html (20/03/2026թ.-ի դրությամբ):

[449] Օրինակ, Ֆրանսիայում աշխատանքային խտրականության դեմ պայքարը կարգավորվում է Աշխատանքային օրենսգրքի (Code du travail) L.1132-1 հոդվածով, որն արգելում է խտրականությունը աշխատանքի ընդունման, աշխատանքային պայմանների, աշխատավարձի և այլ ոլորտներում՝ ելնելով անձի՝ օրենքով պաշտպանվող հատկանիշներից, իսկ աշխատանքային հարաբերություններում խտրականության դրսևորման դեպքերի համար փոխհատուցման կարգը սահմանվում է հոդված L.1134-5 – ով, համաձայն որի՝ խտրական հիմքով ընդունված ցանկացած որոշում անօրինական է, և աշխատակիցը կարող է պահանջել

Վերոգրյալից բացի, արտահերթ զեկույցում՝ վերաբերելի միջազգային իրավական փաստաթղթերի լույսի ներքո վերլուծության ենթարկելով «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» օրենքում ամրագրված մի շարք իրավակարգավորումներ՝ *Պաշտպանն արձանագրել է, որ դրանք առավելապես ուղղված են խտրականության բացառմանն ու գենդերային հավասարության ապահովմանը և իրենց բովանդակությամբ չեն պարունակում կանանց իրավունքների խթանմանը վերաբերելի կոնկրետ և որոշակի նորմեր, ինչը կարող է հանգեցնել կանանց իրավունքների պատշաճ երաշխավորմանն առնչվող խնդիրների և բավարար չէ պրակտիկայում կանանց տնտեսական իրավունքների իրացման ճանապարհին առաջացող խոչընդոտների վերացման համար: Առկա օրենսդրական կարգավորումներն ապահովում են կանանց իրավունքների երաշխավորման նվազագույն շեմը, չեն երաշխավորում միջազգային իրավական փաստաթղթերով ստանձնած պարտավորությունների ամբողջական կատարումը և պատշաճ կերպով չեն հասցեավորում խնդիրները ժամանակակից զարգացումներին համահունչ:*

Դրանից զատ, զեկույցի շրջանակում, անդրադարձ է կատարվում կանանց տնտեսական իրավունքների պաշտպանության և խթանման գործում պետական կառույցների գործառույթներին: Այս համատեքստում, *Պաշտպանը, մասնավորապես, արձանագրել է, որ կանանց տնտեսական ներգրավվածության տեսանկյունից հանրային իշխանության մարմիններում միասնական մոտեցում առկա չէ, մասնավորապես, որոշ դեպքերում ամրագրված են առանձին կարգավորումներ տարբեր սեռերի պարտադիր ներգրավվածության վերաբերյալ, մի շարք դեպքերում էլ առհասարակ բացակայում են կառուցակարգերն այդ առնչությամբ: Սեռերի հավասար ներկայացվածության հարցում միասնական մոտեցման բացակայությունը կարող է հանգեցնել հավասար հնարավորությունների երաշխավորման խոչընդոտների և գործնականում տնտեսական իրավունքների անհամաչափ իրացման իրավիճակի: Պաշտպանի գնահատմամբ՝ պետական տարբեր մարմիններում կանանց ներկայացվածության մակարդակը շարունակում է մտահոգիչ մնալ, հատկապես՝ ղեկավար պաշտոններում, քանի որ կանանց ներգրավվածությունը որոշ մարմիններում, նույնիսկ, չի գերազանցում 30%-ը: Նշվածը պայմանավորված է հասարակության շրջանում առկա կարծրատիպերի, կանանց դերի և կարողությունների վերաբերյալ կարծրատիպային ընկալումների, խտրականության տարբեր դրսևորումների առկայության, քաղաքական կամ ղեկավար դերեր ստանձնելու կապակցությամբ կանանց նկատմամբ քննադատական վերաբերմունքի, ինչպես նաև կանանց մասնակցությունը խթանող լիարժեք կառուցակարգերի բացակայության հետ: Ասվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ հանրային իշխանության և ինքնավար մարմինների մեծ մասում առհասարակ բացակայում են տարբեր սեռերի պարտադիր ներգրավվածությանն ուղղված պատշաճ իրավական կառուցակարգեր, իսկ մի մասում էլ նախատեսված կարգավորումներն ամրագրում են սեռային ներգրավվածության ապահովման ցածր շեմ:*

Վերոգրյալի հետ մեկտեղ, ուսումնասիրության առարկա են դարձվել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների արձանագրումները կանանց տնտեսական իրավունքների պաշտպանության ու խթանման գործում: Այսպես, օրինակ՝ «Կետ 33» տեղեկատվական, իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը

վնասների փոխհատուցում: Ընդ որում, վնասի հատուցման պահանջը կարող է ներկայացվել հինգ տարվա ընթացքում՝ սկսած այն պահից, երբ խտրականության ենթարկված անձը իմացել է իր իրավունքի խախտման մասին: Այս ժամկետը չի կարող փոփոխվել պայմանագրային կարգով: Վնասների փոխհատուցումն ուղղված է խտրականության հետևանքով պատճառված ամբողջական վնասի փոխհատուցմանը:

«Վաղ մայրության շրջանում գտնվող կանանց իրավունքների պաշտպանության ջատագովություն» ծրագրի շրջանակում կատարել է հետազոտություն՝ *«Վաղ մայրության շրջանում կանանց աշխատանքային իրավունքների պաշտպանության իրավական երաշխիքներն ու աջակցման ծրագրերը» թեմայով*[450]: Հետազոտությունում արձանագրված են մի շարք կարևոր նկատառումներ և խնդիրներ, որոնք անդրադառնում են կանանց աշխատանքային իրավունքների իրականացման գործնական դժվարություններին: Մասնավորապես, հետազոտության շրջանակում անդրադառնալով «Դայակ պետության աջակցությամբ» ծրագին[451]՝ առաջարկվել է ծրագրի տևողությունը երկարաձգել առնվազն մեկ տարով, քանի որ մանկապարտեզների հիմնական մասը երեխաներին ընդունում են 3 տարեկանը լրանալուց հետո (օրինակ՝ Երևան քաղաքի պետական մանկապարտեզներում ընդունելության համար հերթագրվելու համար պարտադիր պահանջ է երեխայի 2 տարեկանը լրացած լինելը): Եվ այս ծրագրից օգտվողները երեխայի 2 տարեկանը լրանալուց հետո նորից կանգնում են երեխայի խնամքի կազմակերպման խնդրի առաջ:

Ընտանիքների բարեկեցության ամրապնդման, կանանց տնտեսական մասնակցության բարձրացման և երեխաների խնամքի մատչելիության ապահովման տեսանկյունից՝ Պաշտպանը կարևորել է «Դայակ պետության աջակցությամբ» ծրագրի կամ նմանատիպ այլ ծրագրերի առկայությունն ու պատշաճ կիրառումը, քանի որ վերջիններս ունեն ինչպես սոցիալական, այնպես էլ տնտեսական կարևոր նշանակություն: Ուստի, նման ծրագրերի վերագործարկումն կամ մշակումն ու պատշաճ կիրառումն անհրաժեշտ է ընտանիքների բարեկեցության ամրապնդման և հանրային շահի պաշտպանման տեսանկյունից:

Արտահերթ զեկույցի շրջանակում ուսումնասիրվել են նաև կանանց տնտեսական իրավունքների իրացման վրա ազդող սոցիալ-մշակութային և կրթական խնդիրները: Այս համատեքստում հատկանշական է այն արձանագրումը, որ ՀՀ-ում կրթության ոլորտի հիմնական ռազմավարական ու օրենսդրական փաստաթղթերում (օրինակ՝ «Կրթության մասին», «ՀՀ կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին» օրենքներում և ոլորտում առկա մի շարք այլ իրավական ակտերում) բացակայում են կանանց նկատմամբ խտրականությունը բացառող ու գենդերային հավասարությունը խթանող հատուկ միջոցների ու քաղաքականությունների ներդրմանն ուղղված կարգավորումները:

Այս համատեքստում Պաշտպանը լրջագույն խնդիր է համարել իրավահավասարության ապահովմանն ուղղված օրենսդրական արդյունավետ կառուցակարգերի բացակայությունը և նշել, որ ներկայում շարունակում են արդիական մնալ խտրականության դեմ պայքարի շրջանակներում գործուն ու համապարփակ կառուցակարգերի նախատեսման, այդ թվում՝ միասնական օրենքի ընդունման հարցերը:

Դեռևս 2019 թվականին ՀՀ-ում հանրային քննարկման է դրվել «Իրավահավասարության ապահովման մասին» օրենքի նախագիծը[452], որը, թեև ներկայում գտնվում է ակտիվ լրամշակման փուլում, սակայն չի ընդունվել: Այսինքն՝ այժմ չկա խտրականության արգելքին վերաբերող համապարփակ օրենսդրական դաշտ: Ասվածից

---

[450] Հետազոտության էլեկտրոնային տարբերակը հասանելի է հետևյալ հղումով՝ https://collections.fes.de/publikationen/ident/fes/18567 (20/03/2026թ. դրությամբ):

[451] Ծրագրի շահառուներին փոխհատուցվում է դայակի կամ խնամքի կենտրոնի վճարը՝ 50 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան նվազագույն ամսական աշխատավարձի չափն է: Ծրագրին մասնակցում են երեխայի խնամքի արձակուրդից մինչև երեխայի 2 տարեկանը լրանալը աշխատանքի վերադարձողները: Եվ ծրագրին մասնակցությունն ավարտվում է երեխայի 2 տարին լրանալուն պես:

[452] Ներկայում օրինագիծի վերնագիրը խմբագրվել է և ստացել հետևյալ վերտառությունը. «Խտրականության կանխարգելման և խտրականությունից պաշտպանության մասին» օրենքի նախագիծ:

բխում է, որ նշված ոլորտին վերաբերելի խնդիրները դեռևս մնում են չկարգավորված՝ առաջ բերելով կանանց իրավունքների պաշտպանությանն ու խթանմանն առնչվող մի շարք խնդիրներ:

Վերոնշյալ ոլորտի օրենսդրական դաշտի ընդունման անհրաժեշտությունն արձանագրվել է նաև որոշ միջազգային կազմակերպությունների կողմից: Այդ դիտարկումներն ու գնահատականներն արտահերթ զեկույցի շրջանակում նույնպես դարձվել են ուսումնասիրության առարկա: Մասնավորապես, «Իրավահավասարության ապահովման մասին» օրենքի ընդունման առնչությամբ Հայաստանի Հանրապետությանը հանձնարարական են ներկայացրել ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեն[453] և Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովը (ՌԱԵՀ)[454]: Միևնույն ժամանակ, Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեն առաջարկել է հրատապ կերպով ընդունել իրավահավասարության մասին նոր օրենսդրությունն ու ապահովել, որ դրանով արգելվի կանանց նկատմամբ խտրականությունը, ներառյալ ուղղակի և անուղղակի խտրականությունը պետական և մասնավոր ոլորտներում, ինչպես նաև խտրականության խաչվող տեսակները՝ համաձայն միջազգային իրավական մեխանիզմների[455]:

Կանանց կրթական իրավունքների իրացման տեսանկյունից խնդրահարույց են նաև վաղ և հարկադիր ամուսնությունները[456]: Հարկ է նկատի ունենալ, որ հարկադիր ամուսնությունը խախտում է մարդու հիմնարար իրավունքները և չի կարող դիտարկվել որպես իրավաչափ երևույթ: Վաղ ամուսնությունների հիմքում կարող են ընկած լինել մի շարք պատճառներ, օրինակ՝ կարծրատիպային մոտեցումները, խնդրի լատենտայնությունը, սոցիալական խնդիրները և այլն: Առանձին դեպքերում վաղ ամուսնությունները արդարացնում են նաև «ազգային ավանդույթներով» (օրինակ՝ ազգային փոքրամասնությունների համայնքներում)[457]:

Ամփոփելով կրթության ոլորտում առկա վերը նկարագրված խնդիրները՝ Պաշտպանը ընդգծել է, որ այս ոլորտում բացառիկ կարևորություն ունեն իրավահավասարության և խտրականության արգելքի առնչությամբ հանրային իրավագիտակցության բարձրացմանն ու հանրային իրազեկմանն ուղղված աշխատանքները, կարծրատիպային մոտեցումների հաղթահարման ուղղությամբ համակարգային քայլերը, վաղ ամուսնությունների և այլ խնդիրների կանխարգելմանն ուղղված միջոցառումները:

Վերոգրյալին զուգահեռ՝ զեկույցում ներկայացվել են նաև աշխատաշուկայում և ձեռնարկատիրության մեջ կանանց լիարժեք մասնակցությանն ու ներգրավվածությանը խոչընդոտող գործոնները: Մասնավորապես, որպես գործարարության ոլորտում կանանց լիարժեք մասնակցությանն ու ներգրավվածությանը խոչընդոտող օբյեկտիվ գործոններ, նշվել են ֆինանսների սահմանափակ հասանելիությունը, վարկային միջոցների

---

[453] «Հայաստանի չորրորդ պարբերական զեկույցի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ», Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտե, 2023 թվականի հոկտեմբերի 13, թիվ E/C.12/ARM/CO/4, 21-22 կետեր:

[454] Զեկույցի էլեկտրոնային տարբերակը հասանելի է հետևյալ հղումով՝ https://rm.coe.int/sixth-report-on-armenia/1680ab9e33 (20/03/2026թ. դրությամբ):

[455] Զեկույցի էլեկտրոնային տարբերակը հասանելի է հետևյալ հղումով՝ https://docs.un.org/en/CEDAW/C/ARM/CO/7 (20/03/2026թ. դրությամբ):

[456] Մանկական կամ վաղ ամուսնություն է համարվում ցանկացած ամուսնություն, երբ կողմերից առնվազն մեկի 18 տարին չի լրացել: Հարկադիր ամուսնությունը սահմանվում է որպես երկու անձանց միություն, որոնցից առնվազն մեկը չի տվել իր լիարժեք և ազատ համաձայնությունը ամուսնությանը, տեղեկատվությունը հասանելի է հետևյալ հղումով՝ https://rm.coe.int/media-guideline-arm-final/1680a15261:

[457] Տե՛ս Վճռաբեկ դատարանի 2016 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ ԱՐԱԴ1/0023/01/15 որոշումը:

սահմանափակ հասանելիությունը, վարկ ստանալու դժվարությունները, ֆինանսական միջոցների և վարկ ստանալու համար սեփականության բացակայությունը (կանանց մի ստվար զանգված սեփական ֆիզիկական ակտիվ չունի, օրինակ՝ հող և բնակարան), գործնական հմտությունների և պատրաստվածության բացակայությունը (այդ թվում՝ բիզնես գրագիտություն, թվային գրագիտություն), շուկաների, այդ թվում՝ առցանց շուկաների հասանելիությունը, միաժամանակ տնային գործերը և խնամքի պարտականությունները, որոնք ավանդական սոցիալական նորմերի արգասիք են և էլ ավելի են դժվարացնում կանանց ձեռնարկատեր դառնալու հանգամանքը:

Զեկույցում արձանագրվել է նաև, որ Հարկային օրենսդրությամբ նախատեսված չէ որևէ արտոնություն կամ խթանիչ մեխանիզմ կանանց համար հատկապես ձեռնարկատիրական գործունեության խթանման, մայրության հետ կապված հարցերի կամ գենդերային հավասարության խթանման համատեքստում: Նշվածը ոչ միայն նպաստավոր չէ կանանց տնտեսական իրավունքների խթանման համար, այլև կարող է խոչընդոտներ ստեղծել նրանց տնտեսական ակտիվության, գործարար միջավայրում լիարժեք ներգրավվածության և առաջխաղացման դիտանկյունից, քանի որ կանանց տնտեսական հնարավորությունների ընդլայնման տեսանկյունից կարևորվում է տնտեսական կյանքում կանանց հավասար ներգրավվածությանը և առաջխաղացմանն ուղղված արտոնյալ հարկային քաղաքականության առկայությունը, ինչը նպատակ ունի հարկային քաղաքականության մեջ ներառել գենդերային զգայունության տարրեր՝ հավասար հնարավորությունների ապահովման և կանանց տնտեսական մասնակցության բարձրացման համար: Օրինակ՝ շահութահարկի արտոնությունները կարող են նախատեսվել՝ աջակցելու կանանց ձեռներեցությանն ու բիզնեսի զարգացմանը, խթանելու կանանց ընդունումը աշխատանքի, աջակցելու կանանց պատկանող կամ նրանց կողմից ղեկավարվող ընկերություններին, մեծացնելու պետական գնումների ծավալը կանանց կողմից ղեկավարվող ընկերություններից:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Պաշտպանը, նկատի ունենալով նաև միջազգային փորձը[458], արձանագրել է, որ *հասարակության մեջ արմատացած գենդերային կարծրատիպերը, հարկային խթանիչ մեխանիզմների բացակայությունը և (կամ) այլ հանգամանքները շարունակում են խոչընդոտներ ստեղծել կին ձեռներեցների համար՝ էապես սահմանափակելով նրանց ձեռնարկատիրական ներուժը: Այս մարտահրավերները պահանջում են նորարարական լուծումներ և օժանդակ մեխանիզմներ՝ խթանելու կանանց ձեռնարկատիրական ներուժը և տնտեսական հզորացումը Հայաստանում:*

Հարկ է նշել, որ գործարարության ոլորտում կանանց իրավունքների պաշտպանության և խթանման հետ կապված խնդիրներին Պաշտպանը մանրամասն անդրադարձել է ոչ միայն արտահերթ զեկույցում, այլ նաև նախորդ տարեկան հաղորդման

---

[458] Օրինակ՝ Կանադայի կառավարությունը մշակել է Women Entrepreneurship Strategy (WES) ծրագիրը՝ կանանց ձեռներեցության խթանման համար: Այս ռազմավարությունը մեկնարկել է 2018 թվականին՝ նպատակ ունենալով աջակցել կանանց բիզնեսներին՝ ֆինանսավորման, մենթորության և մասնագիտական աջակցություն տրամադրելու միջոցով *(տեղեկատվությունը հասանելի է հետևյալ հղումով՝ https://ised-isde.canada.ca/site/ised/, 20/03/2026թ. դրությամբ):* Հունգարիայի կառավարությունը 2025 թվականի փետրվարին հայտարարել է ընտանիքակենտրոն հարկային բարեփոխումներ կատարելու մասին, ըստ որի՝ մեկ երեխա ունեցող մայրերը կազատվեն եկամտային հարկի վճարումից մինչև 30 տարեկան դառնալը, իսկ երկու կամ ավելի երեխա ունեցող մայրերն՝ ամբողջ կյանքի ընթացքում *(տեղեկատվությունը հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.aa.com.tr/en/europe/hungary-announces-sweeping-reform-exempting-mothers-from-income-tax/3512119, 20/03/2026թ. դրությամբ):* Բարեփոխումների նպատակն է խթանել ծնելիության աճը և ընտանիքներին ցուցաբերել սոցիալ-տնտեսական աջակցություն *(տեղեկատվությունը հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.reuters.com/world/europe/hungarys-orban-launches-tax-exemption-mothers-cap-housing-loan-rates-2025-02-22/, 20/03/2026թ. դրությամբ):*

շրջանակներում՝ պետական իրավասու մարմինների ուշադրությունը հրավիրելով առկա խնդիրների և դրանց լուծման մեխանիզմների վրա: Մասնավորապես, նախորդ տարեկան հաղորդման մեջ Պաշտպանն անդրադառնալով գործարարության ոլորտում կանանց իրավունքների պաշտպանության և խթանման հետ կապված խնդիրներին՝ կարևորել էր տնտեսական կյանքում կանանց հավասար հնարավորությունների ապահովումը, գործարար միջավայրում վերջիններիս լիարժեք ինտեգրումը, ինչպես նաև գործարար միջավայրին կանանց ինտեգրվելու հնարավորությունների և այդ ոլորտում իրավունքների պաշտպանության ընթացակարգերի վերաբերյալ իրազեկման աշխատանքների իրականացումը: Պաշտպանն ընդգծել էր նաև տնտեսական կյանքում կանանց մասնակցության կառուցակարգերը բարելավելու անհրաժեշտությունը: ***Նշված հաշվառմամբ՝ Պաշտպանն առաջարկել էր արագացնել «Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման 2024-2028 թվականների ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունման գործընթացը[459]:***

Վերոգրյալի համատեքստում՝ իբրև դրական առաջընթաց պետք է դիտել այն, որ ՀՀ կառավարությունը 2025 թվականի ապրիլի 23-ի թիվ 482-Լ որոշմամբ հաստատել է Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման 2025-2028 թվականների ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը: *Անշուշտ, ռազմավարական այս փաստաթղթի առկայությունը կարևոր առաջընթաց է երկրում գենդերային հավասարության և կանանց իրավունքների պաշտպանության խթանման տեսանկյունից, այնուհանդերձ, Պաշտպանը խիստ կարևոր է համարում նաև դրանից բխող միջոցառումների կանոնավոր ու պատշաճ կատարումն ապահովելու (կյանքի կոչելու) ուղղությամբ իրավասու պետական մարմինների կողմից գործուն և շարունակական քայլերի ձեռնարկումը:*

Գործարարության ոլորտում կանանց իրավունքների պաշտպանության և խթանման տեսանկյունից Պաշտպանը կարևորում է նաև գործարար միջավայրին կանանց ինտեգրվելու հնարավորությունների և այդ ոլորտում իրավունքների պաշտպանության ընթացակարգերի վերաբերյալ իրազեկման աշխատանքների իրականացումը: Պաշտպանի աշխատակազմի կատարած համակողմանի ուսումնասիրությունները վկայում են, որ շատ կանայք *(այդ թվում՝ երիտասարդ, հաշմանդամություն ունեցող, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչ, գյուղաբնակ, տեղահանված, փախստական և այլն)* անտեղյակ են գործարար միջավայրին ինտեգրվելու հնարավորություններին և այդ ոլորտում իրավունքների պաշտպանության ընթացակարգերին:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Մարդու իրավունքների պաշտպանը վերահաստատում է, որ անհրաժեշտ է իրավասու պետական մարմնի կողմից ակտիվորեն իրականացնել իրազեկման աշխատանքներ գործարար միջավայրում կանանց ինտեգրվելու հնարավորությունների և այդ ոլորտում իրավունքների պաշտպանության ընթացակարգերի վերաբերյալ:

Հարկ է նաև նկատել, որ հաշվետու տարվա ընթացքում գործարարության ոլորտում իրավունքների պաշտպանությանը վերաբերելի տարատեսակ քննարկումներ ու իրազեկման աշխատանքներ են իրականացվել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի մարզային այցերի ընթացքում: 2025 թվականին այդպիսի միջոցառումներ են իրականացվել

[459] Տե՛ս, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի վերաբերյալ 2024 թվականի տարեկան հաղորդումը (էջեր 769-770):

Սյունիքի, Տավուշի, Վայոց Ձորի մարզերում[460]: Ընդ որում, քննարկումներին մասնակցել նաև ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձինք: Հատկանշական է, որ հանրային իրազեկման նպատակով նշված մարզային այցերի առնչությամբ պատրաստվել են ռեպորտաժներ, որոնք տարածվել են ՄԻՊ պաշտոնական սոցիալական հարթակներում:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ հարկ է նշել, որ գործարարության ոլորտում կանանց իրավունքների պաշտպանության և խթանման հետ կապված բոլոր հարցերը գտնվում են ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի անմիջական ուշադրության ներքո:

Այսպիսով, ամփոփելով ՀՀ-ում կանանց տնտեսական իրավունքների երաշխիքների իրավական ու ինստիտուցիոնալ վիճակի ուսումնասիրության արդյունքները՝ Մարդու իրավունքների պաշտպանն անհրաժեշտ է համարում՝

1. համապարփակ քայլեր ձեռնարկել աշխատավայրում սեռական ոտնձգությունից անձանց պաշտպանության ու դրա կանխարգելման ուղղությամբ: Մասնավորապես՝

- ***ներդնել իրավական գործուն կառուցակարգեր՝ ներառյալ՝ հստակ օրենսդրական կարգավորումներ աշխատավայրում սեռական ոտնձգության դեմ պայքարում: Ընդ որում՝ իրավական կարգավորումներ սահմանելիս անհրաժեշտ է հստակ տարանջատել ինչպես պետական մարմինների գործառույթները, այնպես էլ գործատուների ու աշխատակիցների իրավունքների, պարտականությունների բնույթն ու ծավալը, նախատեսել համաչափ պատասխանատվության միջոցներ.***
- ***սահմանել գործատուի՝ սեռական ոտնձգությունների դեմ պայքարի քաղաքականություն ընդունելու պարտականությունը, որը պետք է ներառի սեռական ոտնձգությունների վերաբերյալ բողոքների ներկայացման ու դրանց քննության կարգն ու ժամկետները, ինչպես նաև սեռական ոտնձգության ենթարկված անձի իրավունքների պաշտպանության երաշխիքներն ու միջոցները, դիտարկել արդյունավետ ազդարարման կառուցակարգերի ներդրման հարցը՝ ապահովելով աշխատողների հնարավորությունը՝ առանց վախի և ճնշումների հաղորդելու սեռական ոտնձգության դեպքերի, ինչպես նաև գործատուների կողմից կանխարգելիչ պարտականությունների խախտման մասին.***
- ***հստակ սահմանել պետական լիազոր մարմնի՝ սեռական ոտնձգությունների դեմ պայքարի քաղաքականության ընդունման, դրա կիրարկման, սեռական ոտնձգության դեպքերի վերաբերյալ բողոքների քննության իրականացման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու լիազորությունը.***
- ***օրենսդրորեն սահմանել գործատուների համար սեռական ոտնձգության դեմ պայքարի քաղաքականության մշակման ուղենիշեր և չափանիշներ, գործատուների համար մշակել սեռական ոտնձգությունների կանխարգելման և դրա հետևանքների վերացման ուղղությամբ հանրամատչելի ուղեցույցներ՝ սեռական ոտնձգության դեպքերի կանխարգելման և պաշտպանության գործընթացում ներգրավված անձանց ու մարմինների իրավունքների, պարտականությունների և լիազորությունների վերաբերյալ.***
- ***իրականացնել աշխատավայրում սեռական ոտնձգության արգելքի վերաբերյալ հանրության իրազեկվածությունը բարձրացնող աշխատանքներ՝ այդ թվում՝ իրազեկման արշավներ գործատուների ու աշխատողների շրջանում ինչպես***

[460] Առավել մանրամասն տեղեկատվություն հասանելի է հետևյալ հղումներով՝ https://ombuds.am/am/site/ViewNews/3396, https://ombuds.am/am/site/ViewNews/3394, https://ombuds.am/am/site/ViewNews/3392, https://www.youtube.com/watch?v=aHI3iG8eB0Q:

պետական, այնպես էլ մասնավոր հատվածի համար, օրենսդրական կարգավորումների միջոցով ամրապնդել արհմիությունների դերը սեռական ոտնձգության դեմ պայքարի, այդ թվում՝ կանխարգելման հարցում:

2. Աշխատանքային օրենսգրքում ներդնել հստակ և ամբողջական փոխհատուցման մեխանիզմ, որը կկիրառվի խտրականության դրսևորման հայտնաբերման դեպքում (հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետությունը ստանձնել է միջազգային պարտավորություններ՝ պաշտպանելու խտրականությունից զերծ աշխատանքի իրավունքը):

3. Կատարել փոփոխություններ «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» օրենքում՝ անցում կատարելով պաշտպանության նվազագույն երաշխիքների ամրագրումից դեպի խթանիչ կարգավորումների ամրագրման մոդելին, ու օրենսդրական մակարդակում ամրագրել դրույթներ՝ ուղղված կանանց տնտեսական իրավունքների խթանմանն ու տնտեսական կյանքում կանանց առաջխաղացմանը:

4. Քայլեր ձեռնարկել հանրության շրջանում տարածված ու գոյություն ունեցող կարծրատիպերը հաղթահարելու, կնոջ դերի առնչությամբ պատշաճ ընկալում ձևավորելու, ինչպես նաև հասարակական և քաղաքական կյանքում կանանց ներուժը խթանելու ուղղությամբ: Այս նպատակով կարևոր գործիքներ կարող են լինել ինչպես կրթական և իրազեկման աշխատանքները, այնպես էլ տեղային ուսումնասիրությունները, որոնք կնպաստեն որոշումների կայացման հիմնավորվածության և պատճառաբանվածության վերլուծությանը՝ այն դեպքերում, երբ կոնկրետ ոլորտներում կամ հաստատություններում կանանց ներգրավվածության մակարդակը մնում է ցածր:

5. Գործուն ջանքեր գործադրել պետական աջակցության համապատասխան ծրագրերի, օրինակ՝ «Դայակ պետության աջակցությամբ» ծրագրի կամ նմանատիպ այլ ծրագրերի առկայությունն ու պատշաճ կիրառման, ընտանիքի և աշխատանքի համատեղման նպատակով ճկուն աշխատանքային գրաֆիկի ու աշխատատեղերում երեխաների խնամքի այլընտրանքային ծառայությունների երաշխավորման ուղղությամբ, քանի որ վերջիններս ունեն ինչպես սոցիալական, այնպես էլ տնտեսական կարևոր նշանակություն: Ուստի, նման ծրագրերի վերագործարկումը կամ մշակումն ու պատշաճ կիրառումն անհրաժեշտ է ընտանիքների բարեկեցության ամրապնդման և հանրային շահի պաշտպանության տեսանկյունից:

6. Շուտափույթ ջանքեր գործադրել՝ «Խտրականության կանխարգելման և խտրականությունից պաշտպանության մասին» օրենքի նախագիծն ընդունելու ուղղությամբ, որով նախատեսվում է սահմանել մի շարք հասկացություններ, այդ թվում՝ միջազգային իրավական փաստաթղթերով առաջարկվող, ինչպես նաև ստեղծել իրավահավասարության մարմին, որի լիազորություններով, ըստ գործող նախագծի, օժտվելու է Մարդու իրավունքների պաշտպանը:

7. Իրականացնել իրավահավասարության և խտրականության արգելքի առնչությամբ հանրային իրավագիտակցության բարձրացմանն ու հանրային իրազեկմանն ուղղված լայնածավալ աշխատանքներ, համակարգային միջոցառումներ ձեռնարկել կարծրատիպային մոտեցումների հաղթահարման, ինչպես նաև վաղ ամուսնությունների և այլ խնդիրների կանխարգելմանն ուղղությամբ:

8. Հարկային օրենսդրության մեջ նախատեսել հատուկ խթանիչ և արտոնյալ մեխանիզմներ կանանց համար՝ հաշվի առնելով այն, որ հարկային քաղաքականությունը կարող է արդյունավետ գործիք հանդիսանալ գենդերային հավասարության խթանման, կանանց տնտեսական լիարժեք ներգրավվածության և

առաջխաղացման, ինչպես նաև սոցիալ-տնտեսական խոչընդոտների հաղթահարման համար:

2. ՀՀ ռեզիդենտ անձանց համար Հայաստանի Հանրապետությունից դուրս գտնվող աղբյուրներից աշխատանքային կամ աշխատանքների կատարման և (կամ) ծառայությունների մատուցման քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակում ստացվող եկամուտների հարկման հետ կապված օրենսդրական խնդիր

Նախորդ տարեկան հաղորդման շրջանակում անդրադառնալով ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար ՀՀ-ից դուրս գտնվող աղբյուրներից աշխատանքային կամ աշխատանքների կատարման և (կամ) ծառայությունների մատուցման քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակում ստացվող եկամուտների հարկման հետ կապված օրենսդրական խնդրին՝ Մարդու իրավունքների պաշտպանը կարևորել էր դրա լուծման ուղղությամբ Պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ ՊԵԿ) գործադրած ջանքերը: Խոսքը վերաբերում է բարձրացված խնդրի կարգավորման նպատակով ՊԵԿ-ի կողմից մշակված և դեռևս 2024 թվականի փետրվարի 26-ին իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում (www.e-draft.am) տեղադրված «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծին[461], որով առաջարկվում է սահմանել, որ ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձանց Հայաստանից դուրս գտնվող աղբյուրներից աշխատանքային կամ աշխատանքների կատարման և (կամ) ծառայությունների մատուցման քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակում ստացվող եկամուտները չեն համարվում եկամտային հարկով հարկման օբյեկտ, եթե ռեզիդենտ ֆիզիկական անձի կողմից հաշվետու տարվա ընթացքում Հայաստանից դուրս ստացված նշված եկամուտները չեն գերազանցում 12 միլիոն դրամը[462]:

Պաշտպանը գնահատում է նաև նշված իրավիճակում ՊԵԿ-ի որդեգրած այն մոտեցումը, ըստ որի՝ մինչև համապատասխան օրենսդրական փոփոխությունների իրականացումը, ՊԵԿ-ը ձեռնպահ կմնա հարկային վարչարարություն իրականացնելուց՝ ներառյալ արգելադրում, գանձումներ և այլն: Կարծում ենք, որ այդպիսի մոտեցման շնորհիվ է, որ 2025 թվականին ո՛չ ՄԻՊ աշխատակազմ, ո՛չ էլ ՊԵԿ խնդրի վերաբերյալ դիմում-բողոքներ չեն ստացվել:

Այնուհանդերձ, նկատի ունենալով այն, որ խնդիրն օրենսդրական մակարդակում դեռևս լուծում չի ստացել՝ սույն տարեկան հաղորդման կազմման աշխատանքների շրջանակներում Մարդու իրավունքների պաշտպանը հարցադրում է կատարել ՊԵԿ պարզելու համար, թե ի՞նչ փուլում է գտնվում օրինագծի ընդունման գործընթացը: Ի պատասխան՝ ՊԵԿ-ից ստացվել է պարզաբանում առ այն, որ «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը, որով նախատեսվում էր ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձանց Հայաստանից դուրս գտնվող աղբյուրներից աշխատանքային կամ աշխատանքների կատարման և (կամ) ծառայությունների մատուցման քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակում ստացված եկամուտների՝ ՀՀ-ում հարկման կարգավորումների վերանայում, ներկայացվել էր ՀՀ վարչապետի աշխատակազմ, որը վերադարձվել էր ՀՀ վարչապետի

[461] Հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.e-draft.am/projects/6938 (20/03/2026թ.-ի դրությամբ):

[462] Նախագծի ընդունման հիմնավորումներից պարզ չէ, թե ի՞նչ չափանիշներից ելնելով է նախատեսվել 12 միլիոն դրամ շեմը: Կարծում ենք, որ նախագիծն այս մասով ունի հիմնավորման կարիք: Հակառակ դեպքում՝ հասկանալի չէ, թե ինչո՞վ է պայմանավորված այդպիսի տարբերակված մոտեցումը:

աշխատակազմի կողմից և գտնվում էր քննարկման փուլում: Քննարկումների արդյունքում որոշվել է, որ նախագծի հետագա ընթացքը կապահովի ՀՀ ֆինանսների նախարարությունը՝ որպես հարկային քաղաքականությունը մշակող մարմին:

Այս առումով շարունակում է մտահոգիչ մնալ այն, որ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից բարձրացված խնդրին տևական ժամանակ է օրենսդրական լուծում չի տրվում:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Մարդու իրավունքների պաշտպանը վերահաստատում է, որ անհրաժեշտ է արագացնել համապատասխան օրենսդրական փոփոխությունների կատարման գործընթացը, որի արդյունքում անձինք կարող են ներկայացնել եկամտային հարկի ճշտված հաշվարկ և հետ ստանալ վճարված եկամտային հարկի գումարը:

3. Մաքսակետերում գոյացող հերթերի և Պետական եկամուտների կոմիտեի հեռախոսազանգերի կենտրոնի մշտական հիմունքներով չգործելու խնդիրներ

Հաշվետու տարվա ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում իրականացված ուսումնասիրությունները վկայում են, որ շարունակվում է արդիական մնալ ՊԵԿ-ի մաքսային գործառնությունների իրականացման վայրերում գոյացող հերթերի խնդիրը: Նշվածի հաշվառմամբ՝ սույն տարեկան հաղորդման կազմման աշխատանքների շրջանակում Պաշտպանը հարցում է կատարել Պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ ՊԵԿ)՝ խնդրի կարգավորման ուղղությամբ ձեռնարկված քայլերի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու նպատակով:

Ըստ ՊԵԿ-ից ստացված տեղեկատվության՝ 2025 թվականի ընթացքում շարունակաբար իրականացվում են վարչարարության բարելավման և մաքսային գործառնությունների թվայնացմանն ուղղված աշխատանքներ: Ներկայում շարունակվում են պետական սահմանի ցամաքային անցման կետերին հարակից տարածքներում կուտակային կայանատեղիների ստեղծմանը վերաբերվող իրավական ակտերի փաթեթի աշխատանքները, ինչի ընդունումից և կայանատեղիների ստեղծումից հետո սահմանային անցման կետերում հնարավոր կլինի զգալիորեն կրճատել և կարգավորել հերթերը: Վերը նշվածի հետ համատեղ, իրականացվում են նաև մաքսային մարմինների համալրման գործընթացները:

Պաշտպանը ողջունում է վարչարարության արդյունավետության բարձրացմանն ու հերթերի հաջող կառավարմանն ուղղված համապարփակ մի շարք միջոցառումների իրականացումը: Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պաշտպանն արձանագրել է, որ որոշակիորեն կարգավորվել են նաև մաքսատուն-վարչություններում ձևավորված հերթերը:

Վերջին տարիներին ՄԻՊ-ին հասցեագրված բողոքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ շարունակում է չլուծված մնալ նաև ՊԵԿ-ի հեռախոսազանգերի կենտրոնի մշտական հիմունքներով չգործելու խնդիրը: Այսպես, մարդիկ նշում են, որ սահմանային անցակետերում տարբեր հարցեր ունենալով՝ փորձել են ՊԵԿ-ից ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն, սակայն չեն կարողացել, քանի որ հեռախոսազանգերի կենտրոնը

գիշերային ժամերին չի գործում: Ընդ որում, Պաշտպանը նշված խնդրին մանրամասն անդրադարձ է կատարել նաև իր նախորդ տարիների տարեկան հաղորդումներում[463]:

Ըստ ՊԵԿ-ի ներկայացրած պարզաբանումների՝ ՊԵԿ «Թեժ գիծ» ծառայությունը գործում է ՊԵԿ հեռախոսազանգերի կենտրոն-բաժնի կազմում և աշխատում է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը 09:00-ից 18:00-ն, իսկ շաբաթ օրը՝ ժամը 10:00-ից 14:00-ն: Հեռախոսազանգերի կենտրոն-բաժին հարցադրումներ կամ բողոքներ ստացվում են ոչ միայն հեռախոսակապով, այլ նաև էլեկտրոնային եղանակով՝ www.src.am պաշտոնական կայքից՝ շուրջօրյա: Հեռախոսազանգերի միջոցով ստացված բոլոր բողոքները արձանագրվում են և էլեկտրոնային համակարգի միջոցով հետագա ընթացքն ապահովելու նպատակով մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացվում են ՊԵԿ համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումներ: Ներկայում էլ Հեռախոսազանգերի կենտրոն-բաժնի կազմում գործող «Թեժ գիծ» ծառայության աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ներդրվել է «հետ զանգ» պատվիրելու հնարավորությունը (աշխատանքները ընթացքի մեջ են):

ՊԵԿ «Թեժ-գիծ» ծառայությունը շուրջօրյա կազմակերպելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու հարցի կապակցությամբ ներկայացվել է տեղեկատվություն այն մասին, որ Հեռախոսազանգերի կենտրոն-բաժնի աշխատանքները փոխկապակցված են ոչ միայն ՊԵԿ կառուցվածքային ստորաբաժանումների, այլ նաև ՀՀ պետական այլ մարմինների աշխատանքների հետ, որոնց աշխատանքային ժամերը սահմանված են երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը 9:00-ից մինչև 18:00-ն: Ինչ վերաբերում է օրվա տարբեր ժամերին Հայաստանի Հանրապետություն ներմուծում և արտահանում իրականացնող տնտեսավարողների կողմից բարձրացրած հարցերի վերաբերյալ արագ արձագանքմանը, ապա հայտնում ենք, որ ՀՀ բոլոր սահմանային անցման կետերն աշխատում են շուրջօրյա աշխատանքային ռեժիմով և առաջացած խնդիրները և բողոքները լուծում ստանում են տեղում՝ տվյալ մաքսային անցման կետում: Հետևաբար, Հեռախոսազանգերի կենտրոն-բաժնի աշխատանքային ժամերը գրաֆիկով շուրջօրյա սահմանելը համարում ենք անարդյունավետ:

Վերոգրյալի համատեքստում, Պաշտպանը վերահաստատում է տարիներ շարունակ ներկայացվող այն առաջարկը, ըստ որի՝ գործնականում սահմանային մաքսատուն-վարչություններում մարդիկ հաճախ, հայտնելով իրենց անհամաձայնությունը մաքսային ծառայողների պահանջների հետ, փորձում են ՊԵԿ-ի հեռախոսազանգերի կենտրոնից իրենց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ ստանալ պատշաճ տեղեկատվություն և իրենց խնդիրն ավելի արագ և ճկուն կերպով լուծել, սակայն չեն կարողանում: Այսպիսով, հեռախոսազանգերի կենտրոնի շուրջօրյա չգործելու պատճառով արագ արձագանքում պահանջող բողոքները ողջամիտ ժամկետում չեն լուծվում: Այս առումով շարունակում է խնդրահարույց մնալ հեռախոսազանգերի կենտրոնի աշխատանքը շաբաթվա բոլոր օրերին և շուրջօրյա չիրականացնելու հարցը, քանի որ նույն խնդրի հետ առնչվում են նաև այլ պետական մարմինների աշխատակիցները, որոնք քաղաքացիների՝ հրատապ լուծում պահանջող հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու կամ քաղաքացիների բարձրացրած խնդիրներին արագ լուծում տալու համար հնարավորություն չեն ունենում կապ հաստատել ՊԵԿ-ի հեռախոսազանգերի կենտրոնի հետ:

---

[463] Մանրամասն տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին 2020, 2023 և 2024 թվականների տարեկան հաղորդումները, համապատասխանաբար՝ էջեր 761-764, 398-400, 774-777:

Հարկ է նշել, որ արտասահմանյան փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ մի շարք եվրոպական երկրներում նմանատիպ ծառայությունների թեժ գծի հեռախոսահամարները գործում են շուրջօրյա (Գերմանիա, Իտալիա և այլն)[464]:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Պաշտպանն ընդգծում է, որ մաքսակետերում գոյացող հերթերի նվազեցման ուղղությամբ ՊԵԿ-ի ձեռնարկած քայլերը պետք է դիտել իբրև դրական առաջընթաց: Այնուհանդերձ անհրաժեշտ է շարունակական ջանքեր գործադրել հերթերի արդյունավետ կառավարումը բարձրացնելու ուղղությամբ: Անհրաժեշտ է նաև քննարկման առարկա դարձնել ՊԵԿ հեռախոսազանգերի կենտրոնի աշխատանքը մշտական հիմունքներով (շուրջօրյա) դարձնելու հարցը:

4. Վճարային քարտերով անկանխիկ վճարումներ ընդունելու հնարավորություն չապահովելու համար սահմանված տուգանքների անհամաչափության և անհատական մոտեցման բացակայության խնդիր

Նախորդ տարեկան հաղորդումների շրջանակներում Մարդու իրավունքների պաշտպանը մանրամասն անդրադարձ կատարելով վճարային քարտերով անկանխիկ վճարումներ ընդունելու հնարավորություն չապահովելու դեպքերում հարկ վճարողներից գանձվող տուգանքների չափերին *(300 հազար դրամ, իսկ խախտման արձանագրմանը հաջորդող մեկ տարվա ընթացքում կրկին կատարելու դեպքում՝ 400 հազար դրամ[465])* և խնդրի վերաբերյալ ՄԻՊ աշխատակազմ ստացված բողոքներին, ընդգծել էր, որ հաճախ տուգանք նշանակելիս հաշվի չի առնվում ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող տնտեսվարողի շրջանառության ծավալը, բոլորի համար գործում է տուգանքի միևնույն չափը, իսկ հարկային տեսուչը չունի օրենսդրական այնպիսի գործիքակազմ, որի կիրառմամբ կարողանա յուրաքանչյուր խախտման պարագայում ցուցաբերել անհատական մոտեցում:

Պաշտպանը նկատել էր նաև, որ մեծ ձեռնարկատիրության համար քննարկվող տուգանքի չափը կարող է լինել աննշան՝ հաշվի առնելով սուբյեկտի ֆինանսական դրությունը, մինչդեռ փոքր ձեռնարկատիրության համար այն կարող է պատճառ դառնալ գործունեությունը շարունակելու անհնարինության համար: Դրա հետ մեկտեղ, նշվածը խիստ բացասաբար կարող է ազդել նաև նորաբաց ձեռնարկատիրությունների վրա: Այլ կերպ՝ Պաշտպանն արձանագրել էր, որ առկա չեն տարատեսակ հանգամանքներ *(օրինակ՝ գյուղական համայնքում աշխատելու, նորաբաց լինելու, իրավախախտումն առաջին անգամ կատարած լինելու և այլն)* հաշվի առնելու հստակ կառուցակարգեր[466]:

Հարկ է նշել, որ Մարդու իրավունքների պաշտպանը չէր սահմանափակվել միայն նշված խնդիրների մատնանշմամբ, այլ իրավասու պետական մարմնին ներկայացրել էր նաև դրանց լուծմանն ուղղված կոնկրետ առաջարկություններ: Հաշվետու տարում ՄԻՊ աշխատակազմն այդ խնդիրների լուծման վիճակի նկատմամբ իրականացրել է հետևողական մշտադիտարկում:

---

[464] Հասանելի է հետևյալ հղումներով՝ https://www.zoll.de/EN/Contact/Other_contacts/other_contacts_node.html և https://www.gdf.gov.it/en (20/03/2026թ.-ի դրությամբ):

[465] Մանրամասն տե՛ս ՀՀ հարկային օրենսգրքի 419-րդ հոդվածի 10-րդ և 11-րդ մասերը:

[466] Մանրամասն տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի վերաբերյալ 2023 և 2024 թվականների տարեկան հաղորդումները (համապատասխանաբար՝ էջեր 393-394, 780-782):

Մասնավորապես, 2025 թվականի տարեկան հաղորդման կազմման շրջանակում նշված խնդիրների կարգավորման ուղղությամբ ձեռնարկված միջոցների, ստացվող բողոքների թվի և դրանց քննարկման արդյունքների վերաբերյալ Պաշտպանը պարզաբանումներ է պահանջել Պետական եկամուտների կոմիտեից (այսուհետ՝ ՊԵԿ):

Ի պատասխան՝ ներկայացվել է տեղեկատվություն այն մասին, որ վճարային քարտերով անկանխիկ վճարումներ ընդունելու կանոնները խախտելու համար նշանակված տուգանքների մասով ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով) ստացվել է թվով 39 դիմում-բողոք, ինչպես նաև թվով 19 դիմում-բողոք ստացվել է կանխիկ դրամով գումարի վճարման կամ ընդունման սահմանափակումները չպահպանելու դեպքում կիրառված տուգանքների մասով: Դիմումները հիմնականում վերաբերել են ոչ թե կիրառված տուգանքների անհամաչափությանը, այլ բուն ստուգման ակտերին:

Վերը նշված թվով 58 դիմում-բողոքների քննության արդյունքում Հանձնաժողովի կողմից ընդունվել են հետևյալ որոշումները.

- ✓ Թվով 14 դեպքով դիմում-բողոքը բավարարվել է,
- ✓ Թվով 42 դեպքով դիմում-բողոքը մերժվել է,
- ✓ Թվով 2 դեպքով դիմում-բողոքի հիման վրա հարուցված վարույթը կարճվել է:

ՊԵԿ-ի տեղեկացմամբ՝ Հանձնաժողովում յուրաքանչյուր գործ քննվում է առանձին և քննության ժամանակ հաշվի են առնվում կոնկրետ գործում առկա և որոշման կայացման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստական հանգամանքները:

Պաշտպանի այն հարցադրմանը, *թե արդյո՞ք քննարկման առարկա դարձվել են առաջին անգամ վճարային քարտերով անկանխիկ վճարումներ ընդունելու հնարավորություն չապահովելու համար նախազգուշացում կիրառելու օրենսդրական հնարավորություն նախատեսելու կամ սահմանված տուգանքների չափերը համաչափության սկզբունքի տեսանկյունից դիտարկելու և տուգանքների նվազագույն ու առավելագույն չափեր սահմանելու հնարավորության հարցերը*՝ ՊԵԿ-ը պարզաբանել է, որ պետական ֆինանսների կառավարման բնագավառում ՀՀ հարկային քաղաքականությունը մշակող և իրականացնող լիազոր մարմին է հանդիսանում Ֆինանսների նախարարությունը:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Պաշտպանն արձանագրում է, որ ստեղծված իրավիճակում տուգանքների առանց տարբերակման կամ անհատականացման, միասնական չափերի կիրառումը կարող է տարբեր աստիճանի ներգործություն ունենալ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող մեծ և փոքր ձեռնարկատիրության համար՝ առանց դրանցից յուրաքանչյուրի առանձնահատկությունները հաշվի առնելու: Մասնավորապես, այն դեպքերում, երբ մեծ ձեռնարկատիրության համար այդ տուգանքի չափը կարող է աննշան լինել՝ հաշվի առնելով ձեռնարկատիրության ֆինանսական դրությունը, փոքր ձեռնարկատիրության համար այն կարող է լուրջ խոչընդոտ հանդիսանալ առհասարակ և հանգեցնել ձեռնարկատիրական գործունեության ծավալման արգելքի:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Պաշտպանը վերահաստատում է, որ նշված խնդրի կարգավորման համար անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել առաջին անգամ վճարային քարտերով անկանխիկ վճարումներ ընդունելու հնարավորություն չապահովելու համար նախազգուշացում կիրառելու օրենսդրական հնարավորություն նախատեսելու կամ սահմանված տուգանքների չափերը համաչափության սկզբունքի տեսանկյունից դիտարկելու և տուգանքների նվազագույն ու առավելագույն չափեր սահմանելու հնարավորության հարցը: Ընդ որում, անհրաժեշտ է ցուցաբերել

անհատական մոտեցում՝ հաշվի առնելով կոնկրետ իրավիճակում իրավախախտման կոնկրետ հանգամանքները:

5. Ֆիզիկական անձանց կողմից ավտոմեքենայի օտարման գործարքներից առաջացած եկամտային հարկերի չկատարված պարտավորությունների մասին վերջիններիս ժամանակին չծանուցելու և հարկային վարչարարության գործընթացը ողջամիտ ժամկետում չիրականացնելու խնդիրներ

2025 թվականին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված անհատական դիմում-բողոքների հիման վրա իրականացված ուսումնասիրությունների արդյունքում վեր են հանվել ֆիզիկական անձանց կողմից ավտոմեքենայի օտարման գործարքներից առաջացած՝ Հարկային օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկման և վճարման ենթակա եկամտային հարկերի չկատարված պարտավորությունների մասին վերջիններիս ժամանակին չծանուցելու, ինչպես նաև հարկային վարչարարության գործընթացը ողջամիտ ժամկետում (հնարավորին սեղմ ժամկետում) չիրականացնելու խնդիրներ: Ընդ որում, այդ խնդիրների վերաբերյալ 2025 թվականին Պաշտպանին հասցեագրվել են ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր բողոքներ:

Այսպես, օրինակ՝ Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով անձը հայտնել է, որ 06/10/2025 թվականին ՀՀ պետական եկամուտների կոմիտեից (այսուհետ՝ ՊԵԿ) ստացել է արձանագրություն, որի համաձայն՝ ինքը 05/10/2021 թվականին ձեռք բերված ավտոմեքենան օտարել է 10/02/2022 թվականին: Հավելել է, որ արձանագրության ուսումնասիրությունից, ի թիվս այլնի, պարզ է դարձել, որ ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի օտարում է համարվում ավտոմեքենայի օտարումը, եթե այն օտարվում է ձեռք բերելուց հետո՝ 365 օրվա ընթացքում: Պարզվել է նաև, որ 2025 թվականի հոկտեմբերի 6-ի դրությամբ՝ իր կողմից չվճարված հարկային պարտավորությունների գումարը կազմում է 48 037 դրամ, որից հարկ՝ 36 000 դրամ, տույժ՝ 12 037 դրամ: Ընդ որում, ըստ արձանագրության, ֆիզիկական անձն ավտոմեքենայի օտարման գործարքից առաջացած եկամտային հարկը պետք է հաշվարկեր ինքնուրույնաբար՝ *մինչև 2023 թվականի մայիսի 1-ը՝ ներառյալ*, բացառապես էլեկտրոնային եղանակով հարկային մարմին ներկայացնելով եկամտային հարկի և սոցիալական վճարի տարեկան հաշվարկ: Բողոք ներկայացրած անձի տեղեկացմամբ՝ վերը նշված հանգամանքների մասին իրավասու պետական մարմինների կողմից ինքը ժամանակին չի ծանուցվել, իրավահարաբերության ծագման պահին գործող կարգավորումներին ծանոթ չի եղել, փոխարենը՝ տարիներ անց ՊԵԿ-ից ստացել է հարկային պարտավորության վճարման պահանջ:

Նմանատիպ մեկ այլ բողոքով Պաշտպանին դիմած անձը տեղեկացրել է, որ 07/11/2025 թվականին ՊԵԿ-ից ստացել է արձանագրություն, համաձայն որի՝ 23/09/2022 թվականին օտարել է 03/02/2022 թվականին ձեռք բերված ավտոմեքենան: Հավելել է, որ համաձայն արձանագրության՝ 2025 թվականի նոյեմբերի 7-ի դրությամբ՝ իր կողմից չվճարված հարկային պարտավորությունների գումարը կազմում է 47 036 դրամ, որից հարկ՝ 35 250 դրամ, տույժ՝ 11 786 դրամ: Նշել է նաև, որ արձանագրության համաձայն՝ ֆիզիկական անձն ավտոմեքենայի օտարումից առաջացած եկամտային հարկը պետք է հաշվարկեր ինքնուրույնաբար՝ *մինչև 2023 թվականի մայիսի 1-ը՝ ներառյալ*, բացառապես էլեկտրոնային եղանակով հարկային մարմին ներկայացնելով եկամտային հարկի և սոցիալական վճարի տարեկան հաշվարկ: Ըստ բողոք ներկայացրած անձի՝ վերոգրյալի մասին իրավասու պետական մարմինների կողմից ինքը ժամանակին չի ծանուցվել,

փոխարենը՝ տարիներ անց ՊԵԿ-ից ստացել է հարկային պարտավորության վճարման պահանջ:

Մյուս դեպքում նույնպես, ՄԻՊ-ին դիմած անձը հայտնել է, որ 06/10/2025 թվականին ՊԵԿ-ից ստացել է արձանագրություն, ըստ որի՝ 14/12/2022 թվականին օտարել է 27/05/2022 թվականին ձեռք բերված ավտոմեքենան: Նշել է, որ ըստ արձանագրության՝ 2025 թվականի հոկտեմբերի 10-ի դրությամբ՝ իր կողմից չվճարված հարկային պարտավորությունների գումարը կազմում է 40 631 դրամ, որից հարկ՝ 30 450 դրամ, տույժ՝ 10 181 դրամ: Նշել է նաև, որ արձանագրության համաձայն՝ ֆիզիկական անձն ավտոմեքենայի օտարումից առաջացած եկամտային հարկը պետք է հաշվարկեր ինքնուրույնաբար՝ *մինչև 2023 թվականի մայիսի 1-ը՝ ներառյալ*, բացառապես էլեկտրոնային եղանակով հարկային մարմին ներկայացնելով եկամտային հարկի և սոցիալական վճարի տարեկան հաշվարկ:

Բողոք ներկայացրած անձինք խնդրել են նշված հանգամանքները դարձնել քննարկման առարկա և Պաշտպանի իրավասության շրջանակում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ:

Բարձրացված խնդրի կապակցությամբ Պաշտպանի հարցմանն ի պատասխան՝ ՊԵԿ-ից ստացվել են պարզաբանումներ առ այն, որ ՀՀ կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի թիվ 1337-Ն որոշմամբ՝ ՀՀ ոստիկանության կողմից հարկային մարմին է տրամադրվում շարժական գույքի, դրանց սեփականատերերի, շարժական գույքի նկատմամբ գրանցված իրավունքների, դրանց փոփոխությունների մասին տեղեկություններ[467]:

Ըստ ՊԵԿ-ի՝ այդ տեղեկատվության հիման վրա իրականացվել են վերլուծական աշխատանքներ, համաձայն որոնց՝ մինչև Օրենսգրքի 01.01.2023 թվականի գործող խմբագրությամբ՝ ֆիզիկական անձի կողմից ավտոմեքենան ձեռք բերելուց հետո 365 օրվա ընթացքում անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձի օտարվելու դեպքում, որպես ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի օտարումից 2022 թվականին առաջանում է եկամտային հարկի պարտավորություն՝ 1% դրույքաչափով, բայց ոչ պակաս, քան ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի շարժիչի յուրաքանչյուր ձիաուժ հզորության համար 150 դրամից:

Տեղեկացվել է նաև, որ վերը նշվածի մասով ֆիզիկական անձինք օրենսդրությամբ սահմանված ժամկետներում հարկային մարմին չեն ներկայացրել 2022 թվականի եկամտային հարկի և սոցիալական վճարի տարեկան հաշվարկ և չեն վճարել արդյունքում առաջացող հարկային պարտավորությունները, որի հաշվառմամբ՝ հարկային մարմնի պաշտոնատար անձի կողմից 06/10/2025 և 07/11/2025 թվականին Օրենսգրքի 398-րդ հոդվածով սահմանված կարգով կազմվել են արձանագրություններ և ուղարկվել ֆիզիկական անձանց:

Վերոգրյալից բացի, ՊԵԿ-ը հայտնել է, որ (մինչև 01.01.2023 թվականը գործող խմբագրությամբ) Օրենսգրքի՝

---

[467] Հարկ է նշել, որ ըստ այդ որոշման՝ տեղեկությունները հարկային մարմին են ներկայացվում յուրաքանչյուր եռամսյակի համար՝ մինչև տվյալ եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը: Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ 05/10/2021 թվականին ձեռք բերված և 10/02/2022 թվականին օտարված, ինչպես նաև 03/02/2022 թվականին ձեռք բերված և 23/09/2022 թվականին օտարված ավտոմեքենաների մասով Ոստիկանության կողմից տեղեկությունները հարկային մարմին փոխանցելու ժամանակահատվածի վերաբերյալ տվյալներ են պահանջվել ՆԳՆ-ից: Ի պատասխան՝ տեղեկացվել է, որ առաջին ավտոմեքենայի, դրա սեփականատերերի, շարժական գույքի նկատմամբ գրանցված իրավունքների, դրանց փոփոխությունների մասին տեղեկությունները հարկային մարմին են ուղարկվել 21/04/2022 թվականին, իսկ երկրորդ ավտոմեքենայի վերաբերյալ տեղեկությունները՝ 10/10/2022 թվականին:

✓ 3-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ հարկ վճարողները պետք է Օրենսգրքով և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով ինքնուրույն հաշվարկեն ու վճարեն հարկերը, վճարները.

✓ 33-րդ հոդվածի համաձայն՝ հարկ վճարողը (հարկային գործակալը) և դրա պաշտոնատար անձը պարտավոր է Օրենսգրքով այլ բան սահմանված չլինելու դեպքում Օրենսգրքով և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով և ժամկետներում ինքնուրույն հաշվարկել և կատարել իր հարկային պարտավորությունները՝ Օրենսգրքով և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերում և կարգով կատարելով նաև հարկի և (կամ) վճարի կանխավճարներ, վարել Օրենսգրքով և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված հաշվառում, իսկ օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ նաև հաշվապահական հաշվառում, ինչպես նաև Օրենսգրքով և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով և ժամկետներում հարկային մարմին ներկայացնել հարկային հաշվարկները.

✓ 140-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եկամտային հարկ վճարողներ են համարվում ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք.

✓ 147-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ հարկման բազան որոշելու նպատակով նվազեցվող եկամուտներ են համարվում՝ սեփականության իրավունքով իրենց պատկանող գույքի (բացառությամբ ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի) օտարումից անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանցից ստացվող եկամուտները: Սույն կետի կիրառության իմաստով՝ ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի օտարում է համարվում ավտոմեքենայի օտարումը, եթե ավտոմեքենան օտարվում է ձեռք բերելուց հետո՝ 365 օրվա ընթացքում.

✓ 150-րդ հոդվածի 10-րդ կետի համաձայն՝ Օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի «ա» ենթակետով սահմանված դեպքում ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի օտարումից (այդ թվում՝ նաև այն դեպքում, երբ գույքն օտարվում է անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանցից տարբերվող և հարկային գործակալ չհանդիսացող անձի) ստացվող ամբողջ եկամուտների մասով եկամտային հարկը հաշվարկվում է 1 տոկոս դրույքաչափով, բայց ոչ պակաս, քան ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի շարժիչի յուրաքանչյուր ձիաուժ հզորության համար 150 դրամից: Շարժիչի հզորությունը կիլովատերով արտահայտված լինելու դեպքում համապատասխան հզորության նկատմամբ կիրառվում է 1.36 գործակից.

✓ 156-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ ֆիզիկական անձինք մինչև յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող հարկային տարվա մայիսի 1-ը ներառյալ (01.05.2023թ.) Օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմին են ներկայացնում Օրենսգրքի 151-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված եկամուտների մասով եկամտային հարկի տարեկան հաշվարկներ (հայտարարագրեր)՝ (ձևը հաստատված է ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 30.12.2016 թվականի № 300-Ն հրամանի 3-րդ հավելվածով).

✓ 401-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ մինչև 01.01.2025թ.-ը՝ 0.04

տոկոսի չափով, իսկ 01.01.2025թ.-ից՝ 0.075 տոկոսի չափով, ***բայց ոչ ավելի, քան 730 օրվա համար:***

ՊԵԿ-ի տեղեկացմամբ՝ «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» մասին ՀՕ-595-Ն օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ *ֆիզիկական անձի կողմից ավտոմեքենայի (հաշվառված կամ պետական գրանցում ստացած) օտարման գործարքներից առաջացած՝ Օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկման և վճարման ենթակա եկամտային հարկերի չկատարված պարտավորությունների վրա Օրենսգրքի 44-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված վաղեմության ժամկետը չի տարածվում:*

Միաժամանակ, հայտնել է, որ Պաշտպանին բողոք ներկայացրած անձանցից մեկը վերը նշված գործարքի մասով դիմել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողով՝ ներկայացնելով դիմում-բողոք Օրենսգրքի 398-րդ հոդվածով կազմված արձանագրությունն անվավեր ճանաչելու վերաբերյալ: Նշված դիմում-բողոքը, ՊԵԿ-ի տեղեկացմամբ, 06/11/2025 թվականի որոշմամբ մերժվել է:

Այսպիսով, ստացվում է, որ հարկային մարմինը երկար ժամանակ տեղեկացված լինելով ֆիզիկական անձանց կողմից չկատարված հարկային պարտավորությունների վերաբերյալ՝ չի ցուցաբերել բավարար փութաջանություն հարկային վարչարարությունը ողջամիտ ժամկետում (հնարավորին սեղմ ժամկետում) իրականացնելու համար: Արդյունքում՝ անձանց չվճարված հարկային պարտավորություններին հաշվարկվել են նաև տույժեր: Ընդ որում, այդ ընթացքում Օրենսգրքում կատարված փոփոխության արդյունքում՝ սահմանված տույժի չափն ավելացել է *(0.04 տոկոսից դառնալով՝ 0.075 տոկոս)*, ինչի հետևանքով վճարման ենթակա գումարն ավելի է շատացել: Ավելին՝ տպավորություն է ստեղծվում, որ հարկային մարմինը հնարավորին չափով ձգձգել է հարկային վարչարարության գործընթացը, որպեսզի հարկ վճարողն առավելագույն չափով տույժ վճարի կամ այլ խոսքով՝ 730 օրվա համար տույժ վճարի: Մարդու իրավունքների պաշտպանի գնահատմամբ՝ գործնականում հանդիպող նման գործելաոճը խնդրահարույց է և չի բխում ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված պատշաճ վարչարարության իրավունքի տրամաբանությունից:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ խնդիրների արդյունավետ լուծման համար Պաշտպանն առաջարկում է՝

- ✓ ***գործնականում, ինչպես նաև օրենսդրական մակարդակում վերանայել հարկային վարչարարության գործընթացի մեթոդաբանությունը, այդ թվում՝ քննարկման առարկա դարձնելով՝ այն ողջամիտ ժամկետում (հնարավորին սեղմ ժամկետում) իրականացնելու գործուն կառուցակարգեր նախատեսելու հարցը.***
- ✓ ***քննարկման առարկա դարձնել հարկ վճարողներին հարկային պարտավորությունների մասին պարզաբանումների տրամադրման և տեղեկատվական-իրազեկման կառուցակարգերի բարելավման հարցը:***

6. Ֆիզիկական անձանց կողմից ապրանքներն առանց մաքսատուրքի ՀՀ ներմուծելու հաճախականության որոշման հստակ չափորոշիչների բացակայության խնդիր

Տարիներ շարունակ Մարդու իրավունքների պաշտպանն իր գործունեությունն ամփոփող տարեկան հաղորդումներում բարձրաձայնել է ֆիզիկական անձանց կողմից ապրանքներն առանց մաքսատուրքի ՀՀ ներմուծելու հաճախականության որոշման հստակ չափորոշիչների բացակայության խնդրի մասին: Մասնավորապես, նախորդ տարեկան հաղորդումների շրջանակներում մանրամասն անդրադարձ կատարելով այս խնդրին՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրել էր, որ ոլորտը կարգավորող օրենսդրությամբ սահմանված չեն անձնական օգտագործման ապրանքների ներմուծման հստակ չափորոշիչներ, ինչի հետևանքով ֆիզիկական անձանց համար պարզ չէ, թե ի՞նչ հաճախականությամբ ՀՀ ապրանք ներմուծելիս նրանք պարտավորված կլինեն վճարել մաքսատուրք[468]: Այս առումով մտահոգիչ է այն, որ Պաշտպանի կողմից բազմիցս բարձրացված խնդրին լուծումներ չեն տրվել: Հարկ է նաև նշել, որ հաշվետու տարում Պաշտպանին շարունակվել են բողոքներ հասցեագրվել նշված խնդրի վերաբերյալ:

Սույն տարեկան հաղորդման կազմման աշխատանքների շրջանակում նշված խնդրի կարգավորման ուղղությամբ ձեռնարկված միջոցների, 2025 թվականի ընթացքում ստացված դիմում-բողոքների թվի և դրանց քննարկման արդյունքների վերաբերյալ Պաշտպանը պարզաբանումներ է պահանջել Պետական եկամուտների կոմիտեից (այսուհետ՝ ՊԵԿ):

Ի պատասխան՝ ներկայացվել է տեղեկատվություն այն մասին, որ ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման ապրանքներ ներմուծելիս մաքսատուրք վճարելու պահանջ ներկայացնելու վերաբերյալ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողով ստացվել է թվով 4 դիմում-բողոք, որոնց քննության արդյունքում հանձնաժողովի կողմից ընդունվել են հետևյալ որոշումները.

- ✓ թվով 3 դեպքով դիմում-բողոքը բավարարվել է,
- ✓ թվով 1 դեպքով դիմում-բողոքը մերժվել է:

ՊԵԿ-ի տեղեկացմամբ՝ «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» 11.04.2017 թվականի պայմանագրի 1-ին հավելվածով հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ Միություն) մաքսային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 256-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ Միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքներն անձնական օգտագործման ապրանքների շարքին դասելն իրականացվում է մաքսային մարմնի կողմից՝ ելնելով նույն կետով սահմանված չափանիշներից: Օրենսգրքի 457-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Օրենսգրքի 256-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ կետերի դրույթները չեն կիրառվում՝ մինչև Եվրասիական տնտեսական հանձնաժողովի այն որոշումն ուժի մեջ մտնելը, որն ընդունվել է նշված հոդվածի 5-րդ կետին համապատասխան, և որով սահմանվում են Միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքներն անձնական օգտագործման ապրանքների շարքին դասելու չափանիշների քանակական բնութագրերը: Մինչև Եվրասիական տնտեսական հանձնաժողովի նշված որոշումն ուժի մեջ մտնելը համապատասխան իրավահարաբերությունների կարգավորումն իրականացվում է՝ «Մաքսային միության մաքսային սահմանով ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման ապրանքների տեղափոխման և դրանց բացթողման հետ կապված մաքսային գործառնությունների իրականացման կարգի մասին» 2010 թվականի հունիսի 18-ի համաձայնագրի 3-րդ հոդվածի 1-ին կետի դրույթներին համապատասխան, համաձայն որի՝ ֆիզիկական անձանց կողմից մաքսային սահմանով տեղափոխվող

[468] Մանրամասն տե՛ս, 2020, 2021, 2023 և 2024 թվականների ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումները (համապատասխանաբար՝ էջեր 750-752, 728-730, 394-395, 789-791):

ապրանքներն անձնական օգտագործման ապրանքների շարքին դասելն իրականացվում է մաքսային մարմնի կողմից ռիսկերի կառավարման համակարգի կիրառմամբ՝ ելնելով նույն կետով սահմանված չափանիշներից[469]: Ֆիզիկական անձանց կողմից Միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքներն անձնական օգտագործման ապրանքների շարքին դասելու համար օգտագործվող ռիսկի ցուցիչները հաստատված են Միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի 28.09.2017 թվականի թիվ 24/13 որոշման հավելվածով:

Այսպիսով, Միության մաքսային օրենսդրությունը թեև նախատեսում է մաքսային մարմինների կողմից ռիսկերի կառավարման համակարգի միջոցով ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման ապրանքների տեղափոխման հաճախականության հսկողություն, սակայն ***անորոշ է, թե ի՞նչ հաճախականությամբ ՀՀ ապրանք ներմուծելիս ֆիզիկական անձինք պարտավորված կլինեն վճարել մաքսատուրք:*** Մինչդեռ, այս ոլորտում հստակ կարգավորումների բացակայությունը, կարող են խնդիրների ու անգամ կամայական մոտեցման տեղիք տալ: Կարծում ենք, որ նման մոտեցումը չի բխում նաև օրենքի որոշակիության ու կանխատեսելիության պահանջներից: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը մի շարք որոշումներով անդրադառնալով իրավական որոշակիության սկզբունքին՝ արձանագրել է, որ օրենքը պետք է լինի բավականաչափ հստակ, ինչը հնարավորություն է տալիս անձին համապատասխանեցնելու իր վարքագիծը և կանխատեսելու դրա հետևանքները[470]:

Նորմը չի կարող դիտվել որպես «օրենք», քանի դեռ այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որպեսզի անձին հնարավորություն ընձեռի կարգավորել իր վարքագիծը. վերջինս պետք է կարողանա, եթե անհրաժեշտ լինի համապատասխան խորհուրդներով, տվյալ հանգամանքներում ողջամտության սահմաններում կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող են առաջանալ տվյալ գործողության արդյունքում[471]:

Իրավական որոշակիության սկզբունքը բացահայտվել է նաև Սահմանադրական դատարանի մի շարք որոշումներում: Այսպես, Սահմանադրական դատարանը նշել է, որ իրավական պետության սկզբունքը, ի թիվս այլնի, պահանջում է նաև իրավական օրենքի առկայություն: Վերջինս պետք է լինի բավականաչափ մատչելի՝ իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կողմնորոշվելու, թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում: Ըստ դատարանի՝ նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա իրավաբանական և ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը. նրանք պետք է հնարավորություն ունենան կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Պաշտպանը վերահաստատում է, որ անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել ֆիզիկական անձանց կողմից ապրանքներն առանց մաքսատուրքի ՀՀ ներմուծելու հաճախականության որոշման հստակ չափորոշիչներ մշակելու հարցը:

---

[469] Դրանք են՝ 1) տեղափոխվող ապրանքների մասին ֆիզիկական անձի դիմումից (բանավոր կամ գրավոր՝ ուղևորային մաքսային հայտարարագրի օգտագործմամբ)՝ սույն Համաձայնագրով սահմանված դեպքերում, 2) ապրանքների բնույթից և քանակից, 3) ֆիզիկական անձանց կողմից մաքսային սահմանը անցնելու և (կամ) նրանց կողմից մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման հաճախականությունից:

[470] Տե՛ս *Սանդեյ Թայմսն ընդդեմ Միացյալ Թագավորության* (Sunday times v. The United Kingdom) գործով Եվրոպական դատարանի վճռով, գանգատ թիվ 6538/74, կետ 49:

[471] Տե՛ս *Սիլվերն ընդդեմ Մեծ Բրիտանիայի* (Silver and Others v. the United Kingdom) գործով 1983 թվականի մարտի 25-ի վճիռ գանգատ թիվ 7136/75), կետ 88:

7. Ստուգումներ իրականացնող պետական մարմինների ծառայողների գործունեության թափանցիկության ապահովման խնդիր

Տարիներ շարունակ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը տարեկան հաղորդումներում բարձրաձայնել է ստուգումների ընթացքում պետական մարմինների ծառայողների գործունեության թափանցիկության ապահովման խնդրի մասին[472]: 2025 թվականի ընթացքում Պաշտպանը կրկին գրավոր և բանավոր բողոքներ է ստացել ստուգումներ իրականացնող անձանց, մասնավորապես՝ հարկային և մաքսային ծառայողների անհարգալից վարքագծի վերաբերյալ:

Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաղորդման կազմման նպատակով ներկայացված համապատասխան հարցադրմանն ի պատասխան՝ Պետական եկամուտների կոմիտեից (այսուհետ՝ ՊԵԿ) պարզաբանել են, որ ՊԵԿ ներքին անվտանգության վարչության ծառայողական քննությունների և վարքագծի (էթիկայի) կանոնների բաժինը 2025 թվականի ընթացքում ստացել է թվով 12 բողոք, որից 11-ով իրականացվել է ծառայողական քննություն, որոնց արդյունքում թվով երկու ծառայողներ ենթարկվել են թեթև կարգապահական տույժի՝ «Նախազգուշացում»:

Ըստ տեղեկացման՝ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի կողմից կայացված եզրակացությունների արդյունքում հայտնաբերված խախտումները հետագայում բացառելու նպատակով ՊԵԿ նախագահի կողմից տրվել են համապատասխան հանձնարարականներ: Միաժամանակ, ՊԵԿ ներքին անվտանգության վարչության աշխատակիցների կողմից իրականացված շրջայցերի ընթացքում, անձնակազմի հետ տարվող աշխատանքներում, ծառայողներին հանձնարարվել է պահպանել «Հարկային ծառայության մասին», «Մաքսային ծառայության մասին», «Հանրային ծառայության մասին», «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքների և ՀՀ աշխատանքային օրենսգրքի պահանջները և անշեղորեն առաջնորդվել ՊԵԿ նախագահի համապատասխան հրամաններով և հանձնարարականներով, ինչպես նաև խստագույնս պահպանել հարկային և մաքսային ծառայողների վարքագծի կանոնները՝ համակարգում բացառելով հարկ վճարողների շահերի ոտնահարման, նրանց գործունեության խոչընդոտման, անհարկի միջամտության, ճնշումների գործադրման, ինչպես նաև կոռուպցիոն ռիսկերը:

Պաշտպանը ողջունում է հարկային և մաքսային ծառայողների անհարգալից վարքագծի դրսևորումները կանխելու ուղղությամբ ՊԵԿ ձեռնարկած քայլերը: Այնուհանդերձ հարկ է նշել, որ նախորդ տարեկան հաղորդումների շրջանակներում Մարդու իրավունքների պաշտպանն առաջարկել էր ստուգումների գործընթացի թափանցիկությունն ապահովելու նպատակով հարկային և մաքսային ծառայողների հանդերձանքին ամրացնել դյուրակիր տեսախցիկներ՝ նկատի ունենալով այն, որ վերջին տարիներին իրավապահ մարմինների կողմից լայնորեն կիրառվում են տեխնոլոգիական նորամուծություններ, որոնցից են նաև դյուրակիր տեսախցիկները[473]:

Վերոգրյալի առնչությամբ ներկայացվել է պարզաբանում առ այն, որ ՊԵԿ մաքսային ծառայությունում իրենց ծառայողական պարտականություններն իրականացնելիս քաղաքացիների և տնտեսվարողների հետ անմիջական շփում ունեցող ծառայողներն

---

[472] Առավել մանրամասն տե՛ս 2020, 2021, 2023 և 2024 թվականների ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումները, համապատասխանաբար՝ էջեր 762-764, 735-736, 396-398 և 778-780:

[473] Տե՛ս նույն տեղում:

ապահովված են համազգեստին ամրացվող տեսախցիկների գործարկման հնարավորությամբ: Տեղեկատվություն է տրամադրվել նաև այն մասին, որ 2024 թվականի հոկտեմբեր ամսից տեսաձայնագրող տեխնիկական միջոցները սկսել են կիրառվել թեմատիկ հարկային ստուգումների ընթացքում: *Լրացուցիչ տեսախցիկներով համալրվելու անհրաժեշտություն դեռևս առկա է:* Միաժամանակ, նշվել է, որ թեմատիկ հարկային ստուգման գործընթացը կազմակերպվում է այնպես, որ յուրաքանչյուր ստուգող խմբում առկա լինի առնվազն մեկ տեսաձայնագրող սարք և յուրաքանչյուր թեմատիկ հարկային ստուգման շրջանակներում Հարկային օրենսգրքին համաձայն իրականացվի տեսաձայնագրում:

Պաշտպանը ողջունում է այս ուղղությամբ ՊԵԿ ձեռնարկած քայլերը և արձանագրում, որ, ընդհանուր առմամբ, Պաշտպանի կողմից տարիներ շարունակ բարձրացված հարցը ստացել է լուծում: Պաշտպանն ընդգծում է նաև, որ քաղաքացիների (տնտեսվարողների) հետ անմիջական շփում ունեցող ստուգումներ իրականացնող ծառայողների հանդերձանքի վրա դյուրակիր տեսախցիկների ամրացումը կնպաստի նրանց գործունեության թափանցիկության բարձրացմանը, կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը, բողոքներում բարձրացված հարցերի արդյունավետ լուծմանը:

Այնուհանդերձ, հաշվի առնելով այն, որ դեռևս առկա է լրացուցիչ ծառայողական տեսաձայնագրող տեխնիկական միջոցներով համալրման անհրաժեշտություն՝ Մարդու իրավունքների պաշտպանն ընդգծում է, որ պետք է շարունակական ջանքեր գործադրել այդ գործընթացը հնարավորին սեղմ ժամկետում ավարտին հասցնելու ուղղությամբ:

8. Մաքսային կանոնների խախտումների վերաբերյալ գործի քննությունը հեռահաղորդակցության միջոցներով իրականացնելու օրենքով նախատեսված հնարավորությունը գործնականում չապահովելու խնդիր

2024 թվականի հոկտեմբերի 24-ին «Մաքսային կարգավորման մասին» օրենքում կատարվել է փոփոխություն, որի արդյունքում, մասնավորապես, նախատեսվել է մաքսային կանոնների խախտում կատարած անձի գրավոր դիմումի հիման վրա գործի քննությունը հեռահաղորդակցության միջոցներով իրականացնելու հնարավորություն:

Անշուշտ, նման կարգավորումը պետք է դրական գնահատել, քանի որ այն ֆիզիկապես մասնակցելու հնարավորության բացակայության պայմաններում՝ անձին իր ցանկությամբ հնարավորություն է ընձեռում գործի քննությանը մասնակցել տեսակապի միջոցով:

Այնուհանդերձ, հարկ է նշել, որ 2025 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված բողոքի հիման վրա նախաձեռնված քննարկման արդյունքում վեր է հանվել մաքսային կանոնների խախտումների վերաբերյալ գործի քննությունը հեռահաղորդակցության միջոցներով իրականացնելու օրենքով նախատեսված հնարավորությունը գործնականում չապահովելու խնդիր:

Այսպես, ՄԻՊ-ին դիմած անձը հայտնել է, որ Պետական եկամուտների կոմիտեից ստացված ծանուցագրով հրավիրվել է ՊԵԿ արտաքին տնտեսական գործունեության մաքսային սպասարկման և հսկողության վարչություն՝ իր նկատմամբ սկսված վարչական վարույթի գործի քննությանը մասնակցելու համար: Նույն ծանուցագրով բողոք ներկայացրած անձին պարզաբանվել են «Մաքսային կարգավորման մասին» օրենքի 332-րդ և Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 267-րդ հոդվածները,

միաժամանակ, տեղեկացվել է, որ *հիշյալ օրենքի 332-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մաքսային կանոնների խախտում կատարած անձի գրավոր դիմումի հիման վրա գործի քննությունը կարող է իրականացվել հեռահաղորդակցության միջոցներով, որպես տարբերակ առաջարկվել են՝ «Zoom», «Google meet», «WhatsApp», «Viber» և «Telegram» հավելվածները: Ծանուցագրում նշվել է նաև, որ հեռահաղորդակցության միջոցներով գործի քննությանը մասնակցելու ցանկության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել դիմում և հայտնել հեռահաղորդակցության կոնկրետ միջոցը և բողոք ներկայացրած անձի բջջային հեռախոսահամարը:*

Վերոգրյալի հաշվառմամբ՝ բողոք ներկայացրած անձը գրավոր դիմում է հասցեագրել ՊԵԿ՝ խնդրելով գործի քննությունը իրականացնել «Zoom» հավելվածի միջոցով: Տրամադրել է նաև էլեկտրոնային փոստի հասցեն և բջջային հեռախոսահամարը:

Բողոք ներկայացրած անձի տեղեկացմամբ՝ ստացել է պատասխան այն մասին, որ *գործով նշանակված քննությունը հեռահաղորդակցության միջոցներով իրականացնելու տեխնիկական հնարավորությունները բացակայում են, ուստի առաջարկվել է նշված օրը և ժամին ներկայանալ ՊԵԿ:*

Բողոք ներկայացրած անձն իր մտահոգությունն է հայտնել առ այն, որ ՊԵԿ հիշյալ վարչությունը խուսափել է գործի քննությունն իրականացնել տեսակապի միջոցով և իրեն ուղղորդել է ընտրել այլ տարբերակ, ինչի արդյունքում, ըստ բողոք ներկայացրած անձի, տեղի է ունեցել չարաշահում, որն էլ իր հերթին հանգեցրել է իր լսված լինելու իրավունքի խախտման:

Բարձրացված հարցի կապակցությամբ պարզաբանումներ ներկայացնելու պահանջով ՄԻՊ-ը գրություն է հասցեագրել ՊԵԿ: Ի պատասխան՝ *տրամադրվել է տեղեկատվություն այն մասին, որ մաքսային կանոնների խախտման գործի քննությանը մասնակցելու վերաբերյալ մշակվել է ծանուցագրի մեկ միասնական ձևանմուշ, որտեղ, ի թիվս այլնի, նշվում է «Մաքսային կարգավորման մասին» օրենքի 332-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ գործի քննությունը հեռահաղորդակցության միջոցներով իրականացվելու իրավական հնարավորության մասին: Ըստ պարզաբանման՝ տվյալ դեպքում, դիմողի նախընտրած «Zoom» համակարգի վերաբերյալ համացանցում պարբերաբար ի հայտ են գալիս խոցելիության նյութեր, և նպատակ ունենալով ապահովագրել ՊԵԿ–ի համակարգչային ներքին ցանցը, նպատակահարմար չի գտնվել գործի քննությունը տվյալ համակարգով իրականացնելը:*

Վերոգրյալը վկայում է այն մասին, որ գործնականում կարող են լինել դեպքեր, երբ անձի գրավոր դիմումի հիման վրա մաքսային կանոնների խախտումների վերաբերյալ գործի քննությունը հեռահաղորդակցության միջոցներով իրականացնելու օրենքով նախատեսված հնարավորությունը չապահովվի, ինչը *կարող է բացասական ազդեցություն ունենալ վարչական վարույթին մասնակցող անձանց լսված լինելու իրավունքի արդյունավետ իրացման վրա:*

Բացի այդ, գործի քննությունը հեռահաղորդակցության միջոցներով իրականացնելու օրենքով նախատեսված հնարավորությունը գործնականում չապահովելը կարող է բացասական ազդել նաև արդի տեխնոլոգիաների կիրառման միջոցով վարչարարության արդյունավետության բարձրացման, ինչպես նաև թվային ծառայությունների նկատմամբ հանրային վստահություն ձևավորելու վրա:

Նշվածի հետ մեկտեղ, հատկանշական է, որ գործի քննությունը տեսակապի միջոցով իրականացնելու հնարավորության մասին անձանց ծանուցելուց առաջ՝ վարչական մարմինը պետք է հավաստիանա գործնականում դրա կիրառման հնարավորության մեջ, ըստ անհրաժեշտության կազմակերպչական և տեխնիկական

միջոցներ ձեռնարկի՝ այդ թվում՝ համակարգչային ներքին ցանցի ապահովագրման ուղղությամբ, որից հետո միայն անձանց ուղարկվող ծանուցագրերում տեսակապի տարբեր համակարգեր առաջարկի[474]: Հակառակ պարագայում՝ գործի քննությունը հեռահաղորդակցության միջոցներով իրականացնելու օրենքով նախատեսված հնարավորությունը կկրի զուտ ձևական բնույթ և չի ծառայի իր նպատակին:

Վերոգրյալի հետ մեկտեղ, հարկ է ընդգծել, որ Հարկային օրենսգրքի 440-րդ հոդվածի բովանդակային ուսումնասիրությունից պարզվում է, որ հարկային մարմնի բողոքարկման հանձնաժողով ներկայացված դիմում-բողոքների քննությունը կարող է իրականացվել նաև բանավոր ընթացակարգով: Ընդ որում, *այս դեպքում դիմում-բողոքների քննությունը կարող է իրականացվել նաև տեսաձայնային կապի միջոցով (տե՛ս նշված հոդվածի 6-րդ մասը):* Այս տեսանկյունից հատկանշական է, որ Պաշտպանի՝ 2025 թվականի տարեկան հաղորդման նախապատրաստման շրջանակում ՊԵԿ-ի կողմից ներկայացվել են տվյալներ, ըստ որոնց՝ *2025 թվականին հեռահաղորդակցության միջոցներով վարչական վարույթի անկացման անհրաժեշտություն չի առաջացել, հետևաբար՝ այդ եղանակով վարչական վարույթներ չեն իրականացվել:*

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը, Մարդու իրավունքների պաշտպանը հարկ է համարում ընդգծել, որ անձանց իրավունքների, այդ թվում՝ լսված լինելու իրավունքի արդյունավետ (լիարժեք) երաշխավորման տեսանկյունից՝ անհրաժեշտ է ջանքեր գործադրել՝ մաքսային կանոնների խախտում կատարած անձի գրավոր դիմումի հիման վրա գործի քննությունը հեռահաղորդակցության միջոցներով իրականացնելու օրենքով նախատեսված հնարավորությունը գործնականում ապահովելու ուղղությամբ:

9. Հարկային պարտավորությունների առաջադրման վերաբերյալ վարչական ակտը դատական կարգով անվավեր ճանաչված լինելու պայմաններում՝ այդ նույն հարկային պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով կրկնակի վարչարարության իրականացման և նոր վարչական ակտի ընդունման խնդիր

2025 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել է բողոք՝ կապված հարկային պարտավորությունների առաջադրման վերաբերյալ վարչական ակտը դատական կարգով անվավեր ճանաչված լինելու պայմաններում՝ այդ նույն հարկային պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով կրկնակի վարչարարության իրականացման և նոր վարչական ակտի ընդունման հետ:

Այսպես, Պաշտպանին հասցեագրված բողոքով անձը տեղեկացրել է, որ դեռևս 2021 թվականին Պետական եկամուտների կոմիտեի «Ֆիզիկական անձի կողմից չկատարված հարկային պարտավորությունը գանձելու մասին» թիվ 1902-Ա որոշմամբ՝ վերջինիցս բռնագանձվել է 508 250 ՀՀ դրամ գումար՝ 2017 թվականի ընթացքում իրականացրած տրանսպորտային միջոցի ներմուծման գործարքի մասով ներմուծման հայտարարագիր չներկայացնելու և ավելացված արժեքի հարկի ու բնապահպանական վճարի գծով պարտավորությունը չկատարելու համար: Հայտնել է նաև, որ ՀՀ վարչական դատարանի

[474] Ի դեպ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նման պարտականություն է վերապահված քննիչին: Ըստ այդմ, տեխնիկական միջոցներ կիրառելուց առաջ քննիչն այդ մասին տեղեկացնում է քննչական գործողության մասնակիցներին, *ինչպես նաև միջոցներ է ձեռնարկում տեխնիկական միջոցների սարքինությունն ստուգելու ուղղությամբ* (տե՛ս նշված օրենսգրքի 214-րդ հոդվածի 2-րդ մասը):

06.03.2023 թվականի օրինական ուժի մեջ մտած վճռով ՊԵԿ հիշյալ որոշումն անվավեր է ճանաչվել:

Հավելել է, որ 15.02.2024 թվականին ՊԵԿ-ը կայացրել է «Ֆիզիկական անձի կողմից չկատարված հարկային պարտավորությունը գանձելու մասին» թիվ 237-Ա որոշումը, որով որոշվել է վերջինիցս բռնագանձել 508 250 ՀՀ դրամ գումար՝ որպես 2017 թվականի ընթացքում իրականացրած վերոնշյալ ներմուծման գործարքի մասով ներմուծման հայտարարագիր չներկայացնելու և ԱԱՀ-ի ու բնապահպանական վճարի գծով չկատարված պարտավորություն:

Բողոք ներկայացրած անձը մտահոգություն է հայտնել առ այն, որ Պետական եկամուտների կոմիտեի թիվ 237-Ա որոշման հիմքում դրվել են այն նույն իրավական և փաստական հիմքերը, որոնց հիման վրա ընդունվել էր 23.07.2021 թվականի թիվ 1902-Ա որոշումը, որը Վարչական դատարանի վերը նշված օրինական ուժի մեջ մտած վճռով արդեն իսկ ճանաչվել է անվավեր:

Բարձրացված հարցի վերաբերյալ Պետական եկամուտների կոմիտեն ներկայացրել է պարզաբանում առ այն, որ դատական կարգով վիճարկված ՊԵԿ 2021 թվականի հուլիսի 7-ի «Չկատարված հարկային պարտավորությունները գանձելու մասին» թիվ 1902-Ա վարչական ակտն անվավեր է ճանաչվել, սակայն այդ վարչական ակտով սահմանված հարկային պարտավորությունը չի դադարել գոյություն ունենալ՝ հաշվի առնելով դրա օրենքի ուժով առաջացած լինելու փաստը:

Ըստ տրամադրված պարզաբանման՝ քանի դեռ հարկային պարտավորությունը ՀՀ հարկային օրենսգրքի 45-րդ հոդվածի 1-ին մասի հիմքերից որևէ մեկով, այդ թվում՝ դատական ակտով, չի դադարել, գանձման որոշումն անվավեր ճանաչված լինելու դեպքում չի կարող հանգեցնել անձնական հաշվի քարտում փոփոխության:

Տրամադրված պարզաբանման համատեքստում հարկ է անդրադառնալ ՀՀ վճռաբեկ դատարանի արձանագրումներին, որոնք հանգում են հետևյալին. *«(…) օրենքով սահմանված կարգով իրականացված վարչարարության արդյունքում վարչական մարմնի կողմից ընդունված վարչական ակտով (որոշում, կարգադրություն, հրաման կամ այլ անհատական իրավական ակտ) հանրային իրավունքի բնագավառում կարգավորվում է կոնկրետ գործ, իսկ իրավական որոշակիության սկզբունքն իրենից ենթադրում է, որ վարչական մարմինը չպետք է ունենա վերջնական և պարտադիր վարչական ակտի վերանայման հնարավորություն՝ զուտ գործի կրկնակի քննության և գործով նոր վարչական ակտ կայացնելու նպատակով: Ընդ որում, այն դեպքերում, երբ վարչական ակտն անվավեր է ճանաչվում վարչական մարմնի կողմից օրենսդրությամբ սահմանված ընթացակարգային նորմերի պահանջների խախտված լինելու հիմքով, որոնք ազդեցություն են ունեցել որոշման նյութական իրավաչափության վրա և խախտել շահագրգիռ անձանց հիմնական իրավունքները, ապա տվյալ դեպքում վարչական մարմինը չի կարող իրականացնել գործի կրկնակի քննություն և վերացնելով գործի քննության նախորդ վարույթի շրջանակներում թույլ տրված խախտումները՝ կայացնել նույնաբովանդակ վարչական ակտ: Հակառակ դեպքում, ընթացակարգային իրավանորմերի խախտումներով ընդունված վարչական ակտերը վերացվելուց հետո միևնույն հարցի վերաբերյալ երկրորդ և ավելի անգամներ վարչական վարույթ հարուցելու և նոր վարչական ակտ ընդունելու հնարավորությունը ոչ միայն չի համապատասխանի սույն որոշմամբ վկայակոչված իրավակարգավորումներին և դրանց վերաբերյալ արված վերլուծություններին, այլ նաև ուղղակիորեն կնպաստի վարչական մարմնի կողմից ընթացակարգային իրավանորմերի պարբերական անտեսմանը՝ ստեղծելով իրավական որոշակիությունն ու անվտանգությունը խաթարող պարարտ միջավայր: Ավելին, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ նման գործելաոճը նաև*

էական չափով հարկատուների միջոցների հաշվին գոյացող պետական բյուջեի միջոցների վատնում կլինի, քանի որ վարչական մարմնի անբարեխիղճ գործելաոճի հետևանքով միևնույն հարցի վերաբերյալ կհարուցվեն և կիրականացվեն մեկից ավելի վարույթներ՝ կատարելով լրացուցիչ, չարդարացված ծախսեր: Ընդ որում, որոշ դեպքերում այդ ծախսերը կարող են գերազանցել նույնիսկ գանձման առաջադրվող հարկային պարտավորությունների չափը: Ուստի, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ***անվավեր ճանաչված միջամտող վարչական ակտով (անկախ այն հանգամանքից, թե ինչ հիմքով է այն ճանաչվել անվավեր) առաջադրված պարտավորությունները չեն կարող կրկին առաջադրվել նոր վարչական ակտի տեսքով:*** *Վճռաբեկ դատարանը գտել է նաև, որ օրենքով առաջացած հարկային պարտավորությունից անձը չի կարող ազատվել, այն չի կարող դադարել, քանի դեռ առկա չէ Հարկային օրենսգրքի 45-րդ հոդվածով նախատեսված հարկային պարտավորության դադարման հիմքերից որևէ մեկը: Հետևաբար ՀՀ ՊԵԿ-ը իրավասու է կիրառելու իր լիազորություններից բխող բոլոր իրավաչափ ներգործության այլ միջոցները հարկային պարտավորության գծով չվճարված գումարները գանձելու համար,* ***բայց ոչ՝ հարկային պարտավորության գծով ժամանակին չվճարված գումարը գանձելու մասին նոր վարչական ակտ ընդունելով[475]:***

Այսպես, ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքի հաշվառմամբ՝ Մարդու իրավունքների պաշտպանը մտահոգիչ է համարում վարչական մարմնի կողմից նույն հարկային պարտավորության վերաբերյալ կրկնակի վարչարարության իրականացումը և նույն փաստական ու իրավական հիմքերով նոր վարչական ակտի ընդունումն այն պայմաններում, երբ նախորդ վարչական ակտը դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է անվավեր: Նման գործելաոճը համահունչ չէ իրավական որոշակիության սկզբունքի առանցքային տարրերից մեկի՝ դատական ակտերի կայունության (res judicata) սկզբունքի[476] հետ, որի ցանկացած խախտում հանգեցնում է իրավական որոշակիության խաթարման և ազդում իրավունքի գերակայության սկզբունքի վրա:

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է նաև, որ իրավական որոշակիության սկզբունքն ըստ էության երաշխավորում է օրինական ուժի մեջ մտած դատական ակտի կայունությունը, ինչը, ի թիվս այլ հատկանիշների (անհերքելիություն, բացառիկություն, նախադատելիություն), ***ենթադրում է այդպիսի դատական ակտի պարտադիրությունը: Պարտադիրության հատկանիշը ենթադրում է, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, իրավաբանական անձինք ու քաղաքացիներն իրենց գործունեության ընթացքում պարտավոր են հաշվի առնել օրինական ուժի մեջ մտած դատական ակտը և իրավունք չունեն փվյալ դատական ակտով կայացված հարցի վերաբերյալ կայացնելու նոր որոշում[477]:***

---

[475] Տե՛ս Վճռաբեկ դատարանի 2022 թվականի նոյեմբերի 4-ի թիվ ՎԴ/8884/05/18 վարչական գործով որոշումը:

[476] Այդ սկզբունքի հիմքում ընկած է իրավական կարգադրագրերի կայունության, օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի անփոփոխելիության և համընդհանուր պարտադիրության գաղափարը, որով, ի թիվս այլնի, ապահովվում է դատարանների հեղինակությունն ու վստահությունը դատական իշխանության նկատմամբ: Իրավական պետության հայեցակարգից և դրանից ածանցվող իրավական որոշակիության սահմանադրաիրավական սկզբունքից բխում է օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի նկատմամբ վստահության, այլ կերպ ասած՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի ճշմարտացիության կանխավարկածը, ինչից էլ բխում է ներպետական դատարանների վերջնական դատողությունները հարգելու ու դրանք կասկածի տակ չդնելու կանոնը:

[477] Տե՛ս Վճռաբեկ դատարանի 2015 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ ԵԱԴԴ/0913/02/13 և 2024 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ ԱՎԴ2/0105/02/23 քաղաքացիական գործերով որոշումները:

Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ իրավական որոշակիությունն իրավական անվտանգության կարևոր բաղադրիչ է, որով, ի թիվս այլնի, ապահովվում է նաև վստահությունը հանրային իշխանության և նրա հաստատությունների նկատմամբ[478]:

Սահմանադրական դատարանը միաժամանակ հավելել է, որ իրավական պետության սահմանադրաիրավական հայեցակարգից և դրանից ածանցվող իրավական որոշակիության սահմանադրաիրավական սկզբունքից ուղղակիորեն բխում է օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի նկատմամբ վստահելիության կամ այլ կերպ ասած՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի ճշմարտացիության կանխավարկածը[479]:

Այս համատեքստում՝ հարկ է նշել, որ վարչական մարմինները պետք է ունենան ներքին ընթացակարգեր, որոնց շրջանակներում դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի իրավական հետևանքները պետք է ամբողջականորեն և պարտադիր կերպով հաշվառվեն վարչարարության ընթացքում՝ բացառելով նույն փաստական և իրավական հանգամանքների կրկնակի վարչարարական գնահատումը: Դա թույլ կտա նաև ապահովել դատական ակտերի իրական կատարողականությունն ու կանխարգելիչ նշանակությունը:

Հարկային պարտավորությունների առաջադրման վերաբերյալ վարչական ակտը դատական կարգով անվավեր ճանաչված լինելու պայմաններում՝ այդ նույն հարկային պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով նոր վարչական ակտի ընդունումը վարչական մարմնի կողմից կարող է չարաշահումների առիթ դառնալ՝ նկատի ունենալով այն, որ կարող է ստեղծվել մի իրավիճակ, երբ վարչական մարմնի անբարեխիղճ գործելաոճի հետևանքով միևնույն հարցի վերաբերյալ հարուցվեն և իրականացվեն մեկից ավելի վարույթներ՝ հանգեցնելով չարդարացված հավելյալ ծախսերի:

Այս տեսանկյունից նպատակահարմար է քննարկման առարկա դարձնել նաև վարչական մարմինների համապատասխան տեղեկատվական համակարգերում կրկնակի վարչարարությունը կանխարգելող թվային կառուցակարգերի ներդրման հարցը *(օրինակ՝ դատարանի կողմից անվավեր ճանաչված վարչական ակտերի տվյալների մուտքագրումը վարչական մարմինների համապատասխան տեղեկատվական համակարգեր կարող է տեխնիկապես անհնար դարձնել կրկնակի վարչարարությունը):*

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Պաշտպանն անհրաժեշտ է համարում՝

- ✓ ***գործնականում բացառել հարկային պարտավորությունների առաջադրման վերաբերյալ վարչական ակտը դատական կարգով անվավեր ճանաչված լինելու պայմաններում՝ այդ նույն հարկային պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով վարչական մարմնի կողմից նույնաբովանդակ վարչական ակտի ընդունումը՝ որպես կրկնակի իրականացված վարչարարության հետևանք.***
- ✓ ***ձեռնարկել ներքին վերահսկողական և կանխարգելիչ միջոցառումներ՝ գործնականում նույն հարկային պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով վարչական մարմնի կողմից կրկնակի վարչարարություն իրականացնելու և նույնաբովանդակ վարչական ակտերի ընդունումը բացառելու ուղղությամբ:***

[478] Տե՛ս Սահմանադրական դատարանի 27.05.2008 թվականի թիվ ՍԴՈ-754 որոշումը:

[479] Տե՛ս Սահմանադրական դատարանի 04.07.2023 թվականի թիվ ՍԴՈ-1693 որոշումը:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մատակարարված ծառայությունների համար չվճարելու դեպքում բաժանորդին ջրի նվազագույն քանակով չապահովելը

Տարիներ շարունակ Մարդու իրավունքների պաշտպանն իր գործունեությունն ամփոփող տարեկան հաղորդումներում բարձրաձայնել է մատուցված ծառայությունների համար սահմանված գումարը չվճարելու պատճառով բաժանորդների ջրամատակարարման դադարեցման դեպքերում ջրի նվազագույն քանակով ապահովելու խնդրի մասին: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է երեխաներին, տարեցներին, հաշմանդամություն ունեցող անձանց ջրի հասանելիությունն ապահովելուն: Այս տեսանկյունից շարունակում է մտահոգիչ մնալ այն հանգամանքը, որ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից բազմիցս բարձրացված խնդրին օրենսդրական լուծումներ չեն տրվել:

Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2016 թվականի նոյեմբերի 30-ի «Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոնները սահմանելու մասին» թիվ 378-Ն որոշմամբ (այսուհետ՝ Կանոններ) հաստատված հավելվածի 147-րդ կետով մատակարարին իրավունք է տրված մատուցված ծառայությունների կամ մատուցված ծառայության վերահաշվարկված քանակի դիմաց վճարման ենթակա գումարի կամ հաշվարկված տույժի չվճարման դեպքում դադարեցնել բաժանորդի ջրամատակարարումը:

Հարկ է նշել, որ Կանոններով սահմանված մատուցված ծառայության դիմաց չվճարումը չի ենթադրում մատուցվող ծառայության անմիջապես դադարեցում և այն մատակարարի համար սահմանված է ոչ որպես պարտադիր պահանջ, այլ՝ որպես իրավունք (հայեցողական լիազորություն): Չնայած դրան, բաժանորդի ջրամատակարարման դադարեցումը չպիտի հանգեցնի վերջինիս ջրի և սանիտացիայի հասանելիության իրավունքից զրկելուն: Թեև մատակարարը *(ըստ ՄԻՊ աշխատակազմ ստացված տվյալների)* գործնականում չի օգտվում բաժանորդի ջրամատակարարման դադարեցնելու իր իրավունքից, այնուամենայնիվ Կանոններով պետք է սահմանվի նաև բաժանորդին նվազագույն ջրի քանակով ապահովելու մատակարարի պարտականությունը:

Մարդու իրավունքների պաշտպանի նախորդ տարեկան հաղորդումների շրջանակներում ամփոփվել և մանրամասն ներկայացվել են քննարկվող խնդրի առնչությամբ ՄԱԿ-ի միջազգային իրավական փաստաթղթերը և զեկույցները, որոշ երկրների բարձր դատարանների իրավական դիրքորոշումները, արտասահմանյան փորձը, ուստի հարկ չենք համարում սույն պարագրաֆում կրկին անդրադառնալ դրանց: Այնուհանդերձ վերոգրյալի համատեքստում նպատակահարմար ենք գտնում ևս մեկ անգամ արձանագրել, որ պետության պոզիտիվ պարտավորությունն է ջրի հասանելիության ապահովումը հասարակության բոլոր շերտերի համար, ներառյալ՝ հատուկ կարիքներ ունեցող անձանց, ինչպես օրինակ՝ երեխաները, տարեցները, հաշմանդամություն ունեցող անձինք և այլն: Հայաստանի Հանրապետությունում խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցումն իրականացնում է մասնավոր՝ «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերությունը: Սակայն, այդ ծառայությունների մատուցման իրականացումը մասնավոր ընկերությանը փոխանցելու դեպքում էլ պետության պոզիտիվ պարտավորությունն է պահպանել ջրի հասանելիության

ապահովումը հասարակության բոլոր շերտերի համար: Հետևաբար, մատուցված ծառայությունների դիմաց վճարման ենթակա գումարի չվճարման դեպքում, եթե առկա են միջազգային չափանիշներին համապատասխան հիմքերը, անձն ամբողջովին չի կարող զրկվել ջրի հասանելիությունից ու այդ իրավունքից, և պետք է ունենա նվազագույն չափաքանակով ջրին հասանելիություն: Ավելին, կարևոր է, որպեսզի ջրանջատումը չհանդիսանա սանիտացիայից զրկվելու պատճառ:

Պաշտպանը 2025 թվականի տարեկան հաղորդման նախապատրաստման շրջանակում խնդրի կարգավորման ուղղությամբ ձեռնարկված միջոցների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու նպատակով գրություններ է հասցեագրել Հանձնաժողով և «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերություն:

Այսպես, Հանձնաժողովի տեղեկացմամբ՝ Հանձնաժողովն օրենքով ստեղծված՝ հանրային ծառայությունների ոլորտում կարգավորում իրականացնող ինքնավար մարմին է, որը գործում է «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքով և ճյուղային օրենքներով *(«Էներգետիկայի մասին» օրենք, «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենք, ՀՀ ջրային օրենսգիրք և այլն)* իրեն վերապահված իրավասությունների շրջանակում: Վերը նշված իրավական ակտերով՝ Հանձնաժողովին սոցիալական քաղաքականություն իրականացնելու և/կամ սոցիալական խնդիրներ լուծելու իրավասություն վերապահված չէ: «Էներգետիկայի մասին» օրենքով և ՀՀ ջրային օրենսգրքով խոցելի սպառողի *(բնակիչ բաժանորդ, որը Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով ստացել է խոցելի սպառողի կարգավիճակ՝ հաշվի առնելով նրա սոցիալապես անապահով լինելու կամ հատուկ կարգավիճակ ունենալու հանգամանքը)* համար սահմանված են առանձին կարգավորումներ, որոնք առնչվում են միմիայն Հանձնաժողովի կողմից վերջիններիս համար տարբերակված սակագների սահմանմանն առնչվող հարաբերություններին: *Սակայն պայմանավորված խմելու ջրի կենսական նշանակության հանգամանքով, բնակչության մոտ (բազմաբնակարան շենքերում) չվճարման համար ջրամատակարարման դադարեցում չի իրականացվում:* Այդ դեպքում գանձումն իրականացվում է հարկադիր կատարման ծառայության միջոցով կամ դատական ակտի հիմքով:

Ըստ «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության՝ հասարակության լայն շերտերին (այդ թվում նաև՝ խոցելի և մեկուսացված) խմբերին մատուցված ծառայությունների համար սահմանված գումարը չվճարելու պատճառով *բաժանորդների մոտ ջրամատակարարման դադարեցումներ չեն իրականացվել:*

Վերոգրյալից հետևում է, որ Պաշտպանի կողմից տարիներ շարունակ բարձրացված խնդիրը՝ մատուցված ծառայությունների համար սահմանված գումարը չվճարելու պատճառով բաժանորդների ջրամատակարարման դադարեցման դեպքերում ջրի նվազագույն քանակով ապահովելու վերաբերյալ, ***դեռևս օրենսդրական մակարդակում լուծում չի ստացել:*** Ավելին, չեն ներդրվել նաև հատուկ կարիքներ ունեցող անձանց համար *(ինչպես օրինակ՝ երեխաներ, տարեցներ, հաշմանդամություն ունեցող անձինք և այլն)* ջրի հասանելիության, ջրի իրավունքին վերաբերելի միջազգային չափորոշիչների ապահովման կառուցակարգեր:

Նշվածի համատեքստում՝ որպես դրական առաջընթաց պետք է համարել այն, որ Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող ***«ԵՄ-ն՝ հանուն կանաչ վերականգնման»*** ծրագիր շրջանակում խմելու ջրի և ջրահեռացման ազգային փորձագետի կողմից մշակվելու է «Անապահով սպառողներին և ջրամատակարարման ու ջրահեռացման հավասար հասանելիության ապահովման տեսանկյունից մեկուսացված և խոցելի խմբերի համար ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների

հավասար հասանելիության ապահովման մեխանիզմները, ինչպես նաև սուբսիդիաների տրամադրման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ: Հարկ է նշել, որ 2025 թվականին նախագիծը մշակող ազգային փորձագետի նախաձեռնությամբ՝ ՄԻՊ աշխատակազմում կազմակերպվել է հանդիպում, որի ընթացքում ջրի և սանիտացիայի հասանելիության իրավունքին վերաբերելի որոշ խնդիրների հետ մեկտեղ, քննարկման առարկա են դարձվել նաև ջրամատակարարման դադարեցման դեպքերում ջրի նվազագույն քանակով ապահովելու հետ կապված հարցերը:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Պաշտպանը վերահաստատում է, որ պետությունը պետք է ապահովի ջրի հասանելիությունը, ջրի իրավունքին վերաբերելի միջազգային չափորոշիչները և սահմանի գործուն կառուցակարգեր հասարակության բոլոր շերտերի համար ջրին հասանելիությունն ապահովելու նպատակով: Ընդ որում՝ այդ համատեքստում անհրաժեշտ է նկատի ունենալ նաև անվճարունակության դեպքում նշված կառուցակարգերի մշակման կարևորությունն ու պատշաճ իրացման անհրաժեշտությունը:

2. Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման համակարգերի կառուցումը ներդրումային ծրագրերում ներառելը

Հաշվետու տարում շարունակել են արդիական մնալ խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման համակարգերի բացակայության (խցանումների, վթարների) հետ կապված խնդիրները: Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2025 թվականի ընթացքում՝ Մարդու իրավունքների պաշտպանին շարունակել են հասցեագրվել բողոքներ նշված խնդիրների վերաբերյալ:

Հարկ է նշել, որ հաշվետու տարում Մարդու իրավունքների պաշտպանի միջամտությամբ և իրավասու պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների հետ արդյունավետ համագործակցության արդյունքում հնարավոր է եղել մի շարք անհատական հարցերի տալ լուծում: Այսպես, օրինակ՝ Պաշտպանին ներկայացրած բողոքներից մեկով անձը հայտնել է, որ Երևան քաղաքի, Բագրևանդ թաղամասում կառուցված բազմաբնակարան շենքերի համալիրի հարակից տարածքում գտնվող դիտահորից երկար ժամանակ է կեղտաջուր է հոսում՝ ողողելով շրջակա տարածքը: Բողոք ներկայացրած անձի տեղեկացմամբ՝ նշված արտահոսքի պատճառով տարածքում ստեղծվել է խիստ հակասանիտարական վիճակ, որը սպառնում է բնակիչների առողջությանը: Հավելել է, որ խնդրի կարգավորման նպատակով բանավոր և գրավոր դիմել է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) և ստացել պատասխան առ այն, որ վերը նշված թաղամասում կառուցված բազմաբնակարան շենքերի համալիրի տարածքում Ընկերության կողմից սպասարկվող ջրահեռացման համակարգեր առկա չեն, ուստի, խնդրո առարկա հարցի լուծումը դուրս է Ընկերության գործառույթների շրջանակներից: Ըստ բողոք ներկայացրած անձի՝ դիտահորի պատկանելիության հարցը հստակեցնելու նպատակով, գրավոր դիմել է նաև Երևանի քաղաքապետարան և Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով, սակայն ՄԻՊ-ին դիմելու օրվա դրությամբ պատասխան չի ստացել: Բողոք ներկայացրած անձը, հաշվի առնելով բարձրացված հարցի կարևորությունը և հրատապությունը, նկատի ունենալով այն հանգամանքը, որ ստեղծված իրավիճակը կարող է հանգեցնել տարբեր վարակիչ հիվանդությունների տարածմանը՝ խնդրել է վերը նշված հանգամանքները դարձնել

քննարկման առարկա և Պաշտպանի իրավասության շրջանակում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ:

Բողոքի քննարկման շրջանակում Պաշտպանը գրություն է հասցեագրել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով: Հանձնաժողովն, ուսումնասիրելով Երևան քաղաքի Բագրևանդ թաղամասում կառուցված բազմաբնակարան շենքերին հարակից ջրահեռացման համակարգի անսարք վիճակի հարցը, հայտնել է, որ ըստ Ընկերության ներկայացրած պարզաբանումների՝ նշված կոյուղագիծն անհատական կառուցված ջրահեռացման համակարգ է և հանձնված չէ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեին, հետևաբար, ընդգրկված չէ Ընկերության վարձակալությանը հանձնված գույքի ցանկում: Ուստի, հարցի քննարկումը դուրս է Հանձնաժողովի իրավասության շրջանակից:

Տեղեկացրել է նաև, որ Ընկերության սպասարկմանն ու շահագործմանը հանձնված գույքի ցանկը սահմանված է Ընկերության հետ կնքված ջրային համակարգերի և այլ գույքի վարձակալության պայմանագրով, որով վարձատուին, տվյալ դեպքում՝ Կառավարությանը ներկայացնում է Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեն:

Բարձրացված հարցի վերաբերյալ Երևանի քաղաքապետարանը ներկայացրել է պարզաբանում առ այն, որ 2017 թվականի հունվարի 1-ից մեկնարկել է ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի ծառայությունների մատուցման վարձակալության պայմանագիր, որի կողմերն են հանդիսանում Ջրային կոմիտեն՝ որպես վարձատու և Ընկերությունը՝ որպես վարձակալ: Նշվածով պայմանավորված՝ Երևանի քաղաքապետարանը հայտնել է, որ ներկայացված խնդրի կարգավորումը գտնվում է Ջրային կոմիտեի, Ընկերության և/կամ սեփականատերերի պատասխանատվության ներքո: *Այնուամենայնիվ, հաշվի առնելով հարցի կարևորությունը՝ ձեռնարկված միջոցառումների արդյունքում Նոր Նորք վարչական շրջանի (ղեկավարի աշխատակազմի) կողմից վթարված ջրահեռացման համակարգի խնդիրը կարգավորվել է:*

Ստացված տեղեկատվությունը փոխանցվել է բողոք ներկայացրած անձին: Վերջինս հաստատել վերոգրյալ հանգամանքը և շնորհակալություն հայտնել ՄԻՊ հաստատությանը կատարած աշխատանքի համար:

Մարդու իրավունքների պաշտպանը գնահատում է նշված հարցում Երևանի քաղաքապետարանի ակտիվ ու արձագանքող մոտեցումը, այնուհանդերձ հարկ է համարում ընդգծել, որ չնայած անհատական մակարդակում արձանագրված դրական առաջընթացին՝ խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման համակարգերի բացակայության հետ կապված խնդիրները համակարգային առումով շարունակում են խնդրահարույց մնալ: Ընդ որում, հաշվետու տարվա ընթացքում այդպիսի համակարգային խնդիրներ Պաշտպանը վերհանել է ոչ միայն անհատական դիմում-բողոքների ուսումնասիրության, այլ նաև տարբեր բնակավայրեր իրականացրած այցերի արդյունքում: Այսպես, օրինակ՝ Սյունիքի մարզ իրականացրած աշխատանքային այցի շրջանակում Մարդու իրավունքների պաշտպանը 2025 թվականի մայիսի 21-ին այցելել է նաև Տեղ խոշորացված համայնքի Խոզնավար և Խնածախ սահմանամերձ բնակավայրեր: Այցի ընթացքում Պաշտպանն ու աշխատակազմի ներկայացուցիչները հանդիպել են բնակիչների հետ և լսել նրանց մտահոգող հարցերը: Բնակիչների կողմից, ի թիվս այլնի, բարձրաձայնվել են ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի կառուցման անհրաժեշտության հետ կապված հարցեր: Կապան համայնքի Շիկահող և Սրաշեն բնակավայրերի բնակիչները, մասնավորապես, բարձրացրել են խմելու ջրի հասանելիության հետ կապված հարցեր: Բնակիչների տեղեկացմամբ՝ որպես խմելու ջուր

օգտագործում են գետի ջուրը, որը խմելու համար պիտանի չէ, քանի որ համապատասխան սարքերի բացակայության պատճառով չի ֆիլտրացվում: Հավելել են, որ ստիպված են լինում խմելու համար անհրաժեշտ ջուրը եռացնել կամ սառեցնել, ապա հալեցնել և հետո միայն խմել կամ աղբյուրից բերել, ինչը բնակիչներից շատերի համար դժվար է: Խմելու ջրի հետ կապված խնդիրներ վեր են հանվել նաև Մեղրի համայնքի Ալվանք և Շվանիձոր բնակավայրեր իրականացված այցերի ընթացքում: Ընդ որում, բնակիչներից բացի, խմելու ջրի հասանելիության խնդիրը բարձրացրել են նաև Մեղրի համայնքի ղեկավարը և նրա տեղակալը, մասնավորապես, նշելով, որ խնդրի կարգավորման համար անհրաժեշտ է ջրի խողովակաշար կառուցել: Հավելել են, որ հիշյալ խողովակաշարը կառուցելու համար ՄԱԿ-ի հետ ձեռք է բերվել ֆինանսավորման հատկացման վերաբերյալ նախնական պայմանավորվածություն, սակայն դեռևս համապատասխան ֆինանսավորում չի ստացվել: Ալվանք բնակավայրի վարչական ղեկավարը, ի թիվս այլնի, բարձրացրել է խմելու ջրի խնդիր՝ նշելով, որ խմելու ջուրը հիմնականում հասանելի է գյուղի կենտրոնական մասում, իսկ մյուս մասերում՝ բարակ շիթով է հոսում: Հավելել է, որ խմելու ջրի խողովակները հին են և մաշված, գյուղում առկա չէ կոյուղի:

Հարկ է նշել, որ Սյունիքի մարզ իրականացված աշխատանքային այցի շրջանակում վերհանված բոլոր խնդիրները մանրամասն ուսումնասիրվել են ՄԻՊ աշխատակազմում և հասցեագրվել են իրավասու պետական մարմիններին: Արդյունքում, իրավասու պետական մարմինները Պաշտպանի աշխատակազմ ներկայացրել են նշված բնակավայրերը պատշաճ ջրամատակարարմամբ ապահովելու վերաբերյալ իրենց տեսլականը և այդ ուղղությամբ նախատեսվող աշխատանքների վերաբերյալ տեղեկություններ: Մասնավորապես՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը (այսուհետ՝ ՏԿԵՆ) վերը նշված խնդիրների մասով տեղեկացրել է, որ Շիկահող գյուղի խմելու ջրի ջրամատակարարման վերաբերյալ համայնքի ղեկավարը տեղեկացրել է, որ ջրատարի նախագծանախահաշվային փաստաթղթերը փորձաքննության փուլում են: Խմելու ջրի խնդրի մասով նշվել է նաև, որ Առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ Սյունիքի մասնաճյուղի կողմից իրականացվում է ջրի լաբորատոր հսկողություն: Հայտնել է նաև, որ Շիկահող և Սրաշեն գյուղերում խմելու ջրի խնդիրներն ի սկզբանե գտնվում են Սյունիքի մարզպետի աշխատակազմի ուշադրության կենտրոնում և աշխատանքային օրակարգում, դրանք աստիճանաբար լուծում են ստանում և կշարունակեն լուծում ստանալ պետական ու համայնքային ծրագրերով, պետության կողմից սուբվենցիոն հատկացումների և մյուս այլ ձևերով: Հավելել է, որ խմելու ջրի հասանելիության խնդրի մասով Մեղրի համայնքի ղեկավարը տրամադրել է տեղեկատվություն առ այն, որ ներկայում համայնքը համագործակցում է մի շարք շահագրգիռ կազմակերպությունների հետ՝ այն կարգավորելու համար: Կապան, Մեղրի և Տեղ համայնքներ կատարած այցերի շրջանակում բնակիչների կողմից բարձրացված խմելու ջրի խնդիրների վերաբերյալ, ՏԿԵՆ-ը տեղեկացրել է, որ նշված բնակավայրերը ներառված չեն խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայություններ մատուցող Ընկերության սպասարկման տարածքում: Հայտնել է նաև, որ Շիկահող, Ալվանք, Շվանիձոր, Խոզնավար բնակավայրերի խմելու ջրի մատակարարման համակարգի բարելավման աշխատանքները ներառված են Եվրոպական ներդրումային բանկի կողմից նախատեսվող «Դիմակայուն Սյունիք» շրջանակային վարկային ծրագրով սահմանված Սյունիքի մարզի թվով 55 բնակավայրերի ցանկում, Խնածախ բնակավայրը ներառված է ՀՏՋՀ-ի կողմից իրականացվող Վերակառուցման զարգացման բանկի (KfW), Եվրոպական

Ներդրումային Բանկի և Եվրամիություն/ՀԵԾ-ի կողմից ֆինանսավորվող «ՀԵԾ-II, փուլ-3» ծրագրի ԼՈՏ-4 բաղադրիչում:

2025 թվականի ընթացքում Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի Կեչուտ և Գնդեվազ բնակավայրեր իրականացրած աշխատանքային այցի շրջանակում Մարդու իրավունքների պաշտպանն ու աշխատակազմի ներկայացուցիչները հանդիպել են բնակիչների հետ և լսել նրանց մտահոգող հարցերը: Վերջիններս հանդիպման ընթացքում հայտնել են, որ ամռանը լուրջ խնդիր է խմելու ջրի հասանելիության հարցը, քանի որ գյուղի մի մասը խմելու ջուրն օգտագործում է ոռոգման նպատակով, ինչի պատճառով գյուղի մյուս բնակիչները խմելու ջուր չեն ունենում: Այս հարցի կապակցությամբ Գնդեվազ բնակավայրի վարչական ղեկավարը պարզաբանել է, որ բազմիցս բնակիչներին հորդորել է խմելու ջուրը չօգտագործել ոռոգման նպատակով, սակայն ապարդյուն:

Վայոց ձորի մարզ իրականացված աշխատանքային այցի շրջանակում վերհանված խնդիրների մասով ՏԿԵՆ-ը, մասնավորապես, տեղեկացրել է, որ «Լիդիան Արմենիա» ՓԲ ընկերությունը պարտավորվել է 7 մլն ԱՄՆ դոլարին համարժեք դրամական միջոցներ ուղղել Ամուլսարի շրջակա Վայք, Սիսիան և Ջերմուկ խոշորացված համայնքներին: Նշված գումարով վերոնշյալ համայնքները կարող են իրագործել խմելու ջրի հասանելիության բարելավման, ինչպես նաև բարձրացված այլ համայնքային խնդիրների լուծման նպատակով ծրագրեր: Բնակավայրի խմելու ջրի մատակարարման խնդիրների կարգավորման շրջանակը վերապահված է տեղական ինքնակառավարման մարմնին: Որպես Գնդևազ բնակավայրի խմելու ջրի խնդրի կարգավորման տարբերակ՝ առաջարկվում է դիտարկել Ջերմուկ համայնքի կողմից սուբվենցիոն ծրագրային հայտի ներկայացումը:

Վերոգրյալի համատեքստում՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը հարկ է համարում հատուկ ընդգծել, որ ջրի ու սանիտացիայի իրավունքը՝ որպես մարդու հիմնարար իրավունք, ամրագրված է միջազգային իրավական փաստաթղթերով: Այսպես, Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի կողմից 2010 թվականի հուլիսի 28-ի թիվ 64/292 բանաձևով *անվտանգ և մաքուր խմելու ջրի ու սանիտացիայի իրավունքը ճանաչվեց որպես մարդու իրավունք, որն ունի էական (կենսական) նշանակություն լիարժեք կյանքի և մարդու բոլոր իրավունքների լիակատար իրացման համար*[480]: Ուստի, արձանագրված խնդիրներին իրավասու մարմինները պետք է լինեն հետևողական և հնարավորին սեղմ ժամկետում գտնեն համակարգային լուծումներ:

Հարկ է նաև նշել, որ ՄԱԿ-ի կողմից 2015 թվականի սեպտեմբերի 25-ին ընդունվել են և 2016 թվականի հունվարի 1-ից պաշտոնապես ուժի մեջ են մտել «Կայուն զարգացման 2030 օրակարգում» ներառված կայուն զարգացման 17 նպատակները[481]: Մասնավորապես, կայուն զարգացման 6-րդ նպատակն է՝ ապահովել բոլորի համար ջրի ու սանիտարական պայմանների հասանելիություն[482]: Կայուն զարգացման նպատակներին համապատասխան՝ նախատեսվել են նաև թիրախներ[483], որոնք պետությունների համար հիմնարար են և ըստ այդմ՝ քաղաքականության մշակումը և ծրագրերի իրականացումը պետք է ուղղված լինեն այդ թիրախների իրագործմանը[484]: Այս տեսանկյունից Պաշտպանը բարձր է գնահատում այն, որ 2025 թվականի ընթացքում ստորագրվել է 2026–2030

---

[480] Հասանելի է հետևյալ հղումով՝ https://docs.un.org/en/a/res/64/292 (20/03/2026թ.-ի դրությամբ), տե՛ս 1-ին կետը:

[481] Մանրամասն տե՛ս հետևյալ հղումով՝ https://armenia.un.org/hy/sdgs (20/03/2026թ.-ի դրությամբ):

[482] Մանրամասն տե՛ս հետևյալ հղումով՝ https://armenia.un.org/hy/sdgs/6 (20/03/2026թ.-ի դրությամբ):

[483] Տե՛ս նույն տեղում:

[484] Մանրամասն տե՛ս https://unstats.un.org/sdgs/report/2018/goal-06/ (20/03/2026թ.-ի դրությամբ):

թվականների Հայաստան–ՄԱԿ կայուն զարգացման համագործակցության շրջանակային փաստաթուղթը[485]:

Հաշվի առնելով, որ քննարկվող խնդիրները համակարգային առումով շարունակում են արդիական մնալ, Պաշտպանը 2025 թվականի տարեկան հաղորդման կազմման շրջանակում դրանց կարգավորման ուղղությամբ ձեռնարկված միջոցների վերաբերյալ պարզաբանումներ է պահանջել Ջրային կոմիտեից:

Ըստ Ջրային կոմիտեից ստացված տեղեկատվության՝ խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման համակարգերի կառուցման ներդրումային ծրագրերում հիմնականում առաջնահերթ ներառվում են այն համայնքները, որտեղ առկա են խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման համակարգերի հետևյալ խնդիրները.

✓ ջրաղբյուրներում, ինչպես նաև բաշխիչ ցանցում առկա են ջրի զգալի կորուստներ, բացակայում են սանիտարական գոտիները,

✓ բաշխիչ ցանցի չգոտիավորման պատճառով ցանցերում առաջանում են նորմաներից բարձր և ցածր ճնշումներ, որոնք իրենց բացասական ազդեցությունն են թողնում ցանցի աշխատանքի վրա,

✓ կոյուղու համակարգը բացակայում է կամ գտնվում է քայքայված վիճակում, որտեղ հաճախակի են խցանման և վնասման դեպքերը, առաջացնելով հակահամաճարակային խնդիրներ:

Ջրային կոմիտեի տեղեկացմամբ՝ վարկային և դրամաշնորհային համաձայնագրերով, մասնավորապես, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ), Եվրոպական ներդրումային (ԵՆԲ) բանկի և Եվրոպական միության հարևանության ներդրումային ծրագրի (ԵՄ ՀՆԾ) աջակցությամբ ՏԿԵՆ ջրային կոմիտեի պատվիրակմամբ ՀՏՋՀ-ի կողմից իրականացվել է «Երևանի ջրամատակարարման բարելավման ծրագիրը»:

Նշված վարկային և դրամաշնորհային ներդրումային միջոցներով ամբողջությամբ ավարտվել են Երևան քաղաքի Արաբկիր, Քանաքեռ-Զեյթուն, Էրեբունի, Կենտրոն, Նորք-Մարաշ, Շենգավիթ և Ավան վարչական շրջաններում շինարարական 3 պայմանագրերով նախատեսված աշխատանքները: Ամբողջությամբ ավարտվել են Սիլիկյան, Փիրումյան և հարակից թաղամասերի, Բալահովիտ և Փարաքար համայնքների ջրամատակարարման համակարգերի հիմնանորոգման, ինչպես նաև Արարատյան պոմպակայանի 3 պոմպի փոխարինման աշխատանքները: Ավարտվել են նաև Մալաթիա-Հաղթանակ և Նոր Խարբերդ թաղամասերի ջրամատակարարման համակարգերի հիմնանորոգման աշխատանքները: Վարկային և դրամաշնորհային ծրագրերով «Համայնքային ենթակառուցվածքների ծրագիր II Փուլ 3» ծրագրի շրջանակներում իրականացվել են ՀՀ 6 մարզերի 11 քաղաքներում և 41 գյուղական բնակավայրերում, այդ թվում՝ Գյումրի, Վանաձոր և Արմավիր քաղաքներում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման աշխատանքներ:

Ըստ պարզաբանման՝ ՀՀ կառավարություն 2022 թվականի հուլիսի 21-ի թիվ 1134-Ն որոշման համաձայն՝ 2022 թվականի սեպտեմբերին մեկնարկել է Ընկերության սպասարկման տարածքում գտնվող և հրատապ լուծում պահանջող համայնքների ջրամատակարարման համակարգերի վերակառուցման ծրագիրը, որի շրջանակում, Ջրային կոմիտեի կողմից իրականացվել են Արարատի մարզի Ազատավան, Վերին Արտաշատ, Բերդիկ, Վերին Դվին և Նոր Ուղի բնակավայրերի խմելու ջրամատակարարման համակարգերի կառուցման/վերակառուցման աշխատանքներ:

[485] Մանրամասն տե՛ս հետևյալ հղումով՝ https://www.gov.am/am/news/item/16257/ (20/03/2026թ.-ի դրությամբ):

Ըստ Ջրային կոմիտեի ներկայացված տեղեկատվության՝ խմելու ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի կառուցման/վերակառուցման ուղղությամբ իրականացվում են աշխատանքներ ինչպես պետական բյուջեի, այնպես էլ վարկային և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում: Գործընթացը կրում է շարունակական բնույթ:

Ըստ ՄԻՊ աշխատակազմ ստացված տվյալների՝ 2025 թվականի ընթացքում Արմավիրի մարզի թվով 9 բնակավայրերում իրականացվել է խմելու ջրի 2 ծրագիր: Գեղարքունիք մարզի Վարդենիս համայնքի Սոթք, Նորաբակ, Ազատ, ինչպես նաև Ճամբարակ համայնքի Վահան բնակավայրում իրականացվել են խմելու ջրի ջրագծերի կառուցման և վերակառուցման աշխատանքներ: Լոռու մարզի Ալավերդի համայնքի Ջիլիզա բնակավայրում կատարվել են խմելու ջրի հասանելիության աշխատանքներ. վերանորոգվել կամ մասնակի փոխարինվել են խողովակները, ինչի արդյունքում բնակիչների 50%-ն ունի խմելու ջուր, իսկ մյուս 50%-ը օգտվում է ընդհանուր ծորակներից, որոնց հասանելիության հետ կապված նույնպես իրականացվել են աշխատանքներ, դրանք այժմ գտնվում են տներից 50-100մ հեռավորության վրա: Սուբվենցիոն ծրագրերով իրականացվել են Լոռու մարզի Տաշիր համայնքի սահմանամերձ Ապավեն, Արծնի բնակավայրերի ջրամատակարարման ցանցի նորոգում և ընդլայնում: Ըստ տեղեկացման՝ 2025 թվականին խմելու ջրի ներքին ցանցի կառուցում է իրականացվել Շիրակի մարզի Ախուրյան համայնքի 1, Ամասիա համայնքի 1 և Աշոցք համայնքի 1 սահմանամերձ բնակավայրում: Սյունիքի մարզի Կապան համայնքի Դիցմայրի, Սզնակ, Դավիթ-Բեկ, Արծվանիկ կառուցվել են խմելու ջրագծեր, իսկ նույն համայնքի Աղվանի բնակավայրում խմելու ջրագծի կառուցումը ընթացքի մեջ է: Գորիս համայնքի Շինուհայր բնակավայրում կառուցվել է կոյուղագիծ: Սիսիան համայնքի Աղիտու և Վաղատին բնակավայրերում կառուցվել է խմելու ջրագիծ: Տեղ համայնքի Վաղատուր բնակավայրում իրականացվել է խմելու ջրագծի ցանցի կառուցում: Վայոց ձորի մարզի Արենի համայնքի Ելփին և Չիվա բնակավայրերում կառուցվել է խմելու ջրի ներքին ցանց և օրվա կարգավորիչ ջրամբար: Արենի բնակավայրում կառուցվել է խմելու ջրի արտաքին ցանցի վրա արհեստական սնուցման ֆիլտրվող կայան: Տավուշի մարզի Բերդ համայնքի Վերին Կարմիրաղբյուր-Նորաշեն-Արծվաբերդ բնակավայրերի հիմնական ջրատարի 15 կմ հատվածի և ակունքների վերակառուցում:

Պաշտպանը կարևորում է իրավասու մարմինների կողմից գործադրված ջանքերը, այնուհանդերձ, հարկ է համարում ընդգծել, որ բարձրացված խնդիրները համակարգային առումով դեռ շարունակում են արդիական մնալ, ուստի հետագայում նույնպես գտնվելու են ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի անմիջական ուշադրության ներքո:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պաշտպանը վերահաստատում է, որ անհրաժեշտ է՝ առաջնահերթության կարգով միջոցներ ձեռնարկել բնակավայրերում խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման համակարգերի կառուցման ուղղությամբ:

3. Խմելու ջրի մատակարարման խափանումներ

Դեռևս նախորդ տարեկան հաղորդման շրջանակում Պաշտպանն արձանագրել էր, որ սահմանված ժամանակացույցին համապատասխան ջրամատակարարում չիրականացնելու, ջրամատակարարման ընդհատումների, ջրանջատումների վերաբերյալ պատշաճ չծանուցելու, խմելու ջրի որակի և ճնշման վերաբերյալ խնդիրներն ավելի են սրվել[486]: Նկատի ունենալով այս խնդիրների զանգվածային և շարունակական բնույթը՝

[486] Տե՛ս, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի վերաբերյալ 2024 թվականի տարեկան հաղորդումը (էջեր 797-801):

Մարդու իրավունքների պաշտպանը հանդես էր եկել նաև հրապարակային հայտարարությամբ՝ խիստ անթույլատրելի համարելով ստեղծված իրավիճակը[487]:

Այս առումով խիստ մտահոգիչ է այն, որ բարձրացված խնդիրների լուծման ուղղությամբ 2025 թվականին ևս դրական առաջընթաց չի արձանագրվել: Հաշվետու տարվա ընթացքում ՄԻՊ-ին ներկայացված բողոքների, թեժ գծին ստացված զանգերի, իրականացված այցերի, զանգվածային լրատվության միջոցների և սոցիալական ցանցերի հրապարակումների հիման վրա նախաձեռնված ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ վերոնշյալ խնդիրները համակարգային առումով շարունակում են արդիական մնալ: 2025 թվականին «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության դեմ Պաշտպանին հասցեագրվել է թվով 174 գրավոր և բանավոր բողոք՝ 215 անձից: Ընդ որում, հարկ է նկատել, որ ՄԻՊ աշխատակազմ մուտքագրված բողոքների զգալի մասը վերաբերել է հենց վերը նշված խնդիրներին:

Թեև հաշվետու տարվա ընթացքում ՄԻՊ-ի միջամտությամբ և ջրամատակարարում իրականացնող ընկերության, ինչպես նաև իրավասու այլ մարմինների հետ արդյունավետ համագործակցության արդյունքում հնարավոր է եղել մի շարք անհատական հարցերի տալ լուծում *(2025 թվականի ընթացքում դրական լուծում ստացած խնդիրների թիվը կազմել է 23)*, այնուհանդերձ վերը նշված խնդիրների հաղթահարման նպատակով անհրաժեշտ է գտնել արդյունավետ և համակարգային լուծումներ:

2025 թվականի տարեկան հաղորդման նախապատրաստման շրջանակում խմելու ջրի մատակարարման գործընթացում առկա խնդիրների կարգավորման ուղղությամբ ձեռնարկված միջոցների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու նպատակով Պաշտպանը գրություններ է հասցեագրել ինչպես Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով), այնպես էլ «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերություն:

Այսպես, «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության ներկայացրած տվյալների համաձայն՝ 2025 թվականի ընթացքում ջրամատակարարման գրաֆիկի խախտման (անբավարար ջրամատակարարման) վերաբերյալ գրավոր ստացվել է 116 բողոք: Ընկերության 185 հեռախոսակենտրոնի միջոցով 2025 թվականի ընթացքում ստացվել է 193 780 զանգ, որտեղ առանձին դասակարգում չի իրականացվում դրանց որպես բողոք հանդիսանալու բնույթի վերաբերյալ: 2025 թվականի համար հրապարակված ջրամատակարարման 24-ժամյա գրաֆիկ ունեցող հասցեներում ժամային փոփոխություններ չեն եղել (ջրամատակարարման տևողությունը չի նվազել): Ջրամատակարարման գրաֆիկի խախտումները պայմանավորված են եղել պլանային, վթարային ջրանջատումներով, շինարարական աշխատանքներով, պոմպակայանների և մաքրման կայանների աշխատանքների խափանման հետևանքով առաջացած խնդիրների, ինչպես նաև բաժանորդների ներքին ցանցում առկա վթարային հարցերի հետ:

Ընկերության տեղեկացմամբ՝ ջրամատակարարման գրաֆիկի խափանումները նվազագույնի հասցնելու համար ընկերությունում շարունակվում են կատարվել բարելավման աշխատանքներ: Ընկերության միջոցներով, ինչպես նաև Պարտադիր կապիտալ աշխատանքների ծրագրի շրջանակներում իրականացվող ներդրումներով

[487] ՄԻՊ-ը հատկապես մտահոգիչ էր համարել այն, որ ամռան ամիսներին մարդիկ զրկված են լինում ջրի և սանիտացիայի հասանելիությունից: Նշվածի հաշվառմամբ՝ Պաշտպանը շեշտել էր, որ անհրաժեշտ է ուսումնասիրել վթարային ընդհատումների պատճառները, աշխատանքներ իրականացնել դրանք նվազագույնի հասցնելու ուղղությամբ, առավել հետևողական լինել խմելու ջրի մատակարարման ծառայությունների կանոնների, ինչպես նաև ջրամատակարարման ընդհատումների վերաբերյալ պատշաճ ծանուցումների իրականացման նկատմամբ (հրապարակումը հասանելի է հետևյալ հղումով՝ https://ombuds.am/am/site/ViewNews/3046, 20/03/2026թ. դրությամբ):

կատարվել են խնդրահարույց ջրագծերի, փականային հանգույցների կառուցման և վերակառուցման աշխատանքներ, ջրամատակարարման ցանցում շարունակվում են իրականացվել բարելավման աշխատանքներ:

Ընկերության պարզաբանումների համաձայն՝ տարեցտարի ջրաղբյուրների ծախսի նվազման տեմպերի ավելացումը հանգեցնում է ջրամատակարարման խաթարման: Վերլուծությունները ցույց են տալիս, որ Հայկական հրաբխային բարձրավանդակում ձևավորվող ստորերկրյա ջրերի ծախսը 2013 թվականի նկատմամբ նվազել է ավելի, քան 24%-ով: Բացի այդ, աննախադեպ տեմպերով իրականացվող կառուցապատումների արդյունքում սպառողների թվի կտրուկ աճը ևս հանգեցնում է լրացուցիչ ջրապահանջարկի, ինչի արդյունքում կարող է առաջանալ ջրի դեֆիցիտ:

Խմելու ջրի որակի վերաբերյալ «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերություն ստացվել է 10 գրավոր բողոք, իսկ ջրի ճնշման վերաբերյալ՝ 56 գրավոր բողոք: 185 հեռախոսակենտրոնի միջոցով 2025 թվականի ընթացքում ջրի որակի վերաբերյալ ստացվել է 3104 զանգ, իսկ ճնշման վերաբերյալ՝ 20 675 զանգ: Խմելու ջրի որակի մասով ստացված յուրաքանչյուր բողոքի հիման վրա խմելու ջրից կատարվել է նմուշառում (բացառությամբ՝ եթե սպառողը հրաժարվում է նմուշառումից), այն ենթարկվում է լաբորատոր հետազոտության՝ ստուգելով դրա որակի համապատասխանությունը ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 876-Ն հրամանով հաստատված «Խմելու ջուր: Ջրամատակարարման կենտրոնացված համակարգերի խմելու ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ: Որակի հսկողություն» № 2-III-Ա2-1 սանիտարական նորմերին և կանոններին:

Ներկայացված տեղեկատվության համաձայն՝ մատակարարվող խմելու ջրի որակն ընկերության առաջնային խնդիրներից մեկն է, գտնվում է մշտական հսկողության ներքո և հնարավոր ամեն քայլ ձեռնարկվում է այն Հայաստանում գործող սանիտարական նորմերի և կանոնների պահանջներին համապատասխան պահելու համար:

Ըստ տրամադրված տեղեկատվության՝ խմելու ջրի ճնշմանը ներկայացվող պահանջների պահպանման ուղղությամբ ընկերությունը, կոնկրետ իրավիճակից կախված, շարունակում է վարձակալության պայմանագրով, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 09.12.2016 թվականի թիվ 397-Ա որոշմամբ ընկերությանը տրված լիցենզիայով ստանձնած համապատասխան պարտավորությունների և տվյալ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերի շրջանակում բաժանորդներին ապահովել բավարար ճնշմամբ խմելու ջրով:

Ընկերության պարզաբանմամբ՝ 2025 թվականի ընթացքում ջրանջատումների մասին բաժանորդներին չծանուցելու վերաբերյալ բողոքների դասակարգում չի իրականացվել, ուստի այս մասով համապատասխան տեղեկատվություն տրամադրել հնարավոր չէ[488]: Տրամադրված տեղեկատվության համաձայն՝ ջրանջատումների վերաբերյալ ծանուցումներն իրականացվում են ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 30.11.2016 թվականի թիվ 378-Ն որոշմամբ սահմանված Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոններին համապատասխան: Ըստ ընկերության՝ 2025 թվականի ընթացքում վթարային և պլանային աշխատանքների արդյունքում կատարվող ջրանջատումների վերաբերյալ տեղեկատվությունը պատշաճ կերպով փոխանցվել է

[488] Հարկ է նշել, որ այսպիսի տեղեկատվություն ներկայացվել է նաև նախորդ տարիներին: Այս մասով անհրաժեշտ է վերանայել վիճակագրության վարման կարգը՝ ջրանջատումների մասին բաժանորդներին չծանուցելու բողոքների վերաբերյալ պատշաճ պատկեր ստանալու և համապատասխան միջոցներ ձեռնարկելու նպատակով:

բաժանորդներին՝ համապատասխան հայտարարություններ տարածելով զանգվածային լրատվության միջոցներով: Համապատասխան տեղեկատվությունը տեղադրվել է նաև ընկերության պաշտոնական կայքէջում, ֆեյսբուքյան և տելեգրամյան հարթակներում:

Չնայած խնդիրների կարգավորման ուղղությամբ ջրամատակարարում իրականացնող ընկերության գործադրած ջանքերին՝ Պաշտպանին շարունակվում են բողոքներ հասցեագրվել սահմանված ժամանակացույցին համապատասխան ջրամատակարարում չիրականացնելու, ջրամատակարարման ընդհատումների, ջրանջատումների վերաբերյալ պատշաճ չծանուցելու, խմելու ջրի որակի և ճնշման վերաբերյալ:

Բարձրացված հարցերի կապակցությամբ Հանձնաժողովը տեղեկացրել է, որ «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության կողմից ծառայությունների մատակարարման ընդհատումների վերաբերյալ Հանձնաժողով է ներկայացվել 289 դիմում-բողոք, որոնցից՝

- 68 դիմում-բողոքի դեպքում՝ բաժանորդի պահանջը բավարարվել է.
- 54 դիմում-բողոքի դեպքում՝ բաժանորդի պահանջը մասնակիորեն է բավարարվել.
- 159 դիմում-բողոքի դեպքում բաժանորդին տրվել են ընդհատումների վերաբերյալ համապատասխան պարզաբանումներ.
- 7 դիմում-բողոքի քննարկումն ընթացքի մեջ է.
- 1 դիմում-բողոքի դեպքում տրվել է տեղեկատվություն:

Ներկայացված տվյալների համաձայն՝ 2025 թվականի ընթացքում մատակարարվող խմելու ջրի որակի վերաբերյալ Հանձնաժողով է ներկայացվել 7, իսկ խմելու ջրի ճնշման վերաբերյալ՝ 178 դիմում-բողոք: Նշված դիմում-բողոքների քննարկման ընթացքի վերաբերյալ Հանձնաժողովը հայտնել է հետևյալը.

ա) մատակարարվող խմելու ջրի որակի վերաբերյալ ներկայացված 7 դիմում-բողոքներից՝

- 1 դիմում-բողոքի բաժանորդին առաջարկվել է դիմել ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին.
- 1 դիմում-բողոքի դեպքում բաժանորդի պահանջը բավարարվել է.
- 5 դիմում-բողոքի դեպքում (խմելու ջրի որակի վերաբերյալ հարցը ներկայացվել է դիմումով բարձրացված՝ ջրամատակարարմանն առնչվող այլ խնդիրների հետ համատեղ):

բ) մատակարարվող խմելու ջրի ճնշման վերաբերյալ 178 դիմում-բողոքներից՝

- 30 դիմում-բողոքի դեպքում՝ բաժանորդի պահանջը բավարարվել է. կարգաբերման, վերանորոգման աշխատանքների իրականացման արդյունքում ջրամատակարարումը կարգավորվել է.
- 13 դիմում-բողոքի դեպքում տարվում են կարգաբերման աշխատանքներ, որոնց ավարտից հետո խնդիրը կկարգավորվի.
- 134 դիմում բողոքի դեպքում տեղադրված ճնշման չափիչ սարքի (լոգերի) տվյալների ուսումնասիրության արդյունքում փաստվել է, որ մատակարարվող խմելու ջրի ճնշումը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի № 103-Ն հրամանով հաստատված՝ ՀՀՇՆ 40-01.02-«Ջրամատակարարում: Արտաքին ցանցեր և կառուցվածքներ:» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերով սահմանված պահանջներին:
- 1 դիմում-բողոքի քննարկումն ընթացքի մեջ է:

Հանձնաժողովի տեղեկացմամբ՝ 2025 թվականին Հանձնաժողով է դիմել Կոտայքի մարզի Սարալանջ գյուղի բնակիչ՝ հայտնելով գյուղում «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության

կողմից ջրամատակարարման գրաֆիկի խախտման մասին: Մասնավորապես, դիմումատուն հայտնել է, որ ընկերության կողմից օրեր շարունակ ջուր չի մատակարարվում, գյուղում մեկ ժամից ավելի ջրամատակարարում չի իրականացվում, ինչի մասին արդեն երկու տարի շարունակ ահազանգել է «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերությանը: Դիմում-բողոքի քննարկման շրջանակում ընկերության նկատմամբ հարուցվել է վարչական վարույթ, որի արդյունքում, Հանձնաժողովի 2025 թվականի սեպտեմբերի 30-ի թիվ 334-Ա որոշմամբ «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերությունը տուգանվել է 10 000 000 (տասը միլիոն) ՀՀ դրամ գումարի չափով՝ Հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 30-ի № 378-Ն որոշմամբ սահմանված՝ խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոնների 136-րդ կետի խախտման համար:

Վերոգրյալի համատեքստում հարկ է նշել, որ ՄԱԿ-ի սպառողների պաշտպանության 2016 թվականի ուղեցույցի 72-րդ կետում սահմանվում է ջրամատակարարման ոլորտում անդամ պետությունների պարտավորությունը՝ մշակել, իրականացնել և ամրապնդել խմելու ջրի մատակարարման, բաշխման և որակի բարելավման ազգային քաղաքականություն: Ընդ որում, նշվում է, որ հատուկ ուշադրություն պետք է դարձնել ծառայությունների մատուցման մակարդակի, որակի և տեխնոլոգիայի բարձրացմանը, կարգավորող վերահսկողության իրականացմանը, ինչպես նաև սպառողների իրազեկման և ծրագրերին հասարակության մասնակցության կարևորությանը[489]: Բացի այդ, ՄԱԿ-ի տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի ընդհանուր մեկնաբանությունների համաձայն՝ մասնակից պետությունները պետք է ընդունեն համապարփակ ծրագրեր ներկա և ապագա սերունդների համար բավարար և անվտանգ ջրի առկայությունն ապահովելու համար: Մասնավորապես, ընդգծվում է ջրային ռեսուրսներն աղտոտումից, ջրամբարներից ջրերի գերբացթողումից պաշտպանելը՝ մշտադիտարկում իրականացնելով առկա ռեսուրսների և վերջնական սպառողների կողմից ջրի արդյունավետ օգտագործման նկատմամբ և այլն[490]:

Վերոգրյալի համատեքստում հարկ է նաև նշել, որ Պաշտպանը նախորդ տարեկան հաղորդումների շրջանակներում կարևորելով մատակարար ընկերության մատուցած ծառայությունների որակի և սահմանված պահանջների նկատմամբ պատշաճ վերահսկողության անհրաժեշտությունը՝ ընդգծել էր, որ վերահսկողությունը և հետևողականությունը հնարավորություն կտան խուսափել հաճախակի ջրանջատումներից և կնպաստեն նաև սպառողների պատշաճ իրազեկման ապահովմանը[491]:

Ելնելով վերոգրյալից և վերահաստատելով նախկինում արտահայտած դիրքորոշումը՝ Պաշտպանն արձանագրում է, որ անհրաժեշտ է՝

✓ ուսումնասիրել վթարային ընդհատումների պատճառները և աշխատանքներ իրականացնել դրանք նվազագույնի հասցնելու ուղղությամբ.

✓ առավել հետևողական լինել խմելու ջրի մատակարարման ծառայությունների կանոնների, ինչպես նաև ջրամատակարարման ընդհատումների վերաբերյալ պատշաճ ծանուցումների իրականացման նկատմամբ:

---

[489] Տե՛ս «Սպառողների իրավունքների պաշտպանության համար» ՄԱԿ-ի ուղեցույցը, հասանելի է հետևյալ հղումով՝ http://unctad.org/en/PublicationsLibrary/ditccplpmisc2016d1_en.pdf (20/03/2026թ. դրությամբ):

[490] Տե՛ս «Սպառողների իրավունքների պաշտպանության համար» ՄԱԿ-ի ուղեցույցը, հասանելի է հետևյալ հղումով՝ http://unctad.org/en/PublicationsLibrary/ditccplpmisc2016d1_en.pdf (20/03/2026թ. դրությամբ):

[491] Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի վերաբերյալ 2023 և 2024 թվականների տարեկան հաղորդումները (համապատասխանաբար էջեր՝ 406-407, 797-801):

4. Առևտրային հաշվառքի սարքի խախտման դեպքում առանց փաստական հանգամանքների բացահայտման վերահաշվարկած գումարը բաժանորդին ներկայացնելու խնդիր

2025 թվականին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին շարունակվել են գրավոր և բանավոր բողոքներ հասցեագրվել ջրամատակարարում իրականացնող ընկերության կողմից առևտրային հաշվառքի սարքերը (ջրաչափերը) ապահավաքակցելուց (փոխարինելուց) հետո իրականացված վերահաշվարկների արդյունքում գումարը վճարելու պահանջը բաժանորդին ներկայացնելու վերաբերյալ: Այս խնդրի դեռևս շարունակականության մասին են վկայում նաև Մարդու իրավունքների պաշտպանի՝ տարբեր տարիների գործունեությունն ամփոփող հաղորդումներում անդրադարձերը[492]:

Բողոքներն ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2025 թվականին նույնաբովանդակ են: Դրանց համաձայն՝ ջրամատակարարում իրականացնող ընկերությունը փոխարինել է բաժանորդների առևտրային հաշվառքի սարքերը (ջրաչափերը), որից հետո դրանք ստուգաչափվել են «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲ ընկերություն կողմից: Փորձագիտական հետազոտության եզրակացություններով պարզվել է, որ օրինակ՝ ջրաչափի կնիքը բացակայում է, ջրաչափի միացման օղակի փականի և համրման սարքի վրա առկա են քերվածքի հետքեր և այլն: Առևտրային հաշվառքի սարքի խախտման հիմքով իրականացվել է խմելու ջրի քանակի և վճարման ենթակա գումարի վերահաշվարկ ու այն վճարելու պարտավորությունը դրվել է բաժանորդների վրա:

Այս համատեքստում հարկ է նշել, որ ըստ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2016 թվականի նոյեմբերի 30-ի «Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոնները սահմանելու մասին» թիվ 378-Ն որոշման 106-րդ կետի՝ եթե առևտրային հաշվառքի սարքի խախտումն արտաքին միջամտության հետևանք է և չափագիտական մարմնի փորձագիտական եզրակացությամբ փաստվել է, որ արձանագրված խախտումը կարող էր հանգեցնել առևտրային հաշվառքի սարքով փաստացի մատուցված ծառայության քանակից պակաս քանակի գրանցման, ապա կատարվում է բաժանորդին մատուցված ծառայության քանակի վերահաշվարկ՝ ներանցման խողովակի թողունակությամբ՝ շարժման 1,5մ/վրկ արագությամբ և ջրամատակարարման հրապարակված գրաֆիկի հիման վրա հաշվարկված խմելու ջրի օրական քանակի՝

1) տասնհինգապատիկի չափով՝ բազմաբնակարան շենքի բնակիչ բաժանորդի դեպքում.

2) երեսնապատիկի չափով՝ ոչ բազմաբնակարան շենքի բնակիչ բաժանորդի դեպքում.

3) իննսունապատիկի չափով՝ ոչ բնակիչ բաժանորդի դեպքում:

Ըստ նույն որոշման 107-րդ կետի՝ միևնույն բաժանորդի մոտ արտաքին միջամտությամբ առևտրային հաշվառքի սարքի խախտման դեպքի հայտնաբերման օրվանից երկու տարվա ընթացքում կրկին արտաքին միջամտության հետևանքով առևտրային հաշվառքի սարքի խախտում հայտնաբերելու դեպքում մատակարարն

[492] Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի վերաբերյալ 2019, 2020, 2021, 2023 և 2024 թվականների տարեկան հաղորդումները (համապատասխանաբար՝ էջեր 443-444, 781-783, 749-751, 407- 409, 801-804):

իրավունք ունի բաժանորդին մատուցված ծառայության քանակը վերահաշվարկել 106-րդ կետով սահմանված չափաքանակների կրկնապատիկի չափով:

Նմանօրինակ է իրավիճակը գազահաշվիչների դեպքում: Այսպես, Հանձնաժողովի 2005 թվականի հուլիսի 8-ի «Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնները հաստատելու մասին» թիվ 95-Ն որոշման 135-րդ կետի համաձայն՝ եթե առևտրային հաշվառքի սարքի խախտումն արտաքին միջամտության հետևանք է և չափագիտական մարմնի փորձագիտական եզրակացությամբ փաստվել է, որ արձանագրված խախտումը կարող էր հանգեցնել առևտրային հաշվառքի սարքով փաստացի մատակարարված բնական գազի քանակից պակաս քանակի գրանցման, և դա առևտրային հաշվառքի սարքի խախտման առաջին դեպքն է վերջին երկու տարիների ընթացքում, մատակարարն իրավունք ունի բաժանորդից պահանջել վճարելու տույժ՝ վերահաշվարկված բնական գազի արժեքի չափով: Բաժանորդի կողմից մատակարարի տույժ վճարելու պահանջին համաձայնելու դեպքում մատակարարը հաշվարկված տույժը հաշվի է առնում վերահաշվարկի կատարմանը հաջորդող հաշվարկային ամսվա համար բաժանորդին ներկայացվող հաշվարկային (վճարման) փաստաթղթում: Բաժանորդի կողմից մատակարարի տույժ վճարելու պահանջին չհամաձայնելու դեպքում մատակարարը վեճը լուծում է դատական կարգով: Մատակարարն իրավունք չունի տույժի չվճարման համար դադարեցնել բաժանորդի գազամատակարարումը մինչև վեճի վերջնական լուծումը: Նույն բաժանորդի մոտ երկու տարվա ընթացքում առևտրային հաշվառքի սարքի 1-ից ավելի խախտում հայտնաբերելու դեպքում, երբ առևտրային հաշվառքի սարքի խախտումն արտաքին միջամտության հետևանք է և չափագիտական մարմնի փորձագիտական եզրակացությամբ փաստվել է, որ արձանագրված խախտումը կարող էր հանգեցնել առևտրային հաշվառքի սարքով փաստացի մատակարարված բնական գազի քանակից պակաս քանակի գրանցման, ապա մատակարարն իրավունք ունի վերահաշվարկված բնական գազի արժեքի կրկնապատիկի չափով հաշվարկելու տույժ և այն հաշվի առնել վերահաշվարկի կատարմանը հաջորդող հաշվարկային ամսվա համար բաժանորդին ներկայացվող հաշվարկային (վճարման) փաստաթղթում: Այդ դեպքում մատակարարն իրավունք ունի դադարեցնել բաժանորդի գազամատակարարումը՝ հաշվարկած տույժը՝ ԳՄՕԿ-ի 118-րդ կետով սահմանված կարգով չվճարելու համար: Մատակարարի հաշվարկած տույժին չհամաձայնելու դեպքում բաժանորդը վեճը լուծում է դատական կարգով:

Հատկանշական է, որ առևտրային հաշվառքի սարքերի արտաքին միջամտությամբ խախտման փաստական հանգամանքների բացահայտման գործիքակազմ գործող իրավակարգավորումներով նախատեսված չէ և սահմանված վերահաշվարկի կատարման համար բավարար է միայն վերը նշված հիմքերի առկայությունը: Մինչդեռ, հնարավոր են դեպքեր, երբ ջրաչափը կամ գազահաշվիչը վնասված լինի, օրինակ՝ ջրամատակարարում կամ գազամատակարարում իրականացնող ընկերության աշխատակցի կողմից այն փոխարինելու ընթացքում: Հետևաբար, խնդրահարույց է առանց համապատասխան հիմնավորումների՝ իրականացված վերահաշվարկի արդյունքում գումարը վճարելու պահանջը բաժանորդին ներկայացնելը: Կարծում ենք՝ տվյալ պարագայում, մատակարարների կողմից առևտրային հաշվառքի սարքերի ամբողջականությունն ու անվտանգությունն ապահովող, մշտական գործող հսկողության համակարգեր կիրառելու դեպքում հնարավոր կլինի խուսափել բաժանորդներին առանց համապատասխան հիմնավորումների՝ պատասխանատվության ենթարկելու դեպքերից:

Պաշտպանին վերջին տարիներին հասցեագրված բողոքների ուսումնասիրությունը վկայում է, որ առևտրային հաշվառքի սարքի խախտման հիմքով վերահաշվարկած

գումարը բաժանորդին ներկայացնելու հարցը շարունակում է մնալ խնդրահարույց: Նշվածի հաշվառմամբ՝ Պաշտպանը 2025 թվականի տարեկան հաղորդման նախապատրաստման շրջանակում նշված խնդրի կարգավորման ուղղությամբ ձեռնարկված միջոցների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու նպատակով գրություններ է հասցեագրել ինչպես Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով), այնպես էլ «Վեոլիա Ջուր» և «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերություններ:

Ըստ «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերության ներկայացրած տվյալների՝ գազահաշվիչի խափանման կամ վնասման դեպքում բաժանորդին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ ընկերությունը 2025 թվականի ընթացքում ստացել է թվով 1598 դիմում-բողոք: Ընկերության մշտական գործող համապատասխան հանձնաժողովների կողմից քննության է առնվել վերոնշյալ դեպքերը և որոշում է կայացվել թվով 1541 բաժանորդներին՝ ԳՄՕԿ սահմանված կարգով, ազատել վերահաշվարկված բնական գազի արժեքի և հաշվարկված տույժի վճարման պատասխանատվությունից:

«Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերությունը ներկայացրել է ընդհանրական տեղեկություն առ այն, որ կատարված վերահաշվարկի վերաբերյալ 2025 թվականի ընթացքում գրավոր և էլեկտրոնային եղանակով ընկերությունը ստացել է 212 բողոք: Դրանց քննարկման արդյունքում 4 դեպքով հաշվարկված գումարը վերանայվել է *(ելնելով տարբեր պատճառներից՝ կապված ջրամատակարարման տևողության, խողովակի տրամագծի հետ և այլն)*, իսկ մնացած դեպքերով մերժվել՝ բավարար հիմքերի բացակայության պատճառով:

Հանձնաժողովի պարզաբանումների համաձայն՝ «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության կողմից առևտրային հաշվառքի սարքի խախտման կամ վնասման հիմքով իրականացված վերահաշվարկին չհամաձայնելու վերաբերյալ Հանձնաժողով է ներկայացվել 224 դիմում-բողոք, որոնք քննարկվել են «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածին համապատասխան:

Հանձնաժողովի տվյալներով՝ 23 դիմում-բողոքի դեպքում առևտրային հաշվառքի սարքի խախտման հիմքով կատարված խմելու ջրի քանակի և արժեքի վերահաշվարկը վերանայվել է. ընկերության կողմից ներկայացված գումարը նվազեցվել է, փաստվել է վերահաշվարկ կատարելու կամ բաժանորդին վերահաշվարկված գումարը ներկայացնելու անբավարար հիմքերը:

Վերահաշվարկին չհամաձայնելու մասին դիմում-բողոքների քննարկման ընթացքի վերաբերյալ Հանձնաժողովը տեղեկացրել է հետևյալը.

- 6 դիմում-բողոքի դեպքում՝ բաժանորդին ներկայացված վերահաշվարկված գումարը նվազեցվել է,
- 5 դիմում-բողոքի դեպքում՝ կատարված վերահաշվարկի դիմաց բաժանորդին ներկայացված վճարման հաշիվները հիմնավոր չլինելու հիմքով վերահաշվարկը չեղարկվել է,
- 10 դիմում-բողոքի դեպքում՝ Հանձնաժողովը փաստել է, որ «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերությունը իրավունք չունի ծախսերի հիման վրա հաշվարկված հաշիվներից բացի, այլ հաշիվներ, մասնավորապես՝ նախորդ բաժանորդին ներկայացված հաշիվները, տույժերը նոր բաժանորդին ներկայացնելու,
- 2 դիմում-բողոքի դեպքում՝ ընկերությանն առաջարկվել է ներկայացված վճարման փաստաթղթում կատարել համապատասխան շտկումներ,

➢ 111 դիմում-բողոքի դեպքում՝ ընկերությունն իրավունք ունի վերահաշվարկված գումարը բաժանորդից պահանջել միայն դատական կարգով՝ մինչև վեճի վերջնական լուծումը չդադարեցնելով ծառայությունների մատուցումը:

➢ 63 դիմում-բողոքի դեպքում՝ ներկայացված վերահաշվարկի գումարը բաժանորդների կողմից ենթակա է վճարման, քանի որ փաստվել է առևտրային հաշվառքի սարքի խախտումը,

➢ 27 դիմում-բողոքի դեպքում՝ հասցեի բաժանորդ է հանդիսանում այլ անձ: Դիմումատուները տեղեկացվել են, որ համաձայն «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 7-րդ մասի 8-րդ կետի՝ բարձրացված հարցը Հանձնաժողովը կարող է քննարկել բաժանորդի (կամ նրա ներկայացուցչի) պահանջով՝ վերջինիս կողմից դիմում (ներկայացուցչի դեպքում՝ նաև լիազորագիր) ներկայացնելու դեպքում:

Այսպիսով, վերոգրյալը վկայում է, որ առևտրային հաշվառքի սարքի խախտման հիմքով վերահաշվարկած գումարը բաժանորդին ներկայացնելու հարցը դեռևս շարունակում է մնալ խնդրահարույց: Այս համատեքստում Պաշտպանը կարևորում է Հանձնաժողովի որոշումների կատարման նկատմամբ պատշաճ վերահսկողության անհրաժեշտությունը: Նախորդ տարիների հաղորդումների շրջանակներում Պաշտպանն ընդգծել էր, որ վերահսկողության պատշաճ մեխանիզմների բացակայությունը գործնականում կարող է հանգեցնել մատակարարների կողմից չարաշահումների, ուստի առաջարկել էր խիստ վերահսկողություն սահմանել մատակարար ընկերությունների կողմից Հանձնաժողովի որոշումների կատարման նկատմամբ[493]:

Ամփոփելով վերոգրյալը և վերահաստատելով նախկինում արտահայտած դիրքորոշումը՝ Պաշտպանն արձանագրում է, որ.

✓ ***Հանձնաժողովի որոշումների կատարման նկատմամբ վերահսկողության արդյունավետության բարձրացման ուղղությամբ անհրաժեշտ են լրացուցիչ ջանքեր: Մասնավորապես, պետք է քննարկման առարկա դարձվի վերահսկողության առավել գործուն մեխանիզմներ մշակելու և ներդնելու հարցերը,***

✓ ***անհրաժեշտ է ոլորտը կարգավորող իրավական ակտերում կատարել համապատասխան փոփոխություններ՝ իրականացված վերահաշվարկի արդյունքում գումարը վճարելու պահանջը, առանց փաստական հանգամանքների բացահայտման, բաժանորդին ներկայացնելու մոտեցումը վերանայելու համար:***

5. Ոռոգման ջրի մատակարարման խափանումներ

2025 թվականի ընթացքում Պաշտպանին շարունակվել են գրավոր և բանավոր բողոքներ հասցեագրվել նաև ոռոգման ջրի մատակարարման խափանումների վերաբերյալ: Բողոքները, որպես կանոն, նույնաբովանդակ են: Դրանց համաձայն՝ կանոնավոր և անհրաժեշտ քանակի ոռոգման ջուր չի մատակարարվել, մշակվող հողատարածքները չեն ոռոգվել, ինչի հետևանքով բերքը վնասվել է և անձինք կրել են նյութական վնասներ: Ստացվող բողոքներով բարձրացված հարցերն ուսումնասիրվում են Պաշտպանի աշխատակազմում և հասցեագրվում իրավասու պետական ու տեղական ինքնակառավարման մարմիններին: Դրանց ընթացքի նկատմամբ իրականացվում է հետագա հետևողական աշխատանք:

[493] Տե՛ս նույն տեղը:

Հաշվետու տարում ոռոգման ջրի մատակարարման խափանումների հետ կապված խնդիր արձանագրվել է նաև Մարդու իրավունքների պաշտպանի՝ Սյունիքի մարզի Կապան համայնքի Շիկահող, Սրաշեն և Ծավ, Մեղրի համայնքի Ալվանք և Շվանիձոր, Տեղ համայնքի Խոզնավար և Խնածախ բնակավայրեր, ինչպես նաև Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի Կեչուտ և Գնդեվազ բնակավայրեր իրականացրած այցերի շրջանակում:

Հարկ է նշել, որ մարզային այցերի շրջանակներում վերհանված խնդիրները մանրամասն ուսումնասիրվել են Պաշտպանի աշխատակազմում և հասցեագրվել են իրավասու պետական մարմիններին: Մասնավորապես՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը (այսուհետ՝ ՏԿԵՆ) վերը նշված խնդիրների մասով տեղեկացրել է, որ 2022 թվականին իրականացվել է Տեղ համայնքի Խոզնավար և Խնածախ գյուղերի ոռոգման ջրի ցանցերի արդիականացում: Հայտնել է նաև, որ ոռոգման ջրի խնդրի լուծման նպատակով Մեղրի համայնքի ղեկավարը տեղեկացրել է, որ ներկայում համայնքը համագործակցում է մի շարք շահագրգիռ կազմակերպությունների հետ՝ այն կարգավորելու համար: Նշել է նաև, որ ըստ «Սյունիք» ՋՕ ընկերության տրամադրած տեղեկատվության՝ Ալվանք և Շվանիձոր բնակավայրերը ոռոգման ջրով ապահովող պոմպերը, շարժիչները և խողովակաշարերը շահագործվում են շուրջ 50 տարի, ինչի հետևանքով տեղի են ունենում հաճախակի վթարներ: Ընկերությունն արագ արձագանքում է և ապահովում ոռոգման ջրի մատակարարումը: Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի Կեչուտ և Գնդեվազ բնակավայրերի մասով ՏԿԵՆ-ը տրամադրել է տեղեկատվություն առ այն, որ բարձրացված հարցերն ուսումնասիրվել են ՏԿԵՆ-ում և քննարկվել են Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի, Ջրային կոմիտեի, Ջերմուկ համայնքի ղեկավարի, ինչպես նաև ոռոգման և խմելու ջրամատակարարման ծառայություններ մատուցող ընկերությունների մասնագետների կողմից: Քննարկումների արդյունքներով ՏԿԵՆ-ը ներկայացրել է պարզաբանումներ այն մասին, որ «Եղեգնաձոր» ՋՕ ընկերության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ Ջերմուկ համայնքի Կեչուտ բնակավայրում ՋՕ ընկերության կողմից շահագործվող ոռոգման համակարգեր չկան, բնակավայրում ոռոգման ծառայություններ երբևէ չեն մատուցվել և չեն մատուցվում, իսկ Գնդեվազ բնակավայրում ոռոգման ջրամատակարարման խնդիրներ հիմնականում չկան, առկա խնդիրները կապված են կլիմայի փոփոխությունների հետ: Նշվել է նաև, որ Կեչուտ բնակավայրում վարելահողերը բավարար չոռոգվելու խնդիրը կապված է 2022 թվականին ադրբեջանական ագրեսիայի հետ, որի հետևանքով վնասվել է ամբողջ ոռոգման համակարգը: Միաժամանակ, տեղեկացվել է, որ Կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 1902-Լ որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրով նախատեսված է Կեչուտ բնակավայրում կառուցել ջրամբար (Զիրակի ջրամբար), որը կապահովի վերոնշյալ բնակավայրերի ոռոգման խնդիրը:

Վերոգրյալը, իհարկե, պետք է դիտել իբրև դրական առաջընթաց, այնուամենայնիվ պետք է նշել, որ ոռոգման ջրի մատակարարման ոլորտը համակարգային կարգավորման կարիք ունի: Նախորդ տարեկան հաղորդումների շրջանակներում անդրադառնալով բարձրացված խնդրին՝ Պաշտպանը, մասնավորապես, ընդգծել է, որ ոռոգման ջրի հասանելիության խնդիրը հատկապես մտահոգիչ է այն պատճառով, որ այն ուղղակիորեն բացասական է ազդում բնակիչների սոցիալական վիճակի վրա, քանի որ որոշ բնակավայրերում վերջիններիս եկամտի հիմնական, որոշ դեպքերում էլ՝ միակ աղբյուրն այգեգործությունն ու բանջարաբոստանային գործունեության արտադրությունն է: Նշել է նաև, որ ոռոգման ջրի մատակարարման պատշաճ ապահովումն ունի առաջնային

նշանակություն, քանի որ Կառավարության կողմից հաստատված պետական տարբեր աջակցության ծրագրերի արտոնություններն ուղղված են գյուղատնտեսության խթանմանը, իսկ առանց ոռոգման ջրի հասանելիության, նման ծրագրերի արդյունավետությունը ցանկալի մակարդակի չի կարող լինել: Հետևաբար, ոռոգման ջրի մատակարարման ոլորտը կանոնակարգելու ուղղությամբ պետք է իրականացվեն շարունակական գործողություններ[494]:

Հաշվի առնելով այն, որ նշված խնդիրը համակարգային առումով շարունակում է արդիական մնալ՝ 2025 թվականի տարեկան հաղորդման նախապատրաստման շրջանակում հարցի կարգավորման ուղղությամբ ձեռնարկված միջոցների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու նպատակով Պաշտպանը գրություն է հասցեագրել Ջրային կոմիտե:

Ի պատասխան՝ Ջրային կոմիտեն հայտնել, որ 2025 թվականի ընթացքում Ջրային կոմիտեի ոռոգման և կոլեկտորադրենաժային համակարգերի վարչություն է ներկայացվել թվով 25 դիմում-բողոք ոռոգման ջրի մատակարարման խափանումների կամ խնդիրների վերաբերյալ: Միաժամանակ, նշել է, որ ոռոգման սեզոնին քաղաքացիների կողմից բազմաթիվ հեռախոսազանգեր են ստացվում (օրական միջինում 5 հեռախոսազանգ) ոռոգման ջրի մատակարարման խափանումների, ոռոգման համակարգերի վթարների, ջրի անհասանելիության վերաբերյալ, որոնց տրվում են լուծումներ անմիջապես ջրօգտագործող ընկերությունների համապատասխան մասնագետների հետ կապվելով և առաջ եկած խնդիրները հիմնականում լուծվում են 1-2 օրվա ընթացքում:

Ըստ Ջրային կոմիտեի տվյալների՝ դիմումներից 15-ի դեպքում խնդիրները լուծվել են, 7-ի դեպքում լուծվել են մասամբ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ոռոգման ջրի խափանումները կապված են եղել համակարգերի վթարների կամ անմխիթար ոռոգման համակարգերի առկայության հետ, որոնց վերականգնման համար պահանջվում են զգալի ներդրումներ, 3-ի դեպքում խնդիրները ևս կապված են եղել ոռոգման համակարգերի հետ, որոնք սպասարկվում և շահագործվում են համայնքների կողմից:

Ըստ տեղեկացման՝ ոռոգման ջրի մատակարարումն ըստ սահմանված ժամանակացույցի ապահովելու ուղղությամբ Ջրային կոմիտեի կողմից ամեն տարի գարնան նախապատրաստական աշխատանքների շրջանակներում ջրօգտագործող ընկերությունների կողմից ներկայացվում են թերությունների տեղեկագրեր՝ ոռոգման սեզոնին ընդառաջ (*ոռոգման ցանցի նորոգում, ոռոգման ցանցի մաքրում, հիդրոտեխնիկական կառուցվածքների նորոգում, պոմպերի և խորքային հորերի նորոգում, մեքենա-մեխանիզմների և տրանսպորտային միջոցների նորոգում և այլն)*, որոնց հիման վրա իրականացվում են հիշյալ աշխատանքների շրջանակներում թերությունների վերացման աշխատանքներ՝ ոռոգման սեզոնը անխափան և արդյունավետ կազմակերպելու նպատակով:

Տեղեկացվել է նաև, որ Ջրային կոմիտեի կողմից ՀՀ պետական բյուջեի միջոցներով իրականացվում են առաջնահերթ հիմնանորոգման կարիք ունեցող հիդրոտեխնիկական կառուցվածքների վերականգնման և նորոգման աշխատանքներ, որոնք նպաստում են ոռոգման ջրի կորուստների նվազեցմանը՝ արդյունավետ ոռոգում իրականացնելու նպատակով: Նշվել է նաև, որ ներկայում Համաշխարհային բանկի կողմից նախատեսվող «Ջրային և ոռոգման ծառայությունների բարելավում» (ՋՈԾԲ/WISE) ծրագրի շրջանակներում նախատեսվում է Հայաստանի ընտրված տարածքներում ապահովել

[494] Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի վերաբերյալ 2023 և 2024 թվականների տարեկան հաղորդումները (համապատասխանաբար՝ էջեր 411-412, 804-807):

բարելավված հասանելիություն արդյունավետ և ֆինանսապես կայուն ոռոգման, ինչպես նաև անվտանգ կառավարվող ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ:

Վերոգրյալից բացի, ըստ Ջրային կոմիտեի, յուրաքանչյուր տարի կոմիտեն շրջանառում է ՀՀ կառավարության որոշման նախագիծ, որով սահմանվում է Սևանա լճից ջրառի օրենքով սահմանված չափաքանակը, ինչը հնարավորություն է տալիս Արարատյան հարթավայրի թվով 5 ջրօգտագործող ընկերություններին մատակարարելու ոռոգման ջուր՝ ոռոգման սեզոնի պահանջարկը լրացնելու նպատակով, ինչպես նաև սակավաջուր տարիներին (այդ թվում՝ 2025 թվականին) իրավական ակտերի համապատասխան փոփոխություններով իրականացվում է հավելյալ ջրառ:

Պաշտպանի այն հարցադրմանը, թե 2025 թվականի ընթացքում սահմանամերձ քանի՞ բնակավայրում և ի՞նչ ծրագրեր են իրականացվել ոռոգման ջրի հասանելիության ապահովման համար՝ Ջրային կոմիտեն հայտնել է, որ 2025 թվականի ընթացքում կոմիտեի կողմից «Պետական աջակցություն սահմանամերձ համայնքներին» միջոցառման շրջանակներում 35 սահմանամերձ համայնքների ջրօգտագործողներին հատկացվել է պետական աջակցություն՝ փոխհատուցելով օգտագործված ոռոգման ջրի դիմաց վարձավճարների 50 տոկոսը:

Միաժամանակ, տեղեկացրել է, որ 2025 թվականի սուբվենցիոն ծրագրի շրջանակներում իրականացվում են Թալին համայնքի Գետափ բնակավայրում ոռոգման համակարգի հիմնանորոգման աշխատանքներ: 2025 թվականի ընթացքում Զանգակատան ջրամբարի ոռոգման ցանցի մոտ 1 կմ երկարությամբ ջրատարի կառուցման աշխատանքների կատարումն իրականացվել է Արարատի մարզպետի աշխատակազմի պատվիրակությամբ՝ արդյունքում կառուցվել է 936 գծմ ոռոգման փակ խողովակաշար: Արարատի մարզի Վեդի համայնքի Եղեգնավան բնակավայրում 2025 թվականի ընթացքում կառուցվել է 2.3 կմ երկարությամբ ոռոգման ցանց: Վեդի համայնքի Լուսառատ բնակավայրում 2025 թվականի ընթացքում կառուցվել է 2.8 կմ ոռոգման ցանց և իրականացվել են 1 կմ ասֆալտապատման աշխատանքներ: Սյունիքի մարզի Տաթև բնակավայրում իրականացվել է ոռոգման ջրագծի մասնակի կառուցում և Տեղ բնակավայրում ոռոգման ցանցի կառուցում:

Պաշտպանը ողջունելի է համարում ոռոգման համակարգերի հիմնանորոգման, ոռոգման ջրամատակարարման բարելավման, ջրապահովվածության բարձրացման, ոռոգման ջուր օգտագործող ֆիզիկական և իրավաբանական անձանց պետական աջակցություն ցուցաբերելու, ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման ուղղությամբ ձեռնարկված քայլերը, այնուհանդերձ հարկ է համարում փաստել, որ խնդրի համակարգային լուծման ուղղությամբ դեռևս պետք է իրականացնել շարունակական գործողություններ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Մարդու իրավունքների պաշտպանը վերահաստատում է, որ անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել ոռոգման ջրի անխափան մատակարարումն ապահովելու ուղղությամբ: Անհրաժեշտ է նաև իրականացնել սահմանամերձ բնակավայրերում ոռոգման ջուր օգտագործող ֆիզիկական և իրավաբանական անձանց կարիքների շարունակական գնահատում, այդ թվում՝ քննարկման առարկա դարձնելով պետական աջակցության շրջանակում օգտագործվող ոռոգման ջրի դիմաց անձանցից գանձվող վարձավճարների նկատմամբ 50 տոկոսից ավելի զեղչի կիրառման հարցը:

6. Անձանց կողմից տնօրինվող հողատարածքներում տեղակայված և մաշված վիճակում գտնվող էլեկտրահաղորդման գծերի հենասյուների տեղափոխման խնդիր

2025 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել են մի շարք բանավոր և գրավոր բողոքներ, որոնք վերաբերել են ֆիզիկական անձանց կողմից տնօրինվող հողատարածքներում տեղակայված և մաշված (քայքայված) վիճակում գտնվող էլեկտրահաղորդման գծերի հենասյուներն էլեկտրամատակարարող ընկերության կողմից չտեղափոխելուն՝ այն պարագայում, երբ դրանք վտանգ են ներկայացնում մարդկանց կյանքին, առողջությանը և գույքին:

Այսպես, օրինակ՝ Պաշտպանին ներկայացրած բողոքներից մեկով անձը հայտնել է, որ իրեն պատկանող բնակելի տան հողամասում տեղակայված է էլեկտրահաղորդման գծերի փայտե հենասյուն, որը գտնվում է մաշված (փտած) վիճակում: Հավելել է, որ հենասյունը թեքված է դեպի իր տան կողմ և եղանակային վատ պայմանների ժամանակ առաջացնում է հոսանքի տատանումներ: Հայտնել է նաև իր մտահոգությունն առ այն, որ հենասյունը թեքվածության պատճառով կարող է ընկնել իր տան վրա և անդառնալի հետևանքներ առաջացնել թե՛ երեխաների և իր առողջությանը, թե՛ տանը: Հավելել է, որ խնդրի կարգավորման նպատակով դիմել է տարբեր իրավասու մարմինների, սակայն արդյունքի չի հասել: Խնդրել է նշված հանգամանքները դարձնել քննարկման առարկա և Պաշտպանի իրավասության շրջանակում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ:

Նշված բողոքը, այն ներկայացրած անձի գրավոր համաձայնությամբ, փոխանցվել է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով և դրա ընթացքի նկատմամբ իրականացվել է հետագա հետևողական աշխատանք: Ի պատասխան՝ Հանձնաժողովը ներկայացրել է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲ ընկերության պարզաբանումն առ այն, որ ընկերության աշխատակիցները, անվտանգության նկատառումներից ելնելով, կատարել են բողոք ներկայացրած անձի հասցեի ցանկապատից ներս գտնվող փտած փայտյա հենասյան տեղափոխման աշխատանքներ: Ըստ պարզաբանման՝ նոր հենասյունը տեղադրվել է ճամփեզրին, ինչպես նաև իրականացվել է հաշվառքի սարքերի արկղերի խմբավորում և բնակիչ-բաժանորդների տները սնող նոր էլեկտրական հաղորդալարերի մոնտաժում: Կից ներկայացվել է նաև կատարված աշխատանքների վերաբերյալ բողոք ներկայացրած անձի շնորհակալագիրը:

Թեև անհատական մակարդակում Պաշտպանի միջամտությամբ և իրավասու մարմնի հետ արդյունավետ համագործակցության արդյունքում նմանատիպ դիմում-բողոքներով բարձրացվող որոշ հարցեր ստանում են լուծում, այնուհանդերձ մաշված վիճակում գտնվող էլեկտրահաղորդման գծերի հենասյուների տեղափոխման (հիմնանորոգման) հետ կապված հարցերը համակարգային առումով շարունակում են խնդրահարույց մնալ: Դրա մասին են վկայում ինչպես նախորդ տարիների, այնպես էլ 2025 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրվող բողոքները:

Օրինակ՝ հաշվետու տարվա ընթացքում ՄԻՊ-ին ներկայացված բանավոր բողոքներից մեկով անձը հայտնել է, որ իրեն պատկանող բնակելի տան հողամասում տեղակայված է էլեկտրահաղորդման գծերի փայտե հենասյուն, որը գտնվում է մաշված վիճակում, ճոճվում է և կարող է կողաշրջվել: Ըստ բողոք ներկայացրած անձի՝ հենասյան ընկնելը կարող է հանգեցնել իր կամ այլ անձանց մահվան կամ առողջությանը պատճառել վնաս: Նշել է նաև, որ հենասյան տեղափոխման խնդրով դիմել է էլեկտրամատակարարող ընկերությանը և ստացել պատասխան այն մասին, որ նշված աշխատանքները պետք է կատարվեն իր սեփական միջոցների հաշվին:

Այս համատեքստում հարկ է անդրադարձ կատարել Կառավարության 2023 թվականի ապրիլի 13-ի «Էլեկտրահաղորդման գծերի անվտանգության գոտիների կանոնները հաստատելու մասին» թիվ 523-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետին, որի համաձայն՝ եթե ֆիզիկական և իրավաբանական անձինք իրենց կողմից տնօրինվող հողատարածքներում կատարում են այնպիսի աշխատանքներ, որոնք կարող են առաջացնել էլեկտրահաղորդման գծերի տեղափոխման, վերադասավորման կամ մեխանիկական վնասվածությունից պաշտպանության անհրաժեշտություն, ***ապա այդ աշխատանքները պետք է կատարվեն իրենց սեփական միջոցների հաշվին***՝ նախապես դրանք համաձայնեցնելով էլեկտրահաղորդման գծերը շահագործող կազմակերպության հետ:

Կարծում ենք, որ նման պահանջ նախատեսելը խնդրահարույց է կյանքի, առողջության պահպանման, սեփականության և այլ իրավունքների ապահովման տեսանկյունից՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ եթե մաշված (քայքայված) վիճակում գտնվող հենասյունը ներկայացնում է ակնհայտ և անմիջական վտանգ մարդկանց կյանքին ու առողջությանը և իրավասու մարմինները տեղեկացված լինելով *(կամ, երբ պետք է տեղեկացված լինեին)* դրա մասին՝ գործնականում կանխարգելիչ միջոցներ չեն ձեռնարկում *(օրինակ՝ չեն տեղափոխում կամ նորոգում այն)*, ապա նման իրադրությունը կարող է հանգեցնել Սահմանադրությամբ և միջազգային իրավական փաստաթղթերով երաշխավորված մի շարք իրավունքների խախտման: Այսպես, օրինակ՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածը հռչակում է, որ յուրաքանչյուրի կյանքի իրավունքը պաշտպանվում է օրենքով: Սա ենթադրում է, որ որոշակի հանգամանքներում պետական իշխանությունների վրա դրվում է նաև վտանգի տակ գտնվող անձի կյանքի պաշտպանության համար գործնական կանխարգելիչ միջոցներ կիրառելու պոզիտիվ պարտականություն: Ելնելով այս հանգամանքից՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը պետությունների կողմից իրենց կոնվենցիոն պարտականությունների կատարումը գնահատելիս՝ հատուկ կարևորություն է տալիս այն հարցին, թե նրանք արդյո՞ք ինչպիսի արդյունավետությամբ են իրականացնում իրենց պոզիտիվ պարտականությունները, արդյո՞ք պետությունները պատշաճ միջոցներ ձեռնարկում են, որպեսզի ապահովեն մարդկային կյանքը:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ կարծում ենք, որ նշված իրավիճակներում հենասյուների տեղափոխման աշխատանքներն անձանց սեփական միջոցների հաշվին կատարելու պահանջ նախատեսելը խնդրահարույց է, ուստի անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել այն վերանայելու նպատակահարմարության հարցը:

Պաշտպանին հընթացս հասցեագրվում են նաև նշված խնդրի հետ փոխկապակցված այլ բողոքներ, որոնց համաձայն՝ անձանց սեփականության իրավունքով պատկանող հողատարածքներում տեղակայված էլեկտրահաղորդման գծերի հենասյուները խոչընդոտում են այդ հողատարածքներն ըստ նպատակային նշանակության օգտագործելուն *(օրինակ՝ շինարարություն կամ ծառատունկ իրականացնելուն):* Այս դեպքում, էլեկտրահաղորդման գծերի հենասյուները թեև վտանգ չեն ներկայացնում մարդկանց կյանքին, առողջությանը և գույքին, սակայն անձանց թույլ չեն տալիս իրենց հայեցողությամբ տնօրինել հողատարածքները:

Նկատի ունենալով, որ բարձրացված խնդիրը համակարգային առումով շարունակում է խնդրահարույց լինել՝ Պաշտպանը տարեկան հաղորդման նախապատրաստման շրջանակում հարցի կարգավորման ուղղությամբ ձեռնարկված

միջոցների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու նպատակով գրություն է հասցեագրել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲ ընկերություն:

Ի պատասխան՝ տրամադրվել է տեղեկատվություն այն մասին, որ 2025 թվականի ընթացքում ընկերությունն էլեկտրական հենասյուների տեղափոխման կամ փոխարինման վերաբերյալ թվով 293 դիմում-բողոքներ է ստացել: Այդ կապակցությամբ 226 էլեկտրական հենասյուն տեղում փոխարինվել է նորով, 41-ը՝ տեղափոխվել է կից տարածքներ, իսկ 26 դիմում-բողոքներին տրվել է պարզաբանում, որ էլեկտրական հենասյուների տեղափոխման աշխատանքները պետք է իրականացվեն իրենց միջոցների հաշվին՝ անվտանգության գոտու խախտման առկայության պատճառով՝ լիցենզավորված կազմակերպության կողմից:

Ըստ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲ ընկերության ներկայացրած տվյալների՝ 2025 թվականի ընթացքում ընկերությունը ստացել է թվով 29 դիմում-բողոքներ՝ առանց բնակիչների հետ համաձայնեցնելու սեփականության իրավունքով իրենց պատկանող հողամասերում տեղադրված էլեկտրական հենասյուների տեղափոխման վերաբերյալ, որոնցից 15-ը տեղափոխվել է, 8-ը կտեղափոխվի 2026 թվականի ընթացքում, իսկ 6-ի մասով տրվել է պարզաբանում, որ տեղափոխման աշխատանքները պետք է իրականացվեն սեփական միջոցների հաշվին, քանի որ գծերը կառուցվել են ավելի շուտ՝ քան իրենց կողմից սեփականաշնորհվել են հողատարածքները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պաշտպանը ողջունում է խնդրի կարգավորման ուղղությամբ էլեկտրամատակարարող ընկերության կողմից գործադրված(ող) ջանքերը, այնուհանդերձ հարկ է համարում արձանագրել, որ անհրաժեշտ է առավել հետևողական լինել անձանց կողմից տնօրինվող հողատարածքներում տեղակայված էլեկտրահաղորդման գծերի հենասյուները տեղափոխելու (փոխարինելու, հիմնանորոգելու) հարցերում՝ հատկապես այն իրադրություններում, երբ դրանք գտնվում են մաշված վիճակում և վտանգ են ներկայացնում մարդկանց կյանքին, առողջությանը և գույքին:

Ընդ որում, անձանց իրավունքների առավել արդյունավետ ապահովման տեսանկյունից՝ անհրաժեշտ է նաև քննարկման առարկա դարձնել հենասյուների տեղափոխման աշխատանքներն անձանց սեփական միջոցների հաշվին կատարելու օրենսդրական պահանջը վերանայելու հարցը:

7. Սպառողներին մատակարարվող էլեկտրական էներգիայի հաճախակի ընդհատումների և էլեկտրաէներգիայի որակի անբավարարության խնդիրներ

2025 թվականին «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲ ընկերության դեմ Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել է թվով 72 գրավոր և բանավոր դիմում-բողոք՝ 107 անձից: Հարկ է նկատել, որ ՄԻՊ աշխատակազմ մուտքագրված բողոքների զգալի մասը վերաբերել է էլեկտրամատակարարող ընկերության կողմից առանց նախապես ծանուցելու և տևական ժամանակով էլեկտրական էներգիայի ընդհատումներին, ինչպես նաև էլեկտրաէներգիայի լարման անկումների և ընդհատումների հետևանքով նյութական վնասի պատճառմանը (կենցաղային կամ գյուղատնտեսական տեխնիկայի խափանման դեպքերին), աշխատանքային գործունեության պատշաճ իրականացումը խաթարելուն, ֆինանսական վնասների կրմանը:

Հարկ է նշել, որ 2025 թվականին ՄԻՊ-ի միջամտությամբ և էլեկտրամատակարարող ընկերության հետ արդյունավետ համագործակցության արդյունքում հնարավոր է եղել մի շարք անհատական հարցերի տալ լուծում: Այսպես, օրինակ՝ Պաշտպանին ներկայացված բանավոր բողոքներից մեկով անձը հայտնել է, որ մայրը շնչում է թոքերի արհեստական օդափոխության սարքի միջոցով, որն աշխատում է էլեկտրական հոսանքով: Նշել է նաև, որ առանց հոսանքի, այն կարող է ավտոնոմ աշխատել, բայց ոչ ավել, քան 2-3 ժամ: Հավելել է, որ ՄԻՊ-ին դիմելու պահի դրությամբ վթարային աշխատանքներով պայմանավորված՝ էլեկտրաէներգիայի մատակարարումն իրենց հասցեում դադարեցվել է և ըստ իր ունեցած տեղեկատվության՝ կվերականգնվի միայն երեկոյան: Նշվածի հաշվառմամբ՝ անձը խնդրել է Պաշտպանի աջակցությունը վթարավերականգնողական աշխատանքները կարճ ժամկետում ավարտին հասցնելու հարցում:

ՄԻՊ ներկայացուցիչը բարձրացված հարցն անմիջապես քննարկել է էլեկտրամատակարարող ընկերության իրավասու ներկայացուցչի հետ: Վերջինս, սեղմ ժամկետում, հետադարձ կապ է հաստատել Պաշտպանի ներկայացուցչի հետ և հայտնել, որ վթարավերականգնողական աշխատանքներ կատարող աշխատակիցներին հանձնարարվել է այդ հասցեում առաջնահերթության կարգով վերացնել խնդիրը: Հավելել է, որ անհրաժեշտության դեպքում էլեկտրաէներգիայի մատակարարումը կապահովվի գեներատորի միջոցով: Հաջորդիվ, բողոք ներկայացրած անձը ՄԻՊ աշխատակազմ լրացուցիչ տեղեկատվություն է ներկայացրել այն մասին, որ էլեկտրաէներգիայի մատակարարումը կարճ ժամկետում վերականգնվել է[495]:

Մյուս դեպքում, Արարատի մարզի Արտաշատ համայնքի Արևշատ գյուղի բնակիչները Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված խմբային բողոքով հայտնել են իրենց դժգոհությունը մատակարարվող էլեկտրական էներգիայի հաճախակի ընդհատումների և լարման որակի վերաբերյալ: Բողոք ներկայացրած անձանց պնդմամբ՝ վերջին շրջանում դրանք կրում են պարբերական բնույթ և խիստ անհարմարություններ ու նյութական վնասներ են պատճառում բնակիչներին (խափանվում է կենցաղային և գյուղատնտեսական տեխնիկան): Ուստի, խնդրել են նշված հանգամանքները դարձնել քննարկման առարկա և Պաշտպանի իրավասության շրջանակում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ:

Բարձրացված խնդիրը Պաշտպանը հասցեավորել է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին: Արդյունքում, ստացվել է պատասխան այն մասին, որ էլեկտրական էներգիայի մատակարարման հետ կապված խնդիրները կարգավորվել են: Պատասխանին կից ներկայացվել է նաև էլեկտրամատակարարող ընկերության կողմից տրամադրված պարզաբանումն առ այն, որ նշված տարածքի էլեկտրամատակարարումն

---

[495] Մեկ այլ դեպքում, ֆունկցիոնալության ծանր աստիճանի սահմանափակումով հաշմանդամություն ունեցող անձը տեղեկացրել է, որ շնչում է թոքերի արհեստական օդափոխության սարքի միջոցով: Նշել է, որ չի կարողացել վճարել մատակարարված էլեկտրական էներգիայի դիմաց գոյացած պարտքը և էլեկտրամատակարարող ընկերության ներկայացուցիչն իրեն հայտնել է, որ 2025 թվականի մարտի 26-ին՝ ժամը 09:00-ին էլեկտրական էներգիայի մատակարարումը կդադարեցվի: Հավելել է, որ պարտքը հնարավորություն կունենա վճարելու միայն մարտի 29-ին: Խնդրել է Պաշտպանի աջակցությունն իր բնակարանի էլեկտրաէներգիայի մատակարարումը մինչև 2025 թվականի մարտի 29-ը չդադարեցնելու հարցում: ՄԻՊ ներկայացուցիչը բարձրացված հարցը քննարկել է էլեկտրամատակարարող ընկերության իրավասու ներկայացուցչի հետ: Վերջինիս հետ ձեռք է բերել պայմանավորվածություն՝ մինչև 2025 թվականի մարտի 30-ը բողոք ներկայացրած անձի բնակարանի էլեկտրաէներգիայի մատակարարումը չդադարեցնելու վերաբերյալ: ***Մարդու իրավունքների պաշտպանը բարձր է գնահատում նմանատիպ իրավիճակներում էլեկտրամատակարարող ընկերության հետ կառուցողական աշխատանքը՝ խնդիրներին օպերատիվ լուծումներ տալու տեսանկյունից:***

իրականացվում է «ՀԷՑ» ՓԲ ընկերության հաշվեկշռում գտնվող «Նշավան» 6 կՎ օդային գծից սնվող 400/6կՎԱ հզորությամբ թիվ 1104 ենթակայանի 0.4 կՎ օդային գծից: «Արտաշատ» էլեկտրացանցի աշխատակիցների կողմից վերը նշված 0.4կՎ օդային ցանցում իրականացվել են կարգաբերման և բեռերի համաչափ բաշխման աշխատանքներ, ինչի արդյունքում՝ բարելավվել են մատակարարվող էլեկտրական էներգիայի որակական ցուցանիշները: Ներկայացվել է նաև կատարված աշխատանքների վերաբերյալ բողոք ներկայացրած անձանցից մեկի շնորհակալագիրը:

Չնայած անհատական մակարդակում արձանագրված դրական առաջընթացին՝ հարկ է նշել, որ էլեկտրամատակարարման հաճախակի ընդհատումների, ինչպես նաև մատակարարվող էլեկտրաէներգիայի լարման որակի հետ կապված հարցերը համակարգային առումով շարունակում են խնդրահարույց մնալ: Ընդ որում, հաշվետու տարվա ընթացքում ՄԻՊ-ին ներկայացված բողոքների հիման վրա նախաձեռնված ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ նշված խնդիրները բացասական են ազդում ոչ միայն ֆիզիկական ու իրավաբանական անձանց վրա, այլ նաև խաթարում են մի շարք պետական մարմինների բնականոն գործունեությունը:

Այսպես, օրինակ՝ Պաշտպանին ներկայացված բողոքներից մեկով անձը հայտնել է, որ էլեկտրամատակարարման հաճախակի ընդհատումների հետևանքով իրեն և հարակից տների բնակիչներին պատճառվում են անհարմարություններ, մասնավորապես, վնասվում են կենցաղային սարքերը, ինչպես նաև զրկվում են ջրամատակարարումից, քանի որ այն իրականացվում է էլեկտրական հոսանքով աշխատող պոմպերի միջոցով:

Մեկ այլ դեպքում, Պաշտպանին դիմած անձը հայտնել է, որ ամուսինը և երկու որդիները մասնակցել են ՀՀ սահմանների պաշտպանությանը: Հավելել է, որ ռազմական գործողությունների ժամանակ ամուսինը ստացել է վնասվածք (ֆունկցիոնալության ծանր աստիճանի սահմանափակումով հաշմանդամություն ունեցող անձ է): Նշել է նաև, որ ունի անչափահաս դուստր և ստանում է պետական նպաստ: Բողոք ներկայացրած անձի տեղեկացմամբ՝ պատշաճ կատարում է սպառված էլեկտրաէներգիայի դիմաց վճարումները, մինչդեռ մատակարարվող էլեկտրական էներգիայի լարման անկումների և հաճախակի ընդհատումների հետևանքով կրել է նյութական վնաս՝ խափանվել է թռչնաբուծական սարքավորումը, որում առկա շուրջ 400 հավի ձվերը դարձել են բուծման համար ոչ պիտանի:

Մյուս դեպքում, բողոք ներկայացրած անձը հայտնել է, որ բնակարան մատակարարվող էլեկտրաէներգիայի ցածր լարման պատճառով չի կարողանում լիցքավորել իր էլեկտրական մեքենան, ուստի ստիպված է լինում օգտվել լիցքավորման կայաններից (ինչը ենթադրում է հավելյալ ծախսեր):

Պաշտպանին ներկայացված բանավոր բողոքներից մեկով էլ ՀՀ ԱՆ «Արթիկ» քրեակատարողական հիմնարկում պատիժը կրող դատապարտյալը հայտնել է, որ էլեկտրաէներգիայի մատակարարման հաճախակի ընդհատումների պատճառով ազատությունից զրկված անձանց մերձավոր ազգականների հետ տեսակցությունները խափանվում են:

ՄԻՊ ներկայացուցիչը բարձրացված հարցը քննարկել է քրեակատարողական հիմնարկի պետի հետ: Վերջինս հայտնել է, որ եղանակային վատ պայմանների պատճառով՝ մի քանի ժամ քրեակատարողական հիմնարկի էլեկտրաէներգիայի մատակարարումը դադարեցվել է (նշվածը հաստատել է նաև էլեկտրամատակարարող ընկերության ներկայացուցիչը): Հավելել է, որ տեսակցությունները պատշաճ պայմաններում կազմակերպելու նպատակով հիմնարկի ծառայողները տեսակցությունների համար նախատեսված սենյակներում տեղադրել են լուսավորությունն

ապահովող լապտերներ: Տեղեկացրել է նաև, որ քրեակատարողական հիմնարկը միջոցներ է ձեռնարկում գեներատոր ձեռք բերելու ուղղությամբ:

Հարկ է նշել, որ վերջին տարիներին հաճախակի դարձած էլեկտրաէներգիայի ընդհատումները խաթարում են նաև Պաշտպանի աշխատակազմի բնականոն գործունեությունը: Մասնավորապես, հնարավոր չի լինում պատշաճ կազմակերպել Մարդու իրավունքների պաշտպանի բարձր մակարդակով հանդիպումները, ապահովել էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության արդյունավետ կազմակերպումը, թեժ գծի կամ այլ ֆիքսված քաղաքային և ներքին հեռախոսահամարների միջոցով անձանց իրավախորհրդատվությունների տրամադրումը և այլն:

ՄԻՊ աշխատակազմը քննարկվող խնդիրն ուսումնասիրել է նաև զանգվածային լրատվության միջոցների և սոցիալական ցանցերի մշտադիտարկման միջոցով: Այսպես, հաշվետու տարվա ընթացքում իրականացված դիտարկման արդյունքները վկայում են, որ էլեկտրաէներգիայի ընդհատումները անբարենպաստ պայմաններ են ստեղծում օրինակ՝ ճանապարհային երթևեկության անվտանգության[496], քվեարկության[497], դատական նիստի բնականոն ընթացքի ապահովման համար[498]:

Հաշվի առնելով, որ 2025 թվականի ընթացքում էլեկտրամատակարարման հաճախակի ընդհատումների և լարման որակի հետ կապված խնդիրները համակարգային առումով շարունակել են խնդրահարույց մնալ՝ Մարդու իրավունքների պաշտպանը տարեկան հաղորդման նախապատրաստման շրջանակներում հարցի կարգավորման ուղղությամբ ձեռնարկված միջոցների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու նպատակով գրություններ է հասցեագրել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲ ընկերություն և ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով:

ՀԾԿՀ-ն ներկայացրել է տվյալներ առ այն, որ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲ ընկերության կողմից էլեկտրամատակարարման ընդհատումների վերաբերյալ Հանձնաժողով է ներկայացվել 112 դիմում-բողոք: Ըստ տեղեկատվության՝ դիմում-բողոքները քննարկվել են «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածի պահանջներին համապատասխան: Ընդհատումների մասին դիմում-բողոքների քննարկման ընթացքի վերաբերյալ տրամադրվել է հետևյալ տեղեկատվությունը.

էլեկտրամատակարարման ընդհատումների վերաբերյալ ներկայացված 112 դիմում-բողոքներից՝

- 19 դիմում-բողոքի դեպքում՝ սպառողի պահանջը բավարարվել է.
- 40 դիմում-բողոքի դեպքում՝ սպառողի պահանջը մասնակիորեն է բավարարվել.
- 40 դիմում-բողոքի դեպքում սպառողին տրվել են ընդհատումների վերաբերյալ համապատասխան պարզաբանումներ.
- 13 դիմում-բողոքի քննարկումն ընթացքի մեջ է:

Ըստ Հանձնաժողովի տրամադրած տեղեկատվության՝ որակի ցուցանիշների շեղումներով էլեկտրաէներգիայի մատակարարման, ընդհատումների հետևանքով սպառողներին նյութական և տեխնիկական վնասներ պատճառելու համար վնասների փոխհատուցման վերաբերյալ Հանձնաժողով է ներկայացվել 23 դիմում-բողոք, որոնց դեպքում սպառողները տեղեկացվել են, որ վնասի փոխհատուցման հարցի քննարկումը

---

[496] Հրապարակումը հասանելի է հետևյալ հղումով՝ https://surl.li/dmeaxw (20/03/2026թ.-ի դրությամբ):

[497] Հրապարակումը հասանելի է հետևյալ հղումով՝ https://alphanews.am/177243-2/ (20/03/2026թ.-ի դրությամբ):

[498] Հրապարակումը և տեսանյութը հասանելի է հետևյալ հղումով՝ https://armeniatoday.am/hy/law/957067/ (20/03/2026թ.-ի դրությամբ):

դուրս է «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածով սահմանված Հանձնաժողովի իրավասությունների շրջանակից: Մասնավորապես, «Էներգետիկայի մասին» օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պայմանագրային պարտավորությունները չկատարելու հետևանքով հասցված վնասը փոխհատուցում է խախտողը՝ օրենքով սահմանված կարգով: Ընդ որում, պայմանագրերի կատարման հսկողությունն իրականացնում են միայն պայմանագրային կողմերը:

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲ ընկերության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ էլեկտրաէներգիայի մատակարարման վթարային կամ արտապլանային ընդհատումների հիմնական պատճառ են հանդիսացել.

1. եղանակային անբարենպաստ պայմանները, որոնց պատճառով օդային գծերում տեղի են ունենում վթարներ,

2. այլ կազմակերպությունների կողմից հողային աշխատանքներ իրականացնելիս 6/10/0.4կՎ մալուխների վնասումը,

3. շահագործման մեջ գտնվող սարքավորումների խափանումը:

Ընկերության տեղեկացմամբ՝ վերոնշյալ դեպքերի հետևանքով հոսանքազրկվում են բաշխիչ և տրանսֆորմատորային ենթակայաններ՝ բազմաբնակարանային շենքեր, հանրային բաժանորդներ: Վթարային անջատումների քանակը նվազեցնելու նպատակով՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲ ընկերության կողմից պարբերաբար իրականացվում են մի շարք տեխնիկական միջոցառումներ, ինչպես նաև ներդրումային ծրագրի շրջանակներում իրականացվում են.

1. նոր մալուխների մոնտաժային աշխատանքներ,

2. պահուստային սնուցման ապահովման նպատակով՝ միջանկյալ կապերի ստեղծման աշխատանքներ,

3. բաշխիչ և տրանսֆորմատորային ենթակայանների վերակառուցման՝ նոր արդիականացված սարքավորումների տեղադրման աշխատանքներ,

4. նոր օդային գծերի կառուցման աշխատանքներ:

Ընկերության ներկայացրած տվյալների համաձայն՝ 2025 թվականի հունվարից մինչև դեկտեմբեր ընկերությունն ունեցել է 4729 վնասված տեխնիկայի դիմում, որից 3703-ը հաստատվել է, և ըստ սահմանված կարգի խնդիրը լուծվել է, իսկ 1026-ը մերժվել է՝ համապատասխան հիմքերի բացակայության պատճառով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պաշտպանը ողջունում է խնդիրների կարգավորման ուղղությամբ իրավասու մարմինների գործադրած ջանքերը, այնուհանդերձ արձանագրում է, որ էլեկտրաէներգիայի մատակարարման բարելավմանն ու սահմանված որակական չափանիշների ապահովմանն ուղղված միջոցառումները պետք է կրեն շարունակական բնույթ և ունենան պատշաճ գործնական իրացում:

Պաշտպանը վերահաստատում է նաև իր դիրքորոշումն առ այն, որ սպառողներին մատակարարվող էլեկտրաէներգիայի հաճախակի ընդհատումների հարցը կարգավորելու նպատակով անհրաժեշտ է՝ ուսումնասիրել վթարային արտապլանային ընդհատումների պատճառները, աշխատանքներ իրականացնել (այդ թվում՝ պահուստային (երկրորդային) սնուցում ապահովելու միջոցով) դրանք նվազագույնի հասցնելու համար, ինչպես նաև շարունակական քայլեր ձեռնարկել էլեկտրաէներգետիկական համակարգի հուսալիության և անվտանգության ցուցանիշները բարելավելու ուղղությամբ:

8. Բնակելի շենքում ներկառուցված էլեկտրական ենթակայանի շահագործման հետևանքով բնակիչների հիմնարար իրավունքների խախտման վտանգի խնդիր

2025 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված խմբային բողոքի հիման վրա նախաձեռնված ուսումնասիրության արդյունքում վեր է հանվել բազմաբնակարան բնակելի շենքում ներկառուցված էլեկտրաենթակայանի շահագործման հետևանքով բնակիչների հիմնարար իրավունքների խախտման վտանգի խնդիր:

Այսպես, ՄԻՊ-ին դիմած անձը հայտնել է, որ անմիջապես իր բնակարանի տակ՝ բազմաբնակարան բնակելի շենքի առաջին հարկում, ներկառուցված է էլեկտրական ենթակայան, որը սպասարկում է տարածքի մի քանի բնակելի շենքերը: Ըստ բողոք ներկայացրած անձի՝ էլեկտրաենթակայանում տեղադրված է 250 կՎԱ հզորությամբ ՏՊ-144 տեսակի յուղալեցուն տրանսֆորմատոր (մոտ 250 լիտր յուղի տարողությամբ), որի շահագործման հետևանքով բնակարանում մշտապես առկա է աղմուկ, ինչպես նաև վառված յուղի հոտ, ինչը, բողոք ներկայացրած անձի պնդմամբ, ոչ միայն խիստ անհարմարություններ է ստեղծում բնակության համար, այլ նաև վտանգավոր է առողջության համար: Դրանից բացի, ըստ բողոք ներկայացրած անձի, էլեկտրական ենթակայանի շահագործման արդյունքում առաջանում է բարձր մագնիսական դաշտ: Նշվածի հետ մեկտեղ, բողոք ներկայացրած անձը հայտնել է, որ իր բնակարանի ննջասենյակի պատի հակառակ կողմում տեղադրված է առևտրային հաշվառքի սարքերի արկղ և հաշվի առնելով, որ դրանում առկա հաշվիչները գործում են անլար կապով՝ դա նույնպես առաջացնում է ճառագայթում: Հավելել է, որ իր կինը տառապում է քաղցկեղով և ներկայում ստանում է համապատասխան բուժում, իսկ բնակարանի ննջասենյակը գտնվում է էլեկտրաենթակայանի անմիջապես վերևում՝ արդյունքում ստացվում է, որ կինն օրվա մեծ մասն անցկացնում է առողջության համար վտանգավոր պայմաններում: Բացի այդ, բողոք ներկայացրած անձի տեղեկացմամբ՝ ընտանիքում ունեն մանկահասակ երեխա, որի առողջությունն ու անվտանգությունը գտնվում է անմիջական վտանգի տակ՝ նկատի ունենալով էլեկտրաենթակայանի շահագործման հետևանքով հնարավոր պայթյունի կամ հրդեհի (դրանց հետևանքով թունավոր գոլորշիների արտանետման) ռիսկը: Բողոք ներկայացրած անձն իր այս մտահոգությունները հիմնավորում է Երևան քաղաքում տեղակայված այլ էլեկտրական ենթակայաններում վերջին շրջանում հրդեհի բռնկմամբ տեղի ունեցած երկու պայթյունների դեպքերով, որոնք, ըստ Պաշտպանին դիմած անձի, լուրջ վնասներ են հասցրել բնակիչներին և նրանց գույքին: Բողոք ներկայացրած անձի պնդմամբ՝ նշված պատահարները վկայում են նման օբյեկտների վտանգավորության մասին և ցույց են տալիս, որ բազմաբնակարան բնակելի շենքերում վերը նշված տեսակի յուղալեցուն տրանսֆորմատորների տեղակայումը հակասում է անվտանգության նորմերին և անմիջական սպառնալիք է ստեղծում բնակիչների կյանքին: Վերոգրյալի արդյունքում, բողոք ներկայացրած անձի պնդմամբ, խախտվում է առողջ ու անվտանգ շրջակա միջավայրում ապրելու բնակիչների իրավունքը:

Հարկ է նկատել, որ այս բողոքը ստորագրել են նաև հարակից բնակարանների բնակիչները՝ խնդրելով վերը նշված հանգամանքները դարձնել քննարկման առարկա և Պաշտպանի իրավասության շրջանակում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ:

Բողոքում բարձրացված հարցերը ՄԻՊ-ը հասցեավորել է համապատասխան տեսչական մարմիններ: Այսպես, ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային

անվտանգության տեսչական մարմինը (այսուհետ՝ ՔՏՀԱ տեսչական մարմին) ներկայացրել է պարզաբանումներ առ այն, որ ՔՏՀԱ տեսչական մարմնի Երևանի տարածքային բաժնի մասնագետները «Հայաստանի էլեկտրական ցանցեր» (այսուհետ՝ «ՀԷՑ») ՓԲ ընկերության ներկայացուցչի հետ համատեղ իրականացրել են ուսումնասիրություն: Արդյունքում պարզվել է, որ բողոք ներկայացրած անձի բնակության վայրի շենքի առաջին հարկում գտնվող «ՀԷՑ» ՓԲ ընկերությանը պատկանող 1*400/6 կՎԱ հզորության տրանսֆորմատորային ենթակայանը, որը նախատեսված է տարածքի բնակելի շենքերի էլեկտրամատակարարման համար, *տեղակայված է՝ չպահպանելով ՀՀ կառավարության 21.04.2023 թվականի թիվ 592-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրատեղակայանքների սարքվածքի կանոններ»-ի 7-րդ մասի 2-րդ բաժնի 3-րդ գլխի 6-րդ կետի պահանջը, այն է՝ բնակելի շենքերում բացառիկ դեպքերում թույլատրվում է ներկառուցված և կից կառուցված ենթակայանների կառուցում՝ օգտագործելով չոր տրանսֆորմատորներ, համաձայնեցնելով պետական իրավասու մարմնի հետ, ընդ որում՝ պետք է ամբողջությամբ կատարվեն սանիտարական պահանջները՝ աղմուկի և թրթռման մակարդակների սահմանափակման վերաբերյալ:*

Հաշվի առնելով վերոգրյալը, ՔՏՀԱ տեսչական մարմինը գրությամբ դիմել է «ՀԷՑ» ՓԲ ընկերությանը՝ միջոցներ ձեռք առնել ենթակայանը տեխնիկական և հրդեհային անվտանգության կանոններին համապատասխանեցնելու համար:

Տեսչական մարմինը ներկայացրել է նաև «ՀԷՑ» ՓԲ ընկերության պատասխան գրությունը, ըստ որի՝ բողոք ներկայացրած անձի բնակության վայրի շենքի առաջին հարկում տեղակայված է S0144 ենթակայանը, որը շահագործման է հանձնվել 1951 թվականին՝ շենքի կառուցման հետ միասին: Գրության համաձայն՝ շենքի բնակիչների դիմում-բողոքների հիման վրա, տրանսֆորմատորի աղմուկի նվազեցման նպատակով՝ 2017 թվականի ապրիլի 10-ին ուժային տրանսֆորմատորը փոխարինվել է ՏՄԳ400/6 տիպի նոր տրանսֆորմատորով:

«ՀԷՑ» ՓԲ ընկերության նշված գրությանն ի պատասխան՝ ՔՏՀԱ տեսչական մարմինը կրկին դիմել է ընկերությանը, մասնավորապես, շեշտելով, որ անհրաժեշտ է.

- ✓ ***փոխարինել յուղային տրանսֆորմատորը չոր տրանսֆորմատորով՝ համաձայնեցնելով պետական վերահսկողության մարմինների հետ,***
- ✓ ***ամբողջությամբ կատարել սանիտարական նորմերի պահանջները՝ սահմանափակելով ձայնային ճնշման, թրթռանքի, էլեկտրամագնիսական դաշտի ազդեցությունը մարդու առողջության վրա,***
- ✓ ***իրականացնել հակահրդեհային միջոցառումներ տրանսֆորմատորային ենթակայանի տարածքի նկատմամբ:***

Տեսչական մարմինը նշել է նաև, որ «ՀԷՑ» ՓԲ ընկերությունից պատասխան գրություն ստանալուց հետո Պաշտպանի աշխատակազմ կներկայացվի լրացուցիչ տեղեկատվություն: Հաջորդիվ, ՔՏՀԱ տեսչական մարմինը ՄԻՊ աշխատակազմ է ներկայացրել «ՀԷՑ» ՓԲ ընկերության պատասխան գրությունը՝ առ այն, որ ուժային տրանսֆորմատորը կփոխարինվի նոր չոր տիպի տրանսֆորմատորով, որի աշխատանքների ավարտը նախատեսվում է մինչև 2026 թվականի փետրվարի 6-ը:

ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնից (այսուհետ՝ ԱԱ տեսչական մարմին) ստացվել է պատասխան այն մասին, որ 2025 թվականի դեկտեմբերի 8-ին հարուցվել է վարչական վարույթ՝ ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի մարտի 6-ի թիվ 138 հրամանով հաստատված «Աղմուկն

աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2-III-11.3 սանիտարական նորմերի 5.3-րդ կետի աղյուսակ 3-ի 4-րդ կետով սահմանված պահանջների պահպանումը պարզելու նպատակով:

ԱԱ տեսչական մարմնի տեղեկացմամբ՝ հարուցված վարչական վարույթի շրջանակներում նախատեսված է բողոք ներկայացրած անձի բնակարանում 2026 թվականի հունվարի 12-ի ժամը 01^{00}-ից մինչև ժամը 03^{00}-ն ընկած ժամանակահատվածում իրականացնել «ՀԷՑ» ՓԲ ընկերությանը պատկանող տրանսֆորմատորային ենթակայանի աշխատանքի ընթացքում առաջացող և բնակարան թափանցող աղմուկի մակարդակի գործիքային չափումներ: ԱԱ տեսչական մարմինը նշել է նաև, որ վարույթի հետագա ընթացքի վերաբերյալ կտրամադրվի լրացուցիչ տեղեկատվություն:

Հաջորդիվ, ԱԱ տեսչական մարմինը ներկայացրել է տեղեկատվություն առ այն, որ նշված գործիքային չափումները չեն իրականացվել «ՀԷՑ» ՓԲ ընկերության կողմից բողոքի առարկա հանդիսացող տրանսֆորմատորը նոր տրանսֆորմատորով փոխարինելու նպատակով տեխնիկական աշխատանքների իրականացման պատճառով: Նշել է նաև, որ 2026 թվականի հունվարի 30-ին ԱԱ տեսչական մարմին մուտքագրված գրությամբ «ՀԷՑ» ՓԲ ընկերությունը տեղեկացրել է, որ վերոգրյալ տրանսֆորմատորի նորով փոխարինելու աշխատանքները կավարտվեն մինչև 2026 թվականի փետրվարի 6-ը: ԱԱ տեսչական մարմինը նշել է նաև, որ վարույթի հետագա ընթացքի վերաբերյալ կտրամադրվի լրացուցիչ տեղեկատվություն:

Հարկ է նշել, որ այս բողոքը ՄԻՊ աշխատակազմում գտնվում է քննարկման փուլում և պահանջում է հետագա լրացուցիչ ուսումնասիրություններ:

Էլեկտրական ենթակայանների պայթահրդեհավտանգավորության խնդիրները ՄԻՊ աշխատակազմն ուսումնասիրել է նաև զանգվածային լրատվության միջոցների և սոցիալական ցանցերի մշտադիտարկման միջոցով: Այսպես, հրապարակումների համաձայն՝ 2025 թվականի դեկտեմբերի 27-ին՝ կեսգիշերին մոտ Երևանի Նոր Արեշ 35 փողոցում գտնվող «ՀԷՑ» ՓԲ ընկերությանը պատկանող էլեկտրաենթակայանում հրդեհ է բռնկվել: Ըստ հրապարակումների՝ հրդեհը մեկուսացվել է դեկտեմբերի 28-ին՝ ժամը 00:53-ին, մարվել՝ 01:20-ին: Ըստ հրապարակումներում առկա տվյալների՝ ենթակայանում բռնկված հրդեհի հետևանքով Երևանում ամբողջական թաղամասեր էին հոսանքազրկվել (այդ թվում՝ շենքեր, սեփական տներ, հիմնարկ-ձեռնարկություններ, սննդի ու գեղեցկության սրահներ, հասարակական այլ օբյեկտներ, հոսանքազրկվել են): Էրեբունի վարչական շրջանում ավելի քան 2 օր հոսանք չկար[499]:

Վերոգրյալի համատեքստում, հարկ է նշել, որ միջազգային իրավաբանությունը, այդ թվում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) նախադեպային իրավունքը պատասխանատվություն է դնում պետությունների վրա նման իրավիճակներ թույլ չտալու համար:

Թեև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (այսուհետ՝ ՄԻԵԿ) ուղղակիորեն չի նախատեսում առողջ ու անվտանգ շրջակա միջավայրում ապրելու իրավունքը, այնուամենայնիվ, ՄԻԵԴ-ն ունի շրջակա միջավայրին առնչվող գործերով նախադեպային հարուստ պրակտիկա՝ հաշվի առնելով այն, որ շրջակա միջավայրին

[499] Հրապարակումները հասանելի են հետևյալ հղումներով՝ https://surl.li/kmzlkm, https://surl.lu/saaamk, https://armenpress.am/hy/article/1238634/amp (20/03/2026թ.-ի դրությամբ):

հասցված վնասը կարող է խաթարել ՄԻԵԿ-ով երաշխավորված որոշ իրավունքների իրացումը:

Այսպես, օրինակ՝ *Լոպես Օստրան ընդդեմ Իսպանիայի* գործով դիմումատուն պնդում էր, որ իր տան մոտակայքում (12 մետր հեռավորության վրա) գտնվող հեղուկ և կոշտ թափոնների վերամշակման ձեռնարկության գործունեության արդյունքում առաջացող գարշահոտը, աղմուկը և վնասակար գոլորշիները հանգեցրել են ՄԻԵԿ-ով երաշխավորված մի շարք իրավունքների խախտման: Նշված գործով ՄԻԵԴ-ը գտել էր, որ պետությունը չի կարողացել ապահովել արդար հավասարակշռություն՝ քաղաքի տնտեսական բարեկեցության (թափոնների վերմշակման գործարան հիմնելու) և դիմումատուի՝ բնակարանի անձեռնմխելիության, անձնական ու ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքի պատշաճ պահպանման միջև՝ արդյունքում արձանագրելով ՄԻԵԿ 8-րդ հոդվածով երաշխավորված իրավունքի[500] խախտում[501]:

Ըստ *Ֆադեևան ընդդեմ Ռուսաստանի* գործի փաստական հանգամանքների՝ 1995 թվականին ՌԴ քաղաքացի Նադեժդա Ֆադեևան և Չերեպովեց քաղաքի այլ բնակիչներ դատական հայց են ներկայացրել տեղի քաղաքային դատարան՝ ՌԴ խոշորագույն մետաղագործական ընկերություններից մեկի դեմ: Նրանք պնդում էին, որ իրենց քաղաքում գտնվող պողպատաձուլական գործարանի շահագործման արդյունքում առաջացող աղմուկի և օդի աղտոտվածության մակարդակը գերազանցում է Ռուսաստանի օրենսդրությամբ սահմանված առավելագույն թույլատրելի կոնցենտրացիաները, ինչը նրանց բնակության վայրը (գործարանից մոտավորապես 450 մետր հեռավորության վրա) դարձրել է բնակության համար ոչ անվտանգ: Ռուսաստանի օրենսդրության համաձայն՝ գործարանից 1000 մետր հեռավորության վրա գտնվող տարածքը պիտանի չէ որևէ բնակելի շենքի կառուցման համար: Հայցվորները պնդում էին, որ իրենք պետք է տեղափոխվեն էկոլոգիապես անվտանգ տարածք: 1996 թվականին Չերեպովեցի քաղաքային դատարանը որոշեց, որ հայցվորներն իրավունք ունեն վերաբնակեցման՝ դաշնային բյուջեում համապատասխան միջոցների առկայության պարագայում: 1999 թվականին քաղաքային դատարանը մերժեց տիկին Ֆադեևայի 1996 թվականի դատարանի որոշման կատարման պահանջը և հաստատեց, որ դատարանի սկզբնական որոշումն ամբողջությամբ կատարվել է նրան բնակարանային ընդհանուր հերթացուցակում տեղավորելուց հետո: Նշվածի հաշվառմամբ՝ նույն թվականին Նադեժդա Ֆադեևան ՌԴ կառավարության դեմ գանգատ ներկայացրեց ՄԻԵԴ: Միաձայն որոշմամբ դատարանը Ռուսաստանի կառավարությանը մեղավոր ճանաչեց ՄԻԵԿ 8-րդ հոդվածը խախտելու մեջ, ինչպես նաև պարզեց, որ այն չի կատարել գործարանից շրջակա միջավայրի աղտոտման հետևանքները վերացնելու իր պարտավորությունները, ինչը հանգեցրել էր դիմումատուի կյանքի որակի վատթարացմանը[502]:

---

[500] Թեև ՄԻԵԿ 8-րդ հոդվածի հիմնական նպատակն անձին հանրային իշխանությունների կամայական միջամտությունից պաշտպանությունն է, այնուհանդերձ այն պարզապես չի հարկադրում պետությանը ձեռնպահ մնալ այդպիսի միջամտությունից. *ի հավելումն պետության բացասական պարտականության կարող են լինել անձնական և ընտանեկան կյանքի նկատմամբ արդյունավետ հարգանքի դրական պարտավորություններ:*

[501] Տե՛ս *Լոպես Օստրան ընդդեմ Իսպանիայի* (López Ostra v. Spain) 1994 թվականի դեկտեմբերի 9-ի գործով վճիռը, գանգատ թիվ 16798/90, § 34, 51, 58:

[502] Տե՛ս *Ֆադեևան ընդդեմ Ռուսաստանի* (Fadeyeva v. Russia) 2005 թվականի հունիսի 9-ի գործով վճիռը, գանգատ թիվ 55723/00:

Մեկ այլ՝ *Թաթարն ընդդեմ Ռումինիայի* գործով պետության կողմից հանքավայրը շահագործող ընկերության գործունեության ռիսկերը բավարար չափով չգնահատելու և դիմումատուների մասնավոր կյանքի ու տների նկատմամբ հարգանքի իրավունքը և ընդհանրապես նրանց՝ առողջ և պահպանված շրջակա միջավայրից օգտվելու իրավունքը պաշտպանելու համար համապատասխան միջոցառումներ չձեռնարկելու արդյունքում՝ ՄԻԵԴ-ը միաձայն որոշմամբ արձանագրեց ՄԻԵԿ 8-րդ հոդվածի խախտում[503]:

Գերան և այլոք ընդդեմ Իտալիայի գործով ՄԻԵԴ-ի արտահայտած իրավական դիրքորոշման համաձայն՝ ***շրջակա միջավայրի խիստ աղտոտումը կարող է ազդել անհատների բարեկեցության վրա և թույլ չտալ նրանց վայելել իրենց տները, ինչը բացասաբար կազդի նրանց մասնավոր և ընտանեկան կյանքի վրա:*** Այս գործը հատկանշական է նաև նրանով, որ ՄԻԵԴ-ը պետության կողմից էկոլոգիական ռիսկերի վերաբերյալ տեղեկատվության չտրամադրումը համարել էր անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքի խախտում: Նշված գործով՝ իշխանությունները չէին տեղեկացրել բնակիչներին քիմիական գործարանից առաջացող աղտոտման մասին՝ խախտելով նրանց՝ վտանգների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու իրավունքը:

Այսպես, ՄԻԵԴ վերաբերելի նախադեպային իրավունքի հաշվառմամբ՝ ՄԻՊ-ն արձանագրում է, որ բնակիչների առողջ ու անվտանգ շրջակա միջավայրում ապրելու, անձնական և ընտանեկան կյանքը հարգելու, բնակարանի անձեռնմխելիության իրավունքի պատշաճ ապահովման տեսանկյունից՝ անհրաժեշտ է՝

- ✓ ***պատշաճ միջոցներ ձեռնարկել բնակելի շենքերում ներկառուցված (կից կառուցված) էլեկտրաենթակայանների շահագործման հետևանքով առաջացող բացասական հետևանքների վերացման ուղղությամբ.***
- ✓ ***ուժեղացնել հսկողությունն էլեկտրական բաշխիչ սարքերի և ենթակայանների սարքվածքների շահագործմանը ներկայացվող օրենսդրական պահանջների պահպանման նկատմամբ:***

9. Գազամատակարարման դադարեցման (սահմանափակման) և վերականգնման հետ կապված օրենսդրական և գործնական խնդիրներ

2025 թվականին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված անհատական դիմում-բողոքների հիման վրա իրականացված ուսումնասիրությունների արդյունքում վեր են հանվել գազամատակարարման դադարեցման (սահմանափակման) և վերականգնման հետ կապված օրենսդրական և գործնական խնդիրներ:

Այսպես, Պաշտպանին հասցեագրված դիմում-բողոքով անձը հայտնել է, որ իր երկու անչափահաս երեխայի հետ բնակվում է իր 11 տարեկան դստերը միանձնյա սեփականության իրավունքով պատկանող բնակարանում: Նշել է, որ իրենց բնակության հասցեում բնական գազի մատակարարման բաժանորդ է հանդիսանում իր նախկին ամուսինը:

Բողոք ներկայացրած անձի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ ընկերության կողմից բնակարանում կատարվել են գազի առևտրային հաշվառքի սարքի

[503] Տե՛ս *Թաթարն ընդդեմ Ռումինիայի* (Tătar v. Romania) 2009 թվականի հունվարի 27-ի գործով վճիռը, գանգատ թիվ 67021/01:

փոխարինման աշխատանքներ, որից հետո կապարակնքվել է ջեռուցման համակարգին միացվող գազի խողովակը: Բողոք ներկայացրած անձի տեղեկացմամբ՝ ընկերությունից հայտնել են, որ այդ խողովակի վերագործարկման համար անհրաժեշտ է բաժանորդի համաձայնությունը:

Ըստ պնդման՝ ընկերության բաժանորդ հանդիսացող անձը՝ իր նախկին ամուսինը, տարիներ առաջ հեռացել է, հիշյալ հասցեում չի բնակվում, չի կատարում սպառած բնական գազի դիմաց վճարումները և չի զբաղվում երեխաների խնամքով: Հայտնել է նաև, որ նրա գտնվելու վայրի վերաբերյալ տեղեկություններ չունի:

Հավելել է, որ բնական գազի մատակարարման պայմանագիրը դադարեցնելու և իր կամ անչափահաս երեխայի անունով նոր պայմանագիր կնքելու նպատակով դիմել է մի շարք պետական, այդ թվում՝ ոլորտը կարգավորող մարմինների, գազամատակարարում իրականացնող ընկերությանը, սակայն խնդիրը լուծում չի ստացել:

Բողոքին կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում, ի թիվս այլնի, պարզվել է, որ բողոք ներկայացրած անձի դիմումի հիման վրա գազամատակարարում իրականացնող ընկերությունը փոստային առաքմամբ ծանուցում է ուղարկել բաժանորդին՝ խնդրի վերաբերյալ վերջինիս դիրքորոշումը ստանալու համար: Բողոքի ուսումնասիրության պատշաճ ընթացքն ապահովելու և լրացուցիչ տեղեկատվություն ստանալու նպատակով ՄԻՊ ներկայացուցիչը կապ է հաստատել ընկերության ներկայացուցչի հետ: Վերջինս տեղեկացրել է, որ հիշյալ ծանուցումը վերադարձվել է՝ ծրարի վրա «Չի պահանջվել» նշումով: Հավելել է, որ բաժանորդն ընկերության մեկ այլ աշխատակցի հայտնել է իր բացասական դիրքորոշումը բաժանորդի փոփոխության (պայմանագիրը լուծելու) հարցի վերաբերյալ:

Բողոքի շրջանակում Մարդու իրավունքների պաշտպանի գրությանն ի պատասխան՝ ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) հայտնել է, որ բողոք ներկայացրած անձի բնակության հասցեում ընկերության բաժանորդ է հանդիսանում գազամատակարարվող տարածքի անչափահաս սեփականատիրոջ հայրը (մորից բացի, մյուս օրինական ներկայացուցիչը):

Հանձնաժողովի տեղեկացմամբ՝ անչափահասի օրինական ներկայացուցիչներն ունեն հավասար իրավասություններ՝ նրա անունից գործարքներ կնքելու, ինչի հետևանքով միայն մեկ օրինական ներկայացուցչի դիմումը չի կարող հիմք հանդիսանալ բնական գազի մատակարարման պայմանագրի լուծման համար:

Միաժամանակ, տեղեկացրել են, որ 2005 թվականի հուլիսի 8-ի թիվ 95-Ն որոշմամբ հաստատված բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնների 82-րդ կետի համաձայն՝ տվյալ դեպքում առկա չէ պայմանագիրը մատակարարի կողմից միակողմանի լուծելու որևէ հիմք: Այդ հասցեի բնական գազի մատակարարման պայմանագիրը կարող է լուծվել հասցեի բաժանորդ հանդիսացող անձի համաձայնությամբ:

Մարդու իրավունքների պաշտպանի գնահատմամբ՝ անհրաժեշտ է կատարելագործել գործող իրավակարգավորումները և նման իրավիճակները բացառելու նպատակով մշակել պատշաճ և արդյունավետ կառուցակարգեր: Ավելին՝ նման իրավիճակներում մատակարարի կողմից գազամատակարարման պայմանագիրը միակողմանի լուծելու համար օրենսդրական մակարդակում համապատասխան իրավական հիմքերի բացակայությունը խնդրահարույց է և չի բխում ներպետական և միջազգային մի շարք վերաբերելի իրավական փաստաթղթերով սահմանված երեխայի իրավունքների պաշտպանության հիմնական սկզբունքներից, ի թիվս այլնի, երեխայի լավագույն շահի առաջնահերթության սկզբունքի տրամաբանությունից: Այս իրավիճակը խնդրահարույց է նաև երեխայի անհրաժեշտ կենսապայմաններ ունենալու,

սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը տնօրինելու՝ երեխայի իրավունքների պատշաճ ապահովման տեսանկյունից: Դրա հետ մեկտեղ, այս իրավիճակն անթույլատրելի է նաև երեխայի կարծիքը հարգելու և լսելու իրավունքի պատշաճ իրացման համատեքստում: «Երեխայի իրավունքների և երեխայի պաշտպանության համակարգի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ երեխան իրավունք ունի ազատ արտահայտելու իր կարծիքը, որը, իր տարիքին և հասունության մակարդակին համապատասխան, հաշվի է առնվում իրեն վերաբերող հարցերում և որոշումներ կայացնելիս: (…) Երեխայի լսված լինելու իրավունքն ապահովելիս նրա կարծիքը չի կարող օգտագործվել կամ մեկնաբանվել ի վնաս երեխայի լավագույն շահերի:

Պաշտպանին հընթացս հասցեագրվել է նաև խնդրի հետ փոխկապակցված մեկ այլ բողոք, որով անձը տեղեկացրել է, որ իր որդու և անչափահաս թոռնուհու հետ բնակվում է համատեղ սեփականության իրավունքով իրեն և այլ անձանց պատկանող բնակարանում: Հավելել է, որ բնական գազի մատակարարման պայմանագրի բաժանորդ է հանդիսանում համասեփականատերերից մեկը: Բողոք ներկայացրած անձի տեղեկացմամբ՝ բնակարանից իրենց բաժինն առանձնացնելու պահանջով՝ համասեփականատերերից երկուսը դիմել են դատարան: Նշել է նաև, որ բաժանորդ հանդիսացող համասեփականատիրոջ դիմումի հիման վրա բնակարանի գազամատակարարումը դադարեցվել է, մինչդեռ բնակարանում փաստացի շարունակում են բնակվել մյուս համասեփականատերերը և անչափահաս երեխա:

Բողոք ներկայացրած անձը գազամատակարարման դադարեցումը համարել է ոչ իրավաչափ՝ նշելով, որ դրա հետևանքով խաթարվել է ընտանիքի բնականոն կյանքը, առաջացել են ջեռուցման և տաք ջրի հասանելիության խնդիրներ, ինչպես նաև ստեղծվել են խոչընդոտներ երեխայի անհրաժեշտ կենսապայմանների ապահովման տեսանկյունից:

Ըստ բողոք ներկայացրած անձի պնդման՝ խնդրի կարգավորման նպատակով դիմել է գազամատակարարում իրականացնող ընկերությանը և Հանձնաժողով, սակայն արդյունքի չի հասել: Ըստ բողոք ներկայացրած անձի՝ բնական գազի մատակարարման դադարեցումը պայմանավորված է համասեփականատիրոջ անբարեխիղճ գործողություններով, որոնք ուղղված են բնակարանում բնակվող մյուս համասեփականատերերին կենսական անհրաժեշտություն ունեցող ծառայություններից զրկելուն (որպեսզի վերջիններս ստիպված լինեն լքել բնակարանը):

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերջին տարիներին սպառած բնական գազի դիմաց վճարումները կատարվել են իր կողմից, ինչպես նաև զրկվել են տաք ջրի և ջեռուցման հասանելիությունից՝ անձը խնդրել է ՄԻՊ աջակցությունը գազամատակարարում իրականացնող ընկերության հետ բնական գազի մատակարարման նոր պայմանագիր կնքելու, իսկ դրա անհնարինության դեպքում՝ *մինչև դատական վեճի վերջնական հանգուցալուծումը գազամատակարարումը վերականգնելու հարցերում:*

Բարձրացված հարցը Պաշտպանը հասցեավորել է Հանձնաժողով: Ի պատասխան՝ տեղեկացվել է, որ Հանձնաժողովն ուսումնասիրել է հարցը և դրա շրջանակում «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերության ներկայացրած պարզաբանումները՝ հիմնավորող փաստաթղթերով: Տրամադրվել է տեղեկատվություն նաև այն մասին, որ Հանձնաժողովի 2005 թվականի հուլիսի 8-ի թիվ 95-Ն որոշմամբ հաստատված բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնների (այսուհետ՝ ԳՄՕԿ) 145-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ *մատակարարը պարտավոր է դադարեցնել բաժանորդի գազամատակարարումը՝ բաժանորդի կողմից գրավոր պահանջի և առաջարկվող ժամկետի ներկայացման դեպքում:*

Նշվել է նաև, որ տվյալ հասցեում բնական գազի մատակարարման պայմանագրի բաժանորդ է հանդիսանում այդ բնակարանի համասեփականատերերից մեկը, ում գրավոր դիմումի հիման վրա, վերը նշված կարգավորումների համաձայն, դադարեցվել է բնակարանի գազամատակարարումը:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Հանձնաժողովը գտել է, որ բնական գազ մատակարարող ընկերության կողմից տվյալ հասցեի բաժանորդի գազամատակարարման դադարեցման գործողություններն իրավաչափ են:

Այս դեպքում խնդրահարույցն այն է, որ Պաշտպանը՝ Հանձնաժողովին հասցեագրված գրության մեջ նշել է գազասպառման համակարգի տեղակայման տարածքի (տվյալ դեպքում բնակարանի) նկատմամբ իրավունքի վերաբերյալ վեճի առկայության մասին՝ տրամադրելով նաև դատարանում քննվող քաղաքացիական գործի համարը: Սակայն, նշված հանգամանքը պատշաճ ուշադրության չի արժանացել ո՛չ Հանձնաժողովի, ո՛չ էլ գազամատակարարում իրականացնող ընկերության կողմից:

Մինչդեռ, ըստ ԳՄՕԿ-ի 145-րդ կետի 4-րդ ենթակետի՝ մատակարարը պարտավոր է դադարեցնել բաժանորդի գազամատակարարումը՝ (…) գազասպառման համակարգի տեղակայման տարածքի (շենքի, շինության) նկատմամբ իրավունք ունեցող անձի գրավոր պահանջի և առաջարկվող ժամկետի ներկայացման դեպքում, եթե բաժանորդը չունի ԳՄՕԿ-ով պահանջվող տարածքի (շենքի, շինության) նկատմամբ իր իրավունքները հավաստող փաստաթուղթ՝ նախապես տեղեկացնելով բաժանորդին, ***բացառությամբ ԳՄՕԿ-ի 148-րդ կետով նախատեսված դեպքի:***

Նշված կետի համաձայն՝ *գազասպառման համակարգի տեղակայման տարածքի (շենքի, շինության) նկատմամբ իրավունքի վերաբերյալ վեճի առկայության դեպքում 145-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ գազամատակարարման դադարեցման հարցը լուծվում է վեճը օրենսդրությամբ սահմանված կարգով լուծելուց հետո: Այն պարագայում, երբ վեճը ծագել է կամ այդ մասին մատակարարը տեղեկացել է ԳՄՕԿ-ի 145-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն գազամատակարարման դադարեցումից հետո, մատակարարը գազամատակարարումը վերականգնում է վեճի մասին տեղեկանալու պահից երկու աշխատանքային օրվա ընթացքում:*

ԳՄՕԿ-ի վերը հիշատակված կետերի բովանդակային վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ դրանով նախատեսված չեն համապատասխան իրավակարգավորումներ այն դեպքերի համար, երբ գազասպառման համակարգի տեղակայման տարածքի (բնակարանի) նկատմամբ իրավունքի վերաբերյալ վեճ առկա է բնակիչ-համասեփականատիրոջ և բաժանորդ- համասեփականատիրոջ միջև *(երկուսն էլ ունեն բնակարանի նկատմամբ իրենց իրավունքները հավաստող փաստաթուղթ, սակայն միմյանց միջև առկա են տարաձայնություններ՝ կապված անշարժ գույքի տիրապետման, տնօրինման և օգտագործման հետ):*

Արդյունքում՝ գործնականում ստեղծվում է մի իրավիճակ, երբ մատակարարը՝ առանց բնակիչ-համասեփականատիրոջ կամաարտահայտությունը հաշվի առնելու, առանց երեխայի լսված լինելու իրավունքը և նրա մասնակցությունն այդ գործընթացին ապահովելու՝ դադարեցնում է գազամատակարարումը՝ հիմնվելով միայն բաժանորդ-համասեփականատիրոջ պահանջի վրա: Մինչդեռ, տեղին է ընդգծել, որ ընդհանուր սեփականության պարագայում համասեփականատերերից յուրաքանչյուրը հանդես է գալիս որպես գույքային իրավահարաբերությունների ինքնուրույն սուբյեկտ՝ օժտված սեփականության սուբյեկտիվ իրավունքով և վերջինիս բովանդակությունը կազմող՝ իր հայեցողությամբ օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավազորությամբ: Հետևաբար, պետք է լինեն նաև բնակիչ-համասեփականատիրոջ կամաարտահայտությունը

հաշվի առնող կամ նրա հետ բնական գազի մատակարարման պայմանագիր կնքելու հնարավորություն տվող պատշաճ կառուցակարգեր: Դրանից բացի, ԳՄՕԿ-ով նախատեսված չեն նաև երեխայի իրավունքների պաշտպանության հիմնական սկզբունքները *(օրինակ՝ երեխայի լավագույն շահի առաջնահերթությունը, երեխայի կարծիքը հարգելը և լսելը՝ հաշվի առնելով երեխայի տարիքը և հասունության մակարդակը)* ապահովող, ինչպես նաև երեխայի հիմնական իրավունքները *(օրինակ՝ երեխայի անհրաժեշտ կենսապայմաններ ունենալու իրավունքը)* և դրանց երաշխիքներն ապահովող պատշաճ կառուցակարգեր: Ուստի, դրանց նախատեսման հարցը նույնպես պետք է քննարկման առարկա դարձվի:

Կարծում ենք, որ նշված իրավիճակներում՝ գազամատակարարման դադարեցման հարցը լուծելիս՝ մատակարարը պետք է առաջնորդվի 148-րդ կետի տրամաբանությամբ:

Հարկ է նշել, որ այս բողոքը ՄԻՊ աշխատակազմում գտնվում է քննարկման փուլում և պահանջում է հետագա լրացուցիչ հաղորդակցություն, այդ թվում՝ վերը նշված հանգամանքները Հանձնաժողովի քննարկմանը կրկին ներկայացնելու մասով:

Վերոգրյալի համատեքստում Մարդու իրավունքների պաշտպանը կարևոր է համարում գազամատակարարման դադարեցման և վերականգնման պահանջների նկատմամբ առավել խիստ վերահսկողության անհրաժեշտությունը, քանի որ դա ոչ միայն հնարավորություն կտա գործնականում խուսափել գազամատակարարման անհարկի դադարեցման դեպքերից, այլ նաև կնպաստի անձանց, այդ թվում՝ երեխաների իրավունքների առավել արդյունավետ երաշխավորմանը:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Մարդու իրավունքների պաշտպանն առաջարկում է երեխայի հիմնական իրավունքների և դրանց երաշխիքների հաշվառմամբ՝ քննարկման առարկա դարձնել ոլորտը կարգավորող իրավական ակտերում համապատասխան փոփոխություններ կատարելու հարցը: Միևնույն ժամանակ, Պաշտպանն արձանագրում է, որ Հանձնաժողովի որոշումների կատարման նկատմամբ վերահսկողության արդյունավետության բարձրացման ուղղությամբ անհրաժեշտ են լրացուցիչ ջանքեր: Մասնավորապես, պետք է քննարկման առարկա դարձվի գազամատակարարման դադարեցման և վերականգնման պահանջների նկատմամբ վերահսկողության առավել գործուն մեխանիզմներ մշակելու և ներդնելու հարցը:

ԲԱԺԻՆ 19. ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ ԱՊՕՐԻՆԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԶՐԿՎԱԾ ՀԱՅԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ

2025 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանն իր մանդատի շրջանակներում շարունակել է հետևել Ադրբեջանում ապօրինի ազատությունից զրկված բոլոր հայերի իրավունքներին առնչվող հարցերին՝ նկատի ունենալով մարդու իրավունքների համընդհանուր սկզբունքներն ու արժեքները պահպանելու կարևորությունը, անձանց և նրանց ընտանիքների անդամների իրավունքների երաշխավորման անհրաժեշտությունը և հումանիտար հարցերում մարդու իրավունքների ազգային հաստատությունների դերակատարությունը:

Հաշվետու ժամանակահատվածում Պաշտպանը խնդիրը մշտապես պահել է իր ուշադրության կենտրոնում և այն պատշաճ հասցեավորելու նպատակով օգտագործել է իր մանդատին վերաբերելի ամբողջ գործիքակազմերը: Նկատի ունենալով, որ Ադրբեջանում ընթացող՝ այսպես կոչված «դատավարություններում», մարդու իրավունքների խախտումները շարունակվել և նոր թափ ու ճյուղավորումներ են ստացել՝ Պաշտպանը շարունակել է խնդրին անդրադարձ կատարել մի քանի ուղղություններով, այդ թվում՝ միջազգային գործընկերների հետ բոլոր բարձրաստիճան հանդիպումների, պաշտոնական գրագրությունների, մարդու իրավունքների պաշտպանության մանդատ ունեցող դերակատարներին խնդիրը հասցեավորելու միջոցով: Հարցի մասին Պաշտպանը բազմիցս խոսել է նաև հրապարակայնորեն[504]: Միևնույն ժամանակ, նկատի ունենալով հարցի զգայունությունը և Պաշտպանի աշխատակազմի՝ «չվնասելու սկզբունքով» գործելու կարևորությունը՝ համապատասխան աշխատանքները հաճախ կրել են խորհրդապահական բնույթ[505]:

Պաշտպանի դիրքորոշմամբ՝ Ադրբեջանում ապօրինի պահվող հայերին վերաբերելի բոլոր գործընթացները՝ ներառյալ, այսպես կոչված, «դատավարությունները», տեղի են ունեցել/ունենում մարդու իրավունքների համընդհանուր սկզբունքների ու արժեքների, միջազգային իրավական չափանիշների, անմեղության կանխավարկածի կոպտագույն խախտումներով: Դրանք հակասում են արդար դատաքննության իրավունքի պահանջներին, և չեն կարող դիտարկվել որպես արդար և անկողմնակալ դատարանի կողմից իրականացվող: Այս դիրքորոշման հիմքում ընկած են տևական ժամանակ ՄԻՊ աշխատակազմի կատարած համակողմանի ուսումնասիրություններն ու փաստահավաք աշխատանքները, մարդու իրավունքների մոնիթորինգային միջազգային մարմինների դիտարկումները, ներառյալ՝ միջազգային իրավական չափորոշիչների լույսի ներքո հարցի դիտարկումը[506]:

---

[504] Հասանելի են հետևյալ https://www.ombuds.am/am/site/ViewNews/3241 , https://ombuds.am/am/site/ViewNews/3303 , https://ombuds.am/am/site/ViewNews/3597 հղումներով և այլն:

[505] Այս հարցին Պաշտպանը մանրամասն անդրադարձ է կատարել նաև 2024թ. տարեկան հաղորդմամբ, էջեր՝ 820-824:

[506] Հասանելի են հետևյալ https://www.amnesty.org/en/latest/news/2025/01/azerbaijan-authorities-must-ensure-fair-trial-rights-of-ruben-vardanyan-and-investigate-claims-of-rights-violations/, https://surl.li/ckvsvw, https://www.amnesty.org/en/latest/news/2025/01/azerbaijan-authorities-must-ensure-fair-trial-rights-of-ruben-vardanyan-and-investigate-claims-of-rights-violations/ https://surl.li/ckvsvw , https://www.ohchr.org/en/statements-and-speeches/2025/03/turbulence-and-unpredictability-amid-growing-conflict-and-divided#:~:text=All%20those%20arbitrarily%20detained%20in,human%20rights%20as%20its%20torch, https://www.europarl.europa.eu/doceo/document/RC-10-2025-0177_EN.html հղումներով և այլն:

Խնդրի վերաբերյալ մարդու իրավունքների ոլորտի տարբեր դերակատարներ բազմիցս են ներկայացրել մի շարք մտահոգություններ. ազատազրկված անձինք զրկված են արդար դատաքննության իրավունքի համար հիմնարար կարևոր դատավարական երաշխիքներից, ներառյալ՝ իրենց ընտրած փաստաբանի կողմից արդյունավետ իրավաբանական ներկայացուցչություն ունենալու իրավունքից, թարգմանչի կողմից չի ապահովվում պատշաճ թարգմանություն և այլն: Ավելին, շարունակական մտահոգություններ են հնչել ազատազրկված անձանց առողջության պահպանման իրավունքի, պատշաճ բուժօգնություն տրամադրելու, նրանց նկատմամբ վերաբերմունքի, պահման պայմանների և այլնի հետ կապված: Ընդ որում, նման մտահոգություններ հաճախ ներկայացվել են նաև ազատազրկված անձանց ընտանիքների, իրավապաշտպանների կողմից:

Այս համատեքստում կարևոր է հիշատակել այն փաստը, որ մինչև անձանց կամայականորեն ազատությունից զրկելն անգամ Ադրբեջանի բարձրաստիճան պաշտոնատար անձինք իրենց ելույթներում, ադրբեջանական հասարակությունը, այդ թվում՝ հասարակական գործիչները, զանգվածային լրատվության միջոցները նրանց արդեն իսկ պիտակավորել էին որպես «հանցագործ»: Ավելին, ադրբեջանական մեդիա տիրույթում և սոցիալական հարթակներում, ինչպես նաև պաշտոնատար տարբեր անձանց կողմից տարածվում էին նշված անձանց և ընդհանուր առմամբ հայերին ուղղված ատելություն ու թշնամանք պարունակող խոսք, վիրավորանքներ, բռնության կոչեր և հայերի նկատմամբ խորքային ատելություն: Ակնհայտ է, որ էթնիկ ատելության քարոզի և անմեղության կանխավարկածի խախտման պայմաններում ընթացող, այսպես կոչված, «դատավարությունները» հակասում են արդար դատաքննության իրավունքի պահանջներին, և չեն կարող դիտարկվել որպես արդար և անկողմնակալ դատարանի կողմից իրականացվող:

Խնդրի կապակցությամբ կարևոր է վկայակոչել նաև ՄԱԿ-ի Ռասայական խտրականության վերացման կոմիտեի «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայով» ստանձնած՝ Ադրբեջանի 10-ից 12-րդ պարբերական հաղորդումների վերաբերյալ եզրափակիչ դիտարկումները, որում կոմիտեն **մտահոգություն է հայտնել սոցիալական ցանցերում, այդ թվում՝ հասարակական գործիչների և պետական պաշտոնյաների կողմից ազգությամբ հայերի նկատմամբ ռասիստական կարծրատիպերի տարածման կապակցությամբ (կետ 4(c)) և Ադրբեջանի ղեկավարությանն առաջարկել է միջոցներ ձեռնարկել պաշտոնատար անձանց և հանրային հաստատությունների կողմից ազգությամբ հայերի դեմ ուղղված ատելության խոսքի, ռասայական ատելության և խտրականության հրահրման և խթանման մշտադիտարկման ու դրանց դեմ պայքարի ուղղությամբ** (կետ 5(d)):

Անհրաժեշտ է նաև նշել, որ 2021 թվականի դեկտեմբերի 7-ին ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանը հրապարակել է Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիայի շրջանակներում միմյանց դեմ քննվող դատական գործերի շրջանակներում Հայաստանի և Ադրբեջանի կողմից ներկայացված հրատապ միջոցների վերաբերյալ իր որոշումները[507], որոնց համաձայն՝ առկա է կոնվենցիայի շրջանակներում հայերի իրավունքներին անդառնալի վնաս հասցնելու անմիջական վտանգ: Ըստ այդմ, Դատարանն Ադրբեջանին պարտավորեցրել է՝

[507] Հասանելի է https://www.icj-cij.org/public/files/case-related/180/180-20211207-ORD-01-00-EN.pdf հղումով:

ա) բռնությունից և մարմնական վնասվածքներից պաշտպանել բոլոր այն անձանց, որոնք 2020թ. հակամարտությամբ պայմանավորված հայտնվել և պահվում են Ադրբեջանում, ապահովել նրանց անվտանգությունն ու օրենքի առաջ հավասարությունը,

բ) ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները կանխելու ազգությամբ և էթնիկ հայերի դեմ ուղղված ռասայական խտրականության և ատելության հրահրումն ու խթանումը, այդ թվում՝ պաշտոնատար անձանց և պետական հաստատությունների կողմից,

գ) ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները կանխելու և պատժելու հայկական մշակութային ժառանգության, այդ թվում՝ եկեղեցիների և պաշտամունքի այլ վայրերի, հուշարձանների, ուղենիշային պատկերների, գերեզմանատների և այլ ցուցանմուշների հանդեպ վանդալիզմի և պղծման գործողությունները:

Հատկանշական է նաև, որ Դատարանն իր որոշմամբ Ադրբեջանին պարտավորեցրել է ձեռնարկելու բոլոր անհրաժեշտ միջոցները՝ կանխելու խտրականությունն ու դրա հրահրումը, այդ թվում՝ հասարակական գործիչների և պետական պաշտոնյաների կողմից:

ՄԱԿ-ի մարդու իրավունքների բարձր հանձնակատար Վոլկեր Տյուրկը Ժնևում ընթացող Մարդու իրավունքների Խորհրդի 58-րդ նստաշրջանի ընթացքում ներկայացրած իր համապարփակ զեկույցում հատուկ անդրադարձ է կատարել Ադրբեջանում կամայականորեն պահվող բոլոր անձանց, ներառյալ էթնիկ հայերի հիմնախնդրին՝ նշելով, որ «նրանք պետք է անհապաղ ազատ արձակվեն, և արդար դատավարության նրանց իրավունքները պետք է ամբողջությամբ հարգվեն»[508]:

Եվրախորհրդարանն ընդունել է Ադրբեջանում ազատությունից զրկված հայերի վերաբերյալ հրատապ բանաձևը, որում դատապարտում է Ադրբեջանի կողմից հայերի անարդար կալանավորումները, անմարդկային վերաբերմունքը և անարդար դատավարությունները և պահանջում է նրանց անհապաղ ու անվերապահ ազատ արձակում[509]:Դեռևս նախորդ տարեկան հաղորդման շրջանակներում, ինչպես նաև իր հարապարակային խոսքում Պաշտպանը ցույց էր տվել և արձանագրել, որ միջազգային ու ներպետական տարբեր գործընկերների, մարդու իրավունքների պաշտպանության մանդատ ունեցող դերակատարների, ազատությունից զրկված անձանց, նրանց ընտանիքների անդամների ահազանգերի, անկախ փաստահավաք աշխատանքներով հավաքագրված այլ տեղեկությունների վերլուծությունը աներկբա վկայում են, որ ապօրինի ազատությունից զրկված հայերի նկատմամբ գեներացվել է ատելություն ու մեղավորության կանխավարկած, առկա են վատ վերաբերմունքի ենթարկվելու, արդար դատաքննության իրավունքի խախտման առնչությամբ լուրջ մտահոգություններ[510]:

Հարցի կապակցությամբ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիրքորոշումն անփոփոխ է. Ադրբեջանում իրականացված «գործընթացները» ընթացել են մարդու իրավունքների համակարգային խախտումներով, դրանք պետք է արժանանան մարդու իրավունքների պաշտպանության մանդատակիրների պատշաճ ու հրատապ

---

[508] ՄԱԿ-ի մարդու իրավունքների բարձր հանձնակատարի հայտարարությունն ամբողջությամբ հասանելի է https://www.ohchr.org/en/statements-and-speeches/2025/03/turbulence-and-unpredictability-amid-growing-conflict-and-divided#:~:text=All%20those%20arbitrarily%20detained%20in,human%20rights%20as%20its%20torch հղումով:

[509] Հասանելի է https://www.europarl.europa.eu/doceo/document/RC-10-2025-0177_EN.html հղումով:

[510] Տես, 2024թ. տարեկան հաղորդումը, էջ 823: Հարցի վերաբերյալ Պաշտպանի հրապարակային հայտարարությունները՝ https://www.ombuds.am/am/site/ViewNews/3241, https://ombuds.am/am/site/ViewNews/2716 https://www.ombuds.am/am/site/ViewNews/2653, https://www.youtube.com/watch?v=cTDoP464meU , https://ombuds.am/am/site/ViewNews/3303 , https://www.ombuds.am/am/site/ViewNews/3329 և այլն:

արձագանքին, գնահատականին ու հակազդեցությանը: Իրավունքների կոպտագույն խախտումներով ուղեկցված «դատավարությունների» արդյունքում ապօրինի ազատությունից զրկված հայերը մեղավոր են ճանաչվել ծանր հանցագործություններ կատարելու համար՝ դատապարտվելով երկարատև ժամանակահատվածով, մի մասն էլ՝ ցմահ ազատազրկման[511]: Նման դատավճիռները մարտահրավերային ու ռիսկային են մարդու իրավունքների ողջ համակարգի տեսանկյունից: Պաշտպանը ևս մեկ անգամ արձանագրում է, որ այդ դատավճիռները չեն կայացվել անկողմնակալ դատարանի, միջազգային չափանիշներին համապատասխան օբյեկտիվ ու արդար դատաքննության պահանջների պահպանմամբ, դրանք ուղեկցվել են անմեղության կանխավարկածի և արդար դատաքննության իրավունքի պահանջների խախտմամբ:

Այս ամբողջ համատեքստում Ադրբեջանում ապօրինի ազատազրկված հայերի իրավունքների պաշտպանության վիճակի վերաբերյալ մտահոգություններն էլ ավելի են մեծացել՝ հաշվի առնելով այն փաստը, որ 2025 թվականի սեպտեմբերից Կարմիր խաչի միջազգային կոմիտեն դադարեցրել է իր գործունեությունը Ադրբեջանում՝ ադրբեջանական իշխանությունների նախաձեռնությամբ[512]:

Պաշտպանը, բարձր գնահատելով ԿԽՄԿ-ի մարդասիրական մանդատի կարևորությունը, կատարած աշխատանքը՝ Ադրբեջանում ապօրինի պահվող հայերի իրավունքների վիճակի դիտարկման ու երաշխավորման, այդ թվում՝ ընտանիքների հետ կապի ապահովման տեսանկյունից՝ միաժամանակ մտահոգիչ է համարում ԿԽՄԿ-ի գործունեության դադարեցումը և Բաքվում նրա մարդասիրական մանդատի ավարտը: ԿԽՄԿ-ի գործունեության դադարեցումը մտահոգություններ ու անհանգստություններ է առաջ բերել նաև ազատությունից զրկված անձանց ընտանիքների, իրավապաշտպանների մոտ: Ընդհանուր արձագանքն այն է, որ այս պահին չկա որևէ չեզոք միջազգային անկախ կազմակերպություն, որը կկարողանա նույն ձևաչափով ու չափանիշների պահպանմամբ այցելել Ադրբեջանում պահվող հայերին ու անմիջական դիտարկումներով պարզել նրանց իրական դրությունը: Իրավապաշտպանները հենց այդ պատճառով էլ Բաքվից եկած ամեն տեղեկություն համարում են հատվածական, միակողմանի ու, ամենակարևորը, ոչ ստուգելի[513]: Այնինչ, մարդու իրավունքների տեսանկյունից բացառիկ կարևորություն ունեն անկախ մոնիթորինգային մեխանիզմները, երբ խոսքը վերաբերում է հատկապես ազատությունից զրկման վայրերին և խոցելի վիճակում գտնվող ազատազրկված անձանց: Փաստացի ներկայում չի գործում կայուն և մշտական հիմունքներով գործող անկախ միջազգային կառուցակարգ, որը պարբերաբար տեղում կարող է այցելել ազատությունից զրկված անձանց և ծանոթանալ նրանց իրավունքների վիճակին՝ դերակատարություն ունենալով նրանց իրավունքների ապահովման և նրանց նկատմամբ վատ վերաբերմունքի դրսևորումները կանխարգելելու տեսանկյունից:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ Պաշտպանն արձանագրում է. ***Ադրբեջանում կամայականորեն պահվող բոլոր հայերի հիմնարար իրավունքներին միջամտությունը տեղի է ունեցել/ունենում միջազգային իրավական չափորոշիչների խախտումներով՝ նկատի ունենալով այն, որ չեն պահպանվում ժամանակակից քաղաքակիրթ աշխարհում համընդհանուր ճանաչում ունեցող միջազգային-իրավական երաշխիքներն ու չափանիշները***: Ոլորտում մանդատ ունեցող բոլոր դերակատարները, այդ թվում՝ միջազգային, պետք է շուտափույթ և պատշաճ քայլեր ձեռնարկեն խնդրի

[511] Հասանելի է https://www.aravot.am/2026/02/05/1537623/ , https://www.armtimes.com/hy/article/330749 հղումով:
[512] Հասանելի է https://surl.li/ruveht հղումով:
Հասանելի է [513] https://hy.armradio.am/archives/685645 հղումով:

լուծման ուղղությամբ: Պաշտպանն իր մանդատի ներքո շարունակելու է հասցեագրել այս բոլոր խնդիրները մարդու իրավունքների պաշտպանության մանդատ ունեցող դերակատարներին:

ԲԱԺԻՆ 20. ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՊԱՍՏԱՆ ՀԱՅՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

2025 թվականին ապաստան հայցողների և փախստականների իրավունքներին վերաբերելի հարցերը շարունակել են գտնվել Մարդու իրավունքների պաշտպանի անմիջական ուշադրության ներքո:

Տարվա ընթացքում աշխատակազմ մուտքագրվել է՝

- **136 դիմում <u>փախստականի կարգավիճակ ունեցող անձանցից</u>,** որից՝ 61-ը գրավոր, 75-ը բանավոր:
- **61 գրավոր և բանավոր բողոք <u>ապաստան հայցող անձանցից</u>,** որից՝ 6-ը գրավոր, 55-ը բանավոր:
- **33 գրավոր և բանավոր բողոք <u>փախստականի կարգավիճակ ստանալու համար դիմող անձանցից</u>**, որից՝ 19-ը գրավոր, 14-ը բանավոր: Նշված անձինք կա՛մ դեռևս իրենց ներկայացրած դիմումի պատասխանը չեն ստացել, կա՛մ վերջիններին մերժել են տրամադրել փախստականի կարգավիճակ:

Պաշտպանի աշխատակազմի պաշտոնական էլեկտրոնային հասցեին ստացվել են նաև ՀՀ-ում ապաստան հայցելու ընթացակարգին վերաբերող հարցեր, որոնց մասին համապատասխան վարչության ներկայացուցիչները տվել են խորհրդատվություն:

Պաշտպանը, կարևորելով հանրային իշխանության մարմինների և քաղաքացիական հասարակության հետ փախստականների և ապաստան հայցող անձանց իրավունքների պաշտպանության հարցերով համագործակցությունը, 2025 թվականին, փախստականների և ապաստան հայցող անձանց իրավունքների պաշտպանության համատեքստում, ակտիվ համագործակցել է պետական մարմինների, հասարակական կազմակերպությունների և միջազգային կառույցների հետ: Մասնակցել է նաև ոլորտային տարբեր հարցերով քննարկումներին, որոնց ընթացքում ընդգծել է համապատասխան ոլորտում իրավունքների պաշտպանության համակարգի կատարելագործման կարևորությունը, ինչպես նաև առկա խնդիրների վերհանման և պատշաճ հասցեավորման կարևորությունը:

Այսպես, Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները մասնակցել են Հայաստանում փախստականների ներհոսքին ԵՄ համապարփակ արձագանքի փաթեթի հիմնական արդյունքներին նվիրված միջոցառմանը[514]: Միջոցառման ժամանակ ՄԻՊ աշխատակազմի գլխավոր քարտուղարը հատուկ ընդգծել է, որ ԵՄ համապարփակ արձագանքի փաթեթի շրջանակներում իրականացված ծրագրերը տարբեր ուղղություններով եղել են թիրախային՝ զգալիորեն նպաստելով ոլորտային խնդիրների վերհանմանը, լուծման մեխանիզմների մշակմանն ու գործարկմանը, ինչպես նաև ընդգծվել են միգրացիայի գործընթացում գտնվող երեխաների իրավունքների պաշտպանության հետ կապված խնդիրները՝ կարևորելով այդ ուղղությամբ Եվրոպայի խորհրդի հետ ՄԻՊ հաստատության համագործակցությունն ու հաստատության կողմից իրականացվող ծրագրերի արդյունավետությունը:

[514] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3582 հղումով, 2026 թվականի փետրվարի 18-ի դրությամբ:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմն ընդունել է Հայաստանում ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի (ՓԳՀ) ներկայացուցչի տեղակալ Լիվ Ֆեիյենին[515]: Հանդիպման ընթացքում քննարկվել են փախստականների, ապաստան հայցողների, ինչպես նաև բռնի տեղահանված անձանց իրավունքների պաշտպանությանն առնչվող հարցերը, ներկայումս առկա խնդիրները և իրականացվող աշխատանքները՝ ընդգծելով ՄԱԿ ՓԳՀ-ի հետ համագործակցության կարևորությունը և շարունակականությունը:

ՄԻՊ աշխատակազմի ներկայացուցիչը մասնակցել է ՄԱԿ ՓԳՀ հայաստանյան գրասենյակի՝ Հայաստանում միջազգային պաշտպանության միջավայրը բարելավելու նպատակով գործակված ամենամյա «Մասնակցային գնահատում» գործընթացին, ինչպես նաև «Դիմակայունություն բոլորի համար» ծրագրի ներկայացմանը, որը կազմակերպվել էր ՄԱԶԾ-ի կողմից՝ նպատակ ունենալով բարձրացնել Հայաստանում փախստականների և ընդունող համայնքների դիմադրողականությունն ու ինտեգրումը:

Պաշտպանի աշխատակազմի, Հայկական Կարմիր խաչի ընկերության և ՄԱԿ-ի փախստականների գերագույն հանձնակատարի գրասենյակի ներկայացուցիչները համատեղ սահմանային մոնիթորինգի այց են իրականացրել «Բագրատաշեն», «Բավրա», «Ագարակ» սահմանային անցակետեր, «Զվարթնոց» և «Շիրակ» օդնավակայաններ: Այցի շրջանակներում Պաշտպանի ներկայացուցիչը ՀՀ պետական սահմանի պահպանության ծառայություն իրականացնող ԱԱԾ սահմանապահ զորքերի ծառայողների և սպայական անձնակազմի համար անցկացրել է «Փախստականների և ապաստան հայցողների պաշտպանության միջազգային և ազգային չափանիշները» խորագրով վերապատրաստման դասընթացներ, որոնց շրջանակներում ներկայացրել է Պաշտպանի ինստիտուտի դերը, լիազորությունների շրջանակն ու աշխատանքի հիմնական ուղղությունները փախստականների, ապաստան հայցողների և ՄԱԿ ՓԳՀ-ի մտահոգության ներքո գտնվող այլ անձանց իրավունքների պաշտպանության բնագավառում:

Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները ՄԱԿ-ի փախստականների գերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակի, ՆԳՆ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության (այսուհետ՝ նաև Միգրացիոն ծառայություն), Փաստաբանների պալատի ներկայացուցիչների հետ համատեղ մշտադիտարկման այց են իրականացրել «Արմավիր» քրեակատարողական հիմնարկ, որտեղ պահվում են ապաստան հայցողներ, ազատությունից զրկված օտարերկրյա քաղաքացիներ, քաղաքացիություն չունեցող անձինք: Այցի ընթացքում Պաշտպանի ներկայացուցիչները տեղում ծանոթացել են ապաստան հայցողների, ազատությունից զրկված օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց իրավունքներին վերաբերելի խնդիրներին, այդ թվում՝ ազատությունից զրկման պայմաններին, ապաստան հայցողների բացահայտման և նրանց ապաստան տրամադրող մարմին ուղղորդման հետ կապված հարցերին:

Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները մասնակցել են՝

[515] Հասանելի է https://ombuds.am/am/site/ViewNews/3346 հղումով, 2026 թվականի փետրվարի 18-ի դրությամբ:

ա) «Փախստականների պաշտպանության մուտքի զգայուն համակարգ»-ի միջգերատեսչական խմբի աշխատանքային խմբի քննարկումներին: Հանդիպման ընթացքում քննարկվել են 2025 թվականի ընթացքում ապաստան հայցելու ընթացակարգերի հետ կապված գործողությունները:

բ) ՄԱԿ ՓԳՀ հայաստանյան գրասենյակի կողմից ստեղծված՝ ապաստան հայցողների կալանավորման հարցերով միջգերատեսչական աշխատանքային խմբի հերթական քննարկումներին: Հանդիպումների ընթացքում քննարկվել են կալանավայրերում ապաստան ստանալու ընթացակարգի հասանելիության, կալանավորման պայմանների, ապաստան հայցելու իրավունքի մասին տեղեկատվության և համատեղ ջանքերով առկա խնդիրներին լուծումներ տալու հնարավորությունները: Աշխատանքային խմբի քննարկումների արդյունքում ստեղծվել է «Ծանուցում Հայաստանում ապաստան հայցելու իրավունքի մասին քրեակատարողական հիմնարկներում գտնվող անձանց համար» տեղեկատվական թերթիկը, որը հասանելի է հայերեն և անգլերեն լեզուներով: Տեղեկատվական թերթիկը ներկայացնում է ՔԿՀ-ներից ապաստան հայցելու համար դիմելու ընթացակարգը, ինչպես նաև տրամադրում է կոնտակտային տվյալներ ցանկացած պահի տեղեկություն ստանալու համար:

1.Ոլորտին վերաբերելի վիճակագրական տվյալներ

Տարեկան հաղորդմամբ ամփոփված խնդիրների, վերջիններիս լուծմանն ուղղված առաջարկների կատարման առնչությամբ գրություն է հասցեագրվել իրավասու պետական մարմիններին: Ի պատասխան՝ ՆԳՆ միգրացիոն ծառայությունը տրամադրել է հետևյալ տվյալները՝ 2025 թվականի ընթացքում ՀՀ-ում ապաստան է հայցել 600 անձ: Ըստ տրամադրած տվյալների՝ 2025 թվականի ընթացքում փախստականի կարգավիճակ է ստացել 242 անձ, իսկ մերժում ստացած ապաստան հայցողների թիվը կազմել է 206, կարճվել է՝ 62 գործ: Միգրացիոն ծառայությունից ստացված տեղեկատվություն համաձայն՝ առանց ուղեկցողի և ընտանիքից անջատված երեխաների՝ ՀՀ ժամանման դեպք չի գրանցվել: 2025 թվականի ընթացքում ապաստան հայցողները եղել են 5 հիմնական երկրներներից՝ Իրան, Ուկրաինա, ՌԴ, Եգիպտոս, Կուբա:



2. Ոլորտում գոյություն ունեցող համակարգային խնդիրները

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին 2024 թվականի տարեկան

հաղորդման շրջանակներում[516] ամփոփվել և ներկայացվել են փախստականների և ապաստան հայցող անձանց իրավունքների պաշտպանությանն առնչվող, համակարգային բնույթ կրող խնդիրներ, որոնք շարունակում են արդիական մնալ նաև այսօր: Վերջիններս վերաբերում են մահապատժի ենթարկվելու վտանգի առկայության պարագայում՝ անձի արտաքսման կամ հանձնման օրենսդրական արգելքին, պետական սահմանի անցման բոլոր կետերում Պաշտպանին դիմելու հնարավորության վերաբերյալ իրազեկող պաստառների և հատուկ իրենց համար նախատեսված սենյակների բացակայությանը, ապաստանի հայցեր ընդունելու ընթացակարգերի օրենսդրական կարգավորման բացակայությանը, ռեսուրսների բացակայության պատճառով ապաստան հայցողներին հատուկ կացարանում տեղավորելու անհնարինությանը, ապաստան հայցողների և փախստականների վերաբերյալ միասնական տեղեկատվական համակարգ (օնլայն հարթակ) ստեղծելու անհրաժեշտությանը, ազատությունից զրկված օտարերկրացիների իրավունքների ապահովման խնդիրներին:

2.1. Պետական սահմանային անցման կետերում առկա խնդիրներ

Մարդու իրավունքների պաշտպանի կողմից սահմանային անցակետերում անցկացված մոնիթորինգի արդյունքում արձանագրվել են մի շարք խնդիրներ:

1) «Շիրակ» օդանավակայանում արձանագրվել են Պաշտպանին դիմելու հնարավորության վերաբերյալ իրազեկող պաստառների, Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցողների համար տեղեկատվական թերթիկների, ինչպես նաև ապաստան հայցողների համար նախատեսված սենյակների բացակայության խնդիրներ:

2) «Ագարակ» Պետական սահմանային անցակետը ևս գտնվել է Մարդու իրավունքների պաշտպանի ուշադրության կենտրոնում: Մոնթորինգային այցի շրջանակներում պարզ է դարձել, որ անցակետում առկա չեն ապաստան հայցողների համար նախատեսված հատուկ սենյակներ: Ինչ վերաբերում է Մարդու իրավունքների պաշտպանին դիմելու հնարավորության վերաբերյալ իրազեկող պաստառին, ապա առկա է երկուական պաստառ՝ հասանելի հայերեն և անգլերեն թարգմանությամբ:

3) Մարդու իրավունքների պաշտպանը ողջունում է այն փաստը, որ «Բավրա» անցակետը համալրված է անհրաժեշտ տեխնիկայով, առկա են ապաստան հայցողների համար նախատեսված սենյակներ, որոնք համալրված են անհրաժեշտ գույքով, ինչպես նաև առկա են ապաստան հայցողների համար նախատեսված տեղեկատվական թերթիկներ՝ 8 լեզուներով, որոնց միջոցով վերջիններս կարող են մանրամասն տեղեկանալ իրենց իրավունքների, ինչպես նաև Մարդու իրավունքների պաշտպանին դիմելու հնարավորության վերաբերյալ:

Հարկադրող պատճառների հետևանքով իրենց քաղաքացիության կամ նախկին մշտական բնակության երկիրը լքած և միջազգային պաշտպանության կարիք ունեցող անձինք՝ հատելով ՀՀ պետական սահմանը, ունեն համապատասխան օգնություն ստանալու հնարավոր ձևերի մասին տեղեկանալու և կենսական կարիքների ապահահովման համար նախատեսված հատուկ սենյակների կարիք: Ելնելով վերոգրյալից, ՀՀ-ը՝ վավերացնելով համապատասխան միջազգային կոնվենցիաները և այդպիսով ստանձնելով պոզիտիվ պարտականություն՝ պարտավորվում է

[516] Հասանելի է https://ombuds.am/images/files/4d1335361f1f7e9fbcc1cfc10679701e.pdf հղմամբ, փետրվարի 20-ի դրությամբ:

սահմանային անցակետերում ապահովել իրազեկող պաստառների և ապաստան հայցողների համար առանձին սենյակների առկայությունը:

2.2 Ապաստանի հայց ընդունելու ընթացակարգի ժամկետների օրենսդրական կարգավորման բացակայություն

Պաշտպանի աշխատակազմի կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքում պարզ է դարձել, որ լիազոր մարմինը՝ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայությունը ապաստան հայցելու վերաբերյալ ընթացակարգը պատշաճ կերպով չի իրացնում: «Փախստականների և ապաստանի մասին» օրենքով[517] (այսուհետ՝ Օրենք) և Կառավարության համապատասխան որոշմամբ ամրագրված է, որ ապաստան հայցելու դիմումը դիմումատուից պետք է ընդունել անմիջապես: Սակայն, ըստ ապաստան հայցողների պնդման՝ նրանք երբեմն ստիպված են լինում սպասել 2-3 ամիս, քանի որ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայությունը ապաստանի հայցը անմիջապես չի ընդունում՝ սահմանելով կամայական ժամկետ փաստաթղթերը ներկայացնելու համար:

Այսպես, ըստ դիմողների՝ անձը, ով ցանկանում է Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցել, ներկայանում է Միգրացիոն ծառայություն, որտեղ իր տվյալները գրանցելուց հետո նրան տեղեկացնում են, որ 2 կամ 3 ամսվա ընթացքում կապ կհաստատեն վերջինիս հետ և կկանչեն ապաստանի հայցման դիմում ներկայացնելու:

Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում՝ լիազոր մարմնին, ինչպես նաև Ոստիկանությանը, կամ եթե անձը գտնվում է ազատազրկման վայրում՝ ազատազրկման վայրի վարչակազմին բանավոր, գրավոր, ժեստերի լեզվով կամ հաղորդակցության որևէ այլ միջոցով առերես արված ցանկացած հայտարարություն, որն արտահայտում է Հայաստանի Հանրապետությունում պաշտպանություն գտնելու նրա ցանկությունը համարվում է ապաստան հայցելու խնդրանք: Սույն մարմինները նաև պարտավոր են տրամադրել տեղեկատվություն Հայաստանի Հանրապետությունում ապաստանի հայց ներկայացնելու հնարավորության մասին այն անձանց, որոնք, հնարավոր է, որ ապաստանի կարիք ունեն:

Օրենքի նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ապաստանի դիմումը օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի կողմից ապաստանի ստացման նպատակով Հայաստանի Հանրապետության տարածքում լիազոր մարմնին ներկայացված գրավոր խնդրանքն է: Դիմումի ձևը հաստատում է Կառավարությունը: Ապաստանի դիմումը կարող է ներկայացվել ինչպես հաջորդելով ապաստանի խնդրանքին՝ սույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ապաստան հայցելու գործընթացն ավարտելու նպատակով, այնպես էլ անմիջապես՝ առանց ապաստանի խնդրանքի:

Վերոնշյալ իրավակարգավորումը փաստում է՝ անձը, ով ցանկանում է Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցել, իրավունք ունի տեղում ներկայացնելու ապաստան հայցելու դիմումը համապատասխան լիազոր մարմնին: Սակայն Պաշտպանի աշխատակազմ ներկայացված դիմում-բողոքների բովանդակությունները վկայում են, որ ապաստանի դիմում ներկայացնել ցանկացող անձինք ստիպված են սպասել՝ մինչ Միգրացիոն ծառայության աշխատակիցը կապ կհաստատի իրենց հետ, ինչը խնդրահարույց է ապաստան հայցող անձանց իրավունքների լիարժեք իրացման տեսանկյունից:

[517] Հասանելի է https://www.arlis.am/hy/acts/154872 հղումով, 2026 թվականի փետրվարի 18-ի դրությամբ

Վերոնշյալ հանգամանքն առաջացնում է մի շարք խնդիրներ ապաստանի դիմում ներկայացնելու ցանկություն ունեցող անձանց համար: Հայաստանի Հանրապետություն մուտք գործող օտարերկրացին կամ քաղաքացիություն չունեցող անձը՝ համապատասխան լիազոր մարմիններին ապաստան հայցելու իր ցանկության մասին իրազեկելուց հետո՝ չկարողանալով ներկայացնել համապատասխան դիմումը, փաստացի մնում է անորոշ կարգավիճակում:

Վիզայի ժամկետի ավարտը, խոցելի վիճակում գտնվող անձանց դեպքում՝ կացարանի բացակայությունը, կարգավիճակ չունենալու պատճառով աշխատանք գտնելու անհնարինությունը, ինչպես նաև ՀՀ կառավարության՝ «Ժամանակավոր տեղավորման կենտրոնում տեղավորման անհնարինության դեպքում՝ կենսաապահովման հիմնական կարիքները հոգալու հնարավորություն չունեցող ապաստան հայցողներին դրամական օգնություն տրամադրելու կարգը սահմանելու մասին» 2016 թվականի սեպտեմբերի 15-ի N 951-Ն որոշմամբ[518] սահմանված դրամական աջակցության գումարները չստանալը այս անձանց համար կարող են դառնալ ճակատագրական և վերջիններիս կարող են ստիպել բախվել կեցության նվազագույն պայմանների ապահովման անհնարինությանը:

Այս համատեքստում Պաշտպանն ընդգծում է, որ պետությունը պետք է ձեռնարկի համապատասխան քայլեր ապաստան հայցող անձանց իրավունքների պատշաճ իրացումն ապահովելու տեսանկյունից:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ անհրաժեշտ է .

Օրենքում նախատեսել համապատասխան պետական մարմնի պարտավորությունը և ստեղծել գործնական կառուցակարգեր՝ ապաստան հայցողի դիմումը ապաստանի խնդրանք ներկայացնելու պահին ընդունելու վերաբերյալ:

2.3 Ռեսուրսների բացակայության պատճառով ապաստան հայցողներին հատուկ կացարանում տեղավորելու անհնարինությունը

2025 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրված մի շարք դիմումներում բարձրացվել է այն խնդիրը, որ ապաստան հայցողները լուրջ դժվարությունների են բախվում բնակարան (կամ սենյակ) վարձակալելու, ինչպես նաև կենսաապահովման հիմնարար կարիքները բավարարելու հարցերում: Միաժամանակ, Միգրացիոն ծառայությունից ստացված տեղեկատվության համաձայն՝ նոր ապաստան հայցողների տեղավորման համար Հատուկ կացարանում ազատ տեղեր առկա չեն :

Այս համատեքստում Պաշտպանի աշխատակազմին ներկայացված դիմումներում ևս արձանագրվել է, որ ապաստան հայցողները կանգնած են բնակարանի վարձակալության և կենսական նվազագույն պայմանների ապահովման հետ կապված լուրջ և հրատապ խնդիրների առաջ:

«Հատուկ կացարանը» (ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոնը) ունի միաժամանակ շուրջ 50 անձի բնակեցման հնարավորություն: Այնուամենայնիվ, ներկայումս ապաստարանում բնակվում է գրեթե 70 ապաստան հայցող, այդ թվում՝ փոքր երեխաներ: Ինչպես նաև, ըստ ՆԳՆ-ի տրամադրած տվյալների, 2025 թվականին Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցող են ճանաչվել 600 անձ, որոնց մի մասը կարիք ունի կացարանի՝ հաշվի առնելով, որ նրանց մեծ մասը գտնվում է խոցելի վիճակում և չունեն ֆինանսական բավարար միջոցներ սենյակ վարձակալելու համար:

[518] Հասանելի է https://www.arlis.am/hy/acts/108362 հղումով, 2026 թվականի փետրվարի 18-ի դրությամբ:

Մարդու իրավունքների պաշտպանը ողջունում է միաժամանակ 100 անձի բնակեցման հնարավորություն ունեցող ապաստան հայցողների համար նոր կացարանի շինարարական աշխատանքների իրականացումը: Միևնույն ժամանակ, Պաշտպանը խնդրահարույց է համարում կացարանի շահագործման հանձնման պարբերաբար հետաձգումը, որը հանգեցնում է ապաստան հայցողների իրավունքների իրացման, այդ թվում՝ հյուրընկալող համայնքներում նրանց լիարժեք ինտեգրման հետ կապված տարբեր խնդիրների:

Իրավիճակն առավել վատթարանում է ապաստան հայցողների հիմնական կարիքները բավարարելու համար անհրաժեշտ գումարի նվազ լինելու հանգամանքով պայմանավորված: ՀՀ կառավարության՝ «Ժամանակավոր տեղավորման կենտրոնում տեղավորման անհնարինության դեպքում՝ կենսաապահովման հիմնական կարիքները հոգալու հնարավորություն չունեցող ապաստան հայցողներին դրամական օգնություն տրամադրելու կարգը սահմանելու մասին» 2016 թվականի սեպտեմբերի 15-ի N 951-Ն որոշման[519] համաձայն՝ Միգրացիոն ծառայության կողմից տրամադրվում է ընդամենը 20.000 դրամ, իսկ ընտանիքի յուրաքանչյուր անդամին՝ 15.000-ական դրամ: Դրամական օգնությունը տրամադրվում է 3 ամիս ժամկետով, որը կարող է երկարաձգվել՝ առավելագույնը մինչև 6 ամիս՝ կացարանի, կոմունալ և այլ հարցերը լուծելու նպատակով, որը, սակայն, բավարար չէ անհրաժեշտ կարիքները հոգալու համար:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ անհրաժեշտ է հնարավորինս սեղմ ժամկետում Հատուկ կացարանը հանձնել շահագործման: Բացի այդ, հաշվի առնելով Որոշմամբ նախատեսված, ապաստան հայցող անձանց տրամադրվող գումարի ոչ բավարար լինելու հանգամանքը, անհրաժեշտ է հավելյալ ֆինանսական միջոցներ նախատեսել՝ ապաստան հայցող անձանց տրամադրելով հավելյալ ֆինանսական աջակցություն:

2.4 Ապաստան հայցողների և փախստականների վերաբերյալ միասնական տեղեկատվական համակարգ (օնլայն հարթակ) ստեղծելու անհրաժեշտություն

Ապաստան հայցողների և փախստականների կողմից Պաշտպանի աշխատակազմ ստացված դիմում-բողոքներով բարձրացված հարցերի բովանդակությունը, ինչպես նաև իրավասու պետական մարմիններից և կազմակերպություններից ստացված տեղեկատվությունը վկայում են, որ ապաստան հայցողները և փախստականները մինչ այժմ բախվում են իրենց իրավունքների և պարտավորությունների վերաբերյալ ամբողջական և ամփոփ տեղեկատվություն ստանալուն առնչվող դժվարությունների, ինչն էլ, իր հերթին, հանգեցնում է նրանց կրթություն ստանալու, աշխատանքի ապահովման և այլ հիմնարար իրավունքների իրացման հետ կապված խնդիրների:

Սույն խնդիրը Մարդու իրավունքների պաշտպանի կողմից բարձրացրվել է նաև 2024 թվականի տարեկան զեկույցում, որտեղ ընդգծվել է միասնական տեղեկատվական հարթակ ստեղծելու անհրաժեշտությունը: Օրինակ՝ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից անցկացված մշտադիտարկումների արդյունքում հայտնաբերվել է, որ Ռումինիայում[520], Ֆինլանդիայում[521] և Պորտուգալիայում[522], ինչպես նաև եվրոպական

---

[519] Հասանելի է https://www.arlis.am/hy/acts/108362 հղումով, 2026 թվականի փետրվարի 18-ի դրությամբ:

[520] Հասանելի է https://cezicelegea.ro/ro հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[521] Հասանելի է https://infofinland.fi/ հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

[522] Հասանելի է https://www.youtube.com/watch?v=cnu3I0R73Io հղումով, 2025 թվականի մարտի 31-ի դրությամբ:

մի շարք այլ երկրներում գործարկվում են միասնական տեղեկատվական համակարգեր/տեսահոլովակներ, որտեղ ներկայացված է ապաստան հայցողներին և փախստականներին առնչվող տեղեկատվություն՝ ոլորտին վերաբերելի համապատասխան և համապարփակ մանրամասներով:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ անհրաժեշտ է փախստականներին և ապաստան հայցողներին առնչվող իրավակարգավորումները, ապաստան հայցելու ընթացակարգը և այլ կարևոր տեղեկությունները հավաքագրել մեկ միասնական առցանց հարթակում: Հարթակը պետք է լինի պարզ և մատչելի, պարունակի ոլորտի օրենսդրական կարգավորումները և մեկտեղի բոլոր պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունը՝ տարբեր օտար լեզուներով:

3. Ապաստանի խնդրանքի ընդունման և այն լիազոր մարմնին փոխանցելու կարգը

Կառավարության 2016 թվականի նոյեմբերի 10-ի թիվ 1147-Ն որոշմամբ[523] կարգավորվում են ՀՀ սահմանային անցման կետերում, ՀՀ տարածքում կամ ազատազրկման վայրերում օտարերկրյա քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց ներկայացրած ապաստանի խնդրանքը ՀՀ ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերի՝ ՀՀ պետական սահմանի անցման կետերում տեղակայված ստորաբաժանումների, ոստիկանության տարածքային մարմինների և ազատազրկման վայրերի վարչակազմի կողմից ընդունվելու և այն ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայությանը փոխանցվելու հետ կապված հարաբերությունները: Հատկանշական է, որ սույն որոշման հավելվածում մանրամասն ներկայացված է սահմանային անցակետերից ուղղորդումների կարգը, իսկ քրեակատարողական հիմնարկներից ուղղորդումներին անդրադարձ է կատարվել Որոշման հավելվածի միայն 11-րդ կետում նշվելով՝ որ, թե՛ ոստիկանությանը, թե՛ ազատազրկման վայրերի վարչակազմին ներկայացված ապաստանի խնդրանքն ընդունվում և ծառայությանն է փոխանցվում սույն կարգով:

Համաձայն ՀՀ Արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին կառավարության 2023թ. ապրիլի 13-ի 543-Ն որոշման[524]՝ բոլոր կալանավորված անձինք կամ դատապարտյալները պետք է տեղեկացվեն քրեակատարողական հիմնարկներում իրենց իրավունքների և երաշխիքների վերաբերյալ իրավական կարգավորումների մասին, իսկ օտարերկրյա քաղաքացիների դեպքում նաև ապաստան հայցելու իրավունքի մասին, որի համար անձը ստորագրում է այս որոշման հավելվածին կից Ձև 1-ը: Վերոնշյալ հավելվածը թարգմանվել է 7 լեզուներով և այժմ հասանելի է հայերեն, անգլերեն, ռուսերեն, ֆրանսերեն, իսպաներեն, արաբերեն, հնդկերեն և պարսկերեն լեզուներով, բայց հավելվածի թարգմանությունը դեռևս ամբողջովին չի օգնում հասկանալ ողջ գործընթացը:

Պաշտպանի կողմից իրականացված մշտադիտարկումների, ինչպես նաև աշխատանքային խմբերի իրականացրած քննարկումների արդյունքում անդրադարձ է կատարվել այս հարցին և նշվել, որ Որոշման և որոշման հավելվածին կից ձևի

---

[523] Հասանելի է https://www.arlis.am/hy/acts/109421 հղումով, 2026 թվականի փետրվարի 18-ի դրությամբ:

[524] Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում 13 ապրիլի 2023 թ. N 543-Ն՝ Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին, հասանելի է https://www.arlis.am/hy/acts/189318/latest:

թարգմանության մեջ բավականաչափ մանրամասն պարզաբանված չէ քրեակատարողական հիմնարկներից օտարերկրյա քաղաքացիներին Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցելու ուղղորդման կարգը, քանի որ քրեակատարողական հիմնարկներից ու սահմանային անցակետերից օտարերկյա քաղաքացիներին ուղղորդման ընթացակարգերը չեն կարող լինել նույնը:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ անհրաժեշտ է որոշման մեջ հստակ տարբերակել և ազատազրկման վայրերում պատասխանատու վարչակազմին և սահմանային անցակետերի աշխատակիցներին ներկայացնել ապաստանի հայցադիմումի ընթացակարգերի առանձնահատկությունները:

3.1. Ազատությունից զրկված օտարերկրացիների իրավունքների ապահովման խնդիրներ

Պաշտպանը մշտապես իր ուշադրության ներքո է պահում ազատությունից զրկված օտարերկրյա քաղաքացիների, այդ թվում՝ ազատությունից զրկված ապաստան հայցողների իրավունքների պաշտպանության վիճակը: Պաշտպանը՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմ, 2025 թվականին քրեակատարողական հիմնարկներ մշտադիտարկման այցերի ընթացքում ուսումնասիրել և արձանագրել է ազատությունից զրկված օտարերկրացիների, այդ թվում՝ ապաստան հայցողների իրավունքների իրացման հիմնական խնդիրները: Մշտադիտարկման այցերի ընթացքում Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները ազատությունից զրկված օտարերկրացիների և քաղաքացիություն չունեցող անձանց հետ ունեցել են առանձնազրույցներ, որոնց ընթացքում քննարկվել են նրանց հուզող հարցերը, ներկայացվել են նրանց հիմնական իրավունքները և ազատությունները, Պաշտպանի լիազորությունների շրջանակը և նրան դիմելու կարգը:

Ստորև ներկայացվում են արձանագրված խնդիրները.

ա) ազատությունից զրկված օտարերկրացիների առողջապահական ծառայությունների, սոցիալ-հոգեբանական աջակցության և այլ անհրաժեշտ ծառայությունների հասանելիության ապահովման խնդիրներ՝ թարգմանչական ծառայության լիարժեք ապահովման բացակայությամբ պայմանավորված,

բ) ազատությունից զրկված օտարերկրացի անձանց ազգականների և ազատությունից զրկված օտարերկրացի անձի տարբեր ժամային գոտիներում գտնվելու հանգամանքով պայմանավորված՝ տեսազանգերի կազմակերպման դժվարություններ, քանի որ նրանք գտնվում են այլ ժամային գոտիներում և քրեակատարողական հիմնարկում տեսազանգի թույլատրերի ժամերը չեն համընկնում իրենց ազգականների գտնվելու վայրի ժամային գոտու հետ,

գ) ՔԿՀ-ների աշխատակիցների անբավարար իրազեկվածությունը իրենց պարտավորության վերաբերյալ՝ կապված ապաստան հայցողների գրանցման և համապատասխան պետական մարմիններ ուղղորդելու գործընթացի հետ,

դ) ազատությունից զրկված օտարերկրացի անձանց համար իրենց կրոնական համոզմունքներին համապատասխան սնունդ ապահովելու հետ կապված դժվարություններ:

Ոլորտին վերաբերելի խնդիրներն ամբողջությամբ ներկայացված են Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի 2025 թվականի գործունեության վերաբերյալ զեկույցի 5.6 բաժնում:

Նշված խնդիրները վկայում են փախստականների և ապաստան հայցողների հիմնարար իրավունքների արդյունավետ ապահովման նպատակով առավել խորքային և համապարփակ մոտեցման անհրաժեշտության մասին: Օրենսդրական բացերի և իրավակիրառ պրակտիկայում ի հայտ եկող խնդիրների հաղթահարմանն ուղղված միջոցառումները պետք է իրականացվեն համակարգված և շարունակական կերպով՝ հիմնվելով միջազգային լավագույն փորձի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ձևավորած նախադեպային իրավունքի, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում ստանձնած միջազգային պարտավորությունների վրա:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է մշակել պատշաճ և բավարար կառուցակարգեր վերը թվարկված համակարգային խնդիրների անհապաղ լուծման ուղղությամբ:

3.2 Մահապատժի ենթարկվելու վտանգի առկայության պարագայում՝ անձի արտաքսման կամ հանձնման օրենսդրական արգելքը

Մարդասիրական և սովորութային միջազգային իրավունքի համաձայն՝ չվերադարձելիության սկզբունքը արգելում է անձի արտաքսումը կամ հանձնումը, եթե առկա են հիմնավոր պատճառներ ենթադրելու, որ նա վերադարձի դեպքում կհայտնվի անուղղելի վնասի վտանգի տակ, այդ թվում՝ հալածանքների, խոշտանգումների, վատ վերաբերմունքի կամ մարդու իրավունքների այլ լուրջ խախտումների ռիսկի պայմաններում:

Չվերադարձելիության սկզբունքն ամրագրված է «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի և պատժի դեմ» կոնվենցիայում: Ըստ Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային կառուցակարգերի՝ այս սկզբունքը տարածվում է մարդու իրավունքների կոպիտ խախտումների լայն շրջանակի վրա, այդ թվում՝ խոշտանգումների, դաժան կամ նվաստացնող վերաբերմունքի, կյանքի և անձեռնմխելիության իրավունքների խախտման իրական ռիսկի, ինչպես նաև մահապատժի ենթարկվելու վտանգի դեպքերում:

Այս համատեքստում, ՀՀ Սահմանադրության (55-րդ հոդվածի 1-ին մաս)[525], ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգրքի (62-րդ հոդվածի 6-րդ մասի 4-րդ կետ)[526] համաձայն՝ օտարերկրյա քաղաքացուն Հայաստանի Հանրապետության տարածքից վտարելը որպես պատժատեսակ չի կարող նշանակվել, եթե անձը վտարվող պետության տարածքում քրեական հետապնդման է ենթարկվում այնպիսի արարքի համար, որը կարող է պատժվել մահապատժով: Նման մոտեցումը համապատասխանում է Մարդու իրավունքների Եվրոպական միության խարտիայի 19-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումներին [527]:

Վերը շարադրված բոլոր իրավակարգավորումները վկայում են այն մասին, որ մահապատժի վտանգի առկայության դեպքում անձը չի կարող արտաքսվել կամ հանձնվել: Մինչդեռ ոլորտային օրենսդրությամբ, մասնավորապես՝ «Փախստականների և ապաստանի մասին» օրենքում շարունակում է բացակայել մահապատժի ենթարկվելու վտանգի առկայության պարագայում անձին արտաքսելու կամ հանձնելու օրենսդրական արգելքը: Պաշտպանը հետևողականորեն բարձրաձայնում է ոլորտային օրենսդրության

[525] Հասանելի է https://www.arlis.am/hy/acts/102510 հղումով, 2026 թվականի փետրվարի 18-ի դրությամբ
[526] Հասանելի է https://www.arlis.am/hy/acts/153080 հղումով, 2026 թվականի փետրվարի 18-ի դրությամբ
[527] Հասանելի է https://fra.europa.eu/en/eu-charter/article/19-protection-event-removal-expulsion-or-extradition?page=2 հղումով, 2026 թվականի փետրվարի 18-ի դրությամբ:

մեջ փոփոխություններ և լրացումներ իրականացնելու անհրաժեշտությունը՝ դա դիտարկելով որպես կարևոր և համակարգային քայլ՝ ուղղված փախստականների և ապաստան հայցող անձանց իրավունքների առավել արդյունավետ պաշտպանությանն ու խթանմանը: Պաշտպանը ողջունում է «Փախստականների և ապաստանի մասին» օրենքում մշակված փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծը, որի 2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ օրենքը, միջազգային իրավունքի սկզբունքներին և նորմերին համապատասխան, պաշտպանում է նաև բոլոր օտարերկրացիներին Հայաստանի Հանրապետությունից հարկադրաբար հեռացվելուց, եթե նրանց սպառնում է խոշտանգումների, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կամ մահապատժի ենթարկվելու վտանգ: Վկայակոչված նախագծի 11-րդ հոդվածի 4-րդ մասը նախատեսում է Օրենքի՝ չվերադարձելիության սկզբունքն ամրագրող 9-րդ հոդվածի 3-րդ մասը ձևակերպել հետևյալ կերպ. օտարերկրյա քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը չի կարող արտաքսվել, վերադարձվել կամ հանձնվել այլ երկիր, որտեղ հիմնավոր պատճառներով վտանգ կա, որ նա կենթարկվի խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կամ մահապատժի:

Գնահատելով ոլորտային օրենսդրության բարելավման ուղղությամբ կատարված քայլերը՝ Պաշտպանը հորդորում է ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ օրենքի հնարավորինս արագ ընդունումն ապահովելու համար՝ այն լիարժեք համապատասխանեցնելով գործող միջազգային չափանիշներին:

ԲԱԺԻՆ 21. ՄԱՐԴԿԱՆՑ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

2025 թվականին Մարդու իրավունքների պաշտպանը շարունակել է ակտիվ գործունեություն ծավալել մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի ուղղությամբ:

Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի շրջանակներում Պաշտպանը սերտ համագործակցություն է ծավալել պետական կառույցների, միջազգային կազմակերպությունների և զանգվածային լրատվության միջոցների հետ, որոնց նախաձեռնությամբ Պաշտպանը և իր ներկայացուցիչները ներգրավվել են տարբեր տարբեր ոլորտային քննարկումներում և այցերում՝ առանձնահատուկ շեշտադրելով տվյալ բնագավառում իրավունքների պաշտպանության մեխանիզմների բարելավման անհրաժեշտությունը:

Պաշտպանի աշխատակազմը շարունակել է իր մասնակցությունը Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի հարցերով խորհրդի աշխատանքներին, մասնավորապես՝ 2025 թվականի ապրիլի 14-ին Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունում տեղի է ունեցել Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի աշխատանքային խմբի հանդիպումը Եվրոպայի Խորհրդի Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի հարցերով փորձագետների խմբի (GRETA) պատվիրակության անդամների հետ: Հանդիպման ընթացքում ԵԽ փորձագետների հետ համատեղ քննարկվել են մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի ոլորտում ՀՀ ընթացիկ քաղաքականությունն ու առաջնահերթությունները, մտքեր են փոխանակվել մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ հարցերով Խորհրդի աշխատանքների և ՀՀ 2023-2025թթ Ազգային գործողությունների ծրագրի իրականացման ընթացքի վերաբերյալ: Այցի շրջանակում կազմակերպվել են բազմաբնույթ հանդիպումներ պետական կառույցների ներկայացուցիչների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, սոցիալական ոլորտի մասնագետների հետ: Առանձին ձևաչափերով քննարկվել են նաև կրթության, գիտության, մշակույթի, սպորտի, բարձր տեխնոլոգիաների և վիճակագրության ոլորտներում իրականացվող նախաձեռնությունները, այդ թվում՝ տվյալների հավաքագրման ու վերլուծության մեխանիզմները: Քննարկվել են նաև ինտեգրման և վերաինտեգրման ռազմավարության մշակման ընթացքը, ապաստան հայցողների վերաբերյալ վիճակագրական տվյալները, իրավաբանական օգնության հասանելիությունը և խոցելիության գնահատման ընթացակարգերը: Սոցիալական ոլորտի ներկայացուցիչների հետ հանդիպումների ժամանակ շեշտադրվել են զոհերի նույնացման, ուղղորդման, աջակցության տրամադրման, ծառայությունների արտապատվիրակման, իրազեկման միջոցառումների և մասնագիտական վերապատրաստման հարցերը, ինչպես նաև հատուկ կարիքներ ունեցող անձանց և երեխաների պաշտպանությանն ուղղված քայլերը: Անդրադարձ է կատարվել նաև ՀՀ 2023-2025թթ. Ազգային գործողությունների ծրագրի իրականացման գործընթացին:

2025 թվականի դեկտեմբերի 23-ին Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակում Պաշտպան Անահիտ Մանասյանի նախաձեռնությամբ և Ռաուլ Վալենբերգի ինստիտուտի երևանյան գրասենյակի աջակցությամբ կազմակերպվել է վերապատրաստման դասընթաց՝ նվիրված մարդկանց թրաֆիքինգի կամ աշխատանքային շահագործման՝ ներառյալ երեխաների թրաֆիքինգի կամ շահագործման հիմնախնդիրներին: Դասընթացին մասնակցել են զանգվածային լրատվության միջոցների, Հանրային պաշտպանի գրասենյակի, ինչպես նաև Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչներ: Միջոցառմանը բացման խոսքով հանդես են եկել Պաշտպանը և Ռաուլ Վալենբերգի ինստիտուտի երևանյան գրասենյակի տնօրեն Լաուրա Միլնը (առցանց ձևաչափով): Իր ելույթում Անահիտ Մանասյանն ընդգծել է, որ մարդկանց թրաֆիքինգի և աշխատանքային շահագործման ոլորտում առկա խնդիրների համակողմանի, ճշգրիտ և պատասխանատու լուսաբանումը, հանրային իրազեկվածության բարձրացումը, իրավունքների պատշաճ պաշտպանությունն ու կանխարգելիչ միջոցառումների արդյունավետ իրականացումը հնարավոր են միայն բոլոր դերակատարների պրոֆեսիոնալ գործունեության, կարողությունների անընդհատ զարգացման և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների հետ շարունակական, համակարգված և կառուցողական համագործակցության պայմաններում: Պաշտպանն առանձնահատուկ կարևորել է ԶԼՄ-ների առանցքային դերը ոչ միայն ոլորտում առկա խնդիրների վերհանման, այլև դրանց հաղթահարմանն ուղղված հանրային օրակարգի ձևավորման և մարդու իրավունքների պաշտպանության մշակույթի ամրապնդման գործընթացում: Միջոցառմանը ելույթով հնդես են եկել նաև ՄԻՊ ներկայացուցիչները՝ նշելով, ոլորտում առկա խնդիրներն ու մարտահրավերները: Դասընթացի ընթացքում մասնակիցները հնարավորություն են ունեցել դասընթացավարներին ուղղել իրենց հետաքրքրող հարցերը, ներկայացնել դիտարկումներ և մասնակցել ակտիվ ու բովանդակային քննարկումների:

1.Թրաֆիքինգի և շահագործման զոհերի վիճակագրություն

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած վիճակագրական տվյալների համաձայն՝ 2025 թվականի ընթացքում 34 անձ ճանաչվել է թրաֆիքինգի կամ շահագործման զոհ կամ հատուկ կատեգորիայի զոհ: Նրանցից 22-ն արական սեռի ներկայացուցիչներ են, 12-ը՝ իգական, 5 անձ ենթարկվել է սեռական շահագործման, իսկ 29-ը՝ աշխատանքային: Նույնացված զոհերից 8-ը հատուկ կատեգորիայի զոհեր են (2-ը՝ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձ, 6-ը՝ երեխաներ, որոնք ենթարկվել են ինչպես սեռական, այնպես էլ աշխատանքային

շահագործման): Հիշյալ անձանցից 21-ը հանդիսանում է ՀՀ, 13-ը՝ Տաջիկստանի քաղաքացի: Ըստ շահագործման վայրերի՝ զոհ է ճանաչվել 2 անձ Տավուշի մարզից, 3-ը՝ Լոռու մարզից, 17-ը՝ Երևանից, 2-ը՝ Կոտայքի մարզից, ինչպես նաև 2-ը՝ Գեղարքունիքի մարզից և 1-ը՝ Սյունիքի մարզից:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը 2025 թվականին մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց պաշտպանության և աջակցության նպատակով իրականացրել է երկու հիմնական ծրագիր՝ «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման, սեռական բռնության ենթարկված անձանց սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայություններ» և «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերին միանվագ դրամական փոխհատուցման տրամադրում»:

Առաջին ծրագրի շրջանակում, հիմք ընդունելով «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման, նույնացման և աջակցության մասին» ՀՀ օրենքը, շահառուներին տրամադրվել են սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայություններ: Ծրագրի նպատակն է ապահովել տուժած անձանց ֆիզիկական, հոգեբանական և սոցիալական վերականգնումը, ինչպես նաև աջակցել նրանց լիարժեք վերաինտեգրմանը հասարակական կյանքում: Ծառայությունների մատուցումն իրականացվել է նախարարության կողմից պատվիրակված կարգով:

Ծրագրով նախատեսված աջակցությունը ներառել է՝ կացարանի ապահովում, բնաիրային աջակցություն, անհրաժեշտ փաստաթղթերի տրամադրում կամ վերականգնում, բժշկական օգնություն և սպասարկում, հոգեբանական և խորհրդատվական աջակցություն, իրավաբանական օգնություն,

խնամքի կազմակերպում (այդ թվում՝ համապատասխան հաստատություններում), թարգմանչական ծառայություններ, հիմնական կրթության ապահովում, միջնակարգ կամ նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության հասանելիության աջակցություն, աշխատանքի տեղավորման աջակցություն, անվտանգ վերադարձի կազմակերպում:

Հաշվետու ժամանակահատվածում տվյալ ծրագրի շրջանակում, անհատական կարիքների գնահատման հիման վրա, ծառայություններ են տրամադրվել 31 շահառուի: Մյուս անձինք ուղղորդվել են համապատասխան մասնագիտացված հաստատություններ՝ անհրաժեշտ ծառայություններ ստանալու նպատակով:

Երկրորդ ծրագրով նախատեսվել է միանվագ դրամական աջակցություն՝ 250 000 դրամի չափով, որը տրամադրվում է թրաֆիքինգի, շահագործման կամ սեռական բռնության զոհ ճանաչված անձանց՝ կրած վնասների մասնակի փոխհատուցման նպատակով: Այդ իրավունքից կարող են օգտվել զոհ կամ հատուկ կատեգորիայի զոհ ճանաչված անձինք:

Համաձայն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից ստացված տեղեկատվության՝ 2025 թվականին նշված դրամական աջակցության իրականացման համար պետական բյուջեից հատկացվել է 1 750 000 ՀՀ դրամ, որի հաշվին աջակցություն է տրամադրվել 7 անձի:

Համաձայն ՀՀ քննչական կոմիտեից ստացված տեղեկատվության՝ 2025 թվականի ընթացքում 2 դեպքով իրականացվել են «Բառնահուսի» մոդելի տրամաբանությամբ ապացուցողական և այլ վարույթային գործողություններ՝ երեխայի նկատմամբ սեռական ոտնձգության և երեխայի թրաֆիքինգի կամ շահագործման դեպքերով նախաձեռնված քրեական վարույթներով:

2025 թվականի ընթացքում սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցակազմերով նախաձեռնված քրեական վարույթներով 74 անչափահաս ճանաչվել է տուժող:

Համաձայն ստացված տեղեկատվության՝ 2025 թվականի ընթացքում մարդու թրաֆիքինգի և շահագործմանն առնչվող դեպքերով (ՀՀ քրեական օրենսգրքի 188-րդ հոդված), ստացվել է 17 հաղորդում: Նույն ժամանակահատվածում նմանատիպ դեպքերով նախաձեռնվել է 18 քրեական վարույթ (այդ թվում՝ քրեական վարույթի նախաքննության շրջանակներում ձեռք բերված տվյալներով), որից 3-ը՝ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, 6-ը՝ կարճվել է, 7 քրեական վարույթ գտնվում է նախաքննության փուլում:

Միաժամանակ, 2025 թվականին երեխաների թրաֆիքինգի և շահագործման վերաբերյալ ստացվել է 3 հաղորդում, նախաձեռնվել՝ 13 քրեական վարույթ: Դրանցից 2-ը ուղարկվել է դատարան մեղադրական եզրակացությամբ, 1-ը կարճվել է, իսկ 2-ը գտնվում է նախաքննության փուլում:

Հաշվետու ժամանակահատվածում կայացել է Խորհրդի աշխատանքային խմբի 2 հանդիպում, ինչպես նաև Մարդկանց թրաֆիքինգի զոհերի նույնացման հանձնաժողովի 8 նիստ: ՀՀ ՆԳՆ ոստիկանության կողմից հանձնաժողովին ներկայացվել է 14, իսկ ՀՀ քննչական կոմիտեի կողմից՝ 4 միջնորդություն: Ներկայացված բոլոր հավանական զոհերն ու իրական զոհերը ստացել են համապատասխան աջակցություն՝ գործող օրենսդրությանը համապատասխան:

2. Ոլորտում արձանագրված խնդիրներ

Ինչպես 2024թ.-ին, նույնպես 2025թ.-ին ՄԻՊ աշխատակազմի կողմից առանձնացվել են մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ոլորտում առկա մի շարք խնդիրներ, որոնց զգալի մասը շարունակում է մնալ օրակարգային: Բարձրացված հարցերը հիմնականում առնչվել են հանրության իրազեկվածության մակարդակի բարձրացմանը, իրավապահ մարմինների աշխատակիցների մասնագիտական կարողությունների զարգացմանը միտված վերապատրաստումների կազմակերպմանը, «Մարդու օրգանների թրաֆիքինգի դեմ» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի վավերացման անհրաժեշտությանը և այլ հարցերի: Դրանց հաղթահարման նպատակով ներկայացվել են համապատասխան առաջարկություններ:

Պաշտպանը ողջունում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության նախաձեռնությունը, որի շրջանակում Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի հետ համագործակցությամբ 2025 թվականի մարտի 26–28-ը կազմակերպվել է վերապատրաստման դասընթաց նախարարությանը ենթակա երեխաների և ընտանիքի աջակցության կենտրոնների և ՄՄԾ-ի 30 սոցիալական աշխատողների համար՝ մարդկանց թրաֆիքինգի ճանաչման, բացահայտման և պետության կողմից տրամադրվող սոցիալական ծառայությունների մեխանիզմների թեմայով:Հաշվետու ժամանակահատվածում Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի հարցերով խորհրդի աշխատանքային խմբի անդամ հանդիսացող և մարդկանց թրաֆիքինգի զոհերին ու հավանական զոհերին ծառայություններ մատուցող «Սեռական բռնության ճգաժամային կենտրոն» հասարակական կազմակերպությունը իրականացրել է մարդկանց թրաֆիքինգի և շահագործման, ինչպես նաև սեռական բռնության հիմնախնդրի վերաբերյալ մի շարք իրազեկման հանդիպումներ՝ ուղղված տարբեր թիրախային խմբերին: Ընդհանուր առմամբ կազմակերպվել են իրազեկման հանդիպումներ շուրջ 120 մասնակցի ներգրավմամբ:

Հաշվետու ժամանակահատվածում անցկացվել է Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի խորհրդի նիստը՝ փոխվարչապետի նախագահությամբ, որի ընթացքում քննարկվել են թրաֆիքինգի դեմ պայքարի հետագա մեխանիզմները՝ ընդգծելով արտագնա աշխատող միգրանտների Հայաստան ներհոսքի անվտանգության և աջակցության խնդիրները:

«Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց ազգային ուղղորդման կարգի գնահատում» զեկույցի շրջանակում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը միգրացիայի միջազգային կազմակերպության հետ համատեղ 2025թ. հունիսի 12-ին և սեպտեմբերի 18-ին կազմակերպել է աշխատաժողով:

Վերոգրյալը վկայում է, որ պետության կողմից իրականացվել են մի շարք միջոցառումներ՝ միտված մարդկանց թրաֆիքինգի և շահագործման կանխարգելմանը: Դրանք վերաբերում են ինչպես հասարակության իրազեկվածության բարձրացմանը, այնպես էլ իրավապահ մարմինների աշխատակիցների մասնագիտական կարողությունների զարգացմանը: Միաժամանակ, կարևորելով ոլորտում իրավասու կառույցների կատարած աշխատանքը՝ Պաշտպանը շեշտում է, որ այն պետք է լինի շարունակական, հստակ թիրախավորված և իրականացվի առավել համակարգված մոտեցմամբ:

Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման խնդիրների շրջանակում Պաշտպանի ուշադրության կենտրոնում է գտնվում հատկապես մարդու օրգանների ապօրինի շրջանառությունը:

Այս համատեքստում պետք է ընդգծել, որ դեռևս 2018 թվականին Հայաստանի Հանրապետությունը ստորագրել է «Մարդու օրգանների թրաֆիքինգի դեմ» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան[528], որի հիմնական նպատակն է կանխարգելել և հակազդել մարդու օրգանների ապօրինի շրջանառությանը: Կոնվենցիան նախատեսում է, որ անդամ պետությունները պարտավորվում են քրեականացնել օրգանների անօրինական շրջանառությունը և սահմանել համարժեք պատժամիջոցներ: Այն նաև խրախուսում է կանխարգելիչ քաղաքականության իրականացումը՝ հանրության իրավագիտակցության բարձրացման, բժշկական ոլորտի մասնագետների կրթության, ինչպես նաև օրգանների նվիրատվության իրավական հիմքերի ամրապնդման միջոցով: Փաստաթուղթը պահանջում է ապահովել ապօրինի շրջանառության զոհերի աջակցությունն ու վերականգնումը, ինչպես նաև զարգացնել միջազգային համագործակցությունը՝ տեղեկատվության փոխանակման, համատեղ քննությունների և հանցագործների արտահանձնման գործընթացների միջոցով: Միաժամանակ, կարևորվում է օրգանների նվիրատվության և փոխպատվաստման ոլորտում հստակ իրավական և էթիկական մեխանիզմների ձևավորումը՝ ապօրինի պահանջարկը նվազեցնելու նպատակով:

ՀՀ կառավարության 2023 թվականի հունվարի 5-ի թիվ 31-Լ որոշմամբ հաստատված՝ 2023-2025 թվականների մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման դեմ պայքարի ազգային ծրագրի համաձայն՝ նախատեսվում էր, որ վերոնշյալ կոնվենցիան կվավերացվի դեռևս 2023 թվականի երրորդ եռամսյակում: Այնուամենայնիվ, մինչ օրս այդ գործընթացը չի ավարտվել:

Պաշտպանը կարևորում է կոնվենցիայի վավերացումը՝ ընդգծելով, որ այն կարող է նպաստել ազգային օրենսդրության և կիրառվող մեխանիզմների վերանայմանը և կատարելագործմանը: Արդյունքում կձևավորվի առավել արդյունավետ համակարգ մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման զոհերին և հավանական զոհերին

[528] Հասանելի է https://rm.coe.int/16806dca3a հղումով, 2026 թվականի մարտի 20-ի դրությամբ:

տրամադրվող աջակցության որակի բարձրացման, նրանց իրավունքների պաշտպանության և զոհակենտրոն քաղաքականության իրագործման համար:

ՀՀ արդարադատության նախարարությունը պատրաստակամություն է հայտնել ստանձնելու ԵԽ «Մարդու օրգանների թրաֆիքինգի դեմ պայքարի մասին» կոնվենցիայի իրավասու մարմնի դերը:

Միաժամանակ, Պաշտպանը կարևոր է համարում նաև «Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայով Հայաստանի ստանձնած պարտավորությունների համատեքստում համապատասխան օրենսդրական փոփոխությունների իրականացումը և ազգային զեկուցողի ինստիտուտի ներդրումը: Առաջարկվում է այդ մանդատը վերապահել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հաստատությանը՝ այն օժտելով պետական մարմինների կողմից մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ իրականացվող միջոցառումների մշտադիտարկման լիազորությամբ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

✓ մարդկանց թրաֆիքինգի և շահագործման կանխարգելման նպատակով իրականացվող իրազեկման միջոցառումները կազմակերպել առավել նպատակային և համակարգված ձևով՝ ապահովելով դրանց շարունակական բնույթը,

✓ ձևավորել և կիրառել արդյունավետ ու բավարար մեխանիզմներ՝ աշխատանքային միգրացիայի նպատակով Հայաստան ժամանած օտարերկրյա քաղաքացիների թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկվելու ռիսկերի պատշաճ գնահատման, հավանական դեպքերի ժամանակին բացահայտման, համապատասխան արձագանքի և կանխարգելման համար, ինչպես նաև ապահովել նրանց իրազեկումը հասկանալի լեզվով հնարավոր վտանգների վերաբերյալ,

✓ ձեռնարկել անհրաժեշտ և գործուն քայլեր՝ «Մարդու օրգանների թրաֆիքինգի դեմ» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի հնարավորինս սեղմ ժամկետում վավերացման ուղղությամբ,

✓ «Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայով Հայաստանի ստանձնած պարտավորությունների կատարման համատեքստում նախաձեռնել համապատասխան օրենսդրական փոփոխություններ՝ նախատեսելով ազգային զեկուցողի ինստիտուտի ստեղծում և այդ լիազորությունը վերապահելով ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հաստատությանը՝ նրան տրամադրելով պետական մարմինների կողմից թրաֆիքինգի դեմ իրականացվող գործողությունների մշտադիտարկման իրավասություն:

ԲԱԺԻՆ 22. ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանն (այսուհետ՝ Պաշտպան) ազդարարների պաշտպանության ոլորտում իրականացնում է մոնիթորինգ և տվյալների հավաքում, ինչպես նաև հետևում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց, կազմակերպությունների կողմից ազդարարների իրավունքների և ազատությունների պահպանմանը, նպաստում է ազդարարների իրավունքների և ազատությունների վերականգնմանը:

2025 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմ չեն մուտքագրվել ազդարարների իրավունքների խախտմանն առնչվող դիմումներ:

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Սահմանադրական օրենք) 30.2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Պաշտպանն ազդարարների պաշտպանության իրականացման նպատակով իրավասու է՝ հետևելու պաշտպանական և վերականգնողական միջոցառումների իրականացմանը, իրականացնելու ազդարարների պաշտպանության մեխանիզմների արդյունավետության մշտադիտարկում և գնահատում, հանդես գալու ազդարարների պաշտպանության իրականացման վերաբերյալ հրապարակային զեկույցներով, իրականացնելու սույն օրենքով սահմանված այլ լիազորություններ:

Սահմանադրական օրենքի նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Մարդու իրավունքների պաշտպանն իր տարեկան հաղորդման շրջանակներում ամփոփում և հրապարակում է ազդարարման հետ կապված հաշվետվությունը և վիճակագրությունը՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների՝ ազդարարման հետ կապված համապատասխան վիճակագրական տվյալների հիման վրա:

Միևնույն ժամանակ, ՀՀ կառավարության 2018 թվականի մարտի 15-ի թիվ 272-Ն որոշմամբ հաստատված 3-րդ հավելվածի 6-րդ կետի համաձայն՝ իրավասու մարմինը պարտավոր է իր կողմից վարվող վիճակագրությունը տարեկան վիճակագրական հաշվետվությունների ձևով ամփոփելուց հետո մինչև յուրաքանչյուր տարվա մարտի 10-ն ուղարկել Մարդու իրավունքների պաշտպանին:

Ուստի, հիմք ընդունելով վերոգրյալ իրավակարգավորումները և պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ՀՀ կառավարության վերոնշյալ որոշման 3-րդ հավելվածով հաստատված ձևին համապատասխան ներկայացված վիճակագրական տվյալները՝ հաջորդիվ ներկայացվում է ազդարարման հետ կապված վիճակագրությունը.

ԱՂՅՈՒՍԱԿ 1

Պետական մարմնի անվանումը	Տողի համարը	Ազդարարման հաղորդումների ընդհանուր քանակը	Այդ թվում						
			Ներքին, որից		Արտաքին, որից		Հանրությանը, որից		Ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակին
	1.	2.	3.		4.		5.		6.
ՀՀ գլխավոր դատախազություն		600	Բանավոր		Բանավոր		Բանավոր		600
			Գրավոր		Գրավոր		Գրավոր		
ՀՀ ներքին գործերի նախարարություն		24	Բանավոր		Բանավոր		Բանավոր		
			Գրավոր	1	Գրավոր	23	Գրավոր		
ՀՀ պաշտպանության նախարարություն		1	Բանավոր		Բանավոր		Բանավոր		
			Գրավոր		Գրավոր	1	Գրավոր		
Քննչական կոմիտե		1	Բանավոր		Բանավոր		Բանավոր		
			Գրավոր		Գրավոր	1	Գրավոր		

ԱՂՅՈՒՍԱԿ 2

Ղեռական մարմնի անվանումը	Տողի համարը	Ազդարարման հաղորդման դեպքերը՝ ըստ օրենքի վերին սահմանաչափերի	Ընդհանուր թիվը՝ ըստ դեպքի տեսակի	Որից		
				Ազդարարման հաղորդումներ այլ մարմիններ վերահասցեագրումների թիվը	Ազդարարման հաղորդման ուղղվածության կիսքով վարույթի հարուցումը մերժված դեպքերի թիվը	Ազդարարման հաղորդման կիսքով կեղծվածի թիվը
	1	2	3	4	5	6
ՀՀ գլխավոր դատախ ազություն				1	247	352
		Կոռուպցիոն բնույթի դեպքի մասին տեղեկություն	94			9
		Շահերի բախման, հայտարարագրման պահանջի խախտման մասին տեղեկություն	4			
		Վարքագծի կանոնի խախտման մասին տեղեկություն	-			
		Անհամատեղելիության պահանջի խախտման մասին տեղեկություն	-			
		Այլ սահմանափակումների խախտման մասին տեղեկություն՝ նշել կոնկրետ խախտման անվանումը	-			
		Հայտարարագրման հետ կապված խախտման մասին տեղեկություն	-			

		Հանրային շահերին ուղղված այլ վնասի կամ դրանց սպառնալիքի վերաբերյալ տեղեկություն	-			

Պետական մարմնի անվանումը	Ազդարարման հաղորդման հիմքով հարուցված վարույթի արդյունքում ընդունված ակտերի ընդհանուր թիվը	Որից			
		Պաշտոնատար անձին կարգապահական պատասխանատվության ենթարկելու դեպքերի թիվը	Հանցագործության առերևույթ հատկանիշներ հայտնաբերելու և իրավասու մարմնին դիմելու դեպքերի թիվը	Հարուցված վարույթների կարճման դեպքերի թիվը	Խախտում չհայտնաբերելու դեպքերի թիվը
	7.	8.	9.	10.	11.
ՀՀ գլխավոր դատախազություն	-	-	-	-	-

*Դեպքերն ըստ օրենքի՝

1) կոռուպցիոն բնույթի դեպքի մասին տեղեկություն,

2) շահերի բախման, հայտարարագրման պահանջի խախտման մասին տեղեկություն,

3) վարքագծի կանոնի խախտման մասին տեղեկություն,

4) անհամատեղելիության պահանջի խախտման մասին տեղեկություն,

5) այլ սահմանափակումների խախտման մասին տեղեկություն՝ նշել կոնկրետ խախտման անվանումը,

6) հայտարարագրման հետ կապված խախտման մասին տեղեկություն,

7) հանրային շահերին ուղղված այլ վնասի կամ դրանց սպառնալիքի վերաբերյալ տեղեկություն:

ԱՂՅՈՒՍԱԿ 3

Պետական մարմնի անվանումը	Տողի համարը	Ազդարարին տրամադրված պաշտպանության միջոցի տեսակը*	Ընդհանուր թիվը՝ ըստ պաշտպանության տեսակի	Պաշտպանության նախաձեռնման հիմքը, որից	
				Մարմնի նախաձեռնությամբ տրամադրված պաշտպանության տեսակների թիվը	Ազդարարի դիմումի հիման վրա տրամադրված պաշտպանության տեսակների թիվը
	1.	2.	3.	4.	5.
ՀՀ գլխավոր դատախազություն	0	0	0	0	0
ՀՀ ներքին գործերի նախարարություն	0	0	0	0	0

Ազդարարին պաշտպանություն տրամադրելու մերժման դեպքերի ընդհանուր թիվը	Որից	
	Իրավասու մարմնի մերժման որոշումների թիվը	Դիմումին որևէ այլ հիմքով ընթացք չտալու դեպքերի թիվը
6.	7.	8.
0	0	0
0	0	0

Ազդարարի անձի գաղտնիության պահպանման պարտականության խախտման դեպքերը	Որից		Ազդարարի անձի գաղտնիության պահպանման պարտականության խախտման դեպքում օրենքով նախատեսված վարույթ հարուցելու միջնորդությունների թիվը	Ազդարարման հետևանքով ազդարարի նկատմամբ իրականացված վնասակար գործողությունների ընդհանուր թիվը
	Իրավասու մարմնի պատասխանատու անձի մեղքով	Այլ պատճառներով		
9.	10.	11.	12.	13.
0	0	0	0	0
0	0	0	0	0

Ազդարարի նկատմամբ իրականացված վնասակար գործողությունների վերացմանն ուղղված միջոցառումների թիվը	Որից		Վնասակար գործողություն կատարած պաշտոնատար անձանց այլ պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդությունների թիվը
	Ազդարարի իրավունքների պաշտպանությանը կամ խախտված իրավունքների վերականգնմանն ուղղված միջոցառումների թիվը	Վնասակար գործողություն կատարած պաշտոնատար անձանց կարգապահական պատասխանատվության ենթարկելու դեպքերի թիվը	
14.	15.	16.	17.
0	0	0	0
0	0	0	0

*1. Անձնական տվյալների գաղտնիություն.

2. Վնասակար գործողություններից և դրանց հետևանքներից պաշտպանության իրավունք.

3. Մարդու իրավունքների պաշտպանից խորհրդատվական բնույթի գաղտնի խորհրդատվություն իրավաբանական աջակցություն ստանալու իրավունք.

4. Հատուկ պաշտպանություն, այդ թվում՝

1) պաշտպանվող անձին մոտենալու կամ նրա հետ շփվելու սահմանափակումը.

2) պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող տվյալների գաղտնիացումը.

3) պաշտպանվող անձի, նրա բնակարանի և գույքի նկատմամբ հսկողությունը.

4) պաշտպանվող անձին անհատական պաշտպանության միջոցի տրամադրումը.

5) պաշտպանվող անձին բնակության այլ վայր փոխադրումը.

6) պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող փաստաթղթերի փոխարինումը կամ պաշտպանվող անձի արտաքինի փոփոխումը.

7) պաշտպանվող անձի աշխատանքի, ծառայության կամ ուսման վայրի փոխումը.

5. Այլ

Մնացյալ իրավասու մարմինների կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն՝ վերջիններս ազդարարման հաղորդումներ չեն ստացել, հետևաբար վիճակագրական տվյալներ առկա չեն:

Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին 2023 և 2024 թվականների տարեկան հաղորդումներով ամփոփվել և ներկայացվել են ազդարարման հետ կապված հաշվետվությունն ու վիճակագրությունը, ինչպես նաև ոլորտին առնչվող առանձին խնդիրներ[529]: Նշված խնդիրները վերաբերել են հանրային իրազեկվածության, իրավագիտակցության և սոցիալական պատասխանատվության ցածր մակարդակին, համակարգի նկատմամբ անվստահությանը, ազդարարման հաղորդումների վերաբերյալ վիճակագրության վարման կարգի ոչ պատշաճ կիրառմանը:

Արձանագրված խնդիրների, ինչպես նաև դրանց լուծմանն ուղղված առաջարկների առնչությամբ գրություն է հասցեագրվել իրավասու մարմնին:

Ի պատասխան՝ Արդարադատության նախարարությունը տեղեկացրել է, որ 2025 թվականի ընթացքում ձեռնարկել է տարաբնույթ միջոցառումներ, որոնք ուղղված են եղել ազդարարման համակարգի նկատմամբ իրազեկվածության մակարդակի բարձրացմանը և ազդարարման համակարգի բարելավմանն ու կատարելագործմանը: Միջոցառումները ներառել են ինչպես պետական մարմինների հետ քննարկումներ, այնպես էլ հանրային իրազեկման միջոցառումներ:

Նշվել է նաև, որ իրականացվել է լայնածավալ «Հակակոռուպցիոն իրազեկման շաբաթ»-ը, որի շրջանակներում Արդարադատության նախարարը հանդիպել է մի շարք համալսարանների ուսանողների, որի ընթացքում, ի թիվս այլ թեմաների, անդրադարձել է ազդարարման համակարգին:

Ավելին, հավելել են, որ Արդարադատության նախարարի տեղակալի գլխավորությամբ և պետական մարմինների ու քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների մասնակցությամբ կայացել է քննարկում՝ նվիրված ազդարարման համակարգի բարելավմանը: Հանդիպման ընթացքում քննարկվել են ազդարարման համակարգի կիրարկման ընթացքում առաջացած խնդիրներն ու դրանց լուծման հնարավոր տարբերակները: Ընդգծվել է ՏՀԶԿ հակակոռուպցիոն ցանցի Ստամբուլյան գործողությունների ծրագրի գնահատման հինգերորդ փուլի, ինչպես նաև ԳՐԵԿՈ-ի հինգերորդ փուլի գնահատման շրջանակներում տրված հանձնարարականների կարևորությունը, որոնք առնչվում են նաև ազդարարման համակարգին:

Միևնույն ժամանակ, պատասխան գրությամբ նշվել է, որ Արդարադատության նախարարը Ժողովրդավարության հայկական չորրորդ ֆորումի շրջանակում մասնակցել է «Նոր մոտեցումներ կոռուպցիայի դեմ պայքարում» խորագրով պանելային քննարկմանը: Նախարարը քննարկման ընթացքում անդրադարձել է կոռուպցիայի դեմ պայքարի ավելի թափանցիկ և հաշվետվողական մեխանիզմների ներդրմանը, այդ թվում նաև՝ ազդարարման համակարգի և դրա գործունեության շրջանակի ընդլայնմանը:

---

[529] Տե՛ս Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և զատությունների պաշտպանության վիճակի մասին 2023 թվականի և 2024 թվականի տարեկան հաղորդումները, համապատասխանաբար 821-827 էջեր, 907-916 հասանելի է հետևյալ հղումներով՝ https://ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2cec3.pdf, https://www.ombuds.am/images/files/4d1335361f1f7e9fbcc1cfc10679701e.pdf 2026 թվականի մարտի 10-ի դրությամբ:

Միաժամանակ, Արդարադատության նախարարության կողմից մշակվել և 2025 թվականի դեկտեմբերի 16-ին հանրային քննարկման են ներկայացվել «Ազդարարման համակարգի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» և ««Ոստիկանության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքների նախագծերը (այսուհետ՝ Նախագծեր), որոնց ընդունմամբ ակնկալվում է նպաստել ազդարարման համակարգի գործունեության արդյունավետության ապահովմանը: Նախագծերով նախատեսվում է ընդլայնել ներքին ազդարարման իրավասու մարմինների ցանկը, արտաքին ազդարարման դեպքում հաղորդումները մեկ մարմին ներկայացնելու և բացառապես էլեկտրոնային հարթակի միջոցով իրականացնելու վերաբերյալ դրույթներ:

Հավելել են նաև, որ Արդարադատության նախարարության ներկայացուցիչները պարբերաբար նաև զանգվածային լրատվության միջոցներով ներկայացնում են իրականացված բարեփոխումները և ոլորտային զարգացումները:

Վերը նշվածը թույլ է տալիս եզրակացնել, որ պետության կողմից ձեռնարկվել և իրականացվել են նպատակային և համակարգված միջոցառումներ՝ այդ թվում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների շրջանում, ուղղված իրազեկվածության, իրավագիտակցության և սոցիալական պատասխանատվության մակարդակի բարձրացմանը, ինչպես նաև համակարգի նկատմամբ վստահության ամրապնդմանը: Արդյունքում, նախորդ տարվա համեմատ արձանագրվել է ազդարարման հաղորդումների ոչ միայն քանակական աճ, այլև դրանց բովանդակային և որակական բարելավում:

Պաշտպանը կարևորում է նշված ոլորտում իրականացված աշխատանքները և ընդգծում է դրանց կարևորությունը՝ միաժամանակ նշելով, որ այդ նախաձեռնությունները պետք է լինեն շարունակական, հետևողական և հստակ թիրախավորված՝ ապահովելու համար կայուն և երկարաժամկետ արդյունքներ:

Կարևոր է նշել, որ 2025 թվականին Պաշտպանի կարծիքին է ներկայացվել «Ազդարարման համակարգի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» և ««Ոստիկանության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքների նախագծերը, որոնք միտված են նպաստել ազդարարման համակարգի գործունեության արդյունավետության ապահովմանը: Նշված օրենքի նախագծի վերաբերյալ Պաշտպանը ներկայացրել է իր դիտարկումներն ու առաջարկությունները: Ներկայացված նկատառումները վերաբերել են ինչպես նախագծային որոշ կարգավորումների իրավական որոշակիության խնդիրներին, այնպես էլ որոշակի կառուցակարգերի ու ընթացակարգերի նախատեսման անհրաժեշտությանը:

Պաշտպանն ազդարարման հետ կապված իրազեկվածության բարձրացման նպատակով իրականացրել և շարունակում է իրականացնել մի շարք աշխատանքներ: Մասնավորապես, տարբեր աշխատանքային այցերի, այդ թվում՝ մոնիթորինգային այցերի, մարզային բնակավայրեր այցերի և բնակիչների հետ հանդիպումների և քննարկումների շրջանակներում, փակ հաստատություններում, դպրոցներում, զորամասերում, խնամքի կենտրոններ այցերի ընթացքում Պաշտպանը և Պաշտպանի ներկայացուցիչներն անձանց պարբերաբար իրազեկում են ազդարարման համակարգի, հաղորդումների ներկայացման և այդ համատեքստում ազդարարին կամ նրա փոխկապակցված անձին խորհրդատվություն տրամադրելու և իրավունքների ու ազատությունների պաշտպանության հնարավորությունները ներկայացնելու մեխանիզմների մասին[530]:

[530] Հասանելի է, հետևյալ հղումներով՝ https://ombuds.am/am/site/ViewNews/3396, https://ombuds.am/am/site/ViewNews/3394, https://ombuds.am/am/site/ViewNews/3392, https://www.youtube.com/watch?v=aHl3iG8eB0Q, 2026 թվականի մարտի 10-ի դրությամբ:

Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչները մասնակցել են Երևանի պետական համալսարանի կողմից կազմակերպված «ԲանՈւԳործ. ԵՊՀ Էքսպո-2025» միջոցառմանը և Հայաստանում ֆրանսիական համալսարանի (ՀՖՀՀ) կողմից կազմակերպված աշխատանքի տոնավաճառին, որի շրջանակներում այցելուներին, ի թիվս այլնի, ներկայացվել են ազդարարման համակարգի, հաղորդումների ներկայացման կարգի, ինչպես նաև այդ գործընթացում ազդարարին կամ նրա հետ փոխկապակցված անձանց խորհրդատվություն տրամադրելու և նրանց իրավունքների ու ազատությունների պաշտպանության մեխանիզմները[531]:

Միևնույն ժամանակ, հաշվետու տարվա ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանը FreeNews հեռուստաալիքի «Ազատ զրույց Արթուր Կիրակոսյանի հետ» հաղորդաշարի ընթացքում անդրադարձել է ազդարարների և նրանց հետ փոխկապակցված անձանց իրավունքների պաշտպանությանը, ազդարարների և նրանց հետ փոխկապակցված անձանց իրավունքների պաշտպանության շրջանակներում Մարդու իրավունքների պաշտպանի լիազորություններին և գործունեության հիմնական ուղղություններին:

Ավելին, Մարդու իրավունքների պաշտպանը հրապարակել է տեսանյութ, որով անդրադարձել է ազդարարների և նրանց հետ փոխկապակցված անձանց իրավունքների պաշտպանությանը: Ներկայացվել են նաև Պաշտպանի լիազորությունները ազդարարների իրավունքների պաշտպանության շրջանակներում:

Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչը Հանրային ռադիոյի «Ձեր փաստաբանը» հաղորդաշարի ընթացքում անդրադարձել է ազդարարների և նրանց հետ փոխկապակցված անձանց իրավունքների պաշտպանության շրջանակներում Մարդու իրավունքների պաշտպանի լիազորություններին և գործունեության հիմնական ուղղություններին, Մարդու իրավունքների պաշտպանի կողմից իր տարեկան հաղորդման շրջանակներում ազդարարման հետ կապված հաշվետվության և վիճակագրության ամփոփման և հրապարակման կարգին, ազդարարի և նրա հետ փոխկապակցված անձանց նկատմամբ հատուկ պաշտպանության միջոցներ կիրառելու և այլ վերաբերելի հարցերին[532]:

Չնայած Պաշտպանի հաստատության կողմից իրականացվող հետևողական աշխատանքներին՝ անհրաժեշտ ենք համարում արձանագրել, որ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքով ազդարարների պաշտպանության ապահովման նպատակով անհրաժեշտ է մեծացնել Պաշտպանի աշխատակազմի հաստիքային և այլ ռեսուրսները:

Անհրաժեշտ է ընդգծել, որ ՏՀԶԿ հակակոռուպցիոն ցանցի Ստամբուլյան գործողությունների ծրագրի գնահատման հինգերորդ փուլի, ինչպես նաև ԳՐԵԿՈ-ի հինգերորդ փուլի գնահատման շրջանակներում ներկայացված հանձնարարականներով ևս կարևորություն է տրվել համապատասխան կարողությունների զարգացմանը և անհրաժեշտ մարդկային ռեսուրսների ապահովմանը՝ ընդգծելով այդ ուղղությամբ ինստիտուցիոնալ կարողությունների ամրապնդման անհրաժեշտությունը: Մասնավորապես, գնահատումների ընթացքում խնդրահարույց է դիտարկվել այն

---

[531] Հրապարակումները հասանելի են հետևյալ հղումներով՝ https://ombuds.am/am/site/ViewNews/3513, https://ombuds.am/am/site/ViewNews/3580, 2026 թվականի մարտի 10-ի դրությամբ:

[532] Տե՛ս FreeNews հեռուստաալիքի «Ազատ զրույց Արթուր Կիրակոսյանի հետ» հաղորդաշարը, հասանելի է հետևյալ՝ https://ombuds.am/am/site/VideoGalleryView/1316 հղումով: Տեսանյութը հասանելի է հետևյալ՝ https://www.youtube.com/watch?v=EVAvdgjvUdg հղումով: Հանրային ռադիոյի «Ձեր փաստաբանը» հաղորդաշարը հասանելի է հետևյալ՝ https://www.youtube.com/watch?v=bnDMLt1VB84 հղումով:

հանգամանքը, որ նշված գործառույթների իրականացումը Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում գործնականում իրականացվում է սահմանափակ ռեսուրսներով, ինչն ինքնին կարող է խոչընդոտել ոլորտում Պաշտպանին վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացմանը:

Այս առումով անհրաժեշտ է դիտարկել համապատասխան կարողությունների և ռեսուրսների ուժեղացման հնարավորությունները, որոնք թույլ կտան առավել արդյունավետ ապահովել ազդարարների իրավունքների պաշտպանությունը և ազդարարման համակարգի պատշաճ գործարկումը:

Ուստի, կարևորում ենք Պաշտպանի աշխատակազմին համապատասխան հաստիքների տրամադրումը և, ըստ այդմ, առանձնացված ստորաբաժանման ստեղծումը, որը հնարավորություն կտա իրականացնել ներպետական և միջազգային իրավական փաստաթղթերով ամրագրված ազդարարների իրավունքների արդյունավետ պաշտպանություն:

Ազդարարման հաղորդումների վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանին վիճակագրություն ներկայացնելու պարտականություն ունեցող պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց ենթակա մարմինների կողմից ներկայացրած տեղեկատվության վերլուծությունը վկայում է նաև վիճակագրության վարման կարգի միասնականության բացակայության մասին:

Մասնավորապես՝ ՀՀ կառավարության 2018 թվականի մարտի 15-ի N 272-Ն որոշմամբ հաստատված 1-ին հավելվածի 1-ին կետի համաձայն՝ ներքին և արտաքին ազդարարման հաղորդումների հաշվառումը և ձևակերպումն իրականացնում է «Ազդարարման համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված մարմնի կամ կազմակերպության ղեկավարի կողմից համապատասխան իրավական ակտով նշանակված աշխատողը (այսուհետ՝ պատասխանատու անձ):

ՀՀ կառավարության նույն որոշման 3-րդ հավելվածի 6-րդ կետի համաձայն՝ իրավասու մարմինը պարտավոր է իր կողմից վարվող վիճակագրությունը տարեկան վիճակագրական հաշվետվությունների ձևով ամփոփելուց հետո մինչև յուրաքանչյուր տարվա մարտի 10-ն ուղարկել Մարդու իրավունքների պաշտպանին:

Մինչդեռ, արձանագրվում է, որ առանձին իրավասու մարմիններում բավարար մակարդակով ձևավորված չէ տեղեկացվածություն՝ իրենց կողմից վարվող համապատասխան վիճակագրությունը Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացնելու պարտականության վերաբերյալ: Բացի այդ, որոշ մարմիններում ներքին և արտաքին ազդարարման հաղորդումների հաշվառումն ու ձևակերպումն իրականացնող պատասխանատու անձինք նշանակված չեն: Ավելին, առկա են դեպքեր, երբ ազդարարման հաղորդումների հաշվառում ընդհանրապես չի իրականացվում, ինչի հետևանքով տվյալ մարմիններում բացակայում են համապատասխան վիճակագրական տվյալները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- ***շարունակել իրականացնել հանրային իրազեկման և վերապատրաստման աշխատանքներ՝ ըստ տարբեր թիրախային խմբերի՝ նպաստելով վերջիններիս իրավագիտակցության և սոցիալական պատասխանատվության մակարդակի բարձրացմանը, ազդարարին տրվող պաշտպանության միջոցների և, առհասարակ, ազդարարման համակարգի առնչությամբ իրազեկվածության բարձրացմանն ու նշված համակարգի և պաշտպանության միջոցների նկատմամբ վստահության ձևավորմանը,***

- ✓ *ապահովել վիճակագրության վարման կարգի միատեսակ և պատշաճ կիրառումը իրավասու բոլոր մարմիններում,*
- ✓ *ապահովել Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում համապատասխան հաստիքների տրամադրումը և ազդարարների իրավունքների պաշտպանության ուղղությամբ գործառույթների իրականացման համար առանձնացված կառուցվածքային ստորաբաժանման ձևավորումը:*